

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

**ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ.**

**ԾՆՆԴՈՅ 12-50**

ԲՈՒ ԱԹԼԻ

ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ

(ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

*ՄԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՅՈՒՅՑ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐ  
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 1Բ*

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ. ՄԱՐՇԱԼ, ՏԵԽԱՍ  
2009

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս մեկնաբանության շարքում կիրառված տեխնիկական աղբյուրների համառոտ բացատրություններ.....	1
Եբրայերեն բայի ձևերի համառոտ սահմանումները, որոնք ազդում են բացատրության վրա.....	3
Այս մեկնաբանության գրքում կիրառվող հապավումները.....	9
Հին Կտակարանը որպես պատմություն.....	11
ՀԿ պատմագրությունը համեմատած ժամանակի Մերձավոր Արևելյան մշակույթների հետ.....	15
Ժանր և մեկնաբանություն. ՀԿ պատմություն.....	17
Հեղինակի խոսք. ինչպես կարո՞ղ է ձեզ օգնել այս մեկնաբանությունը.....	19
Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց.....	21
Ծննդոց 11:24-13:18 ներածություն.....	28
Ծննդոց 12.....	30
Ծննդոց 13.....	47
Ծննդոց 14.....	55
Ծննդոց 15.....	66
Ծննդոց 16.....	87
Ծննդոց 17.....	94
Ծննդոց 18.....	102
Ծննդոց 19.....	113
Ծննդոց 20.....	123
Ծննդոց 21.....	135
Ծննդոց 22.....	141
Ծննդոց 23.....	149
Ծննդոց 24.....	153
Ծննդոց 25.....	163
Ծննդոց 26.....	172
Ծննդոց 27.....	180
Ծննդոց 28.....	190
Ծննդոց 29.....	196
Ծննդոց 30.....	202
Ծննդոց 31.....	208
Ծննդոց 32.....	217
Ծննդոց 33.....	224
Ծննդոց 34.....	229
Ծննդոց 35.....	236
Ծննդոց 36.....	245
Ծննդոց 37.....	253
Ծննդոց 38.....	263
Ծննդոց 39.....	270
Ծննդոց 40.....	275

Ծննդոց 41.....	280
Ծննդոց 42.....	291
Ծննդոց 43.....	298
Ծննդոց 44.....	304
Ծննդոց 45.....	311
Ծննդոց 46.....	324
Ծննդոց 47.....	330
Ծննդոց 48.....	340
Ծննդոց 49.....	348
Ծննդոց 50.....	363
Հավելված Մեկ. Հին Կտակարանի աղյուսակը.....	372
Հավելված Երկու. Վարդապետական սկզբունքներ.....	375

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Աստծո անունները, 12:1.....	31
Բորի ավետարանական հակումները, 12:3.....	36
Մեսիա, 12:3.....	37
Լուսնի պաշտամունք, 12:4.....	39
Պաղեստինի նախախրայելական բնակիչները, 12:6.....	40
Տիրոջ Հրեշտակը, 12:7.....	42
ՅԱՀՎԵԻ «անունը», 12:8.....	43
Մեսիայի սերունդը խափանելու Սատանայի փորձերը, 12:12.....	45
Ուխտ, 13:15.....	50
Հավիտյան ( <i>'OLAM</i> ), 13:15.....	51
Բարձրահասակ, հզոր զինվորների կամ մարդկանց համար կիրառված տերմիններ, 14:5.....	57
Պտղաբերության պաշտամունքը ՀՄԱ-ում, 14:5.....	57
Աստվածաշնչյան վերաբերմունքը ակոհոլին և հարբեցողությանը, 14:18.....	61
Տասանորդը Մովսիսական օրենսդրությամբ, 14:20.....	63
Տասանորդ, 14:20.....	64
Հավատալ, վստահություն, հավատք և հավատարմություն ՀԿ-ում, 15:16.....	71
Արդարություն, 15:6.....	74
Որտե՞ղ են մեռելները, 15:15.....	79
Իսաղաղություն ( <i>SHALOM</i> ), 15:15.....	82
Կրակ, 15:17.....	84
Նահապետների հետ ուխտի խոստումները, 15:18.....	85
Ամմեղ, անարատ, հանցագուրկ, առանց նախատինքի, 17:1.....	95
Աստված նկարագրված որպես մարդ, 18:1.....	104
ՀՄԱ կշիռներն ու ծավալները, 18:6.....	106
Ճանաչել, 18:19.....	109
Միասեռականություն, 19:4.....	115
Բարեգթություն ( <i>HESED</i> ), 19:19.....	119
Մարդու սեքսուալությունը, 20:4.....	125
ՀԿ մարգարեություն, 20:7.....	128
Երրորդություն, 20:13.....	133
Աստված ստուգում է Իր ժողովրդին, 22:1.....	143
Տասներկու թիվը, 25:16.....	167
Տերմիններ Աստծո հայտնության համար, 26:5.....	175
Եղովմը և Իսրայելը, 27:40.....	187
Ընտանեկան կուռքեր ( <i>Teraphim</i> ), 31:19.....	211
Իսրայել, 32:28.....	222
Սգալու ծեսերը, 37:29.....	261
Ընտրություն, նախասահմանություն և աստվածաբանական բալանսի կարիքը, 41:33.....	287

Բարեխոսական աղոթք, 44:16.....	309
Մնացորդ, 45:7.....	314
Նախասահմանությունը հակադրված մարդու ազատ կամքին, 45:8.....	315
Փառք (ՀԿ), 45:13.....	320
Հավատալ, վստահություն, հավատք և հավատարմություն ՀԿ-ում, 47:29.....	335
Ձեռնադրությունը Աստվածաշնչում, 48:14.....	343
Փրկագին/փրկագնել, 48:16.....	344
Փրկություն (ՀԿ տերմինը), 49:18.....	357
Անկյունաքար, 49:23-25.....	359
Դիակիզում, 50:2.....	364
Թաղման արարողություններ, 50:2.....	365
Սուրբ Գրքում առկա սիմվոլիկ թվերը, 50:3.....	366

# ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## I. Բառարանային՝

Հնագույն Եբրայերենն ունի մի քանի հասանելի գերազանց բառարաններ՝

Ա. *Հին Կտակարանի Եբրայերեն և Անգլերեն Բառարան* Ֆրենսիզ Բրաունի, Ս. Ռ. Դրայվերի և Չարլզ Ա. Բրիգգի կողմից (*Hebrew and English Lexicon of the Old Testament* by Francis Brown, S. R. Driver, and Charles A. Briggs): Այն գրվել է Ուիլյամ Գեսինիուսի Գերմաներեն Բառարանի հիման վրա: **Հայտնի է BDB հապավումով:**

Բ. *Հին Կտակարանի Եբրայերեն և Արամերեն Բառարանը* Լյուդվիգ Բոհլերի և Ուոլթեր Բոնգարթների կողմից (*The Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament* by Ludwig Koehler and Walter Baumgartner), թարգմանված Մ. Ի. Չ. Ռիչարդսոնի կողմից (M. E. J. Richardson): **Հայտնի է KB հապավումով:**

Գ. *Հին Կտակարանի Եբրայերեն և Արամերեն Համառոտ Բառարան* Ուիլյամ Լ. Հոլլադեյի կողմից (*A Concise Hebrew and Aramaic Lexicon of the Old Testament* by William L. Holladay) և հիմնված է վերը նշված Գերմաներեն բառարանի վրա:

Դ. Մի նոր հինգ հատորանոց աստվածաբանական բառային ուսումնասիրություն *Հին Կտակարանի Աստվածաբանության և Էզգեզետիկայի Նոր Միջազգային Բառարան* վերնագրով, խմբագրված Ուիլյամ Ա. Վան Չեմերենի կողմից (*The New International Dictionary of Old Testament Theology and Exegesis* edited by Willem A. Van Gemeren): **Հայտնի է NIDOTTE հապավումով:**

Որտեղ որ կան բառերի նշանակալի տարբերություններ, ներկայացրել եմ մի քանի անգլերեն թարգմանություններ (NASB, NKJV, NRSV, TEV, NJB) թե՛ «բառ առ բառ» և թե՛ «դիմաձայնի հավասարագոր» թարգմանություններից (տես՝ Գորդոն Ֆիլի և Դուգլաս Սթյուարթ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 28-44 /Gordon Fee & Douglas Stuart, *How to Read the Bible For All Its Worth*/):

## II. Քերականական

Սովորաբար քերականական վերլուծությունը հիմնված է Չոն Օուենզի *Հին Կտակարանի Վերլուծական Սկզբունք* չորս հատորանոց գրքի վրա: Սա միաժամանակ համեմատվել է Բենջամին Դեյվիդսոնի *Հին Կտակարանի Վերլուծական Եբրայերենը և Բաղդակական Բարբառը* /Benjamin Davidson *Analytical Hebrew and Chaldee Lexicon of the Old Testament*/գրքի հետ:

«Դու կարող ես հասկանալ Աստվածաշունչը՝ շարքի ՀԿ-յան հատորներից մեծամասնության մեջ կիրառվող քերականական և սինթետիկ կազմությունների համար մեկ այլ օգտակար աղբյուր է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների կողմից ներկայացված «Օգնություն թարգմանիչների համար շարքերը»: Դրանք վերնագրված են «———— մասին ձեռնարկ»:

## III. Տեքստային

Ինձ հարազատ է Եբրայերեն բաղաձայն նիշերով գրված տեքստի ներշնչանքը (ոչ թե Մագորեթիկ ձայնավոր նիշերով և մեկնություններով): Ինչպես և բոլոր ձեռագիր, հնագույն տեքստերում այստեղ էլ կան որոշ խրթին հատվածներ: Սովորաբար դրա պատճառները հետևյալն են՝

Ա. *hapax legomena* (Եբրայերեն ՀԿ-ում միայն մեկ անգամ գործածված բառեր)

Բ. դարձվածքաբանական տերմինները (բառեր և աչտահայտություններ, որոնց բառացի նշանակությունները անհետացել են)

Գ. պատմական անստուգությունները (հին աշխարհի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունների պակասը)

Դ. Եբրայերենի սահմանափակ բառադարանի բազմասեմիտիկ հիմնահարթակը

Ե. հետագա դպիրների կողմից ձեռքով արտատպված հնագույն եբրայերեն տեքստերի հետ կապված խնդիրները

Զ. Եզիպտոսում ուսանած եբրայեցի դպիրները, որոնք ազատ են զգացել վերարտադրելու այն տեքստերը, որոնք արտատպել են, դրանք դարձնելով ամբողջական և իրենց օրերի համար հասկանալի (NIDOTTE էջ՝ 52-54):

Գոյություն ունեն Մագորեթիկ տեքստային ավանդույթից դուրս եբրայերեն բառերի և տեքստերի մի քանի աղբյուրներ.

1. Սամարիայի Հնգամատյանը

2. Մեռյալ Ծովի Գալարները
3. Հետազայում գտնված որոշ մետաղադրամներ, նամակներ և բրածոներ (չայրվող խեցեգործության՝ կավից պատրաստված առարկաների կտորներ, որոնց վրա կան գրություններ), սակայն շատ հատվածների համար, ՀԿ-ի համար գոյություն չունեն ձեռագրային ընտանիքներ ինչպես հունարեն ՆԿ-ի ձեռագրերն են: Մագորեթիկ Տեքստի (մ. թ. 900թ) տեքստային հավաստիության շուրջ հետաքրքիր համառոտ հոդվածի համար տե՛ս «Հին Կտակարանյան Տեքստի Հավաստիությունը» Բրյուս Կ. Ուոլթքի կողմից /”The Reliability of the Old Testament Text” by Bruce K. Waltke/ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 51-67:

Գործածվող Եբրայերեն տեքստը *Biblia Hebraica Stuttgartensia* է Գերմանական Աստվածաշնչյան Ընկերությունից, 1997, որը հիմնված է Լենինգրադ Կոդեքսի (մ. թ. 1009) /Leningrad Codex/ վրա: Եբրեմն օգնության են հասնում հնագույն տարբերակները (Հունարեն Սեպտուագինտան, Արամերեն Թարգումները, Սիրիակ Փեշիտտան և Լատիներեն Վուլգատտան), եթե Եբրայերենը անորոշ կամ ակներև շփոթեցնող է:

# ԵՐԲԱՅԵՐԵՆ ԲԱՅԻ ԶԵՎԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱԶԳՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

## I. Երբայերենի պատմական զարգացումը համառոտ տեսքով

Երբայերենը համարվում է հարավարևմտյան Ասիական լեզվախմբի Սեմական ընտանիքի մի մաս: Անունը (որը տրվել է ժամանակակից գիտնականների կողմից) գալիս է Նոյի որդուց՝ Սեմից (տես՝ Ծննդ. 5:32; 6:10): Սեմի սերունդները թվարկված են Ծննդ. 10:21-31-ում որպես Արաբներ, Երբայեցիներ, Սիրիացիներ, Արամեացիներ և Ասորիներ: Իրականում որոշ Սեմական լեզուներ կիրառվում են այն ազգերի կողմից, որնք նշվում են Քամի սերնդաբանության մեջ (տես՝ Ծննդ. 10:6-14)՝ Քանանը, Փյունիկեն և Եթովպիան:

Երբայերենը այս Սեմական լեզուների հյուսիս-արևմտյան լեզվախմբի մի մասն է: Արդի գիտնականներն ունեն այս հնագույն լեզվախմբից օրինակներ՝

Ա. Ամորիերեն (*Mari Tablets* Ք. Ա. 18-րդ դար, Աքքադերենում)

Բ. Քանաներեն (*Ras Shamra Tablets* 15-րդ դարից, Ուգարտերենում)

Գ. Քանաներեն (*Amarna Letters* 14-րդ դարից, Քանանի Աքքադերենում)

Դ. Փյունիկերեն (Երբայերենը կիրառում է Փյունիկերենի այբուբենը)

Ե. Մովաբերեն (Մեշայի քարը, Ք. Ա. 840)

Չ. Արամերեն (Պարսից Կայսրության պաշտոնական լեզուն, որը կիրառվում է Ծննդ. 31:47-ում /2 բառ/, Երեմ. 10:11, Դան. 2:4բ-6, Եզրաս 4:8-6:18, 7:12-26 և առաջին դարի Պաղեստինի հրեաների խոսակցական լեզուն)

Երբայերեն լեզուն կոչվում է «Քանանի շուրթ /հայ.՝ լեզու/» Եսայի 19:18-ում: Առաջին անգամ այն անվանվում է «Երբայերեն» Իմաստություններ գրքի նախաբանում (Բեն Սիրաքի Իմաստություն), մոտ Ք. Ա. 180-ին (և մի քանի ավելի շուտ գրի առնված տեղերում, տես՝ *Խարիսիս Աստվածաշնչյան Բառարան*, հատոր 4, էջ՝ 205 /*Anchor Bible Dictionary*): Այն ամենամոտն է Մովաբերենին և Ուգարիտում գործածվող լեզվին: Աստվածաշնչից դուրս Երբայերենի կիրառության օրինակներ են՝

1. Գեյզեր օրացույցը, Ք. Ա. 925 (դպրոցական մի տղայի գրություն)

2. Սելովամի Արձանագրությունը, Ք. Ա. 705 (թունելային գրություն)

3. Սամարիայի Օստրակա, Ք. Ա. 770 (հարկերի հաշվետվություն կավե կտորների վրա)

4. Լացիսի նամակները, Ք. Ա. 587 (պատերազմական կապեր)

5. Մակկաբայեցիների մետաղադրամները և կնիքները

6. Մեռյալ Ծովի Գալարների որոշ տեքստեր

7. Բազմաթիվ մակագրություններ (տես՝ «Լեզուներ /Երբայերեն/», ABD 4:203ff)

Բոլոր Սեմական լեզուների պես երբայերենին բնորոշ են երեք բաղաձայներով կազմված բառերը (եռաբաղաձայն արմատ): Այն թեքական /հոլովվող, խոնարհվող/ լեզու է: Եռաբաղաձայն արմատները կրում են բառի հիմնական նշանակությունը, մինչ նախաձանցավոր, վերջաձանցավոր կամ ներքին հավելումները արտահայտում են շարահյուսական ֆունկցիաները (ձայնավորները ավելանում են հետագայում, տես՝ Սյու. Գրին, *Աստվածաշնչյան Երբայերենի Լեզվաբանական Վերլուծություն*, էջ՝ 46-49 /*Sue Green Linguistic Analysis of Biblical Hebrew*):

Երբայերեն բառապաշարը՝ լեքսիկոնը, արտահայտում է արձակի և պոեզիայի միջև եղած տարբերությունը: Բառերի նշանակությունները կապված են ժողովրդական ստուգաբանության հետ (ոչ թե լեզվաբանական ծագումնաբանության): Բառախաղերը և հնչյունախաղերը բավականին տարածված են (*paronomasia*):

## II. Ստորոգման առանձնահատկությունները

### Ա. ԲԱՅԵՐ

Նորմալ բառային հերթականությունը հետևյալն է՝ ԲԱՅ, ԴԵՐԱՆՈՒՆ, ԵՆԹԱԿԱ (պարագաների հետ), ԽՆԴԻՐ (պարագաների հետ): Հիմնական անդրոշ՝ չշեշտված ԲԱՅԸ *Qal* բայն է, ՎԱՂԱԿԱՏԱՐ, ԱՐԱԿԱՆ, ԵԶԱԿԻ ձևով: Այսպիսին է Երբայերենի և Արամերենի նախադասությունների կազմությունը: ԲԱՅԵՐԸ խոնարհվում են ցույց տալով՝

1. թիվ՝ եզակի, հոգնակի, երկակի

2. սեռ՝ արական և իգական (միջին սեռ չկա)

3. եղանակ՝ սահմանական, ստորադասական, հրամայական (ժամանակակից արևմտյան լեզուների նմանությամբ՝ գործողության կապը իրողության հետ)



4. Ժամանակ (ձևերը)

ա. ՎԱՂԱԿԱՏԱՐԸ, որն արտահայտում է ավարտված գործողություն՝ մեկնարկի, ընթացքի և եզրահանգման իմաստով: Առհասարակ այս ժամանակաձևը կիրառվում է անցյալի գործողության համար, որն արդեն տեղի է ունեցել:

Ջ. Ուոշ Ուոթսը *Շարահյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*) ասում է՝

«Վաղակատար ժամանակաձևով նկարագրված միանշանակ իրադարձությունը նույնպես համարվում է որպես հաստատ՝ որոշակի: Անկատարը կարող է նկարագրել որպես հնարավոր կամ ցանկալի կամ ակնկալելի իրավիճակ, մինչդեռ վաղակատարը դիտարկում է այն որպես իրական, հաստատ կամ ակտուալ» (էջ՝ 36):

Ս. Ռ. Դրայվերը *Եբրայերենում Ժամանակների Կիրառության Քննախոսություն* (S. R. Driver *A Treatise on the Use of the Tenses in Hebrew*) գրքում այսպես է նկարագրում .

«Վաղակատարը ներգրավված է մատնացույց անելու գործողությունները, որոնց իրականացումը ընկած է անշուշտ ապագայում, սակայն համարվում է որպես կախման մեջ գտնվող այնպիսի կամքի անփոփոխելի որոշումից, որ դրա մասին կարելի է արտահայտվել որպես իրականում տեղի ունեցած՝ կատարված. այդ իսկ պատճառով լուծումները, խոստումները կամ հրամանները՝ հատկապես աստվածայինը, հաճախակի արտահայտվում են վաղակատար ժամանակով» (էջ՝ 17, օր.՝ մարգարեական վաղակատարը):

Ռոբերտ Բ. Քիշոլմ Կրտսերը *Մեկնությունից մինչև Բացատրություն* (Robert B. Chisholm, Jr. *From Exegesis to Exposition*) այս բայի ձևը այսպես է սահմանում՝

«... դիտարկում է իրավիճակը դրսից որպես մի ամբողջություն: Որպես այդպիսին այն արտահայտում է պարզ փաստ՝ լինի դա գործողություն, թե վիճակ (ներառյալ իրողության կամ մտքի վիճակը): Գործողությունների համար կիրառելիս այն հաճախ դիտարկում է գործողությունը որպես կատարված՝ խոսողի կամ պատմողի հոետորական տեսանկյունից (փաստացի կամ իրականում լինի այն ավարտված, թե ոչ, հարցը դրանում չէ): Վաղակատարը կարող է առնչվել անցյալում, ներկայում կամ ապագայում տեղի ունեցած գործողության կամ վիճակի: Ինչպես վերը նշվեց, ժամանակային սահմանները, որոնք ազդում են այն բանի վրա, թե ինչպես կթարգմանեն վաղակատարը ժամանակային օրիենտացիա ունեցող լեզուներով, ինչպես օրինակ անգլերենն է, պետք է որոշվեն ըստ համատեքստի» (էջ՝ 86):

բ. ԱՆԿԱՏԱՐԸ, որն արտահայտում է գործողությունն ընթացքի մեջ (անավարտ, կրկնվող, շարունակվող կամ պատահական), հաճախ որևէ նպատակի հասնելու շարժ՝ ընթացք: Սովորաբար այս ժամանակաձևը կիրառվում է Ներկա և Ապառնի գործողության համար:

Ջ. Ուոշ Ուոթսը *Շարահյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*) գրքում ասում է.

«Բոլոր ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ ներկայացնում են անավարտ վիճակներ: Դրանք կա՛մ կրկնվում են, կա՛մ զարգանում, կա՛մ էլ պատահականություն են: Այլ խոսքերով կա՛մ մասամբ զարգացող են, կամ էլ մասամբ հստակ՝ որոշված: Բոլոր դեպքերում էլ դրանք ինչ-որ առումով մասամբ են կատարված, այսինքն՝ անկատար» (էջ՝ 55):

Ռոբերտ Բ. Քիշոլմ Կրտսերը *Մեկնությունից մինչև Բացատրություն* (Robert B. Chisholm, Jr. *From Exegesis to Exposition*) ասում է.

«Դժվար է նվազեցնել անկատարի իմաստը մինչև միանշանակ հասկացության, քանի որ այն ընդգրկում է թե՛ ձև, և թե՛ եղանակը: Երբեմն անկատարը կիրառվում է սահմանական ձևով և կատարում է օբյեկտիվ սահմանում: Այլ դեպքերում գործողությունը դիտարկում է ավելի սուբյեկտիվորեն, ինչպես օրինակ վարկածային, պատահական, հնարավորին և այլն» (էջ՝ 89):

գ. Ավելացված *waw*, որը ԲԱՅԻՆ կապում է նախորդող ԲԱՅԻ(երի) գործողությանը:

դ. ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ, որը հիմնված է խոսողի կամքի և լսողի կողմից կատարած պոտենցիալ գործողության վրա:

ե. Հնագույն Եբրայերենում միայն ծավալուն համատեքստը կարող է որոշել հեղինակի կողմից ներկայացված նպատակահարմար ժամանակային կողմնորոշումը:

Բ. Յոթ կարևոր հոլովները և դրանց հիմնական նշանակությունները: Իրականում այս ձևերը համատեքստում գործում են միմյանց հետ փոխկապակցված և չպետք է առանձնացվեն:

1. *Qal* (Kal), ամենատարածվածը և հիմնականը բոլոր խոնարհումների մեջ: Այն արտահայտում է պարզ գործողություն կամ վիճակ: Ակնարկվող պատճառաբանություն կամ յուրահաստկություն այստեղ չկա:
2. *Niphal*, երկրորդ ամենատարածված խոնարհման ձևը: Այն սովորաբար ԿՐԱՎՈՐԱԿԱՆ է, սակայն այս ձևը նաև գործում է որպես փոխադարձ և անդրադարձ բայ: Այն նույնպես չունի ակնարկվող պատճառաբանություն կամ յուրահաստկություն:
3. *Piel*, այս ձևը ներգործական է և արտահայտում է գործողությունը վիճակի վերածելու իմաստ: *Qal* արմատի հիմնական իմաստը վերածվում է կամ ըղլայնվում դառնալով վիճակ:
4. *Pual*, սա *Piel* բառի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ կրկնօրինակն է: Այն հաճախ արտահայտվում է որևէ ՀՈՂԻ միջոցով:
5. *Hithpael*, որը փոխադարձ կամ անդրադարձ արմատ է: Այն արտահայտում է *Piel* արմատին կրկնվող կամ շարունակվող գործողություն: Հազվագյուտ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ձևը կոչվում է *Hathpael*:
6. *Hiphil*, սա *Piel*-ին հակադարձ պատճառական արմատի ներգործական ձևն է: Այն կարող է ունենալ թույլատրելի ասպեկտ, սակայն սովորաբար վերաբերում է ինչ-որ իրադարձության պատճառին: Եռնեստ Ջեննին՝ մի գերմանացի հրեա քերականագետ, կարծում ր, որ *Piel*-ն արտահայտում է վիճակի վերածվող ինչ-որ բան, մինչ *Hiphil*-ը ցույց է տալիս, թե դա ինչպես է տեղի ունենում:
7. *Hophal*, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ կրկնօրինակն է *Hiphil*-ի: Վերջին երկու արմատները ամենաքիչն են կիրառվում այս յոթ արմատների մեջ:

Այս տեղեկության մեծ մասը վերցված է Բրյուս Կ. Ուոլթթի և Մ. Օ'Բոնորի կողմից գրված *Աստվածաշնչյան Եբրայերենի Շարահյուսության Ներածություն* գրքից (Bruce K. Waltke and M. O'Connor *An Introduction to Biblical Hebrew Syntax*, էջ՝ 343-452):

Գործոնների և պատճառականության աղյուսակ: Եբրայերեն ԲԱՅԻ համակարգը հասկանալու հարցում կարևոր է, որ այն դիտարկվի որպես ՄԵՆԻ փախկապակցման կերպ: Որոշ արմատներ հակադարձ են այլ արմատներին (այսինքն՝ *Qal – Niphal*; *Piel - Hiphil*):

Ներքևում տրված աղյուսակը փորձում է տեսանելի կերպով ներկայացնել ԲԱՅԻ արմատների հիմնական պատճառականության ֆունկցիաները:

ԲԱՅԻ սեռը	Ոչ երկրորդական Գործոն	Ներգործական Երկրորդական Գործոն	Կրավորական Երկրորդական Գործոն
Ներգործական	<i>Qal</i>	<i>Hiphil</i>	<i>Piel</i>
Չեզոք Կրավորական	<i>Niphal</i>	<i>Hophal</i>	<i>Pual</i>
Անդրադարձ/Հակադարձ	<i>Niphal</i>	<i>Hiphil</i>	<i>Hithpael</i>

Այս աղյուսակը վերցված է ԲԱՅԻ համակարգի վերաբերյալ մի գերազանց քննարկումից՝ նոր Աքքադերենի ուսումնասիրության լույսի ներքո (տես՝ Բրյուս Կ. Ուոլթթ, Մ. Օ'Կոներ, *Աստվածաշնչյան Եբրայերենի Շարահյուսության Ներածություն*, էջ՝ 354-359 /Bruce K. Waltke, M. O'Conner, *An Introduction to Biblical Hebrew Syntax*):

Ռ. Հ. Զենները, *Եբրայերեն Ժամանակների Համառոտ Պատմություն* /R. H. Kennett, *A Short Account of the Hebrew Tenses*/ իր գրքում տալիս է անհրաժեշտ զգուշացում:

«Սովորեցնելիս ես ընդհանրապես հայտնաբերել եմ, որ Եբրայերեն լեզվի ժամանակները սովորելիս ուսանողի հիմնական դժվարությունն է հասկանալ այն նշանակությունը, որը այդ բառերը փոխանցում են հենց իսկ Եբրայեցիների՝ հրեաների մտքին. այսինքն, մարդիկ հավելված են ինչ-որ թվով լատիներեն կամ անգլերեն ժամանակաձևեր նշանակել յուրաքանչյուր Եբրայերեն ժամանակի համար որպես համարժեքներ, որոնցով տվյալ ժամանակը կարելի է ընդհանուր իմաստով թարգմանել: Արդյունքում ձախողում ենք հասկանալ նշանակության նմանօրինակ հիանալի երանգներից մեծ մասը, որոնք կյանք և կենսունակություն են հաղորդում Հին Կտակարանի լեզվին:

Եբրայերեն բայերի գործածության դժվարությունը կայանում է միայն տեսակետի մեջ՝ մեր տեսակետից բացարձակ տարբեր, ըստ որի էլ Եբրայեցիները դիտարկում են գործողությունը. *Ժամանակը*, որը առաջին հայացքից մեզ հետ է, ինչպես հենց „Ժամանակ“, բառն է ցույց տալիս, նրանց համար երկրորդական կարևորության է: Հետևաբար կարևոր է, որ ուսանողը հստակ հասկանա ոչ այնքան լատիներեն կամ անգլերեն ժամանակաձևերը, որոնք կարող են օգտագործվել Եբրայերեն յուրաքանչյուր ժամանակ թարգմանելիս, այլ յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունը այնպես, ինչպես ներկայացվում է հենց հրեական մտածելակերպի համար:

«Ժամանակներ» անվանումը Եբրայերեն բայերին տալիս շփոթեցնող է: Այսպես կոչված Եբրայերեն ժամանակները, չեն արտահայտում *Ժամանակ*, այլ պարզապես գործողության *վիճակ*: Իհարկե, եթե *վիճակ* տերմինի գործածությամբ շփոթություն չառաջանար գոյականների և բայերի մեջ, ապա *վիճակներ* տերմինը շատ ավելի հարմար անվանում կարող էր հանդիսանալ, քան *Ժամանակները*: Սշատապես մեր մտքում մենք պետք է նկատի ունենանք, որ անհնար է Եբրայերեն որևէ բայ թարգմանել անգլերենի առանց սահմանափակումներ կիրառելու, որը Եբրայերենում լիովին բացակայում է: Հին Եբրայեցիները երբեք գործողությունը չէին դիտարկում անցյալի, ներկայի կամ ապագայի մեջ, այլ պարզապես որպես *կատարյալ*, այսինքն՝ ավարտված, կամ *անկատար*, այսինքն՝ զարգացման ընթացքի մեջ: Երբ ասում ենք, որ տվյալ Եբրայերեն ժամանակը համապատասխանում է անգլերենի Կատարյալին, Գերակատարին կամ Ապառնուն, մենք նկատի չունենք, որ եբրայեցիները այդ գործողության մասին մտածում էին որպես Կատարյալի, Գերակատարի կամ Ապառնու, այլ պարզապես այն անգլերեն այդպես է պետք թարգմանել: Գործողության *Ժամանակը* եբրայեցիները չէին փորձում արտահայտել որևէ բայի ձևով (նախաբան և էջ՝ 1)»:

Երկրորդ լավ գծուշացմամբ Սյու Գրումը իր *Աստվածաշնչյան Եբրայերենի Լեզվաբանական Վերլուծություն* գրքում մեզ հիշեցնում է.

«Ոչ մի կերպ հնարավոր չէ իմանալ, թե արդյո՞ք հնագույն մեռած լեզուներում ժամանակակից գիտնականների կողմից բառերի արմատական դաշտերի և նշանակության միջև եղած կապերի վերականգնումը պարզապես իրենց սեփական կանխագագումների կամ իրենց մայրենի լեզվի կամ էլ ներկայումս Դասական Եբրայերենում առկա բառերի արմատական դաշտերի անդրադարձը չէ» (էջ՝ 128):

- Գ. Եղանակներ (որոնք միայն հանդիսանում են ժամանակակից արևմտյան լեզուներից քաղված նմանություններ)
1. Պատահեց, պատահում է (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ), սովորաբար կիրառում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակը կամ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ (բոլոր ԴԵՐԲԱՅՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են):
  2. Պատահելու է, կարող էր պատահել (ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ)
    - ա. կիրառում է ընդգծված ԱՆԿԱՏԱՐ ժամանակ
      - (1) ԸՂՁԱԿԱՆ (ավելացված հ), առաջին դեմքի ԱՆԿԱՏԱՐ ձևը, որը ընդհանրապես արտահայտում է ցանկություն, խնդրանք կամ ինքնավստահություն (այսինքն՝ խոսողի կողմից կամեցած գործողություններ)
      - (2) ՀԱՅՅԱԿԱՆ (ներքին փոփոխություններ), երրորդ դեմքի ԱՆԿԱՏԱՐ (ժխտական նախադասություններում կարող է լինել երկրորդ դեմք), որը ընդհանրապես արտահայտում է խնդրանք, թույլտվություն, հորդոր կամ խորհուրդ:
    - բ. Կիրառում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակը *lu* կամ *lule* հետ  
Այս կազմությունները նման են Կոյնե Հունարենի ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություններին: Կեղծ խոսքի (միջանկյալ նախադասություն) արդյունքում առկա է կեղծ եզրակացությունը (վերծանումը):
    - գ. Կիրառում է ԱՆԿԱՏԱՐ ժամանակը և *lu*  
Համատեքստը և *lu*, ինչպես նաև ապագայի կողմնորոշումը, ընդգծում են այս ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ կիրառությունը: Չ. Ուոշ Ուոթսի *Շարահյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts A Survey of Syntax in the Hebrew Old Testament) գրքից մի քանի օրինակներ են ծննդ. 13:16; 2 Օր. 1:12; 3 Թագ. 13:8; Սաղմ. 24:3; Ես. 1:18 (տես՝ էջ 76-77):
  - Դ. *Waw* – Փոխարկելի/հաջորդական/հարաբերական: Այս յուրահատուկ Եբրայերեն (քանաներեն) շարահյուսությունը տարիների ընթացքում մեծ շփոթության պատճառ է հանդիսացել: Այն կիրառվում է տարբեր կերպերով, հաճախ համաձայն ժանրի: Շփոթության պատճառն այն է, որ սկզբնական գիտնականները եղել են Եվրոպացիներ և փորձում էին թարգմանել իրենց մայրենի լեզուների լույսի ներքո: Երբ պարզվեց, որ այսպես դժվար է, նրանք մեղադրեցին խնդրին, որ Եբրայերենը «ենթադրյալ» հնագույն, վաղնջական լեզու է: Եվրոպական լեզուները ԺԱՄԱՆԱԿԻ վրա հիմնված ԲԱՅԵՐ են: Մի քանի տարբերությունների և քերականական կիրարկումներ բնորոշվում էին

ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԻ արմատներին WAW հավելումով: Սա փոխում էր գործողության հանդեպ դիտարկումները:

1. Պատմական գրույցներում ԲԱՅԵՐԸ օրինաչափությամբ կապված են իրար:
2. *Waw* նախածանցը ցույց էր տալիս հատուկ կապ նախորդ ԲԱՅ(ԵՐ)Ի հետ:
3. Ավելի ծավալուն համատեքստը միշտ համարվում է ԲԱՅԻ շղթան հասկանալու բանալին: Սեմական ԲԱՅԵՐԸ չեն կարող առանձին վերլուծվել:

Ջ. Ուոշ Ուոթսը *Ծարսիյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*) նշում է Եբրայերենի տարբերությունը ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻՑ և ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻՑ առաջ *waw* նախածանցի կիրառության մեջ (էջ՝ 52-53): Ինչպես որ ՎԱՂԱԿԱՏԱՐԻ հիմնական գաղափարը անցյալ է, *waw* հավելումը հաճախ պրոյեկտում է այն ապառնի ժամանակի մեջ: Սա նաև ճիշտ է ԱՆԿԱՏԱՐԻ համար, որի հիմնական գաղափարը ներկան կամ ապառնին է. ավելացված *waw* տանում է այն անցյալ: Այս անսովոր ժամանակի փոփոխությունն է, որ բացատրում է *waw*-ի հավելումը, ոչ թե հենց ժամանակի հիմնական նշանակության փոփոխությունը: *Waw* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ լավ են գործում մարգարեության հետ, մինչ *waw* ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ՝ պատմությունների հետ (էջ՝ 54, 68):

Ուոթսը շարունակում է իր սահմանումը՝

«Որպես արմատական տարբերություն *waw* կապի և *waw* հաջորդականի միջև առաջարկվում են հետևյալ թարգմանությունները .

1. *waw* կապը հայտնվում է միշտ զուգահեռ համագոր մատնացույց անելու համար
2. *waw* հաջորդականը հայտնվում է միշտ հաջորդականություն մատնացույց անելու համար: Այն *waw* -ի միակ ձևն է, որ կիրառվում է հաջորդական անկատարներով: Անկատարների միջև եղած հարաբերությունը կապված այս բանի հետ կարող է լինել ժամանակավոր հերթականություն, տրամաբանական հետևանքներ, տրամաբանական պատճառ կամ տրամաբանական հակադրություն: Բոլոր դեպքերում էլ առկա է հաջորդականություն» (էջ՝ 103):

## Ե. ԱՆՈՐՈՇ – Գոյություն ունեն երկու տեսակի ԱՆՈՐՈՇ

1. ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք «ուժեղ, անկախ, ուշագրավ արտահայտություններ են, որ կիրառվում են դրամատիկ էֆեկտների համար: Որպես ենթակա, այն հաճախ չի ունենում գրավոր բայ, իհարկե «լինել» բայը հասկացվում է, սակայն բառն ինքնին մեկուսացված է» (Ջ. Ուոշ Ուոթսը *Ծարսիյուսության Ուսումնասիրություն Եբրայերեն Հին Կտակարանում* (J. Wash Watts *A Survey of Syntax in the Hebrew Old Testament*, էջ՝ 92):
2. ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, որոնք «քերականորեն կապված են նախադասության հետ նախդիրներով, ստացական դերանուններով, և կազմության կապով» (էջ՝ 91):  
Ջ. Ուելնգրինը *Դասական Եբրայերենի Գործնական Զերականություն* (J. Weingreen, *A Practical Grammar for Classical Hebrew*) գրքում նկարագրում է կազմության վիճակը .  
«Երբ երկու (կամ ավելին) բառեր այնքան են սերտորեն կապված, որ միասին նրանք կազմում են մի բաղադրյալ գաղափար, կախյալ բառը (բառերը) ասել է թե կազմության վիճակում է» (էջ՝ 44):

## 2. ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԸ

1. Նախադասության մեջ նրանք միշտ դրվում են սկզբից
2. Մեկնաբանական կարևորությունը  
ա. *ha* – պատասխան չի ակնկալում  
բ. *halo* – հեղինակը ակնկալում է «այո» պատասխան

## ԺԽՏԱԿԱՆՆԵՐԸ

1. Դրանք միշտ դրվում են նախքան ժխտվող բառերը
2. Լայն տարածում գտած ժխտական է *lo*՝
3. *'al* տերմինը ունի պատահականության նշանակություն և կիրառվում է ԸՂԶԱԿԱՆԱՆԻ և ՀԱՅՑԱԿԱՆԻ հետ
4. *lebhilti* տերմինը, որ նշանակում է «որպեսզի . . . չ. . .», կիրառվում է ԱՆՈՐՈՇՆԵՐԻ հետ
5. *'en* տերմինը կիրառվում է ԴԵՐԲԱՅՆԵՐԻ հետ:

## Է. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գոյություն ունեն չորս տեսակի պայմանական նախադասություններ, որոնք իրականում Կոյնե Հունարենում համագործն են:

- ա. ինչ-որ բան, որ ենթադրվում է տեղի է ունենում կամ կարծվում է որպես կատարված (հունարենում ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ)
  - բ. ինչ-որ բան, որ հակառակ է փաստին, որի իրականացումը անհնար է (ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳ)
  - գ. ինչ-որ բան, որը հնարավոր է կամ նույնիսկ հավանական (ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ)
  - դ. ինչ-որ բան, որը ավելի քիչ հավանական է, հետևաբար իրականացումը անստույգ է՝ տարակուսելի (ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳ)
2. ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ
- ա. երբ ենթադրվում է, որ ճիշտ է կամ իրական իրավիճակ, միշտ կիրառվում է ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԴԵՐԲԱՅ և սովորաբար միջանկյալ նախարկությունը /միջանկյալ նախադասությունը/ սկսվում է՝
    - 1) *'im*
    - 2) *ki* (կամ *'asher*)
    - 3) *hin* կամ *hinneh*
  - բ. Փաստին հակառակ իրավիճակը միշտ կիրառում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ասպեկտի ԲԱՅ կամ որևէ ԴԵՐԲԱՅ սկզբնական *lu* կամ *lule* ԴԵՐԲԱՅՈՎ:
  - գ. Ավելի հավանական իրավիճակը միշտ կիրառում է ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ կամ ԴԵՐԲԱՅՆԵՐ նախարկության մեջ, սովորաբար *'im* կամ *ki* են կիրառվում որպես սկզբնական ԴԵՐԲԱՅՆԵՐ
  - դ. Ավելի քիչ հավանական իրավիճակը կիրառում է ԱՆԿԱՏԱՐ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐ նախարկության մեջ և միշտ գործածում է *'im* որպես սկզբնական ԴԵՐԲԱՅ:

## ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

AB	Իտարիսի Աստվածաշունչ (Anchor Bible) մեկնաբանության գիրքը, խմբ. Ուիլյամ Ֆոքսուելի և Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
ABD	Իտարիսի Աստվածաշնչի Բառարան (Anchor Bible Dictionary, 6 vols.), 6 հատոր՝ խմբ. Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
AKOT	Հին Կտակարանի Վերլուծական Բանալի (Analytical Key to the Old Testament) Ջոն Ջոզեֆ Օուենսի կողմից
ANET	Մերձ-արևելյան Հնագույն Տեքստեր (Ancient Near Eastern Texts) Ջեյմս Բ. Պրիտչարդ
BDB	Նոր Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան Ֆ. Բրաունի, Ս. Ռ. Դրայվերի և Ս. Ա. Բրիգգի կողմից
IDB	Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), (The Interpreter's Dictionary of the Bible), խմբ. Ջորջ Ա. Բաթիքի կողմից
ISBE	Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, 5 հատոր, խմբ. Ջեյմս Օրրի կողմից (International Standard Bible Encyclopedia)
JB	Երուսաղեմի Աստվածաշունչ (Jerusalem Bible)
JPSOA	Սուրբ Գիրքը ըստ Մասորետիկ Տեքստի՝ Նոր Թարգմանություն, (The Jewish Publication Society of America)
KB	Հին Կտակարանի եբրայերեն և արամերեն բառարան, Լյուդվիգ Կոհլերի և Վոլտեր Բաումգարտների կողմից
LAM	Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Ջորջ Մ. Լամսայի կողմից
LXX	Մեպտուազինտա (հունարեն-անգլերեն) Չոնդերվանի կողմից, 1970
MOF	Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Ջեյմս Մոֆֆատի կողմից
MT	Մասորետիկ եբրայերեն տեքստը (Masoretic Hebrew Text)
NAB	Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ (New American Bible Text)
NASB	Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ (New American Standard Bible)
NEB	Նոր Անգլերեն Աստվածաշունչ (New English Bible)
NET	Նոր Անգլերեն Թարգմանություն՝ երկրորդ Բետա հրատարակչություն (New English Translation)
NIDOTTE	Հին Կտակարանի աստվածաբանության և էզզեգետիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, խմբ. Ուիլյամ Ա. Վան Գեմերենի կողմից (New International Dictionary of Old Testament Theology and Exegesis)
NIV	Նոր Միջազգային Տարբերակ (New International Version)
NJB	Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ (New Jerusalem Bible)

NKJV	Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (New King James Version)
NRSV	Վերանայված Ստանդարտ Նոր Աստվածաշունչ (New Revised Standard Bible)
OTPG	Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոմ Ս. Բիլի, Ուիլյամ Ա. Բենկսի և Քոլին Սմիթի կողմից (Old Testament Parsing Guide)
REB	Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ (Revised English Bible)
RSV	Վերանայված Ստանդարտ Տարբերակ (Revised Standard Version)
SEPT	Սեպտուագինտան, հունարեն-անգլերեն, Չոնդերվանի կողմից, 1970 (The Septuagint)
TEV	Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից (Today's English Version)
YLT	Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգի կողմից (Young's Literal Translation)
ZPBE	Չոնդերվանի Պատկերազարդ Աստվածաշնչի Հանրագիտարան, իմր. Մերրիլ Ս. Տեննիսի կողմից (Zondervan Pictorial Bible Encyclopedia, 5 vols.)

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեությունն ու Հուդայականությունը պատմական հավատամք են: Դրանց հավատքի հիմքում ընկած են պատմական իրադարձություններ (իրենց մեկնաբանությամբ հանդերձ): Խնդիրն առաջանում է այն ժամանակ, երբ փորձում ենք սահմանել կամ նակարագրել, թե ինչ է «պատմությունը» կամ «պատմական ուսումնասիրությունը»: Ժամանակակից աստվածաբանության մեկնաբանության մեջ խնդրի մեծ մասն ընկած է արդի գրականական կամ պատմական ենթադրությունների վրա, որոնք հետադարձ կերպով պրոյեկտվում են հնագույն Մերձավոր Արևելքի աստվածաշնչյան գրականության մեջ: Ոչ միայն ժամանակավոր և մշակութային, այլ նաև գրականական տարբերությունների պատշաճ գնահատում գոյություն չունի: Որպես արդի արևմտյան ժողովուրդ մենք պարզապես չենք հասկանում հնագույն Մերձավոր Արևելքի գրերի ժանրերն ու գրական մոտեցումները, հետևաբար դրանք մեկնաբանում ենք արևմտյան գրական ժանրերի լույսի ներքո:

Աստվածաշնչյան ուսումնասիրությունների հանդեպ տասնիններորդ դարի մոտեցումը փոշիացրեց և արժեզրկեց Հին Կտակարանի գրքերի պատմական, միասնական փաստաթղթեր լինելու փաստը: Պատմական այս թերահավատությունն ազդել է Հին Կտակարանի հերմենևտիկայի և պատմական հայտնագործության վրա: Ներկայիս «կանոնական հերմենևտիկայի» հանդեպ տենդենցը (Brevard Childs) օգնել է կենտրոնանալու Հին Կտակարանի տեքստի ներկայիս ձևաչափի վրա: Իմ կարծիքով սա օգտակար կամուրջ է հանդիսանում տասնիններորդ դարի գերմանական բարձրագույն քննադատության անդունդի վրա: Մենք պետք է աշխատենք կանոնական տեքստի հետ, որը մեզ է տրվել մի անհայտ պատմական գործընթացի միջոցով, որի ներշնչանքը ենթադրվում է:

Շատ գիտնականներ վերադառնում են ՀԿ-ի պատմականության ենթադրությանը: Սա անշուշտ չի նշանակում, որ անտեսվում է հետազայում հրեա դպիրների կողմից կատարված ՀԿ-ի ակնհայտ խմբագրումներն ու վերանայումները, սակայն դա կարևոր վերադարձ է ՀԿ-ին որպես հավաստի պատմության և իրական դեպքերի արձանագրությունների մոտեցմամբ (իրենց աստվածաբանական մեկնություններով հանդերձ):

Ռ. Կ. Հարրիսոնի *Մեկնաբանի Աստվածաշնչյան Մեկնություն* (R. K. Harrison *The Expositor's Bible Commentary*) հատոր 1, «Հին Կտակարանի պատմական և գրական քննադատություն» հոդվածից այս մեջբերումը շատ օգտակար է.

«Պատմագրական համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քետացիների հետ միասին հնագույն եբրայեցիները Մերձավոր Արևելքի պատմության ամենաճշգրիտ, ամենաօբյեկտիվ և ամենապատասխանատու արձանագրողներն են եղել: Ծննդոցի և Երկրորդ Օրինացի պես գրքերի ձևաչափերի քննադատության ուսումնասիրությունները՝ հիմնված Մարի, Նուզի և Բողազկոյ տարածքներից վերականգնված հատուկ տեսակի արձանագրության տախտակների վրա, ցույց են տվել, որ կանոնական նյութերը Մերձավոր Արևելքի որոշ ժողովուրդների մշակույթներում ունեն հատուկ ոչ գրականական կրկնօրինակներ: Արդյունքում, եբրայեցիների վաղ շրջանի այդ ավանդույթները, որոնք իրենց բնույթով պատմագրական են վկայակոչված, հնարավոր է դիտարկել վստահության և հարգանքի մի նոր աստիճանով» (էջ՝ 232):

Ես հատկապես գնահատում եմ Ռ. Կ. Հարրիսոնի աշխատությունը, քանի որ նա առաջնահերթ է համարում Հին Կտակարանը մեկնաբանել ներկայիս դեպքերի, մշակույթների և ժանրերի լույսի ներքո:

Վաղ շրջանի հրեական գրականության (Ծննդոցից մինչև Երկրորդ Օրինաց և Հեսու) իմ իսկ դասընթացների ժամանակ, ես փորձում եմ արժանահավատ կապ հաստատել հնագույն Մերձավոր Արևելքի մյուս գրականության և արտեֆակտների միջև .

Ա. Ծննդոցը գրական առումով զուգահեռներ ունի հնագույն Մերձավոր Արևելքից .

1. Ծննդոց 1-11-ին հատուկ միջավայի մեզ հայտնի ամենավաղնջական գրական զուգահեռը հանդիսանում է Էբլայի սեպագիր արձանագրությունները, հյուսիսային Սիրիայից, որոնք թվագրվում են Ք. Ա. 2500թ, և գրված են արքադերենով:
2. Արարումը
  - ա. Արարման հետ առնչվող միջագետքյան ամենամոտ արձանագրությունը՝ *Enuma Elish*, թվագրված մոտ Ք. Ա. 1900-1700թթ, հայտնաբերվել է Նինվեյում գտնվող Աշուրբանիպալի գրադարանում և մի քանի այլ վայրերում: Գոյություն ունեն արքադերենով գրված յոթ սեպագիր արձանագրություններ, որոնք նկարագրում են Սարգուքի կողմից կատարած արարչագործությունը:



- 1) աստվածները՝ *Aspu* (թարմ ջուր՝ արական սեռի) և *Tiamat* (աղի ջուր՝ իգական սեռի) ունեին անկառավարելի, աղմկող երեխաներ: Այս երկու աստվածները փորձում էին լեցնել իրենց երիտասարդ աստվածներին:
  - 2) աստծո երեխաներից մեկը՝ *Marduk*, օգնեց, որ հաղթի *Tiamat*-ին: Նա ստեղծեց երկիրը նրա մարմնից:
  - 3) *Մարդուքր* ստեղծեց մարդկությանը մեկ այլ պարտված աստծուց՝ *Kingu*, որը հանդիսանում էր *Tiamat* –ի տղամարդ գուզրնկերը *Aspu*-ի մահից հետո: Մարդկությունը սկիզբ առավ *Kingu*-ի արյունից:
  - 4) *Մարդուքր* դարձավ Բաբելոնյան պանթեոնի գլխավորը:
- բ. «Արարման կնիքը» մի սեպագիր արձանագրություն է՝ քարե տախտակ, որը մերկ տղամարդու և կնոջ պատկեր է մի պտղատու ծառի կողքին, որի բնի վրա փաթաթված օձը գտնվում է կնոջ ուսի մոտ, որը կարծես թե խոսում է նրա հետ:
3. Արարումն ու ջրհեղեղը – *The Atrahasis Epic* –ը արձանագրում է ծանր աշխատանքի պատճառով ավելի փոքր աստվածների ապստամբությունը և յոթ գույզերի ստեղծագործությունը, որպեսզի կատարեն այս փոքր աստվածների պարտականությունները: (1) շատ բնակչության և (2) աղմուկի պատճառով մարդկանց թիվը նվազեց մի աղետի, երկու սովի և ի վերջո ջրհեղեղի միջոցով, որը ծրագրել էր *Enlil*-ը: Այս նույն հիմնական դեպքերը երևում են Ծննդոց 1-8 գլուխներում: Սեպագիր այս նկարագրությունը թվագրված է գրեթե այն նույն ժամանակներից ինչ *Enuma Elish* և *Gilgamesh Epic* (Գիլգամեշի Էպոսը)՝ մոտ Ք.Ա. 1900-1700թթ: Դրանք բոլորն էլ աքքադերենով են:
  4. Նոյի Ջրհեղեղը
    - ա. Նիփուրից մի Ծումերական արձանագրություն, որը կոչվում է *Eridu Genesis*, թվագրված մոտ Ք.Ա. 1600թ, պատմում է *Zivsudra*-ի և գալիք ջրհեղեղի մասին:
      - 1) *Enka*, ջրի աստվածը, զգուշացնում է գալիք ջրհեղեղի մասին:
      - 2) *Zivsudra*, արքայական քահանան փրկվում է մի մեծ նավի մեջ
      - 3) Ջրհեղեղը տևում է յոթ օր
      - 4) *Zivsudra*-ն նավի պատուհանը բացում է և մի քանի թռչուն է բաց թողնում, որպեսզի տեսնի, թե արդյոք ցամաքը հայտնվել է
      - 5) Նա նաև նավից դուրս գալուց հետո մի ցուլ և մի խոյ է գոհ մատուցում:
    - բ. Բաբելոնյան ջրհեղեղի վերաբերյալ շարադրված շումերական հեքիաթները, հայտնի որպես *Գիլգամեշի Էպոս*, բնագրում թվագրված Ք.Ա. 2500-2400թթ, չնայած որ գրավոր արձանագրությունը աքքադերեն սեպագիր էր, շատ ավելի ուշ է եղել: Այն պատմում է ջրհեղեղից փրկված մի մարդու մասին՝ *Utnapishtim*, (Ութնափիշթիմ), որը պատմում է *Գիլգամեշին*՝ Ուռուքի (*Uruk*) թագավորին, թե ինչպես է փրկվել մեծ ջրհեղեղից և որին շնորհվել է հավիտենական կյանք:
      - 1) *Ea*, ջրի աստվածը, զգուշացնում է գալիք ջրհեղեղի մասին և *Ութնափիշթիմին* (Բաբելոնյան *Zivsudra*-ի տարբերակը) ասում, որ մի նավ շինի
      - 2) *Ութնափիշթիմը* և իր ընտանիքը՝ բժշկարար դեղաբույսերի հետ միասին, փրկվում են ջրհեղեղից
      - 3) Ջրհեղեղը տևում է յոթ օր
      - 4) Նավը գալիս և հանգրվանում է Պարսկաստանի հյուսիսարևելյան մասում՝ Նիսիր լեռան վրա:
      - 5) Նա բաց է թողնում երեք տարբեր թռչուններ, որպեսզի տեսնի, թե արդյոք ցամաքը հայտնվել է:
  5. Միջագետքյան գրականությունը, որը նկարագրում է վաղնջական մի ջրհեղեղ, վերցված է միևնույն աղբյուրից: Անունները հաճախ տարբերվում են, սակայն դեպքերի զարգացումը նույնն է: Օրինակներից մեկը, որը *Zivsudra*, *Atrahasis* և *Utnapishtim* բոլորն էլ հանդիսանում են միևնույն մարդ թագավորը:
  6. Ծննդոցի վաղ շրջանի դեպքերի վերաբերյալ պատմական գուգահեռները կարելի է բացատրել նախքան երկրի վրա մարդկության սփյուռքի (Ծննդոց 1-11) Աստծո մասին իր ունեցած գիտելիքների և փորձառությունների լույսի ներքո: Այս իրական պատմական կարևորագույն հուշագրերը մշակվել և առասպելացվել են, դառնալով ներկայումս ամբողջ աշխարհում հայտնի մեր ունեցած ջրհեղեղի մասին արձանագրությունները: Նույնը կարելի է ասել նաև արարչագործության (Ծննդոց 1-2) և մարդկանց և հրեշտակների միության մասին (Ծննդոց 6):
  7. Նահապետների Օրոք (Բրոնզե Միջնադար)

- ա. Mari արձանագրությունները – սեպագիր օրենսդրական (ամոննացիների մշակույթը) և անձնական տեքստեր, որոնք գրված են արքադերենով, մոտ Ք.Ա. 1700թ-ից:
- բ. Nuzi արձանագրությունները – որոշ ընտանիքների սեպագիր արխիվներ (Քոռեցիների մշակույթը), գրված արքադերենով, Նինվեից մոտ 100 մղոն դեպի հարավ-արևելքից, մոտ Ք.Ա. 1500-1300թթ: Դրանք արձանագրում են ընտանեկան և աշխատանքային ընթացակարգեր: Ավելի շատ մասնավոր օրինակների համար տե՛ս Ուոլթոն, էջ 52-58 /Walton, pp. 52-58/:
- գ. Alalakh արձանագրությունները – դրանք սեպագիր տեքստեր են Հյուսիսային Սիրիայից, մոտ Ք.Ա. 2000թ.:
- դ. Ծննդոցում նշվող անուններից մի քանիսը Մարի տախտակների վրա նշված են որպես տեղանուններ՝ Մերուգ, Փեղեգ, Թարա, Նաքովր: Աստվածաշնչյան ևս մի քանի անուններ ընդհանուր տարածում ունենին՝ Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Լաբան և Հովսեփ:
8. «Հարաբերական պատմագրական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Քեոսացիների հետ միասին հնագույն Եբրայեցիները Մերձավոր Արևելքի պատմության ամենաճշգրիտ, ամենաօբյեկտիվ և ամենապատասխանատու արձանագրողներն էին հանդիսանում», Ռ. ԿՀարրիսոն *Մուրբրայի Քննադատություն*, էջ՝ 5 /R. K. Harrison in *Biblical Criticism*, p.5/:
9. Հնագիտությունն ապացուցել է, որ բավականին օգտակար է գտնվել Աստվածաշնչի պատմականության հարցում: Այնուամենայնիվ գոյապահությունը չէր խանգարի: Հնագիտությունը բացարձակ վստահելի ուղեցույց չի կարող հանդիսանալ, քանի որ.
- ա. վաղ շրջանի պեղումներն ունենին աղքատիկ տեխնիկական միջոցներ
- բ. գոյություն ունեն հայնաբերված գտածոների իրարամերժ, շատ սուբյեկտիվ մեկնություններ:
- գ. Հնագույն Մերձավոր Արևելքի ժամանակագրության հետ կապված անհամաձայնությունները (չնայած, որ դրանցից մեկը բխում է երեք օղակներից)
- Բ. Եգիպտական արարչագործության արձանագրությունները կարելի է գտնել Ջոն Ուոլթոնի *Հնագույն Իսրայելական Գրականությունն իր Մշակույթային Համատեքստում* գրքում (John W. Walton's, *Ancient Israelite Literature in Its Cultural Context*. Grand Rapids, MI: Zondervan, 1990. pp.23-24, 32-34):
1. Եգիպտական գրականության մեջ արարչագործությունը սկսվում է մի խառնաշփոթ, քառասյին, նախնադարյան ջրից: Արարչագործությունը դիտարկվում էր որպես ջրային քառսի միջից զարգացող ստրուկտուրա:
2. Մեմփիսից մեզ հասած եգիպտական գրականության մեջ արարչագործությունը տեղի է ունենում Պտահի կողմից արտաբերված խոսքի միջոցով:
- Գ. Հետոն գրականական առումով գուզահեռվում է հնագույն Մերձավոր Արևելքից
1. Հնագիտությունը ցույց է տվել, որ Քանանի մեծ պարսպապատ քաղաքներից շատերը ավերվել են և նորից արագ կերպով վերակառուցվել Ք.Ա. 1250թ-ին:
- ա. Հասոր
- բ. Լաբիս
- գ. Բեթել
- դ. Դաբիր (նախկինում Կարիաթ-Մեփեր կոչվող, 15:15)
2. Հնագիտությանը չի հաջողվել հաստատելու կամ հերքելու Երիքովի անկման արձանագրությունը (տես՝ Հետո 6): Պատճառն այն է, որ այս վայրը շատ վատ վիճակում է.
- ա. եղանակը, տեղանքը
- բ. հետագայում հին տեղանքներում վերակառուցված շինությունները հին շինանյութերով
- գ. շերտերի թվագրության մեջ ունեցած անորոշությունը
3. Հնագետները Գեբաղ լեռան վրա հայտնաբերել են մի զոհասեղան, որը հնարավոր է կապ ունի Հետո 8:30-31 (2 Օրինաց 27:2-9) հետ: Այն շատ նման է Միշնայում (Թալմուդ) գտնվող մի նկարագրության:
4. Ուզարտայում գտնված Ռաս Շամրայի տեքստերը ցույց են տալիս քանանացիների կյանքը և կրոնը Ք.Ա. 1400թ-ին.
- ա. բազմաստվածության բնույթի պաշտամունքը (պտղաբերության ծեսը)
- բ. Էլ –ը որպես գլխավոր աստվածություն
- գ. Էլ-ի գուզընկերն էր Աստվարովթը (հետագայում Բահադի), որին երկրպագում էին քանդակված այունի կամ իրական ծառի տեսքով, որը խորհրդանշում էր «կյանքի ծառը»:

- դ. Նրանց որդին Բահադն էր (Հադդադ), փոթորկի աստվածը
  - ե. Բահադը դարձավ քանանացիների պանթեոնի «բարձրյալ աստվածը»: Անաթը նրա գուգրնկերն էր
  - զ. ծեսերը նման էին Եգիպտոսի Իսիսի և Օսիրիսի ծեսերին
  - է. Բահադի պաշտամունքը կենտրոնացված էր տեղի «բարձր տեղերում» կամ քարե բարձրավանդակներում (ծիսական պռոնկությունը)
  - ը. Բահադը խորհրդապատկերվում էր վեր խոյացող քարե սյունի տեսքով (Փայլիկ խորհրդապատկերը)
5. Հնագույն քաղաքների անունների ճշգրիտ ցանկը համընկնում է տվյալ ժամանակի մի հեղինակի կողմից տրված ցանկի հետ և ոչ թե հետագա խմբագրի կամ խմբագիրների.
- ա. Երուսաղեմը, որը կոչվում էր Հեբուս՝ Հեսու 15:8; 18:16,28
  - բ. Քերթոն, որը կոչվում էր Կարիաթ-Արբա՝ Հեսու 14:15; 15:13,54; 20:7; 21:11
  - գ. Կարիաթարիմը, որը կոչվում էր Բաադա՝ Հեսու 15:9,10
  - դ. Սիդոնը վերաբերում է Փյունիկյան մեծ քաղաքին, և ոչ թե Տիվրոսին՝ Հեսու 11:8; 13:6; 19:28; որը հետագայում դարձավ մայրաքաղաք:

# ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԵՄԱՏԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ

## Միջազգետքի աղբյուրները

1. Հնագույն շատ գրականությունների պես թեման հիմնականում մի թագավոր է կամ մի քանի ազգային հերոսներ:
2. Դեպքերը հաճախ ճոխացված են պրոպագանդայի նպատակներով
3. Սովորաբար ոչ մի բացասական բան չի արձանագրվում:
4. Նպատակը տվյալ ժամանակի հաստատությունների ստատուս քվոյին աջակցելու համար է կամ բացատրելու նոր ռեժիմների գլուխ բարձրանալը
5. Պատմական խեղաթյուրումն իր մեջ ընդգրկում է՝
  - ա. մեծ հաղթանակների ճոխացված լուրերը
  - բ. նախկին ձեռքբերումները ներկայացված որպես տվյալ ժամանակի ձեռքբերումներ
  - գ. միայն դրական կողմերի արձանագրություններ
6. Գրականությունը ծառայում էր ոչ միայն որպես պրոպագանդայի միջոց, այլ նաև որպես դիդակտիկ միջոց

## Եգիպտական աղբյուրները

1. Նրանք պաշտպանում են կյանքի շատ հաստատուն մի տեսակետ, որը ժամանակի կողմից ազդեցության չի ենթարկվում:
2. Գրականության մեծ մասի թեման հանդիսանում է թագավորն ու իր ընտանիքը:
3. Այն Միջազգետքի գրականության պես շատ պրոպագանդոզ է:
  - ա. ոչ մի բացասական երևույթներ
  - բ. ճոխացված երևույթներ

## Ռաբբիական աղբյուրները (ավելի ուշ)

1. Սուրբ Գրերը փորձում էին հարմարեցնել Միդոշաշով, որը փոխանցում է թարգմանչի հավատքը տեքստին և չի կենտրոնանում հեղինակային մտադրության՝ նպատակի վրա, և ո՛չ էլ տեքստի պատմական միջավայրի:
  - ա. *Halakha /հալախա/* գործ ունի կյանքին վերաբերող ճշմարտությունների և կանոնների հետ
  - բ. *Haggada /հագադա/* գործ ունի կյանքի հետ կապված գործնական քայլերի և հորդորների հետ
2. Peshet /փետեթ/ - հետագա զարգացումները ի հայտ են գալիս Մեռյալ Ծովի Մագաղաթներում: Այն կիրառում էր նմանաբանության մոտեցում, որպեսզի տեսնի տվյալ ժամանակի միջավայրում անցյալի իրադարձություններին վերաբերող մարգարեական իրականացումները: Տվյալ ժամանակի միջավայրը մարգարեացված էսկատոնն էր (գալիք նոր դարաշրջանը):

Ակնհայտ է, որ Մերձավոր Արևելքի նմանատիպ ժանրերը և հետագայում Հրեական գրականությունը տարբերվում են Հին Կտակարանի Գրերից: Ծատ առումներով Հին Կտակարանի ժանրերը, չնայած որ հաճախ ունեն ժամանակակից գրականության միևնույն հատկանիշները, բացառիկ են՝ հատկապես պատմական դեպքերի իրենց նկարագրությամբ: Երբայական պատմագրությանն ամենամոտն է Քեռական գրականությունը:

Պետք է ընդունել, որ հնագույն պատմագրությունը մեծապես տարբերվում է ժամանակակից, արևմտյան պատմագրությունից: Հենց այստեղ է գտնվում մեկնաբանության խնդիրը: Ժամանակակից պատմագրությունը փորձում է լինել օբյեկտիվ (առանց պրոպագանդայի, եթե իհարկե սա հնարավոր է) և վավերագրել, արձանագրել «իրականում տեղի ունեցած դեպքերի» ժամանակագրական հերթականությունը: Այն փորձում է վավերագրել պատմական իրադարձությունների «պատճառահետևանքները»: Այն աչքի է ընկնում իր մանրակրկտությամբ:

Պարզապես այն փաստը, որ Մերձավոր Արևելքի պատմությունները նման չեն ժամանակակից պատմություններին, դրանց չի դարձնում սխալ, ցածրորակ կամ ոչ հավաստի: Արևմտյան ժամանակակից պատմություններն արտացոլում են իրենց հեղինակների հակումները (ենթադրությունները): Սուրբգրային պատմությունը իր տեսակով՝ բնույթով (ներշնչանքով) տարբերվող է: Լինում են տեսարաններ, որտեղ աստվածաշնչյան պատմությունը դիտարկվում է ներշնչված հեղինակի հավատքի աչքերով և աստվածաբանական նպատակներով, մինչդեռ մնում է հավաստի պատմական իրադարձություն:

Հին Կտակարանի այս պատմականությունը ինձ համար կարևոր է որպես ուրիշներին իմ հավատքի պաշտպանության միջոց ունենալու համար: Եթե Աստվածաշունչը կարող է ցույց տալ իր պատմականությունը, ապա աստվածաշնչյան հավատքի կոչն ավելի զորեղ է անհավատների համար: Իմ հավատքը չի հանգչում հնազիտության և մարդաբանության պատմական հիմքերի՝ ապացույցների վրա, այլ դրանք օգնում են ինձ ներկայացնելու Աստվածաշնչի պատգամը և դրան հաղորդելու մի այնպիսի հավանականություն, որն այլ կերպ չեմ կարող ունենալ:

Ուստի ամփոփելով ուզում եմ ասել, որ պատմականությունը չի կիրառվում ներշնչանքի ոլորտում, այլ ապոլոգետիկայի և ավետարանչության:

# ԺԱՆՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ . ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## I. Բացման խոսք

Ա. ՀԿ-ի և դեպքերի ժամանակագրության այլ միջոցների միջև կապը

1. Մերձավոր Արևելքի այլ հնագույն գրականությունները առասպելական են և բազմաստվածության բնույթի (հիմնականում մարդասեր աստվածները արտացոլում էին բնության տարերքները՝ ուժերը, սակայն օգտագործելով միջանձնային ընդհարումների շարժառիթներ)
- բ. Հիմնված բնության ցիկլերի վրա (մեռնող և հարություն առնող աստվածներ)
2. Հունահռոմեական գրականությունը ավելի շուտ գվարճանքի և քաջալերանքի համար էր, քան պատմական իրադարձություններ արձանագրելու (Հոմերոսը շատ առումներով արտացոլում է Միջագետքի մոտիվները)

Բ. Հավանաբար գերմաներեն այս երեք տերմինների կիրառությունը լուսաբանում է պատմության տեսակների կամ սահմանումների միջև եղած տարբերությունը

1. “Historie” – դեպքերի արձանագրում (լոկ փաստեր)
2. “Geschichte” – դեպքերի մեկնություն, որոնք ցույց են տալիս դրանց նշանակալիությունը մարդկության համար
3. “Heilsgeschichte” վերաբերում է բացառապես Աստծո փրկագործության ծրագրին և գործին՝ պատմության ընթացքում

Գ. ՀԿ և ՆԿ-ի պատմությունները “Geschichte” են, որը տանում է “Heilsgeschichte”-ի հասկացողությանը: Դրանք ընտրված աստվածաբանական կարևորության պատմական իրադարձություններ են՝

1. միայն ընտրանի դեպքեր
2. ժամանակագրությունն այդքան էլ կարևոր չէ, որքան աստվածաբանությունը
3. դեպքերը պատմվում են ճշմարտություն հայտնելու համար

Դ. ՀԿ-ում պատմությունը ամենատարածված ժանրն է: Գնահատվել է, որ ՀԿ-ի 40%-ը պատմություն է կազմում: Հետևաբար, այս ժանրը հարմար է Հոգու համար Աստծո պատգամն ու բնավորությունը փոխանցելու ընկած մարդկությանը: Սակայն դա կատարվել է ոչ թե ըստ առաջարկության (ինչպես ՆԿ-ի Թ-դթերը), այլ ըստ ենթատեքստի, կանչի կամ ընտրված երկխոսության/մենախոսության: Ինչ-որ մեկը կարող է շարունակել և հարցնել, թե ի վերջո ինչու են դրանք արձանագրվել: Ի՞նչ է այն փորձում շեշտադրել: Ո՞րն է դրա աստվածաբանական նպատակը:

Այն ոչ մի դեպքում նպատակ չի հետապնդում թերագնահատելու պատմությունը: Բայց հանդիսանում է ինքնին պատմություն՝ որպես միջոց և կամուրջ հայտնության համար:

## II. Աստվածաշնչյան պատմությունները

Ա. Աստված գործում է Իր աշխարհում: Աստվածաշնչի ներշնչված հեղինակները ընտրել են որոշակի դեպքեր, որոնցով հայտնում են Աստծուն: ՀԿ-ի գլխավոր գործող կերպարը Աստված Ինքն է:

Բ. Յուրաքանչյուր պատմություն մի քանի կերպ է գործում՝

1. ով է Աստված և ինչ է անում Իր աշխարհում
2. մարդկությունը բացահայտվում է անհատների կամ ազգերի հետ Աստծո ունեցած վարվելակերպով
3. որպես մի օրինակ հատկապես ուշադրություն դարձրեք Հեսուի ռազմական հաղթանակին՝ կապված ուխտի իրագործման հետ (տես՝ 1:7-8; 8:30-35):

Գ. Հանախ պատմությունները իրար են միահյուսված, որպեսզի կազմեն ավելի ընդարձակ գրական բաժին, որը հայտնում է միայն մեկ աստվածաբանական ճշմարտություն:

## III. ՀԿ-ի պատմությունների մեկնաբանական սկզբունքները

Ա. ՀԿ-ի պատմությունների մեկնաբանության վերաբերյալ լավագույն քննարկումը, որ երբևէ ինձ հանդիպել է, դա Դուգլաս Սթյուարթի կողմից *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր ամբողջ Իմաստով*, էջ՝ 83-84 /Douglas Stuart *How To Read the Bible For All Its Worth*, pp. 83-84/:

1. ՀԿ-յան պատմությունը սովորաբար ուղղակիորեն որևէ վարդապետություն չի սովորեցնում

2. ՀԿ-յան պատմությունը սովորաբար լուսաբանում է որևէ վարդապետություն կամ վարդապետություններ, որոնք անուղակիորեն սովորեցվել են մեկ այլ տեղ:
  3. Պատմությունները արձանագրում են այն ինչ պատահել է, և անպայման չէ սովորեցնի, թե ինչ է պատահելու կամ պետք է պատահի ամեն անգամ: Հետևաբար ոչ բոլոր պատմություններն ունեն անհատապես մարդուն վերագրելի բարոյախրատական նպատակ:
  4. Պատմություններում մարդկանց արարքները անպայման չէ, որ լավ օրինակ հանդիսանան մեր համար: Շատ հաճախ լրիվ հակառակն է:
  5. ՀԿ-ի պատմությունների հերոսներից շատերը կատարյալ լինելուց շատ հեռու են, ինչպես նաև իրենց արարքները:
  6. Պատմության ավարտին միշտ չէ, որ մեզ ասվում է, թե արդյոք այն լավ կամ վատ ավարտ ունեցավ: Մեզնից ակնկալվում է, որ դա ինքներս կարողանանք դատել համաձայն Աստծո մեզ ուղղակիորեն կամ կատեգորիկ կերպով Սուրբ Գրքում մեկ այլ տեղ սովորացրածի հիման վրա:
  7. *Բոլոր* պատմությունները ընտրված են և անավարտ: Ոչ բոլոր պատշաճ մանրուքներն են միշտ ներկայացվում (տես՝ Հովհ. 21:25): Այն ինչ հայտնվում է պատմության մեջ, հենց դրանք են, որ ներշնչված հեղինակը հարմար է գտնել, որ մենք իմանանք:
  8. Պատմությունները չեն գրվել, որպեսզի պատասխանեն մեր բոլոր աստվածաբանական հարցերին: Դրանք ունեն որոշակի, հատուկ, սահմանափակ նպատակներ և լուծում են հստակ խնդիրներ, թողնելով որ մյուսները լուծվեն մեկ այլ տեղ, այլ կերպերով:
  9. Պատմությունները կարող են սովորեցնել կամ հստակորեն (պարզ ինչ-որ բան սահմանելով), կամ էլ անվերապահորեն (հստակ ակնարկելով ինչ-որ բանի, առանց այն սահմանելու):
  10. Եվ ի վերջո, Աստված է բոլոր սուրբգրային պատմությունների հերոսը:
- Բ. Պատմությունների մեկնության վերաբերյալ ևս մեկ հետաքրքիր քննարկում գետնոված է Ուոլթեր Բայդերի *Բացատրական Աստվածաբանության Հետքերով* գրքում /Walter Kaiser's *Toward Exegetical Theology*/.
- «Սուրբ Գրքի պատմության բաժինների յուրահատուկ կողմն այն է, որ հեղինակը սովորաբար թույլ է տալիս, որ իր պատմության մեջ մարդկանց բառերն ու գործողությունները հաղորդեն իր պատգամի գլխավոր իմաստը: Այսպիսով, մեզ անմիջական սահմանումներով դիմելու փոխարեն, ինչպիսիք կարելի է գտնել Սուրբ Գրքի վարդապետական կամ ուսմունքային բաժիններում, հեղինակը փորձում է ինչ-որ բանի փոխարեն ինքը մնալ հիմքում, քանի դեռ կարևորվում են ուղղակի ուսմունքը կամ արժեվորվող սահմանումները: Արդյունքում չափազանց կարևոր է դառնում հասկանալու ընդլայնված համատեքստը, որը մեջ տեղավորված է տվյալ պատմությունը և հարցնելու, թե ինչու է հեղինակը կիրառել դեպքերի այս ընտրանին այս որոշակի հերթականությամբ, որի մեջ տեղավորել է դրանք: Նշանակության երկու գաղափարները այժմ կդառնան դրվագների *հերթականությունը* և մանրամասների *ընտրությունը* հավանական խոսքերի, անձերի կամ դրվագների խառնաշփոթի միջից: Բացի այդ աստվածային արձագանքը այդ մարդկանց հանդեպ և նրանց ու դեպքերի գնահատականը պետք է հաճախ որոշվեն հեղինակի կողմից թույլատրված կերպով, թե ինչպես է անձը կամ մարդկանց խումբը պատասխանում ընտրված դեպքերի հերթականության գազաթնակետում, այսինքն՝ արդյոք հեղինակը չի ընդհատում պատմությունը և տալիս իր իսկ (այս դեպքում Աստծո) գնահատականը այն բանին ինչ տեղի է ունեցել» (էջ՝ 205):
- Գ. Պատմություններում ճշմարտությունը գտնվում է ամբողջական գրականական բաժնում և ոչ թե մանրուքների մեջ: Չգուշացե՛ք տեքստով ապացուցելուց կամ ՀԿ-յան պատմությունները որպես ձեր կյանքի համար օրինակներ կիրառելուց:

#### IV. Մեկնաբանության երկու մակարդակներ

Ա. ՅԱՀՎԵի փրկագործության, հայտնության գործերը Աբրահամի սերնդի համար

Բ. ՅԱՀՎԵի կամքը յուրաքանչյուր հավատացյալի կյանքի համար (բոլոր դարերում)

Գ. «Աստծուն ճանաչելու» համար առաջին հստակեցումը (փրկություն); երկրորդը՝ Նրան ծառայելու (հավատքի Թրիստոնեական կյանքը, տես՝ Հռոմ. 15:4; 1 Կորնթ. 10:6,11):

# ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՁԵՉ ՕԳՆԵԼ ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը ռացիոնալ և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հնադարում ներշնչված գրողին այնպես, որ Աստուծոց ուղարկված պատգամը հասկացվի և կիրառվի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը կարևոր է, սակայն դժվար սահմանելի: Այն իր մեջ ընդգրկում է նվիրում և Աստծո առջև բաց վիճակ: Պետք է լինի քաղց (1) Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, (3) Նրան ծառայելու: Այս գործընթացը պահանջում է աղոթք, խոստովանություն և ապրելակերպի փոփոխության հոժարակամություն: Սուրբ Հոգին շատ կարևոր է մեկնության այս գործընթացում, սակայն թե ինչու են անկեղծ և աստվածավախ Քրիստոնյաները Աստվածաշունչը այլ կերպ հասկանում՝ հանելուկ է:

Ռացիոնալ գործընթացը ավելի հեշտ է նկարագրել: Մենք պետք է լինենք հետևողական և ազնիվ տեքստի նկատմամբ և մեր անձնական և հարանվանական հակումների ազդեցության տակ չընկնենք: Մենք բոլորս էլ պատմականորեն պայմանական ենք: Մեզանից ոչ ոք օբյեկտիվ կամ չեզոք մեկնաբան չէ: Այս մեկնաբանության գիրքը առաջարկում է մանրամասն ռացիոնալ գործընթաց, որը պարունակում է մեկնության երեք սկզբունքներ, որոնք նախատեսված են օգնելու մեզ հաղթահարելու մեր հակումները:

## Առաջին սկզբունքը

Առաջին սկզբունքն է նշել այն պատմական միջավայրը, որում գրվել է աստվածաշնչյան գիրքը և հատուկ պատմական իրավիճակը՝ տվյալ գրքի հեղինակին ճանաչելու համար: Բնագրի հեղինակը ուներ նպատակ՝ պատգամը փոխանցելը: Տեքստն ինքնին ոչինչ չի կարող նշանակել մեզ համար, եթե այն իրականում ոչինչ չի նշանակել բնագրի՝ հնում ներշնչված հեղինակի համար: Կարևորը նրա մտադրությունն է, և ոչ թե մեր պատմական, զգացական, մշակութային, անձնական կամ հարանվանական կարիքը: Կիրառությունը մեկնաբանության անբաժանելի մասն է, սակայն ճիշտ մեկնությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Այն պետք է ևս մեկ անգամ հիշեցնի, որ յուրաքանչյուր սուրբգրային տեքստ ունի միայն մեկ նշանակություն: Այս նշանակությունը հենց այն է, ինչ բնագրի հեղինակը մտադիր է եղել Սուրբ Հոգու առաջնորդությամբ փոխանցել իր օրերի մարդկանց: Այս միակ նշանակությունը կարող է ունենալ տարբեր հնարավորին կիրառություններ, տարբեր մշակույթների և իրավիճակների համար: Այս կիրառությունները պետք է կապ հաստատեն բնագրի հեղինակի փոխանցած կենտրոնական ճշմարտության հետ: Այդ իսկ պատճառով, այս սերտորության ուղեցույց մեկնաբանության գիրքը կազմված է Աստվածաշնչյան յուրաքանչյուր գրքի համար տրված ներածական մասով:

## Երկրորդ սկզբունքը

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները տարբերելն է: Աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք միավորված փաստաթուղթ է: Մեկնաբանները իրավունք չունեն առանձնացնելու ճշմարտության մի մասը և անտեսել մյուսները: Ուստի, նախքան առանձին գրական որևէ բաժին մեկնաբանելը մենք պետք է աշխատենք հասկանալ աստվածաշնչյան ամբողջ գրքի իմաստը: Առանձին բաժինները՝ գլուխները, պարագրաֆները կամ համարները, չեն կարող փոխանցել մի այնպիսի իմաստ, որը չի փոխանցում ամբողջ բաժինը: Մեկնությունը պետք է սկսի ամբողջականի դեղուկտիվ մոտեցումից դեպի առանձին մասերի ինդուկտիվ մոտեցում: Ուստի այս մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողին վերլուծելու յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը պարագրաֆներով: Բաժանումներն ըստ պարագրաֆների և գլուխների ներշնչված չեն, սակայն դրանք օգնում են մեզ տարբերակելու բաժիններն ըստ մտքի:

Ըստ պարագրաֆի մեկնաբանությունը՝ և ոչ թե ըստ նախադասության, հատվածի, արտահայտության կամ բառային մեկնաբանության, հանդիսանում է աստվածաշնչյան հեղինակի նկատի ունեցած նշանակությանը հետևելու բանալին: Պարագրաֆները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, որոնք հաճախ կոչվում են թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարագրաֆի մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, հատված և նախադասություն ինչ-որ ձևով կապված է այս ընդհանուր թեմայի հետ: Դրանք կամ սահմանափակում են, ընդլայնում, բացատրում, կամ էլ այն հարցադրում: Ճիշտ մեկնության համար իրական բանալի է հանդիսանում ըստ տարբերության բնագրի հեղինակի մտքին հետևելը՝ առանձին գրական բաժինների միջով, որոնք էլ հենց կազմում են աստվածաշնչյան գիրքը: Այս ուղեցույց հանդիսացող մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողներին այդ անելի համեմատելով ժամանակակից անգլերեն թարգմանությունները: Ընտրված են այս թարգմանությունները, քանի որ դրանք կիրառում են տարբեր թարգմանությունների տեսություններ:

(ա) Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության հունարեն տեքստը վերանայված չորրորդ խմբագրությունն է (The United Bible Society – UBS<sup>4</sup>): Այս տեքստը բաժանվել է պարագրաֆների տեքստային ժամանակակից գիտնականների կողմից:



- (բ) Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (The New King James Version - NKJV) բառ առ բառ գրական թարգմանություն է՝ հիմնված հունարեն ձեռագիր ավանդույթի վրա, որը հայտնի է Textus Receptus անունով: Այս տարբերակի պարագրաֆների բաժանումները ավելի երկար են, քան մյուս թարգմանություններինը: Այսպիսի ավելի երկար ենթաբաժինները օգնում են ուսանողներին տեսնելու ընդհանուր թեմաները:
- (գ) Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (The New Revised Standard Version - NRSV) փոփոխված բառ առ բառ թարգմանություն է: Այն միջնապատ է ձևավորում տվյալ երկու ժամանակակից տարբերակների միջև: Այս գրքի պարագրաֆների բաժանումը բավականին օգտակար է թեմաները տարբերակելու համար:
- (դ) Այսօրվա Անգլերեն Տարբերակը (The Today's English Version - TEV) դինամիկ համարժեք տարբերակ է, որը հրատարակվել է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության կողմից: Այն փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս մարդիկ կամ ընթերցասերները կարողանան հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարագրաֆների բաժանումը կատարված է ըստ խոսողի, քան ըստ թեմայի, այնպես ինչպես NIV (New International Version – Նոր Միջազգային Տարբերակ) թարգմանության մեջ: Մեկնաբանողի նպատակների համար այն օգտավետ չէ: Հետաքրքիր է նշել, որ թե՛ UBS<sup>4</sup> և թե՛ TEV տարբերակները հրատարակվել են նույն անձի կողմից, սակայն դրանց պարագրաֆների բաժանումը տարբերվում են:
- (ե) Երուսաղեմի Աստվածաշունչը (The Jerusalem Bible - JB) դինամիկ համարժեք թարգմանություն է, որը հիմնված է Ֆրանսերեն Կաթոլիկ թարգմանության վրա: Այն շատ օգտակար է համեմատելու համար պարագրաֆների բաժանումը Եվրոպական տեսանկյունից:
- (զ) Տպագրված տեքստը 1995 թ. թարմացված Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչն է (New American Standard Bible /NASB/), որը բառ առ բառ թարգմանություն է: Ըստ համարների մեկնաբանությունների ժամանակ օգտագործվում է պարագրաֆային այս բաժանումը:

### **Երրորդ Սկզբունք**

Երրորդ սկզբունքն է Աստվածաշունչը կարգալ տարբեր թարգմանություններով, իմաստը հնարավորինս ամենաընդլայնված շրջանակներում (իմաստաբանական դաշտը), որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերը կամ արտահայտությունները, հասկանալու համար: Հաճախ հունարեն բառը կամ արտահայտությունը կարելի է մի քանի կերպով հասկանալ: Այս տարբեր թարգմանություններից բխում են այլ տարբերակներ, որոնք օգնում են հասկանալու և բացատրելու հունարեն ձեռագրի տարբերակները: Սրանք չեն ազդում վարդապետության վրա, սակայն օգնում են մեզ վերադառնալու հին դարերում ներշնչված հեղինակի կողմից գրված բնագիր տեքստին:

### **Չորրորդ Սկզբունք**

Չորրորդ սկզբունքը գրական ժանրը նշելն է: Բնագրի ներշնչված հեղինակները ընտրում են արձանագրել իրենց պատգամները տարբեր ժանրերում (օր.՝ պատմական իրադարձություն, պատմական դրամա, պոեմ, մարգարեություն, ավետարան [առակ], նամակ, հայտնություն): Այս տարբեր ժանրերը ունեն մեկնաբանության համար հատուկ բանալիներ (տե՛ս՝ Գորդոն Ֆի և Դազ Ստյուարտ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով* կամ Ռոբերտ Սթեյն, *Իտաղալ Կանոններով*, /Gordon Fee and Doug Stuart, *How to read the Bible for All Its Worth* or Robert Stein, *Playing by the Rules*):

Այս մեկնաբանության գիրքը ուսանողին առաջարկում է իր մեկնությունը ստուգելու արագ միջոց: Այն վերջնական չէ, այլ տեղեկատվական և խորհելու առիթ ընձեռնող: Հաճախ մյուս հնարավորին մեկնաբանությունները օգնում են մեզ չլինելու սահմանափակ, դոգմատիկ և հարանվանական: Մեկնաբանները կարիք ունեն ավելի լայն թարգմանչական շրջանակների, որպեսզի հասկանան, թե որքան անորոշ կարող է լինել հնագույն տեքստը: Ապշեցուցիչ է, թե որքան քիչ համաձայնություն կա Քրիստոնյաների միջև, որոնք պնդում են, որ ճշմարտության իրենց աղբյուրը Աստվածաշունչն է:

Այս սկզբունքներն օգնել են ինձ հաղթահարել շատ պատմական համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ չափազանց ուշադիր վերաբերվել հնագույն տեքստերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ այն օրհնություն կլինի նաև ձեր համար:

Բոր Աթի  
Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարան  
Հունիս 27, 1996

# Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վատահեղի ճշմարտության անձնական ուսումնասիրություն

Կարո՞ղ ենք մենք իմանալ ճշմարտությունը: Որտե՞ղ գտնել այն: Կարո՞ղ ենք այն տրամաբանորեն հաստատել: Արդյո՞ք գոյություն ունի վերջնական ապացույց: Արդյո՞ք կան բացարձակ ճշմարտություններ, որոնք կարող են առաջնորդել մեր կյանքը, մեր աշխարհը: Արդյո՞ք կյանքն իմաստ ունի: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ր ենք գնում: Այս հարցերը՝ որոնց շուրջ բոլոր բանական մարդիկ խորհում են, հետապնդել են մարդկային բանականությանը ժամանակի գոյությունից ի վեր (Ժող.1:13-18; 3:9-11): Ես կարող եմ հիշել իմ անձնական փնտրտուքները կյանքիս ինտեգրման կենտրոնի համար: Ես դարձել եմ Քրիստոնյա հավատացյալ երիտասարդ տարիքում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիքում նշանակալի մարդկանց վկայությունների վրա: Երբ հասունացա, հասունացան նաև իմ և ինձ շրջապատող աշխարհի մասին հարցերս: Պարզ մշակութային կամ կրոնական կյիշեները չէին իմաստավորում իմ կարդացած կամ վերապրած փորձառությունները: Դա շփոթության, փնտրտուքի, երազանքների և հաճախ հուսահատության զգացողության ժամանակ էր՝ ի դեմս այս անգամ, բարդ աշխարհի, որտեղ ապրում էի:

Շատերը պնդում էին, որ ունեն այս կարևոր հարցերի պատասխանները, թեև հետազոտելուց և խորհելուց հետո հասկացա, որ նրանց պատասխանները հիմնված էին (1) իրենց անձնական փիլիսոփայության, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառության կամ (4) հոգեբանական կանխատեսումների վրա: Ես կարիք ունեի ստույգության որոշակի աստիճանի, վկայությունների, ինչ-որ բանականության, որի վրա կարող էի հիմնել իմ աշխարհայացքը, ինտեգրման կենտրոնը, սարքելու իմ նպատակը:

Այս բոլորը ես գտա Աստվածաշնչի իմ ուսումնասիրության մեջ: Սկսեցի փնտրել արժանահավատության փաստեր, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական հուսալիության մեջ, որը հաստատված է երկրաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրտության մեջ, (3) իր ամբողջացվելու համար ավելի քան հազար վեց հարյուր տարի տևած Աստվածաշնչի պատգամի միաբանության մեջ և (4) մարդկանց վկայությունների հիման վրա, որոնց կյանքերը Աստվածաշնչի հետ շփվելու արդյունքում ընդմիշտ փոխվել էին: Քրիստոնեությունը, որպես հավատքի և հավատամքի միավորված համակարգ, կարողանում է աշխատել մարդկային կյանքի բարդ հարցերի հետ: Այն ոչ միայն ապահովեց բանական հիմք, այլ նաև աստվածաշնչյան հավատքի փորձառական առանձնահատակությունը ինձ տվեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել եմ իմ կյանքի ինտեգրման կենտրոնը՝ Քրիստոսին, երբ հասկացա այն Սուրբ Գրքի միջոցով: Դա արբեցնող փորձառություն էր, զգայական ազատագրում: Համենայն դեպս, ես դեռ կարող եմ հիշել այն ցնցումը և ցավը, որ վերապրեցի, երբ հասկացա, թե այս գրքի քանի տարբեր մեկնություններ էին պաշտպանվում, երբեմն նույնիսկ միևնույն եկեղեցիների և միևնույն մտածելակերպի դպրոցների ներսում: Աստվածաշնչի ներշնչված լինելու ու արժանահավատության հաստատումը դեռևս վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս եմ հիմնավորում կամ հերքում Աստվածաշնչում շատ խրթին հատվածների տարբերվող և իրարամերժ մեկնությունները, որոնք կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք պնդում են դրա հեղինակությունը և արժանահավատությունը:

Այս աշխատանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտը: Ես գիտեի, որ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը բերել է անսահման խաղաղություն և ուրախություն: Իմ մշակույթի հարաբերականության, իրարամերժ կրոնական համակարգերի դոգմատիզմի և հարանվանական գոռոզամտության մեջ միտքս փափագում էր բացարձակ ճշմարտությունների: Անտիկ գրականության մեկնությանը ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու իմ փնտրտուքների մեջ զարմացա, որ հայտաբերեցի իմ իսկ պատմական, մշակութային, հարանվանական և փորձառական շեղումները: Աստվածաշունչը հաճախ ես կարդացել էի միայն իմ սեփական հայացքները հաստատելու համար: Ես օգտագործել էի այն որպես դոգմայի աղբյուր հարձակվելու ուրիշների վրա, մինչ վերահաստատում էի իմ իսկ անհաստատ կողմերն ու թուլությունները: Որքա՞ն ցավալի էր այս գիտակցումն ինձ համար:

Չնայած որ երբեք չեմ կարող լինել օբյեկտիվ, այնուամենայնիվ կարող եմ դառնալ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները՝ ընդունելով դրանք և դրանց առկայությունը: Ես տակավին չեմ ազատվել դրանցից, սակայն առճակատվել եմ իմ սեփական թերությունների հետ: Հաճախ մեկնաբանը լավ Աստվածաշունչ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք թվարկել մի քանի նախադրյալներ, որոնք ես ներառում եմ իմ Աստվածաշնչյան սերտորության մեջ, որպեսզի դուք՝ ընթերցողներդ, կարողանաք ինձ հետ միասին դրանք ուսումնասիրել:

## Նախադրյալներ

1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը բացառապես ներշնչված՝ միակ ճշմարիտ Աստծո ինքնահայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բնագրի աստվածային հեղինակի (Հոգու) մտադրության լույսի ներքո, որը գրվել է մարդու կողմից՝ հատուկ պատմական միջավայրում:


2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է հասարակ մարդկանց՝ բոլորի համար: Աստված հարմար է գտել պատմական և մշակութային համատեքստում հստակ խոսել մեր հետ: Աստված չի թաքցնում ճշմարտությունը, այլ ուզում է, որ այն հասկանանք: Հետևաբար, այն պետք է մեկնաբանվի այդ օրերի և ոչ թե մեր օրերի լույսի ներքո: Աստվածաշունչը չպետք է նկատի ունենա մեր համար մի բան, որը նկատի չի ունեցել առաջին անգամ կարդացողների կամ լսողների համար: Այն հասկանալի է միջին հասկացողության տեր մարդկանց համար և կիրառում է նորմալ հաղորդակցության միջոցներն ու տեխնիկաները:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը ունի մի պատգամ և մի նպատակ: Այն ինքն իրեն չի հակասում, թեև պարունակում է խրթին և պարադոքսալ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքը Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (ներառյալ մարգարեությունները) ունի միայն մեկ նշանակություն՝ հիմնված բնագրի ներշնչված հեղինակի մտադրության վրա: Թեև երբեք չենք կարող կատարյալ վստահությամբ ասել, որ գիտենք բնագրի հեղինակի մտադրությունը, սակայն շատ ցուցանիշներ մատնանշում են դա.
  - ա. ժանրը (գրական ձևաչափը), որը ընտրվել է արտահայտելու ուղղերձը
  - բ. պատմական միջավայրը կամ հատուկ իրավիճակը, որը երևան է բերել այդ գրությունը
  - գ. ամբողջական գրքի, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժնի գրական համատեքստը
  - դ. գրական բաժինների տեքստային կառուցվածքը (ուրվագիծը), երբ դրանք կապ ունեն ընդհանուր ուղղերձի հետ
  - ե. պատգամը փոխանցելու համար կիրառված քերականական առանձնահատկությունները
  - զ. բառերը, որոնք ընտրվել են պատգամը ներկայացնելու համար
  - է. գուգահեռ հատվածները

Այս կետերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը դառնում է տվյալ հատվածի մեր ուսումնասիրության առարկան: Նախքան Աստվածաշնչի լավ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը թույլ տվեք պատկերել մի քանի աննպատակահարմար մեթոդներ, որոնք օգտագործվում են այսօր, պատճառ հանդիսանալով մեկնաբանությունների տարբերության, և հետևաբար պետք է դրանցից խուսափել.


## I. Աննպատակահարմար մեթոդներ

- Ա. Անտեսելով Աստվածաշնչյան գրքերի գրական համատեքստը և կիրառելով յուրաքանչյուր նախադասություն, ենթանախադասություն կամ նույնիսկ առանձին բառեր որպես ճշմարտության սահմանումներ, որոնք կապ չունեն հեղինակի մտադրության կամ ընդլայնված համատեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «տեքստային ապացույց»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը փոխարինելով այն ենթադրյալ պատմական միջավայրով, որը քիչ է պաշտպանվում կամ ընդհանրապես չի պաշտպանվում հենց տվյալ տեքստի կողմից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և կարդալով այն որպես առավոտյան լրագիր՝ գրված հատուկ միայն արդի Քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և տեքստը ներկայացնելով խորհրդապատկերներով որպես փիլիսոփայական, աստվածաբանական ուղղերձ, որն ընդհանրապես կապ չունի այն առաջին անգամ լսողների և բնագրի հեղինակի մտադրության հետ:
- Ե. Անտեսելով բնագիր ուղղերձը, այն փոխարինելով սեփական աստվածաբանությամբ, սիրված վարդապետությամբ կամ ժամանակակից թողարկմամբ, որոնք չեն առնչվում բնագրի հեղինակի նպատակի և արձանագրված ուղղերձի հետ: Այս երևույթը հաճախ հաջորդում է Աստվածաշնչի առաջին ընթերցմանը, որպես միջոց հաստատելու խոսողի հեղինակությունը: Սա հաճախ կոչվում է «ընթերցողի արձագանք» («ինչ է նշանակում տեքստն ինձ համար»):

Առնվազն երեք կապակցված բաղադրիչներ կարելի է գտնել մարդկային բոլոր գրավոր հաղորդակցությունների մեջ.



Նախկինում ընթերցանության տարբեր մեխանիզմներ կենտրոնացել են այս երեք բաղադրիչներից մեկի վրա: Սակայն Սուրբ Գրքի ներշնչանքն ավելի հարմար է հաստատել հետևյալ փոփոխված սխեմայով:



Իրականում բոլոր երեք բաղադրիչները պետք է ընդգրկված լինեն մեկնաբանության գործընթացին: Ստուգելու նպատակով, իմ մեկնաբանությունը կենտրոնանում է առաջին երկուսի վրա՝ բնագրի հեղինակի և տեքստի: Հավանաբար ես արձագանքում եմ այն շահարկումներին, որոնք նկատել եմ (1) տեքստի խորհրդապատկերորեն ներկայացնելու կամ հոգևորացնելու մեջ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանության մեջ (ինչ իմաստ ունի ինձ համար): Շահարկում հնարավոր է յուրաքանչյուր փուլում:

Մենք պետք է միշտ ստուգենք մեր շարժառիթները, հակումները, մեխանիզմները և կիրարկումները: Բայց ինչպե՞ս ենք մենք դրանք ստուգում, եթե մեկնաբանությունների համար սահմաններ և չափանիշներ գոյություն չունեն: Ահա այստեղ է, որ հեղինակի նպատակը և տեքստային կառուցվածքը ապահովում են մի քանի չափանիշներ՝ հնարավորինս սահմանափակելու ճիշտ մեկնաբանության շրջանակը:

Սուրբ Գրքի ընթերցանության այս աննպատակահարմար մեխանիզմների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշունչը լավ կարդալու և մեկնաբանելու համար այն մի քանի հնարավոր կերպերը, որոնք առաջարկում են հիմնավորման և հաստատման աստիճան:

## II. Աստվածաշնչյան լավ ընթերցանության հնարավոր կերպեր

Այս պահին ես չեմ քննարկում հատուկ ժանրի պատկանող մեկնաբանության մեխանիզմներ, այլ ընդհանուր հերմենևտիկ սկզբունքներ, որոնք հարմար են աստվածաշնչյան բոլոր տեքստերին: Հատուկ ժանրի վերաբերող լավ գիրք է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով» Չոնդերվան հրատարակչության (*How To Read The Bible In All Its Worth* Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդը կենտրոնանում է առաջնահերթ ընթերցողի վրա, որը թույլ է տալիս Սուրբ Հոգուն լուսավորել Աստվածաշունչը անձնական ընթերցանության չորս ցիկլերի միջոցով: Այս մեթոդը Սուրբ Հոգուն, տեքստը և ընթերցողին դիտարկում է ոչ թե երկրորդական դերում, այլ առաջնային: Այն նաև ընթերցողին պաշտպանում է մեկնաբանների անհարկի ազդեցությունից: Ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Աստվածաշունչը շատ լույս է գցում մեկնաբանությունների վրա»: Այս ասելով նպատակ չունեմ թերագնահատել սերտողությանը օգնող մեկնությունները, այլ խնդրել, որ դրանք անպատեհ չկիրառեք:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնությունները հիմնավորել հենց տեքստից: Վեց ոլորտներ ապահովում են առնվազն սահմանափակ հիմնավորումներ.

1. Պատմական միջավայրը
2. Գրական համատեքստը
3. Քերականական կառուցվածքը (շարահյուսություն)
4. Արդի բառապաշարի կիրառությունը
5. Համապատասխան գուգահեռ հատվածները
6. Ժանրը

Մենք պետք է կարողանանք ապահովել մեր մեկնաբանությունների հիմքում ընկած պատճառներն ու տրամաբանությունը: Աստվածաշունչը մեր հավատքի և դրա կիրառման համար միակ աղբյուրն է: Ցավոք Քրիստոնյաները հաճախ համաձայնության չեն գալիս Աստվածաշնչի ուսմունքների և

հիմնավորումների շուրջ: Ընթերցանության այս չորս ցիկլերը նախատեսված են ապահովելու հետևյալ մեկնաբանական հասկացությունները՝

1. Ընթերցանության առաջին ցիկլը

- ա. Կարդացեք գիրքը մեկ անգամ նստելով. ևս մեկ անգամ կարդացեք այն այլ թարգմանությամբ, լավագույն դեպքում մեկ այլ թարգմանական տեսությամբ:
  - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
  - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
  - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Փնտրեք ամբողջ գրքի գլխավոր նպատակը: Գտեք գրքի թեման:
- գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական մի բաժին, պարագրաֆ կամ նախադասություն, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման
- դ. Գտեք գերակշռող գրական ժանրը
  - (1) Հին Կտակարան
    - ա) Եբրայերեն պատմվածք
    - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստասիրական գրականություն, սաղմոսներ)
    - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, պոեզիա)
    - դ) Օրենսգիրք
  - (2) Նոր Կտակարան
    - ա) Պատմվածքներ (Ավետարաններ, Գործքը)
    - բ) Առակներ (Ավետարաններ)
    - գ) Նամակներ/թղթեր
    - դ) Հայտնության գրականություն

2. Ընթերցանության երկրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ նյութերը
- բ. Ընդգծեք հիմնական թեմաները և համառոտ սահմանեք դրանց բովանդակությունը
- գ. Ստուգեք ձեր նպատակի սահմանումը և ընդլայնեք ընդհանուր նկարագրությունը սերտողությանը օժանդակող միջոցներով

3. Ընթերցանության երրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել պատմական միջավայրը և հենց Աստվածաշնչի միջից հատուկ իրավիճակներ այդ գիրքը գրելու համար
- բ. Թվարկեք պատմական իրողություններ, որոնք նշված են Աստվածաշնչյան տվյալ գրքում
  - (1) հեղինակը
  - (2) տարեթիվը
  - (3) ստացողները
  - (4) գրի առնվելու հատուկ նպատակը
  - (5) մշակության միջավայրի առանձնահատկությունները, որոնք կապված են գրքի գրի առնվելու նպատակի հետ
  - (6) պատմական դեպքերի և դեմքերի հետ կապված խոսքերը
- գ. Ընդլայնեք ձեր ուրվագիծը՝ սխեման, պարբերությունների մակարդակի՝ աստվածաշնչյան գրքի տվյալ բաժնի համար, որը մեկնաբանում է: Միշտ գտեք և ընդգծեք գրական ժանրը: Սա կարող է լինել մի քանի գլուխ կամ պարբերություն: Այն հնարավորություն է տալիս ձեզ հետևելու բնագրի հեղինակի տրամաբանությանն ու տեքստային կառուցվածքին:
- դ. Ստուգեք պատմական միջավայրը սերտողությանը օժանդակող միջոցներով

4. Ընթերցանության չորրորդ ցիկլը

- ա. Վերընթերցեք տվյալ գրականական բաժինը մի քանի թարգմանություններով
  - (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
  - (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
  - (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Գտեք գրականական կամ քերականական կառուցվածքը
  - (1) կրկնվող արտահայտությունները, Եփես.1:6,12,13
  - (2) կրկնվող քերականական կառուցվածքները, Հռոմ.8:31
  - (3) հակադրվող հասկացությունները

- գ. Թվարկեր հետևյալ կետերը
- (1) կարևոր տերմինները
  - (2) անսովոր տերմինները
  - (3) կարևոր քերականական կառուցվածքները
  - (4) հատկապես դժվար բառերը, հատվածները և նախադասությունները
- դ. Գտեք համապատասխան զուգահեռ հատվածները
- (1) թեմայի շուրջ փնտրեք տվյալ ուսմունքի հետ կապ ունեցող ամենահստակ հատվածը, կիրառելով ա) «սիստեմատիկ աստվածաբանության» գրքեր, բ) համագոր հատվածները նշող Աստվածաշնչեր, գ) համաբարբառներ
  - (2) ձեր թեմայի շրջանակներում գտեք հնարավոր պարադոքսալ զույգ: Բազմաթիվ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են բարբառային զույգերով. շատ հարանվանական հակասություններ ծնվում են աստվածաշնչյան լարվածության միայն կեսի համար «տեքստային ապացույց» ներկայացնելու պատճառով: Ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված և մենք պետք է փնտրենք դրա ամբողջական պատգամը, որպեսզի մեր մեկնաբանության համար ապահովենք սուրբգրային բալանսը:
  - (3) Գտեք զուգահեռներ նույն գրքի, հեղինակի կամ ժանրի ներսում. Աստվածաշունչը հանդիսանում է իր իսկ լավագույն մեկնաբանը, քանի որ հեղինակը մեկն է՝ Սուրբ Հոգին:
- ե. Օգտագործեք սերտողությանը օժանդակող միջոցներ ստուգելու պատմական միջավայրի և դեպքերի ձեր ուսումնասիրությունները:
- (1) սերտողության Աստվածաշնչեր
  - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
  - (3) աստվածաշնչյան ներածություններ
  - (4) աստվածաշնչյան մեկնաբանությունների գրքեր (այս դեպքում ձեր սերտողության ընթացքում թույլ տվեք անցյալի ու ներկայի հավատացյալ համայնքին օգնեն և ուղղեն ձեր անձնական սերտողությունը):

### III. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Այժմ անցում ենք կատարում կիրառությանը: Դուք ժամանակ տրամադրեցիք հասկանալու տեքստը իր բնագրի միջավայրում: Այժմ պետք է այն կիրառեք ձեր կյանքի, մշակույթի մեջ: Աստվածաշնչի հեղինակությունը ես սահմանում եմ հետևյալ կերպ. «հասկանալ, թե ինչ էր ասում բնագրի հեղինակը իր օրերի համար և կիրառել այդ ճշմարտությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բնագրի հեղինակի՝ թե՛ ժամանակի և թե՛ տրամաբանության մեջ, մեկնաբանության նպատակին: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի որևէ պատգամ մեր օրերի համար մինչև չհամանք, թե ինչ էր դա արտահայտում իր օրերի համար: Աստվածաշնչի պատգամը չպետք է երբևէ փոխի իր իմաստը:

Ձեր կազմած մանրակրկիտ ուրվագիծը՝ ըստ պարբերությունների (ընթերցանության երրորդ ցիկլը) կլինի ձեր ուղեցույցը: Կիրառությունը պետք է կազմվի ըստ պարբերությունների և ոչ թե մի խոսքի հիման վրա: Բառերն իմաստ ունեն միայն համատեքստի ներսում. նախադասության ենթամասերը նույնպես իմաստ են արտահայտում միայն համատեքստի ներսում. նախադասությունները նույնպես իմաստավորվում են համատեքստի ներսում: Միակ ներշնչված անձնավորությունը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում՝ բնագրի հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լույսի ներքո: Սակայն լուսավորված լինելը դեռևս ներշնչանք չէ: Որպեսզի ասենք, որ «այսպես է ասում Տերը», մենք պետք է մնանք բնագրի հեղինակի նպատակի մեջ: Կիրառությունը պետք է կապված լինի հատկապես ամբողջ գրքի, գրականական բաժնի և պարբերության մտքի զարգացման ընդհանուր նպատակի հետ:

Թույլ մի տվեք, որ մեր օրերի խնդիրները մեկնաբանեն Աստվածաշունչը. թողեք, որ Աստվածաշունչը խոսի: Հնարավոր է այդ անելու համար մեզնից պահանջվի տեքստից հանել սկզբունքներ: Մա հավաստի կլինի, եթե տեքստը պաշտպանի տվյալ սկզբունքը: Դժբախտաբար, շատ դեպքերում մեր սկզբունքները պարզապես «մերն» են և ոչ թե տեքստինը:

Աստվածաշունչը կիրառելու հարցում կարևոր է հիշել, որ Աստվածաշնչյան տվյալ տեքստի (բացառությամբ մարգարեությունների) համար միայն մեկ նշանակությունն է ճիշտ: Այդ նշանակությունը կապված է բնագրի հեղինակի մտադրության հետ, երբ նա կիրառում էր իր օրերի որևէ ճգնաժամ կամ

կարիք: Հնարավորին շատ կիրառություններ կարող են սերվել այս մեկ նշանակությունից: Կիրառությունը հիմնված կլինի նամակը ստացողների կարիքների հիման վրա, սակայն պետք է կապված լինի բնագրի հեղինակի նպատակի հետ:

#### IV. Մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունները

Մինչ այժմ քննարկեցի մեկնաբանության և կիրառության մեջ առկա տրամաբանական և տեքստային գործընթացները: Այժմ թույլ տվեք համառոտ քննարկել մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունը: Հետևյալ ստուգացանկը ինձ օգտակար է եղել.

1. Աղոթեք, որ Սուրբ Հոգու օգնի ձեզ (տես՝ 1 Կորնթ.1:26-2:16)
2. Աղոթեք անձնական ներման և ձեզ հայտնի մեղքերից մաքրվելու համար (տես՝ 1 Հովհ.1:9)
3. Աղոթեք Աստծուն ավելի ճանաչելու ցանկության համար (տես՝ Մաղմ.19:7-14; 42:1ա; 119:1ա)
4. Կիրառեք ցանկացած նոր գաղափար անմիջապես ձեր կյանքի համար
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Դժվար է պահել տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև հավասարակշռությունը: Հետևյալ մեջբերումները օգնել են ինձ բավանասովորելու այս երկուսը.

1. Ջեյմս Վ. Սայր, *Սուրբ Գրքի Աղավաղում*, էջ 17-18, (James W. Sire, *Scripture Twisting*)  
«Լուսավորություն գալիս է Աստծո ժողովրդի մտածելակերպի վրա և ոչ թե միայն հոգևոր էլիտայի: Աստվածաշնչյան Քրիստոնեության մեջ գուրու դասակարգում գոյություն չունի, ո՛չ լուսավորյալներ, և ո՛չ էլ մարդիկ, որոնց միջոցով պետք է հատուկ մեկնաբանություններ կատարվեն: Այսպիսով, մինչ Սուրբ Հոգին տալիս է իմաստության, գիտության և հոգևոր զանազանության հատուկ պարզևները, Նա չի նշանակում այս պարզևներով օժտված Քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանները: Իր ժողովրդից յուրաքանչյուրը կարող է սովորել, քննել և զանազանել Աստծո Խոսքը, որը նաև հեղինակություն է հանդիսանում նույնիսկ այն մարդկանց համար, որոնց Աստված հատուկ կարողություններ է տվել: Ամփոփելով, ուզում եմ կիսվել իմ ենթադրությամբ ամբողջ գրքի վերաբերյալ. Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն մեր մեծագույն հեղինակությունն է բոլոր այն հարցերում, որոնց մասին խոսվում է այնտեղ. այն ընդհանրապես առեղծվածային չէ և կարող է ցանկացած մշակույթի մեջ ապրող հասարակ մարդու համար լիովին հասկանալի լինել»:
2. Ըստ Կիրկգարդի, տեղ գտած Բերնարդ Ռեմի, *Բողոքական Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, էջ 75 գրքում (Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*):  
Համաձայն Կիրկգարդի, Աստվածաշնչի քերականական, բառային և պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտ է, սակայն առաջնային է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Մարդը պետք է կարդա Աստվածաշունչը *որպես Աստծո Խոսք*՝ սիրտն իր բերանի մեջ առած, իր ոտքի ծայրերի վրա կանգնած, ակնկալությամբ և Աստծո հետ հաղորդակցվելով: Աստվածաշունչը անմտությամբ, անուշադրությամբ, ակադեմիկորեն կամ մասնագիտորեն կարդալը դեռ չի նշանակում ընթերցել այն որպես Աստծո Խոսք: Երբ մեկն ընթերցում է այս Գիրքը որպես սիրո նամակ, այն ժամանակ է, որ կարդում է Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք»:
3. Հ. Հ. Ռոուլի *Աստվածաշնչի Արդիականությունը*, էջ 19 (H.H. Rowley in *The Relevance of the Bible*):  
«Ոչ մի Աստվածաշնչյան լիարժեք գիտելիք չի կարող տիրել նրա բոլոր զանձերին: Այն չի հերքում նմանօրինակ գիտելիքները, քանի որ կարևոր են այն լիարժեք հասկանալու համար: Սակայն դա պետք է առաջնորդի այս գրքի հոգևոր զանձերի հոգևոր գիտությանը, եթե ուզում եք այն լիարժեք լինի: Իսկ այդ հոգևոր գիտության համար անհրաժեշտ է ավելին, քան ողջամտությունն է: Հոգևոր բաները հոգևորապես են քննվում և Աստվածաշունչն ուսումնասիրողը պետք է ունենա հոգևոր ընկալունակությամբ մոտեցում, Աստծուն գտնելու մեծ փափագ, որպեսզի կարողանա հանձնվել Նրան, եթե ուզում է հասնել գիտական ուսումնասիրություններից վեր՝ բոլոր գրքերից ամենահրաշալի Գրքի ավելի հարուստ ժառանգությանը»:

#### V. Այս մեկնաբանության գրքի մեթոդը

Այս *Մեթոդական Ուղղեցույց Մեկնաբանության Գիրքի* նախատեսված է ձեր մեկնաբանական գործընթացին հետևյալ կերպ աջակցելու համար՝

1. Ամեն գիրք համառոտ ծանոթացնում է պատմական միջավայրի հետ: «Ընթերցանության երրորդ ցիկլը» վերջացնելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Ամեն գլխի սկզբում կան համատեքստային հասկացություններ: Սրանք կօգնեն ձեզ տեսնելու, թե ինչպես է կառուցված գրականական բաժինը:
3. Ամեն գլխի կամ հիմնական գրականական բաժնի սկզբում տրված են մի քանի պարբերության բաժանումներ արդի թարգմանություններից և դրանց պատկերավոր լուսաբանումները.

- ա. Աստվածաշնչի Միացյալ Ընկերության Հունարեն տեքստը, չորրորդ խմբագրություն (UBS<sup>4</sup>)
- բ. Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը, խմբագրված 1995 (NASB)
- գ. Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (NKJV)
- դ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV)
- ե. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV)
- զ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն և պետք է հիմնավորվեն ըստ համատեքստի: Իրարից տարբերվող թարգմանչական տեսություններ և աստվածաբանական տեսանկյուններ մի քանի թարգմանությունների հետ համեմատելով հնարավորություն ենք ունենում վերլուծելու բնագրի հեղինակի մտքերի ենթադրյալ կառուցվածքը: Ամեն պարբերություն ունի մեկ հիմնական ճշմարտություն: Չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել մի պարբերությունից պակաս հատված: Նաև հիշեք, որ ամեն պարբերություն կապված է նախորդ և հաջորդ պարբերության հետ: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է ամբողջ գրքի պարբերությունների բաժանումը: Մենք պետք է կարողանանք հետևել բնագրի ներշնչված հեղինակի կողմից հաղորդած թեմայի տրամաբանական հաջորդականությանը:

4. Բոքի գրառումները հետևում են ըստ համարների մեկնաբանության մոտեցմանը: Սա մեզ ստիպում է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը: Այդ գրառումները տեղեկություններ են ապահովում մի քանի ոլորտներից.
  - ա. գրական համատեքստից
  - բ. պատմական, մշակութային հասկացություններից
  - գ. քերականական տեղեկություններից
  - դ. բառային սերտողություններից
  - ե. համապատասխան գուգահեռ հատվածներից
5. Մեկնաբանության ընթացքում որոշ տեղերում ՆԱՍՍ (NASV, թարմեցված 1995-ին) թարգմանությանը կիրացնեն մի քանի այլ ժամանակակից թարգմանության տարբերակներ.
  - ա. Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (NKJV), որը հետևում է “Textus Receptus”-ի տեքստային ձեռագրերին:
  - բ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV), որը բառ-առ-բառ վերանայում է Վերանայված Ստանդարտ Տարբերակի Եկեղեցիների Ազգային Խորհրդից:
  - գ. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV), որը Ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության համարժեք դինամիկ թարգմանությունն է:
  - դ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB), որը Ֆրանսիական Կաթոլիկ դինամիկ համարժեք թարգմանության վրա հիմնված Անգլերեն թարգմանությունն է:
6. Նրանց, ովքեր չեն կարդում հունարեն, անգլերեն թարգմանությունների համեմատությունները կօգնեն ճանաչելու տեքստում առկա խնդիրները.
  - ա. ձեռագրային փոփոխությունները
  - բ. բառի այլընտրանքային նշանակությունները
  - գ. քերականորեն բարդ տեքստերը և կառուցվածքը
  - դ. խրթին տեքստերը, թեև անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, այլ միայն թիրախավորում են տվյալ հատվածները ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրության համար
  - ե. Յուրաքանչյուր գլխի վերջում տրված են թեմատիկ քննարկումներ, որոնք փորձում են թիրախավորել այդ գլխի հիմնական մեկնաբանության թեմաները:



## ԾՆՆԴՈՑ 11:24-13:18 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Ծննդոցի այս բաժինը սկսվում է Աբրահամի միջոցով Մեսիայի տոհմաձագործի ավելի լիարժեք քննարկմամբ:

Բ. Ծննդոցի հիսուն գլուխները գործ ունեն Աստծո ուխտի ժողովրդի և ոչ թե ստեղծագործության փրկության հետ: Գրքի կենտրոնական թեման մեկին կանչելով բոլորին կանչելն է:

Գ. Աբրամը դիտարկվում է թե՛ իր թերություններով և թե՛ իր հավատարմությամբ: Ընտրության և ողորմության Աստվածը դուրս է կանչում նրան Իր փրկագործության նպատակներով:

Դ. Աստված ընտրեց Աբրահամին, որպեսզի ընտրի աշխարհը (տես՝ 12:3գ; Ելից 19:4-6; 2 Պետ. 2:5,9; Հայտն. 1:6): Աստված ուզում է, որ Իր պատկերով ստեղծված բոլոր մարդիկ փրկվեն (տես՝ Ծննդ. 3:15; Եզեկ. 18:23,32; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9):

Ե. *Թարմուղը* հատկուկ նշում է այդ կանչի յոթ օրհնությունները՝

1. Աբրամը դառնալու էր մի մեծ ազգի հայր:
2. Նա օրհնվելու էր իր կյանքի ընթացքում:
3. Նրա անունը հայտնի էր դառնալու:
4. Նա օրհնություն էր դառնալու ուրիշների համար:
5. Բոլոր նրանք, որ պատվեն նրան, օրհնվելու են:
6. Բոլոր նրանք, որ անարգեն նրան, անիծվելու են:
7. Նրա ազդեցությունը լինելու էր տիեզերական:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:24-25

**<sup>24</sup>Եվ Նաքովրը քսանինը տարի ապրեց և ծնեց Թարային: <sup>25</sup>Եվ Նաքովրը Թարային ծնելուց հետո հարյուր տասնինը տարի ապրեց և տղաներ ու աղջիկներ ծնեց:**

**11:24 «Թարա»** «Թարա» (BDB 1076) հավանաբար նշանակում է «դանդաղել», «ուշանալ» կամ «գաղթել»: Հետո 24:2-ից հայտնի է, որ նա և իր ընտանիքը բազմաստվածության հետևորդներ էին: Իր ընտանիքի անուններից ակնհայտ է, որ նրանք սկզբնապես երկրպագում էին լուսնի աստվածուհուն՝ *Չին* (տես՝ Հատուկ Թեմա 12:4): Նրան երկրպագում էին Ուր, Թամնա և Խառան քաղաքներում: Սակայն Ծննդ. 31:53 ակնարկում է, որ նա ճանաչում էր ՅԱՀՎԵին:

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:26

**<sup>26</sup>Եվ Թարան յոթանասուն տարի ապրեց և ծնեց Աբրամին, Նաքովրին և Առանին:**

**11:26 «Աբրամ, Նաքովր և Առան»** Հնարավոր է այս հերթականությունը ըստ կարևորության է և ոչ թե տարիքի: Աբրամ անունը (BDB 4) կարող է նշանակել (1) «բարձրյալ հայր»; (2) «հորը բարձրացնող» կամ (3) «Բարձրյալը իմ Աստվածն է»: Նաքովր անունը նշանակում է «բարախել» կամ աստրի լեզվով տեղանուն է, մինչ Առան նշանակում է «լեռնաբնակ»:

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:27-30

**<sup>27</sup>Եվ սրանք են Թարայի ծնունդները. Թարան ծնեց Աբրամին, Նաքովրին և Առանին. և Առանը ծնեց Ղովտին: <sup>28</sup>Առանը մեռավ իր հայր Թարայից առաջ, իր ծննդյան երկրում՝ Քաղդեացիների Ուր քաղաքում: <sup>29</sup>Եվ Աբրամն ու Նաքովրը իրենց համար կանայք առան. Աբրամի կնոջ անունը Սարա էր և Նաքովրի կնոջ անունը Մեղքա՝ աղջիկն Առանի, ով Մեղքայի և Հեքայի հայրն էր: <sup>30</sup>Բայց Սարան ամուլ էր, նա զավակ չունեց:**

**11:27** Տես 25:12,19; 36:1,9; 37:2 նշումները:

**11:28 «Առանը մեռավ իր հայր Թարայից առաջ /անգլ.՝ իր հայր Թարայի ներկայությամբ/»** Սա մի երբայերեն դարձվածք է, որը նշանակում է Առանը մեռավ իր հորից առաջ:

❖ **«Քաղղեացիների Ուր քաղաքը»** Քաղղեական մշակույթը զարգացել է (այսինքն կառուցվել է Շումերական մշակույթի առավելությունների վրա) և բարգավաճել Աբրամից հետո:

**11:29 «և Հեսրա»** Այս անձը (BDB 414) և այս համարում նրա ներկայության նպատակը անհայտ է: Ռաբբիները (նաև Ջոզեֆուսը, Ջերոմը և Օգոստինոսը) ասում են, որ նա Սարան է, սակայն տեքստը հաստատում է, որ նրանք ունեն տարբեր հայրեր:

**11:30 «Սարան ամուլ էր»** Սարայի, Ռաբելի և Ռերբեկայի երեխաներ ունենալու այս անկարողությունը ՅԱՀՎԵԻ ճանապարհներից մեկն էր Իր գործությունը և մարդկային պատմության ու սերնդաբանության վրա Իր ունեցած վերահսկողությունը ցուցաբերելու մեջ: Մարդկային սեռական սերունդը չէ Մեսիայի տոհմաձագի ամենակարևոր մասնաբաժինը:

Այս նույն աստվածաբանական տեսակետը Իսրայելի պատմության մեջ նաև երևում է այն փաստի մեջ, որ առաջնածին որդին երբեք չէր դառնում ընտանիքի գլուխը (այսինքն՝ Մեսիական տոհմաձագում): Համաձայն մշակույթի առաջնեկն էր համարվում տոհմի գլխավորը, բայց ՅԱՀՎԵԻ ժողովրդի մեջ այդպես չէր: Դա Նրա ընտրությամբ էր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:31-32**

**<sup>31</sup>Եվ Թարան առավ իր որդի Աբրամին և Առանի որդի Դովտին՝ իր որդու որդուն, և իր հարսին՝ Սարային՝ իր որդի Աբրամի կնոջը, և նրանք դուրս եկան քաղղեացիների Ուր քաղաքից՝ Քանանի երկիրը գնալու համար. և եկան մինչև Խառան և այնտեղ բնակվեցին: <sup>32</sup>Եվ Թարայի օրերը երկու հարյուր հինգ տարի եղան, և Թարան Խառանում մեռավ:**

**11:31 «և նրանք դուրս եկան /անգլ՝ միասին/»** Շատ քննարկումներ կան այն մասին, թե արդյոք Թարան իր ընտանիքին վերցրեց, թե՞ Աբրամը վերցրեց նրանց: Ոմանք այն կարծիքի են, որ Աստված Թարային է կանչում, սակայն նա նորից ետ է դառնում կռապաշտության: Ես կարծում եմ, որ այս ամբողջ բաժնի կենտրոնական դեմքը Աբրամն է և ոչ թե Թարան: Հեռանալով Ուրից Աբրամը հեռանում էր ոչ միայն իր մեծ ընտանիքից, այլ նաև իրենց ազգային պաշտամունքից: Նա թողնում է հարմարավետ, նստակյաց կյանքը, որպեսզի հետևի մի նոր Աստծո, որը խոսել էր իր հետ շատ ավելի գաղտնի ձևով:

**11:32 «Թարայի օրերը երկու հարյուր հինգ տարի եղան»** Երբ գումարում ենք 11:26-ի տարիները 12:4-ի տարիներին, ապա ստացվում է 145 տարի և եթե 205-ից հանենք 145, ապա ակնհայտ է դառնում, որ Թարան Աբրամի Խառանից հեռանալուց հետո ապրել է 60 տարի: Սա կարծես թե չի համընկնում Գործք 7:4-ում Ստեփանոսի քարոզի հետ: Ստեփանոսի պատմական անդրադարձից մի քանի մասեր չեն համընկնում Հին Կտակարանի պատմության մեր ունեցած տվյալների հետ: Հավանաբար նա օգտագործում էր ռաբբիական մեկնաբանություններից: Ուրիշներն էլ պնդում են, որ Աբրամը, չնայած որ նշվում է առաջին անգամ 11:26-ում, ծնվել է շատ ավելի ուշ և որ Ստեփանոսը ճշգրիտ տեղեկություն է տալիս:

# ԾՆՆԴՈՑ 12

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Արբամը ճամփորդում է Եգիպտոս	Խոստում Արբամին	Աստծո կանչը Արբահամին	Աստծո կանչը Արբամին	Արբամի կանչը
12:1-3 (1-3)	12:1-3 (1-3)	12:1-3	12:1-2  (1-2)  (3)	12:1-3  (1-3)
12:4-9	12:4-9	12:4-9	12:4-5ա  12:5բ-9	12:4-5  12:6-9
12:10-16	Արբամը Եգիպտոսում  12:10-13  12:14-20	Սարան վտանգի մեջ (12:10-13:11)  12:10-16	Արբամը Եգիպտոսում  12:10-16	Արբամը Եգիպտոսում  12:10-20
12:17-20		12:17-13:1	12:17-20	

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտորոշյալ ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:1-3**

<sup>1</sup>Արդ, **ՏԵՐՆ** ասաց Աբրամին .  
 «Դո՛ւրս եկ քո երկրից  
 Ու ազգականներից  
 Եվ քո հոր տնից  
 Այն երկիրը, որ ես քեզ ցույց կաամ:  
<sup>2</sup>Եվ ես քեզ մեծ ազգ եմ դարձնելու,  
 Եվ քեզ օրհնելու եմ,  
 Եվ քո անունը բարձրացնելու,  
 Եվ դու օրհնություն ես լինելու:  
<sup>3</sup>Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին  
 Եվ պիտի անիծեմ քեզ անիծողներին,  
 Եվ երկրի բոլոր տոհմերը քեզնով պիտի օրհնվեն»:

**12:1-3** Հանախ դժվար է ասել Եբրայերեն պոեզիայի և «նոխ» արձակի միջև տարբերությունը: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես են անգլերեն թարգմանությունները դիտարկում ժանրերը տարբեր համարներում:

	NASB/NKJV	JPSOA	NRSV	TEV/NJB/REB/NIV
Պոեզիա	1բ-3	1		3
Արձակ	1ա	2-3	1-3	1-2

Ակնհայտ է, որ գոյություն չունեն տեքստային ուղեցույցներ, պարզապես թարգմանչական կոմիտեների կարծիքներ են:

Այս համարները կրկնվում են հաջորդ մի քանի գլուխներում չնչին տարբերություններով և բացատրություններով, սակայն այս համատեքստն է Պողոսը օգտագործում Հռոմեացիների 4-րդ գլխում որպես Աստծո կողմից տրված առաջին խոստումը (այսինքն՝ Ծննդոց 15:6): ՅԱՀՎԵՆ գործելու է Աբրամի և նրա/Իր սերնդի միջոցով, որպեսզի հայտնի Իրեն ամբողջ աշխարհին: Ուխտը (տե՛ս՝ Հատուկ Թեմա 13:15-ում) դառնում է Աստվածաշնչի բանալի հանդիսացող գաղափարը: Ամենակարող Աստվածը նախաձեռնում է, Ինքն էլ ծրագրում դա, սակայն Նա հանձնարարել է, որ մարդիկ պետք է պատշաճ կերպով և հավատարմորեն արձագանքեն Իրեն:

**12:1** «Արդ» /**հիմա**/ «Հիմա» և «ասաց» բառերն այս համարում դրված են թարգմանիչների կողմից, որոնք հավատում են, որ այս համարները վերաբերում են դրան նախորդող Ուր քաղաքում Աստծո կանչին (տես՝ Ծննդ . 15:7; Նեեմ . 9:7; Գործք 7:2):

❖ «ՏԵՐՆ» Սա ՅԱՀՎԵՆ է՝ Աստծո Ուխտի անունը (տես՝ Ելից 3:14): Ուշադրություն դարձրեք, որ այս կանչը հիմնված է Աստծո գթառատ հրավերի վրա, և ոչ թե Աբրամի արժանիքների (տես՝ հհ . 10բ): Աստված է միշտ նախաձեռնողը (տես՝ Հովհ . 6:44,65; Եփես . 2:8-9):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍԾՈՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ  
 SPECIAL TOPIC: NAMES FOR DEITY**

- Ա. *El*
1. Աստվածության համար սեռային հնագույն տերմինի բնագիր նշանակությունը անհայտ է, թեև շատ գիտնականներ համարում են, որ այն ծագել է աքքադական «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» արմատից (տես՝ Ծննդ.17:1; Թվոց 23:19; 2 Օր.7:21; Սաղմ.50:1):
  2. Քանանացիների պանթեոնում ամենաբարձր աստվածը *El* է (Ռաս Շամրայի տեքստերը):
  3. Աստվածաշնչում *El* հանախ բաղադրվում է այլ տերմինների հետ: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու միջոց:
    - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված» BDB 42 & 751 II), Ծննդ.14:18-22; 2 Օր.32:8; Եսայի 14:41
    - բ. *El-Roi* («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ հայտնում է Իրեն» BDB 42 & 909), Ծննդ.16:13

- զ. *El-Shaddai* («Ամենակարող Աստված» կամ «բոլոր զթությունների Աստված» կամ «Լեռան Աստված» BDB 42 & 994), Ծննդ.17:1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6:3
- դ. *El-Olam* («Հավիտենական Աստված» BDB 42 & 761), Ծննդ.21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տրված Աստծո խոստման հետ, 2 Թագ.7:13,16
- ե. *El-Berit* («Ուխտի Աստված» BDB 42 & 136), Դատ.9:46
- 4. *El* հավասարեցվում է հետևյալ անունների հետ՝
  - ա. YHWH (ՅԱՀՎԵ) Սաղմ.85:8; Եսայի 42:5
  - բ. *Elohim* Ծննդ.46:3; Հոբ 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
  - գ. *Shaddai* Ծննդ.49:25
  - դ. «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր.4:24; 5:9; 6:15
  - ե. «ողորմած» 2 Օր.4:31; Նեեմ.9:31
  - զ. «հզոր ու ահարկու» (մեծ ու ահեղ) 2 Օր.7:21; 10:17; Նեեմ.1:5; 9:32; Դան.9:4
  - է. «գիտություն» 1 Թագ.2:3
  - ը. «իմ ամուր ապաստարան» 2 Թագ.22:33
  - թ. «իմ վրեժխնդիր» 2 Թագ.22:48
  - ժ. «սուրբ» Եսայի 5:16
  - ի. «զորություն» Եսայի 10:21
  - լ. «իմ փրկություն» Եսայի 12:2
  - խ. «մեծ ու հզոր» Երեմ.32:18
  - ծ. «հատուցում» Երեմ.51:56
- 5. ՀԿ-ում Աստծո համար գրված բոլոր անունների համադրությունը գտնվում է Հեսու 22:22-ում (*El, Elohim, YHWH*, կրկնվող)

Բ. *Elyon*

1. Այս բառի հիմնական նշանակությունն է՝ «բարձր», «մեծարված» կամ «բարձրացված» (տես՝ Ծննդ.40:17; 3 Թագ.9:8; 4 Թագ.18:17; Նեեմ.3:25; Երեմ.20:2; 36:10; Սաղմ.18:13)
2. Այն կիրառվել է Աստծո մի քանի այլ անունների՝ տիտղոսների հետ զուգահեռ իմաստով՝
  - ա. *Elohim* (Էլոհիմ) – Սաղմ.47:1-2; 73:11; 107:11
  - բ. *YHWH* (ՅԱՀՎԵ) – Ծննդ.14:22; 2 Թագ.22:14
  - գ. *El-Shaddai* (Էլ-Շադայ) – Սաղմ.91:1,9
  - դ. *El* (Էլ) – Թվոց 24:16
  - ե. *Elah* (Էլահ) – հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7, կապված *illair* բառի հետ (արամեերեն «Բարձրյալ Աստված») Դան.3:26; 4:2; 5:18,21
3. Այն հաճախ կիրառվել է ոչ իսրայելցիների կողմից.
  - ա. Մեքիսեդեկ, Ծննդ.14:18-22
  - բ. Բաղասամ, Թվոց 24:16
  - գ. Մովսեսը, ազգերի մասին 2 Օր.32:8-ում խոսելիս
  - դ. Ղուկասի Ավետարանը ՆԿ-ում, գրված հեթանոսներին, այն նույնպես կիրառում է հունարեն *Hupsistos* բառի համարժեքը (տես՝ 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)

Գ. *Elohim* (ՀՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵՉԱԿԻ), հիմնականում կիրառված է պոեզիայի մեջ

1. Այս տերմինը ՀԿ-ից դուրս չեք գտնի
2. Այս բառը կարող է բնութագրել Իսրայելի Աստծուն կամ ազգերի աստվածներին (տես՝ Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստված էր (տես՝ Հեսու 24:2)
3. Այն կարող է վերաբերել իսրայելացի դատավորներին (տես՝ Ելից 21:6; Սաղմ.82:6)
4. *Elohim* տերմինը նաև կիրառվում էր այլ հոգևոր էակների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օր.32:8-ում (LXX); Սաղմ.8:5; Հոբ 1:6; 38:7
5. Աստվածաշնչում աստվածության համար սա առաջին անունը կամ տիտղոսն է (տես՝ Ծննդ.1:1): Այն կիրառված է առանձին մինչև Ծննդ.2:4, որտեղ համադրվում է YHWH-ի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերում է Աստծուն որպես արարչի, պահապանի և այս երկրագնդի վրա կյանք պարզևողի (տես՝ Սաղմ.104):  
 Այն *El* բառի հոմանիշն է (տես՝ 2 Օր.32:15-19): Նաև համարժեք իմաստն ունի YHWH-ի, ինչպես Սաղմ.14-ում (*Elohim*, հհ.1,2,5; YHWH, հհ. 2,6; նույնիսկ *Adon*, հ.4):
6. Չնայած այն ՀՈԳՆԱԿԻ թվով է և կիրառվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ բնութագրում է Իսրայելի Աստծուն, սակայն միաստվածությանը մատնանշելիս սովորաբար կիրառվում է ԵՉԱԿԻ թվով ԲԱՅԸ:
7. Տարօրինակ է, որ Իսրայելի միակ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է: Չնայած անհատականությանը, ահա այդ տեսությունները.

- ա. Եբրայերենը ունի շատ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ, հաճախ կիրառվող շեշտադրության համար: Հետագայում եբրայերեն քերականական առանձնահատկությամբ այս թեմայի հետ սերտորեն կապ կունենա «մեծության հոգնակին», որտեղ ՀՈԳՆԱԿԻՆ կիրառվում է մեծացնելու տվյալ հասկացությունը:
- բ. Սա կարող է վերաբերել հրեշտակային խորհրդին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որը կատարում է Նրա հրամանները (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):
- գ. Նույնիսկ հնարավոր է, որ սա արտացոլում է ՆԿ-ի այն հայտնությունը, որ Աստված երեք անձ է մեկում: Ծննդ.1:1-ում Աստված արարում է, Ծննդ.1:2-ում Հոգին շարժվում է, իսկ ՆԿ-ում Հիսուսը Հայր Աստծո գործակալն է ստեղծագործության մեջ (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):

Դ. YHWH

1. Սա այն անունն է, որը պատկերում է աստվածությանը որպես ուխտ կապող Աստծո, փրկիչ Աստծո, ազատագրող Աստծո: Մարդիկ ուխտադրույթ են, սակայն Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես՝ Մաղմ.103):  
Այս անունը առաջին անգամ նշվել է *Elohim* բառի հետ համադրված Ծննդ.2:4-ում: Ծննդոց 1-2-ում գոյություն չունեն արարչագործության երկու արձանագրություններ, այլ երկու շեշտադրումներ՝ (1) Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական) և (2) Աստված որպես մարդկության հատուկ արարիչը: Ծննդոց 2:4-3:24-ը սկսում է մարդկությանը առանձնաշնորհված դիրքի և նպատակի հատուկ հայտնությամբ, ինչպես նաև մեղքի հիմնախնդրով և ապստամբությամբ, որոնք միացան այս բացառիկ դիրքին:
2. Ծննդ.4:26-ում ասվում է «մարդիկ սկսեցին կանչել ՏԻՐՈՋ (YHWH) անունը»: Համենայն դեպս, Ելից 6:3 ակնարկում է, որ առաջին ուխտի մարդիկ (Նահապետները և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես Էլ-Շադայ (*El-Shaddai*): YHWH անունը բացատրվում է միայն մեկ անգամ՝ Ելից 3:13-16-ում, հատկապես հ.14: Այնուամենայնիվ Մովսեսի գրքերը հաճախ մեկնաբանում են բառերը հայտնի բառախաղերով և ոչ թե ըստ ստուգաբանության (տես՝ Ծննդ.17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ այս անվան նշանակության հետ կապված (վերցված IDB, հատոր 2, էջ.՝ 409-11):
  - ա. Արաբերեն արմատից՝ «կրակոտ սեր ցուցաբերել»
  - բ. Արաբերեն արմատից՝ «փչել» (YHWH որպես փոթորկող Աստված)
  - գ. Ուզարտիկ (Քանանացիների) արմատից՝ «խոսել»
  - դ. Համաձայն Փյունիկյան մակագրության, ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԴԵՐԱՅԵ Է, որը նշանակում է «Մեկը, որ պահպանում է» կամ «Մեկը, որ հաստատում է»:
  - ե. Եբրայերեն *Qal* ձևից՝ «Նա, որ է» կամ, «Նա, որ ներկա է» (ապառնի իմաստով՝ «Նա որ կլինի»)
  - զ. Եբրայերեն *Hiphil* ձևից՝ «Նա, որ գոյի պատճառ է հանդիսանում»
  - է. Եբրայերեն «ասրել» արմատից (օր.՝ Ծննդ.3:21), որը նշանակում է «հավերժ ասրողը, միակ ասրողը»
  - ը. Ելից 3:13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱՐ ժամանակով՝ մի մասը կիրառված ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակում, «Ես կշարունակեմ լինելու այն ինչ եղել եմ» կամ «Ես կշարունակեմ լինել այն ինչ միշտ եմ եղել» (տես՝ J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, p.67 /Ջ. Ուոշ Ուաթս, *Շարահյուսության Ուսումնասիրություն Հին Կտակարանում*, էջ 67):
    - (1) *Yah* (օր.՝ Ալելու – յահ, BDB 219, տես՝ Ելից 15:2; 17:16; Մաղմ.89:8; 104:35)
    - (2) *Yahu* ('iah' հայերեն՝ -իա, անունների վերջավորությունը, օր.՝ Եսայիա)
    - (3) *Yo* ('Jo' հայերեն՝ Հո-, անունների սկզբնամասը, օր.՝ Հովել)
3. Ավելի ուշ հուդայականության մեջ ուխտի այս անունը դարձավ այնքան սուրբ (քառագիրը), որ հրեաները վախենում էին արտասանել այն, այլապես կխախտեին Ելից 20:7; 2 Օր.5:11; 6:13-ի պատվիրանը: Ուստի նրանք այս բառը փոխարինեցին եբրայերեն «սեփականատեր», «տեր» «ամուսին» տերմիններով – *adon* կամ *adonai* (իմ տեր): Եբր ՀԿ-ի տեքստերը ընթերցելիս հասնում էին YHWH բառին նրանք արտասանում էին «տեր»: Այդ իսկ պատճառով YHWH բառը անգլերեն (հայերեն) թարգմանություններում գրված է ՏԵՐ:
4. Ինչպես *El*, YHWH բառերի հետ հաճախ համադրվում են այլ տերմիններ, որպեսզի շեշտադրվեն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի հատկություններ: Չնայած որ կան շատ հնարավոր համադրված տերմիններ, ահա դրանցից մի քանիսը.
  - ա. YHWH – *Yireh* (YHWH Եհովա-Իրե՛ Եհովան կհոգա, BDB 217 & 906), Ծննդ.22:14

- բ. *YHWH – Rophekha* (YHWH Եհովա-Ռոֆեխա, Եհովան քո բժիշկն է, BDB 217 & 950, *Qal* ԴԵՐԲԱՅ), Ելից 15:26
- գ. *YHWH – Nissi* (YHWH Եհովա-Նիսի՝ Եհովան իմ դրոշն է, BDB 217 & 651), Ելից 17:15
- դ. *YHWH – Meqaddishkem* (YHWH Եհովա-Մեքադիշկեմ՝ Նա ով հազեցնում է քեզ, BDB 217 & 872, *Piel* ԴԵՐԲԱՅ), Ելից 31:13
- ե. *YHWH – Shalom* (YHWH Եհովա-Շալոմ՝ Եհովան իմ խաղաղությունը, BDB 217 & 1022), Դատ.6:24
- զ. *YHWH – Sabaoth* (YHWH Եհովա-Սաբաովթ՝ զորքերի Եհովան, BDB 217 & 878), 1 Թագ.1:3, 11; 4:4; 15:2; հաճախ Սարգարեներում
- է. *YHWH –Ro'I* (YHWH Եհովա-Ռոյ՝ Եհովան իմ հովիվը, BDB 217 & 944, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ.23:1
- ը. *YHWH –Sidqenu* (YHWH Եհովա-Սիդքենյու՝ Եհովան իմ արդարությունը, BDB 217 & 841), Երեմ.23:6
- թ. *YHWH – Shammah* (YHWH Եհովա-Շամմա՝ Եհովան այնտեղ է, BDB 217 & 1027), Եզեկ.48:35

❖ **«ՏԵՐՆ ասաց»** Այս խոսքերը կոնկրետ վերաբերում են բառացի հաղորդակցությանը և ոչ թե երազի կամ տեսիլքի միջոցով հայտնությանը, չնայած դա կարող է հնարավոր տարբերակ մնալ: Համար 7-ը վերաբերում է ֆիզիկական հայտնությանը, ինչպես օրինակ 3:8-12; 4:9-15; 6:13-22; 8:15-19; 9:1-7,8-17 համարներում:

❖ **«Աբրամ»** Այս անվան հնարավոր նշանակությունների համար տե՛ս 11:26-ի գրառումները: Աբրամը չի նկարագրվում որպես հատուկ անձնավորություն: Նրա ընտանիքը բազմաստված էր՝ հավանաբար լուսնի աստծո/աստվածուհու երկրպագուներ: Իրականում Աբրամը անհնազանդ էր՝

1. իր ընտանիքը չթողնելու մեջ
2. Քանանից Եգիպտոս հեռանալու մեջ
3. իր կնոջը խաբեության մեջ ներքաշելու մեջ, որպեսզի իր իսկ կյանքը փրկի (երկու անգամ)
4. իր կյանքը փրկելու համար Փարավոնին և Աբիմելեքին խաբելու մեջ

Միայն 22:15-18-ում է, որ նրա հավատքը փայլում է, չնայած որ դա ակնարկվում էր 15:6-ում:

❖ **«Դուրս եկ քո երկրից»** ԲԱՅԸ (BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է) նշանակում է «գնալ»: NASB թարգմանության լուսանցքային գրառումը հաստատում է, որ դա վերաբերում է «քեզ համար գնալ» խոսքին: Ենթադրվում է, որ դա կապված է համար 1բ,գ,դ-ում առկա բոլոր երեք ենթամասերին: Ո՛ր երկիրը նկատի ունի՝ Ուր, թե Խառան: Ուշադրություն դարձրեք, որ 11:31 ասում է, որ Թարան թողնում է Ուրը և գնում դեպի Քանան, սակայն հաստատվում է Խառանում: Ուրն ու Խառանը երկուսն էլ հանդիսանում էին լուսնի երկրպագության կենտրոններ, և Թարան ու իր ընտանիքը՝ իրենց անունների ենթադրյալ նշանակությունների պատճառով (ամեն դեպքում ընտանեկան անվանման նշանակությունն անհայտ է), հնարավոր է ներգրավված են եղել լուսնի աստծո կամ աստվածուհու՝ *Մին, Նանա* (տես՝ Հեսու 24:2) երկրպագության մեջ: Այդ իսկ պատճառով նա կամեցավ դուրս գալ այդտեղից:

Աբրամի համար իր ընտանիքին և ծննդավայրը թողնելը նշանակում էր հանրորեն հայտարարել, որ թողնում էր իր ամբողջ ժառանգությունը անցյալում: Իր ընտանիքից այսպիսի բաժանումը հնարավոր է նաև նշանակում էր ընտանեկան աստվածներին թողնել: Ահա թե ինչու Թարայի և Ղովտի ընկերակցումը Աբրամի հետ թույլատրելի չէր Աստծո կողմից և հետևաբար այդքան անսպասելի: Արդյո՞ք դա համարվում էր անհնազանդություն ՅԱՀՎԵԻ կանչին, թե ընտանեկան սպասումների արդարացման մի կերպ էր (այսինքն՝ ծնողներին հոգ տանելը) և միևնույն ժամանակ ՅԱՀՎԵԻ հնազանդություն: Ինչպես միշտ «պատմական իրադարձության» գրական ժանրը (տե՛ս մի քանի նմանատիպ հավելվածներ) մասնավորապես չի պատասխանում այսպիսի հարցերի: Մարդն ինքը պետք է նայի ամբողջ պատմությանը և «միացնի կետերն իրար»:

❖ **«քո ազգականներից»** ՅԱՀՎԵԻ կանչը Աբրամի պատասխանին պայմանական էր: Աբրամը անմիջապես չկատարեց իր մասը (ազգականներից և իր հոր տնից: դուրս գալը): Հնազանդությունը չափազանց կարևոր է (տես՝ 18:19; 22:18):

❖ **«քո հոր տնից»** Գործք 7:4 ասում է, որ Թարան մեռավ Խառանում նախքան Աբրամի հեռանալը, սակայն եթե միացնենք 11:26 և 12:4 խոսքերը և կապենք այն 11:32-ի հետ, ենթադրվում է, որ Թարան ապրել է Աբրամի հեռանալուց հետո վաթսուս տարի հետո: Հավանաբար 11:26-ը բանալի խոսքն է: Հնարավոր է, որ Աբրամը թվարկվում է որպես ընտանիքի առաջնեկ ոչ թե համաձայն տարիքի, այլ՝

կարևորության: Կարծես թե Աբրամի մշակութային ակնկալելի պարտավորությունները ամենամեծ արգելքն էին հանդիսանում Աստծո կանչի:

❖ **«այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ»** 11:31-ից արդեն գիտենք, որ դա Քանանն է: Քանանը խոստացվել է՝

1. Աբրահամին՝ Ծննդ. 12:1; 15:18-21
2. Իսահակին՝ Ծննդ. 26:3-5
3. Հակոբին՝ Ծննդ. 28:13-15; 35:9-12
4. Իսրայելին՝ Ծննդ. 15:16; Ելից 6:4,8; 2 Օր. 4:38,40; 5:31; 19:10; 20:16; 21:23; Հեառ 1:2,3,6,11,13,15; 2:9,24; 18:3; 21:43; 24:13

Աբրամի հավատքը նկարագրվում է Եբր. 11:8-ում: Հատուկ հայրենիք ունենալու այս խոստումները դառնում է ՀԿ-ի կենտրոնական թեման (այսինքն՝ Իսրայելին հայրենիք է տրվել ՅԱՀՎԵԻ կողմից):

**12:2 «Ես քեզ մեծ ազգ եմ դարձնելու»** Ազգի համար կիրառվող բառը (BDB 156) նկատի ունի հայրենիք: Այն նաև նկատի ունի շատ սերունդները (այսինքն՝ 22:17): Հնարավոր է նույնիսկ մատնանշել մի նոր ազգի, որը չի նշվում Ծննդոց 10-ում:

Համար 2 ունի երեք ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ սահմանումներ ՅԱՀՎԵԻ խոստացած գործերի համար՝

1. «Ես քեզ մեծ ազգ եմ դարձնելու» - BDB 793, KB 889, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ժամանակն է կիրառված՝ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ իմաստով
2. «Ես օրհնելու եմ քեզ» - BDB 138, KB 159 *Piel* ԱՆԿԱՏԱՐ ժամանակն է կիրառված՝ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ իմաստով
3. «Քո անունը բարձրացնելու եմ» - BDBD 152, KB 178 *Piel* ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ

«Սերունդ» ունենալու այս խոստումը դառնալու է մի հատուկ ժառանգորդի կամ սերնդի վրա կենտրոնացված հույս, որն է Մեսիան, ով բոլոր ազգերին կրերի դեպի ՅԱՀՎԵԻ: Աբրահամը փրկագործության այս ամբողջ ներկայացման մեջ հանդիսանում է միայն մեկ գործողություն:

Աստվածաբանորեն նաև շատ կարևոր է, որ սկզբնական ստեղծագործությունը օրհնվել էր բազմաանալու համար (տես՝ 1:28; 9:1,7), սակայն մեղքը ազդեց ՅԱՀՎԵԻ ցանկության վրա: Այժմ Նա վերսկսում է, սակայն մի մարդու, մի ընտանիքի, մի ազգի հետ, որպեսզի մեծացնելով այն դարձնի բոլոր ազգերից փրկված մի մեծ ժողովրդի (Բաբելոնի աշտարակի հակադարձումը՝ նրանք նույնպես ցանկացան «անուն» իրենց համար, 11:4): Այս հատվածը թե՛ խոստացված օրհնություն է, և թե՛ պայմանական խոստում: Այնուամենայնիվ կիզակետը ՅԱՀՎԵԻ կողմից տրված օրհնությունն է, որին արժանի չէին (շնորհքի քայլ, 15:7-21; 28:13-15): Այս օրհնությունը խոստումը պայմանական է (տես՝ հ. 1) հիմնված հնազանդության վրա (լավագույն օրինակը Ծննդոց 22) և Ծննդ. 15:5-ից՝ հավատքի վրա: Հարացույց է ի հայտ գալիս, ուրեմն ինչպես հաղորդակից լինենք Աստծուն (տես՝ Հռոմեացիների 4; Գաղատացիների 3):

❖ **«քո անունը բարձրացնելու եմ»** Ռաբբիները սա դիտարկում են որպես նրա անունով հռչակվող օրհնության իմաստով: Այն նշանակում է, որ բոլոր ժողովուրդները ճանաչելու և հարգելու են նրան:

❖ **«դու օրհնություն ես լինելու»** Սա *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆԻ հետ: «Օրհնություն լինելը» ակնկալում է Աբրամի կողմից գործողություն: ՅԱՀՎԵԻ օրհնությունը ի գործու դարձրեց Աբրամին լինելու օրհնություն և հ. 3-ից՝ տիեզերական օրհնություն:

**12:3 «Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին»** ՅԱՀՎԵԻ օրհնությունը գալու է Աբրամի օրհնության միջոցով: ՅԱՀՎԵՆ նախընտրում է գործել, սակայն հատուկ կերպերով:

Համար 3-ի ԲԱՅԵՐՆ ունեն ձևաչափ .

1. ՅԱՀՎԵՆ օրհնում է – BDB 138, KB 159, *Piel* ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ
2. նրանց, ովքեր օրհնում են Աբրամին – BDB 138, KB 159, *Piel* ԴԵՐԲԱՅ
3. նրանք, ովքեր անիծում են Աբրամին – BDB 886, KB 1103, *Piel* ԴԵՐԲԱՅ
4. ՅԱՀՎԵՆ կանիծի նրանց – BDB 886, KB 1103, *Qal* ԱՆԿԱՏԱՐ է կիրառվում՝ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ իմաստով

❖ **«պիտի անիծեմ քեզ անիծողներին»** «Անեծք» բառի համար կա երբայերենում երկու բառ: Առաջինը նշանակում է «չարիք խոսել» (BDB 886, KB 1103, տես՝ 8:21; 16:4,5; Ելից 21:17; 22:28; Ղևտ. 19:14; 20:9 [երկու անգամ]; 24:11,14,15,23; 2 Օրինաց 23:4) և երկրորդը Աստծո դատական անեծքն է (BDB 76, KB 91, տես՝ 3:14,17; 4:11; 5:29; 9:25; 27:29 [երկու անգամ]; 49:7; Ելից 22:28; Թվոց 5:18,19,22,24



[երկու անգամ], 27; 22:6 [երկու անգամ], 12; 23:7; 24:9 [երկու անգամ]; 2 Օրինաց 27:15-26; 28:16-19): Ուրբեր անարգում են Աբրահամին՝ իրենց հեռացնում են ՅԱՀՎԵից և հենց դա էլ անեծք է: ՅԱՀՎԵն սկզբում հայտնում է իրեն Աբրամի և նրա ընտանիքի միջոցով (Մելքիսեդեկ, Հոր, Հոթոր):



**NASB, NKJV, NRSV, Peshitta**  
**NRSV ծանոթագրություն, JPSOA**  
**TEV**  
**TEV ծանոթագրություն**

**NJB**  
**LXX**  
**REB**

**REB ծանոթագրություն**

«**և քո մեջ երկրի բոլոր ընտանիքները կօրհնվեն»**  
«**քեզնով երկրի բոլոր ընտանիքները իրենց կօրհնեն»**  
«**և քո միջոցով Ես կօրհնեմ բոլոր ազգերին»**  
«**բոլոր ազգերը կխնդրեն, որ օրհնեմ նրանց, ինչպես օրհնել եմ քեզ»**  
«**երկրի բոլոր ցեղերը քեզնով կօրհնվեն»**  
«**և քո մեջ երկրի բոլոր ցեղերը օրհնված կլինեն»**  
«**երկրագնդի բոլոր մարդիկ կերազեն օրհնվեն այնպես ինչպես դու ես օրհնված»**  
«**երկրագնդի բոլոր մարդիկ կօրհնվեն քո պատճառով»**

*Niphath* ՎԱՂԱԿԱՏԱՐԸ (BDB 138, KB 159) արմատը սովորաբար ԿՐԱՎՈՐԱԿԱՆ է (LXX, NASB, «կլինեն օրհնված», տես՝ 18:18; 28:14), սակայն 22:18-ում և 26:4-ում *Hithpael* ՎԱՂԱԿԱՏԱՐ արմատն է օգտագործվում, որը ՓՈԽԱԳԱՐՁ է («կօրհեն իրենք իրենց»): Հնարավոր է, որ *Hithpael* արտահայտում է ժամանակի ընթացքում շարունակական գործողություն: Շատ կարևոր է, որ Աստված Աբրահամին տված Իր խոստման մեջ ընդգրկում է բոլոր ազգերին, որը կարևորվում է գլուխ 11-ի տիեզերական ապստամբության յուսի ներքո: Աստված ընտրեց Աբրահամին, որպեսզի ընտրի Իր պատկերով ստեղծված բոլոր մարդկանց (տես՝ Մաղմ. 22:27; 66:4; 86:9; Եսայի 66:23; 49:6; Գործք 3:25; Գաղ. 3:8): Նաև տես 22:18 գրառումը:

Սա իսկապես կարևոր հատված է: Այն հստակ ցույց է տալիս ամբողջ աշխարհին փրկելու համար Աբրամին օգտագործելու Աստծո նպատակը: Ծննդոց 3:15-ի տիեզերական խոստումը գործադրվում է նույնիսկ Նոյի զավակների մտադրված ապստամբության դեպքում (այսինքն՝ Ծննդոց 11): Դա ոչ միայն այն մարդկանց համար է, ովքեր բարեհամբույր են Աբրամի հանդեպ, այլ նաև նրանց, ովքեր բարեհամբույր կլինեն Աբրամի սերնդի հանդեպ (այսինքն՝ Մեսիայի, տես՝ Գաղ. 3:16): ՅԱՀՎԵի մեկ հոգու ընտրության մեջ կար/կա տիեզերական նպատակ, որպեսզի իրագործի մարգարեացված փրկագործումը նրա ժառանգորդների միջից այդ ընտրյալ «Մեկի» միջոցով: Մեծ հաշվով, սա հրեաների հանդեպ լավ վերաբերմունք ցուցաբերելու մասին մի տեքստ չէ, այլ հավատքի արձագանք Հրեա «խոստացվածին»:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲՈՒԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱԿՈՒՄՆԵՐԸ**  
**SPECIAL TOPIC: BOB’S EVANGELICAL BIASES**

Ընթերցողներիդ պետք է խոստովանեմ, որ այս հարցում ես կողմնակալ եմ: Իմ համակարգված աստվածաբանությունը Կալվինիզմը կամ անջատողականությունը չէ, այլ Մեծ Պատվիրանի ավետարանչականությունը (տես՝ Մատթ. 28:18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված ամբողջ մարդկության համար փրկագործության ծրագիր ունի (օր.՝ Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5-6; Երեմ. 31:31-34; Եզեկիել 18; 36:22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հռոմ. 3:9-18, 19-20, 21-31), բոլոր նրանց համար, ովքեր ստեղծված են Նրա պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27): Ուխտերը Քրիստոսում միավորված են (տես՝ Գաղ. 3:28-29; Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է՝ առեղծվածը, որ թաքնված էր, սակայն այժմ հայտնված (տես՝ Եփես. 2:11-3:13): Սուրբ Գրքի բանալին հանդիսանում է ՆԿ-յան ավետարանը, և ոչ թե Իսրայելը:

Նախնական այս հասկացությունները իմաստավորում են Սուրբ Գրքի իմ բոլոր մեկնաբանությունները: Բոլոր տեքստերը ես կարդում եմ այդ յուսի ներքո: Իհարկե դա կողմնակալությունն՝ հակվածություն է (բոլոր մեկնաբաններն էլ դա ունեն), սակայն դա Սուրբ Գրքի միջոցով ինֆորմացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2 կենտրոնացումը հանդիսանում է ՅԱՀՎԵի կողմից մի վայրի արարումը, որտեղ Նա և Իր մեծագույն արարչագործությունը՝ մարդը, կարող են հաղորդակցվել (տես՝ Ծննդ. 1:26, 27; 3:8): Ֆիզիկական արարչագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Սբ. Օգոստինոսը այն բնութագրում է որպես Աստծո կողմից յուրաքանչյուր մարդու մեջ դրած դատարկություն՝ խոռոչ, որը միայն հենց Աստված Ինքը կարող է լցնել:
2. Ս. Ս. Լյուիսը այս մոլորակը կոչում է «ձեռք տրված մոլորակ» (այսինքն՝ մարդկության համար Աստծո կողմից պատրաստված):

ՀԿ-ը ունի շատ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերվում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵՆ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդ՝ Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ուշադրություն դարձրեք Ծննդ. 12: 3:
3. Ելից 20-ում (2 Օրինաց 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի առաջնորդի Իր ընտրյալ ժողովրդին: Նկատեք, որ Ելից 19: 5-6-ում ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա բացառիկ փոխհարաբերություն Իսրայելի հետ: Ինչպես նաև նկատեք, որ նրանք ընտրված էին, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է ՅԱՀՎԵՆ ճանաչելու և Նրան հանձնելու համար ազգերի համար մեխանիզմ լինի: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):
4. Սաղմոսներում 22:27-28; 66:4; 86: 9 (Հայտ. 15:4)
5. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել տիեզերական փրկագործության Իր ծրագրերը:
  - ա. Եսայի 2: 2-4; 12: 4-5; 25:6-9; 42: 6,10-12; 45:22; 49: 5-6; 51: 4-5; 56:6-8; 60: 1-3; 66: 18,23
  - բ. Երեմիա - 3:17; 4: 2; 16:19
  - գ. Միքիա 4:1-3
  - դ. Մադարիա 1:11

Տիեզերական այս շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես՝ Երեմ. 31: 31-34; Եզեկ. 36:22-38), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵՆ ողորմության վրա, այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի: Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր ոգին»: Հնազանդությունը կարևոր է, սակայն դա ներքին օրենք է, և ոչ միայն արտաքին (տես Հռ. 3: 21-31):

ՆԿ-ը հստակ ամրապնդում է տիեզերական փրկագործության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանի՝ Մատթ.28: 18-20; Ղուկ.24:46-47; Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագրի (այսինքն՝ նախասահմանության)՝ Ղուկ.22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն՝ Հովհ.3:16; 4:42; Գործք 10:34-35; 1 Տիմ.2: 4-6; Տիտոս 2:11; 2 Պետ.3: 9; 1 Հովհ.2: 2; 4:14
4. Քրիստոսը միավորում է ՀԿ և ՆԿ՝ Գաղ. 3: 28-29; Եփ. 2: 11-3: 13; Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված էր, բայց հիմա հայտնված է (Եփ.2:11-3: 13):

ՆԿ-ը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կարևորը և ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը՝ վերջինը (տես՝ Մատթ. 5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու Հատուկ Թեմա . Ինչու՞ են ՀԿ-յան Ուխտի խոստումները այդքան տարբերվում ՆԿ-յան Ուխտի խոստումներից:  
Գուք կարող եք գտնել այն առցանց [www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org)

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ (Դանիել 9:6) SPECIAL TOPIC: MESSIAH (from Dan.9:6)

Այս համարը մեկնաբանելու դժվարությունը կայանում է նրանում, որ գոյություն ունեն «Մեսիա» կամ «օծյալ» (BDB 603) տերմինի հետ կապված հնարավոր այլ նշանակություններ նույնպես:

1. կիրառված է Հրեա թագավորների համար (օր.՝ 1 Թագ.2:10; 12:3; 24:6,10; 2 Թագ. 19:21; 23:1; Սաղմ. 89:51; 132:10,17; Ողբ 4:20; Ամբ. 3:13; «Օծյալ Իշխան»՝ Դան. 9:25)
2. կիրառված է Հրեա քահանաների համար (այսինքն՝ «օծված քահանաների», Ելից 29:7; օր.՝ Ղևտ.4:3,5,16; 6:15; 7:36; 8:12; հավանաբար՝ Սաղմ. 89:9-10 և 133:2)
3. կիրառված Նահապետների և մարգարեների համար (տես՝ Ծննդ. 26:7; 1 Մնաց. 16:22; Սաղմ . 105:15, որը վերաբերում է ուխտի հավաքական ժողովրդին . հավանաբար նաև Ամբ. 3:13)
4. կիրառված մարգարեների համար (տես՝ 3 Թագ. 19:16; հավանաբար՝ 1 Մնաց. 29:22)
5. Կիրառված է Կյուրոսի համար (տես՝ Եսայի 45:1)
6. #1 և #2 համակցված Սաղմոս 110-ում և Չաքարիա 4-ում

7. Կիրառված է Աստծո հատուկ գալստյան համար, որպես Դավթի սերնդից Թագավոր, որը բերելու է արդարության նոր դարաշրջանը:
- ա. Հուդայի ցեղից (տես՝ Ծննդ.49:10)
  - բ. Հեսսեի տնից (տես՝ 2 Թագավորաց 7)
  - գ. տիեզերական իշխանությունը (տես՝ Մաղմուս 2; Եսայի 9:6; 11:1-5; Միք.5:1-4բ)
  - դ. կարիքավորների ծառայությունը (տես՝ Ես. 61:1-3)

Ես ինքս ավելի հակված եմ «Օծյալ» բնութագրականին Հիսուս Նագովրեցու համար (տես՝ Հովի .1:41; 4:25), համաձայն.

1. Դանիել 2-ի՝ չորրորդ կայսրության ընթացքում հավիտենական թագավորության ներկայացման
2. Դանիել 7:13-ի «մարդու որդու» ներկայացման համար, որին տրվեց հավիտենական թագավորությունը
3. Դանիել 9:24-ի փրկագործության ենթամասերի, որոնք մատնացույց են անում անկում ապրած աշխարհի վերջին
4. ՆԿ-ում Հիսուսի Դանիել գրքի կիրառության (տես՝ Մատթ.24:15; Մարկ. 13:14):

Պետք է ընդունել, որ սա հազվադեպ անուն է ՀԿ-ում, հավանաբար հանդիպում է միայն Դան. 9:25-ում: Նաև պետք է հասկանանք, որ Հիսուսը չի համապատասխանում ՀԿ-յան Մեսիայի ընդհանուր նկարագրությանը՝

1. Իսրայելի առաջնորդ չէր
2. պաշտոնապես չէր օժվել քահանայի կողմից
3. միայն Իսրայելի համար չէր փրկիչ
4. ոչ միայն «մարդու որդի», այլ զարմանալիորեն «Աստծո Որդի» էր:

#### NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:4-9

<sup>4</sup>Եվ Աբրամը գնաց, ինչպես որ ՏԵՐԸ նրան ասել էր. **Ղովտն էլ գնաց նրա հետ. և Աբրամը Խառանից դուրս գալիս յոթանասունհինգ տարեկան էր:**<sup>5</sup>Եվ Աբրամն առավ իր կին Սարային ու իր եղբորորդի Ղովտին և իրենց ամբողջ ունեցվածքը, որ ձեռք էին բերել և Խառանում իրենց ունեցած մարդկանց, և դուրս եկան, որ գնան Քանանի երկիրը:<sup>6</sup>Եվ Աբրամն այն երկրով անցավ մինչև Սյուբեմ վայրը՝ մինչև Մորեի դաշտավայրը, և այն ժամանակ այդ երկրում քանանացիներն էին:<sup>7</sup>Եվ ՏԵՐԸ երևաց Աբրամին ու ասաց. «Քո սերնդին եմ տալու այս երկիրը»: Եվ նա յանտեղ գոհասեղան շինեց ՏԻՐՈՋ համար, որ իրեն երևաց:<sup>8</sup>Եվ այդտեղից շարժվեց Բեթելի արևելքում գտնվող լեռը և իր վրանը խփեց. արևմտյան կողմից Բեթելն էր, իսկ արևելյան կողմից Գային, և այնտեղ ՏԻՐՈՋ համար գոհասեղան շինեց և կանչեց ՏԻՐՈՋ անունը:<sup>9</sup>Եվ Աբրամը ճամփորդում էր՝ միշտ դեպի հարավ շարժվելով:

**12:4 «Աբրամը գնաց»** Չոզեֆուսն (*Antiq. 1.8.1*) ասում է, որ Աբրամը հեռացավ, քանի որ նրա ընտանիքը մերժեց նրա միաստվածության վերաբերյալ հայտնության նոր պատգամը՝ խոսքը, որը բացառիկ էր Հնագույն Մերձավոր Արևելքում:

❖ **«Ղովտն էլ գնաց նրա հետ»** Չոզեֆուսն (*Antiq.1.8.1*) ասում է, որ Աբրամը որդեգրել էր Ղովտին, քանի որ ինքը գավակներ չունեիր: Հավանաբար սա ևս մեկ օրինակ է, թե ինչպես է Աբրամը փորձում օգնել Աստծուն իրեն սերունդներ տալու խոստումն իրականացնելու համար (տես՝ գլուխ 16): Ղովտին իր հետ վերցնելը (ինչպես նաև իր հայր Թարային, տես՝ 11:31) կարծես թե խախտում էր 12:1գ-ում ՅԱՀՎԵի հրամանը:

❖ **«յոթանասունհինգ տարեկան»** Ծննդոցում (գլուխ 4-9) ավելի շուտ նշված մարդիկ չափազանց երկարակյաց էին: Պատճառը հայտնի չէ:

1. մեղքը չէր ապականել երկիրը
2. տարիներն այլ կերպ էին հաշվվում
3. գրականական սիմվոլիզմ (ջրհեղեղից առաջ Շումերական թագավորների պես)

Ինչ էլ, որ լինեիր պատճառը, Աբրամը դեռևս «երիտասարդ» տղամարդ էր:

Երբ այս խոսքը համեմատում ենք Գործք 7:4 և Ծննդ. 11:32-ի հետ, կարծես թե վաթսուներե տարվա տարբերություն է տալիս: Սակայն հավանական է, որ Աբրամի անունը չի թվարկվում ցանկում որպես առաջնեկ ըստ տարիքի, այլ ըստ իր հայտնիության (տես՝ *Hard Sayings of the Bible*, p.49 /*Աստվածաշնչի Դժվարին Խոսքերը*, էջ՝ 49/): Հաճախ արդի մեկնաբանները հնագույն Եբրայական տեքստին և

մշակույթին վերաբերվում են այնպես, կարծես թե դրանք մեր սեփականն են: Նրանց և մեր «ճշգրիտ» պատմության վերաբերյալ տեսակետները նույնը չեն: Մեկը մյուսից ավելի լավը չեն, պարզապես տարբեր են:

❖ **«Խառան»** Ծննդոց 11:26-ում (BDB 248) Թարայի որդին մահանում է Ուր քաղաքում: Այստեղ դա հյուսիսարևմտյան մի քաղաք է (BDB 357): Թե՛ Ուր և թե՛ Խառան քաղաքները լուսնի աստծո/ աստվածուհու՝ Չինի երկրպագության կենտրոններ էին: Այս անունը շումերական լեզվով նշանակում է «ճանապարհներ» (BDB 357), ուստի հավանական է, որ գտնվում էր գլխավոր առևտրային ճանապարհի վրա (Նինվեից, Քարքենիչից դեպի Դամասկոս): Ծննդ. 48:7-ում Հակոբն ասում է, որ ինքը եկել է «Փաղանից» (BDB 804), որը նույնպես նշանակում է «ճանապարհներ» և հնարավոր է Արամի կամ Սիրիայի Խառան քաղաքի մեկ այլ նշանակությունն է (տես՝ 2 Օրինաց 26:5): Նաև հնարավոր է, որ դա «Նաքովրի քաղաքն» է (տես՝ Ծննդ. 24:10), որտեղից Հակոբը կնության է առնում Ռեբեկային՝ Լաբանի քրոջը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍՆԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ**  
**SPECIAL TOPIC: MOON WORSHIP**

Դեռևս սկսած *Ծումերից* (մեզ հայտնի ամենահին քաղաքակրթությունը) լուսնի պաշտամունքը եղել է Հնագույն Մերձավոր Արևելքի ամենամեծ տարածում գտած դիցաբանությունը: Այս առասպելն ուներ թե՛ արական և թե՛ իգական կերպար: Սկզբնապես լուսնի աստվածը ծնվել է ցորենի աստվածուհու՝ *Նինիլից*, որին բռնաբարել էր *Էնիլը*՝ երկնքի աստվածը: *Էնիլը* վտարվում է պանթեոնից և իր արարքի համար դատապարտվում սանդարամետին, սակայն երբ *Նինիլը* հայտնաբերում է, որ ինքը հղի է, միանում է նրան: Երեխային՝ *Սինին* (կամ *Չին*) թույլատրվեց, որ ամեն գիշեր բարձրանա երկինք:

Լուսնի երկրպագությունը տեղի է ունենում լուսնի տարբեր փուլերի ժամանակ՝

1. նորալուսին – *Asimbabbar*
2. կիսալուսին – *Sin*
3. լիալուսին – *Nanaa* (Շումերական «լուսավորությունը» *En-su-ից*՝ «իմաստության տիրոջից»)

Այս անունները հիմնականում նշանակում են «իմաստուն տեր» (այսինքն՝ *Suen*) կամ «լուսավորում» (*Nanaa*), որոնց երկրպագում էին Քաղղեացիների Ուր քաղաքում: Քաղաքն ինքնին հաճախ անվանում էին Նաննարի քաղաք: Պտղաբերության գույգին երկրպագում էին զիգուրատներում (հարթ գագաթներով հսկա բուրգեր), որոնք գտնվում էին քաղաքի մեջ: Արևի աստվածը (*Shamash*) գույգի առաջնեկն էր, իսկ հետո *Ereshkigal* (սանդարամետի Թագուհին) և *Nanna* աստվածուհին (երկնքի Թագուհին):

Այս պաշտամունքը տարածվել էր ամբողջ Հնագույն Մերձավոր Արևելքով (ՀՄԱ), սակայն երկրպագության կենտրոններ էին հանդիսանում հետևյալ քաղաքները՝

1. Ուր
2. Խառան
3. Թեմա
4. Քանան
5. Մեքքա

Իրականում այս դիցաբանությունը համադրում է պտղաբերությունը աստղերի պաշտամունքի հետ: ՀԿ-ը մերժում է աստղերի (տես՝ 2 Օրինաց 4:19; 17:3; 4 Թագ. 21:3,5; 23:5; Երեմ. 8:2; 19:13; Սով. 1:5) և պտղաբերության երկրպագությունը (այսինքն՝ Բահադի և Աստարովթի, Ուզարտական պոեմներում): Եբրայեցիները՝ բնիկ քոչվորները, շատ զգույշ էին լուսնի երկրպագությանը դիմադրելու հարցում, քանի որ ընդհանրապես լուսնի պաշտամունքը հատկանշական էր քոչվոր ցեղերին, ովքեր ճամփորդում էին գիշերով, մինչ արևին ավելի շատ երկրպագում էին նստակյաց կյանքով ապրող կամ գյուղատնտեսությամբ զբաղվող ժողովուրդները: Ի վերջո քոչվոր ազգերը ունեցան իրենց հանգրվանները և ապա աստղերի պաշտամունքը հիմնականում դարձավ խնդիր:

**12:5 «Աբրամ»** Այս անունը (BDB 4) նշանակում է «բարձրյալ հայր», «հորից բարձրացված» կամ «բարձրյալը իմ հայրն է»: Տե՛ս 11:26-ի գրառումը:

❖ «Սարա» Աբրամի կնոջ անվան այս տարբերակը անհայտ է (BDB 979, KB 1354): 17:15-ում նոր տարբերակը նշանակում է «ազնվական կին» կամ «արքայադուստր» (BDB 979 II, KB 1354 II, տես՝ Դատ .5:29, 3 Թագ. 11:3; Եսայի 49:23):

❖ «մարդկանց, որ ձեռք էին բերել Խառանում» «Ձեռք բերել» նշանակում էր «շինել» (BDB 793): Հրեական միստիցիզմն (*Kabbalah*) ասում է, որ Աբրամը կախարդությամբ մարդիկ էր շինում, որպեսզի ցույց տա Աստծո գործությունը: Ռաբբիներն ասում են, որ սա վերաբերում է Աբրամի քարոզչության միջոցով դարձի եկած մարդկանց, սակայն համատեքստում այն նկատի ունի գնված ստրուկներին կամ ծառաներին, ինչպես նաև նրանց երեխաներին:

❖ «Քանանի երկիրը» «Քանան» տերմինը (BDB 488) սկզբնապես վերաբերում էր Քանի որդուն (Նոյի որդիներից մեկը, տես՝ Ծննդ. 9:18,22,25,27; 10:15): Նրա սերունդների զբաղեցրած տարածքի մի մասն այս անունն էր կրում: Այն նշանակում էր «ցածրավանդակ», որը «բարձրավանդակի» (ցածր բլուրների) հակառակն է, հետևաբար մատնացույց է անում Եգիպտոսից մինչև Փյունիկեի Սիդոն ընկած ծովափնյա հարթավայրը: Սակայն, Փղշտացիների հարավարևմտյան ափին՝ Եգիպտոսի հյուսիսային մասում, բնակություն հաստատելուց հետո այն սկսեց մատնանշել Պաղեստինի հյուսիսային ափամերձ տարածքը: Երբ Հեսուի գրքում այդ տարածքը պաշարեցին Եբրայեցիները, այն վերագրվեց Հորդանան Գետի երկու կողմերի ափերին: Քանանի երկիրն ուներ մոտ 100 մղոն երկարությամբ ափամերձ ցամաք և իր տարածքի երկարությունը 180 մղոն, իսկ լայնությունը ձգվում էր 20-ից մինչև 120 մղոն:

**12:6 «Սյուրեն»** Այս անունը (BDB 1014) նշանակում է «թիակ»: Այս քաղաքը տեղակայված է Գերադ և Քորազին լեռների միջև: Այն հանդիսացել է մի քանի հիշարժան դեպքերի միջավայր՝ (1) ուխտի օրհնությունն և անեծքը (տես՝ 2 Օրինաց 11:29-30; Հեսու 8:30-35); (2) ուխտի նորոգության ծառայությունը (տես՝ Հեսու 24); (3) Սողոմոնի մահից հետո Ռոբովամի (Սողոմոնի որդու) և Հերոբովամի (հյուսիսային առաջնորդի) միջև եղած հանդիպման վայրը, որը Հուդայի և Իսրայելի անջատման պատճառ հանդիսացավ (Բ. Ա. 922թ):

❖ «Մորեի կաղնի /հայ.՝ դաշտավայր/» Մորե նշանակում է ուսուցիչ (BDB 435): Ծառերը Սեմական ժողովրդի համար սորբավայրի նշան էին: Հնարավոր է սա եղել է քանանացիների զոհասեղանի վայր կամ սրբատեղի (տես՝ Ծննդ. 35:4; 2 Օրինաց 11:30; Դատ. 9:37): Այդ ծառը տերեբինտ է (BDB 18, «սև կա ծառ»), հավանաբար կաղնի (տես՝ LXX): Աստվածաշնչում նշված բույսականության և կենդանիների վերաբերյալ լավ տեղեկատվություն է հաղորդում UBS-ի *Աստվածաշնչյան Ֆաունա և Ֆլորա* երկրորդ խմբագրության գիրքը (*Fauna and Flora of the Bible*):

❖ «այդ ժամանակ այդ երկրում քանանացիներն էին» Ծատ մեկնաբաններ սա համարում են որպես հետագա խմբագրության ձեռագիր, նույնիսկ Իբն Եզրասը, որպես հետագայում ավելացված հատված, սակայն դիտարկելով Ծննդոց 9-ի լույսի ներքո, այն նկատի ունի, որ երկիրը բնակեցված էր Քանանի սերունդներով:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ**  
**SPECIAL TOPIC: THE PRE-ISRAELITE INHABITANTS OF PALESTINE**

Ա. Գոյություն ունի ժողովուրդների մի քանի ցանկ:

1. Ծննդոց 15:19-21 (10)			
ա. Կենեցիներ	դ. Քետացիներ	է. Ամորացիներ	ժ. Հերուսացիներ
բ. Կենեզացիներ	ե. Փերեզացիներ	ը. Քանանացիներ	
գ. Կեղմոնացիներ	զ. Ռափայիմներ	թ. Գերզեսացիներ	

2. Ելից 3:17 (6)		
ա. Քանանացիներ	բ. Քետացիներ	գ. Ամորացիներ
դ. Փերեզացիներ	ե. Խևացիներ	զ. Հերուսացիներ

3. Ելից 23:28 (3)	
ա. Խևացիներ	
բ. Քանանացիներ	

գ. Քետացիներ

4. 2 Օրինաց 7:1 (7)

ա. Քետացիներ

բ. Գերգեսացիներ

գ. Ամորիացիներ

5. Հեսու 24:11 (7)

ա. Ամորիացիներ

բ. Փերեզացիներ

գ. Քանանացիներ

դ. Քանանացիներ

ե. Փերեզացիներ

զ. Իսլացիներ

է. Հերուսացիներ

դ. Քետացիներ

ե. Գերգեսացիներ

զ. Իսլացիներ

է. Հերուսացիներ

Բ. Անուանների ծագումը անհայտ է պատմական փաստերի սղության պատճառով: Ծննդոց 10:15-19 իր մեջ ներառում է դրանցից մի քանիսին, որոնք կապ ունեն Քամի որդի Քանանի հետ:

Գ. Համառոտ նկարագրություններ Ծննդոց 15:19-21 ամենաերկար ցանկից՝

1. Կենեցիներ

- BDB 884

- իսրայելացի չէին

- անուաները կապ ունեին «դարբնի» հետ, որը հնարավոր է վերաբերում էր մետաղագործությանը կամ երաժշտությանը (տես՝ Ծննդ. 4:19-22)

- կապ ունի Քերրոնի հյուսիսում Սինայի տարածքի հետ

- անունը կապված է Մովսեսի աներոջ՝ Հոթորի հետ (տես՝ Դատ. 1:16; 4:11)

2. Կենեզացիներ

- BDB 889

- հրեաների բարեկամ

- Եդովմի մի ցեղ (տես՝ Ծննդ. 15:19)

- ապրում էին Նեգովրում

- հավանաբար միաջուլվեցին Հուդայի հետ (տես՝ Թվոց 32:12; Հեսու 14:6,14)

3. Կեդմոնացիներ

- BDB 870 II

- իսրայելացի չէին, հավանաբար Իսմայելի սերնդից (տես՝ Ծննդ. 25:15)

- անունը կապ ունի «արևելքի» բառի հետ

- ապրում էին Նեգովրում

- հավանաբար կապված էին «արևելքի մարդկանց հետ» (տես՝ Հոր 1:3)

4. Քետացիներ

- BDB 366

- իսրայելացի չէին

- Քետի սերունդները

- Անատոլիայի թագավորությունից էին (Փոքր Ասիա, Թուրքիա)

- շատ վաղուց ապրում էին Քանանում (տես՝ Ծննդ. 23; Հեսու 11:3)

5. Փերեզացիներ

- BDB 827

- իսրայելացի չէին, հավանաբար Իսուրիացիներ

- ապրում էին Հուդայի տարածքի անտառներում (տես՝ Ծննդ. 34:30; Դատ. 1:4; 16:10)

6. Ռափայիմներ

- BDB 952

- իսրայելացի չէին, հավանաբար հսկաներ էին (տես՝ Ծննդ. 14:5; Թվոց 33:33; 2 Օրինաց 2:10-11,20)

- ապրում էին Հորդանանի արևելյան ափին (տես՝ Ծննդ. 15:20; Հեսու 12:4; 13:12; 2 Օր. 2:8-11,20; 3:13) կամ արևմտյան ափին (տես՝ Հեսու 15:8; 17:15; 2 Թագ. 5:18,22; 23:13; 1 Մնաց. 20:4)

- ռազմիկների կամ հերոսների տոհմ

7. Ամորիացիներ

- BDB 57

- հյուսիս-արևմտյան սեմական մարդկանց խումբ Քամից (տես՝ Ծննդ. 10:16)

- դարձավ Քանանի բնակիչների համար ընդհանուր անվանում (տես՝ Ծննդ. 15:16; 2 Օր. 1:7; Հեսու 10:5; 24:15; 2 Թագ. 21:2)

8. Քանանացիներ	<ul style="list-style-type: none"> <li>- հավանական է անունը նշանակում է «արևմուտք»</li> <li>- ISBE հատոր 1, էջ՝ 119, ասում է, որ տերմինը մատնանշում է՝ ա. ընդհանրապես Պաղեստինի բնակիչներին բ. լեռնաբնակ բնակչությանը, ի հակադրություն առափնյա հարթավայրերի գ. իրենց սեփական թագավորով հատուկ ցեղ էր</li> <li>- BDB 489</li> <li>- Քամից (տես՝ Ծննդ. 10:15)</li> <li>- Հորդանանի արևմտյան Քանանում ապրող բոլոր ցեղերի ընդհանուր անվանումը</li> <li>- Քանան անվանման նշանակությունը անհայտ է, հավանաբար «առևտրական» կամ «կարմրամանուշակագույն ներկ»</li> <li>- որպես մարդկանց խումբ նրանք ապրում էին առափնյա հարթավայրի երկայնքով (տես՝ Թվոց 13:29)</li> </ul>
9. Գերգեսացիներ	<ul style="list-style-type: none"> <li>- BDB 173</li> <li>- Քամից (տես՝ Ծննդ. 10:16) կամ առնվազն «Քանանի մի որդուց» /այսինքն՝ երկիրը/, ISBE, հատոր 2, էջ՝ 1232</li> </ul>
10. Հերուսացիներ	<ul style="list-style-type: none"> <li>- BDB 101</li> <li>- Քամից (տես՝ Ծննդ. 10:16)</li> <li>- Հերուս/Սաղեմ/Երուսաղեմ քաղաքից (տես՝ Հեսու 15:63; Դատ. 19:10)</li> <li>- Եզեկ. 16:3,45 պնդում է, որ նրանք Ամրոհացիների և Քետացիների խառնուրդ ազգ էին</li> </ul>
11. Խևացիներ	<ul style="list-style-type: none"> <li>- BDB 295</li> <li>- Քամից (տես՝ Ծննդ. 10:17)</li> <li>- LXX-ը թարգմանում է որպես Քոռեցիներ (տես՝ Ծննդ. 34:2; 36:20-30; Հեսու 9:7)</li> <li>- հավանաբար երբայերեն «քարանձավ» բառից է, հետևաբար քարանձավաբնակներ էին</li> <li>- նրանք ապրում էին Լիբանանի լեռներում (տես՝ Հեսու 11:3; Դատ. 3:3): 2 Թագ. 24:7-ում նրանք թվարկվում են Տիվրոսի և Սիդոնի շարքում:</li> </ul>

**12:7 «Տերը հայտնվեց»** Սա տարածված «տեսնել» ԲԱՅՆ է (BDB 906), որը կիրառված է մասնագիտացված նշանակությամբ (այսինքն՝ Աստվածության ֆիզիկական տեսանելի կերպարանքով, տես՝ 12:7 /երկու անգամ/; 17:1; 18:1; 26:2,24; 35:1,9; 48:3): Համար 1-ում ՅԱՀՎԵն խոսում է Աբրամի հետ, սակայն այստեղ հայտնվում է: Հաճախ ՅԱՀՎԵն հայտնվում էր «Տիրոջ հրեշտակի» տեսքով:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԻՐՈՋ ՀՐԵՇՏԱԿԸ**  
**SPECIAL TOPIC: THE ANGEL OF THE LORD**

Ակներև է, որ Աստված ՀԿ-ում հայտնում է Իրեն մարդկային ֆիզիկական կերպարանքով: Երրորդությանը հետևող մարդկանց համար հարց է առաջանում, թե ով է Երրորդության միջից այս դերը կատարում: Քանի որ Հայր Աստվածը (ՅԱՀՎԵ) և Իր Հոգին հետևողականորեն մարմնավորված չեն եղել, ավելի հավանական է ընդունել, որ այդպիսի դեպքերում մարդկային կերպարանքով հայտնվել է մարմին հագած Մեսիան:

Հետևյալ ցանկը կարող է օգնել այն մարդկանց, ովքեր դժվարանում են պատկերացնել հրեշտակների հետ կապված դեպքերը որպես աստվածհայտնություն՝

1. Տիրոջ հրեշտակը որպես հրեշտակ
  - ա. Ծննդ. 24:7,40
  - բ. Ելից 23:20-23; 32:34
  - գ. Թվոց 22:22
  - դ. Դատ. 5:23
  - ե. 2 Թագ. 24:16

զ. 1 Մնաց.21:15-30

է. Չաք. 1:12-13

2. Տիրոջ հրեշտակը որպես աստվածհայտնություն՝

ա. Ծննդ. 16:7-13; 18:1-19:1; 22:11-15; 31:11,13; 48:15-16

բ. Ելից 3:2,4; 14:19 (13:21)

գ. Դատ. 2:15; 6:22-24; 13:3-23

դ. Ովսեա 12:3-4

ե. Չաք. 3:1-5

Միայն համատեքստից կարելի է հասկանալ, թե որ տարբերակին է պատկանում այս արտահայտությունը:

❖ «**Քո սերնդին եմ տալու այս երկիրը**» Սա մեծ խոստում էր Աբրահամի սերունդների համար (բառացի՝ «սերմի», տես՝ 13:15; 15:18), սակայն Պողոսը տեսավ եզակի «սերմը», որը նկատի ուներ Մեսիային (տես՝ Ծննդ. 3:16):

❖ «**Եվ նա այնտեղ գոհասեղան շինեց**» Այս գոհասեղանները հատուկ հիշարժան դեպքերի ու հայտնությունների համար էին շինվում (այսինքն՝ 8:20; 13:18; 22:9; 26:25; 33:20; 35:7; Ելից 17:15; 24:4; Հեսու 8:30; Դատ. 6:24; 21:4; 1 Թագ. 7:17; 14:35; 2 Թագ. 24:25): Չոհարբերությունը մարդու կողմից Աստծո ներկայությունը, հոգածությունն ու մատակարարումը զգալու տեսանելի արտահայտման կերպ էր: Տեսանելի գոհը ծիսի մեջ դառնում էր անտեսանելի և բարձրանում Աստծուն:

**12:8 «Բերթել»** Սա նշանակում է «Աստծո տուն» (BDB 110): 28:19-ից իմանում ենք, որ այս քաղաքը սկզբնապես կոչվել է Լուզ՝ մինչև Հակոբի օրերը: Հետագայում տրված այս անունը և համար 6-ի վերջին արտահայտությունը հուշում է մեզ, որ այս դեպքը արձանագրվել է ավելի ուշ և հնարավոր է ինչ-որ ժամանակաշրջան այն եղել է որպես բանավոր ավանդույթ: ՀԿ-ի գրքերի շարադրանքի ճշգրիտ ժամանակը, անձը և մեթոդաբանությունը անհայտ է: Տես՝ Ծննդոցի Ներածություն, հատոր 1Ա, Գ. 1.

❖ «**կանչեց Տիրոջ անունը**» Եթե այս համարը և 4:26-ը համեմատենք Ելից 6:7-ի հետ, կարծես թե հակասություն կգտնենք: Սակայն, հավանական է, որ անունը սկզբնապես կիրառվել է առանց ուխտի լիարժեք կարևորությունը հասկանալու: Այս արտահայտությունը նկատի ունի պաշտամունք՝ ծիսական արարողություն (տես՝ 4:26; 12:8; 13:4; 21:33; 26:25):

### **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ» (ՀԿ) SPECIAL TOPIC: “THE NAME” OF YHWH (OT)**

«Անուն» բառի կիրառությունը որպես հենց Ինքը ՅԱՀՎԵԻն փոխարինող գուգահեռվում է Ելից 23:20-33 «հրեշտակ» բառի կիրառության հետ, որի համար ասվում է, որ ունի «Իմ անունը Իր մեջ»: Այս նույն փոխարինումը կարելի է տեսնել «Նրա փառքը» խոսքի կիրառության մեջ (օր. Հովհ. 1:14; 17:22): Այս բոլոր օրինակներն էլ փորձում են մեղմացնել ՅԱՀՎԵԻ մարդեղեն ներկայությունը (տես՝ Ելից 3:13-16; 6:3): ՅԱՀՎԵԻ մասին իհարկե խոսվում է մարդկային տերմիններով, սակայն նաև հայտնի է, որ Նա հոգով ներկա է ամբողջ Իր ստեղծագործության մեջ (տես՝ 3 Թագ. 8:27; Սաղմ. 139:7-16; Երեմ. 23:24; Գործք 7:49 մեջբերում է Եսայի 66:1):

Գոյություն ունեն «անուն» բառի մի քանի օրինակներ, որոնք ներկայացնում են ՅԱՀՎԵԻ աստվածային էությունը և անձնապես Նրա ներկայությունը:

1. 2 Օրինաց 12:5; 2 Թագ. 7:13; 3 Թագ. 9:3; 11:36

2. 2 Օրինաց 28:58

3. Սաղմ. 5:11; 7:17; 9:10; 33:21; 68:4; 91:14; 103:1; 105:3; 145:21

4. Եսայի 48:9; 56:6

5. Եզեկ. 20:44; 36:21; 39:7

6. Ամովս 2:7

7. Հովհաննես 17:6,11,26

ՅԱՀՎԵԻ անունը «կանչելու» հասկացությունը (այսինքն՝ երկրպագելու) երևում է Ծննդոցի ավելի վաղ շրջանում՝



1. 4:26, Սեթի սերունդը
2. 12:8, Աբրահամ
3. 13:4, Աբրահամ
4. 16:13, Հագար
5. 21:33, Աբրահամ
6. 26:25, Իսահակ

և Ելիցում

1. 5:22-23, Քո անունով խոսելու
2. 9:16, ամբողջ երկրում Իմ անունը պատմվի (տես՝ Հոմ. 9:17)
3. 20:7, Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես (տես՝ Ղևտ. 19:12; 2 Օր. 5:11; 6:13; 10:20)
4. 20:24, Իմ անունը հիշատակվելիս (տես՝ 2 Օր. 12:5; 26:2)
5. 23:20-21, մի Հրեշտակ («որովհետև Իմ անունը նրա մեջ է»)
6. 34:5-7, Մովսեսը կանչում է (կամ «կանչեց») Տիրոջ անունը: Սա այն բազմաթիվ տեքստերից մի փոքր մասն է ներկայացված, որտեղ նկարագրվում է ՅԱՀՎԵի բնավորությունը (տես՝ Նեեմ. 9:17; Սաղմ. 103:8; Հովել 2:13):

Ինչ-որ մեկին անունով ճանաչելը մատնացույց է անում մտերմություն (տես՝ Ելից 33:12); Մովսեսը ճանաչում է ՅԱՀՎԵի անունը և 33:17-ում Յահվեն ճանաչում է Մովսեսի անունը: Սա այն հատվածն է, որտեղ Մովսեսը կամենում է տեսնել Աստծո փառքը (տես՝ հ. 18), սակայն Աստված թույլ է տալիս նրան տեսնելու «Իր բարությունը» (հ. 19), որը համազոր է «անվանը» (հ. 19):

Իսրայելացիներին հրամայված էր բնաջնջելու Քանանի աստվածների անունները (տես՝ 2 Օր. 12:3) և Նրան կանչելու (տես՝ 2 Օր. 6:13; 10:20; 26:2) մի հատուկ վայրում, որտեղ Նրա անունն էր բնակվելու (տես՝ Ելից 20:24; 2 Օր. 12:5, 11, 21; 14:23, 24; 16:2, 6, 11; 26:2):

ՅԱՀՎԵն ունի տիեզերական նպատակ, որի մեջ ներգրավված է Իր անունը:

1. Ծննդ. 12:3
2. Ելից 9:16
3. Ելից 19:5-6
4. 2 Օրինաց 28:10, 58
5. Միքիա 4:1-5

❖ **«Գայի»** Սա նշանակում էր «քարակույտ» (BDB 743) և Բեթելի մոտ գտնվող մի քաղաք էր կամ հավանաբար քաղաքի ավերակներ:

**12:9 «ճամփորդում էր»** Սա բառացի նշանակում է «հանեց վրանի ցիցերը» (BDB 652, KB 704, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Այս խոսքը, ինչպես նաև հ. 8-ում «իր վրանը խփեց» արտահայտությունը բնութագրում են Աբրամի քոչվոր կյանքը:

❖ **«Նեգովր /հարավ/»** Սա նշանակում է «հարավ» (BDB 616, տես՝ 13:1,3): Սա անապատ չի, սակայն տարվա ինչ-որ ժամանակահատված չոր արոտավայր է:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:10-16**

<sup>10</sup>Եվ այն երկրում սով եղավ. և Աբրամն իջավ Եգիպտոս՝ այնտեղ որպես պանդուխտ բնակվելու համար, որովհետև սովն այդ երկրում սաստիկ էր: <sup>11</sup>Եվ եղավ, որ Եգիպտոս մտնելուց առաջ իր կնոջը՝ Սարային ասաց. «Ահա գիտեմ, որ դու տեսքով գեղեցիկ կին ես: <sup>12</sup>Եվ անպայման, երբ եգիպտացիք քեզ տեսնեն, ասելու են. «Սա սրա կինն է», և ինձ կսպանեն, բայց քեզ ողջ կթողնեն: <sup>13</sup>Ասա՛, որ դու իմ քույրն ես, որպեսզի քո շնորհիվ ինձ համար լավ լինի, և քո շնորհիվ իմ անձն ապրի»: <sup>14</sup>Եվ եղավ, երբ Աբրամը մտավ Եգիպտոս, եգիպտացիները տեսան, որ այդ կինը շատ գեղեցիկ է: <sup>15</sup>Եվ Փարավոնի իշխաններն էլ տեսան նրան և զովեցին նրան Փարավոնի առջև. և կինը տարվեց Փարավոնի տունը: <sup>16</sup>Եվ սա նրա պատճառով Աբրամի հետ լավ վարվեց, և նա ոչխարներ, կովեր, էգ էշեր, ծառաներ ու աղախիններ և ուխտեր ունեցավ:

**12:10 «սով»** Սա բառացի նշանակում է «դատարկ ստամոքս» (BDB 944): Աստված փորձում էր Աբրամի հավատքը: Նա ձախողեց (տես՝ հհ. 12-13): Աստվածաշունչը մարդկանց ներկայացնում է իրենց թերություններով հանդերձ: Աբրահամը յուրահատուկ մեկը չէր. ՅԱՀՎԵՆ է յուրահատուկը:

**12:11** Նահապետների կանայք գեղեցիկ են եղել (տես՝ 12:11; 24:16; 26:7), սակայն ամուլ կանայք էին: ՅԱՀՎԵՆ Իր գորությունը, ներկայությունը և նպատակը ցույց տվեց նրանց թույլ տալով, որ նրանցից ամեն մեկն էլ սերունդներ տան: Սա Նրա որոշած ճանապարհն էր հայտնելու, որ Իսրայելի պատմությունը Իր հսկողության ներքո է և ոչ թե մարդկային կերպով բազմանալու կամ ծրագրելու:

**12:12 «ինձ կապանեն»** Աստված խոստացել էր, որ Աբրամին մեծ ազգ էր դարձնելու, սակայն այստեղ նա փորձում է պաշտպանել իրեն իր կնոջ գնով: Գլուխ 20-ում նա կրկնում է իր այս արարքը և գլուխ 26-ում իր որդին է անում այդ նույն գործը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱՅԻ ՍԵՐՈՒՆԴԸ ԽԱՓՈՎՆԵԼՈՒ ՍԱՏԱՆԱՅԻ ՓՈՐՁԵՐԸ**  
**SPECIAL TOPIC: SATANIC ATTEMPTS TO THWART THE MESSIANIC LINE**

Ա. Կայենի ապստամբությունը, Ծննդոց 4  
Բ. Սարդկային և հրեշտակային սերունդներին խառնելը, Ծննդոց 6  
Գ. Բաբելոնի ապստամբության աշտարակը, Ծննդոց 11  
Դ. Աբրամը Սարային տալիս է Փարավոնին, Ծննդոց 12  
Ե. Իսմայելի ծնունդը Հազարից (Սարայի աղախնուց), Ծննդոց 16  
Զ. Աբրամը Սարային տալիս է Աբիմելեփին, Ծննդոց 20  
Է. Իսահակի զոհաբերությունը, Ծննդոց 22  
Ը. Եսավի և Հակոբի միջև մրցակցությունը, Ծննդոց 25, 32  
Թ. Իսահակը իր կնոջը՝ Ռեբեկային տալիս է Աբիմելեփին, Ծննդոց 26  
Ժ. Լաբանի խորամանկելն ու մրցակցությունը, Ծննդոց 29-31  
Ի. Հակոբը միավորվում է Սյուքեմի հետ, Ծննդոց 34  
Լ. Հակոբի երեխաների միջև մրցակցությունը, Ծննդոց 37  
Խ. Հուդայի անհավատարմությունը և այլասերումը կապված Թամարի հետ, Ծննդոց 38

**12:13 «Ասա՛, որ դու իմ քույրն ես»** Սա մեր ականջին տարօրինակ է հնչում, սակայն (1) նրանք կիսով չափ քույր և եղբայր էին (այսինքն՝ նույն հորից, տես՝ 20:12) և (2) Նուգի տախտակներից մենք իմանում ենք, որ ընտանիքների ներսում ամուսնանալու այս սովորույթը տարածված էր Խոռեցիների բարձրաստիճան հասարակության մեջ կամ (3) կանանց «քույրեր» անվանելը տարածված էր (ինչպես Եգիպտոսում և Երգ Երգոցում 4:9,10,12; 5:1,2):

**12:15 «Փարավոն»** Այս տիտղոսը (BDB 829) կիրառվում է եգիպտացի թագավորների համար՝ տասնութերորդ դինաստիայից սկսած: Եգիպտական այս բառի ստուգաբանությունն է «մեծ տուն»:

**12:16 «սովեց նրան»** Աբրամի ամբողջ հարստությունը չի եկել Փարավոնից (տես՝ 12:5բ):

❖ Չնայած որ հին աշխարհում ոչխարները և նախիրը, ինչպես նաև էշերն ընդունված տնային կենդանիներ էին և հարստության աղբյուր (այսինքն՝ Աբրամին տրվեց բարձր գին Սարայի համար), ուղտերը մեծ տարածում չունեին որպես տնային կենդանիներ մինչև դրանից շատ ժամանակ անց (այսինքն՝ Ք. Ա. երկրորդ հազարամյակի վերջում): Կան Ք. Ա. երկրորդ հազարամյակում Միջագետքից որոշ ավելի վաղ շրջանի հնագիտական ապացույցներ այն մասին, որ ուղտերը եղել են տնային կենդանիներ, սակայն դա միայն էլիտար դասակարգի համար (տես՝ Ռ. Կ. Հարրիսոն, *Հին Կտակարանի Ներածություն*, էջ՝ 311 /R. K. Harrison *Introduction to the Old Testament*):

Նաև ուշադրություն դարձրեք, որ այս համարում ստրուկներն ու ծառաները նույնպես թվարկվում են ունեցվածքի հետ (տես՝ 20:14; 26:14; 30:43; 32:5):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:17-20**  
**<sup>17</sup>Եվ ՏԵՐԸ մեծ հարվածով պատուհասեց Փարավոնին և նրա տունը՝ Աբրամի կնոջ՝ Սարայի պատճառով: <sup>18</sup>Եվ Փարավոնը կանչեց Աբրամին ու ասաց. «Այս ի՞նչ արեցիր դու ինձ, ինչո՞ւ ինձ չհայտնեցիր, որ նա քո կինն է: <sup>19</sup>Ինչո՞ւ ասացիր, թե՛ իմ քույրն է, և ես նրան ինձ համար կին էի**

**առնելու. բայց հիմա, ահա քո կինը, ա՛ն ու գնա՛»:** <sup>20</sup>Եվ Փարավոնն իր մարդկանց հրաման արձակեց նրա մասին, և նրանք ճանապարհ դրին նրան ու նրա կնոջը՝ իր ամբողջ ունեցվածքով:

**12:17 «մեծ հարվածով պատուհասեց»** Այս պատուհասները ըստ երևույթին կապված էին Սարային պաշտպանելու հետ: Ծննդոց 20:18-ում այն վերաբերում է Աբիմելեքի կանանց «փակ արգանդներին»: «Պատուհասեց» ԲԱՅԸ (BDB 619, KB 668, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) միևնույն «պատուհասներ» (BDB 619) բառի արմատն ունի, որն ավելի շեշտադրելու քերականական միջոց է:

❖ **«Սարայի պատճառով»** Սա «խոսքերով» արտահայտությունն է: Ռաշին ասում է, որ նա հրամայեց հրեշտակին, որ պաշտպանի իրեն: Ըստ երևույթին հենց ինքն էլ տեղեկացնում է Փարավոնին իրավիճակի վերաբերյալ (տես՝ հ. 18):

**12:18** Պատուհասը ակնհայտ է, որ կապված էր Սարայի ֆիզիկական/սեռական պաշտպանության հետ: Հարցն այն է, թե ինչպես Փարավոնն իմացավ պատուհասի պատճառը՝

1. ՅԱՀՎԵՆ հայտնեց նրան
2. Եգիպտոսի իմաստունները (տես՝ Ելից 7:11,22; 8:7)
3. Սարան ինքը

Սա կարող է մեկ այլ օրինակ հանդիսանալ, ինչպես Դանիել 4 կամ ՆԿ-ի մոզերը, որտեղ Աստված խոսում է ծագումով ոչ հրեաների և հայտնում Իր նպատակները:

**12:19-20** Աբրամի Եգիպտոսից հեռանալը խնդրանք չէր, այլ՝ հրաման:

1. «ա՛ն» - BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՍԱՅԱԿԱՆ
2. «գնա՛» - BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՍԱՅԱԿԱՆ
3. «Փարավոնը իր մարդկանց հրաման արձակեց» - BDB 845, KB 1010, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
4. «ճանապարհ դրին» - BDB 1018, KB 1511, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այս ուխտը այդքան կարևոր: Ովքե՞ր են ներգրավված դրա մեջ: Սահմանի՞ր տերմինները:
2. Արդյո՞ք Աբրամն անմիջապես կատարեց իր բաժինը: Ինչպե՞ս է այս գլխում երևում Աստծո շնորհքը:
3. Արդյո՞ք Թարան մահացել էր, երբ Աբրամը հեռացավ Խառանից:
4. Այս գլխում Աստված ինչպե՞ս փորձեց Աբրամին: Հաջողվե՞ց արդյոք Աբրամին անցնել այս ստուգարքը:

## ԾՆՆԴՈՑ 13

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Աբրամը և Դովտը	Աբրամը ժառանգում է Քանանը	Աբրահամը և Դովտը	Աբրամն ու Դովտը բաժանվում են	Աբրամն ու Դովտը բաժանվում են
13:1	13:1-4		13:1-4	13:1-4
13:2-7		13:2-7		
	13:5-13		13:5-7	13:5-9
13:8-13		13:8-13	13:8-9	
			13:10-13	13:10-13
			Աբրամը գաղթում է Քերթոն	
13:14-18	13:14-18	13:14-13	13:14-18	13:14-17
				13:18

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:1

<sup>1</sup> Եվ Աբրամը Եգիպտոսից դեպի վեր, դեպի հարավ գնաց՝ ինքը և իր կինը՝ իր ամբողջ ունեցվածքով և Ղովտն էլ իր հետ:

**13:1** Աբրամը Եգիպտոսից վերադարձավ Նեգեվ՝ հարավ: Նեգեվը նշանակում է Քանանի չոր հարավային մասերը: Նա ավելի շուտ գաղթել էր հենց այս նույն շրջանը (տես՝ 12:9) և նորից վերադառնալու է այդտեղ 20:1-ում: Դա նաև այն վայրն է, որտեղ ապրեց Իսահակը (տես՝ 24:62):

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:2-7

<sup>2</sup>Եվ Աբրամը շատ հարուստ էր անասուններով, արծաթով ու ոսկով: <sup>3</sup>Եվ իր ճամփան գնաց՝ հարավային կողմից մինչև Բեթել՝ այնտեղը, որտեղ նախկինում իր վրանն էր գտնվում՝ Բեթելի և Գայիի միջև, <sup>4</sup>այն գոհասեղանի տեղը, որ սկզբում շինել էր. և Աբրամն այնտեղ Աստծո անունը կանչեց: <sup>5</sup>Եվ Ղովտն էլ, որ Աբրամի հետ գնացել էր, ուներ ոչխարներ ու նախիրներ և վրաններ: <sup>6</sup>Արդ, այդ երկիրը բավական չէր նրանց միասին բնակվելու համար, որովհետև նրանց ունեցվածքը շատ էր, և չէին կարողանում միասին բնակվել: <sup>7</sup>Եվ կռիվ եղավ Աբրամի անասունների հովիվների և Ղովտի անասունների հովիվների միջև. այն ժամանակ քանանացիներն ու փերեզացիներն էին բնակվում երկրում:

**13:2** Աբրամը հարուստ մարդ էր: Ծննդոց գիրքը փաստագրում է իր հարստության երկու աղբյուրները:  
1. նրա ունեցվածքը Ուրից, 12:5  
2. նրա հավաքած ունեցվածքը Եգիպտոսից, 12:6  
Հնագույն Մերձավոր Արևելքում մի քանի ճանապարհ կար հարստություն դիզելու և պահպանելու համար:

1. թանկարժեք մետաղներ
2. ոսկեղեն
3. հանդերձներ
4. սննդամթերք
5. անասուններ

**13:4** «Աբրամն այնտեղ ԱՍԾՈՒ անունը կանչեց» Այս արտահայտությունը վերաբերում է հատուկ երկրպագության միջավայրի, հավանաբար ինչ-որ կենդանու գոհաբերությամբ հանդերձ (տես՝ Ելից 20:24): Առաջին անգամ դա կիրառվում է 4:26-ում, սակայն նորից տեղի է ունենում 12:8; 13:4; 21:33; 26:25-ում: Տե՛ս Հատուկ Թեմա 12:8-ում: 1 Մնաց. 16:8; Մաղմ. 105:1; 116:17-ի և Եսայի 12:4-ի հետ զուգահեռ անցկացնելու արդյունքում կարող ենք ասել, որ անունը կանչելը նաև իր մեջ ընդգրկում է «փառաբանել» և «շնորհակալություն հայտնել» ՑԱՀՎԵին:

«Անունը» (BDB 1027) ներկայացնում էր Աբրամի ուխտի Աստծո անձնական ներկայությունը: Դրա լիակատար կարևորությունը դեռ հայտնի չէր լինելու մինչև Ելից 3:13-16: Ինչպես որ *Էլոհիմը* ներկայացնում էր «Արարչին», ՑԱՀՎԵՆ ներկայացնում էր Սեթի և Մեմի հետ ուխտ կնքող, անձնական, խոստում տվող Աստծուն: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները 12:1-ում:

Աբրամը վերադարձավ Քանանում իր առաջին գոհասեղանին (տես՝ 12:8):

**13:6** Հարավային Քանանում երկիրը տարեկան անձրևներ բավարար չափով չէր տեսնում, որպեսզի տեղանքի արոտավայրերը ծաղկեն: Եվ մեկ նախիր պահելու համար շատ մեծ հողատարածքներ էին անհրաժեշտ լինում: Սովորաբար ապրիլից մինչև սեպտեմբեր ամիսները բավականին խոնավ էր լինում, որպեսզի խոտեր աճեին, սակայն հոկտեմբերից մինչև մարտ ամիս նախիրները տեղաշարժվում էին դեպի ավելի բարձր արոտավայրեր:

**13:7** «քանանացիներն ու փերեզացիները» «Քանանացիներ» տերմինը հավաքական տերմին է Պաղեստինի բնակիչների համար, ինչպես և «Ամորիացիները»: Ոմանք այս անունների մեջ տարբերություն են տեսնում հետևյալ հիմնավորմամբ. (1) Փերեզացիներ կարող է նշանակել «ցուղաբնակներ», մինչ (2) քանանացիները վերաբերում է պարսպապատ քաղաքների բնակիչներին: Մա այն միակ տեղն է, որտեղ այս երկու խմբերը թվարկվում են որպես միայն Պաղեստինի բնակիչներ: Տե՛ս Հատուկ Թեմա 12:6-ում: Քանանացիներ խոսքի համար տե՛ս 12:6 գրառումը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:8-13**

**8**Եվ Աբրամն ասաց Ղովտին. «Թող իմ ու քո միջև, իմ ու քո հովիվների միջև կռիվ չլինի, մանավանդ, որ մենք եղբայրներ ենք: **9**Մի՞թե ամբողջ երկիրը քո առաջ չէ. խնդրում եմ քեզ, բաժանվի՛ր ինձնից. եթե դու ձախ կողմը գնաս, ես աջ կողմը կգնամ, եթե դու աջ կողմը գնաս, ես ձախ կողմը կգնամ»: **10**Եվ Ղովտն իր աչքերը բարձրացրեց և տեսավ Հորդանանի ամբողջ շրջակայքը, որ լավ ոռոգված էր. նախքան ՏԻՐՈՋ կողմից Սողոմի և Գոմորի կործանումը, մինչև հասնում ես Սեգովր, ՏԻՐՈՋ պարտեզի պես էր, Եգիպտոսի երկրի նման: **11**Այն ժամանակ Ղովտը Հորդանանի ամբողջ շրջակայքն ընտրեց իր համար, և Ղովտը դեպի արևելք քոչեց, և մինյանցից բաժանվեցին: **12**Աբրամը Քանանի երկրում բնակվեց. Ղովտն էլ դաշտավայրի քաղաքներում բնակվեց և իր վրանը Սողոմի մոտ խփեց: **13**Բայց Սողոմի մարդիկ չափազանց չար ու մեղավոր էին ՏԻՐՈՋ առջև:

**13:8-9** «Թող իմ ու քո միջև կռիվ չլինի» Գոյություն ունի մի շարք քերականական առանձնահատկություններ, որոնք նկարագրում են այս երկխոսությունը:

- 1. խնդրում եմ, թող կռիվ չլինի (BDB 937) – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ, հ. 8
- 2. խնդրում եմ, բաժանվի՛ր ինձնից – BDB 825, KB 962, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հ. 9
- 3. Ես աջ կողմը կգնամ – BDB 412, KB 415, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ
- 4. Ես ձախ կողմը կգնամ – BDB 970, KB 1332, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ

Չարմանալի է, որ Աբրամը (լինելով ավելի տարեց և հարուստ) թույլ տվեց, որ Ղովտն առաջինը ընտրի, քանի որ Քանանը ՅԱՀՎԵի կողմից նախատեսված էր որպես Իր հատուկ նվերը Աբրամին: ՅԱՀՎԵն օգտագործեց Ղովտի ազահությունը, որպեսզի նրան շահագրգռի ընտրելու Հորդանանի արևելյան կողմը:

Միայն այն ժամանակ, երբ Ղովտը հեռացավ և Աբրամը մնաց Քանանում, ՅԱՀՎԵն կրկին հայտնվեց նրան:

**13:8** «եղբայրներ» Այստեղ այս բառը (BDB 26) կիրառված է բարեկամի իմաստով (տես՝ 14:14,16; 29:12,15):

**13:10** «Ղովտն իր աչքերը բարձրացրեց և տեսավ» Ղովտն ընտրեց իր նախընտրության համեմատ: Այդ վայրի ամբարշտությունը (տես՝ հ. 13) նրան չապակողմնորոշեց:

❖ «**նախքան ՏԻՐՈՋ կողմից Սողոմի և Գոմորի կործանումը**» Ահա ևս մեկ խմբագրված մեկնություն ավելի ուշ տեղի ունեցած մի դեպքից: Ծճգրիտ ով և երբ է այս բնագիր պատմության մեջ նշում կատարել՝ հայտնի չէ, սակայն կարծես թե խմբագրողը եղել է քահանաներից մեկը, որը ծառայում էր որպես Մովսեսի դպիրը կամ կենսագրությունն արձանագրողը (քանի որ արձանագրել է նաև նրա մահը /2 Օրինաց 34/ և նրա մասին մեկնաբանություններ է կատարել, ինչպես օրինակ Թվոց 12:3-ում):

❖ «**ՏԻՐՈՋ պարտեզի պես էր, Եգիպտոսի երկրի նման**» Ռաշին (Միջին Դարերի մի ռաբբի) ասում է, որ այդ երկիրն ուներ Եդեմի պարտեզի ծառերից և Եգիպտոսի բանջարեղեններից: Չավելտալին այն է, որ ինչպես Եդեմը դատաստանի վայր դարձավ, այնպես էլ Հորդանանի Չորը:

❖ «**Սեգովր**» Սեգովրը (BDB 858) մի քաղաք է, որը գտնվում է Հորդանանի Չորում (տես՝ հ. 10), անմիջապես Մեռյալ Ծովից հարավ: Այս քաղաքի անվան պատմությունը գրված է Ծննդոց 19:20-22-ում, որը «փոքրիկ» (BDB 859 I) բառի հետ կապված բառախաղ է: Դա մի օագիս էր (տես՝ Չոզեֆուսի *Հրեական Պատերազմներ* 4.8.4 /Josephus, *Jewish Wars* 4.8.4/):

Այս տարածքում կան մի քանի քաղաքներ՝ (1) Սողոմը, (2) Գոմորը, (3) Ադման, (4) Մեբոյիմ և (5) Սեգովր/Բադա: Դրանք բոլորը միասին կոչվում էին «հարթավայրի քաղաքներ»: Բոլորը, բացի Սեգովրից, բնաջնջվեցին Աստծո ձեռքով (տես՝ 2 Օրինաց 29:23):

- 13:13** Սողոմի բնակչությունը բնութագրվում է մի քանի բացասական հատկանիշներով
- 1. չար՝ BDB 948, տես՝ 2:9; 3:22; 6:5; 8:21; 37:33; 38:7
  - 2. մեղավորներ՝ BDB 308, տես՝ Թվոց 16:38; 32:14
  - 3. Տիրոջ դեմ ապստամբող
  - 4. չափազանց ամբարիշտ

Սակայն տեքստը չի մանրամասնում, թե ինչպես: Գլուխ 19-ի պատմությունը պատուհան է բացում նրանց չարությունը տեսնելու:

Թվոց 1-ին և 2-րդ գլուխները երկվորյակներ են, որոնք հաճախ որոշ թարգմանություններում միավորված են միևնույն վերնագրի տակ՝ «չար մեղավորները»:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:14-18**

**14**Եվ **ՏԵՐՆ** ասաց Աբրամին՝ **Ղովտից բաժանվելուց հետո**. «Հիմա աչքերդ բարձրացրո՛ւ և նայի՛ր քո գտնված տեղից դեպի հյուսիս և հարավ, և դեպի արևելք ու արևմուտք. **15**որովհետև այդ ամբողջ երկիրը, որ դու տեսնում ես, քեզ են տալու և քո սերնդին՝ հավիտյան: **16**Եվ քո սերունդը երկրի փոշու չափ են դարձնելու, որ եթե որևէ մեկը կարող է երկրի փոշին հաշվել, քո սերնդին էլ կհաշվի: **17**Վե՛ր կաց, այդ երկրում շրջի՛ր՝ լայնությամբ ու երկարությամբ, որովհետև այն քեզ են տալու»: **18**Եվ Աբրամը իր վրանը վերցրեց և եկավ ու բանկվեց Մամբրեի կաղնիների մեջ, որ Քեբրոնում է, և այնտեղ զոհասեղան շինեց **ՏԻՐՈՋ** համար:

**13:14 «Եվ ՏԵՐՆ ասաց Աբրամին՝ Ղովտից բաժանվելուց հետո»** Գուցե սրանով կատարվեց 12:1-ի պայմանը: Աբրամը շարժվում էր հայտնությամբ («բարձրացրո՛ւ աչքերդ», BDB 669, KB 724, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ; «նայի՛ր», BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), իսկ Ղովտը՝ իր հետաքրքրությամբ (տես՝ հ. 10):

**13:15 «ամբողջ երկիրը. . . հավիտյան»** Այս արտահայտության մեջ երկու բան պետք է հիշել՝ (1) Աստծո ուխտը միշտ պայմանական է՝ հիմնված մարդու հավատքի արձագանքի վրա (այսինքն՝ 2 Օր. 11:31-32; 28:36,63-68; 30:19-20) և (2) Եբրայերեն «հավիտյան» (*'olam*) տերմինը պետք է թարգմանվի տվյալ համատեքստին համահունչ (տես՝ NIDOTTE, հատոր 4, էջ՝ 1252-1253): Սովորաբար ժամանակակից անգլերենում այս տերմինն իր նշանակությամբ «հավիտյան» բառը չէ: Տե՛ս Հատուկ Թեմա. Հավիտյան, հաջորդող՝ Հատուկ Թեմա. Ուխտ:

Այս աստվածաշնչյան սահմանումն է այսօր հանդիսանում սիրտը այն խնդրի, որով հրեաները Պաղեստինը հրեական են համարում: Ես հիացած եմ հետևյալ գրքերով այս թեմայի շուրջ՝

1. *Բարայեդը Մարգարեության մեջ* Ուիլյամ Հենդրիկսեն /*Israel in Prophecy* by William Hendricksen/
2. *Ո՛ւմ Խոստացված Երկիրը: Բարայեդի և Պաղեստինի միջև Շարունակվող Ծգնաժամը* Քոլին
3. *Չեմիմն /Whose Promised Land? The Continuing Crisis Over Israel and Palestine* by Colin Chapman/

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ  
SPECIAL TOPIC: COVENANT**

ՀԿ-ի *berith* (BDB 136) տերմինը՝ ուխտը, այնքան էլ հեշտ չէ սահմանելը: Եբրայերենում չկա դրան համապատասխան ԲԱՅԸ: Բոլոր փորձերը ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու համար համոզիչ չեն ստացվել: Սակայն, այս հասկացության ակնհայտ կարևորությունը ստիպել է աստվածաբաններին հետազոտելու բառի գործածությունը, փորձելու սահմանել դրա գործնական՝ ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը մի միջոց է, որով միակ ճշմարիտ Աստվածը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՆՈԹԵԻՉՍ /Special Topic: MONOTHEISM/) գործ է ունենում մարդկանց հետ: Ուխտի, դաշնագրի կամ համաձայնագրի գաղափարը կարևոր դեր է խաղում աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև ընկած լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Կան ուխտեր, որոնք հիմնված են բացառապես Աստծո բնավորության և գործողությունների վրա:

1. հենց արաչագործությունը (տես՝ Ծննդոց 1-2)
2. Աբրահամի կանչը (տես՝ Ծննդոց 12)
3. Աբրահամի հետ ուխտը (տես՝ Ծննդոց 15)
4. Նոյին պահպանելը և նրան տրված խոստումը (տես՝ Ծննդոց 6-9)

Սակայն ուխտի բնույթը ինքնին պահանջում է պատասխան՝ արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվի և չուտի Եդեմի պարտեզի կենտրոնի ծառից
2. հավատքով Նոյը պետք է կառուցի մի հսկայական նավ, որը հեռու է ջրից և հավաքի կենդանիներին
3. հավատքով Աբրահամը պետք է հեռանա իր ընտանիքից, հետևի Աստծուն և հավատա ապագա սերունդներին

4. հավատքով Մովսեսը Իսրայելացիներին հանեց Եգիպտոսից դեպի Սինա լեռը և ստացավ հատուկ ուղեցույցներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնության և անեծքի խոստումներով (տես՝ 2 Օր.27-29):

Մարդկանց հետ Աստծո փոխհարաբերության մեջ ըզգրկված այս նույն լարվածությունը հաղորդվում է «նոր ուխտի» մեջ: Այդ լարվածությունը կարելի է հստակ տեսնել համեմատելով Եզեկիել 18-ը Եզեկիել 36:27-38-ի հետ (ՅԱՀՎԵի գործը): Արդյո՞ք Աստծո ողորմած գործերի վրա հիմնված ուխտը պարտադրում է մարդու արձագանքը: Սա Հին և Նոր Ուխտերի միջև գտնվող վառվող կետն է: Երկուսի նպատակն էլ նույնն են՝

1. YHWH-ի հետ փոխհարաբերության վերականգնումը, որը մարդը կորցրել էր Ծննդոց 3-ում
2. արդար ժողովուրդ բարձրացնելը, որը կարտացոլի Աստծո բնավորությունը:

Երեմ.31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս լարվածությունը՝ հեռացնելով մարդկային մասնակցությունը որպես ընդունելության արժանանալու միջոց: Աստծո օրենքը արտաքին օրինապահության փոխարեն դառնում է ներքին ցանկություն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, սակայն փոխվում է մեթոդը: Անկում ապրած մարդկությունը ապացուցել էր, որ արժանի չէր լինելու Աստծո պատկերի արտացոլանքը: Խնդիրը Աստծո ուխտը չէր, այլ մարդու մեղավորությունը և տկարությունը (տես՝ Հռոմեացիների 7; Գաղատացիների 3):

ՀԿ-ի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև եղած նույն լարվածությունը մնում է ՆԿ-ում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, սակայն այն պահանջում է ապաշխարություն և հավատք (թե՛ սկզբում և թե՛ շարունակվող՝ հարատև, տես՝ Հատուկ Թեմա. Հավատալը ՆԿ-ում /Special Topic: BELIEVE IN THE NT/): Հիսուսը հավատացյալների հետ այս նոր փոխհարաբերությունը կոչում է «նոր ուխտ» (տես՝ Մատթ. 26:28; Մարկ. 14:24; Ղուկ. 22:20; 1 Կորնթ. 11:25): Այն թե՛ օրենքի (դատական) հայտարարություն է և թե՛ Քրիստոսի պես լինելու կոչ (տես՝ Մատթ. 5:48; Հռոմ. 8:29-30; 2 Կորնթ. 3:18; 7:1; Գաղ. 4:19; Եփես. 1:4; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4:3,7; 5:23; 1 Պետ. 1:15), որն արտահայտում է Աստծո կողմից ընդունելություն (Հռոմեացիների 4) և սրբության հրամայական կոչ (Մատթ. 5:48): Հավատացյալները չեն փրկվում իրենց վարքով, այլ հնազանդությամբ (տես՝ Եփես.2:8-10; 2 Կորնթ. 3:5-6): Աստվածահաճո ապրելակերպը դառնում է փրկության վկայությունը, ոչ թե փրկության միջոց (այսինքն՝ Հակոբոս և 1 Հովհաննես): Այնուհանդերձ, հավիտենական կյանքն ունի տեսանելի առանձնահատկություններ: Այս լարվածությունը հստակ երևում է ՆԿ-ի զգուշացումների մեջ (տես՝ Հատուկ Թեմա. Ուխտադրություն /Special Topic: APOSTASY/):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)  
SPECIAL TOPIC: FOREVER ('OLAM)**

Եբրայերեն 'olam, עולם (BDB 761, KB 798) տերմինի ստուգաբանությունը անհայտ է (NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 345): Այն կիրառվում է մի քանի նշանակությամբ (սովորաբար որոշվում է ըստ համատեքստի): Հետևյալ օրինակները միայն հատրնտիր են՝

1. Հնազույններ՝
  - ա. ժողովուրդներ, Ծննդ. 6:4; 1 Թագ. 27:8; Երեմ. 5:15; 28:8
  - բ. տեղանքներ, Ես. 58:12; 61:4
  - գ. Աստված, Սաղմ. 93:2; Առակ. 8:23; Ես. 63:16
  - դ. առարկաներ, Ծննդ. 49:26; Հոր 22:15; Սաղմ. 24:7,9; Ես. 46:9
  - ե. ժամանակներ. 2 Օր. 32:7; Ես. 51:9; 63:9,11
2. Ապագա ժամանակներում՝
  - ա. մարդու կյանքը, Ելից 21:6; 2 Օր. 15:17; 1 Թագ. 1:22; 27:12
  - բ. թագավորի հանդեպ հարգանքի չափազանցություն, 1 Թագ. 1:31; Սղմ. 61:7; Նեեմ. 2:3
  - գ. շարունակական գոյություն  
    - (1) Երկիրը, Սաղմ. 78:69; 104:5; Ժող. 1:4
    - (2) Երկինքները, Սաղմ. 148:5
  - դ. Աստծո գոյությունը  
    - (1) Ծննդ. 21:33
    - (2) Ելից 15:18
    - (3) 2 Օր. 32:40



(4) Սաղմ. 93:2

(5) Ես. 40:28

(6) Երեմ. 10:10

(7) Դան. 12:7

ե. ուխտը

(1) Ծննդ. 9:12,16; 17:7,13,19

(2) Ելից 31:16

(3) Դևտ. 24:8

(4) Թվոց 18:19

(5) 2 Թագ. 23:5

(6) Սաղմ. 105:10

(7) Ես. 24:5; 55:3; 61:8

(8) Երեմ. 32:40; 50:5

զ. Դավթի հետ հատուկ ուխտը

(1) 2 Թագ. 7:13,16,25,29; 22:51; 23:5

(2) 3 Թագ. 2:33,45; 9:5

(3) 2 Մնաց. 13:5

(4) Սաղմ. 18:50; 89:4,28,36,37

(5) Ես. 9:7; 55:3

է. Աստծո Մեսիան

(1) Սաղմ. 45:2; 72:17; 89:35-36; 110:4

(2) Եսայի 9:6

ը. Աստծո օրենքները

(1) Ելից 29:28; 30:21

(2) Դևտ. 6:18,22; 7:34; 10:15; 24:9

(3) Թվոց 18:8,11,19

(4) Սաղմ. 119:89,160

թ. Աստծո խոստումները

(1) 2 Թագ. 7:13,16,25; 22:51

(2) 3 Թագ. 9:5

(3) Սաղմ. 18:50

(4) Եսայի 40:8

ժ. Արրահամի սերունդները և Ավետյաց Երկիրը

(1) Ծննդ. 13:15; 17:19; 48:4

(2) Ելից 32:13

(3) 1 Մնաց. 16:17

ի. ուխտի տոները

(1) Ելից 12:14,17,24

(2) Դևտ. 23:14,21,41

(3) Թվոց 10:8

լ. հավիտենություն, հավիտենական

(1) 3 Թագ. 8:13

(2) Սաղմ. 61:7-8; 77:8; 9:2; 103:17; 145:13

(3) Եսայի 26:4; 45:17

(4) Դան. 9:24

խ. Ի՞նչ են անելու հավատացյալները հավիտյան, ըստ Սաղմոսների

(1) գոհանալու են, Սաղմ. 30:12; 79:13

(2) բնակվելու են Նրա ներկայության մեջ, Սաղմ. 41:12; 61:4,7

(3) վստահելու են Նրա ողորմությանը, Սաղմ. 52:8

(4) փառաբանելու են Տիրոջը, Սաղմ. 52:9

(5) օրհնություն են երգելու, Սաղմ. 61:8; 89:1

(6) Նրա արդարությունն են պատմելու, Սաղմ. 75:7-9

(7) փառավորելու են Նրա անունը, Սաղմ. 86:12; 145:2

(8) օրհնելու են Նրա անունը, Սաղմ. 145:1

ծ. կիրառված Եսայի գրքում՝ նկարագրելով նոր դարը

(1) հավիտենական ուխտ, Ես. 24:5; 55:3; 61:8

(2) ՅԱՀՎԵՆ որպես հավիտենական Ժայռ, Ես. 26:4

(3) հավիտենական ուրախություն, Ես. 35:10; 51:11; 61:7

(4) Հավիտենական Աստվածը, Ես. 40:28

(5) հավիտենական փրկություն, Ես. 45:17

(6) հավիտենական ողորմություն (Hesed), Ես. 54:8

(7) հավիտենական նշան, Ես. 55:13

(8) հավիտենական անուն, Ես. 56:5; 63:12,16

(9) հավիտենական լույս, Ես. 60:19,20

Ամբարիշտների հավիտենական պատժի վերաբերյալ բացասական կիրառությունը կարելի է գտնել Եսայի 33:14-ում՝ «հավիտենական կրակ»: Եսային հաճախ կիրառում է «կրակ» բառը՝ նկարագրելու Աստծո բարկությունը (տես՝ Ես. 9:18,19; 10:16; 47:14), սակայն միայն Ես. 33:14-ում այն կիրառված որպես «հավիտենական»:

3. թե՛ ժամանակից առաջ և թե՛ հետո (հավիտենությունից հավիտենություն)

ա. Սաղմ. 41:13 (փառաբանություն Աստծուն)

բ. Սաղմ. 90:2 (Աստված Ինքը)

գ. Սաղմ. 103:17 (Տիրոջ ողորմությունը)

Հիշեք, որ ենթատեքստն է որոշում տերմինի նշանակության չափը: Հավիտենական ուխտերը և խոստումները պայմանական են (այսինքն՝ Երեմիա 7, տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ): Զգույշ եղեք ժամանակի վերաբերյալ ձեր ունեցած արդի աշխարհայացքը կամ ՆԿ-յան համակարգված աստվածաբանությունը չկարդալ այս շատ հեղինակույթ բառի ՀԿ-յան կիրառության մեջ: ՆԿ-ը ՀԿ-ի խոստումները դարձրեց տիեզերական (տես՝ Հատուկ Թեմա. ՀԿ-ի ապագայի կանխատումները ընդդեմ ՆԿ-ի կանխատումների):

**13:16 «Եվ քո սերունդը երկրի փոշու չափ են դարձնելու»** Այստեղ կրկին ունենք այլաբանական խոստում (տես՝ 15:5; 22:17; 26:4; 28:14; Եյից 32:13; Թվոց 23:10) որդու, ընտանիքի, ցեղի և մի մեծ ազգի համար (ՅԱՀՎԵՆ նաև խոստանում է օրհնել Իսմայելին, տես՝ 16:10; 17:20): Խոստումը չէր իրականանալու Ղովտի միջոցով. նա գնացել էր: Աբրամը հավատում է այս խոստմանը (տես՝ Ծննդ. 15:6) և Պողոսը Հռոմ. 4:3 և Գաղ. 3:6-ում որպես հիմնավորում սա է օգտագործում շնորհքով հավատքի միջոցով արդարացման համար:

Ծննդոցում Աբրահամը ՅԱՀՎԵԻց շատ խոստումներ է ստանում՝

1. երկիր – 12:1-2; 13:14-15; 15:7,18; 17:8

2. սերունդ/ժառանգներ – 12:2; 13:16; 15:5,18; 17:2,4-7,16,19; 22:17

3. ուխտ – 17:7,19,21

4. նրա միջոցով բոլոր ազգերի համար հատուկ օրհնություն – 12:3; 18:18; 22:18; 26:4; 28:14

Սակայն սրանք պայմանական խոստումներ չեն: Հատուկ ընդգծվում է իր կողմից պահանջվող հնազանդություն և գործողություններ, 12:1; 13:17; 17:1,23; 18:19; 22:16-18; 26:4-5 (տես՝ *Աստվածաշնչյան Պատկերավոր Խոսքի Բառարան*, էջ 3 /*Dictionary of Biblical Imagery*, p.3/): Աբրամն ինքը նախաձեռնողը չէր, այլ պետք է լիներ պատշաճ կերպով արձագանքողը:

**13:17** ՅԱՀՎԵՆ հրամայում է Աբրամին ստուգել իր նոր պարզևը:

1. «վե՛ր կաց» և «գնա՛» - BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (դարձվածքային, տե՛ս ներքևի գրառումը)

2. «շրջի՛ր» - BDB 229, KB 246, *Hithpael* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հավանաբար հողատարածքի սեփականության համար օրինական պահանջ)

UBS-ի *Ծննդոցի Ձեռնարկ /Handbook on Genesis/* գիրքը հետաքրքիր գրառում է կատարում «վե՛ր կաց» խոսքի համար, երբ այն օգտագործվում է մեկ այլ հրամանի հետ մեկտեղ:

«Վե՛ր կաց» չի նշանակում, որ Աբրամը նստած էր կամ պառկած, երբ իրեն հրամայվեց քայլել: Եբրայերենում այս տերմինն ունի հռետորական ֆունկցիա, երբ այն որպես հրաման մեկ այլ հրամայական բառի հետ է կիրառվում, որը նշանակում է, որ հրամանը կարևոր է և որ այդ անձը անմիջապես

պետք է գործի անցնի հրամայվածը կատարելու: Ծննդոցում այլ օրինակների համար տե՛ս 19:15; 21:18; 28:2» (Էջ՝ 304):

❖ **«այն քեզ են տալու»** Տե՛ս հ. 15-ի գրառումը:

**13:18 «Մամբրեի կաղնիները»** Սրբազան ծառը(երը) (BDB 18) վաղ Իսրայելու կրկնվող տեմաներ էին (MT-ում ՀՈԳՆԱԿԻ, սակայն LXX և Peshitta-ում ԵՉԱԿԻ):

1. Մորեի մեծ ծառը – 12:6; 2 Օրինաց 11:30
2. Մամբրեի մեծ ծառը – 13:18; 14:13; 18:1 (տես՝ Ջոզեֆուս, *Հնույթուններ*, 1.10.4)
3. Սյուքեմի մեծ խառը – 35:4; Դատ. 4:11
4. Սանանիմի մեծ ծառը – Հեսու 19:33; Դատ. 4:11
5. Եփրայի մեծ ծառը – Դատ. 6:11,19
6. Թարորի մեծ ծառը – 1 Թագ. 10:3 (զոհասեղանի մասին չի նշվում)
7. BDB 18 հավասարեցված է BDB 781-ի հետ՝ Ծննդ. 18:1,4,8-ում: BDB 781 են Ծննդոց 2-3-ում կոչված այն հատուկ ծառը(երը) (տես՝ 2:9,16,17; 3:1,2,3,6,8,11,12,17,22,24):

❖ **«Քեբրոն»** Այդ ժամանակ այդ տեղը հայտնի էր որպես Կարիաթ-արբա (տես՝ 23:2; 35:27), որը ցույց է տալիս, որ այս պատմությունը գրվել է ավելի ուշ շրջանում՝ զավթող իսրայելացիների կողմից անունը փոխելուց հետո:

❖ **«այնտեղ զոհասեղան շինեց ՏԻՐՈՋ համար»** Այս նոր զոհասեղանը (հաճախ նախկինում արդեն իսկ գոյություն ունեցող քանանական պաշտամունքի վայրում) Քանանում Աբրամի ժամանակավոր կացության ընթացքում կրկնվող թեմա է (տես՝ 12:7; 13:18; 22:9): Հավանական է, որ այս զոհասեղանները նկատի ունեն կենդանու զոհ, որը դարձավ ՅԱՀՎԵի պաշտամունքի անբաժանելի մաս:

- |                            |                        |
|----------------------------|------------------------|
| 1. Աբել – 4:4              | 4. Իսահակ – 26:25      |
| 2. Նոյ – 8:20              | 5. Հակոբ – 33:20; 35:7 |
| 3. Աբրամ – 13:18; 15:12-21 | 6. Հոր – Հոր 1:5       |

Կենդանիների զոհաբերությունները շարունակվեցին Ելիցում (տես՝ Ելից 12) և զարգացան Մովսիսական ուխտի մեջ (Դևտացիների 1-7,16):

## ԾՆՆԴՈՑ 14

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Թագավորների պատերազմը	Ղովտի գերեվարվելն ու ազատվելը	Արևելքի չորս թագավորների դաշնությունը	Աբրամը ազատում է Ղովտին	Չորս թագավորների արշավանքը
14:1-12	14:1-4 14:5-12	14:1-12	14:1-7	14:1-12
14:13-16	14:13-16	14:13-16	14:8-12 14:13-16	14:13-16
Աստծո խոստումը Աբրամին			Մելքիսեդեկը օրհնում է Աբրամին	Մելքիսեդեկը
14:17-24	14:17	14:17-24	14:17-20	14:17-19
	Աբրամը և Մելքիսեդեկը			(19)
	14:18-20			
(19-20)	(19-20)	(19-20)	14:21	14:20
	14:21-24		14:22-24	14:21-24

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 14:1-12**

<sup>1</sup>Եվ եղավ Սենաարի Ամարփաղ թագավորի, Ելլասարի Արիովք թագավորի, Եղամի Քողոզագոմոր թագավորի և ազգերի Թադգաղ թագավորի ժամանակներում, <sup>2</sup>որ սրանք Սողոմի Բարա թագավորի, Գոմոր Բարսա թագավորի, և Ադմայի Սենաբ թագավորի, Սերոյիմի Սիմոփոր թագավորի ու Բաղայի, այսինքն՝ Սեգովրի թագավորի դեմ պատերազմեցին: <sup>3</sup>Սրանք բոլորը հավաքվեցին Սիդդին ձորում, որ Ադի ծովն է: <sup>4</sup>Տասներկու տարի Քողոզագոմորին էին ծառայել և տասներեքերորդ տարում ապաստանվեցին: <sup>5</sup>Եվ տասնչորսերորդ տարում եկավ Քողոզագոմորը և նրա հետ եղող թագավորները, և կոտորեցին Աստարովթ-Կառնայիմումում եղող ռափայիմներին և Համուի մեջ զուգեցիներին և Շավե Կարիաթեմում՝ Էմիմներին <sup>6</sup>և քռեցիներին՝ իրենց Սեիր լեռան վրա՝ մինչև Էլփառան, որ անապատի մոտ է: <sup>7</sup>Եվ վերադարձան ու եկան Էնմասեփաթ, այսինքն՝ Կադես եւ հարվածեցին ամաղեկացիների ամբողջ նահանգը, նաև Ասասան-թամարում բնակվող ամորհացիներին: <sup>8</sup>Եվ Սողոմի թագավորը, Գոմորի թագավորը, Ադմայի թագավորը, Սերոյիմի թագավորը և Բաղայի, այսինքն՝ Սեգովրի թագավորը ելան և Սիդդիմ ձորում նրանց դեմ ճակատամարտ տվեցին: <sup>9</sup>Եղամի Քողոզագոմոր թագավորի, ազգերի Թադգաղ թագավորի, Սենաարի Ամարփաղ թագավորի և Ելլասարի Արիովք թագավորի դեմ՝ չորս թագավոր հինգի դեմ: <sup>10</sup>Եվ Սիդդիմ ձորը նավթի հորերով լիքն էր. և Սողոմի ու Գոմորի թագավորները փախուստի դիմելիս այնտեղ ընկան, իսկ մնացածները փախան լեռը: <sup>11</sup>Եվ նրանք վերցրեցին Սողոմի և Գոմորի ամբողջ ունեցվածքը և նրանց ամբողջ պաշարը, և գնացին: <sup>12</sup>Եվ Աբրամի եղբոր որդուն՝ Դովտին, և սրա ամբողջ ունեցվածքն էլ վերցրին ու գնացին, որովհետև նա Սողոմում էր բնակվում:

**14:1-12** Այստեղ արձանագրված դեպքերը, ինչպես նաև թագավորների անունները հայտնի չեն պատմության մեջ: Այս անունների շուրջ շատ տարբեր տարածայնություններ են եղել: Հավանական է, որ բրիտանական թանգարանի կողմից գնված մի շարք սեպագիր տեքստեր, որ կոչվում են «Չեղորլատների Տեքստեր», կապ ունեն այս դեպքերի հետ այնտեղ առկա չորս թագավորներից երեքի անունների նմանության պատճառով, սակայն սա նույնպես հաստատված չէ:

Այսպիսով ի՞նչ գիտենք մենք.

1. Ունենք «այդ ժամանակներին վերաբերող հնագիտական ապացույց տրանս-հորդանանյան, Նեգեվի և Սինայի զարգացած քաղաքակրթության (Միջին Բրոնզե Դար I), որը հանկարծակի փլուզվեց» (ZPEB, հատոր 1, էջ՝ 785): Այս ճակատամարտը համընկնում է այդ ժամանակի վկայությանը:
2. Այս ժամանակաշրջանում գորքերը երկար տարածություններ էին կտրում անցնում (այսինքն՝ Զ. Ա. երկրորդ հազարամյակում), որպեսզի ավար և իշխանություն ձեռք բերեին:

Այդ օրերում այս դեպքի շուրջ խառնաշփոթ վիճակը ցույց տվող մի օրինակ է հանդիսանում «Ելլասարի Արիովք թագավորը», որը կարող է վերաբերել՝

1. Կենտրոնական Բաբելոնում կամ Ատրեստանում գտնվող Լարսա քաղաքի (Աքքադական) Էրիակու թագավորին
2. Հայաստանից մի սատրապության (Ելլասարը Հայաստանի համար հայկական է)
3. Կապադովկիային (Օննոդոցի Մեռյալ Ծովի մագաղաթների Ապոկրիֆոնից)
4. Քարքեմիշի և Խատանի միջև գտնվող մի քաղաքի (Մարի տեքստերից)

Շփոթմունքը ակնհայտ է: Այս անունները որևէ գրավոր աղբյուրների մեջ գետեղված չեն: Դրանց հեղումը տարբեր լեզուներում տարբեր է: Լավագույն դեպքում մեզ պետք է սպասել, մինչև որ այս ժամանակաշրջանից և տարածաշրջանից ավելի շատ պատմական փաստեր հավաքվեն: Այս թագավորները պետք է որ Աբրամի ժամանակակիցները լինեին (Զ. Ա. 19-րդ կամ 18-րդ դար): Սակայն թույլ տվեք շտապել և նշել, որ այդ անունները համընկնում են դարի հետ (այն տարածաշրջանին, որի հետ կապ ունեին, Դերեկ Բիդներ *Ճննդոց*, էջ՝ 30 /Derek Kidner, *Genesis*/):

1. Ամարփաղ – սեմական ոճի
2. Արիովք – քռեցիների ոճի
3. Քողոզագոմոր – իլամական ոճի
4. Թադգաղ – քեռացիների ոճի

**14:2** Թվարկված քաղաքները (Սողոմ, Գոմոր, Ադմա, Սերոյիմ և Բաղա/Սեգովր) հարավային Արաբիայում տեղակայված քաղաքներ են, այսօր մի տարած, որը ծածկում է Մեռյալ Ծովի հարավային ծայրը:

❖ «Բարա . . . Բարսա» Հրեական Աստվածաշնչյան Ուսումնասիրությունն ասում է, որ այս երկու անունները «չար» (BDB 948) և «ամբարշտություն» (BDB 957, էջ՝ 34, նաև տե՛ս Դերեկ Քիդների *Ծննդոց*, էջ՝ 130 /Derek Kidner, *Genesis*/) բառերի խորհուրդն ունեն։ Սա BDB-ի կողմից չհիմնավորված է։ Այն կարող է մի կողմից էլ հիմնավորում հանդիսանալ, քանի որ պնդում է, որ տվյալ իրադարձությունը պատմական չէ։ Այս թագավորների անունները պատմությունից մեզ անհայտ են։

**14:3 «Սիդդիմ ձորը»** Այս տարածքի մասին միայն այս գլխում կարելի է կարդալ, հհ. 3,8: Հնագույն թարգմանությունները կիրառում են անմիջական համատեքստը (հ. 10) թարգմանելով այն որպես Հորդանանի Չորի մի մաս, որտեղ մակերևույթի վրա տեսանելի կերպով երևում էին հանածո նավթի շերտը։ Սա հավանաբար այժմ գտնվում է Մեռյալ Ծովի հարավային մասում։

**14:4** Այս համարը մեզ պատմում է «հարթավայրի քաղաքների» ապստամբելու պատճառը (BDB 597, KB 632, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ) իրենց միջազեռքյան տիրակալի դեմ։ Ի պատասխան Չաղերյառները զինվորագրում է Արգասաբեր Մահիկի մի քանի այլ թագավորների միանալու իր դաշինքին։

**14:5-7** Դերեկ Քիդները (*Ծննդոց*, Թինդեյլ ՀԿ Մեկնություններ, էջ՝ 131) կարծում է, որ հհ. 5-7, հավանաբար հհ. 1-11, հնարավոր է պատմական փաստեր են (ռազմական արշավանքի արքունի արձանագրություն), որը նկարագրում է «հարթավայրի քաղաքների» պարտությունը և դրանց տեղացի դաշնակիցներին։ Ես նույնպես կարծում եմ, որ դա հնարավոր տարբերակ է։ Այն «տարբերվում է» դրան նախորդող և հաջորդող գլուխներից։

**14:5 «Ռափայիմ . . . գուգեցի . . . Էմիմ»**

<p><b>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.</b> <b>SPECIAL TOPIC:</b></p>	<p><b>ԲԱՐՁՐԱՀԱՍԱԿ, ՀՉՈՐ ՉԻՆՎՈՐՆԵՐԻ ԿԱՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐ</b> <b>TERMS USED FOR TALL/POWERFUL WARRIORS OR PEOPLE GROUPS</b></p> <p>Այս հսկա, բարձրահասակ, հզոր մարդիկ ունեն մի քանի անվանումներ՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. <i>Նեֆիլիմներ</i> (BDB 658, KB 709) - Ծննդ. 6:4 (տես՝ <u>Հատուկ Թեմա . ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐԸ ԾՆՆԴՈՑ 6-ում /Special Topic: SONS OF GOD IN GENESIS 6/</u>); Թվոց 13:33</li> <li>2. <i>Ռափայիմներ</i> (կամ BDB 952 II, KB 1274) - Ծննդ. 14:5; 2 Օր. 2:11,20; 3:11,13; Հեսու 12:4; 13:12; 2 Թագ. 21:16,18,20,22:1; 1 Մնաց. 20:4,6,8</li> <li>3. <i>Չուգեցիներ</i> (BDB 273), <i>zuzim</i> (BDB 265) - Ծննդ. 14:5; 2 Օր. 2:20</li> <li>4. <i>Էմիմներ</i> (BDB 34) – Ծննդ. 14:5; 2 Օր. 2:10-11</li> <li>5. <i>Ենակիմներ</i> (Ենակի որդիները, BDB 778 I, KB 859 II) – Թվոց 13:33; 2 Օր. 1:28; 2:10-11,21; 9:2; Հեսու 11:21-22; 14:12,15; 15:14; Դատ. 1:20</li> </ol> <p>Նկատե՛ք, թե ինչպես է Ծննդ. 14:5-ը նշում այս հսկա մարդկան խմբերից երեքին (տես՝ LXX, Vulgate): Ռափայիմ տերմինը նաև կիրառվում է <i>Շեղում</i> ապրողների համար (տես՝ Հոր 26:5; Սաղմ. 88:10-11; Ես. 26:14,19):</p>
--	--

❖ «Աստարովթ» Սա (BDB 800) Քանանի աստվածուհիներից մեկն է, որը կապ ուներ *Բահադի* հետ։

<p><b>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱԾՏԱՄՈՒՆՔԸ ՀՄԱ-ում</b> <b>SPECIAL TOPIC: FERTILITY WORSHIP OF THE ANCIENT NEAR EAST</b></p>	<p>I. Պատճառները</p> <p>Ա. Հնադարում մարդիկ սկսեցին որպես որսորդներ, որս հավաքողներ, իսկ երբ քոչվոր կյանքից անցան նստակյաց կյանքին, զարգացավ այգեգործության և անասնապահության անհրաժեշտությունը։</p> <p>Բ. ՀՄԱ (Հնագույն Մերձավոր Արևելք) բնակիչները խոցելի էին բնության ուժերի հանդեպ։ Երբ մեծ ջրային տարածքների շուրջ սկսվեցին զարգանալ տարբեր քաղաքակրթություններ, նրանք կախվածություն ձեռք բերեցին եղանակային կանոնավոր հերթափոխից։</p> <p>Գ. Բնության ուժերը դարձան աստվածներ, որոնց պետք էր խնդրել և վերահսկել։</p>
---	---

- II. Որտե՞ղ և ինչո՞ւ
- Ա. Պտղաբերության կրոնները զարգացել են՝
1. Եգիպտոսում (Նեդու)
  2. Միջագետքում (Տիգրիս և Եփրատ)
  3. Քանանում (Հորդանան)
- Բ. ՀՄԱ-ի պտղաբերության ծեսերի մեջ գոյություն ունի հիմնական ընդհանրություն:
- Գ. Փոփոխվող և անկանխատեսելի եղանակները և եղանակային պայմանները պատճառ հանդիսացան զարգացնելու մարդկային, աստվածային նմանությունների առասպելների կիրառությունը որպես հոգևոր իրականության մեջ և երկրի վրա կյանքի համար հիմք:
- III. Ո՞վ և ինչպե՞ս
- Ա. Ով (աստվածներն ու աստվածուհիները)
1. Եգիպտոս
    - ա. *Isis* (իգական սեռի)
    - բ. *Osiris* (արական սեռի)
  2. Միջագետք
    - ա. *Ishtar/Inanna* (իգական)
    - բ. *Tammuz/Dumuzi* (արական)
  3. Քանան
    - ա. *Eshu* (արական)
    - բ. *Ashtart/Ishtar, Astarte* (իգական)
- Բ. Այս զույգերից յուրաքանչյուրն էլ նմանատիպ կերպով են առասպելացվել
1. մեկը մեռնում է
  2. մյուսը կենդանանում
  3. մեռնող և հարություն առնող աստվածների օրինակը մարմնավորում է բնության ցիկլերը՝ շրջանները
- Գ. Նմանության կախարհությունը դիտարկում էր սեռական միությունները (այսինքն՝ աստվածների ամուսնությունները) որպես բերքի, նախիրների և մարդկանց պտղաբերության հաստատության միջոց:
- IV. Իսրայելացիները
- Ա. ՅԱՀՎԵի ժողովրդին զգուշացվել էր (այսինքն՝ Ղևտացիների և 2 Օրինաց գրքերը) խուսափել պտղաբերության ծեսերից (հատկապես Քանանի):
- Բ. Այս ծեսերը շատ մեծ տարածում ունեին մարդկանց նախապաշարմունքների և դրան ավելացրած սեռական սանձարձակ վարքի պատճառով:
- Գ. Կռապաշտությունն իր մեջ ներգրավում է ծեսերի և պաշտամունքի միջոցով փնտրել այս կյանքի օրհնությունը, և ոչ թե ՅԱՀՎԵի հանդեպ ունեցած անձնական հավատքի և վստահության:
- V. Առաջարկվող գրականություն՝
- Ա. Վ. Ֆ. Օլբրայթ, *Հնագիտությունը և Իսրայելի Կրոնը* /W. F. Albright, *Archaeology and the Religion of Israel*/
- Բ. Ջ. Հ. Բրեյթթի, *Հին Եգիպտոսում Կրոնի և Մտքի Չարգացումը* /J. H. Breasted, *Development of Religion and Thought in Ancient Egypt*/
- Գ. Ջեյմս Գ. Ֆրեյզեր /James G. Frazer/
1. *Ադոնիս, Հատիս, Օսիրիս* /Adonis, Attis, Osiris/
  2. *Ֆոլկլորը Հին Կտակարանում* /Folklore in the Old Testament/
  3. *Բնության երկրպագությունը* /The Worship of Nature/
- Դ. Ս.Հ. Գորդոն, *Աստվածաշնչից առաջ* /C. H. Gordon, *Before the Bible*/
- Ե. Ս.Ն. Կրեմեր, *Հին Աշխարհի Առասպելաբանությունները* /S. N. Kramer, *Mythologies of the Ancient World*/:

14:6 «քոռեցիներ» Տե՛ս Հատուկ Թեմա 12:6-ում:

❖ «**Էլփառան**» Սա իրենից չի ներկայացնում Աստծո ընդհանուր անունը վերջածանցված (այսինքն՝ Էլ): Այլ «տերերինտ» (տես՝ LXX, այսինքն՝ հսկա ծառ) բառի հապավումն է:

**14:7 «Էնմասեփաթ, այսինքն՝ Կադես»** «Էն» տերմինը (BDB 745) նշանակում է «գարուն» և ՀԿ-ում մի քանի տեղանքների անվան մի մասն է: «Մասեփաթ» (BDB 1048) նշանակում է «դատաստան», «արդարություն» կամ «որոշում», որը մատնացույց է անում Թվոց 13-ի դեպքերին:

Աստվածաշնչում այս անվանը միայն այստեղ կարելի է հանդիպել: Անգլերեն թարգմանության մեջ դրված փակագծերը (հայերենում առանձնացված է բուրբոկ) նմանեցնում են այն հյուսիսային Սինայի անապատում գտնվող մի օազիսի, որը շատ հայտնի էր Անապատում Դեգերելու Շրջանում (տես՝ Թվոց 13:26; 20) Կադեսը նույնպես նշվում է Ծննդոց 16:14, 20:1,14 և Թվոց 13:26; 20:1,14-ում, որը հետագայում կոչվեց Կադես Բառնես (տես՝ Թվոց 32:8): Ըստ էության սա խմբագրի կամ դպրի կողմից ավելացրած տեղեկության մեկ այլ օրինակ է (1) ավելի ուշ շրջանում ակն (2) որպես գոյություն ունեցող տեքստի կամ բանավոր ավանդույթի հետագա հստակեցում (տես՝ հհ. 2,8,17):

❖ «**Ամադեկացիներ**» Հնարավոր է, որ մարդկանց այս խումբը ծնունդ է առել Եսավից (տես՝ Ծննդ. 36:15-16), որը դարձավ Իսրայելի համար չարի խորհրդապատկեր, քանի որ հարձակվեցին իսրայելացի գաղթականներով բնակեցված մի անպաշտպան հազվագյուտ վայրի վրա (տես՝ Ելից 17:8-16; 2 Օրինաց 25:17-19):

❖ «**Ամորհացիներ**» Տես Հատուկ Թեմա 12:6-ում:

❖ «**Ասասան-թամար**» 2 Մնաց.20:2-ից սա ներկայացվում է որպես Էնգադդի՝ Մեռյալ Ծովի արևմտյան մասում գտնվող թարմ ջրի յուրահատուկ մի աղբյուր:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 14:13-16**

**13**Եվ ճողոպրածներից մեկը եկավ և եբրայեցի Աբրամին պատմեց, քանի որ նա Եսքողի եղբայր և Աների եղբայր ամորհացի Մամբրեի կաղնիների մեջ էր բնակվում, որովհետև նրանք Աբրամի դաշնակիցներն էին: **14**Եվ երբ Աբրամը լսեց, թե իր եղբայրը գերի է տարվել, իր ընդոծիներն էրեք հարյուր տասնութ մարզվածների դուրս հանեց ու մինչև Դան հետապնդեց նրանց: **15**Եվ ինքն ու իր ծառաները գիշերով խմբերի բաժանվելով, նրանց վրա հարձակվեցին և հաղթեցին նրանց. և նրանց քչեց մինչև Կոբա, որ Դամասկոսի ձախակողմում է: **16**Եվ ամբողջ ավարը ետ բերեց, ինչպես նաև իր եղբայր Դովտին և նրա ունեցվածքը, և կանանց ու ժողովրդին:

**14:13 «Եբրայեցի Աբրամին»** «Եբրայեցի» տերմինը (BDB 720) հնարավոր է ծագել է՝

1. Եբեր՝ Մեմի (տես՝ 10:21) և Մելայի (տես՝ 10:24) մի որդուց: Անունը նշանակում է «այն կողմ» (տես՝ LXX) կամ «մյուս կողմի տարածք» (BDB 719): Եթե այս տերմինը մարդկանց խումբ է մատնանշում (տես՝ 39:14), ապա սա հանդիսանում է անախրոնիզմի մեկ այլ օրինակ, որը ցույց է տալիս հետագայում տեքստի մեջ կատարված խմբագրության կամ դպրության աշխատանք:
2. Հաբիրու /Habiru/ Զ.Ա. երկրորդ հազարամյակի սեմական գաղթականներին տրված անուն. աքքադերեն լեզվով Եբրայեցի բառը (ABD, հատոր 3, էջ՝ 6) նշանակում է «փախստականներ»:

Այս տերմինը հաճախ կիրառվում է իսրայելացիներին օտարներին ներկայացնելիս: Գլուխ 14-ը բացառիկ է Աբրամի արձանագրված կյանքի դեպքերի շարքում:

1. «Եբրայեցի» բառի կիրառությունը (BDB 720 I)
2. Երուսաղեմ (Սաղեմ) քաղաքի հետ կապը
3. «Բարձրյալ Աստված» անվան կիրառությունը (տես՝ 14:18,19,20,22)

**14:14** Չարմանալի է, որ 318 հոգանոց զորախումբը (գումարաշ նրանց դաշնակիցները) կարողացավ հաղթել Արգասաբեր Մահիկի չորս թագավորների համակարգված զորքին (սա համարվում է հավատքի հրաշք): Այս հաղթանակի նպատակն էր հայտնել, որ ՅԱՀՎԵԻ ներկայության գործընթացը Աբրահամի հետ էր (ինչպես հհ. 17-24 և 15:1 են հստակ ցույց տալիս): Այս դեպքի արձանագրման պատճառը հենց սա է: Նաև այն, որ Աբրամը օգտագործեց «Մեքիսեդեկ» տիտղոսը, դրանով բացահայտում է ՅԱՀՎԵԻ գործը Աբրամի ուխտից դուրս էլ: Ուրիշներն էլ (օր.՝ Հորը, Եղիուդը) էին ճանաչում և երկրպագում ՅԱՀՎԵԻին, սակայն մեկ ուրիշ անվամբ (օր.՝ Էլ Էլիմ): Աբրամի կանչը իր տեսակով բացառիկ չէր, այլ դա միջոց հանդիսացավ ՅԱՀՎԵԻ համար, որ Իրեն հայտնի բոլոր ազգերին:



❖ «մարզվածներ» Չնայած որ սա ռազմական համատեքստում է գրված, այս տերմինը (BDB 335) վերաբերում է տնային կամ հովվական մարզմանը:

Ինչ-որ ռազմական առանձնահատկություն կարելի է գտնել «նա դուրս հանեց» (BDB 937, KB 1227, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) ԲԱՅԻ մեջ, որը հնարավոր է ունի արքայերեն արմատ՝ «գորակոչել», որին հետևում են Սամարիայի Հնգամատյանը և Մեպտուազինտան:

❖ «մինչև Դան» Սա նույնպես այն դեպքերից է, երբ անունը կիրառվել է շատ ավելի ուշ: Դան (քաղաքը) նկատի ունի Պաղեստինից Դան ցեղի տեղաշարժը դեպի հյուսիսային հեռավոր կողմերը, ինչպես նշված է Հեսու. 19:40-48 և Դատ. 18: Ըստ երևույթին հետագայում խմբագրի կամ դպրի կողմից խմբագրվել է:

**14:15** UBS-ի *Տննդոցի Չեռնարկ* գիրքը մի լավ մեկնաբանություն է տալիս այս համարի շուրջ.

«14:15 խոսքը ցույց է տալիս, որ «Աբրամը Ղովտին Դանում գիշերով հարձակում գործելով չէր վերադարձրել, այլ միայն ավելի ուշ Կորայում» (էջ՝ 319):

Այս քաղաքը կամ շրջանը՝ Կորան (BDB 295) Դամասկոսի հյուսիսային մասում է և Աստվածաշնչում միայն այստեղ է նշված: Արշավող թագավորները և Աբրամն իր դաշնակիցների հետ երկար հեռավորություն էին կտրել անցել:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 14:17-24**

<sup>17</sup>Սողոմի թագավորը դուրս եկավ՝ դիմավորելու նրան, երբ նա Քողոզագոմորի և նրա հետ եղած թագավորներին կոտորելուց հետո վերադարձել էր դեպի Շավե ձորը, որը թագավորի ձորն է: <sup>18</sup>Եվ Սաղեմի թագավոր Մելքիսեղեկը հաց ու գինի դուրս բերեց, և նա Բարձրյալ Աստծո քահանա էր: <sup>19</sup>Եվ օրհնեց նրան ու ասաց. «Օրհնյալ լինի Աբրամը Բարձրյալ Աստծո կողմից, Ով երկնքի ու Երկրի Տերն է: <sup>20</sup>Եվ օրհնյալ լինի Բարձրյալ Աստվածը, որ քո թշնամիներին քո ձեռքը մատնեց»: Եվ նա ամեն ինչից տասանորդ տվեց նրան: <sup>21</sup>Սողոմի թագավորն ասաց Աբրամին. «Քերեվարվածներին ի՛նձ տուր, իսկ ուեցվածքը քե՛զ վերցրու»: <sup>22</sup>Եվ Աբրամն ասաց Սողոմի թագավորին. «Ես բարձրացրի իմ ձեռքը դեպի ՏԵՐԸ՝ Բարձրյալ Աստծուն, Ով երկնքի և Երկրի ՏԵՐՆ է, <sup>23</sup>որ մի թելից մինչև կոշիկ կապը ոչինչ չեմ վերցնի քեզնից, որ չասես, թե Աբրամին ես եմ հարստացրել. <sup>24</sup>բացի այն ինչ երիտասարդները կերել են, և բացի այն մարդկանց բաժնից, որ ինձ հետ գնացել են, այսինքն՝ Աների և Եսրողի և Մամբրեի. թող նրանք իրենց բաժինը վերցնեն»:

**14:17 «Սողոմի թագավորը»** Կոնկրետ ինչ կապ ունի «Սողոմի թագավորը» Սաղեմի թագավորի հետ՝ հայտնի չէ: (Համար 17 խոսում է պատերազմի ժամանակ ավարի բաժանման մասին, որը շարունակվում է հհ. 21-24-ում): Ինձ համար զարմանալի է, որ նա (այսինքն՝ Միմոփորը, հ. 2) նույնիսկ նշված է: Ըստ երևույթին (1) Սաղեմի թագավորը Սողոմի թագավորի համար հոգևոր խորհրդատու էր կամ (2) սա կամուրջ հանդիսացող համատեքստ է, որը միացնում է երկու իրարից տարբեր դեպքեր: Սաղեմը այդ Սարահարթի քաղաքներից չէր, որոնց վրա հարձակվել էին (տես՝ հհ. 1-2):

Հ. 23-ից Աբրամը կամեցավ, որ ՅԱՀՎԵՆ ընդունի իր բոլոր հաջողությունների գրավականը (տես՝ հ. 20բ) և Սողոմի թագավորին լրիվ չվատահեց:

❖ «Շավե ձորը, որը թագավորի ձորն է» «Շավե» (BDB 1001) տերմինը նշանակում է «հարթ լինել» (BDB 1000) և այստեղ հնարավոր է վերաբերում է հարթավայրին:

«Թագավորի ձորը» նշվում է նաև 2 Թագ. 18:18-ում և կարծես թե Սաղեմի մոտակայքում գտնվող մի ձոր է: Դրա տեղանքն անհայտ է (չնայած որ ոմանք կարծում են, որ դա հենց Կեղոնի Ձորն է), ինչպես և այս գլխում առկա շատ մարդիկ և տեղեր:

**14:18 «Մելքիսեղեկ»** Անունը նշանակում է «արդարության թագավոր» կամ «իմ թագավորն արդար է» (BDB 575, նման է Հեսու. 10:1. Մեղեկը հնարավոր է վերաբերում է քանանացիների աստղային աստծուն՝ Մեղեկին): Այս անվանը (Մելքիսեղեկ) ՀԿ-ում հանդիպում ենք միայն այստեղ և Սաղմ. 110:4-ում: Սաղմոս 110-ի պատգամը պատճառ հանդիսացավ Մեռյալ Ծովի Գալարների համայնքին սպասելու երկու Մեսիայի.

1. Հուդայի ցեղից արքայական Մեսիային
2. Ղևիի ցեղից քահանայական Մեսիային

ՆԿ-ի Եբրայեցիների գիրքը (այսինքն՝ գլուխ 7) օգտագործում է այս քանանացի քահանա-թագավորին որպես գերազանց քահանայության տիպար:

1. նրա արնդարանությունը տրված չէ

2. Աբրամը նրան տասանորդ է վճարում (հ. 20, ավելի գերազանց մեկին ընդունելու նշան)
3. նա մի քաղաքի առաջնորդներ, որը հետագայում դառնալու էր Երուսաղեմը
4. նա Բարձրյալ Աստծո (Էլ Էլիմ, չլու ճ՛ տես՝ հհ. 19,20) քահանան էր (այդ ժամանակաշրջանի համար անսովոր մի բան, քանի որ ընտանիքում հայրն էր գործում որպես քահանա, տես՝ 31:54; Հոր 1):

Ռաբբիական հերմենևտիկայի միջոցներով Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը օգտագործում է նրան որպես Ահարոնի, Ղևիի քահանայությունից ավելի գերազանց քահանայության տիպար՝ սիմվոլ:

- ❖ **«Սաղեմ»** Այս հատուկ քաղաք, որը ՅԱՀՎԵՆ ընտրեց Իր անվան բնակության համար, ՀԿ-ում մի քանի անուններով է նշվում:
  1. Սաղեմ՝ վաղ քանանական անունը
  2. Հերուս՝ Հեսուի օրոք քանանական անունը
  3. Երուսաղեմ՝ Դավթի օրոք (տես՝ որպես զուգահեռ Սաղմ. 76:2):

- ❖ **«հաց ու գինի»** Սա Աբրամի, ինչպես նաև մյուս բոլորի համար էր: Այս կերպ նրանք մատնացույց էին անում կենսարարին (տես՝ Սաղմ. 104:15): Հնարավոր է դրանք ունեցել են հոգևոր նշանակություն (այսինքն՝ խաղաղության ուխտի համտեսելիք), սակայն տեքստից հայտնի չէ: Դա չի համարվում Տիրոջ Ընթրիքի նախատիպարը՝ սովերը: Չգո՛ւյշ եղեք այն օրինակներից, որոնք ՆԿ-յան հեղինակների կողմից հայտնված չեն:

- ❖ **«գինի»**

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱԼԿՈՀՈԼԻՆ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆԸ**

**SPECIAL TOPIC: BIBLICAL ATTITUDES TOWARD ALCOHOL AND ALCOHOLISM**

I. Աստվածաշնչյան տերմինները

Ա. Հին Կտակարան

1. *Yayin* – Սա հունարեն գինի բառի ընդհանուր տերմինն է (BDB 406), որը կիրառվել է 141 անգամ: Ստուգաբանությունը անհայտ է, քանի որ ունի Եբրայերեն արմատ: Այն միշտ նշանակում է թթվեցրած պտղաջուր՝ հիմնականում խաղողի: Տիպիկ սուրբգրային հատվածներն են՝ Ծննդ.9:21; Ելից 29:40; Թվոց 15:5,10:
2. *Tirosh* – Սա «նոր գինին» է (BDB 440). Մերձավոր Արևելքի կլիմայական պայմանների պատճառով թթվեցումը /խմորվելը/ սկսում էր հյուրը քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերում է թթվեցման ընթացքի մեջ գտնվող գինուն: Մի քանի տիպիկ սուրբգրային հատվածների համար նայեք 2 Օր.12:17; 18:4; Ես.62:8-9; Ովս.4:11.
3. *Asis* – Ակնհայտ է, որ սա ալկոհոլային ընպելիք է («քաղցր գինի» BDB 779, օր.՝ Հովել 1:5; Ես.49:26).
4. *Sekar* – Սա «ուժեղ խմիչք» տերմինն է (BDB 1016). Եբրայերեն արմատը կիրառվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինում: Այն իր մեջ պարունակում է ավելացված մի բան, որը ավելի է ալկոհոլացնում: Այն *yayin* բառի հոմանիշն է (տես՝ Առակ.20:1; 31:6; Ես.28:7).

Բ. Նոր Կտակարան

1. *Oinos* – *yayin* բառի հունարեն համարժեքը
2. *Neos oinos* (նոր գինի) – *tirosh* բառի հունարեն համարժեքը (տես՝ Մարկ. 2:22).
3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) – Թթվեցման սկզբնական փուլում գտնվող գինի (տես՝ Գործք 2:13):

II. Աստվածաշնչյան կիրառությունը

Ա. Հին Կտակարան

1. Գինին Աստծո պարգևն է (Ծննդ.27:28; Սաղմ.104:14-15; Ժող.9:7; Ովս.2:8-9; Հովել 2:19,24; Ամովս 9:13; Չաք.10:7):
2. Գինին զոհաբերության մի մասն է կազմում (Ելից 29:40; Ղևտ.23:13; Թվոց 15:7,10; 28:14; 2 Օր.14:26; Դատ.9:13):
3. Գինին օգտագործվում էր որպես դեղամիջոց (2 Թագ.16:2; Առակ.31:6-7):

4. Գինին կարող է իսկական պրոբլեմ լինել (Նոյ՝ Ծննդ.9:21; Ղովտ՝ Ծննդ.19:33,35; Նաբադ՝ 1 Թագ.25:36; Ուրիա՝ 2 Թագ.11:13; Ամնոն՝ 2 Թագ.13:28; Հեղի՝ 3 Թագ.16:9; Benhadad – Բենադադ՝ 3 Թագ.20:12; Իշխանները՝ Ամովա 6:6 և Կանայք՝ Ամովա 4):
5. Գինին կարող է չարաշահվել (Առակ.20:1; 23:29-35; 31:4-5; Ես.5:11,22; 19:14; 28:7-8; Ովս.4:11):
6. Գինին արգելված է որոշ խմբի մարդկանց (ծառայության մեջ գտնվող քահանաները՝ Ղևտ.10:9; Եզեկ.44:21; Ուխտավորները՝ Թվոց 6; և իշխանները՝ Առակ.31:4-5; Եսայի 56:11-12; Ովս.7:5):
7. Գինին օգտագործվում է էսկատոլոգիական միջավայրում (Ամովա 9:13; Հովել 3:18; Չաք.9:17):

Բ. Միջաստվածաշնչյան

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող.31:27-30):
2. Ռաբբիներն ասում են. «Գինին դեղամիջոցներից ամենալավն է, որտեղ չկա գինի, այնտեղ կարիք կա դեղերի» (Baba Bathra 58b):

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը վերածեց գինու (Հովհ.2:1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ.11:18-19; Ղուկ.7:33-34; 22:17):
3. Պետրոսը մեղադրվեց «նոր գինով» գինովցած լինելու մեջ՝ Պենտեկոստեի օրը (Գործք 2:13):
4. Գինին կարելի է օգտագործել որպես դեղամիջոց (Մարկ.15:23; Ղուկ.10:34; 1 Տիմ. 5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահեն գինին: Սա չի նշանակում, որ ամբողջովին զրկվեն դրանից (1 Տիմ.3:3,8; Տիտ.1:7; 2:3; 1 Պետ.4:3):
6. Գինին կիրառվում է էսկատոլոգիական միջավայրում (Մատթ.22:1գ; Հայտն.19:9):
7. Հարբեցողությունը դատապարտված է (Մատթ.24:49; Ղուկ.12:45; 21:34; 1 Կորնթ. 5:11-13; 6:10; Գաղ.5:21; 1 Պետ.4:3; Հռոմ.13:13-14):

III. Աստվածաբանական հասկացությունը

Ա. Բարբառային լարվածությունը

1. Գինին Աստծո պարգևն է:
2. Հարբեցողությունը մեծ պրոբլեմ է:
3. Որոշ մշակույթներում հավատացյալները պետք է սահմանափակվեն իրենց ազատությունը հանուն ավետարանի (Մատթ.15:1-20; Մարկ.7:1-23; 1 Կորնթ.8-10; Հռոմ.14):

Բ. Տրված սահմաններն անցնելու հակվածությունը

1. Աստված է բոլոր բարիքների աղբյուրը:
2. Անկում ապրած մարդկությունը չարաշահել է Աստծուց տրված բոլոր պարգևները՝ դրանք տանելով Աստծո կողմից դրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական արարչագործության մեջ ոչ մի չարան չկա (տես՝ Մարկ.7:18-23; Հռոմ.14:14, 20; 1 Կորնթ.10:25-26; 1 Տիմ.4:4; Տիտ.1:15):

IV. Առաջին դարի հրեական մշակույթը և խմորումը

Ա. Խմորումը սկսում է շատ շուտով՝ խաղողը տրորվելուց մոտ վեց ժամ հետո:

Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ մակերևույթին թեթև փրփուր է երևում (խմորման նշան), ապա այն ենթակա է գինու տասանորդի (*Maseroth* 1:7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:

Գ. Սկզբնական ուժեղ խմորումը ավարտվում էր մեկ շաբաթ անց:

Դ. Երկրորդ խմորումը տևում էր մոտ քառասուն օր: Այս վիճակում այն համարվում էր «հին գինի» և կարող էր մատուցվել գոհաստեղանի վրա (*Edhuyyoth* 6:1):

Ե. Գինին, որը հանգստանում էր իր մրուրի մեջ (հին գինին) համարվում էր լավ գինի, սակայն օգտագործումից առաջ պետք է լավ քամվեր:

Զ. Գինին համարվում էր պատշաճ կերպով հնեցված, սովորաբար մեկ տարի խմորումից հետո: Երեք տարին ամենաերկար ժամանակն էր, որ կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է նոսրացվեր ջուր խառնելու միջոցով:

Է. Միայն վերջին 100 տարիներին է, որ ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների շնորհիվ հնարավոր է դարձել խմորման ժամկետը երկարացնել: Հնագույն ժամանակ-ներում մարդիկ չեն կարողացել կանգնեցնել բնական խմորման ընթացքը:

## V. Եզրահանգում

- Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և սուրբգրային մեկնաբանությունը չի թերագնահատում Հիսուսին և առաջին դարի հրեական/Քրիստոնեական մշակույթը: Նրանք հաստատ լիակատար ժուժկալներ չէին:
- Բ. Ես չեմ պաշտպանում ակոհողի հասարակական օգտագործումը: Ամեն դեպքում, շատերը չափազանցեցրել են այս թեմայի շուրջ Աստվածաշնչի դիրքորոշումը և այժմ պահանջում են գերազանց արդարություն մշակութային՝ հարանվանական հակվածությամբ:
- Գ. Ինձ համար Հռոմեացիների 14 և 1 Կորնթացիների 8-10 հատվածները ապահովում են իմ հավատակիցների և մեր մշակույթի մեջ ավետարանի տարածման համար սիրո և հարգանքի հիման վրա խորաթափանցություն և ուղեցույց, ոչ թե անձնական ազատություն կամ դատելու քննադատություն: Եթե Աստվածաշունչը հավատքի և ապրելու համար միակ աղբյուրն է, ապա հնարավոր է մենք բոլորս պետք է ևս մեկ անգամ մտածենք այս հարցի շուրջ:
- Դ. Եթե մենք համոզվենք, որ կատարելապես ժուժկալ լինելը Աստծո կամքն է, ապա դրանով ի՞նչ կակնարկենք Հիսուսի մասին, ինչպես նաև այն արդի մշակույթների, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օր.՝ Եվրոպան, Իսրայելը, Արգենտինան):

**14:19-20** Անգլերեն շատ թարգմանություններ այս հատվածը նշում են որպես պոեզիա:

**14:19 «Օրհնյալ լինի Աբրամը»** Սա միևնույն ԲԱՅՆ է (BDB 138, KB 159), որը երեք անգամ հայտնվում է Ծննդոց 12:3-ում: Այս բայի հիմնական իմաստն է «ծնկել» կամ «օրհնել»:

❖ **«Բարձրյալ Աստված»** Աբրամը, Մելքիսեդեկը և Հոբը՝ բոլորն էլ ճանաչում էին արարչագործության Աստծուն տարբեր անուններով:

1. Աբրամ – ՅԱՀՎԵ
2. Մելքիսեդեկ – *Էլ Էլիուն*
3. Հոբ – *Էլոհիս, Էլ*

Տե՛ս Հատուկ Թեմա 12:1-ում:

❖ **«Ով երկնքի ու երկրի Տերն է»** ԲԱՅԸ (BDB 888, KB 1111, *Qal* ԴԵՐԲԱՅ, տե՛ս՝ հ. 22) նշանակում է «ունենալ» կամ «ստեղծել» (հավանաբար երկու նմանատիպ բաղաձայնային արմատներից): Աստվածաբանական այս լեզուն տարածված է Մերձավոր Արևելքի կրոններում (այսինքն՝ քանանացիների ուգարտական պոեմներում): Դա բարձրյալ աստծուն ընդունելու մի կերպ էր (վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ Սաղմ. 115:15; 121:2; 124:8; 134:3; 146:6-ում):

**14:20 «ամեն ինչից տասանորդ»** Այստեղ առաջին անգամ է նշվում այն թվաբանական հասկացության մասին, որը Ղևտացիների գրքում վերածվում է տասանորդի (տե՛ս հաջորդող Հատուկ Թեման): Աբրամի կողմից այդ ժեստը ՅԱՀՎԵԻՆ շնորհակալություն հայտնելու միջոց էր հաղթանակի համար և գիտակցում, որ Նա էր հաղթանակողը:

Տասանորդը Մելքիսեդեկին տալով նա ընդունում էր նրան որպես մեկին, որը ճշմարտապես ճանաչում էր և ծառայում այն նույն Աստծուն, որն իրեն դուրս կանչեց Ուրից (տե՛ս՝ հ. 22):

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԱՍԱՆՈՐԴՆԵՐԸ ՄՈՎՄԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ SPECIAL TOPIC: TITHES IN THE MOSAIC LEGISLATION

Ա. Աստվածաշնչյան համարը .

1. Քահանաների և Կենտրոնական Սրբարանի համար՝  
ա. Ղևտ. 27:30-32  
բ. 2 Օր. 12:6-7,11,17; 14:22-26  
գ. Թվոց 18:21-24  
դ. Նեեմ. 12:44  
ե. Մաղ. 3:8,10
2. Տեղի Ղևտացիների համար՝  
ա. 2 Օր. 12:12; 14:27; 26:12-15

բ. Թվոց 18:25-29 (Ղևտացիները պետք է իրենց տասանորդից տասանորդ տային կենտրոնական սրբարանին)

գ. Նեեմ. 10:37,38

3. Տեղի կարիքավորներին՝

ա. 2 Օր. 14:28-29

բ. Նեեմ. 12:44

Բ. Մովսիսական օրենսդրությունից առաջ տասանորդի օրինակներ՝

1. Ծննդոց 14:20, Աբրահամը Մելքիսեդեկին (Եբր. 7:2-9)

2. Ծննդոց 28:22, Հակոբը ՅԱՀՎԵին

Գ. Իսրայելի տասանորդները ընդհանրապես օգտագործվում էր կենտրոնական սրբարանի համար, սակայն ամեն երեք տարին մեկ ազգային տասանորդը ուղղվում էր բացառապես տեղի աղքատներին սատարելու համար:

Անձամբ ես հավատում եմ, որ «տասանորդ տալը» ՀԿ-յան հասկացություն է, որը կապված էր կենտրոնական սրբարանը պահպանելու հետ: Չեմ կարծում, որ դա ՆԿ-յան սկզբունք է: Հեթանոսների կողմից տալու օրինակի լավագույն և միակ քննարկումը արձանագրված է Բ Կորնթացիների 8-9 գլուխներում, որը խոսում է հեթանոս եկեղեցիներից Երուսաղեմի եկեղեցուն մեկանգամյա նվիրատվության մասին:

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԱՍԱՆՈՐԴ

### SPECIAL TOPIC: TITHING

Ղուկաս 11:42 և Մատթ. 23:23-ը տասանորդի վերաբերյալ միակ ՆԿ-յան համարներն են: Ես չեմ հավատում, որ Նոր Կտակարանը սովորեցնում է տասանորդի մասին, քանի որ այս ամբողջ միջավայրը դեմ է հրեա օրինականությանը և ինքնաարդարացմանը: Ես հավատում եմ, որ կանոնավոր կերպով տալու Նոր Կտակարանյան ուղեցույցները (եթե առկա են) գտնվում են 2 Կոր. 8 և 9-ում (այսինքն՝ հեթանոս եկեղեցիների մեկանգամյա հանգանակությունը Երուսաղեմի Մայր եկեղեցու աղքատներին), որը վեր է տասանորդից: Եթե հրեային, ով միայն Հին Կտակարանի համեմատ պատվիրված էր տալ տասը կամ երեսուր տոկոսը (երկու, հավանական է, երեք տեղ Հին Կտակարանում պահանջվում է տասանորդ .տե՛ս Հատուկ Թեմա: Տասանորդը Մովսիսական Օրենքում), ապա քրիստոնյաները պետք է ավելին տան, նույնիսկ չքննարկելով տասանորդի թեման: Նոր Կտակարանի հավատացյալները պետք է գգույշ լինեն, քրիստոնեությունը նոր իրավական գործողությամբ ուղղվածության կող (քրիստոնեական թալմուդ) դարձնելու համար: Նրանց ցանկությունն է հաճելի լինել Աստծուն, որը ստիպում է նրանց փորձել գտնել ուղեցույցներ կյանքի բոլոր ոլորտների համար: Այնուամենայնիվ, աստվածաբանորեն վտանգավոր է հին ուխտի կանոնները հանել, որոնք չեն վերահաստատվում Նոր Կտակարանի մեջ (այսինքն, Երուսաղեմի Խորհուրդը Գործք 15-ում) և դրանք դարձնել դոգմատիկ չափանիշներ, հատկապես, երբ դրանք պահանջվում են (ժամանակակից քարոզիչների կողմից) բարգավաճման խոստումներ ունենալու պայմանով (տե՛ս՝ Մաղաքիա 3):

Ահա մի լավ մեջբերում Ֆրենք Սթեգի Նոր Կտակարանյան Աստվածաբանություն /Frank Stagg, *New Testament Theology*/, էջ՝ 292-293, գրքից՝

«Նոր Կտակարանը մեկ անգամ չէ, որ տասանորդը ներկայացնում է շնորհքի մեջ որպես տալ: Տասանորդի մասին Նոր Կտակարանում նշվում է միայն երեք անգամ՝

1. Քննելով փարիսեցիներին արդարությունը, ողորմությունը և հավատքը անտեսելու համար, մինչդեռ այգու ստացվածքից խիստ մտահոգված էին տասանորդ տալու հարցում (Մատթ. 23: 23; Ղուկ. 11: 42),
2. մերկացնելով այն հպարտ փարիսեցուն, որն «աղոթում էր իրեն», պարծենալով, որ շաբաթը երկու անգամ ծոմ է պահում և տասանորդ տալիս իր ամբողջ ունեցվածքից (Ղուկ. 18:12),
3. Ղևիի Մելքիսեդեկի և հետևաբար Քրիստոսի գերազանցության համար վիճաբանելու համար, (Եբր. 7: 6-9):

«Հասկանալի է, որ Հիսուսը հաստատեց տասանորդ տալը, որպես Տաճարի համակարգի մի մաս, ինչպես սկզբունքորեն և գործնականում Նա պաշտպանեց Տաճարի և ժողովարանների ընդհանուր գործողությունները: Սակայն չկա որևէ նշում, որ Նա իր հետևորդների վրա է դնում Տաճարի ծեսերից ինչ որ մաս: Տասանորդները հիմնականում այն մթերքներն էին, որոնք սկզբում

մասամբ օգտագործվում էին սրբարանի ընթրիքի համար, ովքեր բերում էին դրանք, իսկ մնացածը հետագայում օգտագործվում էր քահանաների կողմից: Հին Կտակարանում տասանորդը կարող էր իրականացվել միայն կենդանիների զոհաբերության համակարգի վրա կառուցված կրոնական համակարգում»:

«Շատ քրիստոնյաներ համարում են, որ տասանորդը տալը բավականին արդար և գործնական սկզբունք, կանոն է: Քանի որ դա չի կարող լինել պարտադրված կամ օրինականացված համակարգ, այն կարող է լինել երջանիկ սկզբունք: Մակայն, ոչ ոք չի կարող օրինականորեն պնդել, որ Նոր Կտակարանը տասանորդ է սովորեցնում: Այն հրեաների համար էր (Մատթ.23:23; Դուկ. 11:42), բայց չի պարտադրվում քրիստոնյաներին: Ըստ էության, Հին Կտակարանյան իմաստով անհնար է հրեաների կամ քրիստոնյաների համար տասանորդ տալը: Տասանորդն այսօր աննշան հիշեցնում է հրեական զոհաբերությունների համակարգին պատկանող հնագույն ծիսական պրակտիկայի»:

Մթեզը ամփոփել է այսպես.

«Թեև շատ բան կարող ենք ասել կամավոր կերպով տասանորդ տալու մասին, որպես չափանիշ, որպես քրիստոնեական պահանջ, պարզ է դառնում, որ այդպիսի պրակտիկա ընդունողը չի կարող շարունակել Հին Կտակարանյան պրակտիկան: Լավագույն դեպքում արվում է միայն Հին Կտակարանի տասանորդի պրակտիկայում նմանատիպ մի բան, որը հարկ էր՝ աջակցելու տաճարին և քահանայական համակարգին, սոցիալական և կրոնական համակարգին, որն այլևս գոյություն չունի: Տասանորդները պարտադիր էին հուդայականության մեջ որպես հարկ մինչև Տաճարի կործանումը՝ 70թ, սակայն դրանք չեն պարտավորեցնում քրիստոնյաներին»:

«Սա տասանորդը վարկաբեկելու համար չէ, այլ հստակեցնելու նրա կապը Նոր Կտակարանի հետ: Սա նշանակում է մերժել, որ Նոր Կտակարանը կողմ է հարկադրանքին, օրինականությանը, շահույթ հետապնդելուն և գործարքներին, որոնք այսօր հաճախ բնութագրում են տասանորդի կոչերը: Որպես կամավորական համակարգ, տասանորդը շատ բան է առաջարկում, բայց այն պետք է ազատագրվի շնորհքով, եթե այն պետք է քրիստոնեական լինի: Հայտարարել, որ «այն գործում է», միայն նշանակում է որդեգրել աշխարհի պրագմատիկ փորձարկումները: Շատ «գործող բաներ» քրիստոնեական չեն: Տասանորդը, եթե համամիտ է Նոր Կտակարանի աստվածաբանության հետ, պետք է արմատավորվի Աստծո շնորհքի և սիրո մեջ»:

**14:21** Ինչ-որ մեկի մոտ հնարավոր է հարց առաջանալ, թե արդյոք հ.20-ի «տասանորդը» հ.21-ում քննարկվող ավարի մի մասն էր: Համատեքստում առկա է շփոթություն:

1. հհ. 17,21-24 խոսում է Սողոմի թագավորի և ավարի մասին
2. հհ. 18-20 խոսում է Սաղեմի թագավորին ավարից տրված տասանորդի մասին

**14:22** Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է Աբրամը Աստծո անունները հավասարեցնում՝

1. ՅԱՀՎԵ
2. Էլ Էլիոն

հետևաբար համարելով, որ այս երկուսն էլ նույն Աստվածն է:

**14:23** «մի թելից մինչև կոշկի կապը ոչինչ չեմ վերցնի քեզնից» Այս փոխաբերական լեզուն շատ բնորոշ է (տես՝ NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 120) Հնագույն Մերձավոր Արևելքի փոխանակման լեզվին (տես՝ Ծննդոց 23): Սա մի դարձվածք է «ոչինչ չվերցնելու» շուրջ: Հանդերձները պատերազմի ժամանակ վերցված ավարի մի մաս էր կազմում: Աբրամը ուզում էր լիակատար հստակեցնել, որ ինքը ուխտի փոխհարաբերության մեջ չի մտնում կամ երբեք էլ չի մտել Սողոմի թագավորի հետ:

**14:24** Սա Աբրամի դրացիների ցանկն է, որոնք օգնեցին նրան պատերազմում և արժանի էին ավարից վերցնելու իրենց բաժինը:

## ԾՆՆԴՈՑ 15

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Աբրամին որդի է խոստացվում	Աստծո ուխտը Աբրամի հետ	Աբրահամի և Սարայի հետ ուխտ	Աստծո ուխտը Աբրամի հետ	Աստծո Խոստումը և Ուխտը
15:1-11	15:1-11	15:1-6	15:1	15:1
(1)				(1)
			15:2-3	15:2-6
			15:4-5	
			15:6	
		15:7-11	15:7	15:7-11
			15:8	
			15:9-11	
15:12-16	15:12-16	15:12-16	15:12-16	15:12-16
15:17-21	15:17-21	15:17-21	15:17-21	15:17-21
(18)	(18)			(18)

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԻՄՔԸ

Ա. Գլուխ 15 փորձությունների և իրադարձությունների մի շարք է, որոնք Աստված Աբրահամին էր տվել գլուխ 12-ից մինչև 22 (տես՝ 12:1-3; 14:12-14; 15:1-18; 17:1-5; 22:16-18):

Գլուխ 15 բացատրում է գլուխ 14-ի ՅԱՀՎԵի գործողությունները: ՅԱՀՎԵն էր Աբրամի հաղթանակը: Աբրամի հույսը ՅԱՀՎԵի խոստման վրա էր, որն առաջին անգամ տրվել էր գլուխ 12-ում, սակայն մի քանի անգամ կրկնվել էր (տես՝ գլուխներ 12, 15, 17, 18, 22):

Բ. Հետաքրքիր է նկատել, որ գլուխ 12 և 17-ում ուխտի հռչակման ժամանակ պայմաններ էին դրվել, մինչդեռ գլուխ 15 և 22-ում ոչ մի ակնառու պայման էլ չկա: Մարդկանց հետ Աստծո գործը հիմնված է Իր անփոփոխ, գթառատ բնավորության վրա և Իր նախաձեռնող սիրո վրա, սակայն Աստված նաև նպատակ է հտապնդել, որ Իր պատկերով ստեղծված մարդիկ օտար է արձագանքեն Իր սիրույն ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ և հարատևությամբ: Այս պահանջները հիմնարար են ոչ միայն Ծննդոցում, այլ ամբողջ Աստվածաշնչի բովանդակությամբ:

Գ. Կարևոր է, որ տեսնենք Աստծո Աբրամի հետ Իր գործողության միջոցով, որ Նրա շնորհքն է անընդմեջ շեշտադրվում, և ոչ թե մարդկային արժանիքները, ջանքերը կամ ռեսուրսները: Այս թեման դառնում է Ծննդոցի առանցքային նպատակը: Այնուհանդերձ նաև շեշտադրվում է հավատքի հիմնարար կանչը և Աբրամից պահանջվող փոխհարաբերությունը (տես՝ 22:16,18): Պողոսը սա օգտագործում է որպես հարացույց՝ պարադիզմ, մեղավոր մարդկանց հետ Աստծո գործելակերպի շուրջ (տես՝ Հռոմեացիս 4 և Գաղատացիս 3): Սա շատ կարևոր տեքստ է այն թեմայի շուրջ, թե ինչպես է Աստված ընդունում մեղավոր մարդկությանը: Հենց այն փաստը, որ Նա ընդունում է և ընդունելու է, արդեն իսկ ապշելու հրաշայի է:

Դ. Ծննդոցի այս առաջին գլուխները մեր աշխարհը և մեր հոգևոր կարիքները հասկանալու համար վճռորոշ են: Ծննդոց 1-3 հարթակ է պատրաստում մարդու վիճակը ճիշտ հասկանալու համար:

1. ստեղծվեց Աստծո պատկերով՝ Նրա հետ փոխհարաբերվելու համար (1:26-27)

2. ապստամբեց Աստծո առաջնորդության դեմ (3:1-7)

3. մարդու ապստամբության հեռահաս հետևանքները (3:8-20)

4. Աստծո փրկության խոստումը (3:15)

Իրականում Ծննդոց 3-ից մինչև Հայտնություն 20 Աստված վերականգնում է Ադամի և Եվայի մեղքի հետևանքները: Երկինքը նկարագրվում է Հայտնություն 21-22-ում որպես Եդեմի վերականգնված Պարտեզ: Ծննդոցի բացման գլուխները վերաբերում են ամբողջ մարդկությանը:

1. Ադամ

2. Նոյ

3. Աբրամ (տես՝ 12:3; Գործք 3:25; Գաղ. 3:8)

Աստված ընտրելով մեկին՝ ընտրեց բոլորին: Աստծո ընտրությունն իր մեջ խոստում էր պարունակում (այսինքն՝ անպայմանական ուխտը) արձագանքի սպասումով (այսինքն՝ պայմանական ուխտը): Աբրամի կյանքը ցույց է տալիս մեղքի և շնորհքի ազդեցությունները: Նա հնազանդության և հավատքի պայքարի մեջ էր: Այս կոնֆլիկտի միջոցով բոլորն են կանչված (Աբրամը հավատքի, կասկածների, վատահոլության հարացույց է՝ պարադիզմ. տես՝ Հռոմեացիս 4; Գաղատացիս 3):

Ե. Համար 6-ը առանցքային է ՆԿ-ի աստվածաբանության համար: Սա կարծես թե Աբրամի կյանքի պատմությունը շարադրողի կողմից մի մեկնություն կամ ամփոփիչ խոսք լինի: Արդյո՞ք սա նաև եղավ Մովսեսի կամ Նահապետների հետագա եզրահանգումը (այսինքն՝ Հակոբի): Իրական հարցն այն չէ, թե ով, երբ կամ ինչպես է Սուրբ Գիրքը ստեղծել, այլ արդյո՞ք այն հանդիսանում է Աստծո ճշմարտությունը, թե մարդկային ենթադրություններ են: Ահա թե որտեղ է հեղինակության (այսինքն՝ ներշնչանքի) ենթադրությունները հասնում: Մովորաբար մեղավոր մարդիկ առաջին հերթին ընդունում են Աստծո գոյության փաստը և ապա սկսում փնտրել Նրա մասին ավելի շատ տեղեկություններ Սուրբ Գրքից: Սուրբգրային արձանագրությունները մեր համար են, ովքեր երբեք չեն տեսել: Այն հիմք և աղբյուր է հանդիսանում մեր հավատքի համար, որը հասկացողություն է փնտրում: Աբրամի կյանքը հարացույց է բոլոր հավատացյալների համար (ՀԿ-յան և ՆԿ-յան սուրբերի համար): Երբ գործ ունենք պատմական իրադարձության հետ, կարող եք հարցնել. «ինչո՞ւ են սա գրել» (Տե՛ս Ֆիի և Ստյուևարտի, *ԻՆՇչպես Կարդալ Աստվածաշունչը Իր ամբողջ Բնաստով*):



**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:1-11**

<sup>1</sup>Այս ամենից հետո տեսիլքով ՏԻՐՈՋ խոսքն Աբրամին եկավ՝ ասելով.

«Մի՛ վախենա, Աբրամ,

Ես քո վահանն եմ

Եվ քո մեծագույն վարձատրությունը»:

<sup>2</sup>Եվ Աբրամն ասաց. «Ո՛վ Տեր Աստված, ինձ ի՞նչ ես տալու, քանի որ անգավակ եմ մնացել, և իմ տան տնտեսն ահա դամասկոսցի Եղիազարն է»։ <sup>3</sup>Նաև ասաց Աբրամը. «Որովհետև ինձ սերունդ չովիր, ահա՛ իմ ընդոծինն իմ ժառանգորդը կլինի»։ <sup>4</sup>Եվ ահա ՏԻՐՈՋ խոսքը եկավ նրան՝ ասելով. «Նա չի՛ լինի քո ժառանգորդը, այլ նա, որ քո մեջքից դուրս կգա, նա կլինի քո ժառանգորդը»։ <sup>5</sup>Եվ Նա դուրս բերեց նրան ու ասաց. «Դեպի երկի՛նք նայիր և հաշվի՛ր աստղերը . եթե կարող ես դրանք հաշվել»։ Եվ ասաց նրան. «Այսպես կլինի քո սերունդը»։ <sup>6</sup>Եվ նա հավատաց ՏԻՐՈՋԸ, և Նա նրա կողմից արդարություն համարեց սա։ <sup>7</sup>Եվ ասաց նրան. «Ես եմ ՏԵՐԸ, որ քեզ քաղղեացիների Ուր քաղաքից հանեցի՝ այս երկիրը քեզ տալու համար»։ <sup>8</sup>Եվ նա ասաց. «Ո՛վ ՏԵՐ Աստված, ինչպե՛ս իմանամ, թե ես այն կժառանգեմ»։ <sup>9</sup>Եվ Նա ասաց նրան «Ինձ համար մի երեք տարեկան երինջ և մի երեք տարեկան այծ, և մի տարեկան խոյ, և մի տատրակ, և մի աղավնու ձագ առ»։ <sup>10</sup>Եվ նա այս բոլորը վերցրեց Նրա համար և դրանց մեջտեղից կտրեց և ամեն մի կտորը մյուսի դիմաց դրեց, բայց թշուններին չկտրեց։ <sup>11</sup>Եվ երբ կտրած դիերի վրա գիշատիչ թռչուններն իջան, Աբրամը քշեց նրանց։

**15:1** Դժվար է հասկանալ, թե երբ է պետք տեքստը թարգմանել որպես արձակ, և երբ՝ որպես պոեզիա։ Տեքստին օգնող միակ նշանը «հանգն» է (այսինքն՝ շեշտադրված արտահայտությունները), սակայն սա հետագայում կատարված փոփոխություն է։ Համար 1-ը NASB, JPSOA, NJB, NIV թարգմանություններում գրվել է որպես պոեզիա, իսկ NKJV, NRSV, TEV և REB-ում՝ որպես արձակ։ Միևնույն անորոշությունն առկա է նաև 14:19-20-ում։

«Այս ամենից հետո» արտահայտությունը երկիմաստ և կրկնվող է (տես՝ 22:1; 22:20; 39:7; 40:1; 48:1)։ Ծննդոցում առկա առանձին պատմությունները իրար են միացված արևելյան պատմական ձևաչափով, ոչ թե արդի արևմտյան, իրար հաջորդող ժամանակագրական հերթականությամբ։ Տես հետևյալ հոդվածը՝ *Հին Կտակարանի Պատմագրությունը ի համեմատություն ժամանակակից Մերձավոր Արևելյան Մշակույթների*, էջ՝ xv /*Old Testament Historiography Compared with Contemporary Near Eastern Cultures*/:

Սա Ծննդոցում այս տարածված արտահայտության (այսինքն՝ «ՏԻՐՈՋ խոսքը եկավ նրան») տե՛ս՝ h. 4) կիրառության երկու դեպքերից առաջինն է (տես՝ h. 4), որը կարելի է գտնել ամբողջ Մարգարեների գրքերում։ Այն շեշտադրում է, որ ՅԱՀՎԵՆ դիմում է Աբրամին, ըստ երևույթին շատ հատուկ կերպով և լսելի ձայնով (BDB 55)։ Տվյալ պատմության մեջ գիշերվա տեսիլքով եղավ։ Տե՛ս հաջորդիվ տրված գրառումը 15:1գ։

Աբրամը նկարագրված է որպես աստվածային հայտնություն ստացող անձ։ Ներածական ձևաչափը տարածված է Ուշ Մարգարեներ բաժնում, սակայն նախքան այդ ժամանակները հազվադեպ է կիրառվում։ Աբրամը նույնիսկ կոչվում է «մարգարե» (BDB 611) 20:7 համարում։ Մարգարեները գրեցին Մուրբ Գիրքը։ Ես միշտ այս տեսությունն եմ ունեցել, որ Մովսեսը միայն չի եղել Ծննդոցի առաջին մասերի հեղինակը, այլ նաև հավաքագրողը, խմբագիրը։ Ծննդոց 1-2-ում առկա տեսարանը միջագետքյան է, ոչ թե եգիպտական։ Ոչ մի վարկային՝ առևտրային խոսք չի կիրառվում մինչև Հովսեփի կյանքը։ Կարծում եմ Մովսեսը օգտագործում էր դեռևս Աբրամի օրերի (այսինքն՝ Նահապետների) բանավոր կամ գրավոր ավանդույթները։ Նա էր հանդիսանում այս վաղ շրջանի պատմությունների մեծ մասի հավաքագրողն ու խմբագիրը։ Հեղինակները կիրառում էին իրենց մշակույթն ու բառապաշարը, սակայն պատգամը Աստծուց էր (այսինքն՝ ներշնչանքը)։

❖ «ՏԵՐԸ» ՅԱՀՎԵ անունը երբայերեն «ինել» (տես՝ Ելից 3:14) ԲԱՅԻ մի խոնհարումն է։ Այն կարծես թե շեշտադրում է, որ Աստված մշտագո է, հավիտենական է։ Ռաբբիները պնդում են, որ երբ Աստծուն դիմում են որպես ՅԱՀՎԵ, այդ դեպքում ընդգծվում է Նրա ողորմությունը, և երբ դիմում են որպես *Էլոհիմ*՝ ապա դա շեշտադրում է Արարիչ Աստծո գորությունը։ Ես սիրում եմ այս տեսությունը շատ ավելի, քան “JEDP” տեսությունը, որն այդքան հայտնի էր 18-20-րդ դարերում։ Տե՛ս Հատուկ Թեմա. *Աստծո Անունները*, 12:1:

❖ «տեսիլքով» Սա ակնարկում է, որ գիշեր էր, որը նաև նշում է h.5-ը։ Համաձայն գլուխ 15-ի բովանդակության մնացած մասի՝ հատկապես h. 12-ի, անհայտ է, թե այս տեսիլքը եկավ մմի գիշեր, թե

տարածվեց երկու գիշերվա ընթացքում (այսինքն՝ երկու տեսիլք, հհ. 1-6,7-21): Այս հատվածում գտնվող «տեսիլք» (BDB 303) տերմինը տարբերվում է 12:7-ի «հայտնվեց» (BDB 906) տերմինից: Սա հազվադեպ տերմին է, որը Աստվածաշնչում միայն երեք գլուխներում կարելի է գտնել՝ Ծննդ. 15:1; Թվոց 24:4,16 և Եզեկ. 13:7:

NIDOTTE հատոր 4, էջ՝ 354, ներկայացնում է Ծննդոցում ՅԱՀՎԵԻ Իրեն հայտնելու կերպերի մի հետաքրքիր ամփոփում.

1. խոսքերով (BDB 55) – 12:1-3; 13:14-17; 21:12-13; 22:1-2
2. տեսիլքներով – 15:1-6 (BDB 303); 46:2-4 (BDB 909 I)
3. երազներով – 20:3-7 (BDB 538); 28:12-15 (BDB 321); 31:10-13 (BDB 321), 24 (BDB 538)
4. աստվածհայտնություններով, («հայտնվեց», BDB 906) – 12:7; 17:1; 18:1; 26:2,24; 35:1,9; 48:3
5. ՅԱՀՎԵԻ հրեշտակի միջոցով (տես՝ Հատուկ Թեմա 12:7-ում) – 16:7-13; 21:17-19; 22:11-12,15-18; 31:11

Մեթոդները տարբերվում են, սակայն Աստծո նախաձեռնող հայտնությունները մարդկությանն են հասնում ոչ թե անհատների, այլ ՅԱՀՎԵԻ փրկարար ծրագիրը մարդկությանը հասցնելու համար:

❖ **«մի՛ վախենա, Աբրամ»** Այս ԲԱՅԸ (BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, կիրառվում է ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով) Ծննդոցում կրկնվում է (տես՝ 15:1; 21:17; 26:24; 46:3): ՅԱՀՎԵՆ գիտի, որ մեղքի պատճառով են մեր սրտերը վախենում (Նրանից վախենում, կյանքից վախենում, ինքներս մեզանից վախենում): Առաջին անգամ այս խոսքը օգտագործվել է Ծննդ. 3:10-ում, Աստծուց Ադամի և Եվայի վախենալու շուրջ, երբ նրանք նոր էին մեղանչել: Ռաբբիներն ասում են, որ այս վախը կապված է գլուխ 14-ի հետ, հատկապես (1) պատերազմի վախի, (2) հաշվեհարդարի վախը այն ազգերից, որոնց թագավորներին նա սպանել էր կամ (3) Աստծո վախը, քանի որ նա մարդկանց կյանքերն էր վերցրել: Այնուհանդերձ, գլուխ 12-ից մինչև 15-ի համատեքստից հավանական է, որ վախը կապված էր Աբրամի շարունակ անգավակ լինելուց:

❖ **«Ես քո վահանն եմ»** «Վահան» (BDB 171) տերմինը ռազմական տերմին է, որը գործում է որպես «պաշտպան» կամ «մատակարար» փոխաբերություն (տես՝ Սաղմ. 3:3; 28:7; 33:20; 84:9 և 91:4): «Վահան» տերմինը ստուգաբանորեն կապված է «մատնել» (BDB 171, տես՝ 14:20) տերմինի հետ: «Վահան» տերմինի լավագույն սահմանման համար տե՛ս Բ Օրինաց 33:29: Ինձ դուր է գալիս Լյութերի թարգմանությունը New American Standard Bible թարգմանությունից, քանի որ ակնարկում է, որ «վահան» և «վարձատրություն» բառերը հենց Աստված Ինքն է՝ «Ես թե՛ քո վահանն եմ, և թե՛ քո վարձատրությունը» (տես՝ NKJV): Այս արտահայտության մեջ սահմանված ԲԱՅ չկա:

❖ **«Քո մեծագույն վարձատրությունը /անգլ.՝ քո վարձատրությունը շատ մեծ է լինելու/»** Աբրամը փորձվեց հարստության և ավարի ցանկությանը՝ 13:8-13 և 14:21-24 համարներում և մերժեց այս նյութական հնարավորությունները: Գլուխ 12-ում Աստված նրան խոստացավ թե՛ ժառանգորդներ և թե՛ հող: Սակայն, Աստծո խոստման այս շարունակական հաստատումների մեջ Աստված Ինքն է Աբրամի մեծագույն բաժինը (ինչպես որ հետագայում Ղևտացիների համար էր, տես՝ Թվոց 18:20; Բ Օրինաց 10:9):

**15:2 «Ո՛վ Տեր ԱՍՏՎԱԾ»** Սա առաջին դեպքն է, որ Աստվածաշնչում Աստծո անունների այս համադրությունը երևան է գալիս միասին: Ծննդոցում միայն ահատեղ և հ. 8-ում ենք հանդիպում: Այս համադրությունը տառացի նշանակում է «Աղոնայ ՅԱՀՎԵ»: Այս անունները միասին կարող ենք տեսնել Բ Օրինաց 10:17-ում: *Աղոնայ* տերմինը (բառ.՝ «իմ Տեր», կիրառվում է քանանացիների գրականության մեջ, սակայն ոչ այլ սեմական լեզուներում) կարծես թե շատ նման է ՆԿ-ում *Kurios* տերմինին, որը նշանակում է «ամուսին», «սեփականատեր» կամ «Տեր»: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստծո անունները, 12:1:

Աստծո համար երկու անունների համադրությամբ մի քանի անուններ կան:

1. ՅԱՀՎԵ *Էլոհիմ* – Ծննդոց 2:4
2. *Աղոնայ* ՅԱՀՎԵ – Ծննդոց 15:2

Չնայած որ այս անունները անգլերենում/հայերենում միևնույն կերպ են թարգմանված, դրանք տարբերվում են իրենց նշանակությամբ և շեշտադրությամբ:

❖ **«ինձ ի՛նչ ես տալու, քանի որ անգավակ եմ մնացել»** Աբրամի անհանգստության կիզակետը իր անգավակ վիճակն էր: Նրա անհանգստության հիմքը հանդիսանում էր Աստծո առաջին խոստումը 12:1-3-ում: Հնում մարդիկ անգավակ լինելը համարում էին Աստծուց անեծք, մինչդեռ Աստված պարբերաբար հաստատում էր, որ Աբրամ իր հատուկ բարեհաճությանն է արժանացել: Աբրամը փնտրում էր այդ խոստացված բարեհաճության ֆիզիկական դրսևորումը:

- ❖ «Անգավակ» բառը (BDB 792) հազվադեպ բառ է: Այն միայն չորս անգամ է կիրառվել:
  1. Աբրամի (ոչ թե Սարայի) – Ծննդ. 15:2
  2. որպես արյունապղծության պատիժ – Ղևտ. 20:20,21
  3. փոխաբերական իմաստով Հովակիմի համար, որից հետո չգահակալեցին իր որդիներից և ոչ մեկը՝ Երեմ. 22:30:

❖ «**և իմ տան տնտեսն ահա դամասկոսցի Եղիազարն է**» «Ժառանգորդ» (קֶשֶׁט) եբրայերեն հազվադեպ բառի վրա մի բառախաղ կա, որը կարող է նշանակել «ձեռքբերում» կամ «ստացվածք» (BDB 606, NIDOTTE, հատոր 2, էջ՝ 971) և «Դամասկոս» տերմինը (קֶשֶׁט, BDB 199): Եբրայերեն լեզվում դրանք միանման են հնչում: Ոմանք համարում են, որ սա կապ ունի Բոռեցիների որդեգրման ավանդույթների հետ, որ գրված են Նուգի Տախտակների վրա՝ Զ. Ա. երկրորդ հազարամյակից:

Ոմանք ենթադրում են, որ «Եղիազար» (BDB 451), որը նշանակում է «Աստված իմ օգնությունն է», այն ծառան է, որի մասին նշված է 24:2-ում:

«Ժառանգորդ / տնտես» թարգմանված տերմինը (BDB 606) հազվադեպ տերմին է: «Ժառանգորդ» բառի համար նորմալ ԲԱՅԸ (BDB 439, KB 441), գտնվում է հհ. 4,5 (երկու անգամ), 7,8-ում: Դրանք երկուսն էլ նշանակում են «ունեցվածքին տիրել»: Այս արտահայտությունը բացատրվում է հ. 3-ի միջոցով:

**15:3 «Որովհետև ինձ սերունդ չստացիր»** Աբրամն այս կրկնությամբ ցույց է տալիս իր անհանգստության չափը, որ զգում էր: Աբրամը հավատքը կասկածների հետ խառնուրդի մի լավ օրինակ է: Աբրամը հավատաց Աստծուն, սակայն դա չի նշանակում, որ նա որոշակի հարցեր չունեի Նրա խոստումների հետ կապված: Աստված չի արհամարհում անկեղծ հարցադրողին: Աստված պետք է տաներ նրան մի շարք փորձությունների և ստուգարքների միջով, մինչև որ Աբրամը հասկանար, որ իր ամենամեծ բաժինը՝ ստացվածքը հենց Ինքն Աստված էր (հտկ. գլուխ 22):

**15:4 «այլ նա, որ քո մեջքից դուրս կգա»** Պետք է նշել, որ սա դեռ քսանհիզ տարի հետո էր կատարվելու: Այստեղ հատուկ նշվում է, որ երեխան Աբրամից է դուրս գալու, սակայն չի նշվում, որ Սարայից է լինելու: Սա է գլուխ 16-ում առկա բարդությունների պատճառը:

«Քո մեջքից» թարգմանված արտահայտությունը բառացի նշանակում է «քո ներքին մասերից»: Այս բառը (BDB 588) կիրառվում է մի քանի իմաստով՝

1. սնակուշտ՝ 2 Թագ. 20:10; 2 Մնաց. 21:15
2. ստամոքս՝ Հոր 20:14; Եզեկ. 3:3; 7:19; Հովնան 1:17; 2:1; 2 Թագ. 7:12; 16:11
3. սեռական օրգաններ՝  
ա. տղամարդու՝ Ծննդ. 15:4  
բ. կանացի՝ Եսայի 49:1
4. մարդկային էմոցիաների ֆիզիկական վայրը՝ Երգ Երգոց 5:4,14; Եսայի 16:11; 63:15; Երեմ. 4:19; 31:20; Ողբ 2:11

**15:5 «Գեպի երկի՛նք նայիր և հաշվի՛ր աստղերը. եթե կարող ես դրանք հաշվել»** Աստված Աբրամին երկու հրաման է տալիս՝

1. նայիր – BDB 613, KB 661, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. հաշվիր – BDB 707, KB 765, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Աստծո օրհնությունները առատ են լինելու և ակնհայտ՝ տեսանելի (տես՝ 12:2; 17:2):

Աստված օգտագործեց մի քանի փոխաբերություններ, որոնք Աբրամի համար հասանելի կլինեին նկարագրելու իր սերունդների բազմությունը՝ առատությունը:

1. փոշի (տես՝ Ծննդ. 13:16; 28:14; Թվոց 23:10)
2. աստղեր (տես՝ Ծննդ. 15:5; 22:17; 26:4)
3. ավազ (տես՝ Ծննդ. 22:17 և 32:12)

12:3 համարի խոստումից և «քահանաների թագավորության» գաղափարից (տես՝ Ելից 19:5-6) մինչև Եսայի մարգարեությունները (տես՝ 42:6; 49:6; 51:4), Աբրահամի ընտանիքը ավելի էր մեծանալու, քան որևէ մեկը կարող էր երազել: Այն ներգարվելու էր հավատացյալ հեթանոսներին նույնպես (տես՝ Ղուկ. 2:32; Գործք 13:47; 26:23; Հռոմ. 2:28-29; 4; Գաղ. 3:7-9,29):

**15:6 «Եվ նա հավատաց ՏԻՐՈՋԸ»** Սա չի նշանակում, որ Աբրամը գլուխ 12-ում դեռ չէր հավատում, քանի որ նա թողեց Ուրը և հետևեց Աստծուն: Սակայն այստեղ «հավատալ» (BDB 52, KB 63, *Hiphil*

ՎԱՂԱԿԱՏԱՐ, որն արտահայտում է վստահության կյանքի իմաստ, ոչ թե պարզապես այս մի արարքը) տերմինը շատ արմատից է, որից էլ ստանում ենք «ամեն» բառը: Արմատը նշանակում է «ուժեղ լինել» կամ «հենվել վրան»: Արրահամը իր ամբողջ վստահությունը դրեց Աստծո խոստման վրա, որ ինքը սերունդներ է ունենալու: Դա առանց տեսնելու հավատքի քայլ էր (տես՝ 22:16,18; Եբր. 11:1): Արրամն Աստծո խոսքը լրջորեն հավատքով բռնեց՝ առանց ֆիզիկական երևույթի պահանջի: Սա չափազանց կարևոր է, քանի որ հենց սա է դառնում Պողոսի համար Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում հավատքի միջոցով շնորհքով արդարանալու փաստարկի հիմքը: Պողոսը նաև օգտագործում է Ամբ. 2:4-ը Հռոմ. 1:17; Գաղ. 3:11-ում և Եբրայեցիների հեղինակը՝ 10:38-ում: Կարծես թե այս տերմինի ամբողջ էությունն այս է. «Արրահամը հենվեց՝ ապավինեց ՅԱՀՎԵԻՆ և ոչ թե իր վրա»: Ծննդոցի ամբողջ այս բաժնում պարբերաբար շեշտադրվում է, որ Աստծո նախաձեռնող սերն է պահանջում մարդկանց փրկության համար և ոչ թե նրանց միջոցները: «Հավատաց» տերմինը անգլերենում կարող է թարգմանվել երեք բառով՝ հավատալ, վստահել և հավատք (տես՝ Ելից 4:5,31; 2 Օրինաց 1:32; 2 Մնաց. 20:20; Եսայի 43:10, կապված է Ես. 28:16-ում Մեսիայի հետ և վերաբերում է անհավատությանը Թվոց 14:11; 20:12; 2 Օրինաց 9:23; 4 Թագ. 17:14; Սաղմ. 78:22): Կարծես թե ՀԿ-յան այս տերմինի իմաստը գտնվում է «վստահություն» կամ «վստահելիություն» բառերի մեջ, որոնք մեր վրա չեն կենտրոնանում, այլ Աստծո և Իր խոստումների հավատարմության վրա:

Նկատեք, որ Արրամը հավատում է՝

1. Տիրոջը (անձնական փոխհարաբերություն)
2. Նրա Խոսքին (հիմնավորված հայտնություն)

Ինձ համար օգտակար է եղել աստվածաշնչյան հավատքն այսպես նկարագրել՝

1. հավատք անձի վրա (ՅԱՀՎԵ, Քրիստոս)
2. վստահություն այդ անձի վերաբերյալ ճշմարտությունների հանդեպ (Աստվածաշունչը)
3. այդ անձի պես կյանք ապրելը (ՀԿ հնազանդություն, Քրիստոսակերպություն)

Բոլոր երեքն էլ կարևոր են և ոչ թե այլընտրանքային տարբերակներ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ում (յճՃ)**  
**SPECIAL TOPIC: BELIEVE, TRUST, FAITH, AND FAITHFULNESS IN THE OLD TESTAMENT (յճՃ)**

**I. Բացման հայտարարություն՝**

Հարկ եմ համարում ասել, որ այս աստվածաբանական տերմինի կիրառությունը, որը չափազանց կարևոր է ՆԿ-ի համար, այնքան էլ հստակ չի սահմանվում ՀԿ-ում: Անշուշտ այս բառը այնտեղ առկա է, սակայն դիտարկվում է բանալի հանդիսացող ընտրված հատվածներում և անձանց մոտ:

ՀԿ միաձուլում է՝

1. անհատն ու համայնքն իրար հետ
2. անձնական փորձառությունը և ուխտի հնազանդությունը իրար հետ

Հավատքը թե՛ անձնական փորձառություն է, և թե՛ ամենօրյա ապրելակերպ: Ավելի հեշտ է այն նկարագրել անձի մեջ քան բառապաշարով (այսինքն՝ բառային սերտողությամբ): Այս անձնական ասպեկտը լավագույնս լուսարանվում է՝

1. Արրահամի և նրա սերնդի օրինակով
2. Դավթի և Իսրայելի օրինակով

Այս մարդիկ հանդիպեցին՝ վերապրեցին Աստծուն և նրանց կյանքերը մշտապես փոխվեցին (անկատար, սակայն հարատևող հավատքի կյանքեր): Փորձություններն ի հայտ բերեցին Աստծո հետ իրենց հավատքի վերապրումների տկարություններն ու առավելությունները, սակայն մտերմիկ, վստահության կապը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այդ հավատքը փորձվեց և գտվեց, սակայն շարունակեց մնալ նրանց նվիրումի և ապրելակերպի ապացույց:

**II. Կիրառվող հիմնական արմատը**

Ա. յճՃ (BDB 52)

1. ԲԱՅ

ա. *Qal* արմատը՝ աջակցել, սնուցել (այսինքն՝ 4 Թագ. 10:1,5; Եսթ. 2:7, աստվածաբանական կիրառությունից դուրս)

բ. *Niphal* արմատը՝ համոզվել կամ հաստատ իմանալ, հաստատել, հիմնավորել, հավատարիմ կամ վստահելի լինել՝

(1) մարդկանց՝ Եսայի 8:2; 53:1; Երեմ. 40:14

(2) իրերին՝ Եսայի 22:23

(3) Աստծուն՝ 2 Օր.7:9; Եսայի 49:7; Երեմ.42:5

c. *Hiphil* արմատը՝ հաստատ կանգնել, հավատալ, վստահել.

(1) Աբրահամը հավատաց Աստծուն՝ Ծննդ.15:6

(2) Եգիպտոսում Իսրայելացիք հավատացին՝ Ել. 4:31; 14:31 (բացասված՝ 2 Օր.1:32)

(3) Իսրայելացիք հավատացին, որ ՅԱՀՎԵն Մովսեսի միջոցով խոսեց իրենց՝ Ել.19:9; Սաղմ.106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն՝ Ես.7:9

(5) Ով որ հավատա նրան/դրան՝ Եսայի 28:16

(6) Հավատալ Աստծո վերաբերյալ ճշմարտություններին՝ Ես.43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (ԱՐԱԿԱՆ) – հավատարմություն (այսինքն՝ 2 Օր.32:20; Ես.25:1; 26:2)

3. ՄԱԿԲԱՅ – ճշմարտապես, ճշմարիտ, համամիտ եմ, թող այդպես լինի (տես՝ 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Ես.65:16; Երեմ.11:5; 28:6): Սա եկեղեցական «ամեն» բառի կիրառությունն է ՀԿ-ում և ՆԿ-ում:

Բ. ԽՁ (BDB 54) ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ՝ հաստատություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց՝ Ես.10:20; 42:3; 48:1

2. Աստծուն՝ Ելից 34:6; Սաղմ.117:2; Ես.38:18,19; 61:8

3. Ճշմարտությանը՝ 2Օր.32:4; 3Թագ.22:16; Սաղմ.33:4; 98:3; 100:5; 119:30; Երեմ.9:5; Չար.8:16

Գ. ԽՁ (BDB 53), հաստատություն, հարատևություն, նվիրվածություն

1. ձեռքերին՝ Ելից 17:12

2. ժամանակներին՝ Ես.33:6

3. մարդկանց՝ Երեմ.5:3; 7:28; 9:2

4. Աստծուն՝ Սաղմ.40:11; 88:12; 89:1,2,5,8; 119:138

III. Այս ՀԿ-յան հասկացության կիրառությունը Պողոսի կողմից՝

Ա. Պողոսը հիմնավորում է ՅԱՀՎԵի և ՀԿ-ի վերաբերյալ իր նոր հասկացությունը Դամասկոսի ճանապարհին Հիտուսի հետ ունեցած իր անձնական փորձառությանը (Գործք 9; 22; 26):

Բ. Նա ՀԿ-ի երկու կարևոր հատվածներից, որոնք օգտագործում են յՁ արմատը, գտավ հիմք իր այս նոր հասկացության համար.

1. Ծննդ.15:6 – Աստծո կողմից նախաձեռնած Աբրահամի անձնական փորձառությունը (Ծննդոց 12) պատճառ հանդիսացավ հավատքի հնագույնության կյանքի (Ծննդոց 12-22): Պողոսն այս մասին ակնարկում է Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում:

2. Եսայի 28:16 – նրանք, ովքեր հավատացին դրան (այսինքն՝ Աստծո կողմից փորձված և հաստատված անկյունաքարը) երբեք չեն՝

ա. Հռոմ.9:33, «մնա ամոթով» կամ «հիասթափվի»

բ. Հռոմ.10:11, վերը նշվածի պես

3. Ամբ. 2:4 – ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարմության կյանքով (տես՝ Երեմ.7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռոմ.1:17 և Գաղ.3:11-ում (նաև՝ Եբր.10:38):

IV. Այս ՀԿ-յան հասկացության կիրառումը Պետրոսի կողմից.

Ա. Պետրոսը համադրում է՝

1. Ես.8:14 – 1 Պետ.2:8 (գորման վեճ քար)

2. Ես.28:16 – 1 Պետ.2:6 (անկյունաքար)

3. Սաղմ.118:22 – 1 Պետ.2:7 (անարգված քար)

Բ. Նա դիմում է յուրօրինակ լեզվի, որը նկարագրում է Իսրայելին՝ «ընտրյալ ժողովուրդ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդ», վերցնելով՝

1. 1 Օր.10:15; Ես.43:21

2. Ես.61:6; 66:21

3. Ելից 19:6; 2 Օր.7:6

և հիմա կիրառվում է Քրիստոսի վրա եկեղեցու ունեցած հավատքի համար (1 Պետ. 2:5,9):

V. Այս հասկացության կիրառումը Հովհաննեսի կողմից.

Ա. ՆԿ-յան կիրառությունը

«Հավատացին» տերմինը հունարենի (*pisteuō*) տերմինից է, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ Հովհաննեսի

Ավետարանում չի հանդիպում, սակայն ԲԱՅԸ հաճախ է օգտագործվում: Հովհաննես 2:23-25-ում Հիսուս Նագովրեցու հանդեպ, որպես Մեսիայի, ամբոխի ցուցաբերած նվիրումի մեջ անկեղծության անորոշություն կա: «Հավատալ» տերմինը մակերեսորեն կիրառելու այլ օրինակներից են՝ Հովհ.8:31-59 և Գործք 8:13, 18-24: Իրական աստվածաշնչյան հավատքը ավելին է, քան ներքին արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ.13:20-22,31-32):

Բ. ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ Կիրառությունը

1. *eis* նշանակում է /դեպի/ «մեջ»: Այս յուրօրինակ քերականական կառուցվածքը շեշտադրում է հավատացյալների հավատքը՝ վստահությունը, որ դնում են Հիսուսի մեջ՝ ա. Նրա անվան մեջ (Հովհ.1:12; 2:23; 3:18; 1 Հովհ.5:13)
- բ. Նրա մեջ (Հովհ.2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45, 48; 12:37,42; Մատթ.18:6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ.1:8)
- գ. Իմ մեջ (Հովհ.6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
- դ. Որդու մեջ (Հովհ.3:36; 9:35; 1 Հովհ.5:10)
- ե. Հիսուսի մեջ (Հովհ.12:11; Գործք 19:4; Գաղ.2:16)
- զ. Լույսի մեջ (Հովհ.12:36)
- է. Աստծո մեջ (Հովհ.14:1)
2. *en* նշանակում է «մեջ», ինչպես Հովհ.3:15; Մարկ.1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա» ինչպես Մատթ.27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռոմ.4:5, 24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ.2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ, ինչպես Գաղ.3:6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ. 3:23; 5:10
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ որ» տալիս է այն բովանդակությունը, թե ինչին հավատալ՝
  - ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ.6:69)
  - բ. Հիսուսը ԵՍ ԵՄն է (Հովհ.8:24)
  - գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ.10:38)
  - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ.11:27; 20:31)
  - ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ.11:27; 20:31)
  - զ. Հիսուսը ուղարկվել է Հոր կողմից (Հովհ.11:42; 17:8,21)
  - է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ.14:10-11)
  - ը. Հիսուսը Հորից եկավ (Հովհ.16:27,30)
  - թ. Հիսուսը իրեն հավասարեցրեց Հոր ունեցած Ուխտի անվան հետ՝ «ԵՍ ԵՄ» (Հովհ.8:24; 13:19)
  - ժ. Մենք նրա հետ ենք ապրելու (Հռոմ.6:8)
  - ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ. 4:14)

IV. Եզրակացություն.

Ա. Աստվածաշնչյան հավատքը պատասխանն է աստվածային խոսքին՝ խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (այսինքն՝ Հովհ.6:44,65), սակայն այս աստվածային կապի մի մասը մարդկանց կողմից պատասխանելու անհրաժեշտությունն է (տես՝ Հատուկ Թեմա . Ուխտ)՝

1. ապաշխարությամբ (տես՝ Հատուկ Թեմա . Ապաշխարություն)
2. հավատքով՝ վստահությամբ (տես՝ Հատուկ Թեմա . Հավատք, հավատալ կամ վստահել)
3. հնազանդությամբ
4. հարատևությամբ (տես՝ Հատուկ Թեմա . Հարատևություն)

Բ. Աստվածաշնչյան հավատքը դա՝

1. անձնական փոխհարաբերություն է (ներքին հավատք)
2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատումն է (հավատք Աստծո հայտնության վրա, այսինքն՝ Սուրբ Գիրքը)
3. պատշաճ հնազանդ պատասխան Խոսքին (ամենօրյա հավատարմություն)

Աստվածաշնչյան հավատքը երկնքի տոմս չէ կամ էլ ապահովագրության միջոց: Այն անձնական փոխհարաբերություն է: Սա է արարչագործության և մարդկության Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու նպատակը (տես՝ Ծննդ.1:26-27): Իսնդիրը «մտերմությունն» է: Աստված ցանկանում է հաղորդակցություն և ոչ թե ինչ-որ աստվածաբանական մոտեցումներ: Բայց սուրբ Աստծո հետ հաղորդակցությունը պահանջում է, որ Աստծո զավակները ցուցաբերեն «ընտանեկան» վարքագիծ (այսինքն՝ սրբություն, տես՝ Ղևտ.19:2; Մատթ.5:48; 1 Պետ.1:15-16): Անկումը (տես՝ Ծննդոց 3)

ազդեց մեր ճիշտ կերպով արձագանքելու կարողության վրա: Հետևաբար, Աստված մեր կողմից գործեց (տես՝ Եզեկ.36:27-38), մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի» տալով, որը մեզ հնարավորություն է տալիս Նրա հետ հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել և հնազանդվել:

Բոլոր երեքն էլ կարևոր են: Բոլոր երեքն էլ պետք է պահպանվեն: Նպատակը Աստծուն ճանաչելն է (թե՛ հունարեն և թե՛ եբրայերեն իմաստով) և Նրա բնավորությունը մեր կյանքում արտացոլելը: Հավատքի նպատակը ինչ-որ մի օր երկինք հասնելը չէ, այլ ամեն օր Քրիստոսի նման լինելը:

Գ. Մարդկային հավատարմությունը Աստծո հետ փոխհարաբերության հետևանքն է (ՆԿ) և ոչ թե հիմքը (ՀԿ). մարդկության հավատքը Նրա հավատարմությանը, մարդկության վստահությունը Նրա վստահելիությանը: Փրկության վերաբերյալ ՆԿ-ի կենտրոնական կարծիքն այն է, որ մարդիկ պետք է նախաձեռնող Աստծո՝ Քրիստոսի միջոցով ցուցաբերված շնորհքին և ողորմությանը սկզբից պատասխանեն և հարատևեն դրա մեջ: Նա է սիրել, Նա է ուղարկել, Նա է ապահովել, իսկ մենք պետք է պատասխանենք հավատքով և հավատարմությամբ (տես՝ Եփ.2:8-9 և 10):

Հավատարիմ Աստված ուզում է հավատարիմ ժողովուրդ, որպեսզի Իրեն հայտնի անհավատ աշխարհին և նրանք անձնապես հավատան Իրեն:

❖ **«և Նա նրա կողմից համարեց սա» «Համարեց»** (BDB 362, KB 359, *Qal* ԱՆԿԱՏԱԲ) կարող է նշանակել «հաշվել» կամ «ենթադրել»: Այն բավականին հաճախ է կիրառվում զոհաբերությունների հետ կապված քահանաների կողմից (տես՝ Ղևտ.7:18; 17:4 և Թվոց 18:27): Երբ մարդը զոհ էր բերում քահանայի մոտ, այդ զոհը հաշվվում կամ համարվում էր այդ անձի փոխարեն: Աստված Աբրամին համարեց Իր սեփական արդարությունը, հետևաբար կատարելապես ընդունեց նրան:

❖ **«որպես արդարություն»** Այս տերմինը (BDB 842) բնագրում սկզբնապես նշանակում էր «չափման եղեգ» և ուստի սկսել է վերաբերել ստանդարտ չափորոշիչների: Աստված Ինքն է այդ չափման ստանդարտը, հետևաբար եբրայերեն և հունարեն «մեղք»-ի համար օգտագործվող բառերից շատերը նշանակում են Աստծո արդարության ստանդարտից շեղում: Այս տերմինը իր իմաստային առումով կատարելագործվել է՝

1. այն նշանակում էր Աստծո բարոյական բնությունը, որը հնարավոր է պարզ տեսնել ութերորդ դարի Մարգարեների գրքերում:
2. այն սկսեց նշանակել Աստծո օգնությունը անօգնականներին (տես՝ Սաղմ. 10:16-18 և 72:12): Այս գաղափարը ավելի ուշ զարգացավ Հիսուսի օրոք ողորմություն տալով (տես՝ Մատթ. 6:1):
3. «Արդարություն» տերմինի վերջին հիմնական կիրառությունը վերաբերում է հոգևոր փրկությանը: Այս մասին հատկապես նշված է Եսայի 40-55-ում և ՆԿ-ում Պողոսի կիրառությամբ: Պողոսն Աստծո արդարության մասին խոսում է հիմնվելով միայն Աստծո նախաձեռնող սիրո և հավատքի մեր պատասխանի վրա՝ Հռոմ. 4:3 և Գաղ. 3:6:
4. կարող ենք տեսնել այս տերմինի պարբերաբար կիրառությունը Հակ. 2:14-16-ում:

Այստեղ այս բառը կիրառվում է ոչ թե «անմեղության» իմաստով, այլ որ Աբրամի վստահությունը ՅԱՀՎԵԻ խոստումներին դուռ էին բացել շարունակվող վստահելի, հավատարիմ փոխհարաբերության համար: Սա ՅԱՀՎԵԻՆ վստահելու Աբրամի կողմից կատարած առաջին (կամ վերջին) քայլը չէր: Աբրամն ընդունելով ՅԱՀՎԵԻ նախաձեռնած խոստումները, թույլ տվեց Նրան զարգացնել և խորացնել մտերմիկ փոխհարաբերություն:

## **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS**

«Արդարությունը» այնպիսի կենսականորեն կարևոր թեմա է, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր ուսանող այս թեմայի շուրջ պետք է կատարի անձնական մանրակրկիտ սերտողություն:

ՀԿ-ում Աստծո բնավորությունը նկարագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (ԲԱՅ, BDB 842, KB 1003. ԱՐԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 841, KB 1004, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 842, KB 1006): Միջագետքյան այս տերմինը ծագել է «գետի եղեգից», որը գործածվում էր որպես շինարարական գործիք՝ ստուգելու պատերի և ցանկապատերի հորիզոնական հարթության ճշգրտությունը: Աստված ընտրեց այս տերմինը փոխաբերական իմաստով՝ Իր սեփական էությունը բնութագրելու

համար: Նա ուղիղ է, Ուն միջոցով կարելի է բոլոր բաները չափել: Այս հասկացությունը հաստատում է Աստծո արդարությունը, ինչպես նաև դատաստանի մեջ Նրա արդարացիությունը շիտակությունը:

Մարդն Աստծո պատկերով ստեղծվեց (տես՝ Ծննդ.1:26-27; 5:1,3; 9:6): Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ փոխհարաբերվելու համար (այսինքն՝ Ծննդ. 3:8): Ամբողջ արարչագործությունը Աստծո և մարդկության շփման համար հանդիսանում է բեմ կամ հետին տեսարան՝ ֆոն: Աստված կամենում էր, որ Իր գլուխգործոցը՝ մարդը, ճանաչի, սիրի, ծառայի Իրեն և լինի Իր նման: Մարդու ազնվությունը փորձվեց՝ ստուգվեց (տես՝ Ծննդոց 3) և առաջին գույգը ձախողեց այս ստուգարքը: Արդյունքում Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը խզվեց (տես՝ Հռոմ. 5:12-21):

Աստված խոստացավ վերականգնել և վերսկսել այդ փոխհարաբերությունը (տես՝ Ծննդ.3:15, տես՝ Հատուկ Թեմա . ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը): Նա դա արեց Իր կամքով, Իր իսկ Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել այդ ճեղքումը (տես՝ Հռոմ.1:18-3:20, Հայտնություն 5):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար եղավ ուխտի գաղափարը՝ հիմնված Իր հրավերի և մարդու գղջացող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա (տես՝ Երեմ. 31:31-34; Եզեկ. 36:22-38): Անկման պատճառով, մարդիկ անկարող էին նույնիսկ ճիշտ գործողություններին (տես՝ Հռոմ.3:21-31; Գաղատացիների 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը վերցնեի Իր ձեռքը, որպեսզի վերականգնեի ուխտադրույթ մարդկանց: Նա դա արեց՝

1. մարդկությանը հռչակելով արդար՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ դատական արդարություն):
2. մարդկությանը ձիրաբար տալով արդարություն՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ վերագրված արդարություն):
3. ապահովելով Մուրբ Հոգու բնակությունը մեր մեջ, որը մարդու մեջ արդարության պտուղն է տալիս (այսինքն՝ Քրիստոսակերպությունը՝ Աստծո պատկերի վերականգնումը):
4. վերականգնելով Եդեմի Պարտեզում ունեցած փոխհարաբերությունը (համեմատեք Ծննդոց 1-2-ը Հայտնություն 21-22-ի հետ)

Այնուամենայնիվ, Աստված պահանջում է կտակին՝ ուխտին համապատասխան արձագանք: Աստված դնում է օրենքները (այսինքն՝ ձրիաբար տալիս է. այսինքն՝ Հռոմեացիներ 5:8; 6:23) և ապահովում, իսկ մարդիկ պետք է պատասխանեն և շարունակեն պատասխանել՝

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդության ապրելակերպով
4. հարատևությամբ

Հետևաբար, արդարությունը Աստծո և Իր արարչագործության գլուխգործոցի միջև եղած ուխտի, փոխադարձ գործողություն է: Աստծո բնավորության, Քրիստոսի կատարած գործի և Մուրբ Հոգուց տված կարողության հիման վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես և հարատևորեն ճիշտ կերպով արձագանքի: Այս հասկացությունը կոչվում է «հավատքով արդարացում» (այսինքն՝ Եփես. 2:8-9): Այն արձարծվում է Ավետարաններում, սակայն ոչ այս տերմինաբանությամբ: Հիմնականում այն սահմանվում է Պողոսի կողմից, որը 100 անգամից ավելի գործածում է հունարեն «արդարություն» տերմինը իր բազմաթիվ տարբերակներով:

Պողոսը, որպես ուսյալ ռաբբի, գործածում է *dikaionē* տերմինը Սեպտուագինտայում կիրառվող եբրայերենի *tsaddiq* տերմինի միևնույն իմաստով, և ոչ թե հունական գրականությունից: Հունական գրականության մեջ այս տերմինը կապված է այն անձնավորության հետ, որը հարմարվում է Աստվածության և հասարակության սպասումներին՝ ակնկալիքներին (այսինքն՝ Նոյը, Հորը): Եբրայերենում այս տերմինը մշտապես հանդիպում ենք ուխտի հետ առնչվող տերմինների գործածությամբ (տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ): ՅԱՀՎԵՆ արդար, բարեհամբույր, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը: Փրկված մարդկությունը դառնում է նոր արարած (տես՝ 2 Կորնթ. 5:17; Գաղ. 6:15): Նոր արարած լինելը պատճառ է հանդիսանում աստվածահաճո նոր ապրելակերպի (տես՝ Մատթեոս 5-7; Գաղ. 5:22-24; Հակոբոս, 1 Հովհաննես): Քանի որ Իսրայելը աստվածապետություն էր, գոյություն չունեի հստակ սահմանագատում աշխարհիկի (հասարակական նորմերի) և հոգևորի (Աստծո կամքի) միջև: Այս



տարբերությունը արտահայտվում է երբայերեն և հունարեն տերմինների միջոցով, որոնք թարգմանվում են անգլերենում որպես «արդարացիություն» (հասարակության հետ առնչվող) և «արդարություն» (կրոնի հետ առնչվող):

Հիսուսի Ավետարանը (բարի լուրը) անկում ապրած մարդկության Աստծո հետ փոխհարաբերության մեջ վերականգնված լինելն է: Սա ի կատար ածվեց Հոր սիրո, ողորմության և շնորհի միջոցով. Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով. և Սուրբ Հոգու մեզ հետամուտ լինելու և ավետարանին մոտեցնելու միջոցով: Արդարացումը Աստծո կողմից մեզ տրված ձրի պարգև է, սակայն դրա արդյունքը պետք է լինի աստվածապաշտությունը (սա Օգոստինոսի տեսակետն է, որը ներկայացնում է Ռեֆորմացիայի կողմից ավետարանի ձրի լինելու կարևորումը և Հռոմի Կաթոլիկների կողմից՝ սիրո և հավատարմության փոխված կյանքի կարևորումը): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն», տերմինը ՕԲՅԵԿՏԻՎ ՍԵՌՎԱԿԱՆ հոլով է (այսինքն՝ մեղավոր մարդկության Աստծուն ընդունելի դարձնելու գործողությունը /վերջնական արդարացում/), մինչ Կաթոլիկների համար այն ՍՈԲՅԵԿՏԻՎ ՍԵՌՎԱԿԱՆ հոլով է, որը ավելի Աստծո նման դառնալու գործընթաց է /փորձառական պրոգրեսիվ արդարացում/: Իրականում իհարկե դրանք երկուսը միասին են:

Իմ կարծիքով ամբողջ Սուրբ Գիրքը, սկսած Ծննդոց 4 - Հայտնություն 20, Աստծո Եղևի պարտեզում ունեցած փոխհարաբերության վերականգնման արձանագրություն է: Աստվածաշունչը սկսվում է Աստված և մարդ փոխհարաբերությամբ՝ սկզբնական միջավայրում (տես՝ Ծննդոց 1-2) և վերջանում է միևնույն միջավայրով (տես՝ Հայտնություն 21-22): Աստծո պատկերն ու նպատակը վերականգնվելու է:

Վերը նշված քննարկումները փաստագրելու համար նկատի ունեցեք հետևյալ ՆԿ-յան հատվածները, որոնք լուսաբանում են այս տերմինի հունարեն բառախումբը.

1. Աստված արդար է (հաճախ առնչվող Աստծո դատավոր լինելու հետ)
  - ա. Հռոմեացիս 3:26
  - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1:5-6
  - գ. 2 Տիմոթեոս 4:8
  - դ. Հայտնություն 16:5
2. Հիսուսն արդար է.
  - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի անունը)
  - բ. Մատթեոս 27:19
  - գ. 1 Հովհաննես 2:1,29; 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարություն է.
  - ա. Ղևտացիների 19:2
  - բ. Մատթեոս 5:48 (տես՝ 5:17-20)
4. Աստծո միջոցները արդարությունն իրականացնելու և ապահովելու համար.
  - ա. Հռոմեացիներին 3:21-31
  - բ. Հռոմեացիներին 4
  - գ. Հռոմեացիներին 5:6-11
  - դ. Գաղատացիներին 3:6-14
5. Աստծուց տրված՝
  - ա. Հռոմեացիներին 3:24; 6:23
  - բ. 1 Կորնթացիներին 1:30
  - գ. Եփեսացիներին 2:8-9
6. Հավատքով ընդունված՝
  - ա. Հռոմեացիներին 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
  - բ. 2 Կորնթացիներին 5:21
7. Որդու գործերի միջոցով՝
  - ա. Հռոմեացիներին 5:21
  - բ. 2 Կորնթացիներին 5:21
  - գ. Փիլիպեցիներին 2:6-11
8. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն՝
  - ա. Մատթեոս 5:3-48; 7:24-27
  - բ. Հռոմեացիներին 2:13; 5:1-5; 6:1-23

զ. Եփեսացիներին 1:4; 2:10

դ. 1 Տիմոթեոս 6:11

ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16

զ. Հովհաննես 3:7

է. 1 Պետրոս 2:24

9. Աստծո կամքն է, որ արդարությամբ դատի աշխարհը՝

ա. Գործք 17:31

բ. 2 Տիմոթեոս 4:8

Արդարությունը բնորոշ է Աստծուն, որը Քրիստոսի միջոցով ձրի տրվել է մեղավոր մարդկությանը որպես՝

1. Աստծո պատվերը

2. Աստծո պարզևը

3. Քրիստոսի գործը

4. ապրելակերպը

Սակայն այն նաև իրենից ներկայացնում է արդար դառնալու գործընթաց, որին պետք է հարատևությամբ և վճռականությամբ հետամուտ լինել, և որը իրականում կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ փոխհարաբերությունը վերականգնված է փրկությամբ, սակայն զարգանում է մեր ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի դառնա մահվան կամ *Parousia* հետ դեմ-առդեմ իրադարձություն (տես՝ 1 Հովհ. 3:2):

Այս քննարկումն ամփոփելու համար ահա մի գեղեցիկ մեջբերում: Այն վերցված է *Պողոսի Բառադանը և Նրա Նամակները* IVP /*Dictionary of Paul and His Letters from IVP*/ գրքից:

«Կավիներ, ավելի քան Լյուծերը, շեշտադրում է Աստծո արդարության ռացիոնալ առանձնահատկությունը: Լյուծերի տեսակետը Աստծո արդարության վերաբերյալ կարծես թե պարունակում է արդարացման առանձնահատկությունը: Կավիները շեշտադրում է Աստծո արդարության մեզ փոխանցելու կամ հաղորդելու զարմանահիշաշ բնույթը» (էջ 834):

Ինձ համար Աստծո հետ հավատացյալի փոխհարաբերությունը ունի երեք կետ.

1. Ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցու և Կավիների շեշտադրումը)
2. Ավետարանը ճշմարտությունն է (Օգոստինոսի և Լյուծերի շեշտադրումը)
3. Ավետարանը փոխված կյանքն է (Կաթոլիկների շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճիշտ են և պետք է միավորվեն առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան Քրիստոնեության համար: Դրանցից որևէ մեկը գերազնահատվելու կամ թերազնահատվելու դեպքում ի հայտ կգան խնդիրներ:

Մենք պետք է ընդունենք Հիսուսին:

Մենք պետք է հավատանք Ավետարանին:

Մենք պետք է հետամո՛ւտ լինենք Քրիստոսակերպությանը:

**15:7 «Ես եմ ՏԵՐԸ»** Սա ՅԱՀՎԵ բառն է՝ հատուկ Աստծո ուխտի անունը: Տե՛ս Հատուկ Թեմա 12:1:

❖ **«որ քեզ քաղղեացիների Ուր քաղաքից հանեցի»** Որոշ հակասություն կա այն վայրի հետ կապված, թե որտեղ Աստված առաջինը խոսեց Աբրամի հետ: Դա տեղի ունեցավ կա՛մ Ուր քաղաքում, կա՛մ էլ՝ Խառանում: Համեմատե՛ք Ծննդ. 11:31-12:1-ը Նեեմ. 9:7 և Գործք 7:2-ի հետ: Ոմանք նույնիսկ փորձում են պնդել, որ Աստված խոսեց Թարայի՝ Աբրամի հոր հետ Ուրում, իսկ Աբրամի հետ՝ Խառանում, սակայն կարծում են, որ սա անհիմն կարծիք է: Իհարկե հնարավոր է, որ հայտնությունը եկել է թե՛ Ուր և թե՛ Խառան քաղաքներում: Նաև, այս հարցի շուրջ կուզեի նշել, թե ինչքան ճշգրտորեն են Ծննդոց և Բ Օրինաց գրքերը համապատասխանում Բ. Ա. երկրորդ հազարամյակի մշակույթի հետ, հատկապես Քետացիների դաշնագրային բանաձևերը: Պատմական այս փաստաթղթերը՝ Նուզի և Մարի Արձանագրությունների հետ միասին, ցույց են տվել, թե հհ. 2,17 և 16:2 մշակույթներն ինչքան համապատասխան են տվյալ օրերին: Նահապետների պատմականությունը հաստատվել է այս վերջին շրջանում կատարված հնագիտական հայտագործությունների միջոցով:

Ինչպես շատ հաճախ, Ծննդոցի այս առաջին գլուխներում կիրառված են քաղաքների և երկրների հետագա անունները: Քաղաքացիներ անունը չի օգտագործվում Միջագետքի մարդկանց համար (այսինքն՝ հարավային Բաբելոնը) մինչև Ք.Ա. վեցերորդ դարը: Իսրայելացի դպիրները սովորում էին Եգիպտոսում, որտեղ դպիրները ազատ էին զգում խմբագրելու իրենց կրկնօրինակվող տեքստերը (Միջագետքի դպիրները այդպես չէին վարվում):

**15:8 «ինչպե՛ս իմանամ, թե ես այն կժառանգեմ»** Աբրամը, որի հավատքը արդարություն էր համարվել իրեն հ.6-ում, այժմ արտահայտվում է, որ կարիք ունի հաստատության (տես՝ հհ.2-3): Աստվածաբանորեն սա կարևոր է: Աստված ընդունեց Աբրամին ոչ թե իր կատարյալ հավատքի համար, այլ Աստծո կատարյալ սիրո համար: Աստված ընդունեց նրան նույնիսկ իր կասկածների մեջ, և մեզ համար նույնպես այդպես է անում (տես՝ Հովհ.20:24-29): Աբրամը ծառայում էր ավելի մեծ աստվածաբանական նպատակի (այսինքն՝ փրկության պարադիգման):

**15:9** Աբրամին հրամայված էր (BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) մի քանի կենդանիներ գոհարելով:

1. մի երեք տարեկան երինջ
2. մի երեք տարեկան այծ
3. մի երեք տարեկան խոյ
4. մի տատրակ
5. մի աղավնու ձագ

Թե ինչու են հատուկ այս կենդանիները ընտրվել՝ հայտնի չէ: Դրանք հետագայում նշվում են մովսիսական օրենսդրության մեջ, որտեղից կարելի է եզրակացնել, որ դրանք ունեին մշակութային նշանակություն, որը մենք լիովին չենք հասկանում: Հ.10-ում դրանք՝ բացի թռչուններից, կիսվում են մեջտեղից և դրվում իրար առջև: Սա ուխտի «խազան» մշակութային սահմանված կարգ էր (տես Հատոկի Թեմա 13:14, տես՝ Երեմ.34:18): Ոմանք ենթադրում են, որ կենդանում մահը զգուշացման մի միջոց է ուխտի մաս կազմող անձաց համար այն քանի, թե ինչ տեղի կունենա նրանց հետ, եթե նրանք խախտեն ուխտի պայմանները: Այնուամենայնիվ, սա անորոշ է:

**15:11 «կտրված դիերի վրա գիշատիչ թռչուններն իջան»** Շատ քննարկումներ են եղել տարբեր մեկնաբանների միջև, թե ինչու է հ.11-ը արձանագրվել: Ահա մի քանի տեսություններ՝

1. դրանք խորհրդապատկերում են Աբրամի կասկածները
2. դրանք խորհրդապատկերում են Իսրայելի թշնամիներին (տես՝ Եզեկ.17:3,7,12)
3. մի քանի ժամ տևեց այն ընթացքը մինչև Աստված հայտնեց Իրեն և սա պարզապես այս դեպքի պատմականության մի նշան է համարվում (այսինքն՝ մեռած կենդանիների ամկայությունը պատճառ հանդիսացավ, որ գիշատիչ թռչուններ հայտնվեն):

Ինձ համար, քանի որ ես շատ անհանգստություններ ունեմ կապված այնպիսի փոխաբերությունների և տիպաբանությունների հետ, որոնք հատկապես չեն նշվում ՆԿ-ում, երրորդ կետը լավագույն տարբերակն է: Ուշադրություն դարձրեք, որ այս գոհերը չայրվեցին: Սա ուխտի ծիսակարգ էր և ոչ թե գոհընծայում:

❖ **«Աբրամը քշեց նրանց»** Շատ տարօրինակ է թվում, որ այստեղ պետք է կիրառվեր եբրայերեն, «փչեց նրանց» (BDB 674, KB 728, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) ԲԱՅԸ: Այս այլաբանությունը հաճախ կիրառվում էր Աստծո գործողությամբ (տես՝ Սաղմ.147:18; Եսայի 40:7), սակայն սա ինչպես էր կապված Աբրամի գործողության հետ՝ հայտնի չէ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:12-16**

<sup>12</sup>Եվ երբ արևը մայր էր մտնում, Աբրամի վրա մի խոր քուն իջավ, և ահա նրա վրա մի մեծ խավարի սոսկում ընկավ: <sup>13</sup>Եվ ՏԵՐՆ ասաց Աբրամին. «Ստույգ իմացի՛ր, որ քո սերունդը մի երկրում, որ իրենցը չէ, պանդուխտ է լինելու, և ծառայություն կանեն, և նրանց չորս հարյուր տարի կչարչարեն, <sup>14</sup>իսկ այն ազգին, որին ծառայելու են, Ես կդատեմ. և դրանից հետո մեծ ունեցվածքով դուրս կգան: <sup>15</sup>Եվ դու խաղաղությամբ քո հայրերի մոտ կգնաս. խոր ծերության մեջ կթաղվես: <sup>16</sup>Բայց չորրորդ սերունդն այստեղ կվերադառնա, որովհետև ամորհացիների անօրենությունը դեռ իր լուծին չի հասել»:

**15:12 «Եվ երբ արևը մայր էր մտնում»** Սա վերաբերում է նոր օրվա մեկնարկին (տես՝ Ծննդ. 1:5): Թե ինչքան ժամանակ այս տեսիլքը տևեց, ճշգրիտ հայտնի չէ, սակայն հնարավոր է, որ տևել է երկու գիշեր և մի օր (տես հ. 1գ գրառումը):

❖ **«Աբրամի վրա մի խոր քուն իջավ»** Սա երբայերենում միևնույն արտահայտությունն է (BDB 922), որը օգտագործվում է Աստված Եվային ստեղծելիս Ադամի կողերից մեկը վերցնելու համար նրա վրա խորը քուն բերելիս (տես՝ Ծննդ. 2:21): Այս ԲԱՅԸ ակնարկում է աստվածային նախաձեռնությամբ անգիտակից վիճակի հանգեցնելուն՝ հայտնության պատրաստության համար (տես՝ Հոր 4:13; 33:15):



<b>NASB</b>	<b>«սոսկում և մեծ խավար»</b>
<b>NKJV</b>	<b>«ահ և մեծ խավար»</b>
<b>NRSV</b>	<b>«մի խոր և սոսկալի խավար»</b>
<b>TEV</b>	<b>«վախ և սոսկում»</b>
<b>NJB</b>	<b>«խոր ու խավարի ահ»</b>

«Սոսկում» տերմինը (BDB 33, KB 41) նշանակում է ահ, սարսափ, վախ, երկյուղ: Հանախ այն օգտագործվում է Աստծո սոսկման վերաբերյալ բանաստեղծական հատվածներում:

1. թշնամիների հանդեպ՝ Ելից 15:16; 23:27
2. Հորի հանդեպ՝ 9:34; 13:21
3. Իսրայելի հանդեպ՝ 2 Օրինաց 32:25; Սաղմ. 88:16

«Խավար» տերմինը (ܢܚܘܐ, BDB 365, KB 362 և դրա հետ առնչվող արմատը ܢܚܘ) կապված է՝

1. տիեզերական խավարի հետ՝ Ծննդոց 1:2
2. Ելիցի պատուհասներից մեկի հետ՝ Ելից 10:21
3. մահվան, սանդարամետի հետ՝ Սաղմ. 139:7-12
4. աղետի՝ Հոր 15:22-30; 20:26; Ես. 8:22; 50:10
5. Աստծո ծածուկ լինելու՝ Սաղմ. 18:11
6. հայտնության պակասի՝ Միքիա 3:6

Կրկին, այս արտահայտության շուրջ եղել են մի քանի մեկնություններ՝

1. որ չնայած Աստծո խոստումները հրաշալի էին, դրանց իրականացումը իրենից ներկայացնում է երկար, դժվարին ճանապարհ
2. որ մարդիկ միշտ էլ սպառվում են Աստծո տված ապագայի հայտնությունների համար. այդպես է եղել նաև Դանիելի և ուրիշ շատ մարգարեների հետ:
3. որ Աստված է մոտենում, որը միշտ էլ ահարկու է եղել (տես՝ Հոր 4:12-21):

**15:13 «Ստույգ իմացի՛ր, որ քո սերունդը մի երկրում, որ իրենցը չէ, պանդուխտ է լինելու»** «Ստույգ իմացի՛ր» արտահայտությունը հանդիսանում է միևնույն արմատի (BDB 393, KB 390)՝ «իմանալ», ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՐՁԱԿԻ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԻ համադրության արդյունք, որը քերականորեն շեշտադրում արտահայտելու կերպ է: ՅԱՀՎԵՆ պատասխանում է Աբրամի հարցին հ. 8-ում: Աբրամի մեջ դեռևս կա հավատքի և կասկածի պայքարը: Դա չի վիրավորում Աստծուն:

Ուշադրություն դարձրե՛ք, որ Եգիպտոսի երկիրը հատուկ չի նշվում: «Պանդուխտներ» տերմինը նշանակում է «գաղթականներ» (BDB 158) կամ մարդիկ, որոնք ունեն սահմանափակ իրավունքներ, քանի որ չեն հանդիսանում որևէ ազգի քաղաքացիներ: ՅԱՀՎԵՆ կանխատեսում է եգիպտական ապագան՝ փորձառությունը: Աստծուն հավատալ չի նշանակում հեշտ կյանք ունենալ: Աստծո խոստումները ուշանում են և հանախ սխալ հասկացվում, սակայն հավատքը մնում է:

❖ **«և ծառայություն կանեն, և նրանց չորս հարյուր տարի կչարչարեն»** Այս համարում, որը նշվում է Գործք 7:6-ում Ստեփանոսի քարոզի մեջ և Ելից 12:40-ում կարծես թե հակասություն կա, որը նշում է 430 թիվը և մեջբերում է կատարում Պոդոսը Գաղ. 3:17-ում: Սեպտուագիտան և Սամարիական Հնգամատյանը ընդունում են այս 430 տարվա ժամանակաշրջանը Նահապետների պանդիտության շրջան թե՛ Քանանում և թե՛ Եգիպտոսում: Հնարավոր է, որ 400 թիվը պարզապես ամբողջացված թիվ է: Ռաբբիներն ասում են, որ այն սկսում է Իսահակի ծնունդից մինչև Ելից: Պետք է նշել, որ հ. 16 արձանագրում է չորրորդ սերունդը և, ըստ մեր լավագույն հաշվարկների այդ շրջանը հենց ճիշտ այդքան է տևել:

**15:14 «Իսկ այն ազգին, որին ծառայելու են, Ես կդատեմ . և դրանից հետո մեծ ունեցվածքով դուրս կգան»** Սա լիովին իրականանում է Ելից 3:22 և 12:35-56-ում: Այս ունեցվածքը բաղկացած էր ոսկուց,

արծաթից, բրոնզից և գարդերից, որոնք օգտագործվեցին խորանը և իր կահույքը շինելիս (տես՝ Ելից 25-40):

Այս տեքստը չի կարող կիրառվել հաստատելու, որ հավատքի արդյունքը միշտ հարստություն է: Սկզբում բարգավաճումը ազգերին դեպի ՅԱՀՎԵՆ գրավելու միջոց է եղել: Սակայն, շեշտադրումը երբեք էլ չի եղել բարգավաճման վրա, այլ՝ հավատքի փոխհարաբերության: Իմ սիրելի մեկնաբաններից մեկը՝ Գորդոն Ֆիին, լինելով խարիզմատիկ, հերքում է տեքստային ապացույցի կիրառությամբ, ինչպիսին որ այս մեկն է, «առողջության, հարստության, բարգավաճման» ավետարանի քարոզչությունը: Նրա գրքույկը իրոք ներթափանցող է (տես՝ *Առողջության և Հարստության Ավետարանների Հիվանդությունը*):

**15:15 «Եվ դու խաղաղությամբ քո հայրերի մոտ կգնաս»** «Խաղաղություն» (BDB 1022) երբայերեն տերմինն արտահայտում է կյանքի և Աստծո հետ մրցակցություն (տես հաջորդող Հատուկ Թեման): Աստված Աբրահամին խոստանում է, որ նա ապրելու է մինչև խոր ծերություն և մահանալու է թեթև մահով: Նաև հարց է առաջանում, թե ինչ է նշանակում «հայրերի մոտ գնալ» խոսքը: Ըստ երևույթին դա ակնարկում է *Շեոլ* (տես՝ 2 Օր.32:50), սակայն ոմանց համար զարմանալի հարց է առաջանում, թե արդյոք *Շեոլում* ընտանիքները միասին են հավաքվում: Հնարավոր է սա այնքան էլ չի համապատասխանում այս հատվածի հետ, քանի որ Աբրահամի ծնողները ՅԱՀՎԵԽԱՍ չէին, և հետևաբար, հնարավոր է գտնվեին *Դժոճի* կամ *Շեոլի* մեկ այլ մասում: Մեզ համար անհայտ է հանդերձյալ կյանքը և աստվածաշնչյան *Շեոլ*, *Դժոճ*, *Գեհեն* տերմինները, և թե ինչպիսի կապ ունեն դրանք իրար հետ միջին հաշվով:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՌԵԼՆԵՐԸ, ՈՐՏԵՂ ԵՆ ՆՐԱՆՔ (ՇԵՈՒ/ԴՃՈՂՔ, ԳԵՀԵՆ, ՏԱՐՏԱՐՈՍ)**  
**SPECIAL TOPIC: THE DEAD, WHERE ARE THEY? (SHEOL/HADES, GEHENNA, TARTARUS)**

**I. Հին Կտակարան**

Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (համանման արմատներ գոյություն չունեն և ստուգաբանությունն անհայտ է, BDB 982, KB 1368), որը մահվան կամ գերեզմանի վերաբերյալ խոսելիս մի արտահայտվելու կերպ է, հիմնականում Իմաստասիրական Գրքերում և Եսայի մարգարեությունում: ՀԿ-ում այն սովորոտ, գիտակից, սակայն ուրախությունից զուրկ կյանք է (տես՝ Հոր 10:21-22; 38:17):

Բ. *Sheol* բնութագրվում է՝

1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ), 2 Օր.32:22
2. դարպասներով բանտ, Հոր 38:17; Սաղմ. 9:13; 107:18
3. մի երկիր, որտեղից չեն վերադառնում, Հոր 7:9 (մահվան աքքաղերեն անունը)
4. խավարի երկիր՝ թագավորություն, Հոր 10:21-22; 17:13; 18:18
5. լռության վայր, Սաղմ. 28:1; 31:17; 94:17; 115:17; Ես. 47:5
6. կապված պատժի հետ նույնիսկ նախքան Դատաստանի Օրը, Սաղմ.18:4-5
7. կապված *Abaddon* (կործանման . տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԲԱԴՂՂՈՆ... ԱՊՈՒԼԻՈՆ) հետ, որտեղ Աստված նույնպես ներկա է, Հոր 26:6; Սաղմ.139:8; Ամովս 9:2
8. կապված «Գուբի» (գերեզման) հետ, Սաղմ.16:10; Ես.14:15; Եզեկ.31:15-17
9. ամբարիշտները ողջ-ողջ իջնում են *Sheol*, Թվոց 16:30,33; Հոր 7:9; Սաղմ.55:15
10. հաճախ մարմնավորվում է որպես մեծ երախ ունեցող կենդանի, Թվոց 16:30; Առ. 1:12; Եսայի 5:14; Ամբ.2:5
11. այդ վայրի մարդիկ կոչվում են Ռեփայիմներ՝ *Repha'im* (այսինքն՝ «մեռյալների հոգիներ»), Հոր 26:5; Առ. 2:18; 21:16; 26:14; Ես. 14:9-11
12. այնուհանդերձ ՅԱՀՎԵՆ ներկա է նույնիսկ այստեղ, Հոր 26:6; Սաղմ. 139:8; Առ. 15:11

**II. Նոր Կտակարան**

Ա. Եբրայերենից *Sheol* թարգմանվում է հունարեն որպես *Hades* (աներևույթ աշխարհ)

Բ. *Hades* /*դժոճ*/ հատկանիշները (շատ նման է *Շեոլին*)՝

1. վերաբերում է մահվանը, Մատթ.16:18
2. կապ ունի մահվան հետ, Հայտն.1:18; 6:8; 20:13-14

3. հաճախ համանման է մշտական պատժատեղին (*Gehenna*), Մատթ.11:23 (ՀԿ մեջբերում); Ղուկ.10:15; 16:23-24
4. հաճախ համազոր է գերեզմանին, Ղուկ.16:23

Գ. Հավանաբար բաժանված (ռաբբիներ)

1. արդար մասը կոչվում է դրախտ (իրականում երկնքի համար մեկ այլ բառ, տես՝ 2 Կորնթ.12:4; Հայտն.2:7), Ղուկ.23:43
2. ամբարիշտ մասը կոչվում է *Tartarus/սարտարոս*, 2 Պետ.2:4; որը հանդիսանում է չար հրեշտակների պահման վայրը (տես՝ Ծննդոց 6; 1 Ենովք): Այն համադրվում է *Abyss* հետ՝ Ղուկ.8:31; Հռոմ. 10:7; Հայտ. 9:1-2,11; 11:7; 17:18; 20:1,3

Դ. *Gehenna/ գեհենն*

1. Արտացոլում է ՀԿ-ի հետևյալ արտահայտությունը. «Հիննոմի որդիների հարթավայրը» (Երուսաղեմի հարավում): Դա այն տեղն էր, որտեղ փյունիկեցիների կրակի աստծուն՝ *Molech* (Մողոքը, BDB 574, KB 591) երկրպագում էին մանկան գոհաբերությամբ (տես՝ 4 Թագ.16:3; 21:6; 2 Մնաց.28:3; 33:6), որն արգելված էր ըստ Ղևտ.18:21; 20:2-5:
2. Երեմիան փոխեց այն հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵի դատաստանատեղի (տես՝ Երեմ.7:32; 19:6-7): Այն դարձավ կրակե, հավիտենական դատաստանի վայրը 1 Ենովք 90:26-27 և Սիր.1:103
3. Հիսուսի օրոք հրեաներն իրենց նախահայրերի հեթանոսական երկրպագության մեջ մանկան գոհաբերության մեջ մասնակցություն ունենալուց այնքան ահաբեկված էին, որ այս վայրը նրանք դարձրեցին Երուսաղեմի համար որպես աղբանոց: Հավիտենական դատաստանին վերաբերող Հիսուսի տված փոխաբերություններից շատերը ծագում են այս աղբավայրից (կրակ, ծուխ, որդեր, գարշահոտություն, տես՝ Մարկ.9:44,46): *Gehenna* (Գեհենն) տերմինը օգտագործվել է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ.3:6):
4. Հիսուսի կողմից *Gehenna* բառի կիրառությունը.
  - ա. կրակ, Մատթ.5:22; 18:9; Մարկ.9:43
  - բ. մշտապես, Մարկ.9:48 (Մատթ.25:46)
  - գ. կորստյան վայր (թե՛ հոգու և թե՛ մարմնի), Մատթ.10:28
  - դ. *Sheol*-ին համարժեք, Մատթ.5:29-30; 18:9
  - ե. ամբարշտին բնութագրում է որպես «դժողքի որդի» Մատթ.23:15
  - զ. դատավճռի վախճանը, Մատթ.23:33; Ղուկ.12:5
  - է. *Գեհեննի* գաղափարը համարժեք է երկրորդ մահվանը (տես՝ Հայտն.2:11; 20:6,14) կամ կրակե լճին (տես՝ Մատթ.13:42,50; Հայտն.19:20; 20:10,14-15; 21:8). Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց (*Sheol*-ից) և չար հեշտակների (*Tartarus /Տարտարոս/*, 2 Պետ.2:4; Հուդա հ. 6 կամ անդունդը, տես՝ Ղուկ.8:31; Հայտն.9:1-11; 20:1,3) համար հավերժական բնակավայր:
  - ը. այն նախատեսված չէր մարդկանց համար, այլ Սատանայի և իր հրեշտակների, Մատթ.25:41

Ե. Հնարավոր է, քանի որ *Շեոլը*, *Դժողքը* և *Գեհենը* իրենց նշանակությամբ որոշ չափով համընկնում են, որ.

1. սկզբում բոլոր մարդիկ գնում էին *Շեոլ/Դժողք*
2. այնտեղ ունեցած իրենց փորձառությունը (լավ/վատ) սաստկանում է Դատաստանի Օրվանից հետո, սակայն ամբարիշտների վայրը նույնն է մնում (այդ իսկ պատճառով KJV տարբերակը *hades* (գերեզման) բառը թարգմանում է որպես *gehenna* (դժողք))
3. միակ ՆԿ-յան տեքստը, որը նշում է Դատաստանից առաջ տանջանքը Ղուկաս 16:19-31-ի առակն է (Ղազարոսը և հարուստը): *Sheol*-նկարագրվում է նաև ներկայիս համար մի պատժատեղի (տես՝ 2 Օր.32:22; Մաղմ.18:1-5): Ամեն դեպքում հնարավոր չէ առակի հիման վրա կառուցել վարդապետություն

III. Մահվան և հարության միջև ընկած միջանկյալ վիճակը

Ա. ՆԿ-ը չի սովորեցնում «հոգու անմահության» մասին, որը համարվում է հանդերձյալ կյանքի վերաբերյալ հնուց եկած մի քանի տեսակետներից մեկը:

1. մարդկանց հոգիները գոյություն ունեն իրենց ֆիզիկական կյանքից առաջ
2. մարդկանց հոգիները հավիտենական են ֆիզիկական մահվանից առաջ և հետո

3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտարկվում է որպես բանտ և մահը որպես ազատում՝ վերադառնալու նախաձեռնության վիճակին

Բ. ՆԿ-ը ակնարկում է մահվան և հարության միջև ընկած մարմնից հեռու՝ անջատ վիճակ

1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանման մասին, Մատթ.10:28
2. Հնարավոր է Աբրահամը հիմա մարմին ունի, Մարկ.12:26-27; Ղուկ.16:23
3. Մովսեսը և Եղիան ունեին ֆիզիկական մարմիններ Հիսուսի այլակերպության ժամանակ, Մատթեոս 17
4. Պողոսը հայտարարում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսի հետ եղող հոգիները առաջինը կհագնեն իրենց նոր մարմինները, 1 Թեսաղ.4:13-18
5. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները ստանում են իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, 1 Կորնթ.15:23,52
6. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները չեն գնում *Hades* /Դժողք, այլ մահվան ժամանակ միանում են Հիսուսին, 2 Կորնթ.5:6,8; Փիլ.1:23: Հիսուսը հաղթեց մահին և արդարին Իր հետ տարավ երկինք, 1 Պետ.3:18-22:

#### IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում կիրառվում է երեք իմաստով.

1. երկրից վեր գտնվող մթնոլորտը, Ծննդ.1:1,8; Ես.42:5; 45:18
2. աստղազարդ երկինքը, Ծննդ.1:14; 2 Օր.10:14; Սաղմ.148:4; Եբր.4:14; 7:26
3. Աստծո գահատեղին, 2 Օր.10:14; 3 Թագ.8:27; Սաղմ.148:4; Եփես.4:10; Եբր.9:24 (երրորդ երկինքը, 2 Կորնթ. 12:2)

Բ. Աստվածաշունչը հանդերձյալ կյանքի մասին շատ բան չի հայտնում, հավանաբար նրա համար, որ անկում ապրած մարդկությունը ի գորու չէ, կամ հնարավոր չէ, որ հասկանա (տես՝ 1 Կորնթ.2:9)

Գ. Երկինքը թե՛ վայր է (տես՝ Հովի.14:2-3) և թե՛ անձնավորություն (տես՝ 2 Կորնթ.5:6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդոց 1-2; Հայտնություն 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես՝ Գործք 3:21; Հռոմ.8:21; 2 Պետ.3:10): Աստծո պատկերը (Ծննդ.1:26-27) վերականգնված է Քրիստոսում: Այժմ կրկին հնարավոր է Եդեմի Պարտեզում տիրող մտերմիկ փոխհարաբերությունը:

Սակայն սա կարող է լինել փոխաբերական իմաստով (երկինքը որպես Հայտն.21:9-27-ի հսկայական, քառակուսի քաղաքը) և ոչ թե բառացի նշանակությամբ: 1 Կորնթացիների 15 գլուխը նկարագրում է ֆիզիկական և հոգևոր մարմինների տարբերությունը որպես հասուն բույսի սերմ: Կրկին, 1 Կորնթ.2:9 (մի մեջբերում Ես.64:4 և 65:17-ից) հրաշալի մի խոստում և հույս է: Ես գիտեմ, որ երբ տեսնենք Նրան, Նրա պես կլինենք (տես՝ 1 Հովի.3:2):

#### V. Օգտակար աղբյուրներ.

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter* (Ուիլյամ Հենրիկսն, *Աստվածաշունչը Հանդերձյալ Կյանքի Վերաբերյալ*)

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door* (Մորիս Ռոլինգս, *Մահվան Դռնից Այն Կողմ*)

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (SHALOM) /ՀԿ/ SPECIAL TOPIC: PEACE (SHALOM) [OT]

Եբրայերեն տերմինը (BDB 1022, KB 1532) լայն տարածում ունի սեմական ազգերում՝

Ա. Արթարներն՝

1. անվնաս լինել
2. լավ մնալ
3. լավ վիճակում լինել

Բ. Ուզարտներն (քանաներեն)՝

1. անվնաս լինել
2. առողջություն

Գ. Արարներն՝

1. առողջ լինել
2. ուրախ լինել

**Դ. Արամերեն՝**

1. լիարժեք լինել
2. ավարտին հասնել
3. խաղաղություն կնքել
4. անվնաս մնալ

**Ե. Եբրայերեն նշանակությունները՝**

1. լիարժեքություն
2. ողջամտություն
3. բարեկեցություն
4. խաղաղություն

Այսօր *shalom* տերմինը եբրայերեն ողջույնի և հարժեշտի դիմելաձև է: Այն արտահայտում է չարի քացակայություն և բարու ներկայություն (այսինքն՝ կյանքից գոհ վիճակ): Այն նաև արտահայտում է մտավոր ապահովության և բավարարվածության վիճակ: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է ՀԿ խոսում «ուխտի խաղաղության» մասին (տես՝ Թվոց 25:12; Եզեկ .34:25; 37:26; նաև նկատե՛ք՝ Ծննդ .26:29,31; Հեռու 9:15): Դրան պետք է հետամուտ լինել՝ հետևել (տես՝ Սաղմ .34:14; Հռոմ .14:19): AB, հատոր 5, էջ՝ 206-ում ասվում է, որ «Խաղաղությունը», «ճշմարտությունը» և «արդարությունը» եբրայերենում իրար համարժեք հասկացություններ են (տես՝ Չաբ .8:16-19): ՅԱՀՎԵՆ կոչվում է «Խաղաղության Իշխան» (տես՝ Դատ .6:24; Հռոմ .16:20; 2 Կորնթ .13:11; Փիլ .4:9; 1 Թեսաղ .5:23): Մեսիան կոչվելու է «Խաղաղության Իշխան» (տես՝ Ես .9:5): Մի նոր օր, երբ խաղաղությունը, ճշմարտությունը և արդարությունը կդառնան իրականություն մարդու համար (տես՝ Ես .60:17; 66:12,22): Ծննդ .1:31-ի «շատ բարին» կրկին հնարավոր է լինելու, այո՛, խոստում է դա (այսինքն՝ «նոր երկինքն ու նոր երկիրը»):

**15:16 «որովհետև ամորհացիների անօրենությունը դեռ իր լրումին չի հասել»** Սա ցույց է տալիս, որ Աստված շարունակում էր փորձել Իրեն բերել Ավետյաց Երկրի քանանացի բնակչությանը: Մերփսեղեկը քանանացի էր: Միայն հարմար հնարավորությունից և ժամանակից հետո է Աստված դատում և հեռացնում նրանց: Սա կողմնակալության քայլ չէ հրեաների հանդեպ, քանի որ երբ նրանք էլ սկսեցին գործադրել քանանացիների կռապաշտությունները, նրանց էլ Աստված վտարեց երկրից (այսինքն՝ Ասորեստանի և Բաբելոնի գերության տակ):

Ամորհացիներ և Քանանացիներ ազգերը կիրառվում են ակնարկելու Քանանի երկրի ցեղերին: Ինչ որ իմաստով այս տեքստը նախատիպն է այն ընդհարման, որ տեղի էր ունենալու երկիրը Իսրայելի կողմից նվաճվելու ժամանակ, սակայն հենց ինքը երկիրը նվաճվել էր քանանացիների կռապաշտությամբ: Այս նախատիպը նման է Ծննդոց 9:20-27-ին՝ հատկապես հ.25: Քամն էր, որ մեղանչեց, սակայն նրա որդի Քանանը անիծվեց: Քանանացիների մշակույթն է խնդիրը: Հնգամատյանում առկա շատ, բազմաթիվ, եթե ոչ բոլոր, կանոնները առնչվում են քանանացիների մշակույթի և պաշտամունքի հետ: Իսրայելը պետք է զատվեր: Իսրայելը պետք է ՅԱՀՎԵՆ ներկայացներ:

Թե ինչպես էր այս տեքստը տեղ գտել Ծննդոցում, հնարավոր է, որ՝

1. Աստված պատրաստում էր նրանց հետագա իրադարձությունների համար,
2. կամ էլ հետագայում ինչ-որ դպիր ավելացրել էր այս մեկնությունները, որպեսզի ընդգծի իր օրերը

Ուզում եմ ձեր ուշադրությանը հրավիրել, որ երբ նշում եմ հետագա ինչ-որ մի դպիր կամ խմբագիր կատարել է ավելացում, դա չի նշանակում, որ թերագնահատում եմ «ներշնչանքը»: Կարծում եմ, որ Հոգին է առաջնորդել բոլոր գրողներին, խմբագիրներին, դպիրներին և հավաքագրողներին: Սուրբ Գրքի իրական հեղինակը Աստված է: Պատմական գործընթացի ճշգրիտ ինչպեսը, երբը և ովը անհայտ է (պատմության համար կորսված):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:17-21**

<sup>17</sup>Եվ եղավ, երբ արևը մայր մտավ և խավար եղավ, ահա այն կտորների միջով մի ծխացող հնոց և մի վառվող ջահ անցավ: <sup>18</sup>Այն օրը ՏԵՐՆ Աբրամի հետ ուխտ դրեց՝ ասելով.

«Քո սերնդին տվեցի այս երկիրը՝

Եգիպտոսի երկրից մինչև մեծ գետը, այսինքն՝ Եփրատ գետը .

<sup>19</sup>կենեցիներին, կենեզացիներին, կեդոնացիներին, <sup>20</sup>քեռացիներին, փերեզացիներին, ռափայիմներին, <sup>21</sup>ամորհացիներին, քանանացիներին, գերգեսացիներին և հերուսացիներին»:



**15:17 «ահա այն կտորների միջով մի ծխացող հնոց և մի վառվող ջահ անցավ»** ՅԱՀՎԵՆ հայտնվեց Աբրամին այնպես, որ նա կարող էր իր մշակույթի համաձայն հասկանալ: Ծխացող հնոցը կարծես թե՛

1. ՅԱՀՎԵՆ ներկայության թաքնված կերպը՝ միջոցն էր (ինչպես՝ *Shekinah* Փառքի Ամպի սյունը Ելիցում)
2. աստվածության խորհրդապատկերն էր, որը արքայական անեծքի տախտակներում պաշտպանություն էր ապահովում
3. դատաստանի և պաշտպանության խորհրդապատկերն էր (տես՝ Չաք. 12:6)
4. Միջագետքում այս սիմվոլիզմը ներկայացնում էր երկնային սրբագործում՝ մաքրագործում:

Հնոցի մեջ կրակ էր: Աստված հաճախ է կրակի հետ համադրվում, և դա ոչ միայն սուրբգրային պատմություններում, այլ նաև Չրադաշտության մեջ: Անձամբ ես հավատում եմ, որ այս հնոցը կապված է այն փաստի հետ, որ ուխտի շատ տեսակներ հաստատվում էին ուխտի ճաշկերույթով, իսկ այս հնոցը խորհրդապատկերում է այս ճաշկերույթը: Նաև աստվածաբանորեն կարևոր է նկատի ունենալ, որ Աբրամը չանցավ այդ կտորների միջով, այլ միայն Աստված: Այստեղից ևս մեկ անգամ կարելի է հետևություն անել, որ ուխտը ոչ թե մարդկային ջանքերով, արժանիքներով կամ միջոցներով է, այլ միայն Աստծո: Սա Աստծո նախաձեռնությամբ Աստծո կատարողականությամբ ուխտ էր (տես՝ 2 Թագ. 7:8-16; Սաղմ. 89:20-37):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ (BDB 77, KB 92)  
SPECIAL TOPIC: FIRE (BDB 77, KB 92)**

Սուրբ Գրքում կրակը ունի թե՛ դրական և թե՛ բացասական նշանակություն:

Ա. Դրականը

1. տաքացնում է (տես՝ Ես.44:15; Հովհ.18:18)
2. լուսավորում է (տես՝ Ես.50:11; Մատթ.25:1-13)
3. եփում է (տես՝ Ելից 12:8; Ես.44:15-16; Հովհ.21:9)
4. գտում է (տես՝ Թվոց.31:22-23; Առակ.17:3; Ես.1:25; 6:6-8; Երեմ.6:29; Մադ.3:2-3)
5. սրբություն (տես՝ Ծննդ.15:17; Ելից 3:2; 19:18; Եզեկ.1:27; Եբր.12:29)
6. Աստծո առաջնորդություն (տես՝ Ելից 13:21; Թվոց 14:14; 3 Թագ.18:24)
7. Աստծուց զորացում (տես՝ Գործք 2:3)
8. Աստծո պաշտպանություն (տես՝ Չաք.2:5)

Բ. Բացասական՝

1. այրում է (տես՝ Հեսու 6:24; 8:8; 11:11; Մատթ.22:7)
2. բնաջնջում է (տես՝ Ծննդ.19:24; Ղևտ.10:1-2)
3. բարկություն (տես՝ Թվոց 21:28; Ես.10:16; Չաք.12:6)
4. պատիժ (տես՝ Ծննդ.38:24; Ղևտ.20:14; 21:9; Հեսու 7:15)
5. կեղծ վախճանաբանական՝ Էսկատոլոգիական նշան (տես՝ Հայտն.13:13)

Գ. Աստծո բարկությունը մեղքի հանդեպ արտահայտվում է կրակի փոխաբերությամբ՝

1. Նրա բարկությունը վառվում է (տես՝ Ովս.8:5; Սոփ.3:8)
2. Նա կրակ է թափում (տես՝ Նավ.1:6)
3. Հավիտենական կրակ (տես՝ Երեմ.15:14; 17:4)
4. Էսկատոլոգիական դատաստան (տես՝ Մատթ.3:10; 13:40; Հովհ.15:6; 2 Թեսաղ.1:7; 2 Պետ.3:7-10; Հայտն.8:7; 16:8; 20:14-15)

Դ. Կրակը հաճախ հայտնվում է աստվածհայտնության ժամանակ՝

1. Ծննդ. 15:17
2. Ելից 3:2
3. Ելից 19:18
4. Սաղմ. 18:7-15; 29:7
5. Եզեկ. 1:4,27; 10:2
6. Եբր. 1:7; 12:29

Ե. Աստվածաշնչում զետեղված շատ փոխաբերությունների պես (այսինքն՝ թթիմոր, առյուծ) ըստ համատեքստի կրակը կարող է լինել օրհնություն կամ անեծք:

**15:18 «Այն օրը ՏԵՐՆ Աբրահամի հետ ուխտ դրեց / արեց»** «Արեց» տերմինը բառացի նշանակում է «կտրեց» (BDB 503, KB 500, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱԲ): Այս կտրել տերմինը ստուգաբանորեն կապ չունի հ. 10-ում առկա բառի հետ (BDB 144, KB 167), սակայն դարձել է չափանիշ, աստվածաշնչյան այլաբանություն «ուխտ անելու» համար:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ**  
**SPECIAL TOPIC: COVENANT PROMISES TO PATRIARCHS**

Հատուկ ուխտի փոխհարաբերության սկզբնական խոստում տրվեց՝

1. Աբրահամին՝ Ծննդոց 12:1-3
  - ա. երկիր, Ծննդ. 12:7; 13:4-15; 15:18-21
  - բ. ժողովուրդ, Ծննդ. 13:16; 15:4-5; 17:2-6; 22:18
  - գ. օրհնություն աշխարհի համար, Ծննդ. 18:18; 22:18
2. Իսահակին՝ Ծննդոց 26:2-4
  - ա. երկիր
  - բ. ժողովուրդ
  - գ. օրհնություն աշխարհի համար
3. Հակոբին՝ Ծննդոց 28:2-4,13; 35:9-12; 48:3-4
  - ա. երկիր
  - բ. ժողովուրդ
4. Իսրայել ազգին (երկիր)՝ Ելից 3:8,17; 6:8; 13:5; 33:1-3; 2 Օր. 1:7-8,35; 4:31; 9:3; 11:25; 31:7; Հեսու 1:6

❖ **«ուխտ»** «Ուխտը» (BDB 136) դառնում է աստվածաշնչյան գրականության կենտրոնական նպատակ: Այն խոսում է թե՛ խոստումների և թե՛ պարտավորությունների մասին՝ մարդու և Աստծո կողմից: Աստվածաշնչյան նյութերում գույություն ունեն ուխտերի պայմանական և ոչ պայմանական կողմերի յուրահատուկ համադրություն: Արդյո՞ք ուխտերը պայմանական են, թե առանց պայմանների: Այո՛: Կարծես թե Աստծո անվերապահ կախված է մարդկության հավատքից և նրա զոջման արձագանքից (տես՝ 15:6; Հռոմեացիների 4; Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21): Սա ինչ-որ առումով պարադոքսալ է թվում, սակայն մեղավոր մարդկության հետ Աստված այս կերպ է գործում: Տե՛ս Հատուկ Թեմա՝ Ուխտ, 13:14-ում:

❖ **«Եգիպտոսի գետից»** Սովորաբար սա վերաբերում է Նեղոս գետին, սակայն աստվածաշնչյան այլ խոստումների համատեքստից, որոնք վերաբերում են Ավետյաց Երկրի սահմաններին, այն պետք է որ նկատի ունենա «Ասեմոնը» (տես՝ Թվոց 34:5 և Հեսու 15:4): Ավետյաց Երկրի այս չափերը մասամբ իրականացան Դավթի օրոք, սակայն լիարժեք դարձան Սողոմոնի ժամանակ (տես՝ 3 Թագ. 4:21):

**15:19-21** Այստեղ տեսնում ենք տաս ցեղերի ցանկ, որոնք կազմում էին Քանանի բնակչությունը: Երբեմն այս ցեղերի քանակը տարբերվում է՝ (1) Հեսու 24:11 ունի 7 ցեղ, (2) Ելից 3:17 ունի 6 ցեղ, (3) Ելից 23:28 թվարկում է 3 ցեղ: ԾՂգրիտ քանակն անհայտ է, սակայն ակնհայտ է, որ «Ամորիացի» տերմինը, որը նշանակում է «լեռնաբնակ», կամ «քանանացի» տերմինը, որը նշանակում է «դաշտաբնակ», դառնում է բոլոր ցեղերի համար հավաքական տերմին: Տե՛ս Հատուկ Թեմա. Պաղեստինի նախախորայելական բնակիչները, 12:6-ում:

**15:20 «Քեռացի»** Ծննդոց 10:15-ից տեսնում ենք, որ այս մարդիկ եկել են Քեռից (BDB 366): Հետագայում նրանք կենտրոնական Թուրքիայի տարածքում մի մեծ կայսրություն կազմեցին:

❖ **«Ուփայիմներ»** Սրանք կարծես թե եղել են շատ բարձրահասակ մարդիկ (BDB 952, տես՝ Հեսու 12:4; 17:15; 1 Մնաց. 20:4) ինչպես *Ենակիմները* (տես՝ 2 Օրինաց 2:11 և 3:11) և հավանաբար *Nephilim* /հայերենում՝ հսկաներ/ պես (տես՝ Ծննդ. Ծննդոց 6 և Թվոց 13:33): Տե՛ս Հատուկ Թեմա 14:5-ում:

**15:21 «Հերուսացիներ»** Սրանք Երուսաղեմի բնակիչներն են, որոնք մնալու էին անհաղթ մինչև Դավթի օրերը (BDB 101, տես՝ Դատ. 1:21; 19:11; 2 Թագ. 5:6բ):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Քո տերմիններով բացատրիր և սահմանիր Ծննդ. 15:6-ում օգտագործվող կարևոր բառերը: Կապ ստեղծիր Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3-ի հետ:
2. Ինչո՞ւ են այդքան շատ մարդիկ պատկերավոր դարձնում Ծննդոց 15:11-ը:
3. Ի՞նչ նշանակություն ունեն Աստծո Աբրահամին հայտնվելը ծխացող հնոցի և այրվող ճրագի տեսքով (Ծննդ. 15:17):
4. Ինչո՞ւ են Քանանի ցեղերը տարբեր կերպ թվարկվում (տես՝ 15:19-21):

## ԾՆՆԴՈՑ 16

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Սարան և Հագարը	Հագարն ու Իսմայելը	Իսմայելի ծնունդը	Հագարն ու Իսմայելը	Իսմայելի ծնունդը
16:1-6	16:1-3  16:4-6	16:1-6	16:1-4  16:5 16:6	16:1-2  16:3-6
16:7-14	16:7-14	16:7-14	16:7-8ա 16:8բ 16:9-12	16:7-12
(11-12)	(11-12)	(11-12)	16:13-14	(11-12) 16:13-14
16:15-16	16:15-16	16:15-16	16:15-16	16:15-16

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:1-6**

<sup>1</sup>Արդ, Աբրամի կինը, Սարան նրա համար զավակներ չբերեց, և նա մի աղախին ուներ, եգիպտացի, ում անունը Հազար էր: <sup>2</sup>Եվ Սարան ասաց Աբրամին. «Ահա ՏԵՐՆ ինձ գրկել է երեխա ունենալուց, ուրեմն մտի՛ր աղախնիս մոտ, գուցե նրանից զավակներ ունենամ»: Եվ Աբրամն անսաց Սարայի ձայնին: <sup>3</sup>Եվ Աբրամի կինը՝ Սարան, իր եգիպտացի աղախին Հազարին առավ, Աբրամի՝ Քանանի երկրում տասը տարի ապրելուց հետո, և նրան տվեց իր ամուսնուն՝ Աբրամին, որ նրան կին լինի: <sup>4</sup>Եվ նա մտավ Հազարի մոտ, և սա հղիացավ. և երբ տեսավ, որ հղի է, իր տիրուհին նրա աչքում արհամարհվեց: <sup>5</sup>Եվ Սարան ասաց Աբրամին. «Իմ անիրավությունը թող քո վրա՛ լինի. ես իմ աղախնուն տվեցի քո գիրկը, և երբ տեսավ, որ հղի է, ես նրա աչքում արհամարհվեցի. ՏԵՐԸ թող իմ ու քո միջև դատաստան անի»: <sup>6</sup>Եվ Աբրամն ասաց Սարային. «Ահա քո աղախինը քո ձեռքում է, արա՛ նրան ինչ ուզում ես»: Եվ Սարան նեղեց նրան, և սա փախավ նրա երեսից:

**16:1 «նա մի աղախին ուներ, եգիպտացի, ում անունը Հազար էր»** Հազար անունը նշանակում է «փախնել» (BDB 212): Սա նրա բնութագրականն է (տես՝ հ. 6,8): Նա եգիպտացի էր, ում հավանաբար գնել էին Սարայի համար, մինչ գտնվում էին Եգիպտոսում (տես՝ Ծննդ. 12:10-20):

**16:2 «ՏԵՐՆ ինձ գրկել է երեխա ունենալուց»** Ակնհայտ է, որ այս գույգը քննարկել է ՅԱՀՎԵի հայտնությունները և նաև դրանց իրականացման ուշացումը: Ըստ երևույթին նրանք սկսեցին ծրագրել, թե ինչպես «օգնեն» Նրան, որ իրականացնի Իր խոստումը:

«Չրկել» ԲԱՅԻ տեսակը (BDB 783, KB 870, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) արտահայտում է ավարտված գործողություն: Սարան հաստատ մտածում էր, որ մշտապես ամուլ էր:

Ինչ-որ իմաստով Սարան մեղադրում էր ՅԱՀՎԵին իր շարունակական անպտղության համար (տես՝ 20:18): Այդ ուշացումը Աստծո ծրագրի մի մասն էր կազմում, որպեսզի հասունանար նրանց վստահությունն Իր հանդեպ և հստակ հայտներ Իրեն հետագա սերունդներին: Բոլոր հավատացյալներն էլ խնդիրներ ունեն Աստծո կողմից խոստացված դեպքերի հետ կապված ժամանակի հետ:

❖ **«մտի՛ր աղախնիս մոտ»** ԲԱՅԸ (BDB 97, KB 112) *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է՛ կիրառված խնդրանքի իմաստով (տես՝ 30:3): ԲԱՅԸ հաճախ կիրառվում է որպես սեռական մտերմության մեղմասություն (տես՝ Ծննդ. 6:4; 16:2; 19:34; 30:3; 38:8,9; 39:14; 2 Օր. 22:13; 25:5; 2 Թագ. 11:4; 12:24; 16:21-22; 20:3; Առակ. 6:29):

❖ **«գուցե նրանից զավակներ ունենամ»** Այս մոտեցումը մեծապես համընկնում է Նուզի Տախտակների արձանագրությունների հետ, որտեղ նկարագրվում են Քոռեցիների մշակույթը Բ.Ա. երկրորդ հազարամյակում: Հազարի որդին պետք է օրենքով դառնար Սարայի որդին և Աբրամի ժառանգորդը:

❖ **«Աբրամն անսաց /լսեց/»** Սա գրեթե համազոր է Ծննդոց 3-ի խնդրին (հ. 17): Աբրամը փորձվեց անել մի բան, որին նա հավանաբար ամեն դեպքում հակված էր անել: ԲԱՅԸ բառացի նշանակում է «լսել» (BDB 1033, KB 1570) ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿով է, որը ենթադրում է կրկնվող գործողություն: Ստեղծագործության սկզբնական մոնոգամ՝ միամուսնության կատարյալ վիճակը խախտված էր՝ զարմանալիորեն Աստծուն «օգնելու» պատրվակով:

**16:3 «Աբրամի՝ Քանանի երկրում տասը տարի ապրելուց հետո»** Հետաքրքիր է, որ առնվազն տաս տարի էր անցել գլուխ 15-ում Աստծո Աբրահամի հետ խոսելուց հետո: Աբրահամը շարունակում էր վստահել, սակայն փորձում էր մտածել ինչ-որ միջոցներ, որով կարող էր օգնել Աստծուն: Սա կրկին խոսում է այն մասին, որ Աստված Աբրահամին ցույց էր տալիս, որ հատուկ Իր միջոցներով է ի վերջո խոստումն իրականանալու և ոչ թե Աբրահամի: Այս հատվածը Պողոսն օգտագործում է որպես այլաբանություն Գաղ. 4:21-31-ում:

❖ **«որ նրան կին լինի / որպես նրա կին»** Հազարին ավելի շուտ կարելի է կոչել նրա հարճը: Չնայած որ երբայերեն «կին» տերմինն է այստեղ կիրառվում, ակնհայտ է, որ նա նրա կինը չէր, այլ հարճը (այսինքն՝ իսկան սեռի սեռական գույգրնկեր սահմանափակ իրավունքներով):

**16:4 «իր տիրուհին նրա աչքում արհամարիվեց»** ԲԱՅԸ (BDB 886, KB 1103, *Qal ԱՆԿԱՏԱԲ*) կարող է նշանակել՝

1. թեթև լինել
2. արագ
3. աննշանակալի լինել (տես՝ 1 Թագ. 2:30; Հոր 40:4)

*Hiphil* արմատն արտահայտում է արհամարհանք (տես՝ 2 Թագ. 19:43; Ես. 23:9; Եզեկ. 22:7): Երբայերեն մտածելակերպը պատիվ կամ կշիռ ունենալ արտահայտության հակադրությունը «թեթև գտնվելն» է:

**16:5** Միջանձնային փոխհարաբերության առեղծվածը ակնհայտ է այս համարում: Սարան նախաձեռնեց այս ծրագիրը, իսկ այժմ հետևանքի պատճառով ճնշված է: Ինչպես շատ հաճախ է տեղի ունենում աստվածաշնչյան պատմություններում, ընթերցողին չի ներկայացվում ամբողջ իրադարձության մեջ առկա ամբողջ նախադրյալներն ու երկխոսությունները: Հնարավոր է սկզբնապես Աբրամն ավելի ներգրավված է եղել այս ծրագրի մեջ: Պատմական իրադարձությունը մեկնաբանելիս ընթերցողները պետք է իրենց հարցադրեն, թե «ինչո՞ւ է սա արձանագրվել»: Աբրամն ու Սարան պետք է սովորեին, որ մարդկային գործոնը չի հանդիսանում Աստծո հետ փոխհարաբերության բանալին, այլ հավատքը, հնազանդությունը և հարատևությունը:

Շատ հավանական է, որ այն ինչ արձանագրված է այս համարում, իրավական դարձվածք է: Սարան մի այնպիսի համոզմունքով է խոսում, որ կարծես թե նա հռչակում է իր օրինական իրավունքները այն դեպքում, երբ ստրուկը ամբարտավան պահվածք է ցուցաբերում (այսինքն՝ Համմուրաբիի Ծածկագիրը և Նուզի Տախտակները): Ամեն ինչ, որ նա անում էր մշակութային, օրինապես ընդունելի էր, սակայն Հազարի վերաբերմունքը՝ ոչ: Աբրամը պատասխանատու էր որպես այդ տան գլուխ:

❖ **«ՏԵՐԸ թող իմ ու քո միջև դատաստան անի»** Այս ԲԱՅԸ (BDB 1047, KB 1622) *Qal ԱՆԿԱՏԱԲ* է՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով: Կոնկրետ, թե ինչ էր ուզում Սարան, որ ՅԱՀՎԵՆ աներ, հայտնի չէ: Ըստ երևույթին նա փնտրում էր Աստծո պատիժը իր զգացմունքների անարգության համար կամ Հազարի դեմ իր ծրագրած գործողությունների հավանությունը: Ամեն դեպքում այս արտահայտությունը չի արտահայտում Աբրամի և Սարայի միջև աճող լարվածությունը:

**16:6** Սա ինչ-որ տեղ մեզ համար կարծես թե դաժան վերաբերմունք է, սակայն մենք պետք է դիտարկենք սա այդ օրերի լույսի ներքո և ոչ թե մեր: Սա լիովին համապատասխանում է Նուզի Տախտակների և Համմուրաբիի Ծածկագրի հետ հարճերի հետ վերաբերվելու հարցում:

Կրկին, ինչ որ առումով սա զուգահեռվում է Ծննդոց 3:11-13-ի պատմության հետ: Աբրամը, որպես ընտանիքի առաջնորդ, իր պատասխանատվությունը փոխանցում է Սարային: Սարայիկ հակված են պատասխանատվությունը ծեղելու և ապա արդարացումներ ներկայացնելու:

❖ **«Սարան նեղեց նրան»** ԲԱՅԸ (BDB 776 III, KB 853) *Piel* արմատով նշանակում է խոնարհեցնել կամ նսեմացնել (տես՝ 31:50; Ելից 22:21,22 /երկու անգամ ավելի խստորեն/, Հոր 30:11): Հազարի վերաբերմունքն ու վարքը չեն արդարացնում Սարայի գործողությունները: Մեղավոր մարդիկ եսասեր են, եսակենտրոն: Հասուն հավատքը կյուծի այս խնդիրը:

Հնարավոր է, որ Հազարի հղիանալուց հետո Սարան կրկին վերադարձրեց նրան իր ծառայությանը և հեռացրեց Աբրամից, որպես նրա սեռական զուգընկերոջ:

❖ **«սա փախավ նրա երեսից»** Փախուստի դիմած ստրուկը լուրջ իրավական խնդիր էր ներկայացնում, որը կարող էր ունենալ լուրջ հետևանքներ: Սա շատ նման է Ծննդ. 21:8-21-ում արձանագրված պատմությանը: Հետևյալ համարները ցույց են տալիս ՅԱՀՎԵՆի սերն ու հոգատարությունը, անգամ Հազարի պես հարճի և նրա որդու հանդեպ: ՅԱՀՎԵՆի սերը սահմաններ չունի Աբրամի ընտանիքի հանդեպ (նաև՝ Մելքիսեդեկ, Հոր):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:7-14**

<sup>7</sup>Եվ ՏԻՐՈՋ հրեշտակը գտավ նրան անապատում՝ ջրի աղբյուրի մոտ՝ Սուրի ճանապարհին գտնվող աղբյուրի մոտ: <sup>8</sup>Եվ ասաց. «Հազար, Սարայի աղախին, որտեղի՞ց ես գալիս և ո՞ւր ես գնում»: Եվ նա ասաց. «Ես իմ տիրուհու՝ Սարայի երեսից եմ փախչում»: <sup>9</sup>Եվ ՏԻՐՈՋ հրեշտակն ասաց նրան. «Ե՛տ դարձիր քո տիրուհու մոտ, և նրա ձեռքի տակ խոնարհվի՛ր»: <sup>10</sup>Եվ ՏԻՐՈՋ հրեշտակն ասաց նրան. «Քո սերունդը խիստ բազմացնելու եմ, այնպես որ շատությունից չի հաշվվելու»: <sup>11</sup>Եվ ՏԻՐՈՋ հրեշտակն ասաց նրան.

«Ահա դու հղի ես  
Եվ որդի կծնես

Եվ նրա անունը Իսմայել կոչես,  
Որովհետև ՏԵՐԸ լսեց քո տառապանքը»:

<sup>12</sup>Եվ նա մի վայրագ մարդ կլինի,  
Նրա ձեռքն ամեն մարդու դեմ է լինելու,  
Եվ ամեն մարդու ձեռքը՝ իր դեմ.

Եվ նա բնակվելու է իր բոլոր եղբայրների ներկայությամբ»:

<sup>13</sup>Եվ նա իր հետ խոսող ՏԻՐՈՉ անունը կանչեց. «Դ՛ու՛, Աստված, տեսնում ես ինձ», որովհետև ասաց. «Ես էլ փնտրեցի Նրան, Ով ինձ տեսնում է»: <sup>14</sup>Այս պատճառով էլ այդ ջրհորը կոչվում է Լահայրոյի ջրհոր. այն Կադեսի և Բարադի միջև է:

**16:7 «ՏԻՐՈՉ հրեշտակը»** Այս գործող անձը կարծես թե լինի Աստծո անձնական ներկայության մարմնացումը: Տե՛ս Հատուկ Թեմա 12:7-ում:

❖ **«Սուրի ճանապարհին գտնվող աղբյուրի մոտ»** Մենք ճշգրիտ չգիտենք, թե որտեղ է գտնվում այստեղ նկարագրված աշխարհագրական տեղանքը, սակայն հավանական է Բերսաբեից հարավ, դեպի Եգիպտոս տանող ճանապարհին: Հազարը տուն էր գնում:

**16:8** Այսպիսի համարները (օր.՝ 3:9,11; 4:9,10), որոնք արձանագրում են Աստծուն կամ Նրա ներկայացուցիչներին հարցեր տալիս, դարձել են աստվածաբանական մի շարժման մաս, որը կոչվում է «Բաց Թեիզմ», որն այս հարցերը ընդունում է տառացիորեն և դրանք դարձնում աստվածաբանական հետևություններ, որ իբրև Աստված չգիտի՝

1. ապագան
2. մարդկանց պատմական գործողությունները

Ես կողմնակիցը չեմ հույն փիլիսոփայության (այսինքն՝ Աստծո բնավորության գծերի փիլիսոփայական զարգացումները) և ոչ էլ հերքում եմ Ծննդոցի դեպքերի պատմականությունը, սակայն պնդում եմ, որ դրանք գրական փաստաթղթեր են, որոնք օգտագործում են այլաբանության լեզուն (ինչպես և բոլոր հաղորդակցություններն են դա անում): Խնդիրը Աստվածաշնչում տրված հարցերի նպատակն է: Արդյո՞ք դրանք արտացոլում են Աստծո կողմից գիտության պակաս, թե մարդկանց մեջ հասկացողություն զարգացնելու Աստծո գործը: Գոյություն ունեն շատ այլ տեքստեր էլ, որոնք հաստատում են մարդկանց կամ ապագա դեպքերի մասին Աստծո գիտությունը, որպեսզի ես ինձ հանգիստ զգամ Բաց Թեիզմի հետ որպես ոչ այլ ինչ, քան Ա. Ն. Նորթի վերանայված աստվածաբանություն (այսինքն՝ Ընթացիկ Մտածելակերպ):

**16:9** Հրեշտակը նրան երկու հրաման է տալիս՝

1. վերադառնալ՝ BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. խոնարհվել /հնազանդվել/ BDB 776 III, KB 853, *Hithpael* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այս հատվածն ակնարկում է, որ ՅԱՀՎԵԻ կամքն էր, որ Հազարի որդին մեծանար Աբրամի դաստիարակությամբ (այսինքն՝ ՅԱՀՎԵԻ ճանաչողությամբ):

❖ **«խոնարհվիր»** Սա այն նույն ԲԱՅՆ է, որը թարգմանված է «խստորեն» (BDB 776 III, KB 853) հ. 6-ում /անգլ./ և ԳՈՅԱԿԱՆԸ կիրառված է հ. 11-ում՝ «տառապանք» (BDB 777): ՅԱՀՎԵԻ չի խոստանում փոխել իրավիճակը Սարայի հետ, սակայն խոստանում է օրհնել նրա որդուն (այսինքն՝ Իսմայելին):

**16:10-12** Տիրոջ հրեշտակի պատասխանը Հազարին շատ նման է 15:5-ում Աբրահամին տված Աստծո պատասխանին: Նրա որդու հետ կապված մի քանի հրաշալի խոստումներ են տրվում, ինչպես նաև ֆիզիկական և մտավոր առանձնահատկություններ: Հազարն ուրախանում է, որ ՅԱՀՎԵԻ հոգալու է իր համար:

**16:10 «Քո սերունդը խիստ բազմացնելու եմ, այնպես որ, շատությունից չի հաշվվելու»** Այս խոստումը կրկնվում է Աբրամին Իսմայելի համար 17:20-ում:

ԲԱՅՆ ավելի շեշտադրված է միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԻ համադրության շնորհիվ (BDB 915, KB 1176, երկուսն էլ *Hiphil*): ՅԱՀՎԵԻ հետ շփումը, Նրա ճանաչողությունը, Նրա խոսքերի հանդեպ վստահությունը օրհնություն է բերում: Ինչ-որ իմաստով Հազարը Աստծուն պատասխանում է Աբրամի պես: Նա նույնիսկ հարցեր չի տալիս (կամ առնվազն արձանագրված չէ որևէ հարց) Աբրամի պես: Երկու հանդիպումներն էլ պարունակում են երեխայի օրհնությունների խոստում, մինչդեռ դժվար ժամանակներ ունենալու հայտնությամբ: Ծննդոց 15:6 Աբրամի համար փրկության պահն է: Իհարկե Հազարն էլ նման կերպ պատասխանեց: Ինձ համար,

որպես հավիտենական փրկության ծրագրին հակված անձ, Աստծո կողմից Հագարի և Իսմայելի ընդունելությունը Իսրայելից բացի Աստծո փրկության նպատակի հզոր վկայություն է (տես՝ Հատուկ Թեմա 12:3): Ինչ-որ իմաստով սա այն «ազգերի» օրինակն է, որոնք ընդունված են չիշտ այնպես, ինչպես Աբրամը՝ հավատքով, որի պտուղը հնագանդությունն է: Գոյություն ունեն ՀԿ-յան մի քանի Մեծ Հանձնարարականի ակնարկներ: Աստծո սիրտը բարախում է կորած աշխարհի համար՝ խաթարված փոխհարաբերությունը պետք է վերականգնվի: Եսայու տիեզերական տեսիլքները, Հովնանի պատմությունը և ՆԿ-ը հնչեցնում են այս ճշմարտությունները:

**16:11-12** NASB տպագրել է հհ. 11-12 որպես պոեզիա (տես՝ 12:1-3; 14:19-20; 15:1,18; 17:1-2,4-5): Համար 12 նկարագրում է, թե ինչպիսի մարդ է նա լինելու:

**16:11 «դու հղի ես»** Սա նորություն չէր (տես՝ հ. 4), սակայն այն, որ երեխան արու զավակ է լինելու՝ նորություն էր:

❖ **«Իսմայել»** Այս անունը նշանակում է «*էլը լսեց*» կամ «*թող էլը լսի*» (BDB 1035, KB 447): Նախորդ արտահայտության մեջ հրեշտակն ասաց, որ «ՅԱՀՎԵՆ մտիկ տվեց», որը բառացի նշանակում է «լսեց» (BDB 1033): Ուշադրություն դարձրեք, որ երեխայի անունը հայրը չդրեց, այլ Աստված (տես՝ Մատթ. 1:21,25; Դուկ. 1:31,35; 2:21):

**16:12 «մի վայրագ մարդ»** Այս արմատը (BDB 825) նշանակում է՝

1. Աքքադերեն՝ ջորի
2. Ասորերեն՝ վայրի ջորի
3. Արաբերեն՝ վայրի էշ
4. Եբրայերեն՝ վայրի էշ կամ ձի (*Anchor Bible Commentary* Ծննդոցի գրքի շուրջ, էջ՝ 118)

Սակայն նկատի առեք, որ սա նսեմացնող մեկնաբանություն չէր համարվում Հնագույն Մերձավոր Արևելքում: Այս կենդանիները Միջագետքում օգտագործվում էին զոհաբերությունների համար: Դրանք թանկ և հարգի կենդանիներ էին: Այն մատնացույց է անում նրա մեկուսացման հակումները (այսինքն՝ քոչվոր նախրապաններ): Իսմայելը սիրելու էր իր ազատությունը և ապրելու էր քոչվոր կյանք: Հաջորդ երկու պոետիկ տողերը նկարագրում են նրա այդ թափառականի էությունը (ինքնավստահ, ոչ ոքին չվստահող, ոչ մեկի հետ դաշինքի մեջ չմտնող):

❖  
**NASB** «նա բնակվելու է իր բոլոր եղբայրներից դեպի արևելք»  
**NKJV** «և նա բնակվելու է իր բոլոր եղբայրների ներկայությամբ»  
**NRSV** «և նա բնակվելու է իր բոլոր ազգականների հետ տարածայնությունների մեջ»  
**TEV** «Նա բնակվելու է իր բոլոր բարեկամներից առանձին»  
**NJB** «իր կյանքն ապրելով իր բոլոր ազգականների հետ անպաշտպանությամբ»

Այս արտահայտությունը՝ «դեպի արևելք», կարծես թե ունի երկու հավանական ստուգաբանություն՝ (1) ինչ-որ բանից դեպի արևելք (բառացի՝ «նրա երեսի առջև» BDB 815) և (2) «անպաշտպանության մեջ»: Երկու ստուգաբանություններն էլ կարծես թե համապատասխանում են այս համատեքստին և ճշգրտորեն նկարագրում են Միջին Արևելքի Բեդուին գեղերին:

**16:13-14** «Աստված /El/ որ տեսնում է» արտահայտությունը կապված է հ. 14-ում գտնվող ջրհորի անվան հետ: Ծննդոցի այս վաղ ժամանակաշրջանում Աստված կոչվել է տարբեր անուններով, որոնք հիշատակել են Նրա գործերը: Նայելով այս բոլոր անուններին, մեր վրա մեծ ազդեցություն է թողնում Աստծո սերը մեղավոր մարդկության հանդեպ (իսկ այստեղ մի եզրիպտացի ստրուկ կնոջ):

**16:13 «ես էլ փնտրեցի Նրան, ով ինձ տեսնում է /անգլ.՝ ես նույնիսկ ողջ մնացի Նրան տեսնելուց հետո/»** Հնագույն Մերձավոր Արևելքում այսպիսի հասկացություն կար, որ եթե Աստծուն տեսնես, ապա կմեռնես (տես՝ Ծննդ. 32:30 և Ելից 33:20): Հագարը ցնցված էր, որ Աստված (այսինքն՝ Տիրոջ հրեշտակը) եկել էր իր մոտ և նա տեսել էր Նրան ու կենդանի էր մնացել:

- Դժվար է կոնտեքստից իմանալ, թե արդյոք՝
1. նա ապշած էր տեսնելով Աստծո դրսևորումը՝ հայտնությունը (այսինքն՝ ես տեսա Աստծուն)
  2. նա ապշած էր, որ Աստված եկավ իրեն տեսնելու և եկավ այդպիսի քաջալերանքով և հոգածությամբ (Աստված տեսավ ինձ):



Կարծում եմ #2 ավելի շատ է համապատասխանում համատեքստին և հ. 14-ում տրված ջրհորի հետագա անվանումը *Anchor Bible Commentary* on Genesis ասում է, որ այդ անունը նշվում է MT-ում մի արտասովոր կերպով, որն ընդունում է երկու հնարավոր տարբերակներն էլ (էջ՝ 110):

ՀԿ-ում սա միակ տեղն է, որտեղ ինչ-որ մեկն Աստծուն անուն է տալիս: Մովորաբար Աստված հայտնում է Իրեն համդրված անվանումով (այսինքն՝ *Էլ* ավելացված, *ՅԱՀՎԵ* ավելացված, *Էլշիլ* ավելացված): Նաև ուշադրություն դարձրեք, որ այս յուրահատուկ անվանադրումը տեղի է ունեցել մի հալածված եգիպտացի ստրուկ կնոջ կողմից: ՅԱՀՎԵն փնտրում է նրան և դեմ առ դեմ հանդիպում: Նրա սերը սքանչելի է:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:15-16**

**<sup>15</sup>Եվ Հագարը մի որդի ծնեց Աբրամին, և Աբրամը Հագարի՝ իր համար ունեցած որդու անունը Իսմայել դրեց: <sup>16</sup>Եվ Աբրամը ութսունվեց տարեկան էր, երբ Հագարը Իսմայելին ունեցավ Աբրամի համար:**

**16:15-16** Մովսեսը շարունակում է ընթերցողին համար թարմացնել Աբրամի տարիքը, որպեսզի մենք կարողանանք հետևել նրա կյանքին ինչ-որ ժամանակագրական հերթականության մեջ, որը կարևոր է նրանով, որ իր ծերության հասակում Աստծո խոստման համաձայն հատուկ ժառանգ էր ունենալու հենց Սարայից:

**16:15** Աստվածաշունչը ոչ մի հարց կամ կասկած չի արձանագրում Հագարի կողմից ՅԱՀՎԵԻ տված խոստման մասին, ինչպես որ եղավ Աբրամի դեպքում:

### **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեռն մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Որո՞նք են գլուխ 15 և 16-ում ներկայացված կարևորագույն աստվածաբանական ճշմարտությունները:
2. Թվարկե՞ք այն համարները, որտեղ Աստված ուխտ է կապում Աբրահամի հետ: Արդյո՞ք խոստումները պայմանական են, թե առանց պայմանների: Ի՞նչ կարող ենք դրանից մենք սովորել:
3. Ո՞վ է Տիրոջ հրեշտակը: Ինչո՞ւ:
4. Ի՞նչ այդքան նշանակալի բան կա նրա մեջ, որ Աստված փրտրեց Հագարին և նրա երեխային:

## ԾՆՆԴՈՑ 17

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Աբրահամը և թլփատության ուխտը	Ուխտի նշանը	Հավիտենական ուխտը	Թլփատությունը՝ ուխտի նշան	Ուխտը և թլփատությունը
17:1-8 (1-5)	17:1-8	17:1-8	17:1-6	17:1-3ա  17:3b-8
17:9-14	17:9-14	17:9-14	17:9-14	17:9-14
17:15-22	17:15-22	17:15-22	17:15-16  17:17-18  17:19-22	17:15-22
17:23-27	17:23-27	17:23-27	17:23-27	17:23-27

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ա. Ծննդոց 17-ը Ծննդոց 15-ում կապված Ուխտի վերահաստատումն է և որը առաջին անգամ հռչակվել էր Ծննդոց 12-ում:

Բ. Արդեն տասներեք տարի էր անցել այն օրից, երբ Ծննդոց 15-ում Աստված որդի էր խոստացել Աբրահամին: Ծննդոց 17-ը հարթակ է պատրաստում Աստծո համար, որ իրականացնի Սարայի միջոցով Աբրահամի համար ունեցած Իր ծրագիրը:

9. Այս գլուխը մի շարք բառախաղեր են, որոնք հիմնված են այստեղ ներգրավված անձանց անունների վրա: Եբրայեցիների համար անունները շատ կարևոր էին (այսինքն՝ 16:11-12): Իր կյանքի կարևոր շրջաններում նրանք հաճախ փոխում էին իրենց անունները, որպեսզի ցույց տային իրենց կյանքում կատարվող դեպքերի բացառիկությունը:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:1-8

<sup>1</sup>Եվ երբ Աբրամն իննսունինը տարեկան էր, ՏԵՐԸ երևաց Աբրամին և ասաց նրան .

«Ես եմ Ամենակալ Աստվածը .

Իմ առաջ քայլիր ու կատարյալ եղիր:

<sup>2</sup>Եվ ես Իմ ու քո միջև ուխտ եմ դնում,

Եվ քեզ խիստ բազմացնելու եմ»:

<sup>3</sup>Եվ Աբրամը երեսի վրա ընկավ, և Աստված նրա հետ խոսեց՝ ասելով .

<sup>4</sup>«Ահա Իմ ուխտը քեզ հետ է,

Եվ դու բազում ազգերի հայր ես լինելու .

<sup>5</sup>Եվ այսուհետև քո անունը Աբրամ չի լինելու,

Այլ քո անունն Աբրահամ է լինելու,

Որովհետև քեզ շատ ազգերի հայր դարձրի:

<sup>6</sup>Եվ քեզ խիստ շատ պտղաբեր եմ դարձնելու և քեզ ազգեր եմ դարձնելու . և քեզանից թագավորներ կսերեն: <sup>7</sup>Եվ կհաստատեմ Իմ ուխտը Իմ ու քո միջև և քեզանից հետո քո սերնդի միջև՝ իրենց սերունդների համար, որ հավիտենական ուխտ լինի, որ ես Աստված լինեմ քեզ համար և քեզանից հետո՝ քո սերունդների համար: <sup>8</sup>Եվ քեզ և քեզանից հետո քո սերնդին տվեցի քո պանդխտության երկիրը, այսինքն՝ Քանանի ամբողջ երկիրը՝ որպես հավիտենական ունեցվածք . և նրանց Աստվածը կլինեմ»:

17:1-5 NASB բաժանում է այս հատվածը երկու պոեմների՝ 1բ-2, 4-5, սակայն NKJV, NRSV, TEV, NJB և JPSOA թարգմանությունները՝ ոչ:

17:1 «**իննսունինը տարեկան**» Խննդոցը արձանագրում է Աբրամի տարիքը մի քանի անգամ, որպեսզի մեզ փոխանցի նրա հավատքի ճամփորդության ժամանակագրությունը՝

1. 75 տարեկան՝ 12:4 – ՅԱՀՎԵՆ առաջին անգամ հայտնվում է նրան
2. 86 տարեկան՝ 16:16 – Իսմայելի ծնունդը
3. 99 տարեկան՝ 17:1 – ՅԱՀՎԵՆ երրորդ անգամ է հայտնվում նրան
4. 100 տարեկան (ամբողջական թիվ)՝ 17:17 – գլուխ 17-ում նրա տարիքը
5. 99 տարեկան՝ 17:24 – երբ թլփատվեց
6. 100 տարեկան՝ 21:5 – Իսահակի ծնունդը
7. չի նշվում կոնկրետ տարիքը, 24:1 – «տարիքն առած»
8. 175 տարեկան՝ 25:7 – մահվան տարիքը

❖ «**ՏԵՐԸ**» «ՅԱՀՎԵ» Աստծո ուխտի անունն է, որ տրված է Ելից 3:14-ում: Այս գլխում այն կիրառվում է միայն այստեղ: Կարծես թե այն շատ ավելի վաղ էր կիրառվել Սեթի տոհմագծում (տես՝ 4:26, և հաճախ Նահապետների կողմից): Սակայն, Ելից 6:3-ից իմանում ենք, որ Նահապետները նրան անվանում էին *Էլ Շարդայ* և ոչ թե ՅԱՀՎԵ: Հնարավոր է նրանք անվանում էին Նրան ՅԱՀՎԵ, սակայն մինչև Մովսեսի այրվող մորենու դեպքը չգիտեին այդ անվան լիարժեք նշանակությունը: Տե՛ս Հատուկ Թեմա 12:1:

❖ «**ՏԵՐԸ երևաց Աբրամին և ասաց նրան**» Աստված Աբրամին մի քանի անգամ հայտնվեց (այսինքն՝ 12:7; 18:1), սակայն արդեն տասներեք տարի էր անցել վերջին արձանագրված հայտնությունից հետո: Ըստ երևույթին ՅԱՀՎԵն ստուգում էր Աբրամի հավատքի կյանքը:

❖ «**Ես եմ Ամենակալ Աստվածը**» «Ամենակալ Աստված» անունը *Էլ Շարդայն* է: Այս տերմինի ստուգաբանությունը (BDB 994) անհայտ է: Ռաբբիներն ասում են, որ դա նշանակում է «ինքնաբավություն»: LXX և Վուլգատտան հետևում են այս գաղափարին թարգմանելով «Ամենակարող (*Էլ*) Աստված»: Ըստ երևույթին սա Աստծո անունն է Նահապետների ժամանակներում (տես՝ Ելից 6:3): Ծննդոցում այն կիրառված է վեց անգամ, իսկ Հորում՝ երեսունմեկ: Օլբրայթը հաստատում է,

որ դա ծագել է արքայերեն մի արմատից, որը նշանակում է լեռ կամ ժայռ (տես՝ Սաղմ. 18:1,2): Եթե այս տերմինն արտահայտում է՝ «Ժայռի Աստված» իմաստը, որպես ճշգրիտ նշանակությունը, ապա այն արտացոլում է քանանացիների դիցաբանությունը (տես՝ Ես. 14:13; Եզեկ. 28:2) կամ բաբելոնյան կրոնը (այսինքն՝ զիզուրատներ, որոնք վեր են խոյանում մարդկային ձեռքով կառուցված բլուրների վրա, տես՝ Ծննդոց 11) որոնց վրա երկրպագում էին իրենց աստվածների: Ինչ էլ որ եղել է բուն մտադրությունը, նախքան Ելից 19-20 նրանց նպատակը դառնալու էր դեպի Սինայ լեռան Աստծուն (տես՝ Դատ. 5:5): Տե՛ս Հատուկ Թեմա 12:1:

❖ **«Իմ առաջ քայլիր»** Սա ՅԱՀՎԵԻ կողմից Աբրամին տրված երկու պատվիրաններից առաջինն է՝

1. քայլիր՝ BDB 229, KB 246, *Hithpael* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. կատարյալ եղիր՝ BDB 224, KB 243, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ՅԱՀՎԵՆ Աբրամի հետ փոխահարաբերություն է կամենում, ինչպես որ Ադամի, Ենովքի և Նոյի հետ էր: «Իմ առաջ քայլիր» արտահայտությունը մատնանշում է մտերմություն, անձնական փոխահարաբերություն, առանձնահատուկ ապրելակերպ և հավատք: Սա շեշտադրում է ապրելակերպ հանդիսացող հավատքի փոխահարաբերությունը, որը հանդիսանում է 15:6-ում առկա հավատքի միջոցով շնորհքով արդարացման օրինական հայտարարության բալանսը: ՆԿ-ում Պողոսը և Հակոբոսը Քրիստոնեական կյանքի այս գույգ շեշտադրումները միավորում են (տես՝ Հռոմեացիների 4 և Հակոբոս 2): Ուշադրություն դարձրեք, որ ապրելակերպը ուխտի պայման է (տես՝ հ. 9): ՀԿ-ի բոլոր ուխտերը անպայմանական են Աստծո կողմից և պայմանական մարդկային արձագանքի առումով: Այս նույն տերմինը (BDB 229, KB 246)՝ քայլիր, կիրառվում է Ենովքի (տես՝ Ծննդ. 5:24) և Նոյի (տես՝ Ծննդ. 6:9) հավատքի ապրելակերպի համար:

❖ **«կատարյալ /անզլ.՝ անարատ»** Եբրայերեն այս արմատը (ԲԱՅ, BDB 1070, ԳՈՅԱԿԱՆԸ 1070, երկու ԱԾԱԿԱՆ ձևեր, 1070 և 1071) նշանակում են «ամբողջ սրտով», «ամբողջականություն», «ողջամտություն», «կատարելություն» և «անմեղություն»: Այն կիրառվել է՝

1. Նոյի համար՝ Ծննդ. 6:9
2. Աբրամի համար՝ Ծննդ. 17:1 (հրաման)
3. Աբիմելեքի համար՝ Ծննդ. 20:5-6
4. Հակոբի համար՝ Ծննդ. 25:27 (սովորաբար թարգմանվում է «հանդարտ» կամ «նուրբ»)
5. Հոբի համար՝ Հոբ 1:1,8; 2:3
6. Իսրայելի համար՝ 2 Օր. 18:13
7. Դավթի համար՝ 2 Թագ. 22:24; Սաղմ. 18:23,25,32
8. ՅԱՀՎԵՆ համար՝ 2 Օր. 32:4; 2 Թագ. 22:31; Սաղմ. 18:30

Այն նաև նշանակում է մաքուր կենդանի, իր ցեղատեսակի մեջ կատարյալ ներկայացուցիչ, որը ընդունելի էր զոհաբերության համար (տես՝ Ելից 12:5; 29:1, Ղևտ. 1:3,10; 3:1,6; 4:3,23,28,32):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ՀԱՆՑԱԶՈՒԻԿ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ**  
**SPECIAL TOPIC: BLAMELESS, INNOCENT, GUILTLESS, WITHOUT REPROACH**

Ա. Բացման սահմանումներ՝

1. Այս հասկացությունը աստվածաբանորեն նկարագրում է մարդու սկզբնական վիճակը (այսինքն՝ Ծննդոց 1, Եդեմի Պարտեզը):
2. Մեղքը և ապստամբությունը թուլացրեցին կատարյալ փոխահարաբերության այս կարգավիճակը (այսինքն՝ Ծննդոց 3):
3. Մարդկությունը (արու և էգ) փափագում է Աստծո հետ իր փոխահարաբերության վերականգնման, քանի որ նրանք ստեղծվել են Նրա պատկերով ու նմանությամբ՝ այսինքն՝ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27):
4. Աստված մեղավոր մարդկության հետ գործ ունեցավ մի քանի կերպերով՝
  - ա. աստվածավախ առաջնորդների միջոցով (այսինքն՝ Աբրահամ, Մովսես, Եսայի)
  - բ. զոհաբերության համակարգի միջոցով (այսինքն՝ Ղևտացիների 1-7)
  - գ. աստվածահաճո օրինակների միջոցով (այսինքն՝ Նոյ, Հոբ)
5. Ի վերջո Աստված ուղարկեց Մեսիային՝
  - ա. որպես Իր իսկ կատարյալ հայտնությունը (տես՝ Հովի. 1:1-14; Կող. 1:13-17; Եբր. 1:2-3)
  - բ. որպես մեղքի համար կատարյալ զոհ (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21)
6. Քրիստոնյաները անմեղ են դառնում՝

- ա. օրինական ճանապարհով՝ Քրիստոսի փոխանորդական արդարությամբ (տես՝ Հռոմ. 4:3,6,8, 11,22,23,24; Հակ. 2:23)
- բ. աստիճանաբար Սուրբ Հոգու կատարած գործի միջոցով (Հովհ. 16:8-11)
- գ. Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Հռոմ. 8:28-30; 2 Կորնթ. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1:4; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4:3; 5:23; 2 Թեսաղ. 2:13; Տիտ. 2:14; 1 Պետ. 1:15), որը իրականում Ադամի և Եվայի մեջ մարդկության կողմից կորցրած Աստծո պատկերի վերականգնումն է:
- 7. Երկինքը Եդեմի Պարտեզի կատարյալ փոխհարաբերության վերականգնումն է: Երկինքը Նոր Երուսաղեմն է, որն իջնելու է Աստծո ներկայությունից (տես՝ Հայտն. 21:2) սրբագործված երկիր (տես՝ 2 Պետ. 3:10): Աստվածաշունչը սկսում և ավարտվում է միևնույն թեմաներով:
  - ա. Աստծո հետ մտերմիկ, անձնական փոխհարաբերություն
  - բ. պարտեզի միջավայրում (Ծննդոց 1-2 և Հայտնություն 21-22)
  - գ. մարգարեական խոսքով՝ կենդանիների ներկայությունը և նրանց հետ միասին ապրելը (տես՝ Եսայի 11:6-9)

Բ. Հին Կտակարան

1. Գոյություն ունեն այնքան շատ երբայերեն բառեր, որոնք կրում են կատարելության, անմեղության, անարատության նշանակությունը, որ դժվար կլինի անվանել և ցույց տալ բոլոր մանրակրկիտ առնչությունները՝ կապերը:
2. Ահա այն հիմնական տերմինները, որոնք կրում են կատարելության, անմեղության կամ անարատության նշանակությունը (համաձայն Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, գրքի, էջ՝ 94-99 /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*/).
  - ա. *shalom* (BDB1022, KB 1532)
  - բ. *thamam* (BDB1070, KB 1743)
  - գ. *calah* (BDB478, KB 476)
3. Մեպտուագինտան (այսինքն՝ առաջին դարի եկեղեցու Աստվածաշունչը) երբայերեն այս հասկացությունները թարգմանում է Կոյնե Հունարեն տերմինների, որոնք կիրառվում են ՆԿ-ում (տես՝ ցածր Գ. կետը)
4. Հիմնական նշանակությունը կապված է զոհաբերության համակարգի հետ
  - ա. *amōmos* (BDB 1071, տես՝ Ելից 29:1; Ղևտ. 1:3,10; 3:1,6; Թվոց 6:14)
  - բ. *amiantos* և *aspilus* նաև ունեն հեթանոսական նշանակություն

Գ. Նոր Կտակարան

1. Օրինական հասկացությունը
  - ա. Երբայերենում օրինական հեթանոսական իմաստը թարգմանվում է *amōmos* (BDB 1071, տես՝ Եփես. 5:27; Փիլ. 2:15; 1 Պետ. 1:19)
  - բ. Հունարենում օրինական նշանակությունները (տես՝ 1 Կորնթ. 1:8; Կող. 1:22)
2. Քրիստոսն է անմեղ, անբիծ և անարատը (*amōmos*, տես՝ Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)
3. Քրիստոսի հետևորդները պետք է հետամուտ լինեն Նրան (*amōmos*, տես՝ Եփես. 1:4; 5:27; Փիլ. 2:15; Կող. 1:22; 2 Պետ. 3:14; Հուդա 1:24; Հայտն. 14:5)
4. Այս հասկացությունը նաև կիրառվում է եկեղեցու առաջնորդների համար
  - ա. *aneglētos*, «առանց դատապարտության» (տես՝ 1 Տիմ. 3:10; Տիտոս 1:6-7)
  - բ. *anepileptos*, «քննադատությունից վեր» կամ «առանց նախատիմքի» (տես՝ 1 Տիմ. 3:2; 5:7; 6:14; Տիտոս 2:8)
5. «Անարատ» հասկացությունը (*amiantos*) կիրառվում է՝
  - ա. Քրիստոսի համար (տես՝ Եբր. 7:26)
  - բ. Քրիստոնյայի ժառանգության համար (տես՝ 1 Պետ. 1:4)
6. «Լիարժեքության» կամ «ամբողջականության» հասկացությունը (*holoklēria*) (տես՝ Գործք 3:16; 1 Թեսաղ. 5:23; Հակ. 1:4)
7. «Առանց մեղադրանքի», «անհանցանք անմեղություն» հասկացությունը փոխանցվում է *amemptos* տերմինի միջոցով (տես՝ Ղուկ. 1:6; Փիլ. 2:15; 3:6; 1 թեսաղ. 2:10; 3:13; 5:23)
8. «Մեղադրանքի ենթակա չլինելու» հասկացությունը փոխանցվում է *amōmētos* (տես՝ 2 Պետ. 3:14)

9. «Անբիծ» «անարատ» հասկացությունը հաճախ կիրառվում է այնպիսի հատվածներում, որտեղ կան վերը նշված տերմիններից որևէ մեկը նույնպես (տես՝ 1 Տիմ. 6:14; Հակ. 1:27; 1 Պետ. 1:19; 2 Պետ. 3:14)

Դ. Երբայերենում և հունարենում կիրառված բառերի քանակը, որոնք փոխանցում են այս հասկացության իմաստը, ցույց է տալիս դրա կարևորությունը: Աստված հոգացել է մեր կարիքը Քրիստոսի միջոցով և այժմ մեզ կոչ է անում Նրա նման լինելու:

Հավատացյալները պաշտոնապես, իրավաբանորեն՝ դատական կարգով, հռչակված են «ճիշտ», «արդար», «անմեղ» Քրիստոսի գործի շնորհիվ: Այժմ հավատացյալները պետք է գրավեն իրենց դիրքը: «Քայլենք լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ» (տես՝ 1 Հովհ. 1:7): «Քայլենք մեր կոչմանն արժանի» (տես՝ Եփես. 4:1,17; 5:2,15): Հիսուսը վերականգնել է Աստծո պատկերը մեր մեջ: Մտերմիկ փոխհարաբերությունը այժմ հնարավոր է, սակայն հիշեք, որ Աստված ուզում է այնպիսի մարդիկ, որոնք այս կործանվող աշխարհում (այսինքն՝ ազգերի մեջ) կարտացոլեն Իր բնավորությունը, ինչպես Իր Որդին արեց: Մենք կանչված ենք սրբության (տես՝ Մատթ. 5:20,48; Եփես. 1:4; 1 Պետ. 1:13-16), Աստծո սրբությանը, ոչ միայն օրինապես, այլ բացառապես:

**17:2 «Ես դնում եմ/հաստատում եմ» ՅԱՀՎԵՆ խոստանում է՝**

1. «հաստատել» Իր ուխտը՝ BDB 678, KB 733, *Qal* ԸՂԶԱԿԱՆ. սա մի տարածված ԲԱՅ է շատ նշանակություններով: Միևնույն ԲԱՅԸ կիրառվում է ՅԱՀՎԵԻ Աբրամի սերունդներին երկիր «տալու» խոստման մեջ 12:7; 13:15; 15:7,18 և Աբրամի բողոքի մեջ, որ ՅԱՀՎԵՆ իրեն երեխաներ չի «տվել» 15:3-ում: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է թարգմանվել այս տերմինը գլուխ 17-ում՝

NASB	NIV
ա. դնել /անգլ՝ հաստատել/, հ. 2	հաստատել, հ. 2
բ. դարձնել, հ. 5	դարձնել, հ. 5
գ. դարձնել, հ. 6	դարձնել, հ. 6
դ. տալ, հ. 8	տալ, հ. 8
ե. տալ, հ. 16	տալ, հ. 16
զ. դարձնել, հ. 20	դարձնել, հ. 20

2. «բազմացնել»՝ BDB 915, KB 1176, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով (այսինքն՝ շատ սերունդներ):

3. երկիրը նշված է հ. 8-ում:

❖ **«Իմ ու քո միջև ուխտ»** Ուխտը ՀԿ-ի կենտրոնական թեման է: ՅԱՀՎԵՆ գալիս է Աբրամի մոտ նախաձեռնող շնորհքով, սակայն նա՝ Աբրամը, պետք է արձագանքի, ոչ միայն սկզբնական հավատքով, այլ նաև հավատքի ապրելակերպով: Գոյություն ունեն փոխադարձ իրավունքներ, ինչպես նաև պարտավորություններ: ՀԿ-յան ուխտերը հավասարների միջև չեն, այլ ձևավորում են մշակութային օրինաչափություն Ք. Ա. 2000-ականների քետական՝ սուզերական պայմանագրերի համար: Այս ուխտը ավելի ուշ բնութագրվում է հ. 7-ում:

❖ **«և քեզ խիստ բազմացնելու եմ»** Սա ՅԱՀՎԵԻ կողմից Աբրամին՝ իր ծեր հասակում, իր ամուլ կնոջ հետ, տված խոստման մեջ տարածված թեմա է (տես՝ Ծննդ. 12:2; 15:2-5; 13:16; 17:6): Այն դառնում է իր ամուլը փոխելու համար հիմք: Պարզապես մի հիշեցում, որ դա եղել է Աստծո բուն ծրագիրը կյանքի բոլոր տեսակների համար (տես՝ Ծննդոց 1 և ուշադրություն դարձրեք Եսայի 60):

**17:3 «Աբրամը երեսի վրա ընկավ»** Սա հարգանքի և երկյուղածության նշան էր Աստծո հանդեպ (տես՝ 18:2). գրառում 17:17:

❖ **«Աստված»** *Elohim* տիտղոսը Հնագույն Մերձավոր Արևելքում Աստծո համար տարածված անուն էր, որը հիմնված է *Eh* արմատի վրա: Ռաբբիներն ասում են, որ այն շեշտադրում է Աստծո գորությունը և վերահսկողությունը բնության վրա որպես Արարիչ, մինչ ՅԱՀՎԵՆ շեշտադրում է Նրա շնորհքը և փրկագործությունը: Սա կարծես թե շատ ավելի լավ տեսություն է, քան քննադատության ռեսուրսներինը (JEDP): Տե՛ս Հատուկ Թեմա 12:1:

**17:4 «դու բազում ազգերի հայր ես լինելու»** Ուշադրություն դարձրեք, որ բազում ազգեր են ներգրավված Աբրահամի ժառանգության մեջ և ոչ թե միայն Իսրայելը (տես՝ 35:11; 48:4,19): Սա հարթակ է պատրաստում ՆԿ-ի համար, որտեղ Աբրահամը համարվում է բոլոր հավատք ունեցող մարդկանց հայրը (տես՝ Հռոմ. 2:28-29; Գաղ. 3:1բ):

**17:5 «Աբրամ»** Նրա անունը փոխվելու է «Աբրահամի», որը նշանակում է «բազմության հայր»: Սա գիտական ստուգաբանություն չէ, այլ տիպիկ տարածված ստուգաբանություն, որը շատ հասկանալի է Ծննդոցի այս առաջին գլուխներին: Շատերն են ասում, որ «Աբրահամ» անվան հիմքն ընկած է 12:2-ի խոստման վրա:

**17:7 «Ես կհաստատեմ»** Այս ԲԱՅԸ (BDB 877, KB 1086, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱԸ) *Hiphil* արմատով կիրառվում է երդումների հետ, որպեսզի վստահություն հաղորդի դրանց իրականացման հարցում (տես՝ 6:18; 17:19; Ելից 6:4; Ղևտ. 26:9; Եզեկ. 16:62): ՅԱՀՎԵՆ նվիրվում է Իր խոստումների իրականացմանը:

❖ **«հավիտենական ուխտ»** Եբրայերեն *'olam* (BDB 761) տերմինը ծագել է մի արմատից, որը նշանակում է «թաքնված»: Դա պարտադիր կերպով չի նշանակում «հավիտյանս հավիտենից» (այսինքն՝ հհ. 8,13,19), սակայն պետք է մեկնաբանվի իր կոնտեքստի մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա 13:14:

**17:8 «Եվ քեզ և քեզանից հետո քո սերնդին տվեցի /անլ.՝ կտամ/ քո պանդխտության երկիրը»** Սա ՅԱՀՎԵՐ առաջին խոստումներից մեկն է, որ տվել է Աբրահամին (տես՝ 12:7; 13:15,17 և 15:18), իսկ հետագայում նաև Հակոբին՝ 48:4-ում:

❖ **«նրանց Աստվածը կլինեն»** Սա դառնում է ուխտին բնորոշ լեզուն (այսինքն՝ Ելից 6:7; 29:45; Ղևտ.26:12,45; Թվոց 15:41; Երեմ. 7:23; 11:4; 24:7; 30:22; 31:1,33): ՅԱՀՎԵՆ յորահատուկ կերպով բացառիկության իմաստով, ընտրում է Աբրամին և նրա սերունդներին, որպեսզի ազգերի առջև ներկայացնեն Իրեն (տես՝ 2 Օրինաց 7:6; 14:2; 29:12-13): ՅԱՀՎԵՆ սիրում էր ազգերին նրա միջոցով:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:9-14**

<sup>9</sup>Եվ Աստված ասաց Աբրահամին. «Իսկ դու պահիր իմ ուխտը՝ դու և քեզանից հետո եկող սերունդներն իրենց սերունդներում: <sup>10</sup>Սա է Իմ ուխտը, որ պետք է պահեք, Իմ և քո միջև, և քեզանից հետո՝ քո սերնդից ձեր բոլոր արու զավակները պետք է թրփատվեն. <sup>11</sup>պիտի թրփատեք ձեր անդամների թրփիկները, և սա ուխտի նշան կլինի Իմ ու ձեր միջև: <sup>12</sup>Եվ ձեր բոլոր սերունդներում ձեր մեջ եղող ամեն ութ օրական արու պետք է թրփատվի, ինչպես ընդոծինը, այնպես էլ որևէ օտարից արծաթով գնվածը, որ քո սերնդից չէ: <sup>13</sup>Քո ընդոծինը և քո արծաթով գնվածը անպատճառ պետք է թրփատվեն. և իմ ուխտը ձեր մարմնում հավիտենական ուխտ լինի: <sup>14</sup>Եվ անթրփատ արու զավակը, որի թրփիկը թրփատված չէ, այդ անձն իր ժողովրդից պետք է կորչի. նա խախտել է իմ ուխտը»:

**17:9 «դու պահիր Իմ ուխտը»** Այս ԲԱՅԸ (BDB 1036, KB 1581, *Qal* ԱՆԿԱՏԱԸ) կրկնվում է 17:10-ում: Հիշե՛ք, որ ուխտը պայմանական էր Աբրահամի հավատքի պատասխանի հիման վրա, թե՛ սկզբում և թե՛ իր ամբողջ կյանքի ընթացքում: Այս ճշմարտությունը հստակ երևում է 26:5-ում, Ելից 12:24; 13:10; 15:26; 19:5; 20:6; 23:17; Ղևտ. 18:4,5,26,30; 19:19,37; 20:8,22; 22:31; 25:18; 26:3; 2 Օր. 4:2,6,9,23,40; 5:1,29; 6:2,3,12,17,25; 7:9,12; 8:1,2,6,11; 10:13; 11:1,8,22 և այլն: Հնազանդությունը վճռորոշ է, և ոչ թե այլընտրանքային տարբերակ:

**17:10 «թրփատվեն»** Թրփատությունը (BDB 557 II) Հին Արևելքում մի նոր ծես չէր համարվում: Շրջապատող բոլոր ազգերն էլ իրենց երեխաներին թրփատում էին, երբ սեռական հասունության շրջանում էին, բացառությամբ Ասորիներից, Բաբելոնացիներից, Իսլացիներից կամ Կենտրոնական Պաղեստինի Քռեցիներից և Փղշտացիներից (Էզեյան ժողովուրդները), որոնք զավթել էին Պաղեստինի հարավային ափը Ք. Ա. 1200-ականներին (տես՝ Երեմ. 9:25-26): Սակայն Իսրայելացիների համար թրփատությունը կրոնական նպատակով էր: Այն միշտ եղել է ներքին հավատքի արտաքին նշան (տես՝ 2 Օրինաց 10:16; Երեմ. 4:4; 9:26; Հռոմ. 2:28-29; Կող. 2:11-13):

**17:12-14** Բացի իսրայելացիներից այլ ցեղեր ու ժողովուրդներ նույնպես կարող էին ներգրավվել ուխտի մեջ, եթե հնազանդվեին Աստծո կամքին (տես՝ Ելից 12:44; 20:10): Սա ՀԿ-ում այն ընտանեկան հավատքի նախադեպն է, որը տեսնում ենք ՆԿ-ում (տես՝ Գործք 10:2; 11:14; 16:15,31-34; 18:8):

**17:12** «Թլփատություն» բառը (BDB 557 II) այս գլխում մի քանի անգամ է նշվում՝

1. հ. 10 – *Niphal* ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ
2. հ. 11 – *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. հ. 12 – *Niphal* ԱՆԿԱՏԱՐ
4. հ. 13 – *Niphal* ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ (ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԻ և ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇԻ համադրությունը ուժգնացնում է գործողությունը, «դուք անպատճառ՝ պարտադիր կերպով պետք է թլփատվեք»)
5. հ. 24 - *Niphal* ԱՆՈՐՈՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
6. հ. 25 - *Niphal* ԱՆՈՐՈՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
7. հ. 26 - *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
8. հ. 27 - *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

ՅԱՀՎԵՆ վերցրեց մշակութային մեծ տարածում գտած մի ծես, փոխեց դրա նախաձեռնության ժամանակը և կիրառեց այն Իր ընտրյալ ժողովրդի համար որպես անտեսանելի նշան: Սա հիզիենայի համար չէր, այլ ուներ կրոնական նպատակ:

**17:14** «այդ անձն իր ժողովրդից պետք է կորչի /անգլ.՝ կարվի/» Սա միևնույն ԲԱՅՆ է, որ օգտագործվում է «ուխտ կտրել/կապել» (*Qal* արմատ, տես՝ 15:10) արտահայտության մեջ: *Niphal* արմատում այն արտահայտում է մահապատիժ (տես՝ Ելից 12:15,19; 30:33,38; 31:14; Ղևտ. 7:20,21,25, 27; 17:4,9,14; 18:29; 19:8; 20:17,18; 22:3; 23:29; Թվոց 9:13; 15:30,31; 19:13,20. տես NIDOTTE գրառումը, հատոր 3, էջ՝ 431): Անհնազանդությունն ուներ լուրջ հետևանքներ: Դա ազդում էր տվյալ անհատի կյանքում «հավիտենական ուխտի» գործադրման վրա:

Որոշ աստվածաբաններ նախընտրում են այս ԲԱՅԸ մահապատժի փոխարեն դիտարկել որպես հաղորդակցությունից զրկելու կամ համայնքից հեռացնելու իմաստով: Գիտական քննարկումներն այս թեմայի շուրջ դեռ շարունակվում են:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:15-21**

<sup>15</sup>Եվ Աստված ասաց Աբրահամին. «Իսկ քո կնոջը՝ Սարային է վերաբերում, նրա անունը Սարա չկոչես, այլ Սառա է նրա անունը: <sup>16</sup>Եվ ես օրհնելու եմ նրան, նաև նրանից մի որդի եմ տալու քեզ, հիրավի, օրհնելու եմ նրան, և նա ազգերի մայր է լինելու, ժողովուրդների թագավորներ են ծագելու նրանից»: <sup>17</sup>Այն ժամանակ Աբրահամն երեսնիվայր ընկավ, ծիծաղեց և իր սրտում ասաց. «Արդյոք հարյուր տարեկան մարդուց զավակ կլինի՞, և իննսուն տարեկան Սառան կարո՞ղ է ծնել»: <sup>18</sup>Եվ Աբրահամն ասաց Աստծուց. «Ո՛հ, եթե Իսմայելը կարողանար ապրել Քո առջև»: <sup>19</sup>Եվ Աստված ասաց. «Իրապես, քո կինը՝ Սառան որդի է ունենալու քեզ համար, և նրա անունն Իսահակ էս դնելու. և ես Իմ ուխտը կհաստատեմ նրա հետ՝ որպես հավիտենական ուխտ, և նրանից հետո նրա սերնդի հետ: <sup>20</sup>Ինչ Իսմայելին է վերաբերում, լսեցի քեզ. ահա օրհնեցի նրան, կաճեցնեմ և խիստ շատ կբազմացնեմ նրան. նա տասներկու իշխաններ է սերելու, և նրան մեծ ազգ եմ դարձնելու: <sup>21</sup>Բայց իմ ուխտը հաստատելու եմ Իսահակի հետ, որին քեզ համար Սառան կծնի եկող տարի այս ժամանակ»:

**17:15** «ոչ թե Սարա, այլ Սառա» Երկու անուններն էլ նույն նշանակությունն ունեն, սակայն դրանցից մեկն ավելի հին տարբերակն է: Ոմանք կարծում են, որ արմատը «արքայադուստրն» է (BDB 979 I, KB 1354 I, Սառա՝ KB 1354 II) «իշխել» ԲԱՅԻՑ, սակայն հավանական է, որ այն ծագել է «պայքարել» արմատից, որը ավելի լավ տարբերակ է, քանի որ այս արմատը առնչվում է «Իսրայել»-ի հետ (տես՝ 32:28, BDB 975 I), որը միևնույն «մրցել» արմատից է (KB 1354 I):

Սառայի կենսագրական վերանայում՝

1. Նա Աբրահամի կինն էր
2. Նա ամուլ էր, Ծննդ. 11:29-30
3. Նա Աբրահամի կես-քույրն էր, Ծննդ. 20:12
4. Նա շատ գեղեցիկ էր, Ծննդ. 12:10-13, տես՝ 20:1-7
5. Նա խանդոտ կին էր, Ծննդ. 16; 21:8-21
6. Նա էլ Աբրահամի պես ծիծաղեց (Ծննդ. 17:17) Աստծո խոստումների վրա, Ծննդ. 18:12-15



7. Նա մահացավ 127 տ-ում և թաղվեց Քերթոնում՝ Մաքսիելայի քարանձավում, Ծննդ. 23:2-20
8. Նա այլաբանորեն կիրառվում է Հազարի հետ Գաղ. 4:21-31-ում
9. Նա ներկայացվում է որպես օրինակ կանանց համար, 1 Պետր. 3:1-6

**17:16 «նրանից /Սառայից/ մի որդի են տալու քեզ»** Արդեն տասներեք տարի էր անցել խոստումից հետո: Իսմայելը ծնվել էր Հազարից, սակայն սա խոստացված ժառանգը չէր, որի հետ ուխտ էր հաստատելու: Աբրահամը հավատաց Աստծուն 15:6-ում (տես՝ Հռոմ. 4:3), սակայն շատ տարիներ անցան այդ օրից մինչև որ խոստումն արդեն կատարվեց:

❖ **«Ես օրհնելու եմ նրան»** Սեպտուագինտան, Փեշիթան և Վուլգատտան, բոլորն էլ այս համարում տալիս են արական սեռի դերանուն, որը վերաբերում է Իսահակին, սակայն նկարագրությունը գուցա հետ է Աբրահամին տրված խոստմանը:

❖ **«նա ազգերի մայր է լինելու, ժողովուրդների թագավորներ են ծագելու նրանից»** Կրկին նկատեք, որ շեշտադրումն ավելի շատ ազգերի վրա է, քան Իսրայելացիների (տես՝ հ. 6):

**17:17** ՅԱՀՎԵՆ կրկին ստուգում է Աբրահամին: Բոլոր այս տարիներից հետո (այսինքն՝ 13) արդյո՞ք նա դեռ հավատում է (տես՝ 15:6), որ երեխա է ունենալու (որդի կամ ժառանգ): Աբրահամը «ծիծաղում է» (17:17), Սառան «ծիծաղում է» (18:12,13,15): Ի՞նչ է սա իրենից ներկայացնում՝

1. խոստման իրականացման ուրախության (տես՝ 21:6)
2. կասկածանքի ժեստ (տես՝ 19:14)

Պողոսը Հռոմ. 4:19-ում կենտրոնանում է Աբրահամի հավատքի վրա, սակայն արդյո՞ք սա փորձվելուց հետո նրա ունեցած կատարելագործված հավատքն էր, թե այն սկզբնական հավատքը, որը փորձում էր օգնել խոստման իրականացմանը՝ Հազարին իր մոտ առնելով: Այս մարդիկ կատարյալ չէին: Գոյություն ունեն «կատարյալ» մարդիկ: Աստված չի պահանջում կատարյալ հավատք: Ծննդոցում կենտրոնական թեման ՅԱՀՎԵՆի հավատարմությունն է և ոչ թե Աբրահամի կամ Սարայի:

Ուշադրություն դարձրեք Աբրահամի արտաքին գործողության՝ «երեսի վրա ընկնելու», սակայն ներքին արձագանքի՝ «ծիծաղելու» միջև տարբերությունը: Միայն Աստված կարող է երկուսն էլ տեսնել:

**17:18** Հավանաբար սա ևս մեկ փորձ էր Աստծուն «օգնելու» Իր խոստումը կատարելու (ինչպես Հազարը) կամ հնարավոր է Աբրահամի իրական սիրո արտահայտությունն էր Իսմայելի հանդեպ: Կավիւնը պնդում է, որ սա Աբրահամի կողմից հավատքի պակասության նշան էր և որ այս համարը գրվել է բացասական իմաստով:

❖ **«Իսմայել»** Իսմայելը (BDB 1035) Հազարի՝ Սարայի աղախնու, որդին է: Նրա անունը նշանակում է «թող Աստված լսի» և կարող է լինել Հազարի և Աբրահամի աղոթքների բառախաղը: Իսմայելը արական ցեղերի հայրն է (տես՝ 16:10-12):

**17:19 «նրա անունը Իսահակ են դնելու»** Բոլոր մյուս նահապետների անունները, բացի Իսահակից, փոխվել են, երբ ՅԱՀՎԵՆ հետ փոխհարաբերության մեջ են մտել: Պատճառն այն է, որ նրա անունը հենց սկզբից էլ Աստծո կողմից էր տրվել: «Իսահակ» (BDB 850) «ծիծաղ» (BDB 850) տերմինի հետ կապված բառախաղ է: Սա բացատրվում է 21:6-ում: Սառայի անհավատությունը փոխվելու է «ծիծաղի» և ուրախության:

❖ **«հավիտենական ուխտ»** Սա երբայերեն միլենույն 'olam տերմինն է (տես՝ հհ. 6,8): Այն նշանակում է «գաղտնի ապագայի մեջ» և ոչ թե «հավիտյանս հավիտենից»: Տե՛ս Հատուկ Թեմա 13:14-ում:

**17:20** Տե՛ս Ծննդոց 25:12-18, որտեղ ուրվագծված է Իսմայելի ազգաբանությունը:

**17:21** Սա Աստծո ուխտի խոստման իրականացումն է, որը սկսվել էր դեռևս Ծննդոց 12-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:22-27**

<sup>22</sup>Եվ նրա հետ խոսելը վերջացրեց, և Աստված Աբրահամի մոտից վեր գնաց: <sup>23</sup>Եվ Աբրահամը վերցրեց իր որդի Իսմայելին և իր բոլոր ընդոժիններին և իր բոլոր դրամով գնվածներին՝ Աբրահամի ընտանիքի բոլոր արու մարդկանց, և հենց նույն օրը նրանց թլիփը թլիփատեց, ինչպես Աստված ասել էր նրան: <sup>24</sup>Եվ Աբրահամն ինսուռնինը տարեկան էր, և նրա թլիփը թլիփատվեց, <sup>25</sup>իսկ նրա որդին՝ Իսմայելը, տասներեք տարեկան էր, և նրա թլիփը թլիփատվեց:

**<sup>26</sup>Հենց նույն օրը թլփատվեցին Աբրահամը և իր որդի Իսմայելը, <sup>27</sup>և նրա տան բոլոր մարդիկ՝  
ընդոծին թե օտարականներից դրամով գնված, նրա հետ թլփատվեցին:**

**17:22 «Աստված վեր գնաց»** Աստված գործում էր այդ օրերի մարդկանց ակնկալիքին համահունչ, այնպես ինչպես նրանք էին պատկերացնում, որ Աստված կգործեր (տես՝ 11:5; 35:13): Մեր օրերի արևուտքի մարդիկ այս արտահայտությունը վերագրում են համբարձմանը, սակայն սա կարող է պարզապես «հանկարծակի հեռանալու» իմաստով դարձվածք լինել:

**17:23 «հենց նույն օրը, ինչպես Աստված ասել էր նրան»** Սա արտահայտում է Աբրահամի հնազանդությունը (տես՝ 12:4; 22:3):

**17:25 «Իսկ նրա որդին՝ Իսմայելը, տասներեք տարեկան էր, երբ նրա թլփիլը թլփատվեց»** Թլփատությունը արաբների մոտ դեռևս սեռական հասունության արարողություն է, որը կատարում են տասներեք տարեկան հասակում: Հավանաբար դա արտացոլում է աստվածաշնչյան այս պատմությունը: Պետք է նշել, որ իսրայելացիները թլփատվում են ութ օրեկան հասակում, որը ուխտի փոխհարարերության նշան է, և ոչ թե անձնական հավատքի նշան (ժամանակակից հարավանությունները սա օգտագործում են որպես համագոր մանկան մկրտությանը): Հավատքը պետք է բխի և կյանքի կոչվի, որպեսզի ուխտը յուրաքանչյուր անհատի համար վավերացվի:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզինք յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է Ծննդոց 17-ը կապված Ծննդոց 12 և 15-ի հետ:
2. Ինչո՞ւ էին Նահապետների անունները փոխվում:
3. Հին Կտակարանի ուխտը պայմանական էր, թե՞ առանց պայմանների:
4. Նկարագրե՞ք ուխտը իր պարտավորություններով հանդերձ:
5. Ի՞նչ կապ ունի կամ չունի թլփատությունը շրջապատող երկրների հետ:

## ԾՆՆԴՈՑ 18

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Խոստացված Իսահակի ծնունդը	Խոստման որդին	Տիրոջ այցելությունը Աբրահամին և Սառային	Աբրահամին որդի է խոստացվել	հայտնություն Սամբրեի մոտ
18:1-8	18:1-8	18:1-8	18:1-5ա  18:5բ  18:6-8	18:1-5   18:6-8
18:9-15	18:9-15	18:9-15	18:9ա 18:9բ 18:10ա 18:10բ-12 18:13-14 18:15ա 18:15բ	18:9-15
	Աբրահամը բարեխոսում է Սողոմի համար	Աբրահամի բարեխոսությունը Սողոմի և Գոմորի համար	Աբրահամը աղերսում է Սողոմի համար	Աբրամը բարեխոսում է Սողոմի համար
18:16-21	18:16-21	18:16-21	18:16-19 18:20-21 18:22-25	18:16-21  18:22-26
18:22-33	18:22-33	18:22-33	18:26 18:27-28ա 18:28բ 18:29ա 18:29բ 18:30ա 18:30բ 18:31ա 18:31բ 18:32ա 18:32բ-33	18:27-29     18:30-32  18:33

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Այս բաժինը շատ անտրոպոմորֆիկ է (Աստծո մասին խոսում է մարդկային տերմիններով): Այսպիսի գրականական ժանրը միշտ հրեա մեկնաբաններին նյարդայնացրել է: Սակայն Եկեղեցուց մեզինից շատերի համար սա նախամարմնավորված Քրիստոսն է, որը ֆիզիկապես արտացոլում է իրապես Աստծո ներկայությունը (տես՝ «Տիրոջ հրեշտակը» 12:7-ում):
- Բ. Ծննդոց 18-19 տեսանելի իրականության մեջ ներկայացնում է Աստծո էության երկու կողմերը՝ սերը և դատաստանը: Այս հատկությունները կարելի է տեսնել ոչ միայն Աստծո էության մեջ, այլ նաև կարող է փոխանցվել (1) Իր ժողովրդին, որն արտացոլում է Նրա սերը և (2) Սողոմի ժողովրդին, որն արտացոլում է Չարի բնավորությունը, և հետևաբար՝ վերապրել Աստծո գայրությունը:
- Գ. Հայտնի չէ, թե գլուխ 18-ի որ մասում է Աբրահամը գիտակցում, որ այցելուները գերբնական էակներ էին: Արձանագրվածներից մեծ մասը պարզապես Արևելյան ավանդույթ է:
1. նա մինչև գետին խոնարհվեց (տես՝ Ծննդ. 23:7; 33:6-7; 42:6; 43:26)
  2. նա լվացավ նրանց ոտքերը (տես՝ Ծննդ. 19:2; 24:32; 43:24)
  3. նա առաջարկեց ճաշել (տես՝ հ. 5)
  4. նա կանգնած մնաց, մինչ ուտում էին (տես՝ հ. 8)
  5. նա նրանց *Աղոնայ* կոչեց, սակայն «Պարոնի» իմաստով (տես՝ հ. 3)
- Մյուս կողմից էլ կարծես թե կային որոշ ցուցիչներ այն մասին, որ նա հասկացել էր շատ ավելի վաղ, որ նրանք գերբնական բնության էակներ էին:
1. նա շտապեց և վազեց (տես՝ հհ. 2,6 և 7), որը մի Նահապետի համար տարօրինակ վարք էր օրվա այդ տապին
  2. նա պատրաստեց մեծ քանակությամբ կերակուր ճաշկերույթի համար (տես՝ հ. 6)
  3. նա նույնիսկ իր նախրից մի կենդանի մորթեց ճաշի համար, որը անսովոր էր (տես՝ հ. 7)
- Համար 9-ից ակնհայտ է, որ նա ճանաչում է Տիրոջը անձնավորված այս այցելուներից մեկի մեջ:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 18:1-8

<sup>1</sup>Եվ ՏԵՐԸ նրան երևաց Մամբրեի կաղնիների մեջ: Օրվա տաք ժամին նա նստել էր վրանի դռանը. <sup>2</sup>և վեր բարձրացրեց աչքերը և նայեց, ու ահա երեք մարդ էին կանգնել իր մոտ, և երբ տեսավ, վրանի դռնից վազեց նրանց ընդառաջ և մինչև գետին խոնարհվեց, <sup>3</sup>և ասաց. «Տե՛ր իմ, եթե հիմա Քո առաջ շնորհ եմ գտել, աղաչում եմ՝ մի՛ անտեսիր քո ծառային, <sup>4</sup>թող մի քիչ ջուր բերվի, խնդրում եմ, և լվացե՛ք ձեր ոտքերը և ծառի տակ հանգստացե՛ք: <sup>5</sup>Եվ ես մի պատառ հաց բերեմ և ձեր սրտերն ամրացրե՛ք, հետո կգնաք, որովհետև սրա համար է, որ ձեր ծառայի մոտ եք եկել»: Եվ նրան ասացին. «Արա՛ այնպես, ինչպես որ ասացիր»: <sup>6</sup>Եվ Աբրահամը շտապ գնաց վրանը՝ Սառայի մոտ և ասաց. «Շո՛ւտ արա, երեք գրիվ ընտիր այլուր հունցի՛ր և նկանակներ շինիր կրակարանի վրա»: <sup>7</sup>Եվ նախրի մոտ վազեց Աբրահամը և ի մատղաշ ու լավ հորթ առավ ու տվեց պատանուն, սա էլ շտապեց այն պատրաստելու: <sup>8</sup>Ու կոզի ու կաթ և իր պատրաստած հորթը վերցրեց և նրանց առաջ դրեց. իսկ ինքը ծառի տակ՝ նրանց մոտ կանգնեց. և նրանք կերան:

**18:1 «Եվ ՏԵՐԸ նրան երևաց»** «Երևաց» ԲԱՅԼ (BDB 906, KB 1157, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է Ծննդոցում մի քանի անգամ (տես՝ 12:7 /երկու անգամ/, 17:1; 18:1; 26:2,24; 35:1,9): Այն արտահայտում է անձնական ֆիզիկական հայտնություն: Քանի որ ՅԱՀՎԵՆ հավիտենական հոգի է, այս մարմնավորումը դժվար է բացատրել:

Իմ համար հետաքրքիր է, որ ռաբբիներն ասում են, որ գլուխ 18 ուղղակիորեն կապված է գլուխ 17-ի և Տիրոջ այցելության նպատակն էր տեսնել, թե արդյոք Աբրահամը վերականգնվել էր թափառությունից հետո: Իրականում, ռաբբիներն ընդունում են, որ այս երեք այցելուներն էլ հրեշտակներ են եղել, որոնք պարզապես ներկայացնում էին Տիրոջը: Նրանք այնդում են, որ (1) մի հրեշտակը եկել էր օգնելու Սառային, որ հղիանար, (2) մյուսը եկել էր բժշկելու Աբրահամին, և (3) մյուսը եկել էր կործանելու Սողոմը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԿ ԼԵՉՈՒԲ)**

**SPECIAL TOPIC: GOD DESCRIBED AS A HUMAN (ANTHROPOMORPHIC LANGUAGE)**

**I. Այսպիսի լեզուն շատ ընդունված է ՀԿ-ում (մի քանի օրինակներ)**

**Ա. Ֆիզիկական մարմնի մասերը**

1. աչքեր՝ Ծննդ.1:4,31; 6:8; Ելից 33:17; Թվոց 14:14; 2 Օր.11:12; Չաք.4:10
2. ձեռքեր՝ Ելից 15:17; Թվոց 11:23; 2 Օր.2:15
3. բազուկ՝ Ելից 6:6; 15:16; Թվոց 11:23; 2 Օր.4:34; 5:15
4. ականջներ՝ Թվոց 11:18; 1 Թագ.8:21; 4 Թագ.19:16; Սաղմ.5:1; 10:17; 18:6
5. դեմք՝ Ելից 32:30; 33:11; Թվոց 6:25; 2 Օր.34:10; Սաղմ.114:7
6. մատեր՝ Ելից 8:19; 31:18; 2 Օր.9:10; Սաղմ.8:3
7. ձայն՝ Ծննդ.3:8,10; Ելից 15:26; 19:19; 2 Օր.26:17; 27:10
8. ոտքեր՝ Ելից 24:10; Եզեկ.43:7
9. մարդկային կերպարանք՝ Ելից 24:9-11; Սաղմ.47; Ելից 6:1; Եզեկ.1:26
10. Տիրոջ հրեշտակը՝ Ծննդ.16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 3:4,13-21; 14:19; Դատ.2:1; 6:22-23; 13:3-22

**Բ. Ֆիզիկական գործողություններ**

1. խոսում է որպես արարչագործության մեխանիզմ՝ Ծննդ.1:3,6,9,11,14,20,24,26
2. քայլում է (այսինքն՝ դրա ձայնը) Եղեմում՝ Ծննդ.3:8; 18:33; Ամբ.3:15
3. փակում է Նոյան Տապանի դուռը՝ Ծննդ.7:16
4. հոտոտում է զոհերը՝ Ծննդ.8:21; Դևտ.26:31; Ամովս 5:21
5. իջնում է՝ Ծննդ.11:5; 18:21; Ելից 3:8; 19:11,18,20
6. թաղում է Մովսեսին՝ 2 Օր.34:6

**Գ. Մարդկային զգացմունքներ (մի քանի օրինակներ)**

1. զղջում / ապաշխարում՝ Ծննդ.6:6,7; Ելից 32:14; Դատ.2:18; 1 Թագ.15:29,35; Ամովս 7:3,6
2. բարկություն՝ Ելից 4:14;15:7; Թվ.11:10;12:9; 22:22; 25:3,4; 32:10,13,14; 2 Օր.6:5; 7:4; 29:20
3. նախանձոտ՝ Ելից 20:5; 34:14; 2 Օր.4:24; 5:9; 6:15; 32:16,21; Հեսու 24:19
4. զզվանք/նողկանք՝ Դևտ.20:23; 26:30; 2 Օր.32:19

**Դ. Ընտանեկան տերմիններ (մի քանի օրինակներ)**

1. Հայր  
ա. Իսրայելի՝ Ելից 4:22; 2 Օր.14:1; Եսայի 1:2; 63:16; 64:8; Երեմ.31:9; Ովս.11:1  
բ. թագավորի՝ 2 Թագ.7:11-16; Սաղմ.2:7  
գ. հայրական արարքների փոխաբերությունները՝ 2 Օր.1:31; 8:5; 32:6-14; Սաղմ.27:10; Առ.3:12; Երեմ.3:4,22; 31:20; Ովս.11:14; Մաղ.3:17
2. Ծնող՝ Ովս.11:1-4
3. Մայր՝ Սաղմ.27:10; Եսայի 49:15; 66:9-13 (կերակրող մոր նմանություն)
4. Երիտասարդ հավատարիմ սիրեցյալ՝ Ովսես 1-3

**II. Այսպիսի լեզվի կիրառության պատճառները՝**

- Ա.** Անհրաժեշտությունն է, որ Աստված Իրեն հայտնի մարդկությանը: Աստծո ամենատարածված հասկացությունը որպես տղամարդ անտրոպոմորֆիզմ է, քանի որ Աստված Հոգի է:
- Բ.** Աստված վերցնում է մարդու կյանքի ամենակարևոր ոլորտները և օգտագործում է դրանք, որպեսզի Իրեն հայտնի անկում ապրած մարդկությանը (հայր, մայր, ծնող, սիրեցյալ)
- Գ.** Չնայած երբեմն անհրաժեշտ է լինում (օր.՝ Ծննդ.3:8), սակայն Աստված չի ուզում սահմանափակված լինել որևէ մարդկային ֆիզիկական կերպարանքով (տես՝ Ելից 20; 2 Օրինաց 5)
- Դ.** Մեծագույն անտրոպոմորֆիզմը եղավ Հիսուսի մարմնացումը: Աստված ֆիզիկական մարմին հագավ, դարձավ շոշափելի (տես՝ 1 Հովհ.1:1-3): Աստծո պատգամը դարձավ Աստծո Խոսքը (տես՝ Հովհ.1:1-18):

**III.** Հետաքրքիր համառոտ քննարկման համար կարող եք կարդալ՝ Գ. Բ. Քայրո, *Աստվածաշնչի լեզուն և պատկերավոր խոսքը*, /G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*/, հատոր 10, «Անտրոպոմորֆիզմ», *The International Standard Bible Encyclopaedia*, էջ՝ 152-154:

❖ «Մամբրեի կաղնիների մեջ» Այս նույն տեղը նշվում է նաև 13:18 և 14:13-ում: Շատ կարևոր է մեր համար գիտակցել այս շրջաններում ծառերի կարևորությունը: Դրանք գրեթե դիտարկվում էին որպես սրբություններ, քանի որ ստորգետնյա ջրի առկայության ապացույց էին: Նաև ապահովում էին շուք՝ ստվեր, որն աշխարհի այս մասում կարող էր նշանակել ջերմաստիճանի 60 աստիճան տարբերություն: Իրականության մեջ հավանաբար դա կաղնի չի եղել, այլ տերեթինտ (տես՝ UBS, *Helps For Translators, Fauna and Flora of the Bible*, էջ՝ 154-155): Ռաբբիներն ասում են, որ դա մի ծառ չէր, այլ ծառուղի, որը հնարավոր է ճիշտ է:

❖ «Օրվա տաք ժամին նա նստել էր վրանի դռանը» Սա այնքան իրատեսական է այդ օրերի մշակույթի համար, քանի որ վրանի ծածկոցը բաց էր լինում օրվա տաք ժամանակահատվածում: Մարդիկ օրվա յադ ժամերին հանգստանում էին, որպեսզի խուսափեին արևահարությունից:

**18:2 «ահա երեք մարդ էին կանգնել իր մոտ /անգլ.՝ առջև/»** Համար 19:1-ից հասկանում ենք, որ այդ մարդկանցից երկուսը հրեշտակներ էին (տես՝ Եբր. 13:2):

❖ «մինչև գետին խոնարհվեց» Սա կարող է դիտարկվել որպես՝  
1. արևելյան ողջույնի սովորույթ (այսինքն՝ 23:7; 33:6-7; 43:28)  
2. հարգանքի քայլ (աստվածային այցելուներ, այսինքն՝ 19:1; կամ ՅԱՀՎԵՆ Ինքը, 24:26,48,52)  
3. վախի՝ երկյուղի քայլ (Աբրահամը փախստական էր այդ օտար երկրում. տես՝ Տեքստային Հասկացություններ, Գ.)

**18:3 «Տեր իմ»** Սրանք *Ադոնայ* (BDB 10): Այս տերմինը հատուկ նշելը մեզ ասում է, թե ինչին էին հավատում Մագորեթիկ գիտնականները այս անունների նշանակության շուրջ (այսինքն՝ #3 ներքևում): Անունը երեք տարբեր կերպերով է նշվում՝ (1) առաջինը որպես «Պարոն» կամ «Սըր», (2) երկրորդը այս ձևի ՀՈԳՆԱԿԻՆ է, սովորաբար թագավորներ կամ տերեր, և (3) երրորդ կերպը նկարագրում է Աստվածությանը (այսինքն՝ այստեղ): Տես Հատուկ Թեմա 12:1-ում:

❖ «երթե հիմա Քո առաջ շնորհ եմ գտել» Սա տարածված արևելյան ողջույնի ձև է (տես՝ 30:27):

❖ 3-5 համարները քաղաքավարի, սակայն հույժ կարևոր խնդրանքների շարք են՝  
1. հյուրասիրություն մնալու և հանգստանալու համար (BDB 716, KB 778, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով), հ. 3  
2. հյուրասիրություն, որ թույլ տան ջուր բերվի (BDB 542, KB 534, *Hophal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով), լվանալու (BDB 934, KB 1220, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) նրանց որտքերը, հ. 4  
3. հյուրասիրություն հանգստանալու՝ պատվավոր տեղում մի մեծ ծառի տակ («հենվել», BDB 1043, KB 1612, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), հ. 4  
4. հյուրասիրություն թույլ տալու Աբրահամին կերակուր պատրաստել և բերել (BDB 542, KB 534, *Qal* ԸՂՁԱԿԱՆ), հ. 5  
5. հյուրասիրություն իրենց թարմացնելու համար (BDB 703, KB 761, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), հ. 5

**18:4 «ծառի տակ հանգստացե՛ք»** Այս օրերում «հանգստանալ» տերմինը նշանակում էր ուտելու համար պատրաստվել: Սովորաբար հաղորդակցության ժամանակն անցնում էր ճաշկերույթի շուրջ: Ճաշկերույթները ընկերություններ և համաձայնություններ կնքելու միջոց էին:

**18:5 «Եվ ես մի պատռո հաց կբերեմ»** Սա կարելի է համարել թերագնահատում, եթե համեմատենք, թե հ. 6-ում Սառան ինչ չափսի հաց էր թխել, որը պետք է կազմեր 33 կվարտա /1 կվարտան ¼ գալոն է/:

❖ «որ ձեր ծառայի մոտ եք եկել» Սա երբայերեն դարձվածքաբանական արտահայտություն է, որը կարծես թե ակնարկում է, որ անգամ այդ պահին, Աբրահամը կարծես թե հասկանում էր, որ այդ այցելությունը պատահական չէր և ոչ էլ աննպատակ: Համար 9-ից ես հավատում եմ, որ նպատակը Սառայի հավատքն ավելացնելն էր, ինչպես նաև օգնել Աբրահամին հասկանալու իր ծառայությունը բարեխոսության մեջ, որը կարևոր էր լինելու բոլոր Նահապետների համար:

**18:6** Աբրահամը շտապում է (ԲԱՅԸ կիրառվում է երեք անգամ հհ. 6,7-ում) հրամայելու իր կնոջը հյուրերի համար կերակուր պատրաստելու: Սրա համար բավականին ժամանակ էր անհրաժեշտ՝

1. շո՛ւտ արա, BDB 554, KB 553, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. հունցի՛ր, BDB 534, KB 525, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. նկանակներ շինի՛ր, BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

❖ «երեք գրիվ» Սա “se’ah” (BDB 684) տերմինն է, որը հավասար է 1/3 եփա:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՆԱԳՈՒՅՆ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԿՇԻՌՆԵՐՆ ՈՒ ԾԱՎԱԼՆԵՐԸ  
(ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ)**

**SPECIAL TOPIC: ANCIENT NEAR EASTERN WEIGHTS AND VOLUMES (METROLOGY)**

Կշիռներն ու չափման միավորները, որոնք օգտագործվում են առևտրի մեջ, չափազանց կարևոր էին հնագույն գյուղատնտեսական էկոնոմիկայում: Աստվածաշունչը հորդորում է հրեաներին ազնիվ լինել միմյանց հետ իրենց գործարքներում (տես՝ Ղևտ. 19:35-36; 2 Օր.25:13-16; Առակ. 11:1; 16:11; 20:10): Իրական խնդիրը միայն ազնվությունը չէր, այլ չստանդարտացված տերմիններն ու համակարգերը, որոնք օգտագործվում էին Պաղեստինում: Կարծես թե գոյություն ունեին կշիռների երկու համակարգ՝ յուրաքանչյուր չափի «թեթևը» և «ծանրը» (տես՝ *Աստվածաշնչի Մեկնաբանի Բառարան*, հատոր՝ 4, էջ՝ 831 /*The Interpreter’s Dictionary of the Bible*): Նաև Եգիպտոսի տասնորդական համակարգը (հիմնված 10-ի վրա) զուգորդվել էր Միջագետքի sexagesimal (հիմնված 6-ի վրա) համակարգին:

Կիրառվող «չափերի» և «քանակի» մեծամասնությունը հիմնված էր մարդկային մարմնի մասերի, կենդանիների բեռների և հողագործների բեռնարկղերի վրա, որոնցից և ոչ մեկն էլ ստանդարտացված չէր: Հետևաբար, ամենադյուրին ճանապարհը՝ ցույց տալ կշիռներն ու չափումները հարաբերական աղյուսակի վրա:

I. Ծավալի կամ տարողության տերմիններ, որոնք առավել հաճախ են օգտագործվում

Ա. Սորուն մարմինների չափ

1. Քոռ կամ խոմեր (BDB 330, հնարավոր է «էշր բեռ», BDB 331), օր. Ղև. 27:16; Ովս.3:2
2. Քոռ/լեթեխ/Letekh (կամ letech, BDB 547, հնարավոր է ակնարկում է Ովս. 3: 2)
3. Արդու (BDB 35), օրինակ, Ելից 16:36; Ղևտ. 19:36; Եզեկ. 45: 10-11,13,24
4. Գրիվ (BDB 684), օրինակ, Ծննդ. 18: 6; I Թագ. 25:18; 3 Թագ. 18:32; 4 Թագ. 7: 1,16,18
5. Օմեր (BDB 771 II, հնարավոր է, «մի խուրձ» [ընկած ցորենի շարք] BDB 771 I), օրինակ, Ելից 16: 16,22,36; Ղև. 23: 10-15
6. Հիմեն (BDB 798, արդու «տասներորդ մասը»), օր. Ելից 29:40; Ղև. 14:21; Թվ. 15: 4; 28: 5,13
7. կապճի (կամ Kab, BDB 866), տես՝ 4 Թագ. 6:25

Բ. Հեղուկ Չափման Միջոցներ

1. Քոռ (BDB 499) օր. Եզ. 45:14 (կարող է լինել չոր միջոց, տես՝ 2 Մնաց. 2:10, 27: 5)
2. Մար (BDB 144 II), օր. 3 Թագ. 7: 26,38; 2 Մնաց. 2:10; 4: 5; Ես. 5:10; Եզ. 45: 10- 11,14
3. Հիմեն (BDB 228), օրինակ, Ելից 29:40; Ղևտ. 19:36; Եզեկ. 45:24
4. յոզ (BDB 528), տես՝ Ղևտ. 14: 10,12,15,21,24

Գ. Աղյուսակ (վերցված Roland deVaux, *Ancient Israel*, h. 1, էջ 201 և *Encyclopedia Judaica*, *Հրեական Հանրագիտարան*, h. 16, էջ 379):

խոմեր (չոր) = Քոռ (հեղուկ կամ չոր)	1					
արդու (չոր) = մար (հեղուկ)	10	1				
գրիվ (չոր)	30	3	1			
հիմեն (հեղուկ)	60	6	2	1		
օմեր / հիմեն (չոր)	100	10	-	-	1	
կապճի / kab (չոր)	180	18	6	3	-	1
յոզ (հեղուկ)	720	72	24	12	-	4

II. Առավել հաճախ օգտագործվող քաշի տերմիններ

Ա. Երեք ամենատարածված կշիռներն են տաղանդը, սիկլը և կերատը:

1. Հին Կտակարանում ամենամեծ քաշը տաղանդն է: Ելից 38: 25-26 մենք սովորում ենք, որ մեկ տաղանդը հավասար է 3000 սիկլ (այսինքն՝ «կյոր քաշ» BDB 503):
2. Սիկլ տերմինը (BDB 1053, «քաշ») օգտագործվում է այնքան հաճախ, որ այն ենթադրվում է, այլ ոչ թե հաստատվում տեքստում: Կան մի քանի սիկլի արժեքներ նշված ՀԿ-ում:
  - ա. «առևտրային ստանդարտ» (NASB Ծննդ. 23:16)
  - բ. «սրբարանի սիկլ» (NASB Ելից 30:13)

- գ. «Ըստ թագավորի քաշի» (NASB 2 Թագ. 14:26), որը կոչվում է նաև «արքայական կշիռ» - ի փոխ պապիրուսի:
3. Կերատ (BDB 176 II) գնահատվում է 20 մեկ սիկլի համար (տես՝ Ել 30:13, Դև. 27:25; Թվ. 3:47; 18:16, Եզ.45:12): Այդ գործակիցները տատանվում են Միջագետքից Եգիպտոս: Իսրայելը հետևում էր ավելի տարածված քանանական (Ուգարիթ/ Ugarit) գնահատման միավորին:
  4. Մնաս (BDB 584) գնահատվում է 50 կամ 60 սիկլ: Այս տերմինը հիմնականում նշված է հինկտակարանյան ուշ գրքերում (այսինքն՝ Եզ. 45:12, Եզրաս 2:69, Նեեմ. 7: 70-71): Եզեկիելն օգտագործում է 60-ից մինչև 1 հարաբերակցությունը, իսկ Քանանում օգտագործվում է 50-ից մինչև 1 հարաբերակցությամբ:
  5. Բեկա (BDB 132, «կես սիկլ», տես՝ Ծննդ. 24:22) օգտագործվում է միայն երկու անգամ ՀԿ-ում (տես՝ Ծննդ. 24:22, Ել.38:26) և գնահատվում է կես սիկլ: Նրա անունը նշանակում է «բաժանել»:

**Բ. Աղյուսակ**

1. Ըստ Հնգամատյանի՝					
տաղանդ	1				
մնաս	60	1			
սիկլ	3,000	50	1		
բեկա	6,000	100	2	1	
կերատ	60,000	1,000	20	10	1
2. Ըստ Եզեկիելի՝					
տաղանդ	1				
մնաս	60	1			
սիկլ	3,600	60	1		
բեկա	7,200	120	2	1	
կերատ	72,000	1,200	20	10	1

**18:7-8** Համարներ 6-8 նկարագրում են մի ճոխ և մանրակրկիտ կերպով պատրաստված ճաշկերույթ: Արբահամը այս հյուրերին հյուրասիրեց իր ունեցած լավագույնը: Նրանք կարևոր այցելուներ էին:

**18:8 «ինքը ծառի տակ՝ նրանց մոտ կանգնեց»** Ֆիլոն, Չոզեֆուսը և Թարգմուս Չոնաթանը սա թարգմանում են որպես «նրանք կարծես թե կերան», սակայն մեզնից այն մարդիկ, ովքեր ընդունում են ՆԿ-յան հետագա հայտնությունը, տեսնում ենք, որ նույնիսկ Հիսուսը կերավ (տես՝ Դուկ. 24:41-43) Իր փառավորվելուց հետո, որը երկնային արարածի կերակուր ուտելը դարձնում է ոչ անհնարին բան: Հրեա գրողները շատ անհարմար են իրենց զգում նմանատիպ անտրոպոմորֆիկ սահմանումներից:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 18:9-15**

<sup>9</sup>Եվ ասացին նրան. «Ո՛ր է քո կինը՝ Սառան»: Եվ նա ասաց. «Ահա վրանում է»: <sup>10</sup>Եվ Նա ասաց. «Եկող տարի ստույգ քեզ մոտ կվերադառնամ, կյանքի ժամանակի համաձայն, և ահա քո կինը՝ Սառան, մի որդի կունենա»: Իսկ Սառան լսում էր վրանի դռնից, որը նրա ետևում էր: <sup>11</sup>Արդ, Արբահամն ու Սառան ծերացած էին և օրերն անցկացրած. և Սառայի համար դադարել էր կանանց օրենքի մեջ լինելը: <sup>12</sup>Ուստի Սառան իր մտքում ծիծաղեց՝ ասելով. «Ես պառավելուց հետո՞ եմ հաճույք ունենալու, և տերս էլ արդեն ծերացած է»: <sup>13</sup>Եվ ՏԵՐՆ ասաց Արբահամին. «Սառան ինչո՞ւ ծիծաղեց՝ ասելով. «Մի՞թե ես իրոք երեխա եմ ունենալու, երբ արդեն ծեր եմ»: <sup>14</sup>ՏԻՐՈՋ համար արդյոք դժվար բան կա՞. նշանակված ժամանակ նորից քեզ մոտ կգամ, ըստ կյանքի ժամանակի, և Սառան մի որդի կունենա»: <sup>15</sup>Այն ժամանակ Սառան ուրանալով ասաց. «Զեմ ծիծաղել», քանի որ վախեցավ, իսկ Նա ասաց. «Ո՛չ, ծիծաղեցիր»:

**18:9 «Ո՛ր է քո կինը՝ Սառան»** Նրանք գիտեին նրա անունը: Այս մշակույթի մեջ ամուսնուն իր կնոջ մասին հարցնելը պետք է որ տարօրինակ հնչեր: Սա ցույց է տալիս այն մտերմությունը, որ այս այցելուները տածում էին Արբահամի հանդեպ:

**18:10 «ստույգ քեզ մոտ կվերադառնամ»** Սա միևնույն երբայերեն բառի (BDB 996, KB 1427) ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇԸ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅՆ է, որը ավելի է ուժգնացնում ԲԱՅԻ իմաստը՝ «Ես հաստատ կվերադառնամ»:



❖ **«Եկող տարի. . . կյանքի ժամանակի համաձայն, և ահա քո կինը՝ Սառան, մի որդի կունենա»**  
Սա հենց այն խոսքն է, որ Աստված տվել էր Աբրահամին 17:15-21-ում, սակայն այս համատեքստում խոսքն ուղղված է նաև Սառային:

NASB-ի «Եկող տարի այս ժամանակ» խոսքը MT թարգմանության բառացի արտահայտությունը չէ, որն ունի «արթնության ժամանակին» (BDB 311 I, 3, այսինքն՝ գարնանը) իմաստը: Սա կրկնվում է հ. 14-ում, սակայն հավելյալ արտահայտությամբ՝ «նշանակված ժամանակին» (BDB 417): Սա ավելացված է հստակեցնելու, որ այդ ժամանակահատվածը լինելու է ինն ամիս և ոչ թե մի ամբողջ տարի (տես՝ 4 Թագ. 4:16-17):

**18:11** Սա մի ավելացված մեկնություն է պատմիչի (այսինքն՝ հեղինակի) կամ էլ հետագա ներշնչված խմբագրի կողմից: Ներշնչանքը հավատքի հարց է: Հավատացյալները համոզված են, որ բոլոր Կանոնական Սուրբ Գրերի ճշմարիտ հեղինակը Սուրբ Հոգին էր: Սուրբ Գրքի վերջնական տարբերակների գրի առնվելու ճշգրիտ ընթացակարգերն ու ժամանակներն անհայտ են:

**18:12 «Սառան իր մտքում ծիծաղեց՝ ասելով»** Աբրահամը ծիծաղեց 17:17-ում: Սառան ծիծաղում է, քանի որ մտածում է, որ անկարելի էր, որ ինքն ու Աբրահամը՝ լինելով իրենց ձեր հասակում, հնարավոր էր երեխա ունենային: Այստեղ ասված նրա /Սառայի/ խոսքերը կիրառվում են 1 Պետ. 3:6-ի հեղինակի կողմից, ցույց տալու նրա հարգանքը Աբրահամի հանդեպ: Ըստ երևույթին նա անցել էր դաշտանադարի ժամանակը և նրանց սեռական կյանքն արդեն իսկ որոշ ժամանակ գոյություն չունեի: Ինչպես գիտենք, Աստծո գործությամբ, ոչ միայն Սառան ի վիճակի է լինում հղիանալու, այլ Աբրահամը ի վիճակի է լինում նաև ուրիշ երեխաներ ունենալու:

**18:13 «Եվ ՏԵՐՆ ասաց Աբրահամին. «Սառան ինչո՞ւ ծիծաղեց»** Երեք հյուրերից մեկը համարվում է, որ եղել է հենց ՅԱՀՎԵՆ Ինքը: Տերը դիմում է Աբրահամին, քանի որ այդ օրերին անպատշաճ կլիներ դիմել ուղղակիորեն Սառային: Սառայի հավատքի հետ Աստծո կատարած աշխատանքի մասին ճշմարտությունը կարելի է տեսնել Եբր. 11:11-ում: Մենք ինչ-որ առումով Սառայի մարդասիրությանը հանդիպում ենք նրա կողմից իր ծիծաղի ուրացման մեջ (տես՝ հ. 15): Հետագայում, Աստված խոստացյալ զավակին անվանելու էր «ծիծաղ» բառի տեսքով, ինչպես տեսնում ենք 21:3,6,7-ում: Նկատե՛ք, որ Ծննդոց 12-ում Աբրահամին Աստծո կողմից տրված սկզբնական խոստումից արդեն 25 տարի էր անցել:

❖ **«ասելով»** ՅԱՀՎԵՆ մեջբերում է հենց Սառայի մտքերը, ցույց տալով Իր ամենագետ լինելը և տալիս Իր խոստման հավաստիքը:

**18:14 «ՏԻՐՈՉ համար արդյոք դժվար բան կա՞»** ՅԱՀՎԵՒ ամենագիտությունը համահունչ է Իր ամենատես լինելու հետ (տես՝ Եբեմ. 32:17,27; Սատթ. 19:26): ՅԱՀՎԵՆ փորձում է կառուցելու և հաստատելու Իր վրա Աբրահամի և Սառայի ունեցած հավատքը՝ վստահությունը: ՅԱՀՎԵՆ հավատարիմ է Իր խոսքին: Նրանք պետք է հնազանդվեն Իր խոսքին: Նա Աստված է, որ խոսում է և կատարում:

Այստեղ թարգմանված «դժվար» (BDB 810, KB 928) տերմինը նշանակում է «արտասովոր», «Աստծո սքանչելի գործ»: Նկատե՛ք այս տերմինի կիրառությունը Ելից 15:11; Սաղմ. 77:14; 78:12; 88:10; 119:129; 139:6 և Եսայի 9:6; 25:1; 29:14; Դան. 12:6:

Հետաքրքիր է, թե ինչպես են Նահապետների բոլոր առաջին կանայք բոլորն էլ առանց Աստծո օգնության անկարող եղել զավակներ ունենալ: Դա Իր գործությունը, նպատակը և հավիտենական ծրագիրը ցույց տալու կերպերից մեկն է եղել: Այն մատնացույց է անում Դավթի սերնդից Մեսիայի կուսական ծնունդը: ՅԱՀՎԵՆ ունի հավիտենական փրկագործության ծրագիր, անձ և ազգաբանություն, որը Նա զարգացնելու և պաշտպանելու էր:

❖ **«նշանակված ժամանակ»** Տե՛ս հ. 10-ի գրառումը:

**18:15** Աբրահամն ու Սառան կատարյալ մարդիկ չեն: Կատարյալ մարդիկ գոյություն չունեն: Նրանք երկուսն էլ ցուցաբերում են Անկման նշաններ (այսինքն՝ Ծննդոց 3): Նրանք երկուսն էլ հավատքի և կասկածի խառնուրդ են հանդիսանում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 18:16-21**

**<sup>16</sup>Եվ մարդիկ այնտեղից վեր կացան, ուղղվեցին դեպի Սոդոմ. և Աբրահամն էլ նրանց հետ էր գնում, որ նրանց ճանապարհի <sup>17</sup>և ՏԵՐՆ ասաց. «Մի՞թե Ես գաղտնի եմ պահելու Աբրահամից այն, ինչ անում եմ <sup>18</sup>տեսնելով, որ Աբրահամը հաստատապես մի մեծ ուզորեղ ազգ է**

**դառնալու, և երկրի բոլոր ազգերը նրանում օրհնվելու են: <sup>19</sup>Որովհետև Ես ճանաչեցի նրան, որ իր որդիներին ու իրենից հետո՝ իր տանը կպատվիր, և նրանք ՏԻՐՈՋ ճանապարհը կպահեն՝ արդարությամբ և իրավունքով շարժվելու համար, որպեսզի ՏԵՐՆ Աբրահամի վրա բերի, ինչ որ ասել էր նրա մասին»: <sup>20</sup>Եվ ՏԵՐՆ ասաց. «Որովհետև Սողոմոնի և Գոմորի աղաղակը շատացավ, և որովհետև նրանց մեղքը շատ ծանրացավ. <sup>21</sup>ուստի իջնեմ ու տեսնեմ, թե Ինձ հասած աղաղակի պե՛ս է ամեն ինչ, և եթե ոչ, Ես կիմանամ»:**

**18:16 «Եվ մարդիկ այնտեղից վեր կացան, ուղղվեցին դեպի Սողոմ»** Ջերոմը տեղեկացնում է, որ Քերթոնից ոչ շատ հեռու մի վայր կա, որտեղից մարդ կարող է տեսնել Մեռյալ Ծովի շրջանը, հավանաբար հարթավայրային քաղաքների հեռավորությամբ: Ժամանակակից շատ հնետաբաններ ենթադրում են, որ հարթավայրի քաղաքները Մեռյալ Ծովի հարավային ափերին էին:

**18:17-19** Սա կարծես թե ՅԱՀՎԵԻ կողմից մենախոսություն լինի կամ հնարավոր է Նա սա մեղմ կերպով արտահայտեց, որպեսզի Աբրահամը լսի և գիտակցի Տիրոջ հետ իր բացառիկ կապը: Սա է հանդիսանում Աբրահամի համար «Աստծո ընկերը /բարեկամը/» կոչվելու աղբյուրը (տես՝ 2 Մնաց. 20:7; Եսայի 41:8; Հակ. 2:23): Նմանատիպ ճշմարտություն հայտնվում է Հիսուսի կողմից Իր աշակերտներին Հովհաննես 15:15-ում:

ՅԱՀՎԵՆ հայտնում է Իր անմիջական հետագա գործողությունները (այսինքն՝ հարթավայրի քաղաքների հանդեպ դատաստանը, տես՝ գլուխ 19) Աբրահամին քաջալերելու Սառայի միջոցով նրա որդի պարգևելու Իր խոստման համար: Աբրահամի ազգաբանությունը լինելու էր ՅԱՀՎԵԻ ձեռքի մեջ գործիք, որպեսզի ազգերին Իրեն բերի և վերականգնի Եդեմի պարտեզի միջի մտերմիկ փոխհարաբերությունը:

Աբրահամը այստեղ ներկայացվում է որպես մարգարե (տես՝ 20:7): ՅԱՀՎԵՆ հայտնում է Իրեն մարգարեներին բացառիկ և սահմանված կերպերով (այսինքն՝ Ամոս 3:7), որը ցույց է տալիս, որ Նա է վերահսկում է ժամանակն ու իրադարձությունները և թե ովքեր են Իր ճշմարիտ խոսնակները՝ մարգարեները:

Համար 18-ը հանդիսանում է 12:1-3-ում սկիզբ առած առաջին խոստումներին վերաբերող խոսք:

**18:18 «Աբրահամը հաստատապես մի մեծ ու զորեղ ազգ է դառնալու»** ԲԱՅԸ հանդիսանում է միևնույն արմատից ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ (BDB 224, KB 243), որն արտահայտում է ուժգնություն կամ այս դեպքում՝ հաստատ խոստում:

❖ **«Երկրի բոլոր ազգերը նրանում օրհնվելու են»** Որոշ քննարկումներ կան, թե արդյոք այս հատված է պետք է թարգմանվի ԿՐԱՎՈՐԱԿԱՆ, թե ԱՆԴՐԱԿԱՐՁՎՈՂ սեռով (այսինքն՝ *Niphal* արմատ): Կարծես թե Ծննդոցի այս հատվածում դրան հանդիպում ենք երկու ձևով էլ: Սակայն այն նաև հաստատում է Աստծո սիրո տիեզերական բնույթը: Մենք կկանչենք Աբրահամի Աստծուն և դրանով կլինենք օրհնված, թե արդյոք Աբրահամի Աստվածը կօրհնի մեզ հենց Աբրահամի միջոցով (այսինքն՝ Մեսիայի ազգաբանությունը և հավատքի միջոցով շնորհքով արդարանալու գաղափարը, տես՝ 15:6) դա խնդիր չէ (տես՝ 12:3; 22:18; 28:14; Գործք 3:25; Գաղ. 3:8):

Ուշադրություն դարձեք այս համարի և հ. 25-ի տիեզերական նշանակությունը: Աբրահամը գիտեր, որ ՅԱՀՎԵՆ տարածքային, ցեղային կամ ընտանեկան աստված չէր, այլ ամբողջ երկրի Աստվածը: Չարմանալ կարելի է, թե այդ երբ այս աստվածաբանական հասկացությունը բույն դրեց Աբրահամի մեջ: Սկզբում (գլուխ 13) հնարավոր չէր, որ Աբրահամը լիարժեք կերպով գիտակցեր իր ունեցաչ տեսիլքի նշանակությունները, սակայն ինչ-որ մի ժամանակ նա սկսեց հասկանալ դրանք (այսինքն՝ անվերապահ միաստվածությունը):

**18:19 «Որովհետև Ես ճանաչեցի /ընտրեցի/ նրան»** Սա երբայերեն «ճանաչել» (BDB 393, KB 390, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ) տերմինն է, որը կիրառվում է Ծննդ. 4:1; 19:5,8; Թվոց 31:18-ում, ցույց տալու «մտերմիկ անձնական փոխհարաբերություն»: Այն նաև կարելի է հասկանալ որպես նախասահմանություն, սակայն այստեղ ավելի ճշգրիտ իմաստն է՝ «հոգալը» (տես՝ Ելից 2:25; 2 Օր. 2:7; 33:9; Ովսեա 13:5):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԳԵԼ (հիմնականում որպես պարադիգմ Բ Օրինացի կիրառմամբ)**  
**SPECIAL TOPIC: KNOW (using mostly Deuteronomy as a paradigm)**

Երբայերեն «ճանաչել» (*yada*, BDB 393) բառը մի քանի *Qal* նշանակություն ունի (ստուգաբանական):  
1. հասկանալ բարին և չարը՝ Ծննդ. 3:22; 2 Օր. 1:39; Ես. 7:14-15; Հովնան 4:11

2. ճանաչել հասկանալով՝ 2 Օր. 9:2,3,6; 18:21
3. ճանաչել փորձառաբար՝ 2 Օր. 3:19; 4:35; 8:2,3,5; 11:2; 20:20; 31:13; Հեաու. 23:14
4. խորհել՝ 2 Օր. 4:39; 11:2; 29:16
5. անձնապես ճանաչել
  - ա. անձի՝ Ծննդ. 29:5; Ելից 1:8; 2 Օր. 22:2; 33:9
  - բ. աստծո՝ 2 Օր. 11:28; 13:2,6,13; 28:64; 29:26; 32:17
  - գ. ՅԱՀՎԵԻՆ՝ 2 Օր. 4:35,39; 7:9; 29:6; Ես. 1:3; 56:10-11
  - դ. սեռական՝ Ծննդ. 4:1,17,25; 24:16; 38:26
6. սովորած հմտություն կամ գիտություն՝ Ես. 29:11,12; Ամովս 5:16
7. իմաստուն լինել՝ 2 Օր. 29:4; Առակ. 1:2; 4:1; Ես. 29:24
8. Աստծո գիտությունը՝
  - ա. Մովսեսի՝ 2 Օր. 34:10
  - բ. Իսրայելի՝ 2 Օր. 31:21

❖ «որ իր որդիներին ու իրենից հետո՝ իր տանը կապավիրի, և նրանք Տիրոջ ճանապարհը կպահեն» Ուշադրություն դարձրեք այն ակնարկը, որ Աբրահամը զավակ է ունենալու և իր հավատքը փոխանցելու է իր սերնդին (տես՝ 2 Օր. 4:9; 6:7): Նաև նկատի ունեցեք հնագանդության պայմանը, որը հաստատ ուխտի պարտավորությունների մաս է կազմում (տես՝ 17:1), ոչ միայն Աբրահամի համար, այլ իրեն հաջորդող հավատքի սերունդների համար: Տերն ուզում է մի ժողովուրդ, որը ազգերին կարտացոլի Իր բնավորությունը: «Տիրոջ ճանապարհը» տերմինը հետաքրքիր է, քանի որ այն արտահայտում է հավատքի ապրելակերպ (տես՝ Դատ. 2:22; Սաղմ. 119:1): Սա եղել է վաղ եկեղեցու առաջին անունը՝ տիտղոսը (տես՝ Գործք 9:2; 18:25-26; 19:9,23; 22:4; 24:14,22; Հովհ. 14:6):

❖ «արդարությամբ և իրավունքով» Այս երկու բառերը (BDB 842 և 1048) հաճախ միասին են օգտագործվում: Դրանք նկարագրում են Աստծո, հարևանի և համայնքի համար սիրո կյանք, որը հստակ կերպով սահմանվում է Ելից 20 և 2 Օրինաց 5-ի Տաս Պատվիրաններում: Նկատեք ազգաբանության մեջ ապրելակերպ հանդիսացող այս վիճակը Աստծո հայտնված բնավորության հետ (տես՝ 17:1):

**18:20 «Եվ Տերն ասաց. «Որովհետև Սողոմի և Գոմորի աղաղակը շատացավ»** «Աղաղակ» տերմինը (BDB 277) բառախաղ է շատ նմանատիպ եբրայերեն մի բառի, որը նշանակում է «աղերսանք» (BDB 277): Սողոմի և Գոմորի դատաստանի այս նույն պատմությունը արձանագրված է Ծննդոց 19-ում և Հուդայի հ. 7-ում:

Նկատե՛ք, թե ինչպես է բնութագրվում Սողոմի մեղքը՝

1. մեծ՝ BDB 912 I, KB 1174, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. շատ (BDB 547) ծանրացավ /զերեզման՝ BDB 457, KB 455, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

Նրանց մեղքերը «աղաղակում» էին ՅԱՀՎԵԻՆ դատաստանի համար: Հնարավոր է, որ Դովտը և իր ընտանիքն էին այն միակ մարդիկ, որոնք աղոթում էին (տես՝ հ. 23) կամ պահապան հրեշտակները, կամ նույնիսկ հանդիսանում է հենց մեղքերի համար փոխաբերություն:

ՅԱՀՎԵՆ գիտի մարդկային մեղքի խորությունները (տես՝ 6:5-6,11-12,13բ; 15:16; Սաղմ. 14:1-3):

**18:21 «ուստի իջնեմ /անգլ՝ Ես կիջնեմ/»** Այս անտրոպոմորֆիկ արտահայտությունը խոսում է ՅԱՀՎԵԻ անձնապես ներգրավվածության մասին՝

1. դատաստանում՝ այստեղ և Ծննդ. 11:5,7-ում
2. օգնության մեջ՝ Ելից 3:8

Այն չպետք է կիրառվի ընդհարելու ՅԱՀՎԵԻ ներկայիս և ապագայի իրադարձությունների իմացության հետ (այսինքն՝ «Բաց թեիզմ»): Սա պարզապես արևելյան դարձվածքային լեզու է:

Նաև նկատի ունեցեք այն կերպը, որով ՅԱՀՎԵՆ անձնապես ներկա է երկու հրեշտակների հետ («մարդիկ»): Նա գիտի ինչն է ճիշտ (1) Իր էության շնորհիվ և (2) հրեշտակների վերապրածի շնորհիվ: Այս երեք «մարդկանց» (տես՝ 18:1-2) ԵԶԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻ թվերի անորոշ վիճակ կա:

Սա շատ կարևոր համար է, որը ցույց է տալիս, որ արդար Աստված՝ չնայած Նա ամենագետ է, միևնույն է անձնապես է քննում դատաստանից առաջ: Այն ռաբբիների կողմից օգտագործվում էր ասելու, որ սա պետք է հատկանշական լիներ Իսրայելում իրականացվող դատերին (տես՝ Ծննդ. 11:5; Ելից 3:8):

❖ «**Եթե ոչ, Ես կիմանամ**» Սա ևս մեկ անտրոպոմորֆիկ արտահայտություն է, որը նկարագրում է Աստծո արդարությունը (տես՝ Ելից 2:25):

Այս համարում ՅԱՀՎԵԻ հետ կապված մի քանի ԸՂՁԱԿԱՆՆԵՐ կան՝

1. Ես կիջնեմ՝ BDB 432, KB 434, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
2. Ես կտեսնեմ՝ BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
3. Ես կիմանամ՝ BDB 393, KB 390, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 18:22-33**

<sup>22</sup>Եվ այն մարդիկ այնտեղից իրենց դեմքերը դարձրին, դեպի Սողոմ գնացին. և Աբրահամը դեռ կանգնած էր ՏԻՐՈՉ առջև: <sup>23</sup>Եվ Աբրահամը մոտեցավ ու ասաց. «Մի՞թե ամբարիշտների հետ արդարներին էլ ես կործանելու: <sup>24</sup>Գուցե այն քաղաքում հիսուն արդար կա. մի՞թե նրանց էլ կկործանես ու չես խնայի այն վայրը՝ այդտեղ եղող այն հիսուն արդարների համար. <sup>25</sup>Քավ լիցի, որ Դու այդպիսի բան անես, որ արդարին ամբարշտի հետ սպանես, և արդարն ու ամբարիշտը նույնը լինեն, քավ լիցի Քեզ. մի՞թե ամբողջ Երկրի Դատավորը արդար չի գտնվի»: <sup>26</sup>Եվ ՏԵՐՆ ասաց. «Եթե Սողոմում հիսուն արդար գտնեմ քաղաքում, նրանց համար ամբողջ վայրը կխնայեմ»: <sup>27</sup>Եվ Աբրահամը պատասխանեց ու ասաց. «Ահա հիմա ես սկսել եմ խոսել ՏԻՐՈՉ հետ, երբ ինքս հող ու մոխիր եմ: <sup>28</sup>Գուցե հիսուն արդարից հինգը պակաս լինի, այն հինգի պատճառով ամբողջ քաղաքը կկործանե՞ս»: Եվ ասաց. «Չեմ կործանի, եթե այնտեղ քառասունհինգը գտնեմ»: <sup>29</sup>Եվ դարձյալ խոսեց Նրա հետ ու ասաց. «Գուցե այնտեղ քառասունը գտնվի»: Եվ ասաց. «Այդ քառասունի համար էլ չեմ անի»: <sup>30</sup>Եվ ասաց. «Տերը թող չբարկանա, թող խոսեմ. գուցե այնտեղ երեսունը գտնվեն»: Եվ ասաց. «Եթե այնտեղ երեսունն էլ գտնեմ, չեմ անի»: <sup>31</sup>Եվ ասաց. «Ահա ինձ վրա եմ վերցրել խոսել ՏԻՐՈՉ հետ. գուցե այնտեղ քսանը գտնվեն»: Եվ ասաց. «Այն քսանի համար էլ չեմ կործանի»: <sup>32</sup>Եվ ասաց. «Ո՛հ, ՏԵՐԸ թող չբարկանա, և միայն այս մի անգամն էլ խոսեմ. գուցե այնտեղ տասը գտնվեն»: Եվ ասաց. «Այն տասի համար էլ չեմ կործանի»: <sup>33</sup>Եվ ՏԵՐԸ գնաց Իր ճանապարհով, երբ Աբրահամի հետ խոսքը վերջացրել էր, իսկ Աբրահամը վերադարձավ իր տեղը:

**18:22 «մարդիկ»** Երեք հյուրեր կային, որոնք պարզվեց հոգևոր աշխարհի ֆիզիկական ներկայացուցիչներ էին՝ (1) այստեղ նշվում է երկու հրեշտակ (տես՝ 19:1) և (2) ՅԱՀՎԵՆ, որը մնաց Աբրահամի հետ:

❖ «**Աբրահամը դեռ կանգնած էր ՏԻՐՈՉ առջև**» Սա այն քիչ հատվածներից մեկն է, որ Մագորեթիկ գիտնականները փոխել են եբրայերեն տեքստը, քանի որ կարծում էին անպատշաճ է իր բնագիր սիմանմամբ: Բնագրում այսպես էր՝ «ՅԱՀՎԵՆ կանգնած էր Աբրահամի առջև»: Սեպտուագինտան արտացոլում է MT տարբերակը:

**18:23 «Աբրահամը մոտեցավ և ասաց»** Սա սովորաբար կիրառվում էր աղոթքի կամ գոհարերության համար: Հովնաթանի Թարգումը սա թարգմանում է արպես «և Աբրահամը աղոթեց», որը կարող է ավելի ճիշտ լինել: Այս արտահայտությունը (և համատեքստը) ցույց է տալիս Աբրահամի և ՅԱՀՎԵԻ միջև առկա հրաշալի փոխհարաբերությունը:

❖ «**Մի՞թե ամբարիշտների հետ արդարներին էլ ես կործանելու**» Սա ցույց է տալիս, որ Աբրահամը հասկանում էր ՅԱՀՎԵԻ էությունը և բնավորությունը (այսինքն՝ «Մի՞թե ամբողջ Երկրի Դատավորը արդար չի գտնվի» հ. 25): ՅԱՀՎԵ անշուշտ հասկանում էր իրադրությունը, սակայն Նա ուզում էր, որ Աբրահամը հասկանար իր բացառիկ փոխհարաբերությունը ՅԱՀՎԵԻ հետ, և ուրիշների համար բարեխոսական աղոթքի անհրաժեշտությունը, որը նա անշուշտ կիրառելու էր Աբիմելեքի համար, որը կարող ենք տեսնել 20:7,17-ում: Կարծում եմ, որ այդ պահին, ինչպես նաև հ. 18-ում, Աբրահամը պետք է որ մտածեր Ղովտի և նրա ընտանիքի մասին, որ ապրում էին Սողոմում:

**18:26** Այս համարը եբրայական մշակույթի հավաքական էության մի օրինակ է՝

1. բացասական առումով՝
  - ա. Ադամն ու Եվան մեղանչեցին և ամբողջ ստեղծագործությունը կրեց հետևանքները
  - բ. Աքարը մեղանչեց (տես՝ Հեսու 7) և Իսրայելի բանակը պարտվեց պատերազմը (ոմանք մահացան):
2. դրական առումով՝

ա. Արդար մարդիկ ազդում են Աստծո գործողությունների ընթացքին ամբողջ Սողոմ քաղաքի նկատմամբ (և հարթավայրի քաղաքների):

բ. Մի արդարը կարող էր կանգնեցնել Երուսաղեմի վրահաս Աստծո դատաստանը (տես՝ Երեմ. 5:1):

գ. Ադամի մեղքը ազդեց ամբողջ ստեղծագործության վրա: Հիսուսի կյանքն ու մահը նույնպես ազդում է ամբողջ ստեղծագործության վրա (տես՝ Հռոմ. 5:12-21):

Այս գաղափարը Եսայի 53-ի հաղթական, փոխանորդական քավության համար աստվածաբանական հիմքն է: Մի Անմեղի մահը կարող է բերել ներում (տես՝ Ղևտացիների 1-7; Հովհ. 1:29; 2 Կորնթ. 5:21):

**18:27 «Տերը»** Սա *Աղոնայ* տերմինն է, այնպես շեշտադրված, որ մատնացույց է անում Աստծուն: Տե՛ս Հատուկ Թեմա 12:1-ում:

❖ **«ինքս հող ու մոխիր եմ»** Ըստ երևույթին սա ակնարկում է Ծննդոց 3, որտեղ մարդիկ հողից են ստեղծվել և հողին էլ դառնում են: Աբրահամը գիտեր ստեղծագործության վերաբերյալ ավանդույթները: Սակայն հնարավոր է նաև, որ այս արտահայտությունը այդ օրերի սեմական դարձվածք էր (այսինքն՝ Հոր, Աբրահամի ժամանակակիցը, որը նույնպես օգտագործեց այս նույն արտահայտությունը Հոր 30:19; 42:6-ում):

**18:32 «գուցե՞ այնտեղ տասը գտնվեն»** Հայտնի չէ, թե ստույգ ինչ պատճառով Աբրահամը կանգ առավ հենց 10 թվի վրա: Դա կարող է վերագրվել կա՛մ (1) Ղովտին և նրա ընտանիքին, կա՛մ էլ (2) այն փաստին, որ Աբրահամը չէր ցանկանում միմիայն Ղովտի և նրա ընտանիքի վրա հիմնված դատաստանն արգելել:

**ԾՆՆԴՈՑ 19**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Սողոմոնի Կործանումը	Սողոմոնի Այլասերությունը	Սողոմոնի և Գոմորի կործանումը	Սողոմոնի մեղսագործությունը	Սողոմոնի Կործանումը
19:1-11	19:1-3  19:4-11	19:1-11	19:1-2ա 19:2բ 19:3 19:4-5 19:6-8 19:9-11	19:1-3  19:4-5 19:6-11
	Սողոմոն ու Գոմորը կործանվում են	19:12-14	Դովտը հետանում է Սողոմոնից	
19:12-14	19:12-14		19:12-13  19:14	19:12-14
		19:15-23		
19:15-22	19:15-22		19:15-17  19:18-20 19:21-22ա 19:22բ	19:15-16  19:17-22
			Սողոմոնի և Գոմորի կործանումը	
19:23-26	19:23-26	19:24-26 19:27-28	19:23-26	19:23-26
19:27-28	19:27-28		19:27-29	19:27-28
19:29	19:29	19:29		19:29
Դովտը ստորացվեց	Դովտի սերունդները		Սովաբացիների և Ամմոնացիների ձագումը	Սովաբացիների և Ամմոնացիների ձագումը
19:30-38	19:30-35	19:30-38	19:30-33  19:34-38	19:30  19:31-38
	19:36-38			

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## **ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 19:1-11**

<sup>1</sup>Եվ երկու հրեշտակները երեկոյան եկան Սողոմ. և Ղովտը նստած էր Սողոմի դարպասի մոտ. Ղովտը տեսավ նրանց՝ վեր կացավ, գնաց նրանց ընդառաջ և երեսնիվայր խոնարհվեց մինչև գետին <sup>2</sup>և ասաց. «Ահա, իմ տիարք, եկե՛ք, խնդրում եմ, ձեր ծառայի տունը և գիշերը մնացե՛ք, և ձեր ոտքերը լվացե՛ք, և առավոտ վաղ վեր կկենաք ու ձեր ճանապարհը կգնաք»: Եվ նրանք ասացին. «Ո՛չ, փողոցում կմնանք գիշերը»: <sup>3</sup>Եվ նրանց շատ ստիպեց, և նրա մոտ գնացին և նրա տունը մտան, և նրանց համար ճաշ պատրաստեց և բաղարջ հաց թխեց, և կերան: <sup>4</sup>Բայց դեռևս չէին պառկել, երբ քաղաքի մարդիկ՝ Սողոմի տղամարդիկ՝ երիտասարդներից մինչև ձեռերը, ամբողջ ժողովուրդը՝ ամեն մի շրջանից, պաշարեցին տունը: <sup>5</sup>Եվ Ղովտին կանչեցին ու նրան ասացին. «Ո՛ր են այդ մարդիկ, որ այս գիշեր քեզ մոտ եկան, նրանց դուրս՝ մեզ մոտ բեր և գիտենանք նրանց»: <sup>6</sup>Եվ Ղովտը դռնից դուրս եկավ՝ նրանց մոտ, ու դուռը փակեց իր ետևից <sup>7</sup>ու ասաց. «Եղբայրներս, աղաչում եմ ձեզ, չարիք մի՛ գործեք: <sup>8</sup>Ահա՛, ես երկու աղջիկ ունեմ, որ տղամարդ չգիտեն, նրանց ձեզ մոտ դուրս կբերեմ և նրանց հետ արե՛ք ինչ որ ուզեք, միայն այս մարդկանց ձեռք մի՛ տվեք, քանի որ նրանք մտել իմ հարկի շուքի տակ»: <sup>9</sup>Եվ նրանք ասացին. «Մի կո՛ղմ քաշվիր»: Եվ ասացին. «Միայնակ եկավ որպես պանդուխտ և դեռ դատաստան էլ է անում. հիմա քեզ նրանցից էլ վատ վիճակի կհասցնենք»: Եվ սաստիկ ճնշում էին մարդուն, այսինքն՝ Ղովտին և մոտեցան, որ դուռը կոտրեն: <sup>10</sup>Բայց այն մարդիկ իրենց ձեռքը մեկնեցին և Ղովտին առան տուն՝ իրենց մոտ ու դուռը փակեցին: <sup>11</sup>Իսկ այն մարդկանց, որ տան դռանն էին, կուրությամբ հարվածեցին՝ փոքրից մինչև մեծը, այնպես որ ճգնելով դուռը գտնել՝ հոգնեցին:

**19:1 «Երկու հրեշտակները երեկոյան եկան Սողոմ»** Նրանք երեկոյան թողեցին Աբրահամին և ՅԱՀՎԵին լեռան վրա, որը նայում էր դեպի Մեռյալ Ծովը և կտրեցին անցան մոտ 40 մղոն տարածություն մի քանի բուստում. նրանք հրեշտակներ են: Նրանք մարդկային կերպարանքով, խոսքով և հագուստով էին, ինչպես որ ակնհայտ երևում է 18:2,22; 19:10,12,16-ում: Նրանք միշտ հայտնվում են որպես արական սեռի ներկայացուցիչներ, բացառությամբ հավանաբար Չաք. 5:9:

❖ **«Ղովտը նստած էր Սողոմի դարպասի մոտ»** Մենք կարող ենք ինչ-որ բան տեսնել Ղովտի ամբարշտության պրոգրեսիայում ըստ հետևյալ փաստերի՝

1. 13:11-ում նրան ասվում է տեղափոխվել Սողոմ և Գոմորի հարթավայրերը
2. քոչվոր հովիվը տեղափոխվում է քաղաք: Ըստ երևույթին նա դարձել է այդ քաղաքի ձեռնածից մեկը, որը ակնարկվում է «դարմասի մոտ» արտահայտության մեջ
3. հ.3-ում ակնհայտ է, որ նա ծանոթ էր տեղաբնակների միասնական գործերից, որից հավանաբար մի քանի անգամ պաշտպանվել էր
4. հ.7-ում նա այնքան հեռու է գնում, որ նրանց կոչում է «եղբայրներ»
5. ավելի ուշ նա չի կամենում թողնել քաղաքն ու իր ունեցվածքը:

Աստված մեզ օգնական. Ղովտը թվում է թե փորձել է փոխել նրանց (հ.9) սակայն, ինչպես որ հաճախ պատահում է, նրանց չար ազդեցությունը ներգործել էր նրա, և իր կնոջ ու աղջիկների վրա:

Ինչպես Աբրահամն էր արել, Ղովտը նույնպես վեր կացավ նրանց ողջունելու և խոնարհվեց: Հայտնի չէ, թե արդյոք սրանք ընդունված ողջունի ձևեր էին (որը հավանական է), թե նրանց /հրեշտակների/ ծագման գիտակցումն էր:

**19:2 «Եկե՛ք, խնդրում են, ձեր ծառայի տունը և գիշերը մնացե՛ք և ձեր ոտքերը լվացե՛ք»** Կարծես թե Ղովոր միակ անձնավորությունն էր, որ դիմեց այս այցելուներին և առանց հասկանալու, որ նրանք հրեշտակներ էին՝ կամեցավ պաշտպանել այդ քաղաքի բնակիչներից: Սա կարելի է տեսնել հ. 3-ում նրա խիստ ստիպելու մեջ: Երկու հրեշտակների պատասխանը սեմական մշակությամբ դարձվածք է «այո» ասելու համար, սակայն ոչ առանց համոզելու:

Երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ (Ղովտի ցանկությունն արտահայտող) նկարագրում են Ղովտի Արևելյան հյուրասիրության ժեստը՝

1. եկե՛ք՝ BDB 693, KB 747, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. գիշերը մնացե՛ք (բառ.՝ գիշերեք)՝ BDB 533, KB 529, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. լվացե՛ք՝ BDB 934, KB 1220, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սրան ավելացրած նա սկսեց ընթրիք պատրաստել նրանց համար (տես՝ հ.3): Ըստ երևույթին այս հրեշտակները և ՅԱՀՎԵԻ ֆիզիկական ներկայացուցիչները (հավանաբար Տիրոջ Հրեշտակը) կարող էին կերակուր ուտել և կերան, ինչպես և հարություն առած Հիսուսը (տես՝ Հովհաննես 21):

❖ **«Փողոցում կմանք գիշերը»** Սա պետք է որ լինեք այցելուների համար սովորական ընթացակարգ: Սակայն Ղովոր գիտեր հետևանքները: Հավանաբար նա տեսել էր նախկինում, թե ինչեր էին տեղի ունենում այդ դեպքում:

**19:3 «նրանց շատ ստիպեց»** Այս ԲԱՅԸ (BDB 823, KB 954, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) այս համարում երկու անգամ է կիրառվում:

1. Հ.9-ում այս բառի հրել կամ սեղմել իմաստն է կիրառվում՝ Սողոմի մարդկանց համար
2. Այստեղ կիրառվում է դրա փոխաբերական «ստիպել» իմաստը (տես՝ Դատ. 19:7; 4 Թագ. 2:17; 5:23): «Շատ» կամ «խիստ» ՄԱԿԲԱՅԸ (BDB 547) ուժգնացնում է խնդրանքը:

❖ **«բաղաք հաց թխեց»** Ռաբբիներն ասում են, որ սա ցույց է տալիս, որ Չատկի ժամանակ էր, հետևաբար, Իսահակը ծնվել է Չատկի ժամանակ (հաջորդ տարին): Այնուհանդերձ սա կարծես թե շատ ավելին է տալիս արտահայտության մեջ՝ «բաղաք հաց»: Ավելի շուտ նույն օրը Աբրահամը նույնպես հաց պատրաստեց, որը անթթխմոր չէր: Ըստ երևույթին սա ցույց է տալիս, որ Ղովտի ծառաները կամ ընտանիքը արագ հաց պատրաստեցին (տես՝ Դատ. 6:19):

**19:4 «քաղաքի մարդիկ՝ Սողոմի տղամարդիկ՝ երիտասարդներից մինչև ձերերը, ամբողջ ժողովուրդը՝ ամեն մի շրջանից»** Սա ակնարկում է, որ քաղաքում գնտնվող ամեն մի տղամարդ՝ թե՛ ահել, թե՛ ջահել, դարձել էին միասեռական, կամ առնվազն, երկսեռ: Ինչպես որ Աստված Աբրահամին 18:19-ում ասաց, որ խրատի իր գավակներին, այստեղ էլ տեսնում ենք բացասական այն երևույթը, երբ Սողոմի մարդիկ իրենց երեխաներին չարիքի մեջ էին դաստիարակում: Ահա մի լավ օրինակ հայրերի մեղքերի, որոնք անցնում են իրենց գավակներին (տես՝ 2 Օր. 5:9-10):

Վերջին արտահայտությունը, որ թարգմանվել է «ամեն մի շրջանից» (տես՝ NASB և NKJV) բառացի նշանակում է «մինչև վերջին մարդը» (BDB 892): Այս տերմինը կիրառվում է մեջտեղում՝ միջակայքում գտնվող իրերի, դեպքերի համար (օր.՝ 47:21): Սողոմի չարությունը, որը հրեշտակը (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ) նշել էր 18:20-21-ում՝ ճիշտ էր: Անգամ տասը արդար մարդ չկար (տես՝ 18:32):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**  
**SPECIAL TOPIC: HOMOSEXUALITY**

Մեծ է ժամանակակից մշակութային ճնշումները միասեռականությունը որպես պատշաճ այլընտրանքային ապրելաճո ընդունելու համար: Աստվածաշունչը դատապարտում է այն որպես կործանարար ապրելակերպ, որը դուրս է Աստծո կամքից Իր ստեղծագործության համար:

1. այն խախտում է Ծննդոց 1-ի Աստծո պատվերը՝ լինել պտղաբեր և բազմանալ
2. այն դատապարտվում է Ծննդոց 19-ում (տես՝ 2 Պետ. 2:6-8; Հուդա 7) և Դատավորաց 19
3. այն հատկանշական է հեթանոս պաշտամունքին և մշակույթին (տես՝ Ղևտ. 18:22; 20:13; Հռոմ. 1:26-27 և Հուդա 7)
4. այն դրսևորում է եսակենտրոն անկախություն Աստծուց (տես՝ 1 Կորնթ. 6:9-10)

Այնուհանդերձ, նախքան ես կավարտեմ այս թեման, թույլ տվեք հայտարարել Աստծո սերն և ներումը բոլոր ապստամբ մարդկանց հանդեպ: Քրիստոնյաները իրավունք չունեն ատելությամբ և ամբարտավանությամբ գործեն նմանատիպ մեղքի հանդեպ, հատկապես երբ ակնհայտ է, որ մենք բոլորս էլ մեղանշում ենք: Աստծո Խոսքը և Նրա Հոգին կդատապարտեն, եթե մենք թույլ տանք



նրանց: Մեռական բոլոր մեղքերը՝ ոչ միայն այս մեկը, զգվելի են Աստծո համար և տանում են դատաստանի: Մեռական կյանքը Աստծուց պարզ և մարդկության բարօրության, ուրախության և կայուն հասարակության համար: Սակայն այս հզոր, աստվածատուր պարզ և հաճախ փոխվում է ապստամբող, եսակենտրոն, ցանկասեր, «ավելի շատ իմ համար՝ ամեն գնով» կյանքի (տես՝ Հռոմ. 8:1-8; Գաղ. 6:7-8):

Հաճախ մարդիկ ասում են ինձ. «Աստված ինձ այսպիսին է ստեղծել»: Ճիշտ է, որ մենք դեռ չգիտենք միասեռականության աղբյուրը (այսինքն՝ գենետիկական, թե սոցիալական), սակայն որն էլ որ լինի Աստվածաշունչը պետք է ուղղորդի մեզ մեր որոշումների մեջ. որոշումներն ունեն հետևանքներ: Տեքստերն ունեն առաջնահերթություն մեր զգացմունքների կամ անձնական նախընտրությունների վրա: Մենք հավատքի համայնք ենք, որ առաջնորդվում է աստվածային հայտնությամբ և ոչ թե անձնական իրավունքներով կամ ազատությամբ:

Պարզապես որպես ամփոփիչ խոսք, որպես եկեղեցու առաջնորդ ես գիտեմ, որ Քրիստոնյաների ինչ-որ մի տոկոս բախվում է այս խնդրի հետ: Խնդիրը հակվածությունը չէ, այլ վարքը՝ գործը: Իմ համալսարանական ծառայողական ուսանողների մեջ կան մարդիկ ովքեր բախվում են այլ տեսակի սեռական խնդիրների հետ (կյանքի այս փուլում դրանք շատ գորեղ են): Նրանք, ովքեր որոշում են սահմանափակել իրենց ցանկությունները (այսինքն՝ չափավորություն՝ ժուժկայություն) այս բնագավառում (այսինքն՝ սեռական ցանկությունները) հաստատ լավ թեկնածուներ են ծառայողական պաշտոնների համար: Մա նաև գործում է այն մարդկանց համար, ովքեր միասեռականության հետ կապված խնդիրներ ունեն: Ոչ թե միտքը, այլ գործն է իրական խնդիրը: Ինչո՞ւ են ոմանց քաշում միևնույն սեռի հանդեպ ցանկությունները, առեղծված է: Այս ոլորտում ընտրության առջև ենք (ինչպես և բոլոր մյուս ոլորտներում): Մենք ենք մեր որոշումների տերը՝ պատասխանատուն:

Աստված սիրում է մարդկանց և ցանկանում է երկարաժամկետ առողջություն, երջանկություն և կենսունակություն բոլոր նրանց համար, ովքեր սեղծված են Իր պատկերով և նմանությամբ (Ծննդ. 1:26-27. տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՍԵՔՍՈՒԱԼՈՒԹՅՈՒՆԸ): Այդ երևույթները՝ գործերը որոնք խաթարում են մարդու առողջությունը և երջանկությունը, ինչպես նաև հաղորդակցությունը, դրանք դատապարտելի են: Աստված մեր համար լավագույնն է ցանկանում: Մենք ուզում ենք մեր անմիջական հաճույքը: Թող Աստված ողորմի մեզ բոլորիս:

**19:5 «Ո՛ր են այն մարդիկ, որ այս գիշեր քեզ մոտ եկան, նրանց դուրս՝ մեզ մոտ բեր և գիտենանք նրանց»** Նրանց պահանջներն էին՝

1. նրանց դուրս բերել՝ BDB 422, KB 425, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. նրանց հետ սեռական կապ ունենան՝ BDB 393, KB 390, *Qal* ԸՂԶԱԿԱՆ

Ջեզեֆուսն իր *Հրեաների Հնությունները* (*Antiquities of the Jews* 1:11:3) գրքում ասում է, որ հրեշտակները գեղեցիկ արարածներ էին և զրգռել էին Սողոմոնի տղամարդկանց կիրքը: Աստվածաշունչը հաճախ է խոսում միասեռականության մեղքի մասին, որն ըստ երևույթին տարածված էր Քանանում (տես՝ Ղևտ. 18:22; 20:13): Այն նաև ընդունված էր Պողոսի օրոք Հռոմեական Կայսրության տարածքում (տես՝ Հռոմ. 1:26,27; 1 Կորնթ. 6:9; 1 Տիմ. 1:10):

Եբրայական «նրանց հետ սեռական կապի մեջ մտնենք» արտահայտությունը բառացիորեն նշանակում է «գիտենալ» (BDB 393, KB390), որը խոսում է «ինտիմ անձնական փոխհարաբերության» մասին: Այս միասեռականների հանցախմբի բռնաբարությունը հավանաբար կսպաներ այցելուներին: Հ.9-ից ակնհայտ է, որ այս նույնը կատարեց Դավաթի աղջիկների հետ և հենց Դավաթի հետ էլ: Որոշ մեկնաբաններ համարում են, որ երբ Դավաթն ամբոխին առաջարկեց իր աղջիկներին, այս փորձառությունն առիթ հանդիսացավ, որ նրանք կորցրեցին իրենց հոր հանդեպ ունեցած հարգանքը:

**19:7 «չարիք մի՛ գործեք»** Այս ԲԱՅԸ (BDB 949, KB 1269, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, այստեղ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) այս *Hiphil* արմատում կարող է նշանակել՝

1. մի՛ վնասեք – օր.՝ 43:6; Ելից 5:22-23; Հեու. 24:20; Ես. 11:9
2. չարություն մի՛ արեք – օր.՝ 1 Թագ. 12:25; Երեմ. 4:22; 13:23

Կարծես թե Դավաթը մեղադրում էր այս տղամարդկանց իրենց անբարո մտադրության համար (տես՝ հ. 9): Նա գործում էր երկու չարիք պարունակող մտադրված սեռական բռնության համար որպես բարոյականության հայելի: Այդ երկու չարքներն էին՝

1. հյուրասիրության բռնությունը
2. սեռական այլասերվածությունը

**19:8 «Ահա՛, ես երկու աղջիկ ունեմ»** Դավաթը ամբոխի առջև երեք առաջարկով է ներկայանում:

1. Դուրս բերեմ նրանց (իր երկու աղջիկներին) ձեզ մոտ՝ BDB 422, KB 425, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ
2. Նրանց հետ արե՛ք, ինչ որ ուզեք՝ BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. Այս մարդկանց ձեռք մի՛ տվեք՝ BDB 793, KB 889, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

Այս օտարականները մտել են «իմ հարկի շուքի տակ» (BDB 853): Այս նույն տերմինը կիրառվում է «Աստծո թևերի հովանու/շուքի տակ», որը պաշտպանության և հոգածության փոխաբերություն է (տես՝ 14:9; Սաղմ. 17:8; 36:7; 57:1; 63:7): Դովտը ամեն գնով պարտավոր էր պաշտպանել իր հյուրերին:

Սա տարբեր կերպերով է բացատրվել, սակայն Դովտի շարժառիթների առումով մնացել է էնիգմա՝

1. նրա ամենամեծ ցանկությունն էր պաշտպանել իր հյուրերին (արևելյան հյուրընկալությունը)
2. նա գիտեր, որ այս ամբոխը կանանց չի ցանկանում
3. հույս էր տածում, որ իր պոտենցիալ փեսաները, որոնք հնարավոր է այդ ամբոխի մեջ էին, այդ պատճառով կկանգնեցնեին ամբոխին: Այս պատմությունը շատ նման է Դատ. 19:24-ին:

**19:9 «մի կողմ քաշվիր»** Այս ԲԱՅԸ (BDB 620, KB 670, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) սովորաբար թարգմանվում է «մո՛տ եկ» (օր.՝ Ղևտ. 21:21; 4 Թագ. 4:27), բացառապես այստեղ այն արտահայտում է «մեր ճանապարհից մի կողմ գնա» իմաստը, երբ նրանք հրելով առաջ էին շարժվում:

❖ «**և արդեն որպես դատավոր է գործում /հայ.՝ և դեռ դատաստան էլ է անում/**» Սա մի շեշտադրված կազմություն է (այսինքն՝ միևնույն Եբրայերեն արմատի ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ և ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇԸ): Այս տղամարդկանց գործողությունները դատաստանի էր արժանի (տես՝ հ. 13): Սա 18:20-24-ում ակնարկվող տեղեկությունն է: Հնարավոր է, որ 2 Պետրոս 2:7-8-ի աղբյուրը սա է հանդիսանում, որը Դովտին արդար է անվանում:

❖ «**հիմա քեզ նրանցից էլ վատ վիճակի կհասցնենք**» Նրանք մտադրվել էին նեղություն պատճառել (սա հ. 7-ի միևնույն ԲԱՅՆ է) Դովտին և նրա ընտանիքին, ինչպես նաև օտարականներին:

**19:11 «այն մարդկանց, որ տան դռան էին, կուրությամբ հարվածեցին»** Եբրայերեն այս տերմինը (BDB 645, KB 697, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նշանակում է ավելին, քան պարզապես սովորական, ժամանակավոր կուրություն (ԲԱՅԸ ՀԿ-ում հանդիպում է միայն երկու անգամ, տես՝ 4 Թագ. 6:18): Իբր Եզրասն ասում է, որ դա նշանակում է «աչքի և մտքի կուրություն», որը կարծես թե համապատասխանում է այս համարի վերջին մասին, որն ասում է, որ նրանք շարունակում էին մոլորվածների պես խարխափելով դուռը փնտրել (օր.՝ Ելից 3:20): Այստեղ նկարագրվող կուրությունը (BDB 703) տարբերվում է Ղևտ. 22:22; 2 Օր. 28:28 (BDB 734): Այս մեկն արտահայտում է «պայծառ լույսից կուրացած» իմաստը:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:12-14**

<sup>12</sup>Եվ մարդիկ ասացին Դովտին. «Այստեղ էլ ո՞վ ունես՝ փեսա և որդիներ, աղջիկներդ և քաղաքում ում որ ունես, այստեղից հանի՛ր, <sup>13</sup>քանի որ այստեղը մենք պետք է կործանենք, որովհետև մեծ է նրանց աղաղակը ՏԻՐՈՋ առջև, և ՏԵՐԸ մեզ ուղարկել է, որ այն կործանենք»: <sup>14</sup>Եվ Դովտը դուրս եկավ և իր աղջիկների հետ ամուսնացած փեսաների հետ խոսեց ու ասաց. «Վեր կացեք, դո՛ւրս եկեք այստեղից, որովհետև ՏԵՐԸ կործանելու է այս քաղաքը», բայց փեսաներին թվում էր, թե նա ծաղրում է:

**19:12 «այստեղ էլ ո՞վ ունես»** Սա այդքան էլ հրեշտակներին անհրաժեշտ տեղեկության համար չէր հնչում, որքան որ Դովտի, որպեսզի նա հասկանար, որ այլևս Սողոմի հետ իրեն իրապես կապող ոչինչ չունի:

**19:13-14 «ՏԵՐԸ մեզ ուղարկել է, որ այն կործանենք... ՏԵՐԸ կործանելու է այս քաղաքը»** Կործանիչ հրեշտակի ներկայությունը կարելի է տեսնել Եզրայտոսի տաս պատուհասների ժամանակ, սակայն հրեշտակների գործողությունների ետևում վերջիվերջո կանգնած է հենց Ինքը ՅԱՀՎԵ:

Այս երկու համարներում եբրայերեն «կործանել» (BDB 1007, KB 1469) տերմինը կիրառվում է երեք անգամ:

1. հ. 13՝ «կործանել» - *Hiphil* ԴԵՐԲԱՅ
2. հ. 14՝ «կործանել» - *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (տես՝ հ. 29)
3. հ. 14՝ «կործանել» - *Hiphil* ԴԵՐԲԱՅ (տես՝ 18:28)

Հիմնականում այս տերմինը նշանակում է «բնաջնջել», սակայն այն օգտագործվում է կործանելու իմաստով (տես՝ 6:17; 9:15; 13:10; 2 Թագ.24:16): Սա միևնույն արմատն է, որը կիրառվում է նկարագրելու «Մահվան» հրեշտակին Ելից 12:23-ում (տես՝ 1 Մնաց.21:15; Եսայի 54:16; Երեմ.22:7):

**19:14 «դուրս եկավ . . . փեսաների հետ խոսեց»** Ոմանք ենթադրում են, որ Ղովտի աղջիկները արդեն ամուսնացած էին (BDB 542, KB 534, *Qal* ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ Մեպտուազինտան և Թարգումները), սակայն ուրիշներն էլ հավատում են, որ նրանք միայն նշանված էին (տես՝ Չոզեֆուս, Վուլգատա, Ռաշի, և TEV): Համատեքստից ինձ թվում է, որ Ղովտը միայն երկու աղջիկ ուներ և նրանք դեռևս ամուսնացած չէին, ապրում էին այդ տանը, սակայն հավանականություն կա, որ նա ուներ այլ ամուսնացած աղջիկներ, որոնք ամբողջովին ներգրավված էին Սողոմի կյանքի մեջ և չէին կարող հեռանալ այնտեղից:

Ղովտը փորձեց այս երիտասարդներին մոտիվացնել, որպեսզի իրենց հետ հեռանան:

1. վեր կացե՛ք – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. դո՛ւրս եկե՛ք – BDB 422, KB 425, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

❖ **«ծաղրում էր»** Այս ԲԱՅԸ (BDB 850, KB 1019, *Piel* ԴԵՐԲԱՅ) ունի մի քանի նշանակություն՝

1. սեռական գործողություն – Ծննդ.26:8
2. ծաղրանք – Ծննդ.21:9
3. սպորտով զբաղվել (կապված #1-ի հետ) – Ծննդ.39:14,17
4. խաղալ (կապված #1-ի հետ) – Ելից 32:6
5. գվարնացնել – Դատ.16:25

Այս նույն արմատն օգտագործվում է Աբրահամի և Մարայի ծիծաղի համար, երբ ՅԱՀՎԵՆ խոստանում է հաջորդ գարնանը նրանց երեխա պարգևել (տես՝ 17:17; 18:12):

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:15-22**

<sup>15</sup>Եվ երբ առավոտ եկավ, հրեշտակները Ղովտին ստիպում էին ասելով. «Վեր կաց, վերցրո՛ւ կնոջդ և այստեղ գտնվող երկու աղջիկներիդ, որպեսզի չկորչես այս քաղաքի անօրենության հետ»: <sup>16</sup>Եվ երբ նա ձգձգում էր, այդ մարդիկ բռնեցին նրա ձեռքից և նրա կնոջ ձեռքից և նրա աղջիկների ձեռքից, քանի որ ՏԵՐԸ նրանց ողորմացել էր, և դուրս հանեցին ու քաղաքից դուրս բերեցին: <sup>17</sup>Եվ եղավ այնպես, որ երբ նրանց դուրս հանեցին, նրանցից մեկին ասաց. «Կյանքիդ համար փախի՛ր, և ետ մի՛ նայիր, և դաշտավայրում մի՛ մնա, լե՛ռը փախիր, որպեսզի չկորչես»: <sup>18</sup>Եվ Ղովտն ասաց նրանց. «Ո՛հ, ՏԵՐս, աղաչում եմ, <sup>19</sup>ահա քո ծառան քո առաջ շնորհ գտավ, և մեծ էր քո երախտիքը, որ արեցիր ինձ՝ իմ կյանքը փրկելով, և ես չեմ կարող լեռը փախչել, որպեսզի ինձ չարիք չհասնի, և ես չմեռնեմ: <sup>20</sup>Ահա այս քաղաքը մոտիկ է՝ այնտեղ փախչելու համար. և այն փոքրիկ է, թո՛ղ այնտեղ փախչեմ (չէ՞ որ այն փոքրիկ), և իմ անձը կապրի»: <sup>21</sup>Եվ ասաց նրան. «Ահա, այդ խնդրումն էլ քո աղաչանքն ընդունեցի, որ այս քաղաքը չկործանեն, որի մասին ասացիր: <sup>22</sup>Շո՛ւտ արա, այն տե՛ղը փախիր, որովհետև ես ոչինչ չեմ կարող անել, մինչև դու այնտեղ չհասնես». դրա համար այդ քաղաքի անունը Մեզովր կոչվեց:

**19:15** Երբ լույսը բացվեց, հրեշտակները դարձան ավելի խիստ՝

1. վեր կաց (արթնացի՛ր) – ճիշտ հ. 14-ի ձևաչափի մեջ
2. վերցրո՛ւ – BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Հհ. 16-22-ում հրեշտակների հոգաձուլությունն ու պաշտպանությունը շարունակվում է:

❖ **«որպեսզի չկորչես այս քաղաքի անօրենության հետ»** Աստվածային դատաստանի համար կիրառվող տարածված տերմին է (տես՝ 18:23,24; 19:15,17; Թվոց 16:26; 1 Թագ. 12:25):

**19:16 «նա ձգձգում էր /վարանում էր/»** Այս ԲԱՅԸ (BDB 554, KB 552, *Hiphael* ԱՆԿԱՏԱՐ) կիրառվում է ՀԿ-ում մի քանի անգամ և նշանակում է «կաղալ» կամ «ուշացնել»: Թե ինչու էր Ղովտը ձգձգում՝ չի նշվում: Միայն կարելի է ենթադրել, սակայն դա չի արտահայտում հրեշտակների պատգամի հանդեպ վստահության պակաս: Հ. 17-ի զգուշացումները ակնարկում են Ղովտի կողմից Սողոմի իր կյանքը կամ էլ հավանական է իր ֆիզիկական ունեցվածքը (այսնիքն՝ տան ապրանքները, ծառաներին, արժեքավոր իրերը, նախիրները) թողնելու դժկամություն: Հիշե՛ք, որ Ղովտն ընտրեց իր համար լավագույն արտավայրերը (տես՝ 13:10):

❖ **«քանի որ ՏԵՐԸ նրանց ողորմացել էր»** Եբրայերեն ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 328) կարելի է տեսնել միայն այստեղ և Ես. 63:9-ում, որը նույնպես մատնանշում է ՅԱՀՎԵԻ ուխտի սերը, գթառատությունը, ողորմությունն ու շնորհքը Իր ժողովրդի հանդեպ: Նրա հատուկ հոգատարությունը կապված է Նահապետների տված Իր խոստումների հետ (Աբրահամին, Իսահակին և Հակոբին): ԲԱՅԸ (չնայած, որ երբեք Սաղմոսներում չի հանդիպում) կիրառվում է ՅԱՀՎԵԻ հատուկ ուխտի սիրո համար (տես՝ 2 Մնաց. 36:15; Հովկ 2:18; Սաղ. 3:17 /երկու անգամ/, սակայն ուշադրություն դարձրեք այն հակադրությանը, երբ նրանք մեղանշում են 2 Մնաց. 36:17; Եզեկ. 5:11; 7:4,9; 8:18; 9:5,10):

**19:17 «կյանքիդ համար փախի՛ր»** «Փախի՛ր» ԲԱՅԸ (BDB 572, KB 589, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ) այս համատեքստում կիրառվում է հինգ անգամ (տես՝ 19:17 /երկու անգամ/, 19,20,22): Դա ձայնախաղ է «Ղովտ» անվան վրա (BDB 532):

❖ **«ես մի՛ նայիր, և դաշտավայրում մի՛ մնա»** Հրեշտակները Ղովտին մի քանի շեշտադրված հրամաններ են տալիս՝

1. փախի՛ր կյանքիդ համար – BDB 572, KB 589, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ
2. ետ մի՛ նայիր – BDB 613, KB 661, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (նկատի առեք հ.26-ի ողբերգությունը, ըստ երևույթին Ղովտի և նրա ընտանիքի համար դժվար էր թողնել Սողոմուն ունեցած իրենց կյանքը)
3. դաշտավայրում մի՛ մնա /անգլ.՝ որևէ տեղ դաշտավայրում մի՛ մնա/ - BDB 763, KB 840, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. լե՛ռը փախի՛ր – միևնույն #1 ձևը  
«Որևէ տեղ դաշտավայրում» բառացի նշանակում է «հինգ քաղաքներ»: Սա վերաբերում էր Հորդանանյան դաշտավայրի հինգ մեծագույն քաղաքներին՝ Սողոմ, Գոմոր, Ադմա, Սերովիմ, Սեգովր, որը նաև կոչվում էր Բարա (տես՝ Ծննդ. 14:2):

**19:19** Այս համարը որոշ բաներ է ցույց տալիս Ղովտի վերաբերյալ: Ստույգ ինչից էր վախենում Ղովտը լեռներից՝ հայտնի չէ (եթե ոչ միայն այն, որ հեռու տարածության վրա էր), սակայն գոնե այն հայտնում է ՅԱՀՎԵԻ վրա իր ունեցած վստահության պակասը, ով կարող էր շարունակել պաշտպանել և հոգալ իր համար (բառ.՝ «շնորհ քո աչքերում», տես՝ 6:8; 32:5; 34:11):

- ❖ **NASB «բարեգթություն»**
- NKJV «ողորմություն»**
- NRSV «մեծ գթառատություն»**

Սա Եբրայերեն հատուկ ուխտի ԳՈՅԱԿԱՆ *hesed* (BDB 338) բառն է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)**  
**SPECIAL TOPIC: LOVINGKINDNESS (HESED)**

Այս տերմինը բազմանշանակ է: BDB այս բառն այսպես է բնութագրում (338-339).

Ա. Կիրառված մարդկանց հետ կապի վերաբերյալ՝

1. բարեգթություն ընկերների հանդեպ (օր.՝ 1 Թագ. 20:14; 2 Մնաց. 24:22)
2. բարեգթություն աղքատի և կարիքավորի հանդեպ (օր.՝ Միքիա 6:8)
3. սիրային կապ (տես՝ Երեմ. 2:2; Ովս. 6:4)
4. վայելչություն (տես՝ Եսայի 40:6)

Բ. Կիրառված Աստծո կապի վերաբերյալ՝

1. ուխտի հավատարմության և սիրո համար  
 ա. «թշնամիներից և վտանգներից փրկվելիս» (օր.՝ Երեմ. 31:3; Եզրաս 27:28; 9:9)  
 բ. «կյանքը մահից պաշտպանելիս» (օր.՝ Հոբ 10:12; Սաղմ. 86:13)  
 գ. «հոգևոր կյանքի արթնության» համար (օր.՝ Սաղմ. 119:41,76,88,124,149,150)  
 դ. «մեղքից փրկելիս» (տես՝ Սաղմ. 25:7; 51:3)  
 ե. «ուխտերը պահելիս» (օր.՝ 2 Մնաց. 6:14; Նեեմ. 1:5; 9:32)
2. նկարագրում է որպես աստվածային բնավորության գիծ (օր.՝ Ելից 34:6; Սաղմ. 86:15; 103:8; Նեեմ. 9:17; Հովկ 2:13; Հովնան 4:2; Միք. 7:20)

3. Աստծո գթությունը՝
  - ա. «առատ» (օր.՝ Թվոց 14:18; Նեեմ. 9:17; Սաղմ. 86:5; 103:8; 145:8; Հովել 2:13; Երեմ. 4:2)
  - բ. «անսահման» (օր.՝ Ելից 20:6; 2 Օր. 5:10; 7:9)
  - գ. «հավիտենական» (օր.՝ 1 Մնաց. 16:34,41; 2 Մնաց. 5:13; 7:3,6; 20:21; Եգրաս 3:11; Սաղմ. 100:5; 106:1; 107:1; 118:1,2,3,4,29; 136:1-26; 138:8; Երեմ. 33:11)
  - դ. ամբողջի պես է (օրինակ՝ Սաղմ. 59:17)
  - ե. կապված է Աստծո գործերի հետ (օրինակ՝ Սաղմ. 62:11գ-12ա)
4. գթության գործերը (օր.՝ 2 Մնաց. 6:42; Սաղմ. 89:2; Ես. 55:3; 63:7; Ողբ 3:22)

Այս բառը անգլերեն թարգմանություններում շատ տարբեր կերպերով է ներկայանում: Կարծում են լավագույն ամփոփիչ սահմանումը կարող է հանդիսանալ «Աստծո առանց տողատակերի ուխտի հավատարմություն» խոսքը: Այն համագոր է ՆԿ-յան «սեր» (*agapaō*) տերմինին: Աստված հավատարիմ է և սիրառատ Իր էության շնորհիվ:

**19:20 «թող այնտեղ փախչեմ»** Սա ԸՂԶԱԿԱՆ է (BDB 572, KB 589, *Niphal* ԸՂԶԱԿԱՆ), որը բացատրում է NASB-ի «խնդրում եմ, թող» արտահայտությունը: Հաշորդ ԲԱՅԸ (BDB 310, KB 309) «փախնել» (բառ.՝ «ապրել») *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ է:

**19:21 «Ահա քո աղաչանքն ընդունեցի»** Բառացի սա մի երբայերեն դարձվածք է՝ «երեսը բարձրացնել» (ԲԱՅ, BDB 669, KB 724, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱՐ ավելացրած «երես», BDB 815): Այն իրավաբանական ծագում ունի: Եթե դատավորը «իր երեսը բարձրացնում է» դատապարտյալի վրա տեսնելու, թե ով է նա, ապա նրա անաչառությունը վտանգված է (տես՝ Ղևտ. 19:15; Սաղմ. 82:2; Առակ. 18:5): Դատավորը չպետք է մարդկանց հանդեպ հարգանքից ելնելով վճիռ կայացնի:

Ղովոր վախենալով, որ չի կարող լեռներում ապրել, խնդրեց Բարայում ապրել (Սեգովր, BDB 858, արմատը նշանակում է «աննշան լինել»), որը նշանակում է «փոքրիկ» (BDB 859 I), «խնայված»: Չարմանալիորեն հրեշտակները ընդունեցին նրա խնդրանքը (ինչ որ առումով թվում է, թե բոլոր երեք հրեշտակներն էլ ներկայացնում էին ՅԱՀՎԵի անձնական ներկայությունը): Այս քաղաքը մեծ էր այնքան, որ ուներ նաև թագավոր, ինչպես արձանագրված է 14:2-ում: Հնարավոր է, որ սա աստվածաբանորեն մի այլ կերպ է ցույց տալու բարեխոսության գործությունը (այսինքն՝ Աբրահամի՝ 18:22-33-ում):

- 19:22** Կրկին հրեշտակը հրամայում է Ղովտին:
1. շո՛ւտ արա – BDB 554, KB 553, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հ. 16ա-ի հակառակը)
  2. փախի՛ր – BDB 572, KB 589, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ 19:17 /երկու անգամ/, 19:20), միայն այստեղ է ճննդոցից մինչև 2 Օրինաց:

- ❖ «Ես ոչինչ չեմ կարող անել, մինչև» Կործանող հրեշտակներին կարգադրված էր խնայել Ղովտին և նրա ընտանիքին: Սա արտացոլում է՝
1. թե՛ ՅԱՀՎԵի շնորհքը
  2. թե՛ բարեխոսական աղոթքի գործությունը (այսինքն՝ 18:22բ)

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:23-26**  
<sup>23</sup>Արևը ծագում էր երկրի վրա, երբ Ղովտը Սեգովր մտավ: <sup>24</sup>Եվ ՏԵՐԸ Սողոմի և Գոմորի վրա ծծումբ, և կրակ տեղաց ՏԻՐՈՉ կողմից՝ երկնքից, <sup>25</sup>և կործանեց այն քաղաքները և ամբողջ դաշտը, և այն քաղաքների բոլոր բնակիչներին և երկրի ամբողջ բուսականությունը: <sup>26</sup>Սակայն նրա կինը ետ նայեց ու աղի արձան դարձավ:

**19:24 «ՏԵՐԸ Սողոմի և Գոմորի վրա ծծումբ, և կրակ տեղաց ՏԻՐՈՉ կողմից՝ երկնքից»** Բավական տարօրինակ է թվում, որ այստեղ երկու անգամ կիրառվում է ՅԱՀՎԵ տերմինը: Հրեա մեկնաբանները այս տերմինը կոչում են մեծության՝ վեհության հոգնակի թիվ, մինչև Քրիստոնյա մեկնաբանները այստեղ տեսնում են Երրորդության գործոնը: Իրականում Չմյունխայի Խորհուրդը մեկնաբանել է այս համարի շուրջ հետևյալ կերպ՝ «Որդի Աստվածը Հայր Աստծուց անձրև թափեց»: Համար 14:10-ից իմանում ենք այս տարածքում գտնվող նավթի հորերի մասին և ըստ երևույթին, դա եղել է կայծակների կամ կրակե անձրևի միջոցով (տես՝ Եզեկ. 38:22; Ղուկ. 17:29; Հայտն. 14:10; 19:20; 20:10): Աստված այս ամբողջ տարածաշրջանը կրակի տվեց և պայթեցրեց (տես՝ Հուդա 7):

Կրկին ուշադրություն դարձրեք Սեգովրի գերբնական կերպով պահպանվելը: Սա նման է Գեսեմին, որը տաս պատուհասներից գերբնական կերպով պաշտպանվեց:

Կրակը միշտ ասոցացվում է ՅԱՀՎԵԻ սրբագործող՝ մաքրող դատաստանի հետ: Տե՛ս Հատուկ Թեմա 15:17-ում:

**19:25 «Նա կործանեց այն քաղաքները»** Այս տերմինը «կործանեց» (BDB 245, KB 253, *Qal* ԱՆԿԱՏԱԲ) նշանակում է տակնուվրա անել և հետևաբար՝ կործանել, բնաջնջել: Սողոմոնի կործանումը կիրառվում է ամբողջ Սուրբ Գրքում որպես աստվածային դատաստանի օրինակ (տես՝ 2 Օր. 29:23; Ես. 13:19; Երեմ. 49:18; 50:40; Ամոլ 4:1): Այս կործանումը ՅԱՀՎԵԻ անձնական դատաստանն էր: Նա այդ նույն անելու էր քանանացիների մշակույթների հետ, որոնց դիմակայելու էր Հեսուն Քանանը զավթելիս:

**19:26** Ընթերցողները վստահ չեն, թե ստույգ ինչ պատահեց այստեղ, սակայն ակնհայտ է, որ Ղովտի կնոջ սիրտը դեռևս Սողոմոն էր և նա ստացավ իր արդար պատիժը (տես՝ Ղուկ. 17:32): Նա դարձավ անհնազանդության մի հուշարձան: Ոչ միայն Ղովտի կնոջ վրա ազդեց նրանց Սողոմոն ասրելու ժամանակը, այլ նաև նրա աղջիկների, որը երևում է հհ. 30-38-ից:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:27-28**

**<sup>27</sup>Եվ Աբրահամն առավոտյան վաղ եկավ այնտեղ, որտեղ ՏԻՐՈՋ առջև էր կանգնել: <sup>28</sup>Եվ նայեց Սողոմոն ու Գոմորի և ամբողջ այն դաշտային երկրի վրա, ու տեսավ, որ ահա այն երկրից ծուխ էր դուրս գալիս հնոցի ծխի պես:**

**19:27 «այնտեղ, որտեղ ՏԻՐՈՋ առջև էր կանգնել»** Սա Աստծո ներկայության մեջ գտնվելու համար օգտագործվող մի դարձվածք է (տես՝ 18:22; Ղևտ. 9:5; 2 Օր. 10:8):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:29**

**<sup>29</sup>Եվ եղավ, որ երբ Աստված կործանում էր այն դաշտավայրի քաղաքները, Աստված հիշեց Աբրահամին և Ղովտին դուրս բերեց կործանման միջից, երբ կործանում էր այն քաղաքները, որոնցում Ղովտն էր բնակվում:**

**19:29 «Աստված հիշեց Աբրահամին և Ղովտին դուրս բերեց կործանման միջից»** Նկատե՛ք, որ Ղովտի կյանքը խնայվեց Աբրահամի՝ ուխտի խոստումն ունեցողի բարեխոսության շնորհիվ (տես՝ Ելից 2:24): Այս համարը շեշտադրում է Աբրահամի գերակայությունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:30-38**

**<sup>30</sup>Եվ Ղովտը Սեգովրից գնաց և լեռը բնակվեց իր երկու աղջիկների հետ, քանի որ վախենում էր Սեգովրում բնակվել և բնակվեց մի քարայրում՝ ինքն ու իր երկու աղջիկները: <sup>31</sup>Եվ ավագն ասաց կրտսերին. «Մեր հայրը ծեր է և երկրում մարդ չկա, որ մեզ մոտ գա, ինչպես որ ամբողջ աշխարհի կարգն է: <sup>32</sup>Ե՛կ մեր հորը գինի խմեցնենք և նրա հետ պառկենք և մեր հորից սերունդ պահպանենք»: <sup>33</sup>Եվ այն գիշեր իրենց հորը գինի խմեցրին, և մեծ աղջիկը գնաց և հոր հետ պառկեց. և Ղովտը չիմացավ նրա պառկելն ու վեր կենալը: <sup>34</sup>Եվ եղավ, որ մյուս օրը մեծ աղջիկը փոքրին ասաց. «Ահա երեկ գիշերը հորս հետ պառկեցի. այս գիշեր էլ նրան գինի խմեցնենք, և դու գնա՛, հետը պառկիր, և մեր հորից սերունդ կունենանք»: <sup>35</sup>Եվ այն գիշեր էլ իրենց հորը գինի խմեցրին, և փոքր աղջիկը վեր կացավ, նրա հետ պառկեց, և Ղովտը չիմացավ նրա պառկելը և վեր կենալը: <sup>36</sup>Եվ Ղովտի երկու աղջիկներն էլ իրենց հորից հղիացան: <sup>37</sup>Եվ մեծը որդի ծնեց և անունը Մովաբ դրեց. նա է մովաբացիների հայրը մինչև այսօր: <sup>38</sup>Եվ փոքրն էլ որդի ծնեց և նրա անունը Բեն-ամմի դրեց. սա է Ամմոնի որդիների հայրը մինչև այսօր:**

**19:30-38** Այս համարները Մովաբի և Ամմոնի ցեղերի ծննդյան համար բացատրականներ են հանդիսանում:

**19:30 «քանի որ վախենում էր Սեգովրում բնակվել»** Այս համարի շուրջ երկու հավանականություն կա՝ (1) նա անտեսեց հ. 21-ում հրեշտակի կողմից տրված հատուկ խոստումը կամ (2) նա տեսավ, թե ինչքան չար էին այդ քաղաքի մարդիկ նույնպես և վախեցավ, որ Աստծո դատաստանը հաստատ նրանց վրա էլ կիջնի: Նա գնաց հենց այն վայրը, որի մասին հ. 19-ում ասել էր, որ վախենում էր:

**19:31** Նրա աղջիկները ցուցաբերեցին միևնույն վստահության պակասը ՅԱՀՎԵԻ հոգածության հանդեպ, ինչպես և իրենց հայրը: Կարծես թե նրանք մոռացել էին՝

1. Գլուխ 14-ում Աստծո ազատագրումը Աբրահամի միջոցով
2. Գլուխ 19-ում Աստծո ազատագրումը հրեշտակների միջոցով

**19:32** Ղովտի աղջիկները ծրագիր մշակեցին իրենց ընտանիքի ազգաբանությունը պահպանելու համար՝

1. Ե՛կ – BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ հ. 34)
2. մեր հորը զինի խմեցնենք – BDB 1052, KB 1639, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով (տես՝ հ. 34):
3. նրա հետ պառկենք – BDB 1011, KB 1486, *Qal* ԸՂՁԱԿԱՆ (հ. 34 ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)

Համար 34-ը կրկնում է այս հեշտասեր արարքները:

**19:36** Հարց է առաջանում, արդյոք նրանք անմիջապես առաջին անգամից հղիացան, թե դա դարձավ պարբերական բնույթի:

**19:37 «Մովաբ»** Տարածված, սակայն ոչ տեխնիկական նշանակությունը՝ հիմնված միևնույն հնչյունների վրա, այսպես է՝ «իմ հորից» (BDB 555), որը ցույց է տալիս այլասերված կապ: Այս երեխան հետագայում դարձավ մովաբացիների հայրը, որը մեծ խնդիրներ էր ստեղծում Իսրայելացիների համար, չնայած որ բարեկամներ էին (տես՝ 2 Օր. 2:9):

**19:38 «Բեն-ամմի... Ամմոնի որդիներ»** Բեն-ամմի կարծես թե նշանակում է «իմ ժողովրդի որդի» (տես՝ Մեպտուազինտա, Ջերոմ և Օգոստինոս): Ամմոնի որդիները (BDB 769) հետագայում հսկայական խնդիրների պատճառ հանդիսացան Իսրայել ազգի համար, մինչդեռ բարեկամներ էին (տես՝ 2 Օր. 2:19): Հհ. 30-38-ի անկումը՝ ետխաղացումը, դիտարկվում է կա՛մ որպես (1) բարոյական անկման նշան կա՛մ էլ (2) որպես հպարտություն, որ կամենում էին պահպանել ընտանիքի մաքուր ազգաբանությունը: Երկու անուններն էլ զավեշտալի են:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Որո՞նք են այն հիմնական ճշմարտությունները, փոխանցվում են գլուխ 18 և 19-ում:
2. Ինչո՞ւ է ՅԱՀՎԵՆ հայտնվում հրեշտակների տեսքով: Ո՞րն էր Իր այցելության նպատակը (կամ նպատակները):
3. Ի՞նչ է նշանակում և ենթադրում իրենից *Աղոն* տերմինը:
4. Նշե՛ք այս գլուխներում Ղովտի աստիճանական անկումը:

## ԾՆՆԴՈՑ 20

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Աբրահամի խորամանկությունը	Աբրահամն ու Աբիմելեքը	Աբրահամն ու Սառան Գերարում	Աբրահամն ու Աբիմելեքը	Աբրահամը Գերարում
20:1-7	20:1-7	20:1-7	20:1-3 20:4-5 20:6-7	20:1-7
20:8-18	20:8-13  20:14-16  20:17-18	20:8-18	20:8-10  20:11-13 20:14-16 20:17-18	20:8-13  20:14-18

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ՀԻՄՔԵՐԸ

Ա. Չարմանալ է, որ գլուխ 18-ի խոստումների լույսի ներքո, Աբրահամը կարող էր ընկնել այսպիսի եսակենտրոն վախկոտ իրավիճակի մեջ, ինչպիսին որ նա վերապրել էր գլուխ 12-ում: Սա ևս մեկ յուրահատուկ գրականական միջոց է ցույց տալու, որ խոստումը կատարելապես Աստծուց է կախված և ոչ թե մարդուց:

Պարզապես մի պահ մտածեք բոլոր այն խնդիրների մասին, որ կապված էին Աբրահամի համար որդի և սերունդներ ունենալու խոստման հետ:

1. ամուլ կին
2. մի կին, որին Փարավոնն էր վերցրել (Ծննդոց 12)
3. մի կին, որին Աբիմելեքն էր վերցրել (Ծննդոց 20)



4. Իսահակի զահարերությունը (Ծննդոց 22)

Աբրահամը պետք է կառչեր ՅԱՀՎԵԻ խոստումներին անվերահսկելի իրավիճակներով լի իր կյանքում: Աբրահամը «հավատաց» Աստծուն (Ծննդ . 15:6):

Բ. Այս գլուխը հայտնում է մեզ, որ Քանանում Աբրահամի օրոք կային շատ ուրիշ արդար մարդիկ էլ:

1. Սաղեմ քաղաքից Մելքիսեդեկը
2. Աբիմելեքը՝ Փղտացիների թագավորը

Սա կարող է բացատրել, թե ինչու է Ծննդ . 15:13-16-ում Աբրահամի վերաբերյալ մարգարեության մեջ ասվում, որ Ամորիացիների մեղքը՝ ամբարշտությունը (Քանանի երկրի մարդկանց հավաքական տերմինը) դեռևս լցված չէր: Այս գլխում Աբիմելեքը դիտարկվում է որպես Աբրահամից հոգևորապես գերազանց մեկը:

Գ. Աբիմելեքի համար ՅԱՀՎԵԻն ուղղված Աբրահամի բարեխոսական աղոթքը ցույց է տալիս այն բացառիկ և առանձնաշնորհված դիրքը, որ ուներ Աբրահամը որպես ՅԱՀՎԵԻ ընտրյալը:

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

#### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:1-7

<sup>1</sup>Եվ Աբրահամն այնտեղից դեպի հարավային երկիրը գնաց և բնակվեց Կաղեսի ու Սուրի միջև ու Գերարում պանդուխտ եղավ: <sup>2</sup>Եվ Աբրահամն իր կնոջ՝ Սառայի մասին ասաց, թե՛ նա իմ քույր է: Եվ Գերարի թագավոր Աբիմելեքը մարդ ուղարկեց և առավ Սառային: <sup>3</sup>Բայց Աստված գիշերը Աբիմելեքի մոտ եկավ և ասաց նրան. «Ահա դու մեռնելու ես այդ կնոջ պատճառով, որովհետև նա ուրիշի կինն է»: <sup>4</sup>Բայց Աբիմելեքը նրան չէր մերձեցել և ասաց. «Տե՛ր, մի՛թե արդար ազգին էլ կմեռցնես: <sup>5</sup>Մի՛թե ինքը չասաց ինձ, թե՛ նա իմ քույրն է. իսկ սա էլ ասաց, թե՛ նա իմ եղբայրն է: Ես ուղիղ սրտով ու մաքուր ձեռքերով եմ արել դա»: <sup>6</sup>Եվ Աստված նրան ասաց երազում. «Այո՛, Ես գիտեմ, որ դու ուղիղ սրտով ես արել այդ, և իմ դեմ մեղանչելուց քեզ ետ պահեցի, որի համար էլ չթողեցի, որ նրան մերձենաս: <sup>7</sup>Եվ արդ, վերադարձրո՛ւ կնոջն իր ամուսնուն, որովհետև նա մարգարե է, և թող քեզ համար աղոթի, որ ապրես, և եթե դու դրան չվերադարձնես, իմացի՛ր, որ անպայման կմեռնես՝ դու և բոլոր նրանք, ովքեր բռնն են»:

**20:1 «Աբրահամն այնտեղից գնաց»** Աբրահամը հեռացավ Մամբրեյի կաղնիների մոտից (տես՝ 18:1) կամ Բերրոնից (տես՝ 13:18): Աբրահամն ապրեց պանդխտության կյանք, ինչպես Հոբը (միևնույն ժամանակաշրջանում):

❖ **«Նեգեվ /դեպի հարավ/»** Սա վերաբերում «հարավային երկրին» (BDB 616), որը կիսաթափանցիկ մի անապատ էր՝ իր մեջ հարավային կողմում ընդգրկելով Բերսեբա քաղաքը: Այս նույն տարածաշրջանը նշվում է 13:1-ում: Նահապետները՝ Աբրահամը և Իսահակը իրենց կյանքի մեծ մասը ապրել են այս ընդհանուր տարածքում:

❖ **«Կաղես»** Այս օազիսը նաև հայտնի է Կաղես-Բառնես անունով (տես՝ 14:7; 16:14), որը գրեթե 50 մղոն է հեռու Բերսեբայից: Հետաքրքիր է, որ *Կաղես* (BDB 873 II, նշանակում է «սուրբ») տերմինը կապված է երբայերենի «սուրբ» բառի հետ, որն է *kadosh* (BDB 871):

❖ **«Սուր»** Այս տերմինը (BDB 1004 III) նշանակում է «պատ», հավանաբար նկատի ունենալով եգիպտական ամրոցների շարքը (տես՝ 1 Թագ. 15:7; 27:8): Այս վայր նշվում է 16:7-ում, երբ Տիրոջ հրեշտակը այստեղ խոսեց Հազարի հետ: Մենք չգիտենք, թե աշխարհագրորեն որտեղ է գտնվում այս վայրը, սակայն ակնհայտ է, որ Եգիպտոսի ճանապարհին Բերսեբայից դեպի հարավ գտնվող տարածք է (տես՝ 18:25):

❖ **«Գերարում պանդուխտ եղավ»** Ըստ երևույթին այստեղ արձանագրված է երկու փուլով կատարված տեղաշարժ, քանի որ Գերարը գտնվում է *Կաղեսի* հյուսիսում: Առաջին ԲԱՅԸ հ. 1-ում (BDB 652, KB 704) բառացի նշանակում է «վրանի ցիցերը դուրս քաշել», սակայն այս մեկը՝ «պանդխտացավ» (BDB 157, KB 184) վերաբերում է երկարաժամկետ հանգրվանին (տես՝ 12:10; 21:23-24; 26:3; 32:6; 35:27; 47:4): Սա մի տարածք էր, որը հետագայում դառնալու էր Փղտաշինների համար ամրոց (տես՝ 10:19): Հետագա պատմությունից իմանում ենք, որ այն Գազայի՝ Փղտացիների հինգ մեծագույն պարսպապատ քաղաքներից մեկի մոտ էր:

**20:2 «նա իմ քույրն է»** Սա նույն իրավիճակն է, որ տեղի ունեցավ 12:17-18-ում Եգիպտոսի Փարավոնի հետ: Այս նույնը պատահելու է հետագայում Իսահակի և Ռեբեկայի հետ՝ 26:1-ում: Միակ բացատրությունը, որ ունենք սրա հետ կապված, գտնվում է հ. 13-ում, որտեղ կարծես թե Աբրահամի և Սառայի քաղղեացիների Ուր քաղաքից հեռանալուց հետո սա նորմալ երևույթ էր դարձել: Շատ հնարավոր է, որ նրանք իրոք կես եղբայր-քույր էին (տես՝ հ. 12), սակայն հնարավոր է նաև, որ Աբրահամը պարզապես որդեգրել էր նրան մի ծիսակարգով, որի մասին տեղեկանում ենք Նուզի Տախտակներից, որը նկարագրում է Բոռեցիների մշակույթը:

❖ **«Եվ Գերարի թագավոր Աբիմելեքը մարդ ուղարկեց և առավ Սառային»** Աբիմելեք (BDB 4) անունը երկրի առաջնորդի տիտղոս է, ինչպես օրինակ Փարավոնը, Կայսրը կամ Ցարը: Ըստ երևույթին այն նշանակում է «հայրը թագավոր է» կամ «թագավորն իմ հայրն է»: Այս ընդհանուր տիտղոսը՝ անունը տեսնում ենք փոշտացիների թագավորների մոտ, որ կարելի է կարդալ Սաղմոս 34-ի ներածության մեջ:

Այն փաստը, որ Աստված հայտնվեց նրան երազում, ինչպես դա արեց Լաբանի հետ 31:34-ում, ցույց է տալիս Աստծո հետ այս մարդու ունեցած փոխհարաբերության մասին: Սա հատկապես կարելի է տեսնել, երբ նա Աստծուն կոչում է *Աղոնայ* (հ. 4) և ցույց է տալիս, որ հնարավոր է, որ նա որոշ գիտելիքներ ուներ ուխտի Աստծո (ՅԱՀՎԵԻ) վերաբերյալ, ինչպես Մելքիսեդեկը (Ծննդոց 14)՝ ևս մեկ ուխտից դուրս անձնավորություն:

**20:4-6** Այստեղ տեսնում ենք Աստծո և Աբիմելեքի միջև տեղի ունեցած քննարկումը, որտեղ Աբիմելեքը հիշեցնում է Աստծուն, որ ինքը անմեղությամբ է վարվել, առանց իմանալու բոլոր փաստերը: Հ. 5-ի այլաբանությունը՝ «իմ ձեռքերի անմեղությունը» (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ, BDB 667 և BDB 496) վերաբերում է երբայերեն «ձեռքը բաց», այսինքն՝ «ոչինչ չթաքցնող» դարձվածքին: Այն համազոր է «իմ սրտի կատարելությամբ» (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ, BDB 1070 և BDB 523, տես՝ 3 Թագ. 9:4; Սաղմ. 7:8; 101:2): Հ. 6-ում Աստված ասաց, որ Նա է պահել Աբիմելեքին մեղանշելուց (տես՝ 1 Թագ. 25:39; Հոր 33:18; նաև տես՝ Սաղմ. 19:13):

Ըստ երևույթին սա վերաբերում է մի ինչ-որ տեսակի հիվանդության, որով հիվանդացել էին Աբիմելեքը և նրա ընտանիքը (տես՝ հհ. 17-18; 12:17): Կարծում են, որ կարևոր է տեսնել, թե Աստված ինչպես է ակտիվորեն ներգրավված Իր աշխարհում՝ մի ուխտից դուրս գտնվող անդամի կյանքում: Սա նաև կարելի է տեսնել Հազարի և նրա որդու՝ Իսմայելի հետ վարվելիս: Սա պետք է որ մեծ քաջալերանք լինի բոլոր մարդկանց համար (տես՝ Եզեկ. 18:23,32; Հովի. 3:16; Հռոմ. 11:32; 1 Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9; 1 Հովի. 2:1; 4:14):

**20:4 «Տե՛ր, մի՛թե արդար ազգին էլ կմեռցնես»** Սա ցույց է տալիս Աստծո արդարության վերաբերյալ միևնույն հասկացողությունը, որ ուներ Աբրահամը 18:23-ում: Ըստ երևույթին թագավորը տեսնում էր իր մահը որպես նախաբան իր ամբողջ ցեղի կործանման համար (որևէ պատուհաս, տես՝ հ. 17): Նա հայտարարում է (օգտագործելով «անմեղ» կամ «արդար» տերմինը, BDB 843), որ ինքը ոչ մի սեռական ոտնձգություն չի գործել Սառայի հանդեպ և որ նա անտեղյակ լինելով է այդպես վարվել և ոչ թե գիտակցված է մեղանշել: Այս համարից հայտնի է, որ շնությունը համարվում էր Աստծո չափանիշների լուրջ խախտում, նույնիսկ պատմության այս վաղ փուլում (տես՝ Ծննդ. 12:17-19; 26:7-11), քանի որ այն ազդում էր ժառանգության իրավունքների վրա:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՍԵՔՍՈՒԱԼՈՒԹՅՈՒՆԸ**  
**SPECIAL TOPIC: HUMAN SEXUALITY**

I. Ներածական նշումներ՝  
 Ա. Քրիստոնյաները անտեղի ազդեցության են ենթարկվել հունական ասկետիզմի կեղմից, որը թե՛ մարդու մարմինը և թե՛ դրա բնական՝ նորմալ գործունեությունները համարում են չար: Աստվածաշունչը հաստատում է ֆիզիկական ստեղծագործության բարի լինելը (տես՝ Ծննդ. 1:26-27), սակայն ընդունում է մարդու ապստամբության հետևանքները (տես՝ Ծննդոց 3): Մի օր այս անեծքը վերցվելու է (տես՝ Հռոմ. 8:18-22):  
 Բ. Արական և իգական սեռերը Աստծո մտահոգումն է: Մարդկային սեքսուալությունը Աստծո ստեղծագործության և ծրագրի մի մասն է կազմում Իր պատկերով ստեղծված մարդկանց համար: Սեռական ակտը ինչ-որ մի բան չէ, որ մենք անում ենք: Դա մեր էության ինչ-որ մի մասն է: Մեր մտածումները և կյանքերի ամեն մի բնագավառը

ագղեցության է ենթարկվում սեռական կողմնորոշման պատճառով, ինչպես որ մեկնաբանում են մեր մշակույթները:

II. Աստվածաշնչյան հասկացությունները (օրինակների ընտրանի)

Ա. Ծննդոցից

1. Սկզբնապես եղել է փոխադարձությունը (տես՝ Ծննդ. 1:26-27, տես՝ բառային ուսումնասիրություն «օգնական» տերմինի շուրջ Ծննդ. 1:18-ում՝ online տարբերակով)
2. Սեռական ակտը Աստծուց տրված կարգադրություն է (այսինքն՝ Ծննդ. 1:28; 9:1,7)
3. Ամբողջ ստեղծագործությունը հռչակվեց որպես «շատ բարի» Ծննդ. 1:31-ում, ներառյալ մարդու սեռական կյանքը:
4. Կանայք հակառակորդներ չեն, այլ լրացնողներ տղամարդկանց համար (այսինքն՝ Ծննդ. 2:18):
5. Եվայի և Ադամի ապստամբությունը ագղեց մեր բոլորի և աշխարհի վրա, ներառյալ սեքսուալությանը (տես՝ Ծննդ. 3:7,16; Հռոմ. 5:12-21):

Բ. Ֆիզիկական սերը հաստատվում է Մուրր Գրքով, անգամ Անկումից հետո էլ:

1. Առակաց 5:15-23 հաստատում է կենսաց միամուսնությունը և կանոնավոր սեռական կյանքը:
2. Ժողովող 9:7-9, վայելիր կյանքը բոլոր իր բնագավառներում՝ քանի դեռ կարող ես:
3. Երգ Երգոցը ֆիզիկական սիրո հաստատություն է
4. Աստված հավիտենական հոգի է՝ առանց մարմնի, մինչդեռ «Նա» օգտագործում է մարդկային սեռական փոխաբերություններ Իրեն նկարագրելու համար (այսինքն՝ Ովսեա 1-3; 11)

III. Աստծուց տրված սահմանները մարդկային սեքսուալության դրսևորման մեջ՝

Ա. Ամուսնություն

1. ՀԿ և ՆԿ-ում ընդունված նորմ
2. կիրառվում է որպես «հոգով լեցուն» կյանքի օրինակ, Եփես. 5:15-6:9
3. 1 Կորնթացիների 7:3-5, սեքսը ավելին է, քան ծնունդը  
ա. մարմինը պատկանում է Աստծուն, 1 Կորնթ. 6:19-20  
բ. մարմինը պատկանում է կողակցին, 1 Կորնթ. 7:4

Բ. Մարդու սեքսուալությունը կիրառված լուսաբանելու Աստծուն և Նրա սերը՝

1. Գաղատացիների 3:28, նոր դարի ամփոփումը, ավետարանը և դրա սահմաններից դուրս գալու հասանելիությունը և հավասարությունը
2. Եփեսացիների 5:21-31, Քրիստոնեական ընտանիքը դառնում է Քրիստոսի և Իր եկեղեցու միջև փոխհարաբերության օրինակ (ինչպես Ովսեա 1-3 օգտագործում է Ովսեայի ամուսնությունը Աստծո սերը Իսրայելի հանդեպ բացատրելու միջոց):

Գ. Աստված Ինքը նկարագրվում է թե՛ որպես արական և թե՛ իգական

1. արական՝ շատ տարածված է  
ա. Հայրը, 2 Օրինաց 1:31; 32:5; Սաղմ. 103:13; Ես. 63:16; 64:8; Երեմ. 3:4,19; 31:9; Ովս. 11:1; Մաղ. 3:17  
բ. ամուսին, Ովս. 11:3-4
2. իգական  
ա. Ծննդ. 1:2; Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա  
բ. Ծննդ. 17:1, *El Shaddai* հնարավոր է ունի իգական նշանակություն (արաբական արմատ է)  
գ. 2 Օրինաց 32:18, Աստված որպես մայր թռչուն  
դ. Ելից 19:4, Աստված որպես մայր արծիվ  
ե. Եսայի 49:14-15; 66:9-13, Աստված համեմատվում է կերակրող մոր հետ

IV. Մարդկության կողմից Աստծուց տրված սեռական կյանքի այլասերումը՝

Ա. նախա-ամուսնական (պոռնկություն) և հավելյալ ամուսնական (շնություն)

Բ. մի քանի ընտրված տեքստեր՝

1. 1 Կորնթ. 6:15-20

2. Գաղ. 5:19-21

3. Եբր. 13:4

Գ. Մեքսը (թե՛ մտքով և թե՛ գործողությամբ) կարող է անցաթուղթ դառնալ մարդկանց իրենց անձնական բավարարվածության համար օգտագործելու նպատակով

Դ. Ամուսնալուծությունը

1. միշտ երկրորդ լավագույն տարբերակն է

2. թույլատրվում է ՀԿ-ում՝ 2 Օր. 24:1-4, սակայն արգելվում է Հիսուսի կողմից՝ Մատթ. 5:27-32; 19:3-12

Ե. Միասեռականություն

1. երբեք Աստծո կամքը չի եղել

ա. Ղևտ. 20:13

բ. Հռոմ. 1:26-27

գ. 1 Կորնթ. 6:9-11

2. Այն լուրջ է, քանի որ ապրելակերպ հանդիսացող մեղք է, սակայն ավելի վատ չէ, քան մյուս սեռական մեղքերը (պոռնկությունը կամ շնությունը կամ ցանկությունը): Այն չի հանդիսանում «աններելի մեղք» (որը անհավատությունն է):

3. Բոլոր մեղավոր մարդիկ էլ բախվում են մարդկային սեքսուալության հետ: Այս հզոր, համառ, այլասերված ցանկությանը, բնագոյն և ախորժակին մենք բոլորս էլ պետք ամեն օր դիմակայենք՝ հակառակվենք:

4. Շատ հավատացյալներ հեթանոս տաճարներում միասեռական գուզրնկերներ էին, սակայն իրենց փրկությունից հետո այլևս դրա գերին չէին, 1 Կորնթ. 6:9,11:

V. Եզրահանգումներ

Ա. Մեքսուալությունը երկրագունդը ամբողջությամբ բնակեցնելու Աստծո ծրագիրն է:

Բ. Դա միայն ժամանակի մեջ է, ոչ թե հավիտենության համար, Մատթ. 22:30; Մարկ. 12:25; Ղուկ. 20:34-36:

Գ. Այն ազդեցության է ենթարկվել Անկման պատճառով: Մեզնից յուրաքանչյուրն էլ բնականորեն եսակենտրոն, եսասեր անձիք են:

Դ. Մեքսուալության նպատակն է մեզ օգնել որպես փրկվածների դառնալ ավելի ժուժկալ (Գաղ. 5:23-ում Հոգու պտղի ժայռաբեկորը): Մեքսը լավ ուսուցիչ է եսասեր մարդկանց համար:

Ե. Զրիստոնյա ծնողները կրում են առաջնային դեր, որպեսզի օգնեն ընտանիքներին, համայնքներին և ազգերին լուծելու այս հզոր և տարածված խնդիրը: Այն կարող է կա՛մ արգելք, կա՛մ էլ աստիճան հանդիսանալ: Մենք աստվածային շնորհքի օրինակ ենք: Լավագույն սեռական կրթությունը երկու ծնողներն են, որոնք անձնուրաց կերպով սիրում են իրար:

Զ. Մեքսը կարող է լինել հիանալի կամ ահավոր: Դրա նպատակն է՝

1. երկիրը լցնել

2. կապել երկու մարդկանց

3. ընտանիք ստեղծել

4. հաճույք պատճառել

**20:7** Արիմելեքին երազի մեջ Աստծո կողմից տրված պատգամի ԲԱՅԱԿԱՆ ձևերն ապշեցնող են՝

1. «վերադարձրո՛ւ կնոջն իր ամուսնուն», BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. հետաքրքիր է, որ սա միևնույն ԲԱՅՆ է, որը շատ հաճախ կիրառվում է ՀԿ-ում «սպաշխարել» բառի համար:
2. «քեզ համար աղոթի», BDB 813, KB 933, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (հավանաբար կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով): Նկատե՛ք, որ Աստծո ներումը կախված էր Աբրահամի բարեխոսական աղոթքից (շատ նման է Հոբ 42:8-ին): Սա ընդգծում է Աբրահամի բացառիկ դիրքը:
3. «որ ապրես», BDB 310, KB 309, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. «եթե դու դրան չվերադարձնես», *Hiphil* ԴԵՐԲԱՅ (տես #1)
5. «իմացի՛ր», BDB 393, KB 390, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. «անպայման կմեռնես», միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅՆ (BDB 559, KB 562) արտահայտում է խստություն՝ ուժգնություն: Մեղքին ուղեկցում է «մահը» (2:17; Ելից 10:17; Թվոց 18:22):

❖ «նա մարգարե է» Սա Աստվածաշնչում այս տերմինի առաջին կիրառությունն է և միակ դեպքը, որ հանդիպում ենք Ծննդոցում: «Մարգարե» (BDB 611) տերմինը վերաբերում է մեկին, ով ստանում և տալիս է Աստծո հայտնությունը (տես՝ Թվոց 12:6): Սակայն այս համատեքստում կարծես թե այն կապ ունի բարեխոսական աղոթքի հետ (տես՝ հհ.7,17): Սա հավանական է, քանի որ կան այլ հաստատող համարներ նույնպես (տես՝ 1 Թագ.7:5; 12:19,23; Հոր 42:8; Երեմ.7:16; 11:14; 14:11; 27:18): Ոմանք ստում են, որ սա վերաբերում է Աստծո հայտնությունը իր երեխաներին փոխանցելուն (տես՝ 18:19):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ**  
**SPECIAL TOPIC: OT PROPHECY**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

**Ա. Բացման խոսքեր.**

1. Հավատացյալ համայնքը համաձայն չէ մարգարեության մեկնաբանության կերպերի հետ: Դարեր շարունակ որպես ուղղափառության գործառույթ բազմաթիվ ճշմարտություններ են հաստատվել, սակայն ոչ այս մեկը:
2. Գոյություն ունեն ՀԿ-յան մարգարեության համար գեղեցիկ գատորոշված փուլեր.
  - ա. նախանահապետական՝
    - (1) մարգարեներ կոչվող անհատներ.
      - (ա) Աբրահամ – Ծննդ. 20:7
      - (բ) Մովսես – Թվոց 12:6-8; 2 Օր. 18:15; 34:10
      - (գ) Ահարոն – Ելից 7:1 (Մովսեսի խոսնակը)
      - (դ) Մարիամ – Ելից 15:20
      - (ե) Մովրադ և Էդրադ – Թվոց 11:24-30
      - (զ) Դեբորա – Դատ. 4:4
      - (է) անանուն – Դատ. 6:7-10
      - (ը) Սամուել – 1 Թագ. 3:20
    - (2) հատվածներ մարգարեների խմբերի մասին – 2 Օր. 13:1-5; 18:20-22
    - (3) մարգարեական խումբ կամ միաբանություն – 1 Թագ. 10:5-13; 19:20; 3 Թագ. 20:35,41; 22:6,10-13; 4 Թագ. 2:3,7; 4:1,38; 5:22; 6:1, և այլն:
    - (4) Մեսիան, որ մարգարե է կոչվում – 2 Օր. 18:15-18
  - բ. գրող չհանդիսացող միապետականներ ( նրանք դիմում էին թագավորին).
    - (1) Գադ – 1 Թագ. 22:5; 2 Թագ. 24:11; 1 Մնաց. 29:29
    - (2) Նաթան – 2 Թագ. 7:2; 12:25; 3 Թագ. 1:22
    - (3) Աքիա – 3 Թագ. 11:29
    - (4) Հեու – 3 Թագ. 16:1,7,12
    - (5) անանուն – 3 Թագ. 18:4,13; 20:13,22
    - (6) Եղիա – 3 Թագ. 18 – 4 Թագ. 2
    - (7) Միքիա – 3 Թագ. 22
    - (8) Եղիսե – 4 Թագ. 2:8,13
  - գ. դասական գրող մարգարեները (նրանք դիմում են ազգին, ինչպես նաև թագավորին) – Եսայի – Մաղաքիա (բացի Դանիելից)

**Բ. Աստվածաշնչյան տերմիններ**

1. *Ro'eh* = «տեսանող», 1 Թագ. 9:9: Այս հատվածն ինքնին ցույց է տալիս *Nabi* տերմինի թարգմանությունը: *Ro'eh* «տեսնել» ընդհանուր տերմինից է ծագել: Այս անձնավորությունը հասկանում էր Աստծո ճանապարհներն ու ծրագրերը և իր հետ խորհրդակցում էին որևէ հարցի շուրջ Աստծո կամքի հաստատման համար:
2. *Hozeh* = «տեսանող», 2 Թագ. 24:11: Այն հիմնականում *Ro'eh* բառի հոմանիշն է: Այն ծագել է «տեսնել» տերմինի ավելի հազվադեպ տարբերակից: Ածանցավոր ձևը ավելի հաճախ է կիրառվում մարգարեների մասին խոսելիս:
3. *Nabi* = «մարգարե», Աքքադերենի *Nabu* բայի՝ «կանչել», և արաբերենի *Naba'a*՝ «հայտարարել» բայի համանման տերմինը: Սա Հին Կտակարանում մարգարեի համար կիրառվող ամենատարածված տերմինն է: Այն կիրառվել է ավելի քան 300 անգամ:

Ճշգրիտ ստուգաբանությունը հայտնի չէ, սակայն «կանչել» բայը ներկայումս լավագույն տարբերակն է: Հավանաբար լավագույն հասկացությունը բխում է Մովսեսի Փարավոնի հետ Ահարոնի միջոցով շփվելու ՅԱՀՎԵԻ նկարագրությունից (տես՝ Ել. 4:10-16; 7:1; 2 Օր. 5:5): Մարգարեն մի մարդ է, որը Աստծո անունից խոսում է Նրա ժողովրդին (Ամովս 3:8; Երեմ. 1:7,17; Եզեկ. 3:4):

4. Բոլոր երեք տերմինները կիրառվում են մարգարեի պաշտոնի համար 1 Մնաց. 29:29-ում. Սամուել՝ *Ro'eh*, Նաթան՝ *Nabi* և Գադ՝ *Hozeh*:
5. Այս արտահայտությունը *'ish ha – 'elohim*, «Աստծո Մարդ» տալիս է Աստծո համար խոսող մարդու ավելի ծավալուն նշանակությունը: ՀԿ-ում այն կիրառվել է մոտ 76 անգամ, «մարգարեի» իմաստով:
6. «Մարգարե» /*prophet*/ տերմինը բուն հունարեն է: Այն ծագել է՝ (1) *pro* = «նախքան» կամ «համար», և (2) *phemi* = «խոսել»:

## II. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒԲԱՆ

- Ա. «Մարգարեություն» տերմինը Եբրայերենում ունի ավելի ընդարձակ լեզվաբանական հարթակ, քան անգլերենում: Հետուից մինչև Թագավորացներ (բացի Հռութից) պատմական գրքերը հրեաների կողմից պիտակավորվել՝ վերնագրվել են որպես «վաղ կամ նախկին մարգարեներ»: Թե՛ Աբրահամը (Ծննդ. 20:7; Մաղմ. 105:5) և թե՛ Մովսեսը (2 Օրինաց 18:18) կանչված էին որպես մարգարեներ (նաև Մարիամը՝ Ել. 15:20): Հետևաբար, զգուշացեք անգլերենի կասկածելի սահմանումից:
- Բ. «Մարգարեությունը օրենքով հնարավոր է սահմանել որպես պատմության հասկացողություն, որն ընդունում է դրա նշանակությունը միայն աստվածային հոգածության, նպատակի, մասնակցության տերմիններով», *Աստվածաշնչի Մեկնաբանի Բառարան*, հատոր 3, էջ՝ 896 /*Interpreter's Dictionary of the Bible*/:
- Գ. «Մարգարեն ո՛չ փիլիսոփա է, ո՛չ էլ համակարգված աստվածաբան, այլ ուխտի միջնորդ, որը Աստծո խոսքը հասցնում է Իր ժողովրդին, որպեսզի ներկան բարեկարգելով ձևավորի նրանց ապագան», «Մարգարեներ և Մարգարեություն», *Հուդայիկա Հանրագիտարան*, հատոր 13, էջ՝ 1152 /“Prophets and Preophecy”, *Encyclopedia Judaica*/:

## III. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Մարգարեությունը Աստծո համար Իր ժողովրդի հետ խոսելու միջոց է, որով իրենց տվյալ միջավայրում ապահովում է առաջնորդություն և հույսն առ այն, որ իրենց կյանքերը և աշխարհի դեպքերը վերահսկվում են Նրա կողմից: Դրանց պատգամը հիմնականում հավաքական իմաստով է: Այն նախատեսված է հանդիմանելու, քաջալերելու, հավատք և ապաշխարություն հաղորդելու, և Աստծո ժողովրդին տեղեկացնելու Իր մասին և Իր ունեցած ծրագրերի: Սրան պետք է ավելացնել, որ հաճախ այն կիրառվում է Աստծո ընտրությունը որևէ խոսնակի հարցում հստակ հայտնելու համար (2 Օր. 13:1-3; 18:20-22): Ի վերջո սա հանգեցնելու էր Մեսիայի ընտրությանը:
- Բ. Հաճախ մարգարեն օգտագործում էր իր օրերի պատմական կամ աստվածաբանական ճգնաժամը և պրոյեկտում էր այն որևէ էսկատոլոգիական միջավայրում: Պատմության վերջին ժամանակների այս տեսակետը բացառիկ է Իսրայելում և աստվածային ընտրության, ուխտի խոստումների հարցում Իսրայելի ունեցած զգայունությունը:
- Գ. Մարգարեի պաշտոնը կարծես թե հավասարակշռում է (Երեմ. 18:18) և հափշտակում Զահանայապետի պաշտոնը, որպես Աստծո կամքը իմանալու կերպ: Ուրիմն ու Թումիմը փոխակերպվում են Աստծո խոսնակի կողմից բառացի պատգամ հասցնելուն: Մարգարեի պաշտոնն էլ իր հերթին Իսրայելում կարծես թե ննջել է Մադաքիայից հետո: Այն նորից հայտնվում է Հովհաննեսի Մկրտչի միջոցով Մադաքիայից 400 տարի անց: Անհայտ է, թե ինչպես է Նոր Կտակարանի «մարգարեության» պարզևր կապված Հին Կտակարանի հետ: Նոր Կտակարանի մարգարեները (Գործք 11:27-28; 13:1; 14:29,32,37; 15:32; 1 Կորնթ. 12:10,28-29; Եփես. 4:11) Սուրբ Գրքի համար նոր հայտնություններ հայտնողներ չեն, այլ ուխտի իրավիճակների համար Աստծո կամքի կանխատողներ:
- Դ. Մարգարեությունն իր բնույթով բացառապես կամ հիմնականում կանխատում չէ: Կանխատումը իր պաշտոնը և իր փոխանցած պատգամը հաստատելու մի միջոց է, սակայն պետք է նշել, որ «ՀԿ-յան մարգարեություններից 2%-ից էլ քիչ են կազմում Մեսիական մարգարեությունները, 5%-ից քիչ մարգարեություններ էլ նկարագրում են Նոր Կտակարանյան Դարաշրջանը: 1%-ից ավելի քիչ մարգարեություններ էլ վերաբերում են գալիք

բաներին»։ (Ֆիի և Ստյուարտ, *Ինչպես Կարդալ Աստվածաշունչն Իր ամբողջ Իմաստով*, էջ 166 /Fee & Stuart, *How to Read the Bible For All Its Worth*)։

- Ե. Մարգարեները ներկայացնում են Աստծուն ժողովրդին, մինչ քահանաները ներկայացնում են ժողովրդին Աստծուն։ Սա ընդհանուր սահմանում է։ Գոյություն ունեն բացառություններ ինչպես Ամբակումը, որը հարցեր է ուղղում Աստծուն։
- 2. Մարգարեները հասկանալու դժվարության պատճառներից մեկն այն է, որ մենք չգիտենք, թե նրանց գրքերն ինչպես են կազմավորվել։ Դրանք ժամանակագրական չեն։ Այդ գրքերը կարծես թե թեմատիկ են, սակայն ոչ միշտ ըստ մեր ենթադրածի։ Շատ հաճախ բացակայում է տեսանելի պատմական միջավայրը, ժամանակացույցը կամ պատգամների միջև եղած հստակ բաժանումները։ Այս գրքերը դժվար են.
  1. կարդացվում մեկ անգամ նստելով
  2. ընդգծել ըստ թեմաների
  3. որոճելու կենտրոնական ճշմարտությունը կամ յուրաքանչյուր պատգամի մեջ բնագրի հեղինակի մտադրությունը։

#### IV. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Հին Կտակարանում կարծես թե առկա է «մարգարե» և «մարգարեություն» հասկացությունների զարգացում։ Վաղ Իսրայելում ձևավորվել էր մարգարեների ընկերություն, որն առաջնորդում էր որևէ խարիզմատիկ հզոր առաջնորդ, ինչպես օրինակ Եղիան կամ Եղիսեն էին։ Երբեմն «մարգարեների որդիները» արտահայտությունը գործածվում էր նկատի ունենալով այս խմբին (4 Թագ. 2)։ Մարգարեները առանձնանում էին էքստազի ձևերով (1 Թագ. 10:10-13; 19:18-24)։
- Բ. Այնուամենայնիվ, այս շրջանից արագ անցում եղավ անհատ մարգարեներին։ Կային այնպիսի մարգարեներ (թե՛ իրական և թե՛ սուտ), որոնք հավասարեցվում էին Թագավորի հետ, և ապրում էին արքունի պալատում (Գաղ, Նաթան)։ Նաև կային այնպիսիները, որոնք անկախ էին, երբեմն ամբողջովին Իսրայելի հասարակության ստատուս քվոյի հետ ընդհանրապես կապ չունեցող (Ամովս)։ Մարգարեները թե՛ տղամարդիկ էին, և թե՛ կանայք (4 Թագ. 22:14)։
- Գ. Մարգարեի հաճախ ըստ մարդու անմիջական արձագանքի հանդիսանում էր ապագան հայտնող։ Հաճախ մարգարեի գործը հանդիսանում էր Աստծո տիեզերական ծրագիրը Իր ժողովրդին հայտնելը, որն ազդեցության չէր ենթարկվում մարդկային արձագանքի կողմից։ Հնագույն Մերձավոր Արևելքի մարգարեների միջավայրին ոչլրահատուկ էր տիեզերական էսկատոլոգիական ծրագիրը։ Կանխասումը և Ուխտի հավատարմությունը հանդիսանում են մարգարեական պատգամների գույգ կենտրոնները (տես՝ Ֆիի և Ստյուարտ, էջ 150)։ Սրանից կարելի է ենթադրել, որ մարգարեները հիմնականում ունեն հավաքական կենտրոնացում։ Նրանք ընդհանրապես, բայց ոչ բացառապես, դիմում են ազգին։
- Դ. Մարգարեական նյութերից շատերը բանավոր տեսքով են ներկայացվում։ Միայն հետագայում են դրանք հավաքագրվել Մերձավոր Արևելքի Գրականության տարբեր թեմաների, ժամանակագրության կամ այլ ձևաչափերի միջոցով, որոնք մեր համար կորած են համարվել։ Եվ քանի որ դրանք հիմնականում բանավոր տեսքով էին, դրանք գրի առնված արձակի պես ձևավորված չէին։ Այդ իսկ պատճառով գրքերը անմիջապես դժվար ընթեռնելի էին և դժվարհասկանալի առանց հատուկ պատմական միջավայրի։
- Ե. Մարգարեներն իրենց պատգամները փոխանցելու համար գործածում էին որոշակի ձևեր՝
  1. Դատարանի տեսարան – Աստված Իր ժողովրդին տանում է դատարան, հաճախ ամուսնավորության դատական գործով, որտեղ ՅԱՀՎԵՆ մերժում է իր կնոջը (Իսրայելին) նրա անհավատարմության համար (Ովսես 4; Միքիա 6)։
  2. Թաղման սուգ – նմանատիպ պատգամի հատուկ հանգը և դրան հատկանշական դրան հատկանշական «վայ»-երը, առանձնացնում են այն որպես հատուկ տեսակ (Եսայի 5; Ամբակում 2)։
  3. Ուխտի Օրհնության Հոչակում – Ուխտի պայմանական բնույթը շեշտադրվում է և հետևանքները՝ թե՛ դրական և թե՛ բացասական, բարձրաձայնվում են ապագայի համար (2 Օր. 27-28)։

#### V. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

- Ա. Գտեք բուն մարգարեի (խմբագրի) մտադրությունը՝ նպատակը, ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր պատգամի պատմական միջավայրին ու գրական համատեքստին։

Սովորաբար այն պարունակում է Իսրայելի կողմից ինչ-որ կերպ Սովսիսական Ուխտի խախտում:

- Բ. Կարդացե՛ք և մեկնաբանե՛ք ամբողջ պատգամը և ոչ թե մի մասը. ըստ բովանդակության կոնսպեկտավորեք: Տեսե՛ք, թե ինչ առնչություն ունի այդ պատգամը իրեն հաջորդող և նախորդող պատգամների հետ: Փորձե՛ք կոնսպեկտավորել ամբողջ գիրքը:
- Գ. Պատկերացրե՛ք պատգամի տառացի մեկնաբանությունը, մինչև որ տեքստում ինչ-որ բան ձեզ մատնացույց կանի դրա այլաբանական կիրառությանը. ապա տվյալ տեքստի մեջ ներմուծե՛ք փոխաբերական լեզուն:
- Դ. Վերլուծե՛ք սիմվոլիկ գործողությունը պատմական միջավայրի և զուգահեռ հաստատվածների օգնությամբ: Միշտ հիշե՛ք, որ Հնագույն Մերձավոր Արևելյան գրականությունը արևմտյան կամ ժամանակակից գրականությունը արևմտյան է:
- Ե. Կանխասամանը ցուցաբերե՛ք զգուշավորություն.
  - 1. Արդյո՞ք դրանք միանշանակ վերաբերում են հեղինակի օրերին:
  - 2. Արդյո՞ք դրանք հետագայում իրականացան Իսրայելի պատմության մեջ:
  - 3. Արդյո՞ք դրանք դեռևս ապագայի դեպքեր են:
  - 4. Ունե՞ն դրանք մերօրյա իրականացում և բացի այդ ապագայի համար են:
  - 5. Թույլ տվե՛ք, որ Աստվածաշնչի, և ոչ թե ժամանակակից հեղինակները, տան ձեր պատասխանները:
- Զ. Մտահոգող հարցեր.
  - 1. Արդյո՞ք կանխատուը որակավորվում է պայմանական պատասխանի դեպքում:
  - 2. Հայտնի՞ է արդյոք, թե ում (և ինչու) է ուղղված մարգարեությունը:
  - 3. Հավանակա՞ն է արդյոք, որ տվյալ մարգարեությունը աստվածաշնչորեն և/կամ պատմականորեն մի քանի անգամ կիրականանան:
  - 4. ՆԿ-յան հեղինակները ներշնչանքի ներքո ի գորու էին տեսնել Մեսիային ՀԿ-ի տարբեր մասերում, որը մեզ համար տեսանելի չէ: Նրանք կարծես թե կիրառում էին տիպաբանություն կամ բառախաղ: Քանի որ մենք ներշնչված չենք, ավելի լավ է, որ այս մոտեցումը թողնե՛ք նրանց:

VI. ՕԳՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. *Ողեցույց Աստվածաշնչյան Մարգարեության համար*, Կառլ Ի. Արմերդինգ և Ու. Ուորդ Գասք /*A Guide to Biblical Prophecy by Carl E. Armerding and W. Ward Gasque*/
- Բ. *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտ /*How to Read the Bible for All It's Worth by Gordon Fee and Douglas Stuart*/
- Գ. *Իմ Ծառաներ Մարգարեները* Էդվարդ Ջ. Յանգ /*My Servants the Prophets My Servants the Prophets by Edward J. Young*/
- Դ. *Մաներ և Մանգաղներ. Աստվածաշնչյան Մարգարեության և Ապոկալիպսիսի Լեզվի Վերանայում*, Դ. Բրենթ Սենդի /*Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic by D. Brent Sandy*/
- Ե. *Հին Կտակարանի Աստվածաբանության և Էզգեզեզիկայի Նոր Միջազգային Բառարան*, հատոր 4, էջ՝ 1067-1078, /*New International Dictionary of Old Testament Theology and Exegesis, vol. 4, pp. 1067-1078*/:
- Զ. *Աստվածաշնչի լեզուն և պատկերավոր խոսքը* Գ.Բ. Քայրդ /*The Language and Imagery of the Bible by G. B. Caird*/

❖ «դու և բոլոր նրանք, ովքեր բռնն են» Կրկին այստեղ ունենք շեշտադրություն հավաքականի վրա, որը շատ տարածված է ՀԿ-ում (տես՝ 17:27; 19:12): Մենք իրականում չենք տեսնում անհատական տարրը, մինչև Եզեկիել 18 և Երեմիա 31:31-34, որը հատկանշական է Նոր Ուխտին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:8-18**

<sup>8</sup>Ուստի Արիմելեքը առավոտյան վաղ վեր կացավ և կանչեց իր բոլոր ծառաներին և այս ամենը նրանց ականջների առաջ պատմեց, և մարդիկ շատ վախեցան: <sup>9</sup>Ապա Արիմելեքը կանչեց Աբրահամին և ասաց նրան. «Դու ի՞նչ ես արել մեզ, և ես քո դեմ ի՞նչ հանցանք եմ գործել, որ իմ վրա և իմ թագավորության վրա մեծ մեղք ես բերել. այնպիսի բաներ ես արել ինձ, որ ոչ ոք չէր անի»: <sup>10</sup>Եվ Արիմելեքն ասաց Աբրահամին. «Ի՞նչ տեսար, որ արեցիր այս բանը»: <sup>11</sup>Եվ Աբրահամն ասաց. «Ես ասացի, թե՛ իսկապես այստեղ Աստծո վախ չկա, և ինձ կսպանեն»



իմ կնոջ պատճառով: <sup>12</sup>Եվ իսկպպես էլ նա իմ քույրն է՝ հորս աղջիկն է, բայց ոչ՝ մորս աղջիկը, և իմ կինն է դարձել: <sup>13</sup>Եվ եղավ այնպես, որ երբ Աստված իմ հոր տնից ինձ պանդխտության հանեց, նրան ասացի. «Սա թող լինի քո ինձ անելիք բարությունը՝ որտեղ որ գնալու լինենք, իմ մասին ասես, թե՛ եղբայրս է»: <sup>14</sup>Եվ Աբիմելեքը ոչխարներ և արջառներ և ծառաներ ու աղախիններ առավ, տվեց Աբրահամին և նրա կնոջը՝ Սառային էլ վերադարձրեց: <sup>15</sup>Եվ Աբիմելեքն ասաց. «Ահա իմ երկիրը քո առջև է, բնակվիր որտեղ որ քեզ հաճելի է»: <sup>16</sup>Եվ Սառային ասաց. «Ահա եղբորդ հազար դրամ արձաթ տվեցի. ահա դա քեզ համար և բոլոր քեզ հետ եղողների ու ուրիշների համար, աչքերի ծածկոց լինի»: Այսպես Սառան հանդիմանվեց: <sup>17</sup>Եվ Աբրահամն աղոթեց Աստծուն և Աստված բժշկեց Աբիմելեքին և նրա կնոջը և նրա աղախիններին, և նրանք կարողանում էին երեխա ունենալ: <sup>18</sup>Քանի որ ՏԵՐԸ Աբրահամի կնոջ՝ Սառայի պատճառով, Աբիմելեքի տան բոլոր արգանդները փակել էր:

**20:8 «առավոտյան վաղ վեր կացավ»** Սա երբայերեն դարձվածք է հրատապ և անմիջապես (տես՝ 21:14; 22:3) Աստծո արտահայտված կամքը կատարելու համար:

❖ **«և մարդիկ շատ վախեցան»** Ոչ միայն Աբիմելեքի հավատքն է երևում հհ.4-6-ում, այլ իր ամբողջ ընտանիքի հավատքն է արտահայտվում այս համարում: Համար 11ա-ում այս պատճառով Աբրահամի հայտարարությունը զավեշտալի է հնչում:

**20:10 «տեսար»** Ոմանք սա դիտարկում են որպես մարգարեական տեսիլք, սակայն աստվածաբանների մեծամասնությունը տալիս են այսպիսի նշանակություն՝ «Քեզ ի՞նչ է պատահել անցյալում, որը պատճառ հանդիսացավ, որ այսպես վարվես»:

**20:11-12** Աբրահամը երեք բացատրություն է տալիս, թե ինչու այդպես վարվեց: Այդ բոլոր երեքն էլ շատ անտեղի են թվում: Վաճը կամ մահը նույնպես արձանագրված է 12:12-ում և Իսահակի հետ՝ 26:7-ում:

**20:13 «Աստված ինձ հանեց պանդխտության»** Անգլերենում այն հնչում է այնպես, կարծես թե Աստծո մեղքով էր, որ ինքն այդպես վարվեց: Այն մեզ հիշեցնում է, թե ինչպես Ադամը մեղադրեց Աստծուն (տես՝ Ծննդ. 3:12): Սակայն հայտնի չէ, թե արդյոք կարող ենք սա հենց այսպես էլ հասկանանք: Մեզ միայն հայտնի է, որ *Էլոհիմ* անվանը, որն այստեղ օգտագործվում է, հաջորդում է ՀՈԳՆԱԿԻ թվով ԲԱՅ (BDB 1073, KB 1766, *Hiophil* ՎԱՂԱԿԱՍԱՐ ՀՈԳՆԱԿԻ), որը իրոք անսովոր է, երբ նկատի է առնվում իսրայելական միաստվածության Աստծուն: Ոմանք ասում են, որ նա իջնում է Աբիմելեքի բազմաստվածության մակարդակին (S. R. Driver): Սակայն կարծես թե Աբիմելեքը նույնպես ծանոթ էր միակ ճշմարիտ Աստծուն: Ռաբբիներն ասում են, որ այս ՀՈԳՆԱԿԻՆ, չնայած հազվադեպ, բայց չտարածված չէ, երբ վերաբերում է Աստծուն (տես՝ 1:26; 11:7; 35:7; 2 Թագ. 7:23): Եկեղեցին հաճախ այս ՀՈԳՆԱԿԻՆԵՐԸ մեկնաբանում է որպես Երրորդության վարդապետության նախատիպար:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ**  
**SPECIAL TOPIC: THE TRINITY**

Ուշադրություն դարձրեք Երրորդության բոլոր երեք Անձերի գործունեությանը միավորված համատեքստերում: «Երրորդություն» տերմինը առաջին անգամ հնարել է Տերտուղիանոսը. այն աստվածաշնչյան բառ չէ, սակայն հասկացությունն ինքնին տարածված է:

Ա. Ավետարանները

1. Մատթ.3:16-17; 28:19 (և գուգահեռները)
2. Հովհ.14:26

Բ. Գործք Առաքելոց – Գործք 2:32-33, 38-39

Գ. Պողոսը

1. Հռոմ.1:4-5; 5:1,5; 8:1-4,8-10
2. 1 Կորն.2:8-10; 12:4-6
3. 2 Կորն.1:21-22; 13:14
4. Գաղ.4:4-6
5. Եփես.1:3-14,17; 2:18; 3:14-17; 4:4-6
6. 1 Թեսաղ.1:2-5
7. 2 Թեսաղ.2:13
8. Տիտ.3:4-6

Դ. Պետրոս – 1 Պետ.1:2

Ե. Հուդա – հհ. 20-21

Նաև ՀԿ-ում Աստված բառը ակնարկվում է հոգնակի թվով:

Ա. Աստված բառի ՀՈԳՆԱԿԻ թվով կիրառությունը

1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է, սակայն երբ կիրառվում է Աստծո համար, ապա օգտագործվում է ԲԱՅԻ ԵՉԱԿԻ թիվը:

2. Ծննդոց 1:26-27; 3:22; 11:7-ում «Մեզ»/մեր/

Բ. Տիրոջ Հրեշտակը Աստվածության տեսանկյան ներկայացուցիչն էր

1. Ծննդոց 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16

2. Ելից 3:2,4; 13:21; 14:19

3. Դատավորաց 2:1; 6:22-23; 13:3-22

4. Չաքարիա 3:1-2

Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծննդ.1:1-2; Սաղմ.104:30; Ես.63:9-11; Եզեկ.37:13-14

Դ. Աստված (YHWH) և Մեսիան (*Adon*) առանձին են, Սաղմ.45:6-7; 110:1; Չաք.2:8-11; 10:9-12

Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Չաք.12:10

Զ. Բոլոր երեքն էլ նշվում են Եսայի 48:16; 61:1-ում

Հիսուսի Աստվածությունը և Հոգու անձ լինելը վաղ շրջանի խիստ, միաստվածության հետևող հավատացյալներին խնդիրների առջև էր կանգնեցրել:

1. Տերտուղիանոսը ստորադասում էր Որդուն Հորից

2. Օրիգենոսը ստորադասում էր Որդու և Հոգու աստվածային էությունը

3. Արիուսը ուրանում էր Որդու և Հոգու Աստվածությունը

4. Վանականություն/միապետականությունը՝ հավատում էր մեկ Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հաջորդական ժամանակագրական դրսևորումներին

Երրորդությունը պատմականորեն զարգացող մի ձևակերպում է, որը ինֆորմացված է աստվածաշնչյան նյութերով:

1. Հիսուսի կատարյալ Աստվածությունը՝ հավասարազորն է Հորը, հաստատվեց Նիկիայի Խորհրդի կողմից, Ք. Հ. 325 թ-ին (տես՝ Հովհ.1:1; Փիլ.2:6; Տիմ.2:13)

2. Հոգու կատարյալ Աստվածությունն ու անձնավորությունը՝ հավասարազոր Հորը, հաստատվեց Կոստանտնուպոլսի Խորհրդի կողմից, Ք. Հ. 381 թ-ին

3. Երրորդության վարդապետությունը միանգամայն արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* աշխատության մեջ:

Իրականում այստեղ մի առեղծված կա: Սակայն ՆԿ-ը թվում է հաստատում է աստվածության էությունը երեք հավիտենական անձնավորությունների դրսևորմամբ (Հայրը, Որդին և Սուրբ Հոգին):

❖ «սա թող լինի քո ինձ անելիք բարությունը՝ որտեղ որ գնալու լինենք» Սա կարծես թե ցույց է տալիս, որ Աբրահամն ու Սառան համաձայնություն էին եկել այս քույր ու եղբայր խորամանկության շուրջ քաղղեացիների Ուր քաղաքը լքելուց ի վեր:

**20:14** Սա նույնությամբ կրկնում է այն, ինչ Փարավոնը արեց Աբրահամի հետ 12:16-ում:

Այս կրկնություններն են, որ ժամանակակից գիտնականների համար պատճառ են հանդիսացել հարցականի տակ դնելու Հնգամատյանի միահեղինակությունը: Աստծո տարբեր անունները և այս կրկնությունները պատճառ են հանդիսացել, որ տեսակավորեն մի քանի հեղինակների՝ խմբագիրների (տես՝ Դր. Բոր Աթլիի այս մեկնաբանության Ծննդոց 1-11 ներածության /Հեղինակը/ քննարկումը, որը հասանելի է [www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org) կայքում): Նաև նայե՛ք հետաքրքիր համառոտ քննարկումը *Աստվածաշնչի Իտյթին Խոսքերը*, էջ՝ 118-120 գրքում /*Hard Sayings of the Bible*, pp. 118-120/:

**20:16** «**հազար դրամ /կտոր/ արծաթ**» Շատ թարգմանիչներ ենթադրում են, որ «սիկր» տերմինը պետք է հայտնվեր այստեղ, քանի որ դա էր «թանկարժեք մետաղների կշռի» համար չափման միավորը Հնագույն Մերձավոր Արևելքում (տես՝ Հատուկ Թեմա 18:6-ում): Կան մի քանի այլ տեքստեր ևս, որ ենթադրվում է այդպես, սակայն այլ բան է արձանագրված (տես՝ Ծննդ. 37:28; Դատ. 17:2,3,4,10):

❖  
NASB, NKJV  
NRSV

«քո արդարացումը»  
«վրդովմունքը»

TEV  
NJB

«որ դու անմեղ ես»  
«դու լիովին արդարացված ես»

Հայտնի չէ, թե արդյոք Աբիմելեքը երկու տարբեր պարզևներ է տվել՝ մեկը Աբրահամին (հ. 14) և մյուսը՝ Սառային (հ. 16), թե պարզապես մեկ պարզև է, որի ամբողջական արժեքը արձանարված է այս համարում: Անձամբ ես հավատում եմ, որ եղել են երկու տարբեր պարզևներ: «Քո արդարացումը» արտահայտությունը բառացի նշանակում է «քո աչքերի համար ծածկոց լինի» (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ BDB 492 & 744), որը երբայերեն դարձվածք է՝ ցույց տալու, որ Սառան կատարելապես անմեղ էր և փոխհատուցվում է նրան անհանգստացնելու համար:

**20:17 «Աստված բժշկեց Աբիմելեքին»** Մենք չգիտենք, թե ստույգ ինչ հիվանդություն էր եկել Աբիմելեքի և նրա ընտանիքի վրա, սակայն դրա պատճառով անհնարին էր դարձել երեխաների ծնունդը: Ըստ երևույթին սա մի կերպ էր, որով Աստված արգելել էր Աբիմելեքին Սառայի հետ հարաբերություն ունենալու: Նաև հհ. 17 և 18-ից տեսնում ենք, որ անպտղությունը համարվում էր աստվածային անեծք: Սա էլ մի պատճառ էր, որ Աբրահամի համար այդքան դժվար էր հավատալ Աստծո շնորհքի վերաբերյալ խոսքերին, երբ Սառան ամուլ էր:

**20:18 «ՏԵՐԸ բոլոր արգանդները փակել էր»** Սա միևնույն արմատի ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՆ է (BDB 783 & 870), որը ուժգնացնում է ԲԱՅԻ գործողությունը:

Այս ենթանախադասությունը գլուխ 20-ում միակ տեղն է, որտեղ կիրառվում է Աստծո ուխտի անունը՝ ՅԱՀՎԵն: Համատեքստում (հ. 17) այն համագոր է *Էրհիմին*: Սամարացիների Հնգամատյանը և որոշ LXX ձեռագրեր նշում են *Էրհիմ*:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Աբրահամը Սառային ներկայացրեց որպես իր քույրը:
2. Ինչպե՞ս կբացատրեք, որ այս նույն բանը երկու անգամ տեղի ունեցավ Սառայի հետ և մեկ անգամ՝ Ռեբեկայի:
3. Ինչո՞ւ էր Սառայի պաշտպանված լինելը աստվածաբանորեն այդքան կարևոր:

**ԾՆՆԴՈՑ 21**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Իսահակը ծնվում է	Իսահակը ծնվում է	Իսահակն ու Իսմայելը	Իսահակի ծնունդը	Իսահակի ծնունդը
21:1-7	21:1-7	21:1-7	21:1-7	21:1-7  (6-7)
	Հազարն ու Իսմայելը հեռանում են			Հազարի և Իսմայելի արձակվելը
21:8	21:8-14	21:8-14	21:8	21:8-14ա
Սառան հակառակվում է Հազարին			Հազարն ու Իսմայելը վտարվում են	
21:9-14			21:9-13 21:14-16	21:14բ-16
21:15-19	21:15-21	21:15-19	21:17-21	21:17-19
21:20-21		21:20-21		21:20-21
Արիմելեքի հետ ուխտ	Արիմելեքի հետ ուխտը	Աբրահամի վեճն Արիմելեքի հետ	Աբրահամի և Արիմելեքի միջև համաձայնությունը	Աբրահամն ու Արիմելեքը Բերսաբեում
21:22-26	21:22-34	21:22-24  21:25-34	21:22-23 21:24 21:25-29	21:22-24  21:25-31
21:27-34			21:30-31 21:32-34	21:32-34

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

**ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ**

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Գուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:1-7**

<sup>1</sup>Եվ ՏԵՐՆ այցելեց Սառային, ինչպես ասել էր, և ՏԵՐԸ Սառայի համար արեց, ինչպես որ խոսել էր: <sup>2</sup>Եվ Սառան հղիացավ և մի որդի ծնեց Աբրահամին իր ծերության մեջ, այն որոշված ժամանակին, որ Աստված ասել էր նրան: <sup>3</sup> Եվ Աբրահամն իր համար ծնված որդու անունը, որ Սառան ունեցել էր նրա համար, Իսահակ դրեց: <sup>4</sup>Եվ Աբրահամը թլփատեց իր որդի Իսահակին, երբ սա ութ օրական էր, ինչպես որ Աստված իրեն պատվիրել էր: <sup>5</sup>Եվ Աբրահամը հարյուր տարեկան էր, երբ նրա որդի Իսահակը նրա համար ծնվեց: <sup>6</sup>Եվ Սառան ասաց. «Աստված ծիծաղեցրեց ինձ. ով որ լսի, ինձ հետ ծիծաղելու է»: <sup>7</sup>Նաև ասաց. «Ո՛վ կասեր Աբրահամին, թե Սառան որդիներ կսնուցանի, քանի որ նրա ծերության մեջ նրան որդի ծնեցի»:

**21:1**

- NASB**            «Ապա ՏԵՐԸ հիշեց Սառային»  
**NKJV**            «և ՏԵՐԸ այցելեց Սառային»  
**NRSV**            «ՏԵՐԸ աշխատեց Սառայի հետ»  
**TEV**             «ՏԵՐԸ օրհնեց Սառային»  
**NJB**             «Յահվեն վարվեց Սառայի հետ ինչպես ասել էր»

Շեշտադրության համար ՅԱՀՎԵՆ երկու անգամ կրկնվում է: Այս երեխան Նրա կարողությամբ էր: ԲԱՅԸ բառացի նշանակում է «այցելեց» (BDB 823, KB 955, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Սա հաճախ կիրառվում է Աստծո համար, երբ մոտենում է ինչ-որ մեկի օրհնելու կամ դատաստանի համար: Այս բառի դրական նշանակության համար կարող եք կարդալ Ծննդ. 15:24-25 և Ելից 13:19: Սակայն պետք է նշել, որ այս տերմինը սովորաբար կիրառվում է դատաստանի իմաստով:

❖ «**ինչպես որ խոսել /խոստացել/ էր**» Սա կարծես թե վերաբերում է հատկապես Ծննդ. 18:10-15: Գլուխ 12, 15 և 17-ում Աբրահամին տված Իր խոստումներում Աստված ակնարկում է, որ Սառան ծնունդ է տալու (հ. 2; Եբր. 11:11) խոստման հատուկ զավակին:

**21:2 «որոշված ժամանակին»** Սա վերաբերում է հատուկ 17:21 և 18:10, 14-ին: Ես հավատում եմ, որ սա վերաբերում է հղիության իննամսյա շրջանին:

**21:3 «Իսահակ»** Նրան անուն տրվեց 17:19, 21-ում: Այն բխում է «ծիծաղ» բառից (BDB 850) և կապված է 17:17-ում Աբրահամի ծիծաղի և 18:15-ում Սառայի ծիծաղի հետ:

**21:4 «Աբրահամը թլփատեց իր որդի Իսահակին»** Սա ուխտի նշան էր, որ լիազորվել էր ՅԱՀՎԵԻ կողմից: Այն կատարվեց, երբ երեխան ութ օրական էր՝ ինչպես որ Աստված էր կարգադրել (տես՝ 17:9-14): Ծննդ. 17:25-ից արարները զարգացրեցին թլփատության ծիսակարգը, նրանց թլփատելով տասներեք տարեկանում, Իսմայելի թլփատության համեմատ: Հնագույն Մերձավոր Արևելքի բոլոր ազգերը թլփատում էին իրենց երեխաներին, սակայն տարբեր տարիքային հասակում և տարբեր նպատակներով: Միայն փղշտացիներն ու իսկացիներն էին անթլփատ (այսինքն՝ գլուխ 34):

**21:5** Դարձյալ Աբրահամի տարիքն է (տես՝ 17:17) տրվում, ցույց տալու Աստծո շնորհքն Իր խոստման մեջ, և ոչ թե մարդկային գործությունն ու ջանքերը:

- 21:6** Այստեղ առկա է մի բառախաղ՝
1. Աբրահամն ու Սառան ծիծաղելով կասկած դրսևորեցին 17:17 և 18:12-ում Տիրոջ տված հայտնության հանդեպ
  2. երեխան կոչվեց «ծիծաղ»
  3. ծիծաղը դարձավ Սառային ուրախության արտաքին նշանը, երբ նա վերջապես ունեցավ իր սեփական երեխան և մարդիկ շնորհավորեցին նրան՝ իր հետ ծիծաղելով՝ ուրախանալով
  4. Ծիծաղը հ.9-ում կիրառվում է բացասական իմաստով՝ Իսահակի հանդեպ Հազարի վերաբերմունքի համար

**21:7 «Սառան որդիներ կսնուցանի»** «Որդիներ» տերմինը ՀՈԳՆԱԿԻ է: Եբրայերենը ունի բավականին շատ անսպասելի ՀՈԳՆԱԿԻՆԵՐ: Այն պետք է, որ ինչ-որ կերպ հանդիսանար, որով ցույց է տրվում (1) գույգերով իրերը (աչքեր, ականջներ, ձեռքեր) և (2) խստություն՝ ուժգնություն (օր.՝ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՆ):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:8-14**

<sup>8</sup>Եվ մանուկը մեծացավ և կաթից կտրվեց. և Աբրահամը մեծ խնջույք արեց Իսահակի՝ կաթից կտրվելու օրը: <sup>9</sup>Եվ Սառան տեսավ, որ եգիպտոսի չազարի որդին, որ ծնել էր Աբրահամի համար, ծաղրում էր. <sup>10</sup>ուստի ասաց Աբրահամին. «Դո՛ւրս արա այս աղախնուն ու իր որդուն, որովհետև այս աղախնու որդին իմ որդու՝ Իսահակի հետ ժառանգ չպետք է լինի»: <sup>11</sup>Այս բանն Աբրահամի աչքում խիստ ցավալի երևաց՝ իր որդու պատճառով: <sup>12</sup>Եվ Աստված ասաց Աբրահամին. «Թող աչքիդ ցավալի չերևա՝ քո տղայի և աղախնի խնդիրը. ամեն ինչ արա՛, ինչպես որ Սառան է ասում, նրա խոսքը լսի՛ր, որովհետև Իսահակով է քո սերունդը կոչվելու: <sup>13</sup>Աղախնու որդուն էլ ազգ կդարձնեմ, քանի որ նա՛ էլ քո սերունդն է»: <sup>14</sup>Եվ Աբրահամը առավոտ վաղ վեր կացավ, հաց ու մեկ տիկ ջուր վերցրեց և տվեց չազարին և դրեց նրա ուսին և տղային էլ տվեց և արձակեց նրան. և նա գնաց ու Բերսաբեի անապատում թափառում էր:

**21:8 «մանուկը մեծացավ և կաթից կտրվեց. և Աբրահամը մեծ խնջույք արեց»** Այդ օրերի գրականությունից հասկանում ենք, որ ընդհանրապես երեխան կաթից կտրվելիս խնջույք էին կատարում (այսինքն՝ երեխան մեծ էր այնքան, որ կարելի էր վստահ լինել, որ կապրի): Կաթից կտրվելը կարող էր լինել երկու կամ երեք տարեկանում (տես՝ 2 Մակ. 7:27):

**21:9 «Սառան տեսավ, որ եգիպտոսի չազարի որդին, որ ծնել էր Աբրահամի համար, ծաղրում էր»** NKJV թարգմանությունը տալիս է «ծաղրել» բառը, մինչև NRSV և TEV թարգմանությունները՝ «խաղալ»: LXX թարգմանությունը ավելացնում է «խաղում էր նրա որդու հետ» : Եբրայերեն այս տերմինը նշանակում է «ծիծաղ» (BDB 850), սակայն *Piel* արմատով (KB 1019) կարող է նշանակել «ծաղր անել կամ մրցել» (տես՝ 19:14; Ելից 32:6; Դատ. 16:23), սակայն Գաղ. 4:29-ի պատճառով, և 16:4,5-ում չազարի ծաղրելու պատճառով, հավանաբար դա նշանակում է «ծաղրել» կամ «նախատինք բերել»: Որպես այս տերմինի կիրառության բացասական օրինակներ ռաբբինները մեջբերում են 2 Թագ. 2:14 և Առակ. 26:19:

**21:10 «Դո՛ւրս արա այս աղախնուն և իր որդուն»** Այս ԲԱՅԸ մեկ այլ *Piel* (BDB 176, KB 204) է և ՀՐԱՄԱԿՅԱԿԱՆ (տես՝ Գաղ. 4:30): Համաձայն Նուզի Տախտակների, սա անօրինական էր: Սակայն ավելի վաղ օրինական փաստաթղթերի հիմնա վրա, որ կոչվում էին «Լիպիտ-իշթար», աղախինների երեխաներին կարող էին թե՛ ժառանգություն տալ և թե՛ նվիրել իրենց ազատությունը:

**21:11** Աբրահամը սիրում էր Իսմայելին (տես՝ 17:18), ինչպես և ՅԱՀՎԵՆ (տես՝ 17:20; 21:3,18,20): Աբրահամը զգաց, որ Սառայի այս պահանջը անտեղի էր և գուցե անգամ սխալ (տես՝ Թվոց 11:10; 1 Թագ. 1:8):

**21:12** Աստված Աբրահամին երկու հրաման է տալիս՝

1. «թող աչքիդ ցավալի չերևա /մի՛ անհանգստացիր/», BDB 949, KB 1269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով: Այս ԲԱՅԸ կիրառված է հ. 11-ում՝ նկարագրելու Աբրահամի արձագանքը Սառայի խնդրանքի (հրամանի) հանդեպ:
2. «նրա խոսքը լսի՛ր», BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, «լսել»

❖ **«ինչպես որ Սառան է ասում»** Սա հաստատում է, որ Աստված ընդունում է Սառայի կողմից իրավիճակի գնահատումը: Սա չի նշանակում, որ Սառան ցուցաբերեց պատշաճ վերաբերմունք: Սակայն, մյուս կողմից, մենք իրավիճակն ամբողջությամբ չգիտենք: Հնարավոր է նա էլ Ռեբեկայի պես (հետագայում 27 գլխում) փորձում էր պաշտպանել ուխտի խոստումը:

**21:13 «քանի որ նա՛ էլ քո սերունդն է»** Աստված օրհնելու է Իսմայելին իր հոր՝ Աբրահամի պատճառով: Նրա կյանքը նկարագրված է 16:11-12 մարգարեության մեջ: Իսմայելի փոխհարաբերությունը Աբրահամի հետ եղավ նրա օրհնության աղբյուրը, ինչպես որ Ղովտինը 19:29-ում:

**21:14 «մեկ տիկ ջուր»** Այս տերմինը (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ BDB 332 և BDB 565) ՀԿ-ում միայն այստեղ այս գլխում է հանդիպում (տես՝ հհ. 14,15,19): Այն վերաբերում է ոչխարի կաշվից կամ ոչխարի ստամոքսից կարված այնպես, որ ստացվի ջրաման:

❖ «**դրեց նրա ուսին**» Թե՛ Մեպտուազինտան և թե՛ Սիրակը թարգմանում են սա այնպես, որ ակնարկում է, որ նրանք նաև Իսմայելին դրեցին նրա ուսին՝ մեջքին: Համատեքստից թվում է, թե Իսմայելը պետք է լիներ 15-ի և 17-ի միջև տարիքում՝ բավականին ծանր այդ տարիքի համար, որպեսզի մայրը կրեր նրան իր ուսերին, հետևաբար, շատ հավանական է, որ սա պարզապես ճամփորդության պատրաստվելու համար կիրառվող դարձվածք է:

❖ «**Բերաբերի անապատում թափառում էր**» Տես համար 31:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:15-19**

**<sup>15</sup>Եվ տիկի ջուրը վերջացավ, և թփերից մեկի տակ թողեց տղային. <sup>16</sup>և գնաց, նստեց նրա դիմաց՝ մի նեղակեցի հեռավորությամբ, որովհետև ասաց. «Չտեսնեմ երեխայի մեռնելը»: Եվ դիմացը նստած՝ իր ձայնը բարձրացրեց ու լաց եղավ: <sup>17</sup>Աստված լսեց տղայի ձայնը և Աստծո հրեշտակը երկնքից կանչեց Հազարին և նրան ասաց. «Հազար, ի՞նչն է ցավ պատճառում քեզ, մի՛ վախենա, Աստված լսեց տղայի ձայնը, որտեղ որ նա գտնվում է: <sup>18</sup>Վե՛ր կաց, վերցրո՛ւ տղային և բռնի՛ր նրա ձեռքից, որովհետև Ես նրան մեծ ազգ եմ դարձնելու»: <sup>19</sup>Եվ Աստված նրա աչքերը բացեց, և նա մի ջրհոր տեսավ, գնաց և տիկը ջրով լցրեց և խմեցրեց տղային:**

**21:15**

NASB, TEV      «թողեց»  
NKJV              «դրեց»  
NRSV              «նստեց»  
NJB                «լքեց»

Այս տերմինը (BDB 1020) արտահայտում է թողնել, լքել իմաստը (Ելից 1:22; Եսայի 17:9; Երեմ. 38:6,9; Եզեկ. 16:5), որը մահվան է սպասում:

**21:16 «մի նեղակեցի հեռավորությամբ»** Այս հազվադեպ ԲԱՅԸ (BDB 377, KB 373, *Polel* ԴԵՐԲԱՅԸ) ՀԿ-ում միայն այստեղ կարելի է գտնել:

❖ «**իր ձայնը բարձրացրեց ու լաց եղավ**» Այստեղ տեքստում որոշակի շփոթմունք կա, քանի որ Տիրոջ Հրեշտակն ասում է, որ լավեց տղայի լացի ձայնը և միայն մոր ձայնն է նշվում: Սակայն մենք պետք է հիշենք, որ սա միայն այս իրադարձության ամփոփ պատմությունն է և ամբողջ տեսարանները ընդգրկված չեն: Տիրոջ Հրեշտակը դարձյալ խոսեց Հազարին, ինչպես խոսել էր 16:6բ-ում, որը ցույց է տալիս Աստծո սերը նրանց հանդեպ, ովքեր Աբրահամի հետ մակերեսային կապ ունեն:

**21:17-18** Աստված դիմում է Հազարին՝

1. «Ի՞նչ է ցավ պատճառում քեզ /անգլերենում՝ ի՞նչ է պատահել քեզ հետ/» (առանց ԲԱՅԻ)
2. «Մի՛ վախենա», BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված որպես ՀԱՅՅԱԿԱՆ, տես՝ նույն արմատը 15:1; 26:24; 46:3-ում:
3. «վե՛ր կաց», BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. «վերցրո՛ւ տղային», BDB 669, KB 724, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. «բռնի՛ր նրա ձեռքից», BDB 304, KB 302, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սա ակնարկում է հոգատարություն և պաշտպանություն նրա հանդեպ:

**21:17** Նաև նկատենք, թե ինչպես է *Eynhahar* և Տիրոջ Հրեշտակը նույնականացվում այստեղ (այսինքն՝ նրանք խոսում են երկնքից), չնայած որ տարբեր են (տես՝ Ելից 3:2,4): Տես Հատուկ Թեմա. Տիրոջ Հրեշտակը, 12:7-ում:

❖ «**քանի որ Աստված լսեց**» Սա Իսմայելի անվան հետ բառախաղ է (տես՝ 16:11): «Լսել» ԲԱՅԸ (BDB 1033), «Իսմայելը» (BDB 1035) և «Աստված լսում է» ակնհայտորեն միևնույն արմատից են:

**21:18 «Ես նրան մեծ ազգ եմ դարձնելու»** ԲԱՅԸ (BDB 962, KB 1321, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) նշանակում է «դնել» կամ «տեղադրել», տես՝ 21:13; 46:3: Սա այն նույն ԲԱՅԸ չէ (BDB 793, KB 889, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով), որը կիրառվում է 12:2-ում կամ 18:18-ում Աբրամին տված ՅԱՀՎԵԻ խոստման մեջ 12 (BDB 224, KB 243, *Qal* ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ):

**21:19** Հետաքրքիր է, արդյոք հ. 19 տեսողության հրաշք է, թե նախկինում գոյություն չունեցող մի ջրհոր է ստեղծվել: Այս նույն տերմինը կիրառվում է Ծննդ. 3:5 և 4 Թագ. 6:15-19-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:20-21**

<sup>20</sup>Եվ Աստված տղայի հետ էր. և նա մեծացավ, անապատում բնակվեց և աղեղնավոր դարձավ: <sup>21</sup>Եվ Փառանի անապատում էր բնակվում. և իր մայրը նրա համար մի կին առավ Եգիպտոսի երկրից:

**21:20** «Աստված տղայի հետ էր» փոխաբերությունը նաև կիրառվում է Հակոբի (Ծննդ. 28:15) և Հովսեփի (Ծննդ. 39:2,3,21) համար: Այն արտահայտում է ՅԱՀՎԵի անձնական հոգածությունն ու ներկայությունը (տես՝ 21:22): Իսմայելը Աբրահամի օրհնության մեջ բաժին ունեցավ:

**21:21** «և իր մայրը նրա համար մի կին առավ Եգիպտոսի երկրից» Ակնհայտ է, որ սա պետք է կատարվեր նրա հոր միջոցով, սակայն այս դեպքում Հազարը կին ընտրեց Իսմայելի համար իր սեփական ժողովրդի միջից:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:22-26**

<sup>22</sup>Եվ եղավ այնպես, որ այն ժամանակ Աբիմելեքն ու իր սպարապետ Փիբողը խոսեցին Աբրահամի հետ՝ ասելով. «Աստված քեզ հետ է ամեն ինչում, ինչ որ դու անում ես: <sup>23</sup>Ուստի հիմա ինձ երդվիր այստեղ Աստծով, թե ինձ և իմ որդու ու իմ որդու որդու հետ նենգություն չես անի, այլ իմ՝ քեզ արած բարության համաձայն կվարվես իմ և այն երկրի հետ, որի մեջ պանդուխտ ես եղել»: <sup>24</sup>Աբրահամն ասաց. «Ես կերդվեմ»: <sup>25</sup>Եվ Աբրահամը հանդիմանեց Աբիմելեքին մի ջրհորի վերաբերյալ, որ Աբիմելեքի ծառաները բռնությամբ վերցրել էին: <sup>26</sup>Եվ Աբիմելեքն ասաց. «Ես չգիտեմ, թե ով է արել այդ բանը, և դու էլ իմաց չես տվել ինձ, և ես էլ լսած չկայի, այլ միայն այսօր եմ լսում»:

**21:22** «Աբիմելեքն ու Փիբողը» Այս նույն երկու անունները նշվում են Ծննդ. 26:26-ում Իսահակաի և այս նույն Բերսաբեի ջրհորի խնդիրների հետ կապված: Այս անունները ընդհանրացված անուններ էին թագավորի և հրամանակտարի համար, և այս մարդիկ բավականին երկար են ապրել կամ էլ շփոթմունք է եղել Ծննդոցի երբայերեն այս տեքստում (այսինքն՝ խմբագիրների կողմից):

❖ «Աստված քեզ հետ է ամեն ինչում, ինչ որ դու անում ես» Այս խոսքերն ասվել են ոչ միայն Աբրահամի համար, այլ նաև Իսահակի (տես՝ Ծննդ. 26:28):

**21:25** «և /բայց/ Աբրահամը հանդիմանեց /բողոքեց/ Աբիմելեքին» Այստեղ գտնվող բառը կարծես թե նշանակում է «բողոքեց» (BDB 406, KB 410, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Ջրհորների հետ կապված տարածայնությունները այս կիսաչոր անապատում տարածված երևույթ էր: Աբիմելեքի պատասխանը ցույց է տալիս, որ նա տեղյակ չէր խնդրին և ամեն դեպքում ուզում էր Աբրահամի հետ ուխտի մեջ լինել («երդվիր», BDB 989, KB 1396, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հ. 23):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:27-34**

<sup>27</sup>Եվ Աբրահամը ոչխարներ ու արջառներ առավ և տվեց Աբիմելեքին, և երկուսով ուխտ արեցին: <sup>28</sup>Եվ Աբրահամը ոչխարներից յոթ հատ էգ գառ առանձին դրեց: <sup>29</sup>Եվ Աբիմելեքը հարցրեց Աբրահամին. «Ինչի՞ համար են այդ յոթ գառները, որ դու առանձնացրիր»: <sup>30</sup>Եվ նա ասաց. «Որպեսզի այդ յոթ էգ գառներն իմ ձեռքից ընդունես, որ ինձ համար վկայություն լինի, թե ես եմ փորել այս ջրհորը»: <sup>31</sup>Դրա համար այդ տեղը Բերսաբեե կոչեց, որովհետև այնտեղ երկուսով երդվեցին: <sup>32</sup>Այսպես ուխտ արեցին Բերսաբեում, և վեր կացան Աբիմելեքն ու նրա սպարապետ Փիբողը և վերադարձան փղշաղիների երկիրը: <sup>33</sup>Աբրահամը ծառեր տնկեց Բերսաբեում և այնտեղ ՏԻՐՈՉ՝ հավիտենական Աստծո անունը կանչեց: <sup>34</sup>Եվ Աբրահամը շատ օրեր պանդուխտ էր փղշաղիների երկրում:

**21:27** «երկուսով ուխտ արեցին» Ըստ երևույթին հ.27-ի կենդանիները մեջտեղից երկու մասի կիսվեցին, որպեսզի կնքվեր այս ուխտը (տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ, 13:14-ում):

**21:28** «յոթ հատ էգ գառ» Ակնհայտ է, որ սա հ.27-ից գառ մեկ այլ կենդանիների խումբ է, ըստ երևույթին կապված Բերսաբեի ջրհորի հետ: «Բերսաբե» անունը ծագել է երկու հավանական



աղբյուրներից՝ (1) «յոթի ջրհոր», 21:28-ում կամ (2) «երդման ջրհոր», 26:33-ում («յոթ» /BDB 987/ և «երդվել» /BDB 989/ բառերը Եբրայերենում նման են):

**21:32 «Փղշտացիները»** Շատ մեկնաբաններ նշում են, որ դեռ երկրում մեծ թվով փղշտացիներ չէին մտել: Չնայած սա բավականին ստույգ է, այս Էզեյան ժողովուրդների շահադիտական էությունը ցույց է տալիս, որ նրանք կարող էին լինել այս տարածաշրջանում փորաթիվ բնակչությամբ Ք. Ա. 12-րդ դարում, քանի որ այդ ժամանակ էր, որ նրանք հաստատվեցին այս վայրում՝ Եգիպտոսի ձախողված արշավանքից հետո: Նաև հավանական է, որ սա ժամանակավրեպ է՝ անախրոնիզմ:

**21:33 «ձառեր /տամարիսկ/ տնկեց»** Սա երկու բան է խորհրդանշում՝

1. Ստորգետնյա ջրերի առկայություն, որը հաճախ ասոցացվում է սրբավայրերի հետ (Աստված ապահովեց ջուր Հազարի, Իսմայելի և նաև Աբրահամի համար):
2. Պանդուխտ Աբրահամը ծրագրում էր այստեղ մնալ երկար ժամանակով:

❖ **«ՏԻՐՈՉ անունը կանչեց»** Այս անունը Աստծո ուխտի անունն է՝ ՅԱՀՎԵ (BDB 42): Սա ակնարկում է երկրպագության միջավայր (տես՝ 4:26; 12:8): Սա նման է Ծննդ. 8:20-ում Նոյի կատարածին:

❖ **«Հավիտենական Աստված»** Աստծո այս անունը միայն այստեղ կարելի է տեսնել: Այն կազմված է Եբրայերեն *Էլ* (BDB 42) և *'olam* (BDB 761) բառերից: Ծննդոցի ավելի վաղ հատվածներում *Էլ* տերմինը արտահայտվում է մի քանի այլ անունների համադրությամբ, որոնք ցույց են տալիս Աստծո էությունը՝ (1) *Էլ-Շադայ* (BDB 42 և 994), 17:1; 43:14 և Ելից 3; (2) *Էլ Էլիմ* (BDB 42 և 751 II), 14:18-24; (3) *Էլ Ռոյ* (BDB 42 և 909), 16:13; (4) *Էլ Բեթել* (BDB 42 և 110), 31:13; 35:7: *Էլ* անունը Աստծո համար ընդհանուր անունն էր Հնագույն Մերձավոր Արևելքում (տես՝ Հատուկ Թեմա 12:1-ում):

*'Olam* (BDB 761) անունը նշանակում է «այն, որ ծածկված է» և վերաբերում է կա՛մ անցյալին, կա՛մ էլ ապագային: Այն կիրառվում է «հավիտենական» իմաստով, սակայն նշանակությունը պետք է համաձայնեցվի համատեքստի հետ (տես՝ Հատուկ Թեմա 13:14-ում):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք գլուխ 20-ը Աբրահամի վերաբերյալ բացասական մեկնություն է:
2. Ճանաչո՞ւմ էր արդյոք Աբիմելեքը Ադոնային:
3. Ինչո՞ւ Աբիմելեքը Սառային որպես իր կին առավ, երբ նա այդքան ծեր էր և որը նույնիսկ ինքն իրեն նկարագրում է որպես «պառաված» (տես՝ 18:12):
4. Ի՞նչ է նշանակում «մարգարե» տերմինը և ինչպե՞ս է Աբրահամը համապատասխանում այս տիտղոսին:
5. Թվարկե՛ք այն երեք արդարացումները, որոնք ներկայացնում է Աբրահամը հհ.11-13-ում Աբիմելեքին ստել փորձելու համար:
6. Ինչո՞ւ էր Սառան պահանջում, որ Հազարն ու Իսմայելը հեռանան:

## ԾՆՆԴՈՑ 22

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Իսահակի զոհաբերությունը	Աբրահամի հավատքը հաստատվում է	Աբրահամի փորձվելը	Աստված հրամայում է Աբրահամին զոհաբերել Իսահակին	Աբրահամի զոհը
22:1-8	22:1-2  22:3-8	22:1-8	22:1  22:2 22:3-5 22:6-7ա 22:7բ 22:7գ 22:8	22:1-2  22:2-5 22:6-8
22:9-14	22:9-14	22:9-14	22:9-11ա 22:11բ  22:12  22:13-14	22:9-10 22:11-14
22:15-19	22:15-19	22:15-19	22:15-19	22:15-18  22:19
22:20-24	Նաքովրի ընտանիքը	Աբրահամի եղբայր Նաքովրի սերունդները	Նաքովրի սերունդները	Նաքովրի սերունդները
22:20-24	22:20-24	22:20-24	22:20-24	22:20-24

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:1-8**

<sup>1</sup>Եվ եղավ, որ այս ամենից հետո Աստված փորձեց Աբրահամին և ասաց նրան. «Աբրահամ»: Եվ նա ասաց. «Ահա, այստեղ եմ»: <sup>2</sup>Եվ նա ասաց. «Վերցրո՛ւ քո սիրելի միամորթիկ որդուն՝ Իսահակին և Մորիայի երկիր գնա և այնտեղ նրան ողջակիզի՛ր այն լեռներից մեկի վրա, որ ես քեզ կասեմ»: <sup>3</sup>Եվ Աբրահամը առավոտ վաղ վեր կացավ և դրեց իր էշի համետը և իր հետ վերցրեց իր մարդկանցից երկու երիտասարդների և իր որդի Իսահակին և ողջակեզի փայտ ջարդեց և վեր կացավ ու գնաց այն տեղը, որ Աստված իրեն ասել էր: <sup>4</sup>Եվ երրորդ օրը Աբրահամն իր աչքերը բարձրացրեց և հեռվից տեսավ այն տեղը: <sup>5</sup>Աբրահամն ասաց իր ծառաներին. «Դուք այս էշի հետ այստեղ մնացե՛ք, ես և տղան մինչև այնտեղ գնանք և պաշտամունք կմատուցենք, և ձեզ մոտ կվերադառնանք»: <sup>6</sup>Եվ Աբրահամն առավ ողջակեզի փայտը և դրեց իր որդի Իսահակի վրա, և ինքն իր ձեռքն առավ կրակը և դանակը, և երկուսով միասին գնացին: <sup>7</sup>Եվ Իսահակը խոսեց իր հայր Աբրահամի հետ և ասաց. «Հայր իմ», և նա ասաց. «Այստեղ եմ որդի՛ս»: Եվ նա ասաց. «Ահա կրակը և փայտը, բայց որտե՞ղ է ողջակեզի գառը»: Եվ Աբրահամն ասաց. <sup>8</sup>«Որդի՛ս, Աստված իր ողջակեզի համար գառ կհայթայթի»: Եվ երկուսը միասին գնացին:

**22:1 «Աստված»** Սա երբայերեն *Էլոհիմ* բառն է: Սա Աստծո այն ընդհանուր տարածում գտած անուններից մեկն է, որը կարելի է գտնել Ծննդոցի առաջին մասում: Մեզ հայտնի չէ այս բառի ստուգաբանությունը, բայց Ծննդ. 31:29-ում առկա բառախաղերի շնորհիվ, կարծես թե այն կապված է «ուժեղ եղիր» արտահայտության հետ: 18-րդ և 19-րդ դարերի քննադատներն կիրառել են *Էլոհիմ* և *ՅԱՀՎԵ* տերմինները, որոնք կարելի է տեսնել Ծննդոց գրքի տարբեր գլուխներում՝ մի քանի աղբյուրների վավերագրական վարկածներ փոխանցելու համար: Սակայն, ռաբբիներն ասում են, որ այս անունների միջև եղած տարբերությունը գտնվում է Աստծո այն բնավորության մեջ, որն այդ անուններն արտահայտում են: *Էլոհիմը* ներկայացնում է Աստծո զորությունը և հոգատարությունը որպես Արարիչ, մինչդեռ *ՅԱՀՎԵՆ* ներկայացնում է Աստծո ուխտի ողորմությունները: Կարծում են ռաբբիական բացատրությունն ավելի հանգամանալի է:

❖ «փորձեց Աբրահամին»

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ**  
**SPECIAL TOPIC: GOD TESTS HIS PEOPLE**

«Ստուգել» տերմինը (BDB 650, KB 702, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է «փորձելու» իմաստով: Այն կիրառվում է մարդուն մի տեղ հասցնելու իմաստով, որտեղ նրանք գիտակցում են և գործում իրենց սահմանած առաջնահերթություններով: Ակնհայտ է, որ Ծննդոց 12-ից մինչև 22 Աստված ներկայացնում է Աբրահամին մի շարք իրավիճակներում (ռաբբիներն ասում են տասը), որպեսզի իր սերն ու վատահոլությունը ուղղի Աստծո մեջ և միայն Աստծո վրա: Այս ստուգարքները այնքան էլ Աստծո համար չէին, այլ Աբրահամի և նրա համար, որ Աբրահամը ճանաչի իրեն քաղդեացիների Ուր քաղաքից դուրս կանչող Աստծուն: Աբրահամին ասվեց, որ թողնի իր ընտանիքը, տունը, ընկերներին, ժառանգությունը, ավանդույթները և անգամ ապագան (իր խոստացյալ որդուն) Աստծուն հավատալով հետևելով: Աստված ստուգում է Իր բոլոր զավակներին իրենց առաջնահերթության ասպարեզում (տես՝ Մատթ. 4:1բ; Եբր. 5:8; 12:5-13):

Աստված ստուգում է (BDB 650), որպեսզի ճանաչի (BDB 393, տես՝ *Հատուկ Թեմա. Ճանաչել*): Իսրայելը հաճախ փորձեց Աստծուն իրենց անհնազանդությամբ և Աստված սպացուցեց, որ հավատարիմ է Իր խոսքին: Այժմ Աստված է հնարավորություն ընձեռնելու Իսրայելին և իր ժողովրդին ցուցաբերելու իրենց դավանած հավատարմությունն ու հավատքը՝

1. Աստված փորձեց Իր ժողովրդին՝ հավաքական առումով.
  - ա. Ելից 15:25; 16:4; 20:20
  - բ. Բ Օրինաց 8:2,16; 13:3
  - գ. Դատ. 2:22; 3:1,4
2. Աստված փորձեց անհատ Իսրայելացիների՝
  - ա. Աբրահամին, Ծննդ. 12:1-12
  - բ. Եզեկիային, 2 Մնաց. 32:31

3. Սաղմոսերգուները կանչում են Աստծուն, որ փորձի իրենց, որպեսզի հեռացնի իրենցից թաքուն մեղքերը (տես՝ 26:2; 139:23):
4. ՆԿ-յան Աստծո ժողովուրդը հավասարապես փորձվում են, ինչպես Հիսուսը փորձվեց (Մատթեոս 4; Ղուկաս 4; Եբր.5:8): Տե՛ս Հատուկ Թեմա. Փորձել բառի հունարեն տերմինները և դրանց նշանակությունները:

❖ **«և ասաց»** Այս գլուխը կազմված է մի շարք երկխոսություններից: Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ է «ասում է/ասեց» (BDB 55, KB 65) խոսքը կիրառված, թարգմանված մի քանի ձևերով.

- |                |                 |
|----------------|-----------------|
| 1. հ. 1, երկու | 7. հ. 9, մեկ    |
| 2. հ. 2, երկու | 8. հ. 11, երկու |
| 3. հ. 3, մեկ   | 9. հ. 12, մեկ   |
| 4. հ. 5, մեկ   | 10. հ. 14, մեկ  |
| 5. հ. 7, չորս  | 11. հ. 16, մեկ  |
| 6. հ. 8, մեկ   | 12. հ. 20, մեկ  |

❖ **«Աբրահամ»** Աստված փոխեց նրա անունը Աբրամից, որը նշանակում է «մեծարված հայր», Աբրահամի, որը նշանակում է «բազմության հայր»: Աստված պատրաստվում է Աբրահամին խնդրել անելու մի բան, որը վտանգի է ենթարկելու նրա նոր անունը: Սեպտուագինտան կրկնապատկում է Աստծո Աբրահամին կանչելը՝ դիմելը, սակայն եբրայերեն ձեռագիրն ունի միայն մեկ «Աբրահամ» հ. 1-ում, մինչև հ. 11-ում՝ երկուսն են:

❖ **«Ահա, այստեղ եմ»** Սա եբրայերենում հասանելիության համար կիրառվող դարձվածք է (տես՝ հ. 11; Ելից 3:4; 1 Թագ. 3:4; Ես. 6:8):

**22:2** Ուշադրություն դարձրեք Աբրահամին Իսահակի վերաբերյալ տված մի շարք հրամաններին՝

1. «Վերցրո՛ւ քո որդուն», BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «Մորիայի երկիր գնա՛», BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հետաքրքիր է նշել, որ այս ԲԱՅԸ այս ձևով միայն այստեղ և Ծննդ. 12:1-ում կարելի է գտնել, որը կապում է այս երկու ստուգաբանները որպես խոստում և իրականացում /նաև տես՝ հ. 18 և 12:3/)
3. «այնտեղ նրան ողջակիզիր», BDB 748, KB 828, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

❖ **«վերցրո՛ւ քո սիրելի միամորիկ որդուն՝ Իսահակին»** Սա կարծես թե հատկապես Իսահակին՝ խոստման յուրահատուկ գավակին վերաբերող նպատակային արտահայտությունների մի շարք է: Նաև նկատե՛ք, որ նա է «միակ» (BDB 402) որդին (տես՝ հ. 2,12,16): Իսմայելը խոստման որդին չէր և նա վտարվել էր: Աբրահամի սերունդներ ունենալու ամբողջ հույսը այս տղայի մեջ էր, և ՅԱՀՎԵՆ ուղարկում է նրան զոհաբերելու:

❖ **«Մորիայի երկիրը»** Այս տերմինը (BDB 599) թարգմանվել է տարբեր կերպերով՝

1. Վուլգատան և Սամարացիների Հնգամատյանը տալիս են «տեսիլքներ»
2. Թարգումները թարգմանում են այն որպես «երկրպագություն»
3. Սեպտուագինտան տալիս է «բարձր»
4. Փեշիթան տալիս է «Ամոննացիների»
5. որոշ գիտնականներ թարգմանում են այն որպես «ՅԱՀՎԵՆ ցույց տվածը»
6. ուրիշները՝ «ընտրվածը»
7. մինչդեռ մյուսները՝ «հայտնվելու վայրը»

Կարծես թե «հայտնվելու վայրը» լավագույն հնարավոր թարգմանությունն է՝ հիմնված այս տերմինի մյուս կիրառությունների վրա՝ 2 Մնաց. 3:1, որը նշում է, որ տաճարը կառուցվել է Մորիա լեռան վրա, այն վայրը, որտեղ Աստված հայտնվեց Դավթին: Սա կարող է կա՛մ վերաբերել 2 Թագ. 24:16-ին, կա՛մ ավելի հավանական է՝ 1 Մնաց. 21:18-30-ին: Այդ համատեքստում Իսահակին զոհաբերելու կարգադրությունը Աբրահամին կա՛մ բաց թողնված է, քանի որ դա շատ պարզ էր, կա՛մ էլ դա հայտնի չէր 1 Մնացորդացի հեղինակին: Նաև Մորիան թվում է կապ ունի Մեթիսեդեկի քաղաքի հետ՝ Սաղեմի (14:18), որը հետագայում կոչվեց Հեբրուս, որն էլ դարձավ Երուսաղեմը:

❖ **«ողջակեց»** Սա եբրայերեն «հոլորոստ» տերմինն է, որը նշանակում է «ամբողջությամբ այրվող զոհ» (BDB 750): Դա ոչ միայն բովանդակում էր կենդանու կոկորդը կտրելու արարողակարգը, այլ նաև

ծիսականորեն մորթելը: Ինչպիսի սահմուկեցուցիչ հրաման էր Աստծո կողմից, որը խոստացել էր նրան որդի և հարկադրել, որ Իսմայելին վտարի հետո: Աբրահամը պետք է վստահի Աստծուն առանց հասկանալու, որը շատ նման է Թվոց 21-ի միջադեպին՝ մեջբերված Հովհ. 3:14-ում:

**22:3 «Աբրահամը առավոտ վաղ վեր կացավ»** Նկատե՛ք, որ չի արձանագրվում որևէ վարանում կամ հարցադրում Աբրահամի կողմից, բայց ինչպիսի ահավոր գիշեր պետք է, որ նա անցկացրած լիներ: Արդյոք սա մի բացթողում է այստեղ, թե՛ Աբրահամի հավատքի կատարելագործման նշան, հայտնի չէ: Աբրահամը հաստատ կատարյալ չէր, սակայն Աստծո վրա իր ունեցած հավատքի մեծությունը հաստատ կարելի է տեսնել այս պատմության մեջ: Սա վստահությունը փորձելու՝ ստուգելու առավելագույն աստիճանն էր:

**22:4 «Երրորդ օրը»** Բերսաբեթի և Մորիա լեռան միջև հեռավորությունը գրեթե երկուս ու կես օրվա քայլելու ճանապարհ էր, սակայն էշով և այլ պարագաներով հանդերձ կարող էր ավելի երկար տևել:

**22:5** Նկատեք իր ծառաներին տրված հրամաններին և իր մտադրության նկարագրությունը՝

1. «մնացե՛ք այստեղ», BDB 442, KB 444, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «ես և տղան մմինչև այնտեղ կգնանք», BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
3. «պաշտամունք կմատուցենք», BDB 1005, KB 295, *Hishtaphel* ԸՂՁԱԿԱՆ
4. «ձեզ մոտ կվերադառնանք», BDB 996, KB 1427, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

❖ **«պաշտամունք կմատուցենք, և ձեզ մոտ կվերադառնանք»** Աբրահամի հավատքն Աստծո վրա այնքան հաստատ է, որ Եբր. 11:17-19 ենթադրում է, որ Իսահակը հարություն կառներ մեռելներից, եթե անհրաժեշտություն էլ լիներ, որպեսզի նրանք միասին վերադառնային տուն: Սա Աբրահամին Աստծո տված խոստման համաձայն էր ըստ 21:12-ի, որ Աբրահամը սերունդներ է ունենալու Իսահակով: Չնայած, որ Աբրահամը չէր հասկանում, թե ինչպես կամ ինչու, նա հաստատ գիտեր և հասկանում էր այն Աստծուն, որը զորավոր էր:

**22:6 «Աբրահամն առավ ողջակեզի փայտը և դրեց իր որդի Իսահակի վրա»** Գոյություն ունեն Իսահակի հետ պատահածի և հետագայում Հիսուսի հետ կատարվելիք դեպքերի միջև բազմաթիվ կապեր: Անձամբ ես շատ եմ նյարդայնանում որևէ նմանության կամ տիպաբանության առումով, որոնք հատուկ չեն նշվում ՆԿ-ում, քանի որ եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում դրանք շատ անգամ շահարկվել են մեկնաբանների կողմից: Այնուհայտ ակնարկ կա Իսահակի և Հիսուսի միջև: Այնինչ Աստված Աբրահամին թույլ չտվեց, որ անի Իսահակին, Նա Ինքն արեց Իր որդու հետ: Կարծում եմ, որ մենք կհասկանանք Աստծո սիրո ուժգնությունը՝ մեծությունը, երբ հասկանանք Աբրահամի սերն ու հավատքը:

❖ **«կրակը և դանակը»** Արդյոք այս կրակը վերաբերում է նախորդ գիշերվա ճամբարած վայրում մնացած կրակի ածուխներին, թե կայծքարերի փոքր պայուսակին և ճրագներին, հայտնի չէ: Դանակ բառի համար կիրառվում է «կենդանի մորթելու դանակ» տերմինը (BDB 38), մի շատ մեծ դանակ, որը օգտագործվում էր խոհարարական նպատակներով (տես՝ Դատ. 19:29; Առակ. 30:14):

**22:7 «բայց որտե՛ղ է ողջակեզի փայտը»** Իսահակի հարցը հնարավոր է կտոր-կտոր արեց Աբրահամի սիրտը, որին հ. 8-ում շատ գեղեցիկ կերպով պատասխանելով Աբրահամը արտահայտում է իր հավատքն Աստծո հանդեպ: Այն փաստը, որ Իսահակը ծանոթ էր զոհաբերություններին, ցույց է տալիս, որ զոհաբերությունների համակարգը նախաթվագրվում է Մովսիսական օրենսդրությանը: Սա կարելի է տեսնել (1) Կայենի և Աբելի պատմության մեջ (Ծննդոց 4); (2) Նոյի պատմության մեջ (Ծննդոց 8:20); և (3) Հոբի պատմության մեջ (Հոբ 1:5):

**22:8 «և Աբրահամն ասաց. «Որդի՛ս, Աստված Իր ողջակեզի համար գառնուկ կհայթայթի»** «Աստված կհայթայթի» արտահայտությունը հետագայում դարձավ Աստծո համար որպես անուն՝ հ. 14-ում («ՅԱՀՎԵ», BDB 217 և «տեսնել», BDB 906): Մենք տեսել ենք, թե ինչքան ընդունված էր Աստծո գործերի արդյունքում մի նոր անվան ծնունդը, որը նկարագրում է Իր բնավորությունն ու գործերը: Եբրայերեն «կհայթայթի» տերմինը իրականում «կհոգա» է (BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ), սակայն այն սկսել էր կիրառվել այսպիսի մասնագիտացված իմաստով (Մեկը, որ տեսնում է, Նա է, որ հայթայթում է):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:9-14**

**9**Եվ եկան այն տեղը, որ Աստված նրան ասել էր. և Աբրահամն այստեղ գոհասեղան շինեց և փայտերը շարեց և իր որդի Իսահակին կապեց, դրեց գոհասեղանին՝ փայտերի վրա: <sup>10</sup>Եվ Աբրահամն իր ձեռքը մեկնեց և վերցրեց դանակը, որ իր որդուն մորթի: <sup>11</sup>Եվ ՏԻՐՈՋ հրեշտակը երկնքից նրան ասաց. «Աբրահամ, Աբրահամ», և նա ասաց. «Վհա այստեղ եմ»: <sup>12</sup>Եվ նա ասաց. «Ձեռքդ տղային մի՛ դիպցնիր, և նրան ոչ մի բան մի՛ արա, որովհետև հիմա իմացա, որ դու վախենում ես Աստծուց, և քո մեկ հատիկ որդուն չխնայեցիր Ինձնից»: <sup>13</sup>Եվ Աբրահամն իր աչքերը բարձրացրեց և նայեց, և ահա, իր ետևում մի խոյ կար մացառոտ թփի մեջ՝ եղջյուրներից բռնված: Եվ Աբրահամը գնաց, բռնեց խոյին և դրան իր որդու փոխարեն ողջակեզ մատուցեց: <sup>14</sup>Եվ Աբրահամն այն տեղը Եհովա-Յիրե կոչեց, ինչպես մինչև այսօր ասում է, թե՛ «Դա ՏԻՐՈՋ լեռան վրա է երևալու»:

**22:9 «Աբրահամն այնտեղ գոհասեղան շինեց և փայտերը շարեց և իր որդի Իսահակին կապեց, դրեց գոհասեղանին՝ փայտերի վրա»** Մենք տեսնում ենք մեծ հավատքի տարրեր ոչ միայն Աբրահամի հետ կապված, այլ նաև Իսահակի: Իսահակն ըստ երևույթին այնքան մեծ էր, որ կարող էր փայտն իրնքնուրույն կրել բլուրն ի վեր և բավականին մեծ էր, որպեսզի դիմադրեր իր հորը, երբ նրան կապկպում էր: Վստահ եմ, որ այս միջադեպը ավելի ուշ պատճառ է հանդիսացել Աբրահամի և Իսահակի միջև ժամերով հոգևոր քննարկումներ ունենալու:

«Կապել» ԲԱՅԸ (BDB 785, KB 873, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում: Միևնույն արմատը (BDB 785) նշանակում է ծռել կամ ոլորել: Հետևաբար ենթադրվում է, որ նշանակում է գոհաբերվող կենդանուն ոտքերը այնպես ոլորել, որպեսզի իրար հետ կապեն:

**22:10 «Աբրահամը իր ձեռքը մեկնեց»** Ըստ երևույթին սա վերաբերում է գոհաբերվող կենդանու կոկորդը կտրելու արարողակարգին:

**22:11 «բայց/և ՏԻՐՈՋ հրեշտակը»** Երբ կարդում ենք հ. 11 և 12-ը միասին, ակնհայտ է, որ այս «ՏԻՐՈՋ հրեշտակը» հենց Աստված Ինքն է (տես՝ Ծննդ. 16:7-13; 18:1; 19:1; 21:17, 19; 22:11-15; 31:11,13; 32:24,30; 48:15-16; Ելից 3:2,4; 13:21; 14:19; Դատ. 6:12,14 և Չաք. 3:1,2): Սակայն նկատե՛ք, թե ինչպես է հ. 12-ում հրեշտակը դիմում «Աստծուն»: Դժվար է հաստատել խիստ մոտոթեիզմ բոլոր մյուս հոգևոր էակների հետ միասին, որոնք նշվում են Ծննդոցում (այսինքն՝ «Հոգին» Ծննդ. 1:2-ում; «Եկեք»՝ Ծննդ. 1:26; 3:22; 11:7; «ՏԻՐՈՋ հրեշտակը վերը» և նաև նկատե՛ք՝ «ՏԵՐՆ ասաց իմ Տիրոջը» Սաղմ. 110:1-ում): Ինչպես են այս բոլորն իրար հետ կապակցված, առեղծված է: Քրիստոնյաները պնդում են հրեաների հետ միասին, որ 2 Օրինաց 6:4-ում դրսևորվում է միաստվածությունը: Տե՛ս՝ Հատուկ Թեմա. Երրորդությունը, 20:13-ում:

- 22:12** Երկու բացասական հրամաններ կան՝
1. «ձեռքդ տղային մի՛ դիպցնիր», BDB 1018, KB 1511, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, սակայն կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
  2. «նրան ոչ մի բան մի՛ արա», BDB 793, KB 889, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ

Հաջորդող ԿԱՏԱՐՅԱԼՆԵՐԸ ցույց են տալիս, որ ՅԱՀՎԵՆ կատարելապես բավարարված է Աբրահամի վստահող հավատքով:

1. «որովհետև հիմա իմացա», BDB 393, KB 390, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ
2. «քո որդուն չխնայեցիր Ինձնից», BDB 393, KB 390, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ

Իսահակին վերաբերող կրկնվող արտահայտություններ են գտնվում հ. 2-ում և կրկնվում են հ. 12-ում (տես՝ հ. 16):

«Հիմա իմացա» արտահայտության շուրջ պարզապես հակիրճ: Արդյո՞ք սա հարցականի տակ է դնում ՅԱՀՎԵՆ կանխագիտությունը, թե պարզապես գրականական ձև է ցույց տալու Աբրահամի հավատքի հավանությունը: Ես սա հասկանում եմ համաձայն երկրորդ տարբերակի: Ես Բաց Թեիզմի կողմնակիցը չեմ:

❖  
**NASB, NKJV, NRSV, NJB**  
**TEV**  
**Peshitta**  
**REB**

«վախենում ես»  
«պատվում ես»  
«ակնածում ես»  
«աստվածավախ մարդ ես»

Այս տերմինը (BDB 431) ՀԿ-ում հաճախ է հանդիպում: Այն կարող է նշանակել «վախենալ» (տես՝ Ծննդ. 3:10; 18:15; 20:8; 28:17; 32:7; 42:35; 43:18), սակայն որոշ համատեքստերում այն հաղորդում է «ակնածանք», «հարգանք» կամ «պատիվ» նշանակությունը, որը նկարագրում է մարդու վերաբերմունքը Աստծո նկատմամբ: Ուշադրություն դարձրեք հետևյալ տեքստերին՝ Ծննդ. 42:18; Ելից 1:17; 9:30; 18:21; Ղևտ. 19:14,32; 25:17,36,43; 2 Օր. 6:2,24; 10:12,20; 14:23; 17:19; 25:18; 28:58; 31:12-13; Մաղմ. 33:8: Այս «վախի» արդյունքը պետք է լինի երկրպագությունն ու հնազանդությունը: Սա ապրելակերպ հանդիսացող փոխհարաբերություն է և ոչ թե զատված գործողություններ, վայրեր, օրենքներ կամ կանոններ: Հնազանդությունը բխում է հարգանքից և սիրուց, ոչ թե հաշվեհարդարի վախից: Անհնազանդությունը առաջին հերթին դեմ է սիրույն, ինչպես նաև օրենքին: Մարդու համար Աստծո հետ փոխհարաբերությունը դառնում է ամենաառաջնայինը: «Աբրահամը հավատաց Աստծուն» (Ծննդ. 15:6) խոսքը դրսևորվեց կյանքով:

**22:13**

**NASB, RSV**  
**NKJV**  
**NRSV, TEV**

**«իր ետևում մի խոյ»**  
**«և այնտեղ իր ետևում մի խոյ»**  
**«մի խոյ»**

Այստեղ եբրայերեն ձեռագրերում տարբերություններ կան: MT թարգմանությունը տալիս է «ետևում» ՄԱԿԲԱՅԸ (BDB 29), սակայն որոշ եբրայերեն ձեռագրեր և Սամարացիների Հնգամատյանը, Սեպտուագինտան և Փեչիթան տալիս են «մեկ» (BDB 25) բառը թարգմանված «մի» խոյ տեսքով:

❖ **«իր որդու փոխարեն»** Աստված չէր խնդրել Աբրահամին, որ խոյին զոհաբերեր, սակայն Աբրահամը իր կողմից և երախտագիտությամբ զոհ մատուցեց այդ խոյին Աստծուն հենց այն նույն լեռան վրա, որը մի օր դառնալու էր Սողոմոնի տաճարի վայրը: Հնարավոր է հետագայում կատարելագործվող փոխանորդական զոհ մատուցելու նախատիպն էր ոչ միայն Մովսիսական օրենքի, այլ նաև վերջին հաշվով Քրիստոսի զոհաբերության (տես՝ Եսայի 53 և Հովհաննես 1:29. Եբրայեցիների գիրքը, 1 Պետ. 1:18-19; Հայտն. 5:11-14):

**22:14 «ինչպես մինչև այսօր»** Հնարավոր է, որ սա հետագա խմբագրի կողմից կատարած գրականական նշում է: Կարող է նույնիսկ դա արել է Մովսեսը կամ Մովսեսի քահանայական դայիրը: Անձամբ ես կարծում եմ, որ Ծննդոցի մեծ մասը մինչև Հովսեփի օրերը բխել են Նահապետական բանավոր գրույցներից կամ գրավոր ավանդույթներից:

❖ **«Աբրահամն այսն տեղը Եհովա-յիրե կոչեց կամ ՏԵՐԸ կհայթայթի»** Սա կարծես թե հիմնված է Աստծո գործողության վրա և հ. 8-ում Իսահակի հարցին Աբրահամի տված պատասխանի վրա:

❖ **«դա ՏԻՐՈՋ լեռան վրա է հայթայթելու»** Սա կարծես թե «վայր, որտեղ Աստծո անունն է բնակվելու» արտահայտության նախատիպն է (տես՝ 2 Օր. 12:5,11,21; 14:23,24; 16:2,6,11, և այլն: Բնագրում սա վերաբերում է խորանին, սակայն հետագայում այն վերաբերելու էր Մորիա լեռան վրա կառուցված Տաճարին):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՐՍ. 22:15-19**  
**<sup>15</sup>ԵՎ ՏԻՐՈՋ հրեշտակը երկրորդ անգամ երկնքից կանչեց Աբրահամին, <sup>16</sup>և ասաց . «Ինձանով եմ երդվում, -ասում է ՏԵՐԸ, - քանի որ դու այդ բանն արեցիր և քո որդուն՝ մեկ հատիկ որդուն, չխնայեցիր, <sup>17</sup>քեզ օրհնելով կօրհնեմ, և քո սերունդը երկնքի աստղերի և ծովերում եղած ավազի պես բազմացնելով կբազմացնեմ, և քո սերունդը կժառանգի իր թշնամիների դուռ. <sup>18</sup>և Երկրի բոլոր ազգերը քո զարմով կօրհնվեն, որովհետև Իմ ձայնին հնազանդվեցիր»:**  
**<sup>19</sup>ԵՎ Աբրահամը ետ դարձավ իր ծառաների մոտ, և վեր կացան ու միասին Բերսաբեն գնացին: ԵՎ Աբրահամն ապրում էր Բերսաբենում:**

**22:16 «Ինձանով եմ երդվում»** Սա միակ դեպքն է Ծննդոցում գրքում, որտեղ Աստված երդվում է Իրենով ուխտի կապի մեջ: Սա դառնում է մի կարևոր աստվածաբանական կետ Եբր. 6:13-18-ի համար: Նկատելի է, որ այն անպայմանական խոստում է՝ հիմնված Աստծո սիրո վրա, սակայն հանդիսանում է Աբրահամի հավատքի քայլին որպես պատասխան (այսինքն՝ «քանի որ դու հնազանդեցիր Իմ ձայնին», հ. 18): Աստվածաշնչի ուխտերի անպայմանական կամ պայմանական բնույթը կարծես թե կապված է Աստծո անպայմանական սիրո հետ, մինչդեռ՝ մարդու պայմանական պատասխանի:

**22:17 «քեզ օրհնելով կօրհնեն»** Երկու քերականական կազմություններ կան, որոնք շեշտադրում են արտահայտում այս խոսքի վրա՝

1. Միևնույն արմատի *Piel* ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇԸ և *Piel* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ՝ «օրհնել» (BDB 138, KB 159), հետևաբար թարգմանված է «Ես շատ եմ օրհնելու քեզ»:
2. Միևնույն արմատի *Hiphil* ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇԸ և *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ՝ «բազմացնել» կամ «շատացնել» (BDB 915, KB 1176), հետևաբար թարգմանված է «Ես շատ եմ բազմացնելու քո սերունդը»:

Սա կարծես թե վերադառնում է գլուխ 12-ում Աբրահամին տված առաջին խոստմանը (ինչպես որ սկզբնական ստեղծագործության մեջ էր), սերնդի և երկրի խոստումը: ՆԿ-ը շեշտադրում է սերնդի խոստումը և թերընդգծում է երկրինը:

❖ **«և քո սերունդը երկնքի աստղերի և ծովեզրում եղած ավազի պես բազմացնելով կբազմացնեն»** Սրանք այն մի քանի փոխաբերություններից երկուսն են, որոնք նկարագրում են Աբրահամի ժառանգների մեծաքանակությունը (տես՝ փոշի, Ծննդ. 13:16; 28:14; Թվոց 23:10; աստղեր՝ Ծննդ. 15:5; 26:4; և ավազ՝ Ծննդ. 32:12):

❖ **«և քո սերունդը կժառանգի իր թշնամիների դուռը»** Դուռը կամ դարպասը խորհրդանշում է հնագույն պարսպապատ քաղաքների անվտանգությունը՝ ապահովությունը: Ինչ-որ մեկի դարպասը գրավելը նշանակում էր այստեղ քաղաքը գրավել: Հետևաբար, սա Աբրահամի սերունդների համար բոլոր իրենց թշնամիների դեմ ունեցած ռազմական հաղթանակի այլաբանություն է: Այս նույն փոխաբերությունը կիրառվում է ՆԿ-ում՝ Մատթեոս 16-ում՝ «քանի որ դժողքի դարպասները չեն հաղթի եկեղեցուն»:

Մարգարեներից գիտենք, որ անգամ այս խոստումները պայմանական են Իսրայելի հնազանդության պայմանով, քանի որ նրանք Աբրահամի հնազանդության մեջ էին համարվում (տես՝ 15:6; 22:16,18): ՅԱՀՎԵԻ խոստումները չեղյալ հայտարարվեցին Իսրայելի շարունակական անհնազանդության և կռապաշտության պատճառով: Մենք պետք է հիշենք, որ Սուրբ Գրքի առաջնային թեման Աստծո բնավորությունն ու Նրա հավատարմությունն է: Սակայն նաև պետք է ասել, որ Նրա ցանկությունն է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը անհավատ աշխարհի համար (այսինքն՝ ազգերի համար), որպեսզի նրանք նույնպես կարողանան արձագանքել Նրա կանչին:

**22:18 «և երկրի բոլոր ազգերը քո զարմով կօրհնվեն»** Այստեղ քերականական և աստվածաբանական խնդիր կա, թե ինչպես թարգմանել «օրհնել» ԲԱՅԻ *Niphal* և *Hithpael* ԿԱՏԱՐՅԱԼՆԵՐԸ (BDB 138, KB 159), որոնք կարծես թե համազոր են՝

1. Ծննդ. 12:3, *Niphal* ԿԱՏԱՐՅԱԼ
2. Ծննդ. 18:18, *Niphal* ԿԱՏԱՐՅԱԼ
3. Ծննդ. 22:18, *Hithpael* ԿԱՏԱՐՅԱԼ
4. Ծննդ. 26:4, *Hithpael* ԿԱՏԱՐՅԱԼ
5. Ծննդ. 28:14, *Niphal* ԿԱՏԱՐՅԱԼ

*Niphal* արմատը սովորաբար ԿՐԱՎՈՐԱԿԱՆ է (այս ԲԱՅԸ միայն Ծննդոցի տեքստերում է թարգմանված որպես ԿՐԱՎՈՐԱԿԱՆ), սակայն կարող է գործել որպես ԱՆԴՐԱԴՐՁՈՂ կամ ՓՈԽԱԴՐՁՈՂ: *Hithpael* արմատը ԱՆԴՐԱԴՐՁՈՂ կամ ՓՈԽԱԴՐՁՈՂ է (տես՝ 2 Օր. 29:19; Սաղմ. 72:17; Ես. 65:16 /երկու անգամ/; Երեմ. 4:2):

ՆԿ-ում այս կարևոր խոստման մեջբերումները ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռով է: Տե՛ս Գործք 3:25 և Գաղ. 3:8: Հարցն առնչվում է Իսրայելին տրված միսիոներական լիազորությանը, որպեսզի լինի ազգերի համար «քահանայական թագավորություն» (տես՝ Ելից 19:5-6): Չնայած որ մինչև ութերորդ դարի մարգարեները սա միանշանակ չի սահմանվում, այդ մասին ենթադրվում է և ակնարկվում Ծննդոցի այս տեքստերում:

Ինչ-որ իմաստով Իսրայելը պետք է ապահովեր Աստծո վերաբերյալ տեղեկությամբ (Մովսիսական օրենքը պահելու իրենց հնազանդության կյանքով): Ի վերջո ազգերը պետք է արձագանքեին և վստահեին ՅԱՀՎԵԻ հուսադրելիությանը (ինչպես Աբրահամն արեց, տես՝ Ծննդ. 15:6; Հռոմ. 4:3; Գաղ. 3:6; Հակ. 2:23): Նրանք պետք է գիտակցեին և պատասխանեին Իսրայելին ուղղված և Իսրայելի միջոցով ՅԱՀՎԵԻ կողմից տրված հայտնությանը: Երբ Իսրայելը անհնազանդ էր գտնվում, բարգավաճման փոխարեն, ինչպես նաև կայուն հասարակության փոխարեն, բոլոր ազգերը տեսնում էին ՅԱՀՎԵԻ դատաստան տեսնելու կողմը: Իսրայելը ճախողեց իր առաքելության լիազորության հարցում և այն փոխանցվեց եկեղեցուն (այսինքն՝ «Մեծ Հանձնարարականը», Մատթ. 28:19-20; Դուկ. 24:47; Գործք 1:8):



**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:20-24**

**20**Եվ եղավ այնպես, որ այս ամենից հետո Աբրահամին ասվեց, թե՛ Մեղքան էլ որդիներ ունեցավ քո եղբայր Նաբովրի համար՝ **21**իր անդրանիկ Հուսին և նրա եղբայր Բուզին և Արամ հայր Կամոնեին, **22**և Քաղադին, Ասավին, Փաղղասին, Ետլափին և Բաթուեին: **23**Եվ Բաթուեը ծնեց Ռեբեկային: Այս ութին Մեղքան ծնեց Աբրահամի եղբայր Նաբովրի համար: **24**Եվ նրա հարճը, որի անունը Ռեումա էր, նա էլ ծնեց Տերաքին, Գաամին, Թաքասին և Մաաքային:

**22:20-24** Ընտանեկան այս տոհմաձառը՝ ազգաբանությունը, կարծես թե ինչ-որ չափով տարօրինակ է այստեղ, սակայն իրականում այն շատ կարևոր է Իսահակի համար սպազա կնոջ՝ Ռեբեկայի համար հիմք զցելու տեսանկյունից, որի մասին նշվելու է հ. 23-ում:

**22:23 «Բեթուեը»** Սա նշանակում է «Աստծո մարդ» (BDB 143 I):

❖ **«Ռեբեկա»** Հնարավոր է, որ այս անվան եբրայերեն ստուգաբանությունը (BDB 918) նշանակում է «որևէ կենդանու կապել» և հետևաբար սկսել է նշանակել «կապելու տեղ» կամ երբ կիրառվում էր կնոջ համար «թակարդ լարել»: Ռաբբիները սա դիտարկում են որպես թե Ռեբեկայի գեղեցկությունը գայթակղիչ էր և նա «կապեց» Իսահակի հրապուրանքը:

**22:24 «Ռեումա»** Այս բառը (BDB 910) ունի երկու հավանական իմաստ՝ (1) «մեծացնել», որը կարծես թե համընկնում է, քանի որ նա ստրուկից մեծացել դարձել էր հարճ, կամ էլ (2) «մարգարիտ» կամ «կորալ», որը կարծես թե ավելի շուտ սերտ կապ ունի եբրայերեն տերմինի հետ:

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

- 1. Իրո՞ք Աստված ստուգում է Իր որդիներին: Եթե այդպես է, ինչո՞ւ:
- 2. Ի՞նչն է «Մորիա» տերմինի նշանակությունը և որտե՞ղ է այն գտնվում:
- 3. Ինչո՞ւ Աստված խնդրեց Աբրահամին զոհաբերել իր խոստման զավակին:
- 4. Ինչո՞ւ են 20-24 համարները ներառված այս հատվածում:

**ԾՆՆԴՈՑ 23**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Սառայի մահն ու թաղումը	Սառայի մահն ու թաղումը	Աբրահամը գնում է ընտանեկան գերեզմանատեղի	Սառան մեռնում է և Աբրահամը առնում է թաղման հողակտոր	Նահապետների գերեզմանը
23:1-16	23:1-16	23:1-16	23:1-2 23:3-4 23:5-6 23:7-9 23:10-11 23:12-13 23:14-16	23:1-2 23:3-6 23:7-11 23:12-16
23:17-20	23:17-20	23:17-20	23:17-18 23:19-20	23:17-20

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 23:1-16**  
<sup>1</sup>Եվ Սառայի կյանքը հարյուր քսանյոթ տարի էր. սա էր Սառայի կյանքի տարիքը: <sup>2</sup>Եվ Սառան մեռավ Կարիաթ-արբայում, որը Քեբրոնն է՝ Քանանի երկրում. և Աբրահամը եկավ, որ Սառայի համար սգա և լա: <sup>3</sup>Եվ Աբրահամն իր հանգուցյալի առջևից ելավ, ոտքի կանգնեց և Քեաի որդիների հետ խոսեց՝ ասելով. <sup>4</sup> «Ես ձեր մեջ օտարական եմ ու պանդուխտ, ձեր մեջ ինձ գերեզմանի տեղ տվեք որպես սեփականություն, որ աչքիս առջևից իմ մեռելին թաղեմ»: <sup>5</sup>Եվ

Քեռի որդիները պատասխանեցին Աբրահամին և ասացին նրան. <sup>6</sup> «Տե՛ր իմ, լսի՛ր մեզ, դու մեր մեջ Աստծո մի իշխան ես. մեր գերեզմաններից ամենաընտիրում թաղի՛ր քո մեռելը. մեզանից ոչ մեկը քեզանից չի խնայի իր գերեզմանը՝ քո մեռելը թաղելու համար»: <sup>7</sup>Եվ Աբրահամը ոտքի կանգնեց, և խոնարհվեց այն երկրի ժողովրդին՝ Քեռի որդիներին. <sup>8</sup>և նրանց հետ խոսեց՝ ասելով. «Եթե՛ ձեր մտքում կա, որ իմ առաջից իմ մեռելը թաղեմ, ինձ լսեցե՛ք և իմ մասին բարեխոսեցե՛ք Սահառի որդի Եփրոնին, <sup>9</sup>որ ինձ տա Մաքփելայի քարայրը, որ նրանն է և նրա արտի եզրին է. իր լրիվ արժեքով տա ինձ, որպեսզի գերեզմանի տեղ ունենամ ձեր մեջ՝ որպես սեփականություն»: <sup>10</sup>Եվ Եփրոնը նստած էր Քեռի որդիների մեջ: Եվ քեռացի Եփրոնը պատասխանեց Աբրահամին՝ ի լուր Քեռի որդիների, բոլոր նրանց, որ մտնում էին դարպասով, և ասաց. <sup>11</sup> «Ո՛հ, տե՛ր իմ, ի՛նձ լսիր. արտը քեզ եմ տալիս և քարայրը նույնպես, որ նրա մեջ է, քեզ եմ տալիս այն իմ ժողովրդի որդիների ներկայությամբ, քեզ եմ տալիս, թաղի՛ր քո մեռելը»: <sup>12</sup>Եվ Աբրահամն այդ երկրի ժողովրդի առջև խոնարհվեց. <sup>13</sup>և Եփրոնի հետ խոսեց ի լուր այդ երկրի ժողովրդի և ասաց. «Ո՛հ, եթե միայն ինձ վաճառեիր, աղաչում եմ, լսի՛ր. ես արտի փողը կտամ. վերցրո՛ւ ինձնից, և ես մեռելս այնտեղ թաղեմ»: <sup>14</sup>Եվ Եփրոնը պատասխանեց Աբրահամին ու ասաց. <sup>15</sup> «Տե՛ր իմ, ի՛նձ լսիր, տափը չորս հարյուր սիկլ արծաթ է, իմ ու քո մեջ դա ի՞նչ է. ուրեմն՝ թաղի՛ր քո մեռելը»: <sup>16</sup>Եվ Աբրահամը լսեց Եփրոնին և Աբրահամը կշռեց արծաթը, տվեց Եփրոնին, ինչպես սա Քեռի որդիների առաջ ասել էր, այսինքն՝ չորս հարյուր սիկլ արծաթ՝ վաճառականների մեջ ընդունված արժեքը:

**23:1** Ռաբբիներն ասում են, որ երբ Աբրահամը տուն վերադարձավ և ասաց Սառային, թե ինչ էր արել, ի պատասխան նա յոթ բարձրաձայն ճիչեր արձակեց և մահացավ: Նրա մահն արձանագրված է գլուխ 23-ում: Արդյոք սա ճիշտ է, թե ոչ, մենք հաստատ կարող ենք տեսնել, թե որտեղից են ռաբբիները վերցրել իրենց մեկնությունները:

**23:2 «Կարիաթ-արբա»** Այս անունը (BDB 900) կազմված է՝

1. «Կարիաթ» նշանակում է «քաղաք»
2. «Արբա»
  - ա. սովորաբար թարգմանվում է «չորսի քաղաք» (այսինքն՝ Ենակը և իր երեք որդիները կամ չորս գյուղերը միասին)
  - բ. միևնույն արմատը նշանակում է դարան (BDB 70)
  - գ. անձի անուն է՝ Ենակիմներից մեկի, Հեսու 14:15; 15:13; 21:11

Տե՛ս Հատուկ Թեմա. Հսկաներ, 14:5-ում:

❖ **«Աբրահամը եկավ, որ Սառայի համար սգա և լա»** Ինչ-որ մեկը կարող է հարցնել, թե որքան տևեց այս սգալն ու տեղացիների հետ բանակցությունները: Սառայի մարմինը կարող էր այսպիսի կլիմայական պայմաններում նեխել (տես՝ Մահվան և թաղման արարողակարգերը գլուխը *Հնագույն Իսրայելում. Մոցիալական Հաստատություններ*, հատոր 1, Ռոլանդ դեՎոքս, էջ՝ 56-61): Այսօր Իսրայելու (որտեղ դեռ չեն գնաում) մահացած մարդուն պետք է թաղեն քսանչորս ժամվա ընթացքում:

**23:3-13** Այս գլխի մնացած մասում արձանագրված է երկխոսություն (կիրառելով ձևավորված և չափանիշ հանդիսացող Արևելյան ավանդույթները) Քեռոնի մոտ բնակվող տեղաբնակների և Աբրահամի միջև: Ուշադրություն դարձրե՛ք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՒՄ արտահայտված պաշտոնականությունը (նկատե՛ք TEV թարգմանության պարբերությունների բաժանումները):

1. «տվե՛ք», հ. 4, BDB 678, KB 733, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ խնդրանքի իմաստով
2. «գերեզմանի տեղ», հ. 4 (բառացի՝ թաղման համար սեփական հողատարածք), BDB 868, KB 1064, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
3. «սի՛ր», հ. 6, BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (կիրառված է Քեռի որդիների կողմից՝ ուղղված Աբրահամին)
4. «թաղի՛ր քո մեռելը», հ. 6, BDB 868, KB 1064, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (սա այն չէր, ինչ Աբրահամն ուզում էր անել, այսինքն՝ թաղել Սառային նրանց հողակտորներից մեկում)
5. «սի՛ր», հ. 8, նույնն է ինչ #3, սակայն Աբրահամն է խոսում նրանց
6. «բարեխոսեցե՛ք» (կամ մոտեցե՛ք), հ. 8, BDB 803, KB 910, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (որպես խնդրանք)
7. «տո՛ւր», հ. 9, BDB 678, KB 733
  - ա. *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ

բ. *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (Եփրոնը պատասխանում է հ. 11-ում /երեք *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ/, սակայն սա հողատարածք բառացի նվեր տալու առաջարկ չէ, այլ ավելի շուտ բանակցության բաղկացուցիչ մի մաս . սովորաբար մատնանշում է սարկարկություն)

8. «վի՛ր», հ. 11, նույնն է ինչ #3 և #5 (Եփրոնը խոսում է Աբրահամին և առաջարկում քարայրը և դաշտը)
9. «թաղի՛ր», հ. 11, նույնն ինչ #4
10. «վի՛ր» (բառացի՝ «ականջ արա»), հ. 13, նույնն ինչ #3,5,8 (Աբրահամը խոսում է Եփրոնին)
11. «վի՛ր», հ. 15, նույնն ինչ #3, 5,8,10 (Եփրոնը Աբրահամի հետ դաշտի գնի համար այնպես է խոսում, որ գնի շուրջ ամբողջ բանակցությունը անտեսվում է, և ակնհայտ է, որ այստեղ բարձր գին է առաջարկվում)

Այս երկխոսության մեծ մասը կարծես թե պաշտոնական էր կամ մեզ համար կրկնվող, սակայն Ք. Ա. երկրորդ հազարամյակում սա ակնկալվող գործընթաց էր համարվում քանանացիների հասարակության մեջ:

**23:3 «Քեռի որդիները»** Քեռտ անունը (BDB 366) քեռացիների նախահայրն էր (BDB 366, տես՝ Ծննդ. 10:15; 1 Մնաց. 1:13): Տե՛ս՝ Հատուկ Թեմա. Պաղեստինի Նախահարայելական Բնակիչները, 12:6-ում:

**23:4 «օտարական եմ ու պանդուխտ»** Այս երկու տերմիններն ունեն տարբեր նշանակություններ, սակայն հավանաբար այստեղ դրանք հենդիադիս են՝ միևնույն իմաստով երկու բառեր:

1. «օտարական» (BDB 158) վերաբերում է անձանոթ բնակչին, տես՝ Ծննդ. 15:13; Ելից 22:21; 23:9; Ղևտ. 19:34; 2 Օր. 10:19; 23:8
2. «պանդուխտ» (BDB 444) օտարականն է, որը պարզապես անցնում է երկրի միջով առանց օրինական իրավունքների՝ Ղևտ. 22:10; 25:40:

Հավանաբար միասին վերցրած, դրանք վերաբերում են մեկին, որը տեղափոխվել է մի անմարդաբնակ վայր, սակայն հողի սեփականություն չունի: Տե՛ս «Անձանոթ բնակիչները» հոդվածը *Հնագույն Իսրայել. Սոցիալական Հաստատություններ*, հատոր 1, Ռոլանդ դեՎոքս, էջ՝ 74-76 / “Resident Aliens” in *Ancient Israel: Social Institutions*, vol. 1, by Roland deVaux, pp.74-76/:

**23:6 «դու հզոր իշխան ես»** «Հզոր» թարգմանված տերմինը *էրհիմ* տերմինն է (BDB 43), որը կարելի է կիրառել՝

1. Աստծո համար
2. դատավորների
3. հրեշտակների
4. այստեղ մանտանշում է ուժեղ, տեղացի, ընտանիքի առաջնորդ

«Հզոր» թարգմանությունը սերվել է մի արմատից, որը նշանակում է *էլ* (BDB 42, տես՝ 1 Մնաց. 12:22;

Սաղմ. 68:15; Հովնան 3:3): Որոշ մեկնաբաններ ուզում են թարգմանել այն «Աստծո իշխան»:

«Իշխան» թարգմանված տերմինը (BDB 672) նշանակում է «մեծարված» (հիմնական արմատից, BDB 669): NASB թարգմանում է այն որպես՝

1. «իշխան»՝ Ծննդ. 17:20; 25:16; 34:2
2. «առաջնորդ»՝ Ելից 16:22; Թվոց 1:16,44; 2:3; Հեսու 22:32
3. «կառավարիչ իշխան»՝ Ելից 22:28; 34:31; 35:27; 3 Թագ. 11:34
4. «ղեկավար»՝ Հեսու 13:21-ում

Այսպիսի բարձրակարգ բանակցության մեջ սա հարգանքի քաղաքավարի դիմեաձև է: Քեռացիները կրոնական ոչ մի հայտարարություն չեն կատարում:

**23:9 «Մաքիելայի քարայրը»** Սա կարծես թե մի քարայր էր (ընդունված գերեզմանատեղի), որը տեղակայված էր Մաքիելայի տարածքում, Քերթոնից դեպի Մամբրե տանող շրջանում (տես՝ 13:18; 14:13; 18:1):

Աբրահամի ընտանիքի մի քանի անդամներ այստեղ են թաղվել՝

1. Սառան, 23:19
2. Աբրահամը, 25:9
3. Իսահակը, 35:29
4. Ռեբեկան և Լիան, 49:31
5. Հակոբը, 50:13

**23:10 «դարպասի մոտ»** Սա հավանաբար մի տեղ էր, որտեղ տեղացի առաջնորդները հանդիպում էին հաղորդակցվելու, առևտրի և օրենքի հետ կապված հարցեր լուծելու:

❖ **«քետացիները»** Տե՛ս Հատուկ Թեմա 12:6-ում:

**23:15 «սիկո»** Տե՛ս Հատուկ Թեմա .Հնագույն Մերձավոր Արևելքի Կշիռներն ու Ծավալները, 18:6-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 23:17-20**

<sup>17</sup>Եվ հաստատվեց Եփրոնի արտը, որ Մակփելայում՝ Մամբրեի դիմաց էր, արտը և այն քարայրը, որ նրա մեջ էր, դրա շուրջբոլորը՝ նրա սահմաններից մեջ եղած բոլոր ծառերը <sup>18</sup>Քեոի որդիների ներկայությամբ իբրև սեփականություն Աբրահամին տրվեց, բոլոր նրանց աչքի առաջ, որ նրա քաղաքի դարպասով էին մտնում: <sup>19</sup>Եվ սրանից հետո Աբրահամն իր կին Մառային թաղեց Մամբրեի դիմացի Մակփելայի արտի քարայրում, որ է Քեբրոն՝ Քանանի երկրում: <sup>20</sup>Եվ արտը և նրա մեջ գտնվող քարայրը, Քեոի որդիների կողմից Աբրահամի վրա փոխանցվեցին՝ որպես սեփական շիրմավայր:

**23:17 «հաստատվեց»** Այս ԲԱՅԸ (BDB 877, KB 1086, *Qal* ԱՆԿԱՏԱԲ) նշանակում է բարձրացնել կամ կանգնել: Այն հետագայում սկսել վերաբերել օրինական գործարքների հաստատմանը: Աբրահամը այժմ պաշտոնապես հողի սեփականատեր էր Պաղեստինում՝ Քանանում: Նա այլևս օտարական կամ պանդուխտ չէր:

**ԾՆՆԳՈՑ 24**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> (հետևում է MT)
Հարսնացու Իսահակի համար	Հարսնացու Իսահակի համար	Իսահակի համար կին են գտնում	Կին Իսահակի համար	Իսահակի ամուսնությունը
24:1-9	24:1-9	24:1-9	24:1-4 24:5 24:6-9	24:1-9
24:10-14	24:10-14	24:10-14	24:10-14	24:10-14
Ուերեկան ընտրվում է				
24:15-21	24:15-21	24:15-21	24:15-17 24:18-21	24:15-21
24:22-27	24:22-28	24:22-27	24:22-23 24:24-25 24:26-27	24:22-27
24:28-41	24:29-31 24:32-41	24:28-33 24:34-41	24:28-31 24:32-33ս 24:33բ 24:34-41	24:28-32 24:33-49
24:42-44	24:42-44	24:42-44	24:42-49	
24:45-49	24:45-49	24:45-49		
24:50-51	24:50-51	24:50-51	24:50-53	24:50-53
24:52-61 (60)	24:52-60 (60)	24:52-61 (60)	24:54 24:55 24:56 24:57-58ս 24:58բ 24:59-61 (60)	24:54-61 (60)

Իսահակը ամուսնանում է Ռեբեկայի հետ	24:61-67			
24:62-67	24:62-67	24:62-65ա	24:62-67	
		24:65բ		
		24:66-67		

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրը մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:1-9

<sup>1</sup>Եվ Աբրահամը ծեր էր, խորին ծերության մեջ, և ՏԵՐՆ ամեն ինչում օրհնել էր Աբրահամին: <sup>2</sup>Եվ Աբրահամն ասաց իր տան ավագ ծառային, որ նրա ամբողջ ունեցվածքի վերակացուն էր. «Ձեռքդ դիր իմ երանքի տակ. <sup>3</sup>և ես երդվեցնելու եմ քեզ ՏԻՐՈՉՈՎՎ Երկրի Աստծով, որ իմ որդու համար կին չառնես քանանացիների աղջիկներից, որոնց մեջ ես բնակվում եմ: <sup>4</sup>Այլ կգնաս իմ երկիրն ու իմ ազգականների մոտ և իմ որդի Իսահակի համար կին կառնես: <sup>5</sup>Եվ ծառան ասաց նրան. «Գուցե այդ կինը չուզենա՞ իմ ետևից այս երկիրը գալ. արդյոք քո որդուն դարձնե՞մ, տանեմ այն երկիրը, որտեղից դու դուրս ես եկել»: <sup>6</sup>Եվ Աբրահամն ասաց նրան. «Չգուշացիր, որ իմ որդուն այնտեղ չդարձնե՞ս: <sup>7</sup>Երկնքի ՏԵՐ Աստվածը, որ ինձ իմ հոր տնից և իմ ազգականների երկրից դուրս բերեց, և որ խոսեց ինձ հետ և որ երդվեց ինձ՝ ասելով. «Այս երկիրը քո սերնդին կտամ, Նա Իր հրեշտակին կուղարկի քո առջևից և դու այնտեղից իմ որդու համար կին կառնես: <sup>8</sup>Իսկ եթե կինը չցանկանա քո ետևից գալ, այն ժամանակ դու իմ այս երդումից անպարտ ես, միայն թե իմ որդուն այնտեղ չվերադարձնես»: <sup>9</sup>Եվ ծառան իր ձեռքը դրեց իր տիրոջ՝ Աբրահամի ազդրի տակ և այս բանի համար երդվեց նրան:

**24:1 «Եվ Աբրահամը ծեր էր, խորին ծերության մեջ»** Երբ համեմատում ենք Ծննդ. 25:20-ը, որն ասում է, որ Իսահակը քառասուն տարեկան էր, երբ ամուսնացավ Ռեբեկայի հետ, Ծննդոց 21:5-ի հետ, որն էլ ասում է, որ Աբրահամը 100 տարեկան էր, երբ ծնվեց Իսահակը, ապա կարծես թե գլուխ 24-ի մեկնարկին Աբրահամը պետք է լիներ 140 տարեկան: Նա ապրեց մինչև 175 տարեկան (տես՝ Ծննդ. 25:7):

❖ «և Տերն ամեն ինչում օրհնել էր Աբրահամին» Տե՛ս այս օրհնությունների ամբողջական ցանկը հ. 35-ում:

**24:2 «Աբրահամն ասաց իր տան ավագ ծառային, որ նրա ամբողջ ունեցվածքի վերակացուն էր»** «Ավագ» ԱԾԱԿԱՆԸ (BDB 278, «մորուք» ԳՈՅԱԿԱՆԻՑ) կարող է նշանակել իշխանություն ունեցող անձ, և պարտադիր չէ լինի տարիքով ամենամեծը (տես՝ Ծննդ. 50:7; Ես. 3:2): Շատ մեկնաբաններ ենթադրում են, որ այս հավատարիմ ծառան Դամասկոսի Եղիազարն էր, որը նշվում է Ծննդ. 15:2-ում: Այն փաստը, որ նա ապահովում էր Իսահակի համար կին, ցույց է տալիս ժառանգության իրավունքների հետ կապված նրա ոչ եսասիրական էությունը: Իրականում սա ամենաաստվածահանո, գեղեցիկ և հավատարիմ օգնականներից է, որ նշվում է Աստվածաշնչում:

❖ **«ձեռքդ դիր իմ երանքի տակ»** «Դիր» ԲԱՅԸ (BDB 962, KB 1321, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կարևոր մշակութային հրաման է, որը կապ ունի հ. 3-ի երդման հետ («երդվել», BDB 989, KB 1396, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՋԱԿԱՆ իմաստով):

Այս հատուկ մշակութային վարվելակերպը նշվում է միայն այստեղ և Ծննդ. 47:29-ում: Մի քանի տեսություններ են եղել դրա ստույգ նպատակի շուրջ՝

1. Քանի որ ազդրը՝ երանքը ներկայացնում է տղամարդու սերունդների սիմվոլը (BDB 437, 1, բ, տես՝ Ծննդ. 46:26; Ելից 1:5; Դատ. 8:30), սա կարող է վերաբերել վերարտադրողական օրգանների: Եթե դա ճիշտ է, կարծես թե այն վերաբերում է թլփատությանը, որը ՅԱՀՎԵԻ ուխտի նշանն է (տես՝ հ. 3): Այսպես է մեկնաբանվում այս համարը Հովնաթանի Թարգումը և Ռաշին:
2. Ընդունված է, որ սա վերաբերում է սերունդներին և ուստի, Ջերոմը, Օգոստինոսը և Լյութերը, բոլորն էլ ասում են, որ այն վերաբերում է Աբրահամի վերջնական ժառանգին՝ Մեսիային:
3. Ոմանք դիտարկում են որպես թե սա վերաբերում է Աբրահամի տեր լինելուն այս հատուկ ընտրված վերակացուի վրա, որը պետք է Իսահակի համար կին գտներ (տես՝ Աբեր Եգրաս և Կալվին):
4. Սա կարող է արտացոլել մշակութային երդում՝ չբերության անեծք, եթե երդումը խախտվեր:

**24:3 «ես երդվեցնելու եմ քեզ ՏԻՐՈՋՈՎ՝ երկնքի Աստծով և Երկրի Աստծով»** Մեկնաբանների միջև բազմաթիվ քննարկումներ են տեղի ունեցել այն հարցի շուրջ, թե արդյոք Աբրահամը ճշմարիտ մոնոթեիստ էր, թե պարզապես մի հենոթեիստ (մեկը, որն իր համար ունի մեկ աստված, սակայն չի ուրանում ուրիշ աստվածների գոյությունը): Այսպիսի արտահայտությունների շնորհիվ հավատում են, որ Աբրահամը եղել է մոնոթեիստ: Շատ գիտնականներ ենթադրում են, որ լրիվ ձևավորված մոնոթեիզմը՝ փիլիսոփայական իմաստով, գոյություն չի ունեցել մինչև 8-րդ դարի Մարգարեների ժամանակը:

❖ **«իմ որդու համար կին չառնես քանանացիների աղջիկներից»** Հավանաբար պատճառը Ծննդ. 15:13-16 կամ Ծննդ. 9:25-27-ի մարգարեությունն է (նաև նկատեք Ելից 34:15-16 և 2 Օր. 7:3-6): Աբրահամը հանդիպել էր մի քանի աստվածավախ մարդկանց, որոնք քանանացիներ էին:

1. Ամորիացիները՝ նշված 14:13-ում
2. Մեքիսեդեկը՝ նշված 14:18-ում
3. Աբիմեկը՝ նշված 20-րդ գլխում:

Սա ցույց է տալիս, որ պատմության այս փուլում Ամորիացիների ամբարշտությունը դեռևս լցված չէր:

**24:4 «կզնաս իմ երկիրն ու իմ ազգականների մոտ»** Սա կարծես թե վերաբերում է քաղղեացիների Ուր քաղաքին և 11:27-31-ում նշված Նաբովրի ընտանիքին:

**24:5 «Գուցե այդ կինը չուզենա՞ իմ ետևից այս երկիրը գալ»** Ըստ երևույթին ծառան մտահոգված էր հատուկ պայմաններով՝ համաձայնություններով, որ պետք է Աբրահամը ներկայացներ իր խնդրանքում: Աբրահամին մտահոգում էր այն, որ Իսահակն ուներ մի կին, որը (1) հոժարակամ էր, հավատքով, թողնելու իր ընտանիքը, ինչպես ինքն էր դա արել և (2) ճանաչեր ՅԱՀՎԵԻ՛ն՝ իրենց Աստծուն:

❖ **«արդյոք քո որդուն դարձնե՞մ, տանեմ այն երկիրը, որտեղից դու դուրս ես եկել»** Համար 5-ը շեշտադրված՝ արտահայտված հարցադրում է (միևնույն արմատի *Hiphil* ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ, BDB 996, KB 1427), որ տրվում է ծառայի կողմից և հ. 6-ը արտահայտված հրաման («զուշացի՛ր, որ իմ որդուն այնտեղ չդարձնես»), *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ /BDB 1036, KB 1581/ որին հաջորդում է *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ /BDB 996, KB 1427/ միևնույն ԲԱՅԻ՝ կիրառված հ. 5-ում) Աբրահամի կողմից, որ Իսահակը չի վերադառնալու Աբրահամի ծննդավայրը: Կան երկու հնարավոր պատճառներ՝ (1) նրանք դեռևս բազմաստված էին, կամ (2) Աստծո խոստումները հատուկ առնչվում էին Քանանի հետ (տես՝ հ. 7; Եբր. 11:15; Ծննդ. 12:7; 13:15; 15:18):



**24:7 «Նա Իր հրեշտակին կուղարկի քո առջևից»** ՅԱՀՎԵԻ հրեշտակը հաճախ խոսում և գործում է իրականացնելով ՅԱՀՎԵԻ կամքը: Նրա մասին Ծննդոցում մի քանի անգամ նշվում է (տես՝ 16:7; 21:17; 22:11, նաև նկատի առե՛ք Ելից 23:20,23): Տե՛ս հատուկ գրառում 12:7-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:10-14**

<sup>10</sup>Եվ ծառան իր տիրոջ ուղտերից տասը ուղտ վերցրեց ու գնաց, ըստ որում իր տիրոջ բոլոր բարիքները նրա ձեռքին էին. և վեր կացավ ու գնաց Միջագետք՝ Նաբովրի քաղաքը: <sup>11</sup>Եվ քաղաքից դուրս ուղտերը նստեցրեց մի ջրհորի մոտ իրիկնադեմին՝ այն ժամին, երբ կանայք գալիս են ջուր քաշելու, <sup>12</sup>և ասաց. «Ո՛վ Տե՛ր, իմ տիրոջ՝ Աբրահամի Աստված, աղաչում եմ, հաջողություն տուր ինձ այսօր և իմ տիրոջը՝ Աբրահամին բարերարություն արա: <sup>13</sup>Ահա՛ ես այստեղ՝ ջրհորի մոտ կկանգնեմ, և այս քաղաքի մարդկանց աղջիկները գալիս են ջուր հանելու: <sup>14</sup>Եվ թող լինի՝ այն աղջիկը, ում ես ասեմ. «Սափորդ իջեցրո՛ւ, որ խմեմ», և նա ասի. «Խմի՛ր և քո ուղտերին էլ կխմեցնեմ», նա լինի քո ծառա Իսահակի համար սահմանաձև, և սրանից գիտենամ, որ իմ տիրոջը բարություն ցույց տվիր»:

**24:10 «Եվ ծառան իր տիրոջ ուղտերից տասը ուղտ վերցրեց»** Պատմաբանների միջև շատ քննարկումներ են տեղի ունեցել ուղտերի տնային կենդանիներ դարձնելու ժամանակի վերաբերյալ: Ճիշտ է, որ դրանց կիրառությունը առևտրային գործերում լայն տարածում չունեին (այսինքն՝ քարավանները) մինչև Ք. Ա. 1200 թ, սակայն կարծես թե շատ ավելի վաղ ժամանակներում դրանք հատուկ օգտագործման համար են դարձվել տնային կենդանիներ:

❖ **«Միջագետք»** Սա երբայերեն տերմին է՝ «Արամ-նա-հարային» (BDB 74 և 625, տես՝ 2 Օրինաց 23:4), որը կարծես նշանակում է «երկու գետերի Արամը»: Այս արտահայտությունը վերաբերում է հյուսիսային կենտրոնական Միջագետքին:

❖ **«Նաբովրի քաղաքը»** Նաբովրը (BDB 637, նշանակությունն անհայտ է) Աբրահամի հայր Թարայի հոր անունն է (տես՝ Ծննդ. 11:22,23,24,25; 1 Մնաց. 1:26): Դա նաև Թարայի որդիներից մեկի անունն է (Ծննդ. 11:26,27,29): Ըստ երևույթին Աբրահամը ծառային ասում է, որ գնա այն քաղաքը, որտեղ իր եղբայր Նաբովրն է ապրում (Ծննդ. 22:20-24): Հնարավոր է այդ քաղաքն արդեն ուրշ անունով էր հայտնի, հավանական է նույնիսկ քաղղեացիների Ուրն էր՝ Աբրահամի ծննդավայրը կամ էլ այն տեղը, որտեղ նրա ընտանիքի շատ անդամներ տեղափոխվեցին՝ Խառանը (տես՝ Ծննդ. 11:31): NIV Սերտողության Աստվածաշունչը գրառումներում նշում է, որ Նաբովր անունով մի քաղաք է հայտնվել Մարի կավե արձանագրությունների վրա (էջ՝ 41): Այս իմաստով «Խառանը» վերաբերում է տարածքի և ոչ թե պարզապես հյուսիս-կենտրոնական Միջագետքում գտնվող մի քաղաքի:

**24:12 «և ասաց. «Ո՛վ Տե՛ր, իմ տիրոջ՝ Աբրահամի Աստված»** Այս արտահայտությունը ծառայի հավատքը թերագնահատող՝ նսեմացնող մեկնությունն չէ, այլ ուխտի խոստման աղբյուրի ընդունելության (տես՝ հ. 26): Նրա աղոթքը կազմված է երկու խնդրանքից՝

1. «շնորհիք կամ տուր» (բառացի՝ «այնպես արա, որ լինի»), BDB 899, KB 1137, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «ցույց տուր», BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

«Ողորմություն՝ գթասրտություն» տերմինը ուխտի հզոր ԳՈՅԱԿԱՆ է (տես՝ 19:19; 20:13; 21:23; 24:12,14,27,49; 32:10; 39:21; 40:14; 47:29): Տե՛ս Հատուկ Թեմա 19:19-ում: Այս ծառան հաստատ էր, որ իր աղոթքի մեջ դիմում էր Աբրահամի ուխտի Աստծուն:

**24:12,16** Այստեղ ընդգծվում են Ռեբեկայի մի քանի հատկանիշներից՝

1. օգնելու հոժարակամությունն ու ուժը, հ. 12 (Աբրահամի ծառայի աղոթքը)
2. շատ գեղեցիկ, հ. 16
3. կույս, հ. 16
4. հյուրասեր, հհ. 18-25

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:15-21**

<sup>15</sup>Եվ եղավ, որ նա դեռ իր խոսքը չէր վերջացրել, և ահա Աբրահամի եղբայր Նաբովրի կնոջ՝ Մեղքայի որդու՝ Բաթուելի ծնած Ռեբեկան դուրս եկավ սափորը ուսին: <sup>16</sup>Եվ աղջիկը մի շատ գեղեցկատես կույս էր, և ոչ ոք նրան չէր գիտեցել: Եվ նա իջավ աղբյուրը, իր սափորը լցրեց ու

**վեր բարձրացավ:** <sup>17</sup>Եվ ծառան վազեց նրան դիմավորելու և ասաց. «Աղաչում եմ, սափորիցդ ինձ մի քիչ ջուր խմեցրո՛ւ»: <sup>18</sup> Եվ նա ասաց. «Խմի՛ր, տե՛ր իմ» և անմիջապես սափորն իջեցրեց իր ձեռքի վրա և խմեցրեց նրան: <sup>19</sup>Եվ երբ նրան խմեցրեց, վերջացրեց, ասաց. «Ուղտերիդ համար էլ ջուր քաշեմ՝ մինչև ամենքը խմեն, հագնանան»: <sup>20</sup>Եվ անմիջապես սափորը թափեց գուռի մեջ և նորից հորի մոտ վազեց ջուր քաշելու և նրա բոլոր ուղտերի համար ջուր քաշեց: <sup>21</sup>Իսկ այդ մարդը զարմանքով լուռ մտածում էր, թե արդյոք ՏԵՐԸ հաջողե՞լ էր իր ճանապարհը, թե՞ ոչ:

**24:15 «Մեղքայի որդու՝ Բաթուելի ծնած Ռեբեկան»** Այս ընտանիքը նշված էր Ծննդ. 22:20-24-ում: Նրա հոր անունը՝ Բաթուելը, նշանակում է «Աստծո մարդ» (BDB 143 D), որը կարող է ցույց տալ այս ընտանիքի հոգևոր էությունը: Նաև հետաքրքիր է, որ ընտանեկան տոհմաձառը սկիզբ է առնում Մեղքայի միջոցով՝ իրական կնոջից և ոչ թե Նաքովրի Ռեումա հարնից:

❖ **«դուրս եկավ սափորը ուսին»** Սա մի բան է, որ ցույց է տալիս այս պատմության պատմականությունը: Եգիպտոսում կանայք կրում էին ջրի սափորերը իրենց գլուխների վրա, իսկ Միջագետքում սափորը տանում էին կա՛մ իրենց կոնքի, կա՛մ էլ՝ ուսի վրա:

**24:17 «Աղաչում եմ, մի քիչ ջուր խմեցրո՛ւ»** Սա *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 167, KB 196): Սա համընկնում է հ. 14-ի իր աղոթքի հետ:

**24:18 «խմի՛ր»** Սա *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 1059, KB 1667), որը նաև պատասխանում է նրա աղոթքին՝ ճիշտ կնոջ մոտ առաջնորդության համար:

**24:19-20 «Ուղտերիդ համար էլ ջուր քաշեմ»** Սա նույնպես հ. 14-ում ծառայի աղոթքի մի մասն էր կազմում: ՅԱՀՎԵՆ այս ծառային հատուկ կերպով առաջնորդեց Ռեբեկայի մոտ: Ռեբեկայի կողմից այս գործը պետք է որ շատ ժամանակ և էներգիա պահանջեր տաս ծարավ ուղտերի հագեցնելու համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 24:22-27**  
<sup>22</sup>Եվ երբ ուղտերը խմելը վերջացրին, մարդը մի ոսկե օղակ վերցրեց՝ կես սիկղ ծանրությամբ և նրա ձեռքերի համար երկու ապարանջան հանեց՝ տասը սիկղ ոսկի,<sup>23</sup>և ասաց. «Ռու ու՛մ աղջիկն ես, ասա՛ ինձ. քո հոր տանը մեզ համար իջևանելու տեղ կգտնվի՞»:<sup>24</sup>Եվ նա ասաց նրան. «Ես Մեղքայի որդի Բաթուելի աղջիկն եմ, որ Նաքովրի համար ծնեց»: <sup>25</sup>Նաև ասաց նրան. «Մենք հարզ և ուտելիք շատ ունենք և իջևանելու տեղ՝ նույնպես»: <sup>26</sup>Եվ մարդը գլուխը խոնարհեց ու ՏԻՐՈՋԸ երկրպագեց <sup>27</sup>և ասաց. «Օրհնյալ լինի իմ տիրոջ՝ Աբրահամի ՏԵՐ Աստվածը, որ իմ տիրոջն Իր ողորմությունից ու ճշմարտությունից չի զրկում. ես ճանապարհին էի, և ՏԵՐՆ ինձ իմ տիրոջ եղբայրների տունն առաջնորդեց»:

**24:22 «մարդը մի ոսկե օղակ վերցրեց՝ կես սիկղ ծանրությամբ և նրա ձեռքերի համար երկու ապարանջան հանեց՝ տասը սիկղ ոսկի»** Այս օսկե օղակը վերաբերում է քթոդակին (տես՝ հ. 47 և Սամարացիների Հնգամատյանը): Ես պատկերացնում եմ, որ կես սիկղ ծանրությամբ քթի օղակի պատճառով կարող է մարդու քիթը թուլանալ՝ կախվել (տես՝ Առ. 11:22; Ես. 3:21; Եզեկ. 16:12):

- 24:24**
- |          |                 |
|----------|-----------------|
| NASB     | «գթություն»     |
| NKJV     | «ողորմություն»  |
| NRSV     | «հաստատուն սեր» |
| Peshitta | «շնորհք»        |

Սա երբայերեն *hesed* (BDB 338, տես՝ Հատուկ Թեմա 19:19-ում) տերմինն է, որը նշանակում է «բարություն» կամ «ուխտի հավատարմություն»: Այն շատ հաճախ է նշվում Աստծո Իր ընտրյալ ժողովրդին փոխհարաբերվելու հետ կապված: Այն կիրառվում է՝

1. մարդկանց իրենց թշնամիներից փրկելու դեպքում
2. մարդուն մահից փրկելու դեպքում
3. մարդուն դեպի Աստծո Խոսքին դարձնելու դեպքում (տես՝ Սաղմոս 109:26; 119:41,76, 88,124,149,159)
4. մեղքը ներելու դեպքում (տես՝ Սաղմ. 25:7; 51:1)

5. ուխտը պահելու դեպքում (տես՝ 2 Օր. 7:9,12; 3 Թագ. 8:23; Նեեմ. 1:5; 9:32; Դան. 9:4)
6. հաճախ նկարագրում է Աստծո սիրո և հոգատարության կատարելությունն ու հավիտենությունը՝ անասհման լինելը (տես՝ 1 Մնաց. 16:34,41; 2 Մնաց. 5:13; 7:3,6; 20:21; Եզրաս 3:11; Սաղմ. 100:5; 103:17; 106:1; 107:1; 118:1,2,3,4,29; 136:1բ; 138:8):



**NASB, NKJV, Peshitta  
NRSV  
NJB**

**«ճշմարտություն»  
«հավատարմություն»  
«հավատարիմ սեր»**

Սա ևս մեկ կարևոր տերմին է՝ «ճշմարտություն» ՊՁՁ (BDB 54), որը հաճախ հայտնվում է «ողորմություն» տերմինի հետ կապված: Այս բառի բուն ստուգաբանությունը նշանակում է «հաստատ լինել» կամ «վստահ լինել» և հետևաբար սկսել է արտահայտել «հավատարմություն» իմաստը: Այս բառի հունարեն համագորը մի տերմին է, որը Պողոսը կիրառեց Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում՝ նկարագրելու հավատքի միջոցով շնորհքով արդարացումը, մեջբերելով Ամբակում 2:4-ը (հիշե՛ք ՆԿ-ի հեղինակները եբրայերեն մտածողներ էին և գրում էին Կոյնե Հունարենով, տես՝ Հատուկ Թեմա. Հավատալ, 15:6-ում): Այս տերմինները հաճախ միասին են հանդես գալիս (տես՝ Սաղմ. 25:10; 40:11; 57:3; 61:7; 85:10; 89:14; 115:1):

❖ **«ՏԵՐՆ ԻՆՃ ԱՈՒՋՆՈՐՈՂԵՑ / ԱՈՒՋՆՈՐՈՂԷԼ Է»** ԲԱՅԸ (BDB 634, KB 685, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նկարագրում է Աստծո առաջնորդությունը և ուղղորդումը այն մարդկանց կյանքում, ովքեր վստահում են Իրեն (տես՝ Սաղմ. 5:8; 27:11; 139:24; Ես. 58:11):

❖ **«ճանապարհին էի»** Այս տերմինը (BDB 202) նկարագրում է Աստծո վրա ունեցած հավատքի ապրելակերպ (տես՝ Դատ. 2:22; Սաղմ. 119:1): ՀԿ-յան այս դարձվածքը դարձավ Քրիստոնեական եկեղեցու ամենավաղ անունը (այսինքն՝ «Ճանապարհը», տես՝ Գործք 9:2; 18:25,26; 19:9,23; 22:4; 24:14,22; և հավանաբար Հովի. 14:6):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:28-41**

<sup>28</sup>Եվ աղջիկը վազեց ու այս բաները պատմեց իր մոր տանը: <sup>29</sup>Եվ Ռեբեկան մի եղբայր ուներ Լաբան անունով. և Լաբանը դուրս վազեց այն մարդու մոտ՝ դեպի ջրհորը. <sup>30</sup>որովհետև, տեսնելով օղակը և իր քրոջ ձեռքերի ապարանջանները և լսելով իր քրոջ՝ Ռեբեկայի խոսքերը, որ ասում էր, թե՛ «Այսպես խոսեց ինձ հետ այդ մարդը», այն մարդու մոտ եկավ. և ահա նա կանգնել էր ուղտերի մոտ՝ ջրհորի կողքին. <sup>31</sup>և ասաց. «Եկ, ո՛վ Տիրոջ օրհնյալ, ինչո՞ւ ես դրսում կանգնել. քանի որ ես տունը պատրաստել եմ, ինչպես և ուղտերի համար տեղ»: <sup>32</sup>Եվ մարդը եկավ տունը և ուղտերի կապերն արձակեց և ուղտերին հարդ ու ճարակ տվեց և ջուր՝ նրա ու նրա հետ եղող մարդկանց ոտները լվանալու համար: <sup>33</sup>Եվ նրա առջև կերակուր դրվեց, որ ուտի, քայց նա ասաց. «Չեմ ուտի, մինչև չասեմ իմ ասելիքը»: Եվ նա ասաց. «Խոսի՛ր»: <sup>34</sup>Եվ ասաց. «Ես Աբրահամի ծառան եմ. <sup>35</sup>և ՏԵՐԸ շատ օրհնեց իմ տիրոջը, և նա մեծ մարդ դարձավ. և նրան հոտեր, նախիրներ, արծաթ ու ոսկի, ծառաներ ու աղախիմներ և ուղտեր ու էշեր տվեց: <sup>36</sup>Եվ նրա կինը՝ Սառան, իր ծեր տարիքում մի որդի ծնեց իմ տիրոջ համար, որին տվել է իր ամբողջ ունեցվածքը: <sup>37</sup>Եվ իմ տերն ինձ երզվեցրել է ասելով. «Իմ որդու համար կին չառնես քանանացիների աղջիկներից, որոնց երկրում ես բնակվում եմ. <sup>38</sup> այլ իմ հոր տուն ու ազգատոհմի մո՛տ գնա, և իմ որդու համար կի՛ն առ»: <sup>39</sup>Եվ ես ասացի իմ տիրոջը. «Գուցե այդ կինը չգա իմ ետևից»: <sup>40</sup>Եվ նա ասաց. «ՏԵՐԸ, Ում առաջ ես քայլում եմ, Իր հրեշտակին քեզ հետ կուղարկի և քո ճանապարհը կհաջողվի, և իմ որդու համար իմ ազգատոհմից և իմ հոր տնից կին կառնես: <sup>41</sup>Այն ժամանակ իմ երդումից անպարտ կլինես»:

**24:29 «Լաբան»** Ռաբբիական աղբյուրները Լաբանի հանդեպ բացասական են տրամադրված, հետևաբար հ. 30-ը նրանք մեկնաբանում են, որ նա միայն այն ժամանակ դուրս եկավ դիմավորելու ծառային, երբ տեսավ իր քրոջը նվիրած ոսկին: Սակայն հ. 30 նաև նշում է Աբրահամի ընտանիքի մասին, որը մեկ այլ պոտենցիալ պատճառ է Լաբանի հետաքրքրասիրության համար: Սուրբ Գրքում Լաբանը հասկանալու համար խրթին կերպար է, քանի որ համար 31-ում նա օգտագործում է «ՅԱՀՎԵ» տերմինը, իսկ Ծննդ. 31:53-ում նա կարծես թե կռապաշտ էր և դրանից ենթադրվում է, որ Նաքովորը մեկ այլ աստված էլ ուներ:

**24:32-33** Լարանի և նրա ծառաների Աբրահամի ծառայի համար մի քանի ակնկալվող մշակութային սովորույթներ են ի գործ դրվում՝

1. բեռնաթափում են ուղտերը
2. ուղտերին կերակրում են
3. «ծառային» ուղեկցող ծառաներին ջուր է տրվում, որպեսզի լվանան իրենց ոտքերը
4. նրանց բոլորին կերակրում են

**24:34-41** Սա կրկնում է Աբրահամի ասած խոսքերը իր ծառային, որոնք ավելի շուտ արձանագրված էին այս գլխում:

**24:36** «Եվ նրա կինը՝ Սառան, իր ծեր տարիքում մի որդի ծնեց իմ տիրոջ համար» Ըստ երևույթին այս տեղեկությունը տրվեց, որպեսզի ընտանիքի մտահոգությունը Իսահակի տարիքի վերաբերյալ փարատվի: Իսահակը Աբրահամի որդին էր, մինչև Ռեբեկան Նաբովրի թոռնուհին էր:

**24:41** «Երդում» Այս գլխի առաջին մասում Աբրահամը խնդրեց իր ծառային, որ երդում տա (BDB 46): Այստեղ՝ հ. 41-ում օգտագործվող բառի ձևը նաև նշանակում է «անեծք», որը ցույց է տալիս Աբրահամի խնդրանքի արտահայտված բնույթը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:42-44**

<sup>42</sup>Եվ այսօր ջրհորի մոտ եկա և ասացի. «Ո՛վ ՏԵՐ, իմ տիրոջ Աբրահամի Աստված, եթե հիմա իմ այս ճանապարհը, որով գնում եմ, Գ-ու հաջողելու ես,<sup>43</sup> ահա ես ջրհորի մոտ կկանգնեմ. և թող լինի այնպես, որ այն կույսը, որ ջուր քաշելու գա, և ես նրան ասեմ, թե՛ ինձ քո սափորից մի քիչ խմելու ջու՛ր տուր, խնդրում եմ»,<sup>44</sup> և նա ինձ ասի. «Գ-ու՛ էլ խմիր, և ուղտերիդ համար էլ ջուր կքաշեմ», նա էլ թող լինի այն կինը, որ ՏԵՐԸ սահամանել է իմ տիրոջ որդու համար»:

**24:43** «կույսը» Հետաքրքիր է, որ Ռեբեկան կույս է կոչվում հ. 16-ում “bethulah” (BDB 143), մինչև հ. 43-ում նա կոչվում է օրհորդ (անգլերենում)՝ “alma”(BDB 761): Մեպտուազինտայի թարգմանիչները այս տերմինը՝ “alma” Եսայի 7:14-ում թարգմանել են որպես կույս: Թվում է, թե տերմինները մշակութային միևնույն իմաստն ունեն, չնայած “bethulah” բացառապես նշանակում է «կույս» և “alma” նշանակում է «ամուսնական տարիքի երիտասարդ աղջիկ», որը ենթադրվում է, որ կույս է:

**24:42-48** Սա հհ. 11-27-ում նախորդ քննարկման կրկնությունն է:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:45-49**

<sup>45</sup>Եվ ես դեռ խոսքս չէի վերջացրել սրտումս, և ահա Ռեբեկան առաջ եկավ սափորը ուսին և իջավ ջրհորն ու ջուր քաշեց, և ես ասացի նրան. «Թ-ու՛յլ տուր խմեմ»: <sup>46</sup>Եվ նա անմիջապես իր ուսից սափորն իջեցրեց և ասաց. «Խմիր և ուղտերիդ էլ կխմեցնեմ». և ես խմեցի, և ուղտերին էլ խմեցրեց:<sup>47</sup>Եվ նրան հարցրի. «Գ-ու ո՛ւմ աղջիկն ես». նա էլ ասաց. «Մեղքայի՛ Նաբովրի համար ունեցած որդու՛ Բաթուելի աղջիկն եմ». այն ժամանակ օղակը նրա քիթը, ապարանջանները նրա ձեռքերին անցկացրի: <sup>48</sup>Եվ խոնարհվեցի և ՏԵՐՈՉԸ երկրպագեցի, և իմ տիրոջ Աբրահամի ՏԵՐ Աստծուն օրհնեցի, որ ինձ ուղիղ ճանապարհով առաջնորդեց, որպեսզի իմ տիրոջ եղբոր աղջկան իր որդու համար առնեմ: <sup>49</sup>Եվ արդ, եթե իմ տիրոջ հետ բարությանը ու ճշմարտությանը եք վարվելու, ինձ ասացե՛ք, իսկ եթե ոչ, ինձ ասե՛ք, որ ես աջ կամ ձախ դառնամ»:

**24:49** Ծառան Լարանից պատասխան է հայցում: Արդյո՞ք նա Աբրահամի պես ողորմածությամբ և ճշմարտությամբ կվարվի: Եթե նա չկամենար շարունակել ամուսնական բանակցումները, ապա ծառան կհեռանար (փոխաբերություն՝ «աջ կամ ձախ դառնալը») և կփորձեր մեկ այլ տեղ:

Այս համարն ունի երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ

1. «ասացե՛ք ինձ», BDB 616, KB 665, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ
2. «իմանա՛մ կամ ասե՛ք ինձ», միևնույն ԲԱՅԸ կրկնված
3. «որ ես դառնամ», BDB 815, KB 937, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ իմաստով

**NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:50-51**

<sup>50</sup>Եվ Լաբանն ու Բաթուելը պատասխանեցին ու ասացին. «Այս բանը ՏԻՐՈՉԻՑ է դուրս եկել. մենք քեզ լավ կամ վատ ասել չենք կարող: <sup>51</sup>Միա Ռեբեկան քո առաջ է, վերցրու՛ և գնա՛. և թող քո տիրոջ որդու համար կին լինի, ինչպես ՏԵՐՆ է ասել»:

**24:50 «Եվ Լաբանն ու Բաթուելը պատասխանեցին ու ասացին. «Այս բանը ՏԻՐՈՉԻՑ է դուրս եկել . մենք քեզ լավ կամ վատ ասել չենք կարող»** Անտվոր է, որ Լաբանը՝ եղբայրը, Բաթուելից՝ նրա հորից առաջ է թվարկվում ցանկում: Նուզի արձանագրություններից գիտենք, որ ամուսնական բանակցություններում եղբայրը հաճախ գրավում է առաջնորդի դիրք: Այս համարի վերջին արտահայտությունը շատ մեկնաբաններ սխալ են հասկացել: Այն կարծես թե երբայերեն դարձվածք լինի «ՅԱՀՎԵՆ խոսել է, ուրեմն մենք էլ ի՞նչ կարող ենք ասել» իմաստով (տես՝ հ. 51գ):

Չարմանալի է, որ Բաթուելի մասին նշվում է հ. 50-ում, բայց ոչ հ. 53, 55-ում: Շատերը ենթադրում են, որ նա արդեն մահացած էր այդ ժամանակ: Հնարավոր է հ. 50-ում Լաբանի պատասխանը հատկանշական էր իրեն և Բաթուելին՝ առանց հոր ներկայության: Հավանական է, որ եղբայրներն էին բանակցում իրենց քույրերի ամուսնության հարցում:

**24:51** Մի քանի հրամաններ կան ծառայի կողմից իր այցի պատճառների շարադրանքի և իր խնդրանքի համար անմիջական պատասխան ստանալու մեջ (հ. 49):

1. «վերցրու՛», BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «գնա՛», BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. «թող . . . կին լինի», BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ

Նկատել, որ հ. 28-ում Ռեբեկային չեն հարցնում իր գործողությունների համար, այլ հարցնում են հ. 57-58-ում, որը թվում է քաղաքավարի մոտեցում է, քանի որ հ. 53-ում վճարվում է օժիտի գինը: Հիշե՛ք, որ Աստվածաշունչը միայն ամփոփում է մեզ համար այն, ինչ ասվել է և տեղի ունեցել, սակայն մենք հավատում ենք, որ Հոգին է առաջնորդել այս ամփոփումները:

**NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:52-61**

<sup>52</sup>Եվ եղավ, երբ Աբրահամի ծառան այս խոսքերը լսեց, մինչև գետին երկրպագեց ՏԻՐՈՉԸ: <sup>53</sup>Եվ ծառան արձայն գարդեր ու ոսկյա գարդեր և հանդերձանք հանեց ու տվեց Ռեբեկային. նաև նրա եղբորն ու նրա մորը թանկարժեք նվերներ տվեց: <sup>54</sup>Եվ կերան ու խմեցին՝ ինքն ու այն մարդիկ, որ նրա հետ էին, և գիշերը մնացին և առավոտյան վեր կացան, ու նա ասաց. « Ինձ ճանապարհե՛ք իմ տիրոջ մոտ»: <sup>55</sup>Եվ նրա եղբայրն ու մայրն ասացին. « Թող աղջիկը մի քանի օր կամ տասը օր մեզ մոտ մնա, հետո կգնա»: <sup>56</sup>Եվ նա ասաց նրանց. « Ինձ մի՛ ուշացրեք, երբ ՏԵՐՆ հաջողել է իմ ճանապարհը. ինձ ճանապարհեցե՛ք, և ես գնամ իմ տիրոջ մոտ»: <sup>57</sup> Եվ նրանք ասացին. «Կանչենք աղջկան ու նրա բերանից լսենք»: <sup>58</sup>Եվ կանչեցին Ռեբեկային ու ասացին նրան. «Այս մարդու հետ կգնա՛ս»: Եվ նա ասաց. « Կգնամ»: <sup>59</sup>Եվ ճանապարհեցին իրենց քրոջը՝ Ռեբեկային և նրա դայակին և Աբրահամի ծառային ու նրա մարդկանց: <sup>60</sup>Եվ օրհնեցին Ռեբեկային ու ասացին նրան. «Դու մեր քույրն ես, հազարավորների ու միլիոնավորների մայր դառնաս, և քո սերունդը թող իրեն ատողների դուռը ժառանգի»: <sup>61</sup>Եվ վեր կացավ Ռեբեկան և իր աղախիները, և նստեցին ուղտերի վրա և գնացին այն մարդու ետևից. և ծառան Ռեբեկային վերցրեց ու ճանապարհ ընկավ: <sup>62</sup>Եվ Իսահակը վերադառնում էր Լահայ-րոյի ջրհորից, որովհետև հարավային երկրում էր բնակվում:

**24:52 «մինչև գետին երկրպագեց ՏԻՐՈՉԸ»** Սա երրորդ անգամ է, որ այս ծառան հանրորեն աղոթեց, արտահայտելով իր հավատքն ու երախտագիտությունն առ Աստված: Սա իրոք մի հրաշալի աստվածաշնչյան կերպար է:

**24:53** Հին աշխարհում հարստություն դիզում էին հետևյալ կերպերով՝

1. թանկարժեք մետաղների կշիռով՝ քաշով
2. գարդեղենով
3. թանկարժեք հանդերձներով
4. կերակուրներով
5. հողատարածքներով
6. նախիրներով

Ուշադրություն դարձրեք, որ ծառան այս հարստության տեսակներից մի քանիսից իր հետ բերել էր, որոնք հնարավոր էին հեշտությամբ տեղաշարժել՝

1. արծաթյա իրեր
2. ոսկե իրեր
3. հանդերձներ
4. թանկարժեք ապրանքներ

Աբրահամը հարուստ մարդ էր: Ընտանիքից ինչ-որ մեկը նրա ընտանիքի անդամ դառնալը (այսինքն Իսահակի կինը) մեծ պատիվ էր:

**24:54** Իմանալով ճաշկերույթի կարևորությունը համաձայնության գալու կամ ընկերության կապ հաստատելու հարցում, այս ճաշկերույթը ավելին էր, քան տոնակատարություն:

**24:55 «մի քանի օր, կամ տասը օր»** Սամարացիների Հնգամատյանը տալիս է «մի ամիս»:

**24:56** Ծառան ուզում է անմիջապես հեռանալ: Նա կամենում է հնարավորինս շուտ կատարել իր առաջադրանքը:

1. «Ինձ ճանապարհե՛ք իմ տիրոջ մոտ», հ. 54, BDB 1018, KB 1511, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «Ինձ մի՛ ուշացրեք», հ. 56, BDB 29, KB 34, *Piel* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. «ինձ ճանապարհեցե՛ք», նույնը ինչ #1
4. «և ես գնամ իմ տիրոջ մոտ», BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

**24:58 «Եվ կանչեցին Ռեբեկային ու ասացին նրան. «Այս մարդու հետ կգնա՞ս»: Եվ նա ասաց. «Կգնամ»** Նուզի արձանագրություններից իմանում ենք, որ աղջկա թույլտվությունը պարտադիր էր: «Կգնամ» խոսքը *Qal* ԸՂՁԱԿԱՆ է (BDB 981, KB 1371):

**24:59 «նրա դայակը»** Ծննդ. 35:8-ից իմանում ենք, որ նրա անունը «Դեբորա» էր և նա երկար տարիներ ապրեց ու ծառայեց Ռեբեկային: «Դայակ» (BDB 413, KB 416, *Hiphil* ԴԵՐԲԱՅ) տերմինը «քաշել» ԲԱՅԻՑ է (BDB 413), սա կարող է լինել բառացի կամ էլ փոխաբերություն անձնական օգնականի համար: Հ. 61-ից իմանում ենք, որ կային նաև այլ ծառաներ:

**24:60** Հրաժեշտի այս բանաստեղծությունը շատ նման է Ծննդ. 22:17-ում արձանագրված Աստծո ասած խոսքերին: Նրանք խնդրում են Աստծուն իրենց աղջկա համար, որ շատ սերունդներ և ռազմական հաղթանակներ ունենա:

**24:61** Ուղտերը հիմնականում օգտագործվեցին Ռեբեկայի համար օժիտ և նվերներ տանելու համար, իսկ տուն վերադառնալիս՝ Ռեբեկային, նրա ծառաներին և նրանց ունեցվածքը տանելու համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ.**  
<sup>63</sup>Եվ երեկոյան Իսահակը դաշտն էր դուրս եկել՝ խորհրդածելու, և իր աչքերը բարձրացրեց և նայեց, և ահա ուղտեր էին գալիս: <sup>64</sup>Եվ Ռեբեկան իր աչքերը բարձրացրեց և Իսահակին տեսավ և ուղտից իջավ. <sup>65</sup>և ասաց ծառային. «Ո՞վ է այդ մարդը, որ դաշտում դեպի մեզ է գալիս»: Եվ ծառան ասաց. «Նա իմ տերն է»: Եվ նա քողն առավ ու ծածկվեց: <sup>66</sup>Եվ ծառան Իսահակին պատմեց այն ամենը, ինչն ինքն արել էր: <sup>67</sup>Եվ Իսահակը նրան իր մոր՝ Սառայի վրանը տարավ և առավ Ռեբեկային. և սա նրա կինը դարձավ, և նա սիրեց նրան: Եվ Իսահակը մխիթարվեց իր մոր մահից հետո:

**24:62 «Լահայ-րոյ»** Այս տերմինը, որը նշանակում է «Կենդանի Աստծո ջրհորը, որն ինձ տեսնում է» (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ BDB 97 և BDB 91): Սա Ծննդ. 16:14-ում Հազարին Տիրոջ Հրեշտակի կողմից ցույց տված ջրհորի անվանումն է:

**24:63**

NASB, NKJV                                   «խորհրդածել»  
NRSV, TEV, NJB, JPSOA               «քայլել»

Սա հավանաբար երբայերեն բառ է (BDB 1001 I կամ BDB 962), Եբրայերեն Սուրբ Գրքում կիրառված է միայն այստեղ: Դրա նշանակությանը վերաբերող բազմազան տեսություններից մի քանիսն են՝

1. հետևելով Մեպտուագինտային և Վուլգատային, նշանակում է «խորհրդածել»: Եբրայերենում մի նմանատիպ տերմին կա, որը նշանակում է «խորհրդածել» (BDB 967, տես՝ Մաղմ. 105:2; 119:15,23)
2. այս բառը կարող է նշանակել «քայլելով ճնշված վիճակում ինքն իրեն քրթմնջալ» ինչպես որ հենց այս նույն վայրում Հագար արեց (գլուխ 16)
3. Օնկելոսի Թարգումն այս տերմինը թարգմանում է որպես «աղոթել»: Այս երրորդ տարբերակին հետևում է Սամարացիների Հնգամատյանը, Կիմչին, Ռաշին և Լյութերը:

**24:64 «իջավ»** Սա բառացիորեն նշանակում է «ընկավ» (BDB 656, KB 709, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Ըստ իրենց մշակույթի ընդունված և ակնկալելի էր, որ կանայք տղամարդկանց ներկայության դեպքում իջնեն իրենց կենդանու թամբից:

**24:65 «և նա քողն առավ ու ծածկվեց»** Սա նշան էր (1) Իսահակի հանդեպ հարգանքի, (2) Իսահակի հետ նշանված լինելու, կամ (3) որ նա ամուսնացած չէր:

**24:67 «Եվ Իսահակը նրան իր մոր՝ Սառայի վրանը տարավ»** Սա կարևոր էր, քանի որ Սառան դրանից երեք տարի առաջ էր մահացել և Իսահակը դեռևս սգում էր: Սառայի վրանի գեղեցկությունն ու պատիվը հրաշալի կերպ էր դիմավորելու իր հարսնացուին:

❖ **«Եվ Իսահակը մխիթարվեց իր մոր մահից հետո»** Այս համարը կարծես թե ցույց է տալիս, որ Իսահակը դեռ սգում էր իր մոր մահը և սա կարող է ազդել հ. 63-ում արձանագրված «խորհրդածել» բառի մեր մեկնության վրա:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Աբրահամը չէր ուզում, որ Իսահակը ամուսնանար քանանացի կնոջ հետ:
2. Ինչպե՞ս է երևում կամ չի երևում Աբրահամի ծառայի հավատքն այս գլխում:
3. Ի՞նչ կարող ենք ասել Լաբանի անձի մասին ըստ հ. 29բ-ի:
4. Ո՞րն է Ռեբեկայի կույս կոչվելու կարևորությունը հ. 16-ում և օրիորդ կոչվելը՝ հ. 43-ում:
5. Ինչպե՞ս է արտացոլվում Իսահակի և Ռեբեկայի հանդիպման ոգևորությունը հ. 61-67-ում:

**ԾՆՆԳՈՑ 25**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> (հետևում է MT)
Աբրահամի մահը	Աբրահամն ու Քետուրան	Աբրահամի մահը	Աբրահամի այլ սերունդները	Քետուրայի սերունդները
25:1-6	25:1-6	25:1-6	25:1-4 25:5-6	25:1-4 25:5-6
25:7-11	Աբրահամի մահն ու թաղումը 25:7-11	25:7-11	Աբրահամի մահն ու թաղումը 25:7-11	Աբրահամի մահը 25:7-11
Իսմայելի սերունդները	Իսմայելի և Իսահակի ընտանիքները		Իսմայելի սերունդները	Իսմայելի սերունդները
25:12-18	25:12-18	25:12-18	25:12-18	25:12-16 25:17 25:18
Իսահակի որդիները		Հակոբի (Բարայելի) և Եսավի (Եղովմի) մրցակցությունը	Եսավի և Հակոբի ծնունդը	Եսավի և Հակոբի ծնունդը
25:19-26 (23)	25:19-26 (23)	25:19-26 (23)	25:19-23 (23) 25:24-26	25:19ա 25:19բ-23 (23) 25:24-28
25:27-34	25:27-28 Եսավը ծախում է իր անդրանկությունը 25:29-34	25:27-28 25:29-34	25:27-28 25:29-30 25:31 25:32 25:33ա 25:33բ-34	Եսավը թողնում է իր անդրանկությունը 25:29-34



# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրը մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 25:1-6

<sup>1</sup>Այն ժամանակ Աբրահամը նորից կին առավ, և նրա անունը Քետուրա էր: <sup>2</sup>Եվ նա Չեմբանին, Հեկսանին, Մադանին, Մադիանին, Հեսրոնին և Սովեին ծնեց նրա համար: <sup>3</sup>Եվ Հեկսանը ծնեց Սաբային և Դեդանին. Դեդանի որդիներն էին Ասուրիմը, Լատուսիմը և Լվոմիմը, <sup>4</sup>Մադիանի որդիները՝ Գեփան, Ափերը, Ենովբը, Աբիդան և Ելդագան էին. սրանք բոլորը Քետուրայի որդիներն էին: <sup>5</sup>Աբրահամն իր ամբողջ ունեցվածքը տվեց Իսահակին. <sup>6</sup>բայց Աբրահամի հարճերի որդիներին Աբրահամը պարգևներ տվեց և նրանց՝ իր որդի Իսահակի մոտից, քանի դեռ կենդանի էր, դեպի արևելք՝ արևելյան երկիրն ուղարկեց:

**25:1 «Այն ժամանակ Աբրահամը նորից կին առավ, և նրա անունը Քետուրա էր»** Հրեական ավանդույթն ասում է, որ սա Հազարի մեկ այլ անունն է (տես՝ հ. 12), սակայն «հարճ» (BDB 811) բառի հոգնակին, որ գտնվում է հ. 6-ում, կարծես թե հակասում է սրան: Լյութերը ենթադրում է, որ Աբրահամը այսպես վարցեց, որպեսզի կատարի Ծննդ. 17:4-ը: Հայտնի չէ, թե արդյոք Աբրահամը ամուսնացել էր Սառայի հետ նախքան Սառայի մահը, թե դրանից հետո: Ժամանակագրությունը ավելի առանձնահատուկ է արևմտյան պատմագրությանը, քան արևելյան կամ աստվածաշնչյան պատմագրությանը: Քետուրա անունը (BDB 882) նշանակում է «օժանդակով օժված» կամ «պարուրված խնկի ծիտով»:

**25:2 «և նա ծնեց նրա համար»** Սա արաբական ցեղերի լավ ցանկ է: Ամենացայտուն կերպով նշվածը այստեղ Մադիանն է (տես՝ Ծննդ. 36:35; 37:28; Ելից 2:15,16; 3:1; 18:1; Թվոց 25:15; 31:3,8,9; Դատ. 6-8): Այս արաբական ցեղերի գերագանց աղյուսակը կարող էք գտնել Լյապոլդի Ծննդոցի մեկնաբանության գրքում՝ հատոր 2, էջ՝ 690 /Leupold’s commentary on Genesis/:

**25:4 «Մադիանի որդիներն էին»** Համար 4-ը թվարկում է այս ամենահայտնի ցեղի որդիներին: Այս ցեղի մասին հետագայում մենք լսում ենք Մովսեսի աներ՝ Հոթորից, որը Կենեցիների կամ Մադիանացիների ցեղից էր:

**25:6 «բայց Աբրահամի հարճերի որդիները»** 1 Մնացորդաց 1:32-ը Քետուրայի նաև կոչում է հարճ:

❖ **«և նրանց՝ իր որդի Իսահակի մոտից դեպի արևելք՝ արևելյան երկիրն ուղարկեց»** Ինչպես որ ավելի շուտ Աբրահամը Հազարի որդուն՝ Իսմայելի հեռու ուղարկեց (դեպի Եգիպտոս). այժմ էլ հեռու է ուղարկում Քետուրայի որդիներին (Քանանի արևելյան կողմը): Նուզի տախտակներից գիտենք, որ սա օրինապես ընդունված կերպ էր ցույց տալու հոր կողմից ժառանգության բաշխումը և լուծելու հարճերից բազմաթիվ օրինական որդիներ ունենալու հարցը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 25:7-11**

<sup>7</sup>Եվ սրանք են Աբրահամի կյանքի տարիների օրերը, որ ինքը ապրեց՝ հարյուր յոթանասունհինգ տարի: <sup>8</sup>Եվ Աբրահամն ավանդեց իր հոգին ու մեռավ խոր ծերության մեջ, մի ձեր մարդ՝ իր օրերից կշտացած, և իր ժողովրդին միացավ: <sup>9</sup>Եվ նրա որդիները՝ Իսահակն ու Իսմայելը թաղեցին նրան Մաքփելայի քարայրում, որ քեզտացի Սահառի որդի Եփրոնի արտում Մամբրեի դիմաց է: <sup>10</sup>այն արտում, որ Աբրահամը Քեռի որդիներից էր գնել. այնտեղ թաղվեցին Աբրահամը և նրա կին Սառան: <sup>11</sup>Եվ եղավ, որ Աբրահամի մեռնելուց հետո Աստված օրհնեց նրա որդի Իսահակին. և Իսահակը բնակվեց Լահայ-րոյի ջրհորի մոտ:

**25:7 «Եվ սրանք են Աբրահամի կյանքի տարիների օրերը»** Աբրահամի կյանքի տևողությունը 175 տարի էր, որը համարվում էր կատարյալ տարիք:

**25:8 «Եվ Աբրահամն ավանդեց իր հոգին ու մեռավ խոր ծերության մեջ, մի ձեր մարդ՝ իր օրերից կշտացած»** Այս նույն արտահայտությունը կիրառվում է Իսմայելի համար 25:17-ում, Իսահակի համար՝ 35:29-ում, և Հակոբի համար՝ 49:33-ում: Սա 15:15-ում տված ՅԱՀՎԵԻ խոստման իրականացումն էր: Մահը մի բան չէր, որից պետք էր վախենալ, այլ երկար կյանքի վերջում սպասվող երևույթ (տես՝ Հոր 42:17; 1 Մնաց. 23:1; 29:28; 2 Մնաց. 24:15):

❖ **«և իր ժողովրդին միացավ»** Քանի որ Աբրահամը բառացիորեն չի թաղվել իր նախնիների հետ (տես՝ հ. 9), սա պետք է որ վերաբերի մահից հետո կյանքի մասին նրանց աշխարհայացքին: Սա կրկնվող արտահայտություն է Ծննդոցում (տես՝ 25:8,17; 35:29; 49:29,33): Մահից հետո կյանքի վերաբերյալ գիտակցական գոյր, որտեղ ներկա էին ընտանիքի անդամներն ու ընկերները, ինչ-որ առումով գոյություն ունեցող գաղափար էր: ԻՆՆԷ և ՀՆ-ում տվյալ ոլորտում այս հատուկ հայտնության լույսը շատ ավելի է մոռալ է լուսավորված (տես՝ Սաղմ. 16:9-11; Հոր 19:25-27; Ես. 26:19; Դան. 12:2-3): Տես *Աստվածաշնչի Խորթին Աստվածները*, էջ՝ 127-129 /*The Hard Sayings of the Bible*, pp.127-129/: Եբր. 11:13-16-ից իմանում ենք, որ Աբրահամը փնտրում էր մի քաղաք, որի շինարարը և արարիչը Աստված է:

Տես Հատուկ Թեմա. Որտե՞ղ են մեռելները, 15:15-ում:

**25:9 «նրա որդիները՝ Իսահակն ու Իսմայելը թաղեցին նրան»** Հետաքրքիր է, որ Իսահակն ու Իսմայելը ինչ-որ կերպ վերամիավորվեցին իրենց հոր թաղմանը: Իսմայելը 21:14-ում ուղարկվել էր հեռու, սակայն ըստ երևույթին նրանց փոխհարաբերությունը վերահաստատվել էր իրենց հոր մահվան ժամանակ: Նույն բանը կատարվելու էր Եսավի և Հակոբի հետ՝ իրենց հոր Իսահակի մահվան ժամանակ (տես՝ Ծննդ. 35:29):

❖ **«Մաքփելայի քարայրը»** Մենք գիտենք, որ այս վայրը Աբրահամը գնել էր հատուկ որպես գերեզմանատեղ (տես՝ Ծննդ. 23:17-18) Սառայի համար: Այն նաև դառնալու էր վերջին հանգրվանատեղ Նահապետի ընտանիքի բոլոր անդամների համար:

**25:11 «Իսահակը բնակվեց Լահայ-րոյի ջրհորի մոտ»** Այս վայրը (BDB 91) նշվում է ավելի վաղ Հազարի փախուստի հետ կապված պատմության մեջ (տես՝ Ծննդ. 16:14; 24:62): Ըստ երևույթին այն հենց Բերսաբեի հարավային կողմում էր՝ դեպի Եգիպտոս տանող գլխավոր ճանապարհի վրա:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 25:12-18**

<sup>12</sup>Արդ, սրանք են Աբրահամի որդի Իսմայելի սերունդները, որին Սառայի եգիպտացի աղախին Հազարը ծնեց Աբրահամի համար: <sup>13</sup>Եվ Իսմայելի որդիների անունները սրանք են՝ իրենց անուններով և իրենց ծնունդներով՝ Իսմայելի անդրանիկը՝ Նաբեթը, հետո Կեդար, Ադբեել և Մափսամ, <sup>14</sup>Մասմա, Դումա և Մասսե, <sup>15</sup>Քողաղ և Թեմա, Հետուր, Նափես և Կեդմա: <sup>16</sup>Սրանք են Իսմայելի որդիները, և սրանք են նրանց անուններն իրենց վրաններով և իրենց գյուղերով՝ տասներկու իշխաններ էին՝ ըստ իրենց ազգերի: <sup>17</sup>Եվ սրանք են Իսմայելի կյանքի օրերը՝ հարյուր երեսուներեք տարի. և իր հոգին ավանդեց և մեռավ և իր ժողովրդին խառնվեց: <sup>18</sup>Եվ նրանք բնակվեցին Եվլայից մինչև Սուր, որ Եգիպտոսի դիմաց՝ Ասորեստանի ճանապարհի վրա է. նա ապրեց բոլոր իր եղբայրների առջև:

**25:12 «Արդ, սրանք են սերունդների ազգաբանությունը»** Սա Ծննդոց գրքին առանձնահատուկ արտահայտություն է, որը օգտագործվում է բազմաթիվ անգամներ, որպեսզի գրքում տարբեր մարդկանց կյանքի պատմությունները իրարից բաժանի: Նրանք, ովքեր մակերեսորեն են կապված

ուխտի խոսման հետ, ապա յաս հաստվածում շատ ավելի քիչ տեղ են զբաղեցնում (օրինակ՝ Իսմայելը), քան նրանք, ովքեր յուրահատուկ կերպով կանչված են կրելու խոստացված գալիք Մեսիայի սերմը (տես՝ Ծննդ. 5:1; 6:9; 10:1; 11:10,27; 25:12,19; 36:1,9; 37:2):

**25:13 «Կեդար»** Սա Իսմայելի ամենամեծ ցեղն է (BDB 871, Ես.21:16-17; 42:11; Երեմ.2:10; 49:28; Սաղմ.120:5): Իսմայելի ցեղերը կարծես թե բնակեցված էին Քետուրայի որդիների ցեղերից դեպի արևելք և հարավ:

**25:15 «Թեմա»** Սա մի օագիս է Արաբիայի հյուսիս-արևելքում, որը հետագայում դարձավ լուսնի աստվածուհու՝ *Չինի* պաշտամունքի վայրը: Տես՝ Հատուկ Թեմա 12:4-ում: «Թեմա» տերմինը նշանակում է «անապատ» (BDB 1066):

**25:16 «տասներկու իշխանները»** Սա կարծես թե Ծննդ. 17:20-ի իրականացումն է: Եբրայերեն այս տերմինը մի պատվելի տիտղոս է առաջնորդների համար, չիշտ ինչպես ժամանակակից Շեյխ տերմինը արաբական ցեղերում: «Տասներկու» թիվը կարծես թե զավակներ ունենալու ամենաիդեալական թիվն է. Նաքովրը նույնպես ուներ տասներկու որդի (տես՝ Ծննդ. 22:20-24), Իսմայելը ունեցավ տասներկու իշխաններ (տես՝ Ծննդ. 17:20; 25:16), Եսավը ունեցավ տասներկու ցեղեր (տես՝ Ծննդ. 36:15-19), այստեղ և հետագայում Հակոբը ունենալու էր տասներկու որդի (տես՝ Ծննդ. 35:22): Հավանաբար սա կատարյալ կազմություն ներկայացնող թիվ է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹԻՎԸ**  
**SPECIAL TOPIC: THE NUMBER TWELVE**

Տասներկու թիվը միշտ էլ եղել է կարգուկանոնի խորհրդանշական (տես՝ Հատուկ Թեմա. Սուրբ Գրքում առկա սիմվոլիկ թվերը) թիվը՝

Ա. Աստվածաշնչից դուրս

1. Կենդանակերպի տասներկու նշանները
2. տարվա տասներկու ամիսները

Բ. ՀԿ-ում (BDB 1040 ավելացրած 797)

1. Հակոբի որդիները (հրեական ցեղերը)
2. արտացոլվում են՝
  - ա. զոհասեղանի տասներկու սյուների մեջ՝ Ելից 24:4
  - բ. քահանայապետի լանջապանակի տասներկու քարերի մեջ (յուրաքանչյուրը մի ցեղի համար)՝ Ելից 28:21
  - գ. խորանի սրբարանում տասներկու կտոր հացի մեջ՝ Ղևտ. 24:5
  - դ. Քանան ուղարկված տասներկու լրտեսները (ամեն ցեղից մեկը)՝ Թվոց 13
  - ե. Կորխի ապստամբության մեջ տասներկու զավագանները՝ Թվոց 17:2
  - զ. Հեսուի տասներկու քարերը՝ Հեսու 4:3,9,20
  - է. Սողոմոնի կառավարման շրջանների տասներկու կառավարիչները՝ 3 Թագ. 4:7
  - զ. Եղիայի կողմից ՅԱՀՎԵԻ համար կառուցված զոհասեղանի տասներկու քարերը՝ 3 Թագ. 18:31

Գ. ՆԿ-ում՝

1. ընտրված տասներկու առաքյալները
2. հացի տասներկու կողովները (յուրաքանչյուր առաքյալի համար մի հատ)՝ Մատթ. 14:20
3. տասներկու գահերը, որոնց վրա նստում են տասներկու աշակերտները (վերաբերում է Իսրայելի տասներկու ցեղերին)՝ Մատթ. 19:28
4. Հիսուսին փրկելու համար հրեշտակների տասներկու լեզեոնները՝ Մատթ. 26:53
5. Հայտնության խորհրդանիշը՝
  - ա. 24 երեցները 24 գահերի վրա՝ 4:4
  - բ. 144,000 (12x12x1000)՝ 7:4; 14:1,3
  - գ. կնոջ թագի վրա տասներկու աստղերը՝ 12:1
  - դ. տասներկու դարպասները, տասներկու հրեշտակները, որ արտացոլում են տասներկու ցեղերին՝ 21:12

ե. Նոր Երուսաղեմի հիմքի տասներկու քարերը, որոնց վրա գրված են տասներկու Առաքյալների անունները՝ 21:14  
 գ. տասներկու հազար ասպարեզր (նոր քաղաքի՝ Նոր Երուսաղեմի չափսը)՝ 21:16  
 է. պարիսպը 144 կանգուն՝ 21:21  
 ը. Նոր Երուսաղեմում ծառերը տասներկու տեսակ պտուղներով (յուրաքանչյուրը մի ամսվա համար)՝ 22:2:

**25:17 «իր հոգին ավանդեց»** «Ավանդեց/փչեց» տերմինը (բառացի՝ «արտաշնչել», BDB 157, KB 184, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Ծննդ. 6:17; 7:21; 25:8,17; 35:29) հիմնականում կիրառվել է Ծննդոցում, Թվոցում, և բանաստեղծական տեքստերում: Դրա հիմնական նշանակությունը դատարկվել է (այսինքն՝ մարմինը շնչից դատարկել):

**25:18** Այս շրջանը վերահսկում էր Եգիպտոսից դեպի Ասորեստան՝ Բաբելոն տանող քարավանների ճանապարհը: Այն հարմար էր քոչվոր, վրանաբնակ մարդկանց համար:

❖ **«նա ապրեց բոլոր իր եղբայրների առջև»** «Առջև» խոսքն (BDB 815-819) ունի լայն ստուգաբանություն: Հիմնական նշանակությունն է «երես», «ներկայություն» կամ այլաբանորեն «առջև»: Այն ավելի վաղ օգտագործվել էր այս համարում, որտեղ նշանակում էր «դիմացը» կամ «դեմատղեմ», որպես աշխարհագրական տեղանք, սակայն այստեղ արտահայտում է այլ մարդկանց հակառակ՝ դեմատղեմ:

Սա Ծննդ. 16:12-ի իրականացումն է, որն ավելի շատ նկարագրում է Իսմայելի սերունդների անհյուրընկալ, քոչվոր ապրելակերպը: Այս արտահայտությունը բազմաթիվ կերպերով է մեկնաբանվել: Նույնիսկ հնարավոր է, որ սա վերաբերում է իր հարևանությամբ ապրող բարեկամների դեմ ռազմական արշավներին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 25:19-26**

<sup>19</sup>Եվ Աբրահամի որդի Իսահակի ծնունդները սրանք են. Աբրահամը ծնեց Իսահակին: <sup>20</sup>Եվ Իսահակը քառասուն տարեկան էր, երբ Միջագետքից ասորի Բաթուելի աղջկան, ասորի Լաբանի քույր Ռեբեկային իրեն կին առավ: <sup>21</sup>Եվ Իսահակն աղաչեց ՏԻՐՈՉՆ իր կնոջ համար, որ չբեր էր. և ՏԵՐԸ լսեց նրա աղաչանքը. և նրա կին Ռեբեկան հղիացավ: <sup>22</sup>Եվ մանուկները խաղում էին նրա արգանդում, և նա ասաց. «Եթե այսպես է, ինչո՞ւ այս բանը եղավ ինձ»: Եվ գնաց ՏԻՐՈՉԸ հարցնելու: <sup>23</sup>Եվ ՏԵՐՆ ասաց նրան. «Երկու ազգեր կան արգանդիդ մեջ, և երկու տարբեր ժողովուրդներ են բաժանվելու քո որովայնից. և այդ ժողովուրդներից մեկը կյուսից գորավոր կլինի, և մեծը կձառայի փոքրին»: <sup>24</sup>Եվ երբ նրա ծննդաբերության օրերը հասան, ահա երկվորյակներ էին նրա արգանդում: <sup>25</sup>Առաջինը ելավ կարմրագույն, ամբողջ մարմինը մազոտ էր վերարկուի նման. և նրա անունը Եսավ դրեցին: <sup>26</sup>Նրանից հետո ելավ նրա եղբայրը, որ ձեռքով բռնել էր Եսավի գարշապարից, և նրա անունը Հակոբ դրեցին. Իսահակը նրանց ծնվելու ժամանակ վաթսուն տարեկան էր:

**25:19 «և Իսահակի ծնունդները սրանք են»** Սա հ. 12-ում քննարկված նույն արտահայտությունն է, սակայն այստեղ առնչվում է ուխտի մեջ եղողներին և հետևաբար, ավելի ընդարձակ տեսքով:

❖ **«Աբրահամի որդի. Աբրահամը ծնեց Իսահակին»** Սա մի անսովոր կրկնվող սահմանում է: Ռաշին ասում է, որ այստեղ կրկնվում է այս հայտարարությունը, որպեսզի ցրի այն ասեկոսենները, թե Իսահակը Աբիմելեքի որդին էր (Մառայից): Ռաբինները նույնպես ասում են, որ Իսահակը դեմքով շատ նման էր Աբրահամին և դա կարող էր ցրել բոլոր կասկածներն ու ասեկոսենները, որոնք արդեն իսկ սիգր էին առել Ծննդ. 20:1-18ի դեպքից հետո:

**25:20 «Իսահակը քառասուն տարեկան էր, երբ Ռեբեկային իրեն կին առավ»** Երբ համեմատում ենք Ծննդ. 25:20-ը հ. 26-ի հետ, ակնհայտ է դառնում, որ Իսահակը վաթսուն տարեկան էր, երբ ծնվեց Հակոբը:

❖ **«Միջագետքից ասորի Բաթուելը /անգլ.՝ Փաղան-արամից Սիրիացի Բաթուելը/»** «Սիրացի» բառը հաճախ թարգմանվում է «հայ» (BDB 74): Այն կարծես թե Խառան քաղաքի շրջակայքում գտնվող

մի տարածք էր: Փաղան-արամ (BDB 804 և BDB 74) նշանակում է «Արամի դաշտերը», որը մատնանշում է միևնույն տարածաշրջանը, որը նշված է 24:10-ում՝ «Արամ-նահարայիմ»:

**25:21 «Եվ Իսահակն աղաչեց ՏԻՐՈՋԸ իր կնոջ համար, որ չբեր էր»** Հիմնական երկու աստվածաբանական պատճառներ կային, որ նահապետներն ունեին չբեր կանայք՝ (1) որպեսզի Աստված ցույց տար իր հոգածությունը, և (2) ցույց տալու, որ դա մարդկային ջանքերով չէր ու արժանիքներով, այլ Աստծո շնորհքով: Ռաբբիներն օգտագործում են այս տեքստը շեշտադրելու բարեխոսական աղոթքի գորությունը:

**25:22 «և մանուկները խաղում էին /անզվերենում՝ պայքարում էին/ նրա արգանդում»** Սա խիստ ԲԱՅ է (BDB 954, KB 1285, *Hithpolel* ԱՆԿԱՏԱԲ): Թարգմանվում է (NIDOTTE, հատոր՝ 3, 1191)

1. *Qal* արմատով որպես ջարդել, ճզմել, բռնանալ
2. *Niphal* արմատով որպես ճաքել, կոտրել
3. *Hiphil* և *Piel* արմատներով՝ կտորների փշրվել
4. *Polel* արմատով՝ որպես ճնշել
5. *Hithpolel* արմատով՝ մեկը մյուսին ջարդել

Սա մարգարեական կանխատեսություն էր, որ կապված է հ. 23-ի հետ:

❖ **«և նա ասաց. «Եթե այսպես է, ինչո՞ւ այս բանը եղավ ինձ»** Շատ քննարկումներ են եղել այս դարձվածքային, բազմիմաստ արտահայտության շուրջ (բառացի՝ «ինչո՞ւ հենց ես»): Առկա տեսություններից են՝

1. Նա հարցնում էր, թե ինչու էր Աստծո հրաշքով հղիացել, իսկ հետո էլ այդպիսի բարդությունների մեջ ընկել. այդ ժամանակ նա դեռ չգիտեր, որ իր մեջ կրում էր զույգ երեխաների:
2. Նրա հղիությունը իրեն մեծ ցավ էր պատճառում և նա մտածում էր, թե ինչու էր ընդհանրապես խնդրել դրա համար:
3. Այդպիսի խնդրահարույց հղիության պատճառով նա բառացիորեն անհանգստանում էր իր կյանքի համար:
4. Նա վախենում էր, որ այդ պայքարները շարունակվելու էին իր ծննդաբերելուց հետո էլ: Անհանգիստ հղիությունը նշան էր գալիք անհանգստության համար:

❖ **«Եվ գնաց ՏԻՐՈՋԸ հարցնելու»** Սա նույնպես բազմաթիվ քննարկումների պատճառ է հանդիսացել մեկնաբանների համար: Նրանք հարցնում են, թե ուր է գնացել և ում է հարցրել: Ակնհայտ է, որ տեքստը չի արձանագրում այդ պատասխանները: Ոմանք պնդում են, որ նահապետական պաշտամունքների համար մի ինչ-որ վայր կար: Շատ ենթադրություններ կան այն մասին, թե ում հարցրեց Ռեբեկան՝

1. Լյուծերն ասում է, որ նա հարցրեց Սեմին
2. Ռաբբիներն ասում են, որ խոսեց Մելքիսեդեկի հետ
3. ուրիշներն էլ պնդում են, որ խոսեց Աբրահամի հետ
4. մինչ մյուսներն էլ հավատում են, որ նա խոսեց Իսահակի հետ
5. հավանաբար դա պարզապես անձնական աղոթք էր ընտանեկան զոհասեղանի մոտ (զույգ և զոհաբերությամբ)

Հնարավոր է, որ այս տեքստը և 28:22-ը վերաբերում են սրբավայրերում սուրբ սպասարկողներին (այսինքն՝ քահանաներին. Ռոլանդ դեՎոքս, *Հնագույն Իսրայելը*, հատոր 2, էջ՝ 345 /Roland deVaux, *Ancient Israel*):

**25:23 «Եվ ՏԵՐՆ ասաց նրան»** Սա մի չափազանց կարևոր բանաստեղծական խոսք է Տիրոջից ուղղված Ռեբեկային: Աստված արդեն իսկ Իսահակին երեխաներ էր խոստացել (տես՝ Ծննդ. 17:19; 21:12): Այս մարգարեությունը հատկապես ընդգծում է, թե երեխաներից որն է շարունակելու ընտանեկան ճյուղը: Սա մեջբերված է Հռոմ. 9:10-12-ում: Ինչ-որ մեկը հնարավոր է հարցնի, թե ինչու Իսահակը չհետևեց Տիրոջից տրված այս խոսքին, սակայն ակնհայտ է, որ Ռեբեկան կիսվեց այս մասին նրա հետ, երբ նա փորձում էր գրուխ 26 և 27-ում Եսավին դարձնել ժառանգորդը»:

❖ **«մեծը կժառայի փոքրին»** Նահապետների չբեր կանանց պես էլ, այս արտահայտությունը ցույց է տալիս, որ խոստացված սերունդը սեմական ժառանգության իրավունքների համեմատ չի սերվելու (տես՝ Հռոմ. 9:10-12):

**25:25 «առաջինը ելավ կարմրագույն»** Այս տերմինը (*admoni*, BDB 10, «կարմիր») կապված է Ծննդոցում արձանագրված «փռչի» տերմինի հետ (BDB 9), որից Աստված ստեղծեց մարդուն (տես՝ Ծննդ. 2:7)՝ «Ադամին», որը ըստ երևույթին նույնպես ունի «կարմիր» հասկացության արմատը (BDB 10): Բառախաղը շարունակվում է հ. 30-ում, որտեղ կարմիր ապուրը (BDB 10) կապված է «Եդովմ» անվան հետ (BDB 10), որից էլ ունենք այն ազգը, որ սերվելու էր Եսավից:

❖ **«մազոտ էր վերարկուի նման . և նրա անունը Եսավ դրեցին»** «Մազոտ» տերմինը (BDB 972) շատ նման է հնչում «Սեիր» տերմինին (BDB 973), որը Եդովմի ավելի հին անունն է: Այստեղ կրկնակի բառախաղ է «կարմիր» և «մազոտ» և «Եսավ» ու «Եդովմ» բառերի միջև:

Երեխայի վերաբերյալ մազոտ ու կարմիր երբայերեն այս նկարագրությունը հնարավոր է չի փոխանցում ճիշտ նշանակությունը մերօրյա ընթերցողներին: Սա ընդհանրապես չի գրվել բացասական իմաստով: «Մազոտ» տերմինը (BDB 12) վերաբերում էր գեղեցիկ, արտահայտիչ հանդերձին (օրինակ՝ Հեսու 7:21,24 կամ մարգարեի թիկնոցը, տես՝ 3 Թագ . 19:13,19; 4 Թագ . 2:8,13,14):

**25:26 «Նրանից հետո ելավ նրա եղբայրը, որ իր ձեռքով բռնել էր Եսավի զարշապարից, և նրա անունը Հակոբ դրեցին»** Հակոբ անունը (BDB 784) կապված է «կրունկ» (BDB 784) բառի հետ: Ովսեա 12:3-ից և Ծննդ. 27:36-ում Եսավի մեկնությունից մենք հասկանում ենք, որ Հակոբ անունը զարգացել և դարձել է «գրավող» կամ «զավթող» (միևնույն ԲԱՅԻՑ և ԱԾԱԿԱՆԻՑ, BDB 784): Եվ միայն տարիներ անց, Հաբոկի ջրանցքի մոտ Աստծո հետ հակամարտելուց հետո, նրա անունը պետք է փոխվեր և դառնար «Իսրայել» (տես՝ Ծննդ. 32:28) և ենթադրվում է նաև իր բնավորությունը:

❖ **«Իսահակը նրանց ծնվելու ժամանակ վաթսուն տարեկան էր»** Պետք է նշել, որ նա քսան տարի հավատքով սպասեց իր խոստացված զավակին: Աստված ինչպես որ ստուգեց Աբրահամին նման ճանապարհով էլ ստուգում էր Իսահակին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 25:27-34**

<sup>27</sup>Եվ մանուկները մեծացան . և Եսավ հմուտ որսորդ՝ դաշտի մարդ դարձավ, իսկ Հակոբը պարզ մարդ էր և բնակվում էր վրանների մեջ: <sup>28</sup>Եվ Իսահակը սիրում էր Եսավին, որովհետև նրա որսից էր ուտում, իսկ Ռեբեկան Հակոբին էր սիրում: <sup>29</sup>Մի օր Հակոբը ապուր էր եփում, Եսավը դաշտից եկավ՝ սովից թուլացած: <sup>30</sup>Եվ Եսավն ասաց Հակոբին. «Խնդրում եմ, այդ կարմրավուն ապուրից տո՛ւր ուտեմ, որովհետև թուլացել եմ»: Այս պատճառով նրա անունը Եդովմ դրեցին: <sup>31</sup>Եվ Հակոբն ասաց. «Ծախի՛ր ինձ քո անդրանկությունը»: <sup>32</sup>Եվ Եսավն ասաց. «Ահա ես մահվան դուռն եմ հասել, և իմ ինչի՞ն է պետք անդրանկությունը»: <sup>33</sup>Եվ Հակոբն ասաց. «Այսօր երդվի՛ր ինձ»: Եվ նա երդվեց նրան ու իր անդրանկությունը ծախեց Հակոբին: <sup>34</sup>Եվ Հակոբը Եսավին հաց ու ոսպի ապուր տվեց, և նա կերավ ու խմեց և վեր կացավ, գնաց . այսպես Եսավն անարգեց իր անդրանկությունը:

**25:27 «Եվ մանուկները մեծացան . և Եսավ հմուտ որսորդ՝ դաշտի մարդ դարձավ, իսկ Հակոբը պարզ մարդ էր և բնակվում էր վրանների մեջ»** Այս հատվածը կենտրոնանում է այն փաստի վրա, որն նրանք շատ տարբեր էին իրենց տեսակով: Եսավը բավարարվում էր տնից հեռու գտնվելով, իսկ Հակոբը՝ տանը գտնվելով: Հակոբն էր այն անձը, որ իրականացրեց քոչվոր, նահապետական ֆիզուրի նորմալ ակնկալիքները:

«Պարզ» /անզվերենում՝ խաղաղ, հանգիստ/ տերմինը (NKJV – «հանդարտ», NRSV և TEV «հանգիստ») իրականում նշանակում է «ամբողջական» (BDB 1020): Այստեղ կարծես թե այս տերմինը նշանակում է ամբողջական, նորմալ կամ սովորական քոչվոր առաջնորդ: Այս նույն ԱԾԱԿԱՆԸ կիրառվում է նկարագրելու Հոբի կատարելությունը (տես՝ 1:1,8; 2:3; 8:20; 9:20,21,22; նաև նկատի ունեցեք՝ Սաղմ. 37:37; Առակ. 29:10):

**25:28 «Եվ Իսահակը սիրում էր Եսավին, որովհետև նրա որսից էր ուտում»** Իսահակը հազիստ մարդ էր, խաղաղասեր անհատ և հնարավոր է, որ նրա որդի Եսավը այդ պատճառով էր այնպիսին, ինչպիսին իր հայրը չէր: Չարմանալի է, որ Իսահակի սիրելի որդին Եսավն էր, երբ ակնհայտորեն նա գիտեր Ծննդ.25:23 Աստծուց տրված խոսքը:

❖ «**իսկ Ռեբեկան Հակոբին էր սիրում»** Այս նախընտրությունը՝ կողմնակալությունը, պատճառ էր հանդիսանալու ընտանիքում մեծ խնդիրների, ինչպես միշտ է այդպես լինում: Սակայն կարծես թե Ռեբեկան փորձում էր հ. 23-ի աստվածային խոստումից կառչել:

**25:29** Հետաքրքիր է, որոյո՞ք այս պատմությունը կանխամտածված էր և կրկնվել էր: Արոյո՞ք Հակոբը առիթ էր փնտրում այսպիսի իրավիճակի համար: «Եփում էր» տերմինի կիրառությունը (բառացի՝ «եռացնում էր», BDB 267, KB 268, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) կարող է լինել որպես ակնարկ: Այս տերմինը պարբերաբար նշանակում է կանխամտածել ինչպես ունենալ այն իրավունքները, որոնք օրինապես իրենցը չեն (NIDOTTE, հատոր 1, էջ՝ 1094):

Ըստ երևույթին այս ճաշը պատրաստվում էր հիմնական ճամբարից որոշակի հեռավորության վրա: Այդ առումը կոչվում էր՝

1. «ապուր», հ. 29, BDB 268, մի ափսե եփած ոսպ՝ լոբեղեն, տես՝ 4 Թագ. 4:38
2. «կարմիր շիլա», հ. 30, BDB 10
3. «ոսպի ապուր», հ. 34, BDB 727, տես՝ 2 Թագ. 17:28; 23:11; Եզեկ. 4:9

**25:30** «**Խնդրում եմ, այդ կարմրավուն ապուրից տո՛ւր ուտեմ, որովհետև թուլացել եմ»** Սա շեշտադրված՝ խիստ բառ է «ուտել» տերմինի համար: Բառացի նշանակում է «կուլ տամ» (BDB 542, KB 533, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Հաստատ Եսավը սովամահ լինելու աստիճան վատ չէր, սակայն նա հոգնած էր (BDB 746, տես՝ 2 Օր. 25:18; Դատ. 8:4-5): Սա այն առաջին ակնարկող խոսքերից մեկն է, որ ցույց է տալիս, որ Եսավը վատ մարդ չէր, այլ պարզապես աշխարհիկ մտածելակերպ ուներ (տես՝ *Աստվածաշնչի խոսքին խոսքերը*, էջ՝ 347-348 /*Hard Sayings of the Bible*): Հավատքի հետ կապված կամ ընտանիքում կենցաղային պատասխանատվությունները իր համար կարևոր չէին:

**25:31,33** Հակոբն ասաց. «Առաջինը ծախի՛ր ինձ քո անդրանկությունը . . . երդվի՛ր ինձ»:

1. «ծախի՛ր», BDB 569, KB 581, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «երդվի՛ր», BDB 989, KB 1396, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ակնհայտ է, որ Հակոբը օգտվեց Եսավի տկար լինելու առիթից: Հարցն այն է, թե դա տեղի ունեցավ՝ (1) մարգարեության պատճառով (տես՝ 25:23), (2) ընտանիքի բարեկեցության պատճառով, թե (3) իր շահերի համար:

**25:32** «**Ահա ես մահվան դուռն եմ հասել, և իմ ինչի՞ն է պետք անդրանկությունը»** Սա հիմնականում երեք տարբեր կերպով է մեկնաբանվել՝ (1) որպես չափազանցություն, (2) որ նա իսկապես մտածում էր, որ կմեռնի (BDB 559, KB 562, *Qal* ԱՆՈՐՈՇ) իր երիտասարդ տարիքում կամ (3) մեկ ուրիշ օրինակ է իր հոգևոր բաների հանդեպ ունեցած անհոգության: Նույնի տախտակներից միևնույն ժամանակաշրջանից հասկանում ենք, որ անդրանկության իրավունքի փոխանցումը օրինապես հնարավոր էր: Մենք նաև տեսնում ենք, որ դա մեծ տարածում գտած երևույթ էր, քանի որ արգելվում էր 2 Օրինաց 21:15-17-ում: Հետագայում Ռուբենը պետք է փոխարինվեր Հուդայով: Հնարավոր է Հակոբը անպատշաճ կերպով է հետևում հ. 23-ի աստվածային պատվերին: Դժվար է կարդալ Հակոբի միտքը այս պատմություններից, քանի որ հաճախ նա իրեն դրսևորում է որպես անկեղծ, սակայն շահագործող անձ:

**25:34** Այս համարը, որը նկարագրում է Եսավի գործողությունները, կարող է լինել իր մեկուսացող և հակասոցիալական անհատականության նկարագրություն՝

1. «նա կերավ», BDB 37, KB 46, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. «նա խմեց», BDB 1059, KB 1669, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
3. «վեր կացավ», BDB 877, KB 1086, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. «զնաց /իր ճանապարհը/», BDB 102, KB 117, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
5. «անարգեց /իր անդրանկությունը/», BDB 102, KB 117, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

❖ «**այսպես Եսավը անարգեց իր անդրանկությունը»** ԲԱՅԸ (BDB 102, KB 117, *Qal* ԱՆԿԱՏԱՐ), արտահայտում է «անարժեք համարել» իմաստը կամ նույնիսկ «արհամարանքով վերաբերվել»: Ռաբիները Եսավին նկարագրում են որպես շատ չար անձնավորություն: Եբրայեցիների 12:16 ցույց է տալիս նրան որպես հոգևորապես անհաս մարդու: Նա իր հոգևոր և ընտանեկան կյանքը շատ թեթև էր գնահատում՝ արհամարհում էր:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտոդոլոգիայի մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է ասում հ. 8-ը հնում ինչպիսի՞ն էր մարդկան տեսակետը մահվան վերաբերյալ:
2. Ինչո՞ւ էին նահապետների կանայք չբեր:
3. Ինչո՞վ է այդքան կարևորվում հ. 23-ը:
4. Ո՞րն է հ. 25-ում առկա տարածված ստուգաբանությունը:
5. Կարո՞ղ են մենք իմանակ Եսավի և Հակոբի հոգեբանական շարժառիթները և բնավորության գծերը: Ինչպե՞ս:
6. Թ՛վարկե՛ք գլուխ 11 և 12-ում այս իրադարձության վերաբերյալ Եբրայեցիների գրքի մեկնաբանության ձևերը:



**ԾՆՆԳՈՑ 26**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> ( <b>հետևում է MT</b> )
Իսահակը բնակվում է Գերարում	Իսահակն ու Արիմելքը	Իսահակի մասին պատմություններ	Իսահակը ապրում է Գերարում	Իսահակը Գերարում
26:1-5	26:1-5	26:1-5	26:1-5	26:1-6
26:6-11	26:6-11	26:6-11	26:6-9ա 26:9բ	26:7-11
26:12-17	26:12-16	26:12-16	26:10-11 26:12-15	26:12-14 Գերարի և Բերսաբեեի միջև ջրհորները 26:15-18
Վիճաբանություն Ջրհորների շուրջ	26:17-22	26:17-22	26:16-18	
26:18-22			26:19-20 26:21-22	26:19-22
26:23-25 (24)	26:23-25	26:23-25	26:23-25	26:23-24 (24) 26:25
Ուխտ Արիմելքի հետ			Իսահակի և Արիմելքի միջև համաձայնություն	Արիմելքի հետ դաշինք
26:26-33	26:26-33	26:26-33	26:26-27 26:28-31 26:32-33	26:26-30 26:31-33
26:34-35	26:34-35	26:34-35	Եսավի օտար կանայք 26:34-35	Եսավի քետացի կանայք 26:34-35

# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԻՄՔԸ

Ա.Սա Ծննդոցում այն միակ գլուխն է, որտեղ Իսահակը գլխավոր կերպարն է:

Բ.Իսահակն այս գլխում ներկայացվում է որպես շատ հանդարտ, վստահող և աստվածահանո անձնավորություն: Նա Աբրահամի և Հակոբի պես աշխույժ մարդ չէր, այլ ՅԱՀՎԵԻ հավատարիմ հետևորդ:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:1-5

<sup>1</sup>Եվ այդ երկրում սով եղավ՝ բացի այն սովից, որ Աբրահամի օրերում էր եղել. և Իսահակը գնաց փղշտացիների երկիրը՝ Աբիմելեք թագավորի մոտ՝ Գերար: <sup>2</sup>Եվ Տերը երևաց նրան և ասաց. «Եգիպտոս մի՛ իջիր, բնակվի՛ր այն երկրում, որ քեզ կասեն: <sup>3</sup>Պանդո՛վատ եղիր այս երկրում, և ես քեզ հետ կլինեմ և քեզ կօրհնեմ, որովհետև քեզ ու քո սերնդին եմ տալու բոլոր այս երկրները և կատարեմ այն երդումը, որ երդվել եմ քո հայր Աբրահամին. <sup>4</sup>և բազմացնելու եմ քո սերունդը երկնքի աստղերի չափ և բոլոր այս երկրները քո սերնդին կտամ. և Երկրի բոլոր ազգերը քո սերնդով կօրհնվեն, <sup>5</sup>նրա համար, որ Աբրահամն Իմ ձայնը լսեց և կատարեց Իմ հրամանները և Իմ պատվիրանները և Իմ կանոններն ու Իմ օրենքները»:

26:1 «Եվ այդ երկրում սով եղավ» Սա շատ նման է Ծննդոց 12:10-ի դեպքերին, որտեղ Աբրահամը ստիպված եղավ հեռանալ Խոստացյալ՝ Ավետյաց Երկրից:

❖ «և Իսահակը գնաց փղշտացիների երկիրը՝ Աբիմելեք թագավորի մոտ՝ Գերար» Փղշտացիները շահամոլ մարդիկ էին՝ Էգեյան կղզիներից եկած: Նրանք փորձեցին նվաճել Եգիպտոսը, սակայն ետ շարտվեցին և բնակություն հաստատեցին Պաղեստինի հարավ-արևմտյան կողմում՝ մոտ Ք.Ա. 1200 թ-ին: Քանի որ Աբիմելեք անունը նշում է ավելի վաղ Ծննդոց 21:22-ում, սա հնարավոր է տարածված անուն էր և Պաղեստինի թագավորների տիտղոսն էր: Սա նման է Սիրիայում Հադաև և Եգիպտոսում Փարավոն տիտղոսների կիրառությանը:

Հաստատ հնարավոր է, որ՝

1. Քանանում շատ ավելի վաղ շրջանում կային փղշտացի առևտրականներ
2. քանանացիների մի խումբ միաձուլվել էր փղշտացիների հետ և այս անունը անախրոնիզմ է՝ միևնույն նշանակության երկու տարբեր բառեր

3. Փղշտացիները թվարկված են Ծննդ. 10:6-20 համարների ցանկում որպես Քամից և քանանացիներից սերված ազգ, և ոչ թե Հաբեթից (Էգեյան կղզիները): Հնարավոր է, որ այդ անունը վերաբերում է մի քանի խմբերի, որոնք համախմբվել էին Պաղեստինի՝ Քանանի հետ (NIDOTTE, հատոր 4, էջ՝ 1049):

**26:2-3** ՅԱՀՎԵի հայտնությունը Իսահակին իր մեջ բովանդակում է մի քանի պատվերներ և խոստումներ՝

1. «Եգիպտոս մի՛ իջնիր», հ. 2, BDB 432, KB 434, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
2. «բնակվի՛ր այն երկրում», հ. 2, BDB 1014, KB 1496, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. «պանդո՛ւխտ եղիր այս երկրում», հ. 3, BDB 157, KB 184, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. «Ես քեզ հետ կլինեմ», հ. 3, BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
5. «քեզ կօրհնեմ», հ. 3, BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
6. «քո սերնդին եմ տալու բոլոր այս երկրները», հ. 3, BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

**26:2 «Եվ Տերը երևաց նրան և ասաց. «Եգիպտոս մի՛ իջիր»** Հնարավոր է սա ասվում է նախկինում Եգիպտոսում Աբրահամի ունեցած փորձառության պատճառով կամ քանի որ Իսահակը կարիք ուներ վստահելու Աստծուն Խոստացյալ Երկրում Նրա հոգածությանը:

**26:3 «Ես քեզ հետ կլինեմ և քեզ կօրհնեմ»** Սա դարձյալ վերահաստատում է ոչ միայն Աստծո ներկայության (տես՝ 28:15; 31:3), այլ Նրա օրհնությունների և ուխտի վերահաստատման:

❖ **«և կկատարեմ այն երդումը, որ երդվել եմ քո հայր Աբրահամին»** Սա Աբրահամին տրված Աստծո հատուկ խոստումներին վերաբերող սահմանում է, որը արձանագրված է Ծննդոց 12,15,17 և 22 գլուխներում:

«Կատարել կամ հաստատել» ԲԱՅԸ (BDB 877, KB 1086, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) մի քանի անգամ կիրառվում է Ծննդոցում:

1. ուխտ հաստատել կամ վավերացնել, ստորագրել, տես՝ 6:18; 9:9,11; 17:7,19,21
2. ուխտին լիազորություն տալ կամ հաստատել, 26:3 (տես՝ Ղևտ. 26:9; 2 Օր. 8:18):

**26:4** Կարծես թե երեք հատուկ խոստումներ են նշվում այստեղ՝ (1) բազում սերունդներ, (2) երկիր (տես՝ 12:7; 15:18-19; 17:7-8; 26:1-5; 28:10-15; 35:12); և (3) երկրի բոլոր ազգերը օրհնվելու են Իսահակի և նրա սերունդների միջոցով:

❖ **«երկնքի աստղերի չափ»** Սա ավելի վաղ ասվել էր Աբրահամին՝ Ծննդոց 15:5 և 22:17-ում: Մյուս երկու փոխաբերությունները, որ կիրառում է Աստված նկարագրելու նրանց պտղաբերությունը՝ ծովի ավազն ու երկրի փոշին՝ հողն են:

❖ **«բոլոր այս երկրները»** Սա Աբրահամին տրված խոստման մի մասն էր (տես՝ 12:7; 13:15; 15:18; 17:8):

❖ **«Երկրի բոլոր ազգերը կօրհնվեն»** Այս արտահայտությունը բառացիորեն մեկնաբանվում է «կօրհնեն իրենց»: Այս խոստման համար գոյություն ունի երկու իրարից տարբեր ԲԱՅԱԿԱՆ ձևեր: *Niphal* ձև գտնվում է Ծննդ. 12:3; 18:18; 28:14-ում: Այն նաև մեջբերվում է ՆԿ-ում՝ Գործք 3:25; Գաղ. 3:8-ում: Ծննդոց 26:4-ը տրված է *Hithpael* ձևով, որը միայն այստեղ և Ծննդ. 22:16-18-ում կարելի է տեսնել և ճիշտ կերպով թարգմանվում է «կօրհնեն իրենք իրենց»: Իրականում մի փոքր տարբերություն կա «իրենց կօրհնեն» և «օրհնված կլինեն» խոսքերի միջև: Փաստորեն Մեպտուազինտայի թարգմանությունը ընդհանրապես ոչ մի տարբերություն չի դնում ԲԱՅԱԿԱՆ ձևերի մեջ: Ակնհայտ, մեծագույն օրհնությունն այն է, որ Աստված փնտրում է Աբրահամի և նրա զավակների միջոցով օրհնել ամբողջ աշխարհը: Աստված ընտրեց մի մարդու՝ ընտրելու մի ազգի՝ ընտրելու աշխարհին: Մենք պետք է մտապահենք, որ Հրեաները ընտրյալ են ոչ թե որևէ հատուկ օրհնության համար, այլ որպես ամբողջ մարդկության վրա փրկագործության օրհնությունը հասցնելու համար գործիք: Իսրայելը միշտ էլ նախատեսված է եղել լինելու քահանայական թագավորություն (տես՝ Ելից 19:5-6): Տե՛ս Հատուկ Թեմա 12:3-ում:

**26:5 «նրա համար, որ Աբրահամն Իմ ձայնը լսեց և կատարեց Իմ հրամանները և Իմ պատվիրանները և Իմ կանոններն ու Իմ օրենքները»** Այս համարում առկա երկու ԲԱՅԵՐԸ շեշտադրում են ուխտի մեջ եղող մարդու պատասխանատվությունը (տես՝ 12:1; 17:1,9-14; 22:16; 26:3-5):

1. «հնազանդվեց» (բառացի՝ «լսեց այնպես, որ կատարի»), BDB 1033, KB 1570, *Qal ԱՆԿԱՏԱՐ*
2. «կատարեց», BDB 1036, KB 1581, *Qal ԱՆԿԱՏԱՐ*

Երկուսն էլ շարունակվող գործողություն են արտահայտում:

Գոյություն ունի իրական և նպատակային լարվածություն Աստծոց մի մարդու՝ ազգի տրված ձրի շնորհքի միջոցով մի ամբողջ մարդկության/ազգերի կանչելու (տես՝ Աստծո անպայմանական գործը Ծննդ. 15:12-21-ում) և հնազանդության պարբերաբար կրկնվող հիշատակումների միջև (այսինքն՝ Աստծո խոստումների պայմանական բնույթը): Երկուսն էլ ճիշտ են: Մարդու գործերը անկում ապրած մարդկությանը չի կարող արժանացնել Աստծո ընդունելությանը: Սակայն հենց մենք Նրա հետ հանդիպում ենք՝ ընդունում ենք Նրան, մենք այլևս չենք կարող մնալ նույնը, անփոփոխ (տես՝ Եփես. 1:4; 2:8-9,10): Աստծո նպատակը արդար ժողովուրդն է, որի միջոցով մարդկությանը Իրեն կմոտեցնի: Վտանգը առանց պայմանների ձրի շնորհքն է և շատ պայմաններով շնորհքին արժանանալը: Երեմ. 31:31-34-ի և Եզեկ. 36:22-38-ի Նոր Ուխտը ճանապարհ է ցույց տալիս մեզ՝ նոր սիրտը, նոր միտքը, նոր հոգին: Աստծո արտաքին օրենքը դառնում է ներքին մանդատ:

«Հրամանների» (BDB 1038), «պատվիրանների» (BDB 846), «կանոնների» (BDB 349), և «օրենքների» (BDB 435) ցանկը գտնվում է միայն այստեղ Ծննդոցից մինչև Թվոցի առաջին գրքերում, սակայն հաճախ հանդիպում է նաև Երկրորդ Օրինացում: Տես Հատուկ Թեմա. Աստծո Հայտնության Տերմինները, հաջորդ պարբերությունից հետո:

Սա կարծես թե Ծննդ. 15:6 է ակնարկում: Այս պատմության մեջ Աբրահամի հավատքը, որ ինքը զավակ է ունենալու, Աստծո կողմից ընդունվեց որպես հավատքի քայլ և նրան որպես արդարություն համարվեց: ՀԿ-յան այս կարևորագույն հատվածը Պողոս առաքյալը օգտագործում է որպես աստվածաբանական հիմք շնորհքով հավատքի միջոցով արդարանալու վարդապետության համար, որը շատ զեղեցիկ կերպով բացատրվում է Հռոմեացիների 4 և Գաղատացիների 2-3 գլուխներում: «Օրենքներ» բառն այստեղ առաջին կիրառությունն է «Թորա» (BDB 435) տերմինի, որը երբայերեն բառ է, նշանակում է «ուսմունք» կամ «կանոններ»: Այս տերմինը հետագայում դառնում է Մովսեսի առաջին հինգ գրքերի անվանումը:

Ուշադրություն դարձրեք անձնական ԴԵՐԱՆՎԱՆ կրկնությանը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (կիրառելով ԵՐԿՐՈՐԳ ՕՐԻՆԱՑՔ և ՍԱՂՄՈՍՆԵՐԸ)**  
**SPECIAL TOPIC: TERMS FOR GOD'S REVELATION (using DEUTERONOMY and PSALMS)**

- I. «Կանոններ», BDB 349, «օրենք, հրաման կամ կարգադրություն»  
 Ա. ԱՐԱԿԱՆ ՍԵՌ, թո (KB, 346) – 2 Օր. 4:1,5,6,8,14,40,45; 5:1; 6:1,24; 7:11; 11:32; 16:12; 17:19; 26:17; 27:10; Սաղմ. 2:7; 50:16; 81:4; 99:7; 105:10,45; 148:6  
 Բ. ԻԳԱԿԱՆ ՍԵՌ, թո (KB, 347) – 2 Օր. 6:2; 8:11; 10:13; 11:1; 28:15,45; 30:10,16; Սաղմ. 89:31; 119:5,8,12,16,23,26,33,48, 54,64,68,71,80, 83,112,124,135, 145,155,171
- II. «Օրենք» BDB 435, KB 1710, «հրահանգ» – 2 Օր. 1:5; 4:44; 17:11,18,19; 27:3,8,26; 28:58,61; 29:21,29; 30:10; 31:9; Սաղմ. 1:2; 19:7; 78:10; 94:12; 105:45; 119:1,18,29,34,44,51,53,55,61, 70,72, 77,85,92,97,109,113,126,136,142,150,153,163,165,174
- III. «Վկայություններ» BDB 730, KB 790, «աստվածային օրենքներ»  
 Ա. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ, ԴԵ - 2 Օրինաց 4:45; 6:17,20; Սաղմ. 25:10; 78:56; 93:5; 99:7; 119:22, 24,46,59,79,95,119,125,138,146,152,167,168  
 Բ. ԴԵԿ կամ ԴԵԿ – Սաղմ. 19:7; 78:5; 81:5; 119:2,14,31,36,88,99,111,129,144,157
- IV. «Հրահանգներ» BDB 824, KB 959, «հրաման» - Սաղմ. 19:8; 103:18; 111:7; 119:4,15,27,40, 45,56,63,69,78,87,93,94,100,104,110,128,134,141,159,168,173
- V. «Պատվիրաններ» BDB 846, KB 622 – 2 Օր. 4:2,40; 5:29; 6:1,2,17,25; 8:1,2,11; 10:13; 11:13; 15:5; 26:13,17; 30:11,16; Սաղմ. 19:8; 119:6,10,19,21,32,35,47,48,60,66,73,86,96,98,115,127, 131,143,151, 166,176
- VI. «Դատաստաններ՝ վճիռներ» BDB 1048, KB 651, «որոշումներ» կամ «արդարադատություն» - 2 Օր. 1:17; 4:1,5,8,14,45; 7:12; 16:18; 30:16; 33:10,21; Սաղմ. 10:5; 18:22; 19:9; 48:11; 89:30;

97:8; 105:5,7; 119:7,13,20,30,39,43,52,62, 75,84,102,106,120,137, 149,156,160,164; 147:19; 149:9

VII. «Նրա ճանապարհները» BDB 202, KB 231, ՅԱՀՎԵԻ ուղեցույցները Իր ժողովրդի կյանքի համար – 2 Օր. 8:6; 10:12; 11:22,28; 19:9; 26:17; 28:9; 30:16; 32:4; Սաղմ. 119:3, 5,37,59

VIII. «Նրա խոսքերը»

Ա. BDB 182, KB 211 – 2 Օր. 4:10,12,36; 9:10; 10:4; 17:19; 18:19; Սաղմ. 119:9,16,17,25,28, 42,43,49, 57,65,74, 81,89,101,105,107,114,130,139,147, 160,161,169

Բ. BDB 57, KB 67

1. «խոսք» - 2 Օր. 33:9; Սաղմ. 119:11,67,103,162,170,172

2. «խոստում» - Սաղմ. 119:38,41,50,58,76,82,116,133,140,148,154

3. «հրաման» - Սաղմ. 119:158

Սրանք բոլորն էլ վերաբերում են Աստծո Ինքն Իր մասին հատուկ հայտնությանը Իսրայելին: Դրանք հիմնականում հոմանիշներ են: Տե՛ս՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՆԵՐՇՆՉԱՆՔ:

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:6-11

<sup>6</sup>Եվ Իսահակը բնակվեց Քերարում: <sup>7</sup>Եվ այն տեղի մարդիկ հարցրին նրան իր կնոջ մասին և նա ասաց. «Նա իմ քույրն է», որովհետև վախեցավ ասել, թե՛ իմ կինն է, քանի որ ասաց. «Այստեղի մարդիկ ինձ չսպանեն Ռեբեկայի պատճառով», որովհետև տեսքով գեղեցիկ էր: <sup>8</sup>Եվ եղավ, երբ երկար ժամանակ այնտեղ էր, փղշտացիների թագավորը՝ Աբիմելեքը, պատուհանից նայեց ու տեսավ, և ահա Իսահակն իր կնոջ՝ Ռեբեկայի հետ խաղում էր: <sup>9</sup>Եվ Աբիմելեքը կանչեց Իսահակին ու ասաց. «Ահա պարզվում է, որ նա քո կինն է, և ինչպե՞ս ասացիր, թե՛ Նա իմ քույրն է»: Եվ Իսահակն ասաց. «Որովհետև ասացի՝ միգուցե նրա պատճառով մեռնեմ»: <sup>10</sup>Եվ Աբիմելեքն ասաց. «Այս ի՞նչ արեցիր մեզ, քիչ էր մնացել, որ ժողովրդից մեկը պառկեր քո կնոջ հետ, և դու մեզ վրա հանցանք բերած կլինեիր»: <sup>11</sup>Եվ Աբիմելեքը հրամայեց ամբողջ ժողովրդին՝ ասելով. «Ով որ այս մարդուն կամ նրա կնոջը դիպչի, մահվան կդատապարտվի»:

**26:7 «Նա իմ քույրն է», որովհետև վախեցավ ասել, թե՛ իմ կինն է»** Ոմանք սա դիտարկում են որպես մշակութային տարր՝ կապված Նուգի արձանագրությունների հետ, որտեղ տղամարդը իրականում որդեգրում է իր կնոջը: Եթե դա այդպես է, ապա Իսահակը ճիշտ է ասում: Սակայն, կարծես թե Իսահակը պարզապես գնում է իր հոր հետքերով (տես՝ Ծննդ. 12:13; 20:2,12): Աբրահամի դեպքում սա կես ճշմարտություն էր, սակայն Իսահակի դեպքում հայտնի չէ, քանի որ այս համարում (և հ.9) իր գործողությունը անձնական վախի արդյունք է: Սա Իսահակի կողմից ցուցաբերված հավատքի պակասություն է, քանի որ Աստված խոստացել էր իր հետ լինելու և պաշտպանելու իրեն: Մինչդեռ, Իսահակի անհավատության մեջ, ինչպես եղավ Աբրահամի հետ, Աստված հավատարիմ էր:

**26:8 «Իսահակն իր կնոջ՝ Ռեբեկայի հետ խաղում էր /փաղաքշում էր/»** Այս տերմինը՝ «փաղաքշել, շոյել» (BDB 850, KB 1019, *Piel* ԴԵՐԲԱՅ) միևնույն արմատից է ինչ Իսահակ անունը, որը նշանակում է «ծիծաղել» կամ «խաղալ» (BDB 850, տես՝ Ծննդ. 17:17,19; 18:12; 21:6,9): Այստեղ այն ունի սեռական նշանակություն, ինչպես օրինակ Ծննդ. 39:17 և Ելից 32:6-ում: Որոշ թարգմանություններ այստեղ օգտագործում են «շոյել» տերմինը:

**26:10 «Եվ Աբիմելեքն ասաց»** Թե՛ Աբրահամի օրերի Աբիմելեքը և թե՛ Իսահակի օրերինը այնպես է ստացվում, որ շատ ավելի բարոյապես և քաղաքակրթորեն զգայուն էին, քան Նահապետները: Սա ցույց է տալիս, որ պատմության այս փուլում քանանացիներն ունեին ինչ-որ աստիճանի հոգևորություն:

**26:11 ՅԱՀՎԵՆ** այս հայտարարությամբ ցույց է տալիս Իր պաշտպանությունը:

«Մահվան կդատապարտվի» արտահայտությունը արտացոլում է միևնույն արմատի *Qal* ԲԱՅԱՐՉԱԿ ԱՆՈՐՈՇ և *Hophal* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ (BDB 559, KB 562), որը ուժգնացում ցույց տվող քերականական ձև է:

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:12-17

<sup>12</sup>Իսահակն այդ երկրում ցանեց և այդ տարի հարյուրապատիկ բերք ստացավ. և ՏԵՐՆ օրինեց նրան: <sup>13</sup>Եվ մարդը բարձրացավ ու քանի գնաց մեծանում էր, մինչև որ շատ զորացավ:

**14**Եվ հոտեր ու նախիրներ և շատ ծառաներ ունեցավ, և փղշտացիք նախանձեցին նրան: **15**Եվ իր հոր՝ Աբրահամի օրերում իր հոր ծառաների փորած ջրհորները փղշտացիք փակեցին և հողով լցրին դրանք: **16**Եվ Աբիմելեքն ասաց Իսահակին. «Հեռացի՛ր մեր մոտից, որովհետև մեզանից շատ ավելի գորեղ եղար»: **17**Եվ Իսահակը գնաց այնտեղից և իր վրանները Գերարի ձորում խփեց և այնտեղ բնակվեց:

**26:12-14** Նկատե՛ք օրհնությունները:

1. հարյուրապատիկ բերք ստացավ, հ. 12
2. հարստացավ և շարունակեց մեծանալ, մինչև որ շատ գորացավ, հ. 13
3. հոտեր ու նախիրներ ունեցավ, հ. 14
4. շատ ծառաներ ունեցավ, հ. 14

#2-ում երկրորդ մասը միևնույն արմատի *Qal* ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ Է (BDB 229, KB 246), որն արտահայտում է ուժգնացում՝ շեշտադրում:

#2-ում երրորդ մասը միևնույն արմատի ԱՇԱԿԱՆ և ԲԱՅ Է (BDB 152, KB 178, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ):

**26:12 «և ՏԵՐՆ օրհնեց նրան»** Սա ուղղակի աստվածաբանական հռչակում է, որ Աստված եղավ Իսահակի օրհնության աղբյուրը և ոչ թե Իսահակի անասնապահությունը:

**26:14 «փղշտացիք նախանձեցին նրան»** Սա «նախանձել» ԲԱՅՆ Է (BDB 888, KB 1109, *Piel* ԱՆԿԱՏԱՐ)

1. նրանք փակեցին Աբրահամի ջրհորները, հ. 15
2. նրանք Իսահակին վտարեցին, հ. 16

Իսահակի բարգավաճման նպատակն էր օգնել փղշտացիներին գալու ՅԱՀՎԵԻՆ, սակայն դրա փոխարեն նրանց մոտ նախանձի և բարկության առիթ եղավ:

**26:15 «փղշտացիք փակեցին»** Մինչ Իսահակը աճում էր՝ թվով ու հարստությամբ, նա փղշտացիների համար դարձավ վախի աղբյուր: Նրանք ցույց էին տալիս իրենց անհանգստությունն ու վախը փակելով Իսահակի ջրհորները: Նրանք գիտեին քանի որ Իսահակը նախրապան էր, ապա ջրի պակասությունը նրան կստիպեր հեռանալ այդ վայրից: Գլուխ 26-ի այս բաժինը մեզ ցույց է տալիս Իսահակի համբերությունն ու հավատքը: Նրա անհատականության տեսակը մեծամասամբ կարելի է տեսնել այստեղ, թե ինչպես է նա ջրի իրավունքների շուրջ առաջացած այս լարվածության հարցը լուծում:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՐՍ. 26:18-22**

**18**Եվ Իսահակը նորից փորեց այն ջրհորները, որ իր հոր օրերում փորել էին և որ փղշտացիք փակել էին Աբրահամի մեռնելուց հետո և նրանց տվեց նույն անվանումները, որ իր հայրն էր դրել: **19**Եվ Իսահակի ծառաները փորեցին ձորում և այնտեղ մի գործող ջրհոր գտան: **20**Եվ Գերարի հովիվները կռվում էին Իսահակի հովիվների հետ՝ ասելով. «Այդ ջուրը մերն է», և այդ ջրհորն անվանեց **Էսեք**, որովհետև միմյանց հետ կռվում էին: **21**Եվ մի ուրիշ ջրհոր փորեցին, և դրա համար էր կռվեցին, և դա էլ անվանեց **Սիթնա**: **22**Եվ այնտեղից շարժվեց և մի ուրիշ հոր փորեց, և դրա համար չկռվեցին, և այն անվանեց **Ռորովթ**, և ասաց, թե՛ «Հիմա ՏԵՐԸ մեզ ընդարձակ տեղ տվեց, և երկրում բարեբեր կլինենք»:

**26:18 «նրանց տվեց նույն անվանումները, որ իր հայրն էր դրել»** Սա պարզապես ընտանեկան ավանդույթները պահել է կամ հնարավոր է կրոնական վարքագիծ, որը կապված է իր հոր ունեցած ուխտի հետ:

**26:20-22 «Էսեք ... Սիթնա ... Ռորովթ»** Սա երեք ջրհորների շարք է, որոնք օգտագործվեցին ցույց տալու, թե ինչ էր կատարվում իր հարևանների հետ Իսահակի փոխհարաբերության մեջ:

1. առաջին ջրհորը նշանակում է «կռիվ» (BDB 796)
2. երկրորդ ջրհորը նշանակում է «թշնամություն» (BDB 966 II)
3. երրորդ ջրհորը նշանակում է «ընդարձակություն» (BDB 932), որը երբայերեն դարձվածք է՝ ներկայացնող հանգստություն, խաղաղություն և ուրախություն:

**26:22 «Հիմա ՏԵՐԸ մեզ ընդարձակ տեղ տվեց, և երկրում բարեբեր կլինենք»** Իսահակը ուներ մարդկանց այն ուժը, որով հեշտությամբ կարող էր հաղթել փղշտացիներին, սակայն նախընտրեց հավատքով սպասել Աստծուն, որն իրեն խոստում էր տվել: Երրորդ ջրհորի անունը և «սենյակ» բառը նույնն են (BDB 932):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:23-25**

<sup>23</sup>Ապա այնտեղից գնաց Բերսաբեն: <sup>24</sup>Եվ ՏԵՐԸ երևաց նրան այն գիշեր և ասաց.

«Ես եմ քո հոր՝ Աբրահամի Աստվածը:

Մի՛ վախենա, որովհետև ես քեզ հետ եմ

Եվ կօրհնեմ ու կկշտացնեմ քո սերնդին՝

Ի սեր Իմ ծառա Աբրահամի»:

<sup>25</sup>Եվ այնտեղ գոհաստեղան շինեց և ՏԻՐՈՋ անունը կանչեց և այնտեղ խփեց իր վրանը. և այնտեղ Իսահակի ծառաները ջրհոր փորեցին:

**26:23 «Ապա այնտեղից գնաց Բերսաբեն»** Սա Հուդայի անապատի հարավային մասում գտնվող մի վայր է, որը Աբրահամի համար պանդխտության կարևոր վրանատեղի էր (տես՝ Ծննդ. 22:19):

**26:24 «ՏԵՐԸ երևաց նրան այն գիշեր և ասաց»** Սա երկրորդ անգամ է, որ ՅԱՀՎԵԻ հայտնվում է Իսահակին (տես՝ հ. 2): Այստեղ գիշերով էր և երազում (տես՝ 15:5,12; 21:12,14; 22:1-3; 26:24): Ծննդոցում արձանագրված հայտնություններից շատերը բանաստեղծական են, ինչպես հ. 24 (տես՝ 12:1-3; 15:1,18; 17:1-2,4-5; 35:10,11-12):

❖ **«Ես եմ քո հոր՝ Աբրահամի Աստվածը»** Նկատելի է, թե ինչպես է ՅԱՀՎԵ և *Էլոհիմ* անունները համագործակցում (տես՝ Ծննդ. 2:4): Սա ավելի պաշտոնական և ամբողջական հայտնությունն է, քան հ. 2-ում ունենք: Այն նմանօրինակ կազմություն ունի ինչպես Աբրահամին եղած հայտնությունը:

❖ **«Մի՛ վախենա, որովհետև ես քեզ հետ եմ»** Ինչպիսի՛ հրաշալի խոստում (նաև տես՝ 15:1; 21:17; 46:3):

❖ **«Ի սեր Իմ ծառա Աբրահամի»** Սա Աբրահամի, Մովսեսի, Հեուրի և Դավթի համար կիրառվող հատուկ հարգալից անունն է՝ տիտղոս: Հնարավոր է, որ սա է հանդիսանում Պողոսի այս արտահայտության բուն աղբյուրը՝ «Հիսուս Քրիստոսի ծառա»:

**26:25 ՅԱՀՎԵԻ** անձնական հայտնությունների վայրերը դարձան սրբավայրեր: Այս տեղերում կառուցվեցին գոհաստեղաններ և դրանք դարձան երկրպագության, աղոթքի և գոհաբերությունների վայրեր (տես՝ 8:20; 12:7,8; 13:4,18; 22:9):

❖ **«ջրհոր փորեցին»** Չուրը թանկ հաճույք էր այս կիսաչոր անապատային տարածքներում: Իսահակը համբերատարությամբ սպասեց ՅԱՀՎԵԻ օգնությանն ու առաջնորդությանը: Այս ենթատեքստում տրված մի քանի հաջողված ջրհորները ցույց են տալիս ՅԱՀՎԵԻ ներկայությունն ու օրհնությունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:26-33**

<sup>26</sup>Եվ Գերարից նրա մոտ գնացին, նրա բարեկամներից Որոզաթը և նրա սպարապետ Փիրոդը: <sup>27</sup>Եվ Իսահակն ասեց նրանց. «Ինչո՞ւ եք եկել ինձ մոտ, երբ ատում եք ինձ և ինձ ձեր մոտից դուրս արեցիք»:

<sup>28</sup>Եվ նրանք ասացինք. «Մենք հավաստի տեսանք, որ ՏԵՐԸ քեզ հետ է, և ասացինք՝ թող երդում լինի մեր միջև, այսինքն՝ մեր ու քո միջև, և քեզ հետ ուխտ կնքենք:

<sup>29</sup>Որ մեզ չար բան չանես, ինչպես որ մենք էլ քեզ չենք դիպել, և ինչպես որ քեզ հետ միայն բարի վարվեցինք և քեզ խաղաղությամբ ճանապարհեցինք. դու հիմա ՏԻՐՈՋ օրհնյալն ես»:

<sup>30</sup>Եվ նա նրանց համար խնջույք սարքեց և նրանք կերան ու խմեցին: <sup>31</sup>Եվ առավոտ վաղ վեր կացան և միմյանց երդում տվեցին: Եվ Իսահակը նրանց ճանապարհեց, և նրա մոտից գնացին խաղաղությամբ:

<sup>32</sup>Եվ եղավ, որ այդ նույն օրը Իսահակի ծառաները եկան ու նրան պատմեցին այն ջրհորի մասին, որ փորում էին և ասացին նրան, թե՛ Չուր ենք գտել: <sup>33</sup>Եվ այն անվանեց Սաբեն, սրա համար այն քաղաքի անունը Բերսաբեն է մինչև այսօր:

**26:26 «Արիմելք ... Փիրոդ»** Չնայած որ այս անունները ճիշտ նույնն են ինչ Ծննդ. 21:22-ում, արդեն 75-80 տարի էր անցել և պարզ է, որ չէր կարող վերաբերել նույն մարդկանց: Սաղմոս 34-ի ներածականից կարծես թե ակնհայտ է, որ սրանք տիտղոսներ են և ոչ թե հատուկ անուններ:

**26:27** Ըստ երևույթին Իսահակը դեռևս զգում էր իրեն վտարելու ցավն ու հիասթափությունը:

**26:28 «Մենք հավաստի տեսանք, որ ՏԵՐԸ քեզ հետ է»** Գոյություն ունեն այս համարի մի քանի քերականական առանձնահատկություններ՝

1. «հավաստի տեսնել», սա *Qal* ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՆ է միևնույն արմատի (BDB 906, KB 1157), որը «պարզ էր որ» իմաստն է արտահայտում:
2. «թող երդում լինի», BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ, «երդում» բառը (BDB 46) միայն այստեղ է և 24:41-ում (երկու անգամ), նույնիսկ հ. 31-ում կիրառվում է այլ բառ (BDB 989): Այն կարող է նշանակել երդում կամ անեծք (տես՝ Թվոց 5:21,23,27; 2 Օր. 29:12,14,19,20,21): Այն ակնարկում է «թող այն մարդը որը չի պահում երդումը՝ անիծվի»:
3. «քեզ հետ ուխտ կնքենք», BDB 503, KB 500, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

Սա Նահապետների օրհնության աստվածաբանական նպատակն է: Դա միայն ավելի շատ ֆիզիկական իրեր տալը չէր, այլ մյուսներին ՅԱՀՎԵԻ հետ իրենց ունեցած վճարատարի փոխհարաբերությունը ցույց տալն էր (տես՝ հ. 29գ):

**26:30 «նա նրանց համար խնջույք սարքեց»** Ուխտ կապելու կամ կնքելու ընթացակարգի համար սովորաբար հաղորդակցության ճաշկերույթ էր տեղի ունենում:

**26:32-33 «ջրհոր էին փորում... «ջուր ենք գտել»... Սաբեե»** Ըստ երևույթին այս ջրհորներն ունեին ֆիզիկական և հոգևոր կարևորություն: Դրանք ընդգծում էին Իսահակի կյանքում Աստծո օրհնությունները: Համար 33 հնարավոր է լինի Ծննդոց 21:31-ում Բերսաբեե անվան հակառակ ստուգաբանությունը (այսինքն՝ «թող տրվի», BDB 988), որտեղ անունը բացատրվում է որպես «երդման ջրհոր» կամ «յոթի ջրհոր»: Սաբեե անունը հնարավոր է «երսում» բառին է վերաբերում: Եբրայերեն «յոթ» և «երդվել» բառերը բավականին նման են իրար: Շատ հաճախ ՀԿ-ում ստուգաբանություններն շատ ավելի հայտնի են, քան տեխնիկական են, հետևաբար կարող են ունենալ երկու հայտնի ծագման աղբյուրներ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:34-35**  
**<sup>34</sup>Եվ եսավը քառասուն տարեկան էր, երբ քեռացի Բեերի աղջիկ Հուդիթին և քեռացի Ելոնի աղջիկ Բասեմաթին կին առավ: <sup>35</sup>Եվ սրանք Իսահակի ու Ռեբեկայի համար հոգու դառնություն եղան:**

**26:34-35** Այս երկու համարները իրականում հարթակ են պատրաստում գլուխ 27-ի համար, հատկապես հ. 46-ը: Հեղինակը տարրերը միահյուսում է այս պատմությունների մեջ, որոնք հետագայում ունենալու են մեծ աստվածաբանական կարևորություն (այսինքն՝ Իսահակին և Ռեբեկային ստիպելու են, որ Հակոբին ուղարկի Իսառան իր համար կին փնտրելու):

### **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք Ծննդոց 21-ի Արիմելեքը Ծննդոց 26-ի նույն Արիմելեքն է:
2. Ինչպե՞ս են առաջացել փոշտացիները՝ նրանց բնօրրանը:
3. Ինչո՞ւ թե՛ Աբրահամը, և թե՛ Իսահակը պնդեցին, որ իրենց կանայք իրենց քույրերն են:
4. Ո՞րն է այս գլխում այսքան շատ հիշատակվող ջրհորների նպատակը:
5. Բացատրե՞ք հնում ուխտի խնջույքի ծեսերը և թե ինչպես է այն ազդում աստվածաշնչյան հայտնության վրա:



**ԾՆՆԳՈՑ 27**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՔԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> (հետևում է MT)
Հակոբի սուտը	Իսահակը օրհնում է Հակոբին	Հակոբը Եսալից գողանում է իր օրհնությունները	Իսահակը օրհնում է Հակոբին	Հակոբը խաբեությամբ ստանում է Իսահակի օրհնությունը
27:1-4	27:1-4	27:1-4	27:1ա 27:1բ 27:2-4	27:1-4
27:5-17	27:5-17	27:5-17	27:5-10 27:11-12 27:13-17	27:5-10 27:11-17
27:18-29 (27բ-29)	27:18-29 (27բ-29)	27:18-29 (27բ-29)	27:18ա 27:18բ 27:19 27:20ա 27:20բ 27:21-24ա 27:24բ 27:25-29	27:18-29 (27բ-29)
Գողացված օրհնությունը	Եսալի կորած հույսը		Եսալը աղաչում է Իսահակի օրհնությունը	
27:30-38	27:30-38	27:30-38	27:30-31 27:32 27:33 27:34 27:35 27:36 27:37 27:38-40 (39-40)	27:30-40 (39-40ա)

27:39-40 (39-40)	27:39-40 (39-40)	27:39-40 (39-40)		
	Հակորը փախնում է Եսավից			
27:41-45	27:41-46	27:41-45	27:41 27:42-45	27:41-45
		Հակորը հեռանում է Արամ և նրա երազը Բեթելում (27:46-28:22)	Իսահակը Հակորին ուղարկում է Լաբանի մոտ (27:46-28:5)	Իսահակը Հակորին ուղարկում է Լաբանի մոտ (27:46-28:5)
27:46		27:46-28:5		

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

### ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԻՄՔԸ

Ա. Շատ հաճախ մեկնաբանները այս գլուխը դիտարկում են Ռեբեկայի և Հակորի նկատմամբ որպես շատ նվաստեցնող: Սակայն Ծննդ. 25:23-ի լույսի ներքո ստացվում է, որ Իսահակն ու Եսավն են փորձում շահարկել Աստծո հայտնությունը:

Բ. Եսավը չի մտահոգվում իր սեփական անդրանկությամբ և արդեն վաճառել է Հակորին (տես՝ Ծննդ. 25:27-34): ՆԿ-ի Եբրայեցիների գրքի հեղինակը հայտնում է Եսավի շարժառիթները Եբր. 12:16-17-ում: Անդրանկության իրավունքը ուղղակիորեն կապված էր նահապետական օրհնության հետ (այսինքն՝ «որ իմ հոգին օրհնի քեզ» դարձվածքը, հհ. 4,19,25,31): Եսավը կարծես թե անհոգ էր կանգնում Ռեբեկային տրված Աստծո կանխասման հանդեպ, կանգնում էր Ծննդոց 25-ում իր անդրանկությունից զրկվելու հանդեպ: Արդյոք Իսահակը մոռացել էր Ռեբեկային տրված այս հայտնության մասին, որը հաստատ նա կիսվել էր Իսահակի հետ, թե՛ անտեսել էր դա, հայտնի չէ, սակայն Հակորը իրականում այն «սպառազինյալը» չէր, որ հաճախ նկարագրվում է այդպիսին: Սա չի նշանակում, որ նա չունեի շահարկող հակումներ, սակայն արդարացի չէ մեղադրել նրան այս գլխում առկա բոլոր խնդիրների համար:

Գ. Այս գլուխն ունի հրամանների արտասովոր քանակ, որ կապված են Իսահակի ցանկության հետ՝ նախքան իր նահապետական օրհնությունը տալը (ենթադրվում է Եսավին) հատուկ ճաշ ուտելու համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:1-4**

<sup>1</sup>Եվ եղավ, երբ Իսահակը ծերացավ և աչքերը տկարացան, այնպես որ տեսնել չէր կարողանում, իր մեծ որդի Եսավին կանչեց ու ասաց նրան. «Որդի՛ս»: Եվ նա ասաց նրան. «Ահա՛ ես»: <sup>2</sup>Եվ ասաց. «Ահա ես ծերացել եմ, չգիտեմ իմ մեռնելու օրը. <sup>3</sup>ուստի հիմա ա՛ռ քո զենքերը՝ քո կապարճը և քո աղեղը և դուրս եկ, գնա՛ դաշտը և ինձ համար մի եղջերու որսա: <sup>4</sup>Եվ ինձ համար խորտիկներ պատրաստիր, ինչպես որ ես սիրում եմ, և բե՛ր ինձ մոտ, որ ուտեմ, և իմ հոգին քեզ օրհնի՛ քանի դեռ չեմ մեռել»:

**27:1 «Երբ Իսահակը ծերացավ, և աչքերը տկարացան»** Աչքերի խնդիրը Հնագույն Մերձավոր Արևելքում հավանաբար լուրջ առողջական խնդիր էր համարվում (տես՝ Հակոբին Ծննդ. 48:10-ում, Հեղին՝ 1 Թագ. 3:2-ում և հետագայում՝ Պողոսին Գաղ. 4:13-15, 6:11; 2 Կորնթ. 12:7-ում):

❖ **«իր մեծ որդի Եսավին կանչեց»** Սա ցույց է տալիս (1) Հակոբի աչառությունը՝ նախասիրությունը Եսավի հանդեպ (տես՝ Ծննդ. 25:28), որն ակնհայտ է դառնալու այս գլխի բովանդակությամբ կամ էլ (2) տան ավագ որդուց (այսինքն՝ բառ. «մեծ» BDB 152, այսինքն՝ տարիքով, տես՝ 10:21; 44:12) մշակութային սպասումները՝ ընտանիքում իր ունեցած հատուկ դիրքի համար:

**27:2 «Իսահակն ասաց. «Ահա ես ծերացել եմ, չգիտեմ իմ մեռնելու օրը»** Հետաքրքիր է նշել, որ Իսահակը լինելով մոտ 137 տարեկան, անհանգստանում էր, որ կմահանա: Ծննդ. 35:28-ից գիտենք, որ նա ապրեց 180 տարի: Հնարավոր է նրա անհանգստության աղբյուր իր եղբայր Իսմայելի մահն էր, քանի որ նա մահացավ 137 տարեկանում, որը արձանագրված է Ծննդ. 25:17-ում: Եթե Մարթին Լյութերի հաշվարկները ճիշտ են նրա տարիքի հետ կապված, ապա Իսահակն արձագանքում էր իր մարմնավոր անկարողությանը ավելի, քան Աստծո հայտնությանը:

Նուզի տախտակներից այս նույն շրջանի և նույն ժամանակահատվածի վերաբերյալ իմանում ենք, որ «ես ծերացել եմ կամ ես ծեր եմ» խոսքը կարող է օրինական դարձվածք լինել ժառանգության իրավունքները որդու վերահսկողությանը փոխանցելու համար:

**27:3,4** Նախքան նահապետական իր օրհնությունը տալը Իսահակի խնդրած ճաշի հետ առնչվող մի շարք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են տրված: Ահա Իսահակի հրամանները՝ խնդրանքները.

1. «ա՛ռ քո զենքերը» («կապարճ», BDB 1068, միայն այստեղ է ՀԿ-ում և «աղեղը», BDB 905), հ. 3, BDB 669, KB 724, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «դո՛ւրս եկ, գնա՛ դաշտը», հ. 3 BDB 422, KB 425, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. «ինձ համար մի եղջերու որսա՛» հ. 3, BDB 844, KB 1010, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. «խորտիկներ պատրաստիր» հ. 4, BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. «բե՛ր ինձ մոտ», հ. 4, BDB 97, KB 112, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. «որ ուտեմ», հ. 4, BDB 37, KB 46, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

**27:4 «և իմ հոգին»** Սա *nephesh* (BDB 659, KB 711, տես՝ հ. 25) տերմինն է, որը վերաբերում է շնչին՝ այն ինչ շնչում է կամ կյանքին: Այն կարող է կիրառվել գազանների (տես՝ Ծննդ. 1:24; 2:19) կամ մարդկանց համար (տես՝ Ծննդ. 2:7): Մարդիկ չունեն շունչ (ըստ հունական մտածելակերպի) այլ նրանք հենց շունչ են: Նրանց ֆիզիկական մարմինը մարմնի, շնչի և հոգու արտաքին սահմանն է:

❖ **«քեզ օրհնի՛ քանի դեռ չեմ մեռել»** Նկատե՛ք, որ ճաշը ընտանիքի առաջնորդությունը փոխանցելու առթիվ էր (այսինքն՝ նահապետական օրհնությունը): Խոսված՝ արտաբերված խոսքի Եբրայերեն գաղափարն այնպիսին էր, որ եթե այն ասվել է, ապա այլևս հնարավոր չէ փոխել՝ հետադարձել (տես՝ հհ .33-38; Ես. 55:11):

Իսահակը կարծում էր, որ ինքը մեռնում էր (տես՝ հ. 2), սակայն երկար տարիներ դեռ ապրեց: Իսահակը Աբրահամին տրված ուխտի խոստումների շահառուն էր: Չնայած դրան նա կուրացել էր և մտածում էր, որ ահա շուտով մեռնելու է: Ֆիզիկական հիվանդությունը Աստծո կողմից դժգոհության՝ չհավանելու նշան չէ, այլ մեղավոր աշխարհում ապրելու հետևանք (տես՝ Գորդոն Ֆիլի կողմից գրված գրքույկը՝ «Առողջության, հարստության Ավետարանի հիվանդությունը» /*Gordon Fee* “The Disease of the Health, Wealth Gospel”):

**NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:5-17**

<sup>5</sup>Եվ Ռեբեկան լսում էր, երբ Իսահակը խոսում էր իր որդու՝ Եսավի հետ և Եսավը դուրս գնաց դաշտը, որ որս անի ու բերի: <sup>6</sup>Եվ Ռեբեկան խոսեց իր որդի Հակոբի հետ՝ ասելով. «Ահա լսեցի, որ հայրդ խոսում էր քո եղբայր Եսավի հետ՝ ասելով. <sup>7</sup>«Ինձ համար եղջերո՛ւ բեր և ինձ համար խորտիկնե՛ր պատրաստիր, որ ուտեմ և օրհնեմ քեզ ՏԻՐՈՋ առջև՝ նախքան իմ մեռնելը»: <sup>8</sup>Եվ հիմա, որդի՛ս, լսի՛ր իմ ձայնը, ինչ որ քեզ պատվիրեմ: <sup>9</sup>Գնա՛ հոտերի մոտ և այնտեղից ինձ համար երկու լավ այծի ուլ բեր, և ես դրանցից խորտիկներ պատրաստեմ քո հոր համար, ինչպես որ նա սիրում է: <sup>10</sup>Եվ դու կտանես քո հոր մոտ, և նա կուտի, և դրա համար կօրհնի քեզ իմ մեռնելուց առաջ»: <sup>11</sup>Եվ Հակոբն ասաց իր մայր Ռեբեկային. «Ահա՛ եղբայրս՝ Եսավը, մազմզոտ մարդ է, իսկ ես լերկ եմ. <sup>12</sup>գուցե իմ հայրն ինձ շոշափի և նրա աչքին խաբեբեա երևամ և օրհնության փոխարեն ինձ վրա անեծք բերեմ»: <sup>13</sup>Եվ մայրն ասաց նրա. «Քո անեծքն ինձ վրա լինի, որդի՛ս, միայն թե լսի՛ր իմ ձայնին, և գնա՛, բեր դրանք ինձ համար»: <sup>14</sup>Եվ նա գնաց, առավ ու բերեց իր մոր համար, և նրա մայրը խորտիկներ պատրաստեց, ինչպես որ նրա հայրը սիրում էր: <sup>15</sup>Եվ Ռեբեկան վերցրեց իր անդրանիկ որդու՝ Եսավի պատվական հագուստները, որ տանն իր մոտ էր, վերցրեց ու հագցրեց իր կրտսեր որդուն՝ Հակոբին: <sup>16</sup>Եվ այծի ուլերի մորթիներն էլ հագցրեց նրա ձեռքերին և վզի անմազ տեղերին: <sup>17</sup>Եվ խորտիկները և այն հացն էլ, որ շինել էր, սվեց իր որդի Հակոբի ձեռքը:

**27:5 «Ռեբեկան լսում էր, երբ Իսահակը խոսում էր»** Ակնհայտ է, որ այս ընտանիքում նախանձի և մանիպուլյացիայի խնդիր կար: Մենք կարող ենք տեսնել Ռեբեկայի և Իսահակի, Հակոբի ու Եսավի միջև եղած բախումներն ու լարվածությունը: Հետաքրքիր է, թե որքան հաճախ է Աստվածաշունչը արձանագրում ամուսնական և ընտանեկան խնդիրներ այս ՀԿ-յան հերոսների կյանքից: Վրանի դռան ետևից Ռեբեկայի ականջ դնելը կարելի է բնութագրել կամ որպես նրա կողմից ցուցաբերած հետաքրքրասիրություն, կամ էլ, որ նա ցանկանում էր իրականացնել Ծննդ.25:23-ի իրեն տրված Աստծո հայտնությունը: Ըստ այս հատվածի իմ հասկացողության կասկածի օգուտը ես հանձնում եմ Ռեբեկային և Հակոբին, քանի որ կարծես թե Իսահակն ու Եսավը փորձում էին շրջանցել Աստծո հստակ կանխատուը:

**27:7** ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ արտացոլում են հհ. 3 և 4:

❖ **«և օրհնեմ քեզ ՏԻՐՈՋ առջև՝ նախքան իմ մեռնելը»** Հենց այն փաստը, որ նշվում է Աստծո անունը (Ռեբեկայի կողմից տրված տեքստում և ոչ թե Իսահակի, տես՝ հ.4), ցույց է տալիս նահապետական օրհնության կարևորությունը: Այն գրեթե դիտարկվում է որպես անկախ իշխանություն ունենալ և երբ այն տրվում է, այլևս հնարավոր չէ ետ վերցնել: Այն շատ կարևոր էր Աստծո կողմից Աբրահամին և նրան հաջորդող Իսահակին, Հակոբին և նրա տասներկու որդիներին տրված խոստումների համար:

**27:8-9** Ռեբեկան որոշեց խաբել Իսահակին և կանգնեցնել նրա մտադրությունները, ուստի պատվիրեց Հակոբին՝

- 1. լսել, հ. 8, BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
- 2. գնալ հոտերի մոտ, հ. 9, BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
- 3. երկու լավ այծի ուլ բեր, հ. 9, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
- 4. և ես դրանցից խորտիկներ պատրաստեմ, հ. 9, BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով

**27:9 «ինչպես որ նա սիրում է»** Ռեբեկան գիտեր ինչպես պատրաստի Իսահակի սիրելի կերակուրը: Ըստ երևույթին նա դա հաճախ չէր անում, այլապես Իսահակը Եսավից չէր խնդրի ճաշ պատրաստել:

**27:11 «Եսավը մազմզոտ մարդ է»** Տե՛ս Ծննդոց 25:25:

**27:12**

NASB, NKJV	«խաբեբա»
NASB (լուսանցք)	«ծաղրող»
NRSV	«ծաղրող»
TEV	«խաբող»
NJB	«խաբողախ»

**LXX**

**«չարամիտ»**

Երբայերեն ԲԱՅԸ (BDB 1073, KB 1770, *Pilpel* ԴԵՐԲԱՅ) այս արմատում (*Pilpel*) նշանակում է «ծաղրել» կամ «խաբել», մինչ *Hitpalpel* արմատում (տես՝ 2 Մնաց. 36:16) արտահայտում է «ծաղրանք» կամ «շահագործում» (NIDOTTE, հատոր 4, էջ՝ 320): Այս տերմինը կարելի է գտնել ՀԿ-ում միայն այս երկու տեղը: NIV այս բառերը տարգմանել է «խտրամանկել» և «ծանակել»:

Այս արմատը կապ չունի 25:26-ում Հակոբի անվան հետ (BDB 784):

**27:13-17** Սա ցույց է տալիս Ռեբեկայի և Հակոբի մանրակրկիտ ծրագրավորումն այս մանիպուլյատիվ գործարքում:

**27:13 «Քո անեծքն ինձ վրա լինի»** MT թարգմանության մեջ ԲԱՅ չկա: Ռեբեկան գիտեր, որ հետևանքներն անխուսափելի են: Նա հրամայում է Հակոբին գործել հանուն իրեն:

- 1. հնազանդվի՛ր (բառացի՝ լսիր), BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ հհ. 5 (երկու անգամ), 6,8,13,34,43
- 2. գնա՛, BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ հհ. 5,9,13,14
- 3. բե՛ր, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ հհ. 9,13,14,15,35,36 (երկու անգամ),45,46

**27:15-17** Ուշադրություն դարձրեք երկրևեռ գործողություններին՝

- 1. վերցրեց Եսավի պատվական հագուստները (BDB 326) և հազցրեց իր կրտսեր որդուն՝ Հակոբին, հ. 15
- 2. այծի ուլերի մորթիներ հազցրեց նրա ձեռքերին և վզին, հ. 16 (հավանաբար ճաշ պատրաստելու համար մորթված երկու ուլերից)
- 3. տվեց իր որդի Հակոբի ձեռքը, հ. 17:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 27:18-29**

<sup>18</sup>Եվ նա գնաց իր հոր մոտ և ասաց. «Հայր իմ»: Եվ նա ասաց. «Ահա՛ ես. դու ո՞վ ես, որդիս»: <sup>19</sup>Եվ Հակոբն ասաց իր հորը. «Ես քո անդրանիկ Եսավն եմ. ես արեցի ինչպես որ ասել էիր. վե՛ր կաց, նստի՛ր, և կե՛ր իմ որսից, որ քո հոգին օրհնի ինձ»: <sup>20</sup>Եվ Իսահակն ասաց իր որդուն. «Ինչպե՛ս եղավ, որ այդքան շուտ գտար, որդի՛ս»: Եվ նա ասաց. «Որովհետև քո ՏԵՐ Աստվածը հանդիպեցրեց իմ առջև»: <sup>21</sup>Եվ Իսահակն ասաց Հակոբին. «Մոտեցի՛ր, և թող քեզ շոշափեմ. որդի՛ս, թե արդյոք դո՛ւ ես իմ որդի Եսավը, թե՛ ոչ»: <sup>22</sup>Եվ Հակոբը մոտեցավ իր հայր Իսահակին, և նա շոշափեց նրան ու ասաց. «Չայնը Հակոբի ձայնն է, իսկ ձեռքերը Եսավի ձեռքերը»: <sup>23</sup>Եվ չճանաչեց նրան, որովհետև ձեռքերը նրա եղբայր Եսավի ձեռքերի պես մազոտ էին. և օրհնեց նրան. <sup>24</sup>և ասաց. «Մա դո՛ւ ես, իմ որդի Եսավ»: Եվ նա ասաց. «Ես եմ»: <sup>25</sup>Եվ ասաց. «Մոտեցրո՛ւ ինձ, որ ուտեմ իմ որդու որսացածը, որ դրա համար օրհնի քեզ իմ հոգին»: Եվ նա մոտեցրեց նրան, և նա կերավ, և նրա համար գինի բերեց, և նա խմեց: <sup>26</sup>Եվ նրա հայրը՝ Իսահակն ասաց նրան. «Մոտեցի՛ր ինձ և համբուրի՛ր ինձ, որդի՛ս»: <sup>27</sup>Եվ նա մոտեցավ և համբուրեց նրան, և նա հոտոտեց նրա հանդերձները և օրհնեց նրան ու ասաց. «Տե՛ս իմ որդու հոտը այն արտի հոտի նման է, որն օրհնեց ՏԵՐԸ: <sup>28</sup>Ուստի Աստված տա քեզ երկնքի ցողից և երկրի պարարտությունից և՛ ցորենի ու գինու առատություն: <sup>29</sup>Ազգեր թող ծառայեն քեզ և ժողովուրդներ քեզ խոնարհվեն. քո եղբայրների տե՛րը եղիր և քո մոր որդիները քո առջև խոնարհվեն. քեզ անիծողներն անիծյալ, և քեզ օրհնողները օրհնյալ լինեն»:

**27:18-24** Սա մի քանի խաբեությունների սկիզբն է՝

- 1. Ո՞վ ես դու, հ. 18, Ես Եսավն եմ, հ. 19
- 2. Ինչպե՛ս եղավ, որ այդքան շուտ գտար, որդի՛ս, հ. 20, Տերը օգնեց ինձ, հ. 20
- 3. Արդյո՞ք դու իրոք Եսավն ես, հ. 24, Այո՛, ես եմ, հ. 24
- 4. Իսահակի կասկածները կարելի է տեսնել հհ. 21,24,27-ում:

**27:19** Հակոբը խնդրում է Իսահակին՝

- 1. վե՛ր կաց, BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
- 2. նստի՛ր, BDB 442, KB 444, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
- 3. կե՛ր, BDB 37, KB 46, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**27:20 «Որովհետև քո ՏԵՐ Աստվածը հանդիպեցրեց իմ առջև»** Շատ մեկնաբաններ սա կոչում են հայհոյություն, քանի որ Հակոբը խաբեց օգտագործելով Աստծո անունը: Սակայն, ես կարծում եմ Հակոբը նկատի ուներ, որ իր մոր միջոցով Աստծո իր մասին արած կանխասության փաստը, ինչպես նաև Եսավից անդրանկության իր առնելը, բոլորն էլ Աստծո գործերն են եղել (այսինքն՝ ամբողջական պատկերը):

**27:22-23** Պետք է որ Ռեբեկան շատ զգուշորեն ուլի մորթին փակցրած լիներ, հատկապես ձեռքերին (մատներին): Թե ինչպես էր նա դա արել, հայտնի չէ: Հնարավոր է, որ «ձեռքերը» իրականում նկատի ուներ Հակոբի բազուկները:

**27:25** Ըստ երևույթին հատուկ պաշտոնական օրհնությունը, որը փոխանցում էր ընտանեկան առաջնորդությունը, նման էր ուխտի՝ պայմանագրի, և հետևաբար, տեղի էր ունենում ճաշի շուրջ: Ինչ-որ մեկի հետ ուտելն ու ապա նրան մատնելը մեծ հանցանք էր համարվում միմյանց հանդեպ:

**27:26-27** Սա ևս մեկ ստուգում էր: Համբուրելը սովորաբար ողջույնի կամ հրաժեշտի ժեստ էր, սակայն այստեղ Իսահակի համար ևս մեկ առիթ էր Հակոբին ավելի մոտենալու և հոտոտելու նրան ու նրա հանդերձները: Եսավը պետք է որ հատուկ բույր ունենար, որը հատուկ էր որսորդներին:

**27:27-29** Իսահակը նկատի ուներ Եսավի համար նահապետական օրհնությունը, սակայն այն տրվելու էր Հակոբին: Նկատել՝ որ այն բովանդակում է գյուղատնտեսական օրհնություն (տես՝ 2 Օր. 33:28) ինչպես նաև ընտանիքի նախահայր լինելու օրհնություն: Դուք նաև կարող եք տեսնել Աբրահամի օրհնության հետ կապ ունեցող մի քանի առանձնահատկություններ (այսինքն՝ հ. 29):

**27:28 «երկնքի ցողը»** Պաղեստինում անձրև գալիս է միայն որոշակի եղանակների ընթացքում (վաղ անձրևները՝ տես 2 Օր. 11:14; Հովել 2:23; ուշ կամ վերջին անձրևները՝ տես 2 Օր. 11:14; Հովել 2:23): Մնացած անման եղանակին ջուրը ապահովվում էր ցողի տեսքով: Հետևաբար «ցող» (BDB 378) բառը արտահայտում է Աստծո շնորհքն ու մատակարարումը (տես՝ 2 Օր. 33:13,28):

- Համար 28 և 29 ունի ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով կիրառված ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ մի շարք՝
1. «Աստված տա», հ. 28, BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
  2. «ազգերը թող ծառայեն քեզ», հ. 29, BDB 712, KB 773, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
  3. «ժողովուրդները քեզ խոնարհվեն», հ. 29, BDB 1005, KB 295, *Hishtaphel* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
  4. «քո եղբայրների տե՛րը եղիք», հ. 29, BDB 217, KB 241, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
  5. «քո մոր որդիները քո առջև խոնարհվեն», հ. 29, ինչպես #3

**27:29** Սա ակներև երբայերեն պոեզիա է գուգահեռ համաչափություններով: Այն արտահայտում է Ծննդ. 25:23-ում առկա ճշմարտությունը, որը ակնարկվում է Ծննդ. 12:1-3-ում Աբրահամի ուխտի մեջ:

«Օրհնյալ» (BDB 138, KB 159) և «անիծյալ» (BDB 76, KB 91) ներկայացնում են Աստծո առատ օրհնությունների առկայությունն ու բացակայությունը (տես՝ Թվոց 24:9; 2 Օր. 27:15-28:19): Ինչ-որ իմաստով այն ուխտի տեսանելի խոստում է:

❖ **«և քո մոր որդիները քո առջև խոնարհվեն»** Սա գրեթե նման է Հակոբի ամբողջովին հաշվարկած տապալմանը (քանի որ Իսահակը կարծում էր խոսում է Եսավի հետ):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:30-38**  
<sup>30</sup>Եվ եղավ, երբ Իսահակը Հակոբին օրհնեց վերջացրեց, և եղավ՝ հենց որ Հակոբը դուրս եկավ իր հոր՝ Իսահակի առջևից, նրա եղբայր Եսավը եկավ որսից: <sup>31</sup>Նա էլ խորտիկներ շինեց և բերեց իր հոր մոտ և ասաց հորը. «Վեր կաց, հայր իմ, և կե՛ր քո որդու որսից, որ քո հոգին ինձ օրհնի»: <sup>32</sup>Եվ նրա հայր Իսահակն ասաց նրան. «Դու ո՞վ ես»: Եվ նա ասաց. «Ես քո անդրանիկ որդի Եսավն եմ»: <sup>33</sup>Եվ Իսահակը մեծ սարսափով սաստիկ վախեցավ և ասաց. «Ապա նա ո՞վ էր, որ որս էր արել և բերել ինձ համար, և ես ամենից կերա քո գալուց առաջ և օրհնեցի նրան. նա օրհնված էլ կմնա»: <sup>34</sup>Եվ երբ Եսավը լսեց իր հոր խոսքերը, բարձր ու դառն աղաղակելով լաց եղավ և ասաց իր հորը. «Ի՛նձ էլ օրհնի՛ր, հայր իմ, ի՛նձ էլ»: <sup>35</sup>Եվ նա ասաց. «Քո եղբայրը եկավ նենգությամբ և քո օրհնությունը վերցրեց»: <sup>36</sup> «Մի՛թե նրա անունը Հակոբ չէ, և ահա սա արդեն երկրորդ անգամ է ինձ խաբել. իմ անդրանկությունն առավ և հիմա էլ ահա,

**օրհնությունն առավ, - և ասաց, - ինձ համար օրհնություն չե՞ս թողել»: <sup>37</sup>Եվ Իսահակը պատասխանեց և ասաց Եսավին. «Ահա նրան քո վրա իշխան կարգեցի և իր բոլոր եղբայրներին տվեցի նրան՝ որպես ծառաներ. և ցորենով ու գինիով հաստատեցի նրան. և հիմա քեզ ի՞նչ անեն, որդի՛ս»: <sup>38</sup>Եվ Եսավն ասաց հորը. «Մի՞թե դու միայն մի հատ օրհնություն ունեիր, հայր իմ»: Եվ Եսավը բարձրացրեց իր ձայնը և լաց եղավ:**

**27:30 «հենց որ Հակոբը դուրս եկավ»** Այս արտահայտությունը միևնույն արմատի (BDB 422, KB 425) *Qal* ԲԱՅԱԲԶԱԿ ԱՆՈՐՈՇ և *Qal* ՎԱԳԱԿԱՏԱԲ ԲԱՅՆ է: Սա շեշտադրված արտահայտություն է, որն արտահայտում է Հակոբի մեկնելու և Եսավի ժամանման միջև ընկած կարճ ժամանակահատվածը:

**27:31 «և ասաց հորը»** Հետաքրքիր է, որ Եսավի կիրառած արտահայտությունները ճիշտ նույնն են ինչ Հակոբինը հ. 19-ում: Հավանաբար Հակոբը նույնիսկ կրկնօրինակել էր Եսավի դարձվածքներով խոսելակերպը՝ փորձելով խորամանկել իր հորը: Սակայն, այն կարող է պարզապես լինել ստանդարտ դարձվածքային արտահայտություն:

**27:32** Հանկարծ Եսավը հասկանում է, որ ինքն է «առաջնեկը» (BDB 114): Սա երբեք նախկինում նրան չէր հետաքրքրում (տես՝ 25:29-34):

**27:33 «և Իսահակը մեծ սարսափով սաստիկ վախեցավ»** Երբայերենում ԲԱՅԸ և ՀԱՅՑԱԿԱՆ ԻՄԱՑԱԿԱՆԸ (BDB 353, KB 350, տես՝ Դան. 10:7) պետք է թարգմանվեր «վախեցավ սաստիկ վախով»: Ըստ այս տեքստի իմ հասկացողությամբ այստեղ էր, որ Իսահակը գիտակցեց, որ պատերազմում է Աստծո դեմ փորձելով օրհնել առաջնեկ որդուն՝ Եսավին, և ոչ միայն այն, որ բարկացած էր Հակոբի վրա: Հետաքրքիր է նշել, որ սա ևս մեկ կերպ է, որով Աստված ցույց է տալիս Իր գերիշխանությունը ուխտի վրա այն առումով, որ առաջնեկ զավակները, որոնք սովորաբար պետք է ստանային հոր օրհնությունը, Ծննդոցի բոլոր այս առաջին գլուխներում չեն ստանում: Այլ հիմնականում երկրորդ կամ ավելի ուշ ծնված զավակներն են ստանում նահապետական օրհնությունը:

❖ **«նա օրհնված էլ կմնա»** Այս արտահայտությունը կարելի է հասկանալ կամ (1) որպես հակառակ ասված խոսքի գործյաան հիմքին, որ եթե մի անգամ ասվել է, ապա այլևս հնարավոր չէ ետ դարձնել կամ էլ (2) որպես փաստ, որ Իսահակը հասկացել էր պատերազմում է Աստծո դեմ (տես՝ նախորդող գրառումը):

**27:34 «Քո եղբայրը եկավ նենգությամբ և քո օրհնությունը վերցրեց»,** Այն, որ Հակոբը «տեղը բռնող», «գարշապար բռնող» (BDB 784) և «խաբերա» (BDB 941) էր, միայն ճշմարտության կեսն էր, քանի որ (1) Եսավը ծախել էր իր անդրանկությունը (տես՝ հ. 36 և Ծննդ. 25:27-34) և (2) Իսահակը արհամարհեց Ծննդ. 25:23-ում Ռեբեկային տրված Աստծո հայտնությունը: Հակոբ անունը սահմանվում է որպես «գարշապար բռնող» կամ «տեղը բռնող» (BDB 139) Ծննդ. 25:26-ում:

**27:36 «սա արդեն երկրորդ անգամ է»** Ըստ երևույթին սա վերաբերում է Ծննդ. 25:27-31 և 27:18-29:

❖ **«անդրանկություն ... օրհնություն»** Երբայերեն այս բառերի մեջ հնչունային բառախաղ կա, որոնք շատ նման են իրար՝ «անդրանկությունը» *bekhorah* (BDB 114, *բեխորահ*) է, մինչ «օրհնությունը»՝ *berakhah* (BDB 139, *բերախահ*):

❖ **«ինձ համար օրհնություն չե՞ս թողել»** Նահապետական օրհնությունը սպառիչ էր՝ վերջնական: Ամեն ինչ, որ վերաբերում էր ընտանիքում առաջնորդ լինելուն և ուխտի խոստումներին (տես՝ հ. 37) հոչակվեց Հակոբի կյանքի համար և հնարավոր չէր չեղարկել՝ ՅԱՀՎԵԻ անունով արտաբերված խոսքի գործյաան երբայական հասկացության պատճառով, չնայած որ Իսահակին խորամանկել էին այդ օրհնությունը տալու համար:

**27:37** Եսավը դրանով չաղքատացավ: Դեռևս նրան էր հասնում Իսահակի ունեցվածքի մեկ երրորդ մասը, սակայն նա չէր լինելու ընտանեկան գործերի կառավարիչը և ոչ էլ ընտանիքում առաջին ձայնն ունեցողը:

**27:38 «բարձրացրեց իր ձայնը և լաց եղավ»** Սա երբայերեն զգացական դարձվածք է, որը մեծ վիշտ է արտահայտում (տես՝ Ծննդ. 21:16):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:39-40**

<sup>39</sup>Եվ նրա հայր Իսահակը պատասխանեց ու ասաց նրան.  
«Ահա երկրի պարարտությունը թող լինի քո բնակարանի վրա,  
Եվ երկնքի ցողը՝ վերևից:  
<sup>40</sup>Եվ քո սրով ապրես  
Եվ քո եղբորը ծառայես,  
Եվ կլինի, որ երբ դու իշխանություն ունենաս,  
Նրա լուծը քո վզից կկտորես»:

**27:39-40** Սա այնքան էլ նահապետական օրհնություն չէ, որքան բանաստեղծական մարգարեություն, որը շատ նման է Ծննդոց 49-ին: Անկախության մի նշույլ կա հ. 40-ում՝ 3-րդ և 4-րդ տողերում:

**27:40** Հնարավոր է սա նկարագրում է Եդովմի ազգը, որը սկիզբ էր առնելու Եսավից (տես՝ Ծննդոց 36): Քանի որ նրանց պատմության մեծ մասում նրանք գտնվում էին հրեաների իշխանության ներքո (այսինքն՝ լուծի տակ, BDB 760, տես՝ Գևտ. 26:13; 3 Թագ. 12:4): Լեոպոլդ անունով մեկնաբանը մեկնում է սա որպես «նրանք միշտ փորձում էին դուրս գալ հրեական իշխանության տակից»: Սակայն ուրիշներն էլ սա մեկնաբանում են, որ իբրև նրանք վերջին հաշվով հաջողեցին, մեջբերելով Հիսուսի օրոք Հերովդեսի (որը Եդովմից էր) կառավարումը Պաղեստինի վրա (Լյութեր):

- ❖
- NASB, NKJV, NRSV, LXX                    «կտորել»
- NASB (լուսանցքում)                       «պատռել»
- TEV   «թոթափել»
- NJB   «քանդել»

Այս տերմինը (BDB 923, KB 1194) հազվադեպ բառ է: *Qal* արմատում (օրինակ՝ երեմ. 2:31) այն նշանակում է ազատ շրջել, սակայն *Hiphil* արմատում նշանակում է մեկի կապերը արձակել՝ բաց թողնել (միայն այստեղ և հավանաբար Սաղմ. 55:2):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԴՈՎՄԸ ԵՎ ԻՍՐԱԵԼԸ  
SPECIAL TOPIC: EDOM AND ISRAEL**

- Ա. Եդովմը Մեռյալ Ծովի արևելքում գտնվող ազգն է, որը սկիզբ է առել Հակոբի եղբայր Եսավից (տես՝ Ծննդոց 25-28; 32-33): Եդովմ նշանակում է «կարմիր», մինչ Եսավը նշանակում է «մազոտ» (տես՝ Ծննդ. 25:25,30):
- Բ. Իսրայելին հրամայվեց հարգել Եդովմին (տես՝ 2 Օր. 23:7)
- Գ. Իսրայելն ու Եդովմը մշտապես խնդիրներ ունեին իրար հետ՝
  1. Թվոց 20:14-21
  2. Դատ. 11:16-17
  3. 1 Թագ. 14:47-48
  4. 2 Թագ. 8:14
  5. 3 Թագ. 11:14-22
  6. 4 Թագ. 14:22; 16:5-6
  7. 2 Մնաց. 20:10-30; 21:8բ
  8. Ամովս 1:6,9
- Դ. Եդովմի դեմ այլ մարգարեություններ՝
  1. Եսայի 34:5բ; 63:1բ
  2. Երեմ. 49:7-22
  3. Ողբ 4:21-22
  4. Եզեկ. 25:12-14; 35:1-15; 36:2-6
  5. Ամովս 1:11-12
- Ե. Արդիայում Եդովմը դատապարտվում է՝
  1. իր հպարտության համար, հհ. 3-4  
ա. աշխարհագրական անվտանգության մեջ



- բ. քաղաքական դաշնությունների և ռազմական ուժերի մեջ
- գ. տնտեսական բարգավաճման՝ հարստության մեջ
- դ. ավանդական իմաստության մեջ
- 2. Հուդայի՝ իր բարեկամի հանդեպ բռնության համար, հհ. 10-14
  - ա. ցնծում է Երուսաղեմի անկումով (Ողբ 2:15-17; 4:21)
  - բ. մերժում է օգնել (հ. 15)
  - գ. թշնամուն ակտիվորեն աջակցում է (հ. 14)
  - դ. վերցնում է Հուդայի ստացվածքը (Երեմ. 13:19)
- 3. ՅԱՀՎԵԻՆ մերժելու և արհամարհելու համար (հ. 16)
- Չ. Հնարավոր է Եդովմը բոլոր այն ազգերի խորհրդապատկերն է (նմուշը), ովքեր ապստամբել են Աստծո և Նրա ժողովրդի դեմ, հհ. 15-21 (տես՝ Սաղմոս 2):
- Է. Այս մարգարեության հավանական պատմական իրականացումը՝
  1. Եդովմի կործանումը Նեո-Բաբելոնի կողմից Երուսաղեմի անկումից 5 տարի անց՝ Ք.Ա. 580թ.
  2. Նաբաթյան Արաբների կողմից մոտ Ք.Ա. 550-449թթ. Պետրայից Եդովմի տեղափոխությունը (տես՝ Մաղ. 1:2-5): Եդովմը նշված չէ Նեեմիայի կողմից տրված շրջապատող թշնամիների ցանկում, սակայն փոխարինված է Արաբական ցեղերով: Եդովմը տեղափոխվեց Նեգեվ՝ դեպի հարավ:
  3. Եդովմի պարտությունը Ալեքսանդր Մեծի զեներայի՝ Անտիգոնուսի միջոցով Ք.Ա. 312թ-ին
  4. Եդովմի պարտությունը Նեգեվում Հուդա Մակկաբայեցու կողմից՝ մոտ Ք.Ա. 175թ-ին (տես՝ 1 Մակկաբայեցիների 5:3,15; 2 Մակկաբայեցիների 10:15; Չոզեֆուսի *Հրեաների Հնությունները* 12:8:1; 13:9:1 /Josephus' *Antiquities of the Jews* 12:8:1; 13:9:1/)
  5. Եդովմը հարկադրված ընդունեց Հուդայականությունը Չոն Հիրկանուսի կողմից Ք.Ա. 125թ-ին: Նրանք հիմա կոչվում են Իդումեացիներ:
  6. Հռոմեացի զեներալ Տիտոսն ամբողջովին կործանեց Իդումեան ազգությունը մ.թ. 70թ-ին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:41-45**

<sup>41</sup>Եվ Եսավն ասում էր Հակոբին այն օրհնության համար, որով հայրը նրան օրհնեց: Եվ Եսավն ասում էր իր սրտում. «Մոտենում են իմ հոր համար սուգ անելու օրերը, այն ժամանակ ես կսպանեմ իմ եղբայր Հակոբին»: <sup>42</sup>Երբ Ռեբեկային պատմեցին իր մեծ որդու՝ Եսավի այս խոսքերի մասին, նա մարդ ուղարկեց, կանչեց իր կրտսեր որդի Հակոբին և ասաց նրան. «Ահա քո եղբայր Եսավը քո դեմ ոխ ունի, որ քեզ սպանի: <sup>43</sup>Եվ հիմա, որդի՛ս, լսի՛ր ինձ և փախի՛ր իմ եղբայր Լաբանի մոտ՝ Խառան: <sup>44</sup>Եվ նրա մոտ բնակվիր միառժամանակ <sup>45</sup>մինչև քո եղբոր բարկությունն անցնի, և նա մոռանա քո արածը, և ես մարդ կուղարկեմ ու քեզ ետ կբերեմ այնտեղից. ինչո՞ւ մեկ օրում զրկվեմ ձեզնից՝ երկուսիցդ:

**27:41** Մեպտուազինտան այս համարը թարգմանում է որպես Եսավի կողմից Իսահակի համար մահվան ցանկություն (այսինքն՝ Իսահակը կարծում էր, որ ինքը մեռնում էր. ահա թե ինչու նա տվեց իր օրհնությունը, տես՝ հ. 2), սակայն սա կարծես թե դուրս է կոնտեքստից: Եսավն իրոք սիրում էր Իսահակին:

**27:43** Երբ Ռեբեկան լսեց Եսավի Հակոբից վրժիխնությունն առնելու ծրագրերը, Հակոբին հրամայեց գործել՝

1. «հնազանդի՛ր» (բառացի՝ «լսի, թե ինչ պետք է անես») BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «վե՛ր կաց», BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. «փախի՛ր» (բառացի՝ «զնա՛»), BDB 137, KB 156, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Նա՝ Ռեբեկան, ուղարկում է Հակոբին իր ընտանիքի մոտ՝ Խառան: Ճամփորդությունը երկու նպատակ ուներ՝

1. Եսավից հեռու պահել նրան և թողնել, որ Եսավի բարկությունը հանդարտվի (տես՝ հհ. 44-45)
2. իր ընտանիքից մի կին գտնելու համար (տես՝ հ. 46), և ոչ թե քանանացիների միջից, ինչպես որ Եսավն էր վարվել (տես՝ Ծննդ. 26:34-35; 27:46):

**27:44-45** Ահա մի շարք արտահայտություններ, որոնցից կարծես թե հասկանալի է, որ նա Հակոբին շատ շուտով ետ տուն կկանչի: Իրականում, Հակոբը ավելի քան 20 տարի պետք է մնար այնտեղ և հավանաբար երբեք դարձյալ չէր տեսնելու իր մորը: Արդյոք զավեշտալի չէ այն փաստը, որ չնայած Հակոբը ստացավ թե՛ անդրանկությունը և թե՛ ժառանգությունը, սակայն պետք է փախուստի դիմեր իր կյանքի համար և ավելի քան 20 տարի թողներ Եսավին վայելելու այդ երկունսն էլ: Ես շատ եմ ցավում Ռեբեկայի համար, որը ստիպված էր մնալ մի ծեր և կաղ մարդու հետ, որին նա խաբել էր և իր ավագ որդու հետ, որն իրեն մատնված էր զգում:

**27:45 «Ինչո՞ւ մեկ օրում զրկվեմ ձեզնից՝ երկուսից»** Սա կարելի է մեկնաբանել երկու կերպ՝ (1) որ Եսավը կարող էր սպանել Հակոբին և ամենամոտ բարեկամը կգործեր որպես *go'el* և կսպաներ Եսավին (տես՝ Ծննդ. 9:6) կամ (2) որ Հակոբը, թեև տան մարդ, նաև շատ ուժեղ տղամարդ էր, որը հստակ երևաց Լաբանի հետ իր հովվի պարտականությունների նկարագրությունից (տես՝ Ծննդ. 31:38-42), և հետագայում հրեշտակի հետ ձեռնամարտից (տես՝ Ծննդ. 32:24-32), և հավանաբար երկու եղբայրները իրար կսպանեին, եթե կռվեին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 27:46**  
**<sup>46</sup>Եվ Ռեբեկան ասաց Իսահակին. «Կյանքիցս զզվել եմ Քեոփ աղջիկների պատճառով. եթե Հակոբն էլ է այս երկրի աղջիկների նման կին առնելու Քեոփ աղջիկներից, էլ իմ ինչի՞ն է հարկավոր կյանքը»:**

**27:46** Դարձյալ մենք տեսնում ենք Ռեբեկայի խորամանկությունը՝ ճկունությունը: Նա Հակոբին հեռու ուղարկելու համար կիրառում է կարծեցյալ արդարացում, մինչ իր կյանքից զզված լինելու մասին (BDB 880 D) չի նշում Եսավին: Ըստ երևույթին նրա պատճառը իրոք հավաստի էր, քանի որ Իսահակն ընդունեց այն (տես՝ 28:1-2): Ծննդ. 26:34,35-ում արձանագրված է, որ Եսավը ամուսնացել էր երկու քանանացի կանանց հետ (Քեո, BDB 366, տես՝ 23:3,10. տես՝ Հատուկ Թեմա. Պաղեստին նախախրայելական բնակիչները, 12:6-ում):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Այս գլխում ո՞վ է դիտարկվում որպես թե անմաքուր դրդապատճառներ և միջոցներ ունեցողը:
2. Ի՞նչ կապ ունի Ծննդոց 25:23 այս գլխի հետ:
3. Ի՞նչ է բովանդակում նահապետական օրհնությունը:
4. Ինչո՞ւ էր Ռեբեկան կամենում, որ իր որդին ամուսնանար բարեկամի հետ:

## ԾՆՆԴՈՑ 28

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը հեռու է ուղարկվում	Հակոբը փախնում է Եսավից	Հակոբը մեկնում է Արամ և նրա երազը Բեթելում (27:46-28:22)	Իսահակը Հակոբին ուղարկում է Լաբանի մոտ (27:46-28:5)	Իսահակը Հակոբին ուղարկում է Լաբանի մոտ (27:46-28:5)
28:1-5	28:1-5 (3-4)			
	Եսավը ամուսնանում է Մայելեթի հետ		Եսավը մեկ այլ կին է առնում	Եսավի մեկ այլ ամուսնությունը
28:6-9	28:6-9	28:6-9	28:6-9	28:6-9
Հակոբի երազը	Հակոբի երդումը Բեթելում			
28:10-17	28:10-17	28:10-17		

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

#### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:1-5

<sup>1</sup>Եվ Իսահակը կանչեց Հակոբին, օրհնեց նրան ու պատվեր տվեց՝ ասելով. «Քանանի աղջիկներից կին չառնես: <sup>2</sup>Վեր կաց, գնա Փաղան-Արամ քո մոր հայր Բաթուելի տուն և այնտեղից քեզ համար կին առ քո մորեղբայր Լաբանի աղջիկներից: <sup>3</sup>Եվ Ամենակարող Աստված թող օրհնի՝ քեզ և քեզ բազմացնի ու աճեցնի, և դու ժողովրդի բազմություն լինես: <sup>4</sup>Եվ տա քեզ Աբրահամի օրհնությունը, քեզ և քեզ հետ քո սերնդին, որպեսզի ժառանգես այն երկիրը, որտեղ պանդուխտ ես, որ Աստված տվել է Աբրահամին»: <sup>5</sup>Եվ Իսահակը ճանապարհեց Հակոբին, և նա

**գնաց Փաղան-Արամ՝ ասորի Բաթուելի որդի Լաբանի, այսինքն՝ Հակոբի ու Եսավի մոր՝ Ռեբեկայի եղբոր մոտ:**

**28:1 «Եվ Իսահակը կանչեց Հակոբին, օրհնեց նրան»** Այս գլուխը մեկնաբանվում է Ռեբեկայի կողմից Եսավի ճակատագրի մասին ականջ դնելու և 27:46-ում նրա ծրագրի գործադրման հիման վրա: Նշանակալի է, որ Իսահակն այստեղ ինքնակամ առանց խաբվելու է օրհնում Հակոբին: Հավանաբար նա հասկացել էր, որ կռիվ էր տալիս Աստծո ընտրության դեմ՝ կամենալով Եսավն ընդունել օրհնությունը: Այնուամենայնիվ, այստեղ՝ ենթատեքստում «օրհնությունը» լոկ ողջույնի ձև է (օրինակ՝ 47:7,10 և Հռութ 2:4):

❖ **«Քանանի աղջիկներից կին չառնես»** Սա հենց նույն խոսքն է, որը Ծննդոց 24:3-4-ում Աբրահամն ասաց իր ծառային՝ Իսահակին կին գտնելու համար: Սա պետք է որ կապ ունենար ՅԱՀՎԵԻ երկրագոյության հետ: Չնայած որ Բաթուելի որդին՝ Լաբանը, հնարավոր է ճշմարիտ ՅԱՀՎԵԻստ չէր (այսինքն՝ *Teraphim*, տես՝ 31:19,34,35), ըստ երևույթին գոյություն ուներ որոշակի աստվածաբանական գաղափարներ այդ ընտանիքից ներս:

- 28:2** Իսահակը Հակոբին մի քանի պատվեր է տալիս՝
1. «վեր կաց», BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  2. «գնա», BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  3. «ա՛ռ» BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

❖ **«Փաղան-Արամ»** Այս տերմինը (BDB 804 և 74) հետագայում կիրառվում է Սիրիական կայսրության համար (տես՝ 25:20), մինչդեռ այստեղ կարծես թե այն վերաբերում է Իսառանի շրջակայքին (այսինքն՝ մի ինչ-որ քաղաք կամ շրջան):

❖ **«քո մոր հայր Բաթուելի տուն»** Տե՛ս նաև Ծննդ. 22:20-24; 24:15

**28:3 «Ամենակարող Աստված թող օրհնի՛ քեզ»** Սա *El Shaddai* (BDB 42 և 994, տես 17:1-ի գրառումը) անունն է: Սա նահապետների կողմից ընդունված անուն է Աստծո համար (տես՝ 17:1; 28:3; 35:11; 43:14; 48:3 և հավանաբար՝ 49:25): Ելից 6:2-3-ից իմանում ենք, որ սա այն անունը կամ տիտղոսն է, որ կիրառում էին Նահապետները Աստծո մասին խոսելիս: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ, 12:1-ում:

❖ **«ժողովրդի բազմություն»** Սա եբրայերեն *Qahal* (BDB 874, տես՝ 2 Օր. 5:22; 9:10; 10:4; 23:2-9; 31:30) տերմինի առաջին կիրառությունն է, որը Սեպտուագինտան տարգմանել է *ekklesia* /*էկկլեսիա*/: ՆԿ-յան հավատացյալներն այս տերմինը կիրառում էին նկարագրելու իրենց ուխտի հավատացյալների նոր ժողովրդ՝ խումբը: Դա նրանց արտահայտման կերպերից մեկն էր ՀԿ-յան Աստծո ժողովրդի հետ իրենց մեկ լինելու վերաբերյալ:

- 28:3-4** Այս համարներն ունեն մի քանի ԱՆԿԱՏԱՐՆԵՐ, որոնք կիրառված են ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:
1. օրհնել, հ. 3, BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
  2. անեցնի, հ. 3, BDB 826, KB 963, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
  3. բազմացնի, հ. 3, BDB 915, KB 1176, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
  4. տա քեզ Աբրահամի օրհնությունը, հ. 4, BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 15:7,8

**28:4 «Աբրահամի օրհնությունը»** Սա դառնում է ստանդարտ արտահայտություն Աբրահամյան խոստման համար (տես՝ հ. 13; 12:7; 13:15,17; 15:7,8; 17:8; 26:3,4; Ելից 6:4):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:6-9**

<sup>6</sup>Երբ Եսավը տեսավ, որ Իսահակն օրհնեց Հակոբին և նրան ուղարկեց Փաղան-Արամ, և նրան օրհնելիս նաև պատվիրեց, թե՛ Քանանի աղջիկներից քեզ համար կին չառնես, <sup>7</sup>երբ որ Հակոբը հնազանդվեց իր հորն ու իր մորը և գնաց Փաղան-Արամ, <sup>8</sup>նաև Եսավը տեսավ, որ Քանանի աղջիկներն իր հորը՝ Իսահակին հաճելի չեն, <sup>9</sup>Եսավը գնաց Իսմայելի մոտ, և Աբրահամի որդի Իսմայելի դստերը՝ Մայելեթին՝ Նաբեթի քրոջը, իրեն կին առավ իր կանանցից բացի:

**28:6 «Երբ Եսավը»** Հ. 6-9-ից Եսավի մասին ևս մեկ բնավորության գիծ ենք հայտնաբերում: Նա դեռևս չի կամենում պատասխանատվություն վերցնել, սակայն ցանկանում է օրհնությունը: Եվ դարձյալ, նա իրեն ցուցաբերում է ավելի շուտ աշխարհիկ մարդու կերպարանքով: Նա արդեն իսկ Քանանի աղջիկներից կանայք ուներ (տես՝ Ծննդ. 26:34-35; 27:46; 28:8; 36:2), և այժմ ամուսնանալու էր Իսմայելի դստեր հետ, որպեսի հանցներ իր հորը: Այս աղջկա անունը «Մայելթ» էր՝ հ. 9-ում, սակայն Ծննդ. 36:3-ում կոչվում է «Բասեմաթ»: Հավանաբար նա դեռևս փորձում էր ստանալ օրհնություն Իսահակից:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:10-17**  
<sup>10</sup>Եվ Հակոբը դուրս եկավ Բերսաբեեից և գնաց դեպի Խառան: <sup>11</sup>Եվ մի տեղ հասավ ու գիշերն այնտեղ մնաց, որովհետև արեգակը մայր էր մտել, և այնտեղի քարերից վերցրեց և իր գլխի տակ դրեց և այնտեղ պառկեց: <sup>12</sup>Եվ երազ տեսավ, և ահա մի սանդուղք էր դրված երկրի վրա, և դրա ծայրը երկնքին էր հասնում, և ահա Աստծո հրեշտակները դրանով վեր էին բարձրանում ու իջնում: <sup>13</sup>Եվ ահա ՏԵՐԸ կանգնած էր դրա վրա և ասաց. «Ես եմ ՏԵՐԸ՝ քո հայր Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը. այն երկիրը, որի վրա պառկած ես, Ես քեզ եմ տալու և քո սերնդին, <sup>14</sup>և քո սերունդը երկրի ավազի չափ կլինի և կտարածվես դեպի արևմուտք ու արևելք և դեպի հյուսիս ու հարավ. և քեզանով ու քո սերնդով կօրհնվեն երկրի բոլոր ազգատոհմերը: <sup>15</sup>Եվ ահա ես քեզ հետ եմ, և ամեն տեղ՝ ուր որ գնաս, կպահեմ քեզ և քեզ այս երկիրը կվերադարձնեմ, որովհետև չեմ թողնի քեզ, մինչև չկատարեմ այն, ինչ քո մասին ասել եմ»: <sup>16</sup>Եվ Հակոբը զարթնեց քնից ու ասաց. «Հիրավի ՏԵՐԸ այստեղ է, և ես չգիտեի»: <sup>17</sup>Եվ վախեցավ ու ասաց. «Ի՛նչ ահավոր է այս տեղը, սա ուրիշ բան չէ, քան Աստծո տունը, և սա է երկնքի դուռը»:

**28:10 «Եվ Հակոբը դուրս եկավ Բերսաբեեից և գնաց դեպի Խառան»** Ովսեա 12:12 ասում է, որ նա փախնում էր իր եղբորից (տես՝ Ծննդ. 27:41-45):

**28:11**  
**NASB, NKJV, NRSV, NJB, LXX**      «և նա հասավ մի տեղ»  
**TEV**    «մի սուրբ վայր»  
**REB**    «ինչ-որ մի սրբավայր»

Սա կարծես թե ավելի շուտ անսովոր տերմին է (բառացի՝ «վայրը», BDB 879) պատահական մի վայրի համար: Այն վերաբերում է Եփրեմի լեռնային շրջանում գտնվող ինչ-որ տեղի, որը մոտ էր Լու քաղաքին: Այս տարածաշրջանը հատուկ կապ ուներ Աբրահամի հետ (տես՝ Ծննդ. 12:8; 13:3-4):

**28:12 «մի սանդուղք էր դրված երկրի վրա, և դրա ծայրը երկնքին էր հասնում»** Սանդուղքի համար կիրառված տերմինը (ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում) «ինչ-որ բան կուտակել» (BDB 700, KB 757) է նշանակում: Այս տարածքը հայտնի է իր հարթ՝ ողորկ քարերով: Մեր ժամանակակից լեզվով սանդուղքի փոխարեն հավանաբար դա եղել է այս մեծ քարերից իրար վրա դրած աստիճանաձև սարք: Հիսուսը Հովի. 1:51-ում Իրեն նկարագրելու համար կիրառում է այս աստիճանի օրինակը:

❖ **«Աստծո հրեշտակները դրանով վեր էին բարձրանում ու իջնում»** Այստեղ թվում է թե հերթականությունը հակառակն է, սակայն հնարավոր է, որ դա հենց այս յուրահատուկ հերթականությամբ էր, ցույց տալու, որ Աբրահամի Աստծո ուխտն արդեն Հակոբի հետ էր, և Նրա հրեշտակները արդեն առաջնորդում էին նրան իր առօրյա կյանքում:

**28:13**  
**NASB, NKJV, RSV, Peshitta**      «ՏԵՐԸ կանգնած էր դրա վրա»  
**NRSV, TEV, JPSOA**                      «ՏԵՐԸ կանգնած էր նրա կողքին»  
**NJB, NASB (լուսանցք)**                «ՏԵՐԸ կանգնեց նրա կողքին»  
**NIV**    «դրա վերելում կանգնած էր ՏԵՐԸ»  
**LXX**    «ՏԵՐԸ կանգնեց դրա վրա»

ԲԱՅԸ (BDB 662, KB 714, *Niphal* ԴԵՐԲԱՅ) նշանակում է «կանգնել»: Ենթատեքստը կամ բային զուգակցված նախդիրները պետք է հստակեցնեն մանրամասները: Այստեղ ՚օ կարող է նշանակել «կողքին» կամ «վրա»: Սա ուխտի նորոգության ևս մեկ սահմանում է՝ առաջին պաշտոնականը, որ ուղղվեց Հակոբին: «Ես եմ քո հոր Աստվածը» արտահայտությունը նահապետական տիտղոս է (այսինքն՝ 26:24; 28:13; 31:5,29,42,53; Ելից 3:6,15):

❖ «այն երկիրը, որի վրա պատկած ես» Սա առաջին անգամ ասվել է Աբրամին (տես՝ Ծննդ. 12:7; 13:15,17; 15:7,8; 17:8), ապա՝ Իսահակին (Ծննդ. 26:3), և այժմ էլ՝ Հակոբին:

**28:14 «քո սերունդը երկրի ավազի չափ կլինի»** ՅԱՀՎԵՆ Նահապետներին խոստանում է մեծաքանակ սերունդներ՝ ժառանգներ (տես՝ 12:2; 13:16; 15:5; 16:10; 17:2,4-5): Ինչ-որ առումով սա ժառանգորդի խոստման իրականացումն է, սակայն ավելի շատ՝ բազմաթիվ ժառանգորդների: Մենք, որ Քրիստոնյաներ ենք, սա տեսնում ենք Գաղ.3:14 և Հռոմ.2:28-29; 8:15-17-ում: Ծննդոց 3:15-ը իրականություն է:

❖ «և քեզանով ու քո սերնդով կօրհնվեն երկրի բոլոր ազգատոհմերը» Սա ամենագլխավոր ճշմարտությունն է, որ Աբրահամի կանչի նպատակը ամբողջ աշխարհի փրկությունն էր (տես՝ Հ.Հ. Ռոուլի, *Հին Կտակարանի միսիոներական պատգամը* /H. H. Rowley, *The Missionary Message of the Old Testament*): Այս հատուկ ԲԱՅԱԿԱՆ ձևը Եբրայերենում *Niphal* է և կարող էր թարգմանվել «օրհնված կլինեն»: Այս նույն ձևը հայտնվում է 12:3; 18:18; Գործք 3:25; Գաղ.3:8-ում: *Hithpael* ձևը հայտնվում է Ծննդ. 26:4 և 22:16-18-ում և կարող էր թարգմանվել «իրենց կօրհնեն»: Սրանք միևնույն օրհնությունը երկու կերպ դիտարկելու ձևեր են: Աստված Իր ժողովրդի միջոցով օրհնություն է ցուցաբերելու, որը տեսնելու են ուրիշները և ցանկանալու են: Ամեն դեպքում դա լինելու է միայն Նահապետների Աստծո (այսինքն՝ ՅԱՀՎԵԻ) հետ հաղորդակցվելու միջոցով:

**28:15 «Ես քեզ հետ եմ»** «Ես Եմ» Աստվածը (տես՝ հ. 13) անձամբ ներկա է Հակոբի հետ: Սա Աստծո օրհնություններից մեծագույնն է (տես՝ Ծննդ. 26:3):

❖ «չեմ թողնի քեզ» ՅԱՀՎԵՆ խոստանում է երբեք չլքել իր խոստումները, Իր ժողովրդին (օրինակ՝ 2 Օր. 31:6,8; Հեսու 1:5; Եբր. 13:5):

❖ «մինչև չկատարեմ այն, ինչ քո մասին ասել եմ» Նկատելք ՅԱՀՎԵԻ խոստումների հաստատ լինելը, տես՝ 2 Օր. 7:9 և Եսայի 55:11:

**28:16**

NASB, NKJV, NRSV, REB

TEV

JPSOA

«Հիրավի ՏԵՐՆ այստեղ է»

«ՏԵՐՆ այստեղ է»

«Հիրավի ՏԵՐՆ ներկա է այս վայրում»

«Հիրավի», «իսկապես» ՄԱԿԲԱՅԸ (BDB 38, տես՝ Ելից 2:14; 1 Թագ. 15:32; Ես. 40:7; 45:15; Երեմ. 3:23 /երկու անգամ/; 4:10) արտահայտում է ուժգնություն՝ շեշտադրվածություն:

❖ «և ես չգիտեի» Ըստ երևույթին Հակոբը զգաց, որ նա ոտք էր դրել սուրբ հողի վրա, սակայն չգիտեր, որ այն սուրբ էր, քանի որ տարօրինակ կամ տարբերվող տեսք չունեի: Սա, իմ կարծիքով, հակասում է մի քանի հնագույն մեկնաբանների այն տեսությանը, որ սա քանանացիների սրբավայր էր:

**28:17 «և նա վախեցավ»** Այս երազի վերաբերյալ Հակոբի վերաբերմունքը նկարագրված է որպես «վախ» (BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Նա այս վայրը նկարագրում է որպես «ահավոր» (BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԲԱՅ): Մարդիկ վախենում էին և են, երբ տեսնում են կամ գտնվում Աստծո սուրբ ներկայության մեջ կամ էլ հոգևոր տիրակալությանը մեջ (այսինքն՝ հրեշտակները): Հիշե՛ք Ելից 3:5-ում վառվող մորենու միջից Աստծո խոսքը Մովսեսին կամ Ելից 19-ում Սինա լեռան մոտ Իսրայելի ազգին:

❖ «սա ուրիշ բան չէ, քան Աստծո տունը, և սա է երկնքի դուռը» Որոշ մեկնաբաններ զգում են, որ այս արտահայտությունը՝ «երկնքի դուռը» (BDB 1044, ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ 1029) և սանդուղքը, որը հասնում է մինչև երկինք, մի քանի բարեկոնյան կրոնական գաղափարների (այսինքն՝ Զիզուրատների) հիշեցում է: Չնայած որ իրոք այդպես է, որ այս գաղափարները առկա են եղել բարեկոնյան դիցաբանության մեջ, դա չի նշանակում, որ հենց դա Հակոբի մտայնության աղբյուրը:

Սա Աստծո և մարդու հանդիպման վայրի փոխաբերությունն է: Այստեղ Աստծո վեր բարձրացող և իջնող հրեշտակների գաղափարն արտահայտում է Նրա ակտիվ ներգրավվածությունը մարդկանց՝ հատկապես ուխտի ընտանիքի անդամների, ամենօրյա գործերի մեջ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:18-22**

**18**Եվ Հակոբը առավոտյան վաղ վեր կացավ, վերցրեց այն քարը, որ իր գլխի տակ էր դրել և այն որպես կոթող կանգնեցրեց և դրա գլխին յուղ թափեց.<sup>19</sup> և այնտեղի անունը Բեթել դրեց. բայց մինչև այդ այն քաղաքի անունը Լուզ էր:<sup>20</sup> Եվ Հակոբը ուխտ արեց և ասաց. «Եթե Աստված ինձ հետ լինի, ինձ պահի այս ճանապարհի ընթացքում, որով գնում եմ և ինձ ուտելու հաց և հագնելու հանդերձանք տա, <sup>21</sup>և ես խաղաղությամբ տուն դառնամ՝ իմ հոր տունը, ՏԵՐՆ ինձ համար Աստված լինի,<sup>22</sup>և այս քարը, որ ես որպես կոթող կանգնեցրի, թող Աստծո տուն լինի. և այն ամենից, որ դու ինձ տաս, ես իրապես քեզ տասանորդ կտամ:

**28:18** «այն որպես կոթող կանգնեցրեց և դրա գլխին յուղ թափեց» Այս սյունը՝ կոթողը, Եբրայերենում *massebah* (BDB 663), հուշարձան է (տես՝ 35:14) Հակոբի և Աստծո հանդիպման վայրի: Հետագայում այն դարձավ պտղաբերության աստվածների երկրպագության հետ առնչվող մի բան և որը դատապարտվեց Մովսիսական Օրենքում (օրինակ՝ Ելից 23:24; 34:13; 2 Օր. 16:22):

**28:19** «և այն տեղի անունը Բեթել դրեց» Սա Եբրայերեն տուն բառից՝ *beth* (BDB 108), և Հնագույն Մերձավոր Արևելքում Աստծո համար ընդհանուր կիրառելի *El* (BDB 41) անունից: Այն հայտնի էր քանանացիների միջավայրում որպես Լուզ, որը նշանակում է «նշենի» (BDB 531 II, տես՝ 35:6; 48:3), սակայն այս պահից ի վեր Հրեաները այն կոչեցին Բեթել (այսինքն՝ Աստծո տուն):

**28:20-22** «Եթե» Սա կարծես թե Հակոբի կողմից հավատքի պակասության նշան էր, սակայն հնարավոր է, որ նա փորձում էր Աստծո խոստումը յուրահատուկ լեզվով շարադրել: Շատ հնարավոր է, որ սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԴԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է հունարեն լեզվում և որ նա ենթադրում էր, որ այն ինչ Աստված ասել էր ճշմարիտ էր և փորձում էր դրանք ներկայացնել այնպիսի տերմիններով, որ ինքը կարողանար հասկանալ և ապավինել դրան: Այս դեպքում ես չեմ կարող բացասել Հակոբի հավատքը, քանի որ այս արտահայտությունը բազմիմաստ է:

Ուշադրություն դարձրեք պայմաններին՝

1. Եթե Աստված իր հետ լինի
2. Եթե Աստված պահի, պահպանի նրան (BDB 1036, KB 1581)
3. Եթե Աստված սնունդ տա նրան
4. Եթե Աստված հագցնի նրան
5. Եթե նա ապահով վերադառնա իր հոր տունը

Ուշադրություն դարձրեք Հակոբի տված խոստման գործողությունները՝

1. նա կհաստատի երազը տեսնելու և կանգնեցրած կոթողի վայրը որպես Աստծո տուն
2. նա տասանորդ կտա («ես իրապես քեզ տասանորդ կտամ»․ միևնույն արմատի ԲԱՅԱՐ-ՉԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ձևը /BDB 797, KB 894/ արտահայտում է ուժգնություն՝ շեշտադրում)

Հակոբը չի նդրեց հարստություն, այլ Աստծո օգնությունը, ներկայությունը և պաշտպանությունը իր ճամփորդության ընթացքում:

**28:22** «ես իրապես քեզ տասանորդ կտամ» Տասանորդը՝ թվատության և գոհաբերության պես, շատ ավելի հին է, քան Մովսիսական Օրենքը: Մենք տասանորդի այս գաղափարին հանդիպում ենք Ծննդոց 14:20-ում և այստեղ՝ 28:22-ում, շատ ավելի շուտ, քան Մովսեսը ընդունեց Օրենքը: Այն կարծես թե խորհրդապատկերն է այն ամենի, որ ինչ ունենք իրականում պատկանում է Աստծուն:

Մեկը կարող է հարցնել, թե ո՞ւմ էր Հակոբը վճարելու այս տասանորդը: Դեռևս չկային քահանաներ կամ կառույցներ՝ շենքեր, այս ամայի վայրում, որտեղ նա հանդիպեց ՅԱՀՎԵԻՆ: Հավանաբար ողջակեզներ կմատուցեին:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Իսահակը արդյո՞ք փոխեց իր կարծիքն այն մասին, որ Հակոբն էր իրական խոստացված ժառանգորդը:
2. Ի՞նչ անունով էին Նահապետները ճանաչում Աստծուն:
3. Ի՞նչ նշանակություն ունեն Հակոբի և հետագայում Հիսուսի համար :
4. Ի՞նչ է սյունը՝ կոթողը և ինչու էր այն դատապարտելի:
5. Ի՞նչ է ասում հ. 22-ը տասանորդի մասին:



## ԾՆՆԳՈՑ 29

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը հանդիպում է Ռաբելին	Հակոբը հանդիպում է Ռաբելին	Հակոբի հաջողումը Խառանում (29:1-31:55)	Հակոբը հասնում է Լաբանի տուն	Հակոբը հասնում է Լաբանի տուն
29:1-3	29:1-3	29:1-3	29:1-3	
29:4-8	29:4-8	29:4-8	29:4ա 29:4բ 29:5ա 29:5բ 29:6ա 29:6բ 29:7 29:8	
29:9-12	29:9-12	29:9-12	29:9-12ա 29:12բ-14	29:9-14
29:13-14	29:13-14	29:13-14		Հակոբի երկու ամուսնությունները
29:15-20	Հակոբը ամուսնանում է Լիայի և Ռաբելի հետ 29:15-20	29:15-20	Հակոբը ծառայում է Լաբանին Ռաբելի և Լիայի համար 29:15-17 29:18 29:19-20	29:14բ-19
Լաբանի խորամանկությունը 29:21-30	29:21-30	29:21-30	29:21-25 29:26-27 29:28-30	29:20-30
29:31-35	Հակոբի երեխաները (29:31-30:24) 29:31-30:8	29:31-30:8	Հակոբի համար ծնված երեխաները (29:31-30:24) 29:31-35	Հակոբի երեխաները (29:31-30:24) 29:31-30:8

# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրով մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:1-3

<sup>1</sup>Ապա Հակոբը ճանապարհի ընկավ ու գնաց արևելքի որդիների երկիրը: <sup>2</sup>Եվ նայեց, և ահա դաշտում մի ջրհոր կար, և ահա այնտեղ՝ դրա մոտ ոչխարների երեք հոտ էր պառկել, քանի որ այդ հորից խմեցնում էին հոտերին. և հորի բերանին մի մեծ քար կար: <sup>3</sup>Եվ բոլոր հոտերն այնտեղ էին հավաքում և հորի բերանից քարը գլորում էին և հոտերին խմեցնում և քարը նորից իր տեղը՝ հորի բերանին էին դնում:

**29:1 «Ապա Հակոբը ճանապարհի ընկավ»** Այս արտահայտությունը բառացիորեն թարգմանվում է «իր ոտքերը բարձրացրեց» (BDB 669 և 919): ՀԿ-ում սա այն միակ տեղն է, որտեղ հանդիպում ենք այս բացառիկ դարձվածքը: Այն կարծես թե արտահայտում է ինչ-որ ոգևորություն և նպատակ, որ Հակոբը գգում էր Բեթելում Աստծո հետ հանդիպումից հետո:

❖ **«ու գնաց արևելքի որդիների երկիրը»** Դատավորաց 6:3 և 33-ում սա կարծես թե վերաբերում է արաբական մի ցեղի (տես՝ Հոր 1:3; Ես.11:14; Եզեկ.25:4,10): Մակայն այստեղ այն կարծես թե վերաբերում է Խառանի բնակիչներին, որոնց հանդիպելու էր Հակոբը:

**29:2 «Եվ նայեց, և ահա դաշտում մի ջրհոր կար»** Ճամփորդությունն ամբողջությամբ բաց է թողնված և հ.2-ում Հակոբը հայտնվում է Խառանից մոտ մի վայրում, սակայն հաստատ չգիտեր իր գտնվելու տեղանքի մասին: Ջրհորները տեղացիների համար հանդիպման վայր էր: Աստծո ներկայությունը ակնհայտ էր այս «պատահական» հանդիպման մեջ: Խառանը 29-31 գլուխների ենթատեքստն է:

❖ **«և հորի բերանին մի մեծ քար կար»** Այս մշակույթի մեջ սա ընդունված էր և դրված էր, որպեսզի (1) ջուրը չգոլորչիանար, (2) ջուրը մաքուր մնար, կամ էլ (3) ապահովության նպատակով էր (անթույլատրելի օգտագործումից պահելու):

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:4-8

<sup>4</sup>Եվ Հակոբն ասաց նրանց. «Եղբայրներս, որտեղացի՞ եք դուք», պատասխանեցին. «Խառանից ենք»: <sup>5</sup>Եվ նա ասաց նրանց. «Նաքովրի որդի Լաբանին ճանաչո՞ւմ եք»: Եվ նրանք ասացին. «Ճանաչում ենք»: <sup>6</sup>Ասաց նրանց. «Առո՞ղջ է»: Եվ նրանք պատասխանեցին. «Առողջ է, և ահա նրա աղջիկ Ռաբելը ոչխարների հետ գալիս է»: <sup>7</sup>Եվ նա ասաց. «Ահա դեռ օրն առջևում է, և դեռ հոտերը հավաքելով ժամանակը չե, ոչխարներին ջրեցե՞ք ու գնացե՞ք արածեցնելու»: <sup>8</sup>Նրանք ասացին. «Չենք կարող՝ մինչև բոլոր հոտերը չհավաքվեն. այն ժամանակ քարը կգլորենք հորի բերանից և կջրենք ոչխարներին»:

**29:4 «եղբայրներ»** Սա այս տերմինի (BDB 26) կիրառությունն է ողջունելու դեպքում՝ առանց ակնարկելու ընտանեկան որևէ կապ: Մենք այս նույն ողջունի ձևը կիրառում ենք այսօր էլ Քրիստոնյա ընկերների միջև հարավային ԱՄՆ-ում /նաև Հայաստանում/:

Հհ. 12 և 15-ում միևնույն տերմինը կիրառվում է բարեկամի համար, սակայն կրկին բառացիորեն նշանակում է «եղբայր»: Հ. 14-ում ընտանիքի այսպիսի ընդունելությունը կոչվում է «իմ ոսկորն ու իմ մարմինը» /հայերենում՝ «իմ միսն ու արյունը»/ (տես՝ Ծննդ. 2:23):

**29:5 «Նաքովրի որդի Լաբանին ճանաչում եք»** Ահա մի լավ օրինակ, որտեղ «որդի» (BDB 119) բառը երբայերենում կարող է վերաբերել «հորը» կամ «պապիկին»: Բաթուելը Լաբանի հայրն է և Նաքովրը նրա պապիկն է (տես՝ Ծննդ. 24:24,29):

**29:6 «Առողջ է ... Առողջ է»** Սա *շալու* (BDB 1022) տերմինն է: Տե՛ս Հատուկ Թեմա 15:15-ում:

❖ **«Նրա աղջիկ Ռաբելը ոչխարների հետ գալիս է»** Աստծո ծառաների կյանքում չկան պատահակա-նություններ (տես՝ 24:15; Ելից 2:16; տես՝ *Քրիստոնյայի Երջանիկ Կյանքի Գաղտնիքը* Հաննա Ուիթհոլ Սմիթի կողմից /*The Christian's Secret of a Happy Life* by Hannah Whithall Smith/): Այստեղ կա Աստծո անենույթ ձեռքը, ինչպես Հովսեփի հետ է լինելու Ծննդ. 37:15-17-ում (նաև Եսթերի գրքում, որտեղ Աստծո անունը երբեք չի հայտնվում, սակայն Նրա ներկայությունն ու առաջնորդությունն ակնհայտ են):

**29:7 «Ահա դեռ օրն առջևում է»** Հակոբը հովիվ էր և գիտեր, որ այն ինչ արվում էր դեմ էր հովվության լավագույն կանոններին (այս գիտելիքը ապշեցնելու էր Լաբանին): Սա թույլ էր տալու իրեն ցույց տալու իր կարողությունները (տես՝ հ. 10) Ռաբելին: Ըստ երևույթին դա գործեց: Վստահ եմ, որ Ռաբելը ցնցված էր այս օտարականի համբույրից (տես՝ հ. 11), սակայն երբ Հակոբն ասաց նրան, թե ով է ինքը, Ռաբելը շատ ուրախացավ: Այն փաստը, որ Հակոբը լաց եղավ, ցույց է տալիս Արևելքի տղամարդկանց մշակութային հակումները, որոնք իրենց զգացմունքները շատ ավելին են արտահայտում, քան իրենց արևմտյան ընկերները (տես՝ հ. 13):

Հակոբը մյուս հովիվներին դիմում է դարձվածքային ՀՐԱՄԱՅԱԿՆՆԵՐՈՎ, որոնք ծառայում են որպես հռետորական հարցեր՝

1. ջրեցե՛ք, BDB 1052, KB 1639, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. գնացե՛ք, BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. արածեցրե՛ք, BDB 944, KB 1258, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:9-12**

<sup>9</sup>Եվ երբ դեռ նրանց հետ խոսում էր, Ռաբելը եկավ իր հոր ոչխարների հետ, որովհետև ինքն էր դրանց հովիվը: <sup>10</sup>Եվ եղավ, որ Հակոբը տեսավ իր մորեղբայր Լաբանի աղջիկ Ռաբելին և իր մորեղբայր Լաբանի ոչխարներին ջրեց: <sup>11</sup>Եվ Հակոբը համբուրեմ Ռաբելին և բարձրաձայն լաց եղավ: <sup>12</sup>Եվ Հակոբը Ռաբելին պատմեց, թե ինքը նրա հոր ազգականն է և Ռեբեկայի որդին. նա էլ վազեց ու պատմեց հորը:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:13-14**

<sup>13</sup>Եվ երբ Լաբանը Հակոբի՝ իր քրոջ որդու, մասին լսեց, վազեց նրան դիմավորելու, գրկեց ու համբուրեց նրան և տարավ իր տունը, և սա Լաբանին պատմեց ամեն ինչ: <sup>14</sup>Եվ Լաբանն ասաց նրան. «Իսկապես դու իմ ոսկորն ու իմ մարմինն ես». և նա նրա հետ մեկ ամիս մնաց:

**29:13 «Եվ երբ Լաբանը Հակոբի՝ իր քրոջ որդու, մասին լսեց, վազեց նրան դիմավորելու»** Ռաբբիներն ասում են, որ նա վազեց, քանի որ կարծում էր Հակոբը էլ Եղիազարի պես նվերներ էր բերել (Ծննդ. 24:10): Ամեն դեպքում ես պատրաստ չեմ այստեղ նրա դրդապատճառները խառնել: Ճիշտ է, որ Լաբանը շահագործելու էր մանիպուլյատոր Հակոբին, սակայն սա կարծես թե Աստծո ծրագիրն էր Հակոբի հասունացնելու համար:

**29:14 «մի ամիս»** Այս տերմինը (BDB 294) կապված է «լուսին» տերմինի հետ (BDB 294): Երբայեցիները օգտագործում էին լուսնային օրացույցը, որի վրա նշված էին լուսնի հերթական փուլերը (այսինքն՝ նորալուսինը նոր ամիսն էր):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:15-20**

<sup>15</sup>Եվ Լաբանն ասաց Հակոբին. «Մի՞թե դու իմ եղբայր լինելու պատճառով, ինձ ձրի ես ծառայելու. ասա ինձ՝ ի՞նչ է քո վարձքը»: <sup>16</sup>Եվ Լաբանը երկու աղջիկ ուներ, մեծի անունը Լիա, իսկ փոքրի անունը Ռաբել: <sup>17</sup> Եվ Լիայի աչքերը թույլ էին, իսկ Ռաբելը գեղեցիկ էր ու շատ համակրելի: <sup>18</sup>Եվ Հակոբը սիրեց Ռաբելին և ասաց. «Քո կրտսեր աղջկա՝ Ռաբելի համար յոթ տարի կձառայեմ»: <sup>19</sup>Եվ Լաբանն ասաց. «Ավելի լավ է ես նրան քեզ տամ, քան թե ուրիշ մարդու: Բնակվի՛ր ինձ հետ»: <sup>20</sup>Եվ Հակոբը Ռաբելի համար յոթ տարի ծառայեց, ու քանի որ սիրում էր նրան, յոթ տարին նրա աչքին մի քանի օրվա պես անցավ:

**29:15** Սա շատ նուրբ պահ է, սակայն կարծես թե Լաբանը արդեն հասկացել էր, որ Հակոբը աչք ուներ Ռաբելի վրա և նա գրեթե պնդում էր, որ քանի որ Հակոբը օժիտ չուներ, նա կարող էր աշխատել իր համար: Հավանաբար նա նաև նկատել էր նրա հովվական հմտությունները:

**29:16 «Լիա»** Նրա անվան ստուգաբանությունը (BDB 521, KB 513) ինչ-որ առումով վիճաբանելի է. (1) աքքադերեն արմատը՝ «կով», (2) արաբերեն արմատը՝ «վայրի կով», կամ (3) «հոգնած» (ԲԱՅԻՑ, KB 512): Հ. 17 թվում է, թե նա Ռաբելի պես ֆիզիկապես հրապուրիչ չէր:

❖ **«Ռաբել»** Նրա անունը նշանակում էր «մաքի» (BDB 932, KB 1216): Ըստ երևույթին քոչվոր ժողովուրդները հաճախ էին կենդանիների անուններ կնքում:

**29:17**

**NASB, RSV, JPSOA, NIV, LXX  
NKJV  
NRSV  
TEV, NJB  
REB  
Peshitta**

**«աչքերը թույլ էին»  
«աչքերը նուրբ էին»  
«աչքերը սիրունիկ էին»  
«գեղեցիկ աչքեր էին»  
«աղոտ աչքեր էին»  
«գրավիչ աչքեր էին»**

ԱԾԱԿԱՆԸ (BDB 940, KB 1230) նշանակում է՝  
1. Երբայերեն արմատը՝ նուրբ, փափուկ, նրագեղ  
2. Արաբերեն արմատը՝ ույլ, բարակ, նվազ

Անգլերեն թարգմանությունների մեծամասնությունը վերցրել է արաբերեն տարբերակը այս համատեքստում՝ նրա անվան արմատի նշանակության պատճառով: Սակայն հնարավոր է, որ այս համարը երկու աղջիկներին էլ հաճոյախոսելու փորձ է:

❖ **«գեղեցիկ էր ու շատ համակրելի»** ԱԾԱԿԱՆԸ (BDB 421) օգտագործվում է երկու անգամ երկու ԵՆԹԱՄԱՍԵՐՈՒԲՍ:

- 1. BDB 421 և 1061 արտահայտում է բաեկազմություն
- 2. BDB 421 և 909 արտահայտում է բարետեսություն

Առաջին Նահապետների բոլոր կանայք էլ գեղեցիկ և հմայիչ էին (սակայն չբեր):

**29:18 «Եվ Հակոբը սիրեց Ռաբելին ... Քո կրտսեր աղջկա՝ Ռաբելի համար յոթ տարի քեզ կձառայեմ»** Սա շատ առատաձեռն առաջարկ էր, շատ ավելին, քան երբևէ Լաբանը կարող էր խնդրել: Սակայն նա ոգևորվեց և հարմար առիթը բաց չթողեց: Այս երկուսի միջև ինչ-որ իրական սեր կարելի է տեսնել 19-20,30 համարներում:

**29:19 «բնակվի՛ր ինձ հետ»** Սա հրաման է (BDB 442, KB 444, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), սակայն համատեքստում դարձվածքի տեսքով Լաբանը ընդունում է Հակոբի յոթ տարի իրեն ծառայելու առաջարկը որպես հարսնացուի գին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:21-30**

<sup>21</sup>Եվ Հակոբն ասաց Լաբանին. «Տու՛ր կնոջս, որովհետև օրերս արդեն լրացել են, որ ես մտնեմ նրա մոտ»: <sup>22</sup>Եվ Լաբանը հավաքեց այդտեղի բոլոր մարդկանց ու խնջույք արեց: <sup>23</sup>Եվ եղավ, որ գիշերը նա իր Լիա աղջկան վերցրեց և նրա մոտ բերեց. և նա մտավ նրա մոտ: <sup>24</sup> Եվ Լաբանն իր աղախին Չեղփային իր աղջիկ Լիային աղախին տվեց: <sup>25</sup>Եվ երբ առավոտ եղավ, ահա պարզվեց, որ նա Լիան է: Հակոբը Լաբանին ասաց. «Այս ի՞նչ է քո ինձ արածը. մի՞թե ես

քեզ Ռաբելի համար չեմ ծառայել, ապա ինչո՞ւ ինձ խաբեցիր»։ <sup>26</sup>Եվ Լաբանն ասաց. «Մեր երկրում այդպես չէ, որ փոքրին մեծից առաջ տան։ <sup>27</sup>Լրացրո՛ւ նրա շաբաթը, ու ես սրան էլ կտամ քեզ այն ծառայության համար, որ ինձ յոթ տարի էլ ծառայես»։ <sup>28</sup>Եվ Հակոբը այդպես արեց, և այդ շաբաթը լրացրեց, և Լաբանը իր Ռաբել աղջկան նրան կնության տվեց։ <sup>29</sup>Եվ Լաբանն իր աղախին Բաղդային իր աղջիկ Ռաբելին որպես աղախին տվեց։ <sup>30</sup>Եվ նա Ռաբելի մոտ էլ մտավ, և Ռաբելին Լիայից ավելի սիրեց. և Լաբանին յոթ տարի էլ ծառայեց։

**29:11 «Եվ Հակոբն ասաց Լաբանին, «Տո՛ւր կնոջս, որովհետև օրերս արդեն լրացել են, որ ես մտնեմ նրա մոտ»** Ըստ երևույթին Լաբանը չէր շտապում յոթ տարվա ավարտին, որ իր դստերը տար Հակոբին։ Սա ինչ-որ հակվածություն է ցույց տալիս, որն այս համարներում ի հայտ է գալու Լաբանի մանիպուլյատիվ տեխնիկաների մասին։ Նա փնտրում էր իր ընտանիքի շահերը։

**29:23 «Հակոբը մտավ նրա մոտ»** Ծատ քննարկումներ են եղել այն հարցի շուրջ, թե ինչու Հակոբը այսքան ժամանակ անց չհասկացավ, որ դա Լիան էր։ Մի քանի տեսություններից են. (1) քանի որ մութ էր (այսինքն՝ հ. 23, «երեկոյան»), (2) նա քողարկված էր (տես՝ 24:65), (3) նա հարբած էր («խնջույք» տերմինը /BDB 1059/ հ.22-ում «խմել» (BDB 1059) արմատից է, որը վերաբերում է վայրի խնջույքին)։ Իմ կարծիքով #3-ը լավագույնս է համապատասխանում համատեքստին։

**29:24 «Լաբանն իր աղախին Չեղփային իր աղջիկ Լիային աղախին տվեց»** Նուզի տախտակներից, որը նկարագրում է այդ ժամանակաշրջանի (Ք.Ա.2-րդ հազարամյակ) Քոռեցիների մշակույթը, իմանում ենք, որ սա ընդունված ավանդույթ էր։ Եթե այնպես պատահեր, որ դուստրը չբեր լիներ, աղախինը կարող էր նրան զավակներ պարգևել (տես՝ հհ. 28-29; 30:3)։ Համար 24 և 29 պատույթուները շարադրողի կողմից փակագծերի մեջ դրված խոսք է, որով պատրաստում է մեզ գլուխ 30-ի համար։

**29:25 «ահա նա Լիան էր»** Չնայած որ Լաբանի բնավորությունից ակնհայտ էր, որ այսպիսի վերաբերմունք սպասելի էր, գարմանալի է, որ Լիան ոչինչ չասաց կամ Ռաբելն ինքը ոչինչ չասաց։ Մակայն մենք սա պետք է դիտարկենք այդ օրերի մշակույթի լույսի ներքո և ոչ թե մեր, և քանի որ չունենք բավարար հատուկ տեքստային տեղեկատվություն, ապա արդի մեկնաբանները չպետք է ենթադրություններ անեն։

**29:27 «Լրացրո՛ւ նրա շաբաթը, ու ես սրան էլ կտամ քեզ այն ծառայության համար, որ ինձ յոթ տարի էլ ծառայես»** Այս մշակույթին հատուկ էր այս հարսանեկան շաբաթը (տես՝ Դատ. 14:12,17)։ Այն նաև արտացոլում է անկանոն գիրք հանդիսացող Տոբիթի 11:18-ում։ Ամսվա գաղափարը շաբաթների վերածելը բացառապես աստվածաշնչյան է (տես՝ Ծննդ. 2:1,2)։ Այն փաստը, որ Լաբանը կարողացավ ներկայացնել անհավատալի այս խնդրանքը Հակոբին, որ նրան ևս յոթ տարի ծառայի, ցույց է տալիս այս մարդու չարաշահող բնույթը։ Հակոբը հանդիպել է իր նմանակին և այժմ հասկանում էր, թե ինչ է նշանակում խաբված լինել (տես՝ 27:35)։

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 29:31-35**  
<sup>31</sup>Եվ երբ ՏԵՐԸ տեսավ, որ Լիան ատելի է, նրա արգանդը բացեց, իսկ Ռաբելը չբեր էր։ <sup>32</sup>Եվ Լիան հղիացավ և մի որդի ծնեց և նրա անունը Ռուբեն դրեց, որովհետև ասաց. «ՏԵՐԸ նայեց իմ տառապանքին, ուրեմն հիմա իմ ամուսինն ինձ կսիրի»։ <sup>33</sup>Եվ նորից հղիացավ և մի որդի ծնեց և ասաց. «Որովհետև ՏԵՐԸ լսեց, որ ես ատելի եմ, դրա համար ինձ այս որդին էլ պարգևեց», և նրա անունը Ծմավոն դրեց։ <sup>34</sup>Եվ նորից հղիացավ, մի որդի ծնեց և ասաց. «Հիմա արդեն իմ ամուսինն ինձ հետ կմիանա, որովհետև երեք որդի ծնեցի նրա համար», այս պատճառով նրա անունը Ղևի դրեց։ <sup>35</sup>Եվ նորից հղիացավ և մի որդի ծնեց և ասաց. «Այս անգամ պետք է գոհանամ ՏԵՐՈՋԻՑ», և դրա համար նրա անունը Հուզա դրեց և դադարեց երեխա ունենալուց։

**29:31 «չսիրված/ատելի»** Սա երբայերեն դարձվածք է, որը բառացի նշանակում է «ատելի» (BDB 971, KB 1338, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ հ. 33), սակայն 2 Օր. 21:15; Մադ. 1:2-3; Հովի. 12:25 և Ղուկ. 14:26-ում դրա կիրառությունից գիտենք, որ այն պարզապես համեմատության դարձվածք է, որը պետք է թարգմանվեր «չսիրված», ոչ թե «ատելի»։ Այն խոսում է առաջնահերթության մասին։ Հակոբը սիրեց Ռեբեկային ավելի, քան Լիային։

**29:32 «Լիան հղիացավ և մի որդի ծնեց և նրա անունը Ռուբեն դրեց»** Ռուբեն (BDB 910, «ահա որդի», որը բխում է «տեսնել» /BDB 909/ ԲԱՅԻՑ) բառը հանդիսանում է «տեսնել» (BDB 906, KB 1157, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) տերմինի հայտնի ստուգաբանությունը:

❖ Որդի ծնելը մեծ պատիվ էր: Լիան վստահ էր, որ Հակոբին հաճելի կլինի դա և իրեն ավելի շատ ուշադրություն կդարձնի:

**29:33 «Եվ նորից հղիացավ և մի որդի ծնեց ... Շմալոն»** «Շմալոն» բառը (BDB 1035) երբայերենի «լսել» կամ «ՏԵՐԸ լսեց» (BDB 1033, KB 1570, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) բառից բխող հայտնի ստուգաբանությունն ունի:

**29:34 «Եվ նորից հղիացավ և մի որդի ծնեց ... Ղևի»** Նրա անունը (BDB 532 I) «միացած» (BDB 530 I, KB 522, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ) տերմինի հայտնի ստուգաբանությունից է: Լիան ցանկանում էր Հակոբի հետ ավելի խորը զգացական փոխհարաբերություն:

**29:35 «նա նորից հղիացավ և որդի ծնեց ... Հուդա»** Այս մեկն այն որդին է, որին Աստված ընտրեց կատարելու Իր խոստումը: Նրա անունը նշանակում է «գոհություն» (BDB 397), որը բառախաղ է «ես կգոհանամ ՅԱՀՎԵԻՑ» (BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) խոսքի վրա: Նրա անունը դառնում է մի ցեղի անուն, ապա մի ամբողջ ազգի, և հետո էլ ամբողջ հրեա ժողովրդի: Երեք ավագ որդիները մերժվելու են իրենց անպատշաճ վարքի համար: Դարձյալ, հետաքրքիր է, որ Աստված ընտրեց մի կնոջ, որը քիչ սիրված էր և նրանից սերվեց Մեսիայի ազգատոհմը: Ակնկալվող դեպքերի այսպիսի հակադարձումը հատուկ է Ծննդոց գրքին և ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ վերահսկողությունն ու ամենակալությունը:

**ԾՆՆԴՈՑ 30**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> ( <b>հետևում է MT</b> )
Հակոբի որդիները	Հակոբի որդիները (29:31-30:24)	Հակոբի հաջողու- թյունը Խառանումը (29:1-31:55)	Հակոբի համար ծնված երեխաները (29:31-30:24)	Հակոբի երեխաները (29:31-30:24)
30:1-13			30:1  30:2  30:3-8	29:31-30:8
	30:9-13		30:9-13	30:9-13
30:14-21	30:14-21	30:9-13 30:14-21	30:14  30:15ա  30:15բ  30:16  30:17-21	30:14-21
30:22-24	30:22-24	30:22-24	30:22-24	30:22-24
Հակոբը բարգավաճում է	Հակոբի պայմանագիրը Լաբանի հետ		Հակոբը գործարք է կապում Լաբանի հետ	Ինչպես Հակոբը հարստացավ
30:25-36	30:25-36	30:25-36	30:25-26  30:27-28  30:29-30  30:31ա  30:31բ-33  30:34-36	30:25-31       30:32-36
30:37-43	30:37-43	30:37-43	30:37-39  30:40  30:41-43	30:37-43

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 30:1-13

<sup>1</sup>Եվ երբ Ռաբելը տեսավ, որ ինքը Հակոբի համար երեխաներ չի բերում, նախանձեց իր քրոջը՝ Լիային և Հակոբին ասաց. «Ինձ որդիներ տուր, եթե ոչ՝ կմեռնեմ»: <sup>2</sup>Եվ Հակոբի բարկությունը բորբոքեց Ռաբելի դեմ և ասաց. «Մի՞թե ես Աստծո փոխանորդն եմ, որ արգանդի պտուղը քեզնից մերժել է»: <sup>3</sup>Եվ նա ասաց. «Ահա իմ աղախին Բաղդան, նրա մոտ մտիր, նա թող իմ ծնկների վրա ծննդաբերի և ես նրա միջոցով որդիներ կունենամ»: <sup>4</sup>Եվ իր Բաղդա աղախին նրան կնության տվեց: <sup>5</sup>Եվ Բաղդան հղիացավ և Հակոբի համար մի որդի ծնեց: <sup>6</sup>Եվ Ռաբելն ասաց. «Աստված ինձ դատեց և իմ ձայնը լսեց և ինձ որդի տվեց», դրա համար նրա անունը Դան դրեց: <sup>7</sup>Եվ Ռաբելի աղախին Բաղդան դարձյալ հղիացավ և Հակոբի համար երկրորդ որդին ծնեց: <sup>8</sup>Եվ Ռաբելն ասաց. «Իմ քրոջ հետ աստվածային ընբշամարտի մեջ մտա և հաղթեցի». և նրա անունը Նեփթաղիմ դրեց:

**30:1 «նախանձեց իր քրոջը»** Սա բառացի նշանակում է «երեսը կարմրել» (արաբերեն արմատից, BDB 888, KB 1109, *Piel* ԱՆԿԱՏԱՐ): Նա ըստ երևույթին իր նախանձը թափեց Հակոբի վրա («Ինձ որդիներ տո՛ւր, BDB 396, KB 393, *Qal* ՀՐԱՄԱԿԱՅԱՆ»), որին ընդհանրապես դա դուր չէկավ (տես՝ հ. 2): Անպտղությունը կարծես թե տարածված էր Նահապետների կանանց մոտ: Ռաբելի անհամբերությունը կարելի է տեսնել հ. 1-ում, մինչդեռ Ռեբեկան աղոթել էր ավելի քան քսան տարի: Լիան չորս երեխա ունենալուց հետո, Ռաբելը սկսեց նախանձել, բարկանալ և անհամբերություն ցուցաբերել:

**30:3 «Ահա իմ աղախին Բաղդան, նրա մոտ մտիր, նա թող իմ ծնկների վրա ծննդաբերի»** Սա մշակութային դարձվածք է, որը կարծես թե վերաբերում է որդեգրությանը (տես՝ Ծննդ. 48:12): Լիայիդ-Իշթարի, Համմուրաբիի օրենսգրքերից, Նուզի, Մարի և Ալալախի Տախտակներից գիտենք, որ սա մշակութային հնարավորություն էր: Մենք չենք կարող դատել այս սովորույթի բարոյականությունը, մեր օրերի օրենքներով:

Ռաբելի հիասթափությունը կարելի է տեսնել մի շարք հրամաններում՝

1. նրա մոտ մտիր, BDB 97, KB 112, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (խիստ խնդրանք)
2. թող որ նա ծննդաբերի, BDB 408, KB 411, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով
3. և ես նրա միջոցով որդիներ կունենամ (բառացի՝ Ես կվերականգնվեմ), BDB 124, KB 139, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով

**30:5-6 «Եվ Բաղդան հղիացավ և որդի ծնեց ... Դան»** «Դան» անունը երբայերեն «դատված» (BDB 192) բառն է: Այն աղջիկը, որը ծնվելու էր հ. 21-ում, այս նույն բառի իզական ձևն է (Դինա, BDB 192):

### 30:8

NASB, NRSV  
NKJV  
TEV  
NJB  
LXX

«հզոր ընբշամարտով»  
«մեծ ընբշամարտով»  
«դժվար կռվով»  
«ճակատագրական պատերազմով»  
«պայքարելով»

Խնդիրն այն է, որ MT թարգմանությունը տալիս է «*Էրոհիմ*», որը կարող էր նշանակել, որ Ռաբելը ընբշամարտել է Աստծո հետ կամ թարգմանվել որպես նկարագրող բառ՝ «մեծ/հզոր/դժվարին» և



դիտարկել այն որպես Լիայի հետ փոխաբերորեն արտահայտող ըմբռամարտ: Հավանաբար սա վերաբերում է թե՛ հոգևոր (Աստծո) և թե՛ ֆիզիկական (իր քրոջ) պայքարին, որը կապված էր նրա անպտղության հետ (տես՝ Փեշիթա):

❖ «Նեփթադիմ» Այս տերմինը կապված է «ըմբռամարտել» (բառացի՝ «ոլորել», BDB 836): Նա ըմբռամարտեց իր քրոջ հետ մրցակցության մեջ և Աստծո հետ՝ աղոթքի մեջ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 30:9-13**

**<sup>9</sup>Երբ Լիան տեսավ, որ ինքը ծնելուց դադարել է, իր աղախին Չեղփային առավ ու նրան Հակոբին կնության տվեց: <sup>10</sup>Եվ Լիայի աղախին Չեղփան Հակոբի համար որդի ծնեց: <sup>11</sup>Եվ Լիան ասաց. «Չորքը գալիս է». և նրա անունը Գադ դրեց: <sup>12</sup>Եվ Լիայի աղախին Չեղփան մի երկրորդ որդի ունեցավ Հակոբի համար: <sup>13</sup>Եվ Լիան ասաց. «Երանելի եմ, որովհետև աղջիկներն ինձ օրհնյալ են կոչելու», և նրա անունն Ասեր դրեց:**

**30:9** Այս երկու քույրերի միջև իրական մրցակցություն կար:

**30:10-11 «Լիայի աղախին Չեղփան նրա համար որդի ծնեց ... Գադ»** Գադ (BDB 151 III) բառը ծագել է եբրայերեն «բախտավոր» կամ «բարեբախտ» (BDB 151 II) տերմինից:

MT տալիս է «բարի բախտով», սակայն Մագորեթիկ գիտնականների լուսանցքային գրառման մեջ տրված է «բարի բախտը եկել է»: Հնարավոր է, որ Գադը (77, BDB 151 III) ծագել է՝

1. գորք, 717, BDB 151 I, NKJV (NIV ծանոթագրություն)
2. բախտ, 77, BDB 151 II, LXX, NASB, NRSV, TEV, JPSOA, NJB, REB, Peshitta
3. երջանիկ, LXX

**30:12 «Եվ Լիայի աղախին Չեղփան մի երկրորդ որդի ունեցավ Հակոբի համար ... Ասեր»** Այս անունը կապված է եբրայերեն «երջանիկ» (BDB 81) բառի հետ:

**30:13 «Ասեր»** Այս անունը (BDB 81) ծագել է «երջանկացնել» ԲԱՅԻՑ (BDB 80, KB 97 II, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ), որը նշանակում է «երջանիկ» կամ «օրհնյալ համարել»:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 30:14-21**

**<sup>14</sup>Եվ Ռուբենը ցորենի հնձի օրերին գնաց և դաշտում մանրագորներ գտավ և իր մայր Լիային բերեց. և Ռաբելն ասաց Լիային. «Խնդրում եմ, քո որդու մանրագորներից ինձ տուր»:** **<sup>15</sup>Եվ նա ասաց նրան. «Հերիք չէ, որ իմ ամուսնուն ես առել և դեռ ուզում ես իմ որդու մանրագորներն էլ առնել»:** Եվ Ռաբելն ասաց. «Ռուբենն թող նա այս գիշեր քեզ հետ պառկի քո որդու մանրագորների փոխարեն»: **<sup>16</sup>Եվ երեկոյան Հակոբը գալիս է դաշտից. Լիան դուրս եկավ նրան դիմավորելու և ասաց. «Ինձ մոտ պիտի մտնես, քանի որ քեզ վարձով եմ առել իմ որդու մանրագորներով»:** Եվ նա այդ գիշեր նրա հետ պառկեց: **<sup>17</sup>Եվ Աստված լսեց Լիային, ու նա հղիացավ և Հակոբի համար հինգերորդ որդին ծնեց: <sup>18</sup>Եվ Լիան ասաց. «Աստված տվեց իմ վարձը, որովհետև իմ աղախնուն իմ ամուսնուն տվեցի», և նրա անունը Իսաբար դրեց: <sup>19</sup>Եվ Լիան նորից հղիացավ և Հակոբի համար վեցերորդ որդին ծնեց: <sup>20</sup>Եվ Լիան ասաց. «Աստված ինձ բարի պարգև տվեց. այս անգամ արդեն ամուսինս ինձ հետ կբնակվի, քանի որ նրա համար վեց որդի եմ ծնել», և նրա անունը Չարուդոն դրեց: <sup>21</sup>Եվ հետո մի աղջիկ ունեցավ և նրա անունը Դինա դրեց:**

**30:14 «Եվ Ռուբենը ցորենի հնձի օրերին գնաց և դաշտում մանրագորներ գտավ և իր մայր Լիային բերեց. և Ռաբելն ասաց Լիային»** Մանրագորը (BDB 188) հնագույն աֆրոդիզիակ էր (տես՝ Երգ Երգոց 7:13): Կամ դրա դեղին պտուղը, կամ էլ արմատը, որ նման է տղամարդու, եղել է այս ավանդույթի սկիզբը: Ռաբելն ուզում էր այս մանրագորներից, քանի որ հույս ուներ, որ կարող էր հղիանալ և որդի ծնել (դարձյալ ուխտի ընտանիքը փորձում է օգնել Աստծուն): Այս պատմության մեջ երկու քույրերի միջև լարվածությունը դառնում է ակնհայտ: Ինչն է ինձ զարմացնում, թե ինչպես էր Հակոբը շահագործվում այս երկու կանանց մրցակցությամբ (տես՝ հ. 15-16):

**30:16 «քանի որ ես քեզ վարձով եմ առել»** Սա միևնույն արմատի (BDB 968, KB 1330) ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՆ է, որն արտահայտում է շեշտադրում ուժգնություն: Հակոբը իր

առաջին երկու կանանց կողմից գիտակցաբար սեռական դաշտում շահագործվում էր: Իսաբարի անունը (տես ներքևում) արտացոլում է այս տխուր դեպքը:

**30:18 «Իսաբար»** Իսաբար անունը (רַב־בָּר, BDB 441) կապված է եբրայերեն «վարձք» կամ «հատուցում» (רַב־בָּר, BDB 969) բառի հետ: Լիան վարձեց Հակոբի սերը Ռուբենի մանրագործներով:

**30:19-20 «Եվ Լիան նորից հղիացավ և Հակոբի համար վեցերորդ որդին ծնեց ... Չարուղոն»** Չարուղոն տերմինը (BDB 259) եբրայերեն «պարզ» կամ «օժիտ» (BDB 256) և «բնակվել» կամ «պատվել» (BDB 269) բառերի վրա կառուցված բառախաղ է: Նրա կանայք դեռևս պայքարում էին նրա սիրո համար:

**30:21 «Եվ հետո մի աղջիկ ունեցավ և նրա անունը Դինա դրեց»** Սա կարծես այս ընտանիքում ծնված միակ աղջիկն էր: Այն փաստը, որ միայն մեկը անվանվեց աղջկա անունով, ցույց է տալիս, որ հավանաբար միայն մեկ աղջիկ ունեցան, սակայն նկատեք 37:35 համարը: Սակայն հաջորդիվ տրված դեպքը հնարավոր է պատճառ է հանդիսացել, որ միայն նշվի այս մի դստեր՝ Դինայի անունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 30:22-24**

<sup>22</sup>Եվ Աստված հիշեց Ռաբելին, և Աստված լսեց նրան և նրա արգանդը բացեց. <sup>23</sup>և նա հղիացավ և մի որդի ծնեց և ասաց. «Աստված իմ նախատինքը վերացրեց», <sup>24</sup>և նրա անունը Հովսեփ դրեց և ասաց. «Տերն ինձ մի ուրիշ որդի էլ է ավելացնելու»:

**30:22-24 «Եվ Աստված հիշեց Ռաբելին, և Աստված լսեց նրան և նրա արգանդը բացեց»** «Հովսեփ» անունը (BDB 415) կապված է եբրայերեն տրված երկու ԲԱՅԵՐԻՑ մեկի հետ՝

1. «նախատինքը վերցրեց» (BDB 62, KB 74, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ հ. 23) կամ
2. «ավելացնել» (BDB 414, KB 418, *Hiphil* ՀԱՅՅԱԿԱՆ) Աստծուց խնդել և ս մեկ արու զավակ (տես՝ 35:17):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 30:25-36**

<sup>25</sup>Եվ եղավ, երբ Ռաբելը Հովսեփին ունեցավ, Հակոբն ասաց Լաբանին. «Թույլ տուր, որ իմ տեղը ու իմ երկիրը գնամ: <sup>26</sup>Տո՛ւր իմ կանանց ու երեխաներին, որոնց համար ծառայեցի քեզ և թույլ տուր, որ գնամ, քանի որ դու ինքդ գիտես իմ ծառայությունը, որ ես քեզ մատուցել եմ»: <sup>27</sup>Եվ Լաբանն ասաց նրան. «Եթե քո առաջ շնորհ եմ գտել, աղաչում եմ քեզ, մնա, քանի որ փորձով իմացա, որ ՏԵՐՆ ինձ օրհնում է քո պատճառով»: <sup>28</sup>Եվ ասաց. «Ասա՛ ինձ՝ ո՞րն է քո վարձքը, և ես քեզ կվճարեմ»: <sup>29</sup>Եվ նա ասաց նրան. «Դու գիտես, թե ինչպես ծառայեցի քեզ, և քո անասուններն ինչպես էին ինձ մոտ. <sup>30</sup>որովհետև նախքան իմ գալը քո ունեցվածքը քիչ էր, իսկ հիմա աճեց ու շատացավ, և ՏԵՐԸ քեզ օրհնեց իմ գալով. և հիմա՛ ես էլ ե՞րբ եմ հայթայթելու իմ տան համար»: <sup>31</sup>Եվ նա ասաց. «Ի՞նչ տամ քեզ»: Եվ Հակոբն ասաց. «Ինձ ոչ մի բան մի՛ տուր. եթե այս բանն անես, նորից քո հոտը կպահեմ, կարածացնեմ: <sup>32</sup>Այսօր անցնեմ քո բոլոր հոտերի միջով, ու նրանցից ամեն պիսակ ու խատուտիկ ոչխար և ամեն սև ոչխար և խայտաճամուկ և պիսակ այժ ջոկեմ, և իմ վարձը թող դա լինի: <sup>33</sup>Եվ վաղն իսկ իմ արդարությունը քո առաջ կհայտնվի, երբ գաս իմ ստացած վարձը տեսնելու. ինձ մոտ եղող բոլոր այն աճերը, որ պիսակ ու խայտաճամուկ չլինեն և ոչխարները՝ սև, ուրեմն դրանք գողացված են»: <sup>34</sup>Եվ Լաբանն ասաց. «Թող քո ասածի պես լինի»: <sup>35</sup>Եվ այն օրը ջոկեց բծավոր ու խայտաճամուկ նոխազներին և բոլոր պիսակ ու խայտաճամուկ էգ այծերը, և ամեն սպիտակ բծեր ունեցողները և բոլոր սև ոչխարները և հանձնեց իր որդիների ձեռքը: <sup>36</sup>Եվ երեք օրվա ճանապարհ դրեց իր ու Հակոբի միջև և Հակոբն արածեցնում էր Լաբանի մնացած հոտերը:

**30:25-26 «Թույլ տուր, որ իմ տեղը ու իմ երկիրը գնամ»** Ըստ երևույթին այդ օրերի մշակութային նորմը պահանջում էր, որ Լաբանն ինքը Հակոբին ուղարկեր հեռու, փոխանակ Հակոբը պարզապես կհեռանար: Հավանաբար նա մի քանի անգամ փորձել էր հեռանալ և մշտապես ունեցել էր միևնույն բացասական արդյունքը: Լաբանն ուզում էր Հակոբի մնալը, քանի որ դա իր համար շահավետ էր (տես՝ հ. 27):

- Համար 25 և 26 ունի որոշակի խիստ լեզու՝
1. «թույլ տուր, որ գնամ», հ. 25, BDB 1018, KB 1511, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  2. «որ իմ տեղը գնամ», հ. 25, BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
  3. «տո՛ւր իմ կանանց ու երեխաներին», հ. 26, BDB 678, KB 733, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

4. «թույլ տուր, որ գնամ», հ. 26, BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ  
Այս ԲԱՅԸ «ճառայեցի» (BDB 712, KB 773) կիրառվում է երկու անգամ (տես՝ հ. 29), ցույց տալու Հակոբի վերաբերմունքը, որ նա ամբողջությամբ վճարել է Լաբանին իր պարտքը (և ավելին, հ. 30):

**30:27 «բանի որ կռահեցի /հայերեն՝ փորձով իմացա/, որ ՏԵՐՆ ինձ օրհնում է քո պատճառով»**  
«Կռահել» բառը «ֆշշալ» կամ «սուլել» (BDB 638 II) արմատից է: Նա փորձում էր իմանալ և վերահսկել ապագան ֆիզիկական միջոցներով՝ առանց ՅԱՀՎԵԻՆ վստահելու: Այն դատապարտվում է Դևտ. 19:26; Թվոց 23:23-24 և 2 Օր. 18:10-ում:

Դժվար է հասկանալ, թե ինչու էին Ծննդոցի այս վաղ շրջանի մարդիկ անում բաներ, որոնք հետագայում դատապարտելի էին Մովսիսական օրենքում:

1. պուններ՝ կոթողներ էին բարձրացնում
2. հմայություն էին անում, այստեղ և 44:5,15-ում
3. նմանակության կախարդություն (այսինքն՝ բժավոր ճյուղերը սերում էին բժավոր կենդանիներ)
4. պտղաբերության համար մանրագործների օգտագործումը
5. ընտանեկան կուռքերը (*teraphim*)
6. հեթանոսների թվիատությունը (որպես զենք)

Վաղ շրջանի այս ՅԱՀՎԵԻՍՏՆԵՐԻ վրա ազդել էին իրենց մշակույթները: Նրանք իհարկե գնում էին դեպի ավելի մաքուր, ավելի կատարյալ միաստվածության, սակայն դա մի երկար ճանապարհ էր իրենից ներկայացնում:

**30:28 «Ասա՛ ինձ ո՛րն է քո վարձքը, և ես քեզ կվճարեմ»** Լաբանը լրիվ հասկանում էր, որ իր բարգավաճման պատճառը Հակոբն էր և ամեն գնով ուզում էր նրան պահել:

«Ասա՛» (անգլերենում՝ «անվանիր») (BDB 666, KB 718, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ունի տարբեր ստուգաբանական հիմքեր: Ընդհանրապես այն նշանակում է «ճեղքել» կամ «ձանձրացնել»: Այստեղ նշանակում է, որ Հակոբը պետք է ասեր՝ կոչեր իր հատուցումը, որպեսզի մնար Լաբանի հետ:

Երկրորդ «վճարել» (BDB 678, KB 733, *Qal* ԸՂՁԱԿԱՆ) ԲԱՅԸ ընթերցողին զգուշացնում է, որ Լաբանը գիտակցում է Հակոբի ներկայության և նրա օգնության կարիքը (տես՝ հ. 30): Լաբանը պետք է որ լիներ պահանջկոտ աներ (տես՝ 31:11-12): Տեքստը նույնիսկ ակնարկում է, որ Հակոբին նա համարում էր և վարվում նրա հետ որպես վարձկան ծառայի (տես՝ 31:14-16):

**30:30 «ՏԵՐԸ քեզ օրհնեց իմ գալով»** Հակոբը գիտեր Լաբանի օրհնության աղբյուրն իր մեջ էր և ՅԱՀՎԵԻ հետ իր փոխհարաբերության մեջ: Սակայն հ. 30-ի շարունակությունը ցույց է տալիս, որ Հակոբը նաև գիտակցում էր իր սեփական ընտանիքի կարիքները:

**30:31 «Եվ նա ասաց «Ի՞նչ տամ քեզ»: Եվ Հակոբն ասաց . «Ինձ ոչ մի բան մի՛ տուր»** Հակոբը գիտեր, որ օրհնության աղբյուրը Լաբանը չէր, այլ Աստված:

**30:32** Հակոբը պատրաստվում էր վերցնել խայտաճամուկ (BDB 378, KB 375, հհ. 32-35-ում կիրառված է հինգ անգամ) կենդանիներին՝ ոչխարների և այծերի միջից: Խայտաճամուկ կենդանիները ոչխարների միջից պետք է որ լինեին մուգ, իսկ այծերի միջից՝ բժավոր կամ պիսակ: Այս անսովոր գույներով կենդանիները սովորաբար հազվադեպ էին պատահում: Սա եղավ այն պարզ պատճառով, որ Հակոբն այդ ժամանակ արդեն ճանաչում էր Լաբանին և չէր կամենում, որ որևէ հարց առաջանար, թե որն ումն է լինելու ապագայում (տես՝ հ. 33):

**30:35-36 «Եվ այն օրը ջոկեց բժավոր ու խայտաճամուկ նոխազներին և բոլոր պիսակ ու խայտաճամուկ էգ այծերը, և ամեն սպիտակ բծեր ունեցողները և բոլոր սև ոչխարները և հանձնեց իր որդիների ձեռքը»** Գոյություն ունեն երկու շատ հետաքրքիր երևույթներ այս համարում և հ. 36-ում:

«Նա» բառը հ. 35-ի սկզբում ակնհայտ վերաբերում է Լաբանին: Այստեղ առաջին անգամ է նշվում Լաբանի որդիների մասին: Ըստ երևույթին Լաբանը բաժանեց հոտերը և հանձնեց Հակոբի կենդանիներին իր (Լաբանի) որդիների խնամքին: Հ. 36-ից տեսնում ենք, որ Լաբանը ուղարկեց Հակոբի կենդանիներին երեք օրվա ճամփորդության, որպեսզի դրանք չկարողանան բեղմնավորվել իր կենդանիների հետ: Սա նույնպես ստիպեց Հակոբին, որ հոգ տանի Լաբանի կենդանիների համար՝ հաստատելու դրանց օրհնությունը: Չնայած որ ամեն բան Լաբանի օգտին էր, Աստված Հակոբի հետ էր: Անձամբ ես չեմ հավատում, որ հհ. 37-ում նշված Հակոբի հնարքներն էին հանդիսանում բժավոր և պիսակ կենդանիների արագ բազմանալու աղբյուրը, այլ Աստծո գերբնական ներկայությունը:

NIV Սերտոողության Աստվածաշնչի ծանոթագրությունը պնդում է, որ հ. 35-ը Լաբանն ու իր որդիները գաղտնի էին արել, որպեսզի նվազեցնեին կամ վերացնեին բոլոր անսովոր գույներով կենդանիներին: Եթե այդպես է, ապա Հակոբի խոսքը վերաբերում է միայն հետագա ծնունդներին: Երբ կարդում եմ սա, ես չեմ դիտարկում հ. 35 որպես պարտադիր այսպիսի նշանակությամբ, սակայն ինձ չէր զարմացնի դա իմանալով Լաբանի շահագործող բնավորությունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 30:37-43**

<sup>37</sup>Եվ Հակոբն իր համար դալար սպիտակ կաղամախուց ու նշենուց և սոսուց գավազաններ վերցրեց, և դրանց կեղևները տեղ-տեղ քերծեց, սպիտակեցրեց, այնպես որ գավազանների վրա եղած սպիտակը երևում էր: <sup>38</sup>Եվ իր քերծած գավազանները դրեց ջրի գուռերի մեջ, որ երբ հոտերը գան ջուր խմելու, դրանք ոչխարների առաջ լինեն, և նրանք տաքանան, երբ խմելու գան: <sup>39</sup>Եվ հոտերը բեղմնավորվում էին գավազանների առջև, և մաքիները բծավոր, պիսակ և խայտաճամուկ գառներ էին ծնում: <sup>40</sup>Եվ Հակոբն առանձնացնում էր պիսակ գառները և հոտերի երեսը շրջում էր դեպի Լաբանի հոտերի մեջ եղած բծավոր ու սև ոչխարների կողմը. և իր հոտերը առանձին էր դնում, և նրանց Լաբանի հոտերի մեջ չդրեց: <sup>41</sup>Եվ եղավ, որ միշտ ուժեղ ոչխարները տաքանալիս, Հակոբը այն գավազանները ոչխարների աչքի առաջ՝ ավազանների մեջ էր դնում, որ գավազանների առաջ տաքանան: <sup>42</sup>Բայց տկար ոչխարներին չէր դնում, և տկարները եղան Լաբանինը, իսկ ուժեղները՝ հակոբինը: <sup>43</sup>Եվ մարդը չափազանց հարստացավ և շատ հոտեր և աղախիկներ ու ծառաներ և ուղտեր ու էշեր ունեցավ:

**30:37-43** Սա նորից նահապետների ընտանիքների կողմից ՅԱՀՎԵԻՆ օգնելու փորձ էր: Արդյոք այս մեթոդը գործեց (այսինքն՝ բույսերի միջի որոշ քիմիկատները), թե ոչ, դա աստվածաբանական հարց չէ: Հակոբ հնարամիտը դեռ նույն կերպ գործում էր: Արդյո՞ք ՅԱՀՎԵԻ խոստումները կախված էին Հակոբի գործողություններից:

**30:43** Հակոբի նախիրները և հոտերը մի քանի տարում (հավանաբար սկզբնական պայմանավորված տասնչորս տարուց վեց տարի էլ ավել, տես՝ 31:41) բազմացան:

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեգրվյց հանդիսացող սերտոողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Աստված թույլ տվեց Լաբանի պես խորամանկ մարդը շահագործի Իր ընտրյալ անոթին՝ Հակոբին:
2. Արդյո՞ք Հակոբը ուզում էր լինել բազմաստված:
3. Թվարկեք այս որդիներից յուրաքանչյուրի անունը և տվեք դրանց հայտնի ստուգաբանությունները:

**ԾՆՆԴՈՑ 31**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը գաղտնի մեկնում է Քանան	Հակոբը փախնում է Լաբանից	Հակոբի հաջողությունը Խառանում (29:1-31:55)	Հակոբը փախնում է Լաբանից	Հակոբի փախուստը
31:1-16	31:1-16	31:1-9  31:10-16	31:1-3  31:4-9  31:10-13  31:14-16	31:1-13  31:14-16
31:17-21	31:17-21	31:17-18	31:17-21	31:17-21
Լաբանը հետևում է Հակոբին	Լաբանը հետևում է Հակոբին	31:19-21	Լաբանը հետևում է Հակոբին	Լաբանը հետևում է Հակոբին
31:22-24	31:22-25	31:22-24	31:22-25	31:22-25
31:25-32	31:25-32	31:25-32	31:26-30  31:31-32	31:26-30  31:31-35
31:33-35	31:33-35	31:33-35	31:33-35	
31:36-42	31:36-42	31:36-42	31:36-42	31:36-42
Մասփայի ուխտը	Լաբանի ուխտը Հակոբի հետ		Հակոբի և Լաբանի միջև պայմանագիր	Դաշինք Հակոբի և Լաբանի միջև (31:43-32:3)
31:43-55	31:43-50  31:51-55	31:43-50  31:51-54  31:55	31:43-44  31:45-55	31:43-44  31:45-55

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգրով մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն

2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 31:1-16

<sup>1</sup>Հակոբը լսեց Լաբանի որդիների խոսքերը, որ ասում էին. «Հակոբը մեր հոր ամբողջ ունեցվածքն առավ և այս ամբողջ փառքը մեր հոր սեփականությունից ստացավ»: <sup>2</sup>Եվ Հակոբը նայեց Լաբանի երեսին, և սա ահա առաջվա պես չէր իր հետ: <sup>3</sup>Եվ ՏԵՐՆ ասաց Հակոբին. «Վերադարձի՛ր քո հայրերի երկիրը և քո հարազատների մոտ, և ես քեզ հետ կլինեմ»: <sup>4</sup>Եվ Հակոբը մարդ ուղարկեց և կանչեց Ռաբելին և Լիային դաշտը՝ իր հոտերի մոտ, <sup>5</sup>և ասաց նրանց. «Ես ձեր հոր երեսից տեսնում եմ, որ իմ նկատմամբ առաջվա պես չէ, բայց իմ հոր Աստվածն իմ հետ է: <sup>6</sup>Եվ դուք գիտեք, որ ես իմ ամբողջ ուժով ծառայեցի ձեր հորը: <sup>7</sup>Իսկ ձեր հայրն ինձ խաբեց և տասն անգամ փոխեց իմ վարձքը, բայց Աստված նրան թույլ չտվեց ինձ վնասել: <sup>8</sup>Երբ նա ասում էր. «Քո վարձը պիտակները թող լինեն». այն ժամանակ բոլոր ոչխարները պիտակ էին ծնում, և երբ ասում էր, թե՛ «Քո վարձքը բժավորները լինեն», այն ժամանակ բոլոր ոչխարները բժավոր էին ծնում: <sup>9</sup>Այսպես Աստված ձեր հոր հոտերն առավ և ինձ տվեց: <sup>10</sup>Եվ եղավ, որ հոտերի բեղմնավորման ժամանակ աչքերս բարձրացրի և երագում տեսա, և ահա հոտերի հետ զուգավորվող խոյերը բժավոր ու խայտաճամուկ էին և գորշախայտ: <sup>11</sup>Եվ Աստծո հրեշտակն ինձ ասաց երագումս. «Հակոբ», և ես ասացի՝ «Ահա ես»: <sup>12</sup>Եվ Նա ասաց. «Աչքերդ բարձրացրո՛ւ և հոտերի հետ զուգավորվող խոյերին նայի՛ր՝ նրանք բժավոր, խայտաճամուկ և գորշագույն են, որովհետև տեսել եմ այն ամենը, ինչ քեզ արեց Լաբանը: <sup>13</sup>Ես *իմ* Բեթելի Աստվածը, որ այնտեղ կոթող օձեցիր, / և այնտեղ Ինձ ուխտեցիր, հիմա վե՛ր կաց, գնա՛ այս երկրից և քո ազգականների երկիրը վերադարձի՛ր»: <sup>14</sup>Եվ Ռաբելն ու Լիան պատասխանեցին, ասացին նրան. «Դեռ մեր հոր տան մեջ մեզ համար բաժին կամ ժառանգություն կա՞»: <sup>15</sup>Մի՞թե մենք օտարականներ չէինք համարվում նրա համար, քանի որ մեզ ծախել էր և մեր փողն էլ կերավ: <sup>16</sup>Մրա համար այն ամբողջ հարստությունը, որ Աստված մեր հորից վերցրեց, մերն է ու մեր զավակներինը, և հիմա ինչպես որ Աստված քեզ ասել է, այնպես էլ արա»:

**31:1 «Հակոբը լսեց Լաբանի որդիների խոսքերը»** Հայտնի չէ, թե ստույգ քանի տարեկան էին այս որդիները, սակայն նրանք այնքան տարիքով էին, որ կարող էին իրենք արածեցնել հոտերը (տես՝ 30:35): Գլուխ 30-ից հետո մի քանի տարի պետք է որ անցած լիներ: Ըստ երևույթին նրանք կրկնում էին այն, ինչ լսել էին տանը: Նրանք դա անում էին հանրորեն, որը ցույց է տալիս, որ չէին վախենում, որ Հակոբը կիմանա այդ մասին: Նրանց մեղադրանքները, չնայած որ հասկանալի էին, սակայն փաստացի չէին (տես՝ 30:30): Նախքան Հակոբի գալը, Լաբանը հարուստ մարդ չէր: ՅԱՀՎԵՆ Հակոբի հետ էր. Լաբանը օրինվել էր նրա հետ համագործակցելով:

❖ **«ունեցվածք»** Սա բառացի «փառք» (BDB 459, տես՝ KJV): Երբայերեն «փառք» տերմինը նշանակում է «ծանրություն» կամ «կշիռ»: Այն կարելի է կիրառել «պատիվ» բառի համար, սակայն այստեղ կարծես թե վերաբերում է «ֆիզիկական առատություն» (NKJV):

**31:2 «Հակոբը նայեց Լաբանի երեսին/վերաբերմունքին/»** Լաբանը մանիպուլյատոր էր: Չնայած Հակոբի հանդեպ դաժան էր վարվել, նա միշտ ժպտացել էր նրա երեսին, սակայն հիմա նրա երեսը փոխվել էր:

**31:3 «Եվ ՏԵՐՆ ասաց Հակոբին»** ՅԱՀՎԵՆ տեսնելով, որ Հակոբը հասկացավ բացասական իրավիճակը, օգտվելով առիթից հայտնեց նրան, որ ժամանակը եկել էր տուն գնալու («վերադառնալու», BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Նա հիշեցրեց նրան «Ես կլինեմ քեզ հետ» արտահայտությամբ Բեթելի փորձառությունը, որը տեղի էր ունեցել 20 տարի առաջ (տես՝ Ծննդ. 28:10-22, հատկապես՝ հ. 15):

**31:4 «Հակորը մարդ ուղարկեց և կանչեց Ռաբելին ու Լիային դաշտը՝ իր հոտերի մոտ»** Ռաբելը այստեղ առաջինն է նշվում, քանի որ նա նրա սիրելի կինն էր: Նրանց կանչեց դաշտ առանձին, գաղտնի հանդիպման: Ըստ երևույթին Հակորն այս մասին իր կանանց հետ նախկինում չէր քննարկել:

**31:5 «Իմ հոր Աստվածը»** Գլուխ 31-ում այն մի քանի արտահայտություններից է, որոնք ցույց են տալիս Աստծո ուխտի պատմական շարունակությունը Աբրահամի ընտանիքի մի քանի սերունդների հետ:

**31:6 «դուք գիտեք, որ ես իմ ամբողջ ուժով ծառայեցի ձեր հորը»** Կանայք տեղյակ էին իր հոր հետ կապված Հակորի աշխատանքային երկար ու դժվարին ժամերով գրաֆիկից: Նա աշխատեց իրենց համար 14 տարի և 6 տարի էլ իր սեփական հոտերի և նախիրների համար:

**31:7 «Իսկ ձեր հայրն ինձ խաբեց և տասն անգամ փոխեց իմ վարձքը»** «Խաբեց» (BDB 1068, KB 1739, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) տերմինը բխում է երբայերեն մի արմատից, որը նշանակում է «ծաղրել», «խորամանկել» կամ «կատակել»:

«Փոխեց» (BDB 322, KB 321) տերմինը նաև ակնարկվում է հ. 41-ում: Չնայած մեզ չի ասվում ստույգ ինչպես փոխեց Լաբանը իր վարձքերը, համատեքստից ակնհայտ է, որ Հակորը պետք է ստանար բոլոր խայտաճամուկ կենդանիներին, սակայն երբ այդ կենդանիները ծնեցին ավելի շատ, Լաբանը սկսեց դրանցից խումբ խումբ իր համար վերցնել: Ամեն անգամ, երբ փոփոխումներ էր կատարում, Աստված օրհնում էր Հակորի մնացած հոտերը, լինել դա բծավոր, թե պիսակավոր, և թե գոլավոր (տես՝ հ. 8):

❖ **«տասն անգամ»** Սա կարծես թե չափազանցության համար կիրառվող կյոր թիվ է, և ոչ թե ստույգ տասն անգամ (զգուշացե՛ք արևմտյան տառացիությունից):

❖ **«Աստված նրան թույլ չտվեց ինձ վնասել»** Հակորը գիտակցելով իր դիրքը Աստծո առջև, հիմնված ոչ միայն 25:23-ի մարգարեության, այլ 28:10-22-ում իրեն տրված Աստծո հատուկ տեսիլքի վրա, ուներ իրեն հետ կատարվածի վերաբերյալ աստվածաբանական հասկացողությունը: Լաբանը դա նույնպես գիտեր (տես՝ հ. 29):

**31:8** Այս համարը մանրակրկիտ նկարագրում է, թե ինչպես էր Լաբանը փորձում փոխել իրենց համաձայնագիրը: Սակայն, ամեն անգամ, որ փոխում էր, Աստված փոխում էր այծերի և ոչխարների բուծման արդյունքները ի օգուտ Հակորի (տես՝ հ. 9):

**31:9 «Աստված առավ»** Սա խիստ ԲԱՅ է (BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ), որը *Hiphil* արմատում արտահայտում է «ճանկել, թոցնել», տես՝ հ. 9 և 16: Այն կիրառված է արոտավայրը վայրի գազանների հարձակումներից ազատելու իմաստով (տես՝ 1 Թագ. 17:34-35; Եզեկ. 34:10; Ամովս 3:12): Քանի որ Լաբանը վերցրել էր Հակորի հասանելի վարձքերը, այժմ էր Աստված էր առնում նրանից իր հոտը և տալիս Հակորին: Փոխանցման մեխանիզմը նկարագրված է հ. 12-ում:

**31:10 «Եվ եղավ, որ հոտերի բեղմնավորման ժամանակ»** Սա նկարագրում է հաջորդող մի տեսիլք, որը Հակորը տեսավ այն կենդանիների հետ կապված, որոնք իրենն էին լինելու: Դա Հակորի կողմից հնարված հատուկ հնարքներ չէին (այսինքն՝ 30:37-43), այլ Աստծո շնորհքն էր, որ հոտերից Հակորին պատկանող բաժինը ավելացրեց (տես՝ հ. 9, և հատկապես՝ հ. 12):

**31:11 «Աստծո հրեշտակը»** Դարձյալ, Տիրոջ հրեշտակը Աստծո մարմնավորումն է (այսինքն՝ Ծննդ. 16:7-13; 18:1; 19:1; 21:17,19; 22:11-15; 31:11,13; 32:24,30; 48:15,16; Ելից 3:2,4; 13:21; 14:19; Դատ. 6:12,14; Չաք. 3:1-2): Նա խոսում էր ՅԱՀՎԵԻ անունից: Տե՛ս Հատուկ Թեմա 12:7-ում:

**31:13 «Ես եմ Բեթելի Աստվածը»** Սա վերաբերում է Հակորին տրված Աստծո տեսիլքին, որն արձանագրված է Ծննդ. 28:10-22-ում: Հակորի հոր և պապիկի Աստվածը (տես՝ հ. 5) նոր հրամաններ է տալիս՝

1. «վեր կաց», BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. «հեռացի՛ր» (բառացի՝ «գնա՛»), BDB 422, KB 425, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. «վերադարձի՛ր», BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**31:14** Հակորի կանայք բոլորն էլ նրա հետ էին:

**31:15 «Մի՞թե մենք օտարականներ չէինք համարվում նրա համար, քանի որ մեզ ծախել էր և մեր փողն էլ կերավ»** Այստեղ Լաբանի երկու դուստրերը մեղադրում են իրենց հորը, որ իրենց հանդեպ հավատարմորեն չի վարվել՝ այդ օրերի (Քոռեցիների մշակույթի) մշակութային ակնկալիքների համաձայն: Քոռեցիների փաստաթղթերում աղջկա համար գոնե որոշ չափով պահպանված է «մոհարը» կամ «կնոջ օժիտը»: Սակայն Լաբանը վերցրել էր Հակոբի աշխատավարձերը և ամբողջությամբ դրանք վատնել: Համար 15 ցույց է տալիս մեզ, որ աղջիկները ճանաչում էին իրենց հոր՝ Լաբանի ազատությունն ու արհամարհանքը:

«Ամբողջությամբ վատնեց /հայերենում՝ փողն էլ կերավ/» արտահայտությունը» միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅՆ է (BDB 37, KB 46), որն արտահայտում է ուժգնություն:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 31:17-21**

**<sup>17</sup>Եվ Հակոբը վեր կացավ և իր որդիներին ու կանանց ուղտերի վրա նստեցրեց, <sup>18</sup>և իր բոլոր անասուններն ու իր ամբողջ ունեցվածքը, որ ստացել էր, իր ունեցած հոտերը, որ Փաղան-Արամում ձեռք բերեց, քչեց դեպի Քանանի երկիրը՝ իր հոր՝ Իսահակի մոտ գնալու համար: <sup>19</sup>Լաբանը գնացել էր իր հոտերը խուզելու. և Ռաբելն իր հոր կուռքերը գողացավ: <sup>20</sup>Եվ Հակոբն ասորի Լաբանից ծածուկ փախավ, և նրան չհմացրեց էլ, թե փախչում է: <sup>21</sup>Այսպես փախավ նա՝ իր ողջ ունեցվածքով, և վեր կացավ ու անցավ գեաից. իր երեսը դեպի Գաղաադ լեռը դարձրեց:**

**31:17 «Եվ Հակոբը վեր կացավ և իր որդիներին ու կանանց ուղտերի վրա նստեցրեց»** Փախուստը պետք է լիներ արագ և նրա ընտանիքը շատ երիտասարդ էր, որպեսզի առանց ուղտերի վրա հեծնելու ճամփորդեր:

**31:18 «իր բոլոր անասունները քչեց»** «Քչեց» տերմինը (BDB 624, KB 675) արտահայտում է այն շտապողականությունը, որով անասունները տարվել են՝ քվել: Ըստ երևույթին նրանք ճանապարհ են ընկել երեկոյան և գիշերային ժամերին, որպեսզի խուսափեն ցերեկվա տապից:

**31:19 «Լաբանը գնացել էր իր հոտերը խուզելու»** Խուզելու ժամանակը մեծ տոնակատարության և ընտանիքի վերականգնման ժամանակ էր (տես՝ Ծննդ. 38:12; 1 Թագ. 25:4 և 2 Թագ. 13:23): Հակոբի բացակայությունը կարևոր է, որը ցույց է տալիս նրանց փոխհարաբերության վատթարացում:

❖ **«և Ռաբելն իր հոր /ընտանեկան/ կուռքերը գողացավ»** «Ընտանեկան կուռքեր» եբրայերեն բառը *teraphim* (BDB 1076) է: Ընտանեկան այս կուռքերը կարող էին չափսերով շատ մեծ լինել (տես՝ 1 Թագ. 19:13), կամ շատ փոքր, որպեսզի տեղավորվեին Ռաբելի ուղտի թամբի մեջ (տես՝ հ. 34): Նուզի Տախտակներից հասկանում ենք, որ այս ընտանեկան կուռքերը ժառանգության իրավունքների նշան էր, ուստի հնարավոր է Ռաբելը դրանք գողացել էր որպես իր ժառանգության հանդեպ Լաբանի ապօրինի գործողությունների սիմվոլ կամ որպեսզի հետագայում հաստատի, որ իր որդին է ժառանգելու Հակոբի ունեցվածքը: Ոմանք ասում են, որ նա գողացավ դրանք, որպեսզի Լաբանը չկարողանա հմայի իրենց, ուր էլ որ իրենք լինեն (այսինքն՝ Ռաշի, տես՝ 30:27): Այս *teraphim* կիրառվում էր կախարհության համար (տես՝ Չաք. 10:2): Նրանք հաճախ էին հայտնվում «եփուտի» համադրությամբ (տես՝ Դատ. 17:5; 18:14-20 և Ովս. 3:4): Նրանք դատապարտվում են որպես կռապաշտական իրեր 1 Թագ. 15:23-ում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Teraphim (BDB 1076, KB 1749)  
SPECIAL TOPIC: Teraphim (BDB 1076, KB 1749)**

«Ընտանեկան կուռքեր» արտահայտության համար եբրայերեն բառը (ստուգաբանությունն անհայտ է) *teraphim* է (BDB 1076, KB 1749): Ընտանեկան այս կուռքերը կարող էին չափսերով շատ մեծ լինել (տես՝ 1 Թագ. 19:13), կամ շատ փոքր, որպեսզի տեղավորվեին Ռաբելի ուղտի թամբի մեջ (տես՝ հ. 34): Նուզի Տախտակներից հասկանում ենք, որ այս ընտանեկան կուռքերը ժառանգության իրավունքների նշան էր, ուստի հնարավոր է Ռաբելը դրանք գողացել էր որպես իր ժառանգության հանդեպ Լաբանի ապօրինի գործողությունների սիմվոլ կամ որպեսզի հետագայում հաստատի, որ իր որդին է ժառանգելու Հակոբի ունեցվածքը: Ոմանք ասում են, որ նա գողացավ դրանք, որպեսզի Լաբանը չկարողանա հմայի իրենց, ուր էլ որ իրենք լինեն (այսինքն՝ Ռաշի, տես՝ 30:27): Այս *teraphim* կիրառվում էր կախարհության համար (տես՝ Չաք. 10:2): Նրանք հաճախ էին հայտնվում «եփուտի» համադրությամբ (տես՝ Դատ. 17:5; 18:14-20 և Ովս. 3:4): Նրանք դատապարտվում են որպես կռապաշտական իրեր 1 Թագ. 15:23-ում:



ՀԿ-ի տարբեր մասերից հավաքական նկարագրությունը դժվար է՝

1. փոքրիկ և տեղաշարժելի ընտանեկան կուռքեր, Ծննդ. 31:19,34,35
2. մեծ կուռքի տեսքով մարդանման արձանիկ, 1 Թագ. 19:13,16
3. տներում, ինչպես նաև սրբարաններում օգտագործվող կուռքեր, Դատ. 17:5; 18:14,17,18
4. ապագան կամ աստծո/աստվածների կամքը գուշակող կուռքեր՝  
ա. դատապարտված են և համագոր կախարհությանը, 1 Թագ. 15:23  
բ. դատապարտված են և համագոր հմայողներին, հոգեկանչներին և կուռքերին, 4 Թագ. 23:24  
գ. դատապարտված են և համագոր հմայությանը, սլաքներ շարժելուն, և ոչխարի լարող գննելուն, Եզեկ. 21:21  
դ. դատապարտված են և համագոր կախարհներին և սուտ մարգարեներին, Չաք. 10:2:

31:20

NASB, TEV, NRSV, NIV, PESHITTA  
NKJV  
RSV, NJB  
REB  
JPSOA  
LXX

«Հակոբը խաբեց»  
«գողացավ»  
«հիմարացնել»  
«աչքը կապել»  
«գաղտնի պահել»  
«գործը թաքցնել»

Ինչպես Ռաբելը «գողացավ» ընտանեկան կուռքերը՝ *teraphim*, այնպես էլ Հակոբը Լաբանի «սիրտը գողացավ» (BDB 170, KB 198, *Qal* ԱՆԿԱՏԱՐ), որը ակնհայտ է, որ խաբեության համար օգտագործվող դարձվածք է:

❖ «Ասորի Լաբանը» «Ասորի» տերմինը կարող է թարգմանվել «Արամացի» (BDB 74): Հայտնի չէ ստույգ պատճառը, թե ինչու է Լաբանը կոչվում Արամացի և այդ նույն անունով Հակոբն է անվանվում 2 Օր. 26:5-ում: Ծննդոց 10-ի ազգաբանությունից երևում է, որ սրանք երկու տարբեր էթնիկ տոհմանյուղեր էին, սակայն իրար հետ ամուսնությունները պատճառ է հանդիսացել, որ միավորվեն կամ աշխարհագրական տեղանքը (այսինքն՝ Խառանը), որում սկզբնապես պանդխտացել էր Աբրահամը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 31:22-24

<sup>22</sup>Եվ երրորդ օրը Լաբանին պատմեցին, թե Հակոբը փախել է: <sup>23</sup>Եվ նա եղբայրներին իր հետ վերցնելով նրա ետևից յոթ օրվա ճանապարհի գնաց և նրան հասավ Գաղաադ լեռան մոտ: <sup>24</sup>Եվ Աստված գիշերվա երազում ասորի Լաբանի մոտ եկավ և ասաց նրան. «Չգուշացի՛ր, որ Հակոբի հետ ո՛չ լավ խոսես և ո՛չ վատ»:

31:22 «Եվ երրորդ օրը Լաբանին պատմեցին, թե Հակոբը փախել է» Ծննդ. 30:36-ից իմանում ենք, որ Լաբանի և Հակոբի հոտերը երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա էին պահվում, ուստի ըստ երևույթին ծառաներից տեսել էին Հակոբին հեռանալուց և անմիջապես գնացել Լաբանին հաղորդելու (BDB 616, KB 665, *Hophal* ԱՆԿԱՏԱՐ):

31:23 «Գաղաադ լեռան մոտ» Որոշ քննարկումներ են եղել այն հարցի շուրջ, թե արդյոք հնարավոր էր այսքան կարճ ժամանակահատվածում ճանապարհից հեռավորվել այդքան մեծ տարածություն: Սակայն մենք խոսում ենք տաս օրվա ճանապարհի հարկադրված քայլելու մասին: Հայտնի չէ, թե ստույգ որքան էր հեռավորությունը, հավանաբար 250-350 մղոն ճանապարհ, քանի որ (1) մենք հաստատ չգիտենք Սիրիայում գտնվող տեղանքի վերաբերյալ, որտեղ գտնվում էին Հակոբի հոտերը և (2) մենք հաստատ չգիտենք Գաղաադի արևելյան սահմանի մասին:

Լաբանը եկավ զինված տղամարդկանց մի մեծ խմբով (տես՝ հ. 29): Նրա հետապնդումը նկարագրված է որպես «կատաղի հետապնդել» (BDB 196, KB 223, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) հ. 36-ում:

31:24 «Չգուշացի՛ր, որ Հակոբի հետ ո՛չ լավ խոսես և ո՛չ էլ վատ» Սա երբայերեն դարձվածք է («ուշադիր եղի՛ր, որ Հակոբին լավ կամ վատ խոսք չասես»), որը ըստ երևույթին նշանակում է «նրանք լրիվ հանգիստ թող»: Դարձյալ Աստծո շնորհքը և պաշտպանությունը հստակ երևում է նահապետների ընտանիքները նորից ու նորից ազատելով:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 31:25-32**

<sup>25</sup>Ապա Լաբանը հասավ Հակոբին: Արդ, Հակոբն իր վրանը խփել էր լեռան վրա. իսկ Լաբանն իր եղբայրներին դադար տվեց Գաղաաղ լեռան վրա: <sup>26</sup>Լաբանն ասաց Հակոբին. «Այս ի՞նչ արեցիր, որ ինձնից գաղտնի փախար և իմ աղջիկներին էլ սրով գերեվարվածների պես քշեցիր: <sup>27</sup>Ինչո՞ւ ծածուկ փախար ու կողոպտեցիր և ինձ տեղյակ չպահեցիր, որ քեզ ճանապարհի նուրախությամբ և երգերով, թմբուկներով ու քնարներով: <sup>28</sup>Եվ թույլ չտվիր ինձ, որ որդիներս ու աղջիկներս համբուրեի. հիմա դու հիմարություն արեցիր: <sup>29</sup>Իմ ձեռքն ուժ ունի քեզ չարիք պատճառելու, բայց մեր հոր Աստվածը երեկ գիշեր ինձ հետ խոսեց՝ ասելով. «Չգուշացիր, որ Հակոբի հետ ո՛չ լավ խոսես, ո՛չ վատ»: <sup>30</sup>Եվ հիմա գնալը գնում ես՝ քանի որ շատ ես ցանկանում քո հոր տունը, *բայց* ինչո՞ւ գողացար իմ աստվածները»: <sup>31</sup>Եվ Հակոբը պատասխանեց ու ասաց Լաբանին. «Քանի որ վախեցա, թե միգուցե հափշտակես քո աղջիկներին ինձնից: <sup>32</sup>Ում մոտ որ քո աստվածներին գտնես, նա թող չապրի. մեր եղբայրների առջև փնտրի՛ր, քեզ պատկանող ինչ որ ինձ մոտ լինի, վերցրո՛ւ քեզ», - որովհետև Հակոբը չգիտեր, որ Ռաբելը գողացել է դրանք:

**31:25 «Արդ, Հակոբն իր վրանը խփել էր»** Սա առաջին անգամն է, որ նշվում է, որ Հակոբն իր վրանն է խփում, ուստի ըստ երևույթին հարկադրված շտապ հեռանալը թույլ չէր տվել նրանց կանգ առնելու ավելի շուտ: Հնարավոր է Հակոբը զգում էր, որ իրենք բավականին հեռու են և ապահով:

**31:26-30** Ես սա մեկնաբանում եմ որպես շահագործող Լաբանը Հակոբի մասին անարդար մեղադրանքներ է ներկայացնում: Լաբանի մեղադրած շատ բաներում ճշմարիտ փաստեր չկան: Լաբանը կարծես թե հանրորեն իրեն է արդարացնում իր բարեկամների (և Հակոբի) համար, որոնք ի վերջո լինելու էին նրանց դատավորները:

**31:27** Լաբանն ասում է, որ Հակոբի համար խնջույք կկազմակերպեր: Հակոբը հիշում է վերջին խնջույքը, որ Լաբանը կազմակերպել էր իր համար (այսինքն՝ Լիայի հետ իր հասանելան գիշերը): Նա այլևս ոչ մի «խնջույք» չէր ուզում իր աներոջ հետ:

**31:28 «հիմա դու հիմարություն արեցիր»** Այս տերմինը (BDB 698, KB 754, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) սովորաբար Աստվածաշնչում օգտագործվում է մեղքի և հանցանքի հետ կապված (տես՝ 1 Թագ. 13:13, Սավուդի հետ առնչվող, և 2 Թագ. 24:10-ում՝ Դավթի հետ առնչվող): Ըստ երևույթին Լաբանը մեղադրում էր Հակոբի փախուստը որպես մեղսավոր բնույթի:

**31:29 «Իմ ձեռքն ուժ ունի ձեզ չարիք պատճառելու, բայց ձեր հոր Աստվածը երեկ գիշեր ինձ հետ խոսեց»** «Իմ ուժը» (BDB 42) արտահայտությունը ստուգաբանորեն կապված է *El* (BDB 42) կամ *Elohim* (BDB 43) տերմինի հետ: Սա միակ համարն է, որը մեզ պատկերացում է տալիս, որ *El* բառի հիմնական ստուգաբանությունը կարող է նշանակել «ուժեղ լինել»: Աստված երազով զգուշացնում է Լաբանին ինչպես որ նախկինում զգուշացրել էր Փարավոնին (պատուհասի միջոցով, տես՝ 12:17, և մի քանի հայտնություններ, սակայն ստույգ ինչպես՝ արձանագրված չէ) և Արիմեդեին (տես՝ 20:3): ՅԱՀՎԵՆ հսկում և պաշտպանում է ուխտի ընտանիքին վնասներից և հարձակումներից:

**31:30 «Եվ հիմա գնալը գնում ես՝ քանի որ շատ ես ցանկանում քո հոր տունը»** Այս համարում Լաբանը երկու խիստ կերպերով է արտահայտվում՝

1. «հիմա գնալը գնում ես», միևնույն արմատից (BDB 229, KB 246, «գնալ») ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԸ:
2. «շատ ես ցանկանում», միևնույն արմատից (BDB 493, KB 490) ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԸ:

«Շատ ես ցանկանում» արտահայտությունը (BDB 493) երբայերեն «գունատվել» արմատից է, որը հաճախ կիրառվում էր նկարագրելու արձաթ մետաղը (BDB 494): Սա «ցանկություն» բառի համար օգտագործվող խիստ շեշտադրված տերմին է: Լաբանը մեղադրում էր Հակոբին, որ վերջինս հեռացել էր, քանի որ կարոտում էր իր տունը, և չէր նշում իրական պատճառները՝ իր կողմից ցուցաբերած շահագործումը, ազահությունը, խաբեությունը և ի վերջո վատ վերաբերմունքը:

❖ «*բայց* ինչո՞ւ գողացար իմ աստվածները» Վերաբերում է 31:19-ին: Ըստ երևույթին այս ընտանեկան աստվածները սնահավատորեն կապված էին ժառանգության և բարգավաճման հետ և Լաբանը Հակոբի հեռանալը դիտարկում էր որպես բարգավաճման կորուստ, ինչպես նաև ժառանգության և հավանաբար հոգևոր առաջնորդության կորուստ այս ընտանեկան աստվածներից (այսինքն՝ *teraphim*):

**31:31-32** Հակորը պատասխանում է Լաբանի հարցին, որ տրվել էր հ. 27-ում և ոչ թե հ. 30բ-ում տրված հարցին: Հակորը չգիտեր, որ Ռաբելն էր գողացել կուռքերը (հ. 19):

**31:32** Ըստ երևույթին Հակորը չգիտեր, որ Ռաբելը գողացել էր այդ աստվածներին: Համար 32 արտացոլում է Համնուրարիի Օրենքը թե՛ տանարից, և թե՛ ինչ-որ մեկի ընտանեկան կուռքերի գողության հետ կապված: Ռաբբիներն ասում են (տես՝ Ծննդ. Ռաբ. 74.4), որ Ռաբելի մահը, որը արձանագրված է Ծննդ. 35:16-18-ում, մինչ ծննդաբերում էր Բենիամինին, կապված է այս համարում արձանագրված Հակորի ասած խոսքերի հետ: Իհարկե սա օրինական տերմինալոգիա է (այսինքն՝ «հարազատների ներկայությամբ էր»): Կան երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝

1. փնտրի՛ր (բառացի՝ «գնի՛ր», տես՝ 37:32; 38:25), BDB 647 I, KB 699, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. վերցրո՛ւ (նշանակում է՝ «քեզ համար ետ վերցրու»), BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 31:33-35**  
**<sup>33</sup>Եվ Լաբանը մտավ Հակորի վրանը և Լիայի վրանը և երկու աղախիներն էլ վրանը, բայց ոչինչ չգտավ, և Լիայի վրանից դուրս եկավ և Ռաբելի վրանը մտավ: <sup>34</sup>Իսկ Ռաբելը կուռքերը վերցնելով՝ դրանք դրել էր ուղտի համետի մեջ և վրան նստել. և Լաբանն ամբողջ վրանում փնտրեց ու չգտավ: <sup>35</sup>Եվ նա իր հորն ասաց. «Թող իմ տերը չբարկանա, որ չեմ կարող քո առաջ վեր կենալ, որովհետև կանանց ամսականի մեջ եմ»: Եվ նա խուզարկեց, բայց կուռքերը չգտավ:**

**31:33** «Եվ Լաբանը մտավ Հակորի վրանը և Լիայի վրանը» Այս դեպքը ցույց է տալիս, որ կանայք սովորաբար մնում էին առանձին վրաններում:

**31:34** «ուղտի համետը» Այս տերմինը (BDB 468), որը կարելի է գտնել միայն այստեղ, հնարավոր է վերաբերում է թամբի մեջ գտնվող պարկին կամ դրանից կախված պայուսակին (TEV, REB):

❖ «և Լաբանն ամբողջ վրանում փնտրեց» Այս «փնտրեց» տերմինը նշանակում է «ձեռքերով մանրակրկիտ գննել» (BDB 606, KB 653, *Piel* ԱՆԿԱՏԱՐ): Սովորաբար սա կիրառվում է կույր մարդկանց համար, որոնք խարխափում են մթության մեջ (տես՝ 2 Օր. 28:29; Հոր 5:14; 12:25):

**31:35** «որովհետև կանանց ամսականի մեջ եմ» Սա վերաբերում է նրա դաշտանի ցիկլին (BDB 202 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ BDB 61): Ղևտ. 15:19-ից հայտնի է, որ գոյություն ունեին որոշակի մշակութային թաբուներ այս թեմայի հետ կապված: Սակայն, անհայտ է, թե որքանով կարող ենք պրոյեկտել այս դևոտական օրենքները Լաբանի և Հակորի այդ օրերի մշակութային մեջ, սակայն ինչ-որ պատճառ կար, որ նա չխնդրեց Ռաբելին վեր կենալ իր տեղից:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 31:36-42**  
**<sup>36</sup>Եվ Հակորը զայրացավ ու վիճում էր Լաբանի հետ. «Ո՞րն է իմ հանցանքը, ո՞րն է իմ մեղքը, որ հետապնդում ես ինձ, <sup>37</sup>որ խուզարկեցիր իմ ամբողջ ունեցվածքը. ի՞նչ գտար քո տան ապրանքներից, դի՛ր այստեղ՝ իմ եղբայրների ու քո եղբայրների առաջ, և թող նրանք դատեն մեզ երկուսիս: <sup>38</sup>Միա քսան տարի է, որ քեզ հետ եմ. ոչխարներդ ու այծերդ ձագ չվիժեցին. և քո հոտի խոյերին չեմ կերել: <sup>39</sup>Գազանի հոշոտածը չեմ բերել քո մոտ. ես էի կրում վնասը. ցերեկը գողացվածը կամ գիշերը գողացվածն ինձնից էիր պահանջում: <sup>40</sup>Այսպես էի, ցերեկով տաքը, գիշերով ցուրտն էր մաշեցնում ինձ, և քունս փախել էր աչքերիցս: <sup>41</sup>Այսպես քսան տարի քո տանը ես ծառայեցի՝ տասնչորս տարի քո աղջիկների և վեց տարի էլ քո հոտերի համար. և տասն անգամ փոխեցիր իմ վարձատրությունը: <sup>42</sup>Եթե իմ հոր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը և Իսահակի Երկյուղը չլինեք, անպայման դու ինձ դատարկ ճանապարհ կդնեիր: Աստված տեսավ իմ տառապանքը և իմ ձեռքի աշխատությունը և երեկ գիշեր քեզ հանդիմանեց»:**

**31:36** «Հակորը զայրացավ» Այս ԲԱՅԸ (BDB 354, KB 351, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) նշանակում է «վառվել» և արտահայտում է մարդու ցասումը (տես՝ 4:5,6; 30:2; 34:7; 39:19):

❖ «վիճում էր Լաբանի հետ» ԲԱՅԸ (BDB 936, KB 1224, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) ունի իրավաբանական նշանակություն (տես՝ հ. 37): Հակորը Լաբանի կողմից հարձակման էր ենթարկվել իր բարեկամների ներկայությամբ, այժմ Հակորը պատասխան էր տալիս հռետորիկ հարցերով՝

1. «Ո՞րն է իմ հանցանքը» (հ. 36)
2. «Ո՞րն է իմ մեղքը» (հ. 36)
3. «Ի՞նչ գտար» (հ. 37)

Իրականում բարեկամները քոչվոր ցեղերի օրենքներով դատավարություն էին վարելու: Նրանք պետք է այս վիճաբանության մեջ վճիռ կայացնեին (հ. 37):

**31:38-42** Հակոբը ներկայացնում է իր հովվական կարողությունները և նվիրումը (հարազատների առջև):

1. ոչխարների ձագ չվիժեցին
2. նա խոյերից չէր կերել
3. վայրի զագաններից վնաս կրած կենդանիների կորուստը՝ վնասը ինքն էր քաշում

Այս բոլորը համընկնում է այդ օրերի մշակույթի հետ, որը ցույց է տրված Համմուրաբիի Օրենքում (պարբերություն 266):

**31:42 «Եթե իմ հոր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը և Իսահակի Երկյուղը»** «Իսահակի երկյուղը» արտահայտությունը յուրահատուկ է այս գլխին և կիրառված է երկու անգամ (տես՝ հ. 53): Այն կարող է վերաբերել այն Աստծուն, որին Իսահակը հարգում է կամ որից վախենում է: Մի ամերիկացի հնետաբան՝ Օլբրայթը, ասում է, որ «վախենալ» բառը կապված է համանման լեզուներում (արամերեն, արաբերեն և ուգարտերեն) «բարեկամ» բառի կիրառության հետ և պետք է թարգմանվեր «Իսահակի բարեկամները», մեկ այլ կերպ արտահայտելով «իմ հայրերի Աստվածը» խոսքի իմաստը: Ամեն դեպքում, սա անհայտ է:

❖ **«անպայման դու ինձ դատարկ ճանապարհ կդնեիր»** Հակոբը հասկացել էր Լաբանի ազահույունը, ինչպես նաև Աստծո ներկայության շնորհքը: Սա երևում է հ. 42-ի վերջին արտահայտության մեջ, որտեղ Հակոբը ակնարկ է կատարում Լաբանի երագին, որն արձանագրված է հհ. 24 և 29-ում: Աստված արդեն իսկ կատարել էր Իր դատը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 31:43-55**

<sup>43</sup>Եվ Լաբանը պատասխանեց ու ասաց Հակոբին. «Այս աղջիկներն իմ աղջիկներն են, և այս երեխաներն իմ զավակներն են, և ահա հոտերն իմ հոտերն են, և ամեն ինչ, որ դու տեսնում ես, իմն են. և ի՞նչ անեմ այսօր այս իմ աղջիկներին կամ իրենց ծնած զավակներին»: <sup>44</sup>Ուստի հիմա արի՛ մենք միասին ուխտ կնքենք, և իմ ու քո միջև վկայություն թող լինի»: <sup>45</sup>Եվ Հակոբը մի քար վերցրեց և որպես կոթող կանգնեցրեց այն: <sup>46</sup>Եվ Հակոբն ասաց իր եղբայրներին. «Քարեր հավաքեցեք». և նրանք քարեր վերցրեցին և կույտ դարձրին և այնտեղ՝ այդ կույտի վրա, հաց կերան: <sup>47</sup>Եվ Լաբանը դա Եեկար-սահադութա անվանեց, բայց Հակոբն այն Գաղաադ կոչեց: <sup>48</sup>Եվ Լաբանն ասաց. «Այսօր այս քարակույտն իմ ու քո միջև վկա է». դրա համար այն Գաղաադ կոչվեց. <sup>49</sup>ու նաև՝ Մասփա, որովհետև ասաց. «ՏԵՐԸ դիտի իմ ու քո միջև, երբ մենք իրարից բաժանվենք: <sup>50</sup>Եթե իմ աղջիկներին վշտացնես, և եթե իմ աղջիկներից բացի ուրիշ կանայք առնես, մեզանից ոչ մեկը չկա, իմ ու քո միջև Աստված է վկա»: <sup>51</sup>Եվ Լաբանն ասաց Հակոբին. «Ահա այս քարակույտը և ահա այս կոթողը, որ ես կանգնեցրի իմ ու քո միջև: <sup>52</sup>Վկա թող լինի այս քարակույտը, և վկա թող լինի այս կոթողը, որ ես չեմ անցնի այս քարակույտից դեպի քեզ՝ չարիքի համար: <sup>53</sup>Աբրահամի Աստվածը և Նաբովրի Աստվածը, նրանց հայրերի Աստվածը մեր մեջ դատավոր լինի»: Եվ Հակոբն իր հայր Իսահակի Երկյուղով երդվեց: <sup>54</sup>Եվ Հակոբը գոհեր մատուցեց այն լեռան վրա և իր եղբայրներին կանչեց հաց ուտելու. և հաց կերան ու գիշերը լեռան վրա անցկացրին: <sup>55</sup>Եվ վաղ առավոտյան Լաբանը վեր կացավ, իր որդիներին ու իր աղջիկներին համբուրեց և օրհնեց նրանց. և Լաբանը գնաց ու իր բնակատեղին վերադարձավ:

**31:43** Լաբանը փորձում է պատասխանել Հակոբի մեղադրանքներին:

**31:44 «Ուստի հիմա արի՛ մենք միասին ուխտ կնքենք, և իմ ու քո միջև վկայություն թող լինի»** Չնայած որ Լաբանը առաջարկում է ուխտ կնքել, Հակոբն է, որ կոթող է կանգնեցնում (հ. 45 /տես՝ 28:18/, չնայած որ Լաբանը հ. 51-ում պնդում է, որ դա ինքն է արել) և բարեկամներին ասում է, որ դրա շուրջը քարերի կույտ հավաքեն (հ. 46): Նրանք այնտեղ կատարեցին ուխտի ճաշկերույթ: Ճաշկերույթները ՀԿ-ում հաճախ տեղի էին ունենում դաշինք կնքելու շուրջ:

Այս համարի քերականական առանձնահատկություններն են՝

1. «արի՛», BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. «միասին ուխտ կնքենք», BDB 503, KB 500, *Qal* ԸԳՁԱԿԱՆ, (բառացի՝ «կտրել», տես՝ Հատուկ Թեմա 13:15-ում)
3. «վկայություն թող լինի», BDB 224, KB 243, *Qal* ՎԱԴԱԿԱՏԱՐ, բովանդակելով ագրեսիայի դեմ մշտական տեսանելի վկայություն (տես՝ հ. 52)

**31:47** Այստեղ կան երկու անուններ: Առաջինը արամերեն է (BDB 1094 ԿԱՌՈՒՑՎԱԾ BDB 1113) և երկրորդը եբրայերեն է (BDB 165): Դրանք համագործն են, որոնք վերաբերում են քարակույտին: Հակոբը այդ վայրը կոչեց «Գաղաադ» (BDB 165, «վկա քարակույտ»), որը վերաբերում է իրենց հավաքատեղին (այսինքն՝ «Գաղադին», BDB 166, «քարերի շրջան» կամ «լեռների շրջան»):

Շատ քննարկումներ են տեղի ունեցել արամերենի և եբրայերենի Նահապետական լեզուների շուրջ, որպես նրանց լեզուն: Կարծես թե արամերենը խոսվել է Միջագետքում՝ Աբրահամի հայրենիքում, սակայն երբ նա ճամփորդեց դեպի Քանան, նա իր հետ տարավ արամերենի բարբառը, որը մեզ ծանոթ է որպես եբրայերեն: Այս լեզուների վերաբերյալ մեր ունեցած լեզվաբանական հասկացողությունն այսպես իր պատշաճ տեղն է ընկնում:

**31:49 «Մասփա»** Հ. 49-ում «Մասփա» տերմինը (BDB 859) նաև եբրայերեն տերմին է, որը «հսկման աշտարակի» իմաստն ունի և այդտեղ անձնավորվում է՝ վերաբերելով Աստծո վկայությանը (BDB 859, KB 1044, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ, արմատը կապված է Մասփայի հետ) այս երկու տղամարդկանց միջև: Հետաքրքիր է, որ Լաբանն այստեղ իսկապես օգտվում է այս առիթից պոռթկալով Հակոբի վրա բոլոր այն պայմաններով, որ դնում է նրա վրա իր բարեկամների ներկայությամբ, որը կատարյալ անտեղին էր կարծում եմ: Օրինակներից մեկը, որ չամուսնանա այլ կանանց հետ: Սակայն Հակոբն էր, և ոչ թե Լաբանը, որ հոգատարություն ցուցաբերեց Լիայի և Ռաբելի հանդեպ, ինչպես երևում է հ. 31-ում:

**31:53 «Աբրահամի և Նաբոլի Աստվածը, նրանց հայրերի Աստվածը մեր միջև դատավոր լինի»** Այստեղ ԲԱՅԸ հոգնակի է (BDB 1047, KB 1622, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով), որը կարծես թե ակնարկում է, որ Լաբանը բազմաստվածության հետ կապված հայտարարություն է կատարում: Մեյտուազինտան այստեղ չի հետևում MT թարգմանությանը (այն տրված է ԵԶԱԿԻ ԲԱՅԻ տեսքով): Ծննդոց գիրքը կարծես թե ակնարկում է, որ Աբրահամը դարձել էր ՅԱՀՎԵԻստ, բայց ոչ Նաբոլի: Սա կարծես թե հուշում է, որ համաձայնագիր էր կնքվել մի քանի ընտանեկան աստվածների անուններով: Սակայն ուշադրություն դարձրե՛ք, որ Հակոբը միայն երդվում է իր հոր Աստծո՝ ՅԱՀՎԵԻ անունով («Իսահակի Երկյուղը»):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Այս գլխում ո՞վ է դիտարկվում որպես մանիպուլյատոր:
2. Թվարկե՛ք այն բոլոր անարդարացի գործերը, որ Լաբանը վարվեց Հակոբի հանդեպ:
3. Թվարկե՛ք Հակոբի ցուցաբերած հավատարմության գործերը:
4. Ի՞նչ էր *teraphim* –*ը* (հ. 19): Ի՞նչ նպատակով էին դրանք:
5. Թվարկե՛ք Լաբանի մեղադրանքները հհ. 26-30-ում և ցույց տվե՛ք, թե որքանով էին դրանք ճիշտ կամ սխալ:
6. Ինչո՞ւ էր Ռաբելը գողացել Լաբանի ընտանեկան կուռքերը:

**ԾՆՆԴՈՑ 32**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը վախենում է Եսավից	Եսավը գալիս է հանդիպելու Հակոբին	Հակոբի Եսավի հետ հաշտությունը (32:1-33:20)	Հակոբը պատրաստվում է հանդիպելու Եսավին	Հակոբը պատրաստվում է Եսավի հետ հանդիպմանը
32:1-2	32:1-8	32:1-2	32:1-2	
32:3-5		32:3-5	32:3-5	32:4-7
32:6-8		32:6-8	32:6-8	32:8-14ա
32:9-12	32:9-12	32:9-12	32:9-12	
32:13-21	32:13-21	32:13-21	32:13-21	32:14բ-22
	Աստծո հետ մենամարտը		Հակոբը մենամարտում է Փանուելում	Հակոբը մենամարտում է Աստծո հետ
32:22-23	32:22-32	32:22-32	32:22-24ա	32:23-25
Հակոբը մենամարտում է			32:24բ-26ա	32:25բ-30
32:24-32			32:26բ	
			32:27ա	
			32:27բ	
			32:28	
			32:29ա	
			32:29բ	
			32:30-32	32:32-32

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 32:1-2

<sup>1</sup>Եվ Հակոբը գնաց իր ճանապարհով, և Աստծո հրեշտակները նրան հանդիպեցին: <sup>2</sup>Եվ երբ Հակոբը նրանց տեսավ, ասաց. «Սա Աստծո բանակն է», և այն տեղի անունը Մանայիմ դրեց:

32:1

NASB, NKJV, NRSV, TEV  
NJB, JPSOA

«հանդիպեցին»  
«նախամարտեցին»

Այս ԲԱՅԸ (BDB 803, KB 910, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) արտահայտում է պատահական հանդիպման իմաստ (տես՝ NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 575, օր՝ Ելից 23:4; Թվոց 35:19,21; Հեսու 2:16; 1 Թագ. 10:5; Ամովս 5:19):

Հետաքրքիր է, թե արդյոք այս կարճ և բազմիմաստ համարը ինչ-որ կերպ կապված է հի.22-32-ում մենամարտողի հետ: Մենամարտողը ակնհայտ է, որ հրեշտակ է կամ ինչ-որ հոգևոր էակ, որն իշխանություն ուներ (ՅԱՀՎԵԻՑ) օրհնելու Հակոբին և փոխելու նրա անունը: Իսնդիրը կայանում է՝

1. այս բացման բազմիմաստ համարի մեջ
2. որ մենամարտողը չկարողացավ հաղթել Հակոբին այդ երկարաձիգ ֆիզիկական պայքարում

❖ «Աստծո հրեշտակը» Նա հրեշտակներ տեսել էր, երբ լքել էր Քանանը (տես՝ 28:12), այժմ էլ իր վերադարձի ճանապարհին, նրանք կրկին հանդիպում են իրեն (տես՝ 4 Թագ. 6:16-17; Սաղմ. 34:7): Նրանք ներկայացնում էին ՅԱՀՎԵԻ ներկայությունը և պաշտպանությունը: Դա նրան հիշեցնելու էր իր դրած պայմանների և Աստծո խոստումների մասին, որ տրվել էր գլուխ 28-ում: Այս գլուխը վախի և վստահության խառնուրդ է: Հակոբը պայքարում է այս երկու միջոցներով:

❖ «հանդիպեց» Այս ԲԱՅԸ (BDB 334, KB 910, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) նշանակում է «հանդիպել» կամ «դեմ առ դեմ տեսնել»: Anchor Աստվածաշնչի Մեկնության գիրքը (էջ՝ 254) այս հրեշտակներին կապում է հի. 24-32-ի հետ: Սա թույլ է տալիս ընթերցողին տեսնել, թե ինչպես է գլուխը սկսում և ավարտվում աստվածային հանդիպման վերապրումով:

32:2 «Աստծո բանակ» «Բանակ» տերմինը (BDB 334) ակնարկում է ճամբարատեղի կամ ճամփորդությունից հանգստանալու վայր: Այն կարող է մատնանշել զինված ուժերի ճամբար (տես՝ Հեսու 6:11,14; 1 Թագ. 4:3,6,7; 17:53; 4 Թագ. 7:16) կամ բանակ (տես՝ Ելից 14:24): Սա երբայերեն ռազմական տերմիններից մեկն է, որ թարգմանվում է «գորքեր»:

❖ «Մանայիմ» Այս բառը տառացի նշանակում է «երկու ճամբարներ» կամ «երկու բանակներ» (BDB 334, երկակի տեսքով): Այս երկու ճամբարները կարող են վերաբերել՝

1. Լաբանին և Հակոբին
2. հրեշտակներին և Հակոբին
3. Եսավին և Հակոբին
4. Հակոբի կողմից բաժանված ընտանիքի խմբերը

Ամփոջապես համատեքստի համաձայն #2 լավագույնս է համապատասխանում: Ավելի ընդարձակ համատեքստի համաձայն #4-ն է համապատասխանում Հակոբի այն բնավորությանը, որ փորձում է վստահել իր սեփական կարողությանը:

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 32:3-5

<sup>3</sup>Եվ Հակոբն իրենից առաջ բանագնացներ ուղարկեց իր եղբայր Եսավի մոտ՝ դեպի Եդովմի երկիր՝ Սեիրի շրջան: <sup>4</sup>Եվ նրանց պատվիրեց՝ ասելով. «Այսպես ասացե՛ք իմ տիրոջը՝ Եսավին. «Քո ծառա Հակոբն այսպես է ասում. «Լաբանի մոտ պանդխտություն արեցի և մինչև հիմա այնտեղ մնացի: <sup>5</sup>Եվ ունեմ արջառներ և էշեր, հոտեր ու ծառաներ և աղախիններ. հիմա ուղարկում եմ իմ տիրոջն իմաց տալու, որ քո առաջ շնորհ գտնեմ»:

32:3 «բանագնացներ» «Պատգամաբերներ» կամ «բանագնացներ» (Մադաքիա անվան միևնույն արմատն ունի) թե՛ երբայերեն (BDB 521) և թե՛ հունարեն տերմինը նշանակում է «հրեշտակներ»: Ռաբբիներն ասում են, որ նա հրեշտակներին իր առջևից ուղարկեց, որպեսի հանդիպեն Եսավին: Միևնույն երբայերեն արմատը թարգմանվում է «հրեշտակներ» հ. 1-ում և «պատգամաբերներ»՝ հի. 3 և 6-ում:

**32:4 «իմ տիրոջը՝ Եսավը»** Այստեղ՝ Հակոբի Եսավին ուղղված պատգամի մեջ, «տեր» բառը կիրառվում է որպես քաղաքավարության տիրոջ (Adon):

❖ **«քո ծառա»** Պատգամաբերները Եսավին պետք է դիմեին որպես «Տեր» (BDB 10) և Հակոբին որպես «ստրուկ» կամ «ծառա» (BDB 713): Հակոբը դեռ վախենում է (տես՝ հհ. 7,11), որ Եսավը դիմ էր պահում (Ծննդոց 27-ում ընտանիքի օրհնությունը իրենից գողանալու համար):

**32:5** Ըստ երևույթին այս պատգամն ունի երկակի նպատակ՝

1. Հակոբը բարգավաճել է
2. նա ուզում է Եսավին տալ իր հարստությունից ինչ-որ մաս որպես նվեր (տես՝ հհ. 13-21):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 32:6-8**

**Յեվ բանագնացները վերադարձան Հակոբի մոտ ու ասացին. «Քո եղբոր՝ Եսավի մոտ գնացինք, և նա էլ չորս հարյուր մարդով գալիս է քեզ դիմավորելու»:<sup>7</sup>Այն ժամանակ Հակոբը շատ վախեցավ ու մտահոգվեց և իր ունեցած հոտերն ու նախիրները և ուղտերը երկու խմբի բաժանեց,<sup>8</sup>և ասաց. «Եթե Եսավը մեկ խմբին հասնի և նրան հարվածելու լինի, մյուս խումբը կազատվի»:**

**32:6 «նա էլ չորս հարյուր մարդով գալիս է»** Եսավը չպատասխանեց Հակոբի պատգամին և իր հետ ուներ 400 մարդ: Սա իսկապես սարսափեցրեց Հակոբին (տես՝ հ. 7):

**32:7** Նկատե՛ք Հակոբի հոգեկան արձագանքը այս նորությանը՝

1. «շատ վախեցավ»  
ա. վախենալ, BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 3:10; 18:15; 43:18  
բ. շատ՝ մեծապես, ՄԱԿԲԱՅ, BDB 547
2. «մտահոգվեց», BDB 846 I, KB 1058, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, որը հիմնականում նշանակում է «ճնշված լինել», տես՝ Հոր 20:22; Ես. 49:19, սակայն սա կիրառվել է այլաբանորեն «ճնշված հոգու» (այսինքն՝ մտահոգված) համար, տես՝ Դատ. 2:15; 10:9; 2 Թագ. 13:2:

**32:7-8** Հակոբը պատրաստվում է հնարավոր վատթարագույն իրավիճակի դեմ: Դարձյալ հ. 1-ի համատեքստում սա կարծես թե արտահայտում է հավատքի պակասություն: Նա հհ. 9-12-ում աղոթում է, սակայն ինչ-որ իմաստով նա փորձում է վերահսկել իր սեփական ճակատագիրը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 32:9-12**

**Յեվ Հակոբն ասաց. «Ո՛վ իմ հոր՝ Աբրահամի Աստված, և իմ հոր՝ Իսահակի Աստված, ո՛վ ՏԵՐ, որ ինձ ասացիր. «Վերադարձի՛ր քո երկիրը և քո ազգականներին, և քեզ բարիք կանեն»:<sup>10</sup>Ես արժանի չեմ բոլոր այն ողորմություններին և այն հավատարմությանը, որ արել ես Քո ծառային, որովհետև իմ գավազանով անցա այս Հորդանանից և հիմա երկու խմբի տեր եմ դարձել:<sup>11</sup>Հիմա ինձ ազատի՛ր իմ եղբայր Եսավի ձեռքից, որովհետև վախենում եմ նրանից. միգուցե գա և հարվածի ինձ և մորն՝ իր երեխաների հետ:<sup>12</sup>Իսկ Դու ասել ես, որ անպայման քեզ բարիք կանեն և քո սերունդը ծովի ավազից ավելի կանեն, որ շատ լինելուց չի հաշվվի»:**

**32:9** Նկատե՛ք Աստծուն դիմելու տարբեր կերպերը՝

1. «Ո՛վ իմ հոր՝ Աբրահամի Աստված (778, BDB 43)»
2. «Ո՛վ իմ հոր՝ Իսահակի Աստվածը (նույն վերինը)»
3. «Ո՛վ ՏԵՐ» (717, BDB 217)

Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները, 12:1-ում: Սրանք բոլորն էլ վերաբերում են Աբրահամի Աստծուն (տես՝ 12:1; 28:3-4) և 28:13-17-ում Հակոբին տրված Նրա խոստումներին:

❖ **«որ ինձ ասացիր»** Սա վերաբերում է 31:13,29-ին և ի վերջո հենց 28:15-ին:

1. «վերադարձի՛ր», BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 31:13
2. «քեզ բարիք կանեն», BDB 405, KB 408, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ հհ. 10,13; 28:14:

**32:10 «Ես արժանի չեմ»** Հակոբի համար սա կարևոր մուտք էր (BDB 881, KB 1092, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, որն արտահայտում է անարժեքություն, տես՝ 2 Թագ. 7:19; 1 Մնաց. 17:17): Շեշտը ուխտի Աստծո շնորհքի, պաշտպանության և մատակարարման վրա:



❖	
NASB	«գրթարտություն»
NKJV	«ողորմությունները»
NRSV, REB	«հարատև սեր»
TEV	«բարություն»
NJB	«հավատարիմ սեր»
LXX	«արդարություն»
Peshitta	«բարեհաճություն»

Այստեղ օգտագործված բառը *hesed* (BDB 338 I) է, որն մատնանշում է ուխտի հավատարմությունը: Տես Հատուկ Թեմա 19:19-ում:

❖	
NASB, NRSV, TEV	«հավատարմություն»
NRSV, LXX, Peshitta	«ճշմարտություն»
NJB	«հարատևություն»
REB	«ճշմարիտ»

Սա երբայերեն *emeth* (BDB 54) բառն է, որը մատնանշում է հավատարմություն: *Hesed* և *emeth* բառերը հաճախ են հանդիպում ՀԿ-ում՝ նկարագրելու Աստծուն: Տես Հատուկ Թեմա 15:6-ում:

**32:11 «ազատի՛ր ինձ»** Այս տերմինը (BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) *Hiphil* արմատով նշանակում է «ճանկել, պոկել», իսկ այլաբանորեն «ազատել»:

❖ **«միգուցե գա և հարվածի ինձ»** Այս «հարվածել» (BDB 645, KB 697, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) տերմինը *Hiphil* արմատով նշանակում է խփել մի ամբողջ խմբի ճակատագրական հարվածով (տես՝ 34:30): Հակոբը վախենում էր, որ Եսավը կսպաներ իր ընտանիքի բոլոր ժառանգներին:

**32:12** Հակոբն Աստծուն հիշեցնում է 28:14 և 22:17-ի Իր ուխտի խոստումները: Սա կրկնվող խոստում էր, որ տրվում էր Նահապետներին: Նպատակը նրանց սերունդներ պարզելն էր:

❖ **«քեզ հաջողություն կտամ»** Բառացի սա նշանակում է «քեզ բարիք կանեմ» Այս արտահայտությունը միևնույն արմատի (BDB 405, KB 408) ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅՆ է, որը խստություն՝ ուժգնություն է արտահայտում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 32:13-21**

<sup>13</sup>Եվ այն գիշեր այնտեղ մնաց և իր կարողության չափ իր եղբայր Եսավի համար ընծաներ պատրաստեց. <sup>14</sup>Երկու հարյուր այծ և քսան խոյ, <sup>15</sup>Երեսուն կաթ տվող ուղա՝ իրենց ձագերով, քառասուն կով և տասը ցուլ, քսան էգ էշ և տասը ավանակ: <sup>16</sup>Եվ ամեն մի հոտ առանձին-առանձին ծառաների ձեռքը հանձնեց և ասաց իր ծառաներին. «Առա՛ջս անցեք և բաժինների մեջտեղում տարածություն թողեք»: <sup>17</sup>Եվ առաջինին պատվիրեց՝ ասելով. «Երբ եղբայրս՝ Եսավը, քեզ հանդիպի և քեզ հարցնի. «Գու ո՛ւմն ես և ո՛ւր ես գնում, և այս քո առաջ եղողներն ո՛ւմն են», <sup>18</sup>այն ժամանակ ասա՛. «Քո ծառա Հակոբինն են. սա ընծա է՝ ուղարկված իմ տեր Եսավին, և ահա ինքն էլ մեր ետևում է»: <sup>19</sup>Եվ նույնը պատվիրեց երկրորդին և երրորդին և հոտերի ետևից բոլոր գնացողներին և ասաց. «Նույն ձևով խոսե՛ք Եսավի հետ, երբ նրան գտնեք: <sup>20</sup>Եվ ասացե՛ք . «Ահա քո ծառա Հակոբն էլ մեր ետևում է», որովհետև ասում էր. «Կմեղմացնեմ նրան այս ընծաներով, որ իմ առջևից գնում են, և հետո անձամբ կհանդիպեմ նրան, գուցե ինձ ընդունի»: <sup>21</sup>Եվ ընծաները նրա առջևից գնացին, իսկ ինքն այդ գիշեր այնտեղ մնաց՝ բանակատեղիում:

<b>32:20</b>	
NASB, NKJV, NRSV, REB, Peshitta	«կմեղմացնեմ նրան»
TEV	«կշահեմ նրան»
NJB	«կհաշտեցնեմ նրան»
JPSOA, LXX	«կհանդարտեցնեմ նրան»

Այս ԲԱՅՆ (BDB 497, KB 493, *Piel* ԸՂՁԱԿԱՆ) արյամբ սրբվող գոհաբերության համար կիրառվող ԲԱՅ է (տես՝ Ղևտացիների 4 և 16): Դրա հիմնական նշանակությունը «ձածկել» կամ «քավություն կատարել» է:



NASB, NKJV, NRSV, LXX  
TEV  
NJB  
JPSOA  
REB

«ինձ ընդունի»  
«ինձ ների»  
«կյօթքվի դեպի ինձ»  
«բարեհաճ կգտնվի»  
«բարությանը կընդունի ինձ»

ԲԱՅԸ (BDB 669, KB 724, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) նշանակում է «բարձրացնել»: Սա եբրայերեն «երեսը բարձրացնել» դարձվածքն է (տես՝ Հոբ 42:8,9; Սաղմ. 82:2; Առակ. 18:5; Ողբ. 4:16): Օրենսդրական դաշտում այն վերաբերում էր դատավորին, որն իր երեսը բարձրացնում է մեղադրյալի վրա, որը վտանգի էր ենթարկում նրա անաչառությունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 32:22-32**

<sup>22</sup> Եվ այն գիշերը վեր կացավ և իր երկու կանանց և իր երկու աղախիններին և իր տասնմեկ որդիներին առավ և անցավ Հակոբի անցքից: <sup>23</sup> Եվ նրանց առավ և անցկացրեց առվից և իր ամբողջ ունեցվածքն ուղարկեց: <sup>24</sup> Եվ Հակոբը մենակ մնաց, և մի մարդ գոտեմարտում էր նրա հետ՝ մինչև արշալույս: <sup>25</sup> Եվ տեսնելով, որ չի կարողանում նրան հաղթել, դիպավ նրա ազդրի ամուլաջիին, և Հակոբի ամուլաջիը թուլացավ նրա գոտեմարտելու պահին: <sup>26</sup> Եվ նա ասաց. «Թո՛ղ ինձ, որովհետև արշալույսը բացվեց». և Հակոբն ասաց. «Չեմ թողի Քեզ մինչև ինձ չօրհնես»: <sup>27</sup> Եվ Նա ասաց նրան. «Ի՞նչ է քո անունը». նա էլ ասաց. «Հակոբ է»: <sup>28</sup> Եվ նա ասաց. «Այսուհետև քո անունը Հակոբ չի լինելու, այլ Իսրայել, քանի որ Աստծո հետ և մարդկանց հետ մարտնչեցիր և հաղթեցիր»: <sup>29</sup> Եվ Հակոբը հարցրեց և ասաց. «Աղաչո՛ւմ եմ, ասա՛ անունդ»: Իսկ Նա ասաց. «Ինչո՛ւ ես հարցնում Իմ անունը». և Նա օրհնեց նրան այնտեղ: <sup>30</sup> Եվ Հակոբն այն տեղի անունը Փանուել դրեց, որովհետև ասաց. «Դեմ առ դեմ տեսա Աստծուն, և կյանքս պահպանվեց»: <sup>31</sup> Եվ երբ անցավ Փանուելից, արեգակը ծագեց նրա վրա. «Եվ իր ազդրի պատճառով կաղում էր: <sup>32</sup> Այդ պատճառով Իսրայելի որդիները զիտի վրա թուլացած ջիղը մինչև այսօր չեն ուտում, որովհետև Նա Հակոբի ազդրի թուլացած ջիղին էր դիպել:

**32:22 «անցավ անցքից»** «Անցավ» (BDB 716, KB 778, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) բառի եբրայերեն արմատը միևնույնն է ինչ «անցքը» (BDB 721, տես՝ Հեսու 2:7; Դատ. 3:28; Եսայի 16:2): Այն արտահայտում է ծանծաղ մատով անցնելու՝ առաջ գնալու իմաստ:

❖ **«Հարոկ»** Այս արմատը նշանակում է «հոսք, հոսել» (BDB 132): Այն կտրել էր մի շատ խորը կիրճ:

**32:24 «մի մարդ գոտեմարտում էր»** Այստեղ «գոտեմարտել» (BDB 7, KB 9, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ), «Հարոկ» (BDB 132), ինչպես նաև «Հակոբ» (BDB 784), բոլորն են միևնույն հնչողությունն ունեն արտասանելիս: Այստեղ այդ անձը նշվում է որպես «տղամարդ» (BDB 35, *ish*, տես՝ հ. 6), սակայն համատեքստը ակնարկում է, որ նա Աստծո ֆիզիկական դրսևորումն էր (տես՝ հհ. 28,30; 18:1-2): Ամեն դեպքում հ. 26 ակնարկում է հրեշտակային արարածի:

Սա մի այնպիսի տեքստ է, որը արևմտյան բառացիությունը չի կարողանում հասկանալ: Սա ունի թե՛ ֆիզիկական և թե՛ սիմվոլիկ առանձնահատկություն: Պայքարը Հակոբի օգտին էր: Իհարկե այստեղ չի նկարագրվում Աստծո գոտեմարտելու հատկանիշները:

ՅԱՀՎԵՆ հայտնվում է Հակոբին մի քանի անգամ (տես՝ 28:10-22; 32:22-31; 35:9-13; 46:2-4) և ամեն անգամ շեշտադրվում են Աստծո բնավորությունը և Նրա խոստումները: Գլխավոր գործոնն այստեղ Հակոբը չէ (կամ էլ նրա գործերը), այլ Աստված և Նրա խոստումները:

**32:25 «և տեսնելով, որ չի կարողանում նրան հաղթել»** *Հրեական Սերտողության Աստվածաշունչը*, էջ՝ 67 /*Jewish Study Bible*/ նշում է մի հետաքրքիր հրեական ավանդույթ (Ծննդ. Ռաբ. 77.3), որը պնդում է, որ դա Եսավի պահապան հրեշտակն էր, և որ այս դեպքը ծառայում է որպես զգուշացում բոլոր նրանց, ովքեր կհակառակվեն ուխտի ժողովրդին: Սա փորձում է բացատրել, թե ինչպես մի հրեշտակային արարած չի կարողանում հաղթել մի պարզ մարդու: Սակայն, կարո՞ղ էր արդյոք Եսավի հրեշտակը փոխել Հակոբի անունը Իսրայելի: Սա «Աստծո ձեռքի» գործն էր:

❖ **«ամուլաջիլ»** Ռաբբիներն ասում են, որ սա վերաբերում է ազդրի երակին և Հուդայականության մեջ կենդանու լեշի այս երակը չի թուլատրվում ուտել (տես՝ հ. 32):

**32:26 «արշալույսը բացվեց»** Օրվա այս պահը հայտնի էր որպես Աստծո գործունեության հատուկ շրջան (տես՝ NIDOTTE, հատոր 4, էջ՝ 85): Այն հաճախ էր նշվում հնագույն ժողովրդական բանահյուսության մեջ:

Համաձայն Աստծուն տեսնելու երբայական վախի (տես՝ 16:13; 32:30; Ելից 33:20), հավանաբար արշալույսը կբացահայտեր Հակոբի հակառակորդի աստվածային բնույթը:

❖ **«օրհնի՛ր ինձ»** Հակոբի գոտեմարտելու կարողությունը չէր, որ պարզևատրվեց, այլ նրա Աստծուց համառորեն կախված լինելու իր վերաբերմունքը:

**32:27 «ի՛նչ է քո անունը»** Այնպես չէ, որ սա հրեշտակի կողմից անտեղյակության նշան էր, այլ Հակոբի համար հիշեցում էր իր խաբեբա և շահագործող բնավորությունն ունեցողի մասին:

**32:28 «Իսրայել»** Այս անվանափոխությունը կարծես թե ամբողջ պատմության բանալի հանդիսացող մեկնությունն է: Իսրայել նշանակում է «թող *Էլը* պահպանի» (BDB 975) կամ եթե ՀԱՅՑԱԿԱՆ է՝ «թող *Էլը* կռվի» (տես՝ Ովսեա 12:3-4): Հակոբի գորությունը չէր, այլ Աստծո նպատակը: Երբայեցիների համար մարդու անունը շատ կարևոր էր և արտացոլում էր մարդու բնավորությունը:

Մեկ այլ տարբերակ «Իսրայել» (יִשְׂרָאֵל, BDB 975) անվան բխում է יֵשׁוּרֻן (“Jeshurun”, BDB 449, տես՝ 2 Օր. 32:15; 33:5,26; Եսայի 44:2), որը նշանակում է «ուղիղ՝ արդար»:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱԵԼ (անունը)**  
**SPECIAL TOPIC: ISRAEL (the name)**

- I. Այս անվան նշանակությունն անհայտ է (BDB 975):
  - Ա. *Էլը* Պահպանում է
  - Բ. Թող *Էլը* Պահպանի (ՀԱՅՑԱԿԱՆ)
  - Գ. *Էլը* Համբերում է
  - Դ. Թող *Էլը* Կռվի
  - Ե. *Էլը* Պայքարում է
  - Զ. Նա ով պայքարում է Աստծո հետ (Ծննդ. 32:28)
  - Է. Վստահելի (IDB, հատոր՝ 2, էջ՝ 765)
  - Ը. Հաջողակ
  - Թ. Ուրախ
- II. Կիրառությունը ՀԿ-ում
  - Ա. Հակոբի անունը (տեղը բռնող, զարշապար բռնող, BDB 25:26) փոխվեց Հաբոկ գետի մոտ հոգևոր Էակի հետ գոտեմարտի բռնվելուց հետո (տես՝ Ծննդ. 32:22-32; Ելից 32:13): Հաճախ երբայերեն անունների նշանակությունները հնչյունային խաղիկներ են, ոչ թե ստուգաբանություններ (տես՝ 32:28): Նրա անունը դառնում է Իսրայել (օր՝ Ծննդ. 35:10):
  - Բ. Այն հետագայում դառնում է բոլոր իր տասներկու որդիների հավաքական անվան համար կիրառելի անուն (օր՝ Ծննդ. 32:32; 49:16; Ելից 1:7; 4:22; 28:11; 2 Օր. 3:18; 10:6):
  - Գ. Այն հետագայում բնութագրելու էր նախքան ելիցը (տես՝ Ծննդ. 47:27; Ելից 4:22; 5:2) և Ելիցից հետո (տես՝ 2 Օր. 1:1; 18:6; 33:10) տասներկու ցեղերից կազմված մի ազգի:
  - Դ. Սավուդի, Դավթի և Սողոմոնի միացյալ միապետությունից հետո ցեղերը բաժանվեցին Ռոբովամի իշխանության ներքո (տես՝ 3 Թագավորաց 12):
    - 1. նույնիսկ նախքան պաշտոնական բաժանումը սկսում է տարբերությունը (օր՝ 2 Թագ. 3:10; 5:5; 20:1; 24:9; 3 Թագ. 1:35; 4:20):
    - 2. կազմում է հյուսիսային ցեղերը նախքան Ասորեստանի կողմից Բ. Ա. 722թ-ին Սամարիայի անկումը (տես՝ 4 Թագավորաց 17):
  - Ե. Կիրառվում է Հուդայի համար մի քանի տեղերում (օր՝ Եսայի 1, Միքիա 1:15-16):
  - Զ. Ասորական և Բաբելոնյան գերությունից հետո այն կրին դառնում է Հակոբի բոլոր ժառանգների համար որպես հավաքական անուն (օր՝ Ես. 17:7,9; Երեմ. 2:4; 50:17,19):
  - Է. Ի տարբերություն քահանաների կիրառվում էր առանձնացված ծառայողների համար (տես՝ 1 Մնաց. 9:2; Եզրաս 10:25; Նեեմ. 11:3):

❖ **«Իմ հետ»** Գոտեմարտողը կարծես թե իրեն առանձնացնում է Աստծուց, չնայած որ հ. 30-ում Հակոբը հասկանում է, որ ինքը ինչ-որ առումով եղել Աստծո հետ:

**32:29 «Աղաչո՛ւմ եմ, ասա՛ անունդ»** Հնագույն Մերձավոր Արևելքում հոգևոր էակի անունը խստիվ պահպանվում էր այդ անունը անեծքներում, երդումներում և ծեսերում հավանական կիրառությունից պահպանելու նպատակով: Իհարկե աստվածաշնչյան տեքստերում խնդիրը սա չէ (տես՝ Դատ. 13:17-18): Աստվածաշնչյան տեքստերում ՅԱՀՎԵՆ Իր անունը հայտնում է Իր ժողովրդին (տես՝ Ելից 3:13-15): Սակայն դրա իմաստը միշտ չէ որ ըմբռնելի է (համեմատե՛ք Ելից 6:3 Ծննդոց 4:26-ի հետ): Ինչպես սահմանում է Դատավորաց 13:18, անունը չափազանց «սքանչելի» է մարդկանց համար ըմբռնելու՝ հասկանալու համար:

**32:30 «Փանուել»** Փանուել նշանակում է «Աստծո երեսը» (BDB 819): «Փանուել» բառի հեգումը հնարավոր է լինի այդ նույն վայրի նախկին անվանման մեկ այլ հեգման տարբերակը:

Այս անունը անշուշտ ակնարկում է, որ Հակոբը կարծում էր, որ իր հակառակորդը ՅԱՀՎԵՆ էր, որը հեշտությամբ կարող էր հաղթել մի սովորական մարդու, սակայն թույլ է տալիս պայմանագրային այս ենթատեքստը, որը մատնանշում է Իր հոժարակամությունը աշխատելու Հակոբի հետ և նրա կողքին: Նա ախոյան չէր, այլ ներկայում գտնվող օգնություն և մեկը, որ օրհնում է:

Սա իրականում հին տարօրինակ մի պատմություն է, տարբեր անհայտ առանձնահատկություններով, որը շատ նման է Ելից 4:24-26-ին: Մեծ հիմարություն կլիներ, եթե այս բազմիմաստ տեքստերը կիրառեինք վարդապետության կամ կյանքում կիրառելու համար: Դրանք մնում են առեղծված և դրանց մեկնությունը լոկ արդի ենթադրություն:

**32:31 «նա կաղում էր»** Արդյո՞ք սա մշտական (հետագա հրեական ավանդույթը), թե ժամանակավոր բնույթ կրեց, հայտնի չէ:

**32:32 «մինչև այսօր»** Այս արտահայտությունը տեքստային ապացույց է, որ կատարվել է հետագա խմբագրում: Կենդանու այս մասն ուտելու արգելը ռաբբիական ավանդույթ է և ոչ թե աստվածաշնչյան:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞վ էր գոտեմարտողը՝  
ա. մարդ (տես՝ հ. 24)  
բ. հրեշտակ (տես՝ հ. 26, Ովսեա 12:3-4)  
գ. Աստված մարդու տեսքով (տես՝ հ. 30)  
դ. Հիսուսը (Մարթին Լյութեր, հետևելով Ջասթինին)
2. Ի՞նչ մաս են կազմում հ. 1-ի հրեշտակները այս գլխի մնացած մասում:
3. Ինչո՞ւ էին այս դեպքերը Հակոբի համար այդքան կարևոր (այսինքն՝ հրեշտակի և Եսավի հետ կապված):
4. Ինչո՞ւ էր պետք անվանափոխությունը:

## ԾՆՆԴՈՑ 33

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը հանդիպում է Եսավին	Հակոբն ու Եսավը հանդիպում են	Հակոբի հաշտությունը Եսավի հետ (32:1-33:20)	Հակոբը հանդիպում է Եսավին	Հանդիպում Եսավի հետ
33:1-3	33:1-3	33:1-3	33:1-5ա	33:1-7
33:4-11	33:4-11	33:4-11	33:5բ-7 33:8ա 33:8բ 33:9 33:10-11	33:8-11    Հակոբը Եսավի հետ
33:12-14	33:12-14	33:12-14	33:12 33:13-14	33:12-17
33:15-17	33:15-17	33:15-17	33:15ա	
Հակոբ բնակվում է Սյուքեմում	Հակոբը գալիս է Բանան		33:15բ-17	Հակոբը հասնում է Սյուքեմ
33:18-20	33:18-20	33:18-20	33:18-20	33:18-20

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ

#### ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԵՆՈՒՍԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս գլուխը հիմնականում բովանդակում է երկխոսություն (տես TEV թարգմանությունը): «Ասե՛ր» (BDB 55, KB 65) տերմինը կիրառվում է տասն անգամ:

Այս երկխոսության ֆորմատն ունի մի քանի հրամաններ, խնդրանքներ:

1. «քոնը թող քեզ լինի», հ. 9, BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
2. «խնդրե՛մ, ընդունի՛ր իմ ընծան», հ. 11, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. «վեր կենանք, գնանք», հ. 12, BDB 652, KB 704, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
- 4-5. «գնանք» (երկու անգամ), հ. 12, BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
6. «թող իմ տերը առաջ անցնի», հ. 14, BDB 716, KB 778, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
7. «ես կամաց-կամաց կգնամ», հ. 14, BDB 624, KB 675, *Hithpael* ԸՂՁԱԿԱՆ
8. «թող ինձ հետ եկած ժողովրդից քեզ մոտ թողնեն», հ. 15. BDB 426, KB 427, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ
9. «թող իմ տիրոջ առաջ շնորհ գտնեն», հ. 15, BDB 592, KB 619, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

Բ. Հակոբը դիմակայեց իր վախերին՝

1. Լաբանը
2. հրեշտակ գոտեմարտողը
3. Եսավը

Գ. Հակոբը վերադառնում է Խոստացված Երկիրը (Քանան): Բեթելի աստվածային խոստումները իրականացան: Աբրահամին և նրա սերնդին տրված ուխտի խոստումները շարունակվում են (այսինքն՝ հավիտենական փրկության ծրագիրը ընթացքի մեջ է):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 33:1-3

<sup>1</sup>Եվ Հակոբն իր աչքերը բարձրացրեց ու նայեց, և ահա Եսավը գալիս էր, ու նրա հետ՝ չորս հարյուր մարդ. և զավակներին բաժանեց Լիայի, Ռաքելի և երկու աղախինների միջև: <sup>2</sup>Եվ աղախիններին իրենց զավակներով առաջ ուղարկեց, իսկ Լիային՝ իր զավակների հետ՝ հեռուից և Ռաքելին ու Հովսեփին բոլորից վերջում: <sup>3</sup>Եվ ինքն անցավ նրանց առջևը և մինչև գետին յոթ անգամ խոնարհվեց՝ մինչև իր եղբոր մոտենալը:

**33:2** Ուշադրություն դարձրեք ընտանիքում խտրականությունը: Ավելի ցածր կանայք և երեխաները գնում են առջևից, իսկ իր սիրելիները՝ վերջից (այսինքն՝ Ռաքելն ու Հովսեփը): Ամեն դեպքում Հակոբի սրտում փոփոխություններ են եղել. նա գնում է բոլորի առջևից (տես՝ հ. 3): Եթե նրանք սպանվելու են, թող առաջինը ինքը սպանվի: Թեև նա ռազմավարություն է մշակում, միևնույն է վստահում է ՅԱՀՎԵԻ ներկայությանը և խոստացած պաշտպանությանը:

**33:3** «խոնարհվեց» Այս ԲԱՅԸ (BDB 1005, KB 295, *Hishtaphel* ԱՆԿԱՏԱՐ) չորս անգամ կրկնվում է:

1. Հակոբը խոնարհվում է Եսավի առջև, հ. 3
2. աղախիններն ու նրանց երեխաները խոնարհվում են Եսավի առջև, հ. 6
3. Լիան և իր երեխաները խոնարհվում են Եսավի առջև, հ. 7
4. Ռաքելն ու նրա երեխան խոնարհվում են նրա առջև, հ. 7

❖ «յոթ անգամ» Սա հնազանդության ժեստ էր (այսինքն՝ Էլ Ամառնայի Նամակները, Բ.Ա. 14-րդ դար):

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 33:4-11

<sup>4</sup>Եվ Եսավը վազեց նրան դիմավորելու, գրկեց նրան, նրա պարանոցով ընկավ և համբուրեց նրան, և լաց եղան: <sup>5</sup>Եսավն իր աչքերը բարձրացրեց և տեսավ կանանց ու զավակներին ու ասաց. «Սրանք քո ի՞նչն են»: Ասաց. «Այն երեխաներն են, որ Աստված պարգևել է քո

**ծառային»:** <sup>6</sup>Եվ աղախիններն ու նրանց երեխաները մոտեցան և խոնարհվեցին: <sup>7</sup>Լիան էլ իր գավակների հետ մոտեցավ, և խոնարհվեցին: <sup>8</sup>Եվ Եսավն ասաց. «Ի՞նչ է քո այս ամբողջ խումբը, որին ես հանդիպեցի»: Եվ Հակոբն ասաց. «Իմ տիրոջ առաջ շնորհ գտնելու համար է»:  
<sup>9</sup>Եսավն ասաց. «Ես շատ ունեմ, եղբայր իմ, քոնը թող քեզ լինի»:  
<sup>10</sup>Եվ Հակոբն ասաց. «Ո՛հ, խնդրեմ, եթե արժանացել եմ քո շնորհին, ընդունի՛ր իմ ձեռքից նվերս, հենց միայն նրա համար, որ տեսա քո երեսը՝ Աստծո երեսը տեսնելու պես և ինձ բարեհաճ վերաբերվեցիր: <sup>11</sup>Խնդրեմ, ընդունի՛ր քեզ բերած իմ ընծան, որովհետև Աստված ողորմեց ինձ, և որովհետև ես ամեն ինչ ունեմ»:  
 Եվ ստիպեց նրան, նա էլ ընդունեց:

**33:4 «Եսավը վազեց ... գրկեց ... պարանոցով ընկավ... համբուրեց... լաց եղավ»** Սրանք բոլորն էլ ջերմ ողջույնի նշաններ են:

1. «վազեց», BDB 930, KB 1207, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. «գրկեց», BDB 287, KB 287, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
3. «պարանոցով ընկավ», BDB 656, KB 709, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 45:14; 46:29
4. «համբուրեց», BDB 676, KB 730, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (սա բացակայում է LXX-ում և MT-ում նշվում է որպես հավելում), տես՝ 45:15; 48:10; 50:1
5. «նրանք լաց եղան», BDB 13, KB 129, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (LXX, TEV և REB ունեն «նրանք երկուսն էլ լաց եղան», սակայն հավանաբար «նա լաց եղավ», տես՝ NJB, AB, էջ՝ 258):

**33:5** Եսավը հարցնում է Հակոբին ուղեկցող կանանց խմբերի և նրանց երեխաների մասին: Պետք է որ տարօրինակ լիներ մի տղամարդու համար երկու կին, երկու աղախին և նրանցից յուրաքանչյուրից այդքան երեխաներ ունենալը, այլապես Եսավը չէր հարցնի: Եսավի արձագանքն այս փաստին արձանագրված չէ:

**33:8** Եսավը հարցնում է բոլոր նվերների մասին (այսինքն՝ կենդանիների), որոնք Հակոբը ուղարկել էր իր ընտանիքի առջևից (տես՝ 32:13-21):

**33:9 «իմ եղբայր»** NASB Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 51) գեղեցիկ դիտարկում է կատարում, նշելով, որ Եսավը Հակոբին «իմ եղբայր» է կոչում, իսկ Հակոբը Եսավին՝ «իմ տեր»:  
 Հակոբը կամ (1) նրբանակատ էր կամ (2) վախվորած:

Նվերներ տալը ընդունված երևույթ էր հատուկ առիթների ժամանակ: Մերժել նվերն այս մշակույթի մեջ ակնարկում էր լարված փոխհարաբերություն (այսինքն՝ Ջեյմս Մ. Ֆրիմեն, *Աստվածաշնչի Բարքերն ու Սովորույթները*, /James M. Freeman, *Manners and Customs of the Bible*/ էջ՝ 41): Եսավի մերժումը կսնուցեր Հակոբի ունեցած վախերը: Եսավը կարիք չուներ այս նվերների, սակայն դրանք ընդունելը նշան էր այն բանի, որ ընդունում էր իր եղբորը:

**33:10** Հակոբը աղաչում է Եսավին, որ ընդունի իր նվերները, քանի որ Եսավն իրեն ընդունելով (տես՝ հ. 14) Աստծո գթասրտությունը («որպես մեկը, որ տեսնում է Աստծո երեսը») կընդունի իր հանդեպ: Սա կարող է լինել 25:23-ի քողարկված ակնարկը:

**33:11** Հակոբը հասկանում է, որ իր ֆիզիկական հարստության աղբյուրը ուխտի Աստվածն է (այսինքն՝ «ողորմած», BDB 335, KB 334, *Qal* ՎԱՂԱՎԿԱՏԱՐ, տես՝ հ. 5; 43:29):

❖ «**ընծա**» Սա (BDB 139) տառացի նշանակում է «օրհնություն»: Սա հենց այն տերմինն է, որը կիրառվեց նկարագրելու այն, ինչ Հակոբը գլուխ 27-ում խաբելով վերցրեց Եսավից: Պատահական չէր, որ Հակոբը ցանկանում էր օրհնել իր եղբորը ընծաներ (օրհնություն) տալով: Ինչ-որ իմաստով նա փորձում էր ուղղել նախկինում կատարած իր մանիպուլյացիաները:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 33:12-14**  
<sup>12</sup>Եվ ասաց. «Վեր կենանք, գնանք, ես կգնամ քո առջևից»:  
<sup>13</sup>Հակոբն ասաց նրան. «Իմ տերը գիտի, որ իմ երեխաները փափուկ են, և իմ հետ եկած հոտերն ու արջառները ձագերով են, և եթե մի օր սաստիկ քշեն նրանց, բոլոր հոտերը կմեռնեն»:  
<sup>14</sup>Ուրեմն թող իմ տերը իմ ծառայից առաջ անցնի, և ես մեռակ՝ կամաց-կամաց կգնամ իմ առջևից գնացող անասունների ընթացքով՝ մինչև որ գամ Սեիր՝ իմ տիրոջ մոտ»:

**33:13** Հետաքրքիր է, թե արդյոք սա մեկ այլ միջոց էր Հակոբի կողմից Եսավին իր հանդեպ գերակա զգալու համար, ինչպես նաև արդարացումը, որ չի կարող իր հետ միասին անմիջապես հետ դեպի Սեիր

ճամփորդել: Նրա երեխաները «թույլ» չէին և հոտերն արդեն իսկ երկար ճանապարհ էին անցել: Արդյոք Հակոբը դեռևս հնարամիտ խաբեբա էր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 33:15-17**

**<sup>15</sup>Եվ Եսավն ասաց. «Թող ինձ հետ եկած ժողովրդից քեզ մոտ թողնեն»: Եվ նա ասաց. «Ի՞նչ կարիք կա. թող իմ տիրոջ առաջ շնորհ գտնեն»: <sup>16</sup>Այսպես Եսավն այն օրը ետ դարձավ իր ճանապարհից՝ դեպի Սեիր: <sup>17</sup>Եվ Հակոբը Սոկրովթ քոչեց ու իր համար տուն շինեց և իր հոտերի համար փարախներ շինեց. դրա համար այդ վայրը Սոկրովթ կոչվեց:**

**33:15 «Ժողովուրդ»** Սա *goi* (BDB 766 I) տերմինն է, որը սովորաբար ունենում է բացասական իմաստ՝ հեթանոսներին վերագրելով, սակայն այստեղ այս բառը կիրառված է Եսավի մարդկանց համար և Ելից 33:13-ում վերաբերում է Աստծո ժողովրդին: Ենթատեքստը և միայն ենթատեքստն է որոշում բառի իմաստը և ոչ թե բարբառները: Բառերը ունեն նշանակություններ միայն նախադասությունների մեջ. նախադասություններն ունեն նշանակություն միայն պարբերությունների՝ տողերի կամ տների մեջ. իսկ սրանք էլ իրենց նշանակությունն ունեն միայն ավելի ընդարձակ գրականական բաժիններում: Չգույշ եղեք «կարծարտիպային» կամ «տեխնիկական» սահմանումներից:

**33:17 «Սոկրովթ»** Այս տերմինը (BDB 697) նշանակում է «տաղավարներ»: Հակոբը ապաստարան կառուցեց իր համար, սակայն սա կոչվում է «տուն» (BDB 108), ուշադրություն դարձրեք հ. 19: Նա նաև «տաղավարներ՝ փարախներ» (BDB 697, այսինքն՝ ճյուղերից կառուցված թաքստոցներ) կառուցեց իր կենդանիների համար:

Հայտնի չէ, թե արդյոք նախքան Հակոբի այստեղ ճամբարելը ինչ-որ գյուղ կար այս տարածքում, թե ոչ: Հետագայում այն դառնալու էր քաղաքի անուն (տես՝ Դատ. 8:5):

Սա միևնույն Սոկրովթը չէ, որը գտնվում էր եգիպտական դելտայի վրա (տես՝ Ելից 12:7; Թվոց 33:5): Սա Հորդանանի արևելյան կողմում գտնվող մի քաղաք է (ՄակՄիլանի Աստվածաշնչյան Ատլաս, էջ՝ 22):

Եվս մի նշում. Հակոբը կարծես թե չհետևեց Եսավին դեպի Սեիր լեռը, այլ ճամփորդեց դեպի Սոկրովթ, որը Սեիրի՝ Եդոմի ճանապարհին չէր: Նա նույնիսկ տուն կառուցեց: Հայտնի չէ, թե արդյոք տեքստը մեզ ասում է, որ (1) սա մտադրված էր, թե (2) պարզապես բաց է թողնվել Հակոբի Սեիր այցելությունը: Ես նախընտրում եմ երկրորդ տարբերակը: Ուզում եմ հավատալ, որ Հակոբը իսկապես փոխվել էր, որ նա այլևս խաբեբա, շահագործող, ստախոս չէր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 33:18-20**

**<sup>18</sup>Հակոբը, Միջագետքից գալիս, սյուքեմացիների Սաղեմ քաղաքը եկավ, որ Քանանի երկրում է, և քաղաքի առջև բնակվեց: <sup>19</sup>Եվ այն արտի կալվածքը, որտեղ կանգնեցրել էր իր վրանը, Սյուքեմի հայր Եմովրից ծախու էր առել հարյուր կեսիթայով: <sup>20</sup>Եվ այնտեղ մի գոհասեղան շինեց և անվանեց Էլ-Էլոհե-Իսրայել:**

**33:18 «Սյուքեմ»** Այս անունը կարող է վերաբերել՝

1. մարդու անվան, հհ. 18,19; 34:2; Թվոց 26:31; Հեսու 17:2; 24:32; Դատ. 9:28
2. տեղագրական մի շրջանի՝ Գերաղ և Քորագին լեռների միջև: Միևնույն արմատը (BDB 1014 I) նշանակում է «ուս» կամ «թիակ»:
3. քաղաք, Հեսու 20:7; 21:21; 24:1; Դատ. 8:31

Այն Առաջին անգամ նշվում է Ծննդ. 12:6-ում՝ կապված Աբրահամի հետ, իսկ այժմ էլ՝ Հակոբի (տես՝ 37:14):

Ոչ մի ակնհայտ կապ չկա հ. 17-ի և հ. 18-ի միջև: Արձանագրված չէ, թե ինչքան ժամանակ Հակոբը մնաց Սոկրովթում: Դրանք կարծես թե երկու տարբեր դեպքեր և ժամանակահատվածներ են՝ իրար հետ անհատակ կապով արձանագրված: Տուն կառուցելուց մինչև հողատարածք գնելու պահը հնարավոր է ակնարկում է ժամանակավորից դեպի մշտական բնակության անցնելը: Միակ խնդիրն այն է, որ հ. 18 կարծես թե ակնարկում է, որ հենց Հակոբը հասավ Փաղան-Արամ (Խառանի տարածքին մոտ) հող գնեց:

Նրան ասվեց, որ վերադառնա Բեթել, սակայն նա կարճ ժամանակով կանգ առավ և մնաց այնտեղ: Թե ինչո՞ւ, տեքստում արձանագրված չէ:

**33:19 «որտեղ կանգնեցրել էր իր վրանը ... ծախու էր առել»** Արտ՝ հողատարածք առնելը ակնարկում է բնակություն հաստատելուն կամ օրինական բնակություն է ցույց տալիս:



❖ **«Եմովր»** Այս անունը նշանակում է «ավանակ» (BDB 331 II): Հին աշխարհում ավանակները համարվում էին սուրբ կենդանիներ: Մենք սա իմանում ենք ոչ միայն Մարի Տախտակներից, այլ նաև այն փաստից, որ (1) հարուստները ավանակ էին հեծնում (տես՝ Դատ . 5:10) և (2) Իսրայելի թագավորները հատուկ ավանակ էին հեծնում, որպես իրենց արքայական հեծկան (այսինքն՝ 3 Թագ . 1:33):

❖ **«հարյուր կեսիթայով»** Սա հազվադեպ հանդիպող եբրայերեն տերմին է՝ *qesitah* (BDB 903): Այն հանդիսանում է մետաղական անհայտ կշռի միավոր (տես՝ Հեսու 24:32; Հոր 42:11), հավանաբար (1) մի գառան գին (LXX) կամ (2) գառան տեսքով մետաղի կշիռ (մնաս):

**33:20 «այնտեղ մի զոհասեղան շինեց»** Սա երկրպագության համար նախատեսված վայր, ժամանակ և կերպ էր: Դրա միջոցով աղոթք և զոհաբերություն մատուցվեց ՅԱՀՎԵԻՆ (տես՝ 8:20; 12:7-8; 13:18; 22:9; 26:25): Սա 28:15-ում ՅԱՀՎԵԻ խոստման իրականացումն է:

- ❖ **«Էլ-Էլոհե-Իսրայել»** Այս ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ բաղկացած է
1. *Էլ*, BDB 42, տես՝ Ելից 34:6, տես՝ Հատուկ Թեմա 12:1-ում
  2. *Էլոհե*, BDB 43, տես՝ 2 Օր . 32:15,17; Սաղմ . 18:32
  3. *Իսրայել*, տես՝ Հատուկ Թեմա, 32:28-ում

Մեպտուազինտան սա թարգմանում է «Իսրայելի Աստվածը»: Հրեական Սերտողության Աստվածաշունչը կիրառում է JPSOA թարգմանության տեքստային ծանոթագրությունը, որն ասում է՝ «*Էլ*՝ Իսրայելի Աստվածը» (էջ՝ 69):

**ԾՆՆԴՈՑ 34**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբի որդիների դավանանությունը	Դինայի հետ պատահածը	Սյուքեմի բռնությունը Դինայի հանդեպ	Դինայի բռնաբարությունը	Դինայի բռնաբարությունը
34:1-7	34:1-7	34:1-4 34:5-7	34:1-4 34:5-10	34:1-5 Սյուքեմացիների հետ ամուսնական դաշինքը 34:6-12
34:8-12	34:8-12	34:8-12	34:11-12	34:13-19
34:13-17	34:13-17	34:13-17	34:13-17	
34:18-24	34:18-24	34:18-24	34:18-24	34:20-24
34:25-31	34:25-31	34:25-31	34:35-39 34:30 34:31	34:25-29 34:30-31

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտորոշյալ ուղեգր մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հակոբը պետք է առերեսվեր իր վախերի ու փորձությունների հետ՝

1. Լաբանը
2. Եսավը
3. Քանանացիների հետ միջամուսնությունը
4. Քանանացիների ագրեսիան

Բ. Հակոբը դեռևս վախվորած անձնավորություն է՝

1. ստում է Եսավին և չի հետևում մինչև Մեիր
2. չի ճամփորդում դեպի Բեթել (ինչպես Աստված էր կարգադրել)
3. փորձվում է միջամուսնական կապեր հաստատելու այդ երկրի մարդկանց հետ հանուն իր շահերի
4. վախենում է քանանացիների վրեժխնդրությունից

Գ. Աստծո անունը չի հայտնվում այս գլխում (հավանաբար դիտավորյալ):

Դ. Անշուշտ հնարավոր է, որ այս գլուխը ներառված է՝

1. որպես գլուխ 17-ի եզրահանգում
2. որպես մի միջոց, որով ցույց է տալիս, թե ինչու է Հուդան Մեսիայի ազգաբանության ճյուղն ընտրվել և ոչ թե երեք ավագ որդիներից մեկը: Գլուխ 34-ը Շմավոնին և Ղևիին չեղարկելու է որպես հնարավոր տարբերակներ (տես՝ Ծննդ. 49:5-7):  
Հիշեք, որ «պատմական իրադարձությունը» պետք է մեկնաբանել ենթատեքստային ավելի լայն հատվածներում: (Տե՛ս Հին Կտակարանի Պատմություն հոդվածը, գրքի առաջին էջերում):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 34:1-7

<sup>1</sup>Եվ Լիայի՝ Հակոբի համար ունեցած աղջիկը՝ Դինան, դուրս եկավ այն երկրի աղջիկներին տեսնելու: <sup>2</sup>Եվ երբ երկրի իշխան խևացի Եմովրի որդի Սյուբեմը տեսավ նրան, առավ ու պառկեց նրա հետ և պղծեց նրան: <sup>3</sup>Եվ նրա հոգին Հակոբի Դինա աղջկան հարեց ու սիրեց այդ աղջկան ու աղջկա հետ քաղցրությամբ խոսեց: <sup>4</sup>Եվ Սյուբեմը խոսեց իր հայր Եմովրի հետ՝ ասելով. «Այս աղջկան ինձ համար կնության առ»: <sup>5</sup>Եվ Հակոբը լսեց, որ նա պղծել է իր աղջկան՝ Դինային. արդ, իր որդիներն իր հոտերի հետ դաշտում էին. և Հակոբը լռություն պահեց մինչև նրանց գալը: <sup>6</sup>Եվ Սյուբեմի հայր Եմովրը գնաց Հակոբի մոտ՝ նրա հետ խոսելու: <sup>7</sup>Եվ Հակոբի որդիները, հենց որ լսեցին, եկան դաշտից. և տղամարդիկ խիստ վշտացան ու գայրացան, քանի որ նա նախատինք էր բերել Իսրայելի վրա՝ Հակոբի աղջկա հետ պառկելով, այդպիսի բան չպետք է լիներ:

**34:1 «Լիայի աղջիկը՝ Դինան»** Ծննդոց 33-ի և 34-ի միջև երկար ժամանակ է ընկած: Երեխաներն այժմ մեծացել են: Դինան միակ աղջիկն է, որ նշված է Հակոբի տոհմում (տես՝ 30:21): Իհարկե կային ուրիշներն էլ (տես՝ 37:35), սակայն նշված է Դինան իր այս գլխում ունեցած կարևոր դերի պատճառով: Նրա անունը «դատաստան» կամ «վրեժխնդրություն» (BDB 192) բառի իգական սեռն է, որը Հակոբի որդիներից մեկի անունն է (տես՝ 30:6) և հետագայում Հակոբի ցեղերից մեկի՝ Դանի:



NASB, NRSV, TEV, NJB

«այցելել»

NKJV, LXX, Peshitta

«տեսնել»

«Տեսնել» ԲԱՅԸ (BDB 906, KB 1157, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) կարող է հասկացվել մի քանի կերպ (ըստ երևույթին նա իր տնից՝ ճամբարից հեռու էր գնացել միայնակ)

1. ուսումնասիրելու՝ սովորելու նրանց և նրանց կյանքի վերաբերյալ
2. այցելելու իր ընկերներին, քանի որ Հակոբն այնտեղ մի քանի տարի մնացել էր
3. հ. 2-ի վրա բառախաղ է՝ «Սյուբեմը տեսավ նրան» (միևնույն ԲԱՅԸ)

**34:2 «Սյուքեմ»** Այս տեղանքի ցեղի իշխանն է: Ենթադրյալ այդ պահին իշխող ցեղագլուխը կամ առաջնորդն է: Իշխանի անունը այդ տեղանքի գլխավոր քաղաքի անունով էր: Անվան նշանակության համար տես 33:18:

Քերականորեն հնարավոր է «իշխանը» (BDB 672 I), որը նշանակում է «մեծարված», վերագրել Ենթադրյալին (տես՝ *Մեծանունի Չեմնասրկ* Ռեյբորն և Ֆրայ, USB, էջ՝ 786 /A Handbook on Genesis by Reyburn and Fry, USB, p.786/):

❖ **«Խևազի»** Սեպտուագիտան սա թարգմանում է որպես քոռեցի (տես՝ Ծննդ. 34:2; Հեսու 9:7): Անշուշտ նրանք անթվիատ էին, ոչ սեմական ժողովուրդների մի խումբ, որոնք հավանաբար ինքնուրույնաբար Բոռեցիներ են: Հնում Իսրայելին շրջապատող միակ երկու անթվիատ ժողովուրդներն էին Փղշտացիները, որոնք Էզեյան տարածաշրջանի վարձկաններ էին, և այս Բոռեցիները: Բոլոր քանանացի ցեղերը գործադրում էին թվիատությունը: Տես Հատուկ Թեմա 12:6-ում:

❖ **«առավ ու պառկեց նրա հետ»** Սա հնդիպոս է /երկու ԲԱՅԵՐ մեկ գործողություն արտահայտող/: Սա ապշեցնում է ժամանակակիցներին, սակայն Հնագույն Մերձավոր Արևելքի իշխանն ուներ իրավունքներ: Կին գտնելն այս ժամանակաշրջանում և տարածաշրջանում շատ էր տարբերվում մերօրյա ժամադրության մեթոդներից (այսինքն՝ Ելից 22:16-17; 2 Օր. 21:10-14; 22:28-29): Նահապետական մշակույթը ամբողջովին տղամարդկանց շահերից էր բխում և շատ քիչ տեղ էր տրվում կանանց ազատությանը կամ զգացմունքներին:

- Գոյություն ունեն մի քանի ԲԱՅԵՐ, որոնք մատնանշում են սեռական գործողություններ՝
1. հետը պառկել, BDB 1011, KB 1486, տես՝ Ծննդ. 19:32; 26:10; 30:15; 39:7; Դևտ. 18:22
  2. մերձենալ, BDB 897, KB 1132, տես՝ Ծննդ. 20:4; Դևտ. 18:6,14,19; 20:16
  3. մոտ գալ, BDB 97, KB 112, տես՝ Ծննդ. 19:31; 29:21,23,30; 30:3,4,16; 38:8,9,16; 39:14
  4. գիտենալ, BDB 393, KB 390, տես՝ Ծննդ. 4:1,17,25; 19:5,8; 24:16; 38:26; Թվոց 31:17,18,35; Դևտ. 19:22,25; 21:12

❖  
**NASB, NRSV, JPSOA**  
**NKJV, REB**  
**TEV**  
**NJB**  
**LXX**  
**Peshitta**

**«ստիպելով»**  
**«բռնությամբ»**  
**«բռնաբարեց»**  
**«ստիպեց նրան քնել իր հետ»**  
**«նվաստացրեց նրան»**  
**«պղծեց նրան»**

ԲԱՅԸ (BDB 776, KB 853, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) *Piel* արմատով նշանակում է «նվաստացնել»՝ սեռական բռնության հարձակման իմաստով (այսինքն՝ բռնաբարել, տես՝ 2 Օր. 21:14; 22:24,29; Դևտ. 19:24; 20:5; 2 Թագ. 13:12,14,22,32; Եզեյ. 22:10,11):

**34:3 «նրա հոգին Հակոբի Դինա աղջկան հարեց»** Չնայած որ այս երիտասարդը իր ժողովրդի մեջ մեծ համարում ունեցող մարդ էր (տես՝ հ. 19), նա բռնի ուժ ցուցաբերեց Դինայի նկատմամբ: Սա ըստ երևույթին պանդուխտի և իր ընտանիքի հանդեպ բռնության կիրառություն էր:

- Սյուքեմի զգացմունքները Դինայի հանդեպ երեք կերպ են կրկնվում՝
1. «նրա հոգին հարեց Դինային», BDB 179, KB 209, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 3 Թագ. 11:2
  2. «նա սիրեց աղջկան», BDB 12, KB 17, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, «աղջիկ» (BDB 655) բառն արտահայտում է երիտասարդ, սակայն ամուսնության համար պատրաստ օրիորդ
  3. «աղջկա հետ քաղցրությամբ խոսեց» (բառացի՝ «խոսեց աղջկա սրտին»), BDB 180, KB 210, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 50:21, Դևտ. 19:3; Հռութ 2:13
  4. «իմ որդու Սյուքեմի հոգին սիրահարվել է ձեր աղջկան», հ. 8, BDB 365 I, KB 362, *Qal* ՎԱՂԱՎԱՏԱՐ, տես՝ 2 Օր. 21:11
  5. «հավանել էր Հակոբի աղջկան», հ. 19, BDB 342, KB 339, *Qal* ՎԱՂԱՎԱՏԱՐ

- ❖ **«աղջիկը»** Դինան այս գլխում նկարագրվում է մի քանի տարբեր տերմիններով՝
1. դուստր, հ. 1, BDB 123 I (մի քանի անգամ)
  2. աղջիկ, հ. 3, BDB 655, տես՝ հ. 12
  3. երիտասարդ աղջիկ, հ. 4, BDB 409, տես՝ Հովել 3:3; Չաբ. 8:5 (կիրառված միայն երիտասարդ աղջիկների համար, այս երեք անգամը՝ «ծնել», «ծննդաբերել» արմատից)
  4. քույր, հ. 13, BDB 27, տես՝ հհ.14,27,31

**34:4 «Եվ Սյուրբեմը խոսեց իր հայր Եմովրի հետ՝ ասելով. «Այս աղջկան ինձ համար կնությանն առ»**  
 Սա համապատասխանում է ծնողների մշակութային ձևաչափին՝ իրենց երեխաների ամուսնության համար պայմանավորվելով: Սակայն նկատե՛ք, որ որդին է նախաձեռնում խնդրանքը (BDB 542, KB 534, *Qal* ՀԲԱՄԱՅԱԿԱՆ): Խնդիրը Սյուրբեմի ներքին իմպուլսով սեքսուալ ագրեսիան էր (տես՝ հ. 7):

**34:5**

**NASB, NKJV, NRSV, LXX, JPSOA  
 TEV  
 NJB, REB**

**«պղծեց»  
 «խայտառակեց»  
 «անարգեց»**

Այս ԲԱՅԸ (BDB 379, KB 375, *Piel* ՎԱԴԱԿԱՍԱՐ) մատնացույց է անում Աստծո օրենքի համեմատ անմաքուր համարվող բանը (տես՝ Դևտ.18:24-30): Այստեղ այն արտահայտում է սեռական անմաքրություն (տես՝ Եզեկ.18:6,11,15; 22:11; 23:17; 33:26): Դինային բռնաբարեց մի անթափաստ քանանացի:

- ❖ **«Հակոբը լռություն պահեց»** Նրա շարժառիթը չի արձանագրվում: Դա կարող էր լինել՝
  1. գայթակղություն հանուն իր շահերի առիթից օգտնվելու (տես՝ հհ.6,30)
  2. սպասում, որ իր որդիներն ու ծառաները զինվեն
  3. որ եղբայրները այս իրավիճակում «ասելիք» կունենան

**34:7** Դինայի եղբայրները շատ բարկացած էին:

1. «տղամարդիկ խիստ վշտացան», BDB 780, KB 864, *Hithpael* ԱՆԿԱՍԱՐ, տես՝ Ծննդ.6:6
2. «նրանք շատ գայրացան», BDB 354, KB 351, *Qal* ԱՆԿԱՍԱՐ, տես՝ Ծննդ.4:5,6; 31:36; 39:19
3. «նա նախատինք էր բերել», BDB 615, այսինքն՝ անզգամ արհամարհանք Հակոբի և նրա կրոնական ավանդույթների բարոյական չափանիշների դեմ, տես՝ 2 Օր.22:21; Դատ.19:23; 20:6; 2 Թագ.13:12 (ԳՈՅԱԿԱՆՆԸ նշանակում է «հիմար»):

❖ **«Իսրայելի մեջ /հայերենում՝ Իսրայելի վրա/»** Սա օգտագործված է ավելի ուշ կիրառվող իր իմաստով: Այս ենթամասում այն վերաբերում է Իսրայել ազգի օրենքներին: Սա հետագա խմբագրության, հավաքագրման, կամ դպրության տեքստային նշան է (տես՝ 2 Օր.22:21; Հեսու 7:15; Դատ.19:23; 20:10):

Որոշ մեկնաբաններ փորձում են այս ՆԱԽԴԻՐԸ (BDB 88-91) այնպես անել, որ նշանակի «վրա», սակայն նշանակում է «մեջ»:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 34:8-12**  
**<sup>8</sup>Եվ Եմովրը խոսեց նրանց հետ և ասաց. «Իմ Սյուրբեմ որդու հոգին սիրահարվել է ձեր աղջկան. խնդրո՛ւմ եմ, նրան կնությանն տվեք նրան: <sup>9</sup>Եվ մեզ հետ խնամիացե՛ք. ձեր աղջիկներին մեզ տվեք և մեր աղջիկներին առե՛ք ձեզ համար: <sup>10</sup>Եվ մեզ հետ բնակվեցե՛ք, և այս երկիրը ձեր առջև կլինի. նրանում ապրեցե՛ք ու առևտու՛ր արեք, և նրանում կալվածքնե՛ր ձեռք բերեք:»**  
**<sup>11</sup>Եվ Սյուրբեմն ասաց աղջկա հորը և նրա եղբայրներին. «Թող ձեր առաջ շնորհ գտնեմ, և ինչ որ ինձ ասեք, կտամ: <sup>12</sup>Ինձանից ինչքան մեծ օժիտ ու ընծաներ պահանջեք, և ես կտամ, ինչպես որ ասեք, միայն թե աղջկան տվեք ինձ կնությանն:»**

**34:8 «նրանց հետ»** Սա վերաբերում է Դինայի բոլոր եղբայրներին և կես-եղբայրներին: Սյուրբեմի հայրը փորձում է մեղմացնել գայրույթը և բռնության զգացումը:  
 Համար 11 ցույց է տալիս, որ դա նաև ուղղված էր Հակոբին:

**34:9 «խնամիացեք մեզ հետ»** Սա Աբրահամի (տես՝ Ծննդ.24:3) կամ Իսահակի (տես՝ Ծննդ.28:1,8) ընտանեկան սովորույթներից չէր: Այժմ փորձվում էր Հակոբը:

**34:10 «այս երկիրը ձեր առջև կլինի»** Սա երբայերեն դարձվածք է երկրում ազատ մուտք ունենալու և ճամփորդելու իմաստով (տես՝ Ծննդ.13:9; 20:15):

Նկատե՛ք խոստումների քանակը, որ տրվում է Հակոբին և նրա ընտանիքին, եթե նրանք համաձայնություն տան այս ամուսնության համար:

1. «մեր հետ կապեք», հ. 10
2. «երկիրը ձեր առջև կլինի», հ. 10

3. «նրանում ապրեցե՛ք և առևտո՛ւր արեք», հ. 10 («առևտուր» հավանաբար նշանակում է «ազատ ճամփորդեր ներսում» այս ենթատեքստում, տես՝ 42:34; NJB, սակայն միևնույն արմատը կարող է նշանակել «առևտրականներ», տես՝ 23:16; 3 Թագ. 10:28-29):
4. «նրանում կալվածքներ ձեռք բերեք», հ. 10
5. «ինչ որ ինձ ասեք, կտամ», հ. 11
6. «Ինձանից ինչքան մեծ օժիտ ու ընծաներ պահանջեք, և ես կտամ», հ. 12

Ինչ որ իմաստով՝ մեր հետ մեկ դարձեք: Հակոբը պետք է Բեթել ճամփորդեր: Նա շատ երկար մնաց Սյուքեմի (քաղաքի) մոտակայքում: Այժմ բռնությունն ու ցավը կլինի իր գիտակցաբար անհնազանդության գինը:

**34:12 «ամուսնության գին ու ընծաներ»** Սա վերաբերում է օժիտին կամ երբայերենում *mohar* (BDB 555): Սա այդքան էլ հասին գնելու իմաստը չունեն, այլ օգնականի կորուստ ունենալու հատուցում (տես՝ Ելից 22:16-17; 1 Թագ. 18:25): Այս օժիտը սովորաբար պահվում էր կնոջ համար, եթե ամուսինը վաղաժամ էր մահանում կամ հետագայում կարիքի դեպքում (տես՝ Ծննդ. 31:15, որտեղ Լաբանի դստերը բողոքում են, որ նա օգտագործել էր իրենց օժիտի գումարը իր համար):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 34:13-17**

<sup>13</sup>Եվ Հակոբի որդիները խաբեությամբ պատասխանեցին Սյուքեմին ու նրա հայր Եմովրին (քանի որ իրենց Դինա քրոջը պղծել էր) <sup>14</sup>և ասացին նրանց. «Մենք չենք կարող այս բանն անել՝ մեր քրոջը մի անթլիատ մարդու տալ. դա մեզ համար նախատինք կլինի: <sup>15</sup>Բայց միայն այն դեպքում կհամաձայնենք ձեզ հետ, եթե մեզ նման լինեք՝ ձեզանից ամեն մի արուի թլփատելով: <sup>16</sup>Այն ժամանակ մեր աղջիկներին ձեզ կտանք և ձեր աղջիկներին մենք կառնենք և ձեզ հետ կբնակվենք ու մի ժողովուրդ կլինենք: <sup>17</sup>Իսկ եթե մեզ չլսեք ու չթլփատվեք, այն ժամանակ մենք մեր աղջկան կվերցնենք ու կզնանք»:

**34:13**

- |                |                                |
|----------------|--------------------------------|
| NASB           | «խաբեությամբ»                  |
| NKJV           | «խոսեց խաբեությամբ»            |
| NRSV, Peshitta | «պատասխանեց . . . խաբեությամբ» |
| TEV            | «խաբուսիկ կերպով»              |
| NJB            | «խորամանկ պատասխան»            |
| LXX            | «խորամանկությամբ»              |
| JPSOA          | «նենգությամբ խոսելով»          |

«Խաբեություն» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 941) նշանակում է մատնություն՝ դավաճանություն: Այս բառը կիրառվում է Իսահակի կոցժոմից Հակոբի խորամանկելու համար՝ Ծննդ. 27:35-ում: Միևնույն արմատը կիրառվում է նկարագրելու Լաբանի խորամանկությունը Հակոբի և Լիայի հանդեպ՝ Ծննդ. 29:25-ում: Հակոբի այս բնավորության գիծը մնում է իր ընտանիքում:

**34:14-17 «անթլիատ մեկը»** Թլփատությունը ՅԱՀՎԵԻ հետ ուխտի մեջ լինելու նշան էր (տես՝ Ծննդ. 17:9-14): Այստեղ Դինայի եղբայրները կիրառում են ավելի շուտ ֆիզիկական, քան իր բուն հոգևոր իմաստով: Նրանք ծածուկ մտադրություններ ունեին: Սյուքեմի դաժան հարձակումը այժմ օգտագործվում էր որպես արդարացման միջոց ամբողջ նրա ցեղի վրա դաժան հարձակման համար: Այսպիսի վրեժխնդրությունը ճիշտ այն է, ինչ երբայերենում «աչք աչքի դիմաց» (տես՝ Ելից 21:24; Դևտ. 24:20) կոչվող օրենքը դադարեցնելու՝ կանգնեցնելու նպատակով էր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 34:18-24**

<sup>18</sup>Եվ նրանց խոսքը դուր եկավ Եմովրին և Եմովրի որդի Սյուքեմին: <sup>19</sup>Երիտասարդը չհապաղեց այս բանն անելու, որովհետև հավանել էր Հակոբի աղջկան, և նա իր հոր տան մեջ եղողներից ամենապատվավորն էր: <sup>20</sup>Եվ Եմովրը ու նրա որդի Սյուքեմը եկան իրենց քաղաքի դարպասի մոտ և իրենց քաղաքի մարդկանց հետ խոսեցին՝ ասելով. <sup>21</sup>«Այս մարդիկ մեզ հետ խաղաղությամբ են վարվում, ուստի թող բնակվեն այս երկրում և նրանում առևտուր անեն և ահա երկիրն ընդարձակ է նրանց առաջ. եկե՛ք նրանց աղջիկներից մեզ համար կին առնենք և մեր աղջիկներին նրանց տանք: <sup>22</sup>Միայն այսպիսով են այն մարդիկ համաձայնում մեզ հետ բնակվել՝ մի ժողովուրդ լինելու համար, եթե մեզանից ամեն մի արու թլփատվի, ինչպես որ իրենք են թլփատվում: <sup>23</sup>Նրանց հոտերն ու նրանց ունեցվածքը և բոլոր անասունները մի՞թե մերը չեն լինի. միայն թե մենք նրանց հետ համաձայնենք, որ մեզ հետ բնակվեն»:<sup>24</sup>Եվ Եմովրին

**ու նրա որդի Սյուքեմին լսեցին բոլորը, որ նրա քաղաքի դարպասներից դուրս էին գալիս, և ամեն արու, որ նրա քաղաքից դուրս էր գալիս, թլփատվեց:**

**34:19** Այս համարը թվարկում է այն երեք բաները, որ Սյուքեմն արեց, որպեսզի ստանա Հակոբի ընտանիքի համաձայնությունը՝ (1) նա չհապաղեց, (2) նա հավանել էր Հակոբի աղջկան, և (3) նա իր հեղինակությունն էր դրել նժարին:

**34:20 «եկան իրենց քաղաքի դարպասի մոտ»** Դարպասը հանդիսանում էր համայնքի կենցաղային, սոցիալական և իրավական կյանքի վայրը: Նա այս մարդկանց (այսինքն՝ տարեց մարդկանց, որոնք կարող էին կռվել) կոչ էր անելու հանուն իրենց շահի՝ օգտի (տես՝ հ. 23):

**34:21** Բոլոր չորս ԲԱՅԵՐՆ այս համարում *Qal ԱՆԿԱՏԱՐ* են՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (այսինքն՝ «եկեք...»):

**34:23** Սյուքեմացիները այս ժեստը (այսինքն՝ թլփատությունը) դիտարկեցին որպես իրենց ցեղի իշխանությունը և հարստությունը ավելացնելու միջոց: Ուխտի ժողովուրդը չէր անում, իսկ քանանացիների ցեղը՝ անում է:

**34:24** Օհո, սա մեծ գոհողություն էր: Թլփատությունը մեծահասակ տարիքում ցավոտ և վտանգավոր երևույթ է (այսինքն՝ վարակը): Այս ամեն ինչը կատարվեց միայն նրա համար, որ իշխանը ամուսնանար մի օտարական աղջկա հետ, որին ցանակացել էր (այսինքն՝ արքայական տոհմաժառը այլևս մաքուր չէր): Դժվար է մերօրյա արևմուտքի մարդկանց հասկանալ արևելյան ցեղերի հավատարմությունն ու հարգանքը իրենց ցեղի առաջնորդների հանդեպ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 34:25-31**

<sup>25</sup>Եվ եղավ երրորդ օրը, երբ նրանք ցավի մեջ էին, Հակոբի երկու որդիները՝ Շմավոնը և Ղևին՝ Դինայի եղբայրները, ամեն մեկն իր սուրն առավ և համարձակ մտավ քաղաք, և սպանեցին բոլոր արուներին.<sup>26</sup>ու Եմովրին ու նրա որդի Սյուքեմին սրախողխող արեցին. և Սյուքեմի տնից վերցրին Դինային ու դուրս եկան:<sup>27</sup>Եվ Հակոբի որդիները եկան այն սպանվածների վրա և կողոպտեցին քաղաքը, քանի որ իրենց քրոջը պղծել էին:<sup>28</sup>Նրանց հոտերը և նրանց նախիրները և նրանց էջերը և քաղաքում ու դաշտում ինչ որ կար, վերցրեցին:<sup>29</sup>Եվ նրանց ամբողջ ունեցվածքը և նրանց բոլոր տղաներին ու կանանց գերի վերցրեցին և կողոպտեցին տան մեջ եղածը:<sup>30</sup>Եվ Հակոբն ասաց Շմավոնին և Ղևին. «Ինձ այս երկրի բնակիչների քանանացիների ու փերեզացիների մեջ ատելի դարձնելով՝ ինձ փորձանքի մեջ գցեցիք, իսկ ես սակավաթիվ լինելով՝ նրանք կհավաքվեն իմ դեմ, ինձ կհարվածեն, կկորչեն ես և իմ տունը»:<sup>31</sup>Եվ նրանք ասացին. «Հապա բոզի պե՛ս պետք է վարվեր մեր քրոջ հետ»:

**34:25 «Եվ եղավ երրորդ օրը ... Շմավոնը և Ղևին՝ Դինայի եղբայրները»** Մեծահասակ մարդիկ պետք է որ թլփատությունից երեք օր հետո բավականին ուժեղ ցավերի մեջ լինեին: Լիայի երկրորդ և երրորդ որդիները գիտեին այս փաստը և առիթից օգտվելով սպանեցին ամբողջ արու բնակչությանը, իսկ կանանց ու երեխաներին և նրանց բոլոր ունեցվածքը վերցրեցին իրենց: Հետագայում, Ծննդ. 49:5-7-ում, սա լինելու էր այս երկու ցեղերի դեմ մարգարեության հիմք, որոնք ենթադրվում էր, որ պետք է լինեին Հակոբի ընտանիքի առաջնորդները: Սա նույնիսկ հաստատվեց որպես պատճառ, թե ինչու Ղևին չէր ժառանգելու մյուս ցեղերի հետ միասին, այլ սփռվելու է բոլոր ցեղերի մեջ:

**34:27**

**NASB**

**LXX, Peshitta**

**TEV, NJB, REB**

**«Հակոբի որդիները»**

**«բայց Հակոբի որդիները»**

**«Հակոբի մյուս որդիները»**

NASB թարգմանությունը հետևում է MT թարգմանությանը, սակայն հնագույն տարբերակները թարգմանում են այնպես, որ Հակոբի մյուս որդիները ներգրավված էին միայն ավար վերցնելու մեջ և ոչ թե սպանության: Պետք է որ չափազանց շատ կողոպուտ եղած լինեի միայն երկու որդիների համար, որպեսզի կարողանային դրանցով իրենց շրջապատել և օգտագործել:

**34:28-29** Հնադարի պատերազմները մեր ժամանակի մարդկանց համար ապշեցնող է իր բռության և ավարառության տեսակով: Կանայք և երեխաները համարվում էին որպես ստացվածք, որ կարելի էր սեփականացնել և ինտեգրել նոր հասարակության մեջ (այսպես էլ Դինային էին վերաբերվել):

**34:30-31** Հակոբը կարծես թե ավելի վախով էր արձագանքում այս իրավիճակներին, քան Աստծուն վստահելով: Աստված խոստացել էր պաշտպանել իրեն և իր հետ լինել, սակայն նա կարծես կասկած էր արտահայտում իր կարողության վրա՝ թվաքանակի հիման վրա, ոչ թե խոստման (տես՝ 28:15):

Ինչպես որ Ռեբեկան և Հակոբը ստիպեցին Իսահակին, որպեսզի կատարի մարգարեացվածը (տես՝ Ծննդ.25:23), այնպես էլ հիմա, Հակոբի որդիները ստիպում են Հակոբին ճիշտ վարվելու (այսինքն՝ չխնամիանալ քանանացիների հետ և ճամփորդել Բեթել): Այս հակվածությունը կրկին հայտնվում է Դատ. 8:33-35-ում:

Աստված գործում է զարմանահրաշ կերպերով, որպեսզի իրականացնի Իր խոստումները Աբրահամի ընտանիքում:

**34:30**

**NASB, NRSV, JPSOA**

**NKJV**

**NJB, REB**

**LXX**

**Peshitta**

«ատելի»

«անտանելի»

«զարշահոտ»

«չար»

«իմ հեղինակությունը զցեցիք»

Այս *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ (BDB 92, KB 107) նշանակում է զարշահոտության պատճառ դառնալ (տես՝ Ելից 16:24; Սաղմ. 38:5): Այն կիրառվում է այլաբանորեն՝ մարդկանց կողմից մերժված լինելու իմաստով Ելից 5:21; 1 Թագ. 27:12-ում և այստեղ:

❖ «քանանացիներ ու փերեզացիներ» Տե՛ս Հատուկ թեմա 12:6-ում:



**ԾՆՆԴՈՑ 35**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը տեղափոխվում է Բեթել	Հակոբը վերադառնում է Բեթել	Հակոբի ճամփորդությունը Սյուքեմից դեպի Մամբրե	Աստված օրհնում է Հակոբին Բեթելում	Հակոբը Բեթելում
35:1-4	35:1-4	35:1-4	35:1 35:2-4	35:1 35:2-5
35:5-8	35:5-7	35:5-8	35:5-8	35:6-8
Հակոբը անվանվում է Իսրայել	35:8			35:6-8
35:9-15 (10) (11-12)	35:9-15	35:9-15	35:9-15	35:9-10 35:11-13 35:14-15
	Ռաքելի մահը		Ռաքելի մահը	Բենիամինի ծնունդը և Ռաքելի մահը
35:16-21	35:16-20	35:16-21	35:16-18 35:19-21	35:16-20 Ռուբենի արյունապղծությունը
	35:21-22		Հակոբի որդիները	35:21-22ա
35:22ա		35:22ա	35:22ա	
Իսրայելի որդիները				Հակոբի տասներկու որդիները
35:22բ-26	Հակոբի տասներկու որդիները	35:22բ-26	35:22բ-26	35:22բ-26
	35:23-26			
	Իսահակի մահը		Իսահակի մահը	Իսահակի մահը
35:27	35:27-29	35:27-29	35:27-29	35:27-29
35:28-29				

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Աստված հրամայում է Հակոբին՝

1. վեր կաց, BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. գնա՛, BDB 748, KB 828, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. ապրի՛ր (բառացի՝ բնակվի՛ր), BDB 442, KB 444, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. գոհասեղան շինի՛ր, BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և հետագայում հ. 11-ում
5. պտղաբեր եղի՛ր, BDB 826, KB 963, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. բազմացի՛ր, BDB 915, KB 1176, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. այս երկու հրամաններն էլ արտացոլում են Աստծո պատվերը՝
  - ա. կենդանիներին, Ծննդ. 1:28
  - բ. Ադամին և Եվային ուղղված
  - գ. Նոյին, Ծննդ. 9:1,7
  - դ. Աբրահամին՝ տարբեր տերմիններով
  - ե. և այժմ՝ Հակոբին

Բ. Հակոբը պատվիրում է իր ընտանիքին պատրաստվել՝

1. թողնել օտար աստվածներին, BDB 693, KB 747, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. իրենց մաքրեն, BDB 372, KB 369, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. փոխեն իրենց հանդերձները, BDB 322, KB 321, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. եկեք վեր կենանք, BDB 877, KB 1086, *Qal* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ հ. 1
5. եկեք գնանք, BDB 748, KB 828, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով, տես՝ հ. 1

Գ. Երբ Հակոբը վերջապես հնազանդվեց և եկավ Բեթել, ՅԱՀՎԵՆ ինչպես և սպասվում էր, կրկին դիմեց նրան, հհ. 9-15

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:1-4

<sup>1</sup>Եվ Աստված ասաց Հակոբին. «Վեր կաց, գնա՛ Բեթել և այնտեղ բնակվիր և այնտեղ մի գոհասեղան շինիր Աստծուն, որ քեզ երևաց, երբ դու փախչում էիր քո եղբայր Եսավից»: <sup>2</sup>Այն ժամանակ Հակոբն ասաց իր ընտանիքին և իր հետ բոլոր եղողներին. «Հեռացրե՛ք օտար աստվածներին, ար *կան* ձեր մեջ, և մաքրվեցե՛ք ու փոխեցե՛ք ձեր հագուստները: <sup>3</sup>Եվ վեր կենանք, գնանք Բեթել. այնտեղ գոհասեղան եմ շինելու այն Աստծուն, որ իմ նեղության օրն ինձ լսեց և իմ գնացած ճանապարհին ինձ հետ էր»: <sup>4</sup>Եվ բոլոր օտար աստվածները, որ իրենց ձեռքին կար, տվեցին Հակոբին, նաև՝ իրենց ականջների օղերը. և Հակոբը դրանք թաղեց Սյուբեմի մոտ եղող կաղնու տակ:

35:1 «Եվ Աստված ասաց Հակոբին, «Վեր կաց, գնա Բեթել»» Հակոբի սկզբնական հանդիպումը ՅԱՀՎԵՆ հետ այստեղ էր տեղի ունեցել, տես՝ Ծննդ. 28:18-22; 35:14: ՅԱՀՎԵՆ Իրեն կոչում է «Բեթելի Աստվածը» և Ծննդ. 31:13-ում Հակոբին ասում է վերադառնա Քանան:

«Գնա» ԲԱՅԸ (BDB 748, KB 828, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կարող է հասկացվել երկու կերպ:

1. Բեթելը հարավում էր, սակայն իր տեղագրությամբ Սյուքեմից ավելի բարձր էր գտնվում:
2. ԲԱՅԸ հաճախ կիրառվում է տաճար գնալու համար (այսինքն՝ սրբավայր): Բեթելը հնարավոր է ներկայացնում էր Աստծո հետ մտերմությունը:

❖ **«գոհասեղան շինիր»** «Չոհասեղան» տերմինը (BDB 258) նշանակում է մորթվելու վայր: Նահապետները շատ գոհասեղաններ են շինել:

1. Նոյը՝ Արարատ լեռան վրա, Ծննդ. 8:20
2. Աբրահամը՝
  - ա. Սյուքեմում, Ծննդ. 12:7
  - բ. Բեթելում, Ծննդ. 12:8
  - գ. Զերբոնում, Ծննդ. 13:18
  - դ. Մորիա լեռան վրա, Ծննդ. 26:25
3. Իսահակը Բերսաբեեում, Ծննդ. 26:25
4. Հակոբը՝
  - ա. Սյուքեմում, Ծննդ. 33:20
  - բ. Բեթելում, Ծննդ. 35:7

Ակնհայտ է, որ գոհաբերությունները դեռևս կատարվել են Մովսիսական ուխտից առաջ:

**35:2 «օտար աստվածներին, որ կան ձեր մեջ»** «Աստվածներ» տերմինը (փոքրատառ «ա»-ով՝ ՀՈԳՆԱԿԻ) ճիշտ նույն տերմինն է ինչ *Ephraim* (մեծատառ «Աստված») հ. 1-ում: Ենթատեքստը պետք է որոշի այս տերմինի թարգմանությունը: Տե՛ս Հատուկ Թեմա 12:1-ում:

Այս համարը հետաքրքիր է նրանով, որ ցույց է տալիս այն հոգևոր պատրաստությունը, որն անհրաժեշտ է ուխտի խոստումների նորոգության համար: Օտար աստվածները կարող են վերաբերել (1) Ծննդ. 31:19,30-ի *teraphim*-ին, (2) իր ընտանիքի անդամների կողմից Խառանից բերված այլ աստվածների կամ էլ (3) Սյուքեմից վերցված աստվածներին, որոնք պատրաստված էին թանկարժեք մետաղներից (էկոնոմիկ արժեք), արվեստի գործեր (էսթետիկ արժեք): Սա նման է Հեսու 24:14,23 (տես՝ 1 Թագ. 7:3) ուխտի նորոգությանը:

Հետաքրքիր է, որ հոգևոր պատրաստությունը («մաքրվել» ԲԱՅԸ /BDB 372, KB 369/ *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է. սա այլընտրանք չէր. Ծննդոցում այս ԲԱՅԻ միակ կիրառությունն է, սակայն այն Ղևտացիների գրքում լայն տարածում է գտնում), և խորհրդապատկերված է լողանալով և հագուստների լվացումով (տես՝ Ելից 19:10; Թվոց 8:7,21; 19:19): Հետևաբար այս արտաքին, ֆիզիկական խորհուրդը նպատակ ուներ արտացոլելու Հոկոբի ամբողջ ընդլայնված ընտանիքի ներքին հոգևոր պատրաստությունը: Սյուքեմում կատարած կոտորածի հետքերը շատ էին ծանրացել նրանց վրա:

**35:3 «վեր կենանք, գնանք Բեթել. այնտեղ գոհասեղան են շինելու Աստծուն»** Հակոբը վերադառնում է Աստծո հետ իր առաջին հանդիպման վայրը (տես՝ Ծննդ. 28:18-22): ՅԱՀՎԵԻ հետ իր փոխհարաբերության մեջ այս հաստատումը հետաքրքիր է, թե արդյոք նա միաստված էր (մեկ և միայն մեկ Աստծո հետևորդ), թե հենդեթիստ (իմ և իմ ընտանիքի համար միայն մեկ Աստված):

**35:4 «օտար աստվածներ»** Սա կարող էր վերաբերել «ընտանեկան աստվածներին» (*teraphim*, տես՝ 31:19,30,34, Դատ. 17:5; 1 Թագ. 19:13; Ովսեա 3:4, տես՝ Հատուկ Թեմա 31:19-ում), որը մատնանշում է նախնյաց պաշտամունքը՝ երկրպագությունը: Բիարկե հնարավոր է, որ Հակոբի ընդլայնված ընտանիքը (այսինքն՝ ծառաներն էլ, տես՝ հհ. 6բ) բազմաստված էին և իրենց հետ բերել էին սիմվոլներ կամ աստվածներին ներկայացնող իրեր:

❖ **«իրենց ականջների օղերը»** Ըստ երևույթին սրանք մի տեսակ կախարհության առարկաներ էին, որոնք կապ ունեին կռապաշտության հետ (տես՝ Ովսեա 2:13):

❖

**NASB, NKJV, NRSV**

**«թաքցրեց»**

**TEV, NJB, JPSOA, REB**

**«թաղեց»**

ԲԱՅԸ (BDB 380, KB 377, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կարող է նշանակել «թաքցնել», «ծածկել» կամ «թաղել» (տես՝ Հոբ 40:13): Ումից էր նա թաքցնում դրանք: Սա մի նշան էր այն բանի, որ Խառանից եկած իր մեծ նոր ընտանիքը այլևս մի նոր մաքուր սկիզբ է դնում իր անցյալի կրոնավոր գործադրումներից դուրս գալով:

❖ «կաղնու տակ» «Կաղնին» Մեպտուազինտայի թարգմանությունից է (տես՝ Փեշիթան, տես՝ UBS գրառումը, *Աստվածաշնչի Ֆաունան և Ֆլորան*, /*Fauna and Flora of the Bible*, UBS/, էջ՝ 154-155): Եբրայերենը տալիս է *terebinth* (BDB 18): ՀԿ-ում կարծես թե ծառերը շատ կարևոր դեր են խաղացել, շատ հաճախ ասոցացվում էին սրբավայրերի հետ (տես՝ Ծննդ. 12:6; 13:18; 14:13; 18:1; 2 Օր. 11:30; Հեսու 24:26; Դատ. 9:6,37):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 35:5-8**

**5**Եվ ճանապարհ ընկան .և իրենց շուրջը եղած քաղաքների վրա Աստծո վախն ընկավ, և Հակոբի որդիներին հետապնդեցին: **6**Եվ Հակոբը եկավ Լուզ, որ Քանանի երկրում է, այսինքն՝ Բեթել, ինքը և իր հետ *եղող* ամբողջ ժողովուրդը .**7**և այնտեղ մի գոհասեղան շինեց և այնտեղի անունը Էլ-Բեթել դրեց, որովհետև Աստված այնտեղ իրեն երևացել էր, երբ իր եղբոր երեսից փախչում էր: **8**Եվ Ռեբեկայի դայակ Դեբորան մեռավ և Բեթելից ցած կողմում գտնվող կաղնու տակ թաղվեց . և նրա անունը Ալոն-բախութ դրվեց:

**35:5 «իրենց շուրջ եղած քաղաքների վրա Աստծո վախն ընկավ»** «Վախ» տերմինի համար հիմնական արմատը *תָּרַס* է (BDB 369, KB 363, տես՝ 9:2; Հոբ 41:25), նաև *תָּרַס* է Հոբ 6:21-ում: Հիմնական երկբաղաձայն արմատը նաև կարող է նշանակել «փշրվել, ջարդվել» (տես՝ 1 Թագ. 2:4) կամ «զարհուրել» (տես՝ Երեմ. 10:2; 46:5): Այս համարում այս արմատի ձևը *תָּרַס* է և միայն այստեղ է հանդիպում:

Չնայած որ այս բառը չի կիրառվում Նվաճման տեքստերում, այն հանդիպում է արտահայտելու մի «սուրբ պատերազմի» նկարագրության պես մի բան (բառացի՝ «Աստծո ահը», տես՝ Ելից 15:16; 23:27; Հեսու 10:10): ՀՄԱ-ում ռազմական արշավները իրագործվում էին ազգային աստվածների անուններով: անմիջապես ենթատեքստից այն կարող է վերաբերել Սյուքեմի կոտորածին (տես՝ Ծննդոց 34): Աստված Հակոբի հետ էր հատուկ և ճանաչելի կերպով:

Հնարավոր է, որ *עֵלֵּב* բառը կիրառվում է «մեծ վախ» հասկացության պատկերավոր իմաստով, ինչպես 23:6-ում (տես՝ NASB, REB):

**35:6 «Լուզ»** Ծննդ. 28:19-ից մենք գիտենք, որ Հակոբը հանդիպեց ՅԱՀՎԵԻՆ քանանացիների քաղաքից դուրս և այն անվանեց «Բեթել»: Այս ամբողջ ընթացքում քանանացիները քաղաքն անվանում էին «Լուզ» (BDB 531 II, «նշենի» կոշվող) և հրեաներն այն անվանում էին Հակոբի առաջին անգամ ՅԱՀՎԵԻ հետ հանդիպման վայրի անվամբ՝ «Բեթել», որը նշանակում է «Աստծո տուն» (BDB 110):

**35:7** Տե՛ս գրառում 26:25:

- ❖
- NASB, NRSV                            **«Էլ-բեթել»**
- NKJV, NJB, JPSOA                   **«Էլ-Բեթել»**
- TEV                                       **«Բեթելի Աստվածը»**

Նահապետները անվանակոչում էին այն վայրերը, որտեղ ՅԱՀՎԵՆ հայտնվում էր իրենց: Այս վայրը, որ մոտ էր Լուզից, Հակոբի հետ ՅԱՀՎԵԻ առաջին հանդիպման տեղն էր: Նա շատ լավ էր հիշում դա: Ուստի նա դարձյալ այդ վայրն անվանեց «*Էլի տան Էլլը*» (Բեթել), քանի որ հրեշտակները (տես՝ Հոբ 1:6; Սաղմ. 8:5 կամ հրեշտակային խորհրդի հատվածներ՝ տես Ծննդ. 1:26; 3 Թագ. 22:19) բարձրանում և իջնում էին և ՅԱՀՎԵՆ կանգնած էր այդ սանդուղքի վերին մասում:

❖ **«Աստված երևացել էր»** «Աստված» անունը այստեղ *עֵלֵּב* է, որը ՀՈԳՆԱԿԻ թվով է: Սովորաբար Մեկ Աստծո անվան համար կիրառվում է ԲԱՅԸ ԵՉԱԿԻ թվով, սակայն այստեղ ՀՈԳՆԱԿԻ է (BDB 162, KB 191, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ՀՈԳՆԱԿԻ): Սա հնարավոր է (ABD, հատոր 1, էջ՝ 270), քանի որ Ծննդ. 28:12-ում *עֵלֵּב* բառն օգտագործվում է կապված Աստծո հրեշտակների հետ: *עֵלֵּב* և ՀՈԳՆԱԿԻ ԲԱՅԻ այսպիսի դեպքերը միասին հազվադեպ են:

Նաև հնարավոր է, որ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ և ՀՈԳՆԱԿԻ ԲԱՅԸ արտահայտում են իրականացած հայտնություն:

**35:8 «Եվ Ռեբեկայի դայակ Դեբորան մեռավ»** Այս մանրամասնություն մատնանշում է ականատեսի՝ ժամանակակցի աղբյուր: Դեբորան եղել էր մի շատ հավատարիմ աղային դեռևս Ծննդ. 24:59-ից սկսած: Պետք է որ նա բավականին ծեր լիներ: Նկատել էր, որ նա թաղվում է կաղնու տակ (BDB 1065), ևս մեկ սրբավայր: Տեղանքի անունը «ագո կաղնի» էր (BDB 47 և 113):

❖ «**ցած կողմում ... տակ**» Այս տերմինները (BDB 1065) կարիք ունեն բացատրվելու, քանի որ նրանք անգլերենում բազմիմաստ են:

1. Բեթելից ցած կողմում, ցույց է տալիս ավելի ցածր տեղ քան գոհասեղան էր
2. տակ, նշանակում է ճյուղերի սաղարթի տակ, ոչ թե բնի տակ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:9-15**

<sup>9</sup>Եվ Աստված դարձյալ երևաց Հակոբին, երբ Փաղան-Արամից էր վերադառնում, և օրհնեց նրան: <sup>10</sup>Եվ Աստված ասաց նրան.

«Քո անունը Հակոբ է.

Քո անունն այսուհետ Հակոբ չի լինի,

Այլ Իսրայել կլինի քո անունը».

Եվ նրա անունը Իսրայել դրեց:

<sup>11</sup>Եվ Աստված ասաց նրան.

«Ես եմ Ամենակալ Աստվածը.

Աճի՛ր ու բազմացի՛ր.

Քեզանից ազգ ու ազգերի բազմություն լինի,

Եվ քո երանքից թագավորներ դուրս գան:

<sup>12</sup>Եվ այն երկիրը, որ Աբրահամին և Իսահակին տվի,

Քեզ կտամ և քեզանից հետո քո սերնդին կտամ այդ երկիրը»:

<sup>13</sup>Եվ Աստված բարձրացավ նրա մոտից այնտեղ, որտեղ որ նրա հետ խոսեց: <sup>14</sup>Եվ Հակոբը մի կոթող կանգնեցրեց այն տեղում, որտեղ որ Աստված իր հետ խոսեց՝ մի քարե կոթող և նրա վրա խմիչքի նվերներ հեղեց և նրա վրա յուղ թափեց: <sup>15</sup>Եվ Հակոբն այն տեղի անունը, որտեղ որ Աստված իր հետ խոսել էր, Բեթել դրեց:

**35:9-12** Ուխտի այս նորոգությունը և նվիրումը շատ նման է Ծննդ.28:13-15: Այս դեպքի ժամանակը հստակ տրված չէ: Այն կարծես թե լինի 32:28-32-ի կամ ՅԱՀՎԵԻ կողմից Հակոբի Իսրայել անվանակոչման կրկնությունը:

**35:10 «Հակոբ...Իսրայել»** NASB-ը հ.10 և 11-12 թարգմանում է որպես պոեզիա: Սա համապատասխանում է հ. 10-ի կրկնությանը և համընկնում է Ծննդ. 12:1-3; 15:1 և 17:1-5 աստվածաբանության չափածոյի հետ:

Չարմանալի է, որ մեզ հայտնի չէ «Իսրայել» անվան նշանակությունը (ստուգաբանությունը): Տես Հատուկ թեմա 32:28-ում:

**35:11 «Ես եմ Ամենակալ Աստվածը»** Սա երբայերեն բաղադրյալ *El Shaddai* Էլ-Շադդայ (BDBD 42 և 994) բառն է: Ելից 6:2-3-ից իմանում ենք, որ Ծննդոցում դա ընդունված անուն է Աստծո համար (տես՝ 17:1; 28:3; 35:11; 43:14; 48:3): Սա կարծես թե կազմված է ՀՄԱ-ում Աստծո համար կիրառվող ընդհանուր անվանումից՝ *Էլ* (BDB 42), հավանաբար «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» արմատից, և *Շադայ* (\*շ BDB 994), որը հնարավոր է կապ ունի կնոջ կրծքի հետ (BDB 994, տես՝ Ծննդ. 49:25): Մեկ այլ հնարավոր թարգմանություն է «ամենաբավ» կամ ռաբբիների՝ «ինքնաբավ» բառը, չնայած որ Թվից 24:4,16-ում NASB տարբերակը թարգմանում է «Ամենակալ»: Այն շատ հաճախ կիրառվում է ոչ իսրայելական աղբյուրներում, ինչպես որինակ Հոբի և Բաղասամի գրքում: Այս անունը հաճախ կապված է Աստծո օրհնության հետ (տես՝ Ծննդ. 17:1; 28:3; 35:11; 48:3-4): Տես Հատուկ Թեմա 12:1-ում:

❖ «**աճի՛ր ու բազմացի՛ր**» Տես գրառում 17:1 և 28:3: Սա եղել է Աստծո լիազորությունը Ծննդ. 1-ից սկսած (կենդանիների, մարդկանց համար, և այժմ էլ Իր հատուկ ուխտի ընտանիքի համար):

❖ «**ազգ և ազգերի բազմություն**» Ըստ երևույթին սա վերաբերում է Հակոբի ժառանգներին (տես՝ 48:4), բայց նաև շատ ավելի մեծ մարդկանց խմբի (այսինքն՝ «Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված մարդկանց», Ծննդ. 1:26-27):

1. Աստծո խոստումը Ծննդ. 3:15-ում
2. Ծննդոց 12:3-ում Աստծո կանչի կիրարկումներն Աբրամի կանքում
3. Աստծո անունները Իսրայելի համար և նրա նպատակը Ելից 19:5-6-ում
4. Եսայու տիեզերական ակնարկները, որոնք ընդգրկում են բոլոր «ազգերին»
5. Մատթ. 28:19-20-ում և Ղուկաս 24:47, Գործք 1:8-ում կրկնվող Հիսուսի անկյունաքար հանդիսացող խոսքերը եկեղեցուն

6. Գործք առաքելոցում և Պողոսի թղթերում առկա քարոզները
7. ՀԿ-ի նպատակի վերաբերյալ Գաղատացիների 3-ի և Եբրայեցիների գրքի հստակ սահմանումները

Սա մեծագույն աստվածաբանական կարևորության նպատակային սահմանում է:

❖ **«և քո երանքից թագավորներ դուրս գան»** Այս արտահայտությունը կարելի է երկու կերպ դիտարկել՝

1. որպես գրական զուգահեռ «ազգերի միաբանության»
2. Աբրահամի հետ ուխտին վերաբերող (տես՝ 17:6,16)

Հակոբը «ցեղերի» աղբյուրն է, իսկ Աբրահամը՝ «թագավորների»:

**35:12** Սա Աբրահամին տրված սկզբնական խոստումների վերահաստատում է (տես՝ 13:15; 26:3; 28:13): ՅԱՀՎԵԻ խոստումները ուղղված էին մի ընտանիքի՝ մի ազգատոհմի: Նրանցից ոմանք ավելի զորեղ և ավելի հոգևոր էին, քան մյուսները: Դա «լավագույններին» ուղղված խոստում չէր, այլ մի խոստում, որով Նա իրականացնելու էր Իր պատկերով և նմանությամբ ստեղծված ամբողջ մարդկության համար Իր հավիտենական փրկության ծրագիրը (տես՝ Ծննդ. 1:26-27): Դա խոստում է մեղավոր մարդկությանը (տես՝ Ծննդ. 3:15), որպեսզի փրկի նրանց: Աստված ընտրեց մեկին, որպեսզի փրկի բոլորին:

**35:13 «Եվ Աստված բարձրացավ նրա մոտից»** «Բարձրացավ» ԲԱՅՆ (BDB 748, KB 828) ունի լայն հասկացողություն («վեր բարձրանալ», «համբարձվել», «մագլցել», «բողբոջել», «զոհաբերել», «վերահաստատել», «ընկերակցել» և այլն): Այստեղ այն հատուկ նկարագրում է մարդուց Աստծո հեռանալը (տես՝ 17:22): Հնում մարդիկ հավատում էին, որ Աստված և երկինքները «վերևում» են և դատաստանը՝ «ներքևում»: Չոհաբերության ծուխը բարձրանում էր Աստծուն (տես՝ 8:20; 22:2,13): Աստված խոսեց սարից՝ երկնքից (տես՝ Ելից 19-20): Աստծո հրեշտակները բարձրանում էին և իջնում 28:12-ում:

Այժմ, որ ժամանակակիցները գիտեն ֆիզիկական ստեղծագործության անսահմանությունը, շատ մեկնաբաններ հավատում են, որ Աստծո գտնվելու վայրը ավելի շուտ միջտարածաչափական է, քան տարածական: Երկինքը առաջին հերթին անձ է, իսկ վայրը՝ այնքան էլ էական չէ:

❖ **«այնտեղ, որտեղ որ նրա հետ խոսեց»** Հենց այս նույն արտահայտությունը կրկնվում է հ. 14-ում: Սա մի այնպիսի կրկնություն է, որը նման է ընդհանուր դպրական վրիպման (տիտոգրաֆիա):

**35:14 «Հակոբը կոթող կանգնեցրեց»** Այս նույն բանը նա արեց նախկինում Բեթելում (տես՝ Ծննդ. 28:18,19,22): Նաև նկատե՛ք, որ այս գլխի հ. 20-ում նա մի կոթող է կանգնեցնելու Ռաբելի գերեզմանին: Այս կոթողները կարևոր դեպքերի հիշատակի համար էին:

❖ **«հեղեց ... թափեց»** Այստեղ երկու տարբեր ԲԱՅԵՐ են կիրառված՝

1. առաջինը, BDB 650, KB 703, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, վերաբերում է խմիչքի զոհաբերությանը (BDB 651)
2. երկրորդը, BDB 427, KB 428, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, վերաբերում է ձիթայուղին (BDB 1032, տես՝ 28:18), կիրառվում է սուրբ օծության համար, Ելից 29:7; Ղևտ. 8:12:

**35:15** Հայտնության՝ Աստծո երևալու այս վայրի Հակոբի անվանակոչելը երեք անգամ է արձանագրված: Ոմանք սա դիտարկում են որպես տարբեր հեղինակների կողմից գրված (J.E.D.P.), սակայն ես կարծում եմ, որ սա նման է Պողոսի դարձի արձանագրությանը, որը Գործքում երեք անգամ է տրված: Սա մի մեծ աստվածաբանական իրադարձություն էր: ՅԱՀՎԵՆ հայտնեց Իրեն Հակոբին՝ Իսրայելին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:16-21**

<sup>16</sup>Եվ Բեթելից ճանապարհվեցին, և մի քիչ ճանապարհ կար մինչև Եփրաթա, որտեղ որ Ռաբելը երկունքի մեջ էր և ծննդաբերելիս շատ դժվարություններ կրեց: <sup>17</sup>Եվ եղավ, երբ ծննդաբերելիս շատ էր դժվարանում, տատմերն ասաց նրան. «Մի՛ վախենա, որովհետև սա էլ քեզ համար տղա է»: <sup>18</sup>Եվ եղավ, երբ նրա հոգին դուրս էր գալիս (որովհետև մեռավ), նրա անունը Բենոնի դրեց, բայց նրա հայրը Բենիամին կոչեց նրան: <sup>19</sup>Եվ Ռաբելը մեռավ և թաղվեց Եփրաթայի ճանապարհին, որ Բեթղեհեմն է: <sup>20</sup>Եվ Հակոբը նրա շիրմի վրա կոթող կանգնեցրեց, որ մինչև այսօր Ռաբելի գերեզմանի կոթողն է: <sup>21</sup>Իսրայելը ճանապարհվեց և իր վրանը բացեց Հոտի աշտարակից այն կողմ:

**35:16 «Եփրայթա»** Սա Հուդայում Բեթլեհեմի նկարագրության մեկ այլ կերպն է (տես՝ Միք.5:2): Գոյություն ունեին Բեթլեհեմ անունով այլ տեղանքներ նույնպես, սակայն Եփրայթան նկարագրում էր այն քաղաքը, որը գտնվում էր Երոսաղեմի մոտակայքում, որը հետագայում դառնալու էր Դավթի քաղաքը, Մեսիայի ծննդավայրը:

❖ **«շատ դժվարություններ կրեց»** Այս ԲԱՅԸ (BDB 904, KB 1151) *Piel* արմատով ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում:

Ընտրյալ ընտանիքը չարչարվում էր և հիվանդացել էր (տես՝ 27:1) ճիշտ այնպես, ինչպես մյուս ընտանիքների վրա էր ազդել անկումը: Աստված միջամտում է վստահեցնելու նրանց փրկությունը, բայց ոչ թե նրանց մխիթարում և թեթևացնում (տես՝ Գորդոն Ֆիլի, *Մտողության, հարստության ավետարանի հիվանդությունը* /Gordon Fee, *The Disease of the Health, Wealth Gospel*):

**35:17 «մի՛ վախենա»** ԲԱՅԸ (BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով) ինչ-որ տեղ անսպասելի է: Մեկը կկարծի, թե նա խորհում էր նրա մահվան մասին, սակայն ենթատեքստում առողջ արու զավակի ծնունդն էր առաջնահերթ (տես՝ 1 Թագ.4:20): Սա կարծես թե իրականանում էր Ծննդոց 30:24-ում նրա արտահայտած խնդրանքը:

**35:18 «նրա հոին դուրս էր գալիս»** «Հոգին» երբբայերեն *nephish* (BDB 659) բառն է: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չխառնենք հունական փիլիսոփայությունը երբայերեն Սուրբ Գրերի հետ: ՀԿ-ը չի ասում, որ մենք հոգի ունենք, այլ որ մենք հոգի ենք (տես՝ Ծննդ. 2:7): «Հոգի» բառը ծագել է արքայերեն *napishtu* բառից, որը ցույց է տալիս շնչելու տեղը կամ կոկորդը (տես՝ Սաղմ. 69:2): Մարդկության յուրահատկությունը այն փաստը չէ, որ ունեն *nephish*, քանի որ Ծննդոցի սկզբնական հատվածում կենդանիները նույնպես ունեին *nephish* (տես՝ Ծննդ. 1:21,24; 2:19; Դևտ. 11:46; 24:18): Սա պարզապես երբայերեն դարձվածք է, որ մարդու ֆիզիկական կյանքը դադարում է երկրի վրա, երբ շունչը հեռանում է:

❖ **«նրա անունը Բենոնի դրեց, բայց նրա հայրը Բենիամին կոչեց նրան»** Ռեբեկայի կողմից նրան տրված անունը նշանակում էր «իմ վշտերի որդի» (BDB 122), սակայն Հակոբը փոխեց այն «իմ աջ կողմի որդի» (BDB 122): Սա հմտության, պատվի և օգնության վայրն էր: Մարի տախտակներից իմանում ենք, որ այս տերմինը կարող էր նաև նշանակել «հարավի որդի» (այսինքն՝ նրա ծննդավայրը՝ Քանանը):

**35:19 «(որ Բեթլեհեմն է)»** Հնարավոր է գոյություն է ունեցել ավելի ուշ կատարված խմբագրական հավելում (տեղանունների՝ 35:6,27; 36:1 և «մինչև այսօր» արտահայտության՝ 35:20-ում): Չնայած որ ես անձամբ հակված եմ Հնգամատյանի մեծ մասի Մովսիսական հեղինակությանը, նաև հավատում եմ, որ կատարվել են մի քանի խմբագրական աշխատանքներ, ինչպես նաև Նահապետներից կան բանավոր ու գրավոր ավանդույթներ, որոնք գործադրել է Մովսեսը: Այս հավանական խմբագիրներն են՝ Հեսուն, Սամվելը, Թագավորացների հեղինակը, Եզրասը, Երեմիան և/կամ քահանաներ:

**35:21 «Եղերի/Հոտի աշտարակ»** Անունը «Միգդալ Եղեր է»: Միգդալ (BDB 153) նշանակում է հսկման աշտարակ և կիրառված է մի քանի տեղանքների համադրությամբ (այսինքն՝ Հեսու 15:37; 19:38): Այս մեկը մոտ է Բեթլեհեմին (տես՝ Միքիա 4:8): Եղեր (BDB 727) նշանակում է հոտ կամ նախիր: Այս քարակույտը ծառայելու էր որպես հոտերին հսկելու բարձրավանդակ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:22ա**  
**<sup>22</sup>Եվ եղավ, որ երբ Իսրայելն ապրում էր այդ երկրում, Ռուբենը գնաց ու իր հոր հարճ Բաղդայի հետ պառկեց. և Իսրայելը լսեց այս:**

**35:22 «Ռուբենը գնաց և իր հոր հարճ Բաղդայի հետ պառկեց»** Այս անգամ գործը ինչ-որ տեղ կապված է ժառանգության իրավունքների ակնկալության հետ (այսինքն՝ 3 Թագ.2:13-25): Ռուբենը փորձում էր ստիպել իր հորը, որ իրեն նշանակի ազգատոհմի գլուխ: Իսկ արդյունքում նա դատապարտվեց և մերժվեց հենց այս դեպքի պատճառով (տես՝ Ծննդ. 49:3-4; 1 Մնաց. 5:1): Ինչպես որ Աստված Իր բացառիկ կամքն էր իրականացնում Նահապետների անպտուղ կանանց միջոցով, Ծննդոցում Նա ցույց է տալիս Իր բացառիկ կամքը՝ թույլ տալով, որ Լիայի չորրորդ որդին դառնա Մեսիայի տոհմանճյուղը (այսինքն՝ Հուդան):

❖ **«և Իսրայելը լսեց այս»** Սեպտուագիմտան ավելացնում է, «այս բանը նրան վիշտ պատճառեց» (տես՝ TEV, NASB): Սա չկա MT-ում: Մենք վստահ չենք արդյոք LXX ավելացնում է այն, թե այն եղել է երբայերեն ավելի հին ձեռագրի մաս:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:22բ-26**

<sup>22</sup>Արդ, Հակոբի որդիները տասներկուսն էին: <sup>23</sup>Լիայի որդիները՝ Ռուբեն՝ Հակոբի անդրանիկը, Շմավոն, Ղևի, Հուդա, Իսաքար և Չաբուլոն: <sup>24</sup>Ռաքելի որդիները՝ Հովսեփ և Բենիամին: <sup>25</sup>Եվ Ռաքելի աղախին Բաղդայի որդիները՝ Դան և Նեփթաղիմ: <sup>26</sup>Եվ Լիայի աղախին Չեղդիայի որդիները՝ Գադ և Ասեր: Սրանք են Հակոբի որդիները, որ Փաղան-Արամում ծնվեցին նրա համար:

❖ «Արդ, Հակոբի որդիները տասներկուսն էին» Այս անունների հետ կապված տարածված ստուգաբանությունը նաև որոշակի հեղինակույթի վիճակ է առաջացնում, որը հնարավոր է տարբերակել Ծննդոց 49-ի մարգարեություններում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:27**

<sup>27</sup>Եվ Հակոբը եկավ իր հայր Իսահակի մոտ՝ Մամբրե, Արբայի քաղաքը, այսինքն՝ Քեբրոն, որտեղ պանդխտեցին Աբրահամը և Իսահակը:

**35:27** «Հակոբը եկավ իր հայր Իսահակի մոտ՝ Մամբրե» Սա մեկ այլ հատուկ կաղնու ծառ ունեցող վայր էր (տես՝ Ծննդ. 13:18; 14:13 և 18:1): Ժամանակի գործոնն անհայտ է: Արդյո՞ք Հակոբը սպասեց այս ամբողջ ընթացքում՝ Քանանից վերադառնալուց հետո, որպեսզի այցելի իր հորը: Սա հնարավոր է մեկ այլ պատմական հետադարձ կապ է:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 35:28-29**

<sup>28</sup>Եվ Իսահակի օրերը հարյուր ութսուն տարի էին: <sup>29</sup>Իսահակը ծերացած և իր օրերից կշտացած ավանդեց իր հոգին, մեռավ և իր ժողովրդին միացավ. և նրա որդիները՝ Եսավն ու Հակոբը, թաղեցին նրան:

**35:29** «Իսահակը ավանդեց իր հոգին, մեռավ» Իսահակը պետք է որ երկար ժամանակ ապրած լիներ շատ զառամյալ վիճակում (տես՝ 27:1): Հակոբը հեռացել էր ավելի քան քսան տարով և նրա հայրը իր գնալուց կարճ ժամանակ անց ակնկալվում էր, որ պետք է մեռնի: Սա ցույց է տալիս, որ չնայած այն բանին, որ Նահապետն ուներ Աստծո օրհնությունը, տակավին կրում էր ֆիզիկական անհարմարություն և հիվանդություն իր կյանքի մի զգալի ժամանակահատված:

❖ «նրա որդիները՝ Եսավն ու Հակոբը, թաղեցին նրան» Ինչպես որ Իսմայելն ու Իսահակը վերադարձան թաղելու Աբրահամին, այնպես էլ այս երկու որդիները՝ Եսավն ու Հակոբը միասին էին իրենց հոր թաղմանը: Սա ըստ երևույթին մշակութային շատ կարևոր իրադարձություն էր:

❖ «իր ժողովրդին միացավ» ԲԱՅԸ (BDB 62, KB 74, *Niphal* ԱՆԿԱՏԱԲ) նշանակում է «հավաքել» կամ «հեռացնել»: Սա դարձվածք է մահից հետո մեկն իր ընտանիքի հետ միավորվելու իմաստով (այսինքն՝ 25:8,17; 35:29; 49:29,33; Թվոց 20:24,26; 27:13; 31:2; 2 Օր. 32:50): ՀԿ-յան հայտնությունները հանդերձյալ կյանքի վերաբերյալ համառոտ են և բազմիմաստ (բացառությամբ հազվադեպ ակնարկների՝ Հոբի և Սաղմոսներ գրքում հարության վերաբերյալ):

Այն կարող է մատնանշել՝

1. խաղաղ մահ ունենալու դարձվածք
2. ընտանեկան գերեզմանում թաղվելու մասին դարձվածք
3. մահացած սիրելիներին միանալու մասին դարձվածք (այսինքն՝ մահից հետո անձնական գոյի հաստատություն): Տե՛ս *Աստվածաշնչի Խորթին Խոսքերը*, էջ՝ 127-129 /*Hard Sayings of the Bible*, pp. 127-129/:
4. մահացած սիրելիների հետ մինչև Աստծո կողմից հարություն առնելուն սպասելու մասին դարձվածք (տես՝ Հոբ 14:14-15; 19:25-27; Սաղմ. 16:10; 49:15; 86:13; Եզեկիել 37; Դան. 12:2-3; Ովսեա 13:14): Ամբողջական ՆԿ-յան տեքստը 1 Կորնթացիների 15-ն է:

**35:29** «ծերացած և իր օրերից կշտացած» Սա երկարակեցության համար դարձվածք է: Մահը դիտարկվում էր որպես բոլոր մարդկանց համար բնական վախճան: Երկար կյանքը դիտարկվում էր որպես օրհնություն: Մահը ծեր հավատացյալի համար ընկեր էր (և մինչև այսօր էլ ընկեր է):

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**



Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Հակոբը ճամփորդեց միայն մինչև Սյուքեմ և ոչ թե Բեթել:
2. Ովքե՞ր են Խևացիները:
3. Արդյո՞ք շնությունը միշտ էլ եղել է գարշելի հանցանք, թե միայն սկսել է Մովսիսական օրենսդրությամբ:
4. Ինչո՞ւ Ռուբենը, Շմավոնը և Ղևին մերժվեցին ընտանիքի նահապետական առաջնորդները լինելու հարցում:
5. Ի՞նչ օտար աստվածների մասին է խոսում Հակոբը 35:2-ում:
6. Ի՞նչ էին խորհրդապատկերում ականջօղերը 35:4-ում:
7. Ինչո՞ւ էին ծառերը համարվում սրբավայրեր այս քոչվոր անապատային բնակիչների համար:
8. Ինչո՞ւ էր Հակոբը կոթող կանգնեցնում իր կյանքի հատուկ վայրերում և ժամանակներում: Ինչո՞ւ է սա հետագայում դատապարտվում:
9. Արդյո՞ք մենք հոգի ունենք, թե հոգի ենք: Ինչո՞ւ:

**ԾՆՆԴՈՑ 36**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> (հետևում է MT)
Եսավը տեղափոխվում է	Եսավի ընտանիքը	Եղովմացիների ցանկը	Եսավի սերունդները	Եսավի կանայք և երեխաները Քանանում
36:1	36:1-8	36:1-5	36:1-5	36:1-5
36:2-5				Եսավի գաղթը
36:6-8		36:6-8	36:6-8	36:6-8
Եսավի սերունդները				Եսավի սերունդները Սեիրում
36:9-14	36:9-14	36:9-14	36:9-13ա	36:9
				36:10
				36:11-12
			36:13բ	36:13
			36:14	36:14
	Եղովմի ցեղապետերը			Եղովմի ցեղապետերը
36:15-19	36:15-16	36:15-19	36:15-16	36:15-16
	36:17		36:17	36:17
	36:18-19		36:18-19	36:18
				36:19
	Սեիրի որդիները		Սեիրի սերունդները	Քոռեցի Սեիրի սերունդները
36:20-30	36:20-30	36:20-30	36:20-21	36:20-28
			36:22	
			36:23	
			36:24-26	
			36:27	
			36:28	
			36:29-30	36:29-30
			Եղովմի թագավորները	Եղովմի թագավորները
36:31-39		36:31-39	36:31-39	36:31-39

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ – Իսրայելի կապը Եսալի (այսինքն՝ Եղովմը) սերունդների հետ

Ա. Իսրայելից պահանջվում էր հատուկ ընկերություն ցուցաբերել Եղովմի հանդեպ, քանի որ նրանք բարեկամներ էին՝

1. Թվոց 20:14
2. 2 Օրինաց 23:7,8

Բ. Տարիների ընթացքում գոյություն են ունեցել բազմաթիվ խնդիրներ Իսրայելի և Եղովմի միջև:

1. Թվոց 20:14-21
2. Դատավորաց 11:16-17
3. 1 Թագավորաց 14:47-48
4. 2 Թագավորաց 8:14
5. 3 Թագավորաց 11:14-25
6. 4 Թագավորաց 14:22; 16:5,6
7. 2 Մնացորդաց 20:10-30; 21:8-15
8. Ամովա 1:6,9

Գ. Եղովմի դեմ կան բազմաթիվ մարգարեություններ՝

1. Եսայի 34:5բ, 63:1բ
2. Երեմիա 49:7-22; Ողբ 4:21,22
3. Եզեկիել 25:12բ; 35:1բ; 36:2-6
4. Ամովա 1:11,12
5. Աբդիա

Դ. Գլուխ 36-ը Եսալի ազգաբանությունն է, որը կարծես թե արտացոլում է Ծննդ.27:39-40-ի մարգարեությունը: Այս կրկնվող արտահայտությունից («սրանք են Եսալի սերունդները»), որը գտնվում է 36:1-ում, ակնհայտ է, որ Մովսեսը օգտագործել է ՀԿ-յան այս կերպարներին, որպես այս պատմության (Ծննդոցի) բաժանարար զիծ Եբրայեցի ժողովրդի պատմության մեկնարկից (տես՝ 2:4; 5:1; 6:9; 10:1; 11:10,27; 25:12; 36:19; 37:2): Նրանք, ովքեր մաս են կազմում Մեսիայի տոհմաձառի, արժանանում են ամենամեծ տեղին և ուշադրությանը:

Ե. Այս գլխի համառոտ ուրվագիծը կարող է լինել այսպիսին՝

1. հհ. 2-9 Եսավի երեխաները Քանանում
2. հհ. 10-14 Եսավի թոռները Սեիրում
3. հհ. 15-19 և 40-43 Եդովմ ազգի իշխանները՝ ցեղապետները
4. հհ. 20-30 թվարկում է այս տարածքում տեղացի իշխանների անունները
5. հհ. 31-39 Եդովմի հետագա թագավորները (նմանատիպ մի ցանկ հանդիպում է նաև 1 Մնաց .1:35-54)
6. հհ. 40-43 Եսավից ծնված առաջնորդների անուններն են

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 36:1

<sup>1</sup> Արդ, սրանք են Եսավի, այսինքն՝ Եդովմի սերունդները:

**35:1 «սրանք են սերունդները»** Այս պարբերաբար կրնկնվող արտահայտությունը (հավանաբար նման հնչեղությանը) ընդգծում է Ծննդոց գրքի բաժանումները (տես՝ 2:4; 5:1; 6:9; 10:1; 11:10,27; 25:12,19; 36:1,9; 37:2): Այս արտահայտության մեջ չկա ԲԱՅ:

❖ **«Եսավի (այսինքն՝ Եդովմի)»** Այս շեշտադրումը եդովմացիների ծագման վրա, կապված Հակոբի եղբոր՝ Եսավի հետ, կրկնվող թեմա է ամբողջ այս գլխում (տես՝ 8,9,19,43: Եսավի կապը Եդովմի հետ հասկապես շեշտադրվում է Ծննդ. 25:25,30):

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 36:2-5

<sup>2</sup>Եսավն իր կանանց Քանանի աղջիկներից առավ, քետացի Ելոնի աղջկան՝ Ադոային և խևացի Սեբեգոնի աղջիկ Անայի աղջիկ Ողիբամային, <sup>3</sup>և Իսմայելի աղջիկ Նաբեթի քույր Բասեմային: <sup>4</sup>Եվ Ադոան Եսավի համար ծնեց Եղիփազին, Բասեմայը ծնեց Ռագուելին, <sup>5</sup>և Ողիբաման ծնեց Հեուսին, Հեդդոնին ու Կորիսին. սրանք են Եսավի որդիները, որ ծնվեցին նրա համար Քանանի երկրում:

**35:2 «Եսավն իր կանանց Քանանի աղջիկներից առավ»** Եսավի քանանացի կանանց անունները արձանագրված են երեք տարբեր տեղերում՝ Ծննդ. 26:34,35; 28:8 և 36:2բ: Սակայն խնդիր է բարձրանում, երբ այս երեք դեպքերը տարբերվում են նրա կանանց անուններով: Այս հակասությունը բացատրվում է տարբեր ճանապարհներով՝ (1) որ երեք կանայք չեն եղել, այլ չորս և (2) որ այս կանայք ունեին մեկից ավելի անուն: Կարծես թե պարզ է դառնում տեքստից, որ Եսավը ուներ առնվազն երկու կին Քանանից և մեկն էլ Իսմայելի աղջիկը:

❖ **«քետացի Ելոնի աղջկան՝ Ադոային»** Ծննդ. 26:34-ում քետացի Ելոնի աղջիկը կապվում է Բասեմայ (BDB 142): Տարօրինակ է թվում, որ այս նույն անունը Ծննդ. 36:3-ում կիրառվում է Իսմայելի աղջկա համար: Ռաշին ասում է, որ հնարավոր է սա կանանց մեջ եղել է տարածված անուն, քանի որ հավանական է, որ անվանումը կապված է անուշահոտության կամ խնկի բույրի հետ (BDB 141): Հրեական ավանդույթը, որը հակառակ է տրամադրված Եսավին, հաստատում է, որ նրա անունը կապ ունի խնկի հետ, որը նա վառում էր կուռքերին, հետևաբար, դա նրան կոռուպտ էր դարձնում:

«Քետացի» տերմինը (BDB 366) կիրառվում է ՀԿ-ում երեք իրարից տարբերվող խմբերի համար:

1. Կենտրոնական Փոքր Ասիայի բնիկների համար, որոնք կոչվում էին Քաթացիներ (այսինքն՝ նրանք խոսում էին քաթերեն) Ք.Ա. երրորդ հազարամյակում: Նրանք սեմական կամ հնդեվրոպական լեզվախմբից չէին:
2. Հնդեվրոպացի զավթիչները Ք.Ա. երկրորդ հազարամյակում (այսինքն՝ նրանք խոսում էին Նեսիթ), որոնք հիմնեցին խոշոր հզոր կայսրություն:
3. Քետից ծնված սերունդները (Ծննդ. 10:15; 23:3,5,7,10,16,20; 25:10; 27:46; 49:32): Նրանք թվարկվում են որպես Քանանում բնակվող տաս խմբերից մեկը:

Այս նույն անվանումով նշված երեք տարբեր խմբերը շատ մեծ շփոթության առիթ են հանդիսանում:

❖ **«Ողիբամա»** Այս անունը նշանակում է «բարձ տեղի վրան» (BDB 14), սակայն այս բոլոր անունները շատ վիճելի են իրենց սկզբնական ստուգաբանության հետ կապված: Մինևույն արմատը կարող է նշանակել «ծառ», «ալոն», «շողալ» կամ «մաքուր լինել»: Ծննդ. 26:34-35-ում այս նույն աղջիկը ըստ երևույթին կոչվում էր Հուդիթ (եթե Եսավը միայն երեք կին ուներ): Ռաշին ասում է, որ Եսավը փոխեց

նրա անունը Հուդիթի (BDB 397 II), որը նշանակում է «Հրեական» (ԱԾԱԿԱՆ, BDB 397 I): Սա ցույց է տալիս, որ նա թողել էր իր կռապաշտությունը և դրանով տպավորություն կարող էր թողել նրա հոր վրա (այսինքն՝ Իսահակի): Անտվոր է, որ այս նույն անունը հանդիպում է այս նույն գլխի հ.41-ում, որը տղամարդու է վերագրված: Չնայած դրան այն ԻԳԱԿԱՆ սեռով է, որը ցույց է տալիս, որ որոշակի աղավաղումներ են եղել այս գլխի Եբրայերեն տեքստում: Ազգաբանությունների տարբերությունները սովորական երևույթ է Աստվածաշնչում, (1) անունների երկար շարքն առանց տառասխալի արձանագրելու դժվարության պատճառով, և (2) մի լեզվից մյուսը անունների թարգմանության դժվարության պատճառով: Նկատելք, թե քանի անուն է փոխվել 1 Մնաց . 1:35-54-ում:

❖ **«խևացի Սիբեգոնի աղջիկ Անայի աղջիկ»** Մագորեթիկ Տեքստը պարզապես ասում «աղջիկը», սակայն Մամարական Հնգամատյանը, Մեպտուազինտան և Սիրիակ թարգմանությունները տալիս են «որդի»: Այն պարզ է դառնում ենթատեքստից և հ.24-ից, որ մենք խոսում ենք թոռնուհու մասին:

Սիբեգոնը անվանվում է խևացի: Եթե ճիշտ է, որ այս աղջիկը կապ ունի գլուխ 26-ում արձանագրված աղջիկներից մեկի հետ, ապա նա նույնպես քեուացի էր: Մեծ շփոթմունք է տեղի ունեցել ՀԿ-ի թարգմանության մեջ քեուացիների (BDB 366), խևացիների (BDB 295) և քոռեցիների (BDB 360 II, տես՝ հ.20; 14:6) միջև եղած փոխհարաբերության մեջ: Սովորաբար «քոռեցի» (տես՝ հ.20) տերմինը կիրառվում է ոչ սեմական Քոռեցիների համար (ZPBE, հատոր 3, էջ՝ 228-229), սակայն ըստ երևույթին այս տերմինը կարող է վերաբերել մի խումբ սեմական մարդկանց, որոնք հանքափորներ էին կամ էլ քարանձավաբնակներ (BDB 359, KB 339, «անցք»): Սրա վառ ապացույցն այն է, որ նրանց բոլորի անունները սեմական են և ոչ թե քոռեցիների:

**36:3 «Բասեմաթ»** Այս աղջիկը կոչվում է «Մայելեթ», որը նշանակում է «ներում» (BDB 142) Ծննդ . 28:9-ում: Հետաքրքիր է, որ Մամարական Հնգամատյանում նրա անունը փոխվում է Բասեմաթից (Ծննդ . 36:3,4,10) Մայելեթի: Սա ցույց է տալիս, որ շատ ավելի վաղ գիտնականները խոսակցում էին այս անունների հետ կապված խնդիրները (այսինքն՝ անձը ունի երկու անուն, մականուն, անվանակոչում): Պետք է հիշել, որ Եսավը ամուսնացել էր Իսմայելի աղջիկներից մեկի հետ, որպեսզի հաճեցնի իր հորն ու մորը:

❖ **«Նաբեոթի քույր»** Ենթադրվում է, որ Իսմայելն այս ժամանակ արդեն մահացած էր և որ նրա եղբայրն էր իր տեղը նրան կնության տվել և դա էր պատճառը, որ նրա անունը ներառված է այս տեքստում: Նաև հնարավոր է, քանի որ սա շատ հաճախ է պատահում (այսինքն՝ եղբայրը ամուսնական հարցերում հանդես է գալիս որպես ընտանիքը ներկայացնող՝ Լաբանը, Ծմավոնը, Ղևին, նույնիսկ Աբրամը պնդում է, որ Սարայի եղբայրն է), որ սա կարող է արտացոլել ՀՄԱ-ի մշակույթը: Ոմանք ենթադրում են, քանի որ այս ազգաբանության մեջ գերակշռում են կանացի անունները, որ այս արաբական ցեղերում մայրիշխանության հակվածություն կար, սակայն այս հարցի շուրջ պատմական փաստաթղթերն անհայտ են:

**36:4-5** Սա Եսավի մի քանի կարևոր ցեղերի ցանկն է, որը հետագայում կատարելագործվելու է դառնալով ցեղապետերի ցանկեր, այս գլխի հետագա հաստատմանը: Այս գլուխը կարելի է բաժանել ըստ տրված ազգաբանությունների բովանդակության՝

1. հհ. 2-9 Եսավի երեխաները Քանանում
2. հհ. 10-14 Եսավի թոռները Սեիրում
3. հհ. 15-19 և 40-43 Եդովմ ազգի իշխանները՝ ցեղապետերը
4. հհ. 20-30 թվարկում է այս տարածքում տեղացի իշխանների անունները
5. հհ. 31-39 Եդովմի հետագա թագավորները (նմանատիպ մի ցանկ հանդիպում է նաև 1 Մնաց . 1:35-54)
6. հհ. 40-43 Եսավից ծնված առաջնորդների անուններն են

Նմանատիպ մի ցանկի էլ հանդիպում ենք 1 Մնաց . 1:35-54-ում:

**36:5 «Կորիս»** Ես պարզապես ընտրել են անուններից մեկը, որը կիրառվում է երկու տարբեր անգամներ, որպեսզի ցույց տամ այս երկու ազգաբանությունների մանրակրկիտ կապը իրականում հասկանալու խնդիրը: Ոմանք ասում են, որ ցանկում գոյություն ունեն երկու տարբեր Կորիսեր՝ մեկն այստեղ հ. 5-ում, իսկ մյուսը՝ հ. 16-ում: Սակայն Ռաշին ասում է, որ նրանք կապված են այն փաստով, որ մինևույն անձնավորությունը առնում է իր հոր կնոջը: Սա ցույց է տալիս հրեական տրամադրվածությունը Եսավի դեմ:

Ռաբբիական մեկնաբանությունն այս գլխի շուրջ շատ բացասական է և Եսավի սերնդաբանության մեջ տեսնում է սարսափելի արյունապղծություն և ընտանեկան խնդիրներ: Հնարավոր է սա ճիշտ է,

սակայն դա չի արտաբերվում տեքստում և այս բացասական գաղափարը կարող է ընդունվել միայն հիմնավորված ենթադրությամբ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 36:6-8**

**Ճշգրտված տեքստ:** <sup>6</sup>Եվ Եսավն առավ իր կանանց և տղաներին ու աղջիկներին, և իր տան բոլոր մարդկանց, և իր հոտերն ու բոլոր անասունները, և իր ամբողջ ունեցվածքը, որ Քանանի երկրում ձեռք բերեց և մի ուրիշ երկիր գնաց՝ իր եղբայր Հակոբի պատճառով, <sup>7</sup>որովհետև իրենց ունեցվածքը շատ էր, և չէին կարող միասին բնակվել. և երկիրը, որտեղ նրանք պանդուխտ էին, ի վիճակի չէր նրանց բավարարելու՝ նրանց հոտերի պատճառով: <sup>8</sup>Այսպես Եսավը Սեիր լեռում բնակվեց. Եսավը Եղովմն է:

**36:6 «Եսավն առավ իր կանանց և տղաներին ...և մի ուրիշ երկիր գնաց՝ իր եղբայր Հակոբի պատճառով»** Այս բաժանման պատճառը նշված է գլուխ 36-ում, որ ավելի մեծ արոտավայրի անհրաժեշտությունն էր (տես՝ հ. 7): Սակայն աստվածաբանորեն դա կարծես թե կապված է այն փաստի հետ, որ Հակոբն էր իրական ժառանգորդը (այսինքն՝ Իսահակի օրհնությունը) Պաղեստինյան երկրի և երբ նա վերադարձավ, ժառանգեց իր հոր Իսահակի հոտերը որպես իր սեփականը:

**36:8 «Այսպես Եսավը Սեիր լեռում բնակվեց. Եսավը Եղովմն է»** Շատ հավանական է, որ Հակոբի բացակայության տարիներին Եսավը իր հոտերը Սեիրից տեղափոխում էր հետ դեպի Քանան, տարվա տարբեր եղանակներին և այս պատմությունը պարզապես արձանագրում է, որ նա մնաց Սեիրում (տես՝ 32:3): Սակայն սա անհայտ է: Սեիր լեռը դարձավ Եղովմն ազգի ավանդական անունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 36:9-14**

**Ճշգրտված տեքստ:** <sup>9</sup>Եվ սրանք են Եղովմացիների հայր Եսավի ծնունդները Սեիր լեռան վրա: <sup>10</sup>Եսավի որդիների անունները սրանք են՝ Եսավի կնոջ՝ Ադդայի որդին՝ Եղիփազը, Եսավի կնոջ՝ Բասեմաթի որդին՝ Ռագուելը, <sup>11</sup>և Եղիփազի որդիներն են Թեմանը, Օմարը, Սեփովը, Գոթամը և Կենեզը: <sup>12</sup>Եվ Թաման Եսավի որդի Եղիփազի հարճն էր, որ Եղիփազի համար Ամադեկին ծնեց: Եսավի կին Ադդայի որդիները սրանք էին: <sup>13</sup>Ռագուելի որդիները սրանք են՝ Նահաթ, Չարա, Սամմա ու Մեգա: Սրանք էին Եսավի կին Բասեմաթի որդիները: <sup>14</sup>Եսավի կին Սեբեգոնի աղջկա Անայի աղջիկ Ողիբամայի որդիները սրանք են. և Եսավի համար ծնեց Հեուսին և Հեզոմին և Կորիսին:

**36:10 «Եսավի որդիների անունները սրանք են»** Եսավի որդիների կրկնվող ցանկից ակնհայտ է, որ այս գլուխը բաժանված է մի քանի իրարից տարբեր սերնդաբանական փաստաթղթերի (տես՝ 36:4-5 գրառումը):

**36:11 «Եղիփազի որդիները»** Շատ քննարկումներ են տեղի ունեցել այն հարցի շուրջ, թե արդյոք այս մարդը այն նույն Եղիփազն է, որ նշվում է Հոբի գրքում: Կարծես թե ինչ-որ առումով հավաստիություն կա սրա մեջ Հուս քաղաքի պատճառով (այսինքն՝ մի որդի, որին անվանեցին Հուս), որը նշվում է հ. 28-ում: Եղովմը հայտնի էր իր իմաստուն մարդկանցով, հատկապես Թեման քաղաքը: Այս երկու ապացույցները մատնացույց են անում Եղովմը որպես Հոբի ծննդավայր: Արդյոք Եղիփազը Հոբի այն նույն «ընկերն» է, թե ոչ, հայտնի չէ:

**36:12 «Թաման Եսավի որդի Եղիփազի հարճն էր, որ Եղիփազի համար Ամադեկին ծնեց»** Նա այստեղ հայտարարվում է որպես հարճ ըստ երևույթին «ամադեկացիներ» (տես՝ Ելից 17; 2 Օրինաց 25:17,19; 1 Թագավորաց 15) կոչվող իսրայելացիների ամենակատարի թշնամիների մայրը լինելու պատճառով: Այն նվաստացնող նպատակով է գրված, քանի որ միակ որդին է, որ ծնվել է հարճից և նշված է այս ազգաբանության ցանկում:

**36:14 «Եսավի կին Ողիբամայի որդիները»** Շատ քննարկումներ են տեղի ունեցել այն հարցի շուրջ, թե ինչու է այս մի կնոջ որդիները նշվում թոռների հետ միասին: Ոմանք ասում են, որ սա իր երեխաներին թոռների մակարդակին հասցնելու համար է, այսինքն՝ ավելի շուտ նվաստացնող հայտարարություն է այս կնոջ որդիների համար: Հավանաբար այն կապ ունի ժառանգության իրավունքների հետ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 36:15-19**

<sup>15</sup>Սրանք են Եսավի որդիների իշխանները՝ Եսավի անդրանիկ Եղիփազի որդիները՝ Թեման իշխանը, Օմար իշխանը, Սեփով իշխանը, Կենեզ իշխանը, <sup>16</sup>Կորիս իշխանը, Գոթամ իշխանը, Ամադեկ իշխանը: Սրանք են Եղովմի երկրում Եղիփազի իշխանները. սրանք Ադդայի որդիներն էին: <sup>17</sup>Եվ Եսավի որդի Ռագուելի որդիները սրանք են՝ Նահաթ իշխանը, Չարա իշխանը, Սամմա իշխանը, Մեգա իշխանը: Սրանք են Եղովմի երկրում Ռագուելի իշխանները. սրանք Եսավի կնոջ՝ Բասեմաթի որդիներն էին: <sup>18</sup>Եվ սրանք են Եսավի կնոջ՝ Ողիբամայի որդիները՝ Հեուա իշխանը, Հեզոմ իշխանը, Կորիս իշխանը, սրանք են Եսավի կնոջ՝ Անայի աղջիկ Ողիբամայի իշխանները: <sup>19</sup>Սրանք են Եսավի, այսինքն՝ Եղովմի որդիները, և սրանք են նրանց իշխանները:

**36:15-19** Սա այն ցեղերի առաջնորդների ցանկն է, որոնք սերվել են Եսավից: «Ցեղապետ» տերմինը (BDB 49 II) երբայերեն է «հազար» բառի համար (BDB 48 II), որը կիրառվում է՝

1. ընտանիքի կամ տոհմի միավորի համար, Հեսու 22:14; Դատ. 6:15; 1 Թագ. 23:23; Չար. 9:7
2. ռազմական միավորի համար, Ելից 18:21,25; 2 Օր. 1:15
3. բառացի հազարի համար, Ծննդ. 20:16; Ելից 32:28
4. որպես խորհրդապատկեր, Ծննդ. 24:60; Ելից 20:6 (2 Օր. 7:9; Երեմ. 32:18)
5. ուզարտական (համանման սեմական լեզու), միևնույն բաղաձայնները ինչպես *alluph*, որը նշանակում է «ցեղապետ» (տես՝ Ծննդ. 36:15): Սա հնարավոր է նշանակում է, որ ըստ Թվոց 1:39-ի Դանում կային 60 ցեղապետներ՝ իշխաններ և 62,700 տղամարդիկ: Խնդիրն այն է, որ ըստ երևույթին եղել են չափից ավելին իշխաններ որոշ ցեղերում առկա մարդկանց թվի համեմատ:

ՀԿ-ի թվերի հետ կապված խնդիրներից մեծամասնությունը կարելի է բացատրել այս երբայերեն բառերից մի քանիսի թարգմանության մեջ մեր անվստահությամբ: Եսավի որդիներից շատերը նշված են իշխանների այս ցանկում, որը ցույց է տալիս, թե ինչպես է նրա ընտանիքն այս աշխարհագրական տեղանքի վրա կառավարել:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 36:20-30**

<sup>20</sup>Եվ այն երկրում բնակվող քոռեցի Սեիրի որդիները սրանք են՝ Ղոտան, Սոբաղը, Սեբեգոնը, Անան, <sup>21</sup>Դիսոնը, Եսերը և Դիսան: Սրանք են Սեիրի որդիները՝ քոռեցի իշխանները Եղովմի երկրում: <sup>22</sup>Ղոտանի որդիներն են Քոռին, Հեմամը և Ղոտանի բույր Թամման: <sup>23</sup>Սոբաղի որդիները սրանք են՝ Գադուվանը և Մանաբաթը և Գեբաղը, Սեփովը և Օնամը: <sup>24</sup>Եվ Սեբեգոնի որդիները սրանք են՝ Այիան և Անան (սա այն Անան է, որ իր հոր՝ Սեբեգոնի էջերն անապատում արածեցնելիս ջերմուկ գտավ): <sup>25</sup>Սրանք են Անայի որդիները՝ Դիսոնը և Անայի աղջիկ Ողիբաման: <sup>26</sup>Սրանք են Դիսոնի որդիները՝ Ամադան և Եսբան և Հեթրան և Քառան: <sup>27</sup>Սրանք են Եսերի որդիները՝ Բադդան և Չաավան և Ական: <sup>28</sup>Սրանք են Դիսանի որդիները՝ Հուսը և Առանը: <sup>29</sup>Սրանք են քոռեցիների իշխանները՝ Ղոտան իշխանը, Սոբաղ իշխանը, Սեբեգոն իշխանը, Անա իշխանը, <sup>30</sup>Դիսոն իշխանը, Եսեր իշխանը, Դիսան իշխանը. սրանք են քոռեցիների իշխանները՝ ըստ Սեիրի երկրում իրենց իշխանության տակ գտնվող գավառների:

**36:20** «Եվ այն երկրում բնակվող քոռեցի Սեիրի որդիները սրանք են» 2 Օինաց 2:12-ից իմանում ենք, որ Եսավի որդիները իշխում էին Եղովմի բնակիչների վրա, ինչպես որ Հակոբի որդիները Քանանի բնակիչների վրա: Սակայն նաև տեսնում ենք, որ այս երկու խմբերի միջև գոյություն ունեն խնամիական կապեր: Հայտնի չէ, թե այս ամուսնական կապերն արդյունք էին ցեղերի միջև եղած սկզբնական խառնուրդի, թե այս մարդկանց պարտության մատնելուց հետո նրանց կանանց որպես ավար վերցնելու արդյունքն էր:

**36:24** «Եվ Սեբեգոնի որդիները սրանք են ... որ իր հոր՝ Սեբեգոնի էջերն անապատում արածեցնելիս ջերմուկ /տաք ջրի աղբյուրներ/ գտավ» «Տաք աղբյուրներ» երբայերեն թարգմանված բառը (BDB 411) դժվար է սահմանել: Ես ուզում եմ սա օգտագործել որպես օրինակ այն դժվարությունների, որ հանդիպում ենք ՀԿ-ի որոշ հատվածներ հասկանալ փորձելիս, հատկապես այն հատվածները, որոնք նկարագրվում են հազվադեպ հանդիպող տերմիններով:

1. այս տերմինը կիրառվում է Երբայերեն Աստվածաշնչում միայն այստեղ
2. Սեպտուագինտայում այս տերմինը պարզապես գրված է տառացիորեն նույնը և թարգմանված չէ
3. Վուլգատայում այն թարգմանված է որպես «տաք աղբյուրներ» (տես՝ REB), որը գիտենք, որ առկա են այս աշխարհագրական տարածքում

4. որոշ թարգմանություններ հավատում են, որ սա վերաբերում է «իժեր» տերմինին, որոնք նույնպես առկա են այս տարածքում
5. Փեշիթան փոխում է բաղաձայնները “ymm” (ܡܡ) դեպի “mym” (ܡܡ), որը նշանակում է «ջուր» (տես՝ NKJV)
6. ռաբբիներն ասում են, որ «ջորիներ» բառի համար (տես՝ KJV, ASV, NEB) մի շատ նմանատիպ տերմինի մասին է այստեղ խոսվում, քանի որ այն խորհրդապատկերում է կամ այլաբանորեն ասում են, որ այս ցեղը ոչ մի ավարտ՝ արդյունք չունեցավ, քանի որ ջորիները չեն կարող վերարտադրվել:
7. Սամարացիների Հնգամատյանը փոխում է բառը դարձնելով *Emim*, որը կիրառվում է 2 Օր. 2:10-ում հսկաների համար:

Թարգմանությունների մեջ նմանատիպ բազմազանությունը ցույց է տալիս այսպիսի հազվադեպ երբայերեն տերմինները հասկանալի փորձելու խնդիրը: Չգույշ եղեք, որպեսզի չխնձվեք նմանատիպ մանրութներում, որպեսզի այն չազդի այս գրական բաժնի՝ հատվածի գլխավոր ճշմարտության կամ ճշմարտությունների վրա: Դրանք հետաքրքիր են, սակայն նշանակալի չեն:

**36:25** Նկատելք, որ Եսալի կանանցից մեկի անունը՝ Ողիբամա, այստեղ նորից է կիրառվում Ադդայի դտեր հետ կապված (տես՝ հ. 2): Սա մեծ խնդիրների առարկա է դարձել մեկնաբանների համար: Ամբիոն Մեկնաբանության գիրքն ասում է, որ սա մեկ ուրիշ անձ էր, սակայն Եսալի կնոջ հոր՝ աներոջ զարմուհին էր: Ընտանիքների, տարածաշրջանների, շրջանների և միևնույն ժամանակաժրջանների մեջ անունները կրկնվող են՝ նմանօրինակ: Հաճախ մի քանի մարդիկ միևնույն անունն են կրում: Միակ տարբերակը, որ կարող ենք նրանտ զանազանել, դա նրանց հայերով է:

**36:26 «Դիսոն»** Երբայերեն տեքստը տալիս է «Դիսան», սակայն 1 Մնաց.1:41-ի պատճառով շատ թարգմանություններ փոխել են այս տերմինը: Կա ևս մեկ ժառանգորդ այս նույն «Դիսոն» անունով հ. 3-ում կամ «Դիսան»՝ 1 Մնաց. 1:42-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 36:31-39**

<sup>31</sup>Եվ սրանք են այն թագավորները, որ Եդովմի երկրում թագավորեցին՝ նախքան Իսրայելի որդիների վրա որևէ թագավորի իշխելը: <sup>32</sup>Եվ բեովրի որդի Բաղան թագավորեց Եդովմում, և նրա քաղաքի անունը Դաննաբա էր: <sup>33</sup>Երբ Բաղան մեռավ, նրա փոխարեն թագավորեց բուրացի Չարայի որդի Հովաբը: <sup>34</sup>Եվ Հովաբը մեռավ, և նրա փոխարեն թագավորեց թեմանացիների երկրից Հուսամը: <sup>35</sup> Եվ Հուսամը մեռավ, և նրա փոխարեն Բաղադի որդի Ադադը թագավորեց՝ Մովաբի դաշտում մադիանացիների կոտորողը. նրա քաղաքի անունը Ավիթ էր: <sup>36</sup>Երբ Ադադը մեռավ, նրա փոխարեն մասրեկացի Սամադան թագավորեց: <sup>37</sup> Եվ Սամադան մեռավ, և նրա փոխարեն Գետի մոտ գտնվող Ռոբովթից Սավուդը թագավորեց: <sup>38</sup>Եվ Սավուդը մեռավ, և նրա փոխարեն Աքրոբորի որդի Բաադանանը թագավորեց. Աքրոբորի որդի Բաադանանը մեռավ ու նրա փոխարեն Ադադը թագավորեց: <sup>39</sup>Նրա քաղաքի անունը Փոգով էր . և նրա կնոջ անունը Մեաբեել էր, որ Մեզաաբի աղջկա՝ Մատրեթի աղջիկն էր:

**36:31 «Եվ սրանք են այն թագավորները, որ Եդովմի երկրում թագավորեցին՝ նախքան Իսրայելի որդիների վրա որևէ թագավոր իշխելը»** Այս համարը ՀԿ-ի մեկնաբանների մեջ խոշոր վիճարանությունների առիթ է եղել: Քանի որ նշված է Իսրայելի թագավորներ խոսքը, տպավորություն է ստեղծվում, որ սա գրվել է շատ ավելի ուշ ժամանակաշրջանում, երբ Իսրայելը թագավորներ ուներ: Սա կարծես թե սկնարկում է, որ Ծննդոցը, եթե չի գրվել ավելի ուշ ժամանակներում, ապա առնվազն խմբագրվել է հետագայում: Նրանք, որ կառչում են փաստաթղթային ապացույցներից (չորս տարբեր ապագա հեղինակներ, J.E.D.P.) սա օգտագործում են որպես հիմնավոր վկայություն, որ Մովսեսը չի հանդիսանում Հնգամատյանի հեղինակը: Նրանք, ովքեր պնդում են, որ Մովսեսն է հեղինակը, ասում են, որ սա մարգարեություն է թագավոր ունենալու օրերի վերաբերյալ: Մենք պետք է ընդունենք, որ Իսրայելի համար Ծննդ. 49:10; Թվոց 24:7,17; 2 Օր. 17:14-20-ում մարգարեացվել էր, որ թագավոր է ունենալու: Ինձ համար պարզ է, որ ինչ-որ մեկը խմբագրել է Մովսեսի գրերը, լինի դա Երեմիան, Եզրասը, թե մարգարեների դպրոցներից որևէ մեկը, հայտնի չէ, սակայն նմանատիպ հակիրճ խմբագրական մեկնաբանությունները լրջորեն չեն ազդում Հնգամատյանի Մովսիսական հեղինակության վրա: Տե՛ս Ներածություն, Հեղինակը, Հատոր 1Ա. «Ինչպես ամեն բան սկսվեց», Ծննդոց 1-11:

**36:32 «Բեովրի որդի Բաղան»** Այս Բաղա անվան բաղաձայնները (BDB 118) նման են Բաղամ անվան համար կիրառվող բաղաձայններին, որը նույնպես Բեովրի որդի էր կոչվում (BDB 129): Սրանք այն միակ



երկու տեղերն են, որտեղ նշվում է այս հոր անունը (տես՝ Թվոց 22-24): Ընդունել, որ այս մարդիկ միևնույն անձիք են, անկարելի է, սակայն այս սերնդաբանական ցանկերում ոչինչ էլ հստակ հայտնի չէ:

**36:37 «Եփրատ Գետը»** «Գետի» համար երբայերեն այս տերմինը (BDB 625) կիրառվում է շատ դեպքերում Եփրատի վերաբերյալ (այսինքն՝ 31:21): Սակայն այս ենթատեքստում սա պետք է որ վերաբերի տեղի որևէ գետի, քանի որ չկա պատմական փաստաթուղթ Եսավի ազգատոհմից որևէ թագավորի վերաբերյալ, որը երբևէ թագավորել է Միջագետքում:

**36:39** Համար 39-ում մի քանի կանանց անուններ նշելու պատճառով Օլբրայթը (հայտնի ամերիկացի հնագետ), պնդում է, որ Եդովմում մայրապետական թագավորություն էր զարգանում: Քանի որ ակնհայտ է, որ այս թագավորները նախորդող թագավորների որդիներն էին և քանի որ նշվում են միայն կանայք, ապա դա հավանական է, սակայն չկան պատմական ապացույցներ:

❖ **«Ադադ»** Մագորեթիկ Տեքստը նշում է “Hadar” (BDB 214): Սակայն 1 Մնաց. 1:50-ում այն հնչում է «Ադադ»: Ադադը (BDB 212, տես՝ 3 Թագ. 11:14,17,21,25) դարձավ Սիրիայի թագավորների համար ընդհանուր տիտղոս, սակայն այս դեպքում ակնհայտ է, որ Սիրիային չի վերաբերում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 36:40-43**

**<sup>40</sup>Սրանք են Եսավի իշխանների անունները՝ ըստ իրենց տոհմերի և իրենց բնակավայրերի անունների՝ Թամնա իշխան, Գադուա իշխան, Հեթաթ իշխան,<sup>41</sup>Ողիբամա իշխան, Էլա իշխան, Փինոն իշխան,<sup>42</sup> Կենեզ իշխան, Թեման իշխան, Մաբգար իշխան, Մագեդիել իշխան, Իրամ իշխան: <sup>43</sup>Սրանք են Եդովմի իշխանները՝ ըստ իրենց բնակավայրերի՝ իրենց տիրույթների երկրում. սա Եսավն է՝ եդովմացիների հայրը:**

**36:40 «Սրանք են Եսավի իշխանների անունները»** Սա կարծես թե շատ նման է ավելի շուտ նշված իշխաններին, սակայն այս հատուկ խումբը նշանակված էր իրենց տեղացիների կողմից:

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեգրւյց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է մի ամբողջ գլուխ տրամադրվել Եսավի սերնդաբանությանը:
2. Ինչո՞ւ է այսքան խառնաշփոթ նրա կանանց ցանկում:
3. Ինչո՞ւ են այս գլխում արձանագրված հինգ թվացյալ տարբեր ցանկեր:
4. Համառոտ նշեք Եսավի և Իսրայելի սերունդների միջև փոխհարաբերությունը:
5. Բացատրե՛ք քետացի, իսևացի և քոռեցի տերմինների միջև եղած կապը:

## ԾՆՆԳՈՑ 37

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հովսեփի երազը	Հովսեփի փառքի երազները	Հովսեփը գերության է վաճառվում	Հովսեփն ու իր եղբայրները	
37:1-2ա	37:1-4	37:1-2ա	37:1-2ա	Հովսեփն ու իր եղբայրները
37:2բ-4		37:2բ-4	37:2բ 37:3-4	37:2 37:3-4
37:5-8	37:5-8	37:5-8	37:5-7 37:8	37:5-11
37:9-11	37:9-11	37:9-11	37:9 37:10-11	
	Հովսեփին ծախում են եղբայրները		Հովսեփը վաճառվում է և տարվում Եգիպտոս	Հովսեփին ծախում են եղբայրները
37:12-14	37:12-17	37:12-14ա	37:12-13ա 37:13բ 37:14ա	37:12-14
		37:14բ-24	37:14բ-15	
37:15-17				37:15-17
Հովսեփի դեմ դավադրություն			37:16 37:17	
37:18-24	37:18-22		37: 18-20 37:21-24	37:18-20 37:21-25ա
	37:23-28			
37:25-28		37:25-28	37:25-28	37:25բ-27 37:28-30
37:29-36	37:29-36	37:29-30	37:29-30	
		37:31-32	37:31-32	37:31-35
		37:33-35	37:33-35	
		37:36	37:36	37:36

# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգրով մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ԵՆԹԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այստեղ սկսվում է Հակոբի և նրա ընտանիքի (առավել ցայտուն՝ Հովսեփի) պատմությունը Եգիպտոս իջնելիս, որը գերակշռելու է Ծննդոց 37-50 գլուխներում, բացառությամբ երկու կարճ մեջբերումներով, որպես փակագծեր՝

1. Հուդայի և Թամարի պատմությունը (տես՝ Ծննդոց 38)
2. Հակոբի օրհնությունը իր ցեղերին (տես՝ Ծննդոց 49)

Բ. Այս գաղթը դեպի Եգիպտոս և դրա հետևանքները մարգարեացված էին Ծննդ. 15:13-16-ում:

Գ. Հովսեփի պատմությունը Ծննդոցի այլ պատմական իրադարձություններից:

1. ՅԱՀՎԵՆ չի հայտնվում անմիջապես Հովսեփին (ոչ էլ հրեշտակները)
2. պատմությունը երկար է մի քանի գլուխ շարունակ մի շարք դավադրություններով
3. ՅԱՀՎԵՆ գործում է ծածուկ, գաղտնի, աստավածաբանորեն (այսինքն՝ 3:15-17-ի «մարդը»)
4. աշխարհագրական տեղանքը փոխվում է Ուրից, Խառանից, Քանանից դեպի Եգիպտոս

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:1-2ա

<sup>1</sup>Եվ Հակոբը բնակվում էր այն երկրում, որտեղ իր հայրը պանդուխտ էր՝ Քանանի երկրում:  
<sup>2</sup>Սրանք են Հակոբի ծնունդները .

**37:1** Համար 1-ում գտնվող արտահայտության պատճառով, որը կարծես թե Ծննդոց գրքի հեղինակի կողմից կիրառվող մի կերպ է, որով բաժանում է իր գիրքը, շատ մեկնաբաններ հավատում են, որ հ. 1 պետք է լիներ գլուխ 36-ում: Համար 1-ը ի հակադրություն Եսայի բնակության վայրի այժմ տալիս է Հակոբի աշխարհագրական բնակավայրը:

❖ «այն երկրում, որտեղ իր հայրը պանդուխտ էր» Սա Աբրահամին տրված խոստման մի մասն էր (Ծննդոց 12,15,17; 28:4): Քոչվորի կյանքը և խոստացված նպատակակետը հավատքի քայլեր էին:

**37:2** «Սրանք են Հակոբի ծնունդները» Սա պարբերաբար կրկնվող արտահայտություն է, որը նշում է Մովսեսի գրքի տարբեր բաժինները (տես՝ 2:4; 5:1; 6:9; 10:1; 11:10,27; 25:12,19; 36:1,9 և 37:2): Հայտնի չէ, թե այս արտահայտությունը (կամ քոլոֆոնը) մատնացույց է անում դեպի առաջ, թե հետ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:2բ-4**

**Չնվսեփը տասնյոթ տարեկան էր. իր եղբայրների հետ հոտերն էր արածեցնում, և պատանին իր հոր կանանց՝ Բաղդայի որդիների և Չեղփայի որդիների հետ էր. և Չնվսեփը նրանցից վատ լուրերը բերում էր հորը: Յրդ, Իսրայելն իր բոլոր որդիներից ամենաշատը Չնվսեփին էր սիրում, որովհետև նա իր ծերության որդին էր. և բազմագույն պատմուճան շինեց նրա համար: Եվ երբ նրա եղբայրները տեսան, որ իրենց հայրը նրան իր բոլոր եղբայրներից ավելի է սիրում, ատեցին նրան և չէին կարողանում խաղաղությամբ խոսել նրա հետ:**

❖ «**Չնվսեփը տասնյոթ տարեկան էր**» Շատ կարևոր է Չնվսեփի տարիքը իր եղբայրների կողմից գերության վաճառվելու ժամանակ, քանի որ հետագայում համեմատելու ենք իր տարիքը Փարավոն առջև կանգնելու ժամանակ՝ Ծննդոց 41:46 (30 տարեկան): Նրա վերջնական տարիքը տրված է Ծննդ. 50:26-ում (110 տարեկան):

❖ «**պատանին**» Այս տերմինը (BDB 654 II) կարող է կիրառվել «սովորող» կամ «աշակերտ» իմաստով (տես՝ Ելից 33:11, որտեղ այն կիրառվում է Մովսեսի հետ Հեսու փոխհարաբերության համար): Նաև հնարավոր է, որ Բաղդայի և Չեղփայի որդիները նույնպես աշակերտներ էին: Չնայած նրանք դաշտում էին և հովվություն էին անում, նրանք հոտերի համար պատասխանատվություն չէին կրում:

❖ «**Բաղդա**» Նա Ռաբելի աղախինն էր: Ոմանք համարում են, որ Չնվսեփը նրա որդիների հետ հավասար մեկն էր, քանի որ հավանաբար Ռաբելի մահից հետո Բաղդան էր նրան մեծացնում: Ծննդ. 30:5-7-ից գիտենք, որ նրա մյուս որդիներն էին Դանը և Նեփթադիմը:

❖ «**Չեղփայի որդիները**» Նա Լիայի աղախինն էր և նրա որդիները թվարկված են Ծննդ. 30:9-13-ում, որ Գադն ու Ասերն էին:

❖ «**և Չնվսեփը նրանցից վատ լուրերը բերում էր հորը**» Այս լուրերի իրական բնույթը և թե ում էր դրանք վերաբերում անհայտ է (մինևնույն բառը կիրառվում է տասը լրտեսների համար՝ Թվոց 14:37-ում), սակայն Չնվսեփի միամտությունը այստեղ քողարկված է: Գոյություն ունեն մի շարք գործողություններ, որոնք պատճառ հանդիսացան, որ նրա եղբայրներն ատեն իրեն:

1. վատ լուրերը, հ. 2
2. հատուկ պատմուճանը՝ հ. 3-4, որ Հակոբը նվիրեց
3. իր ցուցամոլ երազները, որ արձանագրված են հհ. 5-10-ում

**37:3 «Արդ, Իսրայելն իր բոլոր որդիներից ամենաշատը Չնվսեփին էր սիրում»** Հակոբի անունը փոխվել էր «Իսրայելի» Հաբբոկի ջրանցքի մոտ հրեշտակի հետ գոտեմարտելուց հետո (տես՝ Ծննդ. 32:22-32): Այս անունը մի քանի հավանական ստուգաբանություններ ունի: Կարծում են Ծննդոց 32-ի բովանդակությանը համապատասխանում է «թող *էլը* պահպանի» իմաստը: Տե՛ս Հատուկ Թեմա 32:28-ում:

Հակոբը պետք է, որ լավ հասկանար նախասիրությունների հետ կապված խնդիրների մասին իր մանկությունից, սակայն ըստ երևույթին նա դա մոռացության էր մատնել: Նրա աչառությունը հարթակ է պատրաստում Չնվսեփի եղբայրների համար, որպեսզի նրան մատնեն՝ անարգեն:

❖ «**որովհետև նա իր ծերության որդին էր**» Սա ինչ-որ տեղ տարօրինակ արտահայտություն է, քանի որ Բենիամինն էր Ռաբելից ծնված նրա ամենափոքր որդին: Դա կարող է նշանակել, այն քանից հետո, երբ նա շատ ուրիշ որդիներ ունեցավ: Արևմտյան բառից կարչելու հակվածությունը մեծ վտանգ է ներկայացնում հնագույն Մեմական տեքստերը մեկնաբանելիս: Ռաբբիները և Թարգումը սա դիտարկում են հակասություն և թարգմանում են որպես «տարեց մարդու իմաստություն ունեցող որդի»: Հաջորդող ենթատեքստը ցույց է տալու, որ իրականում այս արտահայտությունը սա նկատի չուներ:

❖

**NASB**

**NKJV**

**NRSV, REB**

**TEV**

**NJB**

**LXX**

**Peshitta**

«բազմագույն պատմուճան»

«շատ գույներով պատմուճան»

«թևքերով երկար հանդերձ»

«երկար հանդերձ ամբողջական թևքերով»

«զարդանախշ պատմուճան»

«բազմագույն վերարկու»

«երկար թևքերով ճոխ հանդերձ»

**JPSOA**

**«գարդարված պատմունան»**

Եբրայերեն այս տերմինի (BDB 509 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ 821) ստուգաբանությունը հայտնի չէ: Սովորաբար պատմունանը կարճաթև էր լինում, որը ձգվում էր մինչև տղամարդկանց կամ կանանց ծնկները, ծառայելով որպես հանդերձ: Կարծես թե այս հատուկ պատմունանը կամ ամբողջ երկարությամբ էր՝ ավերից մինչև կոճերը (BDB 821) կամ էլ բազմազույն (LXX): Երկու դեպքում էլ ակնհայտ էր, որ դա աշխատանքային հագուստ չէր: Մյուս միակ ակնարկն այս պատմունանին գրված է 2 Թագ. 13:18-ում, որտեղ Թամարը հագել էր նմանատիպ հանդերձ, որը ըստ նկարագրության պատշան էր հագնել միայն թագավորի կույս աղջիկներին, հետևաբար ակնարկում էր արքայական բնույթը: Հավանական է, որ Հովսեփն զգում էր, որ իր հայրը գիտեր, որ ինքն էր լինելու Խոստման որդին, քանի որ Ռուբենին որակագրկել էին այդ պաշտոնից Հակոբի հարճի հետ իր սեռական այլասերվածության, իսկ Ծնավոնն ու Ղևին՝ Մյուքեմում կոտարած կատարելու պատճառով (Ծննդոց 34, տես՝ Ծննդ. 35:22):

*The IVP Bible Background Commentary* (էջ՝ 68) գրքից՝

«Այս շրջանի եգիպտական նկարները պատկերում են գեղեցիկ հագնված քանանացիներին, որոնք կրում են երակարաթևք, ասեղնագործված հանդերձներ՝ եզրագծված շարժերով, որոնք անկյունագծով պարուրված էին գոտկատեղից մինչև ծնկները»:

**37:4 «նրա եղբայրները տեսան, որ իրենց հայրը նրան իր բոլոր եղբայրներից ավելի է սիրում»** Սա հող է պատրաստում եղբայրների համար, որ ատեն Հովսեփին:

❖ **«ատեցին»** Այս ԲԱՅԸ (BDB 971, KB 1338, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) կիրառվում է հհ. 4,5,8-ում, նաև նկատեք՝ Ելից 18:21; 20:5; 23:5; Ղևտ. 19:17; 26:17; 2 Օր. 5:9; 7:10,15; 12:31; 16:22; 19:11; 30:7; 32:41:



**NASB**

**NKJV, NRSV, LXX**

**TEV**

**NJB**

**REB**

**JPSOA**

**«ընկերական տերմիններով»**

**«խաղաղությամբ»**

**«ընկերական»**

**«քաղաքավարությամբ»**

**«կոպիտ խոսքերով»**

**«ընկերական խոսքով»**

Սա եբրայերեն *Շայմ* (BDB 1022) ԳՈՅԱԿԱՆՆ Է: Նրա եղբայրները նույնիսկ չէին կարողանում օգտագործել իրենց մշակույթին բնորոշ ողջույնը: Նրանք չէին կամենում, որ նա հանգիստ, առողջ և հաջողակ լիներ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:5-8**  
**5** Հովսեփը մի երազ տեսավ և իր եղբայրներին պատմեց, և նրանք ավելի ատեցին նրան: **6** Եվ ասաց նրանց. «Խնդրում եմ, ակա՛նջ որեք իմ այս երազին: **7** Ահա մենք դաշտում խրճեր էինք կապում, և ահա իմ խուրճը վեր կացավ, ուղիղ կանգնեց, և ահա ձեր խրճերը նրա շուրջը կանգնեցին ու իմ խրճին երկրպագեցին»: **8** Եվ նրա եղբայրներն ասացին նրան. «Իսկապե՛ս էլ թագավորելու ես մեզ վրա և իսկապե՛ս իշխելու ես մեզ վրա»: Եվ նրա երազների ու խոսքերի համար ավելի ատեցին նրան:

**37:5 «Հովսեփը մի երազ տեսավ»** Պետք է ընդգծել, որ մինչև այս պահը Ծննդոցում Աստված Իր կամքը փոխանցում էր երազների և տեսիլքների միջոցով (տես՝ 20:3; 28:12; 31:11,24): ՀՄԱ-ի ժողովուրդները հասկանում էին երազները որպես հավաստի հայտնության աղբյուր, որ տրվում էր աստվածներից: Հովսեփի երազները իր եղբոր վերքի վրա աղ լցնելու բնույթի երազներ էին, որոնք ցավեցնում էին նրանց զգացմունքները (տես՝ հհ. 19-20):

**37:7-8 «ձեր խուրճերը նրա շուրջը կանգնեցին ու իմ խրճին երկրպագեցին»** Սա ճիշտ Հովսեփի պատմունանի նշանակությունն ուներ: Այն իրականանում է Ծննդ. 42:6; 43:26 և 44:14-ում:

Համար 8-ը ունի քերականական առանձնահատկություններ (ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ միևնույն արմատից), որն արտահայտում է ուժգնություն:

- 1. իշխել, BDB 573, KB 590
- 2. կառավարել, BDB 605, KB 647

Միևնույն քերականական առանձնահատկությունը նաև կիրառվում է հ. 10-ում:

- 3. գործնականում գալ (և խոնարհվել), BDB 97, KB 112

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:9-11**

**<sup>9</sup>Եվ մի ուրիշ երագ էլ տեսավ ու իր եղբայրներին պատմեց այն ու ասաց. «Ահա մի երագ էլ տեսա, և ահա արեգակը, լուսինը և տասնմեկ աստղեր ինձ երկրպագում էին»:** <sup>10</sup>Եվ իր հորն ու եղբայրներին պատմեց, և հայրը հանդիմանեց նրան. **«Այս ի՞նչ երագ է, որ տեսել ես: Մի՞թե ես և քո մայրը, և քո եղբայրները իսկապես գալու ենք, որ մինչև գետին քո առաջ խոնարհվենք»:** <sup>11</sup>Եվ եղբայրները նախանձեցին նրան. **բայց հայրը մտքում պահեց այս խոսքը:**

**37:9** Այս երագը այլաբանորեն էէ Հովսեփի առաջնորդ դառնալու վերաբերյալ, որպես այս ընտանիքի համար ՅԱՀՎԵԻ մատակարարն ու փրկիչը: Այն փաստը, որ նրա մայրը (այսինքն՝ լուսինը) արդեն մահացած է, չի ազդում երագի գրական շեշտադրության վրա:

1. մարգարեական նախագուշացում, որ Աստված է վերահսկում պատմության
2. Հովսեփի միամտությունը
3. եղբայրներին իր դեմ տրամադրելու մի կերպ, որպեսզի ի գործ դնի եգիպտական ստրկության մեջ հայտնվելու Աստծո ծրագիրը

Ենթատեքստը կարող է աստարել այս մեկնություններից յուրաքանչյուրին: Հովսեփը այս պատմության մեջ գլխավոր հերոսը չէ: Գլխավոր հերոսը ՅԱՀՎԵՆ և Նրա հավիտենական, փրկարար ծրագիր է Իր նպատակների համար: Հովսեփը բարոյական անձ է, սակայն ինչ-որ տեղ միամիտ: Իսրայելը փրկվում է ՅԱՀՎԵԻ գործողությունների շնորհիվ և ոչ թե Հովսեփի կարողություններով:

**37:10 «և հայրը հանդիմանեց նրան»** Սա երբայերեն շատ խիստ տերմին է (BDB 172, KB 199 *Qal* ԱՆԿԱՏԱԲ), որը սկզբնապես նշանակում էր «աղաղակել» (տես՝ Երեմ. 29:27): Այն հաճախ է կիրառվում ՅԱՀՎԵԻ կողմից ազգերին հանդիմանելի (տես՝ Եսա. 17:13): Այն նույնիսկ կիրառվում է ՅԱՀՎԵԻ համար Սատանային հանդիմանելիս՝ Չաք. 3:2:

❖ **«մի՞թե ես և քո մայրը»** Մենք պետք է հիշենք, որ Ռաբել արդեն այս ժամանակ մահացած էր (տես՝ Ծննդ. 35:19): Ոմանք ենթադրում են, որ նա դեռ մտածում էր նրա մասին կամ սա վերաբերում է Լիային՝ Ռաբելի ավագ քրոջը, կամ Բաղդային, որը մեծացնում էր Հովսեփին:

**37:11 «եղբայրները նախանձեցին նրան»** ԲԱՅԸ (BDB 888, KB 1109, *Piel* ԱՆԿԱՏԱԲ) համազոր է «ատեցին» խոսքին (տես՝ հհ. 4,5,8):

Հ. 11-ի այս հատվածը միակցված է հ. 28 և 39:21 և 45:4-ի հետ որպես կոմբինացված մեջբերում Գործք 7:9-ի Ստեփանոսի քարոզի մեջ:

❖ **«բայց հայրը մտքում պահեց այս խոսքը»** Սա մեզ հիշեցնում է, թե ինչպես Մարիամն իր սրտում պահեց Հիսուսի վերաբերյալ խոսքերը (տես՝ Ղուկ. 2:19,51): Հակոբը գիտակցում էր, որ Աստված Իրեն շատ անգամներ երագներով հայտնել էր, որպեսզի հաստատեր այն մեկին, որը ստանալու էր նահապետական օրհնությունը: Ոչ միայն Հակոբը ուզում էր հավատալ դրան, այլ մինչև հիմա, պատմական դեպքերը կարծես թե թելադրում էին, որ Հովսեփն էր լինելու խոստացված գլուխը այս ուխտի ընտանիքի համար: Սակայն, հետագա գլուխներից իմանում ենք, որ Աստված երբեք չի հայտնվում անմիջապես Հովսեփին, ինչպես Նա արել էր Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, և որ Հուդայի ցեղն էր լինելու Մեխայի ճյուղը և ոչ թե Հովսեփինը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:12-14**

**<sup>12</sup>Եվ նրա եղբայրները գնացին իրենց հոր հոտերը Սյուբեմում արածեցնելու: <sup>13</sup>Եվ Իսրայելն ասաց Հովսեփին. «Ահա քո եղբայրները Սյուբեմում արածեցնում են. եկ քեզ նրանց մոտ ուղարկեմ»: Եվ նա ասաց. «Ահա ես»:** <sup>14</sup>Եվ ասաց նրան. **«Գնա՛, տես, քո եղբայրները առո՞ղջ են, և հոտերը ո՞ղջ են, և ինձ լուր բեր»:** Եվ նրան ուղարկեց Քեբեռնի հովտից, նա էլ Սյուբեմ եկավ:

**37:13 «Իսրայելն ասաց Հովսեփին»** Ստույգ թե ինչու Հովսեփի հայրը ուղարկեց նրան ստուգելու իր եղբայրներին, անհայտ է: Ոմանք պնդում են (1) որ նա փորձում էր վերամիավորել եղբայրներին կամ (2) քանի որ Հովսեփը նախկինում ամեն բան ճշգրտորեն տեղեկացնում էր նրան (տես՝ հ. 2), որ նա նորից այդպես կաներ իր եղբայրների գործերի և հոտերի լավ կամ վատ վիճակի վերաբերյալ:

Այս մասինց սկսած և այս գլխի մնացած հատվածում արձանագրված են մի շարք երկխոսություններ, որոնք տեղի են ունեցել Հակոբի և Հովսեփի միջև:

1. «եկ», BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. «ուղարկեմ», BDB 1018, KB 1511, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
3. «ես կզնամ, ահա ես», ԲԱՅ չկա, այլ ՀԿ-յան ընդունված արտահայտությունն է «ահա ես», որը NASB-ը տարգմանել է որպես «ես կզնամ»:
4. «զնա», BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. «տես», BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. «ինձ լուր բեր», BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**37:14 «և ինձ լուր բեր»** Հովսեփը սա նախկինում էլ անում էր՝ հ. 2:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:15-17**

**15**Եվ մի մարդ գտավ նրան, երբ դաշտում թափառում էր. այն մարդը նրան հարցրեց. «Ի՞նչ ես շրջում»: **16**Եվ նա ասաց. «Իմ եղբայրներին եմ փնտրում. խնդրե՛մ, ասա ինձ՝ նրանք ո՞րտեղ են արածեցնում»: **17**Եվ այն մարդն ասաց. «Այստեղից քոչեցին, որովհետև լսեցի, որ ասում էին . «Գնանք Դոթայիմ»: Հովսեփն իր եղբայրների հետևից գնաց և նրանց Դոթայիմում գտավ»:

**37:15-17 «մի մարդ գտավ նրան, երբ դաշտում թափառում էր»** Այս անանուն մարդը հայտում է Աստծո ներկայությունը այս ամբողջ իրադարձության մեջ (չնայած որ Նրա անունը տրված չէ): Արձանագրված է ստույգ, թե ինչ նպատակով: Քանի որ Շննդոցի այլ հատվածներում որտեղ հրեշտակները կոչվում են «մարդիկ» (այսինքն՝ գլուխ 18), հնարավոր է սա լինի հրեշտակ:

**37:17 «Դոթայիմ»** Այս անունը նշանակում է «երկու ջրհորներ» (BDB 206): Դոթայիմը գտնվում է Սիրիայից դեպի Եգիպտոս տանող գլխավոր առևտրական ճանապարհին: Քարտեզի վրա ուշադրություն դարձրեք, որ Քերբոնը, Սյուբեմը և Դոթայիմը այս ճանապարհի վրա գտնվող գլխավոր քաղաքներն են: Հետագայում աստվածաշնչյան պատմության մեջ, Աստված դարձյալ, այս վայրում ցույց է տալու Իր ներկայությունը (տես՝ 4 Թագավորաց 6):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:18-24**

**18**Երբ նրան հեռվից տեսան, մինչև նրա մոտենալը՝ դավ նյութեցին նրան սպանելու <sup>19</sup>և իրար ասացին . «Ահա գալիս է այն երազ տեսնողը: **20**Եվ հիմա եկե՛ք սպանենք նրան և փոսերից մեկի մեջ գցենք, և ասենք, թե մի չար գազան կերել է նրան, և տեսնենք, թե նրա երազներն ինչ կլինեն»: **21**Ռուբենը լսեց և նրանց ձեռքից ազատեց նրան՝ ասելով. «Չսպանենք նրան»: **22**Եվ Ռուբենն ասաց նրանց. «Արյուն մի՛ թափեք. նրան գցեցե՛ք այս գուրբը, որ անապատում է, և նրան ձեռք մի տվեք», որպեսզի նրան ազատեք նրանց ձեռքից, որ իր հորը վերադարձնեք: **23**Եվ եղավ՝ հենց որ Հովսեփն իր եղբայրների մոտ եկավ, մերկացրին Հովսեփին իր պատմուճանից, այսինքն՝ նրա վրայի բազմագույն պատմուճանից, <sup>24</sup>և առան նրան ու հորը գցեցին, հորը դատարկ էր, մեջը ջուր չկար:

**37:18 «նրան հեռվից տեսան»** Սա հավանաբար վերաբերում է նրա հոր կողմից տրված ակինառու պատմուճանին, որը ըստ երևույթին նա միշտ կրում էր:

❖ **«դավ նյութեցին նրան սպանելու»** Այս հազվադեպ ԲԱՅԸ (BDB 647, KB 699, *Hitphael* ԱՆԿԱՏԱՐ) համագոր է Սաղմ. 105:25-ի ատելություն բառին: Այս ԲԱՅԸ *Piel* արմատում կիրառում է ՅԱՀՎԵՆ ԹՎոց 25:18-ում մադիանացիների համար: *Qal* ԴԵՐԲԱՅԸ Մադաքիա 1:14-ում թարգմանվում է «խաբողը»:

Կայենի մարդասպանության մեղքը Աբելի դեմ (Շննդոց 4) դարձյալ հաստատվում է ընկած մարդկության կյանքում: Մարդու շահը արդեն իսկ բախտորոշ գործոն է:

**37:20 «մենք կասենք»** Տե՛ս հ. 32: Նրանք գիտակցաբար ծրագրում են ինչպես սպանեն նրան, ինչպես վարվեն իր դիակի հետ, և ինչպես ծածկեն իրենց գործողությունները հորից:

❖ **«և տեսնենք, թե նրա երազները ինչ կլինեն»** Հնարավոր է սա իրենց ժառանգություն ձեռք բերելու սեփական ցանկությունների անդրադարձող ակնարկ է, քանի որ վախենում էին, որ դա բաժին կնկներ Հովսեփին:

**37:21-22 «Ռուբեն»** Մենք չենք կարող վստահ լինել Ռուբենի ստույգ դրտապատճառի վերաբերյալ, սակայն ըստ արձանագրության, որ ունենք հ. 22-ի վերջում, կարծես թե ցույց է տալիս, որ նա պատասխանատվության զգացում ուներ որպես ավագ եղբայր պաշտպանելու իր կրտսեր եղբորը:

Հնարավոր է նա հույս ուներ, որ այս արարքով կարող էր վերականգնել իր ժառանգությունը Հակոբի միջոցով՝ ըստ Ծննդ. 35:22-ի: Կարծում են, որ նա իրոք ուզում էր փրկել Հովսեփին, որը կարելի է տեսնել հհ. 29 և 30-ում նրա ցուցաբերած արձագանքից: Այս դեպքը հստակ ցույց է տալիս, որ նա իր եղբայրների մեջ կորցրել էր իր ազդեցությունն ու առաջնորդի դիրքը:

Ուշադրություն դարձրեք Ռուբենի խոսքերին՝

1. «չսպանենք նրան», հ. 21, BDB 645, KB 697, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
2. «արյուն մի՛ թափեք», հ. 22, BDB 1049, KB 1629, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. «նրան զցեցե՛ք այս գուրբը», հ. 22, BDB 1020, KB 1527, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
4. «նրան ձեռք մի՛ տվեք», հ. 22, BDB 1018, KB 1511, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

Նկատե՛ք, որ Ռուբենի ծածուկ դրդապատճառը նշված է՝

1. որ փրկի նրան, BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ
2. որ իր հորը վերադարձնեք, BDB 996, KB 1427, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

**37:24 «և առան նրան ու հորը զցեցին»** Մենք կարող ենք այս պատանու կրած վիրավորանքից Ծննդ. 42:21-ում արձանագրված խոսքից, որը նկարագրում է նրա օգնության աղերսը:

❖ **«մեջը ջուր չկար»** Սա ըստ երևույթին չոր ջրամբար էր (ոչ թե ջրհոր, այլ ջրամբար), որը մեծ տարածում ուներ Պաղեստինի այս տարածաշրջանում: Ռաբբիներն ասում են, որ դրանք լի էին օձերով և կարիճներով, սակայն դա միայն ենթադրություն է:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:25-28**

**<sup>25</sup>Ապա նստեցին հաց ուտելու. և իրենց աչքերը բարձրացրին և տեսան, որ իսմայելացիների մի քարավան է գալիս Գաղաադից, և իրենց ուղտերը համեմունքով, բալասանով ու զմուռով բեռնած գնում էին, որ տանեն ցած՝ Եգիպտոս: <sup>26</sup>Հուդան ասաց իր եղբայրներին. «Ի՞նչ օգուտ, եթե մեր եղբորը սպանենք և նրա արյունը ծածկենք: <sup>27</sup>Եկե՛ք իսմայելացիներին ծախենք նրան, և մեր ձեռքը նրան չի դիպչի, որովհետև նա մեր եղբայրը, մեր մարմինն է»: Եվ նրա եղբայրները նրան լսեցին: <sup>28</sup>Եվ մադիանացի վաճառականները անցնում էին և Հովսեփին գուրբից քաշեցին, դուրս հանեցին և իսմայելացիներին ծախեցին Հովսեփին՝ քսան արծաթով. նրանք էլ Հովսեփին տարան Եգիպտոս:**

**37:25 «Ապա նստեցին հաց ուտելու»** Սա ցույց է տալիս եղբայրների քարսրտությունը Հովսեփի հանդեպ:

❖ **«իսմայելացիների մի քարավան է գալիս Գաղաադից»** Այս վաճառականներին նկարագրող կիրառված տերմինալոգիայի միջև կա անկայունություն (սա երևում է աղբյուրի քննադատների միջոցով, որոնք որպես ապացույց տալիս են բազմաթիվ աղբյուրներ):

1. հ. 25-ում նրանք կոչվում են իսմայելացիներ
2. հ. 28-ում նրանք կոչվում են մադիանացի վաճառականներ
3. հ. 28-ում, դարձյալ՝ իսմայելացիներ
4. հ. 36-ում նրանք կոչվում են մեդիանացիներ

Սրանք տարբեր անուններ են, որոնք վերաբերում են միևնույն խմբին ինչպես Դատ. 8:22,24 է ցույց տալիս: Նաև մադիանացիները և մեդիանացիները երկուսն էլ հանդիսանում էին նԱբրահամի որդիները, որոնք ծնվել էին Քետուրայից (տես՝ Ծննդ. 25:2), սակայն Մեդիանացիներ անվանումը հնարավոր է եղել է դայրական խնդիր (Մեդիանացի՝ מדיאנים և Մադիանացի՝ מדיאנים): Այս քարավանը հնարավոր է բաղկացած էր մի քանի տարբեր ընտանիքներից կազմված խմբերից կամ պարզապես տարբեր անուններով են դիմել միևնույն մարդկանց:

❖ **«իրենց ուղտերը բեռնած գնում էին ... որ տանեն ցած՝ Եգիպտոս»** Այս համեմունքները և հոտավետ բալասանները բնորոշ էին Եգիպտոս ներմուծելուն, քանի որ դրանք օգտագործվում էին (1) զմուռելու համար, (2) խնկարկելու համար, և (3) բժշկության համար: Գաղաադը (որտեղից և գալիս էին նրանք) հայտնի էր իր բալասաններով:



**37:26 «Հուդան ասաց իր եղբայրներին»** Մենք չգիտենք իրական դրդապատճառները Հուդայի ինչպես և չգիտենք Ռուբենին, սակայն կարծես թե նա փորձում էր փրկել իր եղբոր կյանքը սպանվելուց («նա մեր եղբայրն է», հ. 27), չնայած որ նպատակն ասվում է՝ (1) շահ ունենալ և (2) իրենց ձեռքերը անմեղ արյամբ չթաթախել (այսինքն՝ սպանություն)։

Եթե Հուդան փորձում է մահից փրկել իր եղբորը, ապա սա դրական հատկանիշ է բնութագրելու այն որդուն, որը դառնալու է Հիսուսի տոհմաճյուղը։ Եթե Հուդան գործում էր ըստ սահմանված պատճառների, ապա սա ցույց է տալիս, որ Աստծո նպատակները հիմնված չէին մարդու արժանիքի կամ արժեքների վրա (տես՝ Ծննդոց 38), այլ ՅԱՀՎԵԻ ամբողջ մարդկության համար հավիտենական փրկագործության ծրագրի (տես՝ Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5; տես՝ Հատուկ Թեմա . Բորի Ավետարանական Հակումները, 12:3-ում)։

**37:28 «Խամայելացիներին ծախեցին Հովսեփին՝ քսան սիկղ արծաթով»** Նկատելիք, որ «սիկղ» տերմինը շեղատառ է /հայերենում չկա/, որը նշանակում է, որ Եբրայերեն տեքստում բացակայում է, սակայն ենթադրվում է այդպես (տես՝ 20:16; Դատ. 17:2-4,10)։ Դա վերաբերում է փողի կշռին։ Ղևտ. 27:5-ից իմանում ենք, որ երիտասարդ ստրուկները վաճառվում էին քսան սիկղ արծաթով, մինչ ավելի տարեցները՝ երեսուն սիկղով (տես՝ Ելից 21:32 կամ «հիսուն սիկղով» (տես՝ Ղևտ. 27:3))։ Նաև գիտենք, որ ստրկավաճառությունը Եգիպտոսի մշակույթի մի մասն էր կազմում պատմության այս հատվածում։

Որո՞՞մ մեկնաբաններ մեկնում են «նրանք» որպես Մադիանացի վաճառականները Հովսեփին դուրս հանեցին գուրից և վաճառեցին խամայելացիներին՝ հ. 25-ում։ Նրանք պնդում են, որ դա արվել է առանց Հակոբի որդիների գիտության և հետևաբար սա բացատրում է հհ. 29-30 (Ռուբենի արձագանքը, երբ տեսնում է, որ Հովսեփը գուրի մեջ չէ)։ Սակայն այս սցենարը չի բացատրում հ. 27-ը։ Հաճախ արդի քննադատների միջոցներն ասում են ավելի իրենց և իրենց գրական ենթադրությունների մասին, քան հնագույն եբրայական պատմական իրադարձությունն է ասում։

❖ **«Հովսեփին տարան Եգիպտոս»** Չավելշտալի է, որ այն ճանապարհը, որով Հովսեփին տարան, մի քանի մղոն հեռավորության վրա էր իր հոր վրանից։ Սակայն Աստծո կամքն էր, որ Հովսեփը գնար Եգիպտոս։

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 37:29-36**

<sup>29</sup>Եվ Ռուբենը վերադարձավ գուրի մոտ, և ահա Հովսեփը գուրի մեջ չէր, և պատառոտեց իր հանդերձանքը, <sup>30</sup>վերադարձավ իր եղբայրների մոտ ու ասաց. «Տղան չկա։ Ես ո՞ւր գնամ»։ <sup>31</sup>Եվ վերցրեցին Հովսեփի պատմուճանը, այծերից մի նոխազ մորթեցին ու պատմուճանը թաթախեցին արյան մեջ։ <sup>32</sup>Եվ ուղարկեցին բազմագույն պատմուճանը, բերին իրենց հոր մոտ ու ասացին. «Սա գտել ենք, հիմա ճանաչի՛ր, թե արդյոք սա քո որդու պատմուճանն է»։ <sup>33</sup>Եվ նա ճանաչեց այն ու ասաց. «Իմ որդու պատմուճանն է. մի չար գազան կերել է նրան, Հովսեփին անպատճառ գիշատվել է»։ <sup>34</sup>Եվ Հակոբը պատռեց իր հագուստը և քուրձ հագավ իր մեջքի վրա և իր որդու համար շատ օրեր սուգ արեց։ <sup>35</sup>Եվ նրա բոլոր որդիներն ու նրա բոլոր աղջիկները վեր կացան նրան մխիթարելու, բայց նա մերժում էր մխիթարությունը և ասաց. «Ես սգալով կիջնեմ գերեզման՝ իմ որդու մոտ»։ Եվ նրա հայրը լացեց նրա համար։ <sup>36</sup>Իսկ մադիանացիները նրան Եգիպտոսում ծախեցին Փարավոնի ներքինի Պետափրես դահնապետին։

**37:29 «Ռուբենը վերադարձավ գուրի մոտ ... պատառոտեց իր հանդերձանքը»** Սա սգալու ավանդական նշանն էր (տես՝ 44:13)։ Հավելյալ սգալու նշաններ կարելի է տեսնել հ. 34-ում, երբ Հակոբն է տեղեկանում Հովսեփի կորստյան մասին։ Ռուբենը պետք է որ ներկա չլիներ այն պահին, երբ եղբայրները խոսում էին իրենց ծրագրի վերաբերյալ կամ երբ նրանք վաճառեցին Հովսեփին։

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԳԱԼՈՒԻ ԾԵՍԵՐԸ  
SPECIAL TOPIC: GRIEVING RITES**

Իսրայելացիները մի քանի տարբեր կերպերով էին արտահայտում իրենց վիշտը սիրելի մարդու մահվան կամ անձնական զոջման, ինչպես նաև հավաքական՝ ընդհանուր հանցանքների համար .  
1. պատռում էին հանդերձաները, Ծննդ. 37:29,34; 44:13; Դատ. 11:35; 2 Թագ. 1:11; 3:31; 3 Թագ. 21:27; Հոր 1:20

2. քուրձ էին հազնում, Ծննդ. 37:34; 2 Թագ. 3:31; 3 Թագ. 21:27; Երեմ. 48:37
3. հանում էին կոշիկները, 2 Թագ. 15:30; Ես. 20:3
4. իրենց ձեռքերը դնում էին գլխին, 2 Թագ. 13:19; Երեմ. 2:37
5. հող էին լցնում իրենց գլխին, Հեսու 7:6; 1 Թագ. 4:12; Նեեմ. 9:1
6. նստում էին գետնին, Ողբ 2:10; Եզեկ. 26:16 (պառկում էին գետնին, 2 Թագ. 12:16), Ես. 47:1
7. կուծքն էին ծեծում, 1 Թագ. 25:1; 2 Թագ. 11:26; Նեեմ. 2:7
8. սզում էին, 1 Թագ. 25:1; 2 Թագ. 11:26
9. կտրում էին իրենց մարմինը, 2 Օր. 14:1; Երեմ. 16:6; 48:37
10. ծոմ էին պահում, 2 Թագ. 1:12; 12:16,21; 3 Թագ. 21:27; 1 Մնաց. 10:12; Նեեմ. 1:4
11. ողբ էին երգում, 2 Թագ. 1:17; 3:31; 2 Մնաց. 35:25
12. ճաղատանում էին (մազերը պոկում կամ սափրում), Երեմ. 48:37
13. կարճացնում էին իրենց մորուքները, Երեմ. 48:37
14. ծածկում էին գլուխը կամ դեմքը, 2 Թագ. 15:30; 19:4

Սրանք ներքին զգացմունքների արտաքին նշաններն էին:

**37:30 «Ես ո՞ւր գնամ»** Ի՞նչ նկատի ունեւր Ռուբենն այս հարցով:

1. Որտե՞ղ կարող եմ գտնել նրան
2. առանց իրեն չեմ կարող գնալ տուն
3. գրական արտահայտություն, որն արտահայտում է հուսալքություն

**37:35 «Եվ նրա բոլոր որդիներն ու նրա բոլոր աղջիկները վեր կացան նրան մխիթարելու»** Արդյո՞ք հեզնական չէ տեսնել, թե ինչպես են այն նույն մարդիկ, որ ծախել են Հովսեփին, այժմ փորձում մխիթարել իրենց հորն այս կորստյան առիթով: Որոշակի կասկածներ են եղել «նրա բոլոր աղջիկները» տերմինի հետ կապված: Արդյո՞ք սա վերաբերում է Դինային և մյուս աղջիկներին, որոնք ծնվեցին հետագայում, թե իր հարսներին:

❖ **«Ծեղ»** Այս տերմինը (BDB 982) կիրառվում է «գերեզմանի» կամ «հանդերձյալ կյանքի» համար: Այն կարծես թե ունի երկու հավանական երբայերեն ստուգաբանություն. (1) «իջնել ներքև» և (2) «խնդրել, հարցնել», որը հավանաբար նկատի ունի, որ *Շեղլ* ավելի շատ մարդկանց է խնդրում կամ էլ, որ մարդիկ հարցեր են տալիս *Շեղլի* վերաբերյալ: Ինձ թվում է, որ *Շեղլ* ՀԿ-ում և *Դեղլ*ՍԿ-ում հոմանիշներ են: Ռաբբիական գրականությունից և ՆԿ-ի որոշ վկայություններից կարծես թե այն բաժանված է երկու մասի՝ արդարների և ամբարիշտների համար: Տե՛ս Հատուկ Թեմա . Ո՞ւր են գնում մեռելները, 15:15-ում:

**37:36 «Պետափրես»** Սա Եբրայերեն անուն է, որը կարծես թե նշանակում է «նա որին (նկատի ունի Ռե՛ արևի աստծուն) տվեցին» (BDB 806): Այս նույն անունը ավելի երկար տեսքով գտնվում է Ծննդ. 41:45-ում՝ Օն քրմի աղջկա անվամբ՝ Պետափրես:

❖ **«Փարավոնի ներքինի/պաշտոնյա»** «Պաշտոնյա» տերմինը բառացի «ներքինի» բառն է (BDB 710, տես՝ Եսթեր 1:10; 2:3), սակայն քանի որ նա ամուսնացած էր, այստեղ այս տերմինը նշանակում է «պաշտոնյա» (տես՝ 3 Թագ. 22:9; 4 Թագ. 8:6; 24:12), ամորձատվածի փոխարեն:

❖ **«Թիկնապահների գլխավորին / դահճապետին»** Գոյություն ունի երկու հնարավոր տարբերակ, քանի որ այս տերմինը բառացի նշանակում է «գլխավոր դահճապետ» (BDB 978 ԿԱՉՄՎԱԾ 371): Ոմանք կարծում են այն նշանակում է «գլխավոր խոհարար» (BDB 371, այսինքն՝ մսագործ) և հիմնում են սա 1 Թագ. 9:23-24-ի վրա: Ուրիշներն էլ հավատում են, որ դա նշանակում է «թիկնապահների ղեկավար»՝ հիմնվելով Ծննդ. 37:36; 39:1; 40:3,4; 41:10,12 և 4 Թագ. 25:8-ի վրա: Իհարկե հնարավոր է, որ այդ մարդիկ, որոնք մոտ են թագավորին (ինչպես նրա խոհարարները) դառնան նրա թիկնապահները:

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեգույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է

քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ եք կարծում, ինչը եղավ Հովսեփի և իր եղբայրների միջև լարվածության պատճառը:
2. Նկարագրեք այն հատուկ պատմուճանը, որ Հակոբը պատրաստել էր Հովսեփի համար: Ի՞նչ խորհուրդ ուներ:
3. Ինչո՞ւ է աստվածաշնչյան հեղինակը ներառել հհ. 15-17:
4. Թվարկեք այստեղ՝ հհ. 29 և 34-ում և ՀԿ-ի այլ հատվածներում առկա սգալու նշանները:
5. Նկարագրեք *Շեղի* վերաբերյալ ձեր ունեցած տեսակետը և թե ինչպես է այն կապված ՆԿ-յան տերմինի՝ *դժողքի* հետ:

**ԾՆՆԴՈՑ 38**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հուդան և Թամարը	Հուդան և Թամարը	Հուդան և Թամարը	Հուդան և Թամարը	Հուդայի և Թամարի պատմությունը
38:1-5	38:1-11	38:1-11	38:1-5	38:1-5
38:6-11			38:6-11	38:6-11
38:12-19	38:12-23	38:12-19	38:12-14 38:15-16ա 38:16բ 38:17ա 38:17բ 38:18ա 38:18բ-19	38:12-14 38:15-19
38:20-23		38:20-23	38:20-21ա 38:21բ 38:22 38:23	38:20-23
38:24-26	38:24-26	38:24-26	38:24ա 38:24բ 38:25 38:26	38:24-26
38:27-30	38:27-30	38:27-30	38:27-30	38:27-30

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն

2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԻՄՆԱԲԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Գլուխ 38-ը ակնհայտ դադար է Հովսեփի ենթատեքստի բովանդակության մեջ: Ոմանք պնդում են, որ սա ներառված է, քանի որ վերաբերում է Հուդայի ցեղին, որն էլ Մեսիայի ազգատոհմն է, ինչպես որ մեջբերված է Մատթ. 1:3 և Ղուկ. 3:33-ում: Ակնհայտ է, որ այս գլուխը անտեսում է հրեական բացառիկությունն ու ռասայական հպարտությունը: Թամարի պես քանանացի կնոջ ներգրավումը ևս մեկ օրինակ է Մեսիայի ազգաբանության մեջ խառը սերնդաբանության (տես՝ Ռախաբն ու Հռութը):

Բ. Ոմանք պնդում են, որ գլուխ 38-ի ներառումը այս գրքում այ քանի համար է, որպեսզի ցայտուն կերպով երևա Հովսեփի եղբայրների բարոյական անկումը և նրա օրինակելի վարքը, որը արձանագրվում է Ծննդոց 39-ում:

Գ. Ծննդոցը պարբերաբար կրկնվող մարդկային ծրագրերի պատմություն է, որ տանում է մի ուղղությամբ, իսկ Աստծո ծրագրերինը՝ մեկ այլ ուղղությամբ: Իրադարձությունների այս հետադարձումը խայտառակությունից մինչև պատիվ, հատկանշական է Ծննդոցին և ՀԿ-ին: Աստվածաբանորեն այն հաստատում է ՅԱՀՎԵԻ ինքնիշխանությունը և տիեզերական փրկագործության ծրագիրը (այսինքն՝ Ծննդ. 3:15; 12:3գ; Ելից 19:5գ): ՅԱՀՎԵՆ գործողության մեջ է եղել, որպեսզի վերականգնի Ծննդոց 3-ից ի վեր Իր մոլորված ստեղծագործության հետ փոխահարաբերությունը (հատկապես՝ հ.15, որը Աստծո պատկերով ստեղծված ամբողջ մարդկությանը տրված խոստում է, տես՝ 1:26-27): Դեպքերը պարզապես աննպատակ չեն տեղի ունենում:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 38:1-5

<sup>1</sup>Եվ եղավ, որ այն ժամանակ Հուդան իր եղբայրների մոտից իջավ և գնաց մի ողողոմցի մարդու մոտ, անունը Իրաս: <sup>2</sup>Եվ Հուդան ծավա անունով մի քանանացու աղջկան տեսավ և առավ նրան և մտավ նրա մոտ: <sup>3</sup>Եվ նա հղիացավ և մի որդի ծնեց և նրա անունը Էր դրեց: <sup>4</sup>Եվ նորից հղիացավ և որդի ծնեց և նրա անունը Օնան դրեց: <sup>5</sup>Եվ էլի մի որդի ծնեց և նրա անունը Սեյում դրեց, և Հուդան Բեզիբում էր նրա ծննդաբերելու ժամանակ:

**38:1 «Եվ եղավ, որ այն ժամանակ»** Երբայերեն արտահայտությունը շատ բազմիմաստ է և ստույգ ժամանակային կապը գլուխ 37-ի և 38-ի միջև անհայտ է: Հնարավոր է այն անմիջապես 37-ից հետո է տեղի ունեցել կամ էլ ինչ որ ժամանակ անց: Նկատել՝ տարբեր ժամանակային կապերը՝

1. և Հակոբը բնակվում էր այն երկրում, 37:1
2. և եղավ, որ այդ ժամանակ, 38:1
3. և շատ օրեր հետո, 38:12
4. և եղավ, որ երեք ամիս անց, 38:24
5. և եղավ, երբ, 38:27
6. և այս բաներից հետո եղավ, 40:1
7. և եղավ, որ երկու տարի անց, 41:1

Ակնհայտ է, որ հեղինակը տեղյակ է ժամանակներից, սակայն պարտադիր չէ, որ դա լինի արևմտյան ժամանակագրությամբ պատմություն:

❖ **«Հուդան իր եղբայրների մոտից իջավ»** Շատ կասկածներ են եղել այն մասին, թե ինչու Հուդան հեռացավ: Ոմանք ասում են, որ պատճառը իր եղբայրների բարոյական անկումն էր կամ հավանաբար Հովսեփի հանդեպ նրանց ցուցաբերած սխալ վերաբերմունքը:

❖ **«և գնաց/այցելեց»** Այս ԲԱՅԸ բառացիորեն «մի կողմի վրա գնաց» (BDB 639, KB 692, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Այն ակնարկում է երկար տարածություն անցնել, հեռանալ իր եղբայրներից: Այս նույն աշխարհագրական տարածքը հետագայում մտնելու է Հուդայի ցեղին հատկացված հողատարածքի մեջ

(տես՝ Հեսու 15:35): Ողորդմի քարայրը հետագայում առնչություն է ունենալու Դավթի սիրագործությունների տարածքներին, որը կապված է Մավուդի հետ (տես՝ 1 Թագ. 22:1): Ըստ երևույթին դա եղել է Հուդայի լեռնային տարածքներից՝ մոտ առափնյա հարթավայրին:

**38:2 «Շավա»** Այս անունը (ինչպես Իրաքը, հ. 1-ում, BDB 301) գտնվում է ՀԿ-ում միայն այստեղ: Միևնույն արմատի բաղաձայները (BDB 447) նշանակում են «անկախ» կամ «ազնվական»: Այն ունի միևնույն երեք ներքին բաղաձայնները ինչպես «փրկություն» բառը (BDB 447), սակայն կարծես թե ոչ մի աստվածաբանական կապ չկա:

❖ **«Հուդան մի քանանացու աղջկան տեսավ»** Այս աղջկա անունը երբեք չի նշվում (նա 1 Մնաց. 2:3-ում անվանված է Բարթալա, սակայն սա անունը չէ, այլ բնութագրական՝ «Շավայի աղջիկը»), սակայն ակնհայտ է, որ Հուդան պետք է սիրահարվեր նրան առաջին իսկ հայացքից: Այս ամուսնությունը քանանացի կնոջ հետ հատուկ չի դատապարտվել անմիջական ենթատեքստում: Հուդան ըստ երևույթին հավատարիմ ամուսին էր այս միակ կնոջը (տես՝ հ. 12):

**38:5 «Քեզիբ»** Ռաբբիները օգտագործում են այս տեղանունը (BDB 469) արհամարհական իմաստով (սա նման է «խաբել», «խաբեություն», «ստահոտություն», BDB 469, արմատին) նկատի ունենալով այն երեխաներին, որոնց ծնեց այս կինը: Սակայն ռաբբիների ամբողջ գրականության մեջ առկա է իրենց շրջապատող ազգերի հանդեպ հակառակ տրամադրվածություն: Այն պարզապես մի տեղանուն է: Հավանաբար սա նույն Աքեզիբ անունն է (BDB 469) Հեսու 15:44-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 38:6-11**  
Վե՛վ Հուդան իր առաջնեկ տղա Էրի համար կին առավ, անունը՝ Թամար:<sup>7</sup> Հուդայի առաջնեկ Էրը չար էր ՏԻՐՈՉ առաջ. և ՏԵՐԸ սպանեց նրան: Վե՛վ Հուդան ասաց Օնանին. «Մտի՛ր քո եղբոր կնոջ մոտ և կատարի՛ր տեգրության պարտքդ և քո եղբոր համար սերո՛ւնդ ունեցիր»: Վե՛վ Օնանը գետնի վրա սերունդ չի լինելու, դրա համար էլ, երբ իր եղբոր կնոջ մոտ էր մտնում, սերմը գետին էր թափում, որ իր եղբորը սերունդ չտա: Վե՛վ այս բանը, որ նա անում էր, չար երևաց ՏԻՐՈՉ առաջ, և Նա նրան էլ սպանեց: Վե՛վ Օնանի ժամանակ Հուդան իր հարս Թամարին ասաց. «Որբուհի լստի՛ր քո հոր տանը՝ մինչև իմ Մեղում որդին մեծանա, որովհետև, - ասաց, - գուցե նա էլ իր եղբայրների պես մեռնի»: Եվ Թամարը գնաց ու իր հոր տանը բնակվեց:

**38:6 «Վե՛վ Հուդան իր առաջնեկ տղա Էրի համար կին առավ»** Հուդան թույլ չտվեց իր հորը, որ իր համար հարսնացու ընտրի, սակայն ըստ իրենց մշակույթի մեջ առկա ավանդույթի, ինքն ընտրեց իր որդու համար կին: Պարզ է, քանի որ իրենք ունեին ՅԱՀՎԵԻ հավատքը, պետք է ընտրեր մի համառ կնոջ: Նրա անունը Թամար էր, որը նշանակում է «արմավենի» (BDB 1071 II): Աստվածաշնչում մի քանի այլ կանայք էլ կան այս նույն անունով:

**38:7 «Էրը չար էր ՏԻՐՈՉ առաջ»** ՀԿ-ում նմանատիպ բացասական էվոյուցիա հաճախ կարելի է հանդիպել (տես՝ 32:13; 2 Օր. 4:25; 31:29; Դատ. 2:11; 3:7,12; 4:1; 6:1; 10:6; 13:1; 1 Թագ. 15:19; 3 Թագ. 11:6; 14:22; 15:26,34; 16:19,25,30; 21:20,25; 22:52; 4 Թագ. 3:2; 8:18,27; 13:2,11; 14:24; 15:9,18,24,28; 17:2,17; 21:2,6,15,16,20; 23:32,37; 24:9,19): Անկման հետևանքները մոլորեցնող և կործանարար են: Հհ. 8-10-ում նշված Էրի և Օնանի գործողությունների միջև եղած թվացյալ զուգահեռների պատճառով ռաբբիները պնդում են, որ նրանք երկուսն էլ միևնույն մեղքի մեջ հանցավոր էին (այսինքն՝ «իրենց սերմը գետնին էին թափում»), սակայն սա հաստատ չէ ըստ ենթատեքստի: Նրանք պնդում են, որ Էրը չէր կամենում, որ իր կինը երեխաներ ունենար, քանի որ դա նրան ժամանակից շուտ կծերացներ:

Կասկած չկա, որ նրանք անպատշաճ վարք են ցուցաբերել, խախտելով հայտնի կանոններ: Նաև ակնհայտ է, որ Տերը գործադրում է ժամանակավոր դատաստան (տես՝ Հոր 22:15-16; Առակ. 10:27):

**38:8 «Վե՛վ Հուդան ասաց Օնանին. «Մտի՛ր քո եղբոր կնոջ մոտ և կատարի՛ր տեգրության պարտքդ»** Սա ավելի ուշ ընդունված մշակութային Լեվիիտո գաղափարն է (տես՝ 2 Օրինաց 25:5գ): Մենք միայն երկու այսպիսի օրինակ ունենք Սուրբ Գրքում՝ այստեղ և Հռութի գրքում: Ժառանգության իրավունքները կարևոր խնդիր էր:

- Հուդան իր երկրորդ որդու հրամաններ է տալիս՝
1. մտի՛ր քո եղբոր կնոջ մոտ, BDB 97, KB 112, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  2. կատարի՛ր քո տեգրության պարտքը, BDB 386, KB 383, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  3. քո եղբոր համար սերո՛ւնդ ունեցիր, BDB 877, KB 1086, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

«Լեվիիտա ամուսնության» (լատիներենից՝ «եղբայր») վերաբերյալ լավ համառոտ քննարկման համար տես NIDOTTE, հատոր 4, էջ՝ 902-905 և ABD, հատոր 4, էջ՝ 296-297:

**38:9 «Օճանը գիտեր, որ սերունդն իրենը չի լինելու»** Ըստ երևույթին Օճանը ավելի շատ մտահոգ էր իր համար ավելի մեծ ժառանգություն ստանալու համար, քան իր եղբոր ընտանիքի համար: Սա միակ ծննդյան պլանավորման դեպքն է ՀԿ-ում: Քանի որ իր եղբայրը առաջնեկն էր, ապա ժառանգության ավելի մեծ մասը անցնելու էր նրա ժառանգին: այս գլուխը հստակ հայտնում է Հուդայի այս երկու որդիների ամբարշտությունը:

❖ «որա համար էլ, երբ իր եղբոր կնոջ մոտ էր մտնում» Եբրայերեն ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԸ ակնարկում է, որ նա միայն մեկ անգամ է մտել նրա մոտ (երկու ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐ):

**38:11 «այն ժամանակ Հուդան իր հարս Թամարին ասաց ... մինչև իմ Սելոմ որդին մեծանա»** Հուդան ուներ միայն երեք որդի և նրանցից երկուսը ըստ երևույթին մահացել էին Թամարի հետ կապ ունենալու պատճառով: Հուդան վախենում էր, որ իր վերջին որդին էլ կմեռնի և նա իրեն ժառանգներ չի ունենա: Այս դեպքը հնարավոր է արձանագրվել է ցույց տալու, թե ինչպես են բոլոր Նահապետներն էլ փորձել շահարկել Աստծո խոստումները, որոնք առնչվում են խոստացված Մեսիայի հետ, որը սերվելու էր իրենց սերմի միջոցով: Կամ, այն կարող է պարզապես Թամարի վրա հավանական անեծքի հետ վախի կապ ունենալ: Մեղքն այստեղ կապ ունի այն փաստի հետ, որ նա խաբեց իր հարսին, երբ մտադիր չէր իր վերջին որդուն էլ նրան տալու, որը օրինական պահանջ էր: Այն փաստը, որ Թամարը վերադարձավ իր հոր տուն (այսինքն՝ Հուդայի հրամանով, BDB 442, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կարծես թե մշակութային նորմ էր համարվում (տես՝ Ղևտ. 22:13 և Հռութ 1:8):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 38:12-19**  
<sup>12</sup>Եվ շատ օրեր հետո մեռավ Ծավայի աղջիկը՝ Հուդայի կինը: Եվ Հուդան մխիթարվել էր և գնաց Թամնա՝ իր հոտերը խուզողների մոտ, ինքը և իր բարեկամ ողորդամացի Իրասը:  
<sup>13</sup>Թամարին պատմեցին՝ ասելով.«Ահա քո սկեսրայրը դեպի Թամնա է դուրս եկել՝ իր ոչխարները խուզելու»: <sup>14</sup>Նա էլ իր որբևայրիության հագուստը հանեց իր վրայից, քողով ծածկվեց, փաթաթվեց և Թամնայի ճանապարհին եղող Ենայիմի մուտքի մոտ նստեց, որովհետև տեսավ, որ Սելոմը մեծացել էր, բայց իրեն նրա համար կնության չառան: <sup>15</sup>Երբ Հուդան տեսավ նրան, բոզ կարծեց, որովհետև երեսը ծածկված էր: <sup>16</sup>Եվ ճանապարհին դեպի նա դարձավ և ասաց. «Խնդրում եմ, թող քեզ մոտ մտնեմ», որովհետև չգիտեր, թե դա իր հարսն է: Ասաց. «Ի՞նչ կտաս, որ ինձ մոտ մտնես»: <sup>17</sup>Նա էլ ասաց. «Ես մի այծի ուլ կուղարկեմ հոտերից»: Ասաց. «Իսկ գրավ կտա՞ս մինչև ուղարկելը»: <sup>18</sup>Եվ Հուդան ասաց. «Ի՞նչ գրավ տամ քեզ»: Եվ նա ասաց. «Քո կնիքը և ժապավենը և գավազանը»: Նա էլ տվեց նրան և մտավ նրա մոտ: Եվ թամարը հղի մնաց նրանից: <sup>19</sup>Եվ վեր կացավ, գնաց և իր վրայից հանեց քողը և իր որբևայրիության հագուստը հագավ:

**38:12 «Հուդայի կինը մեռավ»** Մեզ այդպես էլ չի տրվում նրա անունը: Հուդան միայն մեկ կին ունեցավ և շատ հոգատար գտնվեց այս քանանացի կնոջ հանդեպ:

❖ «Եվ Հուդան մխիթարվել էր և գնաց Թամնա՝ իր հոտերը խուզողների մոտ» Հոտերը խուզելը տոնակատարության ժամանակ էր (տես՝ 1 Թագ. 25:4,36): Դա Հուդայի հետագա ցեղային առանձնացման՝ տարանջատման ժամանակ էր (տես՝ Հեսու 15:57): Այս աշխարհագրական տեղանքը հայտնի է Սամսոնի հետ ունեցած իր կապով:

**38:13 «Թամարին պատմեցին՝ ասելով»** Իմ կարծիքով Թամարն այսպես վարվեց ավելի շատ աստվածահաճո նպատակով, քան այն ինչ տեսքում է երևում (տես՝ հ. 26): Ռեբեկայի և Հակոբի պես (տես՝ 25:23), մեկը կարող էր կասկածել իրենց գործողությունների մեթոդների վրա, սակայն իրենց գործերի ետևում կա հավատքի և վստահության տարրը: Ինչպես որ Աբրահամը և բոլոր մյուս նահապետները փորձում էին օգնել Աստծուն Իր խոստումները կատարելու մեջ, ես հավատում եմ, որ Թամարը զգում էր մի յուրահատուկ պատասխանատվություն որպես Հուդայի ավագ որդու կին, որ նրա համար մի սերունդ տա: Նա հոժարակամ էր իրեն խոնարհեցնելու և առերեսվելու մահվան հավանականության հետ, որպեսզի հնարավորություն ունենա Հուդայի համար որդի ծնելու:

**38:14 «նա էլ իր որբեայրիության հագուստը հանեց»** Թե ստույգ ինչ էր սա իրենից ներկայացնում, հայտնի չէ, սակայն նա դեռևս կապված էր զգում Հուդայի ընտանիքին: Նա դեռևս սպասում էր Հուդային, որ կկատարի իր խոսքը (տես՝ հ. 11): Հնարավոր է ժամանակն այնքան շատ էր ձգձգվել, որ նա սկսել էր կասկածել Հուդայի խոստմանը (տես՝ հ. 14):

❖ **«քողով ծածկվեց, փաթաթվեց և Թամնայի ճանապարհին եղող Ենայիմի մուտքի մոտ նստեց»** Գոյություն ունեն երկու տեսակի քողեր կամ «շալեր» (BDB 858, KB 1041) որոնք նշվում են ՀԿ-ում: Դրանք նախքան իսլամական ժամանակաշրջանը տարածում չունեին: Ռեբեկան կրում էր մի այդպիսի քող, երբ հանդիպեց Իսահակին (տես՝ 24:65) և այստեղ Թամարը նույնպես կրում է քող: Մովսեսը նույնպես կրում էր քող՝ ծածկելու իր երեսը, երբ իջավ Սինա լեռից («քող», BDB 691, տես՝ Ելից 34:33,34,35):

Միջինական փաստաթղթերից իմանում ենք, որ քողը նշան էր պաշտամունքային պոռնիկի, որը ամուսնացած էր: Մենք նաև իմանում ենք, որ այն դարձել էր քողարկված աստվածուհու՝ Իշթարի խորհրդանիշը: Ըստ երևույթին սա պաշտամունքային պոռնիկներին ճանաչելու հատուկ միջոց էր: Չնայած հ. 15-ում Հուդայի կողմից ասված խոսքը պարզապես տարածված երբայրեն տերմին է («մեկը որ պոռնկանում է», BDB 275, KB 275, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ), այն տերմինը, որն իր բարեկամ Իրասն է օգտագործում հհ. 21-22-ում, տաճարի պոռնիկների համար էին օգտագործում (BDB 873 I, տես՝ 2 Օր. 23:17-18; Ովս. 4:14):

**38:16 «Եվ ճանապարհին դեպի նա դարձավ և ասաց»** Գոյություն ունեն այստեղ մի քանի տարբեր, որոնք անհանգստացնում են ժամանակակից ընթերցողներին՝ (1) կարծես թե այստեղ առկա է կրկնակի պատշաճության չափանիշ Հուդայի գործողության մեջ և անպատշաճության՝ Թամարի գործողության մեջ, (2) նաև մեկնաբաններին մտահոգում է այն, որ Հուդան գիտեր ստույգ ինչ հարցեր տար և ինչպիսի վճարման ընթացակարգեր էին պահանջվում պոռնիկի մոտ մտնելիս: Մենք պետք է զգույշ լինենք հին աշխարհը մեր տեսանկյունով դատելիս, սակայն պետք է նա զգույշ լինենք ճանաչելու նույնիսկ Հուդայի ցեղի ներսում առկա բարոյական անկումը:

**38:17 «Ես մի այծի ու կուղարկեմ հոտերից»** Դատ. 15:1-ում արձանագրված Մամսոնի սխրագործություններից գիտենք, որ հնարավոր է սա եղել է սեռական ակտի համար ընդունված գին: Մակայն գոյություն ունի մի հնագույն վկայություն, որ այծը սիրո աստվածուհու խորհրդանիշն էր և հնարավոր է, որ սա հանդիսանում է այս ավանդույթի հիմքը:

**38:18 «Ի՞նչ գրավ տամ քեզ»: Եվ նա ասաց. «Քո կնիքը և ժապավենը և գավազանը»** Թամարն իր ծրագիրը մեծագույն մանրամասնությամբ էր մշակել: Կնիքը և գավազանը հարուստ մարդուն բնորոշ իրեր էին ՀՄԱ-ում և ամեն մարդ ուներ իր հատուկ կնիքն ու գավազանը: Կնիքը կարող է վերաբերել կնքող մատանու (BDB 368, KB 364, տես՝ 41:42), կամ էլ գլանաձև կնիքի, որը կրում էին պարանոցի շուրջը: Իրենից ինչ-որ մի երևելի անձ ներկայցնող յուրաքանչյուր անձ ուներ այսպիսի գլանաձև կնիքներից, որոնք կիրառում էին իրենց ստորագրության փոխարեն (տես՝ Ստրաբոն XVI, 1, 20):

«Ժապավենը» (BDB 836, KB 990) Թարգումներում թարգմանվում է որպես «վերարկու», սակայն ըստ երևույթին այն վերաբերում է մատանու կամ պարանոցից կնիքը կախելու հարմարանքին:

Գավազանը (BDB 641, KB 573) ավելի շատ նման էր քայլելու ձեռնափայտի՝ գեղեցիկ, յուրահատուկ փորագրված գլխամասով: Առանց այս ձեռնափայտի Հուդայի օրերում մարդը կարող էր իրեն մերկ զգալ: Նա պատրաստ էր բաժանվել այս չափազանց անձնական, շատ կարևոր առարկաներից, որպեսզի վճարի այս պոռնիկի գինը: Թամարը դրանք ուզում էր որպես վերջնական ապացույց այն բանի, որ Հուդան էր հանդիսանում իր երեխայի հայրը:

**38:19** Թամարն անմիջապես տուն գնաց, որը ցույց է տալիս, որ պոռնկությունը նրա ապրելակերպը չէր հանդիսանում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 38:20-23**

<sup>20</sup>Եվ Հուդան այծի ու կուղարկեց իր բարեկամ ողողմացու ձեռքով, որ այն կնոջ ձեռքից գրավն առնի, բայց սա չգտավ նրան: <sup>21</sup>Այնտեղի մարդկանց հարցրեց՝ ասելով. «Ո՞ր է այն բոզը, որ Ենայիմի ճանապարհին էր», և նրանք ասացին. «Այստեղ բոզ չկար»: <sup>22</sup> Եվ նա վերադարձավ Հուդայի մոտ և ասաց. «Զգտա նրան, այնտեղի մարդիկ էլ ասացին, թե՛ այստեղ բոզ չկար»: <sup>23</sup>Եվ Հուդան ասաց. «Թող իրեն լինի, միայն թե խայտառակ չլինենք. ահա ես այս ուն ուղարկեցի, իսկ դու չգտար նրան»:



**38:20** «Եվ Հուդան այժի ուն ուղարկեց իր բարեկամ ողողմացու ձեռքով» Իրապը մի քանի հարց է տալիս (տես՝ հ. 21), բայց ոչ շատ: Սա կարծես թե ակնարկում է, որ նույնիսկ այդ օրերում պոռնիկների հետ գործ ունենալուն այնքան էլ լավ չէին վերաբերվում:

**38:23** Հուդան անհանգստանում էր իր հեղինակության համար, ոչ թե իր կողմից անպատշաճ վարք դրսևորելու: Կարծես թե այս ժամանակաշրջանում և այս մշակույթի մեջ պոռնկությունը որպես բարոյական կամ հոգևոր (անգամ ծիսական պոռնիկը, հհ. 21,22) զգացմունքի հետ կապ չուներ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍ. 38:24-26**

**24**Եվ եղավ, որ երեք ամիս անց Հուդային պատմեցին՝ ասելով. «Քո հարս Թամարը պոռնկացել է, նաև ահա պոռնկությունից հղի է»: Այն ժամանակ Հուդան ասաց. «Հանեցե՛ք նրան, նա պետք է այրվի»: **25**Երբ նրան դուրս էին հանում, նա գրավներն ուղարկեց իր սկեսրայրին՝ ասելով. «Ես այս իրերի տիրոջից եմ հղի»: Նաև ասաց. «Խնդրե՛մ ճանաչիր, թե ո՞ւմն են այս կնիքը և ժապավենը և գավազանը»: **26**Հուդան ճանաչեց և ասաց. «Նա ինձնից արդար է, որովհետև նրան չտվի իմ որդի Սելոմին». և այլևս չգիտեցավ նրան:

**38:24** «Քո հարս Թամարը պոռնկացել է, նաև ահա պոռնկությունից հղի է» Այստեղ կիրառված է ՀՈԳՆԱԿԻ ձևը, որը կարծես թե ակնարկում է, որ Թամարը պետք է որ ներգրավված լիներ կրկնվող սեռական ակտերի մեջ: Ի՞նչ շանս կա, որ մեկանգամյա սեռական ակտից հետո նա կհղիանար: Նրա կերպարն իր մեջ բովանդակում է այն վիրավորանքը, որ կրում էր իր մեջ:

❖ «Այն ժամանակ Հուդան ասաց. «Հանեցե՛ք նրան, նա պետք է այրվի» Հուդան, որպես իր տոհմի առաջնորդ, դեռևս օրինապես պատասխանատու էր իր հարսի պատժի համար: Նրան այրելու գաղափարը կարծես թե ընդունված պատժամիջոց էր հանդիսանում անհավատարիմ կնոջ համար (տես՝ Համմուրաբիի Կանոնը, սակայն մի փոքր տարբերությամբ): Մովսիսական օրենքում միայն քահանաների աղջիկներն էին այրվում, մյուս իրավախախտները քարկոծվում էին (տես՝ 2 Օրինաց 22:20-24; Ղևտ. 21:9):

Հուդան խիստ հրաման է արձակում՝

1. հանեցե՛ք նրան, BDB 422, KB 425, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այսինքն՝ իր տնից հրապարակ)
2. նա պետք է այրվի, BDB 976, KB 1358, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (սա պետք է կատարեր համայնքը)

**38:25** «Երբ նրան դուրս էին հանում» Ոմանք ասում են, որ նա սպասեց մինչև վերջին րոպեն, հուսալով, որ Հուդան կմտափոխվի ր դատաստանի հարցում: Մյուսներն էլ պնդում են, որ նա սպասեց ամենադրամատիկ, հանրային պահին, որպեսզի հիասթափեցնի Հուդային: Ինչպես որ տեղի է ունենում ամբողջ ՀԿ-ում, և այդպիսի դեպքերում ՆԿ-ում, մարդու հոգեբանական շարժառիթները հնարավոր չէ պարզել:

❖ «Խնդրե՛մ ճանաչիր, թե ո՞ւմն են այս կնիքը և ժապավենը և գավազանը» Թամարը հարցրեց Հուդայն «գնե՛լ, քնե՛լ» իրերը (BDB 647, KB 699, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հ. 25) և նա անում է այդպես հ. 26-ում (BDB 647, KB 699, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ): Միևնույն ԲԱՅԸ կիրառվում է այստեղ, որը կիրառվել էր 37:32,33 և 42:7,8-ում (երկու անգամ):

Հուդան անմիջապես ճանաչում է իր սեփական իրերը և գիտակցում է իր օրերի իրավական և կրոնավոր միջավայրի համար Թամարի կատարած տեղին, չնայած ինչ-որ տեղ կասկածելի գործողությունները: «Արդարություն» (BDB 842, տես՝ Հատուկ Թեմա 15:6-ում) տերմինը այստեղ նկատի չունի այն փաստը, որ նա առանց մեղքի է այն մոտեցումների մեջ, որոն նա գործել էր, սակայն նա գործել էր ավելի ընդունելի կերպերով, քան Հուդան: Սա «արդարություն» բառի ոչ աստվածաբանական կիրառությունն է (տես՝ 30:33): Նա շատ բան էր վտանգի ենթարկել, որպեսզի կրեր այս ընտանիքի ժառանգ(ներ)ին: Ըստ երևույթին Հուդան և նա այլևս ոչ մի սեռական կապ չունեցան: Դա ցանկության ակտ չէր, այլ իմ կարծիքով կրոնական հավատքի քայլ (տես՝ հ. 13-ի գրառումը): Իմ կարծիքով Թամարն է այս ամբողջ պատմության իրական հերոսուհին (ինչպես ավելի շուտ Ռեբեկան էր):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍ. 38:27-30**

**27**Եվ եղավ, երբ նա ծննդաբերելու վրա էր, նրա արգանդում երկվորյակներ էին: **28**Եվ եղավ, որ երկունքի մեջ, մեկը ձեռքը մեկնեց, և մանկաբարձը նրա ձեռքին կարմիր թել կապեց՝ ասելով . «Նախ սա դուրս եկավ»: **29**Եվ հենց ձեռքը ետ քաշեց, ահա նրա եղբայրը դուրս եկավ, և

**մանկաբարձն ասաց. «Ինչպե՞ս ճեղքեցիր պատնեշը, այս պատառումը քեզ վրա լինի»: Դրա համար նրա անունը Փարես դրվեց: <sup>30</sup>Եվ հետո ձեռքին կարմիր թել ունեցող եղբայրը դուրս եկավ, և նրա անունը Չարա դրվեց:**

**38:27 «նրա արգանդում երկվորյակներ էին»** Ինձ զարմացնում է, թե որքան հաճախ են Ճննդոցում այս Նահապետների կանայք սկզբում լինում անպտուղ և ապա ինչպես են նրանք հաճախ ունենում երկվորյակներ: Աստված գործում է կրկնվող կերպերով: Սերնդաբանությունները Նրան են պատկանում:

**38:28 «ձեռքին կարմիր թել կապեց»** Այս թելի ստույգ նպատակը հայտնի չէ: Հնարավոր է դա եղել է ինչոր շատ տարածված մի բան, ինչպես օրինակ միակ հարմարավետ բանն այդ պահին կամ հնարավոր է այդ օրերի մշակութային ավանդույթ: Շատերը պնդում են, որ դա փրկության նշան էր կամ խորհրդանիշ, որին հետևելու են ամբողջ ՀԿ-ում (այսինքն՝ Հեսու 2:18, 21): Անձամբ ես նյարդայնանում եմ մեկնությունների այս ալեգորիկ օրինակներից: Հաստատ սա հանդիսանում է ականատեսի վկայություն:

**38:29 «Փարես»** Այս անունը (BDB 829 II) նշանակում է «պատառում» կամ «ցայթթում» (BDB 829 I):

**38:30 «Չարա»** Այս անունը (BDB 280 II) նշանակում է «բարձրանալ» կամ «առաջ գալ» (BDB 280) ԲԱՅԻ ձևից: AB ծանուցագրում՝ էջ 297, ասում է, որ նշանակությունը բխում է «շողալ» (BDB 280, որ գտնվում է միայն Ես. 60:3-ում) և միևնույն բաղաձայններով արմատն ունի և արտահայտում է պայծառ գույներով թել (նաև տե՛ս Հրեական Սերտոդության Աստվածաշունչը, էջ՝ 78):

Առաջնեկին ճանաչելը՝ իմանալը շատ կարևոր էր ժառանգության իրավունքների համար: Սակայն Նահապետների ազդաբանության հատուկ տոհմաժառանգում (այսինքն՝ Մեսիայի ճյուղը) Աստծո ընտրությունը, ոչ թե մարդունը, ակնհայտ է: Աստված ունի տիեզերական, փրկության ծրագիր, որը գործադրվում է Աբրահամի ընտանիքում (տես՝ 3:15; 12:3գ; Ելից 19:5գ; Եսայի, Միքիա, Հովնան):

Գրականական նշանակությամբ այս գլուխը Հռութի գրքի նման ծառայում է Հուդայի, հետագայում Հեսսեի՝ Դավթի հոր սերնդաբանության նյութեր մատակարարելով: Այս մարդիկ հեթանոսներ էին, նույնիսկ քանանացիներ, Դավիթ թագավորի տոհմաժառանգի մեջ (տես՝ Հռութ):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտոդության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզինք յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է կարևոր այն փաստը, որ Հուդան թողեց իր եղբայրներին և շարժվեց քանանացիների տարձրը՝ դեպի հարավ:
2. Արդյո՞ք Հուդայի ամուսնությունն այս քանանացի կնոջ հետ Սուրբ Գրքում դատապարտվում է:
3. Ինչո՞ւ էր Հուդան վախենում իր երրորդ որդուն տալ Թամարին:
4. Ինչպե՞ս կարող ենք հասկանալ Թամարի գործողությունները: Ի՞նչը կարող էր լինել նրա հավանական նպատակը:
5. Կա՞րող էր կարևորություն համար 28-ում նշված կարմիր թելի մեջ:

**ԾՆՆԴՈՑ 39**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հովսեփի հաջողությունը Եգիպտոսում	Հովսեփը Եգիպտոսում ստրուկ	Հովսեփի հաջողությունը, փորձությունը և բանտարկությունը	Հովսեփն ու Պետափրեսի կինը	Հովսեփի առաջին օրերը Եգիպտոսում
39:1-6ա	39:1-6	39:1-6ա	39:1-6ա	39:1-6ա
				Հովսեփին գայթակղելու փորձ
		39:6բ-18	39:6բ-10	39:6բ-10
39:6բ-18	39:7-18			
			39:11-15	39:11-15
			39:16-18	39:16-20ա
Հովսեփի բանտարկությունը 39:19-23	39:19-20	39:19-23	39:19-23	Հովսեփը բանտում
	39:21-23			39:20բ-23

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 39:1-6ա**  
<sup>1</sup>Եվ Հովսեփին բերեցին Եգիպտոս և Փարավոնի մի պաշտոնյա, եգիպտացի Պետափրես դահնապետը գնեց նրան իսմայելացիներից, որ նրան այնտեղ էին իջեցրել: <sup>2</sup>ՏԵՐԸ Հովսեփի հետ էր, և նա հաջողակ մարդ էր և իր եգիպտացի տիրոջ տանն էր: <sup>3</sup>Եվ նրա տերը տեսավ, որ ՏԵՐԸ նրա հետ էր, և թե՛ ինչ որ անում էր, ՏԵՐԸ նրա ձեռքով հաջողում էր: <sup>4</sup>Եվ Հովսեփը շնորհ գտավ նրա առջև և ծառայում էր նրան, և սա իր տան վերակացու նշանակեց նրան և իր ամբողջ

**ունեցվածքը նրա ձեռքը հանձնեց: <sup>5</sup>Եվ եղավ, որ նրան իր տան ամբողջ ունեցվածքի վրա վերակացու նշանակած ժամանակից հետո ՏԵՐԸ եգիպտացու տունը Հովսեփի պատճառով օրհնեց. և ՏԻՐՈՉ օրհնությունը լինում էր թե՛ տանը, թե՛ դաշտում՝ նրա բոլոր ունեցվածքի վրա: <sup>6</sup>Եվ նա իր ամբողջ ունեցվածքը Հովսեփի ձեռքում թողեց և նրա մոտ կատարված ոչ մի քանից տեղեկություն չունե՛ր՝ բացի իր կերած հացից:**

**39:1 «Պետափրես»** Այս անունը եգիպտերեն կարծես թե նշանակում է «նա, որին տվել է արևի աստվածը» (BDB 806): Նրա մասին նշվում է Ծննդ. 37:36-ում: Նմանատիպ իգական սեռի անուն (այսինքն՝ Պետափրես, BDB 806) տեսնում ենք հետագայում Ծննդ. 41:45,50; 46:20-ում:

❖ **«եգիպտացի պաշտոնյա»** Շատ մեկնաբաններ ենթադրում են, որ Փարավոնը, որ Հովսեփին Եգիպտոսի վրա պատասխանատու է դարձնում, Հիքսոսների կամ հովիվ թագավորների կառավարիչներից էր (Ք.Ա. 1720-1550թթ, տես՝ Պատմության Ալիքի Տեսանյութը. Ելիցը Բացահայտված): Այս սեմական նվաճողները կառավարեցին Եգիպտոսի վրա մի քանի հարյուրամյակ: Նրանք պնդում են, որ այս պաշտոնյան, որ ներկայացվում է որպես եգիպտացի (տես՝ հ. 2) Սեմական Հիկսոս կառավարչի հետ հակառակության մեջ էր:

❖ **«պաշտոնյա»** Բառացի սա նշանակում է «ներքինի» (տես՝ 37:36-ի գրառումը): Սակայն 40:2-ի շնորհիվ հասկանում ենք, որ Պետափրեսը ամուսնացած էր: Ծիշտ է, որ որոշ ֆիզիկապես ամոլձատված տղամարդիկ ամուսնանում էին, սակայն դա նորմալ չէր: Այս տերմինը սկսել է կիրառվելն պարզապես որպես դատարանի պաշտոնյայի տիտղոս և այս հատվածում կարծես թե նմանատիպ օրինակով է կիրառվում:

❖ **«Փարավոն»** Սա բոլոր եգիպտացի թագավորների տիտղոսն է (BDB 829, բառացի՝ «մեծ տուն»): Եգիպտացի թագավորները հավատում էին, որ իրենք արևի աստծո՝ Ռեի որդիներն են: «Մեծ տուն» խոսքը վերաբերում է արքայական պալատին կամ տաճարի համալիրին, որը ներկայացնում էր եգիպտական աստվածների երկրավոր բնակատեղին:

❖ **«դահնապետը/թիկնապահը»** Բառացի սա նշանակում է «մորթող» կամ «մսագործ» (տես՝ 37:36-ի գրառումը): Ոմանք պնդում են, որ սա շատ նման է դահնապետ տերմինին: Ամեն դեպքում դրա կիրառությունը թե՛ Աստվածաշնչում և թե՛ Աստվածաշնչից դուրս նյութերում, կարծես թե բովանդակում է ռազմական դիրք, որը կապ ունի թագավորական պահակախմբի հետ: Սա պետք է, որ նշանակեր, որ Պետափրեսը շատ կարևոր, ազդեցիկ և հարուստ մարդ էր:

❖ **«խմայելացիները»** Շատ հարցեր են բարձրացել այս շրջիկ վաճառականների ինքնության վերաբերյալ: Ծննդ. 37:36-ում նրանք կամ կոչվում են Մադիանացիներ կամ էլ Մեդիանացիներ (տես՝ 37:35-ի գրառումը): Այս երկու խմբերն էլ նշվում են Ծննդ. 37:28 և Դատ. 8:22,24-ում: Նրանք որոշակի կապ ունեն Իսամայելի և նրա սերունդների հետ:

**39:2 «ՏԵՐԸ Հովսեփի հետ էր»** Սա աստվածաբանորեն կարևոր է, որ Ծննդոցի այս բաժնում այն հազվադեպ դեպքերից մեկն է, որ ՅԱՀՎԵ տերմինն է կիրառվում: Իրականում սա Հովսեփի կյանքի պատմության մեջ միակ դեպքն է: Նաև ուշադրություն դարձրեք, որ այն խոսում է Քանանից դուրս տեղի ունեցած դեպքերի մասին: ՅԱՀՎԵՆ չի սահմանափակվում միայն Խոստացյալ Երկրով (տես՝ Գործք 7-ում Ստեփանոսի քարոզը):

«ՏԵՐԸ Հովսեփի հետ էր» արտահայտությունը պարբերաբար հանդիպում ենք (տես՝ 39:3,21,23) այս գլխում և այն օրհնությունները, որ գալիս են նրա վրա այս բանի շնորհիվ, դառնում է պատմության գլխավոր սյուժեն: Աստված է գլխավոր կերպարը և ոչ թե Հովսեփը:

❖ **«և նա հաջողակ մարդ էր»** Հովսեփը «հաջողակ» (BDB 852 II, KB 1026, *Hiphil* ԴԵՐԲԱՅ) մարդ էր և նրա շուրջը գտնվող մարդիկ նույնպես հաջողակ էին և բարգավաճող: Սա ճիշտ այն էր, ինչ Հակոբի ներկայությունն էր անում Լաբանի համար: Պետափրեսը նկատեց Հովսեփի ներկայության շնորհիվ այս հատուկ օրհնությունը (հ. 3):

*Hiphil* և *Qal* արմատներով ԲԱՅԸ արտահայտում է առաջադրանքի՝ գործի հաջող իրականացում (պարտադիր չէ հենց ֆիզիկական օրհնությունները):

1. Ծննդ. 24:21,40 (*Hiphil*)
2. Դատ. 18:5 (*Qal*)
3. 2 Մնաց. 26:5 (*Hiphil*)

4. Նենմ. 1:11; 2:20 (*Hiphil*)
5. Ես. 53:10; 55:11 (*Qal*)
6. Դան. 8:12,24; 11:36 (*Qal*)

Զգույշ եղեք անգլերեն սահմանումներն ու նշանակությունները աստվածաշնչյան բառային ուսումնասիրության ժամանակ:

❖ **«և իր եզիպտացի տիրոջ տանն էր»** Սա հակասում է այն փաստին, որ նա դաշտում չէր կամ որ ապրում էր իր տիրոջ տան մեջ՝ ծառաների կացարաններում ապրելու փոխարեն: Հովսեփը դարձել էր Պետափրեսի տան վատահեղի մի անդամ:

**39:3 «նրա տերը տեսավ, որ ՏԵՐԸ նրա հետ էր»** Պետափրեսը նրան չէր դրել որպես պատասխանատու միայն բանի համար, որ լավ կազմակերպչական ջիղ ուներ, այլ Աստծո օրհնությունների հետ իր յուրահատուկ կապ համար: Պետափրեսը սա արել էր բացառապես անձնական շահի՝ օգտի համար և ոչ թե որևէ կրոնական նպատակով:

**39:4** Հովսեփի ծառայությունը երկու կերպ է բնութագրվում՝

1. «անձնական ծառա», BDB 1058, KB 1661, *Piel* ԱՆԿԱՏԱԸՐ, կիրառված ավելի բարձր մակարդակի ծառաների համար, տես՝ 2 Թագ. 13:17, 18; 3 Թագ. 10:5; 4 Թագ. 4:43; 6:17
2. «վերակացու», BDB 823, KB 955, *Hiphil* ԱՆԿԱՏԱԸՐ, տես՝ 4 Թագ. 25:23

Այսօր մենք նրան կկոչեինք «ադմինիստրատիվ օգնական» կամ «գործադիր քարտուղար»: Այս ժամանակաշրջանի եզիպտական գրականության մեջ՝ «տնային տնտես»:

**39:5 «ՏԵՐԸ եզիպտացու տունը Հովսեփի պատճառով օրհնեց»** Սա ամբողջ ՀԿ-ի բովանդակությամբ կարծես թե ճշմարտություն է հանդիսանում: Գոյություն ունի ֆիզիկական օրհնության և ուխտի ժողովրդի հետ մարդու փոխհարաբերության միջև կապ (տես՝ Ծննդ. 12:3; 30:27):

**39:6 «Եվ նա իր ամբողջ ունեցվածքը Հովսեփի ձեռքում թողեց և նրա մոտ կատարված ոչ մի բանից տեղեկություն չունե՛ր՝ բացի իր կերած հացից»** Որոշ պատմաբաններ նշել են, որ գոյություն ուներ խիստ անջատողական սկզբունք եզիպտացիների և բոլոր մյուս օտարականների միջև՝ համաձայն կրոնական օրենքների, ինչպես որ այսօր հրեաների և այլ օտարականների միջև է: Հայտնի չէ, թե արդյոք սա էր պատճառը այս բացառության, սակայն տվյալ մշակութային աչառությունը ակներև է եզիպտական հասարակության մեջ (տես՝ Ծննդ. 43:32):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՐՍ. 39:6բ-18**

<sup>6</sup> Եվ Հովսեփը գեղեցիկ էր դեմքով և շատ համակրելի: <sup>7</sup>Եվ եղավ, որ այս անցքերից հետո նրա տիրոջ կինը աչք դրեց Հովսեփի վրա և ասաց. «Պառկի՛ր ինձ հետ»: <sup>8</sup>Բայց նա մերժեց և իր տիրոջ կնոջն ասաց. «Ահա իմ տերը չգիտե իր տան եղածից ինչ կա ինձ մոտ, և իր ամբողջ ունեցվածքն իմ ձեռքն է հանձնել: <sup>9</sup>Այս տան մեջ ինձնից ավելի մեծը չկա, և ինձնից ոչ մի բան չի արգելել՝ բացի քեզնից. ըստ որում՝ դու նրա կինն ես. ուրեմն ինչպե՛ս գործեմ այս մեծ չարիքը և մեղանչեմ Աստծո դեմ»: <sup>10</sup>Եվ եղավ, որ նա ամեն օր Հովսեփին ասում էր, բայց նա չէր լսում սրան, որ նրա հետ պառկի կամ նրա հետ լինի: <sup>11</sup>Եվ եղավ, որ նա մի օր իր գործը կատարելու համար տուն եկավ, և այնտեղ տղամարդկանցից ոչ մեկը չկար: <sup>12</sup>Եվ տիրուհին բռնեց նրա հագուստից՝ ասելով. «Պառկի՛ր ինձ հետ»: Եվ նա հագուստը թողեց նրա ձեռքին ու փախավ, դուրս գնաց: <sup>13</sup>Եվ երբ տեսավ, որ հագուստն իր ձեռքին թողեց ու դուրս փախավ, <sup>14</sup>կանչեց իր տան մարդկանց և նրանց պատմեց. «Տեսե՛ք, մեզ համար մի երբայեցի բերեց՝ մեզ խայտառակելու համար. նա ինձ մոտ եկավ, որ ինձ հետ պառկի, ու ես բարձրաձայն աղաղակեցի: <sup>15</sup>Եվ երբ լսեց, որ իմ ձայնը բարձրացրի ու աղաղակեցի, իր հագուստն ինձ մոտ թողեց ու փախավ, դուրս գնաց»: <sup>16</sup>Եվ կինը նրա հագուստն իր մոտ պահեց, մինչև տերը տուն եկավ: <sup>17</sup>Եվ խոսեց նրա հետ այս խոսքերի նման՝ ասելով. «Ինձ մոտ եկավ այն երբայեցի ծառան, որ դու բերեցիր մեզ համար, որ ինձ խայտառակի: <sup>18</sup>Երբ իմ ձայնը բարձրացրի և աղաղակեցի, իր հագուստն ինձ մոտ թողեց ու փախավ»:

❖ **«Եվ Հովսեփը գեղեցիկ էր դեմքով և շատ համակրելի»** Այս նույն արտահայտությունը («գեղեցիկ», BDB 421, «կազմվածքով», BDB 1061, «տեսքով», BDB 909) կիրառվում է նկարագրելու իր մորը՝ Ռաբբելին (տես՝ Ծննդ. 29:17): ՀԿ-ում նշված մի քանի գեղեցիկ տղամարդիկ կան, որոնք Մեսիայի տոհմաձագից են: Այս արտահայտությունը նաև կիրառվում է Դավթի և իր որդի Աբիսողոմի համար:

Նույնիսկ Մավուդը նկարագրվում է որպես բարձրահասակ, գողեցկադեմ տղամարդ: Հիշե՛ք, որ գեղեցկությունը հարաբերական է տարբեր մշակույթներում և տարբեր դարաշրջաններում: Հովսեփի ֆիզիկական կազմվածքը դառնալու էր Պետափրեսի կնոջ հետ իր ունեցած խնդրի պատճառը:

**39:7 «Եվ եղավ, որ այս անցքերից հետո նրա տիրոջ կինը աչք դրեց Հովսեփի վրա»** Եգիպտացի կանանց իրենց հասարակության մեջ սոցիալական հնարավոր շփման վերաբերյալ գիտենք, որ ավանդական մի ասացվածք կա նրանց սանձարձակության մասին: Պետափրեսի կինը շատ խելացի էր Հովսեփին մոտենալու հարցում: Կարծես թե նա ժամանակի ընթացքում էր մշակել իր ծրագիրը և կարծես թե այն կատարել էր մի քանի փուլերի բաժանելով (տես՝ հ. 10): Սա անշուշտ մեծ ճնշումների էր ենթարկում երիտասարդ եբրայեցի տղային, երբ այս շահագործող տիկնիկը ամեն օր մոտենում էր նրան իր սեռական բնույթի առաջարկներով: Գոյություն ունի ակնհայտ հակադրություն գլուխ 38-ում Հուդայի գործողությունների և այս գլխում՝ Հովսեփի:

**39:8-9** Հովսեփը կարծես թե շատ տրամաբանական և տեղին պատասխան է տալիս այս համարում այդ կնոջ գործողություններին: Առաջինը կապված է Պետափրեսի իր հանդեպ ցուցաբերած բարեխղճությանը և ակնարկելով, որ նրա՝ Պետափրեսի կնոջ դիրքը չպետք է խախտվի: Նաև Հովսեփը տեսնում է Աստծուն իր սեռական կյանքի ոլորտում նույնպես, ինչպես որ տեսնում էր Նրան իր կյանքի բոլոր ոլորտներում: Կարևոր է հասկանալ, որ սեռական այլասերությունը՝ նրա կարծիքով, ոչ միայն Պետափրեսի և նաև նրա կնոջ հանդեպ մեղք կլիներ, այլ իհարկե *Էյրոհիսի* հանդեպ: Նկատե՛ք, որ նա կիրառում է Աստծո համար ընդհանուր անունը (այսինքն՝ *Էյրոհիս*), քանի որ այս կինը իհարկե կրոնական առումով տեղեկացված անձ չէր և չէր կարող ճանաչել Աստծո ուխտի անունը՝ ՅԱՀՎԵՆ (տես՝ Հատուկ Թեմա 12:1):

**39:10 «նա ամեն օր Հովսեփին ասում էր»** Սա պարբերաբար կրկնվող սեռական հարկադրանքի բեռ էր կամ հավանաբար սեռական բնույթի հրաման իր տիրոջ տիկնոջ կողմից: Հովսեփը ստրուկ էր: Նա իրավունք չուներ իր սեփական գործողությունները վերահսկելու:

**39:11** Տեքստի բովանդակությունից հասկանում ենք, որ նա նույնիսկ ծրագրել էր իր ծառաների բացակայությունը, երբ Հովսեփը տուն եկավ իր ամենօրյա տնային պարտականությունները կատարելու համար: Ռաբբիներն ասում են, որ սա եգիպտական մի տոնական օր էր և նա՝ Պետափրեսի կինն ասել էր, որ հիվանդ է, որպեսզի մնար տանը և գայթակղեր Հովսեփին:

**39:12 «Եվ նա հագուստը թողեց նրա ձեռքին ու փախավ, դուրս գնաց»** Ոմանք մեղադրում են Հովսեփին միամիտ լինելու համար, քանի որ իր հագուստը թողեց (BDB 93, հայտնի չէ, թե ստույգ ինչ հագուստ էր, *UBS A Handbook on Genesis*, էջ՝ 895, պնդում է, որ այդ օրերի Եգիպտոսի ծառաները կրում էին միայն մի փոքր շապիկ), սակայն ի՞նչ պետք է նա աներ: Սա տեղին, հոգևոր պատասխան էր ցանկասիրության փորձությանը (տես՝ 2 Տիմ . 2:22; 2 Պետ . 1:4):

**39:13-18** Այս համարները բովանդակում են Պետափրեսի կնոջ մեղադրանքները իր մյուս ծառաների և ապա իր ամուսնու դեմ:

**39:14 «կանչեց իր տան մարդկանց և նրանց պատմեց»** Նրանք պետք է որ մոտակայքում լինեին, սակայն տանը չէին: Նրա հայտարարության մեջ մի քանի հետաքրքիր տարրեր կան՝

1. նա մեղադրեց իր ամուսնուն, որ այդ եբրայեցի ստրուկին բերել էր իրենց տուն (տես՝ հ. 19)
2. Հովսեփի եբրայեցի լինելու համար նա ռասայական վիրավորանք հնչեցրեց

Եգիպտական արձանագրություններից հայտնի է, որ նրանք այլ ազգերից իրենց գերագանց էին համարում:

❖ **«Եբրայեցի»** «Եբրայեցի» տերմինը (BDB 720) սերվել է այս երկու հավանական տարբերակներից՝ (1) գալիս է Եբրեյցի՝ այն նախահայրը, որից ձևավորվել են Աբրահամի ընտանիքը (տես՝ Ծննդ . 11:16, կիրառված Աբրահամի համար՝ 14:13-ում) և նրա սերունդները (տես՝ 39:14,17; 40:15; 41:12; 43:32) կամ (2) բխում է մի ընդհանուր անունից, որը կիրառվում է քոչվոր մարդկանց համար, որոնք եկել են Հարբիի (պանդուխտ, գաղթական) կոչվող գետի մյուս կողմից, որը գրված է Թել Էլ Արմատնայի նամակներում:

❖ **«մեզ խայտառակելու համար»** Եբրայերեն «խայտառակել» տերմինը (BDB 850, KB 1019, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ) այս համարում կարծես թե մշակույթային դարձվածք է «փորձել սեռական բնույթի բռնություն գործադրել» (տես՝ 26:8): Ակնարկն այն էր, որ իբրև Հովսեփը դա պարբերաբար իր և Պետափրեսի տան մյուս անդամների հանդեպ էր այդպես վարվել:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 39:19-23**

<sup>19</sup>Եվ երբ նրա տերը լսեց կնոջ խոսքերը, որ իրեն պատմել էր՝ ասելով. «Քո ծառան ինձ հետ այսպիսի բաներ արեց», նրա բարկությունը բորբոքվեց: <sup>20</sup>Հովսեփի տերը նրան վերցրեց ու բանտ նետեց՝ այնտեղ, որտեղ թագավորի բանտարկյալներն էին կապված. և նա այնտեղ՝ բանտում էր: <sup>21</sup>Բայց ՏԵՐԸ Հովսեփի հետ էր, և նրան ողորմություն ցույց տվեց, և նրան շնորհ գտնել տվեց բանտապետի առաջ: <sup>22</sup>Եվ բանտապետը Հովսեփի ձեռքը հանձնեց բանտում *եղած* բոլոր բանտարկյալներին, և ինչ որ այնտեղ արվում էր, անողն ինքն էր: <sup>23</sup>Բանտապետը նրա ձեռքի տակ եղած ոչ մի բան չէր ստուգում, որոնհետև ՏԵՐԸ նրա հետ էր, և նրա բոլոր արարքները ՏԵՐԸ հաջողում էր:

**39:20** «Հովսեփի տերը նրան վերցրեց ու բանտ նետեց» Այսպիսի հանցանքի նորմալ պատիժը մահապատիժն էր (The IVP Bible Background Commentary, էջ՝ 71): Թվում է, թե Պետափրեսը իր կնոջ ասածների հանդեպ կասկածներ ուներ: Ես վստահ եմ, որ Հովսեփի կյանքի այս հատվածում, անգամ Աստծո վրա մեծ հավատք ունենալով հանդերձ, նա պետք է մտածեր, թե ինչ էր ընդհանրապես կատարվում (տես՝ Ծննդ. 40:15):

❖ «**ու բանտ նետեց՝ այնտեղ, որտեղ թագավորի բանտարկյալներն էին կապված**» Սա շատ անսովոր տերմին է բանտի համար: Սա կարծես թե «շրջանաձև» (Երգ Երգոց 7:2-ից) արմատից է ծագել կամ «շրջապատված» (BDB 690, գտնվում է միայն 39:20-23 և 40:3,5-ում) և որոշ մեկնաբաններ պնդում են, որ դա շրջանաձև բանտ էր, մինչ մյուսները կարծում են, որ դա մի հատուկ շինություն էր պահակախմբի ղեկավարի հողատարածքի վրա կառուցված (այսինքն՝ Պետափրեսի): Եթե դա ճիշտ է, ապա կարող են տեսնել, թե ինչպես է Հովսեփը ըստ ամենայնի տեղափոխվել տիրոջ տնից դեպի տիրոջ բանտը, որն այնքան էլ հեռու չէր գտնվում:

Աստծո «աներևույթ ձեռքը» գործում է սկսելու Իր ծրագրի հաջորդ էտապը: Հովսեփը արմատապես փոխվել էր գլուխ 37-ից ի վեր ՅԱՀՎԵԻ հանդեպ ունեցած իր հավատքով: Աստծուն ճանաչելը պետք է ազդի մեր բնավորության և գործերի վրա:

**39:21-23** Աստծո ներկայությունը դեռևս Հովսեփի հետ էր շատ յուրօրինակ և, ըստ երևույթին, տեսանելի կերպով: Սա չի նշանակում, որ շատ դժվար փորձառություն չէր վերապրում նա իր մարմնով և մտքով, որոնց միջով նա իրականում անցնում էր, սակայն Աստծո հոգածությունը ակնհայտ կերպով նրա հետ էր:

**39:23** Այս արտահայտությունը նման է հ. 6-ին, որտեղ Հովսեփը հոգ էր տանում ամեն ինչի համար: Նա աստվածատուր պարզև ուներ կազմակերպչական հարցերում և հետագայում տեսնում ենք, որ նաև երազներ է մեկնում:

**ԾՆՆԴՈՑ 40**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հովսեփը մեկնում է մի երագ	Բանտարկյալների երագները	Հովսեփը՝ երագներ մեկնողը	Հովսեփը մեկնում է բանտարկյալների երագները	Հովսեփը մեկնում է Փարավոնի պաշտոնյաների երագները
40:1-8	40:1-8	40:1-8	40:1-4 40:5-7 40:8ա 40:8բ	40:1-4 40:5-8
40:9-15	40:9-15	40:9-15	40:9-11 40:12-15	40:9-15
40:16-19	40:16-19	40:16-19	40:16-17 40:18-19	40:16-19
40:20-23	40:20-23	40:20-23	40:20-23	40:20-23

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն



**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 40:1-8**

<sup>1</sup>Եվ այս բաներից հետո եղավ, որ Եգիպտացի թագավորի մատովակը և հացթուխը իրեց տիրոջ՝ Եգիպտոսի թագավորի դեմ հանցանք գործեցին:<sup>2</sup>Եվ Փարավոնը բարկացավ իր երկու պաշտոնյաների՝ մատովակապետի և հացթուխների պետի վրա.<sup>3</sup>և նրանց բանտարկեց դահճապետի տան բանտում, որտեղ որ Հովսեփն էր արգելափակված:<sup>4</sup>Գահճապետը նրանց հանձնարարեց Հովսեփին, և նա ծառայում էր նրանց, նրանք միառժամանակ մնացին բանտում:<sup>5</sup>Եվ երկուսն էլ երազ տեսան, ամեն մեկն իր երազը՝ մեկ գիշերում, ամեն մեկի երազն իր մեկնաբանությամբ՝ Եգիպտոսի թագավորի մատովակն ու հաղթուխը, որ բանտում կապված էին:<sup>6</sup>Հովսեփն առավոտյան նրանց մոտ եկավ և տեսավ, որ նրանք տխուր էին:<sup>7</sup>Եվ հարցրեց Փարավոնի պաշտոնյաներին, որ բանտարկված էին իր տիրոջ տանը. «Ինչո՞ւ են ձեր դեմքերն այսօր տխուր»:<sup>8</sup>Ասացին նրան. «Երազ ենք տեսել, և այն մեկնող չկա»: Եվ Հովսեփն ասաց նրանց. «Մի՞թե մեկնություններն Աստծուն չեն պատկանում, խնդրեմ, պատմեցե՛ք ինձ»:

**40:1 «մատովակը»** Այս բառը ծագել է «խմել» ԲԱՅԻՑ (BDB 1052): Հանախ այն թարգմանվում է «մատովակ»: Այս բառի արամերեն թարգմանությունը «գլխավոր մատովակ» է: Աստվածաշնչում այս պաշտոնի մասին խոսող երկու այլ հատվածներ կան՝ (1) Նեեմ.1:11 (BDB 1052 I) և (2) «Ռափսակ» տերմինը (BDB 913 II, տես՝ 4 Թագ.18:17,19,26,27,28,37; 19:4,8; Ես.36:2,4,11,12,13,22; 37:4,8): Ըստ երևույթին սա շատ բարձրաստիճան պաշտոնյա էր և շատ վստահելի անձ: Նա ոչ միայն համտեսում էր թագավորի կերակուրը, այլ նաև նրա անձնական խորհրդատուն էր համարվում: Նա պետք է միշտ աչալրջորեն հսկեր ցանկացած դավադրության դեպքում, որպեսզի թագավորը չվիրավորվեր կամ սպանվեր: Նա խոհարարական թիկնապահ էր:

❖ **«Եգիպտոսի թագավորի հացթուխը»** Հացթուխը (BDB 66, KB 78 *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐ-ԲԱՅ) նույնպես շատ կարևոր պաշտոնյա և վստահելի անձ էր համարվում հին Արևելքի դատարաններում: Սա հատկապես ճիշտ էր Եգիպտոսում, որտեղ մենք տեղյակ ենք, որ պարբերաբար թխվում էին 38 տարբեր տեսակի խմորեղեններ և 57 հացի տեսակներ: Հացերից մի քանի տեսակները ներկվում էին տարբեր գույներով և պատրաստվում ցորենի տարբեր տեսակներից և տարբեր կաղապարներով՝ ֆիզիկական տեսքով, որոնք ներկայացնում էին որոշ կենդանիներ ու Եգիպտոսին բնորոշ առարկաներ:

❖ **«իրենց տիրոջ՝ Եգիպտոսի թագավորի դեմ հանցանք գործեցին/վիրավորեցին»** Թե ինչպե՞ս վիրավորեցին, չի նշվում: Այն կարող էր լինել՝ (1) իրենց կերակրի և/կամ խմիչքի որակը կամ (2) նրանց խորհուրդը կամ խորհրդի պակասը: «Վիրավորել» ԲԱՅԸ (BDB 306, KB 305, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ունի լայն ստուգաբանական հիմք («նպատակից շեղվել», «մեղանչել», «սխալ ընթանալ», տես՝ 39:9; 42:22; 43:9): Ռաշին (Միջին Դարի հրեա մեկնաբան) ասում է, որ վիրավորանքները վերաբերում էին այս դեպքերին՝ (1) եթե թագավորի գավաթի մեջ ճանճ հայտնաբերվեր և (2) եթե թագավորի հացի մեջ խնի կտոր գտնվեր: Սակայն սրանք միմիայն կասկածելի մեկնություններ են կամ բանավոր ավանդույթ:

**40:2 «Փարավոնը բարկացավ/զայրացավ»** Այս ԲԱՅԸ (BDB 893, KB 1124, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) հանախ կիրառվում է՝

1. Աստծո բարկության համար, Ղևտ. 10:6; Թվոց 16:22; 2 Օր. 1:34; 9:19
2. մարդու բարկության համար
  - ա. Մովսեսը, Ելից 16:20; Ղևտ. 10:16; Թվոց 31:14
  - բ. Փղտացիների հրամանատարները, 1 Թագ.29:4
  - գ. Նեեմանը, 4 Թագ.5:11
  - դ. Աստծո մարդը, 4 Թագ.13:19
  - ե. Ասվերոսը, Եսթեր 1:12
  - զ. թագավորի թիկնապահները, Եսթեր 2:21

Այն արտահայտում է խիստ, ուժգին զայրույթ, որից բխում է գործողություն: Սա 39:19 համարից մեկ այլ բառ է՝ «նրա բարկությունը բորբոքեց» (BDB 354, KB 351):

**40:3 «և նրանց բանտարկեց դահճապետի/թիկնապահների գլխավորի տան բանտում, որտեղ որ Հովսեփն էր արգելափակված»** Այս տիտղոսը՝ «թիկնապահների գլխավորը», վերաբերում է Պետափրեսին (տես՝ 37:36; 39:1): Պետափրեսի բանտապետը (BDB 978) Հովսեփին նշանակեց որպես բանտի պատասխանատու: Ակնհայտ է, որ այս երկու բանտարկյալները քաղաքականորեն ձեռնմխելի

մարդիկ էին, քանի որ շատ հնարավոր էր, որ նրանք կարողանային վերականգնվել՝ ներվել և կարող էին դառնալ դատարանում որպես հզոր թշնամիներ:

❖ **«բանտարկեց»** Այս բառը նշանակում է «կապեց» (BDB 63, KB 75): Հովսեփը հավանաբար կապված էր շրթանորով (տես՝ Սաղմ. 105:18) ինչ-որ ժամանակով և չնայած Աստված նրա հետ էր, նրա կյանքը դժվար էր ու դաժան: Մեզ հայտնի չէ, թե նա որքան մնաց բանտում. որոշ մեկնաբաններ ասում են 10 տարի (այսինքն այդ «որոշ ժամանակը» հ. 4-ի):

**40:4 «դահնապետը նրանց հանձնարարեց Հովսեփին»** Հնարավոր է, որ այս մարդը ցանկանում էր, որ այս բարձրաստիճան պաշտոնյաների հանդեպ լավ վերաբերմունք ցուցաբերվեր, և այդ գործում Հովսեփը կարծես թե լավագույն անձնավորությունն էր:

Հետաքրքիր է, թե արդյոք այս անձը, որ կոչվում էր «դահնապետ», վերաբերում է՝

1. Պետափրեսին, 37:36; 39:1

2. բանտապետին, 39:21-23

Հնարավոր է, որ դա մի հատուկ բանտ էր, որտեղ հսկիչը Պետափրեսն էր, սակայն նա լիազորել էր «բանտապետին», որն էլ իր հերթին լիազորել էր Հովսեփին:

**40:5** Այս համարը գրական հարթակ է պատրաստում Հովսեփի երկրորդ պարզևր բացահայտելու համար (այսինքն՝ երազների մեկնության): ՅԱՀՎԵՆ հաճախ հայտնում է Իրեն (կամ Տիրոջ Հրեշտակը) Իր ժողովրդին տեսիլքների միջոցով, սակայն Աբրահամի սերնդից դուրս մարդկանց համար Նա հաճախ օգտագործում էր երազներ (տես՝ 20:3; 31:24; 41:1; Դանիել 2):

**40:6-7 «Հովսեփն առավոտյան նրանց մոտ եկավ և տեսավ, որ նրանք տխուր էին»** Այստեղ ակնհայտ է, որի Հովսեփը բանտարկության այս շրջանում այլևս կապանքների մեջ չէր և որ նա իրոք մտահոգված էր այս մարդկանց թե՛ ֆիզիկական, և թե՛ էմոցիոնալ («տխուր էին», BDB 277 II, KB 277, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) վիճակի համար:

**40:8** Դարձյալ Հովսեփը հայտնում է կյանքի վերաբերյալ իր ունեցած կարևորագույն մտտեցումը՝ տեսակետը (այսինքն, որ Աստված է վերահսկում ամեն բան, ներառյալ երազները, տես՝ 41:16,25,28; Դան . 2:27-28,45): Մենք գիտենք նրա կյանքից, որ երազները շատ կարևոր միջոց էին Աստծո համար իր հետ խոսելու, երբ նա դեռ երիտասարդ պատանի էր (տես՝ Ծննդոց 37), չնայած որ դա պատճառ եղավ, որ իր ընտանիքի կողմից մերժվեց:

«Պատմեցե՛ք» ԲԱՅԸ (բառացի՝ «վերհիշեք», BDB 707, KB 765, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) նաև բացում է հաջորդ համարը («պատմեց», *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 37:10):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 40:9-15**

<sup>9</sup>Եվ մատովակապետը պատմեց իր երազը Հովսեփին և ասաց նրան. «Երազումս տեսա, որ առջևս մի որթ կար. <sup>10</sup>և այն որթի վրա երեք ճյուղ կար և հենց որ բողբոջեց, ծաղկեց, և նրա ողկույզները խաղող հասցրին: <sup>11</sup>Եվ Փարավոնի բաժակն իմ ձեռքին էր. և խաղացողներն առա ու ճմլեցի Փարավոնի բաժակի մեջ և գավաթը տվեցի Փարավոնի ձեռքը»: <sup>12</sup>Եվ Հովսեփը նրան ասաց. «Սա է դրա մեկնությունը. երեք ճյուղը երեք օր է: <sup>13</sup>Երեք օրից Փարավոնը կբարձրացնի քո գլուխը և քեզ քո պաշտոնին կվերականգնի. և բաժակը նրա ձեռքը կտաս, ինչպես որ առաջ էիր անում, երբ նրա մատովակն էիր: <sup>14</sup>Բայց ինձ հիշի՛ր, երբ քեզ համար լավ լինի, խնդրում եմ, ինձ էլ լավություն արա և ինձ հիշի՛ր Փարավոնի առաջ և ինձ հանի՛ր այս տնից. <sup>15</sup>որովհետև իրապես գողացվել եմ եբրայեցիների երկրից և այստեղ էլ մի այնպիսի բան չեմ արել, որի համար ինձ այս գնդանը նետեին»:

**40:9 «առջևս մի որթ կար»** Շատ մեկնաբաններ պնդում են, որ սա եղել է պատմական երազ, քանի որ Եգիպտոսում չէր օգտագործվում խմորված գինի: Ամեն դեպքում թվում է, թե հնագույն պատմաբան Հերոդոտոսը ինչ-որ տեղ այս առումով թյուրիմացություն է թույլ տվել: Ծիշտ է, որ խմորում անցած գինին տարածված խմիչք չէր Եգիպտոսում, սակայն օգտագործվում էր քահանայական և արքայական միջավայրում: Ուստի, այն կարող է հանդիսանալ բացառիկ խորհրդանիշ թագավորական խմիչքի համար (տես՝ *Աստվածաշնչի Բարբերն ու Սովորությունները* Ջեյմս Մ. Ֆրիմեն, էջ՝ 45 /*Manners and Customs of the Bible* James M. Freeman/):

**40:11 «ճմլեցի»** Այս ԲԱՅԸ (BDB 965, KB 1315, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) զարմանալիորեն գտնվում է ՀԿ-ում միայն այստեղ:

**40:13** Մատովակը վերադառնալու էր իր արքայական վատահույության ու ծառայությանը:

«Ինչպես որ առաջ էիր անում» թարգմանված խոսքը բառացիորեն նշանակում է «դատաստան» (BDB 1048), սակայն կիրառվում է հազվադեպ ոչ աստվածաբանական իմաստով: Սովորաբար այն թարգմանվում է «դատաստան» կամ «արդարություն»:

**40:14-15** Հովսեփի իր ծառայության և բարության համար մատովակից շնորհ է խնդրում: Նա բացատրում է իր իրավիճակի անարդարությունը և խնդրում Փարավոնից իր ազատումը: Հովսեփը չպետք է պահվեր որպես Փարավոնի բանտարկյալ, քանի որ բռնված ստրուկ էր:

**40:15** Իր եղբայրների կողմից մատնվելու վերաբերյալ Հովսեփի մտքերը ինչ-որ տեղ արտահայտվում է «առևանգվել» բառով (բառացի՝ «գողացվել»): Սա տեքստում ավելի շեշտադրված է կիրառելով միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԻ ձևը (BDB 170, KB 198):

❖ **«գնդան»** Այս բառը (BDB 92) միևնույն տերմինն է, որ կիրառվում է չոր ջրամբարի համար (տես՝ 37:24), որի մեջ նետել էին Քանանում իր եղբայրները: Նա պարզապես մի գուրբից մյուս գուրբն էր տեղափոխվում:

Այս տերմինը օգտագործվում է բանտի համար Ելից 12:29; Երեմ. 37:16-ում և այստեղ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 40:16-19**

**16**Երբ հացթուխների պետը տեսավ, որ մեկնաբանությունը լավն էր, ասաց Հովսեփին. «Ես էլ երագումս տեսա, որ գլխիս վրա երեք ընտիր այլուրով լի զամբյուղ ունեի<sup>17</sup> և ամենավերևի զամբյուղի մեջ Փարավոնի համար բոլոր խմորեղեններից կար, և թռչուններն ուտում էին դրանցից գլխիս վրայի զամբյուղից»: **18**Հովսեփը պատասխանեց. «Սա է դրա մեկնությունը. երեք զամբյուղը երեք օր է. **19**երեք օրից հետո Փարավոնը կկտրի քո գլուխը և քեզ մի ծառից կկախի, և թռչունները կուտեն քո մարմինը»:

**40:16** «Ես էլ երագումս տեսա, որ գլխիս վրա երեք ընտիր այլուրով լի զամբյուղ ունեի» Եբրայերեն «սպիտակ հաց/ընտիր այլուր» տերմինը (BDB 301 I) շատ հազվադեպ տերմին է, որը բխում է արամերեն և արաբերեն մի արմատից նշանակող «սպիտակ» (NIDOTTE, հատոր՝ 2, էջ՝ 54): Դա կարող է վերաբերել սպիտակ հյուսած զամբյուղի, որտեղից թռչունները կարող էին ուտել հացը՝ թե՛ վրայից և թե՛ կողքերից (տես՝ հ. 17):

Հետաքրքիր է նշել, որ Քանանում կանայք կրում էին ծանր բեռներ իրենց գլուխների վրա, սակայն Եգիպտոսում միայն տղամարդիկ էին ծանր բեռները կրում իրենց գլխի վրա, իսկ կանայք՝ ուսերին: Սա ցույց է տալիս այս պատմության յուրօրինակ պատմականությունը:

**40:17** «Փարավոնի համար բոլոր խմորեղեններից կար» Սա բավականին ճշգրիտ տեղեկություն է, քանի որ որոշ եգիպտական փաստաթղթերից գիտենք, որ Եգիպտոսում հայտնի էին 38 տեսակ խմորեղեն և 57 տեսակ հաց (տես՝ գրառում հ. 1):

**40:19** «Փարավոնը կկտրի քո գլուխը» Հի. 13-19-ից հայտնի է, որ այս արտահայտությունն ունի արմատական վերամեկնություն՝ «գլուխը վեր կհանի, կթոթցի» (BDB 669, KB 724, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Հ. 13-ում այն պարզապես նշանակում է «գլուխը վեր բարձրացնի, որպեսզի բարիք անի նրանց հանդեպ» (տես՝ Թվոց 6:26): Այն «ազատել» (տես՝ 4 Թագ. 25:27) բառի համար դարձվածք է հանդիսանում: Հ. 19-ում սա նշանակում է «գլուխը բարձրացնել կտրելու համար» (BDB 671, 3բ):

Նաև ակնհայտ է, որ հ. 19-ը չի վերաբերում կախելուն, քանի որ դժվար է մեկին կախել, որի գլուխը կտրված է: Այս կախելը ըստ երևույթին նշանակում էր հանրորեն խոցել կամ ցիցը հանել այն բանից հետո, երբ մարդն արդեն մեռած է (տես՝ Հեսու 8:29; 1 Թագ. 31:9-10; 2 Թագ. 4:12): Հանրության առջև ցիցը հանելու նպատակը կարծես թե 2 Օր. 21:22,23-ում գրվածն է: Այն փաստը, որ մարդու դիակը դառնում է թռչունների կեր, հատկապես ահագոու է, քանի որ եգիպտացիները մեծ կարևորություն են տալիս մահից հետո մարմնի պահպանության համարը այն գմռսելը:

Հետաքրքիր է, թե արդյոք կապ կա՝

1. «բանտի» (բառացի՝ «շրջանաձև») 39:20-23; 40:3,5
2. «գնդանի» (բառացի՝ «գուրբ») 40:15-ի
3. «բարձրացնել» բառի միջև

Կարո՞ղ էր արդյոք բանտը լինել մեծ շրջանաձև գուրբ երկրի ներսում՝ գետնափոր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 40:20-23**

<sup>20</sup>Եվ եղավ երրորդ օրը, որ Փարավոնի ծննդյան օրն էր, և իր բոլոր ծառաների համար խնջույ է սարքեց և իր ծառաների մեջ մատովակապետի ու հացթուխների պետի գլուխը բարձրացրեց: <sup>21</sup>Եվ մատովակապետին վերականգնեց իր պաշտոնին, և սա բաժակը տվեց Փարավոնի ձեռքը: <sup>22</sup>Բայց հացթուխների պետին կախել տվեց, ինչպես որ Հովսեփը մեկնել էր նրանց: <sup>23</sup>Մատովակապետը, սակայն, չիղեց Հովսեփին, այլ մոռացավ նրան:

**40:20-23** Սա Հովսեփի մեկնության իրականացման և գլխավոր մատովակի հիշելու վերաբերյալ հատվածն է (BDB 269, KB 269, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Դարձյալ, ոչ ոք բացի ՅԱՀՎԵԻՑ չէր կարող օգնել Հովսեփին: Աստված է միակ օգնության աղբյուրը:

Դարձյալ «բարձրացնել» ԲԱՅՆ է կիրառվում հակասող իմաստով (տես՝ հ. 20):

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ 39-40 ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Սա ուղեգրւյց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու: Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Պետափրեսը Հովսեփին բարձր պաշտոն տալիս:
2. Ինչպե՞ս է Հովսեփն այս գլխում հակադրում Հուդային ըստ նախորդող գլխի:
3. Արդյո՞ք Հովսեփը հասակացավ, որ ինքը նպատակով էր հայտնվել բանտում:
4. Արդյո՞ք Աստված միշտ է խոսում երազների միջոցով, թե պարզապես որոշակի հատուկ երազներով է խոսում: Երազները մեկնաբանելը տարածված հոգևոր կարողությունն է, թե ՀԿ-յան սահմանափակ փարձառություն:

**ԾՆՆԴՈՑ 41**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Փարավոնի երազը	Փարավոնի երազը	Հովսեփի բարձրացումը	Հովսեփը մեկնում է թագավորի երազները	Փարավոնի երազը
41:1-8	41:1-8	41:1-8	41:1-8	41:1-4 41:5-7 41:8-13
41:9-13	41:9-13	41:9-13	41:9-13	
Հովսեփը մեկնում է				
41:14-24	41:14-24	41:14-21	41:14-15 41:16 41:17-24	41:14-16 41:17-24
41:25-36	41:25-36	41:25-36	41:25-32 41:33-36	41:25-32 41:33-36
	Հովսեփի իշխանության բարձրանալը		Հովսեփը կարգվում է Եգիպտոսի կառավարիչ	Հովսեփի բարձրացումը
41:37	41:37-45	41:37-45	41:37-46ա	41:37-43
Հովսեփը դառնում է Եգիպտոսի կառավարիչ				
41:38-45				41:44-45
41:46-49	41:46-49	41:46-49	41:46բ-49	41:46-49
Հովսեփի որդիները				Հովսեփի որդիները
41:50-52	41:50-52	41:50-52	41:50-52	41:50-52
41:53-57	41:53-57	41:53-57	41:53-57	41:53-57

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգրով մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 41:1-8**  
**<sup>1</sup>Եվ եղավ, որ երկու տարի անց Փարավոնը երազ տեսավ և ահա կանգնել էր գետեզրին: <sup>2</sup>Եվ ահա գետից գեղեցիկ տեսքով և պարարտ մարմնով յոթ երինջներ ելան և արածում էին հովտում: <sup>3</sup>Եվ ահա նրանց ետևից ուրշ յոթ երինջ դուրս եկան գետից՝ այլանդակ տեսքով ու վտիտ մարմիններով և կանգնեցին այն երինջների մոտ՝ գետեզրին: <sup>4</sup>Եվ այլանդակ տեսքով ու վտիտ մարմիններով երինջները կերան այն յոթ գեղեցկատես ու պարարտ երինջներին: Եվ Փարավոնը զարթոնեց: <sup>5</sup>Եվ քնեց ու երկրորդ անգամ երազ տեսավ. ահա մի ցողունի վրա յոթ պարարտ ու ընտիր հասկեր կային: <sup>6</sup>Եվ ահա նրանց ետևից յոթ վտիտ ու խորշակահար հասկեր էին բուսել. <sup>7</sup>և այն վտիտ հասկերը կույ տվին յոթ պարարտ ու լիքը հասկերին: Փարավոնը զարթոնեց, և ահա երազ էր: <sup>8</sup>Եվ եղավ, որ առավոտվանից նրա հոգին խռովվեց, և նա կանչել տվեց Եգիպտոսի բոլոր մոզերին և երկրի բոլոր իմաստուններին. և Փարավոնը պատմեց նրանց իր երազները, բայց մեկը չգտնվեց, որ մեկներ դրանք Փարավոնի համար:**

**41:1 «երկու տարի անց»** Իհարկե սա կապ ունի գլուխ 40-ի հետ, որտեղ Հովսեփը մեկնում է երկու մարդկանց երազները, երկուսն էլ հուսալով, որ կազատվեն բանտից, և չնայած դրան, անհաջողություն եղավ: Այս ժամանակը հաշվել են մի ծառայի վերականգնումից և մյուսի մահապատժից հետո: Հովսեփի ամբողջ պատմության ընթացքում հետաքրքիր է, որ հեղինակը կամ խմբագիրը մեզ մի քանի տարեթվեր է ներկայացնում՝ (1) նա տասնյոթ տարեկան էր, երբ ստրկության վաճառվեց Եգիպտոս (տես՝ Ծննդ. 37:2), (2) նա Եգիպտոսում դարձավ երկրորդն իր իշխանությամբ, երբ երեսուն տարեկան էր (տես՝ Ծննդ. 41:46): Այս կերպարներով հնարավոր է տեսնել, որ նա մնացել էր բանտում գրեթե տասներեք տարի: Սա պայմանավորված է այն հանգամանքով, թե քանի տարի է նա մնացել Պետափրեսի տան ծառայության մեջ նախքան նրա կնոջ հետ տեղի ունեցած դեպքը:

❖ **«Փարավոն»** Փարավոնը Եգիպտոսի բոլոր թագավորների համար կիրառվող հավաքական տիտղոս է, ինչպես Հադադը Սիրիայում, հետագայում Կայսրը՝ Հռոմում, և Ցարը՝ Ռուսաստանում: Այս տերմինի ստուգաբանությունը հայտնի չէ, սակայն Եգիպտագետներից շատերը ենթադրում են, որ այն ծագել է «մեծ տուն» (BDB 829, այսինքն՝ աստվածների տուն) արտահայտությունից: Շատ կասկածներ են եղել այն ժամանակի հարցում, թե երբ է Հովսեփը նշանակվել որպես երկրորդ իշխանություն ունեցող անձ Եգիպտոսում: Շատերը ենթադրում են, որ դա տեղի է ունեցել Հիքսոսների ժամանակաշրջանում, որոնք հայտնի էին որպես «Հովիվ Թագավորներ», որոնք ըստ երևույթին Մեմֆիսի ժողովուրդ էին և ոչ թե եգիպտացիներ (տես՝ AB, էջ՝ 316): Նրանք թագավորել են Ք. Ա. 1730-1570թթ: Սակայն հետաքրքիր է, որ հ. 1-ում «գետ» տերմինը, որը ըստ երևույթին վերաբերում է Նեղոսին, հայտնվում է մի այնպիսի տեսքով, որ միայն 18-րդ Դինաստիայի կամ Ք. Ա. 1546-1085թթ. ընթացքում է հայտնվում: Եգիպտական փաստաթղթերից նաև իմանում ենք, որ Եգիպտոսի ամբողջ պատմության ընթացքում պատասխանատու պաշտոններում եղել են սեմական արմատներ ունեցող մարդիկ շատ այլ եգիպտական դինաստիաներում, քան վերը նշված երկուսը:

❖ **«երազ»** Մեծաքանակ գրականություն կա Եգիպտոսում և Միջագետքում երազների և տեսիլքների մեկնությունների վերաբերյալ: Հետաքրքիր է, որ այս երկու երբայեցի մարդիկ, որոնք ներգրավվախ են եղել երազների մեկնություններում, յուրաքանչյուրն էլ աշխատել է հեթանոս թագավորների համար՝ Դանիելը Միջագետքում, իսկ Հովսեփը՝ Եգիպտոսում:

NIDOTTE, հատոր 2, էջ՝ 154, հետաքրքիր մեկնաբանություն է տալիս երեք տեսակի երագների վերաբերյալ:

1. բնական քուն, Սաղմ. 126:1; Ես. 29:7-8; Ժող. 5:7
2. սուտ հայտնություն, Երեմ. 23:25,27,32; 27:9-10; 29:8; Չաք. 10:2
3. ճշմարիտ հայտնություն, Ծննդ. 20:3; 28:12; Թվոց 12:6; 3 Թագ. 3:5; Դան. 2:28; Մատթ. 1:20

Տեսիլքները հաճախ կարող են տեղի ունենալ գիշերով, սակայն տարբերվեն երագներից: Ստույգ տարբերության բնույթը ճի սահմանվում: ՅԱՀՎԵՆ հաղորդակցվում է անձի ենթագիտակցության հետ, կիրառելով սիմվոլներ և այլաբանություններ, որոնց նրանք իհարկե ծանոթ են:

❖ **«Նեղոս»** Այս (BDB 384) բացառապես եգիպտական տերմինների շարքերում առաջինն է: Դրանք ոչ միայն բացառապես եգիպտական տերմիններ են, այլ ամբողջ ենթատեքստը մշակութային եգիպտական է: Այս գետը և դրա տարեկան հոսքը հանդիսանում էր Եգիպտոսի կյանքի և պտղաբերության համար որպես կարևորագույն աղբյուր: Այն համարվում էր որպես աստված (տես՝ Ելից 1:22) որին պետք էր հանդարտեցնել:

**41:2 «յոթ երինջներ»** Հռոմեացի պատմաբան Պլուտարքոսից, և վաղ եկեղեցու շրջանի հայրերից մեկից՝ Ալեքսանդրիացի Կլեմենտոսից իմանում ենք, որ «երինջը կամ կովը» (BDB 831) խորհրդանշում էր Եգիպտոսում հողի առատությունը: Քանի որ Եգիպտոսում կովն էր միակ նախարային կենդանին, իսկ ոչխարներ լինում էին Պաղեստինում: Երինջը եգիպտական երագում ցայտուն ընտրություն էր գյուղատնտեսական առատության համար (այսինքն՝ «ողորկ, փայլուն», BDB 421 /բառացի՝ «գեղեցիկ»/ և «պարարտ», BDB 135):

❖ **«արածում էին հովտում»** Սա ևս մեկ եգիպտական փոխառնված բառ է: Եգիպտական աղբյուրներից գիտենք, որ նախիրները Նեղոսի ջրերի մեջ էին ընկղմվում մի քանի նպատակով՝ (1) որպեսզի զովանային, (2) միջատներին հեռացնեին իրենցից, և (3) ուտեին ճահճաուտի մեջ գտնվող խոտերը (BDB 28):

**41:3-4** Այս կովերը հ. 2-ի պարարտ կովերի ճիշտ հակառակն էին՝

1. տգեղ (բառացի՝ «վատ տեսքով»), BDB 948 I ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 909
2. վտիտ, հյուծված (բառացի՝ «մարմնով նիհար»), BDB 201 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 142

Նրանք կերան (BDB 37, KB 46, *Qal* ԱՆԿԱՏԱԲ) պարարտ կովերին (հ. 4)

**41:5** Երկրորդ երագը կրկնվող է, միայն թե կովերի փոխարեն այժմ հակադրված են հացահատկի հասկերը (BDB 987 II):

**41:6 «արևելյան քամի /հայերենում՝ խորշակահար/»** Այս անապատային քամին (BDB 870), շատ վատ հոչակ ուներ երկրի գյուղատնտեսական բերքը կործանելու մեջ, և Պաղեստինում այն կոչվում էր «Սիրրոկո» (արամերեն), որը փչում էր հարավարևելքից: Եգիպտոսում այր կոչվում էր «Խամսին» և ավելի շատ փչում էր հարավից, հարավարևելքից: Դրա մասին խոսվում է Եզեկ. 17:10-ում և Ովսեա 13:15-ում: Նախիրների համար նախատեսված ամբողջ կերակուրը (ուստի և մարդիկ) ոչնչանում էին:

**41:8 «նրա հոգին խռովվեց»** «Հոգի» (BDB 924) թարգմանված տերմինը *ruah* բառն է, որն արտահայտում է երկրագնդի վրա կենդանիների և մարդկանց կյանքի ուժը: Այն կարող է թարգմանվել «քամի», «շունչ» և «հոգի»:

«Խռովվեց» ԲԱՅԸ (BDB 821, KB 952, *Niphal* ԱՆԿԱՏԱԲ) հազվադեպ բառ է: *Niphal* արմատով այն կիրառվում է Սաղմ. 77:4; Դան. 2:1,3-ում և *Qal* արմատով կիրառվում է Աստուծո Հոգու համար, որը «շարժվում էր» Դատ. 13:25-ում: Դրա հիմնական նշանակությունն է «ներխուժել» կամ «մղել»:

❖ **«Եգիպտոսի մոզերը»** Սա կարծես թե մեկ այլ եգիպտական փոխառնված բառ է, որը ծագել է «փորագրել» արմատից (BDB 355) և միշտ կիրառվում է ակուլտիկ գիտության համար (տես՝ Ելից 7:11,22; 8:7,18,19; 9:11): Ինչո՞ւ պետք է Բաբելոնյան գուշակ քահանաների համար կիրառվեր եգիպտական տերմին (տես՝ Դան. 1:20; 2:2,10,27; 4:7,9) հայտնի չէ: Հետևաբար այս մարդիկ եղել են կախարհությունների և դրանց մեկնությունների վերաբերյալ գրքեր կարդացողներ, գործադրողներ և գրողներ: Դրանք վերաբերում են ոչ միայն Եգիպտոսին, այլ նաև Բաբելոնին (տես՝ Ես. 44:25; Երեմ. 50:35; 51:57) և Պարսկաստանին (տես՝ Եսթեր 1:13 և 6:13): Դանիել գրքում կիրառված տերմինները տարբեր են, սակայն վերաբերում են նմանատիպ մարդկանց:

Հմայությունների և երազների մեկնությունների վերաբերյալ ավելի շատ քննարկումների հետ ծանոթանալու համար տե՛ս Ա.Լ.Օպենհեյմի *Հնագույն Մերձավոր Արևելքում Երազների Մեկնությունը*, էջ՝ 184-307 /A. L. Oppenheim, *The Interpretation of Dreams in the Ancient Near East*:/

❖ **«և երկրի բոլոր իմաստուններին»** Սա վերաբերում է դատարանի խորհրդատուներին (BDB 481 ԿԱՉՍՈՒԹՅՈՒՆ BDB 314, տես՝ Ելից 7:11; Ես. 19:11,12), և պարտադիր չէ, որ նկատի ունենա գուշակ քահանաների դասակարգին, որին նկատի ուներ նախորդող տերմինը:

❖ **«բայց մեկը չգտնվեց, որ մեկներ դրանք Փարավոնի համար»** Փարավոնը ըստ երևույթին ավելի շատ ազնվական իմաստուններ ուներ, քան Նաբուգոդոնոսորը, որը չէր վստահում իր մոզերին այնքան, որ տրամադրեր նրանց իր երազների բովոնդակությունը, այլապես նրանք կմոզոնեին որևէ մեկնություն (տես՝ Դանիել 2):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 41:9-13**

<sup>9</sup>Եվ մատռվակապետը խոսեց Փարավոնի հետ՝ ասելով. «Ես այսօր հիշում եմ իմ սխալները: <sup>10</sup>Փարավոնը գայրացավ իր ծառաների վրա և ինձ դահճապետի տան բանտը նետեց՝ ինձ ու հացթուխների պետին: <sup>11</sup>Եվ ես ու նա մի գիշեր երազ տեսանք. մեզանից ամեն մեկն իր մեկնությունն ունեցող երազ տեսանք: <sup>12</sup>Այնտեղ մեզ հետ մի երբայեցի պատանի կար՝ դահճապետի ծառան, և մենք պատմեցինք նրան, և նա մեկնեց մեզ մեր երազները. ամեն մեկիս իր երազի պես մեկնեց: <sup>13</sup>Եվ ինչպես որ մեկնեց, այնպես եղավ. ինձ իմ պաշտոնին վերադարձրեց, իսկ նրան կախեց»:

**41:9-12 «իմ սխալները»** Այս պարբերությունը նկատի ունի Ծննդոց 40-ում արձանագրված դեպքերը: Գրեթե թվում է թե նա խոսում է մի նոր Փարավոնի հետ:

**41:12 «երբայեցի պատանի»** Տե՛ս 40:15-ի գրառումը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 41:14-24**

<sup>14</sup>Եվ Փարավոնը մարդ ուղարկեց, և կանչեցին Հովսեփին և շտապ զնդանից հանեցին նրան, նա սափրվեց և իր հագուստը փոխեց և եկավ Փարավոնի մոտ: <sup>15</sup>Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Երազ եմ տեսել, և չկա մեկը, որ մեկնի այն. ես լսեցի քո մասին, որ ասում են, թե երազ ես լսում ու մեկնում»: <sup>16</sup>Եվ Հովսեփը պատասխանեց Փարավոնին. «Ոչ թե ես, այլ Աստված կտա Փարավոնին խաղաղության պատասխան»: <sup>17</sup>Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Երազումս ահա կանգնած էի գետեզրին. <sup>18</sup>և ահա, յոթ երինջներ ելան՝ պարարտ ու գեղեցկատես և հովտում արածում էին: <sup>19</sup>Եվ ահա նրանց ետևից ուրիշ յոթ երինջ ելան՝ նիհար ու շատ այլանդակ տեսքով և վտիտ մարմնով, այնքան, որ նրանց չափ զագրելի չեմ տեսել ամբողջ Եգիպտոսում: <sup>20</sup>Այդ վտիտ ու զագրելի երինջները կերան առաջվա յոթ պարարտ երինջներին: <sup>21</sup>Եվ երբ կերան դրանց, չէր երևում, թե կերել են նրանց, այլ նրանց տեսքն առաջվա պես զագրելի էր: Հետո զարթնեցի: <sup>22</sup>Եվ երազումս տեսա, և ահա մի ցողունի վրա յոթ լիքը և լավ հասկեր էին դուրս գալիս. <sup>23</sup>իսկ նրանց ետևից յոթ չոր, խորշակահար հասկեր էին բուսել. <sup>24</sup>և նիհար հասկերը կուլ տվեցին այն յոթ լավ հասկերին: Եվ ես պատմեցի մոզերին, բայց չկա մեկը, որ մեկնի ինձ համար»:

**41:14 «և շտապ զնդանից հանեցին նրան»** Դարձյալ մենք ունենք եգիպտերե փոխառնված բառ (տես 40:15-ի գրառումը) «զնդան» տերմինում, որը կարծես թե նշանակում է «եգիպտական ամբոցում բանտարկված»: Ըստ երևույթին Հովսեփը պահվում էր քաղաքական բանտարկյալների հետ միասին:

❖ **«նա սափրվեց և իր հագուստը փոխեց»** Այստեղ դարձյալ եգիպտական սովորույթ է, ոչ միայն մորուքը սափրելու, այլ ամբողջ մարմինը, և նախքան Փարավոնին մոտենալը ամբողջ մարմինը մաքրելուն, լվանալուն է վերաբերում:

**41:16 «Ոչ թե ես, այլ Աստված կտա Փարավոնին խաղաղության պատասխան»** Այս պատասխանը շատ նման է Դան. 2:27-30: Հովսեփը գիտեր, որ իր երազների աղբյուրը իր կարողությամբ չէր, որպեսզի կիրառեր հմայություն կամ ընթերցեր հնագույն փաստաթղթեր, այլ Աստծո գործությամբ էր (տես՝ Ծննդ. 40:8): Հովսեփը ուներ աստվածակենտրոն աշխարհայացք (տես՝ հհ. 25,28,32):



«Խաղաղությամբ» թարգմանված տերմինը *shalom* (BDB 1022) տերմինն է, որը մատնանշում է «խաղաղություն», «բարեկեցություն» կամ «շնորհ»: Տե՛ս Հատուկ Թեմա 15:15-ում: Գլուխ 41-ի ենթատեստում *shalom* կարող է վերաբերել Փարավոնի հոգուն («նրա հոգին խռովվել էր») հ. 41:8-ում:

**41:17-24** Սա փոքր ինչ տարբեր կերպ է բնութագրում Փարավոնի երազը, որը գտնվում է գլուխ 41-ի սկզբում: Այն ստույգ կերպով համընկնում է նույն իրավիճակի հետ: Ոչ ոք ճիշտ նույն կերպով չի վերապատմում պատմությունը, առանց ավելի շեշտադրելու որոշ կետեր կամ բաց թողնելու այլ կետեր: Ինձ համար դա այս իրադարձության պատմականության նշան է:

**41:18** «Փայլուն» (հայերենում՝ «գեղեցկատես») տերմինը երբայերեն «գեղեցիկ» (BDB 421) և «տեսք» (BDB 1061) բառերի ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ է: Այս ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ կիրառվում է՝

1. կովերի համար՝ այստեղ
2. կանաց համար, Ծննդ. 29:17; 2 Օր. 21:11; 1 Թագ. 25:3; Եսթեր 2:7
3. տղամարդկանց համար, Ծննդ. 39:6
4. ծառերի համար, Երեմ. 11:16

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 41:25-36**

<sup>25</sup>Եվ Հովսեփն ասաց Փարավոնին. «Փարավոնի երազը մեկն է. Աստված իր անելիքն է հայտնել Փարավոնին: <sup>26</sup>Այն յոթ լավ երինջները յոթ տարի են, և այն յոթ լավ հասկերը յոթ տարի են. երազը մեկն է: <sup>27</sup>Եվ այն յոթ վտիտ ու զագրելի երինջները, որ նրանց ետևից եկել են, յոթ տարի են, և այն դատարկ, խորշակահար հասկերը յոթ տարվա սով են նշանակում: <sup>28</sup>Այս է իմ խոսքը, որ ասում եմ Փարավոնին, թե՛ Աստված իր անելիքը հայտնել է Փարավոնին: <sup>29</sup>Ահա գալու են յոթ տարիներ, որ ամբողջ Եգիպտոսի երկրում առատություն կլինի: <sup>30</sup>Եվ դրանց ետևից յոթ տարի սով կգա, և Եգիպտոսի երկրի մեջ կմոռացվի ամբողջ այս առատությունը, և սովը կսպառի երկիրը. <sup>31</sup>և չի իմացվի երկրում առատությունը դրան հետևող սովի պատճառով, որովհետև շատ սաստիկ է լինելու: <sup>32</sup>Եվ երազը երկու անգամ Փարավոնի համար կրկնվելու պատճառն այս է, որ այս բանը հաստատված է Աստծո կողմից, և Աստված շուտով անելու է սա: <sup>33</sup>Եվ հիմա թող Փարավոնն իմաստուն ու խոհեմ մարդ գտնի, և նրան նշանակի Եգիպտոսի երկրի վրա: <sup>34</sup>Թող Փարավոնն այնպես անի, որ երկրի վրա գործակալներ նշանակի, և Եգիպտոսի երկրի առատության յոթ տարիների ընթացքում բերքի մեկ հինգերորդ մասը վերցնի: <sup>35</sup>Եվ այն եկող լավ տարիների ամբողջ պաշարը հավաքեն և Փարավոնի ձեռքի տակ ցորեն դիզեն և քաղաքներում պաշար պահեն: <sup>36</sup>Եվ կերակուրը պաշարվի երկրի համար այն յոթ տարվա սովի դեմ, որ լինելու է Եգիպտոսի երկրում, որպեսզի երկիրը սովից չկործանվի»:

**41:25** Հովսեփը դիմում է մի եգիպտացու, որը չէր ճանաչում ՅԱՀՎԵԻՆ, ուստի օգտագործում էր Աստծո համար ավելի տարածված անվանումը՝ *Էրոփիս*: Տե՛ս Հատուկ Թեմա 12:1-ում:

Այս Աստվածը պատրաստ է և կամենում է Փարավոնին՝ ի հեթանոս թագավորի, տեղեկացնել Իր հետագա ծրագրերի մասին (տես՝ հհ. 25,28,32): Աստծո հավիտենական, փրկարար ծրագրի կենտրոնում միշտ էլ եղել են «ազգերը» (տես՝ 3:15; 12:3; Ելից 19:5-6; Եսայի, Հովնան, Մատթ. 28:19-20; Ղուկ. 24:47; Գործք 1:8):

**41:26-32** Հովսեփը սկսեց բացատրել Փարավոնի երազը: Նատեք, որ հ. 24-ում նրա մոգերից և ոչ մեկը չկարողացան դա անել:

**41:26** «յոթ տարիներ» ՀՄԱ-ի գրականության մեջ յոթ տարվա ցիկլը ընդունված տերմին էր (տես՝ ANET, էջ՝ 31):

**41:27**

NASB

NKJV

NRSV, JPSOA

TEV

NJB

LXX

«վտիտ հասկեր»

«դատարկ հասկեր»

«ցորենի դատարկ հասկեր»

«ցորենի վտիտ հասկեր»

«խորշոմած ցորենի հասկեր»

«վտիտ և պայթեցված հասկեր»

Երբայերեն բառերը՝

1. վտիտ, ԽԻԿԻ

2. դատարկ, ԽԻԿԻ

Ը (7) և Է (7) տառերը հաճախ շփոթում են: Եբրայերեն Հին Կտակարանի Տեքստի Նախագծային UBS Նախնական և Միջանկյալ Հաշվետվությունը (1979, էջ՝ 62) տալիս է «վտիտ, նիհար» բառին B գնահատական (որոշ կասկածներով):

**41:32 «այս բանը հաստատված է Աստծո կողմից, և Աստված շուտով անելու է սա»** Հովսեփը հաստատում է, որ իր Աստծո կողմից տրված գորությունը և կանխագիտությունը կապված են Եգիպտոսում կատարվող դեպքերի հետ: Եգիպտացի մոգերը (տես՝ Ելից 7-8), և ըստ այդմ՝ եգիպտական աստվածները, ի վիճակի չէին դա իմանալ և դեմ կանգնել դրան:

Հետագայում ՅԱՀՎԵՆ նաև օգտագործեց Ելիցի պատուհասները ստորացնելու եգիպտական պանթեոնը: ՅԱՀՎԵՆ կամենում է, որ եգիպտացիները ճանաչեն Իրեն:

**41:33-36** Այս համարներում Հովսեփը ներկայացնում է իր իմաստուն գաղափարը, թե ինչ պետք է արվի պատրաստվելու առատության և ապա խիստ սովի տարիների համար:

Ուշադրություն դարձրեք ԲԱՅԵՐԻՆ՝

1. «թող Փարավոնն իմաստուն ու խոհեմ մարդ գտնի», հ. 33, BDB 906, KB 1157, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ
2. «նրան նշանակի Եգիպտոսի երկրի վրա», հ. 33, BDB 1011, KB 1483, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
3. «թող Փարավոնն այնպես անի», հ. 34, BDB 793, KB 889, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
4. «գործակալներ նշանակի», հ. 34, BDB 823, KB 955, *Hiphil* ՀԱՅՅԱԿԱՆ
5. «բերքի մեկ հինգերորդ մասը վերցնի», հ. 34, BDB 332, KB 331, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (NASB)
6. «ամբողջ պաշարը հավաքեն», հ. 35, BDB 867, KB 1062, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
7. «ցորեն դիզեն», հ. 35, BDB 840, KB 999, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
8. «պահեն», հ. 35, BDB 1036, KB 1581, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (NASB)
9. «կերակուրը պաշարվի», հ. 36, BDB 224, KB 242, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (այս ենթատեքստում կան երեք *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ, որոնք գործում են որպես ՀԱՅՅԱԿԱՆՆԵՐ):
10. նաև նկատեք հ. 31-ի «շատ սաստիկ է լինելու» արտահայտությունը

**41:33** Պետք է նշել, որ ՅԱՀՎԵԻ հայտնած տեսությունը յոթ առատության տարիների և ապա յոթ սովի տարիների համար (որը ոչ ոք չէր կարող ներգործել, մինչդեռ դա Աստծուց ուղարկված դատաստան չէր, այլ եղանակային ցիկլոն ընկած՝ մեղավոր աշխարհում) հնարավոր է միայն գլու բերել մտադրված, ծրագրված մարդկային գործողությամբ: Աստծո ինքնիշխանության՝ ամոնագիտության և մարդու գործունեության փոխկապակցվածությունը հատուկ է Աստվածաշնչին: Երկուսն էլ կենսական կարևորության են (տես՝ Ելից 3, Աստծո գիտությունը՝ գործողությունը հհ. 7-9-ում, սակայն Մովսեսի արձագանքելու անհրաժեշտությունը՝ հհ. 10-12-ում):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ԿԱՐԻՔԸ**  
**SPECIAL TOPIC: ELECTION/PREDESTINATION AND THE NEDD FOR A THEOLOGICAL BALANCE**

Ընտրությունը հիանալի վարդապետություն է: Սակայն դա աչառության առիթ հանդիսացող կոչ չէ, այլ կոչ լինելու կապող օղակ, գործիք կամ միջոց ուրիշների փրկության համար: Հին Կտակարանում այս տերմինը հիմնականում կիրառվում էր ծառայության համար. Նոր Կտակարանում այն կիրառվում է հիմնականում փրկության համար, որը արդյունք է տալիս ծառայության մեջ: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև առկա թվացյալ հակասությունը, այլ հաստատում է այդ երկուսն էլ: Աստվածաշնչյան այս լարվածության մի լավ օրինակ կարող է հանդիսանալ Հռոմեացիների 9-րդ գլուխը Աստծո ինքնիշխան ընտրության վերաբերյալ և Հռոմեացիների 10-րդ գլուխը՝ մարդկանց կողմից տրվող անհրաժեշտ պատասխանի վերաբերյալ (տես՝ Հռոմ. 10:11,13):

Աստվածաբանական այս լարվածության գլխավոր կորիզը կարելի է գտնել Եփեսացիների 1:4-ում: Հիսուսը Աստծո ընտյալ մարդն է և բոլորն էլ պոտենցիալ առումով ընտրված են Նրանում (Կառլ Բարթ): Հիսուսն Աստծո «այո»-ն է ընկած մարդկության կարիքի համար (Կառլ Բարթ): Եփեսացիների 1:4 նաև օգնում է խնդիրը հստակեցնելու, հաստատելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Հանախ մենք հրապուրվում ենք ավետարանի օգուտներով և անտեսում պատասխանատվությունները: Աստծո կանչը (ընտրությունը) այս ժամանակի ինչպես հավիտենության համար է:

Վարդապետությունները կապ են հաստատում այլ ճշմարտությունների հետ, որոնք ոչ թե մեկն են ու ոչ էլ իրարից անկախ: Գեղեցիկ նմանություն՝ անալոգիա կարող է հանդիսանալ օրինակ մի համաստեղությունն ու մի աստղը: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան՝ ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների բարբառային (պարադոքսալ) զույգերով պայմանավորված լարվածությունը՝

1. Նախասահմանությունը ի հակադրություն մարդու ազատ կամքի
2. Հավատացյալների վստահությունը ի հակադրությունը հարատևության անհրաժեշտության
3. Սկզբնական՝ բուն մեղքը ի հակադրություն գիտակցաբար կատարվող մեղքի
4. Անմեղությունը (կատարելության ձգտումը) ի հակադրություն քիչ մեղանչելուն
5. Սկզբնական անմիջական արդարացումը և սրբացումը ի հակադրություն հետզհետե աճող սրբացման
6. Քրիստոնեական ազատությունը ի հակադրություն Քրիստոնեական պատասխանատվության
7. Աստծո գերազանցությունը ի հակադրություն Նրա անսահմանության
8. Անճանաչելի Աստված ի հակադրություն Սուրբ Գրքով ճանաչելի դարձած Աստծո
9. Աստծո ներկայիս Արքայությունը ի հակադրություն ապագայի վախճանի
10. Ապաշխարությունը որպես Աստծո պարզ և հակադրություն մարդու կողմից Աստծո ուխտի պատասխան
11. Հիսուս Աստվածը ի հակադրություն Հիսուս մարդուն
12. Հիսուսը որպես Հորը հավասար մեկը ի հակադրություն Հիսուսը որպես Հոր ենթակա անձի

«Ուխտի» աստվածաբանական հասկացությունը միավորում է Աստծո ինքնիշխանությունը (որը միշտ նախաձեռնողի դերում է և Ինքն է ծրագրում ապագան) մարդու կողմից պարտադիր հանդիսացող առաջին անգամ և ապա հարատևող հավատքի պատասխանի հետ (տես՝ Մարկ . 1:15; Գործք 3:16,19; 20:21): Զգուշացե՛ք պարադոքսի միայն մեկ կողմը դիտարկող և մյուս կողմերը անտեսող կամ թերագնահատող տեքստային ապացույցներից: Զգուշացե՛ք միայն ձեր նախընտրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը համոզելուց:

**41:34 «Եզիպտոսի երկրի *բեղքի* մեկ հինգերորդ մասը վերցնի»** Նկատե՛ք, որ «բեղք» բառը շեղատառերով է գրված, որը նշանակում է, որ երրայեքեն տեքստում բացակայում է: Հետևաբար «վերցնի մեկ հինգերորդը» ԲԱՅԸ (BDB 332, KB 331, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱԲ) կարող է վերաբերել գանձվող 20% հարկի, որը ըստ ուսումնասիրության գիտենք, որ տարածված էր եզիպտական գրականության մեջ կամ էլ հնարավոր է վերաբերում է Եզիպտոսի երկիրը հինգ աղմինիստրատիվ շրջանների բաժանելուն (AB, էջ՝ 313):

Որոշ մեկնաբանները կարծում են, որ ԲԱՅԸ ծագել է *շփ* (BDB 332) ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻՑ, որը նշանակում է «զինված» կամ «սպառազինված» (տես՝ Հեսու 1:14; 4:12; Դատ. 7:11, AB, էջ՝ 313): JPSOA տարբերակը թարգմանում է՝ «կազմակերպեք Եզիպտոսի երկիրը»:

**41:36 «որպեսզի երկիրը սովից չկործանվի»** «Երկիր» տերմինը (BDB 75) հանդես է գալիս որպես Եզիպտոսի ժողովրդի և կառավարության համար փոխաբերություն:

#### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 41:37-45

<sup>37</sup>Եվ այս բանը լավ երևաց Փարավոնի աչքին և նրա բոլոր պաշտոնյաների աչքին: <sup>38</sup>Եվ Փարավոնն ասաց իր ծառաներին. «Կարո՞ղ ենք գտնել այսպիսի մի մարդ, ում մեջ լինի Աստծո Հոգին»: <sup>39</sup>Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Քանի որ Աստված այս ամենը քեզ ցույց տվեց, քեզ նման խոհեմ ու իմաստուն մարդ չկա: <sup>40</sup>Դո՛ւ եղիր իմ տան վրա, և իմ ամբողջ ժողովուրդը թող հնազանդվեն քո խոսքին. գահո՛վ միայն ես քեզանից բարձր կլինեմ»: <sup>41</sup>Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Ահա քեզ նշանակեցի ամբողջ Եզիպտոս երկրի վրա»: <sup>42</sup>Եվ Փարավոնն իր ձեռքից հանեց մատանին և Հովսեփի մատին անցկացրեց և նրան բեռեզյա հագուստներ հագրեց և նրա պարանոցին ոսկե մանյակ դրեց: <sup>43</sup>Եվ երկրորդ կառքին նստեցրեց և գոչում էին

**նրա առջևից. «Ծնրադրե՛ք»:** Եվ Եգիպտոսի ամբողջ երկրի վրա նշանակեց նրան: <sup>44</sup>Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Ես Փարավոնն եմ, և առանց քո գիտության որևէ մեկն իր ձեռքը կամ ոտքը չբարձրացնի՝ ամբողջ Եգիպտոս երկրում»:<sup>45</sup>Եվ Փարավոնը Հովսեփի անունը Փսոմփթոմբանե դրեց և Օն բաղաճի Պետափրեա քրմի աղջիկ Ասանեթին նրան կնության տվեց: Եվ Հովսեփը ելավ, որ Եգիպտոս երկրում շրջի:

**41:38 «Աստծո Հոգին /աստվածային հոգի»** Սա թարգմանվել է *ruach Elohim* (BDB 924 և BDB 43) երբայերեն բառերից: Նկատե՛ք, որ Փարավոնը աստծո համար կիրառում է հենց այն նույն անունը ինչ Հովսեփին էր կիրառել: Սա կարծես տարածված բնութագրական է, որն օգտագործվում է ոչ երբայեցիների կողմից երազներ մեկնել կարողացող մարդկանց համար (տես՝ Դան. 4:8,9,18; 5:11,14):

<b>41:40</b>	
<b>NASB</b>	«պատվեն»
<b>NKJV</b>	«կառավարվեն»
<b>NRSV</b>	«հպատակվեն»
<b>TEV</b>	«կինազանդվեն քո հրամաններին»
<b>NJB</b>	«հարգեն քո հրամանը»
<b>LXX</b>	«հնազանդ կլինեն քո խոսքին»
<b>JPSOA</b>	«ղեկավարվեն»
<b>REB</b>	«կհարգեն քո ամեն մի խոսքը»

Այս տերմինի ստուգաբանությունը հայտնի չէ, սակայն այն կարծես կապ ունի երբայերենի «բերանից համբուրել» նշանակող մի արմատի հետ (BDB 676, KB 30, *Qal* ԱՆԿԱՏԱԲ): Այն կարող է նշանակել (1) «հնազանդ լինել» (KB) կամ (2) «գետինը համբուրել, որպես պատվելու նշան /երկրպագել/» (տես՝ հհ. 42,43,44): Նրան դարձրեցին Փարավոնի «Մծն Վեզիրը»:

**41:42 «իր մատանին»** Սա այն նույն արմատից է, որը որպես «սուզվել» (BDB 371) ԲԱՅՆ է, որը կարող է վերաբերել պաշտոնական մատանին կավի կամ մոմի մեջ սուզելուն՝ պաշտոնական որևէ փաստաթուղթ կնքելու համար (տես՝ Եսթեր 3:10,12; 8:8,10):

❖ **«նրան բեհեզյա հագուստներ հագցրեց»** Սա մեկ այլ եգիպտական փոխառնված բառ է (BDB 1058 III), որը վերաբերում է ընտիր ճերմակ մետաքսին, որը կրում էր եգիպտական հասարակության էլիտար զանգվածը:

❖ **«նրա պարանոցին ոսկե մանյակ դրեց»** Սա ամբողջ եգիպտական պատմության մեջ՝ հատկապես 12րդ դինաստիայի ժամանակ, համարվում էր իշխանության խորհուրդ (տես՝ Դան. 5:7,16,29): Այս բոլոր մանրամասները իրականում բնութագրում են այդ ժամանակաշրջանի Եգիպտոսի մշակույթը: Սրանք ականատեսի կողմից տրված մանրամասներ են:

**41:43 «երկրորդ կառքին»** Սա մի կերպ էր, որը նկատի ունեւր, որ Հովսեփը հանդիսանում էր Եգիպտոսում երկրորդ հրաման արձակող անձը (այսինքն՝ Մեծ Վեզիրը): «Երկրորդ» տերմինը (BDB 1041) հաճախ վերաբերում է քաղաքական կամ աղմինիստրատիվ պաշտոններին (տես՝ 1 Թագ. 23:17; 4 Թագ. 23:4; 25:18; 1 Մնաց. 5:12; 15:18; 2 Մնաց. 28:7; 31:12; Նեեմ. 11:17; Եսթ. 10:3; Երեմ. 52:24):

❖ **«Ծնրադրե՛ք»** Եգիպտական այս տերմինի (“Abrek”, տես՝ JPSOA) նշանակությունը շատ է քննարկվել: Այն հնչում է ինչպես «ձնկել» երբայերեն արմատը: Գոյություն ունեն մի քանի այլ հնարավոր թարգմանություններ, որ գտնվում են Brown, Driver and Briggs (BDB 7): Սակայն Վուգատան, Ալյուդասի Երբայերեն թարգմանությունը, Ալեքսանդրիացի Օրեգանուսը, և հրեա մեկնաբան Կիմչին, բոլորն էլ ասում են, որ դա նշանակում է «ծունկ խոնարհել», որը ծագել է հին երբայերեն մի արմատից (BDB 7): Համաձայն ենթատեքստի սա կարծես թե լավագույն տարբերակն է:

**41:44 «որևէ մեկն իր ձեռքը կամ ոտքը չբարձրացնի»** Սա մի դարձվածք է «ոչ մի գործ կամ ջանք չպետք է արվի կամ շարունակվի առանց Հովսեփի թույլտվության» իմաստով: Այն մատնացույց է անում կատարյալ իշխանություն:

**41:45 «և Փարավոնը Հովսեփի անունը Փսոմփթոմբանե դրեց»** Սա պաշտոնական տիտղոս է (BDB 861) կապված հենց Փարավոնի հետ (տես՝ Ծննդ. 45:8): Փարավոնի կողմից նրա անվանակոչումը

հնարավոր է նշանակում է Հովսեփի վրա իր իշխանության նշան: Մի քանի առաջ քաշված ստուգաբանություններ են եղել: Ամենատարածվածը եղել է «աստված խոսում է և ապրում է», որը կարծես թե վերաբերում է Փարավոնին՝ որպես արևի աստծո՝ Ռեի որդու կամ հավանաբար Հովսեփի Աստվածը, որը խոսում է և փրկում Եգիպտոսը: Մեկ այլ հավանականությունը «նա, ով գիտի ամեն ինչ», որը վերաբերում էր Հովսեփին, որպես երազ մեկնողի:

❖ **«Ասենաթին նրան կնության տվեց»** Սա մեկ այլ եգիպտական անուն է, որը նշանակում է «պատկանում է Նաթին» (BDB 62, տես՝ 41:45,50; 46:20), որը եգիպտացիների սիրո աստվածուհին էր:

❖ **«Օն քաղաքի Պետափրեա քուրմը»** Սա էլ մեկ ուրիշ եգիպտական անուն է, որը Փետափրեա անվան ծննդ. 37:36; 39:1-ում գտնվող, ավելի երկար տարբերակն է: Այն նշանակում է «նա որին (Ռե/Րե) տվեց» (BDB 806): Փարավոնը Հովսեփին դարձնում է Եգիպտոսի հասարակության էլիտար դասակարգի մի մասը՝ ամուսնացնելով նրան շատ կարևոր քահանայի՝ քրմի դստեր հետ (BDB 463):

❖ **«Օն» «Օն»** (BDB 58) արևի աստծո քաղաքն է: Այն հունարենով կոչվում էր Հելիոպոլիս և երբայերենով՝ Բեթ-Շամեշ (տես՝ Երեմ. 43:13): Այն տեղակայված էր Կահիրեյից մոտ յոթ մղոն հեռու՝ Գեսեմի երկրի սահմանի վրա:

❖

NASB, NKJV	«և Հովսեփը ելավ, որ Եգիպտոս երկրում շրջի»
NRSV	«այսպիսով Հովսեփը իշխանություն ստացավ Եգիպտոսի երկրի վրա»
TEV	«ճամփորդեց ամբողջ երկրով»
NJB, LXX	«և Հովսեփը սկսեց ճամփորդել ամբողջ Եգիպտոսով»
REB	«Հովսեփի իշխանությունը մեծացավ ամբողջ Եգիպտոսի վրա»
JPSOA	«այսպիսով Հովսեփը դարձավ Եգիպտոսի երկրի պատասխանատուն»

Այս արտահայտությունը NASB և NKJV տարբերակներում բառացի է թարգմանված: Սակայն դրա իմաստը վիճելի է:

1. հհ. 45 և 46-ը համազոր են, հետևաբար «ճամփորդեց ամբողջ երկրով» (TEV, NJB, LXX, NIV)
2. Եսթեր 1:17-ում հենց այս տարածված ԲԱՅԸ՝ «գնալ» կամ «գալ» (BDB 422, KB 425, *Qal* ԱՆԿԱՏԱԲ), նաև *Qal* ԱՆԿԱՏԱԲԸ կիրառվում է ինչ-որ բան տարածելու իմաստով (այսինքն՝ Վաշթիի բացահայտ անհնազանդության մասին լուրը): Այսպիսով այստեղ Հովսեփի հռչակը և իշխանությունը տարածվում է ամբողջ երկրով (NRSV, REB):
3. Քանի որ «երկրի վրա» արտահայտությունը, որը հաջորդում է հհ. 33. 41 և 43-ի ԲԱՅԻՆ կապված Հովսեփի իշխանության հետ որպես Վեգիր, ապա այստեղ ԲԱՅԸ պետք է որ նկատի ունենա նույնպես դա (JPSOA):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 41:46-49**  
<sup>46</sup>Եվ Հովսեփը երեսուն տարեկան էր, երբ Եգիպտոսի Փարավոն թագավորի առջև կանգնեց, և Հովսեփը Փարավոնի մոտից դուրս եկավ և Եգիպտոսի ամբողջ երկրով մեկ շրջեց:  
<sup>47</sup>Եվ առատության յոթ տարիներին երկիրը հարուստ բերք տվեց: <sup>48</sup>Եվ յոթ տարի Եգիպտոս երկրում եղող ամբողջ պաշարը հավաքեց և քաղաքներում ամբարեց. այն ամեն մի քաղաքի շրջակա դաշտերից դուրս եկած պաշարը նույն քաղաքում ամբարեց: <sup>49</sup>Եվ Հովսեփը ծովի ավազի չափ շատ ցորեն դիզեց, այնքան, որ թողեցին հաշվելը, որովհետև անհաշվելի էր:

**41:46 «երեսուն տարեկան էր»** Բառացի սա նշանակում է «երեսուն տարվա որդի էր», որը դարձվածք է (տես՝ Ղևտ. 27:5; 4 Թագ. 8:26; Երեմ. 52:1):

**41:47-49** Հովսեփի երազի մեկնությունը ամբողջությամբ ճշգրիտ էր: Առատությունը մի քանի ուղղությամբ շեշտադրվում էր՝

1. յոթ տարվա առատություն, հ. 47
2. երկիրը հարուստ բերք տվեց, հ. 47
3. ամբողջ պաշարը հավաքվեց, հ. 48
4. ծովի ավազի չափ, հ. 49
5. այնքան, որ թողեցին հաշվելը, որովհետև անհաշվելի էր, հ. 49

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 41:50-52**

**<sup>50</sup>Եվ հովսեփին երկու որդի ծնվեցին՝ սովի տարիները վրա հասնելուց առաջ, որ Արեգ քաղաքի Պետափրեա քրմի դուստրը՝ Ասանթըր, ունեցավ նրա համար: <sup>51</sup>Եվ Հովսեփն առաջնեկի անունը Մանասե դրեց, որովհետև ասաց. «Աստված ինձ մոռացնել տվեց բոլոր վշտերս և իմ հոր ամբողջ տունը»: <sup>52</sup>Եվ երկրորդի անունը Եփրեմ դրեց, որովհետև ասաց. «Աստված իմ տառապանքների երկրում պտղաբեր դարձրեց ինձ»:**

**41:51 «Մանասե»** Այս անունը (BDB 586) կապված է երբայերեն «մոռանալ» (BDB 674, KB 728, *Piel* ԴԵՐԲԱՅ) ԲԱՅԻ հետ իր նմանատիպ հնչեղությամբ: Սա հատկապես կապ ունի այն ցավի հետ, որը բովանդակում էր իր եղբայրների արարքներն իր հանդեպ: Ծննդոցում արձանագրված հետագա դեպքերը ցույց են տալիս, որ Հովսեփը ամբողջությամբ չէր ազատվել իր եղբայրների ատելությամբ լցված մատնության հետևանքներից:

**41:52 «Եփրեմ»** Այս անունը (BDB 586) կապված է «պտղաբերություն» կամ «կրկնակի պտուղ» տերմինի (BDB 826, տես՝ 49:22) հայտնի բառախաղի հետ: Հետաքրքիր է նշել, որ ժամանակակից Իսրայելում հրեությունը որոշվում է հրեա մորով: Իրականում այս երկու տղաները իսկական հրեաներ չէին: Նրանք հետագայում դառնալու են կես ցեղ, որոնք ժառանգելու են Հովսեփի կրկնակի բաժինը և ընդգրկվելու են Իսրայելի տասներկու ցեղերի մեջ (այսինքն՝ տասներեք): Ղևին չի հաշվելու որպես ցեղ՝ ժառանգության նպատակով (տես՝ գիրք Հեսու):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 41:53-57**

**<sup>53</sup>Եվ Եգիպտոս երկրի առատության յոթ տարիներն անցան: <sup>54</sup>Եվ Հովսեփի ասածի պես սկսեցին վրա հասնել սովի յոթ տարիները. և բոլոր երկրներում սով եղավ, բայց Եգիպտոսի երկրում հաց կար: <sup>55</sup>Եվ երբ Եգիպտոսի ամբողջ երկիրը քաղցի մեջ էր, ժողովուրդը հացի համար աղաղակելով Փարավոնին դիմեց. և Փարավոնն ասաց բոլոր Եգիպտացիներին. «Գնացե՛ք Հովսեփի մոտ, ինչ որ ձեզ ասի, այն էլ արե՛ք»: <sup>56</sup>Եվ սովը ամբողջ երկրով մեկ տարածվեց, և Հովսեփը բաց արեց շտեմարանները, և սկսեց Եգիպտացիներին վաճառել, իսկ սովը ասատկանում էր Եգիպտոս երկրում: <sup>57</sup>Եվ բոլոր երկրներից գալիս էին Եգիպտոս՝ Հովսեփից ցորեն գնելու, որովհետև սովը խիստ ասատկացել էր բոլոր երկրներում:**

**41:53-57** Սա պատմականորեն բացատրում է, թե ինչպես է Փարավոնը կարողացել տիրանալ ամբողջ Եգիպտոս երկրին (տես՝ 47:20-26): Եգիպտացիները վաճառեցին իրենց հողերը թագավորին, որպեսզի ցորեն գնեն իրենց և իրենց ընտանիքներին կերակրելու համար:

Պետք է նշել, որ սովը պետք է որ ցույց տար Եգիպտական կրոնի ճախողումը (այսինքն՝ արևի, պտղաբերության աստվածների և հենց Նեղոս գետի) Եգիպտոսը փրկելու հարցում, սակայն ՅԱՀՎԵՆ կարողացավ:

**41:56**

**NASB, NKJV, NRSV, TEV, VULGATE  
NJB, LXX, REB  
JPSOA**

**«բոլոր շտեմարանները»  
«բոլոր ամբարները»  
«ամեն ինչ, որ ներսում կար»**

Երբայերեն տեքստը բառացի թարգմանված է JPSOA-ի կողմից: Այն կարող է նկատի ունենալ՝

1. բոլոր այն տեղերին, որտեղ Հովսեփը հավաքեց ցորենը
2. բոլոր այն տեղերին, որտեղից ամբողջ երկրում Եգիպտացիները կարող էին գնել ցորեն

**41:57** Այս համարը նկարագրում է սարսափելի երաշտը և սովը ամբողջ Մերձավոր Արևելքի և Միջերկրականի տարածքում: Շատ ազգեր եկար Եգիպտոս սնունդ գնելու համար: Հովսեփը փրկեց՝

1. Եգիպտոսը
2. շրջապատող շատ այլ ցեղախմբերի
3. հատկապես ընտրյալ Հակոբի ընտանիքին

Աստծո նատակարարումը գործում է մի քանի մակարդակների վրա:

Նկատե՛ք «ամբողջ երկրի վրա» արտահայտության չափազանցությունը: Սա համազոր է Ծննդոց 6-7-ում ջրհեղեղի ծավալի վերաբերյալ կիրառված արտահայտությանը (տես՝ 7:19, չրս *eres*, BDB 75):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվորկե՛ք բոլոր եզիպտական փոխառնված բառերը, որոնք կիրառվում են այս գլխում և բացառապես եզիպտական սովորույթները:
2. Նկարագրեք մոզերին և նրանց գործունեությունը Հնագույն Մերձավոր Արևելքում:
3. Թվարկե՛ք հհ. 41-44-ում Հովսեփի նոր պաշտոնի բոլոր նկարագրությունները:
4. Ի՞նչ նշանակություն ունեն Հովսեփի որդիների անունները և ո՞րն է դրանց կարևորությունը (հ. 50-52):

**ԾՆՆԴՈՑ 42**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հովսեփի եղբայրները ուղարկվում են Եգիպտոս	Հովսեփի եղբայրները գնում են Եգիպտոս	Սովի ժամանակ Հովսեփի եղբայրները ճամփորդում են դեպի Եգիպտոս	Հովսեփի եղբայրները գնում են Եգիպտոս ցորեն գնելու	Հովսեփի և իր եղբայրների առաջին հանդիպումը
42:1-5	42:1-5	42:1-5	42:1-4 42:5-7ա	42:1-4 42:5-7
42:6-7	42:6-17	42:6-17	42:7բ	
42:8-17			42:8-9 42:10-11 42:12 42:13 42:14-17	42:8-17
42:18-25	42:18-24	42:18-25	42:18-20ա 42:20բ-21 42:22-24	42:18-24
	Եղբայրները վերադառնում են Քանան		Հովսեփի եղբայրները վերադառնում են Քանան	Հակոբի որդիները վերադառնում են Քանան
	42:25-28		42:25-28	42:25-28
42:26-28		42:26-28		
Շնավունը գերի է պահվում	42:29-34	42:29-34	42:29-34	42:29-34
42:29-34	42:35-38	42:35-38	42:35-36	42:35-36
42:35-38			42:37 42:38	42:37-38

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն



կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## **ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 42:1-5**

**<sup>1</sup>Արդ, երբ Հակոբը տեսավ, որ Եգիպտոսում ցորեն կա, Հակոբն ասաց իր որդիներին. «Ինչո՞ւ եք իրար նայում»: <sup>2</sup>Ասաց. «Ահա լսել եմ, որ Եգիպտոսում ցորեն կա. իջե՛ք այնտեղ և այնտեղից մեզ համար գնեք, որ ողջ մնանք, չմեռնենք»: <sup>3</sup>Եվ Հովսեփի տասը եղբայրներն իջան Եգիպտոսից ցորեն գնելու: <sup>4</sup>Բայց Հակոբը Հովսեփի եղբայր Բենիամինին եղբայրների հետ չուղարկեց, որովհետև ասաց. «Գուցե մի փորձանք պատահի նրան»: <sup>5</sup>Եվ Իսրայելի որդիները այնտեղ գնացողների հետ եկան պաշար գնելու, որովհետև Քանանի երկրում սով էր:**

**42:1 «Արդ, Հակոբը տեսավ, որ Եգիպտոսում ցորեն կա»** Այս «տեսնել» ԲԱՅԸ հ. 1-ում երկու անգամ է կիրառվում՝

1. «Հակոբը տեսավ», BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. «Ինչո՞ւ եք իրար նայում», *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ

Այս նույն բառը կիրառվում է Փարավոնի երագում (տես՝ 41:19,22,28) և Հովսեփի կողմից Փարավոնի համար, որպեսզի փնտրի և գտնի մի իմաստուն մարդու (տես՝ 41:33): Այս տարածված ԲԱՅՆ այս գլխում մի քանի անգամ է օգտագործվում (այսինքն՝ հհ. 1 /երկու անգամ/, 7,9,12,21,27,35): Ռաշին ասում է, որ նա աստվածային տեսիլք է տեսնում, սակայն հավանաբար նա տեսել է, որ Քանանի մարդիկ Փարավոնից ցորեն են գնում (տես՝ 47:14):

**42:2 Հակոբն իր որդիներին կարգադրում է գնալ Եգիպտոս, որպեսզի իրենց ընտանիքի գոյությունը պահպանվի (այսինքն՝ «ողջ մնանք, չմեռնենք»):**

1. իջե՛ք այնտեղ, BDB 432, KB 434, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. այնտեղից մեզ համար գնեք, BDB 991, KB 1404, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. որ ողջ մնանք, BDB 310, KB 309, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով: Սովը սաստիկ էր և տարածվող:

**42:3-4 Հակոբը դեռ չէր վստահում իր եղբայրներին:** Նրանք ինչ-որ տեղ Հովսեփի մահվան մասն էին կազմում և նա չէր կարող թույլ տալ, որ նմանատիպ մի բան էլ պատահեր Ռաքելի մյուս որդուն՝ Բենիամինին:

**42:4 «գուցե մի փորձանք պատահի նրան»** Այս «փորձանք/վնաս» տերմինը (BDB 62) հազվադեպ է (տես՝ 44:29; Ելից 21:22,23) և վերաբերում է կյանքին սպառնացող պատահարին: Հակոբը վախենում էր իր սիրելիից՝ Ռաքելից ծնված մյուս որդու կյանքի համար (այսինքն՝ Հովսեփի լիարժեք կրտսեր եղբոր՝ Բենիամինի համար): Հետաքրքիր է, թե արդյո՞ք Հակոբը մտածում էր, որ Բենիամինն էր դառնալու ընտանիքի առաջնորդը:

Այս ԲԱՅԸ (BDB 896 II, KB 1131, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) այստեղ և Ղևտ. 10:19; 2 Օր. 31:29; Հոր 4:14; Ես. 51:19; Երեմ. 13:22; 44:23 կիրառվում է բացասական իմաստով և սովորաբար թարգմանվում է «պատահել, վրա հասնել»:

**42:5 «Եվ Իսրայելի որդիները այնտեղ գնացողների հետ եկան պաշար գնելու»** Ոմանք զարմանում են, թե ինչու Հակոբը իր բոլոր որդիներին ուղարկեց (ավելի վաղ նա իր ընտանիքի ապահովության համար այն մի քանի մասի բաժանեց, տես՝ 32:22-32): Հավանաբար որպեսզի (1) նրանցից յուրաքանչյուրը կարող էր միայն ինչ-որ հատկացված քանակով ցորեն գնել կամ (2) իրենց շատությամբ ապահով լինեին:

❖ «որովհետև Քանանի երկրում *նույնպես սով էր*» Պատմությունից գիտենք, որ սովը պարբերաբար աշխարհի այս մասով անցնում էր: Պատճառը (1) ճիշտ ժամանակին անձրևների պակասությունն էր, (2) չափից ավելին անձրևները կամ ցուրտը՝ սառնամանիքը, (3) միջատները կամ (4) բորբոսը: Քանանը կախման մեջ էր բնական կանոնավոր ցիկլերից, իսկ Եգիպտոսը՝ Նեղոսից (այսինքն՝ գետի ջրերի առատությունից):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 42:6-7**

**6** Հովսեփն այն երկրի կառավարիչն էր, և ինքն էր ամբողջ ժողովրդին պաշար վաճառողը: Հովսեփի եղբայրները եկան և իրենց երեսները մինչև գետին խոնարհեցին նրա առաջ: **7** Եվ հենց որ Հովսեփն իր եղբայրներին տեսավ, ճանաչեց նրանց, բայց իրեն նրանց չճանաչեցրեց և նրանց հետ խստությամբ խոսեց և նրանց ասաց. «Որտեղի՞ց եք եկել»: Ասացին. «Քանանի երկրից՝ ուտելիք գնելու»:

**42:6** «Հովսեփի եղբայրները եկան և *իրենց երեսները մինչև գետին խոնարհեցին նրա առաջ*» Այս համարը կարծես թե ոչ միայն Ծննդ. 37:6-9-ում Հովսեփի երազի իրականացումն էր, այլ նաև 43:28 և 44:14-ի:

**42:7** «ճանաչեց նրանց» «Ճանաչել», «տեսնել» ԲԱՅԸ (BDB 647, KB 699) հ. 7-ում երկու անգամ է կիրառվում (*Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ) և երկու անգամ էլ հ. 8-ում (*Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, *Hiphil* ՎԱՂՎԿԱՏԱՐ): Նրանք դեռևս մորթութալոր էին և քոչվոր ցեղերին հասուկ հագուստներով: Մյուս կողմից էլ Հովսեփը մասմաբուր սափրված, գեղեցիկ հագնված, իշխանության աթոռին նստած էր և խոսում էր եգիպտերեն: Բոլոր այս բաները նրան իր եղբայրներից ծածկում էր:

❖ «նա ճանաչեց նրանց ... նրանց չճանաչեցրեց» Այս երկու ԲԱՅԵՐՆ էլ միևնույն արմատից են ծագել՝ ԴՃ

1. ճանաչեց, BDB 647, KB 699, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 27:23; 37:33; 38:25,26; 42:7,8 (երկու անգամ); 2 Օր. 33:9
2. չճանաչեցրեց (բառացի՝ «անձանոթի պես վարվեց»), BDB 649, KB 699, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 3 Թագ. 14:5,6: Հայտնի չէ, թե արդյոք այստեղ առկա են երբայերենի երկու տարբեր արմատներ, թե՞ կիրառություններն են երկուսը:

❖

NASB, NRSV, TEV, NJB  
NKJV  
LXX  
AB

«կոպիտ»  
«կոշտ»  
«խիստ խոսքերով»  
«խստությամբ»

Ածականը (BDB 904) նշանակում է «ծանր» կամ «խիստ»: Այն կիրառվում է 1 Թագ. 25:3-ում նկարագրելու Նաբադի անհատականությունը: Այստեղ բնութագրում է Հովսեփի ձայնի տոնայնությունը (տես՝ 1 Թագ. 20:10), ինչպես նաև իր մեղադրանքների բովանդակությունը (այսինքն՝ նրանք լրտեսներ էին):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 42:8-17**

**8** Եվ Հովսեփն իր եղբայրներին ճանաչեց, բայց նրանք չճանաչեցին իրեն: **9** Եվ Հովսեփն հիշեց այն երազը, որ նրանց վերաբերյալ տեսել էր և ասաց նրանց. «Դուք լրտեսներ եք. եկել եք երկիրը բաց վիճակում տեսնելու»: **10** Եվ ասացին նրան. «Ո՛չ, տե՛ր իմ. քո ծառաները եկել են քեզնից ուտելիք գնելու: **11** Մենք բոլորս մի մարդու որդիներն ենք. մենք շիտակ ենք. ծառաներդ լրտեսներ չեն»: **12** Եվ նա ասաց նրանց. «Ո՛չ, դուք եկել եք երկիրը բաց վիճակում տեսնելու»: **13** Եվ նրանք ասացին. «Մենք՝ քո ծառաները, տասներկու եղբայրներ ենք, Քանանի երկրում մի մարդու որդիները, և ահա մեր կրտսերը այսօր մեր հոր մոտ է, և մեկն էլ չկա»: **14** Եվ Հովսեփն ասաց նրանց. «Մա է, որ ձեզ հետ խոսեցի՞ ասելով, թե. «Դուք լրտեսներ եք»: **15** Սրանով պետք է փորձվեք. Փարավոնի կյանքը վկա է, որ դուք այստեղից դուրս չեք գա, մինչև ձեր կրտսեր եղբայրը այստեղ չգա: **16** Ձեզնից մեկին ուղարկեցե՛ք ձեր եղբորը բերելու, իսկ դուք կբանտարկվեք, որպեսզի ձեր խոսքեր ստուգվեն, թե արդյոք ձեզանում ճշմարտություն կա՞: Եվ եթե՝ ոչ, Փարավոնի կյանքը վկա է, որ դուք լրտեսներ եք»: **17** Եվ երեք օրով բանտ նստեցրեց նրանց:

**42:9 «Եվ Հովսեփը հիշեց այն երազները»** Սա նկատի ունի գլուխ 37-ը: Հովսեփն իր առաջնեկին անվանել էր Մանասե («մոռացնել տալ»), սակայն իր եղբայրների մատնության մասին հիշողությունները հեղեղեցին նրան:

❖ **«դուք լրտեսներ եք»** Ռաբիներն ասում են, որ Հակոբը իր որդիներին ասել էր, որ քաղաք ուրիշ դարպասներով մտնեն և որ Հովսեփը տեսել էր սա և օգտագործում էր նրանց լրտեսներ լինելու մեջ մեղադրելու համար (BDB 920, KB 1183, *Piel* ԴԵՐԲԱՅ, տես՝ Հեսու 2:1; 6:22-23; 1 Թագ. 26:4): Նա սա արեց որպեսզի ստուգի նրանց շարժառիթներն ու բնավորությունը:



**NASB**  
**NKJV, NRSV, JPSOA**  
**TEV**  
**NJB**  
**LXX**  
**REB**

**«երկրի չպաշտպանված հատվածները»**  
**«երկրի բաց վիճակը»**  
**«որտեղ է երկիրը թույլ»**  
**«երկրի թույլ տեղերը»**  
**«երկրի նշանները /այսինքն՝ ճանապարհները գննել/»**  
**«մեր պաշտպանության թույլ կողմերը»**

Այս տերմինը (BDB 788) բառացի «մերկ» (տես՝ 9:22-23) կամ «ոտաբոբիկ» է նշանակում: Այստեղ խոսվում է (համաձայն ենթատեքստի) Եգիպտոսի տարածքի առանց ամրոցների կամ ռազմական պահակախմբի լինելու մասին: Սա սուտ մեղադրանք էր Հակոբի որդիներին փորձելու համար:

**42:11 «մենք շիտակ ենք»** «Շիտակ կամ ազնիվ» (BDB 467 II, տես՝ 42:11,19,31,34) բառն այստեղ կիրառվում է հեզնանքի իմաստով, անցյալում նրանց կատարածի պատճառով: Նրանք արտաքինապես շիտակ, ազնիվ տղամարդիկ էին երևում, սակայն չարությամբ էին վարվել Հովսեփի հանդեպ (տես՝ Ծննդոց 34,37):

**42:13 «մի մարդու որդիները, և ահա մեր կրտսերը այսօր մեր հոր մոտ է, և մեկն էլ չկա»** Վերջին արտահայտությունը ակնհայտ է, որ վերաբերում է Հովսեփին: Չավեշտալի է, որ նրանք խոսում են սա իր դեմքին՝ առանց իմանալու, թե ով է ինքը:

**42:15 «Փարավոնի կյանքը վկա»** Շատ մեկնաբաններ քննադատել են Հովսեփին, որ այս երդումն է տալիս և այն էլ երկու անգամ: Այն օգնում է, որ ծածուկ մնա: Իհարկե նա դա չի օգտագործում աստվածաբանական իմաստով: Սակայն դա եգիպտական ավանդությանը վերաբերող ակնարկ է, որ Փարավոնը Ռե արևի աստծո որդին էր: Այս նույն երդումը գտնվել է եգիպտական հուշարձանների վրա:

**42:16** Հովսեփը մի քանի հրամաններ և պահանջներ է ներկայացնում՝

1. ձեզնից մեկին ուղարկեցե՛ք, BDB 1018, KB 1511, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ձեր եղբորը բերելու, BDB 542, KB 534, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
3. իսկ դուք կբանտարկվեք, BDB 63, KB 75, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. որպեսզի ձեր խոսքերը ստուգվեն, BDB 103, KB 119, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

**42:17 «Եվ երեք օր բանտ նստեցրեց նրանց»** Ըստ երևույթին Հովսեփն ուզում էր, որ նրանք վերապրեին իր տառապանքից գոնի մի փոքր մաս, որը ինքն էր անցել նրանց պատճառով:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 42:18-25**

<sup>18</sup>Եվ երրորդ օրը Հովսեփն ասաց նրանց. «Արե՛ք այն բանը, որ ողջ մնաք, ես Աստծուց վախեցող մարդ եմ. <sup>19</sup>եթե դուք ճշմարիտ եք, ձեր եղբայրներիվ մեկը կարգելափակվի ձեր բանտարկվաց տան մեջ, իսկ դուք գնացե՛ք, որ ձեր խոսքերը հաստատվեն, ձեր տան սովը վերացնելու համար պաշար տարեք: <sup>20</sup>Եվ ձեր կրտսեր եղբորն ինձ մոտ բերե՛ք, որ ձեր խոսքերը հաստատվեն, և չեք մեռնի»: <sup>21</sup>Այդպես արեցին: Եվ նրանք միմյանց ասում էին. «Իսկապես մենք շատ հանցավոր ենք մեր եղբոր հարցում, որովհետև տեսանք նրա հոգու տառապանքը, երբ մեզ աղաչում էր, և չլսեցինք. դրա համար է այս նեղությունը գալիս մեզ վրա»: <sup>22</sup>Եվ Ռուբենը պատասխանեց նրանց՝ ասելով. «Ես չեի՞ ասում, թե այդ տղայի դեմ մեղք մի՞ գործեք, և դուք ականջ չդրիք, և ահա հիմա նրա արյունը պահանջվում է»: <sup>23</sup>Եվ նրանք չգիտեին, որ Հովսեփը

**հասկանում է, քանի որ թարգմանչի միջոցով էին խոսում իրենց հետ: <sup>24</sup>Եվ նրանց մոտից հեռանալով լաց եղավ: Նա դարձյալ եկավ նրանց մոտ ու խոսեց նրանց հետ: Ապա նրանցից Շմավոնին վերցնելով՝ նրանց աչքի առայ կապեց նրան: <sup>25</sup>Եվ Հովսեփը հրամայեց, որ նրանց պարկերը ցորենով լցնեն և ամեն մեկի փողը իր քսակի մեջ դնեն և նրանց պաշար տան ճանապարհի համար: Եվ նրանց հետ այսպես վարվեց:**

**42:18-20** Հովսեփի հրամաններն ու պահանջները շարունակվում են՝

1. արե՛ք այս բանը, հ. 18, BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ողջ մնաք, հ. 18, BDB 310, KB 309, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. ձեր եղբայրներից մեկը կարգելափակվի, հ. 19, BDB 63, KB 75, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
4. գնացե՛ք, հ. 19, BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. պաշա՛ր /ցորեն/ տարե՛ք, հ. 19, BDB 97, KB 112, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. ձեր եղբորն ինձ մոտ բերե՛ք, հ. 20, BDB 97, KB 112, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
7. որ ձեր խոսքերը հաստատվեն, հ. 20, BDB 52, KB 63, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

**42:18 «ես Աստուծոց վախեցող մարդ եմ»** Այս արտահայտությունը կարող է վերաբերել Փարավոնի անունով Հովսեփի երդումներին (տես՝ հհ. 15,16) կամ երկնայինից նրան ունեցած վախից՝ ընդհանրապես կապված այս տասը տղամարդկանց հետ: Հովսեփը հաստատում է իր կատարելությունն ու հոգևորությունը (տես՝ 20:11): Նա իսկապես վախենում էր, պատվում էր *Էլոհիմին*:

**42:20 «հաստատվեն»** Տե՛ս Հատուկ Թեմա 15:6-ում (II. Ա):

**42:21 «նրանք միմյանց ասում էին, «Իսկապես մենք շատ հանցավոր ենք մեր եղբոր հարցում»»** Նրանք զգում էին, որ Աստված պատժում է իրենց՝ Հովսեփի դեմ իրենց գործած մեղքի համար: Սա ակնհայտ է հհ. 21,22,28 և 44:16-ից: Այնպիսի զգացում է, որ մենք հնձում ենք այն, ինչ ցանկ ենք (տես՝ Հոբ 34:11; Սաղմ. 28:4; 62:12; Առակ. 24:12; Ժող. 12:14; Երեմ. 17:10; 32:19; Մատթ. 16:27; 25:31-46; Հռոմ . 2:6; 14:12; 1 Կորնթ. 3:8; 2 Կորնթ. 5:10; Գաղ. 6:6-7; 2 Տիմ. 4:14; 1 Պետ. 1:17; Հյասոն. 2:23; 20:12; 22:12): Սակայն գոյություն ունի ևս մեկ աստվածաշնչյան ճշմարտություն, որ Աստված մեր հետ չի վարվում մեր մեղքերի համեմատ (տես՝ Սաղմ. 103:10): Մենք ժամանակավոր պատիժ չենք ստանում մեր բոլոր մեղքերի համար, այլապես մենք բոլորս էլ մեռած կլինեինք և չնայած դրան դեպքեր կան, որ Աստված այդպես է վարվում:

**42:22 «Եվ Ռուբենը պատասխանեց նրանց՝ ասելով, «Ես չեի՞ ասում, թե այդ տղայի դեմ մեղք մի՞ գործեք, և դուք ականջ չդրիք»** Սա հավանաբար առաջին անգամն է, որ Հովսեփը երբևէ լսել է, որ Ռուբենը փորձել է պաշտպանել իրեն (տես՝ Ծննդ. 37:22-24): Այժմ այս եղբայրները հավատում էին, որ Հովսեփի անմեղ անրյունը կանչում էր վրեժխնդրության համար, ինչպես որ Ծննդոց 4-ում Աբելի արյունը իր եղբոր դեմ էր կանչում:

**42:23 «Եվ նրանք չգիտեին, որ Հովսեփը հասկանում է, քանի որ թարգմանչի միջոցով էր խոսում իրենց հետ»** Նրանք խոսում էին երբայերեն. Հովսեփը անշուշտ միայն եգիպտերեն էր խոսում և թարգմանչի միջոցով:

Դարձյալ սա հանդիսանում էր ծածուկ մնալու միջոցներից մեկը, մինչև որ նա կարողացավ համոզվել, որ իր եղբայրները հաղթահարել են այն հակումները, որը մղել էր նրանց մեղանչելու իր դեմ մոտ քսան տարի առաջ:

Երբայերեն այս ԲԱՅԸ, որը թարգմանվում է «մի թարգմանիչ կար» (BDB 539, KB 529, *Hiphil* ԴԵՐԲԱՅ) սովորաբար մատնանշում է ծաղր ու ծանակ: *Hiphil* արմատով այն արտահայտում է՝

1. ծաղրանք՝ Հոբ 16:20; Սաղմ. 119:51
2. թարգմանիչ, այստեղ՝ պատվիրակ, 2 Մնաց. 32:31

ՀԿ-ում այս ԲԱՅԻ բոլոր կիրառությունները հանդիպում են բացասական ենթատեքստում (տես՝ NIDOTTE, հատոր՝ 2, էջ՝ 799):

**42:24 «լաց եղավ»** Ըստ երևույթին Հովսեփը զգայուն մարդ էր (տես՝ 43:30; 45:14,15):

❖ **«ապա նրանցից Շմավոնին վերցնելով՝ նրանց աչքի առաջ կապեց նրան»** Ակնհայտ է, որ նրանց առաջնեկը՝ Ռուբենն էր խմբի առաջնորդը և ըստ երևույթին նա փորձում էր օգնել Հովսեփին, ուստի և ամենահարմար ընտրությունը Շմավոնն էր: Նա երկրորդ որդին էր և շատ մեկնաբաններ հավատում են, որ հավանաբար Սյուքեմի մարդկանց (տես՝ Ծննդոց 34) հանդեպ նրա ցուցաբերած ահագոու գայրույթն էր, որ ներքաշել էր իրեն Հովսեփին վնասելու առաջին սցենարի մեջ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 42:26-28**  
**<sup>26</sup>Եվ նրանք իրենց էշերի վրա բռնեցին իրենց ցորենը և այնտեղից գնացին: <sup>27</sup>Եվ նրանցից մեկը իջևանատանը բացեց իր քսակն իր էշին դարման տալու համար և տեսավ իր փողը, որ ահա իր քսակի մեջ էր: <sup>28</sup>Եվ իր եղբայրներին ասաց. «Փողս ետ է եկել, և ահա, այստեղ՝ իմ քսակի մեջ է»: Եվ նրանց սիրտը խռովվեց և վախով իրար ասացին. «Այս ի՞նչ էր, որ Աստված անում է մեզ»:**

**42:25-29** Իննը եղբայրները վախենում էին, որ սա կարող էր վտանգել Շմավոնի ազատությանը: Նրանց մտահոգության աստիճանը արտահայտվում է՝  
1. նրանց սիրտը խռովեց, հ. 28 (բառացի՝ «նրանց սրտերը դուրս եկան տեղից»), BDB 422, KB 425, *Qal ԱՆԿԱՏԱՐ*  
2. վախով իրար ասացին, հ. 28, BDB 353, KB 350, *Qal ԱՆԿԱՏԱՐ*, տես՝ 27:33; 1 Թագ. 16:4; 21:1; 3 Թագ. 1:49

**42:27 «քսակ»** Այս համարում կան երկու տարբեր եբրայերեն տերմիններ, որոնք թարգմանվել են որպես «քսակ»՝  
1. «քսակ» (BDB 974), որը տարածված տերմին է «քուրձ» (այստեղ կիրառվածը) բառի համար  
2. «քսակ» (BDB 607), որը գտնվում է միայն այս պատմության մեջ՝ Հովսեփի և նրա եղբայրների մասին: Վերաբերում է ցորենի համար նախատեսված պարկին:

Այս երկու տերմինների կիրառության պատասխանը հնարավոր է այն է, որ մեկը վերաբերում է փողի քսակին (տես՝ NIDOTTE, հատոր 3, էջ՝ 843) և մյուս քսակը՝ ցորենի համար էր (տես՝ Ջեմս Ու. Ֆրիմեն, *Աստվածաշնչյան Բարքերն ու Սովորույթները*, էջ՝ 49 /James W. Freeman, *The Manners and Customs of the Bible*):

**42:28 «Այս ի՞նչ էր, որ Աստված անում է մեզ հետ»** Նրանք դեռ զգում էին աստվածային դատաստանը Հովսեփի դեմ իրենց կատարած արարքների համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 42:29-34**  
**<sup>29</sup>Եվ եկան Քանանի երկիրը՝ իրենց հայր Հակոբի մոտ և պատմեցին այն ամենն, ինչ պատահել էր իրենց՝ ասելով. <sup>30</sup>«Այն երկրի տեր հանդիսացող մարդը մեզ խստությամբ խոսեց և մեզ երկիրը լրտեսողների տեղ դրեց»: <sup>31</sup>Եվ ասացինք նրան. «Մենք ճշմարիտ մարդիկ ենք, մենք լրտեսներ չենք, <sup>32</sup>մենք՝ տասներկու եղբայրներ ենք՝ մեր հոր որդիները. մեկը չկա, իսկ մեր կրտսերը Քանանի երկրում՝ մոր հոր մոտ է այսօր»: <sup>33</sup>Եվ այն երկրի տեր հանդիսացող մարդը մեզ ասաց. «Սրանով կիմանամ, որ դուք ճշմարիտ եք. ձեր եղբայրներից մեկին ինձ մո՛տ թողեք. և ձեր տան սովի համար պաշար առեք և գնացեք»: <sup>34</sup>Եվ ձեր կրտսեր եղբորն ինձ մոտ բերեք, որ գիտենամ, որ դուք լրտեսներ չեք, այլ ճշմարիտ եք. ձեր եղբորը ձեզ կտամ, և այս երկրում առուտուր կանեք»:**

**42:29-34** Իննը եղբայրները պատմում են իրենց հորը՝ Հակոբին ամեն ինչ, որ տեղի էր ունեցել Եգիպտոսում:  
**42:34 «և այս երկրում առուտուր կանեք»** Այս ԲԱՅԸ (BDB 695, KB 749, *Qal ԱՆԿԱՏԱՐ*) թարգմանվում է «առևտուր» (տես՝ Ծննդ. 23:16), սակայն Ծննդ. 34:10-ում դրա կիրառությունը ակնարկում է «ազատ ճամփորդելու» նշանակությունը: Հնարավոր է, որ այն հատկապես վերաբերում է Եգիպտոս վերադառնալուն, երբ անհրաժեշտություն լինի ավելի շատ ցորեն գնելու (տես՝ 43:2):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 42:35-38**  
**<sup>35</sup>Եվ եղավ, որ նրանք իրենց պարկերը դատարկելիս տեսան, որ ահա ամեն մեկի փողի ծրարն իր պարկում է. և իրենք ու իրենց հայրը տեսան փողի ծրարները և վախեցան: <sup>36</sup>Եվ**

**նրանց հայր Հակոբն ասաց նրանց. «Ինձ անորդի թողեցիք. Հովսեփը չկա, Շմավոնը չկա, և Բենիամինին էլ եք տանելու. այս ամենն ինձ վրա եկավ»:<sup>37</sup> Եվ Ռուբենը խոսեց իր հոր հետ ու ասաց. «Իմ երկու որդիներին սպանի՛ր, եթե ես նրան քո մոտ չբերեմ. նրան իմ ձեռքը հանձնիր, և ես ետ կբերեմ նրան քեզ համար»:<sup>38</sup> Բայց նա ասաց. «Իմ որդին ձեզ հետ չի իջնի, որովհետև նրա եղբայրը մեռած է, և նա է մնացել մենակ. և եթե ձեր գնալու ճանապարհին նրան մի փորձանք պատահի, իմ սպիտակ մագերթ վշտով գերեզման կիջեցնեք»:**

**42:35-38** Ընտանիքը քննարկում էր իրավիճակը և թե ինչ անեն: Նրանք որոշում են այդ պահին ոչինչ չձեռնարկեն:

**42:35** Հ. 25 և հ. 35-ի միջև տարբերությունը այն է, որ հ. 27-ում նշվում է նրանցից «մեկը», իսկ հ. 35-ում՝ «նրանք»: Սա կրկնություն չէ, այլ խնդրի ավելի խորացում, մի խնդրի, որն արդեն նախկինում վախեցրել էր նրանց (տես՝ հ. 28):

**42:36 «Ինձ անորդի թողեցիք. Հովսեփը չկա, Շմավոնը չկա, և Բենիամինին էլ եք տանելու. այս ամենն ինձ վրա եկավ»** Նկատե՛ք, որ Հակոբը տեղի ունեցած դեպքերը հանձն է առնում որպես անձնական թշնամություն: Կարծես թե ակնարկվում է մեղադրանք, որ եղբայրներն ինչ-որ առումով ներգրավված են եղել Հովսեփի կորստյան մեջ:

**42:37 «Եվ Ռուբենը խոսեց իր հոր հետ ու ասաց»** Սա իրոք անխոհեմ առաջարկ էր: Ինչո՞ւ պետք է Հակոբը իր որդիների կորստյան պատճառով սպաներ իր թոռներին: Դա Ռուբենի կողմից իր հորը համոզելու փորձ էր, սակայն հակառակ արդյունքով: Հակոբը սպասելու էր մինչև (1) 43:8-9-ում Հուդայի առաջարկը և (2) կերակուր չուենանալու իրողությունը, որը ի վերջո թույլատրելու էր Բենիամինին նրանց հետ մեկնելու:

**42:38 «Շեղ/գերեզման»** Սա մեռելների գտնվելու վայրի համար կիրառվող ՀԿ-յան տերմին է: Հանդերձյալ կյանքի վարդապետությունը ինչ-որ առումով քողարկված է ՀԿ-ում, սակայն ակնհայտ է, որ նրանք հավատում էին մի հանդերձյալ կյանքի, որտեղ ընտանիքները միասին էին լինելու:

Ճիշտ է, որ սա մի մռայլ, տխուր խոսք էր, սակայն այնուամենայնից գիտակցված: *Շեղ / գերեզման* տերմինը ՆԿ-ում թարգմանվում է *Դժողք*: Ըստ երևույթին բոլոր մարդիկ գնում էին մեռելների այս պահպանման վայրը: Այդ պատճառով ռաբիները կասկածում են, որ գոյություն ունի *Դժողքի* արդարների և ամբարիշտների առանձին բաժիններ: Տե՛ս Հատուկ Թեմա 15:15-ում:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզինց յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր Հովսեփը թաքցնում իր ինքնությունը:
2. Ինչո՞ւ էր Հովսեփը կոպիտ խոսում իր եղբայրների հետ և մեղադրում նրանց լրտեսության մեջ:
3. Այս գլխից ի՞նչն է մեզ ստիպում մտածել, որ Հակոբը ինչ-որ բան էր կասկածում Հովսեփի մահվան հարցում:

**ԾՆՆԴՈՑ 43**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Վերադարձ Եգիպտոս	Վերադարձ Եգիպ- տոս Բենիամինի հետ	Երկրորդ ճամփոր- դությունը դեպի Եգիպտոս	Հովսեփի եղբայրնե- րը վերադառնում են Եգիպտոս Բենիա- մինի հետ	Հակոբի որդիները դարձյալ մեկնում են Բենիամինի հետ
43:1-10	43:1-7	43:1-10	43:1-2 43:3-5 43:6 43:7 43:8-10	43:1-10
43:11-15	43:8-14	43:11-15	43:11-14	43:11-14 Հովսեփի հետ հանդիպումը
Հովսեփը տեսնում է Բենիամինին	43:15-25	43:16-25	43:15-17 43:18-22 43:23 43:24-27	43:15-17
43:16-25				
43:26-34	43:26-34	43:26-34	43:28 43:29-34	43:26-34

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգրից մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 43:1-10

<sup>1</sup>Եվ սովը սաստկացավ այն երկրում: <sup>2</sup>Եվ եղավ, երբ Եգիպտոսից բերած պաշարը կերան, վերջացրին, նրանց հայրը նրանց ասաց. «Գնացե՛ք Էլի ձեզ համար մի քիչ ուտելիք գնեցե՛ք»: <sup>3</sup>Եվ Հուդան խոսեց նրա հետ. «Այն մարդը մեզ հետ հաստատ վկայությամբ խոսեց՝ ասելով. «Իմ երեսը չտեսնե՛ք, եթե ձեր եղբայրը ձեզ հետ չլինի»: <sup>4</sup>Եթե մեր եղբորը մեզ հետ ուղարկես, կիջնենք և քեզ համար ուտելիք կբերենք: <sup>5</sup>Բայց եթե չուղարկես, չենք իջնի, որովհետև այն մարդը մեզ ասաց. «Իմ երեսը չտեսնե՛ք, եթե ձեր եղբայրը ձեզ հետ չլինի»: <sup>6</sup>Եվ Իսրայելն ասաց. «Ինչո՞ւ ինձ չարիք պատճառեցիք՝ այն մարդուն իմացնելով, որ ուրիշ եղբայր ունեք»: <sup>7</sup>Եվ նրանք ասացին. «Այն մարդը մեր մասին և մեր ազգականների մասին հարցուփորձ արեց ասելով. «Ձեր հայրը ո՞րչ է, ուրիշ եղբայր ունե՞ք». և մենք այս խոսքերին ի պատասխան ասացինք նրան: Մի՞թե մենք կարող էինք իմանալ, որ նա կասի, թե՛ «Ձեր եղբորը բերե՛ք»: <sup>8</sup>Եվ Հուդան իր հորը՝ Իսրայելին ասաց. «Տղային ինձ հետ ուղարկիր, վեր կենանք, գնանք, որ ողջ մնանք ու չմեռնենք՝ մենք էլ, դու էլ, մեր երեխաներն էլ: <sup>9</sup>Ես երաշխավոր կլինեմ նրա համար, իմ ձեռքից պահանջիր նրան. եթե նրան քեզ մոտ չբերեմ և քո առաջ չկանգնեցնեմ, հավիտյան քո առաջ մեղավոր լինեմ: <sup>10</sup>Որովհետև, եթե չհապաղեմք, հիմա երկրորդ անգամ վերադարձած կլինեմք»:

**43:2** Տեքստը չի նծում, թե որքան ժամանակ հերիքեց առաջին անգամ Եգիպտոսից տարված ցորենի պաշարը, սակայն Շմավոնը բանտում էր այս ամբողջ ընթացքում, իսկ Հակոբը ոչինչ չէր ձեռնարկում:

Վերջապես, երբ ցորենը վերջացավ, Հակոբը գործի անցավ՝

1. գնացե՛ք, BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. մի քիչ ուտելիք գնեցե՛ք, BDB 991, KB 1404, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**43:3 «Եվ Հուդան խոսեց»** Պատմության այս հատվածում Հուդան դառնում է կարևոր որդի: Ռուբենի առաջնորդությունը թուլացել էր:

❖ **«խիստ զգուշացրեց»** Սա քերականորեն շեշտադրված կազմություն է (այսինքն՝ միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԸ, որը նաև գտնվում է հ. 7-ում /երկու անգամ/ և հ. 20): ԲԱՅԸ (BDB 996, KB 1427, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նշանակում է վկայության տալ (տես՝ Ելից 19:21, 2 Օր. 32:46) կամ զգուշացնել (տես՝ Ելից 21:29, 3 Թագ. 2:42, Նեեմ. 163:15,21):

❖ **«երեսը տեսնել»** Սա դարձվածք է Հովսեփի հետ կրկին հանդիպման իմաստով (տես՝ 2 Թագ. 14:24): Նա էր տնօրինում ցորենի վաճառքը: Եթե նրանք չտեսնեին Հովսեփին, ապա նաև չէին կարողանա ցորեն գնել (տես՝ հ. 5):

**43:4-5** Հուդան շարունակում էր դիմել իր հորը՝ Հակոբին՝ Իսրայելին:

1. կիջնենք, BDB 432, KB 434, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
2. քեզ համար ուտելիք կգնենք, BDB 991, KB 1404, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

Հուդայի (և եղբայրների) գործողությունները կախված էին Հակոբի որոշումից, թե արդյոք նա կուղարկեր Բենիամինին:

**43:6** Հակոբը քննադատում է նրանց, որ իրենց ընտանիքի վերաբերյալ չափից ավելին տեղեկություն էին տվել:

Հակոբը կիրառում է մի խիստ ԲԱՅ (BDB 949, KB 1269, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Դրա հիմնական նշանակությունը *Hiphil* արմատով «վնասել» է (տես՝ Ծննդ. 19:9, 31:7, Ելից 5:22-23, Թվոց 11:11, 20:15, Հեսու 24:20):

**43:7** Եղբայրները շոշափելի կերպով պաշտպանեցին իրենց՝

1. այն մարդը մեր մասին և մեր ազգականների մասին հարցուփորձ արեց, BDB 981, KB 1371, միևնույն արմատի *Qal* ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԸ:
2. մի՞թե մենք կարող էինք իմանալ ..., BDB 393, KB 390, միևնույն արմատի *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՐՁԱԿ և *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԸ
3. որ նա կասի, «Ձեր եղբորը բերե՛ք», BDB 432, KB 434, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**43:8-10** Հուդան (Լիայի չորրորդ և վերջին որդին, տես՝ 29:35) դառնում է իր իննը ավագ եղբայրների համար որպես խոսնակ (տես՝ 44:14-34, 46:25-34):



1. տղային ինձ հետ ուղարկիր, BDB 1018, KB 1511, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. վեր կենանք, BDB 877, KB 1086, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
3. գնանք, BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
4. որ ողջ մնանք, BDB 310, KB 309, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
5. ու չմեռնենք, BDB 559, KB 562, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով (տես՝ 42:2):

Երբ հաց կերան, ժամանակը հասավ, որ որոշում կայացնեն: Հուդայի պրագմատիզմը տեղին էր (տես՝ հ. 10): Եթե նրանք չգնային հացի բերելու, բոլորն էին կմեռնեին, ներառյալ Բենիամինն ու Հակոբը: Հիմնավորումը ճնշող էր: Նրանք պետք է գնային Եգիպտոս ավելի շատ կերակուր բերելու համար և ավելի շատ կերակուր ունենալու պայմանը Բենիամինի ներկայությունն էր: Հ. 9-ում Հուդան դարձյալ փորձում է համոզել իր հորը, որը կարծես թե ակնարկում է հանդերձյալ կյանքի մասին նրանց ունեցած հավատքը:

**43:9 «Ես երաշխավոր կլինեմ նրա համար»** «Երաշխավոր» բառը (BDB 786 II, KB 876, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 44:32) կապում է այս գլուխը 38-րդ գլխի հետ (տես՝ հ. 17): Հուդան հետզհետե դառնում է ավելի կենտրոնական կերպար (տես՝ 49:8-12):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍ. 43:11-15**

<sup>11</sup>Եվ նրանց հայր Իսրայելն ասաց նրանց. «Եթե այդպես պետք է լինի, ուրեմն այսպես արեք՝ ձեր անոթներով այս երկրի ընտիր պտուղներից վերցրեք և այն մարդուն ընծաներ տարեք՝ մի քիչ բալասան, մի քիչ մեղր, համեմներ և զմուռս, պիստակ ու նուշ: <sup>12</sup>Եվ ձեր ձեռքերում կրկնապատիկ փող ունեցեք, և ձեր քսակներով ետ եկած փողը ձեր ձեռքով ե՛տ տարեք. գուցե սխալմունք է եղել: <sup>13</sup>Եվ ձեր եղբորն էլ առեք և ելե՛ք նորից այն մարդու մոտ գնացեք: <sup>14</sup>Եվ Ամենակարող Աստված ձեզ շնորհ կտա այն մարդու առաջ, և նա կարձակի ձեզ համար ձեր մյուս եղբորը և Բենիամինին, և ես եթե անգավակ եմ մնալու, թող անգավակ լինեմ»: <sup>15</sup>Եվ մարդիկ վերցրեցին այս ընծաները և իրենց ձեռքը կրկնապատիկ փող վերցրեցին, նաև՝ Բենիամինին և վեր կացան, իջան Եգիպտոս և Հովսեփի առաջ կանգնեցին:

**43:11-14** Հակոբը՝ իսրայելը գիտակցում է կարիքը և ուղղորդում է իր ավագ որդիներին՝

1. այսպես արեք, հ. 11, BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. վերցրեք որոշ ..., հ. 11, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. այն մարդուն տարեք, հ. 11, BDB 432, KB 434, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. կրկնապատիկ փող ունեցե՛ք, հ. 12, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. ետ եկած փողը ձեր ձեռքով ետ տարեք, հ. 12, BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այս համատեքստում սա այս ԲԱՅԻ երրորդ և չորրորդ կիրառությունն է)
6. ձեր եղբորն էլ առեք, հ. 13, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
7. ելե՛ք, հ. 13, BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
8. այն մարդու մոտ գնացե՛ք, հ. 13, BDB 996, KB 1427, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
9. և Ամենակարող Աստված ձեզ շնորհ կտա այն մարդու առաջ, հ. 14, BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
10. և նա կարձակի ձեր մյուս եղբորը, հ. 14, BDB 1018, KB 1511, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ:

**43:11**

**NASB**  
**NKJV**  
**NRSV**  
**TEV**  
**NJB**  
**REB**

«երկրի լավագույն արդյունքից»  
 «երկրի լավագույն պտուղներից»  
 «երկրի ընտիր պտուղներից»  
 «երկրի լավագույն արդյունքից»  
 «տարածքի լավագույն արդյունքից»  
 «մեր երկրում հայտնի բերքից մի որոշ մաս»

ՀԿ-ում այս բառը (BDB 275 II) միայն այստեղ է կիրառվում: Դրա հետ կապ ունեցող մյուս արմատները այս համատեքստում հնարավոր է արտահայտեն «ընդունելի եգիպտական սննդամթերք»: NIDOTTE, հատոր 1, էջ՝ 119 ասում է, որ այս բառը առնչվում է «ուժի» հետ, սակայն այս համատեքստում այն չի համապատասխանում:

Իրերի մի ամբողջ ցանկ է տրվում, որը սովորաբար քարավանների բաղկացուցիչ մասն էր կազմում (տես՝ 37:25): Հովսեփն այս ապրանքների մասին լավ գիտեր, քանի որ այս քարավաններից մեկի հետ էր ստիպված եղել ճամփորդել (որպես ստրուկ) դեպի Եգիպտոս:

43:12

NASB, TEV, NJB, LXX, JPSOA  
NKJV, NRSV

«սխալ»  
«սխալմունք»

Այս տերմինը (BDB 993) միայն այստեղ է գտնվում: Արմատը նշանակում է «մոլորվել» կամ «շեղվել»: Հոր 12:16-ում այս տերմինը թարգմանված է «սխալ առաջնորդել»: NIDOTTE, հատոր 4, էջ՝ 44, ասում է, որ արմատը մատնանշում է «մտադրված սխալ արարքների իրագործում» (տես՝ Ղևտ. 4:13; 1 Թագ. 26:21; Սաղմ. 119:21, 118; Եզեկ. 45:20):

**43:14 «Եվ Ամենակարող Աստված ձեզ շնորհ կտա այն մարդու առաջ»** Հակոբը ուղարկում է նրանց ուխտի Աստծո անունով: Այս անունը՝ *Էլ Շադայ*, առաջին անգամ օգտագործվել էր Աբրահամի կողմից (տես՝ Ծննդ. 17:1; 28:3; 35:11; 43:14; 48:3): *Էլ* տերմինը Հնագույն Մերձավոր Արևելքում Աստծո համար կիրառվող ընդհանուր անուն էր և կարծես թե ծագել է «ուժեղ լինել» արմատից: *Շադայ* տերմինը հնարավոր է բխել է կնոջ կրծքի համար օգտագործվող արմատից և ակնարկում է «ամենաբավ, ամեն բանի համար հոգացող Մեկին»: Ելից 6:3-ից երևում է, որ *Էլ Շադայ* տերմինը նահապետների կողմից Աստծո համար սովորաբար կիրառելի անուն է:

**43:15** Նվեր տանելը համարվում է ճիշտ բարքի տեր մարդկանց համար մշակութային վարք: Թվարկված իրերը՝ նվերները բնորոշ են Քանանին և Եգիպտոսում հարգի, բայց այդ ամենը բավարար չէր ընտանիքին և նախիրներին ողջ պահելու համար: «Նվեր» տալը (BDB 585) նման է Ծննդոց 32-ում Հակոբի կողմից Եսավին նվերներ տալուն:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 43:16-25**

<sup>16</sup>Եվ Հովսեփը Բենիամինին տեսավ նրանց հետ և իր տան վերակացուին ասաց. «Տո՛ւն տար այս մարդկանց և անասուն մորթիր և պատրաստի՛ր, որովհետև այս մարդիկ կեսօրին ինձ հետ են ճաշելու»: <sup>17</sup>Եվ մարդն արեց Հովսեփի ասածի նման, և մարդկանց Հովսեփի տունը տարավ: <sup>18</sup>Այս մարդիկ վախեցան, որ տարվեցին Հովսեփի տունը և ասացին. «Առային անգամ մեր քսակներում ետ տարած փողի համար ենք տարվում, որպեսզի մեր դեմ առիթ գտնի, մեզ վրա ընկնի և մեզ ստրուկներ դարձնի և մեր էշերը վերցնի»: <sup>19</sup>Եվ մոտեցան Հովսեփի տան վերակացու մարդուն և խոսեցին նրա հետ տան դռան մոտ, <sup>20</sup>և ասացին. «Ո՛հ, տեր, մենք սրանից առաջ եկել էին ուտելիք գնելու, <sup>21</sup>և եղավ, որ երբ իջևանատուն եկանք և մեր պարկերը բացեցինք, ահա ամեն մեկիս փողը իր քսակում էր՝ մեր փողն իր քաշով. և դա ետ ենք բերել մեր ձեռքով: <sup>22</sup>Եվ մեր ձեռքին ուրիշ փող ենք բերել ուտելիք գնելու համար. չգիտենք, թե ով է դրել մեր փողը մեր պարկերի մեջ»: <sup>23</sup>Եվ նա ասաց. «Խաղաղություն ընդ ձեզ, մի՛ վախեցեք. ձեր Աստվածը և ձեր հոր Աստվածը ձեզ գանձ է տվել ձեր քսակներում. ձեր փողը եկավ ինձ»: Եվ Ծմավոնին դուրս բերեց նրանց մոտ: <sup>24</sup>Եվ մարդը Հովսեփի տուն տարավ այս մարդկանց և ջուր տվեց, և իրենց ոտքերը լվացին, և նրանց էշերին դարման տվեց: <sup>25</sup>Եվ նրանք ընծաները պատրաստեցին մինչև կեսօրին Հովսեփի գալը, որովհետև իմացել էին, որ այնտեղ էին հաց ուտելու:

**43:16** Երբ Հովսեփը տեսավ Բենիամինին, հատուկ ընթրիքի պատրաստություն տեսավ:  
1. տուն տար այս մարդկանց, BDB 97, KB 112, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ  
2. անասուն մորթիր, BDB 370, KB 368, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ  
3. պատրաստիր, BDB 465, KB 464, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ  
Եգիպտացիները հիմնականում ուտում էին բանջարեղեններով, շատ հացով ձուկ և վայրի թռչուն: Խոշոր անասուն մորթվում էր միայն տանը և հատուկ իրադարձությունների դեպքում (տես՝ Ջեյմս Ու. Ֆրիմեն, *Աստվածաշնչի Բարքերն ու Սովորույթները*, էջ՝ 50 /James W. Freeman, *Manners and Customs of the Bible*, p. 50/):

**43:18 «որպեսզի մեր դեմ առիթ գտնի»** Սա մի արտասովոր և հազվադեպ փոխաբերություն է: ԲԱՅԸ (BDB 164 II, KB 193, *Hithpael* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ) նշանակում է «գլորել» կամ «գլորելով հեռացնել»: Այստեղ այն վերաբերում է «ինչ-որ մեկի վրա գլորել գցել ոմանց վնասելու նպատակով»: Այս արմատով մյուս միակ կիրառությունը գտնվում է 2 Թագ. 20:12-ում, որտեղ արտահայտում է մեկն իր արյան մեջ գալարվելու իմաստը:

**43:19 «Եվ մոտեցան Հովսեփի տան վերակացու մարդուն»** Այս մարդը կարծես թե ամեն ինչից քաջատեղյակ էր: Սա ճիշտ է ոչ միայն Հովսեփի ծրագրի մանրամասների առումով, այլ նա նաև քաջատեղյակ էր Հովսեփի հավատքը ներկայացնող աստվածաբանությունից: Իմ ենթադրությամբ Հովսեփին

խոսել էր Աբրահամի ուխտի Աստծո հանդեպ իր ունեցած անձնական հավատքի մասին իր ընտանիքի անդամների և իր հետ գործակցող եգիպտացիների հետ: Հետաքրքիր է, որ Հակոբի որդիները հ. 18-ում լինելով Եգիպտոսի ճոխության փառքի մեջ հեղեղված ունեին քոչվորներին հատուկ այս վախերը, որ ինչ-որ մեկը կարող է գողանալ իրենց կենդանիներին: Իրականում այդպես էլ լինում է, երբ «գյուղի մարդիկ գալիս են մեծ քաղաք»:

**43:20 «մենք սրանից առաջ եկել էինք»** Այս արտահայտությունը ավելի խստացված՝ շեշտադրված է միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՈՎ (BDB 432, KB 434, երկուսն էլ *Qal* արմատներով):

**43:23 «խաղաղություն ձեզ»** Այստեղ ԲԱՅ չկա, միայն ԴԵՐԱՆՈՒՄ և *խաղաղություն* ԳՈՅԱԿԱՆԸ: Այն ակնարկվող ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է:

❖ **«մի՛ վախեցեք»** Այս ԲԱՅԸ (BDB 431, KB 432) *Qal* ԱՆԿԱՏԱՐ է՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 43:26-34**  
<sup>26</sup>Եվ Հովսեփը եկավ տուն, և նրանք իրենց ձեռքի ընծաները նրան մատուցեցին տանը և մինչև գետին խոնարհվեցին նրա առաջ: <sup>27</sup>Եվ նրանց ողջությունը հարցնելով՝ ասաց. «Ձեր այն ձեր հայրը ո՞րչ է, որի մասին խոսում էիք, դեռ կենդանի՞ է»: <sup>28</sup>Եվ ասացին. «Քո ծառան՝ մեր հայրը, ողջ է, դեռ կենդանի է», և խոնարհվեցին: <sup>29</sup>Եվ իր աչքերը բարձրացրեց և տեսավ իր մոր որդի Բենիամինին և ասաց. «Սա՞ է ձեր կրտսեր եղբայրը, որի մասին ինձ հետ խոսել էիք», և ասաց Բենիամինին. «Աստված ողորմի՛ քեզ, որդյա՛կ իմ»: <sup>30</sup>Եվ Հովսեփը շտապով ելավ, որովհետև նրա աղիքները գալարվեցին իր եղբոր համար, և տեղ էր փնտրում, որ լաց լինի: Եվ մտավ իր սենյակն ու այնտեղ լաց եղավ: <sup>31</sup>Եվ լվաց իր երեսը, դուրս եկավ և իրեն զապելով՝ ասաց. «Հա՛ց բերեք»: <sup>32</sup>Եվ իր համար առանձին բերեցին, իսկ նրանց՝ առանձին և այն եգիպտացիների համար, որ իրենց հետ էին, առանձին դրեցին, որովհետև եգիպտացիները երբայեցիների հետ հաց չէին ուտում, որովհետև եգիպտացիների համար դա պղծություն էր: <sup>33</sup>Եվ նստեցին նրա առաջ՝ անդրանիկն ըստ իր անդրանկության, իսկ կրտսերն՝ ըստ իր պատանեկության: Եվ մարդիկ միմյանց նայելով զարմանում էին: <sup>34</sup>Եվ նա իր առջևից բաժիններ ուղարկեց նրանց համար, բայց Բենիամինի բաժինը մյուսներից հինգ անգամ ավելի էր. և խմեցին ու նրա հետ միասին զվարճացան:

**43:27,29** Հովսեփը մի շարք հարցեր է տալիս նրանց ընտանիքի վերաբերյալ: Նրանք պետք է, որ հիշեն իրենց հոր խորը զգացմունքները այս տեղեկությունը հայտնելու շուրջ (տես՝ հ. 6):

1. ձեր հայրը լա՛վ է (ԲԱՅ չկա, *shalom*-ի համար տե՛ս 29:6)
2. նա ո՞րչ է (ԲԱՅ չկա)
3. սա՞ է ձեր կրտսեր եղբայրը (ԲԱՅ չկա)

**43:29 «Աստված ողորմի՛ քեզ, որդյա՛կ իմ»** Հովսեփն առանձնացնում է Բենիամինին հատուկ ողջունով («ողորմի», BDB 335, KB 334, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով):

Նկատե՛ք, որ Հովսեփը արտահայտում է իր աստվածաբանական աշխարհայացքը:

**43:30 «Հովսեփը շտապելով ելավ, որովհետև նրա աղիքները գալարվեցին իր եղբոր համար»** Սա բառացիորեն թարգմանվել է «նրա խիղճը տաքացավ» (BDB 485, KB 481, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ 3 Թ-ագ. 3:26): «Խիղճ» բառը (BDB 933) բառացի նշանակում է «միևնույն արգանդից դուրս եկած մարդու հանդեպ զգացմունքներ» (այսինքն՝ եղբայրասիրություն):

**43:31 «Հա՛ց բերեք»** Սա բառացի «հաց դրեք» (BDB 962, KB 1321, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) խոսքն է: Հ. 31-33-ից հետաքրքիր է, որ եգիպտացիները իրենց ճաշերի ժամանակ նստում էին սեղանի շուրջ՝ աթոռների վրա, մինչ քանանացի երբայեցիները հենվում էին իրենց ձախ արմուկի վրա: Երբայեցիների և քանանացիների (այստեղ՝ երբայեցիների) միջև գոյություն ունեին մշակութային լարվածություններ, տես՝ հ. 32: Սա ճշգրտորեն համընկնում է պատմական միջավայրին և ցույց է տալիս այս դեպքի պատմական լինելը (տես՝ Ջեյմս Մ. Ֆրիմեն, *Աստվածաշնչի Բարբերն ու Սովորությունները*, էջ՝ 52):

**43:32 «Եվ իր համար առանձին բերեցին»** Կարծես թե Բենիամինը ոչ միայն առանձնացվել էր հատուկ տեղ նստելու համար, այլ նաև հավելյալ կերակուրի համար (տես՝ հ. 34): Ըստ երևույթին Հովսեփը

փորձում է մյուս եղբայրների մեջ նախանձ գրգռել և տեսնել նրանց արձագանքը: Նա փորձում էր տեսնել, թե այն բնավորության գծերը, որոնք տեղի տվեցին քսան տարի առաջ իր իրավիճակում, արդյո՞ք նույնն էին մնացել, թե տարիների ընթացքում փոխվել էին:

❖ **«Եգիպտացիները եբրայեցիների հետ հաց չէին ուտում, որովհետև եգիպտացիների համար դա պղծություն էր»** Այս երևույթը գեղեցիկ նկարագրվում է Ծննդ. 39:6-ում, թե ինչու էր Պետավրեսը մտահոգված իր իսկ կերակուրի պատրաստությամբ: Ոմանք մեջբերում են Հերոդոտոսին, 2:41, որպես այս տեսակետի պատմական հիմնավորում: Թվում է, թե եգիպտացիները նողկում էին բոլոր այն մարդկանցից, ովքեր ուտում էին կովի միս, քանի որ նրանք նախիրներին դիտարկում էին որպես սրբություն՝ բավականին նման մերօրյա հինդուներին: Սա կարող է հստակեցնել Ծննդ. 46:34 և Ելից 8:26:

**43:33** Ըստ երևույթին եգիպտացի ծառաները եղբայրներին նստեցրել էին ըստ իրենց տարիքային հերթականության: Ինչպե՞ս նրանք գիտեին դա: Հովսեփը շարունակում էր հայտնել իր ինքնությունը:

**43:34 «բայց Բենիամինի բաժինը մյուսներից հինգ անգամ ավելի էր»** Շատ հնարավոր է, որ «հինգ» թիվը Եգիպտոսում կարևոր թիվ էր, քանի որ այս պատմության ամբողջ ընթացքում այս թիվը բավականին հաճախ է հանդիպում (տես՝ 43:34, 45:6,11,22, 47:2,24): Հետաքրքիր է, թե եղբայրները ինչ մտածեցին, երբ Հովսեփը նրանց մատուցեց հենց իր սեփական սեղանից և Բենիամինին մատուցվեց այսքան շատ:

«Բաժին» (BDB 673) տերմինը նկատի ունի մսակտոր (տես՝ 2 Թագ. 11:8, Եսթ. 2:18, Երեմ. 40:5): Դա կովի միս չէր:

❖ **«և խմեցին ու նրա հետ միասին զվարճացան»** Երկու ԲԱՅԵՐԸ («խմել», BDB 1059, KB 1667 և «խմեցին», BDB 1016, KB 1500) շատ նման են հնչում (տես՝ Ծննդ. 9:21): Ինչպիսի՞ խնջույք էր:

**ԾՆՆԴՈՑ 44**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Եղբայրները ետ են վերադարձվում	Հովսեփի գավաթը	Հովսեփը ստուգում է իր եղբայրներին վերջին անգամ	Կորած գավաթը	Հովսեփի գավաթը Բենիամինի պարկում
44:1-5	44:1-5	44:1-5	44:1-5	44:1-2 44:3-5
44:6-13	44:6-13	44:6-13	44:6-9 44:10-13	44:6-13
44:14-17	44:14-17	44:14-17	44:14-15 44:16 44:17	44:14-17
44:18-34	Հուդան բարեխոսում է Բենիամինի համար 44:18-34	44:18-34	Հուդան աղաչում է Բենիամինի համար 44:18-23 44:24-29 44:30-34	Հուդան բարեխոսում է 44:18-34

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգրը մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 44:1-5**

**1**Եվ իր տան վերակացուին հրամայեց՝ ասելով. «Այս մարդկանց պարկերը լցրո՛ւ ուտելիքով, որքան որ կարողանան տանել և ամեն մեկի փողն իր պարկի բերանին դիր: **2**Եվ իմ բաժակը՝ արծաթե բաժակը, դի՛ր փոքրի պարկի բերանում և իր ցորենի փողը նույնպես»: Եվ նա արեց, ինչպես որ Հովսեփն ասել էր իրեն: **3**Եվ առավոտյան լուսացավ, և մարդիկ ճանապարհվեցին՝ իրենք և իրենց էշերը: **4**Նրանք քաղաքից դուրս էին եկել, դեռ չէին հեռացել, երբ Հովսեփն իր տան վերակացուին ասաց. «Վե՛ր կաց, վազի՛ր այն մարդկանց ետևից, հասի՛ր նրանց և ասա՛ նրանց. «Ինչո՛ւ չար հատուցեցիք բարիքի փոխարեն»: **5**Սա այն չէ՛, որով իմ տերը խմում է և գուշակում է նրանով. դուք չար բան կատարեցիք այսպես վարվելով»:

**44:1** Սա արդեն երկրորդ անգամ է, որ Հովսեփն այսպես է վարվում (տես՝ 42:25):

1. լցրո՛ւ, BDB 569, KB 583, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. դի՛ր, BDB 962, KB 1321, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**44:2** Բենիամինի պարկի մեջ Հովսեփի արծաթե գավաթը դնելը (տես՝ հ. 5) նորություն էր: Հովսեփը դեռևս փորձում է իր եղբայրներին տեսնելու, թե արդյոք նրանց նախանձն ու ագրեսիան իր հարազատ եղբոր հանդեպ (Ռաբելի երեխաները) սպառվել է:

Պետք է նշել, որ այդ «գավաթ» (BDB 149) թարգմանված տերմինը իրականում մի մեծ անոթ է, հնարավոր է մի թաս կամ նույնիսկ սափոր (տես՝ Երեմ. 35:5): «Գավաթ»-ի համար սովորական բառը գտնվում է BDB 468 I-ում (տես՝ 40:11,13,21; 2 Թագ. 12:3; Սաղմ. 16:5; 23:5; Առակ. 23:31):

**44:4 «քաղաքը»** Որ քաղաքի մասին է խոսքը գնում, որը կախված էր Փարավոնից: Հետագայում Ծննդոցում լարձես թե Հովսեփը խոսում է իր հորը Գեսեմի երկրում և Փարավոնը այդ նույն օրը լինում է մայրաքաղաքում: Սա ակնարկում է դելտա տարածաշրջանի մայրաքաղաքը: Հիքսոսների մայրաքաղաքն այնտեղ էր: Հաջորդ Փարավոնը, որը տեղափոխեց իր մայրաքաղաքը այս նույն շրջանը, եղել է Սեթի I-ը: Նա է եղել Ելիցից առաջ իսրայելացիների հանդեպ դաժան վարվող Փարավոնը, հավանաբար Ռամզես II-ի իշխանության օրոք:

Տե՛ս ՀԿ-ի Ուսումնասիրություն, Ելիցի Ներածություն [www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org)

❖ Հովսեփն իր ծառաներին հրամայում է հետևել այս գործողություններին՝

1. վե՛ր կաց, BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. վազի՛ր, հետևի՛ր, BDB 922, KB 1191, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. հասի՛ր նրանց, BDB 673, KB 727, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով՝ ժամանակավոր տարր պարունակող: Սա հետևելու և որսալու խաղի պես է: Այս բառը կիրառվում է նաև Լաբանի համար, որը հետևում էր Հակոբին (տես՝ 31:25):
4. մեղադրի՛ր նրանց (հարցադրմամբ) գողության մեջ:

❖ «Ինչո՛ւ չար հատուցեցիք բարիքի փոխարեն» LXX (որին հետևում են NRSV, TEV թարգմանությունները) այս նախադասությունից հետո ավելացնում է, «Ինչո՛ւ եք գողացել իմ արծաթե գավաթը»: Փեշիթան չունի այս հավելումը:

**44:5 «Սա այն չէ՛, որով իմ տերը խմում է և գուշակում»** Այս բոլոր երեք գլուխների մեջ Հովսեփը ծրագրում է մի պլան, որով փորձում էր իր եղբայրների բնավորությունը: Ինչևէ ինչ-որ տեղ զարմանալի է տեսնել, որ նա նշում է գուշակում կամ հմայություն բառը (BDB 638, KB 690, միևնույն արմատի ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԻ խիստ քերականական կազմությամբ, տես՝ հ. 15): Սա կարող է լինել եգիպտական սովորության պարզապես մեկ այլ տարր, քանի որ այս ժամանակաշրջանում Եգիպտոսի առաջնորդներից շատերը կա՛մ հմայողներ էին, կա՛մ էլ ունեին հմայողներ: Բնագրում այս տերմինը նշանակում էր «շնչալ» կամ «սուլել» (տես՝ Ղևտ. 19:26 և 2 Օր. 18:10, որտեղ այն հետագայում դատապարտվում է): Մեպտուագինտայում այն թարգմանվում է «նախագագսում», որը նշանակում է իմանալ Աստծո կամքը՝ թռչունների թռիչքի գննությամբ:

Երուսաղեմի Աստվածաշունչը նշում է ծանուցագրում (էջ՝ 67), որ հմայությունները կատարվում էին՝

1. բաժակի մեջ ջուրը լցվելու կերպի միջոցով (հիդրոմենասցիա)
2. բաժակի մեջ ջրի լցվելու ձայնի միջոցով
3. բաժակի մեջ լցվող յուղի կաթիլների տեսքի միջոցով (լեկոնոմանա)

Սրանք բոլորն էլ կիրառվում էին ՀՄԱ-ում: Ս. Ռ. Դրայվերն ավելացնում է մեկ այլ միջոց՝

4. ոսկու, արծաթի կամ թանկարժեք քարերի կտորներ էին զգվում բաժակի մեջ և ըստ դրանց դիրքի՝ դասավորության կատարվում էր գուշակություն (տես՝ UBS, *Ծննդոցի ձեռնարկ*, էջ՝ 989 /UBS, *Handbook on Genesis*, p. 989/):

Կախարդության հնարքների մասին մեր տեղեկությունների մեծ մասն ունենք հնագույն բաբելոնյան օմեն տեքստերից (նաև ուշադրություն դարձրեք հետագայում կիրառվող հնարքներին Եզեկ .21:21-ում): Շատ տեղեկություն չունենք եգիպտական պատմության այս դարաշրջանում կիրառվող հմայության մեթոդների վերաբերյալ (տես՝ Ջեյմս Մ. Ֆրիմենի, *Աստվածաշնչի բարքերն ու սովորույթները*, էջ՝ 52-54, /James M. Freeman, *Manners and Customs of the Bible*, pp. 52-54/):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 44:6-13**

**6**Եվ նա հասավ նրանց և ասաց նրանց այս խոսքերը: **7**Եվ ասացին նրան. «Ինչո՞ւ է իմ տերն այսպիսի խոսքեր ասում. քավ լիցի, որ քո ծառաներն այդպիսի բան անեն: **8**Ահա այն փողը, որ գտել էինք մեր քսակի բերանում, Քանանի երկրից այն քեզ վերադարձրինք. և ինչպե՞ս պիտի գողանայինք քո տիրոջ տնից արծաթ կամ ոսկի: **9**Քո ծառաներից ում մոտ որ գտնվի, թող նա մեռնի, և մենք էլ տիրոջս ստրուկները լինենք»: **10**Եվ նա ասաց. «Հենց հիմա թող ձեր ասածի պես լինի, ում մոտ որ գտնվի, նա ինձ ծառա լինի, իսկ դուք անպարտ լինեք»: **11**Ուստի ամեն մեկն իր պարկը գետին իջեցրեց, և ամեն մեկն իր պարկը բացեց: **12**Եվ նա մեծից սկսեց իր փնտրտուքը և մինչև փոքրը նայեց վերջացրեց և բաժակը Բենիամինի պարկում գտնվեց: **13**Այն ժամանակ նրանք իրենց հագուստները պատռեցին, և ամեն մեկն իր էջը բարձելով վերադարձան քաղաք:

**44:6-13** Այս համարները Հովսեփի ծառայի (տես՝ 43:16-25) և տաս եղբայրների միջև երկխոսություն է:

**44:9** Այս պատասխանը շատ նման է Հակոբի պատասխանին, երբ Լաբանը ընկել էր նրա ետևից (տես՝ 31:32): Սա մի ազնիվ պատասխան է, չնայած որ նրանք զոջալու էին նմանատիպ հայտարարությունների համար, երբ գավաթը գտնվեր Բենիամինի պարկում:

**44:10** «Հենց հիմա թող ձեր ասածի պես լինի, ում մոտ որ գտնվի, նա ինձ ծառա լինի, իսկ դուք անպարտ լինեք» Կարծես թե սա դարձյալ մի սովորական սցենար էր տեսնելու արդյոք նրանք կլքեն Բենիամինին, թե իրար հետ թիկունք կկանգնեն նրան որպես մի ընտանիք: Շատ հեշտ կարող էր լինել նրանց համար Բենիամինին թողնելը (տես՝ հ. 17) և վազել ապահովության ետևից (ինչպես որ արեցին Շմավոնի բանտարկության ժամանակ):

«Ամենդ՝ անպարտ» թարգմանված տերմինը (BDB 667) սովորաբար թարգմանվում է «անարատ»: Այս տերմինը մի քանի կերպ է կիրառվում՝

1. իրավաբանական իմաստով, Ելից 23:7
2. երդման ժամանակ, Ծննդ. 24:41; Հեսու 2:17,20
3. մարդու վերաբերյալ, Հոբ 4:7; 9:23; 17:8; 22:19,30; 27:17; Սաղմ. 10:8; 15:5; Առակ. 1:11

Ծառայի կողմից կատարած այս հայտարարությունը կանխատեսում է հ. 17-ում Հովսեփի հայտարարությունը:

**44:12** «մեծից սկսեց մինչև փոքրը» Եղբայրների տարիքային հերթականության այս իմացությունը նախկինում արդեն զարմացրել էր նրանց (տես՝ 43:33): Այժմ տեսնում ենք, որ ծառան նույնպես ծանոթ էր այս տեղեկությանը:

Այս տնտեսը Հովսեփի շատ մտերիմ և վստահելի ծառան էր: Միայն թե հետաքրքիր է, թե նա Հովսեփի կյանքի և հավատքի վերաբերյալ որքան բան գիտեր:

**44:13** «այն ժամանակ նրանք իրենց հագուստները պատռեցին» Բառերով հնարավոր չէ նկարագրել, թե ինչ ցնցում վերապրեցին նրանք: Հրեա մշակույթի մեջ սա սգալու նշաններից մեկն էր համարվում: Տես՝ Հատուկ Թեմա. Սգալու ծեսերը, 37:29-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 44:14-17**

**14**Եվ Հուդան ու իր եղբայրները Հովսեփի տուն եկան և նա դեռ այնտեղ էր, և նրա առջ գետնին ընկան: **15**Եվ Հովսեփն ասաց նրանց. «Այս ի՞նչ արեցիք: Դուք չգիտե՞ք, որ այնպիսի մի մարդ, ինչպիսին ես եմ, անպայման գուշակություն է անում »: **16**Եվ Հուդան ասաց. «Ի՞նչ ասենք իմ տիրոջը, ի՞նչ խոսենք կամ ինչպե՞ս արդարացնենք մեզ: Աստված բռնել է քո ծառաների

**հանցանքը, ահա մենք մեր տիրոջ ծառաներն ենք, մենք էլ, նա էլ, ում մոտ գտնվեց բաժակը»:**  
**17Եվ նա ասաց. «Քավ լիցի, որ ես այդպես անեմ. միայն այն մարդը, ում մոտ գտնվել է բաժակը, թող ինձ ծառա լինի, իսկ դուք խաղաղությամբ ձեր հոր մոտ գնացեք»:**

**44:15** Սա սուտ հայտարարություն է: Այն հորինվել է, որպեսզի ավելի լարված իրավիճակ ստեղծի: Հովսեփը չէր հմայել նրանց գողությունը, նա ի՛նքն էր ծրագրել:

- 44:16** Հուդուն խմբի խոսնակն էր: Նա Հովսեփին մի քանի հռետորական հարց ուղղեց՝
1. Ի՞նչ ասենք իմ տիրոջը
  2. Ի՞նչ խոսենք
  3. Ինչպե՞ս արդարացնենք մեզ (BDB 842, KB 1003, *Hitpael* ԱՆԿԱՏԱՐ)
  4. հ. 18 նույնպես հարց է
  5. հ. 19 նույնպես հարց է
  6. հ. 34 նույնպես հարց է

❖ «Աստված բռնել է քո ծառաների հանցանքը» Այստեղ դարձյալ Հովսեփի մատնության ու վաճառքի աստվածաբանական առանձնահատկությունները կարծես թե պատճառ էին հանդիսացել այս հանցանքի (BDB 730, տես՝ 4:13; 15:16; 19:15) զգացումներին տարիներ շարունակ մնալ եղբայրների մեջ (տես՝ 42:21-22,28): Սակայն ինչպես երևում է եղբայրներն իրոք փոխվել էին, քանի որ նրանք միաբան էին Բենիամինի պաշտպանության համար և Հուդան նույնիսկ առաջարկում է փոխանորդ լինելու տարբերակը (տես՝ հհ. 18-34, հատկապես՝ հհ. 32-33): Այս աղոթքը Աբրահամի, Մովսեսի և Պողոսի բարեխոսական աղոթքների հետ միևնույն մակարդակի վրա է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈՒՔ**  
**SPECIAL TOPIC: INTERCESSORY PRAYER**

I. Ներածություն  
Ա. Աղոթքը կարևոր է համաձայն Հիսուսի թողած օրինակի.  
1. Անձնական աղոթք - Մարկ.1:35; Ղուկ.3:21; 6:12; 9:29; 22:31-46  
2. Տաճարի մաքրում - Մատթ.21:13; Մարկ.11:17; Ղուկ.19:46  
3. Աղոթքի նմուշ՝ օրինակ - Մատթ.6:5-13; Ղուկ.11:2-4  
Բ. Աղոթքը, հոգատար Աստծո հանդեպ, որը ներկա է, կամենում է և կարող է մեր աղոթքների շնորհիվ մեր և ուրիշների օգտին գործել, մեր հավատքը շոշափելի գործողության մեջ դնելն է:  
Գ. Աստված Ինքն Իրեն սահմանափակել է շատ ոլորտներում Իր զավակների աղոթքների հիման վրա գործելիս (տես՝ Հակ.4:2):  
Դ. Աղոթքի գլխավոր նպատակը Երրորդության Աստծո հետ մեր փոխհարաբերությունն ու անցկացրած ժամանակն է:  
Ե. Աղոթքի շրջանակը կարող է իր մեջ ներգրավվել հավատացյալների հետ առնչվող, անհանգստացնող ամեն ինչ և ամեն ոք: Մենք կարող ենք հավատքով մեկ անգամ աղոթել, կամ նորից ու նորից, եթե այդ միտքը կամ անհանգստությունը վերադառնում է:  
2. Աղոթքը կարող է բովանդակել մի քանի տարր.  
1. Փառաբանություն և երկրպագություն Երրորդության Աստծուն  
2. Գոհություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և հոգածության համար  
3. Մեր մեղքերի խոստովանությունը՝ թե՛ անցյալի և թե՛ ներկայի  
4. Մեր կարիքների կամ փափագների համար խնդրվածք  
5. Բարեխոսություն, որի ժամանակ Հոր առջև ենք բարձրացնում ուրիշների կարիքները  
Է. Բարեխոսական աղոթքը մի առեղծված է: Այն մարդկանց, ում համար մենք աղոթում ենք, Աստված մեզնից ավելի շատ է սիրում, մինչդեռ մեր աղոթքները հաճախ ազդում են ինչ-որ փոփոխության, պատասխանի կամ կարիքի վրա ոչ միայն մեր ներսում, այլ նաև նրանց:

II. Աստվածաշնչյան աղբյուրը  
Ա. Հին Կտակարան  
1. Բարեխոսական աղոթքի մի քանի օրինակներ՝  
ա. Աբրահամը աղերսում է Մոդոմի համար. Ծննդ. 18:22բ  
բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար.  
(1) Ելից 5:22-23  
(2) Ելից 32:31բ  
(3) 2 Օրինաց 5:5



- (4) 2 Օրինաց 9:18,25բ
- (5) 2 Օրինաց 9:18,25-29
- գ. Սամվելը աղոթում է Իսրայելի համար.
  - (1) 1 Թագավորաց 7:5-6,8-9
  - (2) 1 Թագավորաց 12:16-23
  - (3) 1 Թագավորաց 15:11
- դ. Դավիթը աղոթում է իր երեխայի համար, 2 Թագավորաց 12:16-18
- 2. Աստված փնտրում է բարեխոսների, Եսայի 59:16
- 3. Գիտակցված, չխոստովանված մեղքը կամ անգոջում վերաբերմունքը ազդում է մեր աղոթքների վրա
  - ա. Սաղմոսներ 66:18
  - բ. Առակաց 28:9
  - գ. Եսայի 59:1-2; 64:7

Բ. Նոր Կտակարան

- 1. Որդու և Հոգու բարեխոսական ծառայությունը
  - ա. Հիսուսը
    - (1) Հռոմեացիս 8:34
    - (2) Եբրայեցիս 7:25
    - (3) 1 Հովհաննես 2:1
  - բ. Սուրբ Հոգին՝ Հռոմեացիս 8:26-27
- 2. Պողոսի բարեխոսական ծառայությունը
  - ա. Աղոթում է հրեաների համար՝
    - (1) Հռոմեացիս 9:1բ
    - (2) Հռոմեացիս 10:1
  - բ. Աղոթում է եկեղեցիների համար՝
    - (1) Հռոմեացիս 1:9
    - (2) Եփեսացիս 1:16
    - (3) Փիլիպեցիս 1:3-4,9
    - (4) Կողոսացիս 1:3,9
    - (5) 1 Թեսաղոնիկեցիս 1:2-3
    - (6) 2 Թեսաղոնիկեցիս 1:11
    - (7) 2 Տիմոթեոս 1:3
    - (8) Փիլիմոն հ. 4
  - գ. Պողոսը խնդրում է եկեղեցիներին, որ աղոթեն իր համար՝
    - (1) Հռոմեացիս 15:30
    - (2) 2 Կորնթացիս 1:11
    - (3) Եփեսացիս 6:19
    - (4) Կողոսացիս 4:3
    - (5) 1 Թեսաղոնիկեցիս 5:25
    - (6) 2 Թեսաղոնիկեցիս 3:1
- 3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը
  - ա. Աղոթել միմյանց համար՝
    - (1) Եփեսացիների 6:18
    - (2) 1 Տիմոթեոս 2:1
    - (3) Հակոբոս 5:16
  - բ. Աղոթք հատուկ խմբերի համար՝
    - (1) մեր թշնամիների՝ Մատթ.5:44
    - (2) Քրիստոնյա մշակների՝ Եբր.13:18
    - (3) իշխանների՝ 1 Տիմ.2:2
    - (4) հիվանդների՝ Հակ.5:13-16
    - (5) ետ նահանջածների՝ 1 Հովհ.5:16

III. Պատասխանված աղոթքների համար պայմանները՝

- Ա. Մեր փոխհարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ՝
  - 1. Նրա մեջ բնակվելը՝ Հովհ.15:7
  - 2. Նրա անունով՝ Հովհ.14:13,14; 15:16; 16:23-24
  - 3. Հոգով՝ Եփես.6:18; Հուդա 20
  - 4. Աստծո կամքի համաձայն՝ Մատթ.6:10; 1 Հովհ. 3:22; 5:14-15

Բ. Շարժառիթները՝

1. Առանց վարանելու՝ Մատթ.21:22; Հակ.1:6-7
2. Խոնարհությամբ և ապաշխարությամբ՝ Դուկ.18:9-14
3. Վատ նպատակով խնդրանք՝ Հակ.4:3
4. Եսասիրությամբ՝ Հակ.4:2-3

Գ. Այլ առանձնահատկություններ՝

1. Հարատևություն՝
  - ա. Դուկաս 18:1-8
  - բ. Կողոսացիս 4:2
2. Շարունակ խնդրել՝
  - ա. Մատթեոս 7:7-8
  - բ. Դուկաս 11:5-13
  - գ. Հակոբոս 1:5
3. Տան մեջ անհամաձայնությունը՝ 1 Պետրոս 3:7
4. Գիտակից՝ հայտնի մեղքերից գերծ՝
  - ա. Մաղմոս 66:18
  - բ. Առակաց 28:9
  - գ. Եսայի 59:1-2
  - դ. Եսայի 64:7

IV. Աստվածաբանական եզրակացություն

Ա. Ինչպիսի՞ արտոնություն: Ինչպիսի՞ հնարավորություն: Ինչպիսի՞ պատասխանատվություն և պարտավորություն:

Բ. Հիսուսն է մեր օրինակը. Հոգին մեր առաջնորդն է, իսկ Հայրը՝ անհամբեր սպասում է:

Գ. Այն կարող է փոխել ձեզ, ձեր ընտանիքը, ձեր ընկերներին և աշխարհը:

**44:17 «Քավ լիցի, որ ես այդպես անեմ»** Մա մի դարձվածքային արտահայտություն է չանելու մի բան, որը խախտում է կրոնական պարտավորությունը կամ ազնվությունը (տես՝ Ծննդ. 18:25; Հեսու 22:29; 24:16; 1 Թագ. 2:30; 20:2,9; 22:15; 2 Թագ. 20:20; 23:17):

❖ «խաղաղությամբ ձեր հոր մոտ նացեք» այս հրամանը (BDB 748, KB 828, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ըստ երևույթին տրվել է իրավիճակը սրելու համար: Եղբայրները չէին կարող վերադառնալ տուն առանց Բենիամինի, քանի որ վախենում էին, որ Հակոբը կմեռներ (տես՝ հհ. 30-31): Կարծես թե խաղաղության հույս չկար:

#### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 44:18-34

<sup>18</sup>Այն ժամանակ Հուդան մոտեցավ նրան և ասաց. «Ո՛հ, տե՛ր իմ, թող քո ծառան մի խոսք ասի իր տիրոջ ականջներին, և ծառայիդ վրա քո բարկությունը չբորբոքվի, որովհետև դու Փարավոնի պես ես: <sup>19</sup>Իմ տերն իր ծառաներին հարցրեց՝ ասելով՝ հայր կամ եղբայր ունե՞ք: <sup>20</sup>Եվ մենք ասացինք մեր տիրոջը, թե մի ձեր հայր ունենք և նրա ծերության պատիկ որդին, և նրա եղբայրը մեռած է, և միայն նա է մնացել իր մորից, և նրա հայրը սիրում է նրան: <sup>21</sup>Եվ քո ծառաներին ասացիր. «Ինձ մո՛տ իջեցրեք նրան, որ աչքովս տեսնեմ նրան»: <sup>22</sup>Եվ մենք տիրոջս ասացինք. «Տղան չի կարող թողնել իր հորը, որովհետև, եթե իր հորը թողնելու լինի նա կմեռնի»: <sup>23</sup>Եվ դու քո ծառաներին ասացիր. «Եթե ձեր կրտսեր եղբայրը ձեզ հետ չիջնի, իմ երեսն այլևս չեք տեսնի»: <sup>24</sup>Եվ եղավ, երբ գնացինք՝ քո ծառա իմ հոր մոտ, իմ տիրոջ խոսքերը պատմեցինք նրան, <sup>25</sup>և մեր հայրն ասաց. «Գնացե՛ք նորից մեզ համար մի քիչ ուտելիք գնեցե՛ք»: <sup>26</sup>Եվ մենք ասացինք. «Չենք կարող գնալ. եթե մեր կրտսեր եղբայրը մեզ հետ լինի, այն ժամանակ կիջնենք, որովհետև չենք կարող տեսնել այն մարդու երեսը, եթե մեր կրտսեր եղբայրը մեզ հետ չլինի»: <sup>27</sup>Եվ քո ծառա իմ հայրն ասաց. «Դուք գիտեք, որ իմ կինը երկու որդի ունեցավ ինձ համար: <sup>28</sup>Եվ մեկն ինձնից հեռացավ, և ես ասացի՝ «Անպայման գազաններն են գիշատել», և մինչև հիմա չեմ տեսել նրան: <sup>29</sup>Եվ եթե սրան էլ առնեք իմ առջևից և նրան մի փորձանք պատահի, իմ սպիտակ մազերը վշտով գերեզման կիջեցնեք»: <sup>30</sup>Եվ ահա, երբ ես՝ քո ծառան, իմ հոր մոտ գնամ և տղան մեզ հետ չլինի, ըստ որում նրա կյանքն այդ տղայի կյանքի հետ է կապված, <sup>31</sup>անպայման, հենց որ տեսնի, որ տղան չկա, կմեռնի. և ծառաներդ քո ծառային՝ մեր հորը, սպիտակ մազերը ցավով գերեզման կիջեցնենք: <sup>32</sup>Որովհետև ծառադ այդ տղայի համար երաշխավոր է եղել՝ ասելով. «Եթե ես նրան քեզ մոտ չբերեմ, իմ հոր առաջ հավիտյան հանցավոր լինեմ»: <sup>33</sup>Ուստի աղաչո՛ւմ եմ, թող ծառադ այդ տղայի փոխարեն ստրուկ մնա, և տղան իր

**եղբայրների հետ գնա: <sup>34</sup>Քանի որ՝ ինչպե՞ս գնամ իմ հոր մոտ, եթե տղան ինձ հետ չիմի. անկասկած կտեսնեմ այն չարիքը, որ պատահելու է իմ հորը:**

**44:18-34** Հուդան վերապատմում է այն ինչ տեղի է ունեցել սնունդ գնելու համար եղբայրների Եգիպտոս կատարած երկու ճամփորդությունների քննարկումների ժամանակ և Բենիամինին երկրորդ ճամփորդությունը վերցնելու պատճառով տան լարվածության մասին:

**44:18 «իմ տիրոջ ականջներին»** Սա «կարող եմ ձեր հետ պարզ խոսել» իմաստով դարձվածք է (տես՝ 20:8; 23:10,13,16; 50:4; 2 Օր. 5:1; 31:11,28,30):

❖ **«մի՛ բարկացիր» /հայերենում՝ բարկությունը չբորբոքվի/** Հուդան խնդրում է (BDB 354, KB 351, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ), որ Հովսեփն ավելի չբարկանա (տես՝ 30:2; 39:19), այլ թույլ տա, որ բացատրի իրենց ընտանեկան իրավիճակը այս կրտսեր եղբոր հետ կապված:

**44:28 «անպայման գիշատել են»** Սա շեշտադրված քերականական կազմություն է (միևնույն արմատի ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և ԿԱՏԱՐՅԱԼ ԲԱՅԸ, BDB 382, 380), որը կարելի է նաև գտնել 37:33-ում:

**44:30 «Եվ ահա, երբ ես՝ քո ծառան, իմ հոր մոտ գնամ և տղան մեզ հետ չիմի, ըստ որում նրա կյանքն այդ տղայի կյանքի հետ է կապված»** Սա ցույց է տալիս, որ Հակոբն ինչքան շատ էր սիրում Բենիամինին: Կյանքով իրար հետ կապված լինելու այս գաղափարը (BDB 905, KB 1153, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) նաև նկարագրում է Դավթի և Հովնաթանի միջև առկա մեծ սերն ու ընկերությունը 1 Թագ. 18:1-ում: Հակոբը ընկել էր ընկճախտի մեջ Հովսեփին կորցնելուց ի վեր և իր մխիթարությունը գտնում էր միայն իր սիրելի մահացած կնոջ՝ Ռաքելի մյուս որդու մեջ:

**44:33** Այս համարն ունի երկու ՀԱՅՑԱԿԱՆ: Հուդան աղերսում է Բենիամինի ազատությունը և վերադարձը:

1. թող ծառադ (այսինքն՝ Հուդան) մնա (բառացի՝ «նստի»), BDB 442, KB 444, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
2. թող տղան իր եղբայրների հետ գնա, BDB 748, KB 828, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեգրույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Հովսեփն այսքան դաժան վարվեց իր եղբայրների հետ:
2. Ինչո՞ւ է այս գլխում Հովսեփն այսքան տարօրինակ բաներ անում իր եղբայրների հետ կապված:
3. Ինչո՞ւ էր Հովսեփն ուզում, որ Բենիամինը զար Եգիպտոս:
4. Թվարկե՛ք մարդու կյանքը վերահսկող կանխամտածված մեղքի աստվածաբանական կիրարկումները:

**ԾՆՆԴՈՑ 45**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հովսեփը քաղցրությամբ է վարվում իր եղբայրների հետ	Հովսեփը իրեն հայտնում է իր եղբայրներին	Հովսեփը իրեն ճանաչեցնում է իր եղբայրներին	Հովսեփը պատմում է իր եղբայրներին, թե ով է ինքը	Հովսեփը հայտնում է իրեն
45:1-3	45:1-15	45:1-3	45:1-8	45:1-2 45:3-8
45:4-15		45:4-15	45:9-11 45:12-13 45:14-15	45:9-13 45:14-15
45:16-20	45:16-20	45:16-20	45:16-20	Փարավոնի հրավերը 45:16-20 Վերադարձ Քանան
45:21-23	45:21-24	45:21-24	45:21-24	45:21-24
45:24-28	45:25-28	45:25-28	45:25-26 45:27-28	45:25-28

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգր մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԻՄՆԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ա. 42-44 գլուխներում Հովսեփը փորձում է իր եղբայրներին տեսնելու արդյոք նրանց շահագործող վերաբերմունքը հատկապես Ռաբբիի որդիների հանդեպ փոխվել է, թե ոչ: Սա հիմնականում երևում է Բենիամինի հանդեպ նրանց ցուցաբերած վերաբերմունքից:

Բ. Գլուխ 45 և 46 գործ ունի Հովսեփի գերազանցության բարձրացման բաժնի ավարտի հետ և յոթ սովի տարիների ընթացքում Հակոբի և ուխտի ընտանիքի ֆիզիկական փրկության Աստծո ծրագրի հետ:

Գ. Գլուխ 45, հհ. 5-9 զարմանալիորեն տեղին է, երբ տեսնում ենք, որ Աստծո ձեռքը որքան ակնհայտ կերպով է գործում Հովսեփի կյանքում, մինչ նրա իրավիճակները կարծես թե ողբերգական են: Եթե միայն կարողանայինք սովորել այս ճշմարտությունը մեր կյանքի համար, ինչպիսի մեծ փոփոխություն կբերեր մեր կյանքերին: Աստծո զավակներին ոչ մի պատահական բան չի պատահում (տես՝ Հաննա Ուիթհոլ Սմիթի, *Քրիստոնյայի երջանիկ կյանքի գաղտնիքը* /Hannah Whithall Smith's *The Christian's Secret of a Happy Life*):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 45:1-3

**<sup>1</sup>Եվ Հովսեփը չկարողացավ իրեն զսպել իր մոտ կանգնածների առաջ ու գոռաց. «Դուրս հանեցե՛ք բոլոր այդ մարդկանց իմ մոտից». և երբ մոտն ուրիշ մարդիկ չկային, Հովսեփն իրեն ճանաչեցրեց իր եղբայրներին: <sup>2</sup>Եվ նա բարձրաձայն լաց եղավ, և եգիպտացիներն ու Փարավոնի տունը լսեցին: <sup>3</sup>Եվ Հովսեփն ասաց իր եղբայրներին. «Ես Հովսեփն եմ. իմ հայրը դեռ ո՞ղջ է»: Եվ եղբայրները չէին կարողանում պատասխան տալ նրան, որովհետև նրա ներկայությունից ապշել-մնացել էին:**

**45:1 «Եվ Հովսեփը չկարողացավ իրեն զսպել»** Սա մի ԲԱՅ է (BDB 407, KB 410, ժխտական *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ և *Hithpael* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, BDB 67, KB 80), որը կիրառվում է Հովսեփի համար 43:31-ում, որտեղ նա կարողացավ զսպել իր զգացմունքները: Այստեղ նա այնքան բարձր է լաց լինում (հ. 2), որ բոլորը լսում են նրա լացի ձայնը:

❖ **«Դուրս հանեցե՛ք բոլոր այս մարդկանց իմ մոտից»** Այս հրամանը (BDB 422, KB 425, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), հավանաբար եգիպտերենով, ուղղված էր Հովսեփի բոլոր ծառաներին (նույնիսկ իր հատուկ տնտեսին): Նրան թողեցին միայն իր տասնմեկ եղբայրների հետ:

❖ **«Հովսեփն իրեն ճանաչեցրեց իր եղբայրներին»** Ինչպիսի՛ անկրկնելի պահ էր սա: Հովսեփին խեղդում էին զգացմունքները և նրանք էլ դարձան էմոցիոնալ (տես՝ հ. 3):

**45:2 «Եվ նա բարձրաձայն լաց եղավ, և եգիպտացիներն ու Փարավոնի տունը լսեցին»** Հովսեփը բոլոր իր եգիպտացի ծառաներին սենյակից դուրս հրավիրեց: Նա այդպես վարվեց (1) որպեսզի իր եղբայրներին չամաչեցնի, կամ էլ (2) որպեսզի իր անձնական հարցերի հետ կապված եգիպտացիների առջև իր զգացմունքները ի ցույց չդնի: Սակայն բարձրաձայն ողբալու՝ լացելու արևելյան այսպիսի գործողությունը մոտակայքում Հովսեփին օգնության դեպքում սպասող ծառաներին լսելի եղավ: Ըստ երևույթին Հովսեփը Եգիպտոսում շատ սիրված մարդ էր և նրա ծառաները անձնապես մտահոգված էին նրա համար, կամ էլ մտահոգված էին նրա մասնագիտական և պետական կառավարման դիրքը չկորցնելու հարցում, հետևաբար նրանք տեղեկացրեցին Փարավոնին այն ինչ լսել էին:

**45:3 «Ես Հովսեփն եմ»** Սա բացականչություն է, առանց ԲԱՅԻ: Ենթադրելի է, որ նա երբայերեն խոսեց, բայց քանի որ նաև ենթադրելի է, որ նրա եղբայրները չէին խոսում եգիպտերեն և որ ոչ մի թարգմանիչ ներկա չէր այնտեղ, հնարավոր է Հովսեփը նրանց ապշեցրեց իրենց իսկ հարազատ լեզվով խոսելով և այն էլ այսպիսի դրամատիկ հայտարարությամբ (տես՝ հ. 4):

❖ **«Իմ հայրը դեռ ո՞ղջ է»** Որոշ մեկնաբաններ կասկածի տակ են առնում այս համարի հավաստիությունը, քանի որ 43:27-ում Հովսեփը տվել էր այս նույն հարցը: Սակայն հնարավոր է որ այս տերմինը (BDB 311, տես՝ 1 Թագ. 25:6) կարող է նշանակել ավելին, քան ֆիզիկական կյանքը: Ըստ

երևույթին նա հարցնում էր իր հոր առողջության մասին, որն իմանում ենք հետագա համարներից, որ նույնը չէր եղել Հովսեփի ենթադրյալ մահից ի վեր (տես՝ հ. 27):

❖ «ապշել-մնացել էին» Սա խիստ ԲԱՅ Է (BDB 96, KB 111, *Niphal* ՎԱՂԱԿԱՍԱՐ, տես՝ Դատ. 20:41, 1 Թագ. 28:21; 2 Թագ. 4:1; Հոր 21:6; 23:15; Սաղմ. 6:3; 30:8; 48:6; 83:17; 90:7; 104:29; Ես. 13:8; 21:3; Եզեկ. 7:27):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 45:4-15**

**4**Եվ Հովսեփն ասաց իր եղբայրներին. «Ի՛նձ մոտեցեք, խնդրո՛ւմ եմ»: Նրանք էլ մոտ եկան, և ասաց. «Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որին ծախեցիք Եգիպտոս: <sup>5</sup>Եվ հիմա մի՛ վշտացեք ու մի՛ նեղարտեք, որ ինձ ծախեցիք այստեղ, որովհետև Աստված կյանք փրկելու համար է ինձ այստեղ ուղարկել ձեզնից առաջ: <sup>6</sup>Որովհետև երկրիս վրա սովի երկրորդ տարին է հիմա, և դեռ հինգ տարի կա, որ վարուցանք ու հունձք չի լինելու: <sup>7</sup>Եվ Աստված ինձ ձեզնից առաջ ուղարկեց, որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահի և ձեր կյանքերը փրկի մեծ ազատագրմամբ: <sup>8</sup>Եվ արդ, ոչ թե դուք ուղարկեցիք ինձ այստեղ, այլ՝ Աստված, և ինձ՝ Փարավոնին հայր և նրա ամբողջ տանը տեր և ամբողջ Եգիպտոս երկրին կառավարիչ կարգեց: <sup>9</sup>Շտապ իմ հոր մոտ գնացե՛ք և ասացե՛ք նրան. «Այսպես է ասում քո որդի Հովսեփը. «Աստված ինձ ամբողջ Եգիպտոսին տեր դարձրեց. ինձ մո՛տ իջիր. մի՛ հապաղիր: <sup>10</sup>Եվ Գեսեմի երկրում կրնակվես, որ ինձնից մոտ կլինի՝ դու և քո որդիները և քո որդիների որդիները և հոտերդ ու նախիրներդ և քո ամբողջ ունեցվածքը: <sup>11</sup>Եվ ես կկերակրեմ քեզ այնտեղ, որովհետև դեռ հինգ տարի սով է լինելու. գուցե դու չքավորության մատնվես՝ դու և քո տունը և քո ամբողջ ունեցածը»: <sup>12</sup>Եվ ահա ձեր աչքերը և իմ եղբայր Բենիամինի աչքերը տեսնում են, որ իմ բերանն է ձեզ հետ խոսողը: <sup>13</sup>Եվ Եգիպտոսում իմ ունեցած ամբողջ փառքը և ձեր բոլոր տեսածները պատմեցե՛ք իմ հորը և շտապ իմ հորը այստե՛ղ բերե՛ք»: <sup>14</sup>Եվ իր եղբայր Բենիամինի պարանոցովն ընկավ և լաց եղավ. Բենիամինն էլ նրա պարանոցի վրա լացեց: <sup>15</sup>Եվ իր բոլոր եղբայրներին համբուրեց և նրանց վրա լաց եղավ. և սրանից հետո եղբայրները նրա հետ խոսեցին:

**45:5** «Եվ հիմա մի՛ վշտացեք ու մի՛ նեղարտեք, որ ինձ ծախեցիք այստեղ» «Վշտացեք» տերմինը (BDB 780, KB 864, *Niphal* ԱՆԿԱՍԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) *Niphal* արմատով կիրառվում է 1 Թագ. 20:3,34; 2 Թագ. 19:2 և Նեեմ. 8:10,11-ում: Հիմնական նշանակությունն է «վերք», «ցավ» կամ «վիշտ»:

«Բարկանալ կամ նեղարտել» տերմինը «վառվել» (BDB 354, KB 351, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ, տես՝ Ծննդ. 31:36; 39:19; Ելից 32:11) տերմինն է:

Հովսեփը պատրաստվում էր կատարել ամենաաբանելի հավատքի հռչակումը, որը կարելի է գտնել Աստվածաշնչում: Այս համարը համարվում է Հովսեփի ամբողջ պատմության աստվածաբանական նպատակը: Չարաշահման և մատնության մեջ նա կարողացավ հավատքով տեսնել Աստծո (*Էլոհիմի*) ձեռքը: 5-9 համարները նույնիսկ կյանքի պայքարների և խնդիրների մեջ Աստծո բարության և ներկայության ամենահզոր հաստատություններն են ձևավորում:

Այս հրաշալի, հզոր տեքստի վերաբերյալ ևս մի մեկնաբանություն: Իմ հարցը միշտ սա է եղել. «Արդյո՞ք Աստված այսպես է վարվում միայն ուխտի մեջ մտած ընտանիքների հետ»: Պարզ է, որ Աստված Աբրահամի ընտանիքի հետ անում է ամեն ինչ, որ անհրաժեշտ է համարում (տես՝ Հռոմեացիների 9-11), բայց ինչ է լինում սովորական հավատացյալների հետ: Արդյո՞ք Նրա սերը հավիտենության համար է (այսինքն՝ փրկությունը), թե ժամանակի և հավիտենության: Արդյո՞ք Նա այդ նույն կերպոս մեր հետ է նաև: Այս աշխարհը մի չար, ապստամբ վայր է (տես՝ *Աստծո Բարությունը Ունենեմի գրքում /The Goodness of God by Wenham/*): Հավատացյալները չարչարվում են. հավատացյալները հալածվում են. հավատացյալները սպանվում են: Համաձայն ՆԿ-ի կարծես թե ճիշտ է, որ Աստված մեզ հետ է և մեր կողմից է անգամ այնպիսի իրավիճակներում, որոնք անբացատրելի են (տես՝ *Քրիստոնյայի երջանիկ կյանքի գաղտնիքները*, Հաննա Ուիթհոլ Սմիթ */The Christian's Secrets of a Happy Life, by Hannah Whithall Smith /*): Հավատք և Սուրբ Գրքի հայտնություն է պահանջվում, որպեսզի հասկանանք, որ հավատացյալները թանկ են Աստծո համար: Կյանքը առեղծված է, սակայն Աստծո աներևույթ (դեռևս անհայտ) ձեռքը մեզ հետ է ամեն ակնթարթ: Մեր խաղաղությունը պետք է Նրա մեջ հանգչի, Նրա Խոսքի, Նրա Որդու և ոչ թե իրավիճակների (տես՝ 1 Կորնթ. 10:13; 13:8-13): Մենք Աբրահամի ընտանիքն ենք (տես՝ Հռոմ. 2:28-29):

**45:6 «Որովհետև երկրիս վրա սովի երկրորդ տարին է հիմա, և դեռ հինգ տարի կա, որ վարուցանք ու հունձք չի լինելու»** Սա վերադառնում է Փարավոնի երազի միջոցով ստացած հայտնությանը, որ յոթ տարվա խիստ սովի տարիներ էին լինելու:

**45:7** Հ. 7-ում Հովսեփի հայտարարությունը վերաբերում է պահպանվող մնացորդին (BDB 984), որը առնչվում է իր գործի հետ և ոչ թե հետագայում աստվածաբանական «մնացորդ» տերմինի կիրառությանը, որը վերաբերում է երբայեցի ժողովրդի հավատացյալ, հավատարիմ մնացած մասին:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՆԱՑՈՐԴԸ (BDB 984, KB 1375) ԵՐԵՔ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
SPECIAL TOPIC: THE REMNANT (BDB 984, KB 1375) THREE SENSES**

ՀԿ-ի «հավատարիմ մնացորդ» ասված հասկացությունը Մարգարեների ընթացիկ, պարբերաբար կրկնվող թեման է (հիմնականում ութերորդ դարի մարգարեների և Երեմիայի): Այն կիրառվում է երեք նշանակությամբ՝

1. այն մարդիկ, ովքեր փրկվեցին Գերությունից (օր՝ Եզրաս 9:8,14-15; Նեեմ. 1:2-3; Ես. 10:20-23; 17:4-6; 37:31-32; 46:3; Երեմ. 23:3; 31:7-8; 42:15,19; 44:12,14,28; Միքիա 2:12; 5:7-8; 7:18; Անգ. 1:12-14; 2:2; Չաք. 8:6,11-12)
2. այն մարդիկ, ովքեր հավատարիմ մնացին ՅԱՀՎԵԻՆ (օր՝ Ես. 4:1-5; 11:11,16; 28:5; Հովել 2:32; Ամովս 5:14-15)
3. այն մարդիկ, որոնք մաս են կազմում Էսկատոլոգիական նորոգության և վերստեղծման (օր՝ Ամովս 9:11-15, Չաք. 8:6):

Մարկ. 4:1-20 և Մատթ. 13:1-23-ում Սերմնացանի առակը, որը մեջբերում է Ես. 6:9-10, լավ օրինակ է այն բանի, թե ինչպես է ՆԿ-ը հասկանում այս տերմինը (նաև նկատի ունեցեք Հռոմ. 9:6 որպես ակնարկ Պողոսի օրոք Իսրայելին):

ՆԿ-ի «մնացորդը» բաղկացած է հրեաներից, ովքեր վատահեցին Քրիստոսին (տես՝ Հռոմ. 9:27-29) և հեթանոսներից, որվքեր վատահեցին Քրիստոսին (տես՝ Հռոմ. 9:24-26): Երկու խմբերի մասին էլ խոսվում է Հռոմ. 9:30-35; 11:11-24,25-32-ում: Հավատացյալ Իսրայելը պարզապես ռասայական (այսինքն՝ Հռոմ. 9:6; 2:18-19) չէ, այլ Հիսուսի մեջ Աստծո նոր, կատարյալ հայտնությանը հավատարիմ կերպով հետևող հավատացյալների խումբն է: Այս ասելով կարծես թե հերքում ենք ՀԿ-ի տեսությունը (այսինքն՝ Երեմ. 31:7-9; Միքիա 5:7-8) Իսրայել ազգի որպես մնացորդ լինելու վերաբերյալ: Իսնդրում են նայելք Հատուկ Թեմա. Ինչո՞ւ են ՀԿ-յան Ուխտի Խոստումները թվում այդքան տարբերվ ՆԿ-յան Ուխտի Խոստումներից: Ավետարանը փոխում է ամեն ինչ:

❖  
**NASB, NKJV, NJB**  
**NRSV**  
**TEV**  
**LXX**  
**JPSOA**

«մեծ ազատագրմամբ»  
 «շատ փրկվածներով»  
 «ժառանգների փրկությամբ»  
 «մեծ մնացորդով (սերնդով)»  
 «արտասովոր ազատագրմամբ»

Սա բառացիորեն «ազատվել, փրկվել» (BDB 812, տես՝ Երեմ. 25:35) տերմինը և «մեծ» (BDB 152) ԱԾԱԿԱՆՆ Է: Հովսեփի օգնությունը իր ընտանիքին՝ Եգիպտոսում մինչև առաջնորդի դիրքի բարձրանալու միջոցով, նկարագրվում է որպես ՅԱՀՎԵԻ կողմից ծրագրված մեծ ազատագրում (տես՝ հհ. 5,8; 50:20):

**45:8 «Աստված ուղարկեց ինձ»** Նախասահմանության վարդապետության հետ կապված աստվածաբանական խնդիրը այն չէ, որ Աստված գիտի և ազդում մարդու գործողությունների վրա (ինչպես նաև ֆիզիկական դեպքերի վրա), այլ թե ինչ աստիճանով է Նա պատասխանատու մարդու մեղքի համար: Աստվածաբանները (Սթրոնգ *Համակարգված Աստվածաբանություն*, 2-րդ խմբ, էջ՝ 423-425, Էրիկսոն, *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2-րդ խմբ, էջ՝ 424-426) առաջարկել են մի քանի տեսություններ, որոնք ցույց են տալիս Աստծո ներգրավվածությունը, բայց ոչ դիտավորությունը, մեղավոր գործերի մեջ (տես՝ Հակ. 1:14; 1 Հովի. 2:16):

1. Նա կարող է կանխարգելել գործողությունը (տես՝ Ծննդ. 20:16)
2. Նա կարող է թույլ տալ գործողությունը (տես՝ Մաղմ. 81:12-13; Հռոմ. 1:24,26,28)
3. Նա կարող է ուղղորդել գործողությունը (տես՝ Ծննդ. 37:21-22; 45:5,7,8; 50:20)

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱԼՎԻՆԻԶՄ) ՀԱԿԱԴՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԿԱՄՔԻՆ (ԱՐՄԻՆԻԱՆԻԶՄ)**  
**SPECIAL TOPIC: PREDESTINATION (CALVINISM) VERSUS HUMAN WILL (ARMINIANISM)**

Տիտոս 2:11-ը բալանսի է բերում ընտրության վերաբերյալ մյուս ՆԿ-յան հատվածները: Ես կարծում եմ, որ աստվածաբանորեն օգտակար կլինեն, որ ձեզ ներկայացնեմ Հռոմեացիների 8:29 և գլուխ 9-ից, ինչպես նաև Եփեսացիների 1-ից մեկնաբանության իմ գրառումները:

I. Հռոմեացի:ս 8:29 – Պողոսը երկու անգամ օգտագործում է «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ»)՝ այստեղ և 11:2-ում: 11:2-ում այն վերաբերում է Իսրայելի հանդեպ ունեցած Աստծո սիրուն, որն Աստված ուներ ժամանակներից առաջ: Հիշեք, որ «ճանաչել, իմանալ» տերմինը երբայերեւում կապված էր մտերմիկ, անձնական հարաբերությանը և ոչ թե ինչ-որ մեկի մասին փաստեր ունենալուն (տես՝ Ծննդ. 4:1; Երեմ. 1:5): Այստեղ պատկերված են իրար կապակցված մի շարք իրադարձություններ (տես՝ Հռոմ. 8:29-30): Այս տերմինը կապված է նախասահմանության հետ: Ինչևէ, պետք է հստակ սահմանել, որ Աստծո կանխագիտությունը ընտրության հիմք չէ, եթե դա այդպես լիներ, ապա ընտրությունը կհիմնվեր ապագայում մեղավոր մարդկության արձագանքի վրա, որը կնշանակեր, որ ընտրությունը կախված է մարդու գործերից ու վարքից: Այս տերմինը նաև հանդիպում է Գործք 26:5; 1 Պետ. 1:2,20 և 2 Պետ. 3:17:

Ա. «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ») Երկու տերմիններ էլ «կանխագիտություն» (*proginōskō*) կամ «նախասահմանություն» (*proorizō*) բարդ բառեր են, կազմված «սկզբից, մինչև, նախօրոք» (*pro*) ՆԱԽԴԻՐԻՑ և ուստի պետք է թարգմանվի «իմանալ նախապես», «նախապես սահման դնել» կամ «նախապես չափել»: Նոր Կտակարանում նախասահմանության մասին որոշ չափով հստակ հատվածներն են Հռոմ. 8:28-30; Եփ. 1:3-14 և Հռոմ. 9: Այս տեքստերը միանշանակ ընդգծում են Աստծո գերիշխանությունը: Նա է ամեն բանի լիիրավ հսկողը՝ ներառյալ մարդու պատմությունը: Գոյություն ունի աստվածային փրկության ծրագիր, որը իրականանում է ժամանակի մեջ: Ինչևէ, այս ծրագիրը պատահական կամ ընտրողական չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո գերիշխանության և կանխագիտության վրա, այլ Նրա անփոփոխ կերպարի, որի մեջ մտնում է սերը, ողորմությունը և անարժան շնորհքը: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . 3ԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

Մենք պետք է զգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) անհատապաշտությունից կամ մեր ավետարանչական նախանձավորության համար, չգունավորելու համար այս հիանալի ճշմարտությունը: Մենք նաև պետք է հսկենք այն, որ չհայտնվենք պատմական աստվածաբանական կոնֆլիկտի մեջ Օգոստինոսի և Պելագիոսի կամ կալվինիզմի և արմինիականության միջև:

Բ. «նախասահմանված» (*proorizō*, «սահմաններ դնել նախապես») Նախասահմանությունը Աստծո սերը, շնորհքն ու ողորմությունը սահմանափակող վարդապետություն չէ, և ոչ էլ դրանք դուրս է մղում ավետարանից: Դրա նպատակն է հաստատել հավատացյալներին՝ կատարելագործելով նրանց աշխարհայացքը: Աստված բոլոր մարդկանց համար է (տես՝ Հովհ. 1:12; 3:16; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14): Աստված է հսկում ամեն բան: Ո՞վ կամ ի՞նչ կարող է մեզ բաժանել Նրանից (տես՝ Հռոմ. 8:31-39): Աստված նայում է ամբողջ պատմությանը որպես ներկայում կատարվող գործողություն: Մարդիկ սահմանափակ են ժամանակի մեջ: Մեր հեռանկարային և մտային կարողությունները սահմանափակ են: Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև չկա հակասություն: Մա ուխտի յուրահատկությունն է, այսպես է կառուցված այն: Եվ սա մեկ ուրիշ օրինակ է այն բանի, որ աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է ներքին դիպեկտիկական հակասությամբ: Աստվածաշնչյան վարդապետությունները սովորաբար ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Նրանք հաճախ թվում են պարադոքսային: Ճշմարտությունը հավասարակշռություն է թվացյալ հակառակ զույգերի միջև: Մենք չպետք է դիտավորյալ հեռացնենք այդ լարվածությունը, ընտրելով երկուսից միայն մեկը: Մենք նաև չպետք է առանձնացնենք որևէ աստվածաշնչյան ճշմարտություն դնելով իր վանդակի մեջ:



Կարևոր է նաև ավելացնել, որ ընտրության նպատակը ոչ միայն երկինքն է մեր մահից հետո, այլ քրիստոսանմանությունը հիմա ներկայում (տես՝ Հռոմ. 8: 29-30; 2 Կորնթ. 3:18; Գաղ. 4:19; Եփես. 1: 4; 2:10; 4:13; 1 Թեսաղ. 3:13; 4: 3; 5:23; 2 Թեսաղ. 2:13; Տիտոս 2:14; 1 Պետ. 1:15): Մենք ընտրվել ենք «ուրբ և անարատ» լինելու համար: Աստված գերադասում է մեզ փոխել այնպես, որ ուրիշները կարողանան տեսնել այդ փոփոխությունները և Քրիստոսի հավատքով արձագանքեն Աստծո կանչին: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ ուխտի համաձայն պատասխանատվություն: Սա է ամբողջ ուղերձի գլխավոր ճշմարտությունը: Սա է Քրիստոնեության նպատակը: Սրբությունը Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար: Աստծո ընտրությունը քրիստոսանման լինելն է (տես՝ Եփես. 1:4), և ոչ թե հատուկ դիրքը՝ պաշտոնը: Աստծո պատկերը, որը տրվել է մարդուն արարչագործության ժամանակ, (տես՝ Ծննդ. 1:26; 5:1,3; 9:6) պետք է վերականգնվի:

Գ. «կերպարանակից անել Իր Որդու պատկերին» - Աստծո գերագույն նպատակը մեղքի պատճառով կորած պատկերի վերականգնումն է: Հավատացյալները պետք է քրիստոսանման լինեն (տես Եփ. 1:4):

## II. Հռոմեացիս 9

Ա. Հռոմեացիս 9-ը ՆԿ-ի ամենահզոր հատվածներից մեկն է Աստծո ինքնիշխանության մասին (ուրիշ էակ, Եփես. 1:3-14) մինչ գլուխ 10-ը հստակ և պարբերաբար ընդգծում է մարդու ազատ կամքը (տես՝ «յուրաքանչյուրը» Հռոմ. 9: 4, «ով որ» 9:11,13, «բոլորը» 9: 12 /երկու անգամ/): Պողոսը երբեք չի փորձում լուծել այս աստվածաբանական լարվածությունը: Նրանք երկուսն էլ ճշմարտություն են: Աստվածաշնչյան վարդապետություններից շատերը ներկայացված են պարադոքսալ կամ բարբառային գույգերով: Աստվածաբանության համակարգերից շատերը տրամաբանական կես-ճշմարտություններ են: Ինչպես Օգոստինոսիանիզմը և Կալվինիզմը, նմանապես կիսա-պեդագոգիզմն ու արմինիանիզմը ունեն ճշմարտության տարրեր և սխալներ: Վարդապետությունների միջև գոյություն ունեցող աստվածաշնչյան լարվածությունը գերադասելի է դիտարկել որպես ել հիմնավորված տեքստին դոգմատիկ, ռացիոնալ, աստվածաբանական համակարգ, որը Աստվածաշունչը դնում է որոշակի մեկնողական սահմանների մեջ:

Բ. Այս նույն ճշմարտությունը հաստատված է Հռոմ. 8:29-30 և Եփ.1:4,11: Այս գլուխը ՆԿ-ում Աստծո ինքնիշխանության ամենաուժեղ արտահայտությունն է: Այն որ Աստված պատասխանատու է Իր ամբողջ արարչագործության և դրա փրկագնման համար՝ անվիճելի է: Այս մեծ ճշմարտությունը երբեք չպետք է փոքրացնել և ոչ էլ անտեսել: Սակայն, Աստծո ուխտի ընտրությունը որպես Իր պատկերով ստեղծված մարդ արարածի հետ հաղորդակցության միջոց պետք է պահպանվի հավասարակշռության մեջ: Անշուշտ ճիշտ է, որ որոշ Հին Կտակարանյան ուխտեր, ինչպես Ծննդոց 15, անպայմանական են և ընդհանրապես կախված չեն մարդու արձագանքից, բայց մյուս ուխտերը պայմանական են՝ կախված մարդու արձագանքից (օրինակ՝ Եդեմի պարտեզը, Նոյը, Մովսեսը, Դավիթը): Աստված Իր ստեղծագործության համար ունի փրկության ծրագիր և ոչ մի մարդ չի կարող ազդել այս ծրագրի վրա: Աստծո կամքով որոշ անհատներ մասնակցում են Իր ծրագրերի իրականացմանը: Մասնակցության այս հնարավորության մեջ Աստծո ինքնիշխանության (Հռոմեացիների 9) և մարդու ազատ կամքի միջև (Հռոմեացիների 10) գոյություն ունի աստվածաբանական լարվածություն:

Ճիշտ չէ ընտրել աստվածաշնչյան մի կարևոր թեմա և անտեսել մյուսը: Վարդապետությունների միջև էլ գոյություն ունի լարվածություն, քանի որ արևելյան ժողովուրդները ճշմարտությունը ներկայացնում են բարբառային կամ լարվածությամբ ներթմված գույգերով: Վարդապետությունները պետք է կապ պահպանեն մեկը մյուսի հետ: Ճշմարտությունը հանդիսանում է բազմաթիվ ճշմարտությունների մի խճանկար:

## III. Եփեսացիների 1

Ա. Ընտրությունը հրաշալի վարդապետություն է, սակայն դա չի խրախուսում աչառությունը, այլ կոչ է փրկության միջոց, գործիք հանդիսանալու ուրիշների համար: ՀԿ-ում այս տերմինը հիմնականում կիրառվում է ծառայության համար. ՆԿ-ում այն հիմնականում կիրառվում է փրկության համար, որի արդյունքը լինում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի լուծում Աստծո ինքնիշխանության և Մարդու ազատ կամքի միջև առկա թվացյալ հակասությունը, այլ հաստատում է այս երկուսն էլ: Աստվածաշնչյան այդ լարվածության լավ օրինակ է Հռոմեացիների 9-ը՝ Աստծո ինքնիշխան ընտրության վերաբերյալ և

Հռոմեացիների 10-ը՝ մարդու կողմից տրված անհրաժեշտ պատասխանի վերաբերյալ (տես՝ 10:11,13):

Աստվածաշնչյան այս լարվածության կորիզը կարելի է գտնել 1:4-ում: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն է և Նրա մեջ բոլորն էլ պտտենցիալ ընտրյալներ են (Կառլ Բարթ): Հիսուսը Աստծո «այո»-ն է ընկած մարդկության կարիքի համար (Կառլ Բարթ): Եփեսացիների 1:4-ը նույնպես օգնում է հստակեցնել այս խնդիրը, պնդելով որ նախասահմանության նպատակը միայն երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Հանախ մեզ գրավում են ավետարանի օգուտները՝ շահը և անտեսում ենք պատասխանատվությունները: Աստծո կոչը (ընտրությունը) թե՛ ժամանակի և թե՛ հավիտենության համար է:

Վարդապետությունները կապ ունեն ոչ միայն մեկ իրար հետ կապ չունեցող ճշմարտության, այլ շատ այլ ճշմարտությունների հետ: Լավագույն նմանաբանություն կարող է հանդիսանալ համաստեղությունը հակադրված մեկ աստղի հետ: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան, ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների (Աստված որպես գերբնական հակադրված ճանաչելի Աստծուն. փրկության վստահությունը հակադրված հարատևության հետ. Հիսուսը որպես Աստծուն հավասար Մեկը հակադրված Հիսուսին, որ ենթարկվում է Հորը. Քրիստոնեական ազատությունը հակադրված Քրիստոնեական պատասխանատվությանը ուխտի գուզրնկերոջ հանդեպ, և այլն) բարբառային (պարադոքսալ) գույզերի պատճառով առաջացած լարվածությունը:

Բ. «Նա ընտրեց մեզ» Եփես. 1:4-ում ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ե, որը շեշտադրում է ենթական: Սա կենտրոնանում է ժամանակներից առաջ Հոր ընտրության վրա: Աստծո ընտրությունը պետք է չէ հասականալ իսլամական դետերմինիզմի իմաստով, և ոչ էլ ուլտրա-Կալվինիզմի «ոմանք ուրիշների դեմ» իմաստով: Աստված խոստացել է փրկել մեղավոր մարդկությանը (տես՝ Ծննդ. 3:15): Աստված կանչեց և ընտրեց Աբրահամին, որի միջոցով ընտրեց ամբողջ մարդկությանը (տես՝ Ծննդ. 12:3; Ելից 19:5-6): Աստված Ինքը ընտրեց բոլոր այն անձանց, ովքեր կհավատան Քրիստոսին: Աստված միշտ նախաձեռնությունն էր վրա է վերցնում փրկության հարցում (տես՝ Հովի. 6:44,65): Այս տեքստը և Հռոմեացիների 9 Օգոստինոսի և Կալվին համար աստվածաշնչյան հիմք են հանդիսանում նախասահմանության վարդապետության համար:

Աստված ընտրեց հավատացյալներին ոչ միայն փրկության համար (արդարացման), այլ նաև սրբացնելու (տես՝ Կողոսացիների 1:10-12): Սա հնարավոր է առնչվում է (1) Քրիստոսի մեջ մեր դիրքի հետ (տես՝ 2 Կորնթ. 5:21) կամ էլ (2) Իր զավակների մեջ Աստված Իր բնավորությունը վերարտադրելու ցանկությունն ունենալու մեջ (տես՝ Եփես. 2:10, Հռոմ. 8:28-29; Գաղ. 4:19): Աստծո կամքն Իր զավակների համար թե՛ սպասվող երկինքն է և թե՛ հիմա Քրիստոսակերպությունը:

«Իր մեջ» խոսքը հանդիսանում է բանալի արտահայտություն Եփես. 1:4-ում: Հոր օրհնությունները, շնորհքը և փրկությունը հոսում են Քրիստոսի միջոցով (տես՝ Հովի. 14:6): Նկատելի այս քերականական ձևի կրկնությունը Եփես. 1:3-ում՝ «Քրիստոսում», 1:4-ում՝ «Նրանում», 1:7-ում՝ «Նրանում» /երկու անգամ/: Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկության համար (Կառլ Բարթ): Հիսուսը ընտրյալ մարդ է և բոլոր մարդիկ Նրա մեջ պտտենցիալ ընտրյալներ են: Հայր Աստծո բոլոր օրհնությունները հոսում են Նրա միջոցով:

«Նախքան աշխարհի հիմնումը» արտահայտությունը նաև կիրառվում է Մատթ. 25:34, Հովի. 17:24, 1 Պետ. 1:19-20 և Հայտն. 13:8-ում: Այն ցույց է տալիս Երրորդության Աստծո փրկագործությունը նախքան Ծննդ. 1:1: Մարդիկ սահմանափակ են ժամանակի իրենց զգացողության մեջ. մեր համար ամեն ինչ անցյալ է, ներկա և ապագա, բայց Աստծո համար այդպես չէ:

Նախասահմանության նպատակը սրբությունն է, ոչ թե արտոնյալ լինելը: Աստծո կանչը միայն Ադամի մի քանի երեխաների համար չէ, այլ ուղղված է ամբողջ մարդկությանը: Այն կոչ է լինել այնպիսին, ինչպիսին Աստված նպատակ ուներ մարդկության համար, որ լինեին՝ Իր պես (տես՝ 1 Թեսաղ. 5:23, 2 Թեսաղ. 2:13), Իր պատկերով (տես՝ Ծննդ. 1:26-27): Սուրբ կյանքի փոխարեն նախասահմանությունը աստվածաբանական օրինաչափության վերածելը ողբերգություն է: Հանախ մեր աստվածաբանություններն ավելի բարձրաձայն են խոսում, քան աստվածաշնչյան տեքստերը:

«Անարատ» (*amōmos*) կամ «արատներից զերծ» տերմինը կիրառվում է՝

1. Հիսուսի համար (տես՝ Եբր. 9:14; 1 Պետ. 1:19)

2. Չաքարիայի և Եղիսաբեթի համար (տես՝ Դուկ . 1:6)

3. Պողոսի համար (տես՝ Փիլ . 3:6)

4. բոլոր իրական քրիստոնյաների համար (տես՝ Փիլ . 2:15; 1 Թեսաղ . 3:13; 5:23)

Յուրաքանչյուր Քրիստոնյայի համար Աստծո անփոփոխ կամքը հետագայում երկինքը չէ, այլ հիմա Քրիստոսի նման լինելը (տես՝ Հռոմ . 8:29-30; Գաղ . 4:19; 1 Պետ . 1:2): Հավատացյալները պետք է արտացոլեն Աստծո բնավորությունը ամբողջ կորած՝ մեղավոր աշխարհի համար՝ ավետարանչության նպատակով:

Քերականորեն Տիտոս 2:2-ում «սիրող» արտահայտությունը կարող է կապ ունենալ կա՛մ Տիտոս 2:4-ի, կա՛մ էլ 5-ի հետ: ամեն դեպքում, երբ այս արտահայտությունը կիրառվում է Եփեսացիների մեջ այլ հատվածներում, այն միշտ նկատի ունի մարդու սերն Աստծո հանդեպ (տես՝ Եփես . 3:17; 4:2,15,16):

Գ. Եփես . 1:5-ում՝ «Նա մեզ նախասահմանեց» արտահայտությունը ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այս հունարեն տերմինը բաղադրյալ կազմություն ունի՝ «նախքան» և «նշել» բառերից: Այն վերաբերում է Աստծո կանխորոշված փրկագործության ծրագրին (տես՝ Դուկ . 22:22, Գործք 2:23, 4:28, 17:31, Հռոմ . 8:29-30): Նախասահմանությունը մի քանի ճշմարտություններից մեկն է, որը կապ ունի մարդկության փրկության հետ: Այն իրար հետ կապված մի շարք աստվածաբանական ճշմարտությունների մաս է կազմում: Այն երբեք էլ նախատեսված չի եղել առանձնացվելու: Աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է լարվածությամբ լի, պարադոքսալ գույգերի շարքերի տեսքով: Հարանվանությունների առաջացումը պատճառ հանդիսացավ շեշտադրելու այս դիալեկտիկ ճշմարտություններից միայն մեկը (նախասահմանությունը հակադրված մարդու ազատ կամքին, հավատացյալի երաշխիքը հակադրված սրբերի հարատևությանը, առաջին մեղքը հակադրված գիտակցված մեղքին, անմեղությունը հակադրված քիչ մեղանչելուն, անմիջապես հռչակված արդարացումը հակադրված հետզհետե ձեռք բերված սրբագործմանը, հավատքը հակադրված գործերի հետ, Քրիստոնեական ազատությունը հակադրված Քրիստոնեական պատասխանատվությանը, գերբնականը հակադրված իրողությանը):

Աստծո ընտրությունը հիմնված չէ մարդու գործերի կանխագիտության վրա, այլ Իր գթառատության (տես՝ Եփես . 1:7,9,11): Նա ցանկանում է, որ բոլորը (ոչ թե միայն յուրահատուկ մարդիկ, ինչպես օրինակ Գնոստիկներն են կամ մերօրյա ուլտրա-կալվինիստները) փրկվեն (տես՝ Եզեկ . 18:21-23,32, Հովի . 3:16-17, 1 Տիմ . 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ . 3:9; 1 Հովի . 2:2; 4:14): Աստծո շնորհքը (Աստծո բնավորությունը) այս հատվածի աստվածաբանական բանալին է (տես՝ Եփես . 1:6ա, 7գ, 9բ), ինչպես որ Աստծո ողորմությունը նախասահմանության վերաբերյալ այլ հատվածների բանալին է, Հռոմեացիների 9-11:

Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո շնորհքն ու ողորմությունն է (տես՝ Եսայի 53:6 և մի քանի այլ ՀԿ-յան տեքստեր, որոնք մեջբերված են Հռոմ . 3:9-18-ում): Այս առաջին աստվածաբանական գլուխները մեկնաբանելիս շատ կարևոր է հասկանալ, որ Պողոսը շեշտադրում է այն բաները, որոնք ընդհանրապես կապ չունեն մարդկային գործերի հետ՝ նախասահմանությունը (Եփեսացիների 1), շնորհքը (Եփեսացիների 2), և փրկագործության Աստծո հավիտենական ծրագիրը (ամեղծված՝ խորհուրդ, Եփես . 2:11-3:13): Սա սուտ վարդապետների կողմից մարդու արժանիքների և հպարտության վրա դրած շեշտադրումները հակակշռելու համար էր:

❖ «և ինձ՝ Փարավոնին հայր և նրա ամբողջ տանը տեր և ամբողջ Եգիպտոս երկրին կառավարիչ կարգեց» Սա կարծես թե Եգիպտոսում Հովսեփի աշխատանքային գործունեության եռակի նկարագրությունն է:

1. նա Փարավոնի հետ յուրահատուկ փոխհարաբերության մեջ էր: Սա դարձել է հնագիտորեն փաստագրված տիտղոս, որը ետ է գնում մինչև Ք . Ա . 3000թ: Այն կարծես թե նկատի ունի Մեծն Վեզիրի պաշտոնը:
2. «նրա ամբողջ տանը տեր» արտահայտությունը կարծես թե ակնարկում է Փարավոնի անձնական ունեցվածքը (տես՝ Ծննդ . 41:40; 47:20-26):
3. «ամբողջ Եգիպտոս երկրին կառավարիչ» կարծես թե արտահայտում է կառավարական գործերում ունեցած իր դիրքը (տես՝ Ծննդ . 41:41,48-49,55-56; 42:6-7):

Ռոլանդ դեՎոքսը *Հինավուրց Իսրայել*, հատոր՝ 1, էջ՝ 49 /Roland deVaux, *Ancient Israel*, vol.1, p. 49/, ցույց է տալիս, թե ինչպես է «հայր» տիտղոսը սկսել գործածվել որպես Փարավոնի գլխավոր խորհրդականներից մեկի համար: Հայրերը երեխաների առաջատար ուսուցիչներն էին իրենց որոշակի

հասունության տարիքին հասնելուց հետո, իսկ նախքան այդ մայրերն էին ուսուցանում: Հոգևոր աշխարհում քահանաներն են վերցնում «հայր» տերմինը, որպես իրենց նկարագրություն (Եբրայեցի իմաստասիրության ուսուցիչները Առակացում նույնպես վերցրել են այս տիտղոսը, ինչպես Դատավորաց 17:10; 18:19-ի քահանաները):

**45:9** Հովսեփը դիմում է իր եղբայրներին մի քանի հրամաններով՝

1. շտապեք, BDB 554, KB 553, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ հ. 13
2. գնացեք, BDB 748, KB 828, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. իջիր, BDB 432, KB 434, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. մի հապաղիր, BDB 763, KB 840, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով

**45:10 «Գեսեմի երկրում կրնակվես»** Հաջորդող համարներից հայտնի չէ, թե արդյոք սա նկատի է ունեցել համաձայն Հովսեփի հայտարարության (տես՝ 46:31), թե պարզապես տրամաբանորեն պետք է լիներ այն տեղը, որտեղ ապրում էին հովիվները: Գեսեմի երկիրը (BDB 177) գտնվում է Նեղոսի վերին արևելյան կողմում, Քանանի երկրին մոտ: Հետագայում այն կոչվեց Ռամզեսի երկիր (տես՝ Ծննդ. 47:6,11): Դա Եգիպտոսի ոչխարաբուծության տարածքն էր համարվում (տես՝ Ծննդ. 46:32-34):

❖ **«որ ինձնից մոտ կլինի»** Այս համարը հաճախ օգտագործվում է որպես ապացույց այն բանի, որ Փարավոնի, որին Հովսեփը ծառայել է, եղել է «Հովիվ Թագավորների» մի մասնիկը կամ Հիքսոս, որոնք նվաճել են Եգիպտոսը նորաստեղծ աղեղների և ձիաքարշ կառքերի միջոցով: Նրանք իշխեցին Եգիպտոսի վրա Ք.Ա. 1720-1580թթ. Մենք գիտենք, որ նրանք բնիկ սեմական ժողովուրդ են եղել, հետևաբար շատ ավելի դյուրին է եղել մեկ այլ սեմական ծագում ունեցող անձի՝ ինչպիսին Հովսեփն էր, բարձրանալ նրանց իշխանության օրոք: Ամբողջ եգիպտական պատմության ընթացքում սեմական ժողովուրդները կարևոր պաշտոններ են գրավել կառավարության մեջ: Հիքսոսների կայսրության մայրաքաղաքը տեղակայված է եղել Տայանիսում կամ Չոանում (տես՝ Սաղմ. 78:12,43): Սա շատ մոտ է գտնվում Գեսեմի երկրին: Ինչևէ, հետագա բնիկ եգիպտացի Փարավոնները իրենց մայրաքաղաքը տեղավորել են 400 մղոն դեպի հարավ՝ Թեբես քաղաքը: Եգիպտոսում Հովսեփի կառավարման տարիները դեռևս անհայտ են և սա չենք կարող գործածել որպես պատասխան հանդիսացող ապացույց:

**45:12 «Եվ ահա ձեր աչքերը և իմ եղբայր Բենիամինի աչքերը տեսնում են, որ իմ բերանն է ձեզ հետ խոսողը»** Այս արտահայտություններից յուրաքանչյուրի ստույգ նշանակությունը ինչ-որ տեղ անհայտ է (հավանաբար նա չէր օգտվում թարգմանչի ծառայությունից), սակայն հեշտ է պարզել ընդհանուր շեշտադրումը: Բենիամինը յուրահատուկ կերպով կապված էր Հովսեփի հետ, քանի որ նրանք երկուսն էլ Ռաբելի որդիներն էին: «Իմ բերանը» արտահայտությունը կարծես թե կիրառվում է որպես դարձվածք իշխանության համար (տես՝ հ. 21 և Ռաշիի մեկնաբանությունը):

❖ **«Բենիամին»** Ռաբելը սկզբում անվանել էր նրան «իմ ցավերի որդին», քանի որ նրան ծննդաբերելիս մահանում է (տես՝ Ծննդ. 35:18): Ինչևէ, Հակոբը փոխում է նրա անունը «իմ աջակողմյան որդին»: Ռաբելի հանդեպ Հակոբի տաժաժ հատուկ սիրո շնորհիվ, Հովսեփն ու Բենիամինը նրա համար շատ յուրահատուկ էին:

**45:13 «Իմ ունեցած ամբողջ փառքը»** Սա եբրայերեն *kabod* (BDB 458) բառն է: Դրա հիմնական նշանակությունն է (BDB 458 II) «ծանր» (տես՝ 41:31, NASB, «խիստ». Ելից 4:10, «լեզվից ծանր»):

Այն սովորաբար կիրառվում էր արժեքավորի համար: Ուշադրություն դարձրեք հետևյալ կիրառություններին՝

1. հարստություն, ունեցվածք, Ծննդ. 31:1; Եսայի 10:3; 61:6
2. փառք, հաջողություն, Ծննդ. 45:13
3. գեղեցկություն, Եսայի 35:2
4. խիստ սով, Ծննդ. 12:10; 41:13; 43:1; 47:4,13
5. պատիվ, Թվոց 24:11
6. մեծ, սաստիկ, Ծննդ. 50:10,11(այսինքն՝ ողբը)

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (ՀԿ)  
SPECIAL TOPIC: GLORY (OT)**

**I. Հիմնական նշանակությունը՝**

Գոյություն ունեն քսանից ավելի եբրայերեն բառեր, որոնք թարգմանվում են «փառք» (*doxa*) LXX-ի կողմից, սակայն ամենանշանակալի եբրայերեն տերմինը *kabod* է (BDB 458-459, KB, 455-458): Դրա հիմնական նշանակություն է «ծանր»: Այն առևտրի հետ կապ ունեցող տերմին էր և կիրառվում էր առևտրային գործարքների ժամանակ (այսինքն՝ կշեռքները): Այն սկսեց ունենալ ավելի ընդարձակ ստուգաբանություն, որտեղ ծանր հասկացությունը կատարելագործվեց դառնալով կշիռ, մարդկային արժեքներ, վայրեր և առարկաներ:

**II. ՅԱՀՎԵՅԻ համար կիրառությունը՝**

Ա. Այն դարձավ ՅԱՀՎԵՅԻ անձնական ներկայությունը նկարագրելու միջոց: Այն համադրում է Նրա զորությունը, մեծափառությունը (այսինքն՝ գերբնականը) ֆիզիկական իրականության մեջ Իր անհատականության և ներկայության հետ (այսինքն՝ Իր էությանը):

Բ. Մատնանշում է ՅԱՀՎԵՅԻՆ արարչագործության մեջ, տես՝ Սաղմ. 19:1; 29:3,9; 104:31

Գ. Կիրառվում էր Իր ուխտի ժողովրդի ձևավորման հետ կապված աստվածաբանության համար: Նա է «Իսրայելի փառքը», տես՝ 1 Թագ. 15:29:

1. Եգիպտոսից ելքը /Ելիցը/, տես՝ Թվոց 14:22 (կանխաաված Ծննդ. 15:12-21-ում)

2. փառքի հատուկ ամպի մեջ, որն առաջնորդում և ուղեկցում էր ժողովրդին, տես՝ Ելից 16:7,10

3. Մինա լեռան վրա Օրենքի տրվելը, տես՝ Ելից 24:16,17

4. Իր մատակարարումն ու դատաստանը անապատում դեգերելու տարիներին՝  
ա. տասներկու լրտեսների հետ կապված առաջին ապստամբությունը, տես՝ Թվոց 14:9-10

բ. Մովսեսի բարեխոսությունը նրանց համար, տես՝ Թվոց 14:20-21

գ. Կորխի ապստամբությունը, տես՝ Թվոց 16:19

դ. ջրի ճգնաժամը, տես՝ Թվոց 26:6

Դ. ՅԱՀՎԵՅԻՆ տեսնելու Մովսեսի խնդրանքը, տես՝ Ելից 33:18-23

Ե. Այն կիրառվում է հենց ՅԱՀՎԵՅԻ համար (այսինքն՝ Իր էության)

1. 1 Մնաց. 29:11

2. Սաղմ. 106:20; Երեմ. 2:11; Ովս. 4:7; Հռոմ. 1:23

3. Եսայի 42:8; 45:7; 48:11; 58:8; 60:1-2,19 (Հայտն. 21:23; 22:5)

4. Չաք. 2:5,10

Զ. Այն կիրառվում է ՅԱՀՎԵՅԻ ներկայության համար՝

1. Խորանում, տես՝ Ելից 16:7,10; 29:43; 40:34-34; Ղևտ. 9:6,23

2. Տաճարում, տես՝ 3 Թագ. 8:11; 2 Մնաց. 5:14; 7:1-3; Ես. 6:3; Անգ. 2:3,9

3. Ուխտի Տապանակի վրա, տես՝ 1 Թագ. 4:22; Սաղմ. 63:2; 78:61

Է. Այն կիրառվում է ՅԱՀՎԵՅԻ թագավորության համար, տես՝ 1 Մնաց. 29:12-13; Սաղմ. 24:7-10; 45:3

Ը. Այն կիրառվում է ՅԱՀՎԵՅԻ բարոյական էության համար (այսինքն՝ արդարությունը), տես՝ Սաղմ. 29:3; 97:6; Ես. 42:8; 48:11; 58:8; Ամր. 2:14

**III. Մարդկանց և ազգերի համար կիրառությունը՝**

Ա. մարդիկ

1. համագոր է «շնչին» (այսինքն՝ *nepshesh*), տես՝ Ծննդ. 49:6; Սաղմ. 16:9; 108:1

2. հարստություն, տես՝ Ծննդ. 31:1; Սաղմ. 49:16,17; Ես. 10:3; 61:6; 66:11-12

3. պատիվ, տես՝ Ծննդ. 45:13; Սաղմ. 8:6; Անգ. 2:7

4. հեղինակություն, տես՝ Հոր 19:9; 29:20; Սաղմ. 4:2; 49:17

5. մեծափառություն, տես՝ 1 Մնաց. 29:12,28; 2 Մնաց. 17:5; 18:13; 32:27

Բ. ազգերը

1. Եգիպտոս,

2. Եփրեմ, տես՝ Ովս. 9:11

3. Սամարիա, տես՝ Ովս. 10:5

Գ. թագավորները

1. Ասվերոսը, տես՝ Եսթեր 1:4

2. Իսրայելը, տես՝ Սաղմ. 21:6

3. Անտիոքոս IV, տես՝ Դան. 11:39

Դ. ազգային բանակները՝

1. Ասորեստան, տես՝ Ես. 8:7

2. Իսրայել, տես՝ Ես. 17:4

3. Կեդար, տես՝ Ես. 21:16

IV. Կիրառվում է վերջին օրերի (Եսկատոլոգիա) նկարագրություններում՝

Ա. ՅԱՀՎԵՆ վերադառնալու է Իր նոր տաճարը, տես՝ Եզեկ. 43:2,4,5; 44:4

Բ. ՅԱՀՎԵՆ աշխարհը դեպի Իրեն է քաշելու, տես՝ Ես. 40:5; 59:19; 60:1-3; 66:18-19

Գ. ՅԱՀՎԵՆ իջեցնելու է «նոր» Երուսաղեմը, տես՝ Ես. 66:10; Չաք. 12:7

V. Արարչագործության նպատակը ՅԱՀՎԵՒՆ փառավորելն է

Ա. ստեղծված է Իր փառքի համար, տես՝ Ես. 43:7

Բ. Նրան արժանի փառք, տես՝ 1 Մնաց. 16:29

Գ. երգել, փառաբանել Նրա փառքը, տես՝ Սաղմ. 66:2; 96:8; 115:1

Դ. ամեն ինչ, որ անում ենք, անում ենք Նրա փառքի համար, տես՝ 1 Մնաց. 10:31; 2 Կորնթ. 4:15; Եփես. 5:22; 6:5; 1 Պետ. 2:12

Ե. Westminster Shorter Catechism-ի առաջին հայտարարությունը:

**45:14 «Եվ իր եղբայր Բենիամինի պարանոցովն ընկավ և լաց եղավ. Բենիամինն էլ նրա պարանոցի վրա լացեց»** Այս համարում կարելի է տեսնել հրական մեկնության հավելումներ, նույնիսկ այնպիսի օգտակար մեկնաբանի կողմից ինչպիսին Ռաշին է: Ասում են, որ Հովսեփը լաց եղավ Սելովամում խորանի կործանման համար, որը Հովսեփի ապագա հողատարածքում էր գտնվում (տես՝ Հեսու): Բենիամինը լաց եղավ, տաճարի կործանման, Երուսաղեմի համար, որը իրականում գտնվում է Բենիամինի հողատարածքում: Սա ցույց է տալիս, թե ինչպես է հրեական էզդեգետիկան ամբողջությամբ հանում համարի պատմական միջավայրը և ակնարկ կատարում Իսրայելի կյանքում տեղի ունեցած որևէ մեծ իրադարձության:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 45:16-20**

**<sup>16</sup>Եվ այս լուրը Փարավոնի տանը լավեց, թե՛ Հովսեփի եղբայրները եկել են. և Փարավոնին ու նրա ծառաներին հաճելի եղավ: <sup>17</sup>Եվ Փարավոնն ասաց Հովսեփին. «Քո եղբայրներին ասա. «Այսպե՛ս արեք. Բեռնեցե՛ք ձեր անասունները և Քանանի երկիրը գնացեք: <sup>18</sup>Եվ ձեր հորն ու ձեր ընտանիքները վերցրե՛ք և իմ մո՛տ եկեք և Եգիպտոս երկրի լավ տեղը ձեզ կտամ, և երկրի պարարտությունից կօգտվեք»: <sup>19</sup> «Արդ, քեզ հրաման եղավ. «Սա արե՛ք ձեր երեխաների համար և ձեր կանանց համար Եգիպտոս երկրից կառքե՛ր առեք և ձեր հորը բերե՛ք և եկե՛ք: <sup>20</sup>Եվ ձեր աչքը թող ձեր ապրանքի վրա չմնա, քանի որ ամբողջ Եգիպտոս երկրի բարիքը ձերն է»:**

**45:16** Եղբայրները ուշքի եկան (1) այն շոկից, որ վերապրեցին Հովսեփին իրեն հայտնելուց հետո, (2) Աստծո վախից՝ Հովսեփի հանդեպ իրենց կատարածի համար, և (3) հենց Հովսեփի հանդեպ ունեցած վախից:

**45:17-20** Սա Փարավոնի ուղերձն է Հովսեփին իր ընտանիքի համար:

1. ասա քո եղբայրներին, հ. 17, BDB 55, KB 65, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. այսպես արեք, հ. 17, BDB 793 I, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

3. բեռնեցեք ձեր անասունները, հ. 17, BDB 381, KB 378, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՀԿ-ում այս ԲԱՅԸ միայն այստեղ կարելի է գտնել)

4. Քանանի երկիրը գնացեք, հ. 17, BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

5. եկեք (NASB-ում չկա), հ. 17, BDB 97, KB 112, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

6. ձեր հորն ու ձեր ընտանիքները վերցրեք, հ. 18, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

7. ինձ մոտ եկեք, հ. 18, BDB 97, KB 112, *Չալ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ*
8. Եգիպտոս երկրի լավ տեղը ձեզ կտամ, հ. 18, BDB 678, KB 733, *Չալ ԸՂՁԱԿԱՆ*
9. երկրի պարարտությունից կօգտվեք, հ. 18, BDB 37, KB 46, *Չալ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ*
10. սա արեք, հ. 19, BDB 793 I, KB 889, *Չալ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ*
11. կառքեր առեք, հ. 19, #6-ի միևնույն ԲԱՅԸ
12. ձեր հորը բերեք (բառացի՝ կրեք), հ. 19, BDB 669, KB 724, *Չալ ՎԱՂԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով*
13. եկեք, հ. 19, #5 և #7-ի նույն ԲԱՅԵՐԸ, սակայն *Չալ ՎԱՂԱԿԱՏԱՐ՝ կիրառված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով*
14. ձեր աչքը թող ձեր ապրանքի վրա չմնա (բառացի՝ «թող ձեր աչքը չափստա ձեր անոթների համար»), հ. 20, BDB 299, KB 298, *Չալ ՀԱՅՅԱԿԱՆ*. այս նույն դարձվածքը կիրառվում է 2 Օր. 7:16; 13:8; 19:13,31; 25:12-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 45:21-23**

**<sup>21</sup>Եվ Իսրայելի որդիներն այդպես արեցին. և Հովսեփը նրանց կառքեր տվեց, ըստ Փարավոնի պատվերի, և ճանապարհի պաշար տվեց նրանց: <sup>22</sup>Նրանցից ամեն մեկին նոր հագուստներ տվեց, իսկ Բենիամինին երեք հարյուր կտոր արծաթ և հինգ ձեռք հագուստ տվեց: <sup>23</sup>Եվ իր հոր համար այսպիսի բաներ ուղարկեց. տասը էջ՝ Եգիպտոսի բարիքներով բեռնված, և տասը էգ էջ ցորենով և հացով և ուտելիքներով բեռնված՝ իր հոր ճամփորդության համար:**

**45:21 «կառքեր»** Սա եգիպտական փոխառնված բառ է, որը նշանակում է «կենդանու միջոցով քաշվող երկանիվ կառք» (BDB 722, տես՝ 1 Թագ. 6:7) և չի վերաբերում Եգիպտոսի ռազմական կառքերին (BDB 939, տես՝ 41:43): Կառքերը մեծ տարածում էին գտել Եգիպտոսում, քանի որ տարածքը շատ հարթ էր: Դրանք հազվադեպ էին կամ էլ հավանաբար անհայտ Պաղեստինի երկրում, քանի որ վերջինս քարքարոտ և լեռնային երկիր էր: Պատճառներից մեկը, որ Պաղեստինը ի գորու եղավ վերահսկել առափնյա տարածքները, դա նրանց կողմից օգտագործվող երկաթե կառքերն էին: Ինչևէ, Իսրայելի վաղ շրջանի հաղթանակները գրանցվեցին լեռնային տարածաշրջաններում, որտեղ կառքեր չէին օգտագործվում: Այս կառքերի առկայությունը շատ անսովոր տեսարան էր Քանանի երկրում:

**45:22 «նոր հագուստներ տվեց»** Հավանաբար սա վերաբերում է զարդանախշերով հանդերձների (այսինքն՝ Ելից 3:22; 12:35), որոնք հին աշխարհում համարվում էին հարստության աղբյուրներից մեկը: Հնարավոր է, որ դրանցով Հովսեփն ուզում էր իր եղբայրներին հարմարեցնել այդ նոր մշակութային միջավայրի հետ (Եգիպտոսի էլիտար դասակարգը, տես՝ 41:14): Սակայն, հնարավոր է, որ նկատի ունի նոր հագուստներ և ոչ թե հատուկ թանկարժեք հանդերձներ («Հուր 3:3»):

❖ **«իսկ Բենիամինին երեք հարյուր կտոր արծաթ և հինգ ձեռք հագուստ տվեց»** Հովսեփը, բոլորից էլ քաջատեղյակ պետք է լիներ, թե ինչ հետևանքներ է ունենում աչառության խնդիրը, մինչդեռ մշակութային միջավայրն այնպիսին էր, որ նա իր արյունակից եղբոր հանդեպ չափից ավելին ուշադրություն է ցուցաբերում (տես՝ 43:34):

**45:23** Հիշե՛ք, թե ինչպես Հակոբը 43:11-ում նվերներ ուղարկեց Եգիպտոսի «մարդուն», իսկ հիմա Հովսեփը վերադարձնում է մշակույթի պահանջը՝

1. տասը էջ՝ Եգիպտոսի բարիքներով բեռնված (BDB 375 ԿԱՌՈՒՑՎԱԾ BDB 595)
2. տասը էգ էջ՝ ցորենով և հացով և ուտելիքով բեռնված

Այո՛, ի՞նչ պետք է մտածեր Հակոբը, երբ տեսներ այս ամենը ճանապարհին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 45:24-28**

**<sup>24</sup>Եվ իր եղբայրներին ուղարկեց. և գնացին. և ասաց նրանց. «Ճանապարհին չեղվե՛ք»: <sup>25</sup>Եվ նրանք Եգիպտոսից ելան և դեպի Քանանի երկիրը՝ իրենց հայր Հակոբի մոտ գնացին: <sup>26</sup>Եվ նրան պատմեցին՝ ասելով. «Հովսեփը ողջ է, և նա Եգիպտոսի ամբողջ երկրի կառավարիչն է»: Եվ Հակոբի սիրտը նվաղեց, որովհետև չհավատաց նրանց: <sup>27</sup>Եվ նրան պատմեցին Հովսեփի բոլոր խոսքերը, որ իրենց ասել էր, և երբ տեսավ Հովսեփի ուղարկած կառքերը, որ իրեն տանելու էին, այն ժամանակ իրենց հայր Հակոբի հոգին կենդանացավ: <sup>28</sup>Եվ Իսրայելն ասաց. «Բավական է, որ իմ որդին՝ Հովսեփը դեռ կենդանի է. գնամ և մեռնելուցս առաջ տեսնեմ նրան»:**

**45:24 «և ասաց նրանց. «Ճանապարհին չկովե՛ք»** ԲԱՅԸ (BDB 919, KB 1182, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով. Ծննդոցում կիրառվել է միայն այստեղ և միայն երկու անգամ էլ ամբողջ Հնգամատյանում), կարող է մեկնաբանվել որպես՝

1. Ծննդոց 37-ում (ըստ Ռաշիի) Հովսեփի հանդեպ իրենց հանցանքը գնահատելով
2. վախ (տես՝ Ելից 15:14; 2 Օր. 2:25), որ հնարավոր է ընտանիքով վերադառնան և Հովսեփը վրեժ լուծի իրենցից
3. դեռ այն մտքերով, որ Բենիամինը սկզբում ավելի շատ կերակուր ստացավ (43:34) և հիմա էլ ավելի շատ հագուստներ և արծաթե կտորներ (45:22)

Հովսեփը նրբանկատ ձևով հիշեցնում էր նրանց, որ Աստված Ինքն է ուղղորդել այդ իրավիճակներով, ոչ թե որ նրանց գործերը մեղսալի չէին (տես՝ 42:21,28; 44:16), այլ որ Աստված ուներ ավելի մեծ նպատակ՝ ծրագիր (տես՝ հհ. 5,7,8; 50:20; Գործք 7:9): Աստված նույնիսկ չարին է օգտագործում Իր նպատակների համար (տես՝ Գործք 2:23):

**45:26 «և նա նվաղեց»** Այս բառը բնագրում նշանակում է «ցրտից թմրել» (BDB 806, KB 916, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 77:2; Ամբ. 1:4): Ակնհայտ է, որ այս եղբայրները պետք է խոստովանեին իրենց հորը, թե ինչ էին արել շատ տարիներ առաջ, չնայած որ սա հատուկ չի նշվում տեքստում: Հետաքրքիր է նշել, որ Հովսեփի երազներն ի վերջո իրականացան: ՅԱՀՎԵՆ գիտի և վերահսկում է պատմությունը: Կանխատեսող երազները և մարգարեությունները հզոր վկայություններ են Աստվածաշնչի և Աստծո բնավորության յուրահատկության:

❖ **«որովհետև չհավատաց նրանց»** ԲԱՅԸ (BDB 52, KB 63) *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ է: Հակոբը նաև չէր հավատացել նրանց Հովսեփը մահվան յուրն ասելիս (տես՝ 37:31-35): Հակոբի որդիները նրան հաճախ էին ստում և նա զգում էր դա: Տե՛ս Հատուկ Թեմա 15:6-ում:

**45:27 «իրենց հայր Հակոբի հոգին կենդանացավ»** Սա կարծես թե ակնարկում է, քանի որ Հովսեփը ենթադրվում էր մահացած, Հակոբը ընկճված էր և այլևս այն նախկին մարդը չէր: Երբեմն սիրելի զավակի մահը կարող է ջախջախել ծնողներին գրեթե այն աստիճան, որ այլևս հնարավոր չէ վերականգնվել:

**45:28** Հետաքրքիր է, որ հ. 27-ում Նահապետը անվանվում է «Հակոբ», որը խոսում է նրա հին կյանքի մասին, մինչդեռ հ. 28-ում նա անվանվում է իր նոր անունով՝ «Իսրայել»: Հավանաբար պատճառը (1) իր նորոգված հավատքի վերաբերմունքն է Աստծուն և Աստծո խոստացած ուխտին, որը կապում էր Հովսեփի հետ կամ (2) քանի որ Հակոբը պատրաստվում էր մի որոշում կայացնել, որը մեծ ազդեցություն էր ունենալու էր մի ամբողջ ուխտի ժողովրդի վրա:

«Իսրայել» անունը միշտ դժվար է եղել թարգմանել: Որոշ տեսություններ, հիմնված Ծննդ. 32:28-29-ի վրա այսպիսին են՝

1. «*Էլը* պահպանի»
2. «*Էլը* պահի»
3. «*Էլի* հետ իշխել»
4. «Աստծո իշխան»

Տես Հատուկ Թեմա 32:28-ում: Չեմ կարծում, որ տարբեր անունները նկատի ունեն տարբեր աղբյուրներ (այսինքն՝ J.E.D.P): Ինչ էլ որ լինի այս բառի ստուգաբանությունը, այն դարձել է Աստծո ժողովրդին տրված հատուկ անունը: Ք. Ա. 922թ-ին այն վերաբերում էր միայն հյուսիսային տաս ցեղերին: Գերությունից վերադառնալուց հետո՝ Ք. Ա. 538թ-ին այն դարձյալ դարձավ ամբողջ Աստծո ժողովրդի անունը:

Հակոբը պատասխանում է չորս կերպ՝

1. բավական է՝ առանց ԲԱՅԻ (BDB 912 I)
2. իմ որդին՝ Հովսեփը դեռ կենդանի է՝ առանց ԲԱՅԻ
3. ես կզնամ, BDB 229, KB 246, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
4. տեսնեմ նրան, BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով



**ԾՆՆԴՈՑ 46**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբը գնում է Եգիպտոս	Հակոբի ճամփորդությունը դեպի Եգիպտոս	Հակոբի գաղթը Եգիպտոս	Հակոբն ու իր ընտանիքը գնում են Եգիպտոս	Հակոբը հեռանում է Եգիպտոս
46:1-4	46:1-7	46:1-4	46:1-2ա	46:1-5
46:5-7		46:5-7	46:2բ-7	46:6-7
Մարդիկ, ովքեր եկան Եգիպտոս				Հակոբի ընտանիքը
46:8-27	46:8-15	46:8-27	46:8-15	46:8ա
				46:8բ-15
	46:16-18		46:16-18	46:16-18
	46:19-22		46:19-22	46:19-22
	46:23-25		46:23-25	46:23-25
	46:26-27		46:26-27	46:26-27
	Հակոբը բնակվում է Գեսեմում (46:28-47:12)	Հակոբն ու իր որդիները բնակվում են Եգիպտոսում (46:28-47:12)	Հակոբն ու իր ընտանիքը Եգիպտոսում (46:28-47:12)	Հավեսին ընդունում է նրանց
46:28-34	46:28-34	46:28-34	46:28-30	46:28-30
			46:31-34	46:31-34

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հակոբը ՅԱՀՎԵԻՑ հաստատություն է խնդրում, որպեսզի տեղափոխվի Եգիպտոս Իր կամքի պես: Սա հավանաբար այն պատճառով, որ՝

1. նա հիշեց ընտանեկան Ծննդ. 15:13-16-ում Աբրահամին ասված այն ընտանեկան խոսքը, որ հրեաները Եգիպտոսում գերության մեջ են լինելու
2. նա վախենում էր, քանի որ Իսահակին արգելվել էր Եգիպտոս իջնել
3. նա չէր կամենում հեռանալ Խոստացված Երկրից

Բ. NKJV (Nelson, 1982) ծանոթագրությունը թվարկում է այս տեքստի և Թվոց 26, 1 Մնացորդաց 4 և 7 գլուխներում տրված անվանացանկերի տարբերությունները՝

### ԱՅՍՏԵՂ

1. Համուել, հ. 10, Ելից 6:15
2. Օհադ, հ. 10 (ուրիշ ցանկերում չկա)
3. Յաքի, հ. 10
4. Սահառ, հ. 10
5. Փուա, հ. 13, Թվոց 26:33
6. Յոբ/Հոբ, հ. 13
7. Սափոն, հ. 16
8. Եսրոն, հ. 16
9. Արոտի, հ. 16
10. Ոփիմ, հ. 21
11. Հուսիմ, հ. 23
12. Հասիել, հ. 24
13. Սիլեմ, հ. 24

### ԹՎՈՑ, 1 ՄՆԱՑՈՐԴԱՑ

- Նամուել, Թվոց 26:12; 1 Մնաց. 4:24
- Հարիբ, 1 Մնաց. 4:24
- Չարա, 1 Մնաց. 4:24
- Փուա, 1 Մնաց. 7:1
- Հասուբ, Թվոց 26:24; 1 Մնաց. 7:1
- Սափոն, Թվոց 26:15, LXX
- Ազենի, Թվոց 26:16
- Արոդ, Թվոց 26:17
- Ոփիմ, Թվոց 26:39
- Սուհամ, Թվոց 26:42
- Հասիել, 1 Մնաց. 7:13
- Սեղոում, 1 Մնաց. 7:13

Գ. Մի հետաքրքիր ամփոփում է ներկայացված NIDOTTE, հատոր 4, էջ՝ 354-ում, թե ինչպես է ՅԱՀՎԵՆ տարբեր կերպերով հայտնում Իրեն Ծննդոց գրքում՝

1. բառացի, 12:1-3; 13:14-17; 21:12-13; 22:1-2
2. տեսիլքներով, 15:1-6; 46:2-4
3. երազներով, 20:3-7; 28:12-15; 31:10-13,24; 37:5,9
4. երևույթներով, աստվածհայտնությամբ, 12:7; 16:7-14; 17:1; 18:1; 26:2,24; 35:1,9; 48:3
5. Տիրոջ հրեշտակի տեսքով, 16:7-13; 18:2,16,17-33; 21:17-19; 22:11-12,15-18; 31:11,13; 48:15-16

Ինչն է տպավորիչ ինձ համար, որ Աստված փորձում է ամեն հնարավոր կերպերով հաղորդակցվել այս հատուկ ընտրված ենտանիքի հետ, որի միջոցով Նա Իրեն հայտնելու է ամբողջ աշխարհին: Աստված հաղորդակից է լինում: Աստված հայտնում է Իրեն:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 46:1-4

<sup>1</sup>Եվ Իսրայելն իր ամբողջ ունեցվածքով ճանապարհ ընկավ և եկավ Բերսաբեե, և իր հոր՝ Իսահակի Աստծուն զոհեր մատուցեց: <sup>2</sup>Եվ Աստված գիշերային տեսիլքով խոսեց Իսրայելի հետ և ասաց. «Հակոբ, Հակոբ»: Եվ նա ասաց. «Ահա ես»: <sup>3</sup>Եվ Նա ասաց. «Ես եմ Աստվածը՝ քո հոր Աստվածը, մի՛ վախենա Եգիպտոս իջնելուց, որովհետև ես քեզ այնտեղ մեծ ազգ եմ դարձնելու: <sup>4</sup>Ես քեզ հետ Եգիպտոս կիջնեմ, նաև անապայման կհանեմ, և Հովսեփը կդնի ձեռքը քո աչքերի վրա»:

**46:1 «Եվ Իսրայելն իր ամբողջ ունեցվածքով ճանապարհ ընկավ և եկավ Բերսաբեե»** Ըստ երևույթին համաձայն Ծննդ. 37:14-ի, նա այս ամբողջ ընթացքում ապրում էր Քերթոնում և այժմ նա պատրաստվում էր կանգ առնել այս հարավային քաղաքում, որը Քերթոնից՝ հատուկ ջրհորի վայրից, 25 մղոն հեռավորության վրա էր դեպի հարավ: Ծննդոց 21:22-31 և 26:33 երկու տարբեր ստուգաբանություններ են «Բերսաբեե» տերմինի համար (BDB 92): Այս վայրն ունի յուրահատուկ նահապետական ասոցացումներ կապված Աբրահամի (տես՝ Ծննդ. 21:31-33; 22:19) և Իսահակի հետ (տես՝ Ծննդ. 26:24-25; 28:13):

Հակոբն իր հետ վերցրեց ամեն ինչ որ կուտակել էր (տես՝ հհ.5-7): Նա մշտական տեղափոխվեց Եգիպտոս:

❖ **«իր հոր՝ Իսահակի Աստծուն զոհեր մատուցեց»** Հետաքրքիր է, որ զոհերը սովորաբար մատուցվում էին այն բանից հետո, երբ Աստված հայտնվում էր նահապետներին տեսիլքի մեջ, սակայն Հակոբն Աստծուց հաստատություն էր ուզում Եգիպտոս տեղափոխվելու հարցում: Սա հնարավոր է, քանի որ՝

1. նա հիշեց Ծննդոց 15:13-16-ում Աբրահամին ասված այն խոսքը, որ հրեաները Եգիպտոսում գերության մեջ են լինելու
2. նա վախենում էր, քանի որ Իսահակին արգելվել էր գնալ Եգիպտոս
3. նա չէր կամենում հեռանալ հենց Խոստացված Երկրից

«իր հոր՝ Իսահակի Աստվածը» արտահայտությունը ցույց չի տալիս Հակոբի կողմից Աստծո հանդեպ անձնական հավատքի պակասություն, այլ շեշտադրում է հնում, ուխտ կապող Աստծուն, որը Աբրահամին դուրս կանչեց Ուր քաղաքից և նրան սերունդներ պարգևեց Քանանի Խոստացյալ Երկրում:

**46:2 «Եվ Աստված գիշերային տեսիլքով խոսեց Իսրայելի հետ»** Չնայած որ Հովսեփը կարևոր անձ էր Ծննդոցի վերջին գլուխներում, Աստված երբեք անմիջապես տեսիլքով չխոսեց նրա հետ ինչպես Նահապետ Հակոբի հետ: Հետևաբար, ավելի ճիշտ է Ծննդոցի այս վերջին գլուխները բաժանել ավելի մեծ բաժնի, որը առնչվում է Հակոբի կյանքի հետ: Սա Աստծո կողմից նահապետներին տրված վերջին գիշերային տեսիլքն է:

❖ **«Հակոբ, Հակոբ»** Սա հավանության նշան էր (տես՝ 22:11):

❖ **«Ահա ես»** Սա տարածված դարձվածքային պատասխան է Աստծո կանչին (տես՝ 22:1,7,11,18; 27:1,18; 31:11; 37:13; 46:2):

**46:3 «Ես եմ Աստվածը՝ քո հոր Աստվածը»** Սա ուխտի Աստծո անունն է (տես՝ 26:24; 28:13; 43:23): Այն բառացիորեն ասում է՝ «*Էլը՝ քո հոր Էլոհիմը*»: *Էլ* (BDB 42) ՀՄԱ-ում Աստծո համար ընդհանուր օգտագործվող անունն էր, որը բխում է «ուժեղ լինել» արմատից և դրա ՀՈԳՆԱԿԻՆ (*Էլոհիմ*, BDB 43), որը շատ հաճախ է կիրառվում Ծննդոցի առաջին գլուխներում, նկարագրում է Աստծուն որպես Արարիչ: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները, 12:1-ում:

❖ **«մի՛ վախենա Եգիպտոս իջնելուց»** Ոմանք այս վախը (BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) կապում են՝

1. Ծննդոց 15:13-16-ում Աբրահամի տեսիլքի հետ առնչություն ունեցող ընտանեկան սովորույթ
2. Իսահակի Եգիպտոս գնալու արգելքի հետ (26:2)
3. Խոստացյալ Երկիրը թողնելու վախը:

Այս խոսքը բովանդակող մի քանի ուղերձներ կան Աստծուց, 15:1; 21:17; 26:24; 46:3:

❖ **«որովհետև ես քեզ այնտեղ մեծ ազգ եմ դարձնելու»** Սա նոր տեղեկություն է, որը նախկինում Աբրահամին կամ Իսահակին չէր ասվել: Սա ցույց է տալիս 12:2; 17:4,6,20 և 18:18-ում Աբրահամին տրված Աստծո խոստման իրականացումը, որտեղ Նա նկարագրում է Աբրահամի սերունդներին երկնքի աստղերի, ծովի ավազի և երկրի փոշու պես շատ:

Աստծո ներկայությունը Հակոբի ընտանիքի հետ պատճառ է լինելու, որ նրանք արագ բազմանան (տես՝ Ելից 1), ինչպես որ Նրա ներկայությունը Հակոբի հետ Խառանում պատճառ եղավ, որ բժավոր և պուտավոր կենդանիները իրենց քանակով արագ բազմացան: Թվաքանակով աճը Աստծո օրհնության նշաններից էր: Այս արագ աճը հետագայում խնդիր առաջացրեց Եգիպտոսի մյուս կառավարության հետ (այսինքն՝ Սեթի I, Ռամզես II):

**46:4 «Ես քեզ հետ Եգիպտոս կիջնեմ»** Աստծո անձնական ներկայությունը Իր ամենամեծ խոստումն է: Այն ցույց է տալիս փրկություն նախաձեռնող Աստծո բնավորությունը (տես՝ Ծննդ. 26:3,24; 28:15; 31:3; Սաղմ. 23:4; 139:7-12): Քերականական այս կազմությունը (ենթամասը) բնորոշ է եբրայերենին (ինչպես և հաջորդողը): Այն նաև ցույց է տալիս, որ ՅԱՀՎԵՆ չի սահմանափակվում Քանանով: Նա տիեզերական Աստված է (այսինքն՝ 2 Օր. 32:8):

❖ **«նաև անպայման կհանեմ»** Աստված Նահապետներին խոստացել է Քանանի երկիրը, սակայն Հակոբը այժմ մշական բնակություն է հաստատելու Եգիպտոսում: Սա աստվածային խոստում է, որ իսրայելացիները վերադառնալու են Քանան (տես՝ 15:16; 28:15):

❖ «և Հովսեփը կղնի ձեռքը քո աչքերի վրա» Սա ըստ երևույթին երբայական դարձվածք է, որը նկարագրում է մահվան ժամանակ սիրելիների ներկայությունը (տես՝ Ծննդ. 50:1), հաճախ մեռնողի աչքերի կոպերը փակելու գործողության հետ համադրելով:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 46:5-7**

<sup>5</sup>Եվ Հակոբը ելավ Բեսաբեեից, և Իսրայելի որդիները տարան իրենց հայր Հակոբին և իրենց երեխաներին և իրենց կանանց այն կառքերով, որ Փարավոնն ուղարկել էր նրանց տանելու համար: <sup>6</sup>Եվ առան իրենց անասունները և իրենց ունեցվածքը, որ Քանանի երկրում կուտակել էին՝ Հակոբը և իր ամբողջ սերունդն իր հետ: <sup>7</sup>Իր որդիներն ու իր որդիների որդիներն իր հետ, իր աղջիկները և իր ամբողջ սերունդն իր հետ Եգիպտոս բերեց:

**46:7 «իր աղջիկները և իր թոռնուհիները /անգլերենում/»** Գիտնականներին այս հարցն է հուզում, թե արդյոք նա բացի Դինայից ուրիշ աղջիկներ էլ ուներ, թե սա վերաբերում է իր հարսներին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 46:8-27**

<sup>8</sup>Եվ սրանք են Իսրայելի որդիների անունները, որ Եգիպտոս եկան: Հակոբը և նրա որդիները, Հակոբի անդրանիկը՝ Ռուբեն, <sup>9</sup>Ռուբենի որդիները՝ Ենովք, Փաղղուս, Եսրոն և Քարմի: <sup>10</sup>Շմավոնի որդիները՝ Համուել և Համի, Օհադ և Յաքի և Սահառ ու քանանացի կնոջ որդին՝ Սավուդ: <sup>11</sup>Ղևի որդիները՝ Գերսոն, Կահաթ և Մերարի: <sup>12</sup>Հուդայի որդիները՝ Էր, Օնան ու Սելոմ և Փարես և Չարա. բայց Էրը և Օնանը Քանանի երկրում մեռան: Եվ Փարեսի որդիները՝ Եսրոն և Համուլ: <sup>13</sup>Իսաքարի որդիները՝ Թավդա և Փուա, և Հոբ ու Սամրոն: <sup>14</sup>Սաբուլոնի որդիները՝ Սարեդ և Ելոն և Հադել: <sup>15</sup>Սրանք են Լիայի որդիները, որոնց Միշա-գեաբում ծնեց Հակոբի համար և նրա Դինա աղջիկը. նրա բոլոր որդիները և աղջիկները երեսուներեք հոգի էին: <sup>16</sup>Գադի որդիները՝ Սափոն և Անգի, Սունի և Եսրոն, Էրի, Արոտի և Արելի: <sup>17</sup>Ասերի որդիները՝ Հեմնա, Հոսուա, Հեսուի և Բարիա, և նրանց քույրը՝ Սարա և Բարիայի որդիները՝ Քաբեր և Մաղքիել: <sup>18</sup>Սրանք են Չեղփայի որդիները, որ Լաբանն իր Լիա աղջկան տվեց, և նա ունեցավ սրանց Հակոբի համար՝ տասնվեց հոգի: <sup>19</sup>Հակոբի կին Ռաքելի որդիները՝ Հովսեփ և Բենիամին: <sup>20</sup>Հովսեփի համար Եգիպտոս երկրում Մանասեն և Եփրեմը ծնվեցին, որոնց Արեգ քաղաքի բուրմ Դետափրեայի աղջիկ Ասանեթն ունեցավ նրա համար: <sup>21</sup>Բենիամինի որդիներն էին Բադա, Բոքոր և Ասել, Գերա և Նեեմանը, Էհի և Ռովա, Մուփիմ, Ոփիմ և Արեդ: <sup>22</sup>Սրանք են Ռաքելի որդիները, որ ծնվեցին Հակոբի համար. բոլորը տասնչորս հոգի էին: <sup>23</sup>Դանի որդին՝ Հուսիմ: <sup>24</sup>Նեփթաղիմի որդիները՝ Հասիել, Գունի, Յասիր և Սիլլեմ: <sup>25</sup>Սրանք են Բաղդայի որդիները, որ Լաբանն իր Ռաքել աղջկանը տվեց, և սա Հակոբի համար ծնեց սրանց. բոլորը՝ յոթ հոգի: <sup>26</sup>Հակոբի հետ Եգիպտոս եկած բոլոր անձերը, որ նրա երանքից էին ելել, բացի Հակոբի որդիների կանանցից, բոլորով վաթսուներեք հոգի էին: <sup>27</sup>Եվ Հովսեփի որդիները, որ Եգիպտոսում նրա համար ծնվեցին, երկու հոգի էին: Հակոբի տան բոլոր անձինք, որ Եգիպտոս գնացին, յոթանասուն էին:

**46:10-24** Այս համարները շատ նման են Թվոց 26 և 1 Մնացորդաց 4-7-ում առկա ցանկին: Այս մյուս երկու ցանկերն ունեն հեզման տարբերություններ անունների մեջ կամ էլ ընդհանրապես տարբեր անուններ: Տե՛ս Համատեքստային Հասկացություններ, Բ: Հավատում եմ, որ սա կարելի է բացատրել բանավոր ավանդությամբ կամ որ մարդիկ այս ժամանակաշրջանում հաճախ ունեին երկու անուն:

**46:10 «քանանացի կնոջ որդի»** Շատ քննարկումներ են եղել այն մասին, թե ինչու է այս մարդը ներառվել ցանկում: Ակնհայտ է, որ սա նորմալ երևույթ չէր: Ռաշին ասում է, որ սա վերաբերում է Դինայի որդուն՝ սերված Սյուբեմից (տես՝ Ծննդ. R.80):

**46:12 10-27** համարները ենթադրվում է, որ պետք է լինի այն մարդկանց անվանացանկը, ովքեր Հակոբի հետ գնացին Եգիպտոս, սակայն Հուդայի երկու արդեն իսկ մահացած որդիների անունների արձանագրելը (այսինքն՝ Էրը և Օնանը, տես՝ Ծննդ. 38:7,10) ցույց է տալիս, որ այս ցանկը ավելացված է եղել մեկ ուրիշ ժամանակ: Դա չի նշանակում, որ ճշգրիտ չէ, այլ որ այս համատեքստի մաս չի կազմում:

**46:13 «Հոբ /անգլ.՝ Յոբ/»** Շատ մեկնաբաններ ենթադրել են, որ սա պետք է հեզվեր որպես «Հոբ» (בִּי), սակայն 1 Մնաց. 7:1 և Թվոց 26:24-ում նրա անունը Հասուբ է ( חֲשֻׁב ):

**46:15 «նրա բոլոր որդիները և աղջիկները երեսուներեք հոգի էին»** Համար 15,18,22 և 25 բոլորն էլ ամփոփում են Հակոբի ընտանիքի տարբեր մասերի վերջնական թվաքանակը՝

1. Հ. 15-ում ունենք Լիայի որդիներն ու աղջիկները
2. Հ. 18-ում՝ Լիայի աղախնու՝ Չեղփայի որդիները
3. Հ. 22-ում՝ Ռաբելի որդիները
4. Հ. 25-ում՝ Ռաբելի աղախնու՝ Բաղդայի որդիները

Այս խմբերի ամբողջական ընդհանուր թիվը տրված է հ. 26-ում որպես «վաթսուվեց հոգի» և հ. 27-ում՝ «յոթանասուն»:

Շատ քննարկումներ են եղել այն մասին, թե ինչ կապ ունեն այս երկու թվերը այս ցանկի հետ: Ոմանք ասում են, որ «յոթանասուն» թվին պետք է ավելացնել ևս մի հոգու՝ Դինային՝ հ. 15-ից, և կլինի «յոթանասունմեկ» և հանել Էրի և Օնանին՝ հ. 12-ից, ինչպես նաև հանել Հովսեփին և նրա երկու որդիներին՝ Եփրեմին և Մանասեին (հ. 27): Մյուսներն էլ պնդում են, որ եթե հ. 26-ի «վաթսուվեց» թվին գումարեն Հակոբին, Հովսեփին և իր երկու որդիներին, ապա կստացվի «յոթանասուն» հոգի: Հետաքրքիր է, որ Գործք 7:14-ում Ստեփանոսը նշում է յոթանասունհինգ հոգի: Ինչևէ, այս թիվը մեզ է հասել Մեպտուագինտայից, որն ըստ երևույթին թվարկում է Հովսեփի հինգ թոռներին: Տե՛ս Գլխոսն Արչեր, *Աստվածաշնչի Դժվարությունների Հանրագիտարան*, էջ՝ 378-379; *Աստվածաշնչի խրթին խոսքերը*, էջ՝ 521-522:

**46:17 «և նրանց բույրը՝ Սարա»** Այս դասեր ներառումը ցանկի մեջ ցույց է տալիս, որ ցանկում կարող էին բոլորը ներառվել: Հնարավոր է, որ ավելի շատ որդիներ են ծնվել այս ընտանիքում, քան դուստրեր:

**46:20** Հովսեփն ունի երկու որդի այս եգիպտացի կնոջից: Այս երկու որդիները որդեգրվելու էին Հակոբի կողմից որպես իր սեփականը, այսպիսով իր բոլոր որդիները թիվը հասնելու էր տասներեքի:

Կարծես թե Հովսեփին տրվեց կրկնակի բաժին, որը սովորաբար պահվում է առաջնեկի համար, սակայն նրան չտրվեց ընտանիքի գլուխը ինչու էլ չէր: Սա բաժին ընկավ Հուդային՝ Լիայի չորրորդ որդուն: Այս անսովոր որոշումները ազդարարում են Աստծո առաջնորդությունը այս ուխտի ընտանիքում:

Եփրեմը դառնալու էր ամենամեծ, ամենահզոր ցեղը հյուսիսային Քանանում, մինչ Հուդան՝ ամենամեծն ու ամենահզորը հարավում:

LXX ունի այս համարի հետ կապված սերունդների ընդլայնված ցանկը: Որոշ գիտնականներ կարծում են, որ 2 Օր. 32:8-ի պատճառով MT տարբերակը դիտավորյալ կերպով բաց է թողել այս ցանկը (UBS, *Preliminary and Interim Report on the Hebrew Old Testament Text Project*, p.70):

**46:21 «Բենիամինի որդիները»** Բենիամինի որդիները կարծես թե թվարկվում են այստեղ, սակայն երբ սա համեմատենք 1 Մնաց. 7:6-ի հետ, ապա կտեսնենք, որ նշվում են միայն երեք որդիներ: Որոշ մեկնաբաններ պնդում են, որ այստեղ նշված մյուս որդիները իրականում թոռներն են (տես՝ Թվոց 26:38-40; 1 Մնաց. 7:6բ; 8:1բ):

**46:26 «նրա երանքից էին ելել»** Այս ցանկը ինչ որ տեղ շփոթեցնող է, քանի որ՝

1. թվարկում է նախկինում մեռած որդիների անուններ
2. անուններից մի քանիսը հոգնակի թիվով են և կարծես թե հետագա ցեղերի անուններ են
3. հ. 21-ում Բենիամինի համար ասվում է, որ ունի տասը որդի՝ ավանդական երեք որդու փոխարեն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 46:28-34**  
<sup>28</sup>Եվ նա իրենից առաջ Հուդային ուղարկեց Հովսեփի մոտ, որ նրան Գեսեմը ցույց տա. և նրանք եկան Գեսեմի երկիրը: <sup>29</sup>Եվ Հովսեփն իր կառքը պատրաստեց և իր հայր Իսրայելին դիմավորելու համար Գեսեմ գնաց. և երբ հանդիպեց նրան, նրա պարանոցովն ընկավ և նրա պարանոցը գրկած երկար ժամանակ լաց եղավ: <sup>30</sup>Եվ Իսրայելն ասաց Հովսեփին. «Հիմա՛ քո երեսը տեսնելուց հետո, թող մեռնեմ, որովհետև դեռ կենդանի ես»: <sup>31</sup>Եվ Հովսեփն իր եղբայրներին և իր հոր տանն ասաց. «Գնամ և Փարավոնին պատմեմ և ասեմ նրան. «Իմ եղբայրները և իմ հոր ընտանիքը, որ Քանանի երկրում էին, ինձ մոտ են եկել»: <sup>32</sup>Եվ այդ մարդիկ հովիվներ են, քանի որ անասունների տեր են. և իրենց հոտերը, և իրենց նախիրները և իրենց ամբողջ ունեցվածքը բերել են: <sup>33</sup>Եվ կլինի, որ երբ Փարավոնը ձեզ կանչի և ասի, թե՛ ինչ է ձեր գործը, ասացե՛ք. <sup>34</sup>«Ճառաներդ՝ մեր մանկությունից մինչև հիմա քաշնարածներ ենք, մենք և մեր հայրերը», որպեսզի Գեսեմի երկրում բնակվեք, քանի որ ամեն մի հովիվ գարշելի է եգիպտացիների համար:

**46:28 «և նա իրենից առաջ Հուդային ուղարկեց Հովսեփի մոտ»** MT թարգմանության մեջորոշակի շփոթմունք կա: RSV տարբերակը, որը հետևում է Մեպտուազինտային, ասում է «Գեսեմում նրա առջև կանգնելու»: Հնարավոր է սա ակնարկում է՝

1. որ Հուդան պետք է ցույց տար Հովսեփին Գեսեմի երկրում իրենց հոր մոտ տանող ճանապարհը
2. որ նա պետք է կանգներ Հովսեփի առջև Գեսեմի երկրում

Այն հաստատում է ընտանիքում Հուդայի առաջնորդի դիրքը:

**46:29 «իր կառքը»** Գոյություն ունեին առնվազն երեք տեսակ երկանիվ, կենդանու միջոցով քաշվող «կառքեր»՝

1. սայլ, որը քաշվում էր եզների միջոցով, տես՝ 45:21
2. ռազմական կառք՝ մետաղյա զինանոցով: Որոշ կառքեր քշվում էին մի հոգով, բայց կային նաև ավելի մեծ տեսակները՝ երկու հոգու համար, որոնք ձիաքարշ էին (արագության համար), տես՝ Ելից 14:7:
3. ծիսական կառքեր, որոնք հիմնականում կարելի է տեսնել եգիպտական որմնանկարների վրա՝ զարդարված և ձիաքարշ: Այն համարվում էր դիրքի խորհրդապատկեր (ինչպես սպիտակ էշերը Պաղեստինում), տես՝ 46:29:

**46:34 «քանի որ ամեն մի հովիվ գարշելի է եգիպտացիների համար»** Ոմանք սա դիտարկում են որպես՝

1. քաղաքաբնակ եգիպտացիները թշնամաբար էին վերաբերվում քոչվոր նախապանների
2. եգիպտացիների վերաբերմունքը Հիբրուսների հանդեպ կամ «Հովիվ Թագավորների», որոնք իշխեցին իրենց վրա 17-րդ դինաստիայի ընթացքում և հիմնականում սեմական ծագման էին և ոչ թե եգիպտական: Ջոզեֆուսը նշում է այս մասին իր *Հրեաների Հնությունները* 11.7.5 (Հենգստեմբերգը պնդում է, որ իսրայելական ազգային գիտակցությունը պաշտպանված էր եգիպտական բացառիկությամբ և նրանց կողմից նախապանների հանդեպ նողկանքով):
3. եգիպտացիները երկրպագում էին ցուլերի, հետևաբար այն մարդիկ, ովքեր ուտում էին կովի կամ ցուլի միս, զգվելի էին նրանց համար (տես՝ 43:32; Ելից 8:26. շատ նման մերօրյա հինդուիստներին):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Հովսեփը Ծննդ. 45:1-ում դուրս հրավիրեց իր ծառաներին:
2. Բացատրե՛ք Ծննդ. 45:5-9-ում Հովսեփի կողմից արտաբերված աստվածաբանական կարևոր սկզբունքը:
3. Բացատրե՛ք «Հակոբ» և «Իսրայել» տերմինների նշանակությունը և ինչպես են սրանք կիրառվում Սուրբ Գրքում:
4. Ինչո՞ւ է Աստված տեսիլքներով Հակոբին հայտնվում, իսկ Հովսեփին՝ ոչ:
5. Ինչո՞ւ է Թվոց 26 և 1 Մնացորդաց 4-6-ում տրված ցանկը տարբեր Ծննդ. 46:8-27-ում նշված սերունդների ցանկից:
6. Ծննդ. 46:27-ում գտնվող «յոթանասուն» թվի հետ կապված ի՞նչ խնդիրներ կան:
7. Ինչպե՞ս Աստված օգտագործեց եգիպտացիների աստվությունը հովիվների հանդեպ պանդիտացող իսրայելացիների կյանքում:

**ԾՆՆԴՈՑ 47**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Հակոբի ընտանիքը բնակվում է Գեսեմում	Հակոբը բնակվում է Գեսեմում (46:38-47:12)	Հակոբն ու իր որդիները բնակվում են Եգիպտոսում (46:28-47:12)	Հակոբն ու իր ընտանիքը Եգիպտոսում (46:28-47:12)	Փարավոնը հանդիսատես է շնորհում
47:1-6	47:1-6	47:1-6	47:1-3ա  47:3բ-6	47:1-5ա, 6բ  47:5բ, 6ա-11
47:7-12	47:7-12	47:7-12	47:7-8  47:9-12	47:12
47:13-19	47:13-19	47:13-19	Սովը 47:13-15  47:16-17 47:18-19	Հովսեփի Գյուդա- տնտեսական քաղաքականությունը 47:13-14  47:15-17
Սովի հետևանքները 47:20-26	47:20-26	47:20-26	47:20-24  47:25-26	47:18-19 47:20-22  47:23-26
47:27-28	47:27-31	47:27-28	Հակոբի վերջին խնդրանքը 47:27-30ա	Հակոբի վերջին ցանկությունները 47:27-31
47:29-31		47:29-31	47:30բ  47:31	

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգրը մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո:

Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## **ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 47:1-6**

**<sup>1</sup>Ապա Հովսեփը եկավ ու պատմեց Փարավոնին և ասաց. «Իմ հայրն ու եղբայրները իրենց հոտերով ու նախիրներով և իրենց ամբողջ ունեցվածքով եկել են Քանանի երկրից և ահա Գեսեմի երկրում են»:** **<sup>2</sup>Եվ իր եղբայրների միջից հինգ մարդ վերցրեց և նրանց ներկայացրեց Փարավոնին:** **<sup>3</sup>Եվ Փարավոնն ասաց նրա եղբայրներին. «Ի՞նչ է ձեր գործը»:** Եվ նրանք Փարավոնին ասացին. **«Քո ծառաները՝ հովիվներ ենք՝ և՛ մենք, և՛ մեր հայրերը»:** **<sup>4</sup>Նաև ասացին Փարավոնին. «Եկել ենք այս երկրում որպես պանդուխտ, որովհետև քո ծառաների համար արոտավայր չկա, Քանանի երկրում սովի սաստկանալու պատճառով. մենք հիմա խնդրում ենք՝ թող ծառաներդ Գեսեմի երկրում բնակվեն»:** **<sup>5</sup>Եվ Փարավոնը խոսեց Հովսեփի հետ՝ ասելով . «Քո հայրն ու եղբայրները քեզ մոտ են եկել:** **<sup>6</sup>Քո առաջ է Եգիպտոս երկիրը, քո հորն ու եղբայրներին երկրի ամենալավ տեղում բնակեցրու. Գեսեմի երկրում թող բնակվեն և եթե գիտես, որ նրանց մեջ գործունյա մարդիկ կան, իմ հոտերի վրա վերակազմու՛ր կարգիք նրանց»:**

**47:1 «Ապա Հովսեփը եկավ ու պատմեց Փարավոնին և ասաց»** Սա կարծես թե Փարավոնի հետ Հովսեփի ընտանիքի հանդիպման համար պայմանավորվածություն էր (տես՝ Ծննդ.46:33): Այն ակնարկվում է Գործք 7:13-ում:

❖ **«ահա Գեսեմի երկրում են»** Գլուխ 46 և 47 մասնավորապես կապված են իրար, քանի որ Հովսեփը պատրաստում է իր ընտանիքին, թե ինչ պետք է ասեն և ինչպես պետք է ասեն, որպեսզի թագավորի կողմից թույլտվություն ստանան ապրելու Գեսեմի երկրում: Այս երկիրը հայտնի էր իր բերրի արոտավայրերով: Այն նաև կոչվում էր «երկրի ամենալավ տեղը», հհ. 6 և 11 (տես՝ 45:18):

**47:2 «իր եղբայրների միջից հինգ մարդ վերցրեց»** Միշտ ենթադրություններ են եղել ան մասին, թեինչու հենց հինգ հոգու վերցրեց իր հետ: Ռաբբիներն ասում են, որ նա վերցրեց ամենաթույլ և ամենատղեղներին, որպեսզի Փարավոնը իր եղբայրներին չհավաքագրի զինվորական ծառայության համար, սակայն սա կասկածելի է թվում: Անկոր Աստվածաշնչյան Մեկնությունը պնդում է ճիշտ հակառակը՝ «նա իր հետ վերցրեց ամենաշատ աչքի ընկնողներին» (էջ՝ 350): Հնարավոր է, որ հինգ թիվը եգիպտացիների համար ինչ-որ հատուկ նշանակություն ուներ, քանի որ այս գլուխներում այս թիվը բավականին հաճախ է գործածվում (տես՝ 41:34; 43:34; 45:22):

**47:3 «Քո ծառաները՝ հովիվներ ենք՝ և՛ մենք, և՛ մեր հայրերը»** Շատ կարևոր է նշել, որ նրանք հաստատում են, որ հովիվների զավակներ են (տես՝ 13:7,8; 26:20; 46:32,34), հետևաբար, նրանք միայն հովվել գիտեին: Որդիներից ակնկալվում է, որ նրանք կհետևեն իրենց հայրերի զբաղմունքին՝ գործին: Հովիվներին (նախիրներին) Եգիպտոսում ինչ-որ տեղ արհամարհանքով էին վերաբերվում (տես՝ 43:32; 46:34; Ելից 8:26): Սա նշանակում է, որ (1) եգիպտացիների կողմից նրանց հանդեպ ունեցած ռասայական անարգանքի և (2) հովիվների հանդեպ ունեցած մշակութային հակակրանքի պատճառով Հակոբի երեխաները բավականին մեռած էին մնալու: Սա շատ կարևոր էր, քանի որ Ծննդոց 38-ից ակնհայտ է, որ նրանք միաձուլվել էին քանանացիների մշակույթի մեջ: Հետևաբար, Եգիպտոսում նրանց



պանդիստությունը իրական հնարավորություն էր իրենց համար, որպեսզի միավորվեն որպես մեկ առանձին ազգային կրոնական ամբողջություն:

**47:4 «ասացին Փարավոնին»** Իրենց պատասխանի մեջ առկա է չորս առանձնահատկություն, որոնց նպատակն էր մեղմել իրենց վախերն այն հարցի շուրջ, որ հնարավոր է Փարավոնն ուներ իրենց հետ կապված՝ (1) նրանք հովիվներ էին, (2) պանդիստներ էին, (3) ստիպված էին գալ Եգիպտոս և (4) նրանք թույլտվություն են խնդրում բնակվելու այդ երկրում, ըստ երևույթին կարճաժամկետ:

**47:5-6** MT տարբերակում որոշակի խնդիր կա, որը ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք հնագույն տարբերակների հետ: Փարավոնը պետք է որ դիմեր այդ հինգ եղբայրներին, և ոչ թե Հովսեփին:

**47:6 «Եթե գիտես, որ նրանց մեջ գործունյա մարդիկ կան, իմ հոտերի վրա վերակացու կարգիր նրանց»** Փարավոնը Գեսեմի տարածքում նույնպես հոտեր ուներ: Սա հնարավոր է հանուն Հովսեփի նրա կողմից ցուցաբերած հոգատարության մեկ այլ կերպ էր: Կամ հնարավոր է, որ նա ցանկանում էր այս ժողովրդի Աստծո հետ կապված իրենք ունենային ֆիզիկական բարգավաճում (տես՝ 30:27; 39:5):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 47:7-12**

**7**Եվ Հովսեփն իր հայր Հակոբին բերեց և ներկայացրեց Փարավոնին. և Հակոբն օրհնեց Փարավոնին: **8**Փարավոնն ասաց Հակոբին. «Քանի տարեկան ես»: **9** «Իմ պանդիստության տարիների օրերը հարյուր երեսուն տարի են. քիչ և ցավերով լի էին իմ կյանքի տարիները և չեն հասնի իմ հայրերի կյանքի տարիների օրերին՝ իրենց պանդիստության օրերում»: **10**Հակոբն օրհնեց Փարավոնին և դուրս եկավ Փարավոնի առաջից: **11**Եվ Հովսեփն իր հորն ու եղբայրներին բնակեցրեց և նրանց ունեցվածքը՝ Եգիպտոս երկրի ամենալավ տեղը՝ Ռամսեսի երկրում, ինչպես որ Փարավոնը հրամայել էր: **12**Եվ Հովսեփը կերակրում էր իր հորն ու եղբայրներին և իր հոր ամբողջ տանը՝ հաց տալով նրանց ընտանիքներին:

**47:7 «և Հակոբն օրհնեց Փարավոնին»** Շատ քննարկումներ են եղել Հակոբը երկու անգամ Փարավոնին օրհնելու շուրջ (տես՝ հ. 10): Ոմանք ասում են, որ դա սովորական արևելյան ողջունի ձև է՝ խոսքը սկսելիս և մեկնելիս (տես՝ 31:55; Հռուբ 2:4, NJB): Ինչևէ, սա անոսովոր է թվում, որ այստեղ նշված է երկու անգամ: Միշտ գերադասն է օրհնում ստորադասին (տես՝ Եբր. 7:7): Մարթին Լյուիթերն ասում է, որ Հակոբը ավետարան է քարոզել Փարավոնին և որ նա և իր արքունիքը դարձի են եկել: Նա հժգործածում է Սաղմ. 105:22 որպես այս դարձի ապացույց: Աբրահամի ընտանիքի և նրանց հետ կապված մարդկանց վրա աստվածային օրհնության շնորհիվ, այս օրհնությունը Փարավոնի պես աջակից մեկի վրա տեղին է երևում (տես՝ NRSV, TEV, NIV): Հրեական Սերտոդոսի Աստվածաշունչը՝ էջ 93, թվարկում է այն համարները, որտեղ ուխտի ընտանիքի միջոցով ուրիշները օրհնվել են (տես՝ 12:3; 22:18; 26:4; 28:14; 30:27-30; 39:5,23, էջ՝ 93):

**47:9 «Իմ պանդիստության տարիները»** Հակոբը անշուշտ իր կյանքի վերջին տարիներին ընկճախտ էր վերապրել: Նրա մելամաղձոտ հոգին (որ Հովսեփի մահվան լուրը հասցրեց այդ վիճակին) բացահայտ երևում է այս համարում:

**47:11 «նրանց ունեցվածքը՝ Եգիպտոս երկրի ամենալավ տեղը՝ Ռամսեսի երկրում, ինչպես որ Փարավոնը հրամայել էր»** Այստեղ ակնհայտ է, որ «Ռամսեսի երկիրը» (տես՝ Ելից 1:11; 12:37; Թվոց 33:3) և Գեսեմի երկիրը միևնույն վայրն է: Ռամսես անունը նշելը կա՛մ (1) որևէ դպրի կողմից կատարած հետազոտ հավելում է, կա՛մ էլ (2) նախքան եբրայեցիները այնտեղ կկառուցեին Ռամսես II-ի պատվին և նրա անունով այս քաղաքը, այնտեղ գոյություն ուներ այդ նույն անունով մի քաղաք: Ռամսես II կարծես թե Ելիցի ժամանակ իշխող Փարավոնն է, որը և հաստատում է Ք. Ա. 1290թ-ը: Սա ոչ միայն ճիշտ է եգիպտական մայրաքաղաքի տեղանքի առումով, որը Հիքսոսների իշխանության ժամանակ գտնվում էր Գեսեմի երկրից մոտ, այլ նաև մոտ Ք. Ա. 1250թ-ին Պաղեստինյան արշավների հնագիտական ապացույցների հիման վրա:

**47:12**  
NASB  
NKJV  
NRSV  
TEV  
NJB

«նրանց փոքրերի համաձայն»  
«նրանց ընտանիքների թվի համաձայն»  
«նրանցից կախում ունեցողների թվի համաձայն»  
«մինչև ամենափոքրը»  
«նրանցից ամենափոքրն էլ ներառյալ»

JPSOA  
LXX  
Peshitta

«մինչև իսկ նրանցից փոքրերը»  
«յուրաքանչյուր անձի համար»  
«ըստ նրանց ընտանիքների»

«Փոքրերը» (BDB 381, KB 378, տես՝ Թվոց 14:3,31; 31:17) հնարավոր է վերաբերում էր ընտանիքի յուրաքանչյուր անդամին, որին հատկացվում էր սննդի որոշակի չափաբաժին (տես՝ 45:11): Ռաբբիներն ասում են, որ երեխաները վատնում են շատ հաց և սա մի դարձվածք է, որը ցույց է տալիս, որ Հովսեփը առատապես էր հոգում նրանց համար: Հավանաբար այս «փոքրերը» տերմինը մտերմիկ ընտանեկան փոխադարձություն է ուխտի ընտանիքի բոլոր անդամների համար (տես՝ հ. 24):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 47:13-19**

<sup>13</sup>Եվ ամբողջ երկրում հաց չկար, որովհետև սովը շատ սաստկացավ, և Եգիպտոս երկիրը և Քանանի երկիրը սովի պատճառով թուլացան: <sup>14</sup>Հովսեփը հավաքեց Եգիպտոս երկրում և Քանանի երկրում եղած ամբողջ փողը այն ծախած պաշարով, որ նրանք գնում էին, և Հովսեփը փողը տարավ Փարավոնի տունը: <sup>15</sup>Եվ երբ Եգիպտոս երկրից ու Քանանի երկրից փողը վերջացավ, բոլոր եգիպտացիները եկան Հովսեփի մոտ և ասացին. «Մեզ հաց տուր. ինչո՞ւ մեռնենք քո առաջ, որովհետև փող չկա»: <sup>16</sup>Եվ Հովսեփն ասաց. «Ձեր անասունները բերե՛ք, և ձեր անասունների փոխարեն տամ ձեզ, եթե փող չկա»: <sup>17</sup>Եվ նրանք օրերնց անասունները բերեցին Հովսեփի մոտ, և Հովսեփը հաց տվեց նրանց՝ ձիերի փոխարեն և ոչխարների փոխարեն, և էշերի փոխարեն և այն տարի նրանց հացով կերակրեց՝ իրենց անասունների փոխարեն: <sup>18</sup>Այն տարին լրացավ, ու հաջորդ տարին նրա մոտ եկան և ասացին նրան. «Մենք մեր տիրոջից չենք թաքցնում, որ մեր փողը վերջացել է, և մեր անասուններն էլ մեր տիրոջն են պատկանում, էլ ոչինչ չմնաց մեր տիրոջ առաջ՝ բացի մեր անձերից ու մեր հողերից: <sup>19</sup>Ինչո՞ւ քո աչքի առաջ մեռնենք՝ մենք և մեր հողը. մեզ և մեր հողերը ծախու առ, և մենք ու մեր երկիրը Փարավոնի ծառաները լինենք, և սե՛րմ տուր, որ ապրենք ու չմեռնենք, և երկիրը չամայանա»:

**47:13-26** Շատ մեկնաբաններ պնդել են, որ Հովսեփը Եգիպտոսի մարդկանց հանդեպ դաժան էր վարվում: Ինչևէ, Հովսեփը գործեց ըստ ընդունված աստվածաբանական այն կարծիքի, որ Փարավոնը լինելով Ռե արևի աստծո ներկայացուցիչը, Եգիպտոս երկրի սեփականատերն էր և նա՝ Հովսեփը դա իրականություն դարձրեց:

**47:13 «թուլացան»** Այս ԲԱՅԸ (BDB 529, KB 520, *Qal* ԱՆԿԱՏԱԼ) ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում: Դրա հիմնական նշանակությունն է «ուշագնաց լինել»: Քանանի երկիրը անբերրի էր: Դա Շննդոց 3:17-19-ի անեծքի արդյունքն էր (տես՝ Հոռմ. 8:20-22), որի մի մասը բնության անկանոն ցիկլոնների պատճառով էր: Այս իրավիճակում ՅԱՀՎԵՆ օգտագործում է (օգտագործում, ոչ թե պատճառ դառնում) սա Իր նպատակների համար: Եղանակի վրա այս վերահսկողությունը նաև արտացոլվում է Երկրորդ Օրինացի «անեծքներ և օրհնություններ» բաժնում (տես՝ 28-29): Սովը սաստիկ էր (տես՝ 12:10; 41:31; 43:1; 47:4,13):

**47:16 «Ձեր անասունները բերե՛ք»** Նրանք արդեն իսկ ամեն ինչ վաճառել էին («բերե՛ք», BDB 396, KB 393, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ հհ. 15,16), որպեսզի կերակուր գնեին: Այժմ, նրանց հոտերն էին վտանգված: Այդ հոտերը վերցնելը, որոնց այլևս իրենք չէին կարողանում կերակրել և ամեն դեպքում մեռնելու էին, իրականում կառավարության կողմից ցուցաբերած ողորմություն էր, և ոչ թե չարաշահում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 47:20-26**

<sup>20</sup>Եվ Հովսեփն ամբողջ Եգիպտոս երկիրը գնեց Փարավոնի համար, որովհետև եգիպտացիները ծախում էին ամեն մեկն իր արտը, քանի որ սովը սաստկացել էր նրանց վրա, և երկիրը Փարավոնինը եղավ: <sup>21</sup>Եվ ժողովրդին էլ տեղափոխեց քաղաքները՝ Եգիպտոսի մի ծայրից մինչև մյուսը: <sup>22</sup>Միայն քրմերի երկիրը չգնեց, քանի որ քրմերը Փարավոնից մի որոշակի բաժին ունեին և ուտում էին իրենց հասանելիքը, որ Փարավոնը տալիս էր նրանց, այդ պատճառով էլ իրենց հողերը չծախեցին: <sup>23</sup>Այն ժամանակ Հոնսեփն ասաց ժողովրդին. «Ահա այսօր ծախու առա ձեզ և ձեր հողերը Փարավոնի համար. ահա՛ ձեզ սերմ, ցանեցե՛ք երկիրը. <sup>24</sup>Եվ բերքի ժամանակ հինգից մեկը Փարավոնին պիտի տաք իսկ չորս մասը ձերը կլինի, որ արտի համար սերմ և ձեզ համար ու ձեր տանը եղողների և ձեր երեխաների համար ուտելիք լինի»: <sup>25</sup>Եվ ասացին. «Դու մեր կյանքը փրկեցիր, թող մեր տիրոջ առջև շնորհք գտնենք և Փարավոնի ծառաները լինենք»: <sup>26</sup>Եվ Հովսեփն այս օրենքը հաստատեց Եգիպտոսի երկրում մինչև այսօր, որ հինգից մեկը Փարավոնինը լինի. բացի քրմերի երկրից, որ Փարավոնին չէր պատկանում:

**47:20 «Եվ Հովսեփն ամբողջ Եգիպտոս երկիրը գնեց Փարավոնի համար»** Մովի վեցերորդ ամսում, երբ բոլոր անասունները վաճառվել էին, նրանք Փարավոնին վաճառեցին իրենց հողատարածքներն ու իրենց (BDB 888, KB 1111, տես՝ հ. 19,20,22,23): Իրականում նրանք ստրուկներ դարձան (տես՝ հ. 23-24): Մենք գիտենք ոչ միայն Համուրաբիի Կանոնից, այլ նաև Բգարտայում և Նուզի Տախտակներում առկա հնագիտական հետազոտություններից, որ ստրկատիրությունը տարածված, մշակութային կացություն էր ՀՄԱ-ի ժողովուրդների միջավայրում: Համար 41:40 և 45:8-ում նշված Հովսեփի անունը նշանակում է, որ նա հանդիսանում էր Փարավոնի անձնական գործերի կառավարիչը: Համարներ 20-26-ը ցույց են տալիս, թե ինչպես է նա անձնապես օգուտ բերել Փարավոնին, Եգիպտոսում իր բյուրոկրատիկ ղեկավարությամբ: Այս ամբողջ պատմությունները «ինչ որ կերպ» փաստագրվել են եգիպտական պատմական արձանագրություններում:

**47:21 «Եվ ժողովրդին էլ տեղափոխեց քաղաքները՝ Եգիպտոսի մի ծայրից մինչև մյուսը»** Շատ մեկնաբաններ պնդում են, որ սա կատարվել է սնունդը բաժանելն ավելի հեշտացնելու համար, քանի որ ամեն դեպքում նրանք չէին մշակում հողը: Սակայն Սեպտուագինտան և Սամարացիների Հնգամատյանը սահմանում է «նա նրանց ստրուկներ դարձրեց» («քաղաքները», BDB 746, םִירָעֵל, «ստրուկներին», BDB 713, םִירָעֵל): Այս թարգմանությանը հետևում է RSV (Revised Standard Version) տարբերակը և կարծես թե համապատասխանում է թե՛ հ. 19 և թե՛ 25-ի համատեքստի հետ, ինչպես նաև հ. 23-ում սերմեր տալու հետ: Ռաշին ասում է, որ նա տեղափոխեց նրանց քաղաք, որպեսզի ապացուցի նրանց, որ երկիրը այլևս իրենցը չէ: Փեշիթա և Թարգում թարգմանություններ ունեն «նա քաղաքից քաղաք տեղափոխեց նրանց» արտահայտությունը, որը MT տարբերակի ճիշտ հակառակն է:

**47:22** Կրոնական հողատարածքներն ու անձնակազմը մնացին անձեռնմխելի (տես՝ հ. 26):

**47:24 «բերքի ժամանակ հինգից մեկը Փարավոնին պիտի տաք»** Համուրաբիի Կողից, Ուգարտական տեքստերից և Նուզի հնագիտական հետազոտություններից իմանում ենք, որ սա այդքան էլ ահավոր չարաշահում չէր նրա կողմից: Միջագետքյան և այլ պատմական փաստաթղթերից գիտենք, որ քառասունից մինչև վաթսուս տոկոս վճարելը անսովոր բան չէր: Հովսեփն այս մարդկանց հետ արդարությամբ էր վարվում: Նրանք դա հասկանում էին, քանի որ հ. 25-ում դա ակնհայտ արտացոլվում է:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 47:27-28**  
**<sup>27</sup>Իսկ Իսրայելը բնակվում էր Եփատոս երկրում՝ Գեսեմի երկրում, և այնտեղ կալվածք ստացան և աճեցին ու խիստ բազմացան: <sup>28</sup>Եվ Հակոբը Եգիպտոս երկրում տասնյոթ տարի ապրեց. և Հակոբի կյանքի տարիների օրերը հարյուր քառասունյոթ տարի եղան:**

**47:27** Սա հարթակ է պատրաստում հաջորդ եգիպտական կառավարության համար, որը վախեցնելու էր իսրայելացիներին:

**47:28 «Հակոբի կյանքի տարիների օրերը հարյուր քառասունյոթ տարի եղան»** Սա Ծննդոցում այն մի քանի համարներից մեկն է, որը որոշակի կարևոր դեպքեր է թվագրում: Հետաքրքիր է, որ Հակոբը իր մահից դեռևս շատ տարիներ առաջ կարծում էր, որ մեռնում է, ինչպես որ իր հայրը՝ Իսահակը Ծննդ. 27:2-ում: Սա ցույց է տալիս, որ չնայած այս մարդիկ եղել են Աստծո հզոր մարդիկ, միևնույն է ունեցել են ֆիզիկական խնդիրներ կապված իրենց ծերության, ինչպես նաև հոգեբանական կասկածների հետ: Աստծուն ճանաչելը չի նշանակում, որ այդ մարդուն ազատում է տարիքային խնդիրներից:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 47:29-31**  
**<sup>29</sup>Երբ Իսրայելի մեռնելու օրերը մոտեցան, կանչեց իր որդի Հովսեփին և ասաց նրանց. «Եթե հիմա քո առաջ շնորհ եմ գտել, աղաչում եմ, ձեռքդ դի՛ր իմ երանքի տակ և ինձ բարություն ու հավատարմություն ցույց տուր. աղաչում եմ ինձ Եգիպտոս երկրում մի՛ թաղիր: <sup>30</sup>Այլ թող իմ հայրերի հետ ննջեմ, և դու ինձ Եգիպտոսից դու՛րս հանիր և ինձ նրանց գերեզմանոցում թաղիր»: Եվ նա ասաց. «Ես քո ասածի պես կանեմ»: <sup>31</sup>Ասաց. «Երգվի՛ր ինձ»: Նա էլ երգվեց նրան: Եվ Իսրայելը մահճակալի սնարին խոնարհություն արեց:**

**47:29 «Երբ Իսրայելի մեռնելու օրերը մոտեցան»** Մահն Աստծո ձեռքերում է, ո՛չ պատահականություն է, ո՛չ ճակատագիր, ո՛չ էլ չարիք: Գյություն չունի «հնձվոր մահ», այլ միայն Աստծո հրեշտակ:

Մահը թշնամի չէ, այլ ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերության մեջ գտնվողների համար վերամիավորում: Աստվածաշնչում մահը չէ, որ ողբերգություն է, այլ տարածամ կամ դաժան մահը: Ծննդոց 3-ի անկումից հետո (տես՝ Ծննդոց 5) մահը ֆիզիկական կյանքի բնական վախճանն է: Երբ մեկն արդեն ծերացել է՝ մահն օրհնություն է:

❖ «ձեռքդ դի՛ր իմ երանքի տակ» Սա կարծես թե այլաբանորեն մեկնաբանվող երդման ձև է հին եբրայեցիների մոտ (տես՝ 24:2): Գոյություն ունի երկու հնարավոր պատասխան այս ժեստին՝ (1) երանքը հանդիսանում է մարմնի ամենամեծ մկանը, հետևաբար կապ ունի զորության, ուժի գաղափարի հետ կամ էլ (2) երանքը մոտ է սեռական օրգանին, ըստ որի նկատի ունի խոստման «սերմին»: Այս մանյովրի նպատակը կարծես թե որպես իրական երդման առարկա Հակոբի սերունդներն են: Ըստ երևույթին սա բխում էր դեռևս Քանանում Աստծո սերունդ տալու ուխտի խոստումներից (տես՝ Ծննդ. 12:1-3):



- NASB «բարություն ու հավատարմություն»
- NKJV «բարությամբ և ճշմարտապես»
- NRSV «ազնվորեն և իրապես»
- NJB «հավատարիմ սեր»
- LXX «ողորմություն և ճշմարտություն»
- Peshitta «գթառատությամբ և ճշմարտապես»
- REB «ազնվությամբ և հավատարմությամբ»
- JPSOA «անխախտ հավատարմությամբ»

Մրանք հատուկ ուխտի տերմիններ են՝ *hesed* (BDB 388, ܚܫܕ, տես՝ 20:13; 21:23) և *emeth* (BDB 54, ܐܡܬ): Տե՛ս Հատուկ Թեմա. Բարեգթություն, 19:19-ում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏՔ ԵՎ  
ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ում (յճՑ)**

**SPECIAL TOPIC: BELIEVE, TRUST, FAITH, AND FAITHFULNESS IN THE OLD  
TESTAMENT (յճՑ)**

I. Բացման հայտարարություն՝

Հարկ եմ համարում ասել, որ այս աստվածաբանական տերմինի կիրառությունը, որը չափազանց կարևոր է ՆԿ-ի համար, այնքան էլ հստակ չի սահմանվում ՀԿ-ում: Անշուշտ այս բառը այնտեղ առկա է, սակայն դիտարկվում է բանալի հանդիսացող ընտրված հատվածներում և անձանց մոտ:

- ՀԿ միաձուլում է՝
- 3. անհատն ու համայնքն իրար հետ
- 4. անձնական փորձառությունը և ուխտի հնազանդությունը իրար հետ

Հավատքը թե՛ անձնական փորձառություն է, և թե՛ ամենօրյա ապրելակերպ: Ավելի հեշտ է այն նկարագրել անձի մեջ քան բառապաշարով (այսինքն՝ բառային սերտողությամբ): Այս անձնական ասպեկտը լավագույնս լուսաբանվում է՝

- 3. Աբրահամի և նրա սերնդի օրինակով
- 4. Դավթի և Իսրայելի օրինակով

Այս մարդիկ հանդիպեցին՝ վերապրեցին Աստծուն և նրանց կյանքերը մշտապես փոխվեցին (անկատար, սակայն հարատևող հավատքի կյանքեր): Փորձություններն ի հայտ բերեցին Աստծո հետ իրենց հավատքի վերապրումների տկարություններն ու առավելությունները, սակայն մտերմիկ, վստահության կապը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այդ հավատքը փորձվեց և գտվեց, սակայն շարունակեց մնալ նրանց նվիրումի և ապրելակերպի ապացույց:

II. Կիրառվող հիմնական արմատը

- Ա. յճՑ (BDB 52)
- 2. ԲԱՅ
  - ա. *Qal* արմատը՝ աջակցել, սնուցել (այսինքն՝ 4 Թագ.10:1,5; Եսթ.2:7, աստվածաբանական կիրառությունից դուրս)
  - բ. *Niphal* արմատը՝ համոզվել կամ հաստատ իմանալ, հաստատել, հիմնավորել, հավատարիմ կամ վստահելի լինել՝
    - (1) մարդկանց՝ Եսայի 8:2; 53:1; Երեմ.40:14
    - (2) իրերին՝ Եսայի 22:23
    - (3) Աստծուն՝ 2 Օր.7:9; Եսայի 49:7; Երեմ.42:5

c. *Hiphil* արմատը՝ հաստատ կանգնել, հավատալ, վստահել.

(1) Աբրահամը հավատաց Աստծուն՝ Ծննդ.15:6

(2) Եզրայտոսում Իսրայելացիք հավատացին՝ Ել. 4:31; 14:31 (բացասված՝ 2 Օր.1:32)

(3) Իսրայելացիք հավատացին, որ ՅԱՀՎԵն Մովսեսի միջոցով խոսեց իրենց՝ Ել.19:9; Սաղմ.106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն՝ Ես.7:9

(5) Ով որ հավատա նրան/դրան՝ Եսայի 28:16

(6) Հավատալ Աստծո վերաբերյալ ճշմարտություններին՝ Ես.43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (ԱՐԱԿԱՆ) – հավատարմություն (այսինքն՝ 2 Օր.32:20; Ես.25:1; 26:2)

3. ՄԱԿԲԱՅ – ճշմարտապես, ճշմարիտ, համամիտ եմ, թող այդպես լինի (տես՝ 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Ես.65:16; Երեմ.11:5; 28:6): Սա եկեղեցական «ամեն» բառի կիրառությունն է ՀԿ-ում և ՆԿ-ում:

Բ. ՌՄՔ (BDB 54) ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ՝ հաստատություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց՝ Ես.10:20; 42:3; 48:1

2. Աստծուն՝ Ելից 34:6; Սաղմ.117:2; Ես.38:18,19; 61:8

3. Ճշմարտությանը՝ 2Օր.32:4; 3Թագ.22:16; Սաղմ.33:4; 98:3; 100:5; 119:30; Երեմ.9:5; Չաք.8:16

Գ. ՊՄՔ (BDB 53), հաստատություն, հարատևություն, նվիրվածություն

1. ձեռքերին՝ Ելից 17:12

2. ժամանակներին՝ Ես.33:6

3. մարդկանց՝ Երեմ.5:3; 7:28; 9:2

4. Աստծուն՝ Սաղմ.40:11; 88:12; 89:1,2,5,8; 119:138

### III. Այս ՀԿ-յան հասկացության կիրառությունը Պողոսի կողմից՝

Ա. Պողոսը հիմնավորում է ՅԱՀՎԵի և ՀԿ-ի վերաբերյալ իր նոր հասկացությունը Դամասկոսի ճանապարհին Հիտուսի հետ ունեցած իր անձնական փորձառությամբ (Գործք 9; 22; 26):

Բ. Նա ՀԿ-ի երկու կարևոր հատվածներից, որոնք օգտագործում են յՄՔ արմատը, գտավ հիմք իր այս նոր հասկացության համար.

1. Ծննդ.15:6 – Աստծո կողմից նախաձեռնած Աբրահամի անձնական փորձառությունը (Ծննդոց 12) պատճառ հանդիսացավ հավատքի հնագույնության կյանքի (Ծննդոց 12-22): Պողոսն այս մասին ակնարկում է Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում:

2. Եսայի 28:16 – նրանք, ովքեր հավատացին դրան (այսինքն՝ Աստծո կողմից փորձված և հաստատված անկյունաքարը) երբեք չեն՝

ա. Հռոմ.9:33, «մնա ամոթով» կամ «հիասթափվի»

բ. Հռոմ.10:11, վերը նշվածի պես

3. Ամբ. 2:4 – ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարմության կյանքով (տես՝ Երեմ.7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռոմ.1:17 և Գաղ.3:11-ում (նաև՝ Եբր.10:38):

### IV. Այս ՀԿ-յան հասկացության կիրառումը Պետրոսի կողմից.

Ա. Պետրոսը համադրում է՝

1. Ես.8:14 – 1 Պետ.2:8 (գործան վեմ՝ քար)

2. Ես.28:16 – 1 Պետ.2:6 (անկյունաքար)

3. Սաղմ.118:22 – 1 Պետ.2:7 (անարգված քար)

Բ. Նա դիմում է յուրօրինակ լեզվի, որը նկարագրում է Իսրայելին՝ «ընտրյալ ժողովուրդ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդ», վերցնելով՝

1. 1 Օր.10:15; Ես.43:21

2. Ես.61:6; 66:21

3. Ելից 19:6; 2 Օր.7:6

և հիմա կիրառվում է Քրիստոսի վրա եկեղեցու ունեցած հավատքի համար (1 Պետ. 2:5,9):

### V. Այս հասկացության կիրառումը Հովհաննեսի կողմից.

Ա. ՆԿ-յան կիրառությունը

«Հավատացին» տերմինը հունարենի (*pisteuō*) տերմինից է, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ Հովհաննեսի Ավետարանում չի հանդիպում, սակայն ԲԱՅԸ հաճախ է օգտագործվում: Հովհաննես 2:23-25-ում Հիտուս Նագովրեցու հանդեպ, որպես Մեսիայի, ամբողջի ցուցաբերած

նվիրումի մեջ անկեղծության անորոշություն կա: «Հավատալ» տերմինը մակերեսորեն կիրառելու այլ օրինակներից են՝ Հովհ.8:31-59 և Գործք 8:13, 18-24: Իրական աստվածաշնչյան հավատքը ավելին է, քան ներքին արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ.13:20-22,31-32):

Բ. ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ Կիրառությունը

1. *eis* նշանակում է /դեպի/ «մեջ»: Այս յուրօրինակ քերականական կառուցվածքը շեշտադրում է հավատացյալների հավատքը՝ վստահությունը, որ դնում են Հիսուսի մեջ՝ ա. Նրա անվան մեջ (Հովհ.1:12; 2:23; 3:18; 1 Հովհ.5:13)  
բ. Նրա մեջ (Հովհ.2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45, 48; 12:37,42; Մատթ.18:6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ.1:8)  
գ. Իմ մեջ (Հովհ.6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)  
դ. Որդու մեջ (Հովհ.3:36; 9:35; 1 Հովհ.5:10)  
ե. Հիսուսի մեջ (Հովհ.12:11; Գործք 19:4; Գաղ.2:16)  
զ. Լույսի մեջ (Հովհ.12:36)  
է. Աստծո մեջ (Հովհ.14:1)
2. *en* նշանակում է «մեջ», ինչպես Հովհ.3:15; Մարկ.1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա» ինչպես Մատթ.27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռոմ.4:5, 24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ.2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ, ինչպես Գաղ.3:6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ. 3:23; 5:10
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ որ» տալիս է այն բովանդակությունը, թե ինչին հավատալ՝  
ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ.6:69)  
բ. Հիսուսը ԵՍ ԵՄն է (Հովհ.8:24)  
գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ.10:38)  
դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ.11:27; 20:31)  
ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ.11:27; 20:31)  
զ. Հիսուսը ուղարկվել է Հոր կողմից (Հովհ.11:42; 17:8,21)  
է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ.14:10-11)  
ը. Հիսուսը Հորից եկավ (Հովհ.16:27,30)  
թ. Հիսուսը իրեն հավասարեցրեց Հոր ունեցած Ուխտի անվան հետ՝ «ԵՍ ԵՄ» (Հովհ.8:24; 13:19)  
ժ. Մենք նրա հետ ենք ապրելու (Հռոմ.6:8)  
ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ. 4:14)

IV. Եզրակացություն.

Ա. Աստվածաշնչյան հավատքը պատասխանն է աստվածային խոսքին՝ խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (այսինքն՝ Հովհ.6:44,65), սակայն այս աստվածային կապի մի մասը մարդկանց կողմից պատասխանելու անհրաժեշտությունն է (տես՝ Հատուկ Թեմա . Ուխտ)՝

5. ապաշխարությամբ (տես՝ Հատուկ Թեմա . Ապաշխարություն)
6. հավատքով վստահությամբ (տես՝ Հատուկ Թեմա . Հավատք, հավատալ կամ վստահել)
7. հնազանդությամբ
8. հարատևությամբ (տես՝ Հատուկ Թեմա . Հարատևություն)

Բ. Աստվածաշնչյան հավատքը դա՝

4. անձնական փոխհարաբերություն է (ներքին հավատք)
5. աստվածաշնչյան ճշմարտության հաստատումն է (հավատք Աստծո հայտնության վրա, այսինքն՝ Սուրբ Գիրքը)
6. պատշաճ հնազանդ պատասխան Խոսքին (ամենօրյա հավատարմություն)

Աստվածաշնչյան հավատքը երկնքի տոմս չէ կամ էլ ապահովագրության միջոց: Այն անձնական փոխհարաբերություն է: Մա է արարչագործության և մարդկության Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու նպատակը (տես՝ Ծննդ.1:26-27): Խնդիրը «մտերմությունն» է: Աստված ցանկանում է հաղորդակցություն և ոչ թե ինչ-որ աստվածաբանական մոտեցումներ: Բայց սուրբ Աստծո հետ հաղորդակցությունը պահանջում է, որ Աստծո զավակները ցուցաբերեն «ընտանեկան» վարքագիծ (այսինքն՝ սրբություն, տես՝ Ղևտ.19:2; Մատթ.5:48; 1 Պետ.1:15-16): Անկումը (տես՝ Ծննդոց 3) ազդեց մեր ճիշտ կերպով արձագանքելու կարողության վրա: Ուստի, Աստված մեր կողմից գործեց (տես՝

Եզեկ.36:27-38), մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի» տալով, որը մեզ հնարավորություն է տալիս Նրա հետ հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել և հնազանդվել: Բոլոր երեքն էլ կարևոր են: Բոլոր երեքն էլ պետք է պահպանվեն: Նպատակը Աստծուն ճանաչելն է (թե՛ հունարեն և թե՛ եբրայերեն իմաստով) և Նրա բնավորությունը մեր կյանքում արտացոլելը: Հավատքի նպատակը ինչ-որ մի օր երկինք հասնելը չէ, այլ ամեն օր Քրիստոսի նման լինելը:

Գ. Մարդկային հավատարմությունը Աստծո հետ փոխհարաբերության հետևանքն է (ՆԿ) և ոչ թե հիմքը (ՀԿ). մարդկության հավատքը Նրա հավատարմությանը, մարդկության վստահությունը Նրա վստահելիությանը: Փրկության վերաբերյալ ՆԿ-ի կենտրոնական կարծիքն այն է, որ մարդիկ պետք է նախաձեռնող Աստծո՝ Քրիստոսի միջոցով ցուցաբերված շնորհքին և ողորմությանը սկզբից պատասխանեն և հարատևեն դրա մեջ: Նա է սիրել, Նա է ուղարկել, Նա է ապահովել, իսկ մենք պետք է պատասխանենք հավատքով և հավատարմությամբ (տես՝ Եփ.2:8-9 և 10):

Հավատարիմ Աստված ուզում է հավատարիմ ժողովուրդ, որպեսզի Իրեն հայտնի անհավատ աշխարհին և նրանք անձնապես հավատան Իրեն:

**47:30 «դու ինձ Եգիպտոսից դո՛ւրս հանիր»** Սա Ելիցի մասին կանխատու էր: Հնարավոր է Հակոբը գիտեր այդ մասին ընտանեկան ավանդույթներից, որը գալիս էր Աբրահամից (տես՝ Ծննդ. 15:12-16): Նաև կարծես թե սա ակնարկում է Ծննդ. 48:21-ը: Հակոբը գիտեր, որ եբրայեցիների ճակատագիրը Եգիպտոսում երկարաժամկետ մնալու մեջ չէր:

**47:31 «Երդվի՛ր ինձ»** Հակոբը շատ համոզիչ էր՝ ազդեցիկ (BDB 989, KB 1396, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), որ Եգիպտոսում չմնալու համար խնդրեց իր որդուն ոչ միայն երդվել՝ ձեռքը երանքի տակ դնելով, այլ նաև բառացի երդվելով:



**NASB, JPSOA  
NKJV, NRSV  
LXX  
Peshitta  
REB**

**«մահճակալի սնարին»  
«մահճակալի սնարի վրա»  
«իր գավազանի ծայրին հենվելով»  
«իր գավազանի գլխին հենվելով»  
«իր մահճակալի սնարի կողքին»**

«Մահճակալ» եբրայերեն բառը *mittah* է (BDB 641) և «գավազան» բառը՝ *matteh* (BDB 641): Ուշադրություն դարձրեք, որ այստեղ բաղաձայնի տարբերություն չկա, այլ ձայնավորի: Շատ քննարկումներ են եղել այս թարգմանության շուրջ Մագորեթիկ Տեքստում: Սեպտուագինտան (տես՝ Եբր. 11:21, որը հետևում է LXX-ին) փոխում է այս փոխաբերությունը «գավազանի գլխին»: Սա բավականին հավանական է թվում, քանի որ գավազանը իշխանության սիմվոլն էր համարվում հին Եգիպտոսում, հետևաբար, սա կարող էր նշանակել, որ Հակոբը խոնարհեց իր ճակատը և հավելց Հովսեփի գավազանին: Սա կարող է խորհրդանշել՝

1. Հակոբն իրականացնում է Ծննդ. 37:6-9-ի Հովսեփի երազը
2. Հակոբի հարգանքը Հովսեփի հանդեպ, որ իրականացրեց Աստծո ծրագիրը իր ընտանիքի փրկության հարցում
3. Հակոբի կողմից Հովսեփի հեղինակությունը ընդունելու ժեստ (տես՝ 48:2; 3 Թագ. 1:47):

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր Հովսեփն ուզում, որ իր ընտանիքը բնակվեր Գեսեմում:
2. Ինչո՞ւ Հովսեփը Փարավոնի մոտ մտնելիս իր եղբայրների միջից ընտրեց միայն հինգ հոգու:
3. Ինչո՞ւ է Հակոբը հ.9-ում այդքան մեղամաղձոտ:
4. Ինչո՞ւ է Հակոբը Փարավոնին երկու անգամ օրհնում:
5. Ինչո՞ւ է հ. 11-ում գտնվող Ռամսես անունը Ելիցի հետագա թվագրությանը սատարում:
6. Արդյո՞ք Հովսեփը սովի այս տարիներին դաժան վարվեց Եգիպտոսի ժողովրդի հանդեպ:
7. Ինչո՞ւ Հակոբը կամեցավ, որ Հովսեփը երկու տարբեր կերպերով երդվի իրեն, որ Եգիպտոսից դուրս կհանի իր աճյունը:



**ԾՆՆԴՈՑ 48**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Իսրայելի վերջին օրերը	Հակոբը օրհնում է Հովսեփի որդիներին	Հակոբը որդեգրում է և օրհնում Եփրեմին ու Մանասեին (47:27-48:22)	Հակոբը օրհնում է Եփրեմին ու Մանասեին	Հակոբը որդեգրում է Հովսեփի երկու որդիներին և օրհնում նրանց
48:1-7	48:1-7	48:1-7	48:1-4 48:5-7	48:1-6 48:7
48:8-16	48:8-16	48:8-16	48:8 48:9ա 48:9բ-12 48:13-16	48:8-12 48:13-16
(15-16)	(15-16)	(15-16)	(15-16)	(15-16)
48:17-22	48:17-22	48:17-22	48:17-18 48:19 48:20	48:17-19 48:20
(20)		(20)	(20) 48:21-22	(20) 48:21-22

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեգր մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 48:1-7**

<sup>1</sup>Եվ եղավ, որ այս բաներից հետո Հովսեփին ասացին. «Ահա քո հայրը հիվանդ է». և նա վերցրեց իր երկու որդիներին՝ Մանասեին ու Եփրեմին իր հետ: <sup>2</sup>Եվ Հակոբին պատմեցին ու ասացին. «Ահա քո որդի Հովսեփը քեզ մոտ է գալիս». և Իսրայելն ուժերը հավաքեց ու նստեց անկողնու վրա: <sup>3</sup>Եվ Հակոբն ասաց Հովսեփին. «Վմենակարող Աստվածը Լուզում, Քանանի երկրում, ինձ երևաց ու ինձ օրհնեց. <sup>4</sup>և ասաց ինձ. «Ահա քեզ կաճեցնեմ և կբազմացնեմ. և քեզ ժողովրդի բազմություն կդարձնեմ և այս երկիրը քեզանից հետո քո սերնդին կտամ՝ որպես հավիտենական սեփականություն: <sup>5</sup>Եվ հիմա քո երկու որդիները՝ Եփրեմն ու Մանասեն, որ ծնվել են քեզ համար Եգիպտոս երկրում՝ իմ գալուց առաջ, նրանք իմն են, Ռուբենի ու Շմալոնի նման իմն են: <sup>6</sup>Եվ նրանցից հետո քո ծնած որդիները քեզ լինեն, իրենց ժառանգության մեջ իրենց եղբայրների անուններով կոչվեն: <sup>7</sup>Եվ երբ ես Փաղանից էի գալիս, Ռաբելը մեռավ ինձ մոտ՝ Քանանի երկրում, այն ճանապարհին, որտեղից քիչ է մնում մինչև Եփրաթա հասնելը, և նրան այնտեղ՝ Եփրաթայի, այսինքն՝ Բեթլեհեմի ճանապարհին թաղեցի»:

**48:1 «Հովսեփին ասացին»** Ռաբբիներն ասում են, որ Եփրեմը կանոնավոր կերպով սովորում էր իր պապիկի՝ Հակոբի մոտ և նա էր այն անձը, որ Հովսեփին ասաց, սակայն սա բնորոշ է ռաբբիական մեկնություններին, որոնք հիմնված են ենթադրության վրա, և ոչ թե համատեքստային կամ տեքստային տեղեկության: Միշտ ազնիվ է հարցնել նրանց, ովքեր պնդում են, որ աստծուց են խոսում. «Յո՛ւյց տուր ինձ, որտեղ է գրված Սուրբ Գրքում»:

❖ **«և նա վերցրեց իր երկու որդիներին՝ Մանասեին ու Եփրեմին»** Այս տղաները կիսով չափ եգիպտացի էին, սակայն ըստ երևույթին սա հարթակ է պատրաստում նահապետական օրհնության համար (այսինքն՝ որդեգրության), որը նրանց ներգրավելու էր որպես լիարժեք ժառանգներ:

**48:3 «Հակոբն ասաց Հովսեփին. «Վմենակարող Աստվածը»** Սա Աստծո համար նահապետների կողմից կիրառվող ավանդական անունն է (տես՝ Ելից 6:3): Դա *Էլ Շադայն է. Էլ Աստծո համար օգտագործվող ընդհանուր անունը* «ուժեղ լինել» արմատից և *Շադայ*՝ «կնոջ կուրծք» արմատից, որը կարծես թե նշանակում է «ամենաբավ»: Տե՛ս ամբողջական գրառումը 12:1-ի Հատուկ Թեմայում:

❖ **«Լուզում, Քանանի երկրում, ինձ երևաց ու ինձ օրհնեց»** Լուզը Բեթել քաղաքի քանաներեն անունն է (տես՝ Ծննդ. 28:17,19; 35:9-15): Ըստ երևույթին ինչպես ՅԱՀՎԵՆ օրհնել էր Հակոբին, այժմ էլ Հակոբը պատրաստվում էր օրհնել Հովսեփի որդիներին: Հետաքրքիր է նշել, որ Հովսեփի պես աստվածավախ մարդուն ՅԱՀՎԵՆ երբեք չհայտնվեց այնպես ինչպես Նահապետներին (տես՝ 46:2-ի գրառումը), որը ցույց է տալիս, որ նույնիսկ Հովսեփի վերաբերյալ գրականական այս բաժինը իրականում ներառված է Հակոբի կյանքի ավելի ընդարձակ բաժնի մեջ:

**48:4 «քեզ կաճեցնեմ և կբազմացնեմ»** Այստեղ առկա են երեք այն հատուկ օրհնությունները, որոնք կապված են Ծննդոց 12:1-3-ում Աբրահամին տրված օրհնությունների հետ՝ (1) Ես քեզ կաճեցնեմ և կբազմացնեմ, (2) Ես քեզ մեծ ժողովրդի բազմություն կդարձնեմ, և (3) Ես քո սերունդներին երկիր կտամ: Հետաքրքիր է, որ Հակոբը 35:11-ի մի ենթամաս բաց է թողնում (տող 5), «և թագավորներ դուրս կգան քեզնից», քանի որ ըստ երևույթին այդ առանձնահատկությունը Հուդային էր պատկանում (տես՝ 49:10): Բարգավաճումն ու առատությունը հատկանշական են լինելու նրա ընտանիքին, սակայն թագավորները դուրս են գալու Հուդայից (այսինքն՝ Մեսիան, Եսայի 9:6-7, Միքիա 5:2):

❖ **«որպես հավիտենական սեփականություն»** Սա եբրայենի *'olam* տերմինն է: Այն պետք է թարգմանել ըստ համատեքստի: Եթե հիշում ենք գերության ժամանակաշրջանը, պարզ է, որ այս տերմինը չի կարող նշանակել հավերժություն: Տե՛ս Հատուկ Թեմա 13:15-ում:

**48:5 «նրանք իմն են, Եփրեմն ու Մանասեն իմն են լինելու, Ռուբենի և Շմալոնի նման»** Հետաքրքիր է, որ հ. 1-ում Մանասեն նշվում է Եփրեմից առաջ, սակայն հ. 5 և հ. 14-ից սկսած Եփրեմը նշվելու է Մանասեից առաջ: Սա կարծես թե ծրագրված էր Հակոբի կողմից (տես՝ հ. 13-14): Եփրեմն ու Մանասեն պատրաստվում են փոխարինել Շմալոնին և Ռուբենին որպես առաջնեկ՝ Հակոբի համար որպես իրական ժառանգներ (տես՝ 1 Մնաց. 5:1): Եփրեմը, որ կրտսերն էր, լինելու էր այդ երկուսի մեջ ավելի գորեղ: Սա չի ազդելու ընտանիքում Հուդայի առաջնորդության վրա (տես՝ 1 Մնաց. 5:2): Սա ինչքան որ

խրատ էր Ռուբենի (տես՝ 35:22; 49:4; 1 Մնաց. 5:1) և Շմալոնի համար (տես՝ 34:25; 49:5-7), այնքան էլ Հովսեփի որդիներին ժառանգության մեջ ներգարվելու համար էր: Ոչ միայն այստեղ առկա է ակնկալիքների հետադարձում Մանասեի ու Եփրեմի միջև (ինչպես որ եղել էր Եսալի և Հակոբի հետ), այլ այս նույն ակնկալիքների հակադարձումը տեղի է ունենալու Հովսեփի և Հուդայի միջև (տես՝ 49:8-12): Ընտանիքի համար Հովսեփը հանդիսանում էր ակնհայտ ընտրություն, սակայն ընտրությունն Աստծուն է պատկանում, ոչ թե մշակույթին (այսինքն՝ հիշեք Դավթին և նրա եղբայրներին):

**48:6 «Եվ նրանցից հետո քո ծնած որդիները քեզ կլինեն»** Սա ակնարկում է, որ Հովսեփը ունեցել է ավելի շատ երեխաներ, և եթե ունեցել է, ապա մենք չունենք նրանց վերաբերյալ ոչինչ Աստվածաշնչում:

**48:7** Սա Հովսեփի մոր մասին պատմական ամփոփում է: Ռաբելի մահը ցավոտ էր և անսպասելի Հակոբի համար: Նա Ռաբելի առաջին որդուց՝ Հովսեփից սերված այս երկու թոռնիկներին ինչ որ տեղ դիտարկում էր որպես հենց Ռաբելից ծնվածների: Նրանք համարվելու էին Ռաբելի լիարժեք «որդիները» (ժառանգության հարցում): Նա ուրախ կլիներ այս բանի համար նույնիսկ հանդերձյալ կյանքում:

**NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 48:8-16**

<sup>8</sup>Եվ Իսրայելը տեսավ Հովսեփի որդիներին և ասաց. «Ո՛վ են սրանք»: <sup>9</sup>Եվ Հովսեփն ասաց իր հորը. «Իմ որդիներն են, որ Աստված այստեղ ինձ տվեց»: Եվ նա ասաց. «Խնդրե՛մ, ինձ մոտ բեր նրանց, որ օրհնեմ»: <sup>10</sup>Իսրայելի աչքերը ձերույթունից ծանրացել էին, չէր կարողանում տեսնել. և նրանց մոտեցրեց նրան, և նա համբուրեց նրանց և գրկեց նրանց: <sup>11</sup>Եվ Իսրայելն ասաց Հովսեփին. «Ես քո երեսը տեսնելու հույս չունեի, և ահա Աստված ինձ քո սերունդն էլ ցույց տվեց»: <sup>12</sup>Հովսեփը նրանց իջեցրեց նրա ծնկներից և իր երեսը մինչև գետին խոնարհեցրեց: <sup>13</sup>Եվ Հովսեփն առավ նրանց երկուսին, Եփրեմին իր աջ ձեռքով դեպի Իսրայելի ձախ կողմը, իսկ Մանասեին իր ձախ ձեռքով Իսրայելի աջ կողմը, և մոտեցրեց նրան: <sup>14</sup>Եվ Իսրայելն իր աջ ձեռքն մեկնեց և Եփրեմի գլխին դրեց, որ փոքրն էր, և իր ձախ ձեռքը՝ Մանասեի գլխին. դիտմամբ փոխեց իր ձեռքերը, որովհետև Մանասեն անդրանիկն էր:

<sup>15</sup>Եվ օրհնեց Հովսեփին և ասաց.

«Այն Աստվածը, Ում առջև քայլեցին իմ հայրերը՝ Աբրահամը և Իսահակը,

Այն Աստվածը, Ով ինձ խնամում է, քանի դեռ կամ՝ մինչև այսօր,

<sup>16</sup>Այն Հրեշտակը, որ ինձ բոլոր չարիքներից փրկեց,

Թող օրհնի այս տղաներին,

Եվ իմ անունը և իմ հայրերի՝ Աբրահամի ու Իսահակի անունը

Նրանց վրա կանչվի,

Եվ երկրի մեջ թող խիստ բազմանան»:

**48:8 «Եվ/երբ Իսրայելը տեսավ Հովսեփի որդիներին»** Հ. 10-ից իմանում ենք, որ նրա՝ Հակոբի տեսողությունը շատ թույլ էր, սակայն լիովին չէր կուրացել: Հակոբը (հիշելով իր գործած խորամանկությունը հոր հանդեպ) ուզում է համոզվել, թե ում էր օրհնելու:

**48:9 «Հովսեփն ասաց իր հորը. «Իմ որդիներն են, որ Աստված այստեղ ինձ տվեց»** Ռաբբիներն ասում են, որ Հովսեփը պետք է իր ամուսնական վկայականը ցույց տար Հակոբին՝ համոզելու իր հորը, որ իր կինը դարձի էր եկել: Սակայն ինձ թվում է, որ այս համարը ընդգծում է, որ Հովսեփն իր կյանքի բոլոր բնագավառներում տեսնում էր Աստծո ձեռքը:

❖ **«Խնդրե՛մ, ինձ մոտ բեր նրանց, որ օրհնեմ»** Երկու ԲԱՅԵՐՆ են՝

1. բեր/վերցրու, BDB 542, KB 534, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. օրհնեմ, BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

«Օրհնել» տերմինը ավելի համապարփակ և ավելի աստվածաբանական իմաստ ունի այստեղ: Այն բովանդակում է այս երկու թոռնիկների փոխաբերական որդեգրման իմաստը, որպես Հակոբի սեփական որդիների պես ժառանգության մեջ լիիրավ որդիների: Այժմ ունենք տասներեք ցեղ:

**48:10 «նա համբուրեց նրանց և գրկեց նրանց»** Սա հանդիսանում էր հատուկ կապ, ինչպես նաև իրավական (տես՝ հ. 12) փորձառություն:

**48:12**

NASB, NRSV  
NKJV

«իջեցրեց նրա ծնկներից»  
«բերեց նրա կնկների մոտ»

Սա որդեգրման ծես էր, որ ակնարկվում է հ.5-ում: Երեխաներին գոտկատեղից ցած մասով անցկացնելը կարծես թե որդեգրման ընթացակարգի այս հնագույն արարողության ձևն էր (այսինքն՝ ինչպես որ կանայք ծննդաբերում են իրենց ձեռքերի միջև, 30:3; Հոր 3:17, JB ծանոթագրություն, էջ՝ 73):

**48:14 «Եվ Իսրայելն իր աջ ձեռքը մեկնեց և Եփրեմի գլխին դրեց, որ փոքրն էր»** Սա է պատճառը թե ինչու նա խաչաձևեց իր ձեռքերը, որպեսզի աջ ձեռքը՝ գերակայության ձեռքը, օրհներ ավելի փոքր որդուն, որը գերիշխելու էր իր եղբոր վրա (ինչպես Հակոբն ու Եսավը): Մշակութորեն ակնկալվող տարբերակի հակդարձումը (տես՝ հ. 18) ցույց է տալիս Աստծո վերահսկողությունն ու ինքնիշխանությունը (տես՝ հ. 19): Սա առաջին աստվածաշնչյան պատմությունն է, որտեղ օրհնությունը կապված է ձեռնադրության հետ: Այս պահից սկսած այն դառնալու էր սովորական ծիսակարգ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱԾՆՉՈՒՄ**  
**SPECIAL TOPIC: LAYING ON OF HANDS IN THE BIBLE**

Աստվածաշնչում անձնական ներգրավվածության այս ժեստը մի քանի տարբեր կերպերով է կիրառվում.

1. Երդում տալիս (այսինքն՝ ձեռքը ազդի տակ դնելով [Ծննդ.24:2,9; 47:29])
2. Ընտանեկան առաջնորդությունը փոխանցելիս (տես՝ Ծննդ.48:14,17,18)
3. Չոհարեղծվող կենդանու մահվան հետ որպես տվյալ անձի փոխանորդ նույնականացվելիս ա. քահանաները (տես՝ Ելից 29:10,15,19; Ղևտ.16:21; Թվոց 8:12)  
բ. ծառայող մարդիկ (տես՝ Ղևտ.1:4; 3:2,8; 4:4,15,24; 2 Մնաց.29:23)
4. Հատուկ ծառայությամբ կամ հանձնարարությամբ Աստծուն ծառայելու համար մարդկանց առանձնացնելիս՝ գատելիս (տես՝ Թվոց 8:10; 27:18,23; 2Օր.34:9; Գործք 6:6; 13:3; 1 Տիմ.4:14; 5:22; 2 Տիմ.1:6)
5. Որևէ մեղավորի իրավաբանական քարկոծմանը մասնակցելիս (տես՝ Ղևտ.24:14)
6. մեկի բերանին դրված ձեռքը մատնանշում է լռություն կամ լուռ համաձայնություն (տես՝ Դատ.18:19; Հոր 21:5; 29:9; 40:4; Միք.7:16)
7. Իր սեփական գլխի վրա ձեռքը դնելը նշանակում է վիշտ, սուգ (2 Թագ.13:19)
8. Առողջության, երջանկության և աստվածավախության համար օրհնություն ընդունել է (տես՝ Մատթ.19:13,15; Մարկ.10:16)
9. Կապված է ֆիզիկական բժշկության հետ (տես՝ Մատթ.9:18; Մարկ.5:23; 6:5; 7:32; 8:23; 16:18; Ղուկ.4:40; 13:13; Գործք 9:17; 28:8)
10. Սուրբ Հոգին ընդունելիս (տես՝ Գործք 8:17-19; 9:17; 19:6)

Գոյություն ունի եկեղեցական առաջնորդների նշանակումը (այսինքն՝ ձեռնադրությունը) հիմնավորող պատմականորեն կիրառված սուրբգրային հատվածների միատեսակության զարմանալի բացթողում՝ պակաս:

1. Գործք 6:6-ում Առաքյալներն էին, որ ձեռնադրեցին Յոթին տեղական ծառայության համար
2. Գործք 13:3-ում մարգարեներն ու վարդապետներն էին, որ ձեռնադրեցին Բառնաբասին և Պողոսին միսիոներական ծառայության համար:
3. 1 Տիմ.4:14-ում տեղի երեցներն էին, որ ներգրավված էին Տիմոթեոսի սկզբնական կոչման և պաշտոնադրման մեջ
4. 2 Տիմ.1:6-ում Պողոսն է ձեռնադրում Տիմոթեոսին:

Այս տարբերությունն ու անորոշությունը պատկերում է առաջին դարի եկեղեցում կազմակերպվածության պակասը: Վաղ եկեղեցին շատ ավելի արագ ան էր գրանցում և կանոնավոր կերպով կիրառվում էին հավատացյալների հոգևոր պարգևները (տես՝ 1 Կորնթ.14): ՆԿ-ը պարզապես գրված չէ պաշտպանելու կամ սահմանելու կառավարման օրինակ (տես՝ Գործք 15-ում բազմազանությունը) կամ ձեռնադրման ընթացակարգ: Եկեղեցու կազմակերպչական ավանդույթները անհրաժեշտ են, սակայն ոչ սուրբգրային: Առաջնորդների աստվածավախությունը շատ ավելի կարևոր է, քան առաջնորդելու ձևերը (այսինքն՝ քաղաքականությունը):

**48:15-16** Հ. 15-16 Ծննդոց 49-ում արձանագրված ընտանեկան օրհնությանը լրացում են հանդիսանում: Հակոբի կողմից իր ամբողջ ընտանիքին վերջին օրհնությունը տալիս նա չի նշում Հովսեփի երկու

որդիներին իրենց անուններով (տես՝ 49:22-26): Այս օրհնությունը բանաստեղծական տեսքով է (ինչպես և հ. 20): Նկատել՝ Աստծո եռակի անվանումը: Աստված որպես (1) նահապետական Աստված, (2) Հովիվ, և (3) Հրեշտակ: Ակնհայտ է, որ հ. 16-ի Հրեշտակը պետք է որ լինի Տիրոջ Հրեշտակը, որը ֆիզիկապես հայտնվում էր (տես՝ Ծննդ. 16:7-13; 18:2,16,17-21,22-23; 22:11-15; 31:11,13; 48:15-16: Տե՛ս Հատուկ Թեմա 12:7-ում):

**48:15 «Եվ օրհնեց Հովսեփին»** Ըստ երևույթին այս երկու տղաները (հ. 16) ընդունում էին Հովսեփի նահապետական օրհնությունը (հ. 15): Ծննդոց 49-ից թվում է, թե Հովսեփը ստանում է առաջնեկի ժառանգության կրկնակի բաժինը (տես՝ 49:22-26), մինչև Հուդան պետք է ստանար Մեսիական տոհմաձյուղը (տես՝ 49:8-12):

❖ **«քայլեցին»** Այս ԲԱՅԸ (BDB 229, KB 246) հաճախ հավատքի կյանքի փոխաբերություն է հանդիսանում (տես՝ 5:22,24; 6:9; 24:40; Եփես. 4:1,17; 5:2,15): Աստված դա պահանջում է (տես՝ 17:1): Աստված ուզում է մի ժողովուրդ, որը արտացոլում է Իր բնավորությունը այս մեղավոր և կարիքի մեջ գտնվող աշխարհին (այսինքն՝ ազգերին): Նահապետները, իրենց բոլոր թերություններով հանդերձ, ապրեցին ՅԱՀՎԵԻ առջև հնազանդությամբ, զոջումով և հավատարմությամբ:

Այլ կերպ ասած, հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկություններ: Մենք փրկված ենք, ոչ թե պարզապես մեռնելուց հետո Աստծո հետ լինելու համար, այլ հիմա էլ Աստծո հետ լինելու: Աստվածաշնչյան հավատքի նպատակը հիմա Քրիստոսի պես լինելն է (այսինքն՝ Հռոմ. 8:28-29; Եփես. 1:4; 2:10; 4:13): Աստվածաշնչի ուխտերը ունեն պարտավորություններ՝

1. հավատք (սկզբնական և ամենօրյա)
2. ապաշխարություն (սկզբնական և ամենօրյա)
3. հնազանդություն (ապրելակերպ)
4. կյանքի ընթացքում հարատևություն

Սրանք ամփոփվում են 2 Օրինաց 8:6; 19:9; 26:17; 28:9; 30:16-ում:

**48:16 «որ ինձ բոլոր չարիքներից փրկեց»** Սա *Go'el* (BDB 145 I, KB 169, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Ելից 6:6; 15:13) տերմինն է, որը կիրառվում է ազգականին ազատողի համար (Հռութ 4:6) կամ արյան վրիժառուի համար (տես՝ 2 Օր. 19:6; Հեսու 20:3): Սա վերաբերում է այն մտերիմ հարազատին, որը վրեժ է լուծում կամ վերադարձնում է մեկին իր գերությունից, ֆինանսական ճգնաժամից կամ պատերազմի ժամանակ գերությունից է ազատում: Այս տերմինը նաև հանդիպում է Հռութ 4:6, Թվոց 5:8, 3 Թագ. 16:11, Հոր 19:25-ում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ/ՓՐԿԱԳՆԵԼ**  
**SPECIAL TOPIC: RANSOM/REDEEM**

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Հիմնականում Եբրայերենում կան երկու օրինական տերմիններ, որոնք փոխանցում են այս հասկացությունը:

1. *Ga'al* (BDB 145 I, KB 169 I), որը սովորաբար նշանակում է «վճարված գնի միջոցով ազատել»: *go'el* տերմինի մի ձևը հավելում է այս հասկացությանը անձնական միջնորդության նշանակություն, սովորաբար ընտանիքի անդամի կողմից (այսինքն՝ հարազատ՝ բարեկամ փրկագնող): Առարկաներ, կենդանիներ, հողատարածք կամ բարեկամներ (տես՝ Հռութ 4:14; Եսայի 29:22) ետ գնելու իրավունքի մշակությամբ այս գործառույթը (տես՝ Ղևտացիների 25,27) աստվածաբանորեն փոխանցված է ՅԱՀՎԵԻ կողմից՝ Իսրայելին Եգիպտոսի ազատագրումից (տես՝ Ելից 6:6; 15:13; Սաղմ. 74:2; 77:15; Երեմ. 31:11): Նա դառնում է «Փրկիչը» (տես՝ Հոր 19:25; Սաղմ. 19:14; 78:35; Առակ. 23:11; Եսայի 41:14; 43:14; 44:6,24; 47:4; 48:17; 49:7,26; 54:5,8; 59:20; 60:16; 63:16; Երեմ. 50:34):
2. *Padah* (BDB 804, KB 911), որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»:
  - ա. առաջնեկների ազատումը (Ելից 13:13-15 և Թվոց 18:15-17)
  - բ. ֆիզիկական ազատագրումը՝ հակադրված հոգևոր ազատագրման հետ (Սաղմ. 49:7, 8,15)
  - գ. ՅԱՀՎԵԻ փրկելու է Իսրայելին իրենց մեղքից և ապստամբությունից (Սաղմ. 130:7-8)

Բ. Աստվածաբանական հասկացությունը ներառում է մի քանի փոխկապակցված երևույթներ.

1. Առկա է կարիքը, կապանքը, գրկանքը, բանտարկությունը:
  - ա. ֆիզիկական
  - բ. սոցիալական
  - գ. հոգևոր (տես՝ Սաղմ. 130:8)
2. Ազատության, ազատ արձակման և վերականգնման համար պետք է գին վճարվի՝
  - ա. Իսրայել ազգի համար (տես՝ 2 Օր. 7:8)
  - բ. անհատի համար (տես՝ Հոր 19:25-27; 33:28; Եսայի 53)
3. Ինչ-որ մեկը պետք է գործի որպես միջնորդ և օգնական: *ga'al* տերմինում այս մեկը սովորաբար ընտանիքի որևէ անդամ է կամ մտերիմ բարեկամ (այսինքն՝ *go'el*, BDB 145):
4. ՅԱՀՎԵՆ հաճախ Իրեն բնութագրում է ընտանեկան տերմիններով.
  - ա. Հայր
  - բ. Ամուսին
  - գ. Մտերիմ Բարեկամ Փրկիչ/ Վրեժխնդրության փրկագնումը ապահովվեց ՅԱՀՎԵՆ անձնական ներգրավվածությամբ, զինը վճարվեց և փրկությունը իրականություն դարձավ:

## II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Գոյություն ունեն մի քանի տերմիններ, որոնք փոխանցում են աստվածաբանական նշանակությունը:

1. *Agorazō* (տես՝ 1 Կորնթ. 6:20; 7:23; 2 Պետ. 2:1; Հայտն. 5:9; 14:3-4): Սա առևտրային տերմին է, որն արտահայտում է ինչ-որ բանի համար վճարված գին: Մենք արյամբ զնված ժողովուրդ ենք, և այլևս ինքներս մեր կյանքը չենք վերահսկում: Մենք պատկանում ենք Զրիստոսին:
2. *Exagorazō* (տես՝ Գաղ. 3:13; 4:5; Եփես. 5:16; Կող. 4:5): Սա նույնպես առևտրային տերմին է: Այն արտացոլում է մեզ համար Հիսուսի փոխանորդական մահը: Հիսուսը կրեց գործերով հիմնավորված օրենքի «անեծքը» (այսինքն՝ Մովսիսական Օրենքի, տես՝ Եփես. 2:14-16; Կող. 2:14), որոնք մեղավոր մարդիկ չկարողացան կատարել: Նա կրեց անեծքը (տես՝ 2 Օր. 21:23) մեր բոլորի համար (տես՝ Մարկ. 10:45; 2 Կորնթ. 5:21): Հիսուսով Աստծո արդարությունը և սերը հասնում են կատարյալ ներման, ընդունելության և մուտքի իրավունքի:
3. *Luō*, «ազատել»
  - ա. *Lutron*, «վճարված գին» (տես՝ Մատթ. 20:28; Մարկ. 10:45): Սրանք հզոր խոսքեր են, որ հնչել են Հիսուսի բերանից Իր գալստյան նպատակի մասին՝ աշխարհի Փրկիչը լինելու, վճարելով մեղքի պարտքը, որն Իրենը չէր (տես՝ Հովի. 1:29):
  - բ. *Lutroō*, «ազատ արձակել»
    - (1) Փրկել Իսրայելը, Ղուկաս 24:21
    - (2) Իր անձը տալ, որպեսզի ազատի և մաքրի մի ամբողջ ժողովրդի, Տիտոս 2:14
    - (3) Անմեղ փոխանորդ լինել, 1 Պետ. 1:18-19
  - գ. *Lutrosis*, «փրկագնում», «ազատագրում» կամ «ազատություն տալ»
    - (1) Չաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Ղուկաս 1:68
    - (2) Աննայի փառաբանությունն Աստծուն Հիսուսի համար, Ղուկաս 2:38
    - (3) Հիսուսի ավելի լավ և մեկ անգամ մատուցած զոհը, Եբր. 9:12
4. *Apolytrōsis*
  - ա. փրկություն Երկրորդ գալստյան ժամանակ (տես՝ Գործք 3:19-21)
    - (1) Ղուկաս 21:28
    - (2) Հռոմեացիների 8:23
    - (3) Եփեսացիների 1:14; 4:30
    - (4) Եբրայեցիների 9:15
  - բ. Փրկությունը Զրիստոսի մահվան մեջ
    - (1) Հռոմեացիների 3:24
    - (2) 1 Կորնթացիների 1:30
    - (3) Եփեսացիների 1:7

(4) Կողոսացիների 1:14

5. *Antilytron* (տես՝ 1 Տիմ. 2:6): Սա շատ կարևոր տեքստ է (ինչպես և Տիտոս 2:14), որը կապում է ազատագրումը խաչի վրա Հիսուսի փոխանորդական մահվան հետ: Նա է միակ և անկրկնելի ընդունելի գոհը, Մեկը, որ մահացավ «բոլորի» համար (տես՝ Հովհ. 1:29; 3:16-17; 4:42; 1 Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9; 1 Հովհ. 2:2; 4:14):

Բ. Աստվածաբանական հասկացությունը ՆԿ-ում:

1. Մարդկությունը գերի է դարձել մեղքին (տես՝ Հովհ. 8:34; Հռոմ. 3:10-18; 6:23):
2. Մարդկության մեղքի կապանքը բացահայտվեց ՀԿ-յան Մովսիսական Օրենքի (տես՝ Գաղատացիների 3) և Հիսուսի Լեռան Քարոզի միջոցով (տես՝ Մատթեոս 5-7): Մարդկային գործերը դարձան մահվան դատավճիռ (տես՝ Կող. 2:14):
3. Հիսուսը՝ Աստծո անմեղ Գառը, եկել է և մահացել մեր փոխարեն (տես՝ Մարկ. 10:45; Հովհ. 1:29; 2 Կորնթ. 5:21): Մենք գնվել ենք մեղքից, որպեսզի ծառայենք Աստծուն (տես՝ Հռոմեացիների 6):
4. ՅԱՀՎԵԻՆ և Հիսուսին նշելով որպես «մտերիմ բարեկամ», որոնք գործում են մեզ համար: Սա շարունակում է ընտանեկան տերմիններով ներկայացված փոխաբերությունները (այսինքն՝ հայր, ամուսին, որդի, եղբայր, բարեկամ):
5. Փրկությունը՝ փրկագնումը, Մատանային վճարված գին չէր (այսինքն՝ Միջնադարյան աստվածաբանություն), այլ Քրիստոսի մեջ Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտությունը Աստծո սիրո և կատարյալ հոգածության հետ: Խաչի վրա վերականգնվեց խաղաղությունը, մարդկության ապատամբությունը ներվեց, Աստծո պատկերը մարդկանց մեջ հիմա նորից յիարժեք գործում է մտերմիկ փոխհարաբերությամբ:
6. Մինչդեռ գոյություն ունի փրկության ապառնի տեսքը (տես՝ Հռոմ. 8:23; Եփես. 1:14; 4:30), որը ներառում է մեր հարուցյալ մարմինները և անձնական մտերմությունը Երրորդության Աստծո հետ (տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն): Մեր հարուցյալ մարմինները լինելու են Նրա մարմնի պես (տես՝ 1 Հովհ. 3:2): Նա ուներ ֆիզիկական մարմին, սակայն հավելյալ տարածաչափական տեսքով: Դժվար է սահմանել 1 Կորնթ. 15:12-19-ի պարադոքսը 1 Կորնթ. 15:35-59-ի հետ: Ըստ երևույթին գոյություն ունի ֆիզիկական, երկրավոր մարմին և լինելու է երկնավոր, հոգևոր մարմին: Հիսուսը երկուսն էլ ուներ:

❖ «և իմ անունը նրանց վրա կանչվի» Սա կարող է նկատի ունենալ հնում գոյություն ունեցող այն տեսանկյանը, որ մարդը շարունակում է ապրել իր երեխաների մեջ (այսինքն՝ 2 Թագ. 18:18, NIDOTTE, հատոր 3, էջ՝ 677), կամ ավելի շուտ, որ Հակոբի ուխտի հավատքը (տես՝ հ. 16, տող 3) կփոխանցվի այս երկու տղաներին:

Հ. 16-ի վերջին երեք ԲԱՅԵՐԸ ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (այսինքն՝ «թող»)

1. օրհնեմ, BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
2. կանչվի, BDB 894, KB 1128, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ
3. բազմանան, BDB 185, KB 213, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 48:17-22**

<sup>17</sup>Եվ երբ Հովսեփը տեսավ, որ հայրն իր աջ ձեռքն դրել է Եփրեմի գլխի վրա, այս բանը նրան դուր չեկավ. և իր հոր ձեռքը բռնեց, որ այն Եփրեմի գլխից Մանասեի գլխի վրա տեղափոխի: <sup>18</sup>Հովսեփն ասաց իր հորը. «Այդպես չէ, հայր իմ, որովհետև սա՛ է անդրանիկը. աջ ձեռքդ սրա գլխին դիր»: <sup>19</sup>Բայց հայրը մերժեց ու ասաց. «Գիտեմ որդյալ իմ, գիտեմ, նա՛ էլ ժողովուրդ կդառնա, և նա էլ մեծ կլինի, բայց նրա կրտսեր եղբայրը նրանից ավելի մեծ պիտի լինի, և նրա սերունդն ազգերի բազմություն պիտի դառնա»: <sup>20</sup>Եվ այն օրը օրհնեց նրանց՝ ասելով. «Իսրայելը քեզանով պիտի օրհնի՝ ասելով. «Աստված քեզ Եփրեմի պես և Մանասեի պես անի», և Եփրեմին դրեց Մանասեից առաջ: <sup>21</sup>Եվ Իսրայելն ասաց Հովսեփին. «Ահա ես մեռնում եմ, բայց Աստված ձեզ հետ կլինի, և ձեզ ձեր հայրերի երկիրը կվերադարձնի: <sup>22</sup>Համենայնդեպս, ես քեզ քո եղբայրներից մի բաժին ավելի տվեցի, որ ամորհացիների ձեռքից իմ սրով և իմ աղեղով էի վերցրել»:

**48:17 «նրան դուր չեկավ»** Այս ԲԱՅԸ *Qal* արմատով (BDB 949, KB 1269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) խիստ ԲԱՅ է, որը մատնանշում է Հովսեփի զգացմունքները այս փոփոխության հետ կապված: ԲԱՅԸ կարող է նկարագրել՝

1. անհանգստություն, Ծննդ. 21:11,12
2. տհաճություն, Թվոց 11:10, Հեսու 24:15, 1 Թագ. 8:6, 18:8, 2 Թագ. 11:25, Նեեմ. 2:10
3. վիշտ, 2 Օր. 15:10, 1 Թագ. 1:8, Նեեմ. 2:3
4. թշնամություն, 2 Օր. 15:9, 28:54,56
5. չարություն, Ծննդ. 38:10; 2 Թագ. 11:27
6. վատ զգացողություն, Սաղմ. 106:32, 2 Թագ. 20:6

Ըստ երևույթին #2 լավագույնն է համապատասխանում այս համատեքստի հետ, սակայն դա խիստ խոսք է: Հովսեփի զգացողությունները Հակոբի կատարածի հանդեպ փոքր խնդիր չէր: Նա ընդհատեց օրհնությունը՝ փորձելով Հակոբի ձեռքը տեղափոխել: Նույնիսկ Հովսեփը միշտ չէր հասկանում Տիրոջ կամքը: Հակոբն է հանդիսանում ուխտի ընտանիքի Նահապետը, և ոչ թե Հովսեփը:

**48:19 «Ես գիտեմ»** ԲԱՅԸ (BDB 393, KB 390, երկու *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ են) կրկնվում է երկու անգամ՝ շեշտադրության համար: Հակոբը գիտեր, թե ինչ էր անում (ըստ երևույթին աստվածային առաջնորդությամբ): Սպասումների հակադարձումը շարունակվում էին:

**48:20 «Իսրայել»** Առաջին տողի «նա» բառը նկատի ունի Հակոբին՝ Իսրայելին, սակայն երկրորդ տողի Իսրայելը հնարավոր է վերաբերում է ազգին (որպես հավաքական միավոր, տես՝ TEV):

❖ **«Աստված քեզ Եփրեմի և Մանասեի պես անի»** Սա հետագայում դառնալու էր օրհնության խոսք՝ առակ, որը կիրառելու էր Աստծո ժողովուրդը:

**48:21 «Ահա ես մեռնում եմ, բայց Աստված ձեզ հետ կլինի, և ձեզ ձեր հայրերի երկիրը կվերադարձնի»** «Ես» բառը ազդեցիկ է: Հակոբը Նահապետ է: Սա ևս մեկ ակնարկ է այն փաստին, որ ամբողջ ընտանիքը ազատվելու է Եգիպտոսից և որ նրանք վերադառնալու են Խոստացյալ Երկիրը (տես՝ Ծննդ. 15:12-16):

**48:22 «ես քեզ քո եղբայրներից մի բաժին ավելի տվեցի»** Այս «բաժին» տերմինը (BDB 1041 I) բառացի երբայերենում նշանակում է «ուս»: Սա Սյուքեմ քաղաքի անունն է: Ոմանք կարծում են, որ դա վերաբերում է այս աշխարհագրական տեղանքին՝ հ. 22-ի հիշատակման պատճառով, որը վերաբերում էր սյուքեմացիների կոտորածին, սակայն դա անսովոր է թվում, քանի որ Ծննդոց գրքում սա շատ բացասական արարք էր: Ուրիշներն էլ ասում են, որ «ուս» բառը նշանակում է, որ նրանք մի գլուխ ավելի բարձր էին, այսինքն ժառանգել էին ավելին՝ անդրանկության կրկնակի ժառանգություն: Ոմանք ասում են, որ դա վերաբերում է Սյուքեմին, որը Հովսեփի հուղարկավորության վայրն էր դառնալու (տես՝ Հեսու 24:32): Մանասեն ժառանգելու էր Հորդանանի երկու կողմերից էլ (միակ ցեղը, որին այդպիսի բաժին ընկավ): Եփրեմը լինելու էր ցեղերի մեջ թվով և հողատարածքով ամենամեծը (երկրորդը՝ Հուդան): Եփրեմը տիրելու էր Քանանի հյուսիսային մասը, ինչպես Հուդան՝ հարավայինը: Հեսուն, ինչպես և Սամուելը Եփրեմի ցեղից էին:

❖ **«որ ամորհացիների ձեռքից իմ սրով և իմ աղեղով էի վերցրել»** Սա կարծես թե պատմական իրադարձություն է եղել, սակայն մենք դրա արձանագրությունները չունենք: Ռաբբիները ենթադրում են, որ սյուքեմացիների կոտորածից հետո քանանացի մյուս թագավորները հարձակվել են Հակոբի վրա և պատերազմում նա հաղթել էր նրանց: Այդ մասին արձանագրություն չունենք:

Ամորհացիներ տերմինը հավաքական տերմին է, որը բովանդակում է իր մեջ բոլոր քանանացիների ցեղերը (տես՝ Ծննդ. 15:16): Տե՛ս Հատուկ Թեմա. Պաղեստինի նախաիսրայելական բնակիչները, 12:6:



**ԾՆՆԴՈՑ 49**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

<b>NASB</b>	<b>NKJV</b>	<b>NRSV</b>	<b>TEV</b>	<b>NJB</b> (հետևում է MT)
Իսրայելի մարգարեությունը Իր որդիների մասին	Հակոբի վերջին խոսքերն իր որդիներին	Հակոբի օրհնությունը իր տասներկու որդիների վրա	Հակոբի վերջին խոսքերը	Հակոբի կտակը
49:1-2	49:1-27	49:1-27	49:1-27	49:1-27
(2)	(2)	(2)	(2)	(2)
49:3-4 (3-4)	(3-4)	(3-4)	(3-4)	(3-4)
49:5-7 (5-7)	(5-7)	(5-7)	(5-7)	(5-7)
49:8-12				
(8-12)	(8-12)	(8-12)	(8-12)	(8-12)
49:13 (13)	(13)	(13)	(13)	(13)
49:4-15				
(14-15)	(14-15)	(14-15)	(14-15)	(14-15)
49:16-18				
(16-18)	(16-18)	(16-18)	(16-17) (18)	(16-17) (18)
49:19 (19)	(19)	(19)	(19)	(19)
49:20				
(20)	(20)	(20)	(20)	(20)
49:21				
(21)	(21)	(21)	(21)	(21)
49:22-26				
(22-26)	(22-26)	(22-26)	(22-26)	(22-26)
49:27 (27)	(27)	(27)	(27)	(27)
49:28-33	49:28	49:28	49:28	49:28
	Հակոբի մահը և թաղումը (49:29-50:14)	Հակոբի մահը և Հովսեփի վերջին օրերը (49:29-50:26)	Հակոբի մահն ու թաղումը (49:29-50:14)	Հակոբի վերջին պահերը և մահը

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.Սա դժվար մի բանաստեղծություն է մեկնելու համար: MT տարբերակը և հնագույն տարբերակները չեն համապատասխանում: Երբայերեն տեքստը շատ խրթին է՝

1. հազվադեպ բառերի պատճառով
2. բանաստեղծական գուճորդումների պատճառով
3. բազմաթիվ դարձվածքների պատճառով

Բ. Օգտակար է համեմատել այս մահվան մահճի առանձնահատկությունները Հակոբի որդիներից սերված ցեղերի և նրանց, ովքեր ժամանակի ընթացքում կրում են նրա որդիների յուրօրինակությունները, Մովսեսի մահվան ժամանակ ցեղերի առանձնահատկությունների հետ, որը գտնվում է 2 Օրինաց 33-ում:

Գ. Չնայած որ կան շատ դժվար խնդիրներ, ինձ համար 10-րդ համարը շատ կարևոր է: Մեկնաբանները պետք է միշտ զգույշ լինեն, թե ինչ են իրենց սիրելի վարդապետությունները կամ համակարգված աստվածաբանությունները կամ հարանվանական ավանդույթները կամենում, որ տեքստն ասի կամ հաստատի: Երբ ամեն ինչ ասված է և արված՝

1. համատեքստը
2. համագոր հատվածները
3. ընդհանուր իմաստը

պետք է ուղղորդեն մեզնից յուրաքանչյուրին այս կարևոր, վճռական, սակայն անորոշ տեքստերում:

Դ. Որդիների ցանկը տրված է ըստ իրենց մայրերի՝

1. Լիա (թվարկված է ծննդյան կարգով)
2. Չեղփա (Լիայի աղախինը)
3. Բաղդա (Ռաբելի աղախինը)
4. Ռաբել (երկուսն էլ թվարկված են ծննդյան կարգով)

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 49:1-2

<sup>1</sup>Եվ Հակոբը կանչեց իր որդիներին և ասաց. «Հավաքվեցե՛ք, որ ձեզ ասեմ, թե ինչ է պատահելու ձեզ վերջին օրերում:

<sup>2</sup>Հավաքվեցե՛ք և լսեցե՛ք, ո՛վ Հակոբի որդիներ,  
Եվ լսեցե՛ք ձեր հորը՝ Իսրայելին»:

**49:1-2** Այս բացման խոսքերում առկա են մի շարք հրամաններ՝

1. հավաքվեցե՛ք, հ. 1, BDB 62, KB 74, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. լսեցե՛ք, հ. 1, BDB 616, KB 665, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ
3. հավաքվեցե՛ք, հ. 2, BDB 867, KB 1062, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. լսեցե՛ք ... լսեցե՛ք, հ. 2, երկուսն էլ BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**49:1** «Եվ Հակոբը կանչեց իր որդիներին և ասաց» Սա վերջին օրհնությունն է, որն այդքան բնորոշ է նահապետական առաջնորդներին: Մշակությունն այն մեծ կշիռ ուներ: Իսահակը միևնույն բանն արել էր Ծննդոց 27-ում, Մովսեսը՝ 2 Օրինաց 33-ում, Հեսուն՝ Հեսու 24-ում, և Սամվելը՝ 1 Թագավորաց 12-ում: Այս ցանկը առաջին հերթին նշում է Լիայի և վերջում՝ Ռաքելի որդիներին:

Շատ երկդիմություն կա այս օրհնության մեջ: Այն բանաստեղծական տեսքով է և հիմնված է բառախաղերի վրա (տես՝ Ծննդ. 29:30-30:24): Այս նահապետական օրհնությունը նրա յուրաքանչյուր որդու համար է:

Այս ամբողջ գլխի ենթատեքստն այն է, որ Աստված միայն ազգերի ճակատագրերը չի վերահսկում, այլ նաև անհատների (բառացի՝ «թե ինչ է պատահելու ձեզ վերջին օրերում»):



NASB

«զալիք օրերում»

TEV

«ապագայում»

MT տարբերակում այս արտահայտությունը (BDB 31 ԿԱԶՍՈՒԹՅԱՄԲ 398) կիրառվում է վերջին ժամանակներ իմաստով (տես՝ Թվոց 24:14, Եսայի 2:2, Եզեկ. 38:16), սակայն այդ ժամանակային սանդղակը չի համընկնում համատեքստի հետ: Այս տեքստը դիմում է Հակոբի տասներեք ցեղերին (Հովսեփը դառնում է Եփրեմ և Մանասե): Հետևաբար այն պետք է առնչություն ունենա Քանանի նվաճման (Հեսուն) և այնտեղ բնակություն հաստատելու հետ (Դատավորաց, տես՝ 2 Օրինաց 31:29): Եթե հ. 10 նկատի ունի Հուդայի ցեղից Դավթի տոհմաձառից դուրս եկած իշխանին, ապա դա կարող է միայն լինել վաղ միապետական շրջանը (1 Թագավորաց):

**49:2** «Հակոբ ... Իսրայել» Դրանք իհարկե համագործն են: Այն ավելի շատ բան է խոսում մերօրյա մեկնաբանների մասին և ըստ նրանց ենթադրությունների, այս անունները ներկայացնում են երկու տարբեր հեղինակների կողմից գրված պատմությունը (ինչպես և նույնն ասում են *Էյռհիմի* և ՅԱՀՎԵԻ համար): Հնագույն Եբրայերենն ունի իր սեփական գրական ժանրերը, դարձվածքները և ձևաչափերը:

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 49:3-4

<sup>3</sup>«Ո՛վ Ռուբեն, իմ անդրանիկ,

Իմ ուժը, իմ գորության,

Պատվի գերազանցության և կարողության գերազանցության սկիզբը .

<sup>4</sup>Չրի պես անհաստատուն . գերազանց չես լինի,

Որովհետև բարձրացար քո հոր անկողինը,

Այն ժամանակ պղծեցիր այն: Անկողինս ելավ»:

**49:3** «Ռուբեն» Համար 3-ը գրվել է ճոխ տերմիններով (առանց ԲԱՅԻ) Հակոբի առաջնեկ որդու պոտենցիալ կարողության վերաբերյալ, սակայն հ. 4-ը այդ պոտենցիալի կտրուկ հետևանքների հափշտակումը եղավ: Ռուբենը ամոթալի արարք գործեց՝ մտնելով իր հոր աղախնու՝ Բաղայի մոտ (տես՝ Ծննդ. 35:22): Սա ցույց է տալիս նրա կրքոտ լինելը: Մինչ որոշ մարդիկ դիտարկում են սա որպես Հակոբի ստացվածքը ավելի շուտ ժառանգելու փորձ, սա կարծես թե ակնարկում է ավելի շատ նրա սեռական ցանկությունը, քան թե ազահությունը:

49:4

NASB, NJB  
NKJV, NRSV  
LXX  
Peshitta

«անվերահսկելի»  
«անհաստատ»  
«անբարո», «քմահաճ»  
«մոլորված»

- Այս տերմինը (BDB 808) կարող է նշանակել՝
1. անխտհեմ (արարերեն, տես՝ Դատ. 9:4; Երեմ. 23:32)
  2. ամբարտավան (աքքադերեն)
  3. անհաստատ
  4. քմահաճ (տես՝ Սոփ. 3:4)

BDB նկարագրում է այս տերմինը որպես «եռացող ջուր», որը թափվում է տարայի միջից: Այն լիովին անտեսում է պահվածքի բոլոր ակնկալվող նորմերը: Այն վեր է դասում անձնական ցանկությունները բոլոր նորմալ սահմանափակումներից:



NASB  
NKJV, Peshitta  
NRSV, JPSOA  
TEV  
NJB  
LXX

«գերազանց չես լինի»  
«դու չես գերազանցի»  
«դու այլևս չես գերազանցի»  
«դու չես լինի ամենակարևորը»  
«դու չես լինի առաջինը»  
«բռնությամբ չես ժայթքի»

- ԲԱՅԸ (BDB 451, KB 451, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ) *Hiphil* արմատով նշանակում է՝
1. թողնել անցնել, թողնել, Ելից 10:15, Հռութ 2:14, 18, 4 Թագ. 4:43, 2 Մնաց. 31:10
  2. մնացորդ թողնել, Եզեկ. 6:8
  3. փրկել, Սաղմ. 79:11 (միայն)
  4. գերազանցել, Ծննդ. 49:4 (միայն)
  5. ունենալ ավելին, քան բավարար է, Ելից 36:7, 4 Թագ. 4:43, 2 Մնաց. 31:10
  6. առատացնել, 2 Օր. 28:11, 30:9

ԳՈՅԱԿԱՆԸ կիրառվում է հ. 3-ում երկու անգամ: Սա ցույց է տալիս Ռուբենի պոտենցիալը, բայց 2-րդ և 3-րդ տողերի պատճառով այս ամբողջ պոտենցիալը նա կորցրեց: Մեղքը հետևանքներ ունի և թողնում է մնայուն սպիեր:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 49:5-7**

<sup>5</sup>Շմավոնը և Ղևին եղբայրներ են .  
 Դաժանության գործիքներ կան նրանց բնակավայրերում:  
<sup>6</sup>Ո՛վ իմ անձ, մի՛ մասնակցիր նրանց գաղտնի խորհրդածությանը,  
 Պատիվս, մի՛ միանա նրանց հավաքի հետ,  
 Որովհետև իրենց բարկությամբ մարդ սպանեցին:  
 Եվ իրենց կամապաշտությամբ պատը ցած բերեն:  
<sup>7</sup>Անիծյալ լինի նրանց բարկությունը, քանի որ խիստ էր .  
 Եվ նրանց զայրույթը, քանի որ սաստիկ էր .  
 Կբաժանեմ նրանց Հակոբի մեջ  
 Եվ կցրեմ Իսրայելի մեջ:

49:5 «Շմավոնը և Ղևին եղբայրներ են» Այս երկու տաքարյուն եղբայրներն էին ըստ երևույթին հանդիսանում Սյուքեմի տղամարդկանց կոտորածը ծրագրողները (տես՝ Ծննդ. 34:25-30): Այս տեքստը նույնիսկ ներառում է այն փաստը, որ նրանք իրենց բարկության մեջ (BDB 60 և BDB 720), կտրեցին ցուլը այդ քաղաքից, որը մի բան է, որ Ծննդոց 34-ից չենք տեղականում, կամ հնարավոր է դա մի դարձվածք է, որը մատնանշում է այդ քաղաքի առաջնորդ տղամարդկանց:

❖ Բնագրի տեքստի հ. 5-ում ԲԱՅ չկա:



NASB, NRSV  
NKJV  
NJB

«իրենց սրերը»  
«կացարանը»  
«ծրագրերը»

**LXX** «գործողության որոշումը»  
**REB, JB** «խորհուրդները»  
**Peshitta** «էությունը»

Եբրայերենը (BDB 468) անհայտ է, սակայն այս բառը (որը միայն այստեղ է) նշանակում է «գործիքներ»: Ոմանք ենթադրում են, որ նրանք Սյուքեմ էին գնացել իրենց հետ տանելով միայն հողագործական գործիքներ և ոչ թե չէր կասկածում, որ նրանք եկել էին վնասելու, մինչև որ սկսեցին իրենց գործիքները օգտագործել բնակիչների դեմ:

UBS Preliminary և Interim Report Եբրայերեն Հին Կտակարանի Տեքստերի Նախագիծը տալիս է երկու տարբերակ, որոնք կիրառում են միևնույն բաղաձայնները՝ םהיחכמ

1. իրենց սրերը (գրագետները կկռահեն հունարեն բառի հետ սրա նմանությունը, NRSV)
2. նրանց ավերումները

Ընտրվել է երկրորդ տարբերակը, սակայն գնահատվել է որպես “C” (կասկածելի):

Գոյություն ունի երրորդ տարբերակ՝ մի եթովպիական արմատ, որը նշանակում է «խորհուրդ տալ» (տես՝ Ջեյմս Բարր, *Հարաբերական Լեզվաբանությունը և Հին Կտակարանի Տեքստը*, էջ՝ 57, տես՝ JB, REV /James Barr, *Comparative Philology and the Text of the Old Testament*):

❖  
**NASB** «սարքեր»  
**NKJV** «գործիքներ»  
**NRSV, TEV** «զենքեր»

Այս բառը (BDB 497) հիմնականում նշանակում է «գործիք», «անոթ»: Այն կարող է վերաբերել՝

1. տան ապրանքի
2. փողի
3. բեռի
4. գարդարանքի
5. որսորդական զենքերի
6. ռազմական զենքերի
7. երաժշտական գործիքների
8. լուծի
9. հովվի խուրջինի
10. խոհարարական կաթսայի

Ակնհայտ է, որ այս բառն ունի լայն ստուգաբանական իմաստ: Այն համագոր է «սրերին» (կամ այն ինչ նշանակում է BDB 468-ը): MT տարբերակում այս բառը (BDB 479) առաջինն է և ապա BDB 468: JPSOA տարբերակը տալիս է «նրանց զենքերը անիրավության գործիքներ են»: Այս համարի շփոթությունը կարելի է տեսնել հնագույն տարբերակների բազմազանությամբ:

Ինչևէ, պարզ է, որ այն վերաբերում է այս երկու եղբայրների կողմից իրականացված սյուքեմացիների կոտորածին (տես՝ Ծննդոց 34):

UBS Preliminary և Interim Report Եբրայերեն Հին Կտակարանի Տեքստային Նախագիծը թվարկում է եբրայերեն այս արտահայտությունը հասկանալու երկու կերպ՝

1. םהיחכמ = բռնության զենքեր
2. םהיחכמ = նրանք որոշեցին

Սա միաձուլում է երկու տարբերակները՝ «բռնության զենքերը», սակայն գնահատվում է “B” (որոշ կասկածներով):

**49:6**  
**NASB** «իմ հոգին ... իմ փառքը»  
**NKJV** «իմ հոգին ... իմ պատիվը»  
**NRSV, Peshitta** «ես ... ես»  
**NJB, REV** «իմ հոգին, իմ սիրտը»  
**JPSOA** «իմ անձը, իմ էությունը»  
**LXX** «իմ հոգին, իմ ներսիդին»

Առաջին տերմինը (BDB 659) *nephesh* է, որը նշանակում է «անձի կամ կենդանու կյանքի ուժը» (այսինքն՝ այն ինչ շնչում է): Այն գործածվում է մի քանի անգամ 46-րդ գլխում (46:15,18,22,25,26 /երկու անգամ/ 27 /երկու անգամ/), սակայն թարգմանված է տարբեր կերպերով:

Հատուկ թեմա 45:13-ում): Այս արմատը այս ձևը միայն այստեղ է տրված, 31:1-ում և 45:13-ում: Այս նույն երկու բառերը միասին հանդես են գալիս Սաղմ.7:5-ում: Ինչևէ, այս համատեքստում այն վերաբերում է հենց հակոբին և համագոր է *nephesh*-ին: Այս երկու տերմիններն էլ հանդիպում են համագոր ՀԱՅՏԱԿԱՆ ենթամասով:

Հ. 6-ում այս առաջին երկու բանաստեղծական տողերը դարձվածքային են, որոնք արտահայտում են Հակոբի դժկամությունը իր երկու ավագ որդիների ծրագրերի կամ գործերի մեջ բաժին ունենալու, որոնց հետևանքը եղավ քանանացիների Սյուքեմ քաղաքի բոլոր տղամարդկանց ծրագրված կոտորածը:

❖ «որովհետև իրենց բարկությամբ մարդ սպանեցին» Հակոբը չէր ուզում մաս կազմել այս երկու որդիների անխոհեմ, դաժան արարքների մեջ:

❖ «և իրենց կամայապաշտությամբ ցուր ջլատեցին» Սա համագոր է 3-րդ տողին: Ըստ երևույթին սա վերաբերում է Սյուքեմի կոտորածին՝ դարձածքաբանորեն: Այս երկու եղբայրները Սյուքեմի տղամարդկանց հետ վարվել էին կենդանիների պես: Հնարավոր է, որ դա ակնարկում է նրանց շարժումների դանդաղկոտությանը նաև (իրենց թլփատությունից երեք օր էր դեռ անցել):

**49:7 «անիծյալ»** Սա (BDB 76, KB 91) ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է՝ կիրառված որպես բացականչություն (տես՝ 3:14,17; 4:11; 9:25; 27:29; Թվոց 24:9; 2 Օր. 27:15-26; Դատ. 21:18; 1 Թագ. 14:24,28): Այն ունի հատուկ կիրառություն Ծննդ. 12:3 և 27:29-ում, կապված Աբրահամի ուխտի հետ, սակայն այստեղ դա չի կարող լինել այդ նշանակությամբ, քանի որ այս որդիները հանդիսանում են այդ ուխտի մի մասը: Անեծքը պետք է որ կապ ունենա ընտանիքում իրենց առաջնորդ լինելու դիրքի անտեսմանը: Նրանց «բարկությունն» էր (BDB 60) անեծքի տակ, ոչ թե հենց որդիներն իրենք: Ինչևէ, նկատեք, որ սա հենց ՅԱՀՎԵՆ Ինքն է («Ես կբաժանեմ նրանց Հակոբի մեջ», BDB 323, KB 322, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, ԵՉԱԿԻ ԹԻՎ, ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔ):

Նկատեք համար 7-ում 1 և 2 տողերի և 3 և 4 տողերի միջև առկա հստակ հանգավորումները: Սա շատ լավ օրինակ է, թե ինչքան գեղեցիկ կազմությունն ունի եբրայական պոեզիան (տես՝ Եբրայական Պոեզիայի շուրջ գրառումը):

❖ «Կբաժանեմ նրանց Հակոբի մեջ» Պատմությունից գիտենք, որ Ծնավոնի ցեղը իր տարածքը ստանալով Փղշտացիներից մոտ գտնվող վայրում (տես՝ Հեսու 19:1-9), շատ արագ կերպով վճռեց և միաձուլվեց Հուդայի ցեղի հետ: Ղևիի ցեղը վերցնում է առաջնեկ որդիների տարածքը (տես՝ Ելից 13) և դառնում քահանաներ, որոնք սփռվում են ամբողջ երկրով մեկ, մասնավորապես քառասունութ Ղևտական քաղաքները: Այս օրհնության հնությանը հավատալու պատճառներից մեկն այն է, որ գոյություն չունի երևակայական օրհնություն Ղևիի ցեղի սփյուռքի վերաբերյալ ինչպես որ Մովսեսի կողմից ցեղերի օրհնության մեջ է 2 Օրինաց 33-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 49:8-12**

<sup>8</sup>Ո՛վ Հուդա, դո՛ւ, ում քո եղբայրները կփառաբանեն,

Ձեռքդ քո թշնամիների պարանոցի վրա է լինելու .

Քո հոր որդիները երկրպագելու են քո առաջ:

<sup>9</sup>Առյուծի կորյուն է Հուդան .

Որդյալ իմ, կողոպուտից վեր բարձրացար:

Նա ցած իջավ, պառկեց առյուծի պես,

Մի ձեռք առյուծի պես . ո՛վ կզարթնեցնի նրան:

<sup>10</sup>Իշխանության գավազանը չի հեռանալու Հուդայից,

Ո՛չ էլ օրենսդիրը՝ նրա ոտքերի մեջտեղից,

Մինչև որ Սելովը գա,

Եվ Նրա շուրջն է ժողովուրդը հավաքելու:

<sup>11</sup>Նա իր ավանակը որթին կկապի,

Իսկ ազնիվ որթից՝ էշի ձագուկը:

Գինով կլվանա իր պատմունճանը,

Եվ խաղողի արյամբ՝ իր հագուստը:

<sup>12</sup>Իր աչքերը գինուց կարմիր,

Եվ առամները՝ կաթից սպիտակ կլինեն:

**49:8-12 «Հուդա»** Հուդա տերմինը (BDB 397) նշանակում է «փառաբանություն» (BDB 393, տես՝ 29:35): Ըստ երևույթին նա նկարագրվում է որպես ռազմական շատ հզոր ցեղ (տես՝ հհ . 8-9), ինչպես նաև որպես արքայական իշխան (տես՝ հհ. 10-12) Հակոբի որդիների մեջ: Փոխաբերությունը շարունակվում է նկարագրելով Հուդային որպես առյուծի կորյուն (BDB 158 ԿԱՌՈՒՑՎԱԾ BDB 71): Սա չի նշանակում առյուծի ձագ, այլ երիտասարդ առյուծ, որը նոր է մտնում իր գործության ամբողջական կարողության մեջ (տես՝ Թվոց 24:9):

**49:8 «թշնամիներ»** Այս տերմինը (BDB 33, KB 38, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) տարածված է ՀԿ-ում, սակայն ավելի քան քառասուն անգամ այն կիրառվում է հատկապես Թագավորի թշնամիների համար (տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 366): Այս արքայական օրհնության մեջ սա ևս մեկ կետ է, որ մատնանշում է Հուդայի գերագանցությունը:

❖ **«քո հոր որդիները երկրպագելու են քո առաջ»** ԲԱՅԸ (BDB 1005, KB 295, *Hishtaphel* [*OT Parsing Guide*] կամ *Hithpael* [*Owen, Analytical Key*] ԱՆԿԱՏԱՐ է, որն արտահայտում է հարգանքի տուրք) նույն բառն է, որ գործածվում է 37:7 և 9-ում Հովսեփի երազի մեջ: Եղբայրները (Հուդան էլ) չէին հավանում իրենց եղբայրներից որևէ մեկին խոնարհվելու միտքը, սակայն այստեղ Հակոբը հայտարարում է, որ նրանք խոնարհվելու են Հուդային Զանանում, ինչպես որ խոնարհվեցին Հովսեփին Եգիպտոսում: Հուդան լինելու է արքայական ցեղը:

**49:10 «իշխանության գավազանը... օրենսդիրը»** Սրանք (BDB 986 և BDB 349, KB 347, *Poel* ԴԵՐԲԱՅ) են իրար լրացնելով և նկատի ունենալով, որ միավորված ցեղերի թագավորը դուրս է գալու Հուդայից:

«Իշխանության գավազանը չի հեռանալու նրա ոտքերի մեջտեղից» արտահայտությունը հասկանալի է պետք ՀՄԱ-ի իշխաններին պատկերող հնագույն նկարներից, որտեղ նրանք կրում են իրենց դիրքի նշանը (սովորաբար գավազան կամ տեգ) իրենց ոտքերի միջև, երբ նստած են գահին: Պետք է նշել, որ այս տերմինը ներկայացում է առաջնորդի իշխանության խորհուրդը (տես՝ Թվոց 21:18):

- ❖
- NASB, NKJV**
- NRSV**
- TEV**
- NJB**
- LXX**
- Peshitta**
- JPSOA**
- REB**
- Young’s Lit. Translation**

- «մինչև որ Սելովը գա»
- «մինչև որ տուրքը կգա իր մոտ»
- «ազգերը նրան տուրք կբերեն»
- «մինչև որ տուրքը կբերվի նրա մոտ»
- «մինչև որ կկատարվեն նրա համար նախատեսված բաները»
- «մինչև այն Մեկի գալուստը, որին որ պատկանում է գավազանը»
- «որպեսզի տուրքը բերվի նրան»
- «մինչև որ իրեն արժանին ստանա»
- «մինչև կգա նրա ՍԵՐՄԸ»

Շատ քննարկումներ են տեղի ունեցել այն մասին, թե ինչպես կարելի է հասկանալ այս արտահայտությունը՝

1. սա կարող է լինել հատուկ անուն (Sanh 98b)
2. կարող է լինել տեղանուն, սակայն սա տարօրինակ կլիներ, քանի որ հյուսիսային թագավորության այս փոքրիկ քաղաքում ոչ մի կարևոր իրադարձություն տեղի չի ունենում ո՛չ Հուդայի, ո՛չ Դավթի, և ո՛չ էլ Մեսիայի կյանքում:
3. ոմանք պնդում են, որ սա «մինչև որ այն ինչ իրենն է գա» արտահայտության հապավումն է. այսպես է թարգմանում այս համարը Մեպտուազինտան և Թարգումը:
4. ոմանք ասում են, որ սա մեջբերված է Եզեկ. 21:26-27-ում «մինչև որ օրինավոր Դավթի սերդնի կամ Հուդայի սերնդի թագավորը գա» իմաստով, որը կվերաբերի Մեսիային. այսպես է այս համարը թարգմանել *Revised Standard Version* տարբերակը:
5. որոշ Թարգումներ թարգմանում են այս համարը «մինչև որ Մեսիան, որին պատկանում է թագավորությունը, գա»:
6. քիչ հավանականություն կա, որ Սելով բառը ծագել է բաբելոնյան արմատից, որը նշանակում է «իշխան»

UBS *Եբրայերեն Տեքստի Նախագիծը* *Եբրայերեն Տեքստի Նախագիծը* թվարկում է տարբերակներ՝

1. **וְיָבֹא** – նա գալիս է Սելով կամ Սելովը գալիս է
2. **וְיָבֹא** – նա գալիս է նրան, ում պատկանում է (ձայնավորների փոփոխություն)
3. **וְיָבֹא** – տուրքը նրան պիտի բերվի

Տարբերակ 1-ը գնահատվել է “A” (մեծ հավանականություն) և կապում է Սելովը Հուդայի որդու հետ (հեզվում է «Շելահ» /հայերենում՝ Սելոմ/, տես՝ 38:5,11,14,26; 46:12; Թվոց 26:20; 1 Մնաց. 2:3; 4:21):

Այս համարը վերաբերում է Դավթի սերնդից դուրս եկող Մեսիային, սակայն դրա ստույգ նշանակությունը հայտնի չէ: Թե՛ հնագույն սինագոգները և թե՛ եկեղեցին այն կարծիքն են եղել, որ դա Մեսիական է: Հուդան իշխելու է տասներկու ցեղերի վրա, սակայն Մեսիան (նրա ժառանգորդը) իշխելու է երկրի բոլոր թագավորությունների վրա (տես՝ Հայտն. 11:15):

Իսրայելի թագավորի գաղափարը, որը ազդելու էր ամբողջ մարդկության վրա՝ արդեն իսկ կանխասվել էր Ծննդոցում:

1. Աբրահամին ուղղված մարգարեությունը, Ծննդ. 17:6,16

2. Հակոբին ուղղված մարգարեությունը, Ծննդ. 35:11
3. Հուդային ուղղված մարգարեությունը, Ծննդ. 49:8-12
4. Բաղասամի մարգարեությունը Իսրայելի վերաբերյալ, Թվոց 24:7
5. Մովսեսի տված թագավորի հատկանիշները, 2 Օրինաց 17:14-20
6. Դավթին տրված հատուկ խոստումները, 2 Թագավորաց 7




**NASB, NKJV, NRSV**  
**TEV**  
**NJB**  
**JPSOA**  
**LXX**  
**Peshitta**

«**ժողովուրդների հնազանդությունը**»  
 «**հնազանդությամբ խոնարհվեն նրա առջև**»  
 «**ժողովուրդները հնազանդություն ցուցաբերեն նրան**»  
 «**ժողովուրդների մեծարանքը նրանը լինի**»  
 «**նա է ժողովուրդների ակնկալությունը**»  
 «**ու՜մ կապասեն հեթանոսները**»

MT տալիս է «ժողովուրդների հնազանդությունը կլինի» (BDB 429 ԿԱՌՈՒՑՎԱԾ 766), որը ԲԱՅ չունի: LXX և Peshitta տարբերակները ներկայացնում են տիեզերական Մեսիական ենթատեքստ (այսինքն՝ «ազգերը», BDB 766 ՀՈԳՆԱԿԻ Է /տես՝ 27:29/ և պարբերաբար թարգմանվում է «ազգերը» որպես Աբրահամի ժողովրդից դուրս գտնվող մարդիկ՝ հեթանոսներ) որը պարզ տեսնում ենք Մաղմ. 2:8; Դան. 7:13-14-ում:

**49:11 «Նա իր ավանակը որթին կկապի,**

**Իսկ ազնիվ որթից՝ էջի ձագուկը»** Համար 11 և 12 ձևավորում են մի դարձվածք, որը վերաբերում է բարգավաճմանը: Այնքան շատ ընտիր որթատունկեր կան, որ ոչ մեկի մտքով չի անցնի, որ իր կենդանում կապի դրանցից, քանի որ այն կարող է կա՛մ ուտել բերքից, կա՛մ էլ քաշելով փչացնի որթատունկը:



**Եվ խաղողի արյամբ՝ իր հագուստը»** Սա զուգորդվող երբայերեն կազմություն է, որը խոսում է խաղողի առատության մասին: Ինչևէ, այն կարող է վերաբերել Հուդային որպես Աստժծո դատաստանն իրականացնող (տես՝ ես. 63:1-6; Հայտն. 19:13,15):

**49:12 «Իր աչքերը գինուց կարմիր,**

**Եվ առամները՝ կաթից սպիտակ կլինեն»** Սա ևս մեկ փոխաբերություն է բարգավաճման վերաբերյալ, որը խոսում է գինու առատության մասին (TEV, «կարմրավուն [BDB 314] աչք») և կաթի առատության մասին (այսինքն՝ առողջ նախիրներ):

Տե՛ս Հատուկ Թեմա. Ալկոհոլի և ակոհոլիզմի հանդեպ աստվածաշնչյան վերաբերմունքը, 14:18:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 49:13**

**<sup>13</sup>Չարուղոնը ծովեզրում պիտի բնակվի,  
 Եվ նա նավերի ապաստարան կլինի,  
 Եվ նրա սահմանը՝ մինչև Սիդոն կլինի:**

**49:13-14 «Չարուղեն... Իսաքար»** Ինչպես որ Շմավոնն ու Ղևին են իրար հետ կապված, այնպես էլ Չարուղոնն ու Իսաքարը: Չարուղոնը լինելու է շատ առևտակենտրոն ցեղ, մինչ Իսաքարը լինելու է շատ հզոր, սակայն ըստ երևույթին աննկատ ցեղ:

**49:13**

**NASB**  
**NKJV**  
**NRSV**  
**TEV**  
**NJB**  
**LXX**

«**բնակվելու է ծովեզրում**»  
 «**բնակվելու է նավահնագստի մոտ**»  
 «**կհանգրվանի ծովի ափին**»  
 «**կապրի ծովի մոտ**»  
 «**կապրի ծովեզրին**»  
 «**կբնակվի ափին**»

Այս արտահայտությունը բառացիորեն թարգմանվում է «ծովեզրին» (BDB 342 ԿԱՌՈՒՑՎԱԾ 410)» Այս ցեղը երբեք էլ չի ապրել հենց ծովեզրին (տես՝ Հեսու. 19:10-16), քանի որ Ասերը գտնվում էր նրանց և օվկիանոսի միջև: Մակայն, նրանք ներգրավված էին Տիվրոսի և Սիդոնի հետ առևտրի մեջ (տես՝ հ. 13գ, 2 Օրինաց 33:19գ և դ):



**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 49:14-15**

**14** Իսաքարը մի ամրակազմ էշ է,  
Պառկում է երկու բեռների միջև.  
**15** Եվ տեսավ, որ հանգստությունը լավ է,  
Եվ երկիրը, որ գեղեցիկ է,  
Իր ուսը թեթեց, որ բեռ կրի,  
Եվ հարկատու ծառա դարձավ:

**49:14 «Իսաքարը մի ամրակազմ էշ է,**

**Պառկում է երկու բեռների միջև»** Բանաստեղծական այս երկու տողերը երկու կերպ են մեկնաբանվում՝

1. ոմանք սա վերցրել են մի արմատից, որ նշանակում է «ցերեկային աշխատող» (TEV)
2. ուրիշներն են կարծում են, որ սա նշանակում է, որ նրանք ծույլ են, քանի որ պառկում են բլուրների, թամբերի միջև (TEV), կամ խուրջիների միջև (NRSV, NJB) և ստրուկներ են դառնում (տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 994, #4)

Ստույգ ակնարկը անհայտ է, սակայն ամբողջ իմաստն այն է, որ նրանք հրաժարվում են իրենց իրավիճակից օգտվելու հնարավորությունից: LXX տարբերակը դրական իմաստով է թարգմանում այս համարը:



**NASB, NRSV, NJB, JPSOA  
NKJV  
TEV (NASB լուսանցք)  
LXX  
Peshitta  
REB**

**«բեռներ»  
«երկու բեռ»  
«թամբեր»  
«ժառանգությունների միջև»  
«մայրուղիների կողքին»  
«գոմերի մեջ»**

Երբայերեն բառը՝ עִתְּשָׁמָה կարող է նշանակել՝

1. BDB 1046  
ա. հնոցներ  
բ. մոխրակույտեր (այսինքն՝ գյուղերի)  
գ. փարախներ (տես՝ Դատ. 5:16)
2. KB 652  
ա. էշի համար (արաբերեն և Օլբրայթ) երկու (երբայերեն երկկողմանի) պայուսակները՝ խուրջին  
բ. օջախի վրա թեյնիկ  
գ. բաժանված փարախներ (տես՝ Սաղմ. 68:13)

Այո, ժամանակակիցները կուզեին ստույգ իմանալ, թե ինչ է սա նշանակում, բայց նույնիսկ այս անորոշությամբ, համատեքստը պատկերում է մի նկար: Մենք պետք է ապավինենք ավելի մեծ՝ ընդարձակ պատկերին, մինչև որ բարբառային կամ պատմական տեղեկությունը հասանելի դառնա: Սա կենսական կարևորության հարց չէ:

**49:15** Գոյություն ունեն երկու իրար հակառակ կերպեր, որոնցով կարելի է հասկանալ այս համարը՝

1. Իսաքարը ծույլ էր և ստրուկ դարձավ
2. Իսաքարը գիտակցեց իրենց ժառանգության առատությունը և շատ աշխատեց, որ այն դարձնի բերրի: Ամբողջ հարցը այստեղ «պառկել» խոսքի մեջ է: Արդյո՞ք սա նկատի ունի ծուլությունը, թե ջանասիրաբար աշխատելուց հետո հանգստանալու մասին է խոսքը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 49:16-18**

**16** Դանը կդատի իր ժողովրդին,  
Որպես Իսրայելի ցեղերից մեկը:  
**17** Դանը մի օձ կլինի ճանապարհի վրա,  
Մի իժ՝ շավղի վրա,  
Կծու է ձիու գարշապարը,  
Այնպես որ նրա հեծյալը դեպի հեռ ընկնի:  
**18** Ես Քո փրկությանն սպասեցի, ո՛վ Տեր:

**49:16 «Դան»** Սա Դան (BDB 192) անվան հետ կապված բառախաղ է, որը նշանակում է «դատավոր» (BDB 192), ինչպես Դինան (BDB 192) այս նույն բառի իգական սեռն է և նշանակում է «կին դատավոր»: Եթե սա ճիշտ է, ապա այս արտահայտությունը վերաբերում է Դանին որպես փոքր, բայց մահացու:

**49:17 «Դանը մի օձ կլինի ճանապարհի վրա»** ՀԿ-յան իմ շատ սիրելի մեկնաբաններից մեկը՝ Լյապոլդը, դիտարկում է հ. 17 և 27 որպես դրական իմաստով համարներ (նկատեք հ. 18): Սակայն համաձայն համատեքստի այն կարող է լինել բացասական: Մենք մի քանի աստվածաշնչյան օրինակներ ունենք այնպիսի մարդկանցից, ովքեր եղել են Դանի ցեղից (տես՝ դատավորաց 18): Քանի որ Դատավորաց 18-ը Աստվածաշնչում ցեղերի մեջ կռապաշտության առաջին իրողությունն է ներկայացնում և քանի որ Դանը թողել էր Հեսուի կողմից իրեն տրված հողային տարածքը, շատերը ենթադրում են, որ Դանը խարանվել է այս արարքների պատճառով: Հայտն. 7:5-8-ում Դանը ներգրավված չէ ցեղերի ցանկի մեջ: Վաղ եկեղեցու հայրերից շատերը՝ Իրենեոսը, Ամբրոսը, Օգոստինոսը և Թեոդորոսը, ենթադրում են, որ հակաքրիստոսը գալու է Դանի սերնդից:

**49:18 «Ես Քո փրկությանն սպասեցի, ո՛վ Տեր»** Այս համատեքստի մեջ աղոթքի անմիջական պորթկման ստույգ նպատակը վիճելի է եղել: Արդյո՞ք այս աղոթքը Հակոբինն է, թե Դանին: Արդյո՞ք սա Աստծո (Ծննդոց 49-ում միայն գործածվում է ՅԱՀՎԵ անունը) հոգատարության համար երախտագիտության աղոթք է, որի մասին նա հիշում է, երբ նշում է «օձ»-ի մասին՝ հ. 17-ում, նկատի ունենալով Ծննդոց 3: Հավանաբար սա մի աղոթք է, որ Դանի ցեղը կգիտակցի իր մոլորությունը և կվերադառնա վստահելու ՅԱՀՎԵԻ պաշտպանությանը և փրկությանը (այսինքն՝ Փղշտացիների կողմից վերահսկվող տարածաշրջանում իրեն պատկանող ցեղային հողատարձքը):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ տերմին)**  
**SPECIAL TOPIC: SALVATION (OT Term)**

Այս տերմինը (BDB 447, KB 446, թե՛ ԱՐԱԿԱՆ և թե՛ ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ է), որը հիմնականում նշանակում է «լինել ընդարձակ ու լայն» կամ «ազատ լինել», ունի մի քանի նշանակություն՝

1. ապահովություն, 2 Թագ. 22:3, Հոր 5:11, Սաղմ. 12:5
2. բարեկեցություն, բարգավաճում, Հոր 30:15
3. աստվածային փրկություն, որն ընդգրկում է թե՛ ֆիզիկական, և թե՛ հոգևոր ազատագրում՝ ա. Ծննդ. 49:18  
բ. 2 Օր. 32:15  
գ. 2 Թագ. 23:5  
դ. Սաղմ. 3:2,8; 22:1; 35:3; 62:2; 69:29; 70:5; 78:22; 80:3; 89:26; 91:16; 106:4; 140:7  
ե. Ես. 12:2; 33:2; 51:6,8; 52:7,10; 56:1; 59:11; 60:18; 62:1,11
4. ֆիզիկական և հոգևոր ազատագրման գաղափարը հստակ ներկայացված է Հովնան 2:9-10
5. հաղթանակ, Ելից 14:30; 15:2; 1 Թագ. 14:45; Սաղմ. 20:6; 21:5; 44:4-5; 68:19-20; 118:14,15,21; Ես. 12:2; Ամբ. 3:8
6. հաճախ «ցնծալը» առնչվում է ՅԱՀՎԵԻ փրկության հետ, 1 Թագ. 2:1; Ես. 25:9; 26:1; Սաղմ. 9:14; 13:5; 21:1; 35:9; 118:15,21

Փրկությունը բովանդակում է ՅԱՀՎԵԻ սկզբնական մտադրված փոխհարաբերության և հաղորդակցության իրագործումը Իր մարդ արարածների հետ: Այն իր մեջ ընդգրկում է անհատական և հասարակական ամբողջականություն:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍ. 49:19**  
**<sup>19</sup>Գաղը. մի գունդ կհաղթահարի նրան,**  
**Բայց ի վերջո ինքը կհաղթանակի:**

**49:19 «Գաղը. մի գունդ կհաղթահարի նրան, Բայց ի վերջո ինքը կհաղթանակի»** Գոյություն ունի մի ակնհայտ բառախաղ այս անվան (BDB 151) արմատի հետ կապված, որն այս մեկ համարում կարելի է չորս անգամ գտնել: Գաղը գտնվելու է միա այնպիսի տեղանքում, որի վրա շրջապատող ազգերը կարող են հեշտությամբ հարձակվել (այսինքն՝ Հորդանանի արևելյան կողմում), սակայն նա է նրանց հետապնդելու և ավար վերցնելու (այսինքն՝ հաջողակ, բարգավաճող է լինելու):

Եբրայերեն տեքստն ունի «կրունկ» (BDB 784 I, ա), բայց BDB նշում է, որ այս տերմինը կարող է լինել מִבְּרָע (մ բանաստեղծության հաջորդ տողի առաջին տառից, հ. 20): Եթե այդպես է, ապա տողում չպետք է կարդացվի «կրունկ», այլ «կհարձակվի թիկունքից» (BDB 784, I, գ):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 49:20**  
<sup>20</sup>Ասերի համար հացն առատ է.  
**Եվ ինքը կտա արքայական համադամ կերակուրներ:**

**49:20 «Ասեր»** Ասեր բառի հիմնական նշանակությունը կարծես թե «երջանիկ մարդն» է (BDB 81): Հնարավոր է սա ակնարկում է Հետու կողմից իրենց տրված հողաբաժնի միջով անցնող առևտրային ճանապարհների վերահսկումը, որը նրանց շատ է հարստացնում: Նաև, նրանց հողի բերրիությունը նշանակում է, որ նրանք են մատակարարելու կերակրատեսակներ արքայական սեղանի համար (տես՝ 2 Օրինաց 33:24-25):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 49:21**  
<sup>21</sup>Նեփթաղիմը մի ազատ արձակված եղջերու է.  
**Նա գեղեցիկ խոսքեր է տալիս:**

**49:21**

**NASB, NKJV**  
**NKJV, JPSOA**  
**TEV**  
**NJB**  
**LXX**  
**Peshitta**  
**REB**

«ազատ արձակված եղջերու»  
 «ազատ արձակված եղնիկ»  
 «ազատ վազող եղնիկ»  
 «սրընթաց եղնիկ»  
 «տարածվող ճյուղ»  
 «սրընթաց պատգամաբեր»  
 «տարածվող տերեփնա /ծառ/»

ԲԱՅԸ (BDB 1018, KB 1511, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) կարող է նշանակել՝

1. ուղարկված
  - ա. մարդիկ
  - բ. առարկաներ
  - գ. պատգամ
2. նետել
3. տարածվել (այիսնքն՝ սփռվել, տես՝ LXX, REB)
4. ուղարկել հեռու (տես՝ Ծննդ. 3:23)
5. արձակել (տես՝ Սաղմ. 50:19)

❖

**NASB**  
**NKJV, Peshitta**  
**NRSV, TEV, NJB, JPSOA**  
**LXX**  
**REB**

«Նա գեղեցիկ խոսքեր է տալիս»  
 «Նա բարի խոսքեր է տալիս»  
 «որ ծնում է սիրունիկ հորթեր»  
 «իր պտղին գեղեցկություն է շնորհում»  
 «սիրունիկ ոստեր է տալիս»

«Գեղեցիկ» կամ «սիրունիկ» (BDB 1051 I, րֆշ, տես՝ Սաղմ. 16:6) թարգմանված բառը, միևնույն երեք քաղաձայներով, կարող է նաև նշանակել «եղջյուր» (տես՝ Ռոթերհամի Emphasized Bible):

UBS *Ծննդոցի Ձեռնարկ /UBS Handbook on Genesis/* գիրքը մի օգտակար սահմանում է ներկայացնում, «Եղնիկից» «տերեփնա» և «ոստերից» «բառեր» փոփոխությունների պատճառը եբրայերենում ձայնավորների նշաններն են» (էջ՝ 1094):

Քանի որ կենդանական փոխարելությունները, ոչ թե բուսաբանական, ընդունված է Ծննդոց 49-ում և քանի որ բանաստեղծության տողերն իրար համահունչ են, հ. 21՝ «սիրունիկ հորթեր» կամ «գեղեցիկ հորթեր» խոսքը լավագույնս է համապատասխանում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 49:22-26**  
<sup>22</sup>Մի պտղատու ոստ է Հովսեփը,  
 Մի պտղաբեր ոստ՝ ջրհորի վրա,  
 Ում ճյուղերը պատի վրա են տարածվում:  
<sup>23</sup>Եվ նետաձիգները սաստիկ վշտացրին նրան,

**Նետահարեցին, և առեցին նրան .**

**24 Բայց նրա աղեղը զորեղ մնաց,  
Եվ նրա ձեռքի բազուկները զորացան,  
Հակոբի Հզորի ձեռքով .**

**(Այնտեղից է հովիվը՝ Իսրայելի վեմը):**

**25 Քո հոր Աստծուց, որ քեզ օգնելու է,  
Եվ Ամենակարողից, որ քեզ օրհնելու է  
Երկնքի օրհնություններով վերևից,  
Խորության օրհնություններով, որ պառկած է ցածուս  
Ստինքների և արգանդի օրհնություններով .**

**26 Քո հոր օրհնություններն  
Իմ զավակների օրհնություններից վեր է՝  
Հավիտենական բլուրների չափ .  
Թող դրանք Հովսեփի գլխի համար լինեն,  
Իր եղբայրների առաջնորդի թագին:**

**49:22-26 «Հովսեփ»** Ինչպես որ Հուդան առանձնացվեց Լիայի որդիների միջից ստանձնելու ընտանիքի առաջնորդի դիրքը (այսինքն՝ Մեսիայի ճյուղը), այնպես էլ Հովսեփը առանձնացվեց Ռաբելի որդիներից ստանալու կրկնակի ժառանգություն (այսինքն՝ Եփրեմն ու Մանասեն): Սա շատ բանաստեղծական է և չնայած դրան ազդեցիկ խոսք Հովսեփի ստացվածքի վերաբերյալ:

**49:22** Այս համարում առկա է բառախաղ և փոխաբերություն:

1. *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, BDB 826, KB 963, կրկնվում է երկու անգամ
2. առաջին տողում «ոստ» բառացի նշանակում է «որդի», իսկ երրորդ տողում՝ «դուստր»:

Սրանք գյուղատնտեսական փոխաբերություններ են արագ աճման և պտղաբեր բույսի վերաբերյալ (տես՝ 2 Օրինաց 33:13-16):

Որոշ մեկնաբանների համար կասկածելի է կենդանիների վերաբերյալ փոխաբերություններից (տես՝ հհ. 9,14,17,21,27, և 2 Օր. 33:17-ում դրան համազորը)՝ դաշտում գտնվող ավանակի նկարագրությունից անմիջական անցումը և փոփոխությունը (տես՝ JPSOA, TEV): Հնագույն լեզվով ներկայացված պոեզիան, որը կիրառում է հազվադեպ բառեր, սայթաքուն՝ անվստահելի է:

**49:23-25** Այս համարները այլաբանորեն կապված են՝

1. Հովսեփի փորձառությանը իր եղբայրների, Պետափրեսի և բանտարկության կյանքի հետ
2. Հովսեփի որդիների ցեղերի հետ (Եփրեմի և Մանասեի) և Քանանում իրենց ցեղային հողաբաժինների նվաճման հետ (Հեսու)

Ուշադրություն դարձրեք Աստծո համար գործածվող տարբեր անուններին:

1. Հակոբի Հզորը, հ. 24, BDB 7 ԿԱՌՈՒՑՎԱԾ 784, տես՝ Սաղմ. 132:2,5; Ես. 49:26 (Իսրայելի Հզորը, Ես. 1:24):
2. Հովիվը, հ. 24, BDB 944, KB 1258, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 23:1; 80:1 (նմանատիպ հովվական դարձվածք, Սաղմ. 78:52)
3. Իսրայելի Վեմը (կամ Ժայռը), հ. 24, BDB 6 ԿԱՌՈՒՑՎԱԾ 975, տես՝ Ես. 30:29, հավանաբար կապված Մեսիական անվան՝ «Անկյունաքարի» հետ, Սաղմ. 118:22, Եսայիի 28:16 (տես՝ հաջորդող Հատուկ Թեման)
4. քո հայրերի Աստվածը, հ. 25, տես՝ Ծննդ. 26:3,24, 28:13, 32:9 (այսինքն՝ Աբրահամի, Իսահակի. նկատե՛ք, որ ԵՉԱԿԻՆ շեշտադրում է Հակոբի Աստծուն)
5. Ամենակարողը (բառացի՝ *Շադդայ*, տես՝ JPSOA), հ. 25, BDB 994, տես՝ 17:1, տես՝ Հատուկ Թեմա . Աստծո անունները, 12:1-ում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. «ՔԱՐ» (BDB 6, KB 7) և «ԱՆԿՅՈՒՆԱԲԱՐ» (BDB 819, KB 944)  
SPECIAL TOPIC: “STONE” (BDB 6, KB 7) and “CORNERSTONE” (BDB 819, KB 944)**

I. ՀԿ կիրառությունը

Ա. Քարի գաղափարը, որպես ամուր, դիմացկուն առարկա, որը լավ հիմք էր հանդիսանում, գործածվում էր նկարագրելու համար ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ. 18:2):

- Բ. Այս վերածվեց Մեսիական տիտղոսի՝ անվան (տես՝ Ծննդ.49:24; Սաղմ.118:22; Ես. 28:16):
- Գ. Այն եկավ ներկայացնելու Մեսիայի միջոցով ՅԱՀՎԵԻ դատաստանը (տես՝ Ես.8:14 Դան. 2:34-35,44-45):
- Դ. Սա վերածվեց շինության փոխաբերության՝
1. մի հիմնաքարի, որը առաջինն են դնում, որը ապահով է և ամբողջ շինության անկյունները դրա միջոցով են ուղղվում, և կոչվեց «անկյունաքար»
  2. այն կարող է նաև վերաբերել վերջին քարին, որը դրվում է շինության մեջ իր տեղը, որը իրար է միացնում պատերը (տես՝ Չաք.4:7; Եփես.2:20,21), որը կոչվում է «գլխավոր քար»՝ Եբրայերեն *rush* (այսինքն՝ գլուխ) բառից:
  3. այն կարող է վերաբերել «բանալի՝ հիմնական քարին» որը դռան կամարի մեջտեղում էր դրվում և պահում էր ամբողջ պատի ծանրությունը:
- II. ՆԿ կիրառությունը
- Ա. Իր մասին խոսելիս մի քանի անգամ Հիսուսը մեջբերեց Սաղմոս 118-ից (տես՝ Մատթ. 21:41-46; Մարկ.12:10-11; Դուկ.20:17):
- Բ. Պողոսը գործածում է Սաղմոս 118-ը՝ անհավատ, ապստամբ Իսրայելին ՅԱՀՎԵԻ մերժման հետ կապված (տես՝ Հռոմ.9:33):
- Գ. Պողոսը կիրառում է «անկյունաքարի» գաղափարը Եփես.2:20-22, վկայակոչելով Քրիստոսին:
- Դ. Պետրոսը կիրառում է Հիսուսի մասին այս հասկացությունը 1 Պետ.2:1-10: Հիսուսը անկյունաքարն է և հավատացյալները կենդանի քարերն են (այսինքն՝ հավատացյալները որպես տաճարներ, տես՝ 1 Կորնթ.6:19) կառուցված Նրա վրա (այսինքն՝ Հիսուսը նոր Տաճարն է, տես՝ Մարկ.14:58; Մատթ.12:6; Հովհ.2:19-20): Հրեաները մերժելով Հիսուս Մեսիային մերժեցին իրենց հավատքի հենց հիմքը:
- III. Աստվածաբանական սահմանումներ
- Ա. ՅԱՀՎԵԻ թույլատրեց Դավթին, Մողոմոնին կառուցելու տաճար: Նա ասաց նրանց, որ եթե պահեն ուխտը, Նա կօրհնի նրանց և կլինի նրանց հետ (տես՝ 2 Թագ.7), սակայն եթե նրանք չպահեն, ապա տաճարը կավերվի (տես՝ 3 Թագ.9:1-9):
- Բ. Ռաբբիական հուդայականությունը կենտրոնացել էր ձևի և ծեսերի վրա, անտեսելով անձնական հավատքի ասպեկտը (տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38): Աստված փնտրում է ամենօրյա, անձնական, աստվածահաճո փոխհարաբերություն Իր պատկերով ստեղծված մարդկանց հետ (տես՝ Ծննդ.1:26-27): Դուկ.20:17-18 պարունակում է դատաստանի սարսափելի խոսքեր, ինչպես և Մատթ.5:20, որն ուղղված է հուդայականությանը:
- Գ. Հիսուսը կիրառեց տաճարի գաղափարը ներկայացնելու Իր ֆիզիկական մարմինը (տես՝ Հովհ.2:19-22): Այն շարունակվում է և ընդլայնում Հիսուսի վրա եղած անձնական հավատքի գաղափարը, քանի որ Մեսիան է հանդիսանում ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերության ճանապարհը (այսինքն՝ Հովհ.14:6; 1 Հովհ.5:10-12):
- Դ. Փրկության նպատակն է մարդկանց մեջ վերականգնել Աստծո ապականված պատկերը (Ծննդ.1:26-27 և գլուխ 3), որպեսզի Աստծո հետ փոխհարաբերությունը դառնա հնարավոր: Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է: Հավատացյալները պետք է դառնան կենդանի քարեր (այսինքն՝ փոքր տաճարներ կառուցված Քրիստոսի վրա՝ Նրա թողած օրինակով):
- Ե. Հիսուսն է մեր հավատքի հիմքը և մեր հավատքի անկյունաքարը (այսինքն՝ Ալֆան և Օմեգան): Մինչդեռ Նա նաև գալթակողության քարը և անարգված քարն է: Կորցնել Նրան նշանակում է կորցնել ամեն բան: Այստեղ չկա ձեռնպահ՝ չեզոք դիրք:

**49:25-26 «օրհնություններ»** Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ է օգտագործվում այս տերմինը:

1. ով օրհնում ե քեզ, հ. 25, BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 28:3, 48:3
2. երկնքի օրհնություններով, հ. 25, BDB 139, տես՝ 27:28, 2 Օր. 33:13
3. խորության օրհնություններով, հ. 25, BDB 139, տես՝ 2 Օր. 33:13
4. ստինքների և արգանդի օրհնություններով, հ. 25, BDB 139
5. քո հոր օրհնությունները, հ. 26, BDB 139
6. իմ գավակների օրհնություններից վեր են, հ. 26 (եբրայերեն խրթին արտահայտություն է և չի բովանդակում «օրհնությունները» դարձյալ):

Օրհնությունը պետք էր Նահապետներին, որպեսզի վստահեցնեք նրանց, որ Աստծո նրեկայությունն իրենց հետ էր (տես՝ Ծննդ. 12:2, 22:17, 24:1, 26:12, 30:30) և իրենց միջոցով օրհնում է ուրիշներին (տես՝ Ծննդ. 12:2-3, 22:18, 30:27, 39:5): Սա եղել է Աստծո սկզբնական նպատակը Իր ստեղծագործության

համար (տես՝ 1:22,28): Մա այն աշխարհը չէ, որն Աստված մտադիր էր ունենալ (տես՝ Ծննդոց 3): Հովսեփի աստվածավախությունը թույլ տվեց Աստծուն ցույց տալու Իր սկզբնական նպատակը իր և իր ընտանիքի համար:

**49:25 «Երկնքի օրհնություններով վերևից,**

**Խորության օրհնություններով, որ պառկած է ցածուս**

**Ստինքների և արգանդի օրհնություններով»** Մա երեքպատիկ շեշտադրություն է բերքի, նախիրների և մարդկային բազմացման առատության վրա: Մա այն է, ինչ ՅԱՀՎԵՆ ուզում էր անել Եդեմում գտնվող մարդկության համար:

«Երկինք» և «խորություն» բառերը գործածվում են որպես փոխաբերություններ հնարավորին ամենալայն, ամենամեծ օրհնությունների համար: Երկուսն էլ առնչվում էին առատ բերքն ու խոտերը՝ բույսերը խոնավեցնելու՝ ջրելու հետ (տես՝ 2 Օր. 33:13):

**49:26** Երկրորդ և երրորդ տողերի միջև առկա է զուգահեռություն, սակայն երկուսն էլ երբայերենում դժվարություններ ունեն՝

1. հավիտենական լեռների (BDB 249) կամ նախահայրերի /հայերենում՝ զավակների/ (BDB 223) նաև ենթադրում է, որ այն վերաբերում է հավիտենական լեռներին, ինչպես LXX տարբերակում է և համազորը 2 Օր. 33:15-ում է. MT տալիս է «նախահայրեր», սակայն այս ձևը միայն այստեղ է տրված) օրհնությունները:
2. հավիտենական բլուրների օրհնությունները

Զուգահեռների այսպիսի համատեքստում երկու տեղերն էլ հավանաբար կապ ունեն սարերի և բլուրների հետ, որը գործության և մնայունի դարձվածքներ են:

❖ **«մեկի /Հովսեփի/ գլխի համար լինեն, իր եղբայրների առաջնորդի թագին»** «Տարբերվող» /անգլերենում/ (BDB 634) բառը «Նագովրեցի» արմատից է, որը նշանակում է «առանձնացված» (տես՝ TEV) կամ «սրբացված»: Հավանական է, որ այն մատնանշում է իշխանի կամ պաշտոնյայի (տես՝ Նաում 3:17): Այն կարող է վերաբերել Եգիպտոսում Հովսեփի առաջնորդի պաշտոնին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 49:27**  
**<sup>27</sup>Բենիամինը գիշատող գայլ է,**  
**Առավոտյան կուլ է տալու որսը,**  
**Իսկ երեկոյան բաժանելու է կողոպուտը»:**

**49:27 «Բենիամին»** Նա նկարագրված է որպես գիշատիչ գայլ (BDB 382, KB 380, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Ոմանք ասում են, որ նա կերավ իր առջև դրված բոլոր հինգ բաժինն էլ (տես՝ Ծննդ. 43:34): Նրա հայրը գիտեր նրա ուտելու հանդեպ ունեցած մեծ ախորժակը: Համար 27 բացասական իմաստով է. տե՛ս Դատավորաց 19-21:

Լյապուղը հհ. 17 և 27 մեկնաբանում է դրական իմաստով: Երբայական պոեզիան շատ երկիմաստ է, քանի որ երբայական պոեզիայի ժանրը և հազվադեպ բառերի կիրառությունը հանգերը (շեշտադրված վանկերը) համապատասխանեցնում են:

❖ **«որս»** Երբայերեն 77 (BDB 723 I) արմատը արտահայտում է հավերժություն (այսինքն՝ Ծննդ. 49:26, և հիմնականում Սաղմոսներում և Եսայիայում), սակայն մի քանի տեքստերում (տես՝ այստեղ, Ես. 33:23, Սոփ. 3:8) արտահայտում է ավար, որը վերցվել է պատերազմում և կիրառվում է «որս» փոխաբերությունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 49:28-33**  
**<sup>28</sup>Բոլոր այս Իսրայելի ցեղերը տասներկուսն են. և այս է, որ նրանց հայրը խոսեց նրանց հետ և օրհնեց նրանց. ամեն մեկի օրհնության համաձայն օրհնեց նրանց: <sup>29</sup>Եվ պատվիրեց նրանց և ասաց նրանց. «Ես միանալու եմ իմ ժողովրդին. իմ հայրերի հետ այն քարայրի մեջ թաղեցեք ինձ, որ քեռացի Եփրոնի արտում է. <sup>30</sup>այն քարայրի մեջ, որ Քանանի երկրում, Մամբրեի դիմաց գտնվող Մաքփելայի արտում է, որ Աբրահամն այն արտի հետ միասին գնեց քեռացի Եփրոնից՝ որպես սեփական շիրմատեղի: <sup>31</sup>Այնտեղ թաղեցին Աբրահամին և նրա կնոջը՝ Սառային. այնտեղ թաղեցին Իսահակին և նրա կնոջը՝ Ռեբեկային. և ես էլ այնտեղ թաղեցի Լիային: <sup>32</sup>Այն արտը և այնտեղ գտնվող քարայրը Քեռի որդիներից են գնված»:** <sup>33</sup>Եվ

**Հակոբը վերջացրեց իր որդիներին պատվերներ տալը, իր ոտքերը անկողնու մեջ հավաքեց և հոգին ավանդեց, և իր ժողովրդին միացավ:**

**49:29 «միանալու են իմ ժողովրդին»** Սա մի դարձվածք է մահվան և թաղման վերաբերյալ (տես՝ 25:8,17; 35:29; 49:33; Թվոց 20:26; 27:13; 31:2; 2 Օր. 32:50; Դատ. 2:10; 4 Թագ. 22:20): Արդյոք սա վերաբերում է Շեղում ընտանեկի վերամիավորման, թե ոչ, անհայտ է: Հնարավոր է այս ասելով նկատի ունի ընտանեկան գերեզմանները կամ քարայրները: Բայց *teraphim* (տես՝ 31:19,34,35, տես՝ Հատուկ Թեմա 31:19-ում) /ընտանեկան աստվածներ/ երկրպագելու պատճառով հնարավոր է, որ դա ունեցել է ավելի լայն ենթատեքստ (տես՝ Մատթ. 22:31-32):

❖ **«քարայրի մեջ»** Սա վերաբերում է Նահապետների թաղման տեղին, որը գնվել էր քետացի Եփրոնից, որի մասին արձանագրված է Ծննդ. 23:1-19-ում: Սա փոխանցում է այն հասկացությունը, որ ուխտի ընտանիքները հանդերձյալ կյանքում միավորվում են:

Հակոբը քողարկված կերպով հռչակում է, որ իր ընտանիքը Եգիպտոսում չի մնալու, այլ ինչ որ մի ժամանակ է գալու, որ վերադառնալու են Քանան (տես՝ 15:12-21): Հովսեփը նմանատիպ մի մարգարեական խնդրանքն է հայցում Ծննդոց 50:24-25-ում: Եգիպտոսը ժամանակավոր կացարան էր, որը վերածվելու էր շահագործման վայրի:

**49:31 «Ռեբեկա ... Լիա»** Սա այս երկուսի թաղման վերաբերյալ առաջին պատմությունն է: Ռաբբիներն ասում են, որ Հովսեփը հնարավոր է բարկացել էր, որ իր մայրը թաղվել էր ճանապարհի եզրին, սակայն սա կարծես թե մարգարեական ակնարկ էր այն ժամանակների վերաբերյալ, երբ հյուսիսային ցեղերը տարվելու էին գերության և Ռաբելը ողբալու էր իր երեխաների համար, երբ տեսներ նրանց իր կողքով անցնելիս, քանի որ նա թաղված է հենց այն ճանապարհի եզրին, որով տարվելու էին գերության (տես՝ Երեմ. 31:15):

**49:33 «իր ոտքերը անկողնու մեջ հավաքեց»** Եթե Հակոբն այս ամբողջ ընթացքում նստած էր, ապա սա նշանակում է, որ նա պառկեց, այլապես սա կարծես թե վերաբերում է արգանդում պտղի դիրքին: Ապա նա իր վերջին շունչն էր փչելու (մահվան համար օգտագործվող դարձվածք):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Հակոբը որդեգրում Եփրեմին ու Մանասեին:
2. Ո՞րն է Ծննդոց 48:15-16-ում գտնվող Աստծո երեքատիկ անունների կարևորությունը:
3. Ինչպե՞ս են գլուխ 49-ի օրհնությունները կապված Ծննդոց 29:30-30:24-ում գտնվող այս որդիների անունների հետ:
4. Ո՞ր երկու որդիները ստացան ամենամեծ օրհնությունները և օրհնության որ հատկանիշն ենք հիշում նրանց հետ կապված:

**ԾՆՆԴՈՑ 50**  
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ**  
**ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

NASB	NKJV	NRSV	TEV	NJB (հետևում է MT)
Իսրայելի մահը	Հակոբի մահն ու թաղումը (49:29-50:14)	Հակոբի մահը և Հովսեփի վերջին օրերը (49:29-50:26)	Հակոբի մահն ու թաղումը (49:29-50:14)	Հակոբի թաղումը
50:1-3	50:1-3	50:1-3	50:1-3	50:1-3ա
50:4-6	50:4-11	50:4-6	50:4-5 50:6	50:3բ-6
50:7-11		50:7-14	50:7-9	50:7-9
Թաղում Մաքսիկայում 50:12-14	50:12-14		50:10-11 50:12-14	50:10-11 50:12-13 50:14
	Հովսեփը հորդորում է իր եղբայրներին		Հովսեփը հորդորում է իր եղբայրներին	Հակոբի մահից մինչև Հովսեփի մահը
50:15-21	50:15-21	50:15-21	50:15-17 50:18 50:19-21	50:15-17 50:18-21
Հովսեփի մահը	Հովսեփի մահը		Հովսեփի մահը	
50:22-26	50:22-26	50:22-23 50:24-26	50:22-26	50:22-25 50:26

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԸ**

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն



# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 50:1-3

<sup>1</sup>Հովսեփն ընկավ իր հոր երեսի վրա և լաց եղավ նրա վրա և համբուրեց նրան: <sup>2</sup>Եվ Հովսեփն իր բժիշկ ծառաներին հրամայեց, որ իր հորը զմռսեն և բժիշկները զմռսեցին Իսրայելին: <sup>3</sup>Եվ լրացան նրա քառասուն օրերը, որովհետև այսպես էին լրանում զմռսվածների օրերը, և եգիպտացիք նրա համար յոթանասուն օր սուղ արեցին:

**50:1** Այս համարը ցույց է տալիս մահվան սուգի հետ կապված երեք նշաններ՝

1. ընկավ իր հոր երեսի վրա, BDB 656, KB 709, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, նման է 33:4-ին
2. լաց եղավ նրա վրա, BDB 113, KB 129, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
3. համբուրեց նրան, BDB 676, KB 730, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

**50:2 «բժիշկներ»** Սա «բուժել» ԲԱՅԻ (BDB 950, KB 1272, տես՝ 2 Մնաց. 16:12) *Qal* նԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆ է: Պրոֆեսիոնալ զմռսողների մի խումբ կար, սակայն Հովսեփը հավանաբար օգտվեց բժիշկների ծառայությունից, որպեսզի գերծ մնա եգիպտական զմռսման կրոնական ծեսերից (NASB Սերտողության Աստվածաշունչ /NASB Study Bible/, էջ՝ 73): Հակոբը զմռսվեց, որպեսզի ավելի ուշ հնարավոր լիներ նրան թաղել Քանանում գտնվող ընտանեկան գերեզման հանդիսացող քարայրում (տես՝ 49:29-32):

❖ **«զմռսել»** Այս ԲԱՅԸ (BDB 334, KB 333, *Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) նշանակում է «համենել», «համեմունքներ պատրաստել» (տես՝ Երգ Երգոց 2:13) կամ «զմռսել»: Սա եգիպտական յուրահատուկ ընթացակարգ էր, որի մասին ՀԿ-ում միայն այստեղ կարելի է գտնել: Այն ունի կրոնական առնչություն Օսիրիսի հետ (սկսել է մոտ Ք.Ա.2700թ-ին) և հանդերձյալ կյանքի վերաբերյալ եգիպտական հավատամքի հետ:

Այն իր մեջ ներառում է՝

1. ներքին օրգանների հեռացում և առանձին սափորների մեջ պահպանում
2. ավելի ուշ շրջանում ուղեղը նույնպես հեռացվում էր և դրվում առանձին անոթի մեջ
3. մարմինը փաթաթվում էր խեժապատ քաթանե կտորով

Զմռսման պրոցեսի վերաբերյալ միակ գրավոր արձանագրությունները գտնվում են Հերոդոտոսի *Պատմություն*, 2:85-90 և Դիոդորոս Սիկուլուսի *Պատմություն* 1.91 /Herodotus, *History* 2:85-90 and Diodorus Siculus, *History* 1.91/: Ավելի լայն քննարկման համար տե՛ս ABD, հատոր 2, էջ՝ 490-495, և Ջեյմս Մ. Ֆրիմեն, *Աստվածաշնչի բարքերն ու սովորույթները*, էջ՝ 56-58 /James M. Freeman, *Manners and Customs of the Bible*, pp. 56-58/):

Այս քննարկումը ոչ մի կերպ նկատի չունի քննադատելու ժամանակակից զմռսման մեթոդները: Դրանք չունեն կրոնական ոչ մի նկատառումներ ինչպես եգիպտական արարողությունները: Շատերը ենթադրում են, որ Ծննդ. 3:19-ի անեծքն է այստեղ գործում: Անձամբ ես կարծում եմ, որ կյանքի ֆիզիկական մնացորդները (այսինքն՝ մարդու մարմինը՝ դիակը) այնքան էլ կարևոր չեն:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻԱԿԻԶՈՒՄ

### SPECIAL TOPIC: CREMATION

#### I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Դիակիզումը (այրումը) Ղևտացիներում մահապատժի ենթարկման չորս կերպերից մեկն էր (տես՝ 20:14; 21:9, օրինակներ՝ Ծննդ. 28:24 և Հեսու 7:15,25):

Բ. Սավուդի ընկերները փղշտացիներից ետ պահանջեցին նրա և իր երեք որդիների մարմինները և դրանք այրեցին (BDB 976, LXX) դրանք նախքան նրանց ոսկորները Բենիամինի երկրում թաղելը (տես՝ 1 Թագ. 31:12-13, բաց է թողնված 1 Մնաց. 10:12 համազոր հատվածում): Այս տեքստը միակ դրական իմաստով ներկայացված հատվածն է դիակիզման վերաբերյալ ՀԿ-ում (տես՝ *Հուդայիկա Հանրագիտարան*, հատոր՝ 5, էջ՝ 1074): Հնարավոր է այն նաև վերաբերում է գերեզմանատեղիում այրվող համեմունքների (տես՝ 2 Մնաց. 16:14; 21:19; Երեմ. 34:5):

Գ. Այրվող դիակները դատաստանի սիմվոլ էին հանդիսանում՝

1. Հուդայից մի մարգարե կանխատեսում է Բեթելում քահանաների ողջակիզում գոհասեղանի վրա (տես՝ 3 Թագ. 13:2)

2. Էշաթոնում Բանանի օտար զավթիչները այրվելու էին և թաղվելու (տես՝ Եզեկ. 39:11-16)

3. Ամովս 6:10-ում դատաստանի աղետի հետ է կապվում (խորթին տեքստ)

Դ. Դիակիզման հարցը երբեմն ՀԿ-յան կրակի կիրառության հետ է սխալմամբ կապվել, որը հանդիսանում էր որպես դատաստանի փոխաբերություն (տես՝ Ես. 30:33): Դիակիզման փոխաբերությունները (այսինքն՝ «պիրե») սովորաբար շեշտադրում էին էսկատոլոգիական դատաստանը:

Ե. Դիակիզումը դիտարկվում էր որպես նվաստացում (տես՝ Ամովս 2:1):

Զ. ՀՄԱ-ի բոլոր երկրները թաղում էին կատարում (տես՝ Ռոլանդ դըՎոքս, *Հնագույն Իսրայել*, հատոր՝ 1, էջ՝ 57 /Roland deVaux, *Ancient Israel*):

## II. ՌԱԲԲԻԱԿԱՆ ՀՈՒԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Վաղ շրջանի ռաբբիներից շատերը պնդում են, որը համաձայն 2 Օրինաց 21:23-ի թաղումը պարտադիր է:

Բ. Դիակիզումը արգելված է Թալմուդում (Սանհ. 7:2,24բ) և Միշնայում (Աբոդիա Չարա 1. 3):

Գ. Ժամանակակից Հուդայականությունը թույլ է տալիս դիակիզվածներին թաղել հրեական գերեզմաններում (տես՝ *Հուդայիկա Հանրագիտարան*, Հատոր՝ 5, էջ՝ 1074), հավանաբար նացիստների կողմից հրեաների դիակիզումից ազդված լինելով:

## III. ՀՈՒՆԱՍՏԱՆ ԵՎ ՀՌՈՍ

Ա. Այս երկու քաղաքակրթություններն էլ գործադրում էին դիակիզում

1. Հունաստանը, կանոնավոր կերպով (Սոֆոկլես, *Էլեկտրա*, 1136-1139)

2. Հռոմը, որպես հնարավոր տարբերակ, սակայն ոչ շատ ընդունված (Ցիցերոն, *Դելեգ 2,22,56*)

Բ. Միջերկրականի մշակույթները ունեին այլ մոտեցում դիակիզմանը, քան ՀՄԱ-ի երկրները: Տակտիկուսը նշում է, որ հրեաները թաղում էին, ոչ թե այրում (*Պատմ. 5. 5*):

## IV. ՆՆՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՆԿ-ում այս թեմայի շուրջ ոչ մի քննարկում կամ նշումներ չկան: Ֆիզիկական մարմինը դիտարկվում է որպես ժամանակավոր կացարան (տես՝ 2 Կորնթացիների 5): Երկրորդ Գալստյան ժամանակ հին մարմնից ինչ-որ մի բան վերամիավորվելու է հավատացյալի հետ, սակայն մանրամասներ կամ բացատրություններ չկան (տես՝ 1 Թեսաղ. 4:13-18): Սա պարզապես «հավատքի և գործերի» հետ կապված հարց չէ Քրիստոնյաների համար: ՀԿ-ի հրեաների պես ՆԿ-ի հավատացյալները հավատում են մարմնավոր հարությանը: Էսկատոլոգիան՝ վախճանաբանությունը, ունի ֆիզիկական կողմ, սակայն ինչպես և ինչու է այդպես լինելու՝ մանրամասնորեն տրված չէ: Ֆիզիկական մնացորդների վիճակը կամ տեղը չեն ազդում Հիսուսի հետ հավատացյալի վերամիավորման վրա: Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքն է կարևոր և ոչ թե ֆիզիկական մնացորդները:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԹԱՂՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ SPECIAL TOPIC: BURIAL PRACTICES

### I. Միջազեռք

Ա. Պատշաճ կերպով կատարված թաղումը շատ կարևոր էր հանդերձյալ կյանքի համար, որը հաճախ դիտարկվում էր այս կյանքի երկարացում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ)

Բ. Միջազեռքյան անեծքի օրինակներից է. «Թող երկիրը /հողը/ չընդունի քո դիերը»:

### II. Հին Կտակարան

Ա. Պատշաճ թաղումը շատ կարևոր էր (տես՝ Ժող. 6:3):

Բ. Այն շատ հապճեպ էր կատարվում (տես՝ Սառայի ծննդոց 23-ում և Ռաբելին ծննդ. 35:19-ում. ուշադրություն դարձրեք 2 Օր. 21:23):

Գ. Ոչ պատշաճ թաղումը անարգանքի և մեղքի նշան էր.

1. 2 Օրինաց 28:26
2. Եսայի 14:20
3. Երեմիա 8:2; 22:19

- Դ. Թաղումը կատարվում էր հնարավորինս տան շրջակայքում գտնվող ընտանեկան դամբարանում (այսինքն՝ «ննջեց իր հայրերի հետ»)
- Ե. Եգիպտոսի պես գմռում չէր կատարվում: Մարդը հողից է ստեղծվել և պետք է վերադառնա հողին (տես՝ Ծննդ.3:19; Սաղմ.103:14; 104:29): Նաև տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ ԴԻԱԿԻՉՈՒՄ
2. Ռաբբիական հուղայականության մեջ դժվար էր հավասարակշռել մարմնի (դիակի) հետ պատշաճ հարգանքի և դիպչելու հետ կապված ծիսական պղծության հասկացությունները՝ մեռած մարմնի հետ առնչվող օրենքների համաձայն:

### III. Նոր Կտակարան

- Ա. Մահվանը անմիջապես հետևում էր թաղումը՝ սովորաբար քսանչորս ժամվա ընթացքում: Հրեաները հաճախ երեք օր հսկում էին գերեզմանը, հավատարով որ հնարավոր է այս ժամանակաընթացքում հոգին վերադառնա մարմնի մեջ (տես՝ Հովհ.11:39):
- Բ. Թաղումից առաջ մարմինը լվանում էին և փաթաթում համեմունքներով (տես՝ Հովհ.11:44; 19:39-40):
- Գ. Առաջին դարի Պաղեստինում չկային որևէ հատուկ կերպով տարբերվող Քրիստոնեական թաղման ընթացակարգեր (կամ գերեզմանում դրվող առարկաններ):

**50:3 «քառասուն օր»** 40 թիվը (BDB 917) կարող է բառացի լինել կամ այլաբանորեն: Եբրայեցիները ազգային հերոսների համար սգում էին 30 օր (տես՝ Թվոց 20:29, 2 Օր. 34:8): Դա հարգանքի նշան էր համարվում:

❖ **«յոթանասուն օր»** Հակոբը արքայական թաղում ունեցավ: Փարավոնն ինքը սգաց յոթանասուներկու օր (հույն պատմաբան՝ Դիոդորոս [1.72]): Եգիպտացիք սգացին Հակոբի մահը հարգելով Հովսեփին:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐԲՈՒՄ ԱՌԿԱ ՍԻՄՎՈՒԻԿ ԹՎԵՐԸ SPECIAL TOPIC: SYMBOLIC NUMBERS IN SCRIPTURE

Ա. Որոշ թվեր կիրառվում էին թե՛ որպես թիվ և թե՛ որպես խորհրդապատկեր.

1. Մեկ – Աստված (օր. 2 Օր.6:4; Եփ. 4:4-6)
2. Չորս – ամբողջ երկիրը (այսինքն՝ չորս անկյունները, չորս կողմերը, օր. Ես. 11:12; Եր. 49:36; Դան. 7: 2; 11:4; Չաք. 2: 6; Մաթ. 24:31; Մարկ. 13:29; Հայտ. 7:1)
3. Վեց – մարդու անկատար լինելը (7-ից մեկով պակաս, օր. Հայտ.13:18)
4. Յոթ – աստվածային կատարելությունը (արարչագործության յոթ օրերը): Ուշադրություն դարձրեք Հայտնության գրքում սիմվոլիկ կիրառությունը.
  - ա. յոթ աշտանակները, Հայտ. 1:12,20; 2:1
  - բ. յոթ աստղերը, Հայտ. 1:16,20; 2:1
  - գ. յոթ եկեղեցիները, Հայտ. 1:20
  - դ. Աստծո յոթ հոգիները, Հայտ. 3:1; 4:5; 5:6
  - ե. յոթ ճրագակալները, Հայտ. 4:5
  - զ. յոթ կնիքները, Հայտ. 5:1,5
  - է. յոթ եղջյուրները և յոթ աչքերը, Հայտ. 5:6 27
  - ը. յոթ հրեշտակները, Հայտ. 8:2,6; 15:1,6,7,8; 16:1; 17:1
  - թ. յոթ փողերը, Հայտ. 8:2,6
  - ժ. յոթ որոտները, Հայտ.10:3,4
  - ի. յոթ հազարը, Հայտ.11:13
  - լ. յոթ գլուխները, Հայտ. 13:1; 17:3,7,9
  - խ. յոթ պատուհասները, Հայտ. 15:1,6,8; 21:9
  - ծ. յոթ սկավառակները, Հայտ.15:7; 21:9
  - կ. յոթ թագավորները, Հայտ. 17:10
5. Տաս – ամբողջականություն
  - ա. կիրառված Ավետարաններում՝
    - (1) Մատթ.20:24; 25:1,28
    - (2) Մարկ.10:41

- (3) Ղուկ.14:31; 15:8; 17:12,17; 19:13,16,17,24,25
- բ. կիրառված Հայտնության մեջ՝  
 (1) Հայտ. 2:10, նեղության տաս օրերը  
 (2) Հայտ.12:3; 17:3,7,12,16, տաս եղջյուրները  
 (3) 13:1, տաս թագերը
- գ. 10-ի բազմապատիկները Հայտնության մեջ  
 (1)  $144,000=12 \times 12 \times 1000$ , տես Հայտ. 7:4; 14:1,3  
 (2)  $1,000=10 \times 10 \times 10$ , տես Հայտ. 20:2,3,6
6. Տասներկու – մարդկանց խումբ  
 ա. Հակոբի տասներկու որդիները (Իսրայելի տասներկու ցեղերը, Ծննդ.35:22; 49:28)  
 բ. տասներկու պուները, Ելից 24:4  
 գ. Քահանայապետի լանջապանակի տասներկու քարերը, Ելից 28:21; 39:14  
 դ. Սրբարանի սեղանի վրա տասներկու առաջավորության հացերը (տասներկու ցեղերի համար Աստծո մատակարարման խորհրդապատկերը), Ղևտ.25:5; Ել. 25:30  
 ե. տասներկու լրտեսները, 2 Օր.1:23;  
 գ. Տասներկու քարերը տանողները, Հեաու 3:22; 4:2,3,4,8,9,20  
 է. տասներկու առաքյալները, Մատթ.10:1  
 ը. գործածված Հայտնության մեջ՝  
 (1) տասներկու հազար կնքվածները, Հայտ. 7:5-8  
 (2) տասներկու աստղերը, Հայտ.12:1  
 (3) տասներկու դարպասները, տասներկու հրեշտակները, տասներկու ցեղերը, Հայտ. 21:12  
 (4) հիմքի տասներկու քարերը, տասներկու առաքյալների անունները, Հայտ. 21:14  
 (5) Նոր Երուսաղեմը տասներկու հազար ասպարեզ էր, Հայտ. 21:16  
 (6) տասներկու մարգարիտներից շինված տասներկու դարպասները, Հայտ. 21:12  
 (7) կենաց ծառը՝ տասներկու տեսակի պտուղներով, Հայտ. 22:2
7. Քառասուն – ժամանակի համար կիրառվող թիվ՝  
 ա. երբեմն բառացիորեն (ելիցը և անապատում թափառելը, օր. Ելից 16:35); 2 Օր.2:7; 8:2  
 բ. կարող է բառացի կամ սիմվոլիկ իմաստ ունենալ՝  
 (1) ջրհեղեղը, Ծննդ.7:4,17; 8:6  
 (2) Մովսեսը Սինա լեռան վրա, Ելից 24:18; 34:28; 2 Օր.9:9,11,18,25  
 (3) Մովսեսի կյանքի փուլերը.  
 (ա) քառասուն տարի Եգիպտոսում  
 (բ) քառասուն տարի անապատում  
 (գ) քառասուն տարի Իսրայելին առաջնորդելիս  
 (4) Հիսուսը քառասուն օր ծոմ պահեց, Մատթ.4:2, Մարկ.1:13; Ղուկ.4:2  
 գ. Նկատեք (համարաբարձի միջոցով) շատ անգամ այս թիվը Աստվածաշնչում հայտնվում է ժամանակի նշանակությամբ:
8. Յոթանասուն – մարդկանց համար ամբողջական թիվ  
 ա. Իսրայել, Ելից 1:5  
 բ. յոթանասուն երեցները, Ելից 24:1,9  
 գ. վախճանաբանական, Դան.9:2,24  
 դ. միսիոներական թիմ, Ղուկ.10:1,17  
 ե. ներում (70x7), Մատթ.18:22

Բ. Լավ հղումներ՝

1. Ջոն Ջ.Դեյվիս, *Աստվածաշնչյան Թվաբանություն* (John J. Davis, *Biblical Numerology*)
2. Դ. Բրենթ Սենդի, *Մաներ և Մանգաղներ* (D. Brent Sandy, *Plowshares and Pruning Hooks*)

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 50:4-6

<sup>4</sup>Եվ երբ նրա սգի օրերն անցան, Հովսեփը խոսեց Փարավոնի տան հետ՝ ասելով. «Եթե ձեր առջև հիմա շնորհ եմ գտել, խնդրեմ, Փարավոնի առաջ խոսեցե՛ք և ասացե՛ք. <sup>5</sup>«Իմ հայրն ինձ երդվեցրել է՝ ասելով. «Վհա ես մեռնում եմ, ինձ կթաղես իմ գերեզմանում, որ ես ինձ համար

**փորել եւ Քանանի երկրում»։ Եվ հիմա թող ես գնամ, հորս թաղեմ և վերադառնամ»։ Եվ Փարավոնն ասաց. «Ելի՛ր, և թաղի՛ր քո հորը, ինչպես որ նա քեզ երդվացրել է»։**

**50:4 «ձեր առջև շնորհ եմ գտել»** Սա հավանության դարձվածք է (տես՝ 18:3, 47:29, Ելից 33:13): Այս դարձվածքը միշտ գործածում է ստորադասը գերադասին խնդրելիս (այսինքն՝ Հուր 2:13): Այստեղ Հովսեփը հարգանք է ցուցաբերում Փարավոնի հանդեպ:

**50:5-6** Համար 5-ում Հովսեփը պատմում է իր հորը՝ Հակոբին (#1,2) տված երդման (BDB 989, KB 1396, երկու *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ, հհ.5,6) և վերադառնալու խոստման մասին (#3):

- 1. գնամ, BDB 748, KB 828, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
- 2. թաղեմ, BDB 868, KB 1064, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
- 3. վերադառնամ, BDB 996, KB 1427, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

Համար 6-ում Փարավոնը պատասխանում է նրա երդման հետ կապված խնդրանքին՝

- 1. գնա, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
- 2. թաղիր, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**50:5 «փորել»** Ռաբբիական Միդրաքը (Փեշիթան և REV) սա փոխարինում է «գնեցի» տերմինով (տես՝ Ծննդ. 23:17-20, 47:27-31, 49:29-32): Եբրայերեն երկու արմատներն էլ նույնն են:

- 1. փորել, BDB 500 I, տես՝ 26:25, Թվոց 21:18
- 2. գնել, BDB 500 II, տես՝ 2 Օր. 2:6

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 50:7-14**  
**7**Եվ Հովսեփը գնաց իր հորը թաղելու, և նրա հետ գնացին Փարավոնի բոլոր ծառաները, նրա տան ավագներն ու Եգիպտոս երկրի բոլոր ավագները: **8**Եվ Հովսեփի ամբողջ տունը և նրա եղբայրները և նրա հոր տունը. միայն նրանց երեխաներին և իրենց հոտերն և իրենց նախիրները թողեցին Չեսեմի երկրում: **9**Եվ նրա հետ կառքեր և ձիավորներ ելան, և մի շատ մեծ բանակ կազմվեց: **10**Եվ եկան Ատադի կալը, որ Հորդանանի մյուս կողմում է. այստեղ մեծ ու սաստիկ լացով ողբացին, և իր հոր համար յոթ օր սուգ արեց: **11**Եվ այն երկրի բնակիչ քանանացիները, երբ տեսան Ատադի կալում եղած սուգը, ասացին. «Սա եգիպտացիների մի մեծ սուգ է», դրա համար դրա անունը Աբելմիսրախիմ դրեցին, որ Հորդանանի մյուս կողմում է: **12**Եվ նրա որդիներն էլ նրան արեցին այնպես, ինչպես պատվիրել էր: **13**Եվ նրա որդիները Քանանի երկիրը տարան նրան և թաղեցին նրան Մաբփելայի արտի այրի մեջ, որ Աբրահամի արտի հետ մեկտեղ՝ որպես գերեզմանի կալվածք, ծախու էր առել քեռացի Եփրոնից՝ Մամբրեի դիմաց: **14**Եվ Հովսեփը վերադարձավ Եգիպտոս՝ իր հորը թաղելուց հետո, ինքը և եղբայրները և բոլոր նրանք, որ իր հետ գնացել էին իր հոր թաղմանը:

**50:7-8** Այս համարները ցույց են տալիս, թե ինչքան մեծ թաղում տեղի ունեցավ Քանանում՝

- 1. Հովսեփը
- 2. Փարավոնի ծառաները
- 3. նրա տան ավագները
- 4. Եգիպտոսի բոլոր ավագները
- 5. Հովսեփի ընտանիքը
- 6. Հովսեփի եղբայրները
- 7. Հակոբի ընտանիքը
- 8. ռազմական կառքեր և ձիավորներ, հ. 9

Համար 9 ակնարկում է ռազմական ուղեկցություն՝ պահակախումբ: Հնարավոր է դա Փարավոնի միջոցառումներից էր, որպեսզի վստահ լինի, որ իր լավագույն կառավարիչը ապահով կվերադառնա Եգիպտոս:

**50:8 «միայն նրանց երեխաներին և իրենց հոտերն ու նախիրները թողեցին»** Սա իրենց վերադարձը երաշխավորելու համար էր:

❖ «Չեսեմի երկրում» Տես 45:10, 46:28 գրառումները:

**50:10 «Ատադ»** Բառացիորեն սա նշանակում է «փշեր» (BDB 31): Ռաբբիներն ասում են, որ դա պաշտպանիչ մի ցանկապատ էր: Այս տեղանքն անհայտ է: Չերոմն ասում է, որ դա գտնվում էր Երիքովին մոտ: Դա ծխական ողբի վայրն էր, և պարտադիր չէ, որ լիներ գերեզմանատեղի:

- ❖ Նրանց ողբի սաստկությունը նկարագրվում է՝
  1. նրանք ողբացին այնտեղ
  2. սաստիկ
  3. վշտալի
  4. ողբով
  5. յոթ օր սուգ արեցին
  6. տե՛ս հ. 11

❖ «Հորդանանի այն կողմը» Այս արտահայտությունը՝ «այն կողմը» (BDB 81 ԿԱՉՍՈՒԹՅՈՒՆԸ BDB 719 I, տես՝ հ. 11), չի սահմանում արևելյան, թե արևմտյան ափին: Դա կախված է խոսողի դիրքից:

**50:11** Սա «Աբել» (BDB 5 II) բառի վրա կառուցված բառախաղ է, որը նշանակում է «արոտավայր» (բառացի՝ «կանաչ խոտատարածք»), իսկ «Աբել» (BDB 5 I) նշանակում է «սուգ» (AB նշում է երրորդ ստարբերակ՝ «ջրի հոսանք», էջ՝ 376):

**50:12-14** Սա ամփոփիչ խոսք է, որը նկարագրում է Հակոբին տված իրենց խոստումը:

**50:13** «քարայր» Այս քարայրը նույն 23:16-20-ում նշված այրն է:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 50:15-21**

<sup>15</sup>Եվ Հովսեփի եղբայրները տեսան, որ իրենց հայրը մեռավ, ասացին. «Գուցե Հովսեփը ռի ունի մեր դեմ և կհատուցի մեզ ամեն չարիքի համար, որ մենք գործեցինք նրա դեմ»: <sup>16</sup>Եվ Հովսեփի մոտ պատգամավոր ուղարկեցին՝ ասելով. «Քո հայրը մեռնելուց առաջ պատվիրեց և ասաց. «Այսպե՛ս ասացեք Հովսեփին. <sup>17</sup>Իմա շնորհ արա քո եղբայրներին, ների՛ր նրանց մեղքերը, որովհետև քո դեմ չարություն գործեցին», և հիմա աղաչում ենք, ների՛ր քո հոր Աստծո ծառաների հանցանքը»: Եվ Հովսեփը լաց եղավ նրանց խոսքերի համար, որ ասացին: <sup>18</sup>Եվ նրա եղբայրներն էլ գնացին ու նրա առաջ ընկան ու ասացին. «Ահա մենք քո ծառաներն ենք»: <sup>19</sup>Հովսեփն էլ ասաց նրանց. «Մի՛ վախեցեք. մի՛թե ես Աստծո փոխանորդն եմ: <sup>20</sup>Ու թեև դուք մտածեցիք ինձ չարիք պատճառել, բայց Աստված որոշեց դա լավի վերածել, ինչպես որ եղավ այսօր, այսինքն՝ որ շատ ժողովուրդ ապրեցներ: <sup>21</sup>Եվ հիմա մի՛ վախեցեք, ես ձեզ ու ձեր երեխաներին կկերակրեմ»: Եվ մխիթարեց նրանց ու քաղցրությամբ խոսեց:

- 50:15** Եղբայրների անհանգստության սաստկությունը արտահայտված է՝
1. «ռի ունի» ԲԱՅԻ մեջ (BDB 966, KB 1316), որը նախկինում գործածվեց Եսավի համար (27:41) և ակնարկվեց 49:23-ում: Այն նաև կիրառվում է Հոր 16:9, 30:21-ում: Սա շատ խիստ ԲԱՅ է:
  2. «և կհատուցի մեզ» արտահայտությունը, որը միևնույն արմատի *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՐՁԱԿ և *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ է (BDB 996, KB 1427):

**50:16-17** Սա ծանոթացնում է Հակոբից հնչած մի անհայտ մեջբերում, որը եղբայրները մեջբերում են, որպեսզի շահեն Հովսեփի բարեհաճությունը:

**50:17** Այս համարը հարթակ է պատրաստում հհ. 19-20-ում Հովսեփի հավատքի դավանանքի համար: Եղբայրների վախը և ներման ցանկությունը կարելի է տեսնել հետևյալում՝

1. խնդրում ենք ների՛ր, BDB 609, KB 724, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. աղաչում ենք (NASB ընդլայնված)
3. քո եղբայրների մեղքը և հանցանքը (տես՝ 37:18-28)
4. չարություն գործեցինք
5. խնդրում ենք ների՛ր հանցանքը
6. հ. 18

Իրենց խնդրանքի միակ պատճառներն էին՝

1. Հակոբի խոսքերը, հհ. 16-17
2. իրենք Հակոբի Աստծո ծառաներն են, հ. 17

**50:19**

NASB, NKJV, NRSV  
TEV

«մի՛թե ես Աստծո տեղն եմ»  
«ես չեմ կարող ինձ դնել Աստծո տեղում»

NJB  
LXX  
Peshitta  
JPSOA

«մի՞թե կարող եմ ինձ դնել Աստծո տեղը»  
«քանի որ ես Աստծունն եմ»  
«քանի որ ես Աստծո ծառան եմ»  
«մի՞թե ես Աստծո փոխանորդն եմ»

Հովսեփն այս կերպով է ասում, որ նա տեսնում է իրեն որպես Աստծո կողմից Աբրահամի ընտանիքը պահպանելու մեջ մի մասնիկ (տես՝ 45:5-15, Սաղմ. 105:16-24): Նա բացատրում է սա հ.20-ում: Նա իրեն որպես դատավոր չէր տեսնում, քանի որ միայն Աստված կարող է դատավոր լինել: Երբայերենում այս հարցը ակնկալում է «ոչ» պատասխանը: Այս նույն արտահայտությունը կարելի է գտնել 30:2-ում:

**50:20 «դուք մտածեցիք ինձ չարիք պատճառել»** Հովսեփը ոչ թե ծածկում էր իր եղբայրների մեղքը, այլ իր կյանքի և իրավիճակների մեջ տեսնում էր Աստծո «աներևույթ ձեռքը»: Օ՛, եթե մենք կարողանայինք ճանաչել այդ «աներևույթ ձեռքը» մեր կյանքերում:

Աստված Իր նպատակները իրականացնելու մեջ մարդկանց մեղքերը օգտագործելու վերաբերյալ հոգված կարող էք կարդալ Միլարդ Էրիկսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն*, գրքում, երկրորդ խմբագրություն, էջ՝ 425-426 /Millard Erickson, *Christian Theology*/:

❖ **«Աստված որոշեց դա լավի վերածել»** Սա Հռոմեացիների 8:28-29 խոսքի համար լավ օրինակ է:

**50:21** Հովսեփն ասում է նրանց, թե ինչեր է անելու ընտանիքի համար՝

1. մի՛ վախեցեք, BDB 421, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, ինչպես հ. 19-ում
2. ես կկերակրեմ ձեզ, BDB 465, KB 463, *Pilpel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 45:11, 47:12
3. ձեր երեխաներին կկերակրեմ, BDB 465, KB 463, *Pilpel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ 45:11, 47:12
4. միխթարեց նրանց, BDB 636, KB 688, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
5. քաղցրությամբ խոսեց (բառացի՝ «խոսեց նրանց սրտին», տես՝ 34:3, Դատ. 19:3, Հռուբ 2:13)

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 50:22-26**

<sup>22</sup>Հովսեփը Եգիպտոսում բնակվեց՝ ինքը և իր հոր տունը: Եվ Հովսեփը հարյուր տասը տարի ապրեց: <sup>23</sup>Եվ Հովսեփը Եփրեմի երրորդ սերնդի որդիներին տեսավ, և Մանասեի որդի Մափրի որդիներն էլ Հովսեփի ծնկների վրա ծնվեցին: <sup>24</sup>Հովսեփն իր եղբայրներին ասաց. «Ահա ես մեռնում եմ. և Աստված անպայման ձեզ այցելելու է և ձեզ այս երկրից հանելու է դեպի այն երկիրը, որի համար Ինքը երդվել է Աբրահամին, Իսահակին և Հակոբին»: <sup>25</sup>Եվ Հովսեփն Իսրայելի որդիներին երդվացրեց՝ ասելով. «Աստված անպայման ձեզ այցելելու է, և իմ ոսկորներն այնտեղից հանեցե՛ք»: <sup>26</sup>Հովսեփը մեռավ հարյուր տաս տարեկան, և զմռսեցին նրան, դրին մի դագաղի մեջ՝ Եգիպտոսում:

**50:22 «հարյուր տասը տարի»** Սա այդ ժամանակաշրջանի եգիպտական գրականության մեջ համարվում էր իդեալական տարիք:

**50:23 «Մափրի»** Նաև տե՛ս Հեսու 17:1 և Դատավորաց 5:14: Այս անունը հնարավոր է կապված է միևնույն արմատն ունեցող «առևտրական» կամ «արժեք» բառերի հետ (BDB 569):

❖ **«Հովսեփի ծնկների վրա ծնվեցին»** Ըստ երևույթին սա պետք չէ բառացիորեն հասկանալ: Սա ՀՄԱ-ի մշակութային դարձվածք է, որն օգտագործվում է որդեգրության համար (տես՝ 30:3, 48:12) կամ ինչ-որ մեկին ընտանիքի մեջ ընդունելու համար:

**50:24 «Աստված անպայման ձեզ այցելելու է /անգլ՝ հոգալու է/»** Հովսեփը վստահում էր Աստծո խոստացած հոգածությանը Աբրահամի ընտանիքի հանդեպ (տես՝ Ծննդ. 15:16): Հովսեփը Աստծո գործիքն էր, բայց քանի որ նա հեռանում էր այս կյանքից, Աստված ուրիշների էր բարձրացնելու (այսինքն՝ Սովսեփին, Ահարոնին, Հեսուին, և այլն):

Հովսեփի խոսքերը ավելի ուժգնանում են միևնույն արմատի *Qal* ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՐՈՇ և *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅՈՎ (BDB 823, KB 955, բառացի՝ «այցելել», կիրառված հատուկ աստծո անձնական ներկայության և հոգածության իմաստով, տես՝ Ելից 3:16, 4:31, Հռուբ 1:6, Սոփ. 2:7): Այս ձևը կարելի է գտնել հհ. 24, 25-ում:

**50:25 «իմ ոսկորները այստեղից հանեցե՛ք»** Նա գիտեր, որն նրանք վերադառնալու էին Խոստացյալ Երկիրը և կամենում էր այնտեղ թաղվել, ճիշտ ինչպես իր հայրը (տես՝ Ելից 13:19, Հեսու 24:32):

**50:26 «դագաղ»** Այս բառը (BDB 75) կարող է վերաբերել՝

1. տապանակին (ուխտի, այսինքն՝ Ելից 25:22, 26:33, 30:6, Թվոց 10:33, 2 Օր. 10:8, 31:9, Հեսու 3:3) մի կրոնական սուրբ տուփ
  2. դագաղի, միայն այստեղ է նշավծ (խրայելացիները չէին օգտագործում դագաղներ)
  3. տախտակ, փողի համար (այսինքն՝ 4 Թագ. 12:10, 2 Մնաց. 24:8,10,11)
- Մյուս բառը, որն անգլերենում «տապանակ» (BDB 1061) է թարգմանվել կարող է վերաբերել՝
1. Նոյան տապանին (այսինքն՝ Ծննդ. 6:14)
  2. Մովսեսի օրորոցը (այսինքն՝ Ելից 2:3)

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեգրույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Հակոբի համար եգիպտական արքայական թաղում կազմակերպվեց:
2. Ինչո՞ւ էին Հովսեփի եղբայրները կասկածում նրան:
3. Ինչո՞ւ են հհ. 19-20 այդքան կարևոր, երբ համեմատում ենք 45:5-15-ի հետ:



**ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ**

**ԱՄԲՈՂՁ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԱՆԴՂԱԿԸ**  
(հաջորդ էջում)

Ե-գի-դ-ձ	Ք-ը-ն-ը-ն	Պ-ը-ն-ը-ն-ը-ն	Ս-ի-ր-ի-ը	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն	Բ-Ա-Բ-Ե-Լ-Ո-Ն	Պ-Լ-Ե-Ր-Ս-Կ	Մ-Ա-Ղ-Ա-Բ-Ի-Ա
Ծ-Ն-Ն-Ղ-Ա-ՈՑ							
1-11	Մ-Ն-Ն-Ղ-Ղ-Ե-Վ. 2 ՕՐ. Կ-Ո-Ո-Ւ-Թ						
12-50	Ե-Լ Թ-Վ-ՈՑ Հ-Ե-Ս ՈՒ Գ-Ա-Տ. (Ս-Գ-Ս)	Հ-ՈՒ-Գ-Ա	Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
1	Հ-ՈՐ		Ե-Ղ-Ի-Ա Ե-Ղ-Ի-Ս-Ե Ե-Ս-ՈՒ-Ս Ե-Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ Ս-Ի-Ք-Ի-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
2			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
3			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
4			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
5			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
6			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
7			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
8			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
9			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ
10			Ի-Ս-ՈՒ-Ս Հ-ՈՒ-Գ-Ա	Ս-Ա-Ղ-Ս-Մ-ՈՆ II (Ա) Ս-Ա-Լ-Մ-Ա-Ն-Ա-Ս-Ա-Ր (Ա) Թ-Ի-Գ-Լ-Թ-Պ-Ա-Լ-Ա-Ս-Ա-Ր III (Ա)	Բ-Ա-Ղ-Գ-Ա-Ս-Ա-Ր (Բ) Ն-Ա-Բ-ՈՆ-Ի-Գ (Բ)	Դ-Ա-Ր-Ե-Հ I (Պ) Կ-Ա-Ս-Բ-Ի-Ս-Ի-Ս II (Պ) Կ-Յ-ՈՒ-Բ-Ո-Ս II (Պ)	Ս-Ո-Ր-Ե-Ս-Ա-Ս-Ե-Ն Ե-Չ-Բ-Ա-Ս 7-10 Ն-Ե-Ե-Ս Ե-Ս-Թ

DR. BOB UTLEY BLI '96

## Չթվագրվող Դեպքեր (Ծննդոց 1-11)

1. Արարում (Ծննդ. 1-2)
2. Մարդու անկումը (Ծննդ. 3)
3. Նոյի օրերի ջրհեղեղը (Ծննդ. 6-9)
4. Բաբելոնի Աշտարակը (Ծննդ. 10-11)

## Թվագրվող Դեպքեր

- |   |                     |
|---|---------------------|
| 1. Նահապետական ժամանակաշրջան (Ծննդ. 12-50 և Հոբ)  | Ք. Ա. 2000          |
| 2. Ելք Եգիպտոսից (Ելից)                           | Ք. Ա. 1445 կամ 1290 |
| 3. Քանանի Նվաճումը (Հեսու)                        | Ք. Ա. 1440 կամ 1250 |
| 4. Միացյալ Միապետություն (Սավուդ, Դավիթ, Սողոմոն) | Ք. Ա. 1000          |
| 5. Բաժանված Միապետություն (Ռորովամ – Հերոբովամ I) | Ք. Ա. 922           |
| 6. Սամարիայի անկումը (Իսրայել) Ասորեստան          | Ք. Ա. 722           |
| 7. Երուսաղեմի անկումը (Հուդա) Բաբելոն             | Ք. Ա. 586           |
| 8. Կյուրոսի հրովարտակը (Պարսկաստան) վերադարձի     | Ք. Ա. 538           |
| 9. Տանարը վերակառուցվեց                           | Ք. Ա. 516           |
| 10. ՀԿ-ի ժամանակաշրջանի սկիզբ                     | Ք. Ա. 430           |

## Թագավորների Ցանկը

### Ա. Միացյալ Միապետություն

1. Սավուդ (ա)
2. Դավիթ (բ)
3. Սողոմոն (գ)

### Բ. Իսրայել

1. Հերոբովամ I (ե)
2. Աքաբ (զ)
3. Հերոբովամ II (է)

### Գ. Հուդա

1. Ռորովամ (դ)
2. Ոզիա (ը)
3. Եզեկիա (թ)
4. Մանասե (ժ)
5. Հովսիա (ի)
6. Հովաքազ (լ)
7. Հովակիմ (խ)
8. Հովաքիմ (ծ)
9. Սեդեկիա (կ)
10. Գողոթիա (հ)

### Դ. Ասորեստան

1. Թիգլաթպալասար III (745-727)
2. Սալմանասար V (727-722)
3. Սարգոն II (722-705)
4. Սեննեբերիմ (705-681)
5. Ասերհադոն (681-669)
6. Աշուրբանիպալ (669-663)

### Ե. Բաբելոն

1. Նարուբադասար (626-605)
2. Նարուգոդոնոսոր (605-562)
3. Նաբոնիդ (556-539)
4. Բադդասար

### Զ. Պարսկաստան

1. Կյուրոս II (550-530)
2. Կամբիսիս II (530-522)
3. Դարեհ I (522-486)
4. Բսերքսես I (486-465)
5. Արտաքսերքսես I (465-424)

## **ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՈՒ ՎԱՐԴԱԳԵՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

Ինձ այնքան էլ չեն մտահոգում հավատքի հանգանակները կամ դավանությունները: Ես նախընտրում եմ հռչակել հենց Աստվածաշունչը: Սակայն գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի դավանությունները այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում ինձ, թույլ կտան գնահատելու իմ վարդապետական հայացքները: Մեր օրերում աստվածաբանական այնքան շատ սխալներ ու շփոթություններ կան, որ կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանը, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնահայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից՝ Իր գերբնական առաջնորդությամբ: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր հավատքի միակ աղբյուրն է և Իր եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ Հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է Արարիչն ամեն ինչի՝ տեսանելի և անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթառատ Աստված, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է Երեք տարբեր Անձերով՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր անձիք են, սակայն միևնույն էությանմբ:
3. Աստված ակտիվորեն վերահսկում է այս աշխարհը: Նա Իր արարչագործության համար հավիտենական ծրագիր ունի, որն անփոփոխ է և այնպես է գործում յուրաքանչյուր անհատի համար, որ թույլ է տալիս մարդուն ունենալու ազատ կամք: Ոչինչ առանց Աստծո գիտության և թույլտվության տեղի չի ունենում, սակայն Նա թույլ է տալիս թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց կատարել իրենց սեփական ընտրությունը: Հիսուսը Հայր Աստծո Ընտրյալ Մարդն է, և մենք բոլորս էլ պոտենցիալ ընտրյալներ ենք: Դեպքերի վերաբերյալ Աստծո կանխագիտությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց մի գերբնական արարած, միևնույն է նրանք պատասխանատու էին իրենց հոժարական անձնակենտրոն վարքի համար: Նրանց ըմբոստությունը ազդեց մարդկության և ամբողջ արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհի կարիքն ունենեք, թե՛ Ադամի մեջ մեր բաժինն ունենալու և թե՛ հոժարական ըմբոստանալու համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Թրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և Իր փոխանորդական մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքերի համար: Նա է Աստծո հետ հաղորդակցության վերականգնման միակ ճանապարհը: Նրա կատարած գործին հավատալուց զատ ուրիշ փրկության միջոց չկա:
6. Մեզնից յուրաքանչյուրն անձամբ պետք է ընդունի Աստծո կողմից առաջարկվող ներումը և Հիսուս Թրիստոսի մեջ ունեցած վերստին ծնունդը: Սա տեղի է ունենում Հիսուսի միջոցով Աստծո խոստումներին հոժարական վստահելու և մեղքից հրաժարվելու միջոցով:
7. Մենք լիարժեք ներում ենք ստանում և վերահաստատվում Թրիստոսի վրա ունեցած մեր վստահությանը և մեղքից ապաշխարությամբ: Սակայն այս նոր փոխհարաբերության կյանքի ապացույցը մեր վերափոխված և վերափոխող կյանքն է: Աստծո համար մարդկության նպատակը միայն երկինք հասնելը չէ, այլ հիմա Թրիստոսի պես լինելը: Նրանք, ովքեր իրոք փրկված են, թեև երբեմն մեղանչեն, կշարունակեն հավատքի և ապաշխարության մեջ ապրել իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն» է: Նա ներկա է այս աշխարհում, կորած մարդկանց Թրիստոսին առաջնորդելու և փրկվածների մեջ Թրիստոսի կերպարը ձևավորելու համար: Հոգու պարզևները տրվում են փրկության ժամանակ: Պարզևները Թրիստոսի կյանքի և ծառայության իմաստն են, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցուն: Պարզևները, որոնք հիմնականում Հիսուսի վարքն ու շարժառիթներն են, պետք է գործադրվեն Սուրբ Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր օրերում ճիշտ այնպես, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակներում:
9. Հայրը հարուցյալ Հիսուս Թրիստոսին դրել է ամեն բանի Դատավոր: Նա վերադառնալու է երկիր դատելու ամբողջ մարդկությանը: Հիսուսին հավատացողները, որոնց անունները գրված են Գառան Կյանքի Գրքում, Նրա վերադարձի ժամանակ կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները: Նրանք հավիտյան Նրա հետ կլինեն: Սակայն նրանք, որ մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը, հավիտյան բաժանված կլինեն Երրորդություն Աստծո հետ ջերմ հաղորդակցության բերկրանքից: Նրանք կդատապարտվեն Սատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ սա ամբողջը չէ, սակայն հուսով եմ, որ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական համն ու հոտը: Ես սիրում եմ այս արտահայտությունը .

«Կարևոր բաներում՝ միաբանություն, երկրորդականում՝ ազատություն, իսկ ամեն ինչում՝ սեր»: